Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ltn
652

# ԹԵՍԱՒՐՈՍԻ

## ՀՐԱՀԱՆԳՔ ԲԱՐՈՅԱԿԱՆ

# ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

Հ. ՎՐԹԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՍԿԷՐԵԱՆ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

*Չորրորդ տպագրութիւն*



ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1870

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գանձ ցանկալի քարոզի իմաստութիւն, և գանձարան գովելի՝ արժանընկալ սիրտ իմաստնոյն: Իմաստութիւն իմա լինի նախ զվերինն և զաստուածայինն, որ 'ի բարեկամութիւն արարչին գլխովին 'ի վեր տանի զստացիչս իւր՝ ըստ Իմաստնոյն պատգամաց. և երկրորդ՝ իբրև սպասաւորկու նմին՝ զբնատուր լուսոյ աստուածաձիր վայելչութիւն, իբր նշոյլ երկրորդ յառաջին լուսոյ, կամ ճրագ մնաց՝ առ արփիափայլ ճառագայթիւք աստուածիմաստ գիտութեան: Առ որով յիրաւի զերկրորդս այս ոչ այնչափ իմաստութիւն, որչափ իմաստասիրութիւն արժան է ձայնել. զի թէ Պիւթագորաս 'ի կարգի մարդկեղէն իմաստութեան չիշխեաց զանձն իմաստուն անուանել ըստ առաջնոց, այլ միայն՝ իմաստասէր, յորմէ և Փիլիսոփայ անուն սկիզբն կալաւ, քանիօն առաւել զնոյն է ասել առ աստուածային իմաստութեամբ:

Արդ թէպէտև բազմապատիկ է անուն Իմաստասիրութեան, այն է ըստ յունականին Փիլիսոփայութեան կամ Փիլոսոփիա աձայնեալ, և 'ի բազմադէմ մասունս բաժանեալ, այլ այս մատեան առաջի առնէ զգլխաւորագոյնն 'ի մասանց անտի նորա, զառաւել կարևորն ասեմ բանաւորացս, զբարոյական վարդապետութիւն. որոյ է օրինադիր լինել բարուց՝ և կանոնադիր վարուց, առ խոտորելոյ 'ի չարէ՝ և առնելոյ զբարի, առ գիտելոյ երջանկանալ՝ և օրինօք առաքինանալ, ըստ սատարութեան լուսոյ բանի՝ որ ընծայէ փաստս բանականս. Վասն զի այս է պարտն ամենեցին, վարել ըստ ուղիղ բանի, զի արար Աստուած զմարդն ուղիղ. այսինքն է՝ զի մարդն իբրև մարդ

4652-60

քաղաքավարեացն, և ոչ մի ինչ յանձին բերցէ անվայել բանաւորի։

Գործ այսպիսի 'ի լոյս ընծայեցին' 'ի հրահանգութիւն մարդկեղէն բարուց յոլովք 'ի նախնի իմաստասիրաց, և զնոյն աւանդեն ճշգրտագոյնս արդի ուսուցիչք փիլիսոփայութեան։ Այլ որպէս առաջնոցն բանք բազմօրինակ մթութեամբ՝ թողում ասել թէ և վրիպականութեամբ խաթարեալ, սակաւս քան թէ բազումս օգտեցին լսելեաց, նոյնպէս և դասական ոճ վերջնոցն՝ յաւէտ 'ի գիտել քան 'ի գործել ուղղեալ, մտաց ճարակ քան կամաց ցուցաւ. զի սակաւս գտցես՝ որք զոր ուսանիցին կամ ուսուցանեն 'ի բարոյական փիլիսոփայութեան, զնոյն և առնել փութասցին. և զոր գանձեն 'ի յիշողութեան՝ գանձեսցեն անձանց։

Եւ ահա զմիջինն այսոցիկ կալեալ ճանապարհ՝ իբրև նոր գանձագիւտ՝ Գանձ անուն հեղինակս. զի Թեսաւրոս՝ գանձ լոկ 'ի հայումս։ Առաջի արար զյանկալի և զգօտաշահ վաճառս կենցաղօգուտ գիտութեան, և սփռեաց զգանձս բարոյական իմաստասիրութեան, ոչ 'ի տեսանել եեթ, այլ և 'ի ստանալ. այսինքն է՝ ոչ ուսանիլ միայն, այլ և առնել. ոչ լոկ 'ի գիտել, այլ և 'ի գործել։ Քանզի այնպիսի կալեալ ոճ վարդապետութեան, յորում տեսանի միանգամայն գիտնական կարգ ուսումնական՝ և ազդոյ խրատ վարժողական։ Իբրև խորագնին փիլիսոփոս ճշգիւ խուզարկէ՝ զոր ինչ աւանդէ, և իբրև հոգեհրահանգ դաստիարակ մարզէ 'ի նոյն՝ զոր ասէ։ Պաճուճութիւն բանից հաստահիմն փաստիւք խարսխէ, և զգործադրութիւն գործոց իբրև մատնանիշ ցուցանէ։ Ճարտար ասացուածովք և վճռական իմաստիւք զմիտս վառէ, և հարկեցուցիչ հետեւանօք զսէր կամաց 'ի նոյն բորբոքէ։ Ոչ այնչափ բանիւ յորդորանաց համոզէ 'ի բարին, որչափ բանականութեամբ բռնադատէ զմիտս և ձգէ զկամս յընտրութիւն բարւոյն. մինչև ինքնայօժար բերիլ լսելեաց՝ լինել անդէն մի յառնելեաց։ Այլ զայս ամենայն այլոց թողումք իմաստասիրել՝ որ իմաստասէր մտօք 'ի վերծանութիւն գրոցս մատչիցին. մեք և զայլ ինչ կարևոր տեղեկութիւնս աստէն առաջի դիցուք։



## ՀԱՆԴԱՄԱՆՔ ՄԱՏԵՆԻՍ

Ա. Այս գործ ընտիր յօրինեալ է յիտալական բարբառ 'ի մեծիմաստ և յիշխանաշուք առնէ, որոյ անուն կոչի Էմմանուէլ Թեսաւրոս, և պատրիկ՝ կոմս և ասպետ անուանի, և նուիրեալ իւր 'ի պէտս հրահանգութեան Վիկտորի Ամեդէոսի Թագաւորազնի՝ անդրանիկ որդւոյ երկրորդն Կարոլոսի Էմմանուէլի դքսին Սաբաւդիոյ (Սավոյա), որ և իշխան Տաւրինոյ (Դուրին) ասի. և նորին իսկ հրամանաւ 'ի լոյս ընծայեալ զառաջինն 'ի Տաւրին յամի տեառն 1676։ Ուր և հարևանցի ծանիր, զի նա՝ որում ընծայեցաւ այս գիրք, այն է Վիկտոր Ամեդէոս երկրորդ կոչեցեալ, որ յաջորդեաց յետոյ հօր իւրում յիշխանութեան՝ անուանի գտաւ յոյժ, և եղև առաջին թագաւոր Սարդենիոյ կղզւոյն. և յայնմ հետէ մինչև ցարդ դուքսն Սաբաւդիոյ է միանգամայն արքայ Սարդենիոյ։ Արդ որպէս նշանակէ հեղինակս 'ի կատարածի գրոցս, զայս գործ շարադրեաց յալիս ծերութեան՝ յութսուն ամաց հասակի. և յիրաւի հասուցեալ և զգօնաւոր մտաց է ծնունդ. որոյ կանխաւ դեգերեալ էր յամենայն ուսմունս իմաստասիրականս, և լցեալ ազգի ազգի գիտութեամբ. որպէս և այլ գործք իւր վկայեն։ Քանզի շարադրեաց սա և զայլ գիրս ոչ սակաւ՝ իտալերէն և լատիներէն՝ ուսումնական և բանաստեղծական, յորս բազմապատիկ գովութիւնք ընծային հեղինակիս. և 'ի մասնաւորի հռչակի յամենեցուն քաջ հմտութիւն նորա 'ի բարոյական գիտութիւնս. զի եղեն իսկ ոմանք որ կոչեցին զնա Հանդիսարան հանճարոյ և Ճեմարան զգօնութեան։

Բ. Ոճ հեղինակիս 'ի բնագրի անդ է ճարտարաբանեալ և ախորժալուր բառիւք հիւսեալ, և առաւելապէս նմանաձայն եզերօք յեւելեզս բանից հանդիսացեալ. վասն որոյ և ոչ դոյզն դժուարութիւն կրէ՝ որ կամի յեղուլ զայն յայլ բարբառ. և այս իսկ է գլխաւոր պատճառն, յոյր սակս մթին երևին ուրեք ուրեք ասացուածք նորա։ Մեք ըստ կարի զգուշաւոր թարգմանութեամբ ուշ եդեալ՝ յամենայնի հաւատարմութեամբ պահել ջանացաք զանմիջական նշանակութիւն բառիցն. այլ ուր ուրեք պահանջէր բանն յաւէտ յիմաստն հայիլ քան 'ի բառն, ըստ հայկական ոճոյ բացատրեցաք. քանզի և օրէնք

այս են ամենայն Թարգմանչի, ոչ զիմաստ հեղինակին այլայլել, և ոչ զենիկ բարբառ իւր աղաւաղել: Թող զի երբեմն յակամայս հարկեցաք որոշել ինչ բառ համեմատ սկզբնագրին, թէպէտև գիտէաք ոչ այնչափ յաճախեալ առ մեզ. զի և չնորհեալ է իմաստասիրական ոճոյ 'ի կիր առնուլ երբեմն և զանսովոր իսկ ձայն՝ առ բացատրելոյ զառաջեդեալ նիւթն:

Գ. Ուղիղ համառօտել գիտէ հեղինակս՝ զոր ինչ և գիտէ ասել. չսիրէ զընդլայնմունս բանից կամ զերկարապատում ասացուածս. վճիռս և առածս բարբառի յամենայնի՝ հանրականս և մասնաւորս՝ առանց ընդվայր ճոխաբանելոյ: Եւ թէպէտ սոյն իսկ խրթնանալ թուի բանին, այլ ուշադիր մտաց յայտ դիւրընտել ընծայի. քանի ամենայն ընտիր ասացուած այնչափ խորագոյնս ընդ մտանէ 'ի սիրտ և դիւրագոյնս յաման մտաց ամփոփի, որչափ 'ի համառօտ եզերս բովանդակի: Սմին իրի և իմաստուն անձինք առ հասարակ զայնպիսի ախորժեն ձև բանից, որպէս նաշիզ անթեփ՝ կամ ջուր յստակ և անպղտոր: Ապա եթէ յանդրադիտաց ոք այլազգ ինչ խորհի, գիտասցէ այնպիսին, զի իմաստնոյ է բանս՝ և առ իմաստունս. զիմաստասիրութիւն ուսուցանէ, վասն որոյ և զիմաստասէր անձինս խնդրէ: Բայց քանզի իմաստասէրն լինել 'ի բնաւորական կարգի՝ ամենեցուն է անկ, ո ոք և իցէ՝ որ միանգամ փոքր 'ի շատէ իմանայ զգրեալսն, որչափ և սակաւ իմասցի՝ գտանէ անձին բաւական նիւթ իմաստնանալոյ, և զբարոյապէս բարին ընտրելոյ, այսինքն առ ուղղելոյ զվարս, կամ առ խորշելոյ 'ի մոլութեանց և զարգանալոյ յառաքինութիւնս. որում ամենայն մարդ է պարտական՝ և բաւական, միայն թէ կամիցի:

Դ. Իբրև փիլիսոփայ խօսի. և ոչ իբրև աստուածաբան. այսինքն է՝ զպատճառս իրացն յառաջ բերէ 'ի բնական սկզբանց իմաստասիրութեան, որք լուսով բանին ճանաչին. և ոչ յաստուածային պատգամաց ձեռնարկէ՝ որ գեր 'ի վեր գտանին. զառածս փիլիսոփայից 'ի մէջ առնու, և ոչ զվկայութիւնս աստուածաբանից: Ի խօսել անդ զառաքինութեանց՝ ոչ քննէ զնոսա 'ի կարգի աստուածային և գերբնական ձրից. այլ 'ի կարգի մարդկային և բնական կատարելութեանց՝ որք իբր պատկեր կամ օրինակ են նոյին, և կացուցանեն զմարդն երջանիկ բնաւորապէս, կամ առնեն զմարդ բարեկեցիկ ըստ



տանելոյ վիճակի աստեացս, անդորրացեալ հոգւով և անվրդով յանբանական շարժութեանց ախտից: Սմին իրի խօսի նաև զայնպիսի իրաց, որք ըստ ինքեան ոչ այնչափ առաքինութիւն են՝ որչափ մարդավարութիւն, քաղցր կենակցութիւն, կամ հաճոյական քաղաքավարութիւն: Եւ թէ ուրեք խօսեսցի նաև զքրիստոնէական առաքինութեանց, առաջի առնէ և զնոսա յաւէտ ըստ բնական կատարելութեան՝ և ոչ ըստ գերբնականին, և կամ հարևանցի իմն ևեթ նշանակէ 'ի վեր լինել քան զտեսութիւն փիլիսոփայից: Քանզի և գործն գլխովին է բնական իմաստասիրութիւն, և ոչ գերբնական իմաստութիւն. և վախճան գործոյն է տալ ճանաչել ամենեցուն, թէ նաև բանն բանաւորաց կամ լոյսն բնածին՝ որ և Աստուծոյ պարգև է, մինչ թելադրէ մեզ զուղիղն. զոր օրինակ՝ թէ բարին է առնելի, չարն՝ խորշելի. այս ինչ է բարի, և այն ինչ՝ չար. այս ինչ զմարդ երջանկացուցանէ, և այն թշուառացուցանէ. և ըստ նմին կանոնս ընտիրս աւանդէ՝ բարոյականս իմաստասիրութիւն: Վասն որոյ չունի ոք ասել, թէ զի՞ է զի չբերէ հեղինակս վկայութիւնս պէսպէս առ 'ի սուրբ գրոց և 'ի սրբոց վարդապետաց, այլ միայն արտաքնոցն ասացուածովք շատանայ. ընդէ՞ր է զի չածէ յօրինակ զվարս սրբոցն Աստուծոյ, այլ զքաղաքավարութիւնս արտաքին փիլիսոփայից, և այլն: Քանզի դիտումն նորա այս է, զի ցուցցէ՝ թէ նաև հեթանոսք բնական օրինօք գիտացին առաքինանալ. և յամօթ առնեն զմեզ գործք նոցա, եթէ մեք յետնեալ գտանիցիմք քան զնոսա, 'ի դէպ եկեալ բանից սուրբ առաքելոյն. Այլ յորժամ հեթանոսք՝ որ զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործիցեն, նոքա որ զօրէնս ոչ ունին՝ անձանց իւրեանց իսկ են օրէնք. որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ 'ի սիրտս իւրեանց վկայութեամբ մտաց իւրեանց, և յանդիմանել զմիմեանս 'ի խորհրդոց իւրեանց. և որ 'ի կարգին են բանք:

Ե. Ի նոյն միտս իմա ինձ և զյառաջ բերելն հեղինակիս տեղւոյ տեղւոյ զառասպելս հեթանոսաց 'ի վերայ քաջազանց կամ մոլի անձանց, և զդիւցաբանութիւնս նոցա 'ի վերայ անդոյ կռոց իւրեանց և սնոտի պաշտամանց՝ հանդերձ ազգի ազգի ստեղծաբանութեամբ բանաստեղծից, որ առ Հելլենացիս և որ առ նախնի Հռովմայեցիս: Վասն զի և 'ի ձեռն այ-

տացին արուեստաճնար նմանաբանութեանց և ստուերագրութեանց քաղդէացւոց ցուցանի, թէ զիարդ նոքին խակ հեթանոսք ըմպական լուսով զմոլութիւնս ցուցին սատելի, և զառաքինութիւնս՝ գովելի, կամ զիարդ նկարագրեցին զբարին սիրելի, և զչարն՝ հերքելի. և գործովք յայտ արարին՝ զոր ինչ մտօք ճանաչէին: Թող զայն՝ զի որովհետև հեղինակս սկզբամբք փիլիսոփայից խօսի, զառ 'ի նոցանէ 'ի կիր արկեալ օրինակս երկրորդէ: Եւ այն խակ է ախորժալուր առ այնոսիկ՝ որք հետամուտքն են հնախօսութեանց, և ցանկան գիտել՝ թէ յինչ միտս խօսեցան զայսպիսիս նոքին իմաստասէրք և բանաստեղծք: Եւ թէ քաջ խորհեսցուք, ոչ փոքր իմաստ քաղեն իմաստունք յայսպիսի օրինակաց, հայելով ոչ յառասպելն, այլ՝ յիմաստ առասպելացն. ոչ 'ի մտաւ կեղծիս, այլ 'ի նշանակեալն նոքօք: Վասն որոյ և տեսանեմք զբազումս 'ի սրբոց վարդապետաց բազում անգամ այսպիսեօք վարեցեալ օրինակօք, և մանաւանդ զմեծն Գրիգոր Աստուածաբան. և այս այնչափ՝ մինչև կայ և գիրք առանձին՝ յօրինեալ 'ի Նոննոսէ հին մատենագրէ Յունաց, և թարգմանեալ 'ի նախնեաց անտի մերոց. ուր առաջի դնին մեկնութիւնք առասպելացն յիշատակելոց յԱստուածաբանէն յընթացս ճառից ինչ իւրոց: Զնոյն գտանես ուրեք ուրեք և 'ի գիրս հարց մերոց, որք ըզգործս արտաքին իմաստասիրաց կամ զառակաբանութիւնս բանաստեղծից 'ի մէջ ածոն. որպէս է տեսանել 'ի գիրս Մովսէսի Խորենացւոյն, մեծին Խոսրովու, Ներսեսի Շնորհալւոյ, և այլն: Իսկ իմաստալից թուղթք Գրիգորի Մագիստրոսի առն իմաստասիրի՝ գլխովին այսպիսեօք են զօդեալ. մինչև ոչ ինչ տարադէպ թուի ըստ գիտնաւոր հնախօսութեանն և ըստ համճարտուոր ճարտարմտութեանն՝ որպէս և ըստ իշխանութեանն շքոյ զԹէոդորոս երկրորդ Մագիստրոս ձայնել, և զՄագիստրոս՝ առաջին Թէոդորոս: Զայսոսիկ տացաք՝ զի մի ոք 'ի տխմարաց այլադդ ինչ խորհեսցի, այլ ուղիղ իմասցի զմիտս Թէոդորոսի, հայելով 'ի վախճանն՝ ուր վասն յառաջ բերէ հեղինակս զօրինակս արտաքնոց:

Զ. Այլ քանզի բազումք յառասպելաց անտի կամ 'ի հին պատմութեանց՝ համառօտ ոճով յիշատակեալք 'ի հեղինակէս, անծանօթ գտանին բազմաց, կարևոր համարեցաք յաւելուլ 'ի վախճան գործոյս կարճ 'ի կարճոյ բացատրութիւնս



կամ համրական ծանօթութիւնս. զի որ չունի ընաւ տեղեկութիւն զայսպիսեաց, դժուարանայ իմանալ զմիտս հեղինակիս: Ասացի՝ կարճ 'ի կարճոյ և համրական. այսինքն այնչափ՝ որչափ ինչ պէտք եղեն առ իմացուած օրինակին. զի չէին մեզ կամք յանհեթեթ առասպելս դեգերիլ, և կամ վիպասանութիւնս ընդարձակս ճառել, այլ ցիշատակեալսն բացայայտել: Նոյն մտօք եդաք և ինչ ինչ ծանօթութիւնս 'ի բացատրութիւն այլոց բանից հեղինակիս, ուր ուրեք արժանի ինչ տեղեկութեան դատեալ եղև. զանց արարեալ զայլովք՝ որք ոչ ինչ օգտէին 'ի գիտել կամ յոչ գիտել. կամ որք ընդ տեսութեամբ մտաց անկանին, և ուշադիր անձանց պայծառ երևին: Իսկ առ դիւրագիւտ լինելոյ այսց ծանօթութեանց, այսինքն թէ որ բան յոր տեղի հայիցի, նշանակեցաք յընթացս բանին թուանշանս ըստ կարգի, և նոյն կարգաւ զնոյն թուանշանս եդաք առընթեր միոյ միոյ 'ի ծանօթութեանց: Իբր զի որ ոք յընթեռնուլ զբանս գրոյս՝ տեսանէ թուանշան ինչ, ծանիցէ թէ կայ ծանօթութիւն մանաւոր 'ի վերայ առաջիկայ բանից 'ի վախճան մատենիս ընդ նովին թուագրով:

Է. Եւ արդ՝ 'ի կնքել զբանս, յորդոր ընծայեմք բարեպաշտ ընթերցասիրաց և ճշմարտիւ իմաստասէր անձանց՝ քաղել զօգուտ ոգւոց յօգտակար գրոց, և առնուլ խրատ յուղղութիւն վարուց 'ի Բարոյականս Իմաստասիրութենէ. զի և միակ վախճան բարոյական վարդապետութեան է ուղղել ըզվարս, կամ կանոնաւորել զբարս մարդկան, իմաստնացուցանել զիմաստասէրս, և առաքինացուցանել զառաքինասէրս: Ոչ կոչեցաք զսա յունական ձայնիւ Փիլիսոփայութիւն, այլ զստուգաբանութիւնն ընտրեցաք, որ է Իմաստասիրութիւն. զի մի ոք կարծեսցէ զսա իբր լոկ ուսումնական գրութիւն, որպէս կարծի բարոյականն՝ մին 'ի չորից մասանց փիլիսոփայութեան, այլ ծանիցէ լինել տիրապէս հոգեխրատ վարդապետութիւն՝ իմաստասիրական ոճով կարգեալ 'ի պէտս սիրողաց ճշմարիտ իմաստութեան, որ այն ինքն է Աստուածպաշտութիւն, ըստ Յոբայ ձայնին*:

Զայս եթէ ստացին բարեսէր ընթերցօղք, և կամ նպատա

* Յոբ ԻԸ 28:

'ի նոյն առցեն զայս մատեան իմաստասիրական, յայնժամ ոչ միայն հեղինակ սորա գովելի՝ արդիւնաւոր գտանի, այլ և իմս դուզնաքեայ աշխատասիրութիւն 'ի թարգմանութեան՝ ոչ անպտուղ եղանէ: Այժմ ևեթ փափաքէ անձն իմ, և զայս ևեթ խնդրեմ. զի մի՛ անգործ մնասցէ աշխատութիւն երկոցունց վաստակաբեկ ծերունեացս. հեղինակին՝ որ յութսնամեայ հասակի յայսպիսի գործ եղև ձեռնամուխ, և թարգմանչիս՝ որ վեցիւք ևեթ ամօք կրտսեր քան զնա՝ անվեհեր արկի զանձն իմ 'ի նորին դժուարաքերան գործակցութիւն, ըստ մասնաւոր ակնարկութեան գերյարգոյ Րաբունապետի մերոյ Տեառն Ստեփաննոսի Վ. Մելքոնեան, 'ի փառս և 'ի պատիւ Ամենատեառն, և յօգուտ հայկազեանս տոհմի:

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

### ՎԱԽՃԱՆ ԵՒ ԷՈՒԹԻՒՆ

### ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

## ԳԼՈՒԽ Ա.

*Յաղագս վախճանի բարոյական իմաստասիրութեան:*

ՈՎ երջանիկ արուեստիս, որ ուսուցանէ լինել երջանիկ. այլ ով յետին թշուառութեան մարդկան, որք ոչինչ իմիք այնպէս ըղձանան, որպէս երջանկութեան, և յոչինչ իրաց այնպէս խորշին, որպէս 'ի նմանէ:

Բայց զինչ զարմանք են, եթէ մեծամեծ փիլիսոփայք իսկ՝ 'ի յուզել զվէճս ընդ միմեանս զսահմանէ նորա, կորուսանեն զերջանկութիւն անդէն իսկ 'ի խնդրելն զնա:

Երեք կերպարանք բարեաց ակն յանդիման երևին որոց երջանիկն լինել կամին. Արտաքին բարիք, Մարմնաւոր բարիք, և Հոգևոյ բարիք:

Բարիքն անարգք՝ են պատրողականք, և ընտիրքն՝ տարժանականք, մարմնոյքն՝ վաղանցուկք, և հոգևոյքն՝ բացականք: Եւ արդ՝ ո՞ւր գացուք զճշմարիտն երջանկութիւն յայսչափ տոոց միջի:

Հրապուրեն կարի իմն ուժգին զխանդակաթ միտս արտաքին բարիք, այսինքն են Ճոխութիւն և Պատիւ. բարիք այն ազնուագոյնք քան զմարմնականս. իբր զի արտաքինքն հաստատեալ են 'ի կարծիս՝ որ սեպհական է մարդոյ, և մարմնականքն 'ի զգայութեան՝ որ հասարակ է կենդանեաց:

Բայց զիա՞րդ լինիցի մարդոյ բարի այն, որ չէ 'ի մարդ. և

զիարդ լինիցին 'ի մարդ այս բարիք, որովհետեւ պատիւն է 'ի պատուօղն եւ ոչ 'ի պատուեալն. եւ ճոխութիւնքն յարկին մեծատան եւ ոչ 'ի մեծատունն:

Իրաւամբք՝ ճոխութիւնք եւ պատիւ՝ բարիք կոչին բախտի. որոյ ոչ կարացեալ պարգեւել բազում ինչ, եւ պարգեւել բազմաց, պատրանօք եւ փաղանցութեամբ՝ է զի պարգեւէ, եւ է զի բառնայ. յանհաստատութեան միայն կացեալ հաստատուն:

Բայց զո՞ր բարիս հնար իցէ բախտի պարգեւել, որք յաչս աչալըջաց չիցեն առաւել սնոտի՝ քան յարգի, եւ յոլովակի վնասակար՝ քան պիտանի:

Զինչ են ոսկի եւ ակունք պատուականք, բայց պայծառ դիրուք հողոյ. որք 'ի գանձատունս եւ յարկեղս բանտարգել առնեն զսիրտ բանտարկողի իւրեանց, եւ ստացեալ ունին զստացիչ իւրեանց: Զինչ են գովեստից հռչակք, բայց ծխային հունչք բերանոյ ռամկաց՝ յօդաւորեալք յատամնամերձ շրթանց. իբր զի կից է ընդ համբոյր գովեստի խածատողութիւն նախանձու: Զինչ են դահոյք իշխանականք՝ եւ աթոռք թագաւորականք, բայց չքեղ դահճաւանդք. ուր բազումք՝ որք երջանիկ զանձինս կարծէին, չափեալ գլուխ ընդ էջ իւրեանց՝ գտին անհնարին արհաւիրս 'ի գերակայ պատիւս:

Անմարթ է երջանիկ կոչել զայն, որոյ կախեալ դողդողդ բախտէ՝ յերերի կայ հանապազ ընդ մէջ դրդմանց եւ վշտաց վտանգի, ընդ մէջ յուսոյ եւ երկիւղի:

Վա՜յ այնմ որ երկնչի, եւ եւս վա՜յ այնմ որ ոչն երկնչի. զի նա երկուցեալ միշտ 'ի պատահարացն՝ որ 'ի վերայ դան յոլովակի, յանձին զգայ զարկածսն՝ մինչ չեւ իցեն եկեալ. եւ սա ոչ երկուցեալ յայնմանէ որում հնար է դիպել, արժանի է՝ թէ 'ի վերայ եկեսցէ որում ոչն խիթայր:

Իսկ արդ՝ եթէ յարտաքին բարիս անմարթ է լինել ճշմարիտ երջանկութեան, տեսցուք թէ հնա՞ր իցէ նմա լինել 'ի մարմնաւոր բարիս. որպիսի են Առողջութիւն, Ժրութիւն եւ Հաճոյք մարմնոյ:

Այս բարիք անտարակոյս այնչափ մեծ են քան զարտաքինսն, որչափ առաւել ներքին են եւ իւրականք, եւ հարկաւոր առ կեանս. վասն այսորիկ արտաքինքն կոչին Օգտակար բարիք, զի ծառայեն մարմնական բարեաց. եւ սոքա կոչին Բերկրական բարիք, զի պահպանեն զէութիւն մարդկեղէն մարմնոյ: Զնոքօք յածի երեւակայութիւն, եւ զսոքօք զգայութիւն:

Բայց եւ այնպէս՝ զիարդ հնար իցէ երջանկութեան, որ սեպհական է մարդոյ, լինել 'ի բարիս՝ որ չեն սեպհական մարդոյ. զի չէ սեպհական այն՝ որ ընդ այլոց է հասարակ:

Հասարակաց են կեանք ընդ կաղնիս, որք ընդ մեզ ծնեալ, բայց զօրագոյն են՝ եւ կորովագոյն քան զմեզ լեալ՝ դեռ առոյգ են, մինչ մեք յենումք յալիս ծերութեան:



Հասարակաց են զգայական հեշտութիւնք ընդ անասունս. որք երջանկագոյն լինէին արդեօք, որչափ առաւելուն նոքօք, եւ որչափ նուազ իմանան զվրէպ լինել իւրեանց 'ի նոցանէ: Նա զինչ բարիք այնք իցեն, ընդ որս այնչափ չարիք են անքակ լծորդք: Խորհրդով Հռովմայեցիք միահաղոյն պաշտօն մատուցանէին Վոլուպեայ դից հեշտութեան, եւ Անգերոնեայ դից դառնութեան[1]: Երկաքանչիւրոյն կանգնեցին ուրոյն մեհեան. բայց 'ի միոյն մեհենի՝ միւսում զոհէին: Իբր զի այնպէս լծորդ են ընդ միմեանս հեշտութիւն եւ դառնութիւն, մինչեւ յօժնել նորա՝ խիթալի է 'ի սմանէ, եւ 'ի ճգնել սորա՝ յուսալի է 'ի նա. զի 'ի մի վայրկեան 'ի միմեանս յեղափոխին: Ճանճի նստելոյ 'ի վերայ մեղու՝ մեղրն լինի ատաղ, եւ հեշտութիւնն փոխի 'ի դառնութիւն:

Այլ զինչ է հեշտութիւն, բայց այլայլութիւն անտեւական: Զինչ է առողջութիւն, բայց չորից հիւթոց զուգախառնութիւն՝ 'ի չորից որակութեանց միաբանելս: Զինչ են կեանք, բայց հոսումն յաջորդական վայրկենից, որոց միայն ծնունդ է միւսոյն մահ: Յայնժամ սկսանի մարդ մեռանիլ, յորժամ սկիզբն առնէ կեալ: Եւ զինչ է մարմին, բայց սատանդական հիւանդանոց. յորում չեն այնչափ անդամք, որչափ են ախտք՝ նոցին ապականարարք:

Արդ եթէ սեպհական երջանկութիւն մարդոյ ոչ գտանի՝ ոչ յարտաքին եւ յօգտակար բարիս, եւ ոչ 'ի մարմնական եւ 'ի բերկրական բարիս, ապա է 'ի համեստ բարիս. այսինքն է՝ յառաքինութիւնս հոգւոյ. որք են բարիք սեպհականք մարդոյ, գերագոյն կատարելութիւն բնութեան բանականի, եւ սքանչելի հաղորդութիւն աստուածայնոյն:

Այսոքիկ են ճշմարիտ բարիք, զորս հնար է մարդոյ ստանալ անձամբ, եւ պարգեւել անձին, եւ վայելել յանձին, աննախանձ եւ աներկիւղ. գիտելով, թէ երկնի ոչ են կամք բառնալ զնոսա յիւրոց, եւ ընդ երկնաւ չէ ումեք հնար բառնալ զնոսա, զի զօդեալ կան յոգի:

Ի կշիռ Կրիտողայոսի ատեանի՝[2] առաւել ծանրակշիռ է փոքրիկ ինչ առաքինութիւն՝ քան զամենայն ոսկի աշխարհի, զի չիք ինչ համեմատութիւն 'ի մէջ աստուածայնոց եւ անցաւորաց:

Սոյդ իմն է՝ թէ կարողութիւնն ոչ հանգչի յունակութիւնս, այլ՝ 'ի ներգործութիւնս առաքինութեանց:

Որպէս գոլն է կարգեալ 'ի գործել, նոյնպէս ունակութիւնն առաքինութեան է կարգեալ առ գործ առաքինական. եւ կարգելոյն առ վախճան ինչ՝ անհնար է լինել վերջին վախճան: Եւ թէ երջանկութիւնն ըստ ասից ամենայն փիլիսոփայից է վերջին վախճան մարդոյ, լրումն ցանկութեանց՝ եւ բովանդակութիւն բարեաց, յայտ է թէ երջանկութիւնն ոչ

է յունակութեան առաքինութեան, այլ 'ի ներգործութեան:

Չէ երջանկութիւնն առանց զուարճութեան, որպէս ունիս լսել, և զուարճութեանն առաքինութեան չիք առնուլ զճաշակ, բայց եթէ առաքինօրէն գործելով:

Արուեստաւորն 'ի ննջել իւրում ունի զունակութիւն արուեստին. առաքինին 'ի ննջել իւրում ունի զունակութիւն առաքինութեան. բայց ոչ արուեստաւորն 'ի ննջել իւրում զգայ զբերկրութիւն արուեստին, և ոչ առաքինին 'ի ննջել իւրում զգայ զբերկրութիւն առաքինութեան:

Վասն այսորիկ երջանիկն ըստ կիսոյ կենացն չէ ինչ ընդհատ յաներջանկէն. զի չէ աներջանիկ՝ որ ոչ զգայ զիւր թշուառութիւն. և ոչ երջանիկ՝ որ ոչ զգայ զիւր երջանկութիւն. և չէ հնար զգալ, յորժամ զգայութիւնք կամ մահուամբ բարձեալ են, և կամ յեղբօրէ մահու կապեալ, (այսինքն է 'ի քնոյ):

Ոչ խնդայ պատկերահանն, յորժամ կանոնքն 'ի միտս և գոյնք 'ի վերայ պնակին կան անգործ. այլ՝ յորժամ ըստ այնց կանոնաց, 'ի սերմանց անտի գունոց ծնուցանէ 'ի մեռեալ դաստառակի կենդանագրութիւն ինչ պատկերի. որոյ չունելով զգայութիւն՝ խաբէ զզգայարանս՝ որոց հայինն 'ի նա. և արուեստաւորն խնդայ ընդ ճարտարահնար իւր խաբէութիւն:

Վասն այսորիկ՝ որպէս արուեստագէտն յիւրմէ արուեստէ, նոյնպէս առաքինին յիւրմէ առաքինութենէ բուռն բերմամբ անդադար վարի և մղի 'ի գործ. և թէ յարտաքին բռնութենէ գործածութիւն ունակութեան խափանի, խափանի և երջանկութիւնն. զի ոչ կայ սա յունակութեան, այլ 'ի ներգործութեան:

Այլ ամենայն առաքինութիւն նպատամատոյց է երջանկութեան ըստ իւրում մասին. զի որպէս առաքինութիւնն է սեռ ինչ՝ որ փակէ ընդ իւրև զբազում առաքինութիւնս մի քան զմի մեծագոյնս, նոյնպէս երջանկութիւնն է բարի ինչ, որ փակէ ընդ իւրև բազում բարիս մի քան զմի առաւելեալս: Այլ երջանկութիւնն հաստատեալ է 'ի գործ առաքինութեանց, բայց առաւելապէս վեհագունիցն և գերակայից, որպէս ցուցցի յիւրում պահու:



# ԳԼՈՒԽ Բ.

*Յաղագս թէ զինչ պիտի առ երջանկութիւն. և յաղագս ստոյական սահմանի նորա:*

Տարապայման իմաստասիրեցին Ստոյիկեանք, թէ բարիք հոգւոյ միայն՝ են բարիք, իսկ արտաքինքն և բերկրականք՝ են չարք, և ոչ բարիք. ոչ միայն անպիտանք, այլ և վնասակարք առաքինութեան, վասն որոյ և իսկապէս մահաբերք մարդկային երջանկութեան:

Պնդէին սոքա, թէ «Ճոխութիւն, դիւրութիւն, առողջութիւն, իշխանութիւն, և զաւակք, չեն բարիք. զի անմարթ է՝ ասէին, թէ այն ինչ առաքինւոյն իցէ բարի, յոր կարէ վայելել և մոլին. և վասն զի երջանկութիւնն է անփոփոխ և միայուն բարի, ամենայն՝ որ ինչ դիմադարձի տևողութեան, դիմադարձի և երջանկութեան»:

Զօրէն հակառակն՝ պնդէին, թէ «Չքաւորութիւն, չարակրութիւն, կուրութիւն, թշնամանք, խօթութիւնք և ցաւք՝ ոչ կարեն երջանկին լինել չար. զի 'ի պահել նորա յոգի իւր զառաքինութիւն՝ պահէ ողջ անարատ զերջանկութիւն: Սառնասցի այնպիսին 'ի ձիւնաբերս լերանց Կովկասու, ճենճերեսցի 'ի հրացեալ ցուլ Փաղարիսի[3]. շատ է միայն առաքինութիւնն առնել զնա երանելի 'ի տանջանս»:

Չէ այս իմաստասիրութիւն մարդոյ քաղաքայնոյ, այլ իմաստակութիւն առն վայրենաբարոյի. զի անմարդացուցանէ զմարդիկ, և անբնացուցանէ զբնութիւն, և գիտնաւոր սնոտութեամբք աղաւաղէ զճշմարիտն: Ոչ որոշէին սոքա զչարն 'ի բարւոյ, ոչ զբարին 'ի լաւէ, ոչ զչափազանցն 'ի չափաւորէ, և ոչ զբովանդակեալ երջանկութիւնն յանբովանդակէ:

Արիստոտէլ[4] մարդկօրէն տրամաբանեալ և ոչ անասնօրէն, որպէս բարի կոչէ զայն ամենայն՝ զոր կարգեալ է բնութիւնն առ բարի վախճան, նոյնպէս բաժանէ զբարին յերիս դասս. 'ի Փոքունս, 'ի Միջակայինս, և 'ի Մեծամեծս:

Փոքունս կոչէ զարտաքին բարիս, միջակայինս՝ զմարմնականս, մեծամեծս՝ զառաքինութիւնս: Բայց զամենայն ընդ միմեամբք դասաւորեալ. զի արտաքինքն են 'ի պէտս մարմնոյ, մարմինն 'ի պէտս հոգւոյ, և հոգին 'ի պէտս առաքինական գործոց, այսինքն երջանկութեան:

Ստոյգ է թէ առ առաքինութեամբք արտաքին բարիք են թեթևք և պատիրք. և մարմնականքն՝ մնոտիք և անցաւորք, որպէս ասացաւ. բայց չեն պատիրք և ոչ մնոտիք, ցորչափ

իրօք լծորդեալք ընդ առաքինութեան՝ արբանեկեն վերջին և գերերջանիկ վախճանի: Նա՝ չէր արժան ումեք սահմանել ըղձալի բարիս, բայց միայն այնմ՝ որ ստացեալ ունի զմեծամեծ բարիս: Նա է արժանաւոր զինուց, որ գիտէ արիագոյն ՚ի գործ ածել զայնս. և նա է արժանի բարեաց մարմնոյ և բախտի, որ գիտէ զնոսա առաքինագոյն ՚ի կիր արկանել:

Ճոխութիւն ՚ի ձեռս առաքինւոյն են օգտակար բարիք. այլ ՚ի ձեռս մոլեկանին են վնասակար բարիք: Վասն որոյ վերնախնամ տեսչութիւնն, որ առաւել սիրող է իւրոյ նմանեաց՝ քան հակառակողաց, ոչ վասն մոլեաց, այլ վասն առաքինեաց արար զաշխարհ:

Ապա երջանկութիւնն անրապէս հաստատեալ է ՚ի բարիս հոգւոյ, և հետևաբար յայլ բարիս. զի է նա հաւաքումն ամենայն բարեաց, մեծաց՝ միջակաց և փոքունց: Եւ թէպէտ զուգնաքեայ գոլով սոցա՝ չառնեն զերջանկութիւնն կարի իմն մեծ, սակայն պակասութիւն նոցա մեծապէս զսա նուազէ: Բառնայ զճարակ ՚ի բոյս, որ բառնայ զայսպիսի եկամուտ բարիս յառաքինութենէ:

Ոչ կարէ ՚ի գործ արկանել զառատաձեռնութիւն, որ ոչն ունի ինչս. և ոչ զարիութիւն, որոյ չիք զօրութիւն. և ոչ զգերագոյն խոհեմութիւն, որ չունի ինչ գահերիցութիւն կամ իշխանութիւն: Որչափ ինչ բառնի յառաքինութենէ, այնչափ ինչ բառնի յերջանկութենէ:

Ապա եթէ միայն պակասութիւն այսց բարեաց՝ այսչափ վնասակար է գերագոյն բարւոյ, քանի՞ առաւել յառաջացուցանեն զնա չարիք դէմ ընդդէմ հակառակք. չքաւորութիւն, ցաւք, վէրք, գելարանք և քերանք:

Շաղփաղփեսցեն որչափ և կամին՝ Կինիկոս յիւրմէ կարասէ [5], և Մետրոդորոս յիւրմէ քարանձաւէ՝ զմտացածինն զայն և զանլուր անչարչարութիւն ՚ի ցուլ Փաղարեան. ոչ ոք յողջամտաց հաւատայ երբէք, թէ լինիցին բնաւորապէս միանգամայն ՚ի միում ժամանակի ՚ի մի մարմին մարդկային երկու շարժմունք ներհակականք. սաստիկ տանջումն, և կատարեալ երանութիւն: Հասարակաց զգայութիւն ստէ զնոցա անզգայութիւն:

Մարմինն է գործարան հոգւոյ. ոչ բարւոք կարողանայ գործել հոգի, եթէ աւեր է գործարանն. և ՚ի խափանել գործողութեանն՝ երջանկութիւնն մնայ խափան:

Ապա չէ կատարեալ երջանկութիւնն միայն ՚ի բարիս հոգւոյ. բայց ոչ կատարեալ՝ և ոչ անկատար հնար է նմա լինել՝ առանց երկուց յատկութեանց ՚ի նա յարելոց, և ՚ի միմեանց ծնելոց, այն են Համեստութիւն և Զուարճութիւն:

Չէ երջանկութիւն, եթէ չէ համեստ. զի ծնանի սա յառաքինական ունակութեանց, որք են համեստ բարիք: Այլ



համեստ լինել չէ հնար, թէ չիցէ զուարճալի. զի յատուկ է ունակութեան առնել զգործն բերկրական:

Այլ եթէ երջանկութիւնն է լրումն ցանկութեանց, հարկ է թէ իցէ և լրումն բերկրանաց. բայց բերկրանաց՝ որ պատուոյ են արժանի, և ոչ նշաւակ նախանձու. գոլով բարձրութեանն առաքինութեան առանց ամբարտաւանութեան, զուարճարար ստացողին՝ և ոչ ումեք վնասակար:

Ընդ այսց երկուց ծրից ներքնոց լծորդին երկու այլ ձիրք, որք չեն էականք, բայց յոյժ պիտանիք, Յաջողութիւն և Ապահովութիւն:

Զի որպէս երջանկութիւնն չէ զուգակիր ընդ ցաւոց, նոյնպէս չէ զուգակիր ընդ երկիւղի. զի ոչ այնչափ ուրախ առնէ բարին՝ յոր ոք վայելէ, որչափ տրտմեցուցանէ չարն՝ յորմէ կասկածէ:

Գերագոյն երջանկութիւն թուէր երջանկութիւն բռնաւորին Սիրակուսայ, ամենալիր յղփութեամբ բազմախորտիկ սեղանոյ, անչափ գրգանոյ, և մեծաշուք պատուոյ. սակայն և այնպէս էր նա ամենաթշուառ. զի միշտ խորհէր ՚ի վերայ գլխոյ իւրոյ սուսեր սուր կախեալ զդիւրախզելի սաղանւոյ: Զայնչափ շնորհս քաղցրութիւնս դառնացուցանէր նմա երևակայութիւն վտանգի. և ամենայն անուշակ օշարակ թուէր նմա թոյն [6]:

Այլ թէպէտ և այնչափ լինէր հաստատութիւն բախտի կամ վստահութիւն մտաց, մինչև փարատել զամենայն երկիւղ, բայց քանի՞ ձախորդութիւնք գիտելին զորոց չէր ուստեք կասկած:

Զաժամայն երջանկութիւն այն մարթ է կոչել ուրախութիւն, բայց ոչ երջանկութիւն. զի ուրախութիւն է կայտառումն ինչ սրտի, այլ երջանկութիւնն է յարաձգեալ իմն յաջողուած: Նա չափի այժմեան առարկայիւք, սա մնայուն ունակութեամբք. նա սկզբամբ, սա վախճանաւ:

Չէ աջողակ նաւարկութիւնն, որ պարզէ զառագաստս աջողակ հողմոց, եթէ ոչ հասուցանէ ՚ի դէմ եղեալ նաւահանգիստ: Նա՝ չիք նաւարկութիւն աւաղելի՝ քան զայն որ պատահէ յետ աջողակ նաւորդութեան. և ոչ թշուառութիւն եղերական՝ քան զայն որ ՚ի վերայ հասանէ կենաց բարեբախտութեան:

Վերջին գիծն է՝ որ երկրաչափական ձևոց գնէ անուն: Վերջին ստնփոխն է՝ որ զընթացս Ոլիմպիական ասպարիզին առնէ բարեբախտ կամ դժբախտ: Վերջին օրն է՝ որ յայտ առնէ, արդեօք Կրասոս և Կրեսոս երջանիկ իցեն, թէ թշուառ: Կաց մնա վախճանի՝ ասէր Սողոն Կրեսոսի. զի զգործ վախճանն, և զօրն երեկոյն առնէ գովելի [7]:

Յառաջելոց աստի հնար է քեզ դիւրաւ հաւաքել զբովան-

դակեալ և զկատարեալ սահման երջանկութեան ըստ մտաց Արիստոտելի, և ոչ Ստոյիկեանց, թէ Երջանկութիւնն է գործ առաքինութեան հոգւոյ՝ մանաւանդ ամենակատարի, ոչ առանց արտաքին և մարմնաւոր բարեաց իբր օգնչաց, ընկերելով համեստութեան և զուարճութեան իբր ընտրդաց, և յարաժամական ապահովութեան և յաջողութեան։

Այս է հաւաքումն այն ամենայն բարեաց զոր արժան է կոչել գերագոյն բարի, բովանդակեալ երջանկութիւն, և երանութիւն բնական. զի խօսիլ զերկնայնոյն ոչ է փիլիսոփայի, այլ բարձրագոյն ևս խոհականի[8]։

## ԳԼՈՒԽ Գ.

*Ընդդիմադրութիւնք առ այս սահման, և նոցին պատասխանատուութիւնք։*

« Դժուարին հնար է, ասիցես, թէ այդչափ այլ և այլ բարիք ընդ այսչափ դժուարին պարագայս ընտրդք՝ բնաւորապէս ժողովեսցին 'ի մի մարդ։ Կարի սակաւուց է մատչիլ միանգամայն 'ի մէջ երջանկութեան և կենաց. և 'ի տաճարի բախտի 'ի նոյն բախտէ թագուհւոյն ընդունիլ։ Եթէ մեծաց առաքինութեանց պիտոյին մեծ ճոխութիւն, մեծ զօրութիւն, մեծ աւագութիւն. և եթէ աւագութիւն՝ զօրութիւն և ճոխութիւն են բարիք ժամ 'ի ժամէ փոփոխականք, դժուարին հնար իցէ 'ի վերայ անկայուն աւազոյս հիմնել զբարձր զայս աշտարակ։ Բախտն և բնութիւն պարգևատու են մեծամեծ իրաց. այլ չեն երաշխաւոր իւրեանց պարգևաց։

» Ոչ ոք 'ի մարդկանէ երբէք առաւելու ամենայն բարեօք որպէս զՕգոստոս կայսր յորբունս հասակի։ Ունէր մեծ առաքինութիւն ընդ մեծի իմաստութեան, մեծ վայելս փափկութեան՝ ընդ մեծի չափաւորութեան, մեծամեծ արարս՝ ընդ մեծի կարողութեան, մեծամեծ գանձս՝ ընդ մեծի ապահովութեան, մեծ ինքնակալութիւն՝ ընդ մեծի խաղաղութեան, մեծ համակամութիւն կնոջ, բարեմտութիւն բարեկամաց, սէր ժողովրդոց։ Եւ որ ոչ արդեօք պատահեաց այլոց, իւր գերագոյն բարեբաստութիւնք՝ ոչ բախտի էին ձիրք, այլ իւրոյ առաքինութեան։ Սակայն և այնպէս յայնչափ մեծամեծ բարիս սպրդեցին մտին անհնարին վիշտք՝ վասն յառաջածանօթ չարութեան ժառանգաւորին, վասն խորամանկեալ մահու որդւոցն, և վասն խառն անկողնոյ դստերաց։

» Ճշմարիտ երջանկութիւն թուի երջանկութիւն Ագղայոսի[9], զոր կոչեաց պատգամախօսն՝ երջանիկ քան զամենայն մարդ. զի անձին միայնոյ էր ծանուցեալ. վասն որոյ և չէր կարօղ կրել կամ առնել ինչ չխաս. սակաւ ինչ ունէր, և ոչ իմէք այլ ըղձանայր. և մշակեալ զիւր փոքրիկ անդ՝ բաւական 'ի սնունդ իւրոյ մշակողին, անդէն ծնաւ՝ մնաց և մեռաւ. և ոչ երբէք ել անտի։



» Ապա շատ էր սահմանել զերջանկութիւնն՝ Կէանք ինքնաբաւ և գոհ, իբրև զկեանս ոսկեղէն դարուն[10]։ Եւ զսորին հակառակն՝ թուի թէ երջանկութիւնս սահմանեալ յԱրիստոտելէ՝ իցէ մտացածին ինչ, և ոչ իրական. կամ թէ իմաստասիրութիւն բարոյական օգտակար իմն իցէ, այլ ոչ հարկաւոր. որովհետև վախճանի նորա՝ առ որ պիտոյին այսչափ բարիք, հնար է ցանկալ, այլ ոչ ակն ունել »։

Արդ կամ է ինձ զիջանել առ կարծիսդ, թէ երջանկութիւնն նկարագրեալ 'ի փիլիսոփայէն՝ է չքնաղագիւտ և վսեմական ինչ գաղափար. բայց և այնպէս յայս գաղափար դէտակն ունի իմաստասիրութիւնն բարոյական. զի որ ոչն կարողանայ հասանել յայն, գէթ մօտ մատչիցի։

Նաւուղիղն որ ոչ կարէ ընթանալ լիուլի հողմով, ընթանայ կիսոյ կիսով. և թէ առագաստն ոչ դարձուցանէ զամենայն զգօգ իւր ուղղագիծ հողմոյ, պարզի փոքր մի կողմնակի. և զամենայն հնարս հնարի, միայն թէ զնաւն յառաջ վարեսցէ։ Սոյնօրինակ զիմաստութիւն, զառեւխօսութիւն, զբանաստեղծութիւն, և զպատկերահանութիւն ուսուցանեն յայս միտս, զի որ ակարանայ 'ի գլուխ ելանել, գէթ ելցէ ուր կարօղ իցէ։ Եւ թէ չէ Ապելլէս 'ի նկարել զդիւցազունս, լիցի Լուգիոն 'ի նկարել զեղնավարս[11]։

Իմաստասիրութիւնն բարոյական տեսեալ թէ մարդն է կենդանի ընկերական, և ոչ վայրենի, զկանոնս իւր կարգէ տիրապէս առ կեանս քաղաքական. որում անկ են մեծամեծ բարիք վասն մեծամեծ առաքինութեանց, որք հային 'ի հասարակաց օգուտ. որպիսի են առատաձեռնութիւն, մեծագործութիւն, վեհանձնութիւն, քաղաքական և զինուորական առաջնորդութիւն։

Սակաւ բարիք պիտոյին Ագղայոսի մենակեցի, զի շատ են նմա փոքր առաքինութիւնք։ Երջանկութիւն ոսկեղէն դարուն շատ էր աշխարհի նորածնելոյ, յորժամ միապէս երջանիկ էին հովիւք և խաշինք, և չէին մի քան զմի վերադաս։ Բայց յառաւելուլ աշխարհի՝ հարկ եղև առաւելուլ և աւագութեանց, արուեստից և գիտութեանց. և սկիզբն առին ընդ մեծաց մոլութեանց մեծամեծ առաքինութիւնք։

Ստոյգ է թէ իմաստասիրութիւնն իսկ ուսուցանէ զկանոնս միայնաւոր կենաց՝ վասն նորա, որ ծնաւ միայն վասն իւր. զի թէ չէ յանկաւոր լինելի երջանկութեան մեծին Օգոստոսի,

գէթ վայելեսցէ առանձինն 'ի հանդարտութեան աղքատին Ագլայոսի:

Որ չէ ձեռնհաս ստանալ զայն՝ որում ցանկայ, այնմ ցանկասցի զոր կարող իցէ ստանալ: Եթէ բարիք բախտի նուազ են քան զպիտոյն, շատասցի բարեօք բնութեան որ սակաւուք շատանայ. և թէ սոքա փոքր են քան զցանկութիւն. վայելեսցէ յիւր առաքինութիւնս որք են աներկեան. և թէ՝ չէ կարող գործել զմեծամեծ առաքինութիւնս, արկցէ 'ի գործ զփոքունս: Բայց եթէ ոչ միայն բախտն և բնութիւնն առըջասցին ընդ պարգևս իւրեանց, այլ և թշնամին, բռնաւորն, և վերին հրամանն իսկ միաբան զինեսցին ընդդէմ առաքինւոյն, ոչ միայն մերկել զնա յամենայն բարեաց, այլ և ծանրաբեռնել ամենայն չարեօք, չքաւորութեամբ, հիւանդութեամբ, դժնդակ ցաւովք և անողորմ տանջանօք, չասեմ զՍտոյիկեանցն՝ թէ չարիքն իցեն բարիք, այլ թէ 'ի չարիս անդ հնար է վայելել 'ի մեծամեծ բարիս: Չասեմ թէ առաքինին այնպէս երանելի իցէ 'ի ցուլ Փաղարեան, որպէս 'ի Բայեան բաղանիս[12]. այնպէս խրախամիտ 'ի սուսերս և յանիւս, որպէս 'ի փափուկ անկողինս և 'ի վարդենիս. և կամ թէ նախանձելի իցէ և ոչ ախտակցութեան արժանի: Այս լինէր յեղափոխել զբառս՝ 'ի հաստատուցանել զանհաւատալիս: Այլ ասեմ, թէ յայնժամ տանջեալ առաքինին այս թշուառ է, բայց ոչ այնչափ՝ որչափ տանջանաւոր մոլին:

Երկու ինչ ուսուցանէ իմաստասիրութիւնն բարոյական. յանձին բերել զբարիս և համբերել չարեաց. վայելել չափաւորապէս 'ի յաջողութեան, և տանիլ արիաբար ձախորդութեանց: Անհնար է երջանկութեան լինել առանց առաքինութեան. բայց հնար է առաքինութեան լինել առանց երջանկութեան: Աղաղակ բարձցէ, յոգւոց հանցէ 'ի տանջանսն, զի մարդ է. բայց զի առաքինի է՝ զգեցցի քաջալերութիւն ինչ, յորմէ վրէպ է մոլին: Մխիթարեսցի անմեղութեամբ իւրով և առաքինութեամբ, գիտելով թէ զսա միայն յոչ կամաց բախտի և բնութեան և բռնաւորին և մահու՝ ընդ փոյթ տարցի ընդ իւր յանցանելն 'ի գերեզման, թողեալ յերկրի գերապանծ պարծանս:

Զայս ուսուցանէ իմաստասիրութիւնն բարոյական՝ յուսուցանելն զառաքինութիւնս: Ոչ փոքր գիտութիւն է գիտել թէ է թշուառ:



# ԳԼՈՒԽ Գ.

*Յաղագս թէ զինչ իցէ առաքինութիւնն բարոյական:*

Ամենայն ստեղծեալ գոյացութիւն ունի ինչ սեփհական գործողութիւն. և ամենայն կարողութիւն գործողական՝ ընդհանուր անուամբ կոչի Զօրութիւն, այսինքն է կարողութիւն և ոյժ գործելոյ: Ի զօրութեանց աստի ոմանք են ընդաբոյսք և հարկաւորք, և ոմանք կամաւորք և ստացականք: Զիք ինչ քար, կամ տունկ, կամ ձի, որոյ չիցէ բնաւորապէս դաղտնի ինչ զօրութիւն՝ յայտնի և զարմանաւոր գործոց արտադրիչ, կամ առ իւր պահպանութիւն, և կամ 'ի նպաստաւորութիւն ազգի մարդկան, յոյր սակս աշխարհ ամենայն է 'ի վաստակս:

Անթօր խոտ՝ ունի զօրութիւն թափելոյ զթոյն նապէլ խոտոյ, վիմահերձ բոյս՝ անմուրճ հերձու զքարինս. մագնիս անձեռն գողանայ զերկաթ. թմրաձուկն անչուան կապէ ըզձկնորսս. և ձուկն նաւակալ՝ անհեղոյս բևեռէ ընդ ալիս զըլընթաց նաւս:

Մարդկան իսկ ետ բնութիւնն զզօրութիւն զստորաքարշ ըստ խառնելոց, զաճեցուն ըստ տնկոց, զզգայական ըստ անասնոց, և զիմացական ըստ հրեշտակաց, բովանդակեալ 'ի նմա միայնում զբնական զօրութիւնս բովանդակ աշխարհի:

Այլ բաց յայսց՝ Հերակլեայ ետ ուժգին զօրութիւն, Հեղինեայ զանհման գեղեցկութիւն[13], և այլոց՝ զօրութիւնս զարմանաւորս առանձինն. զի յԱղէքսանդրէ բուրեր, ասեն, հոտ, Տիբերիոս տեսանէր 'ի գիշերի, Պիւռոս բժշկէր զախտս հպելով, Աթենագորաս խաղայր ընդ իժից անվնաս. և այլոց տուան պէսպէս զօրութիւնք որք որչափ առաւելուն զզարմանս ազգաց՝ այնչափ նուազեն զստուգութեանն հաւատս: Սոքա են զօրութիւնք այս գործողականք, բայց բնականք. ուստի և հարկաւորք և ոչ ստացականք. 'ի բղխել բնաւորապէս զօրութեան յէութենէ, և գործողութեանն 'ի զօրութենէ: Բայց թողեալ զայսոսիկ բնաւոր զօրութիւնս, կամաւոր և ստացական զօրութիւնք, որք տիրապէս կոչին Առաքինութիւնք, են այնք զորս ընծայէ մարդ անձին, տպաւորեալ յինքեան յերկարատեւ մարզութեամբ զօրակութիւն ինչ գործադրիչ վսեմական գործոց՝ որ սեփհական են մարդոյ:

Այս զօրութիւնք կամ առաքինութիւնք են[14] որք իսկա-

գոյն և պանծագոյն ևս անուամբ կոչին առաքինական ունակութիւնք կամ ունակական առաքինութիւնք. իբր զի են գեղեցիկ պատմուճանք և մեծագին զարդք հոգւոյ, պատուականք քան զբնական զօրութիւնս. զի բնականք են ձիրք բնութեան, իսկ սոքա ստացեալք ջանիւ: Յայսց ստացական առաքինութեանց ոմանք են իմացականք, և ոմանք բարոյականք:

Իմացական այնք են, որք կատարեն զհայեցողական կամ զգործնական միտս 'ի կարգի առ գիտութիւնս և առ արուեստս: Բարոյականք են այնք, որք կատարեն զզգայական և զբանական բաղձանս. այսինքն է զկիրս և զկամս՝ 'ի կարգի առ բարի բարս. որպէս անուանն իսկ յայտ առնէ:

Զի իմացականքն ստացեալ լինին կանոնօք. բայց բարոյականքն ստացեալ լինին առաւելապէս դաստիարակութեամբ և սովորութեամբ: Նոքա առաւելուն տարածմամբ՝ յարելով կանոն առ կանոն. իսկ սոքա առաւելուն սաստկութեամբ՝ յարելով ներգործութիւն 'ի ներգործութիւն, որպէս ցուցցի յիւրում կարգի:

Թէ արդարև հայիմք յէնթակայն ունակութեան, իմացականքն են պատուական քան զբարոյականս. զի միտքն է պատուական քան զբաղձանս: Այլ թէ հայիմք 'ի վախճանն, բարոյականքն են պատուականագոյն քան զիմացականս. զի իմացականքն առնեն բարի զգործն, իսկ բարոյականքն առնեն բարի զգործօղն:

Արուեստն պատկերահանութեան առնէ գեղեցիկ զպատկերն, այլ ոչ առնէ բարի զպատկերահանն. զի իմացական բարութիւնն չափի 'ի կանոնաց արուեստին, բայց բարոյական բարութիւնն չափի 'ի համեստութենէ գիտաւորութեան:

Ոչ ոք եղև գիտուն քան զՈւրացողն Յուլիանոս. բայց ոչ ոք ամպարիշտ քան զնա: Գիտէր բարւոք խօսել, այլ ոչ կամէր բարւոք գործել. նա՝ զգիտութիւն իւր վարէր միայն 'ի գործել չար: Էր երկկերպարան Կենտաւրոս, կէս մարդ և կէս գազան. զի զմիտս ունէր ողջ, և զկամս՝ անառողջ[15]:

Թէպէտ մոլեկան ունակութեան չէ հնար լինել առաքինական, և ոչ առաքինական ունակութեան՝ լինել մոլեկան, բայց գործ ինչ յանկարծակի այլափոխեալ, հնար է թէ փոխեսցի յառաքինականէ 'ի մոլեկան, կամ 'ի մոլեկանէ յառաքինական, 'ի փոխիլն վախճանի և գիտաւորութեան:

Դրօշէ Պրաքսիտեղէս[16] զԳնիդեանն Ափրոդիտէ, դրօշէ Փիդիաս զԱթենականն Աթենաս. երկոքին իսկ սոսկապէս առ 'ի գործ դնել զիւրեանց ճարտարութիւն: Այս գործք են իմացականք, այլ ոչ բարոյականք, գերակատարք ըստ արուեստին, այլ անտարբերք ըստ բարուց: Բայց թէ Պրաքսիտեղէս դրօշէ զԱփրոդիտէ 'ի գրգիռ ցանկութեան, և Փիդիաս



դրօշէ զԱթենաս 'ի յորդոր համեստութեան, այն գործք իմացականք և անտարբերք՝ լինին գործք բարոյականք. և յարուեստաւորացն՝ մին լինի վաւաշ, և միւսն համեստ:

Ապա բարութիւնն իմացական հաստատի յընթացակցութեան պարագայից, որք զգործն առնեն բնապէս կատարեալ ըստ արուեստին: Իսկ բարութիւնն բարոյական հաստատի յընթացակցութեան պարագայից, որք զգործն առնեն բարոյապէս կատարեալ՝ ըստ վարուց և ըստ համեստութեան, այսինքն յորժամ առարկայն է բարոյապէս բարի, գիտաւորութիւնն բարի, և միջոցքն բարի:

Կանգնել զտաճար ինչ աստուածոց ստոց է գործ մոլեկան ըստ առարկային: Կանգնել զտաճար Աստուծոյ ճշմարտի՝ բայց 'ի սնոտի ցոյցս բարեպաշտութեան, է գործ բարի ըստ առարկային, այլ մոլեկան ըստ գիտաւորութեան: Կանգնել զտաճար Աստուծոյ ճշմարտի, զի պաշտեսցի, բայց 'ի յափշտակեալ դրամոց, է գործ բարի ըստ առարկային, բարի ըստ գիտաւորութեանն, այլ մոլեկան ըստ միջոյին, որ զմեծաշէն գործն փոխէ 'ի չարաշէն: Վասն այսորիկ՝ որպէս զի գործ ինչ լիցի բարոյապէս բարի, պարտ է ամենայն համեստ պարագայից ընթացակցիլ ընդ այն. այլ 'ի լինել մոլեկան՝ շատ է միոյ միայնոյ 'ի սոցանէ պակասութիւն:

Տես արդ զի թէպէտ և ենթակայ բարոյական իմաստասիրութեան է առաքինութիւնն, սակայն ոչ ամենայն առաքինութիւն ընդ դրօշակաւ նորա զինուորի: Չէ ճշմարիտ առաքինութիւն, բայց այն՝ որում թշնամի է մոլութիւն. և ոչ ճշմարիտ մոլութիւն, բայց այն՝ որում լծորդ է ագեղութիւն: Ապա 'ի բաց անկանին 'ի բարոյական գիտութենէ բնաւոր առաքինութիւնք. զի որովհետև ոչ է մարթ ստանալ զնոսա սեպհական զօրութեամբ, այլ են պատուաստ 'ի բնէ, 'ի զուր է ուսուցանել զայն, որ ընդաբոյս է 'ի մարդ՝ առանց ուսանելոյ: Եւ անմարթ է զնոսա համանունակի կոչել առաքինութիւնս. զի որպէս բնաւոր պակասութիւնք չեն մոլեկանք, նոյնպէս բնաւոր կատարելութիւնք չեն առաքինականք: Հաճարաւոր է մեղու, յառաջատես է մրջիւն, գթած է արագիլ, մեծասիրտ է առիւծ. բայց և ոչ մի 'ի ձրիցս է 'ի նոսա առաքինութիւն բարոյական, զի չէ կամաւոր:

Ի բաց անկանին և իմացական առաքինութիւնք մեքենականք, որպէս արուեստք՝ որք չեն ազատական. նկարչութիւն, քանդակագործութիւն և դարբնութիւն. զի թէպէտ մարդիկ կամաւ ստանան զնոսա, բայց որպէս ասացաւ՝ հային նոքա 'ի լաւութիւն գործոց արտաքնոց և ոչ 'ի ներքին բարութիւն անձին: Ի սխալել արուեստաւորին յարուեստի՝ ոչ վասն այնր սխալէ 'ի բարի վարս. լինի այս արուեստաւոր յոռի, այլ ոչ մարդ չար: Մանաւանդ թէ որ սխալէ կամաւ յարուեստին,

չէ արուեստաւոր յոռի, բայց որ կամաւ սխալէ 'ի բարի վարս, ստուգութեամբ մոլի է և չեղծ: Արժան է յեղաշրջել կամաւ զկանոնս նկարչութեան 'ի նկարել զհրէշ ինչ, այլ չէ արժան յեղաշրջել զկանոնս բանին 'ի գործել ինչ գործ անհամեստ:

Առաքինութիւնք արուեստից դասին 'ի կարգս օգտակար և բերկրական բարեաց, զի ծառայեն դիւրութեան կամ բերկրութեան մարդկային կենաց. այլ բարոյական առաքինութիւնք են համեստ և ազնուական բարիք. վասն զի են ըստ ինքեանց ցանկալի: Սմին իրի գին այնց գործոց դրամօք չափի, բայց բովանդակ ոսկի աշխարհի՝ ըստ ասից Կրիտողայոսի՝ չէ հանդիտակշիռ փոքու իմն առաքինութեան բարոյականի:

Յաւելում ասել թէ և ոչ ազատական արուեստք, և ոչ այլ գիտութիւնք՝ 'ի բարոյական առաքինութեանց են սակի, զի թէպէտ ազնուականք են և արգոյք, բայց առնեն զմարդն գիտուն և ոչ բարեմոյն: Երկու մասունք են բանականութեան 'ի մարդ. Ըմբռնողական՝ որ ճանաչէ զճշմարիտն, և Բաղձողական՝ որ զհետ երթայ բարւոյն: Գիտութիւնք թէպէտ և վսեմականք՝ կատարեն միայն զառաջինն. այլ բարոյական առաքինութիւնք կատարեն միանգամայն զերկոսին. զմին խոհեմութեամբ, և զմիւսն այլովք առաքինութեամբք: Մեծ իմաստութիւն է գիտել՝ լինել բարի: Եւ թէպէտ իմացական առաքինութիւնք են կամաւորք 'ի ստանալն, բայց ոչ վասն այնր կոչին ընտրողականք՝ ըստ նեղքին պայմանի բարոյական առաքինութեանց. զի չէ յազատութեան մարդոյ՝ առնել, զի գիտութիւնն իւր ճշմարիտ կամ սուտ. բայց է յազատութեան նորա առնել, զի գործն իւր բարոյապէս բարի կամ չար: Թող զի զունակութիւնս գիտութեանց հնար է մարդոյ վարել 'ի չարն կամ 'ի բարին. որպէս զճոխութիւն, զոյժ, զզէնս և զերիվարս. բայց զունակութիւնս բարոյական առաքինութեանց անհնար է մարդոյ վարել՝ բայց եթէ 'ի բարին. զի ունակութեան չէ հնար լինել բարի, եթէ վախճանն է չար: Ապա չէ ամենայնիւ բարի այն՝ զոր հնար է վարել և 'ի չարն: Չէ ամօթ հողագործի և եղնավարի լինել տգէտ. բայց ամօթ է նոցա լինել մոլի, զի ամենայն մարդիկ չեն պարտական լինել գիտուն, այլ լինել բարի ամենեքին են պարտական:

Նոյն ինքն աստուածութիւնն զկնովին իմաստութիւն և բարութիւն՝ 'ի կամս հայեցեալ և ոչ 'ի զգօնութիւն, տնօրինէ զկարգ փառաց զհատուցումն, ոչ ըստ չափու ուսական գիտութեանց, այլ ըստ չափու բարոյական առաքինութեանց: Եւ ոչ փոխատրէ վարձս այնմ՝ որ գիտէ, այլ այնմ որ առնէ: Ապա որպէս որ առասական յորջորջմամբ կոչէ մոլութիւն, նշանակէ զբարոյական մոլութիւն, նոյնպէս որ առասական յորջորջմամբ կոչէ առաքինութիւն, նշանակէ զբարոյական առաքինութիւն: Զի ներհակին ներհակաւ ճանաչի: Յայսմ ամենայնէ որ ասացաւ, մարթիս հաւաքել զբովանդակեալ սահման բարոյական առաքինութեան ըստ մտաց Արիստոտելի այսպէս. Բարոյական առաքինութիւնն է ունակութիւն ինչ ընտրողական՝ 'ի բաղձողական կարողութեան. որ տրամադրէ զմարդ 'ի գործել զհամեստս՝ ըստ թելադրելոյ խոհեմութեան:



## ԳԼՈՒԽ Ե.

### Յաղագս յատկութեան բարոյական առաքինութեան:

Էական յատկութիւն բարոյական առաքինութեան է լինել պատուելի, որպէս և մոլութեանն լինել գարշելի: Պատիւն ըստ փիլիսոփայից՝ է արտաքին ինչ նշան յարգի համարման, զոր ներքուստ ունիմք առ գերազանցութիւն ուրուք. իսկ անարգանքն է նշան ինչ անգոսնութեան, զոր ներքուստ ունիմք առ անարգութիւն ուրուք: Գերազանցութիւն է արժանաւոր յարգի, և յարգն է վարձ արժանաւորութեան: Բայց քանզի յարգն է աներևոյթ, լինէր աներևակ արժանաւորին, եթէ պատիւն չլինէր վկայ երևելի՝ աներևոյթ յարգին: Ապա գերազանցութիւնն պատճառէ զզարմանս, զարմանքն զակնածութիւն, և ակնածութիւնն զերկիւղ ինչ պատկառանաց՝ իբր ստորադունի ուրուք առ վերագոյն ոք. և այս բովանդակ կոչի Յարգութիւն: Ի յարգութենէ աստի ծնանին արտաքին նշանքս. գովութիւնք, խոնարհել զպարանոցս, ծափ, արմաւենիք և պսակք. և այն է Պատիւ: Բայց այս ինչ ընդ մէջ է պատուոյ և գովութեան. զի պատիւն հայի 'ի ներքինն անձին. իսկ գովութիւնն հայի յարտաքին գործս: Պատիւն յարգէ զբարոյական գերազանցութիւնս, իսկ գովութիւնն մեծ համարի և զբնական կատարելութիւնս: Մինչև բազում ինչ իրք արժանի են գովութեան, այլ ոչ պատուոյ, որպէս ասացից զկնի: Ապա գերազանցութիւնն է 'ի պատուեալն և ոչ 'ի պատուողն. և պատիւն է 'ի պատուողն, և ոչ 'ի պատուեալն: Բայց թէպէտ պատիւն՝ արտաքին բարի իմն է առաքինւոյն, սակայն և այնպէս՝ լինելն պատուելի է ներքին բարի առաքինութեան:

Այս ամենայն է ամենայնիւ ճշմարիտ. բայց արժան է քեզ առնուլ 'ի միտ, զի գերազանցութիւնն է անուն ինչ հոմ, որ հնչէ 'ի պէսպէս միտս: Վասն այսորիկ՝ այնմ որ մատամբ ցուցեալ

զարգէլի ոք ծերունի՝ ասաց. Սա է գերազանց փիլիսոփայ. պատասխանի ետ ոմն ծաղրածու ցուցանելով զայլ ոք. Նա սա է գերազանց ոք խոհակեր: Իւրաքանչիւր ոք մեծ համարի զայն որ ըստ ըղձի: Եւ վասն զի բազումք 'ի մարդկանէ են մոլորադատ, գերազանց համարեալ ոչ զառաւելեալն յառաքինութեան, այլ զօգտամատոյցն և զբերկրականն, յիմարաբար պատուեն զարհամարհն և արհամարհեն զպատուականն: Բայց թէ ուղիղ դատիմք, ասէ Արիստոտէլ, միայն առաքինութիւնն է արժանի պատուոյ, որպէս և միայն մոլութիւնն է արժանի անարգութեան:

Համեստութիւն և պատիւ ձեռն 'ի ձեռն տան, և զոյգ գընան. և զի միայն առաքինութիւնն է համեստ բարի, որպէս ցուցաւ, միայն առաքինութիւնն է բարի պատուոյ արժանի:

Յայտ է թէ որպէս ծիծաղելի յատուկ է մարդոյ, այլ փոխադրութեամբ ասի զզուարճալի դաշտաց և զշնորհաշուք ծաղկանց և զպարզ օդոց, սոյնպէս պատիւն է յատկութիւն բարոյական առաքինութեան միայն, բայց նմանութեամբ ընծայի և բնաւոր զօրութեանց անկեց և անասնոց:

Կղաւդիանոս[17] գովեաց զօձն որպէս զքաջ զօրական ինքնազէն. Սիմոնիդէս յօրինեաց գովեստ 'ի վերայ ջորւոյն յաղթականի յընթացս ողիմպիական խաղուց՝ նախանձ արկեալ Վիրգիլեան գովասանութեան 'ի վերայ արագոտն Կամիլլայի, Թեմիոն գովեաց զջղախոտն. Ասկղեպիադէս՝ զԱրտեմիսիա. Փանիաս զեղինջն: Եւ ոմանք անցեալ զհրապարաւ գովութեան՝ ձկնց և շանց քաջաց կանգնեցին արձանս, բրգունս և շիրիմս: Բանաստեղծական հանճարն, որ մտացածին աքանչելեօք հնչաւորէ զանշունչս, և անշնչացուցանէ զշնչաւորս, փոխաբերեալ զսեպհականն գերազանցութիւն առ նմանականս՝ ձևացուցանէ, թէ որ ինչ է յօգուտ՝ է առաքինութիւն շահեկան, և որ ինչ 'ի հեշտ. ժանտութիւն մոլեկան: Այլ դոյն իսկ փոխաբերութիւն ցուցանէ թէ ճշմարիտ պատիւն է սեպհական բարոյական առաքինութեան միայնոյ, իբր զի ըստ այնմ պատուեն այն առնկք և անասունք, ըստ որում համարի թէ բնաւոր ուրակք նոցա պատկեր են բարոյական առաքինութեանց:

Զնոյն ասեմ և զմարդկանէ ըստ բնաւոր ձրից. որ չեն ստացեալ 'ի նոցանէ, որպիսի են գեղեցկութիւն և ույժ: Մարթ է բնաւոր ձրիցս լինել նիւթ գովութեան, այլ ոչ պատուոյ. քանզի որպէս զի լոյն ինչ գովելի, շատ է նմա բնաւոր կատարելութիւն յինչ և իցէ սեռի. այլ առ 'ի լինել պատուելի պիտի բարոյական բարութիւն անձին: Այն զի գովութիւնն հիմնեալ 'ի բնական առաքինութիւն և ոչ 'ի բարոյականն, չէ գովութիւն ճշմարիտ, և ոչ գովութիւն սեպհական մարդոյ: Որ գովեացն զանվանելի զօրութիւն Ակլիդեայ[18] և զգեղ յափշտակելոյն Հեղինեայ, ոչ գովեաց զնոսա, այլ զբնու-



թիւնն 'ի նոսա. որ նոյնպէս գովելի է 'ի ցուլ և 'ի սիրամարգ: Ի ձահ ասաց բանաստեղծն Ովիդիոս. Այն որ չէ արարեալ 'ի մէնջ, միթէ ասիցի՞ մեր:

Բայց եթէ որ բնաւորապէս ունի զայսպիսի ձիրս, առաքինօրէն 'ի կիր արկցէ, յայնժամ ոչ միայն արժանաւորի ճշմարիտ գովութեան, այլ և ճշմարիտ պատուոյ, զի թէպէտ և որակութիւնն է ընդաբոյս և բնական, բայց գործածութիւնն է կամաւոր և բարոյական:

Մեքենական արուեստք, որպէս դարբնութիւն, նկարչութիւն և քանդակագործութիւն, են արժանաւոր մեծի գովութեան՝ քան զբնաւոր զօրութիւնս. զի են փոքրիկ առուակ ինչ իմացական առաքինութեանց և ստացականք: Եւ 'ի մէջ այնց այնք առաւել են գովելի, որոց գործք առաւել են կատարեալ. և գործքն են առաւել կատարեալ, յորժամ առաւել հաղորդին ազատական արուեստից:

Այսպիսի է նկարչութիւն, որ ընդ հայեցողութեան սկըզբամբք երևեցուցանէ զհեռաւորն մօտաւոր, և զսուտն ճշմարիտ. և անուաւոր ժամացոյցն, յորում զօղեալ զարմանալի ինչ հանճար՝ հոլովէ զերկնային պարունակս 'ի փոքրիկ տփի: Եւ ձեռակերան Արքիտասայ, որ ընթացուցանէր ընդ երկիր զանձանս, և թռուցանէր ընդ օդս զփայտակերտ թռչունս: Այլ թէպէտ այս արուեստք են զարմանալիք և գովութեան արժանիք, բայց չեն արժանաւորք ճշմարիտ պատուոյ, զի գերազանցութիւն նոցա առնէ բնաւորապէս բարի զգործն արուեստին, այլ ոչ առնէ բարոյապէս բարի զարուեստագէտն: Վասն այսորիկ ձեռագործաց նոցա ոչ հատանի գին պատուով, այլ փողով, զի են պիտանի, այլ ոչ պատուելի. արդոյ առնեն զբախտն, այլ ոչ զանձն: Զէ ճշմարիտ պատուելի բարի, բայց այն միայն՝ որ պարապրէ յինքեան զամենայն պիտանութիւն և զբերկրութիւն, և մեծ համարի միայն վասն իւրոյ սեպհական բարութեան: Ճշմարիտ առաքինութիւնն չէ վարձկան: Գերազանցութիւն Արիստիդեայ[19] 'ի նկարչութեան՝ հնար է թէ չափեսցի գնովք գործոց իւրոց. զի զմի ևեթ յայնց գնեաց արքայն Ատտալոս հարիւր տաղանդաց արծաթոյ և չգնեաց զայն թանկագնոյ: Մարթ էր Արիստիդեայ այնու արծաթով գնել արձան մի ոսկեղէն. բայց եթէ արքայ պատուեալ էր զԱրիստիդէս ոսկի արձանաւ, մարթ էր երկուանալ՝ թէ՞ր արդեօք առաւելուցու հանճար, արքային թէ արձանին: Եւ բն հնար էր այնուհետև պատուել զարիութիւն Տիմոլէոնի աղաչէի հայրենեացն[20]: Բայց թէպէտ և 'ի պատիւ Արիստիդեայ՝ որպէս Տիմոլէոնի, կանգնեալ էր արձան ոսկի, ոսկի արձանին Արիստիդեայ առ ոսկւով արձանին Տիմոլէոնի՝ լինէր ոսկեպղինձ. կերպարանն նուաստացուցանէր զնիւթն:

Բազում՝ ինչ է ընդ մէջ պատուոյ և պատուոյ, որպէս գերաղանցութեան և գերաղանցութեան։ Գարնի պսակաւ պատուին բանաստեղծք և յաղթանակօղք. բայց բանաստեղծից գարնին՝ առ գարնեաւ յաղթանակողաց է չնչին ինչ. զի նա պսակ է ճարտարութեան միայն, և սա արիական հոգւոյ։

Գործն ազդաւ հարկ է առնել, թէ թէպէտ միտքն է կարողութիւն ազնուագոյն քան զբաղձանս, սակայն և այնպէս առաքինութիւնքն որք կանոնաւորեն զբաղձանս բարի վարուց, են առաւել պատուելի քան զառաքինութիւնս որք լուսաւորեն զմիտս վսեմական հայեցողութեամբք։ Բազեացեն միտք որչափ վարդապետութիւնս սերմանեալ իցեն Պղատոն 'ի զուարթարար բուրաստանս Ակադեմիոյ, և Արիստոտէլ 'ի փոշոտ ճեմարանս Լիկէոնի[21]. տարրացին յայնգլուխ ամենայն գիտութիւնք՝ որպէս յականն Պիւռոսի[22]։ Զինչ պարծանք իցեն գիտել զամենայն զարտաքինս և զերթերականս, և չճանաչել զանձն. զինչ պատիւ իցէ լի լինել գիտութեամբք և թափուր յառաքինութենէ. զինչ է մոլի գիտունն, բայց եթէ գրաստ գրաբարձ։

Ապա մեծապէս գովելի են հայեցողական գիտութիւնք, այլ չեն ինքութեամբ պատուելիք. բայց միայն զի արբանեկեն բարոյական առաքինութեանց և կամ ընդ նոսա լծորդին։ Սերտ դաշնաւոր են միմեանց բաղձողականն և իմացականն, որպէս լուսիցես յառաջակայդ։ Զէ հնար լինել լուսաւորիլ միոյ, ցորչափ սիրտն է վարակեալ կրիւք. և ոչ փարատել հնար է զամպս կրից, թէ ոչ պայծառ շողշողեն շառաւիղք մտաց։ Վասն այսորիկ թէպէտ յիմացական առաքինութիւնս խոհեմութիւնն ստոր է յազնուութեան քան զհայեցողական գիտութիւնս 'ի սակս ենթակային, զի իմաստութիւնն դադարէ 'ի հայեցողական և յընդհանուր միտս, իսկ խոհեմութիւնն 'ի գործնականն և 'ի մասնաւորն. սակայն և այնպէս խոհեմութիւնն է առաւել պատուելի. զի չափաւ ուղիղ բանին կանոնաւորեալ զկամս և զկիրս՝ ինքն միայն է առաքինութիւն բարոյական յիմացականս, և իմացական 'ի բարոյականս, որպէս տեսցես յիւրում տեղւոջ։

Ապա խոհեմութիւնն է թագուհի գիտութեանց և գիտութիւն թագաւորաց. զօրացեալ իշխանութեամբ և չքեղացեալ ծիրանեօք, ոչ պատուեալ միայն 'ի ժողովրդոց, այլ և երկրպագեալ։ Վասն զի յանգործ նստիլ հայեցողական գիտութեանց՝ 'ի նկատել զերկինս, սա օգտակար օրինօք հաստատէ զտէրութիւնս և ուղղէ զաշխարհ։ Վասն այսորիկ տեսանեմք զիմաստունս պատառատուն ձորձով մուրանալ առ դրունս խոհեմաց։

Վսեմամիտ փիլիսոփայ էր 'ի տեսականս մեծն Դեմետր Փաղերացի[23], և 'ի պատիւ նորա կանգնեալ էին արձանք ըստ



աւուրց տարւոյ. բայց չընկալաւ զայն պատիւ որպէս փիլիսոփայ, այլ որպէս խոհեմ. զի զամս տասն հաստատուն կալաւ իմաստութեամբ իւրով զհասարակապետութիւն Աթենացւոց, որ մերձ էր 'ի կործանումն։ Մեծ գիտուն էր Սողոն, բայց հասանել նորա 'ի գերակայ պատիւ չեղև գիտութեամբ այլ խոհեմութեամբ, զի գաղափարեալ յիւրոց բարուց օրէնս քաղաքականս՝ ջնջեաց զանմարգի և զբռնական օրէնս վայրենամիտ Դրակոնի[24]։ Թող զի ամենայն գիտութիւնք թէպէտև ազնիւք և ազատք, գաղտնի հանդուցիւք շղթայօրէն աղխաղխեալ են ընդ միմեանս. բայց առաջին օղ շղթային է 'ի ձեռին բարոյական առաքինութեան։ Ամենայն գիտութիւնք գործնականք առաջնորդեն առ տեսականս. և ամենայն տեսական գիտութիւնք բնականք՝ բնաւորապէս առաջնորդեն առ ճանաչումն արարչին բնութեան 'ի պաշտել զնա. և այս գերապանծ առաքինութիւն բարոյական՝ է վերջին վախճան իմացական առաքինութեանց, որք յայսմ՝ վախճան ընդունին զիւրեանց պատիւ։

Ապա յառաջելոց աստի իմն, թէ որպէս մոլութեան միայն անկ է ճշմարիտ զարտուղումն. նոյնպէս ճշմարիտ պատիւ և գերագոյն գովութիւն անկ է միայնոյ բարոյական առաքինութեան, որ պատկեր է աստուածայնոյն. սմին իրի և յաչս Աստուծոյ մեծարգի է և վարձուց արժանի։ Վասն այնորիկ իմաստութեամբ սահմանեցին բարեկարգ հասարակապետութիւնք մեծամեծ պատիւս և հանդիսական գովեստ արանց քաջաց և առաքինեաց, և 'ի ձայն փողոյ քարոզէին 'ի հրապարակս զարիական գործս քաղաքացւոց։ Այն պատիւք էին հարկք առաքինութեան, և գարշանք մոլութեան։ Հնչիւն փողոցն զարթուցանէր զնախանձաւորութիւն, և հեղձուցանէր զմախանս։ Բայց և այն ճշմարիտ է թէ առաքինութիւնն ոչ սնանի գովութեամբ, և ոչ փքանայ պատուով։ Արժանի է նա ամենայնի, այլ ոչինչ խնդրէ. և ընդէր խնդրիցէ, զոր թէ գտանէ արհամարհէ։ Գովութիւն է ստուեր առաքինութեան. և հանդոյն ստուերի փախչի 'ի հետամուտն, և հետամուտ լինի փախուցելոյն։ Ապա որպէս յատկութիւն մարդոյ չէ իրօք ծիծաղելն, այլ ծիծաղական լինել. այնպէս յատկութիւն առաքինութեան ոչ է գովիլ, այլ գովելի լինել. ոչ է պատուիլ, այլ պատուելի լինել։ Արժանաւորութիւնն է առաքինւոյն, գործն է բախտի կոյր բաշխողի, որ յոլովակի զայն որ արժան էր միում, տայ այլում։

Պատիւն է արտաքին բարի և նպատակ նախանձու. պատուելին է ներքին բարի և արտաքոյ նախանձու. զի է նոյն իսկ առաքինութիւնն, զոր ոչ ոք կարէ քեզ պարգեւել, և ոչ ոք կարէ 'ի քէն հանել։ Մեծն այն Փաղերացի պատուեալն յԱթենացւոց բազմապատիկ արձանօք՝ իբրև լուաւ թէ այն

ամենայն արձանք յապերախտ և 'ի կատաղի ժողովրդենէն էին յերկիր կործանեալք, ժպտելով եւ պատասխանի. Կարացին կործանել զիմ պատկերս, այլ ոչ և զառաքինութիւն որոց վասն զայնոսիկ կանգնեաց երբեմն ժողովուրդն երախտապարտ:

Սակայն բաց յարժանաւորութենէ գովութեան և պատուոյ են և այլ երեք ազնուական յատկութիւնք բարոյական առաքինութեան. այսինքն է՝ զի զառաքինական գործս առնէ Դիւրինս, Զուարթս և Միօրինակս. այլ սոքա կախեալ կան յորոց զկնի:

# ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

## ՑԱՂԱԳՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՈՒՆԱԿՈՒԹԵԱՆՑ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ

## ԳԼՈՒԽ Ա.

*Ցաղագս բնական կարողութեանց, յորս ծնանին բարոյական ունակութիւնք:*

ՈՐՊԷՍ բնաբանական գիտութիւնն է առողջացուցիչ մարմնոց, նոյնպէս բարոյական գիտութիւնն է բուժիչ հոգւոց: Վասն այսորիկ Պղատոն յերթալ իւրում ուղղել զթիւր վարս արքային Դիոնեսիոսի, Ճշմարտութեամբ ասաց. Երթամ բժշկել զՍիկիլիա որ ունի ցաւ գլխոյ: Արդ քանզի ամենայն արուեստ հայի յիւր ենթակայ, վասն այսորիկ բնաբանութիւնն հայի 'ի կազմութիւն մարմնոց՝ արարեալ զնորա զգուշաւոր անդամազննութիւն. և բարոյականն առանց մասնաւոր իմն անդամազննութեան ոգւոյ՝ ոչ կարողանայ ճանաչել զնեալհական գործողութիւնս:

Երեք են մասունք մարդկային ոգւոյ. առաջինն ամենեին անբանական, երկրորդն ըստ մասին բանական և ըստ մասին ոչ. երրորդն բոլորովին բանական: Առաջինն է տնկականն, հասարակ տնկոց. երկրորդն է զգայութիւնն՝ ըստ մասին հասարակ անասնոց և ըստ մասին ոչ. և երրորդն է միտքն կամ բան՝ սեպհական մարդոյ: Արդ թողցուք զառաջինն իբր անպիտան առ բարոյական գիտութիւն, զի չհնազանդի բանին. նա՝ որպէս լուար, զկէս ժամանակին ծախէ 'ի քուն և գործէ անզգայ:

Մասն զգայական և մասն բանական՝ ունին իւրաքանչիւր երկուս կարողութիւնս. մին Ըմբռնողական և միւսն Բաղձողական. զի ամենայն շնչաւոր բաղձայ իւրում բարւոյ, այլ ոչ ոք բաղձայ այնմ զոր ոչ ըմբռնէ:

Ապա չորք են կարողութիւնք բնականք, որք յառաջ բերեն զբարոյական ներգործութիւնս, երկուքն՝ զգայական և մարմնաւոր, և երկուքն՝ հոգևոր և բանաւոր:

Ըմբռնողականն մարմնաւոր, զոր և կոչեմք Պատկերակերպութիւն կամ Երևակայութիւն, է կարողութիւն ինչ ստորին և զգայական մասին հոգւոյ. որ 'ի ձեռն հասարակ զգայութեան հաւաքէ և ճանաչէ զամենայն զպատկերս ախորժ կամ անախորժ առարկայից, որք յաչաց՝ յականջաց և յայլ արտաքին զգայութեանց հետազօտ և հաւատարիմ լրտեսաց՝ առաքին առ նա. նկարեալ յինքեան առաւել ևս վառ և մնայուն գունովք զայն պատիր երևոյթս, որք և 'ի քուն երևութանան որոց չէ տեսեալ զնոսա:

Բաղձողականն մարմնաւոր կամ Զգայական բաղձանքն է նոյնպէս կարողութիւն ինչ նոյն ստորին մասին հոգւոյ. որ ցանկայ ախորժական առարկայից, և փախչի յանախորժից՝ մատուցելոց նմա 'ի դաշնաւոր պատկերակերպութենէ: Սա է հրէշ ինչ երկկերպարան, գլխովն առն և գլխովն հաւր. զի յերկուց ներհական շարժութեանց յուզի՝ 'ի բարկութենէ և 'ի ցանկութենէ. 'ի բարկութենէ՝ զի խոյս տայցէ 'ի դժուարէն. և 'ի ցանկութենէ՝ զի զհետ լիցի բերկրականին: Եւ այս շարժութիւնք կոչին կիրք և կիրք:

Ըմբռնողականն բանական է միտքն, կարողութիւն հոգևոր և վսեմ. որ յայնց նիւթական պատկերաց 'ի պատկերակերպութենէ մատուցելոց՝ որք են յողդողդ, կերպարանէ յինքեան նոր պատկերս հոգևորս և անջինջս՝ գանձեալ զնոսա յաւանդարան յիշողութեան, զի 'ի կիր արկցէ յիւր խօսս:

Իսկ բաղձողականն բանական է կամքն, դշխոյ կարողութեանց. որ միայն ազատ գոլով՝ ազատօրէն ընտրէ կամ մերժէ զառարկայս, որք 'ի մտաց իմանալի պատկերօքն առաջի եդան նմա. և ապա հրամայէ զգայութեանցս սպասաւորաց և արբանեկաց իւրոց՝ հետամուտ լինել նոցա, կամ փախչել 'ի նոցանէ:

Յայսցանէ ունիս իմանալ, թէ պատկերակերպութիւնն է իբրու միտք ինչ նիւթական, և միտքն է իբր պատկերակերպութիւն ինչ հոգևոր: Բաղձանքն զգայական է կամք ինչ նիւթական, և կամքն է բաղձանք ինչ հոգևոր: Առանց երևակայութեան միտքն լինէր կոյր. զի ոչ մտանէ ինչ 'ի տաճար մտաց, որ ոչ անցանէ ընդ դրունս զգայութեանց. բայց առանց մտաց երևակայութիւնն լինէր յիմար, զի շփոթէր զճշմարիտն ընդ երևակայականին: Մինչ զի փոփոխ ձեռնտուութեամբ երևակայութիւնն առաջնորդէ մտաց, և միտքն ուղղէ զխոտորանս իւրոյ առաջնորդին:

Բաղձանքն զգայական և բաղձանքն բանական՝ թէպէտ են ամոլք դաշնաւորք և լծակիցք, սակայն վասն զի մին է երկրաւոր և միւսն երկնաւոր, նա մահկանացու և սա մշտնջենաւոր, է զի ատեն զմիմեանս և է զի սիրեն: Միշտ են կենակից, և միշտ 'ի կռուի: Մի զմի հնարին յինքեանս ձգել.



այլ դիւրագոյն է ստորագունին յինքն ձգել զվերագոյնն. զի զգալի առարկայք առաւել շարժեն քան զիմանալիս, և դիւրագոյն է վայրաբերել քան զվերբերել:

Բաղձանքն զգայական թէ ոչ հաղորդէր ազդեցութեան բանին, լինէր բոլորովին անբան. և 'ի հարկէ ձգիւր յինչ և իցէ առարկայ բերկրական՝ առաջի արարեալ նմա յերևակայութենէ իբրև զանբան անասունս: Վասն այսորիկ բուռն թափք բարկութեան և ցանկութեան երբ յառաջեն քան զբան, ոչ մեղական են և ոչ առաքինական, այլ բնական և անասնական: Ապա բաղձանքն զգայական է կարողութիւն ինչ ըստ մասին անբան և հարկաւոր, և ըստ մասին բանաւոր և ազատ: Է հպատակ կամաց, այլ հպատակ քաղաքային և ոչ ստրկական. սպասաւոր քաղաքական և ոչ գերի շղթայակապ: Սմին իրի բազում անգամ ապստամբի 'ի տիկնոջէ իւրմէ 'ի կամաց, արհամարհէ զօրէնս նորա և յափշտակէ զիշխանութիւն նորա: Ստամբակին երբեմն և կամք ընդդէմ մտաց 'ի հաճել զպատիր հեշտութիւնս:

Առարկայ մտաց է ճշմարիտն, և առարկայ կամաց՝ բարին: Այլ միտք բազում անգամ զառերևոյթն համարին ճշմարտութիւն. որպէս շունք հաչեն առ շուննկարեալ 'ի Պրաքսիտելեայ: Եւ կամք բազում անգամ զհետ երթան առերևոյթ բարւոյն իբր ճշմարտի, որպէս ասի յառակս թէ շունն եթող զմիսն վասն ստուերի նորա: Եւ բազում անգամ ևս ուղիղ առաջնորդութեամբ մտաց՝ ճանաչէ զբարին, բայց խոտորի յարի 'ի չարն: Արդ 'ի միտ առ թէ որչափ դժուարին իցէ մարդոյ չգործել զչար, դիւրագայթ գոլով յընտրութեան բարւոյ և չարի:

## ԳԼՈՒԽ Բ.

*Բնական կարողութիւնք իցե՞ն արդեօք կատարելագոյնք յայս ոք քան յայն:*

Փորձիւ տեսանեմք, զի ոմանք 'ի մարդկանէ այնպէս են թմբրեալք, մինչև երևել նոցա մարմին անհոգի. և ոմանք այնպէս սթափք, մինչև կարծել զնոսա հոգիս անմարմինս: Այս պէսպիսութիւն՝ 'ի կարծիս էարկ զբազումս թէ հոգիք մարդկան են պէսպիսակք ըստ կատարելութեանց. զի բնաւպէս մտացի եղև, ասեն, Պղատոն, և բնաւպէս անմիտ Մարգիտէս[25]. ապա եթէ հոգին Պղատոնի մտեալ էր 'ի մարմին Մարգիտեայ՝ և հոգին Մարգիտեայ 'ի մարմին Պղատոնի, Մարգիտէս լինէր գլուխ մտացեաց, և Պղատոն գլուխ անմտաց: Այսպէս իմա-

տասխրեցին մեծարու արք համալսարանաց հեթանոսաց և քրիստոնէից։ Այլ զգօնամիտն Արիստոտէլ ուսուցանէ, թէ մեծագոյն կատարելութիւն հոգւոյ յառաջ գայ յառաւելութենէ կատարելութեան մարմնոյ։ Ոչ յամենայն փայտէ դրօշէին զարձան Հերմեայ[26], և ոչ յամենայն մարմնոյ կերպանան ուշիմ և զօրաւոր մարդիկ։

Մարմինն է գործարան գործողութեանց հոգւոյ. և այնպիսի են բնական գործողութիւնք հոգւոյ, որպիսի է գործարանն։ Բանք մեր են զբնական գործոյ, և ոչ զանձնիշխանականաց։

Յայտնի ցոյց ընծայեն այսմ գործողութիւնք պատահականք։ Եթէ մարմինն է առողջ, գործողութիւնք հոգւոյ ևս են զօրաւորք. եթէ հիւանդ, անզօրք։ Եթէ մաղձային, փոյթք. եթէ մաղասային, դանդաղք։ Եթէ տղայ է, կան խափանք. որպէս թէ հոգւոյ բանականի չիցէ բնակեալ յայն անդամս։ Ապա մի ոք մեղադիր լիցի արարչին հոգւոց թէ չարար զամենեսին միօրինակ կատարեալ. այլ բնութեան, որ ոչ կարէ առնել զամենայն մարմինս միապէս կատարեալ։

Ածանց հանգամանք ծնողաց, շարժումն լուսաւորաց, արեգակնութիւն տեղեաց, կաղմութիւն անդամոց՝ պէսպէսացուցանեն զխառնուած մարմնոյ։ Պէսպէսութիւն խառնուածոց առնէ աչս մի քան զմի սրատես, պատկերակերպութիւնս մի քան զմի զօրաւոր, բաղձանս մի քան զմի սաստկագոյն, միտս մի քան զմի սթափս, և կամս բնաւորապէս մի քան զմի բարեյօժարս. և վասն այնորիկ հոգին թուի առաւել կատարեալ, զի մարմինն է առաւել կատարեալ։

Ստոյգ իմն է թէ որպէս յառաջատես բնութիւնն հայի յօգուտ տիեզերաց, նոյնպէս կարևոր համարեալ նորա մարդկային ընկերութեան զպէսպէս արուեստս և զպէսպէս կարգանձանց, կարևոր վարկաւ և զպէսպէսութիւն բնական կատարելութեանց մարդկան. զի անկատարք ծնցին 'ի ծառայել կատարելոց. և որ չէ ընդունակ ազատական արուեստից, կարգեսցի առ մեքենականս։

Յասացելոց աստի դիւրին է քեզ լուծանել զայն դժուարին խնդիր, թէ արդեօք 'ի ձեռս իցէ իւրաքանչիւրոց հասանել 'ի գագաթն բարոյական առաքինութեանց։ Ոչ խօսի զգերբնականաց և զշնորհականաց Արիստոտէլ, զի չէր աստուածաբան. և եղկելի այնու՝ զի չէհաս 'ի ծանօթութիւն շնորհաց։ Ապա իմաստասիրէին Ստոյիկեանք, թէ ազատ կամքն է որ առնէ զներգործութիւնն մոլեկան կամ առաքինական, և լինել առաքինի կամ մոլի՝ է յիշխանութեան կամաց. վասն որոյ 'ի կամել մարդոյ լինել կարի իմն մոլի, լինի. և 'ի կամել նորա լինել կարի իմն առաքինի, ժամանն լինի իւրոյն ըղձից. զի կամելն չունի այլ ինչ ներհակ, բայց եթէ զչկամելն։ Այլ



լուր թէ որպէս Արիստոտէլ ասացեալքս լուծանէ զամենայն տարակոյս։ Մարդն է բաղկացեալ իմն 'ի նիւթականէ և 'ի հոգևորէ, 'ի զգայութենէ և 'ի բանականութենէ։ Ստոյգ է թէ մասնն բանական կարէ ձգիլ ըղձմամբ առ այդպիսի բարձրագոյն նպատակ. այլ զգայական մասն որ զօրագոյն է յոյս ոք քան յոյն, լինի հակակշիռ ձգման կամացն յայս ոք քան յոյն ոք։ Ամենայն ոք կարէ լինել արի և խոհեմ. բայց դըժուարին է թէ բնաւոր զօրութեամբ ամենեքին կարողասցին լինել զօրաւոր իբրև զԱքիլլէս, և խոհեմ իբրև զՈդիսևս[27]. 'ի զօրանալ յոմանս կրից երկիւղի, կամ 'ի պակասել ուշոյ մտաց։ Վասն այսորիկ չկարացեալ կամացն կատարումն տալ այնպիսի բարձրագոյն ձգմանն, մնայ թարմատար։ Բայց և այնպէս՝ յընթացս առաքինութեան պարտ է իւրաքանչիւրոց փոյթ ունել, զի թէ ոչ կարասցէ առնուլ զառաջին յաղթանակն, գէթ առցէ զերկրորդն. և ուր ոչ կարասցէ հասանել բուռն զօրութեամբ, հասցէ ըղձմամբ։ Զի միայն 'ի սաստամունս առաքինութեան օրէն է ըղձանալ այնմ, որում ոչ կարես լինել հասու, վասն լինելոյ նորա անչափ ըղձալի։

Ապա երջանիկ են նոքա, որոց 'ի բնէ վիճակին ձիրք բնական կարողութեանց՝ քաջադէպք առ մեծամեծ առաքինութիւնս բարոյականս։ Բայց որպիսի և իցէ երկիրն, յիրաւի է պարարտել զայն ըստ կարի՝ 'ի ձեռն մշակութեան։ Որ խաղայ քուէիւք, անձկայ նպաստաւորագոյն նշանի. բայց որ և դիպեսցի, ջանայ նովին բարեվիճակ առնել զխաղ իւր[28]։ Ոչ ոք 'ի մարդկանէ եղև բարեկեցիկ իբրև զՍոկրատէս. որոյ մուծեալ 'ի դպրոցս զիմաստասիրութիւն բարոյական՝ գլխովին եցոյց զայն 'ի վարս իւր։ Եւ թէ կորնչէին գիրք նորա, մարթ էր զամենեսեան ընթեռնուլ 'ի վարս նորա։ Մեծ ոմն աստեղագէտ, որ ոչ ճանաչէր զնա, տեսեալ զգծագրութիւն դիմաց նորա և զբնաւոր կերպարանս, սոսկացաւ և ասէ. Դա է մեծագոյնն 'ի չարագործս ժամանակիս։ Լուեալ աշակերտացն՝ փոքր մի ևս և ձգէին զձեռս 'ի սուսեր 'ի վրէժխնդրութիւն զրպարտութեան, եթէ չէր արգելեալ Սոկրատայ, ասելով. Ոչ ինչ անիրաւութիւն է դորա. այդպիսի էր իմ բնութիւն, այլ իմաստասիրութեամբ յաղթեցի։

# ԳԼՈՒԽ Գ.

*Յաղագս նախկին սերմանց, որք արտադրեն զբարոյական ունակութիւնս ։*

Զորքս ինչ ընթացակցին 'ի բուսականս. երկիր, սերմն, տունկ և պտուղ: Եւ զորքս ինչ ընթացակցին 'ի բարոյական առաքինութիւնս. Բնական կարողութիւնք, այն է երկիր. առաջին ներգործութիւնք, այն է ունակութեանն սերմանք. Ունակութիւնն յառաջ եկեալ 'ի ներգործութեանց, այն է տունկն. և ներգործութիւնք անդրէն բղխեալք յունակութենէ, այն է պտուղք առաքինութեանց: Աստ արդէն խօսեցաք զբնական կարողութեանց, արդ խօսեսցուք զառաջին ներգործութեանց. որք են սերմանք առաքինական ունակութեան:

Վէճ մեծ եղև առ փիլիսոփայս, միթէ առաքինութիւնք և մոլութիւնք անընդմիջաբար բղխիցեն 'ի բնական կարողութեանց հոգւոյն, մինչև մարթ իցէ ճշմարտութեամբ կոչել զնոսա ընդաբոյսս, տուեալ զգօլ կամ զգարով մարդկայնոյ բնութեան և ոչ մարդոյ: Ըստ իրաց ինչ, վասն զի առաջին է 'ի մարդ՝ կեալ անասնօրէն քան մարդկօրէն, 'ի վարել նորա նախ զզգայութիւն քան զբանականութիւն, չէն ինչ զարմանք՝ թէ բնաւորապէս միտէ առաւել 'ի մոլութիւն քան յառաքինութիւն. և շատ է նմա ծնանիլ առ 'ի չչար գործել: Ըստ այլ իրաց, վասն զի բնական օրէնք են ուղղակի համաձայն բանի, ճահողագոյն է մարդոյ բանաւորի բնաւորապէս միտել յառաքինութիւն քան 'ի ներհակ նորա. և շատ է նմա ծնանիլ մարդ առ 'ի զբարիս գործել: Ցուցեալ յառաջինն, զի ոմանք իրօք վիճակին բնութեան այնպէս սատամբակելոյ իւրեանց բարին, մինչ զչափ առնուլ զմեծի հակառակութեան առ առաքինութիւն քան զորթոյն առ կաղամբ: Ցուցեալ յերկրորդն, զի ոմանք ևս են վիճակեալ այնպիսւոյ քաղցր բնութեան, մինչև փոքր վիշտ է նոցա բիւրուց համբերել մեռելութեանց քան գործել ինչ գործ անարժան:

Արդ սկիզբն արարեալ բանից, յայտ է թէ յառաջնոց սերմանց առաքինութեանց՝ ոմանք են բնածինք 'ի սեպհական երկրի, և ոմանք ստացեալք արտաքուստ: Գտանին երբեմն յոմանս բնական կարողութիւնք այնպէս բարեկարգք, մինչև առանց յայլմէ ուսանելոյ և անբռնադատ ինքնին յառաջ բերել նոցա ներգործութիւնս բարոյականս: Այս ինքնաբերական արդասաւորութիւն երևի ևս յիմացական ունակութիւնս. զի բազումք առանց օգնականութեան արուեստի՝



գտին նոր արուեստս: Կադմոս[29] անդէտ գրոց հնարեաց զգիրս, զնորաստեղծ տանջանս մտաց. զի բազումք լացին յուսանել զայն, և այլք լացին վասն ուսանելոյ զայն: Անաքսիմանդր[30] հնարեաց զժամացոյցն արեգական. ընդ որ և արեգակն իսկ զարմացաւ, տեսեալ զինքն ըմբռնեալ 'ի սակաւագիծ ուռկան: Դիպենոս[31] եգիտ զարուեստ անդրիագործութեան. զի սրածայր ինչ երկաթով՝ որպէս Պաղլաս իւրով վահանաւ՝ փոխեաց զմարդիկ 'ի քարինս:

Նոյն արդասաւորութիւն երևի և 'ի բաղձողական կարողութիւնս շուրջ զբարուք, որպէս յիմացական կարողութիւնս շուրջ զգիտութեամբք. զի ոմանք բարեբաստիկ աշակերտք անձանց՝ արիացան առ մեծամեծ գործս բարոյականս: Որիորդն Կամիլլէ[32] զկաթն դիեցեալ զանասնոց յանտառի՝ իւրովի ձգեցաւ 'ի սէր պարկեշտութեան. և պահեաց զայն անյաղթ յարքունիս Վոլսկեանց, առանց զուակի այլ ոչ առանց պարծանաց: Աքիլլէս անեալ 'ի փափկասուն աղջկանց միջի, զի խգացեալ 'ի դրգանս՝ մի մարտիցի 'ի մարտ, մերժեաց զծիրանիս և զմանեակս, և ընտրեաց զզէնս՝ զոր չէր երբէք տեսեալ, առ 'ի հանդիսանալ 'ի գործս քաջութեան: Կիւրոս առաջի արկեալ դազանաց՝ զի մի թագաւորեսցէ, և 'ի գազանաց սնուցեալ, սկիզբն արար թագաւորութեան 'ի մէջ մանուկ հովուաց. այնպէս աշեղաստատ 'ի վերայ կաղնի աթոռոյ, որչափ զինի յոսկեղէն գահոյս թագաւորութեան Պարսից: Եւ Մարկոս Կատոն դեռ մանուկ գոլով խօսէր որպէս հիւպատոս, հասուն 'ի խակ հասակի: Զորմէ և ասացաւ, թէ յեօթնամեայ հասակի չէր մանուկ, և յեօթնասնամեայ հասակի չէր ծեր: Բնութիւնն ոչ պարգևէ զառաքինութիւնս, այլ փոխանակ առաքինութեանց պարգևէ աղայոց անկերպարան ինչ ստուերագրութիւնս, որք երբեմն ինքնին առնուն կերպարան: Այսպիսեաց առաքինութիւնք ստուերագրեցան 'ի խառնուածս. բայց զինի առին կերպարան սեպհական ջանիւ:

Ամենեքին սոքա եղեն բնածին սերմանք 'ի բնական կարողութիւնս, որք բողբոջեցին ունակութիւնս բարոյականս: Իսկ այլ սերմանք են փոխադրեալք արտաքուստ 'ի ներքս՝ այլում նմանողութեամբ կամ բուռն առնելով անձին: Սոյզ ժամանակ սերմանելոյ զայսոսիկ սերմանս՝ է մանկութիւնն. զի է սա առաւել դիւրամէտ առ նմանողութիւն, վասն որոյ և առաւել ընդունակ: Ցարմատս նորատունկ որթոյ եդեալ ինչ ինչ հոտաւէտ՝ անուշահոտ առնէ յաշխան զհասեալ խաղողս. և պատկերք առաքինութեանց պատուաստեալք 'ի դալար ախս նմանողութեամբ՝ աղնուականս յարդարեն զգործսն 'ի հասանել յորբունս: Կաթնկեր շանց ուսուցանեն որսորդք հաչել առ մորթ եղին կամ վարազու յորջոյ իւրեանց. զի համարձակեալ՝ մի երկիցեն 'ի գազանաց անտի յանտառի: Փորձ

կեղծեալ պատկերացմի՝ բառնայ զերկիւղ Ջիմարտին: Աթենացիք մարզէին զմանկունս իւրեանց յուսումն մարտի, երաժշտութեան և գիտութեանց, այլ ոչ 'ի տեսութիւն օրինակաց բարի վարուց. սմին իրի լինէին նոքա քաջ մարտիկք, պարաւորք և իմաստակք. բայց այնչափ ախտաւորք, մինչև Արտեմիկէ անուան վատանուն առնել բանդագակ զՑունաստան [33]: Չէք ոք քաջ փորձագետ առաքինութեանց քան զծնօղն. զի ոչինչ գաղափար բնաւորականս դիւրագոյն է ձգել 'ի նմանութիւն: Առաքինի արքայն Ագեսիլաոս [34] ոչ զոք կամեցաւ 'ի մանկութեան ունել իւր ուսուցիչ, ասէ. Ի նմանէ ուսայց, յորմէ և ծնայ: Ցառաջ քան զուսանիլ իւր գիտաց, թէ ոչ ոք կարօղ էր աւանդել նմա զուսումն վարուց լաւ քան զայն որ ետ նմա զկեանս:

Ի խոր տպաւորի պատկեր առաքինութեան, յորժամ ջերմ կնիք է սէրն հայրական, և մոմ կակուղ՝ հնազանդութիւնն որդիական: Բայց 'ի հայրական դպրոցի առաւել ուսուցանեն բարի օրինակք քան բարի խրատք. զի հաւատարիմ ևս են աչաց՝ քան ունկան. և դիւրին ևս է բարւոք հրամայել, քան բարւոք 'ի գործ դնել: Խոչափառ յանդիմանէր զմանուկ իւր խոտորագնաց, ասէ. Որդեակ՝ չգնաս ուղիղ. և նա ասէ. Հայր, գնամ որպէս զքո գնալդ տեսանեմ: Ծնօղին պարտ է լինել առաքինի, եթէ կամի զի ծնցին նմա առաքինի որդիք. զի որովհետև որդին է պատկեր ինչ հօրն, հրէշ իմն լինի բնութեան եթէ որդին նմանեսցի հօր ըստ կերպարանացն և ոչ ըստ բարուց:

Արդ պարտ է ուսուցանել զառաքինութիւնս քաղցրութեամբ և սիրով, առ 'ի չտանել ատելի զմի միայն սիրելին յաշխարհի: Արդ եթէ ոչ օգնեսցէ սէրն, նպաստամատոյց լիցի երկիւղն: Ճանապարհ առաքինութեան գտանի յաղնուականաց նշողիւք փառաց. այլ 'ի դեղջկաց փայլատակմամբք գանից: Եղինք նեղեալք 'ի շանց՝ դիմեն 'ի գիրկս մարդոյ, յորմէ փախչէին. և ախտաւորն առ զերծանելոյ 'ի կշտամբանաց յորմէ երկնչի, դիմէ յառաքինութիւնն յորմէ խորչէր: Միայն մոլորակք ունին շարժումն ներհակ այլոց աստեղաց՝ յարևմտից յարևելս, այլ վերին կամարն բուռն զօրութեամբ յափշտակեալ ձգէ զնոսա իբրև զայլ աստեղս յարևելից յարևմուտս: Ոմանք 'ի տղայոց՝ իւրեանց թիւր յօժարութեամբ գնան ընդդէմ բանականութեան. այլ յառաջին շարժունէ խիստ խրատուն դառնալ ունին 'ի բանաւորութիւն: Բելլերոփոն [35] սպան նիզակաւ զեղջերուաքաղն առասպելեալ, որ իւր այլանդակ գլխովք զարհուրեցուցանէր զԼիկիացիս՝ զի մի ելցեն արտաքս 'ի գործ իւրեանց: Եւ իմաստուն վարդապետն գանիւք բառնայ 'ի տղայոց զչնորս, որք յետս ընկրկեն զնոսա յառաքինի գործոց:



Տեսեր արդ երիս տարբեր բնաւորութիւնս 'ի մուտս ճանապարհի առաքինութեան. մի՝ ինքնաշարժ, երկրորդ՝ նմանողութեամբ և երրորդ բռնութեամբ: Մի միայն դար զերեցունց եսես զաղնուական օրինակ յերիս անուանի արս, որք ըստ Սենեկայի այլ և այլ առթիւք հասին փառօք 'ի վերջին կատար բարոյական առաքինութեան. այսինքն են Եպիկուրոս, Մետրոդորոս և Հերմակոս: Քանզի Հերմակոս եմուտ 'ի ճանապարհ առաքինութեան՝ վարեալ յայն 'ի բռնադատութենէ Մետրոդորոսի. Մետրոդորոս հետևեալ եմուտ յայն՝ զհետ երթեալ զհետոցն Եպիկուրոսի: Բայց Եպիկուրոս առանց խրատուց և խրատտուի ուսոյց անձին զնոյն ճանապարհ առաքինի գործովք 'ի մանկութենէ: Երեքին իսկ յարդասաւոր սերմանց բուսուցին բարձր արմաւենիս վսեմական ունակութեանց: Առաջինն բնադատ գործովք, երկրորդն ուսեալ գործովք և երրորդն իւրական գործովք. ոչ ումեք լեալ երախտապարտ, բայց անձին և բնութեան: Զարմանալի է երրորդն, գովելի երկրորդն. այլ անգորով և առաջինն. զի լաւ ևս է լինել առաքինի բռնութեամբ քան մոլի բնութեամբ: Արդ ասեն անգէտ ռամիկք և գիտնակորք ևս, որք համարին զԵպիկուրոս զեղծ օրինակ փափկասուն և հեշտասէր կենաց: Ոչ գիտեն սոքա թէ որ հեշտութիւն իցէ այն, յոր հաստատեաց Եպիկուրոս զմարդկային երջանկութիւն: Կարի իսկ 'ի բացէ էին 'ի նորա հեշտութենէն հեշտասէր կեանք: Բաց 'ի մոլորութենէն որ հասարակաց էր ամենայն Ստոյիկեանց ընդ այն ժամանակս, թէ ընդ մարմնոյ շիջանի և հոգի՝ զոր համարէին նոքա մարմնաւոր, յայտ է թէ սակաւք ոմանք յանապատաւորաց վարեցին խստամբեր կեանս քան զԵպիկուրոս: Զի հեշտութիւն կոչէր նա զայն անխռով պարզութիւն մտաց և զանչարչար հանդարտութիւն կրից, զատացեալն ոչ դատարկակեաց դրգանօք և մեծածախ խրախճանօք, այլ բրտութեամբ մարմնոյ առ ամենայն ցաւս, և հոգւոյ առ ամենայն արկած բախտի, մինչև զգայականութեանն կորուսանել զզգայութիւն. մինչ զի և 'ի ցուլ Փաղարեան լինել մարդոյ երջանիկ: Զայդպիսի երջանկութիւն ոչ արդեօք ընտրէին անձանց՝ նորուն զրպարտիչք [36]:

## ԳԼՈՒԽ Դ.

### Յաղագս բարոյական ուսնակութեան:

Ամենայն սերմն՝ թէպէտ և փոքրիկ՝ 'ի բերրի արտորայս բուսուցանէ տունկս համբուն. և ամենայն ներգործութիւն

մարդկային թէպէտ և դիւրանց՝ տպաւորէ 'ի հոգի համառօտակ ինչ որակութիւն մնայուն: Եթէ ներգործութիւնքն են իմացականք, ունակութիւնն լինի իմացական, որպէս գիտութիւնք: Եթէ են բարոյականք, ունակութիւնն լինի բարոյական. և մարդն լինի գովելի կամ պարսաւելի, պատուելի կամ անարգելի: Ապա ունակութիւնն բարոյական ոչ այլ ինչ է, բայց որակութիւն ինչ տպաւորեալ 'ի հոգի, որ տրամադրէ զմարդ 'ի գործել զվայելչականս: Այս որակութիւն յորժամ անկատար տպաւորի սակաւ կամ թեթև ներգործութեամբք, կոչի լոկ տրամադրութիւն, և ոչ ունակութիւն:

Ամենայն տունկ մեծ յիւրում սկզբան է դիւրաբեկ բարունակ ինչ, որ դիւրաւ չորանայ կամ խլի. այլ աճեցեալ 'ի ժամանակի, և 'ի փոքուէ հսկայացեալ՝ ծառք տանէ զսաստիկ ձմեռն և զտապախառն օդ. մաքառի ընդ հիւսիս և ընդ հարաւ, ընու զերկինս ստովք և զերկիր արմատովք: Սոյնպէս տրամադրութիւնն այն 'ի սկզբան է տկար և անհաստատ. այլ կազդուրեալ յաճախ ներգործութեամբք և սովորութեամբք լինի այնչափ զօրաւոր, մինչև ոչ արտաքին բռնութիւն, ոչ մարմնական տկարութիւն և ոչ մանգաղ ժամանակի և մահու կարէ նկուն առնել զնա. զի երկարութեամբ ժամանակի ունակութիւնն լինի իբր բնութիւն:

Ապա ճշմարիտ է զոր ասէ Արիստոտէլ, թէ մի ծիծառն ոչ առնէ գարուն. և ոչ մի միայն ներգործութիւն գործէ ունակութիւն: Ոչ ոք բնաւորապէս լինի յանկարծակի մոլի կամ առաքինի: Զարմանք եղեն զի ըստ առասպելաց Արեթուսա 'ի միում աւուր փոխեցաւ 'ի կնոջէ յայր[37]. այլ մեծ ևս սքանչելիք են, թէ ունակացեալն 'ի մոլութիւն՝ միով ևեթ ներգործութեամբ փոխեսցի յառաքինի: Բայց և այնպէս՝ երևելին այս սքանչելիք, յորժամ ներգործութիւնն այն այնպէս սաստիկ իցէ, մինչև տպաւորել զորակութիւն համաչափ բազմաց ներգործութեանց. զոր օրինակ 'ի շարժել զբեռն ինչ՝ առաւել ազդէ մի միայն ուժգին բուռնհարութիւն քան զհարիւր մեղմ:

Եւ այս 'ի հեթանոս իսկ: Կայիոսի Վալերիոսի խնձէր մանուանդ թէ անուղղայ էին վարք. Պօպլիոս Լիկինիոս կամեցեալ ածել զնա յուղղութիւն՝ արար զնա քրմապետ Ոլիմպիական Դիոսի: Ո՞ երբէք լուաւ այսպիսի օտար դեղ 'ի բուժել զչարաչար վարս. յանձն առնել զդիւցական պաշտամանց պատիւ սեղանակապին, և տալ նմա վարձ փոխանակ պատժոյ: Սակայն այնպէս տպաւորեցաւ յեղեռնաւոր միտս նորա դիւցական պաշտամանցն պատիւ, և այնպէս արիական եղև առաջադրութիւն նորա չարաչար զեղծ գործով զփայլեւնուիրական խուրին, մինչև չեղև ոք նման նմա յառաքինութեան՝ յետ լինելոյ քրմապետ. որպէս չէր ոք նման նմա 'ի մոլութիւնս յառաջ քան զքրմապետութիւն[38]:



Ապա անհնար է ջրել զնախնի ունակութիւնն, բայց այնմ որ զայն արար. եդեալ ներգործութիւնս հակառակ ներգործութեանց. ունակութիւն հակառակ ունակութեան և իբր բնութիւն հակառակ բնութեան:

## ԳԼՈՒԽ Ե.

### Յաղագս յատկութեանց բարոյական ունակութեան:

Յառաջին գլխոյն խօսեցեալ մեր ինչ ինչ վասն դլխաւոր յատկութեան բարոյական առաքինութեան, այսինքն է վասն լինելոյ նորա պատուելի և գովելի, թողաք խօսել զկնի զերից այլոց յատկութեանց, որք պատշաճին նմա ըստ որում ունակութիւն. իբր զի հասարակ են ամենայն ունակութեանց, և ս և աղատական և մեքենական արուեստից: Այս յատկութիւնք են՝ տրամադրել զմարդ 'ի գործել Դիւրաւ, Բերկրութեամբ և Միօրինակ: Ամենայն ունակութիւն առաքինական 'ի սկզբան անդ է դժուարին. զի որպէս լուար՝ առաքինութիւնն է ընդ զաւ 'ի վեր, իսկ մոլութիւնն ընդ զառ 'ի վայր. զի առաջնոյն գիմամարտ զգայութիւնն, այլ ոչ երկրորդին: Ապա ունակութիւնն յաղթեալ առ սակաւ սակաւ դժուարութեանց՝ յառաջ բերէ դիւրաւ զներգործութիւնս որք յառաջն երևէին դժուարինք:

Ո՞ր արհեստ դժուարին իցէ քան զլարախաղացի, որ ձեմէ յօդս ընդ երկայնութիւն ինչ անձուկ, վիհ ունելով առ ի և ներքոյ, և մահ առաջի. սակայն և այնպէս յերկարաւոր ունակութեամբ յայն վստահութիւն հասանէ, մինչև ոչ երևակայութեան նորա ամբոխել, ոչ աչացն մթագնել և ոչ սրտին բաբախել. է զի 'ի կախ կայ, և է զի ուղիղ յոտին. է զի կորանայ, և է զի 'ի վեր ոստչի, որք և 'ի հարթ յատակի լինէին արգելք մահաբերք. մինչև ամենեքին երկնչին յանկանելոյ նորա և նա միայն չերկնչի: Ահա յոյս առհմոն հասանէ երկար և սովորեալ ունակութիւն 'ի բարոյականս, վստահացուցեալ զմիտս ընթանալ ընդ ուղիղ ճանապարհ առաքինութեան՝ առանց յայսկոյս և յայնկոյս կործանելոյ: Բազում ինչ իրք են դժուարինք յառաքինութիւնս, ոչ զի են այնպիսի. այլ զի այնպէս չսովորելոյն թուի: Սուսերախաղս ձիոց 'ի գնացս անսովոր ճանապարհի՝ քարն երևի լեառն, և կարօն ծառոյ օձ. և սուս կարծեացն պատճառեալ ճշմարիտ զարհուրանս՝ դահավէժ առնէ զհեծեալ նորա. Այս

պխսի են բաղումք 'ի մուտս Ճանապարհի առաքինութեան, պատրեալք 'ի սնոտի երկիւղէ՝ շրանուն, և 'ի չիչին իրաց յաղթելն: Այլ զոր օրինակ դեղ ստուերախիրտ ձիոց ոչ է բուռն յառաջ վարել զնոսա խթանաւ, այլ տալ զտեղի առնուլ, և հոտոտել և ճանաչել ուսանի երկնչէինն, այնպէս ունակութիւնն քաջալերէ զվատասիրտս, զի անձամբ ծանիցեն զպատրանս և ծիծաղեսցին զերկիւղիւ իւրեանց:

Ոչ միայն դիւրայուցանէ ունակութիւնն զդժուարին ներգործութիւնս, այլ և ախորժելի առնէ զանախորժս: Ոչինչ ծառոյ արմատք այնպէս դառն են՝ որպէս զլուտասոյն. բայց ոչինչ ծառ բերէ պտուղ քաղցր քան զնա: Ցորմսոս ունի զեղլն, զանոյշն յոստս. որ քաղցրութիւն յապաղեցոյց զնաւս Ոդիսեայ, դեգերեցուցեալ զնաւորդսն 'ի ծովեզրն Տիւռենայ[39]: Զիք ինչ դառնագոյն զզայական բաղձանաց՝ քան զառաջին ներգործութիւնսն, որք ծնանին զունակութիւն արիութեան կամ բարեխառնութեան. բայց ներգործութիւնք անդրէն ծնեալք յունակութենէ՝ են քաղցր: Ցայն սահման եհաս ունականն արիութիւն Մուտիոսի Սկեւոլայ, մինչև առաւել ցաւ եղև նմա այն զի չաջողեաց աջոյ նորա 'ի գլուխ տանել զգործն արիական ընդդէմ Թշնամւոյ հայրենեաց, քան զայրոյ իւրոյ բոցակիզումն. առաւել սակացաւ Թշնամին 'ի տեսանել զտանջանս Սկեւոլայ, քան Սկեւոլ 'ի տանել այնմ[40]: Ոչինչ գործողութիւն բնական է անախորժ. զի բնութիւնն համեմեաց զամենայն պէսպէս ախորժակօք: Ունակութիւնն հանդարտողութեալ՝ է երկրորդ բնութի, որպէս ուսոյց Արիստոտել. ապա հարկ է նմա լինել ախորժական: Ունակութիւն մոլեկան յայնժամ հասանէ 'ի յետին սահման, յորժամ ուրախութեամբ գործէ ոք զչար. և ունակութիւնն առաքինական յայնժամ հասանէ 'ի կատարելութիւն, յորժամ զգայ ոք բերկրութիւն 'ի գործել զբարին: Ցորչափ տախտ է պտուղն, է խակ. և խակ է ունակութիւնն, ցորչափ ունի յինքեան զտտղութիւն: Տրամագրութիւն է այն, և ոչ ունակութիւն. մին իրի և դիւրաւ խլի: Նովկուրոս 'ի մեռանել իւրում 'ի դառն ցաւոց փառութեան աղեաց՝ անխոժոռ, իբրև հարցաւ 'ի բարեկամաց՝ թէ զիարդ կաս, ետ պատասխանի. Բարեաւ անցուցանեմ զյետին զայս օր կենաց իմոց. և ցյետին շունչ չեցոյց ինչ հեծութիւն: Այս կատարեալ ուրախութիւն 'ի յետին ցաւս՝ եցոյց թէ հնաւուրց էր ունակութիւնն և ոչ համբակ:

Ասացի հուսկ ուրեմն, թէ ունակութիւն առաքինական յառաջ բերէ միօրինակ ներգործութիւնս:

Այնպիսի են գործք, որպիսի է սկիզբն՝ յորմէ շարժին. եթէ սկիզբն է ունակութիւն ինչ առաքինական, ամենայն գործք 'ի նմանէ յառաջ եկեալք՝ լինին առաքինականք, վասն



որոյ և միօրինակք: Գործք նմանին իւրեանց պատճառի. ապա գործք մի և նոյն պատճառի հարկիւ նմանին միմեանց: Որ գործէ ըստ ունակութեան, գործէ միշտ միօրինակ. զի սկիզբն է սա ներքին և մնայուն. և անհնար է նմա լինել ունակութիւն, եթէ չէ մնայուն և ներքին: Լուսինն միշտ փոփոխի. արեգակն միշտ կայ միոյ նոյն. զի լուսինն ընդունի զլոյս օտարքուստ, և արեգակն ունի զսկիզբն փայլածոյ իւրոյ 'ի ներքուստ՝ և յաւէտ: Որ գործէ ըստ դիպուածոյ, դիպուած է՝ թէ գործն իցէ բարի. զի դիպուածն է սկիզբն ինչ փոփոխական և արտաքին: Ուսոյց դիպուածն պատկերահանի ումեմն (այսինքն Նէաղկեսի) նկարել զփրփուր սանձի ձիոյ, 'ի քնջելն սպնգաւ զոչ բարւոք նկարեալն յիւրմէ. բայց այս թէ միանգամ պատահեաց, յերկրորդումն ոչ պատահեսցէ:

Որ գործէ 'ի կրից, յետ սակաւ միոյ գործեսցէ զհակառակն. զի թէպէտ կիրքն է սկիզբն ինչ ներքին, բայց առժամանակեայ. զի փոփոխի ըստ առարկայից, որպէս ծովն ըստ հողմոց: Որ գործէ ըստ նմանողութեան, ոչ գործէ միօրինակ. զի այնպիսի լինին գաղափարեալքն, որպիսի են գաղափարքն: Որ գործէ ըստ բնութեան, միշտ գործէ միօրինակ: Եւ որ գործէ ըստ ունակութեան, գործէ իբր ըստ բնութեան. զի ունակութիւնն հանդարտողութեալ՝ որպէս ասացաւ՝ փոխի իբր 'ի բնութիւնն: Արձանք ձուլածոյք բովանդակ են միօրինակ. զի ձուլին 'ի միոջէ գաղափարէ. և ամենայն ներգործութիւնք յառաջ եկեալք 'ի միոյ առաքինական ունակութենէ՝ են առաքինականք. զի առաքինական ունակութիւնն է գաղափար ինչ կերպարանեալ յուղիղ բանէ, որ է անայլայլելի և յաւերժական:

Զնոյն մարթ է ասել զմոլեկան ունակութեանց 'ի հակառակ միտս: Թէ գործէ ոք ունակութեամբ շռայլութեան, ներգործութիւնքն լինին միշտ շռայլ: Թէ գործէ ունակութեամբ ագահութեան, ներգործութիւնք լինին միշտ ագահ: Բայց թէ գործէ ոք ունակութեամբ առատաձեռնութեան, ներգործութիւնքն լինին միշտ առատաձեռն. զի որպիսի է գործն՝ այնպէս և ներգործութիւնն: Իսկ թէ ոք միապէս վրէպ է յունակութեանց առատաձեռնութեան և շռայլութեան և ագահութեան, որպէս՝ տղայք և յիմարք, այնպիսին թէպէտ և պարգևեսցէ կամ շպարգևեսցէ, ոչ առատաձեռն է և ոչ շռայլ և ոչ ագահ. զի ներգործութիւնքն ոչ գան յառաջ յունակութենէ առատաձեռնութեան, և ոչ 'ի մոլութեանց 'ի ծայրս խոտորելոց, որոց չէ ընդունակ, այլ 'ի բաղդովի և յանսանական բերմանց. վասն որոյ և միշտ են աննմանք միմեանց:

## ԳԼՈՒԽ Զ.

*Յաղագս կամաւոր և անկամաւոր ներգործութեանց :*

Ոչ կարէ իմանալ թէ զինչ իցէ ներգործութիւն բարոյական, որ ոչն իմանայ թէ ո՛ր խտիր իցէ 'ի մէջ մտախորհ և անմտախորհ գործոց, 'ի մէջ կամաւորին և անկամաւորին՝ և խառնելոյն։ Կամաւոր գործն է, զոր առնէ մարդ յիւրում իշխանութեան, և առնէ զայն ազատօրէն, ճանաչելով զպարագայս այնր զոր առնէ։ Ենէաս յաղթական դատեալ 'ի մենամարտութեան, սպանանէ զՏուռնոս, թէպէտ և խոնարհեալ աղաչէր զնա. զի Տուռնոսի սպանեալ էր անգթութեամբ զիւրն Պալլաս[41]։ Այս եղև գործ կամաւոր և մտախորհ, նա՛ վաղու եւս խորհրդածեալ. իբր զի յայն հայէր, թէ չէ արժանի գթութեան անգութն։ Անկամաւոր գործ այն է, որ լինի անգիտութեամբ և կամ բռնութեամբ։ Բռնութեամբ լինի, յորժամ գործն չէ 'ի ձեռս գործողին զայն, այլ այնորիկ որ տայ գործել. որպէս Ոդիսեւս ոչ գնաց զհետ ընկերաց իւրոց, թէպէտ և խոստացեալ էր. զի 'ի Կիկլոպայ արգելեալ պահեցաւ յայրին[42]։ Անգիտութեամբ լինի, յորժամ գործն է 'ի ձեռս գործողին, բայց անգիտանայ նա ինչ ինչ 'ի պարագայից գործոյն զոր առնէ։ Ըստ այսմ փախստեայն Որեստէս յորս նետաձիգ լեալ յեղջերու մի, ոչ գիտելով թէ նուիրեալ էր այն Արտեմեայ, պարտաւորեցաւ, թէպէտ և էր անմեղ[43]։ Գործն խառնեալ 'ի կամաւորէ և յանկամաւորէ լինի, յորժամ որ առնէն զայն, ոչ կամէր առնել. բայց և այնպէս կամի առնել վասն զերծանելոյ 'ի մեծ ինչ չարէ, կամ յանձն ձգելոյ զմեծ ինչ բարի. որպէս Ագամեմնոն 'ի սպանդ մատոյց զդուստրն առ երկիւղի, զի մի՛ ինքն 'ի սպանդ վարեսցի 'ի Յունաց[44]։

Արդ 'ի գործն կամաւոր հաճեալ է մարդ. 'ի բռնականն՝ անհաճ. յանգիտականն ոչ հաճ է և ոչ անհաճ. իսկ 'ի խառնեալն միանգամայն հաճ է և անհաճ։ Ի գործ կամաւոր՝ բարութիւնն կամ չարութիւնն չափի 'ի բարութենէ կամ 'ի չարութենէ առարկային, վախճանին և կամ միջոցաց. որպէս հանդերձեալ եմք ասել։ Ի գործ անգիտական եթէ զանգիտացեալ պարագայն պարտ էր ճանաչել ամենեցուն բնական լուսով, որ է խիղճն մտաց, անգիտութիւնն է չար։ Այսպիսի եղև անգիտութիւն Սաամմատոսի ուրումն, որոյ գողացեալ զգանձս հասարակապետութեան սրբոյն Մարկոսի, որ 'ի Վենետիկ քաղաքի, 'ի չքմեղս եղև ասելով. Ես կարծէի թէ



իրք հասարակութեան՝ նոցա լինին, որք առնուն զնոսա։ Գործն բռնադատ՝ եթէ յիւրմէ է չար, և կամքն հաւանին այնմ, է գործ մոլեկան։ Բայց եթէ կամքն ընդդէմ կայ այնմ ամենայն զօրութեամբ, գործն ոչ միայն չէ մոլեկան, այլ և գովելի և առաքինական որպէս պատահեաց ողջախոհին Հռովմայեցւոյ Լուկրետիայ։ Շնութիւնն եղև 'ի բռնաւորն, և ոչ 'ի նմա. զի ոչ 'ի նմա, այլ 'ի բռնաւորն եղև կամաւոր[45]։ Ի գործն խառնեալ եթէ երկիւղն կամ ցաւն յաղթէ արիութեան քաջի ուրուք, գործն թէպէտ չար՝ ախտակցութեան է արժանի. զի որչափ նուազի կամաւորն, այնչափ նուազի յանցաւորութիւնն։ Եւ այսպիսի իրք առաւել լինին նիւթ եղերերգութեանց[46], յորժամ յերևելեաց ոք ոչ ամենևին պարտաւոր, և ոչ ամենևին անպարտ, արժանի հանդիսանայ պատժոյ և ցաւակցութեան։ Բայց եթէ գործն է ամենևին զեղծ, որպէս՝ հայրասպանութիւն, հայրենեաց մատնութիւն և կռապաշտութիւն, առնէ զմարդ ամենայնիւ զեղծ, և սարսափին զնջուցանէ զցաւակցութիւնն. անարժան գոլով կենաց, որ այնպիսի գործով կեանս գնեաց։

Այլ զինչ ասելի իցէ զգործոց եղելոց 'ի բուռն յարձակմանէ կրից։ Կանոն է հանրական, զի թէ կիրքն յառաջէ քան զբան, գործն ոչ մոլեկան է, և ոչ առաքինական, այլ անտարբեր. զի չէ կամաւոր, այլ բնական։ Բայց եթէ կամքն յառաջէ քան զնա կամ ընկերէ նմա, լինի մոլեկան կամ առաքինական՝ ըստ առարկային բարութեան կամ չարութեան։ Այսպէսն լուար թէ զգայական բաղձանք մարդոյ մասամբ ինն է բանական, և մասամբ ինն անբան։ Անբան է և անասնային ըստ ինքեան. զի ներքուստ չէ ազատ, այլ որոշեալ յառարկայէն իբրև զբաղձանս անասնոց։ Մինչ զի ընդ առաջադրիլ կարի ինն ախորժական առարկայի ինչ ցանկութեան կամ վրէժխնդրութեան, բաղձանքն հարկիւ բերի յայն, որպէս զօդեալ գրաստ առ դարման, կամ որպէս զքար 'ի կեդրոն։ Բայց ըստ այլ մասին կոչի նա բանական, ըստ որում կամքն յերկարաւոր ունակութեամբ կամ հրամայական ներգործութեամբ մեղմէ զնա, և ուղղէ սանձիւ բանականութեան։ Ապա առաջին և յանկարծ յարձակմունք կրից, յորժամ ոչ միտք և ոչ կամք ընթացակցին այնմ, վասն զի չեն կամաւորք և ազատք, այլ բնականք և հարկաւորք որպէս զանասնոցն, ոչ առաքինականք են և ոչ մոլեկանք, այլ անտարբերք։ Զնոյն է ասել և զարբելոց և զպայրադնելոց. որոց անասնային գործք՝ մինչդեռ խափանեալ է սթափութիւն նոցա 'ի գինւոյ կամ 'ի սրամտութենէ, վասն զի չեն ազատք, յատկապէս ոչ մոլեկանք են և ոչ առաքինականք։

Այլ յայտ է թէ են բազում գործք, որ թէպէտ չեն կամաւորք 'ի լինելութեան, սակայն են կամաւորք 'ի պատճառն.

վասն որոյ և մոլեկանք։ Կրկին օրինակաւ մարթ է պատճառին կոչել կամաւոր։ Մի մերձաւոր, յորժամ ոք գիտէ թէ գի-րաւ զինեհարի, և արբեցութիւնն հարի խմն զնա կատաղե-ցուցանէ, սակայն և այնպէս գիտութեամբ արկանէ զանձն 'ի վտանգ, յորմէ պարտ էր նմա խորշել։ Զի որ կամի զպատ-ճառն, կամի և զգործն յառաջ եկեալ 'ի նմանէ։ Վասն որոյ Պիտտակոս իմաստուն օրէնսդիրն սահմանեաց վասն կատաղի արբեցողի կրկին պատիժ. մի վասն գործոյն, և միւս վասն պատճա-ռին [47]։ Երկրորդ փոքր մի ընդհանրագոյն և հեռաւոր այն է, յորժամ ոք առաքինական ունակութեամբ չէ այնպէս տիրեալ բուռն կրից, մինչև զիմակալել ունակութեանն և յանկարծ բորբոքմանց բարկութեան կամ ցանկութեան։ Նա որք ա-ռաջնոց յարձակմանց կրից ներքեւին և կորուսանեն զուշ իւ-րեանց, յայտնի ցուցանեն թէ ապիրատ և անառնային սովո-րութեամբք ամենայնիւ խանգարեալ են զոգիս։ Հայեաց 'ի մեծ օրինակ քաջի ինքնակալին, Աղեքսանդրի ասեմ մեծի. յորժամ յուրախութիւնս կոչնոց յիմաստուն և 'ի սիրելի բարձակցէ 'ի Կղիտոսէ հեգնել ազգումն ընկալեալ, եհար զնա գեղարդեամբ և սպան [48]։ Կարէր անբասիր առնել զԱղեք-սանդր յանկարծական բորբոք բարկութեանն՝ որ բառնայ 'ի գործոյ զկամաւորութիւնն. և ես վասն զինւոյն, որ բառ-նայ զանթափութիւն. այն զի առ նմա կայր և նիզակ իւրոյ սրտմտութեան պատրաստական արբանեակ. մինչև յառաջել խոցմանն քան զխորհրդութիւն, և յաղթողին աշխարհի յաղ-թիլ 'ի կրից։ Այլ այս պատճառանք որոց մարթ էր անբա-սիր առնել զգործն, առաւել ևս դատախազէն։ Քաջ ճա-նաչէրն յառաջնմէ իսկ բազմապատիկ փորձովք զկատաղութեան իւր ցասկոտ։ Գիտէր ևս թէ զինեհարութիւնն 'ի նմա զբր-գաէր զայրոյթ. վասն այսորիկ չէր պարտ նմա արբենալ, և ոչ զէն առ իւր ունել։ Արբեցութիւնն չառնէ զգործս մոլեկան, այլ զարթուցանէ զմոլեկան ունակութիւնս, որք կան 'ի հոգի որպէս զկապեալ դաղանս, և սպանդարամեան լուծանէ զշղ-թայս։ Մինչ զի գործն յիւրմէ անտարբեր՝ եղև անողորմ 'ի պատճառն իւր։ Թող զի, եթէ էր 'ի նմա զգայութիւն 'ի ճանաչել զխայթ աղգարարութեանն, զխորգ չեղև սթա-փութիւն 'ի ճանաչել զիւրոյ գործոց չարութիւն։ Այն զի երախտաւորս ևս էր իւրում հաւատարիմ բարեկամի, և ի-մաստուն վարդապետի, զի և սա ինքն Կղիտոս եղև նորա փի-լիսոփոս. որ 'ի գրգել բազմութեան մարդահաճոյից զխոս նորա, սա միայն աղդու ինչ բանիւ ջանացաւ բժշկել զնա. զի մի՛ առելով թէ որդի է Արամազդայ, զմայր իւր ցուցցէ շնացեալ, զհայր իւր խայտառակ և զանձն իւր աղջկորդի և ծառայ։ Այո՛ նոյն ինքն Աղեքսանդր վաղվաղակի 'ի միտս ե-կեալ, եղև դատախազ եդատաւոր իւրոց յանցանաց։ Կա-



մեր դաշինս ևս լինել անձին, եթէ էր թողացուցեալ։ Զափու վերայ բարեկամին զիւրն չափեաց վէրս. և որչափ արիւն ե-հեղ յանձնէ օտարի, այնչափ արտասուս եհեղ յիւրոց աչաց։

## ԳԼՈՒԽ Է.

### Թէ ո՞ իցեն խոչք առաքինութեան։

Ապաքէն լուար, թէ առաքինութիւնն ոչ է բնական, բայց և ոչ հակառակ բնութեան, որ հասարակօրէն ոչ պարգևէ զառաքինութիւնս և ոչ մերժէ զնոսա։ Բայց զոր օրինակ ա-սացաք թէ ոմանք ծնանին բնական կարողութեամբք պատ-րաստականք առ առաքինութիւն քան զայլս, նոյնպէս մարթ է ասել եթէ ոմանց միտք են անուսք և բաղձանք ըմբոստք առ առաքինական գործս, թէ ոչ յաղթեսցի անպտղութիւն երկ-րին քաջ մշակութեամբ։ Թեմիստոկլէս [49] առաքինասէր իշ-խան կարող եղև ուսուցանել որդւոյ իւրում Դէոփանտոսի հնազանդել զամենի երիվարս. այլ ոչ կարողացաւ ուսուցա-նել նմա տիրել անձին։ Կարողացաւ առնել զնա գիտնաւոր քան զգիտունս, այլ չեղև կարող առաքինութեամբ որոշել զնա 'ի մոլեաց։ Բնութիւնն մայր գոլով այլոց՝ սմա եղև մօ-րու, երախտաւորեալ նմա ոչ 'ի բարիս. զի պատրաստեաց զնա ընդունարան լինել ամենայն բարեաց, այլ ոչ ճշմարիտ բարւոյն։ Պատանի արժանի ախտակցութեան, այլ ոչ ներո-ղութեան. զի կարող եղև բնութիւնն յօժարել զբաղձանս նո-րա, այլ ոչ բանադատել զկամս, որ կարօղն էր անխոնջ աշ-խատութեամբ բանանալ 'ի վերայ յամառ բնութեան։ Մինչ զի կրկին և կրաւացի գանգատանօք հնար էր պատանւոյն մե-ղադիր լինել բնութեան, և բնութեանն մեղադիր լինել պա-տանւոյն. նմա պարտաւորիլ և սմա պատժապարտիլ։

Այս առաջին խոչն ծնանի 'ի մտաց՝ որ առաջնորդն է բա-նին։ Զի թէպէտ առարկայ մտաց է առ հասարակ ճշմարիտն, սակայն յոմանս աւելի քան յայլս՝ մանաւոր միտք, կամ 'ի սուտ երևակայութենէ, և կամ 'ի սեպհական տկարութենէ նսեմացեալ՝ իմանան զսուերոյթն որպէս ճշմարիտ. և կամ-քըն հետևորդ՝ ըմբռնէ որպէս բարի զիւր վնասակարն։ Յե-րևիլ երկուց արեգականց միանգամայն յերկինս ագէտք զպատուր նմանութիւնն համարին ճշմարիտ արեգակն, և զճշմարիտ արեգակն ապաւոր նմանութիւն։ Այսպէս յիմարք և յետամիտք՝ յորոշել զյատուկ և զանյատուկ պարագայս՝ ապխտաբար սխալեն։

Բայց և առէզ պատահէ, զի թէպէտ և միտքն է բարեկարգ,

բայց կամքն կարի լինի յամառ կամ հեղգ՝ մերժէ զխորհուրդս նորա յափշտակեալ 'ի կրից։ Քաջ է որ գիտէ։ Բարի է որ ոչ գիտէ, բայց անձկայ գիտել։ Այլ չար է որ ոչ գիտէ, և ոչ գիտել կամի։ Նոյնպէս քաջ է որ զհետ երթայ առաքինութեան. բարի է որ անձկայ զհետ երթալ. այլ չար է, որ ոչ զհետ երթայ, և ոչ զհետ երթալ կամի։ Առաքինութիւնն յինքեան այնչափ է գեղեցիկ, որ թէ երևէր աչաց, յափշտակէր զամենեցուն սիրտս։ Բայց զի հաճեալ ընդ տարժանաւորս՝ բնակէ յապառաժուտ և յանկոխ տեղիս 'ի սկզբան անդ, և բացական է 'ի զգայութեանց, կամքն կարճամիտ առաւել զարհուրի 'ի դժուարութենէ ճանապարհին, քան ամոքի 'ի գեղեցկութենէ ելիցն որպէս ասացաւ։ Ամին իրի խորշեցեալ 'ի ճանապարհէն, խորշի և յուսուցչէ նորա. և որպէս իժ խնու զականջս, զի մի լուիցէ զփրկաւէտ թովչութիւն բարի խորհրդոց։ Իսկ խաբուսիկ հեշտութիւնն նստեալ 'ի ծաղկազարդ ստող զգալի փափկութեանց, հրապուրէ զանգործ կամս. որ թէպէտ և դշխոյ է 'ի ծնէ, ոչ հրամայէ, այլ հնազանդի. և այնպէս գլխարկեալ տռամբ իւրոյ աղախնոյ՝ խարդաւանի 'ի վիհ։ Երդուաւ Յունաստան չհաշտիլ ընդ Տրովացիս, ցորչափ բնակէր 'ի Տրովա որ փխաստակար դեղով յափշտակեալն էր զյափշտակիչ իւր[50]։ Մի ակնկալցին երբէք մարդիկ հաշտ լինել ընդ առաքինութեան, թէ ոչ արտաքսեն յանձանց զգիրգն զայն՝ բայց զմոլեգին զհեշտախտութեանն Հեղինէ։ Սա է վհուկն Կիրկէ, անուշակ հրաւիրակ և դեղատու դաւաճան իւրոց իջաւորաց. որոց ընդ քաղցր օշարակի արբեալ զթոյն կերպարանափոխ, մտանէին մարդ և լինէին անասուն[51]։

Ընդ միոյ բնութեան լծորդի բաղում անգամ և վատթարութիւն մնդեան։ Տիմոթէոս ուսուցիչ քնարերգութեան՝ կրկին վարձս խնդրէր յաշակերտաց անտի, որք կանխաւ աշակերտեալ էին անգէտ քնարահարի. զի դիւրագոյն է ուսուցանել չուսեալ բարւոյ, քան մոռացուցանել զուսեալ յոռին։ Ամուլ են խրատք, որք գտանեն զմիտս 'ի վատթար մնդենէ խոպանացեալ չար սովորութեամբք, զի կրկին աշխատութեան պէտք են խլելոյ զչար արմատս, և սերմանելոյ զբարեբեր սերմանս։ Բայց այնչափ առաւելու դժուարութիւնն, որչափ խորարմատ է չար սովորութիւնն։ Դեռածին մոլութիւն գլխովին ընդ ձեռամբ է ծնողին. բայց իբրև աճէ, ըմբոստանայ առ ծնօղն. և ծերացեալ ընդ մարդոյ՝ այնչափ զօրանայ, որչափ մարդ տկարանայ։

Զհնուսն ասացից, չարագոյն ժանտախտ առաքինութեանց է կենակցութիւնն ընդ մոլիս։ Հպաւորութեամբ ծնանի ժանտախտ. և այնպէս դիւրամէտ է բնութիւնն 'ի վատթարն, որ յառողջն չբժշկի ախտացեալն, բայց յախտացելոյն ախտա-



ւորի առողջն. և դիւրին է միոյ մոլելոյ ախտաւորել զբազում բարեկեցիկս, քան բազում բարեկեցաց շրջել 'ի բարի զմի ոք մոլի։ Յիրաւի ըղձանայր Իսոկրատէս, թէ մոլիք 'ի ճակատս կրէին ինչ նշան, զոր օրինակ խեթկող եզանց կապէին խոտ յեղջիւրս, զի զգուշասցին 'ի նոցանէ մարդիկ։ Բայց բնութիւնն չարար զայս՝ վասն երկուց։ Մի, զի մոլիք կարի իսկ քաջ յայտնեն զանձինս գործովք և բանիւք. և երկրորդ՝ զի առաքինիք յերևել իւրեանց սակաւ, մի յօժարեսցին խառնիլ 'ի թիւ բազմաւոր։ Իմաստութեամբ Պղատոն յերկուս դասակարգութիւնս սակաւաւորաց և բազմաւորաց, զմոլիսն դասեաց 'ի թիւ բազմաւորաց, և զառաքինիսն 'ի թիւ սակաւաւորաց։

# ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ՄԱՍՆԱՒՈՐ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԹԷ ՈՐ ԻՑԷ ՆՈՑԱ ՄԷՋ։

### ԳԼՈՒԽ Ա.

*Յաղագս չորից գլխաւոր առաքինութեանց, և թէ յո՞ր մասն հոգւոյ զետեղանան:*

Առաջէն լուար թէ չորք են կարողութիւնք հոգւոյ՝ ընդունակք առաքինութեան. այսինքն է, Ցասմնական և Ցանկական 'ի զգայական մասին, Միտք և Կամք 'ի բանական մասին: Յիւրաքանչիւրում 'ի կարողութեանց աստի նստի առաքինութիւն ինչ կանոնադիր և ուսուցիչ բարւոք վարուց. որպէս 'ի վերայ տրմուղ ձիոյ նստի ձիավարժ, որ կրթէ զնա: Մի յառաքինութեանց աստի կանոնաւորէ զցասմնականն, յառաջ վարելով և ընկրկելով զնա ըստ բանականութեան՝ 'ի դժուարին իրողութիւնս, այն է Արիութիւն: Երկրորդն կանոնաւորէ զցանկականն 'ի բերկրական իրողութիւնս ըստ թելադրելոյ բանականութեան, և սա է Բարեխառնութիւն: Երրորդն կանոնաւորէ զկամս, յօժարեցուցեալ զնա յիրաւացի իրս որք հայլին յօգուտ այլոց, և սա է Արդարութիւն: Իսկ չորրորդն լուսաւորէ զմիտս զանոնլեօք. չափ սահմանէ օրինաց, և ամենայն առաքինութեանց տայ օրէնս. և սա է Խոհեմութիւն:

Ահա սոքա են չորք ծղխնիք բարոյական իմաստասիրութեան. զի բարձեալ ունին զբովանդակ շրջանս մարդկային կենաց, որ յայտնի ճանաչի 'ի սոցին ներհակաց այսպէս: Ոմանք գործեն չարիս, զի ոչ ճանաչեն զբանաւորն: Այլք ճանաչեն, բայց կամաւոր չարութեամբ ոչ կամին երթալ զհետ: Իսկ այլք կամին երթալ զհետ, բայց կիրք երկիւղի կամ ցանկութեան խոտորեցուցանեն զկամս և զմիտս 'ի պարտաւորութենէ իւրեանց: Արդ առ 'ի գործել բարոյապէս, պիտոյ Խոհեմութիւն, զի լուսաւորեսցէ զմիտս. Արդարութիւն, զի կանոնաւորեսցէ զկամս. Արիութիւն, զի ջերմացուսցէ զցրտութիւն երկիւղի. և Բարեխառնութիւն, որ մեղմեսցէ զբորբոք ցանկութեան: Յայսմանէ մարթիս իմանալ, թէ զոր կարգ վերադասութեան պահել ունիցին 'ի մէջ իւրեանց այս չորեքին առաքինութիւնք, հայեցեալ 'ի ձիրս չորեցունց ընաւոր կարողութեանցս՝ յորոց առնուն զազնուութիւն իւրեանց:



Յայտ է, թէ Ցասմնականն՝ որ ձեռնարկէ 'ի դժուարինս, ազնուականագոյն է քան զՑանկականն՝ որ յածի զբերկրականօք: Եւ Կամքն՝ որ զտեղի ունի 'ի բանական մասին, առաւելու ազնուութեամբ քան զցանկականն և զցասմնականն, որք են 'ի զգայական բաղձանս: Այլ Միտքն՝ որ զտեղի ունի 'ի բարձրագոյն աթոռ բանականութեան, ազնուագոյն է յոյժ քան զկամս. զի է լոյս՝ լուսատու մարդկեղէն երկնից: Մինչև մարթ է քեզ իմաստասիրել զչորեցունց առաքինութեանցս, չափեալ զազնուութիւն նոցա ըստ ծագման, եթէ յատենի խորհրդոց նստին առաքինութիւնք այսպիսի կարգաւ. Խոհեմութիւն, Արդարութիւն, Արիութիւն, և Բարեխառնութիւն: Իսկ արդ զի՞նչ լինէր հոգի առանց առաքինութեանց, բայց եթէ մարմին առանց հոգւոյ. աշխարհ առանց բնակչաց, երկինք առանց աստեղաց, և լուսեղէն խորան առանց երանելեաց:

Այլ աստանօր թուի ինձ թէ յուշ լինի ուշիմ մտաց քոց մեծ ինչ տարակոյս, որ պատահեաց զկարծիս մեծամեծ փիլիսոփայից: Վասն զի եթէ անհնար է ներգործութեան իմիք լինել առաքինական՝ եթէ չէ ազատ և կամաւոր, զիա՞րդ հնար իցէ արիութեան և բարեխառնութեան լինել 'ի զգայական բաղձանս, որ յիւրմէ չէ կարողութիւն ազատ, այլ՝ բնական, որպիսի անասնոցն է: Իսկ եթէ զբաղձանս ասիցէ ոք ազատ, ըստ որում ներքոյ անկանի իշխանութեան կամաց, ապա 'ի կամս և ոչ 'ի զգայական բաղձանս բնակէ բարեխառնութիւն և արիութիւն, կամ թէ ոչ մին և ոչ միւսն է ճշմարիտ առաքինութիւն: Ապա եթէ այս երկու առաքինական ունակութիւնք էին յանցաւոր բաղձանս, և ոչ յանմահ կամս, ապա 'ի բառնալ մահու 'ի մարդկանէ զմարմնական և զզգայական կողոպուտ, մինչ հոգին մերկ յերկուց գեղեցիկ և ցանկալի զարդուց, առեալ ընդ իւր միայն զխոհեմութիւն և զարդարութիւն, այլ ոչ զբարեխառնութիւն և զարիութիւն:

Յայլմէ կողմանէ և այս ևս յայտ է, թէ հարկ է առաքինութեան լինել յայնմ կարողութեան, որ միաւորեցուցանէ ընդ մարդ 'ի ներհական մոլութիւն. ապա 'ի զգայական բաղձանս հարկ է լինել արութեան և բարեխառնութեան, զի զգայութիւնն է որ միաւորեցուցանէ յանբարեխառնութիւն և յերկիւղ: Փիլոն Անաքարքոսի կիրթ էր աներկիւղ մարտնչել. և ոսկեծն Դոմետիանոսի սովոր էր ժուժկալել յորսոյ. զորով

խաղայր 'ի քիմս: Ջատագովին մարթ էր կոչել արիութիւն, և զերկրորդն բարեխառնութիւն զգայական և անասնական: Երկաքանչիւրն յառաջ եկին յերկար սովորութենէ տպաւորմամբ պատկերաց յերևակայութեան այնց գաղանաց: Գործողութիւնք զգայական հոգւոյ 'ի մարդ և յանասունս, մեկուսի 'ի գործոյ բանականութեան, որպէս արդ լուար՝ են հասարակաց. ապա հարկ է, զի և 'ի մարդկային զգայութեան տպաւորեսցի երկար սովորութեամբ զգալի ինչ որակութիւն առ ընտելացուցանելոյ զնա բուռն հարկանել զդժուարին իրաց, և ժուժկալել 'ի բերկրականաց:

Այս պատճառք յերկոցունց կողմանց աղդուք՝ սխալեցին զոմանս 'ի գլխաւոր վարդապետաց՝ ոչ միայն փիլիսոփայական, այլ և աստուածաբանական դպրոցաց՝ խնամատարել, եթէ հարկ է լինել 'ի մարդ երկուց ունակութեանց զբարեխառնութեամբ, որպէս և զարիութեամբ. մի 'ի կամս, և միւս ևս 'ի զգայութեան: Քանզի եթէ բաղձանքն զգայական՝ որպէս ըմբոստ հպատակ բազում անգամ ապստամբի 'ի կամաց, և բազում անգամ կամքն հեղգացեալ յաղթի և ձգի զհետ զգայական բաղձանաց, ապա պիտի երկու ունակութիւնք. մի 'ի կամս առ բարւոք հրամայելոյ, և միւս 'ի բաղձանս՝ առ բարւոք հնազանդելոյ: Եւ ոչ աւելորդ համարին զայս կրկնութիւն. քանզի զօր օրինակ յըմբռնողական գործողութիւնս՝ բաց 'ի նիւթական տեսակաց երևակայութեան դնին և հոգեղէն տեսակք իմացողութեան, նոյնպէս 'ի բաղձողական գործողութիւնս չէ ինչ դժպատեհ թէ բաց յունակութենէ ըզգայութեան դնիցի և ունակութիւն կամաց զնովին առարկայիւք ցանկութեան կամ երկիւղի:

Այս ճշմարիտ է թէ ընդ մէջ երկաքանչիւր ունակութեան գտանեն մեծ խտիր, այն որ կամացն է, ասեն, է ճշմարիտ և ուղղապէս առաքինութիւն բարեխառնութեան և արիութեան. զի կամքն է կարողութիւն ազատ և բանական. բայց ունակութիւն զգայութեան, որ ըստ ինքեան է կարողութիւն հարկաւոր և իբր անասնային, այս տրամադրէ զզգայութիւնն առ առաքինութիւն, բայց չէ արժանի անուան առաքինութեան: Եւ վասն այսորիկ դիւրաւ լուծանեն զայն տարակոյս, թէ արիութիւն և բարեխառնութիւն արդեօք անեղծ առաքինութիւնք իցեն թէ եղծականք: Քանզի ունակութիւն զգայական բաղձանաց որպէս մարմնական՝ մեռանի ընդ մարմնոյն. այլ ունակութիւնն կամաց որպէս հոգևոր՝ անեղծ մնայ 'ի հոգւոջ. թէպէտ և լուծեալ 'ի մարմնոյ:

Այս կարծիք է այնց իմաստնոց, և թուի թէ չէ հեռի 'ի վարդապետութենէ Ճեմականաց: Յուցեալ էր Արիստոտելի, թէ բաղձանքն զգայական 'ի մարդ՝ է մասամբ ինչ անբանական, և մասամբ ինչ բանական: Անբանական՝ ըստ որում ըզ-



գայական, և հասարակ անասնոց. և բանական՝ ըստ որում ներքոյ անկանի ազատ կամաց: Ապա 'ի դնել նորա զարիութիւնն և զբարեխառնութիւն 'ի զգայական բաղձանս՝ ըստ որում բանական, այսինքն հաղորդ հոմման կամաց, յայտ է թէ երկուց այնց առաքինութեանց անհնար է լինել բովանդակապէս ոչ սոսկ 'ի կամս, և ոչ լոկ 'ի բաղձանս: Բայց և այնպէս կոչին առաքինութիւնք բաղձանաց, և ոչ կամաց, հայեցեալ 'ի կարողութիւնն՝ որ յառաքինութենէ ընդունի զկանոնաւորութիւն և զկատարելութիւն: Մինչ զի պարտ է մեզ ասել, եթէ խոհեմութիւնն է առաքինութիւն մտաց. զի միտքն է, որ ընդունի զկանոն և զկատարելութիւն 'ի սկզբանց առնելեաց. թէպէտ ինքն է որ կանոնաւորէ զայլ ամենայն առաքինութիւնս: Եւ արդարութիւնն է առաքինութիւն կամաց. զի կամքն է որ ընդունի զուղղութիւն և զկատարելութիւն 'ի գործել զիրաւացի գործս: Ապա ըստ այսմ՝ արիութիւնն է առաքինութիւն ցասմնականին. զի ցասմնականն է որ չափաւորի և տրամադրի զդժուարին իրօք: Իսկ բարեխառնութիւնն է առաքինութիւն ցանկականին. զի ցանկութիւնն 'ի նմանէ կատարելագործի, և ընդունի զկանոն զբերկրականօք:

## ԳԼՈՒԽ Բ.

### Թէ զիարդ զանազանին այս չորեքին առաքինութիւնք յայլոց բարոյական առաքինութեանց:

Բաց 'ի գլխաւոր առաքինութեանց աստի՝ է միւս ևս գերապանծ և բարգաւաճ դերդաստան այլոց առաքինութեանց, զորս վաղվաղակի իսկ առաջի արասցուք անուամբք իւրեանց և նշանակօք: Բայց մեծապէս սխալեցան մեծամեծ փիլիսոփայք 'ի վերայ չորից այսց առաքինութեանց, կարծեալ թէ այլք ամենայն ծնանին ի մարց սոցա, որպէս ընդ միմեամբ տեսակք 'ի սեռից: Այս է չփոթել զառաքինութիւնս՝ 'ի տրոհել անդ զնոսա, և աղաւաղել զարուեստ յուսուցանելն զնոյն: Այս է խառնակել զսահմանս, զկանոնս և զվարդապետութիւնս, 'ի կարի իմն կործանել կամ յերկարաձգել զայս գիտութիւն: Յիւրաքանչիւր տունկս հարկաւ ընթացակցին չորեքին տարերք, բայց և ոչ մի 'ի նոցանէ անուանի տեսակ միոյ 'ի մասնաւոր տարերաց: Յիւրաքանչիւր ներգործութիւնս առատաձեռնութեան՝ այն չորք առաքինութիւնք են պիտանիք. բայց առատաձեռնութիւնն չէ տեսակ ինչ միոյ 'ի չորեցունց առաքինութեանց անտի:

Արդ գիտել արժան է թէ կրկնակի հնար է բարոյական առաքինութեանց տրոհիլ 'ի միմեանց։ Մի ըստ սկզբանց գործողութեանց, և երկրորդ ըստ առարկայից։ Առաջինն տրոհէ ընդհանրապէս զգործս առաքինականս 'ի մոլեկանաց. երկրորդն տրոհէ զմասնաւոր ինչ առաքինութիւն յայլմէ մասնաւորէ։ Ստոյգ է թէ այն չորք առաքինութիւնք ըստ առաջնոյն մտածելոյ, են հանրական տարերք ամենայն առաքինութեանց, զի առ ամենայն են պիտանիք. Խոհեմութիւն հանրական՝ յուղղութիւն մտաց. Արդարութիւն հանրական՝ յուղղութիւն կամաց. Արիութիւնն և Բարեխառնութիւնն հանրական, զի կիրք մի նսեմացուսցեն զբանն։ Այլ Խոհեմութիւնն մասնաւոր, զորմէ է աստանօր խնդիր, ոչ ձգի առ ամենայն ուղղութիւն մտաց. և ոչ Արդարութիւնն մասնաւոր առ ամենայն ուղղութիւն կամաց, և ոչ Արիութիւն մասնաւոր առ ամենայն երկիւղ. և ոչ Բարեխառնութիւնն մասնաւոր առ ամենայն բերկրականս. այլ իւրաքանչիւրն ամփոփի 'ի սահմանս իւրոյ առարկայի, և չմխի յայլոց իրաւունս։

Յայսմանէ մարթ է իմաստասիրել թէ այնք չորք առաքինութիւնք, Խոհեմութիւն, Արդարութիւն, Արիութիւն, և Բարեխառնութիւն, ըստ այնմ որ մատածին յայսմ վարդապետութեան՝ չեն մայր բարոյական առաքինութեանց, այլ քորք։ Բայց զի առարկայք նոցա են ազնուագոյնք, և առաւել ներքինք մարդոյ և դժուարինք, վասն այսորիկ չորեքին նոքա արժանապէս կոչին առաքինութիւնք Գլխաւորք, այլ ոչ հանրականք. այլք անուանին Երկրորդականք, այլ ոչ ընդ միմեամբք։ Ամենեքին քորք են միմեանց, այլ նոքա երիցագոյնք. ուստի և 'ի խնդիրս բարոյական առաքինութեանց են նախապատիւք։ Արդ ոչ յայնց հանրական սկզբանց, այլ 'ի հայեցուածոյ բնական կարողութեանց առ սեպհական առարկայս՝ կամեցաւ առնել զբաժանումն ամենայն բարոյական առաքինութեանց Արիստոտէլ. որոյ երկեակ աչք լաւ ևս տեսին՝ քան զբովանդակ աչս այլ ամենայն փիլիսոփայից. որպէս լուիցես յառաջիկայդ։

## ԳԼՈՒԽ Գ.

### Յաղագս բաժանման բովանդակ բարոյական առաքինութեանց ըստ սեպհական առարկայից.

Ի բանական կարողութեան ոմն յառաքինութեանց ուղղէ զմիտս զբարւոք խորհրդածութեամբ և կշռութեամբ. և սա է Խոհեմութիւն մասնաւոր։ Ոմն ուղղէ զկամս զբաշխմամբ և զփոխարինութեամբ. և սա է Արդարութիւն մասնաւոր։



Ի կիրս՝ ոմն չափաւորէ զերկիւղն զառարկայիւք, որ եղծիչ են կենաց. և սա է Արիութիւն մասնաւոր։ Ոմն չափաւորէ զցանկութիւնն զառարկայիւք որ պահպանիչ են կենաց. և սա է Բարեխառնութիւն մասնաւոր։

Յարտաքին բարիս և 'ի չարիս՝ ոմն չափաւորէ զախորժակն զմիջակաւն օգտակար բարեօք. և սա է Առատաձեռնութիւն։ Ոմն չափաւորէ զնոյն ախորժակ զմեծամեծ օգտակար բարեօք. և սա է Մեծագործութիւն։ Ոմն չափաւորէ զախորժակն զմիջակաւն պատուաւոր բարեօք. և սա է Պարկեշտութիւն։ Ոմն չափաւորէ զնոյն զմեծամեծ պատուաւոր բարեօք, և սա է Մեծանձնութիւն։ Ոմն չափաւորէ զկիրս զարտաքին չարեօք, որք գրգռեն զբարկութիւն. սա է Հեզութիւն։

Ի քաղաքական կենցաղավարութեան ոմն յառաքինութեանց միաբանէ զխօսս ընդ իւր միտս. և սա է Ճշմարտախօսութիւն։ Ոմն միաբանէ զխօսս ընդ այլոց հաճոյս՝ կիրս որ ընդ խաղ. և սա է Զուարճախօսութիւն։ Եւ ոմն միաբանէ զխօսս և զգործս ընդ հաճոյս այլոց՝ կիրս որ ոչ ընդ խաղ. և սա է Հաճոյականութիւն։ Այս են ճշմարիտ առաքինութիւնք։ Բայց 'ի կիրս են և այլ երկու միջասահմանք. որպէս թէ առաքինութիւնք խորթք և ոչ ճշմարիտք. զի շառաւիղեն յապականեալ արմատոյ։ Այլ զի են գեղեցիկք, առանձնաշնորհութեամբ 'ի համար մտանեն ազգակցութեան առաքինութեանց։ Մին է երկիւղ գարշանաց 'ի սակս իւրոց անարգ գործոց. և սա է Ամօթխածութիւն։ Միւսն է ցաւ վասն բարեաց օտարի, որոց չէր նա արժանի. և սա է Սրտմտութիւն։

Արդ 'ի վերայ այսր բաժանման կարեւոր համարիմ զառաջինն յուշ առնել, զի թէ իմաստակի ուրուք միտք կամիցին զանրբել ստամնաւոր խարտոցաւ մեթաֆիզիգական բաժանմանց, եղիցի յանդուգն։ Արիստոտէլ 'ի վերայ բարւոքի իւրոյ բարոյական դպրատան հաստատեաց տախտակ այսպիսի գրութեամբ. Ի գիտութիւնս՝ որոց սկզբունք են հաւանականք և համոզականք, խնդրել զապացուցութիւնս՝ է յանդգնութիւն և յիմարութիւն։ Սա կամեցաւ տրոհմամբ առարկայից ուսուցանել զգիտութիւն ինչ սահմանափակ և բարեկարգ, որ այլազգ տրոհմամբ լինէր անսահման և շփոթ։ Եւ արդարև ոչինչ այլ առաքինութիւն բարոյական գոյ 'ի միտս ուրուք, որ ոչ հայիցի առ այսոսիկ առարկայս, որպէս տեսցես յառաջիկայդ։ Իշխեմ ասել. զոր ինչ 'ի գիտութիւնս չետես Արիստոտէլ, մի՛ ակն կալցի տեսանել այլ ոք 'ի մահկանացուաց։

Ի վախճան ամենայնի մարթ է քեզ առնուլ 'ի միտ, թէ երկու միայն առաքինութիւնք բնակին 'ի դարպաս բանին. այսինքն է Խոհեմութիւն, և Արդարութիւն։ Այլք ամենայն իջեւանին յարուարձանս կրից. այսինքն է 'ի զգայական բաղ-

ձանս, ըստ օրինակին որպէս և ասացաւ։ Մի լինի վասն այսր մեղադիր լինել բնութեան, թէ ընդէր փակեաց 'ի մարդ ըղ-կիրս՝ զթշնամի խաղաղարար հոգւոյ, վասն զի առանց նոցա հոգին անմասն լինէր յայսպիսի և յայսչափ գեղեցիկ առա-քինութեանց։ Բարկութիւնն է յեսան արիութեան. Ցան-կութիւնն է տածիչ բարեկամութեան. Երկիւղն է խորհըր-դական խոհեմութեան. Փառասիրութիւնն է խթան մեծա-գործութեան. Ցաւն է ուսուցիչ բարեխառնութեան. Ի հողոյ բուսանին շուշանք, և 'ի զգայութենէ ծնանին առաքի-նութիւնք։ Մարդ ոչ է սոսկ մարմին, և ոչ միտ աննիւթա-կան, այլ խառնեալ ինչ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ։ Արարչին բնութեան՝ որ 'ի կատարելութիւն և 'ի զարդ աշխարհի չէ-թող ինչ թերի, արարեալ զաղդ ինչ էից գլխովին զգայնոց որպէս զանբանս, և զաղդ ինչ գլխովին հոգւոյ այսինքն զհրեշ-տակս, անկ էր նմա առնել և միջակային ինչ բաղադրեալ 'ի զգայութենէ և 'ի հոգւոյ, և այն է մարդ։ Ի թուռնաւոր ճճիս յառաջատես բնութիւնն ըծորդեաց ընդ թոյն զդեղթափ։ Չէ ինչ բացական 'ի կրից բանականութիւնն, որ ուղղէ զնո-սա. և մոլութեանց՝ որ 'ի ծայրս՝ մօտ են առաքինութիւնք. որպէս և տեսցես։

## ԳԼՈՒԽ Դ.

*Ճիւղագրութիւն բարոյական առաքինութեանց, և նոցին մոլութեանց՝ որ 'ի ծայրս։*

### ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Մտաց՝ ըմբռնող խորհրդածութեանց

Անխոհեմութիւն: **ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ** Խորամանկութիւն:

Կամաց՝ ըմբռնմանց և ընտրողութեանց

Անիրաւութիւն յառաւելն: **ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ** Անիրաւութի 'ի նուազն:

Կրից՝ զմարմնաւոր չարեօք

Վեհերոտութիւն: **ԱՐԻՈՒԹԻՒՆ** Յանդգնութիւն:

Կրից՝ զմարմնաւոր բարեօք

Թմրութիւն: **ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԻՒՆ** Անբարեխառնութիւն:



Յարգանքն բարեաց՝ ընծայեալն օգտակարօք

Ագահութիւն: **ԱՌԱՏԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ** Շռայլութիւն:

Զմեծամեծ օգտակար բարեօք

Փոքրագործութիւն: **ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ** Զափազանց վայելչութիւն:

Զմիջակն պատուաւոր բարեօք

Անհոգութիւն: **ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ** Փառամոլութիւն:

Զմեծամեծ պատուաւոր բարեօք

Փոքրոգութիւն: **ՄԵԾԱՆՁՆՈՒԹԻՒՆ** Փքացումն:

Զարգահատն չարեօք՝ որ գրգռեն զբարկութիւն

Անզգայութիւն: **ՀԵԶՈՒԹԻՒՆ** Բարկացողութիւն:

Ի կենցաղավարութեան՝ յորժամ զանձինս են զբօսք

Կեղծիք: **ՃՇՄԱՐՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ** Ճառատանք:

Զհաճոյականօք այլոց յերս՝ որ ըստ խօսս

Գեղջկութիւն: **ԶՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԻՒՆ** Խեղկատակութիւն:

Զհաճոյականօք այլ յերս՝ որ ոչ ըստ խօսս

Մարդահաճութիւն: **ՀԱՃՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ** Հակառակաբանութիւն:

Զերկիւղի անպատուութեան անձին

Երկչոտութիւն: **ԱՄՕԹԽԱԾՈՒԹԻՒՆ** Լրբութիւն:

Ի գծտութեան ըստ բարիս այլոց՝ որոց չեն արժանի

Նախանձաբեկութիւն. **ՍՐՏՄՏՈՒԹԻՒՆ** Զարակամութիւն:

# ԳԼՈՒԽ Ե.

*Յաղագս թէ ո՞ր իցէ մէջ առաքինութեան:*

Այս ողիւսակ ձիւղագրութեան առաքինութեանց և խոտոր մոլութեանց՝ յայտնի ցուցանէ քեզ, թէ ոչ այլ ինչ է առաքինութիւն, բայց միջասահման ինչ 'ի մէջ մոլեկան ծայրից. որով և զգացուցանէ քեզ, քանի՜ հպաւոր իցէ չարն բարւոյ, և սուտն ճշմարտի: Զի՞նչ կայ լաւ քան զառաքինութիւն և զի՞նչ վատթար քան զմոլութիւն. սակայն և այնպէս իւրաքանչիւր առաքինութեան երկու մոլութիւնք կան աւրնթեր, մի ըստ առաւելութեան, և մի ըստ նուազութեան: Դատ էր ձեռնարկութիւնս առ ապացուցանել թէ յաշխարհի մոլք կրկնապատիկ առաւելուն քան զառաքինիս, որովհետև առաքինութիւնք են չորեքտասան թուով, և մոլութիւնք քսանևութ: Բայց չարագոյն այն է զի առաքինութիւնն է մի և մոլութիւնքն անբաւ. իբր զի մի միայն է եղանակ հասանելոյ 'ի նպատակ, այլ խոտորութիւնքն անբաւք: Ապա զիա՞րդ հնար իցէ գիմել յառաքինութիւն, եթէ այնչափ անձուկ է ճանապարհն, մինչև գնալ միշտ ընդ այն զորէն լարախաղացի՝ վիհ սատի ունելով և անտի. Հայեցեալ ական 'ի լուսինն ընդ արեգակամբ՝ խառնէ զմոլորակ ընդ մոլորակի. և թուի նմա տեսանել կամ լուսին ինչ խաւարակ, կամ արեգակն ինչ սեւրակ: Եւ մարդկային միտք՝ զայն որ 'ի ծայրն՝ առաքինութիւն կարծեալ, չցիտէ զորն գովեսցէ, կամ յորմէ խորշեսցի: Անմտութիւն Կղաւդիոսի՝ անմտաց թուեցաւ խոհեմութիւն, և ոչ ծանուցաւ բայց 'ի չոլեւն ծիրանեաց[32]: Յանդգնութիւն Աղեքսանդրի՝ վասն զի էր բարեբաստիկ, յանդուգն եղելոց թուեցաւ արիութիւն. և նախանձաւորք եղեն այնմ որում պարտն էր ախտակցիլ: Անգթութիւն Միղոսի քաղաքայնոց թուեցաւ արդարութիւն. որոց և յիրաւի եղև այնպիսի ունել դատաւոր[33]:

Բայց ո՞ր իցէ այս մէջ, ուր ամփոփ գահակալէ առաքինութիւնն: Զարմանամ ես, զի այնպէս զարմանալի թուեցաւ վճիռն, զոր ոմանք ընծայեն Բիասայ, ոմանք Սոլոնի, ոմանք Պիւթագորայ, և ոմանք պատգամախօսի, որ զմէջն առաքինութեան երկբառիւ սահմանեաց, Մի աւելազանց: Անմիտ գտաւ որ ասաց, զի սահմանեաց զառաքինութիւնն ըստ կիսոյ: Պարտ է յայն յարել՝ Եւ մի ինչ նուազ: Փոքր մի լաւգոյն և յայտնագոյն եղեն սահմանքս. Կէս աւելի քան զբոլորն: Ոչ յայսկոյս, և ոչ յայնկոյս. Ամենայնն չափով: Բայց



այս չափք՝ առաւել բնականք քան բարոյականք, ոչ այնչափ պատշաճին գործոց առաքինութեան, որչափ գործուածոց ճարտարապետի, հիւսան և մաշկեկարի: Իսկագոյն ևս են սահմանքս. Որ ինչ վայել է. Որ ինչ արժան է: Զի այս բառք են բարոյական չափու և ոչ բնականի: Բայց զամենայն 'ի մի բառ բովանդակես, թէ ասես Բանաւորն. զի ոչ այլ ինչ է առաքինութիւն, բայց միջասահման ինչ որոշեալ 'ի բանէ, որ 'ի ներքս փակէ զամենայն առաքինութիւն և արտասահմանէ զամենայն զծայրս:

Բայց այս մէջ՝ յոր զկայ առնու բանն, ոչ է թուաբանական, իբրև զմէջ թուական, որ միշտ է նոյն. թէպէտ և 'ի պէսպէս ենթակայս, և միշտ միապէս է տարակաց յիւրոց ծայրից: Իբերիացիք, այսինքն նախնի Սպանիացիք, պարտաւորէին զամենայն չափահաս ածել ընդ մէջ նոյնչափ գօտի, և որոյ ընդարձակագոյն էր փոր, պատժէին զնա որպէս պորտաբոյծ: Առաւել ևս պատժապարտ էին օրէնդիրք նոցա. որք թէ ջրգողէին, զօրինօք տնցանէին՝ խղեալ զգօտին: Այլ չափ բանին՝ է երկրաչափական, այսինքն համեմատական. զի որ միումն է սակաւ, այլում է աւելի. և որ միումն է միջասահման, այլում է աւելազանց: Վասն որոյ հայի նա յանձինս, և ոչ 'ի ծայրս: Ոչ վայելէ թզուկի կօշիկ Աքիլգեայ հսկայի[34]. և ոչ փոքր արժանաւորութիւն ունողի չափազանց վարձատրութիւն: Արդարն ոչ չափէ զամենայն գողութիւնս նովին չուանաւ: Արին ոչ հեղու վասն ընչին պատճառի զպատուական զիւր արիւն՝ պահեալ վասն հայրենեաց: Առատաձեռնն ոչ միապէս պերճ է առ գեհիկ ոք, որպէս առ ազնուական: Երկաթի քանոն Պողիկղետոսի գիպողանայր միայն ուղղորդ և մակարդակ քարի. բայց կապարեայ քանոն Լեսբացւոց՝ այս ուղիղ, բայց ճապուկ և գիւրաթեք՝ գիպողանայր քարի մակարդակի, կորոյ և գոգաւորի, և ամենայն ձեոյ՝ միշտ ճապկութեամբ և միշտ ուղղութեամբ[35]: Քանոն երկաթի էր գօտի Իբերիացւոց. բայց կանոն բանին չչափէ միայն զհանրական և զանփոփոխ ենթակայս, այլ հայի 'ի մասնաւոր պարագայս. այսինքն յանձն, 'ի գործն, 'ի տեղին, 'ի ժամանակն, 'ի միջոցս, յեղանակ և 'ի պատճառն, որպէս ասացի յիւրում վայրի. և ըստ փոփոխութեան պարագայիցս՝ փոփոխի և մէջ բանին: Առ ներդաշնակութիւն նուագերգութեան պահանջի միաբանութիւն ամենայն լարից, բայց 'ի խանգարել զայն՝ բաւական է մի միայն լար արտուղի: Միայն արեգակն գիտէ գնալ անանջրպետ ընդ ծիր խաւարման. ոչ 'ի հիւսիսասահմանս վերճեմեալ, և ոչ 'ի հարաւասահմանս ստորիջեալ: Այլ ամենայն մոլորակք որպէս անմիտ Փայէտոնիք[36], է զի վերճեմեն 'ի բարձր բևեռ, և է զի վայրաբերին 'ի ստորին բևեռ. ոչ գիտեն զկայ առնուլ 'ի միջին՝ և ոչ վայր

մի, յորմէ իսկ կոչեցան մոլորակք։ Արդ զիա՞րդ հնար իցէ մարդկային մտաց չմոլորիլ։

## ԳԼՈՒԽ Զ.

*Թէ զիա՞րդ գտանիցի մէջ առաքինութեանց յերկուց ծայրից միջի։*

Բնութիւնն որպէս յառաջ լուար, ոչ պարգեւէ զառաքինութիւնս, այլ պարգեւէ լոյս ինչ պայծառ առ 'ի կարող լինելոյ ճանաչել զայն։ Անասնոց ետ ազդեցութիւն՝ առ գիտելոյ որոշել զնոսա առաջնորդս 'ի վնասակարաց. մարդկան ետ զխիղճ մտաց՝ առ գիտելոյ որոշել զբարին 'ի չարէն։ Եւ զի այս օրէնդիր հաստեաց օրէնս արդարս, կարի իմն անիրաւէր թէ ոչ հրատարակէր եւ պարտաւորէր 'ի միտս այնց՝ որոց պարտն էր պահել զնոսա։ Մոլութեան հնար է լինել անդատաւոր, բայց չէ երբէք անդատախազ եւ անպատիժ. զի դատախազ նոցա է խիղճ մտաց, եւ պատժօղ՝ խայթ նորա։ Բայց թէ զի՞նչ իցէ այս խիղճ մտաց, խօսեցուք լիով յիւրում տեղւոջ։ Ապա չէ մոլի ապուշն կամ խելագարն, որք ոչ ճանաչեն զմոլութիւն, եւ ոչ մեղանչէ այն որ ոչ գիտէ մեղանչել։ Բայց որ ճանաչէ զմոլութիւն՝ ճանաչէ եւ զառաքինութիւն. զի որ ճանաչէ զծայրսն, ճանաչէ եւ զմէջն։

Չիք գիտութիւն պայծառ քան զխիղճ մտաց, թէ չէ 'ի կրից նսեմացեալ։ Ծովախառն ծուխք օդոյ չթողուն տեսանել զնակական չափ եւ զճշգրիտ գոյն արեւու 'ի ծագել իւրում. եւ վասն այսորիկ երեւակայութիւնն ըստ տեսութեան աչաց՝ կարծէ զնա շառագոյն եւս, եւ մեծագոյն. նոյնպէս ծխամածութի կրից այլայլէ զճշմարիտ դատաստան եւ զչափ բանին։

Բայց առաւել եւս, եթէ դատաստանն է զեղծ 'ի թիւր ունակութեանց, որք եւ առանց կրից գործեն չարաչար՝ մղեալ զմիտսն 'ի ծայրս։ Բազուկ բեկ չինայ երբէք 'ի միջի յիւրում տեղւոջ. թէ ուղղի մի մասն՝ անկանի միւսն։ Եւ այր թիւր թէ 'ի բացէ լինի 'ի միջէ 'ի ծայրից, ընդհարկանի 'ի միւսն. ոչ երբէք զտեղի առնու 'ի բանաւորն, կամ լինի շռայլ եւ կամ կծծի. կամ յանդուգն վարի եւ կամ վեհերոտեալ դողայ, անցանէ անընդմէջ 'ի մարդահաճութենէ 'ի ամարդութիւն։ Ապա այս է նախնական եւ դիւրագոյն ճանապարհ ճանաչելոյ զմէջ առաքինութեանց։ Ի բաց արա 'ի սրտէ զկիրս եւ զչար սովորութիւնս, զի ճառագայթեսցէ լոյս խղճի մտաց. վասն զի նոյն իսկ խոչք, զորոց ասացաւ թէ խափանեն զստացումն առաքինութեանց, խափանեն եւ զճանաչումն միջոյ։



Բայց միւս եւս եղանակ՝ յայտնագոյն որոշելոյ զմէջն յերկուց ծայրից, է Խոհեմութիւնն. որ 'ի բնաւոր խիղճ մտաց յաւելու ուսուցմունս եւ մանաւոր փորձս։ Լոյս է լուսաւորագոյն, բայց դժուարագոյն եւ դանդաղագոյն. զի ոչ պարգեւի 'ի բնութենէ, այլ ստացանի երկար սովորութեամբ [57]։ Միայն 'ի տաճար չաստուածուհւոյն Նեմեսեայ պահիւր արքունի չափ կանգնոյ. եւ միայն 'ի տաճար խոհեմութեան եդեալ կայ չափ բանաւորի։ Կողմնական մոլութիւնք միշտ կագեն ընդ առաքինութեան 'ի վերայ սահմանաց։ Բայց որպէս անդաստանական դատաւորի էր որոշել զսահմանս արտօրէից՝ որ ընդ վիճիւ, սոյնպէս միայն խոհեմին է սահմանել զկոպար բանին ընդ յաւէտ եւ ընդ նուազ։ Դեդալոս [58] 'ի փախչել իւրում մոմապատ թեւոց թռուցիկք յանդթական կղզւոյ յերկիր խաղաղական, զայս ինչ յուշ արար որդւոյ իւրում Իկարոսի. Որդեակ իմ, մի թռչիր այնչափ բարձր, մինչեւ հրոյ կամարի այրել զքո թեւս. եւ մի այնչափ ցած, մինչեւ գոլորշեաց ջրոյ կորզել զնոսա. ընդ միջին ճանապարհ թռիր ապահով։ Եւ արդարեւ Դեդալոս որպէս ծերունի խոհեմ՝ գիտաց ունել զմիջին ճանապարհ, եւ ողջամբ եհաս 'ի ցամաք. այլ համբակն անզգոյշ՝ մանկական յանձնապաստանութեամբ կարի իմն վերամբեալ 'ի բարձունս՝ թօթափեաց զթեւս 'ի հուր, եւ մեռաւ 'ի ջուր, անցեալ ծագէ 'ի ծագ. փոխանակ զի ոչ գիտաց զմէջն ունել։

Ամենայն արուեստ է դժուարին յիւրում սկզբան։ Հրեշտակաց միայն յաջողեաց հասանել 'ի բնէ խոհեմ. 'ի նոսա հեղան պատկերք ամենայնի զոր արժան էր առնել։ Մարդկան անկ է ստանալ զնոսա ջանիւ խոհեմութեան։ Ուսանի նաւապետն զնաւարկութիւն տաղտկանօք, երկուցեալ 'ի սկզբան անդ 'ի կոհակաց կոհակաց իբր 'ի մահահրաւէր չիրմաց. բայց ապա սովորութեամբ՝ 'ի վերայ մրրկածուփ տարեր խաղաղական անձամբ ձեմ առեալ շրջի ընդ աշխարհ։ Չէ այնչափ դժուարին գիտութիւն առաքինութեանց, որչափ գիտութիւն եւս եւ ստորին ազատական արուեստից։ Դիւրագոյն եւ յայտնագոյն են կանոնք բարոյական առաքինութեան քան զկանոնս քերթածաց բանաստեղծութեան, որ կապէ զարձակ բանն բազմապատիկ շղթայիւք. եւ անհամար կանոնօք բաժանէ զոտս ոտիւք, եւ զոտս վանկօք, եւ զիւրաքանչիւր վանկի չափէ զքանակ. կշռորդէ զշեշտ, տրոհէ զհնչիւն եւ կշռէ զհնչագ։ Դժուարագոյն է առնել ինչ ճարտար քերթած՝ քան զառաքինի ինչ գործ. դիւրագոյն ճանաչի պարագայ բանաւորութեան՝ քան զզօրութիւն փաղառութեան։ Իսկ արդ եթէ սովորութեամբ դիւրանայ այսպիսի ինչ տարժանաւոր հմտութիւն, որոյ սկզբունք չեն հաստատեալ ոչ 'ի բնութիւն եւ ոչ 'ի բանն, այլ 'ի հաճոյս մտացածին նրբութեանց,

զոր սահմանեցին կանոնագիրք. որչափ ևս դիւրուսանելի իցէ ճանաչել զբանաւորն՝ լուսով բնութեան, ազնուական մղընգեամբ, սիրով գովութեան, երկիւղիւ պատժոյ, ձայնաւոր պատուիրանօք, գրաւոր մատենիւք, հրապարակական օրինօք, այլոց օրինակօք և անձին իսկ փորձիւ, որ քան զամենայն է զօրաւոր:

## ԳԼՈՒԽ Է.

*Բաղդատութիւն երկուց ծայրից առ միմեանս:*

Թէպէտ և երկաքանչիւր մոլեկան ծայրք են այլանդակք և տգեղք, բայց և այնպէս միոյ քան զմիւսոյն նուազ է տգեղութիւն. զի մին նմանագոյն է առաքինութեանն որ կայ 'ի մէջն: Նմանագոյն է խոհեմութեան խորամանկութիւնն քան զանխոհեմութիւն: Նմանագոյն է արիութեան յանդգնութիւնն քան զվեհերոտութիւն: Նմանագոյն է առատաձեռնութեան շռայլութիւնն քան զագահութիւն: Զի աւելազանցութիւնն ոչ կարէ առաւելուլ քան զմէջն, թէ ոչ այնմ հաւասարի: Բայց պակասութիւնն վասն զի ոչ կարողանայ հասանել 'ի մէջն առաքինութեան, նուազ նման է առաքինութեան քան զաւելազանցութիւնն: Որպէս գիշերայն լուցեալ գոլորշեք՝ յանմիտ դիտողաց համարին աստղ, նոյնպէս ծայրն նմանագոյն առաքինութեան՝ բազում անգամ 'ի համար գրի առաքինութեան:

Մոլութիւնն նմանագոյն առաքինութեան՝ է նուազ ամօթալի քան զմիւսն. զի է առաւել դժուարին և նուազ ծաղրական. Թէպէտ և վտանգաւորագոյն է և դժնդակագոյն: Ծանրագոյն պատժի պատերազմօղն ընդդէմ հրամանի՝ քան զփախուցեալն 'ի պատերազմէ. բայց առաւել ամօթալի է փախչիլն 'ի պատերազմէ՝ քան զպատերազմիլն ընդդէմ հրամանի. զի այն է ցածութիւն՝ մոլութիւն ստմկային, և սա է յանդգնութիւն՝ մոլութիւն աշխոյժ վասն որոյ և նմանագոյն արիութեան: Մանլիոս[59] պատանին դժբախտ՝ ընդդէմ հրամանին հրապարակելոյ 'ի հօրէ իւրմէ իշխանապետէ 'ի ձայն փողոյ, քաջութեամբ կռուեալ և յաղթեալ թշնամւոյն, վասն այսպիսի պանծալի յանցանաց եթող ընդ տապարաւ զգլուխ իւր պսակաւորդ. և յամենեցունց ախտակցաբար գովեստ ընկալեալ՝ յիւրում թաղման յաղթանակեաց:

Դիւրագոյն վերածի յառաքինութիւն՝ մոլութիւնն, որ նմանագոյն է նմա: Փոքր աշխատութեամբ արի հանդիսանայ յանդուգն քան զվեհերոտն. զի դիւրագոյն է յապաւել զաւելազանցութիւնն, քան լնուլ զթերին. և դժուարագոյն է հասուցանել 'ի միջասահման զայն որ չյաւելու ինչ, քան զայն որ առաւելու: Աքանչելիք եղեն բնութեան, զի Տորկուատոս այնպէս պիտանի եղև հասարակապետութեան իւրովք յաղթութեամբք, այն որ այնպէս անպիտան էր և անարգ, մինչև հօր իւրոյ առաքել զնա արածել զարջառս՝ որոց էր նման[60]: Եւ մեծ ևս սքանչելիք եղեն, զի զօրավարն Ափրիկանոս հայելին մանկանց 'ի զեղծ և յանառակ վարս, եղև ապա հայելի պատերազմողաց՝ 'ի ժուժկալ և 'ի պարկեշտ վարս:[61] Թուի թէ բնութիւնն 'ի նկարել զկենդանագիր երկոցուն քաջազանցս, զի առաւել ևս բացափայլեսցի լոյս մեծամեծ առաքինութեանց՝ արկ զնոքօք զմթին ստուերս առաջնոյ վարուց:



Բայց և այն է ճշմարիտ, զի թէպէտ և երբեմն մոլութիւնք ընդ առաքինութեան են անկեալ, բայց ընդ միմեանս միշտ են 'ի կռուի: Այս բարութիւն միայն է 'ի կարիճս, զի սատակեն զմիմեանս: Զայս հոգացաւ բնութիւնն, զի մի բազմածնունդ սերունդ ժանտախտս 'ի չէք դարձուցանէ զազգ մարդկան: Եւ այս բարութիւն եւեթ է 'ի մոլութիւնս, զի բազմածնունդ գոլով քան զառաքինութիւնս, միմեանց լինին դահիճք և եղծիչք: Շռայլութիւնն սպանանէ զագահութիւն, ագահութիւնն զփառասիրութիւն, փառասիրութիւնն զվեհերոտութիւն. և վեհերոտութիւնն զյանդգնութիւն, ըստ օրինակի չհաստակաց Կադմոսի, որք միահաղոյն ծնեալք և դատապարտեալք փոփոխ վիրաւորութեամբ զմիմեանս սատակեալ՝ դառնային անդրէն 'ի հող՝ ուստի ելին[62]. Նա՝ ամենայն յետին մոլութիւն յիւր վերայ դադարանայ, և իւրովի սատակի:

Չէք ինչ առաւել հակառակ շռայլութեան քան շռայլութիւն, և յանդգնութեան քան զյանդգնութիւն, և բարկութեան քան զբարկութիւն, և հեշտախտութեան քան զնոյն ինքն հեշտախտութիւն: Ամենայն որ հասանէ 'ի ծագ, կամ զկայ առնու, կամ յիւր վերայ ընկրկի, և լինի առելի իւրում գործողի: Վիշապի հայեցեալ ընդ հայելի՝ իւրովք թունօք սպանի. և մեծ ինչ չարագործ հայեցեալ ընդ առաքինիս՝ յիւրոյ չարեաց նողկայ: Գործ մոլեկան՝ է տգեղ. և ամենայն ծնունդ տգեղ և այլանդակ՝ զարհուրեցուցանէ զիւր ծնօղսն: Եւ այնպէս բազում անգամ տաղտկութիւն և սարսափ մոլութեան դարձուցանէ զմոլին յառաքինութիւն: Ջարին հակառակն՝ առաքինութիւնք զուգակք սատուածապարգևք՝ պահեն առ միմեանս միաբանութիւն և խաղաղութիւն. զի առ հասարակ են համաձայն բանի: Չլինի առաքինութիւնն առելի. զի է յոյժ սիրելի: Չլինի իւր ինքեան անհաճոյ. զի է յոյժ գեղեցիկ: Չէք նորա անձման սահման. զի ոչ պակասի նորա ճառակ: Ոչ ուստեք երկնչի, զի է անստգիւտ. ոչ փախչի 'ի

լուսոյ, զի է չքեղ. ոչ սարջանոյ, զի ոչ գործէ զչար. ոչ տաղտկանոյ, զի միշտ գիմէ յերջանկութիւն, որպէս մոլութիւնն 'ի թշուառութիւն:

Բայց արդ եկեսցուք 'ի լուծումն տարակուսանաց ինչ, որում հնար է յուշ լինել քեզ, որպէս յուշ եղև մեծամեծ փիլիսոփայից, 'ի վերայ սահմանելոյն միջոյ առաքինութեան, և զտարբերութենէ իւրոյ ծայրից:

## ԳԼՈՒԽ Ը.

*Արդեօք ամենայն մոլութիւնք իցե՞ն հաւասար:*

«Ըստ իրաց ինչ, եթէ միջին առաքինութեան է գիծ ինչ անբաժանելի 'ի մէջ երկուց ծայրից, որպէս ծիր գիշերահաւասարի 'ի մէջ երկուց բևեռաց, ապա խոտորումն 'ի գծէ աստի 'ի մի կամ 'ի միւս ծայր՝ հաստատեալ է յանբաժանելի իմն: Իսկ եթէ միոյ անբաժանելւոյ անհնար է լինել մեծ քան զմիւսն, ապա միոյ ծայրի մոլութեան անհնար է լինել մեծ քան զմիւսն: Ապա ուրեմն չէ մեծ մոլութիւն խրոխտ Ամբարտաւանութիւնն քան զընդոստ Փոքրոգութիւն. և ոչ կատաղի Յանդգնութիւն՝ քան զերկչոտ Վեհերոտութիւն. և ոչ լիրբ Վաւաշանք՝ քան զցուրտ Թմրութիւն. զի յերկոցունց ծայրից միջի չկայ ինչ մէջ. բայց կէտ անբաժանելի, և սոսկ բացասութիւն:

» Զայն՝ որ ասի զերկոցունց ծայրից, մարթ է ասել և զերկոցունց նոյնատեսակ մոլութեանց: Անհնար է լինել միոյ գողութեան մեծ քան զմիւսն. և մեծագունի արժանանալ պատուհասի. զի մէջ արդարութեան է չառնուլ զօտարինն ընդդէմ նորա կամացն: Եւ այս ևս է անբաժանելի իմն: Ապա այնչափ անիրաւութիւն է գողանալ զդանկ ինչ, որչափ գողանալ զհարիւր տաղանդս. և այնչափ անիրաւ իմն է և հաւատարմութիւն՝ չհատուցանել զաւանդ դանկի միոյ, որչափ չհատուցանել զաւանդ հարիւր տաղանդոյ:

» Վրիպական նետաձգին չէ հաստատեալ 'ի մեծ կամ 'ի փոքր բացաձգութիւն 'ի նպատակէն, այլ յայն՝ զի չեհար զմէջ նպատակին: Ապա թէ փոքր իցէ քանակ գողութեան. և թէ մեծ, խոտորումն 'ի միջոյ անտի է անբաժանելի: Ապա գողութիւնք ամենայն են հաւասարք:

» Որ ինչ ասի զնոյնատեսակ մոլութեանց, զնոյն մարթ է ասել և զտարատեսակ մոլութեանց: Մէջ ուղիղ բանին, որպէս ասացաք՝ է որ ինչ օրէն է: Ի մէջ օրինաւորին և չօրինաւորին չկայ ինչ մէջ. զի լինելն օրինաւոր՝ է կէտ անբաժան: Ապա



չէ մեծագոյն յանցաւորութիւն՝ սպանութիւնն քան զգողութիւն. զի չէ ինչ օրինաւորագոյն գողութիւնն քան զսպանութիւն: Զի թէ էր գողութիւնն օրինաւորագոյն քան զսպանութիւն, գտանիւր ինչ մէջ 'ի հակասութեանց միջի, 'ի գտանիլն 'ի մէջ օրինաւորի և չօրինաւորի: Ապա չէ հնար միոյ արդարութեան լինել արդարագոյն քան զայլ, և ոչ անիրաւութեան լինել անիրաւագոյն քան զայլ. ոչ ուղղութեան լինել ուղղագոյն քան զայլ, և ոչ մոլութեան լինել մոլեգոյն քան զայլ մոլութիւնս. ուստի և ամենայն մոլութիւնք են յիւրեանս հաւասարք»: Այսպէս խօսէր մեծ ուսուցիչն Պղատոնի Սոկրատ, յիւրում խիստ դատաստանութեան: Իբր ոչ եթէ 'ի փոքր կացուցանել զմեծամեծ մոլութիւնս՝ հաւասարեալ ընդ փոքունց, այլ 'ի մեծացուցանել զփոքր մոլութիւնս՝ հաւասարեալ ընդ մեծաց. զի մի զարտուղեսցին մարդիկ յուղղութենէ, տեսեալ թէ ամենայն մանր վրիպակք են մեծ ինչ յանցաւորութիւն, վասն որոյ և արժանի մեծաց պատժոց:

Բայց ոչ ինչ հայեցեալ յայսպիսի նրբութիւնս ստոյիկեանց, որք ըստ մտաց Արիստոտէլի՝ բազում ինչ ուսուցանէին, զոր ոչ 'ի գործ դնէին, քաջայայտ է թէ են մոլութիւնք, որք մի քան զմի են մեծք և ծանունք և տգեղք. ուստի և խստագոյն պատժոց արժանիք: Քանզի այնչափ խտիր է 'ի մոլութիւնս, որչափ յառաքինութիւնս որոց հակակային, և առաքինութիւնք մի քան զմի են մեծք՝ ըստ առարկայից, ըստ վախճանին և ըստ պարագայից, որպէս և լուար: Անմարթ է ուրանալ, թէ չեն առարկայք մի քան զմի մեծ: Պատուաւոր բարիք են մեծք քան զմարմնականս, և մարմնականք քան զբարիս բախտի: Ուստի և Մեծանձնութիւնն է մեծ առաքինութիւն քան զԱրիութիւն, և Արիութիւնն քան զԱռատաձեռնութիւն: Զի առաջինն է զպատուաւոր բարեօք, երկրորդն զմարմնականօք և երրորդն զձոխութեամբք: Ապա նովին կարգաւ՝ վատահամբաւել զոք է մեծ մոլութիւն քան զսպանութիւն, և սպանութիւնն քան զգողութիւն: Զի գողութիւնն 'ի վերայ յարձակի բարեաց բախտի, սպանութիւնն՝ մարմնաւոր բարեաց, և վատահամբաւութիւնն՝ պատուաւոր բարեաց: Վասն այսորիկ ճշմարիտ բարեաց կշռադատք փոքր չար համարեցան տանել մահու քան անպատուութեան: Ապա արժան է յիշեցուցանել քեզ՝ չթակարդիլ 'ի պատիր բանս, անցեալ 'ի զինչութենէ յորակութիւն, կամ 'ի վերացելոյ 'ի թանձրացեալն, կամ յէութենէ 'ի պարագայս: Սկայն Գեղմագոլգ չէ ինչ աւելի մարդ՝ քան զՄանիկն գաճաճ. բայց Գեղմագոլգ է անձնեայ քան զՄանիկն: Էութիւնն որոշէ զմարդ յայնմանէ որ չէ մարդ. իսկ առընթեր պարագայք որոշեն զմարդ 'ի մարդոյ: Տեսակարար

տարբերութիւնն որոշէ զգողութիւնն յայնմանէ՝ որ չէ գողութիւն, բայց պարագայք որոշէն զգողութիւն 'ի գողութենէ: Ապա ըստ հանրական սահմանի՝ մի մոլութիւն չէ աւելի մոլութիւն քան զմիւսն. զի առ 'ի լինել մոլութիւն՝ շատ է լինել հակառակ ուղիղ բանին. բայց պարագայք ծանրացուցիչք առնեն զմոլութիւնն մի քան զմի մեծ:

Ի վախճան ամենայնի կամ է ինձ և զայն ևս յիշեցուցանել, թէ ոչ միայն եկամուտ պարագայիւք, այլ և ներքին աճմամբ հնար է թէ մոլեկան ինչ ունակութիւն լինի քան զնոյն ինքն մոլեգոյն: Ի մարդկային մարմնի զուգախառնութիւն և անզուգախառնութիւն հիւթոց չէ հաստատեալ յանբաժան ինչ, այլ 'ի բնական ինն ընդարձակութիւն, որով առողջութիւնն լինի յաւէտ կամ նուազ կատարեալ. և այլայլութեանն հնար է 'ի լոկոյ տենդէ փոխիլ 'ի տենդ մահաբեր: Ապա ըստ այսմ 'ի հոգւոջ հնար է առաքինութեան աճել ցայն վայր կատարելութեան՝ ըստ ուղղութեան մտաց կամ բաղձանաց, մինչև 'ի լոկոյ առաքինութենէ լինել նմա առաքինութիւն դիւցազնական, և իբր աստուածական, և երևիլ մարդոյ աստուածազգեաց ումն: Եւ ըստ սմին օրինակի հնար է ունակութեան մոլեկանի աճել յայն սահման Թիւրութեան, մինչև 'ի լոկոյ մոլութենէ փոխիլ նմա 'ի գազանութիւն, և երևել մարդոյ փոխակերպեալ 'ի սատանայ: Այլ զայսմ կերպարանափոխութենէ ճոխագոյն ևս խօսեսցուք յիւրում տեղւոջ:

Եւ արդ զի ցուցաւ թէ մարդկային գործք տարբերին 'ի միմեանց՝ ոչ ըստ առարկային միայն այլ և ըստ պարագայից, զորոց առաւելապէս կախեալ կայ չարութիւն և բարութիւն բարոյական, մնայ քեզ մտաւել թէ ո՞ր իցեն այնք որք առաւնոր կոչին պարագայք:

## ԳԼՈՒԽ Թ.

### Ցաղագս թէ որպիսի՞ և քանի՞ իցեն պարագայք բարոյական գործոց:

Զիք մարմնեղէն ինչ գոյացութիւն որում ոչ ընկերեն պէսպէս պատահմունք. յորոց ընդունի նա զկատարելութիւն կամ զաղօթ, և որովք բաժանեալ որոշի յայլոց համատեսակ գոյացութեանց: Ծառն է բաղադրեալ ինչ 'ի մարմնոյ, և 'ի տնկական ոգւոյ. այս է զէնչութիւն և գոյացութիւն ծառոյ: Այլ լինել կանաչ կամ դեղին, մեծ կամ փոքր, պտղաբեր կամ անպտուղ, այս ամենայն պատահմունք են որք ընկերեն



գոյացութեան, և տարբերեն զծառ 'ի ծառոյ, և կոչին սոքա Պարագայք բնականք: Ըստ սմին օրինակի Գործն բարոյական, թէպէտ ըստ որում գործ՝ 'ի տրամաբանից 'ի համար դասի պատահմանց, իբր զի հնար է մարդոյ գործել կամ չգործել. սակայն և այնպէս մտածի որպէս գոյացութիւն ինչ կամ զէնչութիւն, հայելով 'ի պատահմունս՝ որք ընկերեն նմա, և տարբերեն յայլ գործոյ, արարեալ զայն առաւել առաքինական կամ մոլեկան. և սոքին են Պարագայք բարոյականք, որպէս արդ լուար:

Արդ այս բարոյական պարագայք համառօտաբար ամփոփին յեօթն, որք բովանդակին յայս տաղաչափ.

Ո՞վ ոք և Զի՞նչ, Ո՞ւր և Որո՞վք.
Հի՞մ, Ո՞րպիսանակ և Ե՞րբ արդեօք.

որոց այս է մեկնութիւն:

Ո՞վ ոքն նշանակէ եթէ զանձն որ առնէ, և եթէ զանձն որ կրէ. զի երկաքանչիւրն տարբերեն զգործն առաւելլով կամ նուազելով:

Զի՞նչն ոչ նշանակէ զէնչութիւն գործոյն. զի էութիւնն չէ պարագայ. այլ զպատուղ ինչ, որ 'ի գործոյն գայ յառաջ:

Ո՞ւրն նշանակէ զտեղին, յորում եղև գործն. անտառք իցէ թէ սրբազան. հրապարակական իցէ թէ առանձինն:

Որո՞վքն նշանակէ թէ որպիսի՞ միջոցօք կամ նպաստիւք կամ գործեօք եղև այն գործ:

Հի՞մն նշանակէ զպատճառն և զվախճանն և զդիտումն. զի բազում անգամ պատճառն այլափոխէ զտեսակ գործոյն:

Ո՞րպիսանակն նշանակէ զեղանակ գործելոյ, մտաբերութեամբ եղև թէ յանկարծ. ներողութեամբ թէ բարեմտութեամբ:

Ե՞րբն նշանակէ զժամանակն, յորում եղև գործն. յարգելեա՞լ թէ 'ի թողացուցեալ ժամանակի. 'ի տուէ՞ թէ 'ի գիշերի. յիւրու՞մ ժամանակի, թէ արտաքոյ ժամանակի:

Եւ ահա քեզ այսմ օրինակ յայտնի: Օգոստոս կայսր միշտ երկրպագելոյն և միշտ գովաճանելոյն յիւրոց Հռոմայեցւոց, մինչ էրն 'ի Գաղղիա, առոյգ լուր լուաւ թէ Ղուկիոս Կիննա ազնուական իւր ձեռնասուն, սիրեցեալն 'ի նմանէ որպէս որդի և քան զամենեսին երախտաւորեալ, 'ի սադրելոյ Մարկոսի Անտոնիոսի՝ երդուաւ սպանանել զնա 'ի մեհենի, 'ի զոհել նորա ըստ օրըստօրէ սովորութեան իւրոյ, ունելով իւր ձեռնասու և մեղսակից զերևելիս դրանն արքունի, որք ծածկեալ ունէին զսուր իւրեանց: Արդ էութիւն գործոյն է այս. Ղուկիոս Կիննա էր 'ի մտի սպանանել զՕգոստոս: Սպանութիւնն արդէն եղև 'ի սրտի յառաջ քան զմխել ձեռին, բայց յոյժ ծանրացաւ 'ի հետևեալ պարագայից:

Ո՞վ ոք. Կիննա սիրեցեալ էր յՕգոստոսէ, և երախտաւորեալ 'ի նմանէ. Օգոստոս երախտաւոր էր Կիննայի և իշխան

նորա։ Յորոց մասնաւոր պարագայից մին յաւելու 'ի գաղանութիւնն զապերախտութիւն, և միւսն փոխէ զմարդասպանութիւնն 'ի հայրասպանութիւն։

Զի՞նչ. Այս պարագայ առաւել ևս ծանրացուցանէ զայն. զի յայնմ սպանութենէ՝ ծագէ անտերունչ մնալ ինքնակալութեանն. և վերստին բոլորոքի պատերազմն քաղաքական նորոգ չիջեալ։

Ո՞ւր. Յաւելու 'ի վերայ յանցանացն զնոր չարութիւն, 'ի գործել զայն 'ի մեհենի, առաջի աչաց դիցն վեհից ըստ հեթանոսական կարծեաց. յորմէ նախատինք լինէին մարդկային մեծափառութեան և դիւցականի։

Ո՞րպէս. Եւ ևս առաւելու յանցուածն միջոցօք՝ զորս հնարեցաւ Կիննա 'ի կատարել զայն, կոչեալ իւր 'ի թիկունս և 'ի գործակցութիւն իւրոյ ապիրատութեան և զայլ ևս ազնուականս. և ծածկեալ զսուրն զզէնն մտանութեան և անարգութեան, որով երբեմն 'ի վերայ յարեան Յուլիոսի Կեսարու։

Հե՞տ. Սա քան զամենայն առաւելու զյանցանս, զի շարժեցաւ ոչ 'ի քաջասիրտ գժգոհութենէ ընդ նախատինս ինչ հասուցեալս նմա, այլ յանարգ և 'ի խժական դրդմանէ մատնելոյ զտէր իւր, 'ի հաճել զմիտս Անտոնիոսի հասարակաց թշնամւոյ՝ և ընդունիլ 'ի նմանէ զվարձս ինչ։

Ո՞րքան. Ոչ այնչափ անարգական լինէր յանցուածն, եթէ ճակատ յարդարեալ էր նորա զինիլ ընդդէմ Օգոստոսի յայտնապէս, որպէս արարեալ էին այլ ապստամբք. բայց հաւատարմութիւն և սէր կեղծաւորիլ առ դաւաճանեալն, 'ի սեղանոյ նորա կերակրիլ և մտերմութեամբ դաւադիր լինել կենաց որ վստահն էր 'ի նա, այս է անհնարին գրժողութիւն։

Ե՞րբ. Այս պարագայ 'ի ներքս փակէ զայլս ամենայնի զսոսկումն, և առաւելու ևս։ Ի ժամանակի յորժամ բարեացապարտ իշխանն զոհս մատուցանէ վասն հասարակաց բարօրութեան, Կիննա կամի 'ի սպանդ վարել զնոյն ինքն զիշխանն վասն հասարակաց աւերման։ Ի նոյն սեղան Օգոստոս քրմաբար զարիւն հեղու զոհանցից 'ի հաճել զդիս հայրենեաց. և Կիննա հեղու զարիւն քրմին, առ երկրպագելն առնելոյ զՄարկոս Անտոնիոս զթշնամի հայրենեաց, թողեալ զՀռովմ մայեցեալ 'ի տարակուսի թէ ո՞ր մեծ իցէ, բարեպաշտութիւն դաւաճանելոյն թէ ամպարշտութիւն դաւաճանողին. որ 'ի հայրասպանութիւն յաւելու և զսեղանակապտութիւն[65]։

Յայսոսիկ եօթանեսին պարագայս յաւելուն ոմանք և զթիւ, այսինքն թէ քանիցս լեալ իցէ այն գործ։ Բայց կոչի սա բազմաւորութիւն գործոց, և ոչ թէ պարագայ միոյ գործոյ։ Այլք յաւելուն յայնս և զայլ մասնաւորութիւնս ինն



ստորոգութեանց պատահականաց՝ որ առ տրամաբանս։ Բայց բովանդակ վերածին սոքա յայս եօթն պարագայս։ Եւ այս հաստատեալ է յառաւելութիւն նրբահայեցութեան խոհեմ մտաց, 'ի քաջ խորհրդածել և քննել զմարդկային գործս։ Ի շառաւիղել ճառագայթից արևու ընդ մթին տեղի՝ երևին մանրամաղ շամանդաղք ընդ օդս թռուցեալք, որք արտաքոյ չերևէին աչաց. և լուսաւորագոյն միտք տեսանէ զմանր մանր պարագայս, զոր նուազ խոհեմք չտեսանեն, և լաւ ևս որոշէ զառաքինի գործս 'ի մոլեկանաց։

# ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ԱՐԻՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՅՐԻՑ ՆՈՐԱ.

### ԳԼՈՒԽ Ա.

*Ներածութիւն յԱրիութեան ճառս։*

ԱՀԱՒԱՍԻԿ քեզ նախ առաջին 'ի հանդէս մատչի այն ազնիւ Առաքինութիւնն քաջազանց, որ ազնուացուցանէ ըզտոհմս, պայծառ յարդարէ զանձինս, փողփողէ զվահանս ազնուազգի նշանօք, լիաւարաւ և վիրօք, զարդարեալ յաղթական պսակօք, միանգամայն և անդատապարտական փոշւով. որպէս քաջութեամբ՝ նոյնպէս պատուով քան զամենայն առաքինութիւնս անդէ լինել գահերէց։ Անուն յառաջ մատչին երկու խաղաղական՝ բայց իմաստուն քորք, Արդարութիւն և Խոհեմութիւն. և ընդդէմ եդեալ զհեղինակութիւն օրինաց՝ զօրութեան զինուց, զիշխանականն պատմուճան՝ զինուորական քղամդաւ, զուսուցչականն գահին յաղթական ախոյանաց, բողոքեն թէ առաքինութիւն ինչ զգայական ոգւոյ՝ որ հասարակ է անասնոց, զիա՞րդ իշխիցէ յառաջագաս լինել երկուց առաքինութեանց ոգւոյ բանաւորի, որ սեպհական է մարդոյ։ Եւ ահա անդրէն նորոգի վաղնջուց վէճն ազնուութեան 'ի մէջ Զինուց և Տառից, գրաւորութեամբ և զինուք ընդերկար հոռհոռեալ 'ի մէջ զօրականաց և պատմուճանաւորաց. սոցա գրելով գիտնաւոր սևակաւ, և նոցա կենդանի արեամբ վիրաց՝ իւրաքանչիւր զիւր փաստս։

Եւ թէպէտ ամենայն փիլիսոփայական դպրոցք ուղիղ որոշմամբ զկողմն իրաւացուցանեն զպատմուճանաւորաց առաքինութեանց զխոհեմութեան և զարդարութեան, վասն առաջնութեան նոցա յաղթահամարի՝ որպէս ցուցաւ 'ի նախընթաց գիրս, բայց և այնպէս ճշմարիտ է թէ զկողմն արիութեան առաւել իրաւացուցանեն, և մեծամեծ փառաւորութեամբ պատուեն իշխանք մեծամեծք և հզօրք, որք մեծ համարին զմի քաջ զօրավար քան զհարիւր ուսուցիչս։



Զայսր միտողութեան զննեալ Արիստոտէլի յիւր գիրս խնդրոց զքաղաքական պատճառ, այսպէս իմաստասիրէ. Մարդկային միտք որպէս աչառութեամբ զին հատանօղ՝ ոչ լաւ համարին զայն ինչ որ սոյգ լաւն է յինքեան, այլ զայն որ լաւն է դիտահատին, չափեալ զպատիւն ընդ օգտին։ Յորմէ 'ի վերայ բերէ, թէ վասն զի իշխանք մեծամեծք հանապազ կան նեղեալ 'ի սահմանակցաց, միշտ պատերազմունս մեքենայեն, և յայնց երկնչին, և այնպէս 'ի պաշտպանել անձանց և 'ի վանել զայլս՝ առաւել պիտոյս ունին զինուց քան օրինաց, Պալլասայ պատերազմողի քան Աթենասայ գիտնաւորի [64]։ Եւ վասն այսորիկ մեծապէս պատուեալ զարիութիւն քան զուսումն, զգիտնաւորաց չէ նոցա փոյթ յորժամ պիտոյ լինին, իսկ զքաջաց յամենայն ժամ։ Այնպէս զի գաս արդարութեան է արդարագոյն, այլ գաս արիութեանն է զօրագոյն։

Այլ մի մեծամանեալ աստանօր արիութիւնն, տեսեալ թէ Արիստոտէլ վերադասէ զնա 'ի կարգի վարդապետութեան քան զայլ առաքինութիւնս. որպէս թէ սահմանական վճռաւ նորին՝ իւր իցէ առաջին տեղին։ Յայտ է թէ ըստ բնաւոր կարգի՝ յուսուցանել նորա զայս գիտութիւն, պարտ էր նմա սկիզբն առնել յերկուց անտի գլխաւոր առաքինութեանց։ Բայց քանի կարգ վարդապետութեան պահանջէ 'ի դիւրագունից յառաջանալ 'ի դժուարագոյնս. կամ եղև նմա ըսկիզբն առնել յԱրիութենէ և 'ի Բարեխառնութենէ, և յայլոց առաքինութեանց՝ որք կարգաւորեն զկիրս. իբր զի են դիւրիմացք՝ վասն լինելոյ իւրեանց առաւել զգալի. 'ի վերջէ դասեալ զԱրդարութիւն և զԽոհեմութիւն, որոց հոգեւորագոյն գոլով և բարձրագոյն, մեծ ջան պիտի և խոր զննութիւն։ Մեր ոչ կամեցեալ դատաւոր լինել վիճիս, որոյ են այսպիսի մեծ դատախազք, և այսպիսի հզօր կուսակիցք, ընդհեա երթիցուք կարգի զոր կալաւ Արիստոտէլ։

### ԳԼՈՒԽ Բ.

*Յաղագս թէ զինչ իցէ առաքինութիւն արիութեան, և ո՞ր իցէ արին։*

Արիութիւնն է առաքինութիւն որ բարեկարգէ զպատճառական կիրս զերկիւղն չարեաց ապականչաց մարմնաւոր կենաց, դժուարին իմն, բայց չքեղ վախճանաւ։ Այլ որպէս փայլուն հաւնին միկրոփիւնիկ ոչ երևի, բայց եթէ 'ի գիշերի. նոյնպէս այսմ ազնուական առաքինութեան ոչ է հնար լինել

հասու, բայց եթէ 'ի սուտերս ծայրական մոլութեանց Վեհերոտութեան և Յանդգնութեան: Քանզի վեհերոտն յամենայնէ երկնչի, և յանդուգն յամենայնի է վստահ: Արին չերկնչի ուր պարտ է վստահել, և չվստահի ուր պարտ է երկնչել: Առաջի դիցի ինչ վտանգաւոր և դժուարին. վեհերոտն զամենայն խորհի, յանդուգնն ոչինչ խորհի. արին այնչափ ինչ խորհի՝ որչափ պիտոյ իցէ առ չքեղ լինելութիւն գործոյն:

Բնութիւնն չարար զամենայն մարդիկ միապէս պատրաստականս առ արիութիւն. զի չետ ամենեցուն մարմին միօրինակ: Առ մարդկային կենակցութիւն պիտէին պէսպէս արուեստք՝ տեսականք կամ գործնականք, ախրականք կամ ծառայականք, խաղաղականք կամ պատերազմականք:

Պէսպէս արուեստք պահանջեն պէսպէս բնաւորութիւնս, և պէսպիսութիւն բնաւորութեանց ծնանի 'ի պէսպիսութենէ խառնուածոց. բայց և այնպէս պարտ է կանոնաւորել զնոսա և ուղղել առաքինութեամբ. զի միտումն է բնական, այլ մոլութիւնն անձնական: Արք կարի իմն ցուրտք՝ բնութեամբ են երկչոտք. կարի իմն ջերմք՝ բնաւորապէս են յանդուգնք. արին ունի խառնուած խառն 'ի մաղձայնոյ և 'ի մաղասայնոյ: Խաբի հասարակաց զոյգն, որ կարծէ արիագոյն զայն որոյ սիրտն իցէ մեծագոյն: Չիք ինչ գազան արիագոյն քան զառիւծ. և ոչ ուրուք սիրտ փոքր է քան զնորայն ըստ համեմատութեան. զի սիրտ փոքր պահէ զկենդանական ոգիս առաւել ամփոփ և ջերմագին, լաւ ևս ջեռուցանէ զկուրծս: Յանդգնութիւնն յառաջ գայ յառաւելեալ ջերմութենէ թոքոյ, իբրև զօրութիւն ցասուցելոց և արբելոց, որ ոչ թողացուցանէ հայել 'ի վտանգն:

Զօրին հակառակն՝ վեհերոտութիւնն ծնանի յառաւելեալ պաղութենէ կրծոց, որպէս 'ի յանկարծ զարհուրանս. որոյ ստորասուզեալ զջերմութիւն 'ի ստորին մասունս՝ լքեալ թողու զայժս կենսական և կենդանական: Վասն այսորիկ յանդուգնն ընդ քիրան հարկանի, վեհերոտն դողայ. բայց արին չունելով աւելորդ ջերմութիւն կամ ցրտութիւն, գործէ քաջութեամբ և խելօք:

Եւս և յարտաքին կերպարանս, արին երևեցուցանէ ցոյցս, զի մարմինն է գործի հոգւոյ: Ակն ընդ խոժոռահայեաց և ընդ քաղցրահայեաց, գոյն ընդ թխատեսակ և ընդ շառագոյն, դէմք ընդ զուարթ և ընդ տխուր, տիք ընդ մանկական և ընդ ծերունական, տախտակ կրծոց լայն, և մարմին մկանուտ, այս կազմութիւն էր Հերակլեսի՝ քաջաց գաղափարի:

Բայց բազումս օգտէ և ժառանգական քաջասրտութիւն նախնեաց: Արիք ծնանին յարեաց: Պախեզայք ընդունէին զորդիս որպէս իւրեանց եթէ յարկանել առաջի նոցա զիժ, կայր նա աներկիւղ և անշարժ[65]: Եւ պատերազմողաց տոհմք այնու ճանաչէին զիւրեանց որդիս, յորժամ ընդդէմ եդեալ զնոսա վտանգի, տեսանէին թէ կան աներկիւղ և անսասան: Ի ծնանիլ Հերակլեայ և Իփիկլեայ 'ի շնացեալ մօրէ, Հերակլէս համարեցաւ որդի Դիոսի, և Իփիկլէս՝ Ամփիտրիոնի[66]. զի 'ի յարձակիլ օձի 'ի վերայ երկոցուն սոցա յանկարծակի, Իփիկլէս փախեաւ, և Հերակլէս հեղձոյց զնա: Վեհերոտն և արին ցուցանեն թէ այլ և այլ տոհմի են ծնունդ. յորժամ յերևիլ թշնամւոյն՝ ոմն զթիկունս դարձուցանէ և ոմն ընդդէմ ճակատի:



Բայց առանց քաջողուն սննդեան խամրանայ որդւոց յորդիս առաքինութիւն քաջազանց: Ի ցնկնել ամէհի շանն Լիկուրգոսի՝ մի 'ի կորեանց սնեալ յանտառի՝ գազանացաւ առ գազանս. և միւսն սնեալ 'ի խոհակերոցի, եղև որկորեայ և անարի: Եւ 'ի փորձել զերկոսին զնոսա յիւրում սրահի՝ առաջի արարեալ նոցա գազան և կերակուր, մին պնդեցաւ զգազանին, և միւսն վազեաց 'ի լափ: Յուշ առնեն բնախօսք, թէ չորրորդ ծնունդ արեաց լինի կատաղի. յոր վերայ լինին նուրբ և վիճաբանական փաստից յոյզք: Ինձ թուի թէ չիք փաստ ստուգագոյն քան զայս, թէ ըստ որում արք քաջք պարապին առաւել յարտաքին գործս քան 'ի տնտեսականս, յորդին լինին կամք այլ ոչ ուսմունք՝ առնելոյ գործս քաջութեան. և վասն այսորիկ երևին կատաղեք, վասն զի են յանդգունք. իբր զի ոչ այլ ինչ է յանդգնութիւն, բայց անմիտ համարձակութիւն:

Այլ և հայրենիք առնեն զմարդ արի՝ զոր օրինակ հարք: Սպարտա եւեթ էր գաւառ արիականաց. զի արեգդիմութիւն տեղւոյն առնէր զնոսա կորովիս. և չքաւորութիւն կերակրոյ ստիպէր զնոսա պարսաքարամբք որսալ իւրեանց հաց: Յայնմ ապառաժէ ծնանէին մանկունք քան զապառաժ վիմարդեանք, որ ցաւ անգամ չիմանային. 'ի պատառատեալ մարմնոյ դունդագունդ հոսէր արիւն, և չերևէր շիթ մի արտասուաց. ոգիք նոցա քաղէին հեծութիւն և ոչ մի:

Բայց 'ի վախճան ամենայնի՝ ունակութիւնն է որ հաստատէ և կազդուրէ զայս առաքինութիւն: Ահաւորագոյն է հարիւրեակ մի հինաւուրց զօրականաց, քան զլեգէոնախումբ կաճառ նորամտից. զի նոքա առ ամենայն շոլիւն սուսերի կարծեն վարիլ 'ի մահ. այլ նոքա խաղան ընդ մահու՝ որպէս ընդ ընտելացելոյ: Արին թէպէտ և տխօք և վիրօք ուժաթափ իցէ, ունի սիրտ աշխոյժ, և քաջութեամբ իմն արտայայտէ զունակութիւն: Զառամեալն Պրիամոս՝[67] քանդելոյ հայրենեացն յետնորդ՝ անսեալ զիւրև զանգերծ սուսեր գառոզին Պիւռոսի, որ իշխեացն զոհել զնա զաւազիր յաղթութեամբ 'ի զոհարանի, թէպէտ և պարտեցաւ՝ բայց դեռ երևեալ ան-

պարտասելի, Թուլացեալ ձեռամբ բայց արիական սրտիւ՝ ընկէց 'ի բարբարոս անգղ զանգն անզօր. որոյ շռնչաձայն չհանեալ ընդ անթափանց վահանն՝ անկաւ 'ի գետին անգործ, այլ ոչ անշուք: Շատ եղև այն քաջութիւն 'ի պատուել զանբաղդութիւն պարտելոց, և յամօթ առնել զպարծանս յաղթականաց:

## ԳԼՈՒԽ Գ.

*Յաղագս առարկայից արիութեան. այսինքն թէ յորո՞ց չարեաց երկնչիցի արին և յորո՞ց ոչ:*

Նախնի Կեղաք ըստ Արիստոտէլի՝ չերկնչէին 'ի վտանգէ իմեքէ[68]. Կիկղոպայք արհամարհէին զշանթս Արամազդայ, և մեծաբանէին եւս քարձիք լինել շանթիւք 'ի շանթառաքն, և որոտալ սպառնալեօք յորոտողն[69]: Ոչ ամենայն վտանգ է առարկայ արիութեան: Արին երկնչի 'ի սաստէ երկնից, այլ ոչ 'ի սաստէ սրոյ: Երկնչի 'ի հասարակաց ժանտախտէ, այլ ոչ 'ի յիւրոց վիրաց: Երկնչի 'ի նաւաբեկութենէ ծովու, այլ ոչ 'ի հոսելոյ արեան իւրոյ: Զի յանդուգն է որ չերկնչի 'ի վտանգից, որք առաւելուն քան զկար մարդոյ. որպէս վեհերոտ է որ երկնչի 'ի վտանգից, որ չառաւելուն ինչ քան զկար իւր:

Երկնչի արին 'ի սպառնալեաց իշխանաց և 'ի ցասմանէ բազմութեան. զի իշխանքն են աստուածք երկրաւորք, և բազմութիւնն է գազան բիւրգլխի. և երեք միայն գլուխք՝ բաւական են 'ի բաղկացուցանել զահեղ Ճիւաղ: Հերակլէս գաղափարն արիութեան՝ որպէս ասացաւ, 'ի մենամարտել իւրում ընդ երկուս տեսլեանս յՈղիմպիական խաղս՝ պարտեցաւ: Եւ վասն այսորիկ ոչ իշխեալ մենամարտել ընդ Ճահճայինն հիդրայ և ընդ ծովային խեցգետին, կոչեաց զՅոլաս յիւր օգնութիւն[70]. յորմէ եւ առածն Պղատոնեան. Եւ ոչ Հերակլէս ընդդէմ երկուց:

Չեն պարծանք քաջազօրի 'ի վերայ յարձակել խրոխտանօք. և ոչ ամօթ՝ նկուն եղելոյն պարտութիւն: Այլ արին ոչ ընդ առաջ երթայ վտանգից՝ որ 'ի վեր են քան զկար իւր, բայց ոչ զանգիտէ 'ի զօրութենէ որ փոքր է քան զիւրն: Ամօթ համարի Աղեքսանդրոս զհետ պնդել չնչին երէոց, և արհամարհել զիւր քաջութեան նետս՝ զհետ այծեմանց փախստէից. այլ ըղձանայ, զի 'ի բարձրաբերձ լերանց իջցէ առիւծ ամեհի, կամ Թաւամազ հրէշ ինչ անտառի[71]: Եւ արին ոչ դար-



ձուցանէ զզէնս ընդդէմ անարգ հակառակորդի. ուր յաղթելն չէ ինչ պարծանք, և յաղթիլն է ամօթ:

Երկնչի արին և 'ի ձախող պատահարաց բախտի, 'ի շղթայից Ցուգուրթայ, 'ի բանտէ Սիփակայ, յարհամարհանաց Կրասոսի, 'ի բոցոյ Կրեսոսի[72]. բայց յոյժ առաւել 'ի ձախող պատահարաց ոչ յիւրոց գործոց: Որ տանի ամօթալի չարեաց քան համեստից, անամօթ է և ոչ արի: Ոչ ինչ չարիք են նախատագոյն՝ քան զիրաւացին, և ոչ ինչ անցաւակցելի քան զարժանահասն: Երկու մեծամեծ գլուխք՝ նոյին յանդգնութեամբ զգրգռեալ զզօրագոյն ոք, արժանացան նոյն պատուհասի, Կղէոպատրա և Զենոբիա: Բայց ո՞ 'ի սոցանէ եղև արիագոյն. մին եցոյց թէ լրբի 'ի յանձն առնուլ զամօթ յաղթանակին. միւսն քերեաց յանձնէ զշառագունութիւն ամօթոյ՝ դեղնութեամբ մահու: Միւսին՝ բանտորն յաղթանակեաց, միւսն յաղթեաց բանտորին. որոյ կարծեալ զհետ ձգել զիւրոց կառաց զԿղէոպատրա, զհետ ձգեաց արձան մի: Եւ այնպէս՝ Զենոբիա զիւրոյ յանդգնութեանն անարգաբար ընկալաւ պատուհաս. և Կղէոպատրա անուամբ արիութեան քերեաց յանձնէ զկեղտ անուան յանդգնութե[73]:

Վասն այսորիկ 'ի վերայ բերէ Արիստոտէլ, թէ Ճշմարիտ և սեպհական և գերագոյն առարկայ արիութեան է մահ զինուորութեան՝ վասն իրաւացի պատճառաց. և այնպիսի համեստ զօրութեամբ, զի առաքինօրէն հնար իցէ արիաբար զայն վանել, կամ քաջութեամբ յանձն առնուլ: Յայնժամ մահն է յաղթական, յորժամ հորդի նմա Ճանապարհ ծիրանեօք, և մատնէ ընդ կամարս վիրաց[74]. և յայնժամ արիութիւնն առնէ զիւր ծայրագոյն Ճիգն, յորժամ պարտէ զծայրագոյնն ահաւորաց: Մահու անհնար է առնել ինչ յաւեգոյն քան զբարձումն կենաց. և արիականին անհնար է առնել ինչ լաւ քան զարհամարհութիւն նորա: Որ տայ զկեանս՝ պահէ առ իւր զպատիւ. որ մերկանայ զպատիւ, պահէ զազատութիւն. որ կորուսանէ զազատութիւն, պահէ զկեանս. բայց որ տայ զկեանս, տայ զամենայն բաց յառաքինութենէ, զոր ընդ իւր տանի. և բաց 'ի համբաւոյ զոր թողու յերկրի:

## ԳԼՈՒԽ Դ.

*Թէ վասն որո՞ց պատճառաց գործիցէ արին:*

Արին ոչ զգրգռէ զվտանգս, բայց և ոչ փախչի 'ի նոցանէ յորժամ յարժանաւոր պատճառէ յայն հրաւիրի: Այնպէս պատուական է արիւնն արիականի, զի չէ և չէ արժան հե-

զուլ զայն, բայց եթէ վասն մեծահարկի իրաց: Բնութիւնն էարկ զայն յերակս՝ որպէս անգին կարկեհանս յարկղ զգուշութեան. զի երևեցուսցէ շքեղ հանդէս 'ի հանդիսի առիթս: Ճաշակութիւն է անտանելի թէ գանձ այդպիսի վատնեսցի վասն փառաց ընչից, վասն թեթև նախատանաց, վասն առանձնաւոր ատելութեանց, վասն կամակոր մենամարտութեանց. որք առաւել արժանաւոր են պատժոց պատուհասից՝ քան յաղթանակի: Չիք ինչ անարգ քան զարիւն մարդոյ՝ հեղեալ վասն չնչին պատճառի. չիք ինչ պատուական քան զնոյն՝ ձօնեալ վասն գեղեցիկ պատճառի: Գեղեցիկ պատճառ արիութեան՝ համարեալ են փառք: Գեղեցիկ դաշն է, սուղ ինչ մահուամբ՝ գնոց առնուլ զյաւիտենական համբաւ: Գեղեցիկ փոխանակութիւն է յաւէլուլ յանմահութիւն զայն ինչ որ բառնի 'ի կենաց: Թանկագին եղև Մանլիոսի[75] Տորկուատոսդ անունն. Կուրիոսի՝ Գենտատոսն անունն, Կոսսոսի՝ հռոմայեցի Աքիլլեսդ անունն: Սակայն և այնպէս կենդանածնեալք յիւրեանց վերաստութիւնս, վայելեցին միանգամայն և 'ի փառս և 'ի պանծալի կեանս: Բայց պանծագոյն ևս է փոխել յական թօթափել զանիրելի լոյսն կենաց ընդ պայծառ լուսոյ յաւիտենական անուան. և արժանի ևս է վերագրել զայն 'ի չիրմի քան 'ի յաղթական կամարս:

Ճշմարիտ է թէ վաղ մեռանի համբաւ, եթէ ոչ հասանէ զնա 'ի կեանս շունչ գովչաց. և սակաւ թուչի, թէ չունի թևս գրչաց անուանի մատենագրաց. Քաջ լեր որդիդ գովանեայն Ոդիսեայ՝ ասաց Պալլաս առ Տելեմաք, զի և դու գտցես գովիչ հանդոյն հօր քոյ[76]: Այս բարեբաստութիւն միայն՝ էարկ նախանձուկս Աղեքսանդրի առ Աքիլլեւս, և Կեսարու առ Աղեքսանդր, ունի գովասան զոմն Հոմերոս: Ոչ ինչ բոմբիւն թօթափէ զքուն քնեալ որդւոց, որպէս նուագ ներբողից քաջաց նախնեաց: Զօրականաց միայն էր առանձինն օրէն՝ գրել զիւրեանց զինուորական կտակ արեամբ վիրաց 'ի պատեանս սուսերաց: Աւելի արժէր կտակն քան զթողեալ ժառանգութիւնն: Ոչ ինչ հայրենի ժառանգութիւն ձոխ՝ կարող էին թողուլ որդւոց, որպէս զօրինակ արիութեան իրեանց:

Բայց տկար յորդորիչ է առն քաջի՝ յետ մահուն համբաւ: Հատուցումն՝ չէ բաւական վճար աշխատութեանն: Ընդունայն լինէին քաջագործութիւնք անհամար շահատակաց, որք ոչ գրեցան, բայց 'ի ջուր մոռացութեան, և ոչ նուագեցան բայց հողմաձայն հարևանցեալ, և ոչ երևեցան բայց ուրուականաց միայն. համբաւն՝ կենդանի է առ կենդանիս, և մեռեալ առ մեռեալս: Նա՝ առ կենդանիս իսկ կիրք շռայլօրէն պարգևեն զայն չարժանեացն. և նախանձն խորամանկութեամբ բառնայ յարժանաւորէն: Մինչ զի աւելի արժէ օր մի մարտնաւոր կենացս՝ քան դար մի երևակայական կենաց. և չարժէ



առ շրջելոյ 'ի պատկերի՝ եղծանել զնախատիպն: Այլ ճշմարիտ պարծանք առն արիական՝ որպէս և լուսոյ, է գործն պանծալի: Ճշմարիտ համբաւն է վկայութիւն խղճի մտաց: Ճշմարիտ գովն է այն զոր տանայ նա անձին, 'ի համարել ստուգութեամբ թէ բարւոք գործեաց: Առաւել արժէ համեստ ինչ գործ առժամեայ՝ քան զհազար դարս կենաց: Եպամինոնդ[77] խոցեալ 'ի պատերազմի՝ որում զօրավարէր, մինչև էր հանեալ սլաքն 'ի վիրաց, եհարց թէ ասպար իւր զերծ իցէ, և թէ պարտեցա՞ւ թշնամին. և լուեալ զերկոցուն զայսն, խնդամիտ ասէ. Արդ Եպամինոնդ ծնանի, զի զայսօրինակ մեռանի: Եւ յայնժամ թողացոյց հանել զսլաքն, և եհան զոգի. և յաղթանակեաց 'ի պանծալի մահիճս դագաղաց: Ոչ ինչ այլ գործս կարող էր գտանել՝ լաւ ևս գովիչ. և ոչ ինչ գովիչ՝ լաւ ևս քան զիւր գործ:

Ապա ճշմարիտ պարծանք գործոց քաջութեան հաստատեալ է 'ի պատճառն որ առնէ անել զնոսա: Եւ ճշմարիտ պատճառ չէ գովն իւրական, այլ երախտաւորութիւնն առ այլս. և որչափ մեծ է երախտաւորութիւնն, այնչափ մեծ են և ճշմարիտ պարծանք արիութեան: Այսպիսի է գնել զկեանս վասն հօր, վասն հայրենեաց և վասն իշխանի: Անարժան է կենաց՝ որ ոչ գնէ զնա վասն տուողի նորա: Զերախտաւորութիւն ընդունելութեան կենաց չէք հաւասարել այլում երախտաւորութեան, բայց եթէ նուիրելով զայն իւրում տուողի: Ի վերայ Դիոսի[78] ծնաւ Պալլաս՝ զինեալ, 'ի խնդրել զվրէժ նորուն: Եւ բնութիւնն զսէր զաւակի առ ծնօղս. զի յորժամ դէպն տայցէ՝ կայցեն նորա պաշտպանօղք, ոչ ծառայաբար հարկեալք: Ի զերծուցանել զհայր 'ի հայրասպանաց՝ բնութիւնն արձակեաց զհամր լեզու զիւրոյ տղայի[79]: Ի կապարճս տղայական շրթանց պատրաստեալ էր զնետ այնր լեզուի՝ վասն այսպէս գեղեցիկ հարկանելոյ: Փոքրիկ ինչ լեզու բթացոյց զամենայն սուր գումարելոցն 'ի վերայ:

Բազում պարտք են որդւոյ առ ծնօղս, յորոց ծնանի. բայց առաւել են առ հայրենիս՝ վասն որոյ ծնանի: Չիք ինչ քաղցր քան զսէր հայրենեաց. չիք ինչ անձկալի քան զկեալն 'ի հայրենիս. և չիք ինչ պատուաւոր քան զմեռանել վասն հայրենեաց: Շատ եկեաց, որ վասն հայրենեաց մեռաւ. կարի շատ՝ որ և յետ հայրենեաց եկեաց: Սակաւ եկեաց որ մեռաւ՝ մինչ չև փոխատրեալ էր հայրենեաց մեծ ինչ երախտիս: Գեղարդն Հռոմուլոսի[80] անկեալ 'ի գետնի, եղև ծառ վարսաւոր. և ընդ հովանեաւ նորա հովանացին քաղաքացիք: Ոչ ինչ հովանի այնպէս հաճոյ է հայրենեաց, որպէս զհովանի զինուց քաջաց. և ոչ պտուղ քաղցր՝ քան զպտուղ արմաւենեաց համաշխարհիկ յաղթականաց: — Հայրենեօք իմս և զիշխանն՝ որ

ուէրն է նորա։ Որ ամենեցուն է պաշտպան, պատիւ և պատշաճ է՝ թէ յամենեցունց պաշտպանութիւն ընկալցի։ Յորժամ յաղնէ թշնամի 'ի վերայ օձի, ամենայն պարոյրք գալարածոյ անդամոց՝ զգլխով պատին, ուր են կեանք բովանդակ մարմնոյն։ Յորչափ իշխանն է կենդանի, հասարակութիւնն է կենդանի։

Այս ամենայն է բարւոք և համեստ պատճառ քաջի, 'ի գործ դնելոյ զիւրն քաջութիւն։ Բայց կայ միւս ևս կարի իմն ազնուագոյն և պանծագոյն։ Այլ ինչ է մեռանել վասն համեստ պատճառաց, և այլ ինչ է մեռանել վասն համեստութեան, որպէս յուշ առնէ մեզ Արիստոտէլ։ Համեստ իրք են փոփոխական, համեստութիւնն է անփոփոխ. նոքա են բոպէական, և սա յաւէժական. նոքա են երևելի, և սա աներևոյթ. նոքա են գաղափարեալ և սա գաղափար. որ կայ 'ի միտս աստուածային, և փայլէ ընդ իւրև զաստուածականս. և ամփոփէ զամենայն առաքինութիւնս 'ի մի միայն, որ է վերառեալ և զատեալ յայլմէ ամենայնէ։ Ապա սա է բարձրագոյն առարկայն՝ յոր հայի արին, յորժամ դիմագրաւէ ընդկեանս. այն է Համեստն և Բանաւորն։ Մեծանունութիւն, համբաւ, անդրիք, հոյակապ շիրիմք, դրուատք, պատմական յիշատակարանութիւնք, և ամենայն աշխարհային պատիւք չարժեն դանկ մի համեստութեան։

Ապրեցուցանել զիւրսն, հաստատել զհայրենիս, պաշտպանել իշխանի, և այլ ամենայն պատճառք, այնչափ են պատուաւորք՝ որչափ յաւէտ կամ նուազ հալորդին գաղափարին։ Ապա արին մեծ նախատինս հասուցանէ անձին՝ և իւրոյ արեան, եթէ 'ի հեղուլ զայն չունի զայս առարկայ ակն յանդիման, քան զհամբաւ և զշուք յաղթական։

## ԳԼՈՒԽ Ե.

*Յաղագս թէ որով օրինակաւ գործիցէ արին։*

Ի գործս արիականին՝ բաղում ինչ ընդ մէջ է, եթէ պատերազմեսցի նա այլոց հրամանաւ կամ իւրականաւ։ Եթէ վտանգն յառաջադէտ իցէ կամ անակնկալ, եթէ իւր պատերազմակից կայցէ կամ մենաւորեալ իցէ, եթէ վտանգն վերագոյն իցէ քան զկար մարդոյ՝ կամ հաւասար իւրումն։ Այսմ ամենայնի յառաջ քան զամենայն՝ մտախորհ լինի արին։ Եթէ է նա հրամանատար, լինի առաւել զգուշաւոր. եթէ է հրամանակատար, լինի առաւել կամակար. զի յառաջնումն՝ իւրն իւր է ապրեցուցանել զհայրենիս, իսկ յերկրորդումն՝ մեռանիլ վասն հայրենեաց։



Ի յառաջադէտ վտանգս մեծագոյն լինի նորա վստահութիւն. 'ի յանկարծադէպս մեծագոյն արիութիւն։ Մեծագոյն արիութիւն է՝ դիմագրաւել անկարծ արկածից, քան ընդ առաջ լինել նոցա ընտրութեամբ. զի կամքն քաղցրացուցանէ զդառնս, և հարկն դառնացուցանէ զքաղցունս։ Ոչ լքեալ թողու նա զմարտակիցս 'ի վտանգի, և ոչ մարտակցաց արժան է զնա լքանել. բայց թէ լքցի՝ ոչ լքանէ նա զանձն։ Այսպէս զքան զօրագլուխն զոր լքեալ թողին երկչոտ Աթենացիք. Երթայք 'ի բաց. իմ լիցի բանակն ամենայն. ընկերեսցէն ինձ իմ ճակատագիր, և դիք մարտակիցք։ Արին ոչ սիրէ զվտանգս՝ որ 'ի վեր են քան զկար մարդկան, որպէս ասացաւ. բայց թէ բախտն կամ հարկն յայն ստիպեսցէ, երևի այն մարդ՝ 'ի զգալ զայն, այլ 'ի վեր քան զմարդ 'ի տոկալ այնմ։ Եթէ կարեվէր խոցի, ոչ անձկայ մահու՝ ըստ Նեստորի[81]. և ոչ 'ի խնդիր լինի նորա ըստ Հերակլեսի, այլ տանի կենաց որպէս չարաբաստ ընկերի. և երբ մեռանի, փոխի յաշխարհէ և ոչ թէ փախչի։ Ի յայտնի նաւակոծութեան իսկ՝ թէպէտ և հաւասարակաց է վտանգն, գործք առն արիականի երևին այլազգ։ Սրտապնդէ զանձն և զընկերս, և 'ի մրրկի անդ սիրտ նորա է անվրդով։ Ցաւ է նմա, զի ոչ զօրէ ցուցանել զիւր զօրութիւն. բայց հետապնդի ցուցանել զիւր արիութիւն։ Աներկիւղ տեսանէ զմահ, զի միշտ յառաջատես եղև նորա։

Բայց 'ի լինել վտանգին հանդիսակցին՝ հաւասար զօրութեամբ, իբր զպատանւոյն Մանլիոսի ընդդէմ գաղղիացւոյն, և իբր զԿուինտոսի Կոսսոսի ընդդէմ սամնիտացւոյն, յառաջ քան զմարտն հայի արին՝ ոչ 'ի ցաւ մահուն, այլ 'ի վայելչութիւն առթին. զի պատիւ է յոյժ թանկագին՝ կորուսանել զարիւն, և փոխանակ գովութեան և փառաց՝ ստգտանաց լինել արժանաւոր։ Արին ճիշդ է 'ի սպառնալիս։ Նախատագրութիւն է թշնամւոյն՝ արհամարհել զանձն. նախատագրութիւն է անձին՝ արհամարհել զթշնամին։ Զի թէ անարգ է թշնամին՝ արժան է մերժել. և թէ զօրաւոր՝ չէ արժան անգոսնել։ Զանձն գովէ յաղթականն՝ 'ի գովել զպարտեալն։ Ուր առաւելու քաջութիւն, սպառնալիք են աւելորդք. ուր նուազ է քաջութիւն, սպառնալիք են ծանակելիք. ուր հաւասար է քաջութիւն, յիրաւի է ակնածել մարտի և բախտի. զի մինն է առօրեայ, և միւսն դաւաճան։ Յանդուգն արհամարհէ զզգուշաւորութիւն. արին զինի, զի յանդուգն վատահ է 'ի փախուստ և արին 'ի մարտ։ Յորժամ Աղէքսանդր զէն առնոյր զանձամբ, դողայր զգլխովն. այլ յետ զգենլոյ՝ դողացուցանէր զամենեսին։ Արծարծանի սիրտ ընդ զրահիւք. և վահանն պաշտպանէ իւրում պաշտպանողի։ Այսպէս արին զասացեալն յումեմնէ առ Փակրքսէս. Կարողացար թագա-

ւոր, անցանել հեռի ընդ ծով, և խորտակել զլեառն Աթովս․ բայց ոչ ինչ գտցես քեզ դժուարին, քան առ կողնւք քերել միոյ 'ի սպարտացւոց զինելոց։ Ի ձայն եղջերափողոյ՝ շունք որսականք հաչեն․ այլ շունք որ առ տնին, կաղկանձեն։ Սոյնպէս 'ի հնչել մարտագրգիռ փողոյ, այրն խոյտոյ և վատասիրտն տատանի․ նորա դէմք՝ զուարթ են և աշխոյժ, սորայն՝ ոգեսպառ և կիսակենդան։ Միումն թուի օր հարսանեաց, միւսումն հանդէս յուղարկաւորութեան։

Որպէս յամր է այրն 'ի խորհրդածել, նոյնպէս երագ է 'ի կատարել․ զի չիք անմտութիւն մեծ քան դնել 'ի վտանգի զկեանս առանց նախագէտ պատճառի․ և չիք վտանգ մեծ քան զխմագրաւել ջերմ աւթի՝ սաստկատարոյ սրտին։ Մըտանէ այրն յասպարէզ, և թողու 'ի բաց զամենայն երկիւղ։ Եւ ո՞ խիթասցէ յայնպիսւոյն վերայ, որոյ նուիրեալ զիւր կեանս իւրոյ հայրենեաց՝ մատուցանէ յայն հանդէս որպէս 'ի զոհարան զոհ ինչ, որ ոչ ևս է իւր․ բայց կամի թէ թանկագին լիցի այն՝ որ խլեսցէ զոհել զայն։ Ախորժէ այրն՝ թէ տեսօղք կոչեսցեն 'ի զինին, ոչ որպէս գովօղք առաքինութեան, այլ որպէս վկայք ճշմարտութեան։ Ոչ ինչ ցաւեաց երից հարիւրոց սպարտացւոց այն՝ զի հանդերձեալ էին պատերազմիլ ընդ երեսուն բիւրուց Պարսից, այլ այն միայն զի չունէին 'ի զինին տեսօղս անաչառս․ վասն որոյ և ասէին․ Այնչափ ինչ կարծեսցի՝ որչափ Պարսիկն ասիցէ։ Երկուանալի է գովեստն՝ որ կախեալ կայ զբերանոյ ոխերիմ գովչաց։ Բայց յորժամ չունիցի այրն տեսօղս զիւրև, նա ինքն է իւր տեսօղ և տեսարան․ զի նա ինքն է հանդիսադիր և գովիչ իւրոց քաջութեանց։

Ի վերայ յարձակի այրն մեծաւ բորբոքմամբ․ բայց խաղաղական մտօք։ Հուր սրտի ջեռուցանէ զնուրծս, այլ ոչ ծխանէ զմիտս։ Որ յաղթական է իւրոց կրից, կարգադիր է իւրոց գործոց․ զոր օրինակ անվեհեր է 'ի փորձ մարտի, նոյնպէս 'ի բուն պատերազմի ոչինչ աւելի խռովի քան 'ի փորձ մարտին։ Եթէ բախտն զհետ վարի իւրոյ զօրութեան, նա ինքն ևս ըզհետ վարի իւրոյ բախտի։ Ոչ կորուսանէ զգիտողութիւնս և ոչ խնայէ 'ի հարուածս։ Ի ձիգն մտանէ միանգամայն սրով և վահանաւ, 'ի պաշտպանել և 'ի մխել։ Եթէ յաղթէ նա թշնամեաց իւրում զօրութեամբ, յաղթէ և անձին գթասիրութեամբ։ Ոչ յոխորտանայ առ այն որ պարտութիւն խոստովանի․ անձին սեպհականէ զյաղթութիւն, և նմա շնորհէ զկեանս։ Թշնամին ոչ ևս է իւր թշնամի, այլ կոթող կենդանի իւրոյ յաղթանակի։ Բայց եթէ բախտն՝ որ յոլովակի արիութեան է թշնամի՝ մատնէ զնա թշնամեաց, նա ոչ տայ տեղի և ոչ դադարէ։ Նիսոս[82] ցորչափ ծիրանի ունէր 'ի հերս, ոչ պարտիւր․ և այրն ցորչափ ծիրանի է յերակս նորա, չառնէ ինչ գործ նկուն և անարգ․ չաղաչէ, չխոնարհի, չփախչի։ Առաւել ընտրէ քայլ մի յառաջ մահու պատահել, քան քայլ մի ընդ կրունկն զկենդանութիւն ողջունել։ Ի խորտակել զինուց, յանկանել սուսերի, չանկանի նորա սիրտ․ ամենայն մարմնով զինի ընդդէմ։ Ի պատերազմին որ ընդ Դարեհի՝ յորժամ փախստեայ գնային Պարսիկք յերեսաց Աթենացւոց մինչև 'ի նաւս իւրեանց, Կիւնեգիրեայ զհետ մտեալ նոցա՝ կասեցոյց զմի 'ի նաւուց փախստէից՝ զօրութեամբ աջոյ իւրոյ․ իբրև հատին զաջն, կասեցոյց ձախոյ ձեռամբ․ իբրև հատին զձախն՝ կասեցոյց ատամամբք, և չեթող շարժիլ։ Որ ոչ հաւատայ 'ի բուռն զօրութիւն նաւակալ ձկան՝ յարգելուլ զնաւս, հայեսցի 'ի Կիւնեգիր։ Բուռն է արիականին զօրութիւն քան զնաւակալ ձկան։



Հուսկ ուրեմն 'ի սպառել արեան՝ յորժամ մեռանիցի վայելչական լրոյ աղագաւ և վասն հայրենեաց, որում եւեթ ըղձանայր, ոչ մորմոքի, ոչ յոգւոց հանէ, այլ խնդայ և ուրախ լինի յանձին․ մխիթարէ զմխիթարիչս, հայի անարտօսր՝ յարտասուս բարեկամաց, և յանդիմանէ զարտօսր նոցա։ Յայնժամ արդոյ համարի զիւր կեանս, յորժամ կորուսանէ, և ընդ Եպամինոնդայ ասէ․ Այսօր վերստին ծնանիմ, զի այսպէս մեռանիմ։

Յայս սահման եհաս արիութիւն հեթանոսաց բարոյական իմաստասիրութեամբ, որք ոչն հաւատային թէ յետ թշուառ կենացս կան յաւագոյն կեանք։ Իսկ զի՞արդ լինիցի արիութիւն քաջազուն քրիստոնէի, որոյ հայեցեալ 'ի կեանսն յաւիտենից աչօք հաւատոյ՝ մեռանի վասն հաւատոյ։ Առաջի արանա զամենայն զանջանս՝ զորս բռնաւորական բարբարոսութիւն մենքենայել ջանացաւ մարմնոյ 'ի խորտակել զոսկրս։ Առ 'ի չխմանալ զանջանս՝ աստուածապարգև հնար է նորա յոյսն։ Նա սաստկագոյն տանջանք լինէին նմա թէ սակաւ տանջիւր։ Զարհուրեցուցանեն զնա ոչ ցաւագին խոցուածք Կեսարու, և ոչ թոյնն Սոկրատայ[83]․ զի չէ նմա փոյթ, թէ մոլախնդաւ մտցէ մահ, կամ ընդ արեան ելցեն կեանք, միայն թէ հոգին առ 'ի տորինս մի մնասցէ։ Ոչ աչ արկանէ 'ի նա երկար տքնութիւն Հռեգուլոսի 'ի բանտս, քան զսուղ ինչ քուն Սենեկայ 'ի բաղանիս[84]․ զի անխտիր է յաչս նորա՝ թէ փակեալ կամ բաց իցեն պատուհանք մարմնեղէն օթևանին, միայն թէ 'ի լաւ ևս օթևանս փոխեսցի հոգի։ Սպառնացիր նմա մահ երագահաս․ քաղցր սպառնալիք է նմա վաղահաս երջանկութիւն։ Հաշեցո՛ առ սակաւ սակաւ զնորա կեանս․ ոչ լինի հասանել երբեք անագան 'ի բարի ինչ անանց։ Ցոյց նմա զահաւոր կոհակս մրրկալից ծովու․ նաւահանգստին՝ որում անձկայ, նաւակոծութիւնն է առաջնորդ։ Ցոյց նմա զդառնաթափ ժայռս և զկործանական վիհս․ առ ելանել՝ ուր

դէմ եդեալ է, վիհքն են նմա վերելք. երեւեցան նմա զամեալ ժանիս գաղանաց, լուռ համարեալ զայն շնչաւոր շիրիմ՝ քան զհոյակապ դամբանս։ Արկ զնա 'ի լափլիզող բոց բաբելոնեան հնոցի, ելցէ անմահ փիւնիկ 'ի նորահրաշ կեանս։ Զհուսկն տասցես. այնչափ գերագոյն է արիութիւնն քրիստոնէական քան զբարոյական, որչափ աստուածայինք քան զմարդկայինս։ Եւ զնոյն ասեմ զայլ ամենայն առաքինութեանց[85]։

## ԳԼՈՒԽ Զ.

*Յաղագս յանդգնութեան և վեհերոտութեան ։*

Յանդգնութիւնն և Վեհերոտութիւն՝ են ծայրական մոլութիւնք ցասմնականին, նա տարապայման ջերմամբ 'ի վտանգս, և սա տարապայման փախստեամբ 'ի վտանգից։ Երկաքանչիւրոցն այնպէս խանգարեալ է իմաստ 'ի թիւր ունակութենէ. մինչև չհայել նոցա թէ յոր վտանգս, և վասն որոյ պատճառաց և որով օրինակաւ՝ մին ընդ առաջ լինիցի և միւսն փախիցի։

Զիք ինչ անասուն նմանագոյն մարդոյ՝ քան զկապիկն, բայց և չիք քան զնա տգեղագոյն։ Զիք ինչ նման արիութեան քան զյանդգնութիւն. բայց որչափ բանաւոր է նա, այնչափ անբանական է սա։ Յանդգնութիւն՝ ըստ ասից Արիստոտելի 'ի գիրս բնազննութեանց, ամենայնիւ նման է արիականին 'ի կերպարանս. այլ սիրտ նորա է ամենևին աննման։ Պատահէ նոցին վնաս վտանգի. բայց արին չափէ զնոսա ընդ իւր զօրութիւն, և յանդուգնն ընդ իւր բորբոք։ Հռովմէական դատաւորք պատժէին զզօրականս կարի իմն յոխորտ երախահատութեամբ աջոյ բազկի. և կարի յիրաւունս։ Զի որպէս յանդգնութիւնն յառաջ գայ բնաւորապէս 'ի կարի իմն եռանդանէ արեան 'ի թոքս, նոյնպէս պատիժն այն էր նոցա դեղ նախատական՝ միանգամայն և առողջարար։ Նոյն բաւեն բերումն մեր զնա ընդ առաջ լինել մեծ ևս վտանգից՝ քան որոց ընդ առաջ ելանէ արին. և երբեմն այնպէս գոհամէծ՝ յաջողելով դիպուածոյն, մինչև թշնամիք քան զնա զօրագոյնք՝ ոչ որոշելով զճշմարիտն յառերևութէն, գնան փախստեայք, և խաժամուժ ամբոխն չորոշելով զյաջողեալ յանդգնութիւնն յառաքինական արիութենէ, գովէ զնա մեծաձայն։

Ծերունին Սկիպիոն՝[86] մինչև էր ծերացեալ, երիտասարդական յանդգնութեամբ համարձակեցաւ վստահանալ երկու միայն նաւօք յերկուանալի բաղխումն բազմամբոխ զօրուն



Սիփակայ. թողեալ զհասարակաց փրկութիւն կամ զկործանումն 'ի վարանս երկուանալի դիպուածոյ, թէ կամ Սիփակ 'ի Սկիպիոնէ կալանաւորեսցի, կամ Սկիպիոն 'ի Սիփակայ սպանցի։ Ելքն անակնկալ՝ արծարծեցոյց զմեծ ակնկալութիւնն։ Գործն գովեցաւ յանմտաց. այլ անգոսնեցաւ յիմաստնոց։ Եւ որ արարն՝ ուսաւ յայնմ հետէ չառնել ինչ այնպիսի։

Բայց առած է հասարակաց, թէ յանդուգն գործոյ ելք՝ են 'ի ձեռս հասարակութեան, և 'ի նախատինս այնմ որ արար։ Զի որովհետև այնպիսին յառաջ ձեռն 'ի գործ առնէ և ապա խորհի, 'ի գտանելն զանխորհ դժուարութիւն՝ չամաչէ ասել զայն ամօթալի բան թէ՝ Ոչ կարծէի։ Փոխան բիւր օրինակի՝ շատ լիցին Կեպիոն ընդդէմ Կիմբրացւոց, և Մինուկիոս ընդդէմ Պենացւոց[87]. որոց երկաքանչիւրն անգոսնեալ զգանգատանս՝ իւրեանց խոհական խորհրդականաց, ընդ փոյթ տեսին զկոտորած զօրու իւրեանց, և զվտանգութիւն անձանց։ Շարժին յանդգունք 'ի դժուարին ձեռնարկս վասն համեստութեան, որ է հաստատուն և անփոփոխ վախճան արիութեան՝ իբր փոքր արջն նաւորդաց. այլ՝ ոմն վասն անսանձելին անմտածութեան, ոմն վասն անափառութեան, ոմն վասն ատելութեան առ թշնամին, ոմն վասն ագահելոյ յաւարն, և ոմն վասն վստահանալոյ յօգնութիւնս։ Արդ վասն զի այս վախճանք են ներընդունականք և այլայլականք, 'ի փոխել վախճանի փոխի և սիրտն։ Շարժեալն յանմտածութենէ, հայեցեալ ապա յանակնկալ դէմ մահու՝ զարհուրի։ Շարժեալն 'ի անափառութենէ, իբրև տեղի տայ ընդունայնամտութիւնն խելութեան վտանգին, սրտաբեկի։ Շարժեալն յատելութենէ, 'ի զօրանալ սիրոյ կենաց քան զատելութեան թշնամւոյն՝ անարգաբար զայն խնդրէ։ Շարժեալն յագահութենէ, 'ի նանրանալ յուսոյ աւարին յերկիւղէ սրոյն՝ զկենաց խորհի։ Իսկ շարժեալն յապաւինութենէ, 'ի պակասել օգնութեանց լքանի սիրտն։ Ի մարտին հանգիսի՝ նորօրինակ առաքինանայ։ Խոյանայ որպէս զԿոդրոս[88] արքայ՝ անգէն 'ի վերայ սպառազինաց. կամ որպէս զԿիւգնոս արքայ՝ զինու վառի 'ի պճնութիւն, և ոչ 'ի պաշտպանութիւն. բայց թէ դիպուածոյ դիպի ծանու, այլ ոչ պիտի նմա սաղաւարտ, բայց եթէ 'ի թաքուցանել զիւր դեղնութիւն. և ոչ փետուրք փողփողեալք, բայց եթէ առ երագել զփախուստն։ Զհուսկն տասցես, յամենայնի է յեղափոխ և ինքն ինքեան աննման. վայր մի գլխովին սրտեայ, և վայր մի անսիրտ. վայր մի քան զայր արուորագոյն, և վայր մի քան զկին կնատ. վայր մի ահեղատեսս, և վայր մի յողոք խոնարհեալ. ահարկու 'ի յարձակման, և երկչոտ 'ի փախստի. խրոխտ 'ի յաղթութեան, լուծեալ լքեալ 'ի պարտութեան։ Ի յոխորտ խիզախմանց՝ ան-

դէն անցանէ 'ի գործ անարժան, և 'ի յետին յանդգնութենէ՝ 'ի յետին երկչոտութիւն. զորմէ խօսել կայ մեզ առաջի:

Յանդգնութիւնն է մոլութիւն առաւել վտանգաւոր. բայց Վեհերոտութիւնն կամ Երկչոտութիւնն է մոլութիւն առաւել ամօթալի. զի նա դիմագրաւի աւելի քան զարժանն, և սա խնայէ յոր չէր արժան: Յամենայն մոլութիւնս յետնութիւնն է առաւել ամօթալի՝ քան զաւելազանցութիւնն, և դիւրագոյն է լինել երկչոտ՝ ուր պարտն էր վտանգիլ, քան վտանգանել՝ ուր պարտն էր երկնչել: Վեհերոտն՝ 'ի վտանգի ոչ հայի 'ի պատուաւոր պարագայս, այլ միայն 'ի ցաւագինս. և միայն թէ զերծցի 'ի վտանգէ, թողու այլոց զպատիւն՝ և յինքն արկանէ զապաշխարութիւնն: Որ ոչն կամի ընծայել փառաց զաւանդն կենաց, հատուցէ բնութեան զգլուխն՝ տոկոսեօք բազում ժամուց, այսօր զմի յատամանց, վաղիւ զմի յաչաց, յետ սակաւ միոյ զուշն, և 'ի վախճանի զկեանս իսկ, լեալ ամենեւին անարգ. և առ խորշելոյ 'ի միոյ մահուանէ՝ բիւրս կրէ մահուանս:

Բայց առաւել ևս ամօթալի է այս մոլութիւն այնմ՝ որոյ յանձն առեալ է զզինուորական պատիւ: Արք գրագէտք են երկչոտք. զի փոխանակ արութեան զգիտութիւն յանձին կալեալ, զգուշագոյն հային 'ի վտանգ կենաց. բայց զինուորի՝ որ փոքր սակ հարկ զվտանգ մահու, փախուստն է ամօթ նախատանաց: Ոչ ոք 'ի զինուորաց այնպէս արժանի է կենաց, որպէս որ արհամարհէ զկեանս. և ոչ ոք այնպէս անարժան է կենաց, որպէս որ երկնչի 'ի մահուանէ: Օրէնք էին Մակեդոնացւոց, զի զինուոր որոյ չէր սպանեալ զոք 'ի թշնամեաց, փոխան զինուորական կամարի՝ կրէր չուան կախաղանի: Միապէս մարդասպան համարէր՝ որ բառնայր զկեանս միոյ 'ի քաղաքացւոց խեռութեամբ, որ շնորհէր զկեանս հասարակաց թշնամւոյ՝ վեհերոտութեամբ: Անանուն էր առ Յոյնս զօրական՝ որոյ էր վահան անշահ՝ և սուսեր անշաղախ յարենէ թշնամեաց. բայց ամենեւին վատանուն, որ կորուսանէր զսուրն և զվահան: Սպարտացիք աքսորեցին զԱրքիլոքոս զիւրեանց քաղաքացի, զի 'ի բանաստեղծութիւնս նորա գտաւ գրեալ այս տուն բանի. Լաւ է կորուսանել զվահան՝ քան զկեանս: Լինել նորա բանաստեղծ՝ ապրեցոյց զնա 'ի մահուանէ, այլ ոչ յաքսորանաց: Անարժան վարկան զբանաստեղծն Սպարտայոյ, վասն բանիցն որ չէին արժանի Սպարտացւոց: Չէին նմա յանցանք 'ի գործ դնել զիւր ասացեալն. բայց յանցանք եղեն գրել նորա զայն:

Ի մարտին պահու՝ արին ըստ մօտելոյ վտանգին արագէ, և վեհերոտն ըստ մօտելոյ վտանգին յամր գնայ. զի նորայն է շարժումն բնական, և սորայս շարժումն բանական. այն է կամայական, և այս ակամայ կամօք: Վեհերոտն գոչէ հրա-



պարակաւ զուրխ, սրտապնդէ զընկերս, զի երևեսցի քաջասիրտ: Տայ սիրտ զոր ինքն ոչ ունի: Ըստ սակաւ անձրև կոչէ, և ինքն կայ անթացիկ: Արիստոգիտոն այր անձնեայ՝ բայց փքբոգի, միշտ շողշողուն զինուք զարդարեալ, որոյ և զրոյցք էին ճանապատ զպատերազմաց և զկատարածից, էր համարեալ մի 'ի քաջամարտից Աթենացւոց. բայց 'ի լսել զբարբառ փողոյ, եկն եւ 'ի յայս՝ անուանէր, յեցեալ 'ի ցուպ, զմի 'ի սրունից պատառեալ, և գնայր կաղ 'ի կաղ. զոր Փոկիոնի ծաղր արարեալ՝ եթող առակ վատասրտաց. ասէ. Արիստոգիտոն գնայ 'ի կաղ: Յանդուգնն յայնժամ սկսանի մերձ համարել զկեանս, յորժամ մօտ է 'ի կորուսանել զայն. զի 'ի նմա ընդ կենացն չիջանին ամենայն իւր բարիք: Բայց արին յորոյ 'ի սիրտն կան մեծ ևս և անանց բարիք, ոչ ցաւի ընդ կորուստ իրացն՝ որոց հնար է թէ բարձցին 'ի նմանէ. զի ոչ իւր համարի զնոսա:

Բայց և այնպէս վեհերոտն ջանայ բաժանորդ լինել փառաց, զօտարի ճգանց պարծանս անձին սեպհականէ: Եղև այս մոլութիւն ոչ միայն զինուորաց ստորականաց, այլ և կայսերաց յետնելոց 'ի հետոց նորա՝ զորոյ առին զանուն[89]: Նստէին 'ի պաղպաջունս, և առաքէին 'ի բանակն զիւրեանց պատուիրակս: Զօրավարութիւնք յաղթէին յԱսիա, և նոքա յաղթական հանդիսանային 'ի Հռովմ: Կեսար յետ յաղթական հանդիսի սերմանեաց զհատս զիւրոյ դափնեայ պսակի. զի 'ի դեռաբոյս դափնեաց այնր անտառի պսակեսցին իւր յաջորդք, ուսեալք 'ի նմանէ յաղթել յառաջ քան զյաղթանակել. և յաղթանակել՝ վասն զի յաղթեցին: Բայց 'ի սակաւ ամս գոսացան համայն ազգատոհմիւ այն դափնիք, և 'ի վատանունութիւն ամենեցուն՝ հուսկ յետոյն եղև Ներոն՝ պարագլուխ վեհերոտաց: Միայն Օգոստոս ցուցաւ արժանի որդեգրական անուանն Կեսարու. բայց և սա 'ի յաղթութեանն մեծի ընդդէմ Պոմպէի առ Մեղէաւ, էառ դափնեայ պսակ անթացիկ յիւրոց քրտանց: Կշտամբեցաւ թէ այն ինչ անքունն Ագրիպպաս արիաբար յաղթէր, Օգոստոս ընդ գինի մտեալ ննջէր և խորդայր. և 'ի բանալ զկկոցեալ աչս հայել յԱգրիպպաս, անդէն աւետիս տուաւ նմա յաղթութեան: Զհուսկն ասացից. մեծ ևս երախտիս արարեալ էր Կեսարու առ իւր հայրենիս, եթէ թողեալ էր ուսումնարան՝ զգլխոց արժանաւորաց դափնեայ պսակի, քան զսերմնարան՝ զգլխոց պսակաց՝ որոց պիտէին գլուխք[90]:

# ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՅՐԻՑ ՆՈՐԱ

### ԳԼՈՒԽ Ա.

*Թէ զինչ իցէ բարեխառնութիւն :*

ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԻՒՆՆ է առաքինութիւնն ցանկականին. որ չափաւորէ զկարի խիստ ծմրութիւն, և զկարի խիստ ցանկութիւն մարմնական հաճոյից: Մարդ ոչ է քար և ոչ անասուն. ոչ բոլորովին անզգայ, և ոչ գլխովին զգայութիւն: Կամք են բնութեան պահել մարդոյ զմարմին, զի և մարմինն ծառայեսցէ հոգւոյ: Մարմինն ախորժէ զհաճոյս. հոգին սիրէ զզգաստութիւն: Անբարեխառնն նեղէ զհոգի աւելորդ կերակրովք. Թմբեալն՝ լքեալ թողու զմարմինն աւելորդ զգաստութեամբ. Բարեխառնն դաշն առնէ 'ի մէջ մարմնոյ և հոգւոյ, դնեալ մէջ՝ որով ոչ մարմնոյ պակասին կենսական զօրութիւնք, և ոչ հոգին պակասի 'ի բանաւոր գործողութեանց: Բայց քանզի բարեխառնութիւնն երկոցունց ձեռաց աջողակ՝ պատերազմիլ ունի միանգամայն ընդ երկուս հրէշս՝ որ ասին և անուն, իբր Հերակլէս ընդ խեցգետնի և ընդ հիդրայի, որոց առաջինն է բոլորովին ցուրտ և դանդաղ և երկրորդն բոլորովին հրերեայ և բոցային, հարկաւ մեծ է նորա ձիգն 'ի յաղթել հիդրայի քան խեցգետնի, ցանկութեան՝ քան թմբրութեան [1]:

Ապա գլխաւոր գործ բարեխառնութեան է չափաւորել զբաղձանս հաճոյական առարկայից, զի մի՛ եկաւորութիւն նոցա ծնցի աւելադանց հաճութիւն, և ոչ հեռաւորութիւն նոցա կարի խիստ ցաւ: Ի նորա ձեռս է կշիռ արտասուաց և ծաղու, հեծութեան և հրճուանաց, հաճութեան և ցաւոց: Եւ որպէս արիութիւնն առնէ զվստահութիւնն երկեղուս և զերկիւղն վստահական, նոյնպէս բարեխառնութիւնն արդար հաւասարակշռութեամբ առնէ զտրտմութիւնն հաճոյական, և զհաճոյն տրտմական, 'ի հասուցանել զերկաքանչիւրն 'ի



հաւասարութիւն համեստական: Բայց արդարև առաւել դժուարին է չափաւորել զբերկրութիւն մերձակայ առարկային՝ քան զցաւ հեռաւոր առարկային: Վասն զի բնութիւնն սիրող գոլով հաճոյից և ատեցող ցաւոց, ընդ ցաւոց հեռաւոր առարկային պատերազմին առաքինութիւնն և բնութիւնն, բայց ընդ հաճոյս մերձակայ առարկային պատերազմի միայն առաքինութիւնն. և դժուարագոյն ձեռնարկ է յաղթել երկուց թշնամեաց քան միոյ միայնոյ: Թող զի յառարկայն հեռաւոր՝ միայն երեւակայութեամբ լինի վայելել. բայց 'ի մերձակայն զգայութեամբ: Եւ զի երեւակայութիւնն է կարողութիւն առաւել հոգեղէն և նիւազ, և զգայութիւնն առաւել մարմնեղէն և սաստիկ, վասն այսորիկ նուազ շարժէ առարկայն երեւակայելի քան զզգալի: Ուստի և իմաստաբար ասացաւ յառակս. Հեռաւորութիւնն զամենայն զմեծամեծ վէրս բժշկէ: Յամենայնի ճշմարիտ լինէր առակս եթէ ամենայն մարդկան խառնուած էր միօրինակ:

Որ սեւամաղձն ոք է, երեւակայութիւնն զօրագոյն է քան զզգայութիւն, այնչափ առաւելութեամբ մինչև այնպիսիք յոլովակի ընդ անձանց խօսին քան ընդ այլոց. և մօտ գոլով մեզ անձամբ՝ դեգերին մտօք 'ի հեռաստան, իբրև զվերնոտս և զվայրախօսս: Յայսպիսի բնաւորութիւնս՝ վասն լինելոյ երեւակայութեանն առաւել սուր և ընդարձակ, մեծագոյն ցաւ ազդէ առարկայն հեռաւոր՝ քան մօտաւորն զվայելս. վասն զի երեւակայութիւնն ձեւացուցանէ զայն, որպէս և ըղձանայ. և զգայութիւնն չգտանէ զնա, որպէս երեւակայէր:

Յանցաւոր իրս՝ ամենայն կատարեալ ունի զիւր պակասութիւն, բայց յառարկայն հեռաւոր՝ երեւակայութիւնն հայի 'ի կատարելութիւնս ուրոյն 'ի պակասութեանց, և առաւել ըղձանայ այնմ. իսկ յառարկայն մերձակայ՝ զգայութիւնն առաւելի գտանէ պակասութիւնս քան կատարելութիւնս, և անդէն խորշի. և 'ի փոխել զկարծիս՝ փոխէ և զցանկութիւնն: Գայլ սովեալ թէպէտ և որս 'ի ձեռին ունիցի, եթէ դէպ լիցի նմա դարձուցանել զաչս յայլ որս հեռաւոր, թողու զոր ունի՝ և զհետ պնդի այնմ զոր չունի. վասն զի երեւակայութիւն նորա է սուր, և զգայութիւնն բութ: Այսպիսի էր Թէսէոս, որ միշտ զեկանեալ 'ի դէպ օտարոտի, յառաջ քան զամուսնանալ՝ աւազակաբար առանձայր իւր արս սպանութեամբ և կանայս յափշտակութեամբ. առ վինջելոյ 'ի տիկնայս՝ խառնէր զայլոց թագաւորութիւնս. և իսկ և իսկ յափրացեալ՝ վանէր զնոսա յիւրմէ թագաւորութենէ: Ի բաց արձակեաց զԱնաքսոն՝ 'ի յափշտակել զՊերիբեա. մերժեաց զՊերիբեա՝ վասն Յոպպեայ, և զնա՝ վասն Անտիոպեայ, զԱնտիոպէ վասն Արիանեայ, զԱրիանէ վասն Եգղեայ, և զԵգղէ վասն Փեդրեայ. զամենայն զկապարճս դատարկեաց ցանկութիւնն, զի որպաս-

ցի նմա միշտ նոր որս[92]։ Ոչինչ հանգոյց հիմնեան կարող եղև այնպէս պրկել զնորա սևամաղձային սէր, որ ոչ թուլեսցի։ Աչք խուլ և խուլ յոգենոյին, այլ երևակայութիւնն ոչ երբէք։ Այն ոչ բարուք խօսեցաւ Քրիսիպպոս թէ մարդկային կիրք ոչ այլ ինչ են, բայց կարծիք. որպէս տեսցի յիւրում տեղւոջ։ Բայց և այնպէս ճշմարիտ է թէ սաստիկ ըմբռնմունք զարթուցանեն զսաստիկ կիրս. և կարծիք սևամաղձոտաց՝ են սաստիկ ըմբռնմունք։ Ապա բարեխառնութիւնն յուղղել անդ զարտուղութիւն կարծեաց՝ և 'ի չափաւորել զանյագութիւն զգայութեան, վերածէ իւր արդար կշռով՝ զհաճոյս ստացութեան և զտհաճութիւն պակասութեան 'ի միջասահմանութիւն բանի։

## ԳԼՈՒԽ Բ.

*Թէ որպիսի իցէ բարեխառնն։*

Բարեխառնութիւնն է արեգակն ինչ 'ի կշռի՝ ընդ մէջ ամառնային արևադարձի և խոր ձմերան. գօտի ինչ բարեխառն՝ ընդ մէջ սառնամանեաց և տապոյ, առաքինութիւն ինչ միջասահման՝ ընդ մէջ ցուրտ թմրութեան, և հրատապ անբարեխառնութեան։ Ապա խառնուած բարեխառնին է ընդ ցուրտ և ընդ ջերմ, ընդ մաղասային և ընդ արիւնային. հասակ ինչ ընդ եռանդն մանկական և ընդ սառոյց ծերութեան։ Բարք նորա են միշտ բարեկարգ, սիրտն միշտ զուգական, երեսքն միշտ միօրինակ, յոր ոչ երևի բարկութիւն, և ոչ փայլատակէ ծաղր. այլ իբրև 'ի գագաթ ովլիմպիական լերին՝ քաղցրութեամբ փողփողէ անխռով պարզութիւն։ Անմիտ եղև խիստ Ստոյիկեանց, թէ կիրք չմտանեն 'ի սիրտ իմաստնոց։ Վերադասէին այսու զիմաստունս քան զդիս իւրեանց։ Հարկ լինէր իմաստնոյ՝ առ ազատել յիւրոց կրծոց զկիրս, ազատել զսիրտ իւր՝ որ է նոցա կայան, որպէս լուիցես։ Չէ իմաստութիւն չունել զկիրս, այլ գիտել քաջ վարել զնոսա՝ որպէս զձիս, զզէնս և զինչս։ Չեն առաքինութիւն. բայց հնար է շրջել զնոսա յառաքինութիւն, 'ի տիրել նոցա, և 'ի չթողացուցանել թէ տիրեսցեն նոքա։ ԶԱրկրաստայ ասեն թէ չեցոյց այլայլութիւն գիմաց յաւուր հարսանեաց՝ և յաւուր յորում մեռաւ։ Եւ չեն ինչ զարմանք. զի բարեխառն գոլով, չիշխէին նմա ոչ հաճոյք կենաց, և ոչ ցաւ մահու. վասն այնորիկ առ հարսն և առ մահ՝ նոյն եղեն նորա դէմք, որպէս էին առ իւր բարեկամս։

Այլ և կլիմայք գաւառաց և դիրք երկնային կամարի՝ որա-



մադրեն զենթակայն առ այս առաքինութիւն։ Յափունս Գանգէսի ծնանին ժողովուրդք այնպէս ժուժկալք, մինչև ռնգունք են նոցա փոխանակ բերանոյ, և կերակուր՝ հոտ ծաղկանց։ Եւ ընդ այրեցածիւ ծնանին ժողովուրդք այնպէս շատակերք, որ խածոլեն զորովայն մարմնովք մարդկան։ Նոքա չեն մարդիկ, այլ գեանաբուծք. և սոքա գայլք կատաղիք, և ոչ մարդիկ։ Ապա մեծ երախտիք են երկնից՝ ծնանիլ ընդ քաղցր երկնիւք[93]։ Բարեխառն գաւառք յոգեն բարեխառն մարմինս. զի մարմինք զհետ երթան խառնուածոյ լուսաւորաց, և ոգիք՝ յոլովակի խառնուածոյ մարմնոց։ Կարի իմն բարկացողք՝ են և կարի անբարեխառն, ասէր Պիւթագորաս. ոչ զի անբարեխառնութիւնն է ծնունդ բարկութեան, այլ զի ոչ բարուք նուաճէ զարտաքին զգայութիւնս, որ ոչն նուաճեաց զներքինս։ Վասն այսորիկ որք առաւել գազանաբարոյք՝ են առաւել իգասէրք, զի 'ի նոյն սկզբնէ ծնանին՝ յետին գազանութիւնն առ այլս, և յետին մեղկութիւնն առ իւրական անձն։

Բայց առաւել բարեխառն են այնոքիկ որ 'ի մատաղ տիոց արարին ունակութիւն, ասէ Արիստոտէլ։ Ունակութիւնն չար՝ որպէս լուար, հանդերձ է զոր ամենայն ոք կարող է զգենուլ՝ երբ կամի. բայց իբրև զգենու, ոչ ևս է կարող՝ երբ կամի՝ դիւրաւ մերկանալ զայն 'ի բաց. և 'ի վերայ ամենայնի զունակութիւնն անբարեխառնութեան, որ քան զամենայն ունակութիւն ընդակից է մարմնոյ։ Ապա մանուկն սկիզբն առնէ լինել բարեխառն՝ յորժամ սկսանի ամաչել, յորմէ արժան է ամաչել։ Շառագունութիւն արշալուսի յուսացուցանէ թէ օրն պարզ լինիցի. և ամօթխածութիւն մանկութեան յուսացուցանէ՝ թէ համեստ լիցին նորա վարք. զի որ ամաչէ առաջի այլոց, ամաչեսցէ յանձնէ իւրմէ՝ յորժամ միայն իցէ. և ամօթն պահեսցէ զնա յամօթալի գործոց։ Քիրոն[94] չէր քաջազն, և էր ուսուցիչ քաջազանց. ամօթխածութիւնն չէ ճշմարիտ առաքինութիւն, և է ուսուցիչ առաքինութեանց։ Ճշմարիտ է թէ ամօթխածութիւնն է երկիւղ ինչ, և ամենայն երկիւղ՝ թուի թէ նկուն առնէ զսիրտս պատերազմողաց։ Բայց արժան է նմանող լինել Քիրոնի, որ միանգամայն ուսուցանէր քաջազանց չերկնչել 'ի յարձակմանէ առիւծուց, և երկնչել յամօթոյ անարգ գործոց. զի որ կորուսանէ զամօթ, կորոյս և զպատիւ։

# ԳԼՈՒԽ Գ.

*Թէ ո՞յք իցեն առարկայք բարեխառնութեան :*

Արիութիւնն չէ զամենայն ցաւագին առարկայիւք. և բարեխառնութիւնն չէ զամենայն բերկրական առարկայիւք, որպէս և լուար: Մարդն է եռագլխեան կենդանի երեքարկուբեայ. բանիւ, կործեօք և արտաքին զգայութեամբ: Եւ իւրաքանչիւրում 'ի սոցանէ ետ տեսչութիւնն զիւր համեմատ կերակուրս, համեմալս՝ (որպէս սովորութիւն է նորա յամենայն տեսչութիւնս իւր) զարմանաւոր հաճոյիւք իմանալեօք, կամ զգալեօք և կամ միջակայնովք: Միտք որպէս բանաւոր՝ անյագ են առ գիտութիւն, կործիք՝ անյագ են առ գանձս և առ պատիւ. արտաքին զգայութիւնք՝ անյագ են առ մարմնական հաճոյս: Հաճոյք մտաց՝ հաւասարորդ են ընդ հրեշտակաց, վասն որոյ և հրեշտակայինք: Հաճոյք կործեաց սեպհական են մարդոյ, վասն որոյ և մարդայինք: Հաճոյք արտաքին զգայութեանց՝ հաւասարորդ են ընդ անասնոց, վասն որոյ և անասնայինք. և որչափ առաւել պիտանիք, այնչափ առաւել անարգք:

Այլ բարեխառնութիւնն ոչ չափաւորէ զհաճոյս մտաց. որոյ աւելադանցութիւնն՝ կոչի ընդվայրաքննութիւն, զոր չափաւորէ խոհեմութիւնն: Ոչ չափաւորէ և զհաճոյս կործեաց. զի չափաւորին սոքա առատաձեռնութեամբ և հանգարտութեամբ: Այլ չափաւորէ նա զհաճոյս արտաքին ըզգայութեան, որ ստորինն է քան զամենայն կարողութիւն մարդկային, որոյ աւելադանցութիւնն է անբարեխառնութիւն, և ընդդէմ այսց հաճոյից մարտ է նորա հանապազ:

Նա վասն զի յարտաքին զգայութեանց ակնն, ունկն և հոտոտելիք՝ են փոքր հոգեղինագոյնք, վասն որոյ և ազնուագոյնք, արբանեկելով բանաւոր գործողութեանց, ակնն առ տեղաբաշխութեան, ականջն երաժշտութեան, և հոտոտելիք բնազննութեան 'ի ճանաչումն բժշկական խոտոց, բարեխառնութիւնն չափաւորէ միայն զհաճոյս երկուց այնց ստորին զգայութեանց, որ արբանեկեն անարգագոյն և գլխովին անասնային գործողութեանց, ճաշակելեաց և շօշափելեաց: Տեսչութիւնն չէ այնպէս անյառաջատես, որ 'ի պահել զանհատ իւրոց արարածոց՝ կորուսանել կամիցի զանհատս, կամ 'ի պահել զանհատս՝ կորուսանել կամիցի զտեսակս: Այլ 'ի տալ իւրում մարդկան միայնոյ զբան՝ վասն գերապանծ գործողութեանց, ետ առ հասարակ մարդկան և անասնոց զայն



երկու անարգագոյն զգայութիւնս ճաշակելեաց և շօշափելեաց. զառաջինն 'ի պահել զկեանս անհատի՝ կերակրովք, և զերկրորդն զի անհատն պահեսցէ զտեսակ իւր զաւակօք: Արդ վասն զի անասունք չունին այլ վախճան՝ բայց զկեանս և զզաւակ, տեսչութիւնն առատաձեռնեաց 'ի նոսա զհեշտական հաճոյս երկոցունց զգայութեանցս, բայց չետ զբերկրութիւն այլոց երից զգայութեանց ազնուագունից, բայց եթէ ըստ պատահման. ըստ որում երկոցուն նոցա արբանեկեն լռութեամբ: Ոչ բերկրին անասունք համեմատութեամբ գունոց, և ոչ ներդաշնակութեամբ ձայնից, և ոչ անուշութեամբ հոտոց: Նա ոմանք մեռանին 'ի հոտոյ վարդից, և բազումք կաղկանձեն 'ի հնչիւն երաժշտական նուագաց. և չէ ոք 'ի նոցանէ հաճ ընդ նկար՝ ըստ որում նկար: Վասն զի այս հաճութիւն ենթադրէ զպատրանս երևակայութեան, թէ կեղծն իցէ ճշմարիտ. և զիրազէտ լինելն հետազօտ մտաց, թէ չէ ճշմարիտ, այլ կեղծ. յոր իրագիտութիւն է հաստատեալ հաճութիւնն ընդ նկար, որում անասունք են անծանօթք: Այլ եթէ անասունք ոմանք դիմեցին 'ի պտուղ խաղող Զևքսեայ[95], և 'ի գրաստ նկարեալ 'ի Պրաքսիտելեայ, խաբեցաւ նոցա երևակայութիւն, այլ ոչ իրազէտ եղեն խաբէութեան իւրեանց: Այն գոյնք ոչ հաճոյացան նոցա, բայց եթէ ըստ որում առաջի ածէին առարկայս համեմատս զգայութեան իւրեանց: Չէին այն հաճութիւն ընդ նկար, այլ ընդ առարկայն. և ոչ առարկայն էանց ըստ կարգ երկուց զգայութեանց անասնայնոց՝ ճաշակելեաց և շօշափելեաց: Այլ բարեխառնութիւնն ոչ ուղղէ անմիջաբար զերեսին զայն ազնուական զգայութիւնս՝ ըստ այնմ որ արբանեկեն իմացական գործողութեան. որոց աւելադանցութիւն չէ անբարեխառնութիւն իսկական, այլ այլաբանական, մանաւանդ թէ ընդվայրաքննութիւն, որ ներքոյ անկանի ուղղադրութեան խոհեմութեան:

Բայց և այն ճշմարիտ է, թէ որպէս բարեխառնութիւնն ուղղակի հայի յերկուս յետնորդ և անարգ զգայութիւնս՝ և չափաւորէ զհաճոյս նոցա զհասարակորդս անասնոց, նոյնպէս ըստ պատահման և անուղղակի չափաւորէ և զաչս և զլսելիս և զհոտոտելիս, յորժամ ընդ մէջ մտեալ արբանեկեն երկուց յետնորդ զգայութեանց՝ ընդդէմ համեստութեան, աչքն լկտի հայեցիւք, ականջք լսելի նուագօք, հոտոտելիքն խնկենեաց փափկութեամբք: Մանաւանդ թէ վասն զորին վախճանի բարեխառնութիւնն նախանձախնդիր համեստութեան՝ սաստէ եւ հաղներգութեանց և գինեութեանց, յորժամ չարաչար վարեն զսրութիւն մտաց՝ 'ի սրել զերկուսին զայսոսիկ անասնայինս և անմիտ զգայութիւնս: Պրահմինք[96] 'ի զեղխ խրախճանութիւնս իւրեանց՝ ուշի ուշով միտ դնէին

համագամ և նորանոր կերակրոց։ Աւա՜ղ մասց նոցա, զի զոր սահմանեցին երկինք վասն գերապանծ գործոց, առ նոսա եղև քաջ խորակեփեաց։ Բայց յոռեգոյն ևս եղև ժահահոտ այն նախագ ախբերեան, որ 'ի գարշ գպրոցի այծեաց առաջի արար վարձս այնմ՝ զոր յառաջագէմ գտանէր յաղթապիղծ լինելութիւնս։ Պրահմիք ոչ ուտէին առ իմաստասիրել, այլ իմաստասիրէին առ ուտել. սա վարձս փոխատրէր գխանոց ուսուցչաց, զի լինիցին ոչ 'ի գազանաց մարդիկ, այլ 'ի մարդկանէ գազանք։ Նա չար ևս քան զգազանս. զի սոցա բնութիւնն եդ կապար հեշտութեան՝ որպէս բանն մարդկան. այլ Տիբերիոս վեր 'ի վայր շրջեաց զամենայն զկապար բնութեան և բանի։

Յատայելոց աստի հնար է քեզ առնուլ 'ի միտ՝ թէ բարեխառնութիւնն յեանորդ է յաղնուութեան քան զամենայն առաքինութիւնս, բայց անբարեխառնութիւնն ամօթալի է առաւել քան զամենայն մոլութիւնս։ Գիտել զքերթողութիւն չէ ինչ մեծ գովութիւն. բայց չգիտել զայն՝ է ամօթ մեծ. զի առարկայք քերթողութեան են սորինք քան զամենայն գիտութեանց. և առարկայք բարեխառնութեան՝ են սորինք քան զամենայն առաքինութեանց։ Այլ թէպէտ և ճշմարիտ է այս, հայեցեալ յանարգութիւն հաճոյից զորս չափաւորէ նա, բայց և այնպէս թէ հայիմք 'ի դժուարութիւն չափաւորելոյ զնոսա վասն զիմամարտութեան բնութեան, կոչի սա պանծագոյն յառաքինութիւնս քաջազանց. զի առնէ զմարդ նման դիւցազանց, որպէս լուիցես յիւրում տեղւոջ։

## ԳԼՈՒԽ Դ.

*Թէ էր աղագաւ լինիցի մարդ բարեխառն։*

Մի միայն վախճան բարեխառնութեան՝ է Համեստութիւնն. և որ է բարեխառն այլոյ իրի աղագաւ, չէ բարեխառն։ Լէոտիքիդէս սպարտացի իբրև հարցաւ թէ ընդէր սպարտացիք չըմպեն գինի, ետ պատասխանի. Զի մի այլք խորհուրդ խորհեսցին վասն մեր։ Եւ յիրաւի. զի գինի աղաւաղէ զճշմարիտն, և յայտնէ զծածուկս։ Այս Խոհեմութիւն է, և ոչ բարեխառնութիւն։ Ստոյիկեան իմաստասէրք առ բարւոք իմաստասիրելոյ՝ էին բարեխառն կամ ժուժկալ։ Եւ յիրաւի. զի ձէթ սնունդ է լապտերի, և ձէթ զեղեալ շիջուցանէ զնա. կերակուր լուսաւորէ զմիտս, և կերակուր յորդեալ խաւարէ զնա։ Այս իմաստութիւն է, և ոչ բարեխառնութիւն։



նութիւն։ Որք յասպարիզի ընթանային, էին ամենևին բարեխառն կամ ժուժկալ։ Եւ յիրաւի. զի չափաւոր բեռն՝ հաստատուն գնացուցանէ զնաւս, այլ անչափ բեռն՝ ընկղմէ։ Այս արուեստ է մրցականաց, և ոչ բարեխառնութիւն։ Փարիսեցիք էին ամենևին բարեխառն կամ ժուժկալ 'ի ցոյց. զի անչաղախն 'ի մարմնական հեշտութեանց՝ երևէր հոգի երկնաւոր, և ոչ մարմին երկրաւոր։ Այս է կեղծաւորութիւն, և ոչ բարեխառնութիւն. Են և այլ բարեխառնք կամ 'ի բնէ և կամ 'ի չքաւորութենէ։ Չեն սոքա բարեխառնք կամ ժուժկալք. այլ ոմն Թմբեալ, և ոմն Աղքատ։

Սոցա ամենեցուն թէ հարցանէ ոք, զիա՞րդ սիրիցեն զբարեխառնութիւն, նշանակեն պատճառ ինչ արտաքին և բացական յառաքինութենէ աստի։ Բայց թէ հարցանես զբարեխառն թէ զիա՞րդ սիրես դու զբարեխառնութիւն, տացէ պատասխանի. Վասն զի է բարեխառնութիւն։ Այն բովանդակ են գործք խառն 'ի կամաւորէ և յակամայէ իբր զԱգամեմնոնին [97]. զի նուիրեն զսիրելի հեշտութիւնն ակամայ՝ երթալ ուր առաջնորդեն նոցա կամք։ Բայց ճշմարիտ բարեխառնն՝ չունելով այլ վախճան բաց 'ի համեստութենէ, ոչ սիրէ և ոչ ատէ զհեշտութիւնն, բայց եթէ ըստ պահանջել համեստութեանն. և վասն այսորիկ գործքն է կամաւոր։ Բարեխառնն գործէ ունակութեամբ. և ունակութիւնն առնէ զգործս կամակարս և դիւրինս և միօրինակս։ Բայց ուր չիք ունակութիւն, սիրտն մնայ տարատամ ընդ մէջ հեշտութեան և համեստութեան. և գործն լինի խառն 'ի կամաւորէ և յակամայէ։ Հերակլէսի հասեալ յերկճիւղ փողոց, եգիտ երկուս ճանապարհս. մին զառ 'ի վայր զարդարեալ ստուեօք և փըթթեալ ծաղկամբք, և միւսն զառ 'ի վեր՝ առապար և փշալից։ Նստէին անդ երկու օրիորդք. մին զգլխովին զուարթացին և կայտառ, և միւսն հանդարտ և ծանրաբարոյ։ Օրիորդն ուրախ՝ յորդորէր զնա հրապուրանօք գալ զկնի ընդ ճանապարհ ծաղկաւէտ։ Բայց միւսն խոստանոյր նմա լաւ ևս վիճակ, եթէ գայցէ զկնի ընդ այն զառ 'ի վեր և տաժանաւոր ճանապարհ։ Այս, ըստ Պռոտիկոսի փիլիսոփայի [98] է երկճիւղ փողոց մարդկայնոյն կենաց, երկու ճանապարհք են՝ զգայութեանն և բանին. երկու օրիորդք են հեշտութիւնն և համեստութիւնն, Հերակլէս յերկճիւղ փողոցի անդ՝ է սիրտն. որոյ չունելով դեռ ունակութիւն՝ ոչ բարեխառնութեան և ոչ անբարեխառնութեան, մնայ տարատամ, բայց բնաւորապէս առաւել միտեալ 'ի զգայութիւն քան 'ի բանն։ Յայս փողոց ժամանէ և պատանին Ակիլլեւս, ասէ Սիլիոս իտալացի. և լուեալ զերկաքանչիւր հրաւիրակացն յորդորանս, քանզի ուսաւ յառաքինութենէ լուծանել զստապատիր ձեռնարկութիւնս հեշտութեան, հաստատեաց 'ի միտս գնալ ընդ առա-

պար շունիլ. որով եհաս պանծալի յաղթանակաց, և նորոգեաց Ճշգրտիւ զաւասպելեալ օրինակն Հերակլեսի։

Հեշտութիւնն, ասէ Արիստոտէլ, գործնական հաւաքաբանութեամբ իմն՝ մտաւորաւ քան ձայնաւորաւ, բնաւորականաւ քան արուեստականաւ, պարտէ զանզգոյշս այսպիսի իմն ձևով թէ բարին է բաղձալի, Հեշտութիւնն է բարի, Ապա հեշտութիւնն է բաղձալի։ Բայց առաքինութիւնն 'ի պատասխանատուութեան՝ յայտնէ զպատրանս ներքուստ ձևանուրկութեանն. վասն զի ընկալեալ զմեծն առաջարկութեանց՝ թէ է Ճշմարիտ, իբրև զի հիմնեալ է 'ի սահման բարւոյ, ըզփոքրն այսպէս զանազանէ. Հեշտութիւնն է բարի, ցորչափ է այսպիսի և այսչափ, և վասն այսպիսի իմն պատճառի, և այսպիսի իմն օրինակաւ. այլ արտաքոյ բանաւորութեան ոչ է նա բարի։ Ապա այս խօսք է 'ի մէջ բարեխառնի և անբարեխառնի և թմբելոյ։ Անբարեխառնն ընդունի անդէն վաղվաղակի և ընդհանրապէս զայն փոքրն։ Թմբեալն ընդհանրապէս ուրանայ։ Բարեխառնն զանազանէ զբանաւոր հեշտութիւնն միայն համարեալ բարի։ Թէոդորա կինն անուանի վասն իւրոց վատանուանութեանց, ծաղր արարեալ զՍոկրատէս՝ զմեծ ուսուցիչն բարոյական իմաստասիրութեան, ասէ ցնա. Սոկրատէ, բաղում ինչ գիտես դու. բայց ես գիտեմ աւելի քան զքեզ. զի դու չգիտես ձգել 'ի քեզ յիմոց աշակերտաց և ոչ մի. և ես գիտեմ ձգել յիս զամենայն զքոյդ։ Սոկրատէս ետ պատասխանի. Զեն ինչ զարմանք. զի դիւրագոյն է զքար 'ի վայր հանել, քան 'ի վեր բերել։

## ԳԼՈՒԽ Ե.

*Թէ զո՞ր եղանակ վարիցէ բարեխառնն։*

Յամենայն տարրկայս զգայութեանց՝ տեսչութիւնն եդ զբերկրութիւն՝ 'ի միջասահման ինչ բարեխառնեալ յերկուց ծայրից միջի։ Ի խառնուածոյ ձայնից՝ ծնանի բերկրութիւն նուագերգութեան. 'ի խառնուածոյ գունոց բերկրութիւն տեսութեան. և 'ի խառնուածոյ հոտոց բերկրութիւն անուշահոտութեան։ Ապա և բերկրութիւն այլոց զգայութեանց ծնանի յեղանակաւորութենէ որ ընդ յաւէտ և ընդ նուազ։ Այս միջասահմանութիւն հաստատեալ է՝ որպէս վաղու ևս ըսար, 'ի պարագայս. 'ի վարել մարդոյ զայն տարրկայս որք վայել են, որչափ վայել են, և որպէս վայել։ Այսպէս առնէ բարեխառնն։



Բնաւոր բաղձանք՝ են սակաւք. արուեստականք՝ են բազումք. անկարգք՝ են անհամարք։ Ի պատսպարութիւն սեպհական կենաց՝ ծարաւն է բաղձանք առ ցուրտն և խոնաւ. քաղցն բաղձանք առ ջերմն և չոր։ Ի զիջուցանել զծարաւ՝ բնութիւնն հոգացաւ աղբիւրս զովացուցիչս. 'ի զիջուցանել զքաղց՝ հոգացաւ հատս զօրացուցիչս. և որպէս երկրորդ սեղան՝ պտուղս քաղցունս, հոտաւէտս, և գունագեղս. որք միանգամայն զուարթացուցանեն զերիս զգայութիւնս։ Վասն ամենեցուն պատրաստեաց զերկիր խոտաւէտ յանկողինս. և զգաւար ստուեր 'ի յարկս և 'ի հովանոց. և 'ի քնարերգութիւն յաւել և զթռչնոց քաղցրաձայնութիւն։ Այսպիսի ընկովք պատրաստութեամբք՝ պարզամիտ ազինք առաջնոյ դարուն, որ անուանի՝ եղև դար ոսկեղէն, կեցին կորովագոյն ևս և խրախագոյն և անմեղագոյն. ոչ կեցին մահուամբ այլոց, և ոչ բայց 'ի ձորձոյ՝ կեղեքեցին և զնոցա միս. և ոչ կերան ընդ հնձոյ և զհերկագործօղս։ Զեղև երբէք բարեխառնութիւն քան զնոցայս բարեխառն։ Ցայս դար, որ չեղև ինչ կեղծ և մտացածին՝ այլ Ճշմարիտ և իրօք, գիւցազնն Պիւթագորաս հրաւիրեաց զիւր անխօսնիկ աշակերտս։ Ուսոյց նոցա ներհուն բանիւք, շատանալ պահանջելով յանմեղ դաւանից զփափկիկ սար 'ի ծածկոյթ, և զքաղցր կաթն 'ի կերակուր, և 'ի բարեբեր անկոց պտուղս բարեհամս. որ են հարկք շահեկանք տեարց և արդասաւորք հարկատուաց. և չխածոնել զորովայն շաղզօք, լեալ գիշախանձ գայլ իւրական հօտի։

Եթէ 'ի վերայ այսց բնաւոր հանդերձանաց՝ յաւելան զկնի յազնուագոյն դարս ազնուագոյն կերակուրք և ըմպելիք և այլ համադամք 'ի սակս արժանապատիւ արանց և քաջազանց, յայտնի առաւելութիւնս ևս 'ի գործ արկանէ բարեխառնութիւնն բարոյական ինչ միջասահմանութիւն՝ չափաբերական կանոնաւ համեմատութեան, որ 'ի ձեռս է խոհեմութեան։ Կարի իմն անննջ է, որ ոչ առնու քուն՝ բայց 'ի փետրալից անկողնի։ Կարի իմն քմակորոյս է, որ ոչ առնու Ճաշակ կերակրոյ, թէ ոչ գայ այն յայնմ կողմանէ ծովու. և որում ոչ քաղցրանայ մուշկաթ Կրետայ, թէ չէ 'ի գոհարի. 'ի ծծել նորա առաւել զըմպանակն աչօք, քան զհեղուկն շրթամբք։ Ի բարեխառն խրախճանս չափաւոր է յաճախութիւն, և չափաւոր՝ խոհարարութիւն կերակրոց։ Միլոնայ ըղնաւոր վասն բազմօրեայ խրախճանութեան առ ժողովուրդն ամենայն՝ ամայացոյց զանտառս ամենայն. աւելագրեալ օր ըստօրէ կերակուրս 'ի յագուրդ՝ և ըմպելիս յարբեցութիւն Տիբերիս գետոյ, առ 'ի չգոյէ ուրուք որ յայնս վայելեսցէ։ Այնչափ անողորմ լեալ 'ի կատարած անասնոց առ ուրախութեան, որչափ 'ի կատարած քաղաքացւոց առ անգթութեան։ Անգութն Ներոն արար խրախութիւն լեզուօք սիրամարգաց՝

համազամ համեմելովք։ Զնա երբեք այնպիսի քաղցր կերակուր լեզուաց ժողովրդեան Հռովմայեցւոց, որ մեղադրեր նմա միայն զի չէր անդ և լեզու կոչնատեառն։ Համն ոչ ծնանի 'ի ճարտար խառնարարութենէ հանդերձանաց, այլ 'ի տրամադրութենէ բնաւոր կարողութեան։ Դարեհ յետ պատերազմին պարտելոյ 'ի ծարաւոյ, 'ի պատահել պղտոր և նեխ ջրհեղեղի, և 'ի ըմպել անտի զաղաւարտն, երդուաւ թէ չէարբ երբեք ջուր քան զայն քաղցր։ Այնպիսի լինելոց են ընթրիք բարեխառնի, զի որկորն մի ծնանիցի նախանձ. և այնպիսի հանդերձանք, զի փաղփիւնն մի շրջեսցի 'ի զեղխութիւն։ Թռչունք յըմպել իւրեանց՝ համբառնան առէպ զաչս յերկինս. և բարեխառնն ես 'ի սեղանի՝ յածէ ընդ միտս խորհուրդս վեհս. և առաւել պարարէ զհոգի հանճարաւոր իմաստիւք՝ քան զմարմինն համազամ կերակրովք։ Կարի իմն զրգութիւն հանդերձանաց՝ է տիրական իմն աւելորդութիւն։ Կարի իմն յաճախութիւն կերակրոյ է ծառայական իմն գեղջկութիւն։ Կարի իմն յաճախութիւն գինւոյ է մարդկային իմն անասնութիւն։

Բայց ոչ ինչ հեշտութիւն է այնպէս անօթալի, և այնպէս բուռն 'ի խոտորեցուցանել զմիտ 'ի պատուաւոր գործոց, իբրև զուեխպղտնցութիւն փառաց ցանկութեան։ Դիզէ [99] զչնոյն անոյր՝ գէր 'ի վերոյ դատ. քան զգեխցաղնեայ աւագուհիս։ Կայր զլխովն պատողեալ 'ի հաստատել զնորոգ ինքնակալութիւն մեծին Կարքեդոնի. զարհուրեցուցեալ զԱփրիկէ զինուք, և զայերս աշտարակօք։ Բայց իբրև պարտեցաւ յօտարոտի սէր այնորիկ, որ եբեր ընդ իւր 'ի Լեբեոյ զհրայրեացն Տրովադայ, անդէն ձեռնթափ եղև 'ի քաջագործութեանց, 'ի խնամոց թագաւորութեան, և 'ի մեծագործ կճեայ շինութեանց.

Կացին մնացին գործք իւր խափան,
Եւ առ ամրովք ապաժաման.
Եւ ամբարտակք ամբարձաձիգք,
Ոչ երկնաբերձ վերամբարձան։

Եւ քանի՞ անուանի զօրավարութիւնք 'ի բարեբաստիկ գործս քաջութեան, ամբոխեալք 'ի հեշտախառնութեան խորհրդոց՝ յասս ցանկութեան մածուցին զթեւս թռուցիկ յաղթութեան։ Ապա բարեխառնն ոչ արտասահմանէ զհամեստութիւն՝ 'ի ժողովել զհեշտութիւն. զի սա է վայրկենական և այն անանցական, և ունի զհաճոյսն 'ի հոգի, և ոչ թէ զհոգին 'ի հաճոյս։ Առ աղօրինաւոր տարփոյս ոչ տխրակլի. և յօրինաւորսն չափաւորէ զիւր կիրս։ Թէ տարփոյք են հեա-



ւորք, ոչ ամբոխի ունել զնոսա։ Թէ մօտաւորք. ոչ եղանէ ըստ չափ, զի չամբոխեսցաւ. և թէ փախստեայք, ոչ կռծի, զի չէանց ըստ չափ։ Զհուսկն առացից. կարօղ է կեալ առանց հաճոյից. ոչ կամի կեալ առանց առաքինութեան. զի յառաքինութիւնս են հաճոյք նորա։ Միտք որ բնաւորեցան հայիլ յերկինս, չառնուն յանձն շաղախիլ ընդ երկիր։

Բայց տեսչութիւնն չէ այնպէս թշնամի առաքինութեան, մինչև կամք իցեն նմա զրկել զառաքինին 'ի համեստ ըղձանաց՝ թողլոյ ժառանգս իւրոյ տոհմի, և յաջորդս իւրոց առաքինութեանց։ Վասն այսորիկ առաջի արար բերկրական իմն և աղնուական տարփոյ՝ 'ի պահպանութիւն զաւակի և համեստութեան՝ զսէրն ամուսնական. որ միով ևեթ սրբազան ջահիւ շիջուցանէ զհազար խառնակ ջահս։ Զայսպիսի հոգաբարձութիւն չեցոյց առ անասունս. զի որոշեալ զնոսա 'ի լուծ հերկագործութեան՝ եթող ազատս 'ի լծոյ ամուսնութեան։ Եւ չեղև նմա փոյթ թէ ուստի ծնանիցին կամ որպէս կեցցեն. բայց միայն զի մեռցին 'ի սնունդ մարդկան, կամ կեցցեն 'ի սփոփանս նոցա։ Կամ եղև նմա մարդոյ միայնոյ 'ի սեղան հաւատարմութեան անշէջ պահել զայս յաւերժական հուր, ուղեկցելով և լուսաւորաց յաւերժական լուսով իւրեանց յառագաստ հարսանեաց. չթողացուցեալ թէ լինիցին բարեբաստ հարսանիք յերկրի, որ ոչ իցեն նշանակեալ յերկինս։

Թէ ցոր վայր ձգիցի բարեբաստութիւն ամուսնական սիրոյ, յայտնի օրինակ եդաւն մեզ երկու բարեբաստիկ և սիրապատար լծակցութիւնք Եւագնեայ և Կապանէոսի 'ի Յունաստան, Պղոտիոսի և Որեստիլլայ յԻտալիա [100]։

Անհնար է զչափ առնուլ զբարեբաստութեան այնց ամուսնութեանց, բայց եթէ 'ի սիրոյ. անհնար է չափել զսէրն, բայց եթէ 'ի միաբանութենէ. անհնար է հաստ լինել միաբանութեան կենաց, բայց եթէ 'ի միաբանութենէ մահուն. յորմէ սոքա ևեթ կոչեցան Ճշմարիտ։ Ի մեռանիլ նախ Կապանէոսի՝ Եւագնէ ընկէց զինքն 'ի խարոյկ նորա. և 'ի մեռանիլ նախ Որեստիլլայ՝ Պղոտիոս ընկէց զինքն 'ի խարոյկ նորա։ Այրեցաւ Եւագնէ 'ի բոց առնն. այրեցաւ Պղոտիոս 'ի բոց կնոջն։ Որպէս թէ 'ի սիրտ միմեանց ունէին զոգի, միանգամայն անշնչացան. և նոյն ջահ որ առաջնորդեաց յառագաստ, հուր բորբոքեցոյց 'ի փայտակոյտն։ Հնար եղև մահու բաժանել զմարմին նոցա. բայց սէրն անբաժան՝ անդրէն զուգաւորեաց։ Անցին ապրեալքն յերկրորդ հարսանիս ընդ իւրեանց ննջեցելոցն։ Երկրորդ առագաստ եղև դագաղն, և երկրորդ փեսաւէր մահն։ Նոյն մահ եղիտ զնոսա միաբանս. նոյն բոց ժողովեաց զնոսա գրկախառնեալս, և նոյն տապան պահեաց զնոսա շիջեալս, թէ չիջանիցին մոխիրք այսպէս պան-

ծալք: Յանդգնութիւն է հաւատալ թէ հնար էր երբէք այդպիսւոյ սիրոյ հոլանալ վայր մի՝ մինչեւ էին կենդանի. որովհետեւ և 'ի շիջման այսչափ վառեցան: Այո՛ մարթ է երկուանալ, թէ ո՞ր սէր առաւել էր վառեալ. արա՞նցն եթէ կանանցն. զի բոցն որոշէ ամենայն դժուարութեանց՝ եթող զայս անորոշ:

## ԳԼՈՒԽ Զ.

### Յաղագս թմրութեան, և անբարեխառնութեան:

Ահաւասիկ քեզ հրեշտքն երկոքին, որոց ընդդէմ մարտնչի բարեխառնութիւնն, Խեցգետին և Հիդրա: Սա այնպէս է վառեալ, որ և 'ի սառնամանիս արձակէ բոց. և նա այնպէս սառնասառոյց, որ և 'ի մէջ բոցոյ չլուծանի: Տես արդ թէ որպէս սահմանաւ տարբերին 'ի միմեանց, և երկաքանչիւրն 'ի բարեխառնութենէ: Զի շատ է ասել թէ մին է պակասութիւն, և միւսն աւելաղանցութիւն: Թմրեալն մաղասամակարդ՝ երեւի արձան ինչ 'ի ձիւնոյ: Անբարեխառնն գլխովին արփենդաուշտ՝ հրաշէայ, թէ խառնուրդ ունիցի սեւամաղձի, ցուցանէ յերեսս զբոց և զծուխ Եթնայ լերին:

Երկուս ազգս մագնիսի արտադրէ բնութիւնն, նմանս առ երեսս՝ բայց հակառակս 'ի յատկութիւնս. զի մին ունելով առ երկաթ կարի իմն համակրութիւն, և միւսն կարի իմն հակակրութիւն, նա անձկանօք յինքն ձգէ զայն, և սա արհամարհանօք վանէ: Այսպիսի մագնիսք են անբարեխառնն և թմրեալն: Նորա կամք են զի հաճոյական առարկայք միշտ իցեն ընթերակայ. սորա կամք են, զի միշտ իցեն բացակայ. և սակայն երկաքանչիւրն են մարդիկ: Թմրեալն է պակասաւոր քան զանասունս, զի հոգի ունի զգայուն, բայց երեւի իբրեւ զտունկս անզգայ: Անբարեխառնն է յոռեգոյն քան զամենայն անասուն. զի հոգի ունի բանաւոր, բայց 'ի կիր արկանէ միայն զզգայականն: Սա ոչ սիրէ զհաճոյս վասն կենաց, այլ զկեանս վասն հաճոյից: Նա ոչ մտէ 'ի մարդկային հաճոյս, որպէս թէ չունէր մարմին մարդկային:

Անբարեխառնն առ բերկրականս՝ է իբրեւ զօրկորաժէտն Փիլոքսենոս. որ ըղձանայր ունել զպարանոց կռնկան, առաւել սիրելով զհամ քան զսնունդ [101]: Թմրեալն է որպէս զանախորժակ հիւանդ՝ որ ցանկայ առողջութեան, և ատեայ զկերակուր որ պահպանիչ է նորա: Երկաքանչիւրն տրտնջեն զարարչէն բնութեան. մին զի ետ մարդկան սակաւ հաճոյս, և միւսն զի ետ աւելորդս: Եւ վասն այսորիկ մին ցանկայ անհնարաւորաց, և միւսոյն կամք են՝ թէ և կարեւորքն լիցին անհնարաւորք. և զի հնար լիցի կեալ առանց կերակրոյ: Ի սիրտ թմրելոյն՝ սէրն ոչ ինչ աւելի ազդէ քան զնետն 'ի փիղ. ընդ որոյ ոչ անցանէ և ոչ ընդ առաջին մորթ: Ի սիրտ անբարեխառնի այնպէս ազդէ՝ որպէս 'ի պղծասէր կենդանին 'ի խոզ, որ կարի իմն զգայուն գոլով առ փոքր խոցուած անհնարին խանչէ: Սէր նորա նման է յունական հրոյ [102]. որ 'ի ջուրս առաւել եւս արծարծանի, և փչմամբ սաստկագոյնս բորբոքի: Սէր սորա նման է շրջմոլիկ հրոյ, որ 'ի վերայ գերեզմանաց լինի, հուր երեւի, բայց ոչ վառի. զի է թռուցիկ գոլորշի անմարմին: Անբարեխառնն է որպէս քար արտաքոյ կեդրոնի. զի առ հեշտալի առարկայս՝ որպէս առ կեդրոն իւր գահավէժ բերի: Թմրեալն է որպէս քար յիւրում կեդրոնի. զի ունելով յինքեան հանգիստ ինչ թմրական, յոչ ինչ ախորժակէ շարժի: Եւ վասն այսորիկ անբարեխառնն 'ի սէր և յատելութիւն սաստիկ բերի, թմրեալն անձանաչ է երախտեաց. և անխոժոռ առ վնասս. քանզի ոչ զգայ զնոսա: Հրաժեշտն այն 'ի հեշտութենէ, որ 'ի բարեխառնն է առաքինական, 'ի թմրեալն չէ առաքինութիւն. զի է պակասութիւն բնութեան, և ոչ գործ ընտրութեան: Եւ բուռն բերումն այն որ յանասունս չէ մոլութիւն, յանբարեխառնն է մոլեկան. զի անկար է լինել մոլութիւն, յորս չիք բանաւորութիւն. բայց սա ունի զբանաւորութիւն, միայն թէ յունակութենէ խանգարեալ:

Յայսմ եւեթ միաբանին թմրեալն և անբարեխառնն. զի չհային 'ի պարագայ ինչ, ոչ 'ի պատճառն, ոչ 'ի քանակն և ոչ 'ի ժամանակն. նա 'ի ժուժկալել իւրում, և սա 'ի չժուժկալել իւրում 'ի հեշտալի առարկայից: Երկաքանչիւր մոլութիւնքս են առաւել ամօթալի քան զամենայն մոլութիւնս. զի առարկայքն են առաւել անարգք: Սակայն թմրութիւնն թէպէտ և է փոքր մոլութիւն, վասն նմանելոյ իւրոյ բարեխառնութեան, բայց և այնպէս է դժուարաբոյժ քան զանբարեխառնութիւնն: Զի առ վերածել զերկաքանչիւրն 'ի միջասահման, այնչափ դժուարագոյն է խթել զթմրեալն քան նահանջել զանբարեխառնն, որչափ դժուարագոյն է կենդանացուցանել զմեռեալն քան մեռուցանել զկենդանին:

Ի վերայ այսր ամենայնի 'ի միտ առ նախ, չշփոթել զանբարեխառնութիւնն ընդ անժուժկալութեան. զի անբարեխառնն գործէ ունակութեամբ և ընտրութեամբ, աղճատեալ զկիրքն բանականութեան. և վասն այնր հաւատայ թէ ոչ ինչ հեշտութիւն արգելեալ է նմա: Բայց անժուժկալն ճանաչէ թէ չար գործէ, բայց և այնպէս թողացուցանէ յափշտակիլ 'ի ցանկութենէ 'ի գործել զչար. մինչ զի մեղանչէ նա առաւել բուռն բերմամբ քան ունակութեամբ որ.

*պէս լուիցես յիւրում տեղւոջ։ Ի միտ առ երկրորդ, թէ Արիստոտէլ ոչ խօսեցաւ ատա զայնց, որք կամաւորապէս հրաժարին յերկրաւոր հեշտութեանց վասն ժառանգելոյ զերկնաւորս։ Այս ոչ է թմրութիւն, այլ պանծալի առաքինութիւն, դիւցազնագոյն և աստուածային քան զբարոյական բարեխառնութիւն։ Զի սա չափաւորէ զհաճոյս, այլ նա նուիրէ։ Ի բաց կայ յայնմանէ որ հաճոյն է, զի արժանացի այնմ որում ակն ունի. փոխանակէ զվայրկենականն ընդ յաւիտենականին, 'ի մահկանացու մարմնի կեանս վարէ հրեշտակային։ Է սա առաքինութիւն այնչափ բարձրագոյն, յոր աչք արտաքնոց փիլիսոփայից ոչ երբէք ժամանեցին* [105]։

# ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ԱՌԱՏԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՅՐԻՑ ՆՈՐԱ.

### ԳԼՈՒԽ Ա.

*Թէ զինչ իցէ առատաձեռնութիւն։*

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆՆ *որ կառավարէ զաշխարհ, ոչ զամենեսին արար մեծատունս, և ոչ զամենեսին աղքատս. որպէս զի որ ընչաւէտն է յօգնութիւն հասեալ այնմ որ պիտոյս ունիցի, հանապազորդեսցի տուր և առ մարդոյ ընդ մարդոյ, թագաւորութեան ընդ թագաւորութեան, միոյ մասին աշխարհի ընդ այլում։ Ապա պիտոյ եղեն ինչք 'ի չափել զգինս պիտոյից կենաց մարդկան։ Եւ յայս սակս կոչեցան նոքա ինչք կամ բարիք կարծեաց, զի այնչափ արժեն, որչափ հասարակաց կարծիք տան արժողութիւն։ Ինչք կամ բարիք բախտի, զի բախտն կայր ձեռամբ ումեմն զայնս պարգևէ և յումեմնէ բառնայ։ Ինչք կամ բարիք պիտանիք, զի ըստ օրինակին Վերտուլինի փոխակերպլին յայն ամենայն՝ որում ըղձանայ ստացող նոցա* [104]։ *Ոսկին՝ յազնիւ հրահանգելեաց միջի ազնուագոյն, փայլողագոյն, սերտագոյն, դժուարագիւտ, վասն որոյ և թանկագոյն, եղև չափ ամենայն գնոց. բայց և չափ ամենայն չարեաց, յորժամ չարաչար վարիցեն։ Քանի՛ հարուածոց տանի այս հրահանգելի, որ յիրմէ է անմեղ։ Է որ կոփէ զնա կամաւ, և դժնէանայ առ նա երկաթ ազգային նորա. է որ պատառոտէ զնա 'ի թիլթղունս, է որ ծակէ շաղափով. է որ այրէ քիմիական բոցով. կարծեալ գտանել զնա՝ անդէն իսկ կորուսանէ, և կամեցեալ յաճախել զնա՝ նուաղէ։ Բայց յոչինչ տանջանս այնպէս է անօթահար, որպէս 'ի ձեռս շռայլի և ագահի։ Ագահն յանչափ սիրոյն թաղէ զնա, և ըզթաղեալն պաշտէ։ Շռայլն յանչափ արհամարհութենէ վատնէ զնա և ցրուէ յայնպիսի անարժան պէտս, որպէս զի մտագիւրագոյն արդեօք տանէր բանտարկութեան ագահի։ Ապա հարկ էր թէ լինիցի յաշխարհի առատաձեռնութիւն, որոյ*

չափաւորեալ զկարի խիտ ախորժակ, և զկարի խիտ արհամարհութիւն առ այս պատուական պարգև բախտի, 'ի տալ և յընդունել զայն չափով, համեստօրէն վայելեսցէ յայն և տացէ վայելել այլոց:

Ապա առատաձեռնութիւնն է առաքինութիւն չափաւորիչ մարդկային ախորժակի՝ 'ի տալ և յընդունել զինչս միայն 'ի սակս համեստութեան: Երկու ինչ ներհական կայ յառատաձեռնն. տալ և ընդունել: Եւ այն զի ընդունի, չէ ամօթ առատաձեռնութեան, եթէ զմտաւ ածցի վախճան նորա, զի չընդունի 'ի պահել, այլ զի կարող լիցի տալ: Ամենայն արուեստաւոր ունի նիւթ արուեստի, որոյ 'ի պակասիլն պակասի արուեստ: Ոսկին է նիւթ առատաձեռնութեան, որպէս երկաթն դարբնութեան: Որ միշտ տայ և չընդունի երբէք, վաղվաղակի իսկ չունիցի ինչ 'ի տալ: Ծովն է աղբիւր ամենայն գետոց [105]. բայց վաղվաղակի ցամաքէին գետք, եթէ ծովն 'ի տալ միշտ զիւրն՝ չընդունէր ինչ այլուստ. այլ 'ի տալ նորա և յընդունել, լինի այն շրջան հանապազորդ շարժման որ պահէ զծովն, և զովացուցանէ զերկիր ամենայն: Ապա իրաւունք և գլխաւոր վախճան առատաձեռնին է տալ պարգևս յերախտաւորութիւն իւրոց հայրենեաց. իսկ ընդունելն է վախճան հետևորդ: Վասն որոյ ընդունել և պարգևել՝ չեն գործք անլծորդք ընդ առատաձեռնութեան. մանաւանդ թէ այնպէս գործ է առատաձեռնութեան ընդունել զպարգևս, որպէս տալ պարգևս: Վասն այսորիկ առատաձեռնն փոխանակ զի ոչ պարգևէ առ 'ի ընդունել, այլ ընդունի 'ի պարգևել, անդէն իսկ յընդունել իւրում պարգևէ. ընկալեալ յումեմնէ ձեռամբ, և պարգևեալ այլում գլխամբ:

Սահմանս նախ առաջին բաժանէ զառատաձեռնութիւնն յերկուց իւրոց մոլեկան ծայրից. Շռայլն կարի խիտ անարգէ զոսկի, ագահն կարի խիտ յարգէ. առատաձեռնն ոչ կարի խիտ յարգէ և ոչ կարի խիտ անարգէ: Վասն զի ոչ է մարթ նմա կարի խիտ յարգել՝ զոր պարգևէ, և ոչ կարի խիտ անարգել՝ զոր ընդունի: Շռայլն վատնէ զոսկի վայրապար, և յափշտակէ յանիրաւի. ագահն 'ի խնդիր է նորա անյագ, և պահէ զայն խնամով. առատաձեռնն պարգևէ զնա և չյափշտակէ. ոչ խնդրէ զնա և ոչ 'ի բաց մերժէ. ընդունի միայն 'ի պարգևել զայն: Վասն զի շռայլն շարժի յանյառաջատես անբանութենէ, ագահն 'ի պիղծ զօշաքաղութենէ, առատաձեռնն յառաքինական համեստութենէ: Վասն այնորիկ և ոսկին ըստ ասացողին փոխէ զբնութիւնն, 'ի ձեռս շռայլի է նախատ ինչ, 'ի ձեռս ագահի՝ անպիտան. 'ի ձեռս առատաձեռնի պիտանի և զուարթարար և արգոյ: Զի շռայլն զայն չարաչար վարէ, ագահն ոչ վարէ, առատաձեռնն վարէ որպէս արժանն է: Մինչ զի ոսկի առատաձեռնին է գետ հանգարտահոս, որ զամենեսին զովացուցանէ և միշտ է յորդ: Ոսկի շռայլի է ուղխաջուր կարկաչահոս, որ երբեմն հեղեղէ և երբեմն ցամաքի: Իսկ ոսկի ագահի է աղմուտ ճախին, որ անգնաց անպէտ նեխի, և զիւր գոյն զերեսօք արկանէ ագահի:



Ցայսմանէ մարթիս իմանալ, թէ պարգևատուութիւն 'ի շռայլն է որպէս թէ ակամայ, իբրև զորբելոց և զմոլեգնելոց: Ցագահն է խառն 'ի կամաւորէ և յակամայէ, զի պարգևէ անյօժար: Բայց յառատաձեռնն է գործ գլխովին կամաւոր. զի 'ի պարգևել իւրում՝ մեծապէս բերկրի, և թէ չէ ձեռնհաս տխրի:

Ի նոյն սահմանէ ունիս իմանալ և զխտիրն՝ որ ընդ մէջ Առատաձեռնութեան և Մեծագործութեան: Զի թէպէտ այս երկու առաքինութիւնք երևին միայն տարբերք որպէս յաւէտ և նուազ որ ոչ փոխէ զտեսակ իրաց, որպէս սիւն և գաւազան, սակայն բազում ինչ ընդ մէջ է վախճանի և առարկայի առաքինութեանցս երկոցունց: Մին նպատակ մատուցանէ մասնաւորաց՝ պարգևական դրամօք, սահմանաւոր կոպարաւ ըստ պիտոյից նոցա: Միւսն երևեցուցանէ արքունի վեհանձնութիւն 'ի հրապարակական գործս յիշատակաց արժանիս: Նա չափի երկրաչափական համեմատութեամբ ըստ սրտի և ըստ անձանց: Սա ֆիզիկական չափմամբ քանակի և մեծութեան գործոյն, որպէս անունն իսկ հնչէ:

Ցոր և իցէ անձուկ հիւղ՝ հնար է մտաց ունել մեծի առատաձեռնութեան. բայց մեծագործութեամբն մտանէ միայն 'ի մեծամեծ և յարքունի ապարանս: Զի առաւել առատաձեռն է աղքատիկն՝ 'ի պարգևել դոյզն լումայս անդորր սրտիւ, քան զմեծատուն ոք որ պարգևեսցէ մեծ ինչ գումար նեղսրտութեամբ: Բայց 'ի մեծագործութեան՝ սիրտն ոչ առնէ զգործն մեծ, թէ չէ այն յիւրմէ մեծ և արարեալ 'ի վեհ անձնէ. վասն լինելոյ սորա առաքինութիւն արքունի, և նորա առաքինութիւն առանձնաւորի: Ապա ոչ ամենայն առատաձեռն լինի մեծագործ. բայց ամենայն մեծագործի հնար է լինել առատաձեռն: Վասն այսորիկ յորժամ մեծ ոք իշխան առնէ պարգև միջակ՝ արժան է կոչել զնա առատաձեռն, այլ ոչ մեծագործ. և յորժամ առնէ գործ ինչ մեծ և բազմածախս, արժան է կոչել մեծագործ, այլ ոչ առատաձեռն: Եւ այսու զանազանութեամբ իմաստասիրեցին իմաստունք, թէ և թագաւորն անմահ, 'ի պատրաստել թռչնոց և մրջմանց կերակուր 'ի բուսոց, եցոյց զիւր առատաձեռնութիւն. այլ 'ի կանգնել զլուսաճաճանչ խորանս երկնից յագամանդեայ ճեմարան հրեշտակաց, և 'ի վերնակամար յարկ մարդկան, եցոյց զիւր արքունի մեծագործութիւն:

## ԳԼՈՒԽ Բ.

### Թէ ո՛ր իցէ առատաձեռնն։

Առատաձեռնութիւնն պահանջէ զազատութիւն 'ի կրից։ Զի զոր օրինակ կիրքն որպէս քօղ մթագնէ զմիտս, նոյնպէս չթողու տեսանել զկարեւոր պարագայս 'ի պարգեւել եւ յընդունել որպէս արժանն է։ Բայց առաւելապէս յոյսն եւ երկիւղն. զի նա է մայր շռայլութեան, եւ սա հայր ագահութեան։ Իբրեւ զի շռայլն միշտ յուսայ, թէ նմա ինչ ոչ պակասեսցի. եւ ագահն միշտ երկնչի, թէ ամենայն ինչ նմա պակասեսցի։ Յայսմանէ բուն հասակ առատաձեռն լինելոյ՝ է միջասահմանն ընդ մէջ մանկութեան եւ ծերութեան. զի 'ի մանուկն որ չէ ինչ փորձ, առաւելու յոյս. իսկ 'ի ծերն վասն զի է քաջափորձ, ծնանի կարի յոյժ երկիւղ։ Հասակն միջակային ոչ կարի փորձ գոլով եւ ոչ կարի անփորձ, բարեխառնէ զյոյսն եւ զերկիւղ. եւ այս խառնուած է սեպհական առատաձեռնի։ Աղեքսանդր մինչդեռ էր պատանեակ, եւ չեւ էր անուն առեալ զմեծի Աղեքսանդրի, վառեալ պատրաստեալ յիւր առաջին ձեռնարկ մարտի՝ պարգեւեաց զամենայն զիւր հայրենի կալուածս եւ զժառանգութիւնս իւրոց զօրավարաց։ Պերդիկկաս իմաստուն զօրավար չէառ յանձն զճոխ ինչ վիճակ, ասելով. Իսկ քեզ զի՛նչ պահիցես։ Ասէ Աղեքսանդր. Իմ ապահեալ է ինձ զյոյս։ Եթէ բախտն անմիտ քան զնա՝ չէր յաջողեալ շռայլ անմտութեան նորա, յոյսն որ չքաւորեաց զնա 'ի չուի, առնէր զնա ծաղածանակ 'ի դարձի։

Ոչ ոք այնպէս է առատաձեռն, որպէս որ յաջորդէ հօր ագահի. ոչ եւ ոք այնպէս ագահ, որպէս որ յաջորդէ հօր առատաձեռնի։ Զի նա ոչ կարէ քերել յանձնէ զկեղտ անուն հայրենի կծծութեան բայց եթէ ընդ հակառակն՝ պարծանօք զուարթատուր առատաձեռնութեան. եւ սա ոչ կարէ հանել զփոխարէնն տուժի հայրենի առատաձեռնութեան, բայց եթէ ընդ հակառակն ճշդութեամբ։ Զիք ոք այնպէս շռայլ, որպէս որ եգիտ մթերեալ համբարս ճոխութեան՝ առանց ինչ իւրոյ մշակութեան. չիք ոք այնպէս ագահ, որպէս որ սերմանեաց զնոսա իւրովք քրտնաջան վաստակօք։ Զի սա հայեցեալ 'ի նոսա իբրեւ յիւր երկս՝ կաթոգին սիրէ. եւ նա հայեցեալ 'ի նոսա անտարփ՝ իբրեւ յերկս որ ոչ իւր իցեն, անգոսնէ. եւ ոչ գիտելով թէ ու եկին, ոչ ինչ փոյթ է նորա թէ ու գնան։ Այսր բնաւոր պատճառի աղագաւ՝ առաւել յօժարամիտ է յառատաձեռնութիւն՝ որ ժառանգեաց զճոխութիւն, քան որ մթերեաց։



Առաւել առատաձեռն լինի անզաւակն, քան զայն որ ունի զաւակ։ Զի թէպէտ եւ առատաձեռնն հայր է հայրենեաց, եւ բարի առնէ քաղաքացւոց որպէս իւրոց որդւոց, բայց եւ այնպէս իւրն առաքինական ոչ բառնայ զկարգ բնական։ Վասն որոյ բառնալ յիւրոց՝ 'ի պարգեւել օտարաց, ոչ է առատաձեռնութիւն, այլ անիրաւութիւն. եւ չտալ օտարաց 'ի պարգեւել իւրոց, ոչ է գործ առատաձեռնութեան, այլ պարտք արդարութեան. մինչեւ որչափ ինչ պարգեւի արդարութեան, այնչափ պակասեցուցանելի է յառատաձեռնութենէ։ Քան զամենայն ոք նա է առատաձեռն, որ տարրացեալ ունի 'ի միտս զսկզբունս պատուաւորս որք շարժեն զառատաձեռնութիւն նորա։ Եւ զնորին հակառակն՝ սկզբունք ծառայականք եւ գծուծ ճշգականք խափանեն զնա։ Զի ձեռնն ոչ 'ի գործ արկանէ, բայց զոր միտք հրամայեն. եւ միտք ոչ կարեն հրամայել զգործս պայծառս եւ զուարթառատս, թէ տարրացեալ են 'ի նմա ռամկային սկզբունք կծծութեան։ Երկու թագաւորք արենակիցք եւ անուանակիցք՝ տարրացեալ ունէին 'ի միտս զսկզբունս ամենեւին տարօրինակս. Պտղոմէոս արքայ Եգիպտացւոց, եւ Պտղոմէոս արքայ Կիպրացւոց։ Նա սովոր էր ասել հանապազ. Լաւ է ճոխացուցանել, քան ճոխանալ։ Սա զնորին հակառակն սովոր էր ասել. Լաւ է վայելել, քան այլում պարգեւել։ Եւ վասն այսորիկ նա առատաձեռնօրէն պարգեւեալ զիւր ճոխութիւնս՝ կոչեցաւ Պտղոմէոս առատաձեռն. եւ սա գծծօրէն 'ի խնդիր լեալ նոցա՝ կոչեցաւ Պտղոմէոս գերի արծաթոյ։

Ի վախճան ամենայնի, առատաձեռնն պերճ է 'ի կահս, յարդարուն 'ի զգեստս, զուարթ 'ի դէմս, քաղցրաբարոյ 'ի գնացս, շնորհալի 'ի գործս, ազատ եւ համարձակ 'ի բանս որպէս 'ի տուրս. ոչ կարելով ծածկել զգաղտնիս սրտի, որ բոլորովին է սիրտ։ Զհամառօտն ասացից, փորձաքարն ցուցանէ զյարգ ոսկւոյ, եւ ոսկին ցուցանէ զյարգ անձին։

## ԳԼՈՒԽ Գ.

### Առարկայք առատաձեռնութեան։

Ամենայն առարկայ առատաձեռնութեան է Երախտաւորութիւն, բայց ոչ ամենայն երախտաւորութիւն է առարկայ առատաձեռնութեան։ Տալ խորհուրդս փրկականս տարակուսելոց, չէ առատաձեռնութիւն, այլ մարդասիրութիւն։ Տալ հզօրաց օգնութիւն գործաւորութեամբ, չէ առատաձեռնութիւն, այլ սպասահարկութիւն։ Տալ քաջալերու-

թիւն նեղելոց չէ առատաձեռնութիւն, այլ գթութիւն։ Տալ զարիւն վասն հայրենեաց, չէ առատաձեռնութիւն, այլ արիութիւն։ Առարկայք առատաձեռնութեան են ինչք կամ բարիք բախտի, որք չափին ոսկւով, զի զաւքօք գործ է առատաձեռնութեան բարեկարգել զմարդկային ախորժակ։ Յաջորդն ինքնակալութեան և ատելութեան Դարեհի Վշտասպեայ, ոչ շատացեալ վերագոյն լինել քան զամենայն մարդկային զօրութիւն՝ թէ ոչ մրցէր և ընդ աստուածեղէն ամենակալ զօրութեան, յարկանել խորում՝ ի ծով երկուս ոտնակապս ոսկիս՝ կարծեաց կալանաւորել զմշտափախուստ զայն Պրոտեւս, և փակել յերկուս անուրս զհամածաւալ զայն մարմին[106]։ Առատաձեռնն միայն զայս հրաշագործէ։ Ոչ ինչ ծով է այնպէս մրրկածուփ և ալէկոծ՝ իբրև զժողովուրդն՝ ասէ ճարտարախօսն հռովմայեցի, զորոյ էառ անձամբ զփորձ։ Բայց ձեռնն առատաձեռնի 'ի պարգևել քաղաքացւոց՝ ումեմն մատանի, ումեմն դահեկան և ումեմն շղթայ ոսկի 'ի պիտոյս նոցա, զոմանս պնդեալ պարաւանդէ, և զժողովուրդն ամենայն կապեալ կաշկանդէ. զի առատաձեռնութիւն իւր չէ ամփոփ առ մասնաւորս, այլ սփռեալ ծաւալի առ ամենայն ոք 'ի ժողովրդենէ որ դիմէ առ նա։ Այս է արկանել զծով յոտնակապս և գերել զնա։

Տուչութիւն առատաձեռնի չէ միայն փոխաբերել զտէրութիւն ականն պատուականի, կամ գումարի ինչ ոսկւոյ յայն որ ընդունի, այլ ծախս առնել լիաձեռն 'ի մեծապայծառ ապարանս, 'ի զուարճալի կալուածս, 'ի զբօսալի դարաստանս, յաղբիւրս և յարձանս, և 'ի նկարս պատուականս և յանդրիս գաղանս. ոչ առ իւր, այլ առ ժողովրդեան զբօսանս, զտէրութիւն անձին պահեալ, զի 'ի պտուղն վայելեսցեն ամենեքեան։ Զի որովհետև ագահն բիւրուք շղթայիւք փակեալ զիւր տունս և զարկեղս, մինչև արևու չմտանել 'ի նոսա, ըստ անքուն օձի Եսպերեան դարաստանին՝ ոսկինքն Եբեկորնական պարտիզին[107], ոչ ինքն վայելէ և ոչ այլոց թոյլ տայ վայելել. առատաձեռնն զորին հակառակն՝ յայնժամ վայելէ, յորժամ այլք յայն վայելեն. մինչև յիրաւի է նմա զժողովրդեանն ուրախութիւն՝ կոչել իւր ուրախութիւն։ Կիմոն աթենացի՝ որ անուանի եղև ոչ այնչափ վասն իւրոյ մտաթափութեան 'ի մանկութեան, որչափ վասն իւրոյ քաջութեան յարբուն հասակի, լեալ գաղափար պատերազմական արիութեան և ժողովրդական առատաձեռնութեան, հարթայատակ արար զայգին զիւրոյ կալուածոյ, զի լիցի հասարակաց զբօսարան, ոչինչ այլ պտուղ քաղեալ անտի, բայց զհասարակաց հաճոյս[108]։ Արժան էր Պոմոնայ և Փլորայ՝ դից պարտիզաց և ծաղկոցաց եկեալ առնել զփիմեամբք յայնմ կալուածի, զի մի երևեսցի յետնեալ առատաձեռնութիւն իւ-



րեանց առ տէր կալուածոյն, քան զառատաձեռնութիւն տեառն կալուածոյն առ իւր քաղաքակիցս։ Բայց արդարև կամ դարձեալ Կիմոնի յիւր առաջին մտաթափութիւն, կամ էին նորա այլ պահեստի կալուածք. զի պարտ է առատաձեռնի՝ որպէս ուսուցանէ Արիստոտէլ, ունել զճիգն հաշիւ զիւրոց վիճակաց և զիւրոց եկամտից, այլազգ ունելով վախճան քան զագահին։ Զի եթէ առատաձեռնն՝ խնդամիտ է առաւել 'ի պարգևելն քան յընդունելն, և առեալն չհաւատարի այնմ զոր պարգևէ, հիմն իւրոյ առատաձեռնութեան լինելոց է իւրն կալուած. և որ անփոյթ է այսմ՝ շռայլ է և ոչ առատաձեռն։ Ինքնակալն Աղէքսանդր Սևերոս օրըստօրէ 'ի գանձէ իւրմէ բաշխէր պարգևս, և օրըստօրէ 'ի գանձապետաց առնոյր համարս։ Էր նա նման մեծին Աղէքսանդրի յառատաձեռնելն, և Սևերոս՝ անաչառ յառնուլն զճիգն համարս։ Կշռէր զպարգևեալն ընդ հասոյն, զի միշտ կարողասցի պարգևել։

Վասն որոյ և ճշմարիտ է թէ վասն զի ագահն է սաստիկ 'ի պահանջելն 'ի պարտապանաց, և ժլատ 'ի վճարել պարտատեարց, ամենևին զորին հակառակն է բնաւորութիւն առատաձեռնի։ Զի առ պարտատեարս՝ ագահութիւն համարի անփոյթ լինելն 'ի վճար. իսկ առ պարտապանս առատաձեռնութիւն համարի զիջանել, և առ ժամանակ մի որպէս թէ խաբել, անխոռ գոլով իւր։ Ոչ բարւոք արար զիւր հաշիւս շռայլն այն, որոյ վատնեալ զհայրենի ինչս և ծախեալ զպարտս, վասն զի այլ ոչ մնաց նմա ինչ՝ որով վճարեսցի, և ոչ տեղի ուր բնակութիւն կալցի, խնդրէր էջ 'ի տարապարս։ Չէր արդեօք արարեալ զայսպիսի ամօթալի ելս, եթէ բարւոք քննէր զիւր եկամուտս։ Այլ թէպէտ և քաջ տնտես է առատաձեռնն իւրոց հասից, բայց և այնպէս ոչ ձգէ հասս յանարգ իրաց։ Այս ախտ է, որ աղաւաղեաց զփառս՝ եւս և զառատաձեռն իշխանաց։ Հիպպիաս բռնաւոր Աթենայ՝ չափ մի գարւոյ հարկ 'ի վերայ էարկ իւրաքանչիւր մեռելոյ։ Ոչ այլում, բայց Պղուտոնի սանդարամետի աթենայւոց հնար էր 'ի վերայ դնել կապալ այդպիսի, արտ իւրոյ երկփարաց արարեալ զդերեզմանատունս[109]։ Այս հարկ մեռելոց սարսափեցոյց զկենդանիս։ Հալածեցաւ 'ի թագաւորութենէ, զի կեցցէ ընդ իւր հարկատուս։

Այսու յայտ է թէ հարեալքն զագահութեամբ թէպէտ և ձեռնարկեն երբեմն 'ի գործ ինչ առատաձեռնութեան կամ մեծագործութեան, միշտ 'ի վերայ արկանեն կեղտ ինչ ագահութեան։

# ԳԼՈՒԽ Դ.

*Թէ վասն որոյ խրաց գործիցէ առատաձեռնն:*

Ոսկի և ականք և այլ ամենայն պարգևք՝ չունին ինչ յարգ, բայց եթէ 'ի գնամանէ որով պարգևին: Զի որպէս պարգևն ոչ այլ ինչ է, բայց երևելի նշան աներևոյթ սրտի, սոյնպէս ոչ ոսկին՝ որ պարգևի, այլ սիրտն, որով պարգևի, է երախտաւորութիւն: Պսակք 'ի կաղնւոյ, 'ի դափնւոյ և 'ի ձիթոյ՝ էին չնչին ինչ. բայց և այնպէս՝ գին էին կենդանի արեան պատկաւորին. զի էին դուզնաքեայ նշանք մեծի պատուոյ: Յորժամ աղքատն Փաբրիկիոս [110] եսես առաջի աչաց զձոխ պարգևս Սամնիացւոց, եհարց՝ թէ տայի՞ն արդեօք Սամնիացիք նոյնչափ և այլ ամենայն քաղաքացւոց Հռովմայեցւոց. և 'ի պատասխանել հրեշտակաց՝ թէ Այդ նշան ինչ է մասնաւոր յարգի, զոր ընծայեն Սամնիացիք քումդ անձին, Փաբրիկիոս՝ թէպէտ և աղքատ ոմն էր, հրաժարեաց 'ի պարգևացն. և ամբաստան եղև զպարգևատուաց թէ՝ նենգ է 'ի նոսա: Քանզի հայեցաւ Փաբրիկիոս նախ 'ի գնումն Սամնիացւոց քան 'ի պարգևս նոցա, առ խմանալ թէ արդեօք պարգևք էին այնք եթէ որոգայթք: Զի նոյն արծաթ՝ որ 'ի պարգևել ամենեցուն, լինէր պարգև ինչ առատաձեռն 'ի պատիւ հասարակապետութեան, պարգևեալ նմա միայնոյ, թուեցաւ թէ չէր գին արժանի 'ի գնել զիւրն հաւատարմութիւն:

Ապա սիրտ պարգևողին է ոգի պարգևին. նա է որ առնէ զոսկին մեծագին կամ անարգ, պատուաւոր կամ նախատ, առատաձեռն կամ ժլատ: Ծառայն՝ յիւր պարգևատուութիւնս ունի փոխան զունայնութիւն. ագահն՝ յընդունելն, ունի փոխան զարծաթսիրութիւն. առատաձեռնն՝ որպէս յառաջն լուար, 'ի պարգևելն և յընդունելն՝ ունի փոխան միայն զհամեստութիւն գործոյն: Եւ այս փոխան տրոհէ զառատաձեռնութիւնն յայլ բազում համանման առաքինութեանց՝ համաբնակելոց յոգի առատաձեռնի, որ ընդունարան է ամենայն առաքինութեանց, որպէս ոգի ագահի ընդունարան է ամենայն մոլութեանց: Նոյն ոսկի թէ պարգևի պարտատեառն, լինի Արդարութիւն. թէ պարգևի բարերարի, լինի Շնորհակալութիւն. թէ ողորմելւոյ, լինի Ողորմութիւն. թէ բարեկամի, լինի Բարեկամութիւն. թէ իշխանի, լինի Կամակատար ծառայութիւն. թէ Աստուծոյ, լինի Կրօնաւորութիւն: Սոսկ առատաձեռնութիւնն չհայի յայլ ինչ յորդոր, թէպէտ և առաքինասէր, բայց եթէ 'ի համեստութիւն որու-



թեան, ըստ որում չափաւորէ զկարի ինչ խղճ կամ զկարի ինչ արհամարհութիւն երկրաւոր բարեաց: Մանաւանդ թէ փառքն որ տածին է արիութեան, մեծագործութեան և բազմաց այլոց առաքինութեանց, թոյն է առատաձեռնութեան: Զիք առաքինութիւն քան զսա գովելի, և չիք իբրև զսա որ ատեայ զգովութիւն: Ոչ ինչ վաճառ պատուական քան զփառս, յորժամ ստացեալ լինի արեամբ առն քաջի, և ոչինչ անարգ քան զփառս, յորժամ գնի ոսկւով յառատաձեռնէ: Մի 'ի մտերիմ սիրելեաց նախայիշատակեալ կայսերն Սևերոսի, որ վաճառէր զձիրս և զշնորհս արքայի, նորին հրամանաւ 'ի ծուխ հեղձուցաւ. յասել նորա թէ 'ի ծուխ մեռանի որ զծուխ վաճառէ: Որ սնափառութեամբ պարգևէ զոսկի, մարթ է 'ի նա շրջել զբանս ասելով. Ի ծուխ մեռանի, որ զծուխ գնէ:

Ճշմարիտ առատաձեռնն 'ի պարգևել խուռն, հայեցեալ միայն 'ի համեստութիւն պարգևատուութեան, միայն թէ պարգևն լիցէ յօգուտ, ոչինչ փոյթ է նորա, զի ծանիցի թէ ուստի գայ: Ապեղեսի Քիացւոյ [111] անկեալ հիւանդագին 'ի յետին չքաւորութեան, որ յետին ստնջականն է առաքինեաց, եմուտ 'ի խուց նորա Արկեսիղայոս գրքոյկ 'ի ձեռին, և ասէ. Ապեղէս, գամ 'ի հարևանցի 'ի տես քոյ, և վասն այնր չունիմ ինչ առ իս, բայց զայս գիրս տարերաց Եմպեդոկղի. և 'ի խոնարհելն գիրկս արկանել նմա, գաղտ սպրդեցոյց ընդ անարս նորա քսակ լի ոսկւով: Եգիտ զայն անկարծ աղախինն. և 'ի զարմանալ նորա ասէ Ապեղէս. Մի զարմանար, անտարակոյս խաղ է այդ Արկեսիղայոսի: Այսպէս զծաղու գայ առատաձեռնն 'ի բարերարել խուռն. պարգևէ ոսկի, և ծածկէ զձեռն. առնէ երախտիս, և խուսէ 'ի ծխոյ: Որ պարգևէ վասն փառաց, ոչ պարգևէ այլում, այլ անձին. վաճառէ զերախտիս, գնէ ստգտանս և կորուսանէ զգրամս:

# ԳԼՈՒԽ Ե.

*Թէ որով օրինակաւ գործիցի առատաձեռնութիւնն:*

Զամենայն մարդկային բարիս հնար է մարդոյ վարել բարւոք կամ չարւոք: Նա միայն գիտէ վարել բարւոք, որ գիտէ զարուեստն: Որ ոք գիտէ վարել զզէնս, պաշտպանէ անձին. և մեռանէ հակառակորդին: Որ ոք չարաչար վարէ, անձին միայնոյ մեռանէ: Նետ Հերակլեսի 'ի ձեռս Հերակլեսի՝ շանթ էր մահարար Տրովլացւոց. 'ի ձեռս Փիլոկտետեայ՝ եղև շանթ

վրէպ. որ յանփորձ ձեռանէ յոսս անկեալ նորա՝ խոցեաց կարեվէր ցնուաղումն[112]: Ոսկին՝ իբրեւ զերկաթ է պիտանի ինչ գործի բայց անպիտան 'ի ձեռս ագահի, վտանգաւոր 'ի ձեռս շռայլի. միայն առատաձեռնն գիտէ զարուեստ քաջ 'ի վար արկանելոյ: Այս արուեստ մեծ՝ հաստատեալ է 'ի քաջ ճանաչել զպարագայս որ ասացան որչափ եւ ում եւ վասն էր, եւ որով օրինակաւ պարտ իցէ պարգեւել եւ ընդունել:

Առաջին եւ մեծ կանոն է. Համեմատել զպարգեւն որպիսութեան պարգեւողին եւ ընդունողին: Երկոքին սոքա են առընչակիցք՝ անքակք յառաքինական միջասահմանութենէ: Փիլիսոփայ ումն 'ի Կիւնիկեան կամ 'ի Շնական աղանդոյ, որ առաւելուկն էր եւ կատաղի քան զամենայն աղանդս, զեղծիչ եւ ոչ թէ սիրող իմաստութեան, ժպրհեցաւ խնդրել յԱնտիգոնոսէ յաջորդէ Աղեքսանդրի տաղանդ մի, որ է իբր վեց հարիւր դահեկան: Պատասխանի ետ Անտիգոնոս. Կարի շատ է այդ Կիւնիկոսի: Այլ անդամ խնդրեաց երկուս դենարս. ասէ Անտիգոնոս. Կարի սակաւ է այդ թագաւորի. եւ զանց արար զնովաւ: Զսորին հակառակն, մեծն Աղեքսանդր ումեմն թարմատար զօրականի որ խնդրեաց 'ի նմանէ դոյզն վարձս, պարգեւեաց քաղաք մեծ: Զարմացեալ պարգեւառուին ասէ. Շատ է այդ վասն զօրականի ուրումն: Պատասխանի ետ պարգեւատուն. Սակաւ է այդ վասն Աղեքսանդրի: Երկաքանչիւր թագաւորք սուտ տրամաբանութեամբ իմն աղաւաղեցին զառատաձեռնութիւն. ցուցեալ զանձինս՝ մինն ագահ եւ միւսն շռայլ: Անտիգոնոս խորհեաց 'ի մէջ Կիւնիկոսի եւ թագաւորի, զի մի պարգեւեսցէ ինչ, Աղեքսանդր խորհեաց 'ի մէջ թագաւորի եւ զօրականի, զի պարգեւեսցէ բազում: Պարտ էր Անտիգոնոսի գտանել միջակայն ինչ պարգեւ 'ի մէջ երկաքանչիւր խնդրուածոց, չժխտեալ երկաքանչիւրոցն երկոքումբք հրաժարմամբք, որ չէին արժան թագաւորի: Պարտ էր Աղեքսանդրի առնել միջակային ինչ պարգեւ 'ի մէջ թագաւորի եւ զինուորի, եւ մի ելանել ըստ սահման բանաւորի: Չէին կամք արդարութեան թէ քաղաք մի տասցեալ արեամբ բազմաց՝ լցցի վարձք միոյ միայնոյ: Եթէ Աղեքսանդրի կամք էին չափել զամենայն զիւր պարգեւս անձամբ լոկով պարգեւատուին, առ օրին սպառեալ էր զամենայն զիւր աւար: Առաւել եւս առատաձեռնէր թէ աւարէր սակաւ, քան թէ 'ի պարգեւել զքաղաքս՝ աւարէր զթագաւորութիւնս: Այսպէս առատաձեռնն 'ի պարգեւել ամենայն աստիճանի անձանց՝ աւագաց, միջակայնոց եւ ստորնոց, չափէ զոսկին կանոնաւ՝ զոր թուաբանք կոչեն Կանոն ոսկի, այսինքն է կանոն համեմատական, համեմատեալ զպարգեւս աստիճանաց անձանց, եւ իւրում կարողութեան:

Յայսմ կանոնէ հարկաւ մակաբերի միւս եւս կանոն թէ Ա-



ռատաձեռնն ոչ պարգեւէ զամենայն միում միայնոյ: Վասն զի հայր հայրենեաց գոլով նորա, բաշխել ունի զպարգեւս քաղաքացւոց՝ որպէս իւրոց որդւոց, ըստ իւրաքանչիւր արժանեաց, եւ առանց նախանձ արկանելոյ նոցա 'ի միմեանս: Քսերքսէս յաջորդ Դարեհի այնչափ սէր կալաւ առ մի 'ի բիւրաւոր սօսեաց առ ջրբղխօք նորա պատելոց, մինչեւ զարդարել նմա զբուն սօսւոյն մեծագին մանեկօք, օղարկել յոստս նորա, թագ 'ի գլուխ կապել, եւ արբուցանել նմա անուշահոտ եւ պատուական օշարակս: Եթէ սօսւոյն կայր միտ, խնդրէր արդեօք յարքայէ՝ չարկանել իբրեւ նախանձուկս յայլ տունկս, եւ չտալ զանձնէ կարծիս՝ անմիտ լինել իբրեւ զմի 'ի տնկոց: Այլ որ իշխեացն ոսկի ոտնակապօք կալանաւորել զծով, որպէս վերագոյնդ ասացաւ, իշխէր արդեօք ոսկի պսակաւ դշխոյացուցանել եւ զմի 'ի տնկոց:

Բայց կանոն է եւս էական, չբաշխել առատաձեռնի զպարգեւս իւր 'ի մոլիս եւ 'ի վատանունս: Զի որպէս ոսկի խառնեալ ընդ այլ հրահալէլի՝ անարգի եւ կորուսանէ զիւր շողիւն, նոյնպէս յոռանայ եւ յանձանց՝ որք վարեն զնա:

Վասն այսորիկ առատաձեռնն ոչ ընդունի զպարգեւս 'ի մոլեաց, զի մի կեղտ անուն ձգեսցէ յիւր գանձ. եւ ոչ պարգեւէ մոլեաց, զի մի կեղտ անուն ձգեսցէ յիւր պարգեւս: Թող զի որպէս ոսկին պարգեւեալ առաքինեաց՝ տածիչ է առաքինութե, նոյնպէս պարգեւեալ մոլեաց՝ տածիչ է մոլութեանց, եւ որ պարգեւի չարաց՝ բառնի 'ի բարեաց: Այս եւ ապիրատին որ 'ի թշուառութեան իցէ, չէ պարտ ժխտել զօգնութիւն. բայց այն լինի այլ առաքինութիւն առատաձեռնի, այլ ոչ առաքինութիւն առատաձեռնութեան: Արիստոտէլ այսմ օրէնսդիր՝ ուսոյց մեզ զկատարումն իւրով օրինակաւ: Քանզի 'ի հարցանել միոյ յաշակերտաց նորա, թէ էր աղագաւ պարգեւեաց փող վատանուն եւ մոլի աղքատի, ետ պատասխանի. Ոչ երախտաւորեցի նմա որպէս բարւոյ, այլ որպէս մարդոյ: Որպէս թէ ասէր՝ թէ պարգեւել այնմ որ վատանուն իցէ՝ երբ ողորմելի է, չէ առատաձեռնութիւն, այլ մարդասիրութիւն եւ պարտք բնական:

Չէ յատուկ առատաձեռնի առնել պարգեւս եւ մեծատանց եւ յղփացելոց ընչիւք: Զի ոսկի առատաձեռնի՝ յանձնէ տրամաբաշխական առաքինութեան, առ օգնել եւ ոչ թէ առ ընկենուլ 'ի բաց. եւ յառատաձեռնութեան մասին որ ինչ ոչ օգնէ, է ընկեցիկ: Զեղծ առատաձեռնութիւն այն զոր արար ումն յիմաստասիրաց, որ առ իմաստասիրել՝ ընկէց 'ի ծով զամենայն զիւր գանձ[113]: Սկիզբն արար սա իւրոյ իմաստութեան 'ի մեծէ յիմարութենէ, որ յոռեգոյն եւս էր քան ըզՔսերքսեսին: Զի Քսերքսէս կամեցաւ ոսկւով ծառայեցուցանել զծով. սա կամեցաւ ոսկւով փարթամացուցանել զծով.

որ փարթամն էր քան զնա։ Ցուցաւ սա ոչ իմաստասէր, այլ առաքինատեաց, կամեցեալ հեղձուցանել զոսկի 'ի մէջ ձկանց, քան կեցուցանել զնա 'ի մէջ առաքինեաց։ Առատաձեռնն ընկենու զոսկի 'ի ծով, յորժամ պարգեւէ զայն այնպիսւոյ՝ որում ինչ ոչ օգնէ, կարող գոլով օգնել այլոց։ Այս լինի բարեմարդութիւն, բարեկամութիւն, և քաղաքավարութիւն պարգեւել մեծատանց, այլ ոչ առատաձեռնութիւն՝ որպէս և ասացաւ։

Յաւելու Արիստոտէլ թէ առատաձեռնն առանձին իմն օրինակաւ պատշաճեցուցանէ զառատաձեռնութիւն իւր յօգնել ազատական արուեստից, և որոց վարիցին նովաւ. զի ամօթ է առաքինութեան, թէ մուզայքն իցեն մուրօղք։

Ի ծնանել Աթենասայ, Դիոս տեղաց յերկնից տարափ ոսկի[114]։ Դիոս է առատաձեռնն և Աթենաս է ճարտարմտութիւնն. տարափն ոսկւոյ է առատաձեռնի, ածիւ կենաց ճարտարամտաց և ճարտարարուեստից։ Բազում քաջ ճարտարամիտք յայտնեցան առ Օգոստոսիւ. զի կենդանի էր Մեկենաս. որ լիաձեռն անձրեւէր տարափ ոսկի[115]։ Նա եղև կատարեալ գաղափար առատաձեռնից, և միշտ 'ի վերստին ծնանել այսպիսեաց՝ վերստին ծնանին ճարտարամիտք, ասէ նուագերգուն Որատիոս։ Չորք ցեղք անձանց բաղկացուցանեն զհասարակապետութիւն, իշխանաւորք, ուսումնականք, զօրականք և արուեստաւորք։ Արուեստաւորք կեան վարձուք իւրեանց, զօրականք թոշակաւ իւրեանց, իշխանաւորք կառավարութեամբ իւրեանց, բանաստեղծ և այլ ազատ ճարտարութեանք՝ գովութեամբ. և որ կերակրի գովութեամբ, կերակրի օդով։ Որք պարծանքն են քաղաքաց, անկեալ դնին 'ի մթան. որք գրչաւ բարձրացուցանեն զքաջազունս, անկեալ դնին 'ի գետնի. որք կեանս տան մեռելոց, մեռանին 'ի սովէ, եթէ արք առատամիտք ոչ անձրեւեն տարափ ոսկի։

Յետին կանոն և քան զամենայն գովելի՝ է այն, զի պարգեւեսցէ զուարթամիտ և արագ։ Պարգեւն առանց այսորիկ է կերակուր անհամեմ։ Զի բարերարութիւն հաստատեալ է 'ի կամս. և երկոքին սոքա են ճշմարիտ նշանք գործադրիչ կամաց։ Պարգեւատուութիւն յապաղն՝ է շարժումն բռնական. յառատաձեռնն է շարժումն բնական, և վասն այսորիկ նա է դանդաղ և գժկամակ, և սա է արագ և կամակ։ Թէ չկարէ՝ վաղ հրաժարէ. և թէ կարէ՝ վաղվաղ շնորհէ. երկաքանչիւրն են երախտիք. զի նա զյոյսն չխաբէ, սա զհայցուածս աշխատ չառնէ։ Չէ պարգեւ այն որ գնոց գնի։ Ազնուական սիրտ ոչ ինչ այնպէս թանկագնոյ գնէ, որպէս յորժամ արիւնաւուշտ շառագունութեամբ աղաչէ, և վասն այսորիկ լաւ համարի գնոց գնել, քան ժտել. չարչարանս չարչարիլ, քան շառագունիլ։ Որ արագ պարգեւէ՝ կրկին պարգեւէ. զի որպէս կախ



մահ՝ է կրկին մահ, նոյնպէս երագ երախտիք՝ են կրկին երախտիք։ Տիբերիոս՝ յերկաքանչիւրսն եղև միշտ Տիբերիոս[116]. զի 'ի դատապարտելն, ասէր ցդահիճն. Կատամահ սատակեա զդա։ Եւ 'ի բարերարելն ասէին զնմանէ, թէ Զոր պարգեւելն կամի, յամր խոստանայ։ Բայց որ պսակէ զգործ առատաձեռնի, է այն՝ զի զերախտիսն զոր ընդունի, կրկին փոխատրէ, և զոր ինքն առնէ, այնմ փոխարէն ոչինչ առնու կամ պահանջէ. զի զայլոյն երախտիս գրէ յարձանի, և զիւրն յաւազի։

Այսպ է սա առաքինութիւն քան զամենայն զուարթարար և չքեղ։ Զուարթարար յինքեան, զի պահէ զսիրտն 'ի հանապազորդ մարզս՝ կրկնակի բերկրականս. իբր զի առնէ շնորհս, և ընդունի շնորհակալութիւնս։ Ոսկին որ այլոց է սկիզբն վարանման՝ վասն դժուարութեանն 'ի ստանալ, վասն հոգոց 'ի պահել և վասն տրտմութեանն 'ի կորուսանել, ոչ կարէ 'ի վարանս արկանել զսիրտ առատաձեռնի. զի ոչ պարգեւէ, բայց զոր ստացեալ ունի. և ոչ ստանայ, բայց զի պարգեւեսցէ. և որ պարգեւի՝ ինքն անկորուստ. մանաւանդ թէ 'ի վարձու տուեալ լինի բազում տոկոսեօք. կալով յապահովի երախտեացն յայնմ՝ որ ընդունի, և անմահական արդեանց յայնմ որ առնէ։ Իբրև հարցին Կիւրոսի օտար դեսպանք, թէ Ո՞ւր պահես զքո գանձս, եցոյց նոցա զիւր ասպետս՝ ասելով, Ահա իմ գանձապահք։ Տես զի համարէր այնչափ ինչ ունել, որչափ ինչ պարգեւեալն էր։

Բայց մեծ ևս տոկոսի է՝ Պատիւն և Գովութիւն զոր յայնմանէ ընդունի։ Զի որովհետև յոյս ժողովրդեան ոչ այլ ինչ է պատիւ՝ բայց վարկ երախտամտաց կարողութեան, որպէս ուսոյց Արիստոտէլ, ոչինչ առաքինութիւն այնպէս հաճոյ է ժողովրդեան և գովելի, որպէս առատաձեռնութիւնն. և ոչ ոք 'ի մարդկանէ այնպէս չքեղ է և մեծարգի, որպէս առատաձեռնն, կենդանի աղբիւր գոլով երախտեաց։ Բարեացապարտ է նա առ ամենեսեան, և երկրպագեալ յամենեցուն որպէս երկնաւոր ոմն 'ի յերկրի։ Շտեմարանապետս կոչի աղքատաց, խնամակալու մեծատանց, վարձահատոյց առաքինեաց և հայր հայրենեաց։ Ի նա հայեցեալ ծերք՝ և զարմանան, մանկունք և ուսանին. չափահասք և նմանօղ լինին, չարք և ուղղին. անուղղայ ազգաց և զամօթի հարկանին։ Ոչ ոք քան զնա ապահով է և զերծ 'ի նախանձատաց, 'ի չարանիւթից և 'ի թշնամեաց։ Զի ոչ ոք նախանձի այնմ որ ոչ ինչ ստանայ, բայց եթէ 'ի պարգեւել. ոչ ոք ատեայ զայն որ զամենեսին սիրէ, ոչ ոք թշնամանայ առատաձեռնի թէ չէ թշնամի հասարակաց օգտի և հայրենեաց և իւր իսկ անձին։ Վասն այսորիկ 'ի մահու նորա հասարակաց լալիւն լինի 'ի [illegible], և սուգ զգենուն դէմք ամենայն։ Նա ժողո-

վուրդք, լուն առաքինիք, լուն և ճարտարարուեստ որքացեալք և խաւթարեալք: Դուռն կոչէն զմանգաղ մահու, զի եբարձ 'ի կենաց զամենեցուն կենսատու. և անարդար զբնութիւնն որ ոգւոյ երկնաւորի եւ մարմին հողեղէն:

## ԳԼՈՒԽ Զ.

### Յաղագս շռայլութեան և ագահութեան:

Սուտ է այն կանոն հանրական, թէ երկու ինչ միում երրորդի ներհական՝ են ընդ միմեանս միաբան: Շռայլութիւն և Ագահութիւն են երկու մահուչափ թշնամիք առատաձեռնութեան, բայց առաւել եւս թշնամիք միմեանց: Շռայլն կարի իմն արհամարհէ զինչս. վասն որոյ և վատնէ. ագահն կարի իմն սիրէ զնա, վասն որոյ և պահէ: Որ առնէ աւելորդ ծախս վասն հեշտախտութեան, է հեշտասէր և ոչ շռայլ: Որ վասն փառասիրութեան, է փառամոլ և ոչ շռայլ: Որ պահէ զինչս վասն առեւտրոյ, է վաճառական և ոչ ագահ: Որ վասն խաղի, է խաղամոլ և ոչ ագահ: Այսպէս շռայլն միայն պարգեւէ՝ ըղձիւ լոկով պարգեւելոյ, և ագահն պահէ ըղձիւ լոկով պահելոյ. և երկոքին իսկ արտաքոյ քան զարժանն:

Ամենայն մոլութիւն ունի իւր գովիչս: Շռայլութիւնն գունագեղի անուամբ առատաձեռնութեան, և ագահութիւնն անուամբ խնայութեան, վասն այսորիկ զնա գովեն երիտասարդք, զսա ծերք. զի շռայլութիւնն է մոլութիւն երիտասարդաց, և ագահութիւնն ծերոց: Բայց որպէս փորձաքարն յայտ առնէ զինչ ընդ մէջ է ճշմարիտ ոսկւոյ և սուտ ոսկւոյ, նոյնպէս առատաձեռնութիւնն տայ ճանաչել զինչ ընդ մէջ է ոսկւոյ շռայլի և ոսկւոյ ագահի: Շռայլն յափշտակէ զօտարին, յորժամ չկայ ինչ իւր 'ի վատնել: Ագահն ոչ վայելէ յիւրն, միայն թէ մի վայելեսցեն այլք: Նա նման է գետոյն Լիւդիայ, որ գողանայ զոսկի լերինն Միդայ, զի ամասցէ 'ի ծով[117]: Սա նման է մրջիւնառիւծուց լերանց Արիմասպեայ, որք պահեն զպահպանութիւնս հանքաց ոսկւոյ, ոչ զի պիտանի նոցա, այլ զի մի պիտանասցին այլոց: Շռայլն ոչ է մոլի յիւրմէ, այլ ըստ պատահման. զի ոսկի ցանեալ ոչ ըստ առաքինութեան՝ սերմն է ամենայն մոլութեանց: Եւ ագահն յիւրմէ է ընդունարան ամենայն մոլութեանց. բայց ըստ պատահման երեւի առաքինի: Զգաստ է 'ի կերակուրս զի մի արասցէ ծախս. չէ խաղամոլ զի մի կորուսցէ. չէ փառամոլ զի մի ճոխ երեւեսցի, ոչ յանցաւոր առ երկիւղի, զի մի տուժեսցի. բայց մի միայն մոլութիւն՝ ընու զտեղի ամենայնի:



Դիւրագոյն գոյ 'ի միջասահման առաքինութեան շռայլն քան զագահն: Զի շռայլն ոչ պակասի գործն, այլ գիտումն. բայց ագահին պակասի երկաքանչիւրն: Նա սխալէ կարի իմն վստահութեամբ, սա կարի իմն երկիւղիւ: Եւ վասն այսորիկ նա ցորչափ կեայ՝ առաւելու 'ի խոհականութեան և նուազէ 'ի շռայլութեան. և սա որչափ առաւել ծերանայ, այնչափ առաւել երկչոտի, վասն որոյ և առաւել ագահէ:

Շռայլն պարգեւէ զոր ոչն պարտի, և չպարգեւէ զոր պարտի: Ագահն պարգեւէ զոր պարտի, և չպարգեւէ զոր կարող էր պարգեւել: Վասն զի շռայլն 'ի պարգեւելն վասն հաճոյից իւրոց, և ոչ վասն համեստութեան, առաւել հաճեալ է պարգեւել ըստ ընտրութեան, քան վճարել ըստ պարտեաց: Եւ ագահն վասն զի չէ հաճեալ պարգեւել ըստ ընտրութեան, վճարէ միայն զոր պարտի, զի մի բարձցի 'ի նմանէ զոր ոչն պարտի:

Ի վախճան ամենայնի՝ այնչափ անմիտ է շռայլն, որչափ ագահն: Զի նորա չչափեալ զոր պարգեւէ, սպառէ զինչս յառաջ քան զսպառել կենաց: Եւ սորա երկուցեալ թէ պակասեսցեն ինչք, սպառէ զկեանս, մինչ չեւ է վարեալ զնոսա 'ի պէտս: Մին կարի իմն 'ի վար արկեալ զիւր ճոխութիւն, մեռանի աղքատ. միւսն կեայ աղքատօրէն, զի մեռցի ճոխ: Նա թողու ժառանգաց զգանձս Եպամինոնդայ, լի բարեկամօք և թափուր 'ի դրամոց: Սա թողու զգանձս Պաւսանեայ, լի դրամօք և թափուր 'ի բարեկամաց[118]:

# ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՅՐԻՑ ՆՈՐԱ

### ԳԼՈՒԽ Ա.

*Թէ զինչ իցէ մեծագործութիւնն ։*

ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆ է առաքինութիւն յոգւոյ՝ զմիջասահմանութեամբ մեծամեծ ծախուց՝ 'ի սակս համեստ պատճառի։ Թերեւս 'ի սկզբան անդ անտեղի ինձ թուիցի ումեք այս սահման Արիստոտէլի։ Զի թէ փոքրն և մեծ՝ են երկուծայրք միջասահմանին, զիա՞րդ հնար իցէ միջասահմանին լինել մեծ ինչ միջասահման. և եթէ առաքինութիւնն հաստատեալ է 'ի միջասահմանութեան, զիա՞րդ հնար է թէ լինիցի առաքինութիւն այն որ զանցանէ զմիջասահմանութեամբ։ Բայց և այնպէս ծանիր զի և 'ի մեծութեան գտանի միջասահմանութիւն, և 'ի միջասահմանութեան մեծութիւն համեմատական։ Մեծ եղև գրօշուած Կապիտոլեան Դիոսի, և գործ մեծագործ յիմքեան. բայց եղև միջասահման ինչ առ արձանաւ Պոմպէոսի, որ փոքր էր քան զնա. և առ անդրապատկերաւ Հռոդոսի որ մեծ էր քան զնա։ Նա՝ անդրապատկերն Հռոդոսի, առ որով ամենայն անդրապատկերք աշխարհի էին թզուկք, համեմատեալ իւրում վախճանի էր միջասահման ինչ. որպէս և այլք համեմատեալք իւրեանց վախճանի։ Իբր զի արձանն Պոմպէոսի 'ի պատիւ ուրումն առանձնաւորի, և Կապիտոլեանն Դիոս՝ վասն մեհենին մեծի, և անդրապատկերն Հռոդոսի՝ 'ի մուտ նաւահանգստի, չէին ինչ փոքր կամ մեծ քան զպատշաճն, և յայն պատշաճողութիւն հաստատեալ է միջասահմանութիւնն համեմատական։ Զորին հակառակն թէ նուիրես դու Պոմպէոսի զանդրապատկերն Հռոդոսի, և 'ի վերայ նաւահանգստին Հռոդոսի կանգնես զԿապիտոլեանն Դիոս, յայտ է թէ փոփոխմամբ վախճանաց և համեմատութեանց՝ բառնաս դու զմիջասահմանութիւնն. զի մին լիցի մեծ, և միւսն լիցի փոքր քան զպատշաճն. և այն գործք մեծագործք՝ լիցին ծաղու արժանի։



Ապա մեծագործութիւնն հայի միանգամայն յերիս եղերս առնչականս. այսինքն է 'ի մեծութիւն գործոյն, 'ի մեծութիւն գործողին, և 'ի մեծութիւն վախճանին՝ յոյր սակս գործի։ Մեծութիւն գործոյն չափի 'ի քանակէն. մեծութիւն գործողին յաւագութենէ իւրմէ, մեծութիւն վախճանին 'ի հասարակաց օգտէ։ Եւ այս երեքին չափք միահաղոյն միով անուամբ կոչին Վայելչութիւն։ Ապա իմաստութեամբ Արիստոտէլ զայս մեծ առաքինութիւն անուանեաց երկեակ մեծամեծ անուամբք որ նման են, այլ ոչ նոյնանշան. այսինքն է՝ Մեծագործութիւն և Մեծավայելչութիւն։ Մեծագործութիւն՝ սոսկապէս վասն նիւթական մեծութեան գործոյն. Մեծավայելչութիւն վասն բաղդատական մեծութեան՝ համեմատելոյ վայելչութեան քանակին, և անձին և վախճանի նորա։

Յասացելոց աստի նախ առաջին մարթ է քեզ առնուլ 'ի միտ, թէ միջասահմանութիւն մեծագործութեան մեծ է յոյժ քան զմիջասահմանութիւն առատաձեռնութեան։ Զի որպէս փոքրիկ փիղն մեծագոյն է քան զմեծ գառնն, սոյնպէս փոքր գործ մեծագործութեան՝ առաւելու քան զմեծ գործ առատաձեռնութեան։ Փաբիոս Մաքսիմոս՝ մեծն քաջութեամբ և նուազն ընչիւք՝ վաճառեաց զիւր մի միայն փոքրիկ կալուած, զի այնու ոսկեով լուծցէ յերկաթի կապանաց Աննիբաղայ զկալանաւորս քաղաքին Կաննեայ. զի փոքր ամօթ համարեցաւ հասարակապետութեան՝ զաղքատութիւն իւրոյ զօրագլխի, քան զգերութիւն իւրոց զօրականաց։ Ժողովուրդն հռովմէական առեալ զթագաւորութիւն փոքուն Ասիոյ, պարգևեաց զայն արքային Տատաղոսի. զի առաւել արժան համարեցաւ հռովմէական վեհափառութեան դնել մեծ ոմն թագաւոր, քան ժառանգել զմեծ ինչ թագաւորութիւն։ Թէ բաղդատես երկոքին այս գործք՝ ըստ ըղձի և ըստ կարի պարգևողին, յոյժ առաւել պարգևեաց Փաբիոս 'ի պարգևել իւրում վիճակ մի գետնի, քան ժողովուրդն հռովմէական 'ի պարգևել զթագաւորութիւն մի։ Զի որ պարգևէ՝ որչափ ինչ ունի յաշխարհի, պարգևէ բովանդակ զաշխարհ։ Զորին հակառակն՝ ժողովուրդն հռովմէական պարգևեաց դուզնաքեայ ինչ՝ առ այնու զոր կարող էր պարգևել։ Բայց և այնպէս պարգև Փաբիոսի եղև առատաձեռն և ոչ մեծագործ. իսկ պարգև ժողովրդեան եղև մեծագործ և ոչ առատաձեռն։ Զի որպէս լուար, գործ մեծագործ ոչ չափի ըստ կարի և ըստ ըղձի, այլ ըստ մեծութեան և ըստ պաղոյ գործոյն։

Տես դու և զայն, զի որպէս մեծագործութիւնն է առաքինութիւն տարբեր յառատաձեռնութենէ. նոյնպէս և ծայրք մեծագործութեան են տարբեր 'ի ծայրից առատաձեռնութեան։ Սոքին կոչեցան Ագահութիւն և Նսեմութիւն. բայց նոքին յառաջ քան զԱրիստոտէլ չունէին անուն։ Այնպէս

դժուարագիւտ եղև առ նախնիս մեծագործութիւն, որ ոչ անուամբ և ոչ խնկութեամբ ծանուցաւ. կամ թէ այնպէս աղքատ էին նոքա 'ի մտաւորութենէ, զի խատղեալ աչաց նոցա 'ի փայլմանէ որպիսի և իցէ մեծագործ գործոյ՝ ոչ որոշէին զմէջ յիւրոց ծայրից: Եւ զիա՞րդ կարող իցէ իմաստասիրել որ ոչն գիտէ սահմանել. կամ զիա՞րդ կարող իցէ սահմանել, որ զանունն իսկ ոչ գիտէ: Այլ Արիստոտէլ որպէս հասու եղև թէ միջասահմանութիւն առաքինութեանս մեծի հաստատեալ է 'ի վայելչականն, նոյնպէս նոր՝ բայց խակական անուամբ կոչեաց զառաքինութիւնն՝ Մեծավայելչութիւն. զմոլեկան նուազութիւնն՝ Փոքրավայելչութիւն, և զմոլեկան աւելազանցութիւնն՝ Չափազանց վայելչութիւն: Մեծավայելչութիւնն է պատշաճաւոր մեծութեանն չափ. փոքրավայելչութիւնն ոչ հասանէ 'ի չափ. չափազանց վայելչութիւնն առաւելու ըստ չափ: Յայսմանէ ունիս իմանալ հուսկ ուրեմն թէ քանի՜ դժուարին իցէ գիտութիւնս, և քանի՜ կարևոր ումեք իցէն առնել գործս մեծագործս: Վասն զի որպէս ոչ ինչ է այնպէս դժուարին, որպէս ճանաչել զհամեմատութիւն վայելչութեան, վասն անհամար պարագայից զորոց կախեալ կայ, նոյնպէս կարի դիւրին է վրիպել յիմիք պարագայի. և կարի ծանր է ամենայն վրիպակ, զի 'ի պակասել կամ յառաւելուլ քան զվայելչականն՝ վատնին գանձք 'ի ստանալ մեղադրանս:

## ԳԼՈՒԽ Բ.

### Թէ ո՞ իցէ այր մեծագործ:

Գործն մեծագործ, որպէս անունն իսկ իւր հնչէ, լինելոց է Մեծ: Այլ պարտ և պատշաճ է, թէ և որ գործէն զայն՝ իցէ մեծ. զի համեմատական վայելչութիւն իցէ 'ի մէջ արարողին և արարուածոյն: Միապէս անպատեհ ինչ է, թէ ոչխարն զառիւծ ծնցի, և անարգ ոք զգործ մեծագործ: Ոչ կարէ մեծագործ լինել, որ 'ի վերայ գործոյ մեծի ոչ կարէ դրել մեծ եւս անուն. զի անունն մեծացուցանէ զգործն՝ քան թէ գործն զանունն: Նախանիք մեծ են մերումս դարու, զի մեծագործդ անուն այնպէս անկեալ է յիւրմէ մեծութենէ, մինչև հազիւ կառուցկք և պանդոկապետք զիջանին յանձն առնուլ, այն որ երբեմն պահեստ էր միայն մեծամեծ թագաւորաց և քաջազօր ինքնակալաց: Եւ զիա՞րդ կարող իցէ լինել մեծագործ, որ ոչն է ձեռնհաս առնել գործս մեծագործս. կամ զիա՞րդ մեծագործ իցէ գործն, եթէ արարող



գործոյն 'ի ժողովրդականաց ոք իցէ, թէպէտ և մեծատուն: Առասպելեալ գորտն՝ մինչև հասեալ էր ուռուցիւք ցհաւասարութիւն եզին՝ պայթեցաւ. և աղքատոհմ մեծատունն՝ մինչ չև է արժանացեալ կոչել մեծագործ, հիւծեալ հաշեցի. զի ցածութիւն անձին ցածուցանէ զգործն թէպէտ և մեծ: Բակտրակ և Սավրա մեծահարուստ ճարտարապետք՝ անձնամատոյց եղեն շինել զթատր Հոկտաւեայ իւրեանց ծախիւք, միայն թէ շնորհեսցի նոցա քանդակել զանուն իւրեանց 'ի նմա: Գործակալք շինուածոյն չառին յանձն, համարեալ թէ մեծագործութիւն գործոյն անարգեսցի ոսկւով ռամկայնոց՝ և ցածուն անուամբ ճարտարաց, որք էին ցածազգի, թէպէտ և յարուեստին իւրեանց անուանի: Բայց անգոսնելի մեծագործութիւն եղև այն՝ զոր արար Հռոդովպէ գերի աղջիկ մեծանուն. որոյ գեղ՝ բազմաց յաղթեաց իշխանաց և թագաւորաց. որ յամօթապարտ շահուց՝ կանգնեալ բարձր ամբարտակ, եցոյց երկնից զիւր և զայլոց ամօթ նախատանաց[119]: Նախանձ էարկ համեստութեան այն լրբենի յաղթանակ. և հրապարակեալ խայտառակութիւնն՝ եղև հրապարակական զարդ: Եբարձ այն ամբարտակ զզարմանագործութիւն այլոց ամբարտակաց Եգիպտոսի. և այլ ոչ զարմացաւ աշխարհ, թէ յամբարտակ արքային Կղէոպայ աշխատ եղեն այնչափ գերիք. որովհետև 'ի շինուած ամբարտակի գերի աղջկան ուրուք հանդանակեցին այնչափ թագաւորք:

Ապա որոց մեծ է հարստութիւն և փոքր վիճակ, ճահողագոյն է նոցա բաշխել զգանձս իւրեանց 'ի գործս առատաձեռնութեան, քան կործանել զայն 'ի մեծածախ շինուածս: զի հնար է նոցա արդիւնս ստանալ զպարգևատուի, այլ ոչ մեծագործ անուան լինել արժանի: Գանձ վաճառականաց նաւարկէ թռուցիկ առագաստիւ բախտի: Գանձ մեծամեծ կալուածոյ՝ կախեալ կայ զամպոց: Գանձ մեծամեծ իշխանաց է իբրև զանդաստան Պիերիայ գետոյն ուր խորարմատ տարածեալ էր ոսկի. իբր զի ոչ պակասին նոցա հարկք թէ ոչ պակասին ժողովուրդք: Այլ իշխանաց միայն հնար է փառաւոր առնել զգործ ինչ մեծ, անուամբ մեծաւ: Ծնանի ընդ իշխանի գերունակ իմն բարձրութիւն՝ անուանեալ վեհափառութիւն, որ փայլէ 'ի նմա, և զեղեալ յիւր գործս՝ առնէ զնոսա արգոյս և մեծս: Այլ յայնժամ գործ ինչ է գեր 'ի վերոյ մեծագործ յորժամ անցանէ զանցանէ մեծութեամբ զայլովք, և արարող նորա առաւելու քան զայլս վեհութեամբ:

Յայտ է թէ զոր օրինակ մարդ ոչ միշտ գործէ որպէս բանաւոր, այլ երբեմն որպէս զգայուն և երբեմն որպէս աճեցուն, նոյնպէս իշխան ոք ոչ միշտ գործէ որպէս մեծագործ, և ոչ որպէս իշխան: Արեգակն ոչ այլ ինչ է էապէս, բայց

վառարան լուսեղէն և կենսատու, զետեղեալ յաշխարհի յերախտաւորութիւն ամենայն մարմնեղէն գոյից. որ շուրջ կան զնովաւ որպէս սանդղից մանկունք՝ դիտել զլոյս և ընդունել զկեանս: Իշխանն է արեգակն իւրոց ժողովրդոց, և արեգակն է իշխան ամենայն լուսաւորաց: Էական յատկութիւն արևու է ճառագայթել, և էական յատկութիւն իշխանի՝ օգնել: Թէ արեն չէր լուսատու, չէր արև. և թէ իշխանն ոչ օգնէ, չէ իշխան: Թէ արեն անցուցանէր օր մի անլոյս, այն օր ոչ լինէր տիւ, այլ մթին գիշեր. և թէ իշխանն անցուցանէ օր մի յորում չօգնէ այլոց, այն օր որպէս ասէր Տիտոս կորուսեալ է վասն նորա. զի ոչ գործեաց ինչ որպէս իշխան[120]: Այպա ուրեմն եթէ արեգակն լուսաւորէ զմարմին ինչ մասնաւոր, ընդ սահմանաւ փակէ զիւր զօրութիւն. բայց եթէ լուսաւորէ զամենայն աշխարհ, համատափիւռ ծաւալէ յառարկայն զիւր բարերար կարողութիւն: Եւ իշխանն՝ որպէս այլուր ասացաք, յորժամ ըստ մասնեայ երախտեօք օգնէ մասնաւորաց, գործէ որպէս առատաձեռն. այլ յորժամ առնէ գործս մեծամեծս առ հրապարակական օգուտ և 'ի զարդ, յայնժամ 'ի վեր արկեալ զպէր 'ի վերայն իւրոյ վեհութեան՝ գործէ որպէս մեծագործ:

## ԳԼՈՒԽ Գ.

*Թէ որք իցեն առարկայք մեծագործութեան:*

Որպէս զառատաձեռնութենէ ասացաւ, թէ բազումք գիտեն վատնել՝ այլ սակաւք գիտեն պարգևել, սոյնպէս 'ի մեծագործութեան դիւրագոյն է մեծ ծախս առնել քան առնել ինչ մեծագործ: Են թռչունք որ յղանան 'ի շնչել զեփիւռի. բայց ձուքն եղանին հողմալիցք, որք յայն սակս կոչին զեփիւռականք: Ըստ սմին օրինակի երբեմն անձինք մեծամեծք փքոցուսոյց փառամոլութեամբ երկնեն երկս բազմածախս, բայց 'ի խոհականութենէ և 'ի վայելչութենէ թափուրս: Գաղափարք մեծագործ գործոց եղեն այնք զորս աշխարհ կոչեաց իւր եօթն սքանչելիս[121]. իբր զի արդարև սքանչելի ինչ եղև, զի աշխարհ դեռ արմուղ գոլով երկնեաց սիրտս լայնատարրս 'ի յղանալ զնոսա, և միտս հանճարաւորս յերկնել զնոսա:

Մեծագործ եղև մեհեան Արտեմեայ կառուցեալ յԵփեսոս 'ի բովանդակ Ասիոյ՝ յերկերիւր ամս 'ի վերայ հարիւրոց սեանց կանգնելոց 'ի հարիւր թագաւորաց. համակ ընդար-



ձակատարր և հոյակապ և մշտնջենաւոր. թէ չէր յանկ հանեալ զմշտնջենաւորութիւն նորա ջահի միոյ 'ի միում գիշերի. կամ զի պայծառասցի նսեմ անուն հրդեհարկուին, կամ զի լցի հրացանութիւն ուրախութեան մեծի ծննդեան Աղեքսանդրի, յոր մանկաբարձութիւն զբաղեալ էր Արտեմիս զայն գիշեր ըստ առասպելաց: Պարիսպն Բաբելոնի, որոյ բարձրութիւն սահման էր թռուցաց թռչնոց, և թանձրութիւնն յօրինէր լայն ասպարէզ 'ի կառարշաւս: Սքանչելիք զարմանագոյն, զի ոչ 'ի հարիւրոց թագաւորաց յերկերիւր ամս, այլ 'ի միջէ միայնոյ թագուհւոյ 'ի Շամիրամայ, 'ի գոյն հնգերեակս ամաց սկսաւ և կատարեցաւ: Որով և ցուցաւ, թէ ոչ երկարութիւն ժամանակի, այլ մեծութիւն սրտի առնէ գործս մեծամեծս. ամփոփեալ զսիրտ այնչափ թագաւորաց 'ի մի կին: Բրգունք եգիպտականք, ոչ բրգունք, այլ լերինք պատուական քարանց՝ փոխադրեալք յԱրաբիոյ յԵգիպտոս՝ 'ի թաղել զթագաւորս, բայց յառաջագոյն զնոսա գանձս: Յաղթեաց մեծագործութեանս դշխոյն Կարիոյ՝ Արտեմիսիա թագուհի՝ կին Մաւսողեայ արքային Կարիացւոց մեծակառոյց գամբարանաւն, զոր արար 'ի պահել զոսկերս առն իւրոյ, մինչև թողուլ զաշխարհ 'ի տարակուսի, թէ ո՞ր չիրիմ էր չքնաղագոյն, կճեա՞յն թէ կենդանին որ գիտաց այնու օրինակաւ մեծարել զյիշատակ առնն: Նախայիշատակեալ առնապատկերն արեգական՝ որ գուռն էր պղնձի՝ նաւահանգստին Հռոդոսի, այնչափ բարձր և այնպէս ճարտարարուեստ, մինչև նախանձ առեալ արևու, թէ առ իւրև երևեացի այլ ոք թագաւոր քան զինքն զարմանաւոր, սասանեցուցեալ զերկիր տապալ կործանեաց զնա. զի մի կորուսցէ ըզփառս լինելոյ մի միայն[122]: Աշտարակն Փարոսի որ 'ի մթան գիշերի ցուցեալ նաւորդաց զնաւահանգիստն՝ իւրով բոցաճաճանչ լուսով, այնպէս անուանի եղև ընդ աշխարհ ամենայն, մինչև նաւել բազմաց առաւել 'ի տեսանել զաշտարակն՝ քան զարքունիս Աղեքսանդրի, յոր պէտս էր: Զհռչակն ասացից, Մեծ դրօշեալն ողիմպիական Դիոսի համակ 'ի փղոսկրէ, գործ քերուբ քանդակագործին Փիդիայ. որ 'ի վարան արկանէր զզինամոլ երկրպագուսն թէ ո՞ր իցէ առաւել երկրպագելի, Դի՞ոս թէ քանդակիչ նորա:

Յայսց գաղափարաց մարթ է քեզ առնուլ 'ի միտ, թէ գործք մեծագործք՝ լինել ունին մեծածախ և մեծ, զարմանալի և արգոյ: Զի 'ի մեծածախութենէ ծնանի մեծութիւն, 'ի մեծութենէ զարմանութիւն, և 'ի զարմանութենէ յարգ և պատիւ: Բայց անկատար լինին այս չորք ձիրք, թէ այլք երկուք ոչ կատարելագործեն զգործն: Մին է օգուտն. զի մի այնչափ ոսկի յամուլ քարանց վերայ վայրապար ցանեսցի: Երկրորդն է մշտնջենաւորութիւնն, զի որկորեայ ծերունեայն

որ ուտէ զիւր ծնունդս, յայսպիսի հաստաբեստ ծնունդս զուր խորտակեցին ժանիք [123]։ Որ ոք նոյլն գնով կարող է առնել ինչ գործ մշանջենաւոր, և առնէ զայն վայրկենաւոր, չարիս կամի իւրոց յետնորդաց. և իւր յետնորդք լիցին նորա չարախամ. առեալ զիւր ինչս, և սորջացի զի առեաց, յորժամ իսպառ կորուսցէ։

Ծախք որ լինին 'ի մարգարիտս, 'ի կարկեհանս, և յանգամանս մեծագինս, անկ են այս առն մեծագործի, բայց չեն գործք մեծագործք։ Զի՞ք 'ի նոսա մեծութիւն քանակի, զի գանձ մեծ փոկի 'ի փեղձեկ մի ընկուզոյ։ Զի՞ք հաստատութիւն. զի գանձ իմն է չարժուն, և ոչ կայուն։ Զի՞ք ապահովութիւն, զի գանձ է որում կան 'ի գարանի. և վտանգ է գուցէ 'ի ձանկ անկանիցի ծառայի։ Զի՞ք օգուտ, զի գանձ է թաղեալ յարկեղ։ Զի՞ք ճշմարիտ արժողութիւն, զի գանձ է որոյ գինք կախեալ կան զկարծեաց ամբոխին։ Եւ արդարև փխնիկն անուանեալ անգամանդից՝ անգամանդն Կարոլոսի Բուրգունդիացւոյ եղև անգլին. զի առաւելոյր քան զամենայն չափ, և գանձ մեծ էր յամփոփ քանակի անդ։ Բայց և այնպէս՝ գերմանացին որոյ գտեալ էր զայն ընդ այլև յաւարս իշխանին մեծի անպարտելւոյն 'ի պատերազմողաց, և պարտեցելոյն 'ի հովուէ, վաճառեաց զայն սափորոյ միոյ գինւոյ։ Եւ թերևս լաւ ևս գին եհատ սա քան զակնավաճառս. զի և աքաղաղն Եսովպոսեան գտեալ անգամանդ յաղբեւս, ասաց. Առաւել կամէի գտանել հատ մի գարւոյ քան գոհար մի։ Այպա կարի իմն առատաձեռնութեան, այլ ոչ մեծագործութեան են ցոյցք այսպիսի ծախք, բայց և չեն ինչ անպատշաճականք մեծագործ իշխանի. զի որ ստացեալ ունի զառաքինութեանց զմեծն, ստանալ ունի և զփոքրն։ Բայց մեծ նախատինս դնէ իւրոց գանձուց, վատնեալ զգինն 'ի գործ որ չարժէ այնչափ։

Լիաձեռն պարգևատուութիւնք, այլ ոչ ճշմարիտ մեծագործութիւնք եղեն յաղթական պարգևք կայսերաց, սփռեալք ժողովրդեան 'ի միջի առատաձեռն ձեռանէ, յափշտակեալք 'ի բիւրուց ագահ ձեռաց այնչափ աղմկաւ, մինչև վարձուց յաղթութեան թշնամեաց՝ երևել սկիզբն քաղաքական մարտի։ Թող զի 'ի չքաւորիլ գանձատան 'ի սակաւ ժամս, դուզնաքեայ իմն 'ի ձեռս հասանէր իւրաքանչիւր սոսկականի, և արքունեացն և ոչ մի։

Զնոյն առեմ զհանդիսական ընթրեաց Կեսարու և Սիղղայի՝ առ որսալոյ խայծիւ զսէր ժողովրդեան. որ 'ի միում աւուր միայն կլանէր զգինս մեծ և անանց գործոյ։ Այն զի յոլովակի խնճոյքն սկսեալք միաբանութեամբ և խնդութեամբ՝ յանկէին 'ի խնճոյս հարսանեաց Լապիթաց և կենտաւրոսաց [124], և կատաղութիւնն 'ի ներքս հոլովէր 'ի միրգս անդ խնձոր գժտութեան։ Բայց թէ հիմնարկէ ոք երևելի իջևանս մնայուն



եկամուտք 'ի ժողովել զհիւրս, թէպէտ և հիւրընկալութիւնն է լոկ առատաձեռն իմն, բայց մշանջենաւորութիւնն է մեծագործ ինչ. զի կրկին երախտաւորութեամբ միշտ երախտապարտ կացուցանէ զօտարս. և միշտ պատուէ զհայրենիս, և յետ մահու իսկ յայնմ վիճակէ քաղէ իւր գովեստ։ Վասն այսորիկ թէպէտ խաղք թատերականք, ամփիթէատրոնականք, կրկէսականք, և նաւականք, գործ էին առատաձեռնութեան, բայց և այնպէս թատերք և ամփիթէատրոնք, կըրկէսք և նաւակացուրդք, գործ էին մեծագործութեան. զի խաղքն էին առժամայնք և շինուածքն յաւերժականք. այնք 'ի խնդիր էին քաղաքացիք, սոքա զարդարէին զքաղաքն. նոքա էին տեսարան, և սոքա սքանչարան։ Նոյնպէս գործք մեծագործք եղեն կամարք յաղթականք. Սիւնք նշանագրականք յաղթութեանց Տրայիանոսի, կամ ցուցակք յաղթանակաց Օգոստոսի. Դամբարան Ադրիանոսի. Ջերմուկք նմանք մարմարաշէն քաղաքի. Ամփիթէատրոն Վեսպասիանոսի. որ ըստուեր էարկ զեօթամբ սքանչելեօք աշխարհի, ընդ թիւ մտեալ որպէս ութերորդ՝ մեծ ևս քան զնոսա։

Բայց եթէ այնք գործք են առաւել մեծագործք, որք 'ի սքանչելարուեստ ճարտարութիւն և 'ի մեծածախութիւն հոյակապ գործոյն յաւելուն հասարակաց ինչ և նշանաւոր և յաւերժական երախտաւորութիւն. զի՞նչ էին կամարքն յաղթականք, բայց դրունք անպիտանք փեռեկտեալք, միայն 'ի տալ մուտս համակ հռովմէական ամբարտաւանութեան։ Զի՞նչ սիւնք Տրայիանոսի և Օգոստոսի, բայց յիշատակագրութիւնք բարբարոսաց՝ առ քերելոյ յանձանց զիւրեանց անիրաւութիւնս անջինջ քանդակեալս։ Զի՞նչ ամբարտակն Ադրիանոսի, բայց լեառն վիմարդեան առ ամբառնալ յօդս զդի ինչ անկենդան։ Զի՞նչ ջերմուկք, բայց ջուրք վնասակարք առաքինութեան և առողջ բարոյից։ Եւ զի՞նչ աճեղն այն ամփիթէատրոն, բայց մեծ ինչ սպանդանոց մարդկեղէն մարմնոց, ուր կամ գազանք մարդկան, և կամ մարդ մարդոյ էին դիշատողք։

Այլ դու տես ինձ աստանօր, զի գործ քան զսոսա մեծագործ եղև աղտեղագոյնն 'ի գործս Հռովմայ, այն են լուալիք։ Գործ այնպէս աղտեղի՝ որ յինքն հաւաքեալ զամենայն զաղբծութիւնս Հռովմայ, անտես առնէր յաչաց. մանաւանդ թէ զի մի ծանր լիցի լսելեաց իւր անուն, փոխանակ անուամբ պատկառաւորաւ կոչէր Նիմփարան. որպէս թէ Նիմփայք իցեն խողք՝ որ փափկանայցեն 'ի ժահր [125]։ Բայց յայլմէ կողմանէ էր այն գործ այնչափ մեծածախ՝ վասն յօրինուածոյ անբաւ կամարակապ քարանց, մինչև չէր ինչ սուտ առել, թէ գեղեցիկ էին ներքոյք Հռովմայ՝ քան զվերին երեսս։ Այնչափ առաջարար, մինչև 'ի նմանէ ևեթ խոստովանէր Հռովմ

ունել զառողջութիւն, և զիւրոյ մարմնոյ արտաքնայարդար վայելչութիւն։ Այնչափ ախտեան, որ աղաչովէր զՀռովմ ստորերկրեայ շնչուհանօք 'ի տատանութեանց՝ որ սակս լինէին յայնմ վայրի։ Այնչափ օգտակար 'ի տուրեւառիկ վաճառս, որ փակեալ 'ի գոգ խոր գետս նաւագնացիկս, առնէր ընդ երկրաւ տարուբերս վաճառաց և համբարաց։ Եւ այնչափ մեծագործ, մինչև համարել Պլինիոսի թէ մեծ եղև քան զամենայն գործս Հռովմայ. և արժանացաւ հեղինակ ունել զլաւն քան զամենայն թագաւորս։ Բայց խոստովանելի է, թէ աղտեղութիւնն նախմացոյց իրօք ինչ զշուքն մեծագործ գործոյն, և օգուտն զամօթի հարաւ յանարգութենէն։ Այսպ առաւել ևս մեծագործ եղև գործ Ապպիոսի Կղոդիոսի, որոյ բերեալ զերկիր՝ յարկեաց բրածով նորա զճանապարհ զորականին, խաղացուցանել 'ի վերայ հողոյ և ընդ լերամբք զհռովմէական լեգէոնս՝ 'ի միջերկրեայ ծովէն մինչև 'ի ծոցն ադրիական, որով ճանապարհն տաժանաւոր՝ եղև զուարճալի ճեմարան։ Սա եղև ճշմարիտ մեծագործութիւն. որ զմեծածախութիւնն արար օգտակար, և զօգուտն մեծածախ. և ճանապարհն արքունի արժանացաւ անուն առնուլ յիւրմէ արարողէ։ Ի կոխան լինել ճանապարհին՝ անունն նորա բարձրանայր. եւ ամենայն քայլ ապաւորէր նշոյլ ինչ 'ի փառաց նորա։ Չէ ինչ յետնորդ քան զսա գործ ինքնակալին Կղոդեայ զՋրմղօք։ Այն ինչ Հռովմ 'ի ջուրս խորոյ ողմուտ Տիբերիս գետոյ պաղքէր 'ի ծարաւոյ, սա 'ի մարմարինեայ բարձրաբերձ կամարաց՝ խաղացոյց իբրև յաղթանակաւ ընդ օդս գետս առողջարարս. որոց սողեալ 'ի հրապարակական և յառանձնաւոր աղբիւրս, շնորհեցին ժողովրդեանն մեծի՝ առողջութիւն և գրգանս։ Բայց եղեն այն մեծ զարմանք, զի զլուխ մի փոքրիմաց կարողացաւ խորհել այդպիսի ինչ մեծագործ։ Խորհուրդ՝ որ բաւական եղև տալ նմա զօգտատապատիւգ անուն ոչ ընդ խաղ. չատ է՝ եթէ խոր էր այն խորհուրդ. զի առաւել սիրէր նա զսակառս գինւոյ քան զՋրմուղս։

Բայց քան զամենայն գործ մեծագործ է ըստ իմաստասիրելոյ Արիստոտելի, կանգնել պատկերս և տաճարս Աստուծոյ՝ այնչափ մեծածախս և զարմանագործս, մինչև գործոյն լինել հրաւիրակ հասարակաց յաստուածպաշտութիւն, և աստուածպաշտութեանն լինել հրաւիրակ անմահութեանն 'ի մահկանացուաց բնակակցութիւն։ Այս է գերամեծ գերակատար առարկոյ մեծագործութեան. զի ոչինչ մեծ՝ է այնպէս առաւել ընդունարան գեղոյ արուեստի. ոչինչ վախճան է առաւել գերակայ, և ոչինչ գործ է երախտաւորագոյն հասարակապետութեան՝ քան զհանդէս կրօնից։ Ի տաճարէ սկսանէին Հռովմայեցիք զպատերազմական շահատակութիւն, և 'ի տաճար բերէին զկապուտ կողոպուտ աւարին։ Ի տաճարէ հարցանէին խորհուրդ զմեծամեծ իրաց, և 'ի տաճար դարձուցանէին զշնորհակալութիւնս բարեբաստ ելից։ Վասն այսորիկ թէպէտ և 'ի կոյր մոլորութիւնս հեթանոսութեան խարխափէին նոցա միտք, սակայն և այնպէս համարեցան միշտ թէ ոչինչ գործոյ արժան էր լինել քան զայն մեծավայելուչ և մեծաշուք։ Նոյն թագաւոր որ հանճարեաց զլուսալիս. զի արասցէ զՀռովմ առողջ, խորհեցաւ կառուցանել և զմեծ տաճար Կապիտոլեանն Դիոսի, զի արասցէ զՀռովմ սուրբ, թէպէտ և անսուրբ կրօնիւք։ Եւ թէպէտ նոյն Դիոս շանթաւաք՝ բազում անգամ շանթս արձակեաց յայն իւր ամբարտակ, բայց և այնպէս միշտ ել յիւրմէ այրեցածէ առաւել ևս գեղեցիկ և պատուական. մինչ զի 'ի ժամանակս կայսերաց, յորում տիղմ Հռովմայ փոխեցաւ 'ի կիճ, կիճք տաճարին փոխեցան յոսկի[126]։



## ԳԼՈՒԽ Դ.

### Թէ առ ինչ վախճան գործիցէ մեծագործն։

Ըստ ասացելոցս զաստուածեղէնութենէ՝ մարթիս խորհել և զմեծագործութենէ. զի հանրական վախճան երկոցուն սոցա է նոյն, այսինքն է Համեստն. այլ մասնաւոր իմաստք են տարբերք։ Զգործ մեծագործ մարթ է մտածել Նիւթապէս և Տեսակապէս։ Նիւթ է ամբարտակն՝ որ աչօք երևի. որպէս թատրոն ինչ, կամ կամար, կամ շիրիմ, կամ տաճար։ Տեսակն է աներևոյթ, և ծածկեալ 'ի գլխումն գործողին. որ կեանս տայ առաքինի կամ մոլի գործոյ, որպէս հոգին մարմնոյ։ Գլխաւումն գործողին մեծագործութեամբ՝ է համեստութիւն նորին գործոյ, որպէս ասացաւ։ Եւ առանց այսր վախճանի՝ որչափ և մեծ լիցէ գործ ինչ և առաքինի, կամ լինի մոլեկան, կամ այլ ինչ առաքինութիւն տարբեր 'ի մեծագործութենէ։ Խոս ինչ ասի ունել այնչափ զօրութիւն յեղափոխելոյ զերևակայութիւն կերողին, մինչև ոչ այլ ինչ տենել նմա, բայց շրջել և շրջշրջել զքարինս։ Այսպիսի է արտամադրութիւն ոմանց. որ ոչ 'ի սակս մեծագործ համեստութեան, այլ 'ի բնաւոր իմն բերմանէ ձեռնարկեն 'ի քանդել և 'ի շինել մերթ հոյակապ ապարանս, մերթ բարձրաբերձ ամբարտակս. որ չեն ինչ պիտանի, ոչ վայելչական, և ոչ գովանի։ Այսպիսի եղև բնաւոր բերումն Դոմետիանոսի, խուն խճոյել զՀռովմ քարամբք, և զքարինս ոսկւով. այնպէս անշուք զնոսա ընկեցեալ։ Ոսկեզարդեաց այնպէս զսեամս դրանց,

որպէս զգահոյս. այնպէս զապարանս, որպէս զգահլիճս. այնպէս զտաճար Դիանի, որպէս զգմբէթեայ յարկս հարճից: Պլուտարքոս համարեցաւ զնա անմիտ. և իմաստնապէս կոչեաց զմեծագործութիւն նորա՝ անմտութիւն արքային Միգասայ: Ըղձանայր սա թէ յոր ինչ ձեռն հասուցանէ, լիցի ոսկի. յորմէ սովալլեալ, կորեաւ սովամահ [127]:

Ասէք յորդորին առնել գործս մեծագործս, զի այլոց մեծագործութեան լիցին նմանող, զորէն կապկաց որ չեն մարդիկ, բայց ջանան առնել զամենայն զոր տեսանեն առնել մարդկան: Ոչ է սա մեծագործութիւն, այլ կապիկ մեծագործութեան. զի չունելով յինքեան զախտ մեծագործութեան, առնու զայն 'ի փոխ: Այլ թէպէտ և նմանողք յերգիծաբանից կոչին հօտ ծառայական, բայց և այնպէս իմաստունն Զենոն յորդորէր զճոխ քաղաքացիս նմանող լինել մեծագործութեանց Պերիկլեայ. զի մեծ փառք են լինել նմանօղ 'ի մեծամեծ իրողութիւնս քան հեղինակ 'ի փոքունս. և չէ քաջ հեղինակ՝ որ չեղև քաջ նմանող:

Փոքր միւս ևս արժանաւոր յորդոր մեծագործ գործոց, է կեալ յետ մահու յիւր դաստակերտս: Յամենայն մարդիկ բնաւորեալ է մեծ ինչ տենչ անմահութեան. բայց քանզի բնութիւնն որոշեալ ունի իւրաքանչիւրում անհատի զսահման կենաց, նոյն ինքն բնութիւնն հաստեաց 'ի նոսա ձիգն յերկարաձգելոյ զկեանս 'ի զաւակս, և որում ոչ գոյ զաւակ, փոխանակեաց զազնուական ինչ խորհուրդ գործելոյ գործս մեծամեծս, զի 'ի նոսա կեցցէ իւր յիշատակ. և եթէ անմարթ է ասել թէ կեայ նա, գէթ ասասցի, եկեաց նա: Այլ թէպէտ և այս գիտումն արժան է ամենայն մարդոյ, որոյ ծնունդ իւր ոչ բերէ նմա ապաշաւ, բայց և այնպէս մօտ է սա մոլութեանն, որ աղարտէ զմեծագործութիւն. այն է՝ Պատուասէր ցուցամոլութիւն: Վաղու ևս ծնաւ այս մոլութիւն գրեթէ ընդ աշխարհի յարոն յաղթամարմինս, այլ ծանծաղամիտս, որ խրախուսեցին չինել աշտարակ, որում արժան իցէ անուն կոչել՝ աշտարակ հսկայից և հսկայ աշտարակաց. որոյ հասեալ գագաթ յերկինս՝ տարցի զմակագրութիւն անուան նոցա 'ի վերոյ քան զաստեղս: Զեղև երբէք ինչ գործ քան զայն մեծագործ. բայց և ոչ քան զայն յիմարական: Թէ կեցեալ էին հարիւր հազար ամս, և զամենայն զգունտ հողոյ առեալ էին յաղիւսարկութիւն, մինչև ելեալ գործոյն 'ի գլուխ, սպառեալ էր արդեօք հողն: Բայց 'ի գործս մեծագործս, որչափ գլուխ ամբառնայ փառամոլութիւնն, այնչափ 'ի բացուստ 'ի վեր երևի անմտութիւնն: Փառամոլք ոչ գրոշմեն զմակագրութիւն՝ վասն առնելոյ իւրեանց զգործն, այլ առնեն զգործն վասն գրոշմելոյ զմակագրութիւն. զի վախճան նոցա չէ առնել գործ մեծ, բայց եթէ 'ի մեծացուցանել զանձինս: Նա՝



որպէս անմիտ նկարիչք առ ամենայն չնչին նկար ստորագրեն զիւրեանց անուն, նոյնպէս փառամոլք՝ 'ի վերայ գերեզմանի, 'ի վերայ սեղանոյ, և յամենայն գլուխ կամրջի քանդակեն զանուն և զդրոշմ, ըստ բաղեղան որ յամենայն որմ կառչի:

Այլ մեծագործն ոչ պատուասէր իմն համարի առնել ինչ պատուական՝ 'ի մուրանալ զպատիւ. այլ վասն զի համեստութիւն գործոյն այնպէս պահանջէ: Շատ է նմա զի շատացոյց զանձն: Լուկուղղոս մեծապարգև մեծարեաց մեծագործ շքով զդեսպանս Սպարտիոյ. որոց զարմացեալ և զամօթի հարեալ, ջանային իւրեանց համառօտ ոճիւ շնորհակալութիւն մատուցանել, փոխանակ զի 'ի շնորհս նոցա արար մեծամեծս: Որոց Լուկուղղոս ետ պատասխանի. Ինչ ինչ արարի 'ի շնորհս ձեր, բայց առաւել արարի 'ի շնորհս Լուկուղղոսի: Զեր կարող տալ պատասխանի քան զայն արժանավայելուչ հռովմէական մեծագործութեան: Եթէ յայնմ մեծածախս ընդունելութեան ակն եդեալ էր նորա երախտապարտ կացուցանել հասարակապետութեան զօտարն, լինէր խոհեմութիւն քաղաքական: Եթէ յայս առնել զնէր իւր, լինէր բարեկամութիւն: Եթէ 'ի ցոյց ընծայել զիւրն ճոխութիւն, լինէր ունայնութիւն: Բայց գիտումն մեծագործին դէտակն ունի առնել զգործն արժանի իւրում անձին: Թէպէտ և նիւթական վախճան գործոյն իցէ հիւրասիրութիւն, տեսական վախճան գործոյն է համեստութիւն: Զի մարթ է ումեք առնել հիւրասիրութիւն առանց մեծագործութեան, կամ գործ մեծագործ առանց հիւրասիրութեան: Վասն այսորիկ մեծագործն ոչ պարծի, և ոչ հպարտանայ ընդ գործս իւր. զի ոչ գործէ վասն պատուոյ, այլ վասն համեստութեան. և սիրտ նորա մեծ է միշտ քան զգործն: Զէ ինչ նմա փոյթ՝ թէ գովեսցեն զգործն ժողովուրդք. ինքն է միայն նորա գովիչ. զի ինքն է միայն որ գիտէ զչափ նորա: Զէ ինչ նմա փոյթ դնել 'ի վերայ զանուն իւր կամ զմակագրութիւն, զի ոչինչ փոյթ է նմա թէ գիտասցեն այլք, ո՞ր արարեալ իցէ զայն, և ե՞ր աղագաւ: Զի թէ գործն է փոքր, չհամարի զայն արժանի իւրում անուան. և թէ մեծ, ոչ անուն իւր 'ի խնդիր լինի տեսողաց, այլ տեսողք 'ի խնդիր լինին անուանն. որ 'ի համբաւոյ կամ 'ի յիշատակագրաց հետազօտէ գրի 'ի յիշատակարանս: Ապա եթէ ուրեք երբէք հեղինակն մակագրէ գործոյն զիւր անուն, չառնէ զայն որպէս լուար, առ առաւել ևս պայծառացուցանելոյ զանուն իւր շքեղութեամբ գործոյն, այլ առ առաւել պայծառացուցանելոյ զգործն շքեղութեամբ իւրոյ անուան: Որ միանգամ տեսանէր զհրաշակառոյցն զայն Պանթէոն [128] զանունբբ տիպ սրբոց տաճարաց, կառուցեալ պորփիւր սեամբք, պղնձի հեծանօք և ոսկի ձեղուամբ,

ընդարձակատարր և արժանաւոր ընդունելութեան Աստուծոյ ճշմարտի ամենայն սրբովք, և ոչ թէ Արեւի համայն աստուածովք համարէր ընդ միտս, թէ անկար է լինել գործ քան զայն մեծ և սքանչելի։ Բայց տպա ընթերցեալ զայն երեք բառ, ՄԱՐԿՈՍ ԱԳՐԻՊՊԱՍ ԱՐԱՐ, թուէր նոցա գործն կրկին քան որչափ էրն՝ մեծ և սքանչելի։ Կարծէին կերպարանափոխութիւն ինչ լեալ Ագրիպպասայ 'ի գործն, և գործոյն յԱգրիպպաս, մի զմիով եղեալս տարաբեալ 'ի պատուի։ Սայդ խոհ է թէ մեծանձն ըղձանայ պատուոյ մեծի՝ համեմատելոյ մեծութեան իւրոց գործոց. վասն այսորիկ յիրաւի էր Ագրիպպայ ըղձանալ փառաց և գովեստից վասն գործոյս մեծի։ Այլ այն խղճ լինէր սեպհական մեծանձնութեանն Ագրիպպայ և ոչ թէ մեծագործութեան նորա. զի մեծանձնութեանն կամակ՝ է պատիւն վասն գործոյ մեծի. այլ մեծագործութեանն կամակ՝ է մեծութիւն գործոյն։

## ԳԼՈՒԽ Ե.

*Թէ որով օրինակաւ գործիցի մեծագործն։*

Մեծագործութիւնն որպէս ցուցաք, է մեծ ինչ գիտութիւն. զի պահանջէ զկատարեալ ճանաչումն անհամար պարագայից, յորս հաստատեալ է վայելչութիւն գործոյն։ Զափազանցն 'ի վայելչութեան՝ չհայի ինչ 'ի պատշաճաւորութիւնն, միայն թէ գործն իցէ մեծ։ Փոքրավայելուչն՝ առաւել հայի 'ի նիազութիւն ծախուց, քան 'ի վայելչութիւն գործոյն։ Մեծագործն՝ առաջի առնէ գործ ինչ մեծ. բայց պատշաճող վախճանին՝ անձին, զօրութեան և այլոց պարագայից. զամենայն փոյթ 'ի մէջ առեալ, զի մի ինչ պակաս իցէ 'ի կատարելութենէ և 'ի վայելչութենէ։ Որ ոչ գիտասցէ զոր առնէ, ոչ կարողանայ առնել զայն որում ըղձանայ։

Առաջին և մեծ կանոն է, զի վախճանն իցէ պատշաճող գործոյն, և գործն վախճանին, ասէ Արիստոտէլ։ Այսպէս ծաղրական եղև մեծագործութիւն իւրումն Աղէքսանդրի. որոյ խոստացեալ յայսմ խմաստէ, 'ի մեռանիլ երիվարի իւրոյ ցլագլխի՝ նուիրեանց քաղաքս մի յանուն նորա. և անդ կանգնեաց նմա արձանաւորեալ գամբարան՝ արձանաւ նորա և մակագրութեամբ։ Եթէ կարծէր նա, թէ ոգի հօր իւրոյ Թագաւորի փոխադրեալ էր յայն երիվար, ապա ցուցաւ թէ է յիմար. զի ուսուցիչ իւր դատապարտեաց զփիլիսոփայութեան ոգեփո-



խութիւն։ Թէ ոչ հաւատայր, ապա ցուցաւ թէ է ապերախտ. զի չարար այնչափ պատիւ հօրն, որչափ երիվարին։ Այլ ոչ զի չարար այնչափ պատիւ հօրն, որչափ երիվարին։ Այլ ոչ զի չարար ... [as printed:] զի չարար այնչափ պատիւ հօրն, որչափ երիվարին։

Ուրիշ զինչ բայց նուիրագործել նմա տաճար, և պաշտել զնա. մնայր ինչ բայց նուիրագործել նմա տաճար, և պաշտել զնա.

թէ որ աշտանակէրն 'ի նա։ Զեցոյց ինչ մաւտորութիւն քան զսա Կիման Աթենացի՝ անուանեալն Մեծագործ, որ ջորւոյն յաղթականաց 'ի ձիընթացս ոլիմպիական խաղուց՝ կանգնեաց մեծագործ շիրիմս մօտ իւրումն։ Կարող էր պատուել զնոսա իւրով իսկ գերեզմանաւ, հանդերձ հասարակաց իմն մակախօ. գրութեամբ. Այս անկեալ գնին երեք անբանք յաղթականք, երկու ջորիք, և տէր նոցա։ Զէ արժան համապատուել զերկու ջորիք, և զտէր նոցա։ Զէ արժան համապատուել զանասունս ընդ մարդկան. և ևս առաւել զմարդիկ ընդ Աստուծոյ, ասէ Արիստոտէլ. զի առաւելու անպատշաճութիւնն բստ առաւելոյ անզուգականութեան։ Բայց և այնպէս յայս բաս առաւելոյ անզուգականութեան։ Բայց և այնպէս յայս տարապայման սահման ձգեցաւ մարդահաճութիւն ծերակոյտին. որ առաջի արար Տիբերիոսի փոխանակ յաղթական կամարի կանգնել մեծակառոյց ինչ տաճար, զի անդ երկրպագութիւն ընկալցի անուն իւր և աստուածութիւն։ Տիբերիոս թէպէտ և էր փառախնդիր, չառեալ յանձն զայն պատիւ, բայց 'ի բաց մերժեաց ասելով. Ոչ կամիմ այլ տաճար, բայց զձեր սիրտ. և ոչ այլ պատկեր, բայց զձեր յիշատակ։ Թուէր նմա տեսանել, թէ յետ մահուն իւրոյ այն տաճար 'ի հիմանց քանդեսցի. անուն իւր դատապարտեսցի. աստուածութիւն իւր ծաղածանակ լիցի. և պատկերք իւր գետնաքարշ գետընկէց լիցին, որպէս աղաղակեաց ժողովուրդն յետ բեսս իսկ նորա. Տիբերիոս 'ի Տիբերիս։ Բայց չեղեն այնչափ առ երեսս զգուշաւորք իւր յաջորդք. զի փոքր փոքր ընտելացեալ նոցա այնմ կերպարանափոխութեան մարդկան 'ի սուտ աստուածութիւնս [129], համարէին զանձինս լինել այն զոր ինչ այլք ասէին։ Ոչ անդադար դաւադրութիւնք, և ոչ արեան 'ի վերայ բղխմունք, և ոչ հետզհետէ խայտառակ մահք, բաւէին յայտնել նոցա, թէ աստուածութիւնք էին ծաղրականք. որովհետև որք աստուածացուցանէին զնոսա, նոյնք և ջրէին։

Հայի մեծագործն 'ի պատշաճողութիւն գործոյն ևս բստ բնաւորութեան տեղւոյն և ժողովրդեանն՝ որում առնէ։ Ի Թեբէ գործք առաւել պատշաճօղք և հաճոյականք էին տաճարք, և 'ի Սպարտիա՝ պատերազմական մրցանակք, զի այն էր բնաւորութիւն նոցա. վասն որոյ և ասացաւ. Թեբէ պանծայ նուիրանօք, և Սպարտա զինու զարդուք. ՅԱթէնս՝ դըպրոցք և իմաստասիրաց համալսարանք, և 'ի Կրետէ՝ ջերմուկք և թատրոնք. զի նոքա էին գինեականք, և սոքա փափկասեացք, վասն որոյ և ասացաւ յառակս, Կրետացիք չարաճճիք և դատարկապորտք [130]։ Սմին իրի 'ի Հռոմ ամենայն

ազգք մեծագործ գործոց եղեն ճաչողականք. զի առ նոսա զօրացեալ էին միապէս ամենայն առաքինութիւնք և ամենայն մոլութիւնք:

Եւ ոչ միայն ըստ ուղխութեան տեղւոյն, այլ և ըստ դիպողութեան ժամանակին չափէ մեծագործն զիւր գործս: Սերվիոս Տուղղոս Թագաւոր՝ յաւարէ յաղթութեան Լատինաց կառոյց զորձան Կապիտողեանն Դիոսի, զի ձօնեսցին նմա կողոպուտք: Ապպիոս Կղոդիոս, որում որպէս քննչի մեծի անկ էր զինուորական բարեկարգութիւն, համարեցաւ թէ չկայր նմա գործ ճաչողագոյն, քան զհորդել ճանապարհ զօրականին, յորոյ աներական մինչև ցայսօր երևի ողջին իւր անուն: Իբրև ցածոյց Օգոստոս արեամբ դաւադրաց զաւուր հայրենի, Մարկոս Ագրիպպաս փեսայ նորա կանգնեաց զտաճար Արէսի վրէժխնդրի: Եւ Վեսպասիանոսի տեսեալ, թէ յինքնակալել իւրում լռեաց քաղաքական պատերազմն Վիտելեանց և Ոթոնեանց, և փախստեայ խաղաղութիւնն եմուտ անդրէն ՚ի Հռովմ որպէս նոր ինչ աստուածութիւն, կանգնեաց զտաճար խաղաղութեան, և զամփիթէատրոն. զայն ՚ի շնորհակալութիւն իւրոց աստուածութեանց, զայս ՚ի խնդութիւն իւրոց կլաւմեա ժողովրդեան: Գործք որ մեծութեամբ և գեղեցկութեամբ առաւելեալ քան զամենայն մեծագործ ամբարտակ, ՚ի վէգ գային միայն ընդ միմեանս: Զորին հակառակն՝ այժժամ և տարադէպ մեծագործութիւն եղև այն գործ Օգոստոսի, որ յանձկութեան պահու, յորժամ յամենայն Թալս Թօլթափէլին քաղաքացիք որպէս ոսկերոտի ՚ի սովէ, արար մեծապատրաստ և շքեղաշանդէս խրախճան՝ որ չէր երբէք երևեալ, ընդ տիկնոջս և ընդ ասպետս, զդէմն Ապողոնի արկեալ զիւրեաւ զձանդերձ, որպէս և այլք զպէսպէս դից: Երկպառակեցաւ չքաւորութիւն հասարակաց՝ զեղխութեամբ սակաւուց: Այնուհետև ընդ ամենայն Հռովմ ոչ լինէր լսել, և ոչ երևէր ինչ. բայց կատակի յոգւոցհանութիւնք. և քրթմնջմանց գրութիւնք այսպիսի երգիծանօք. Ոչինչ են զարմանք՝ թէ Հռովմայեցիք մեռանին ՚ի սովէ, զի կերան դիք զամենայն զհամբարս: Աւաղում զեղծագործութիւն, և ոչ թէ մեծագործութիւն եղև այն՝ այնպիսւոյ իմաստնոյ ինքնակալի. բայց թերևս նուազեսցէ զզարմանս՝ տեսութիւն այնչափ լկտի Ափրոդիտայ ՚ի վերայ միոյ Ապողոնի [131]. որոց մին միայն բաւական է խելագարել զտասն Ապողոնս:

Ապա առաջի արարեալ փոխճան ինչ պատշաճօղ, այն որ ձեռնարկէ ՚ի գործ ինչ իսկապէս մեծագործ, այնուհետև ջանայ գտանել արուեստագէտս անուանիս և հմուտս ՚ի նկարագրել զձևն: Զի գեղեցիկ փոխճանն կախեալ կայ զգեղեցիկ սկզբնաւորութենէ. և այնպէս կերտուածոց՝ որպէս և նկարուց՝ յանուանէ արուեստագիտին կրկնապատիկ յարգ:



Յեօթանց սքանչելեաց աշխարհի, տանապատկերին Հռոդոսի երկպատկեցաւ անուն՝ յանուանէ Կարեսայ աշակերտին Լիւսիպպոսի: Ողիմպիականն Դիոս եղև մեծանուն յանուանէ Փիդիայ: Մեծակառոյց գամբարանն Արտեմիսեայ՝ ՚ի ճարտարութենէ չորից գերազանց ճարտարապետացն՝ Սկոպայ, Բրիաքսայ, Տիմոթեայ և Լեովքարայ. որք եղեն միմեանց գործակից և փառակից: Եւ տաճարն Արտեմեայ նկարագծեալ ՚ի Կորեբայ, յառաջ տարեալ ՚ի Մետագենայ, աւարտեցաւ ՚ի Թեմոկլեայ: Որոց բնաւք եղեն անմահք քան զիւրեանց ամբարտակս. զի ամբարտակք թաղեցան, և իւրեանց անուն դեռ կայ: Եւ ոչ վայրապար արուեստագէտք կոչեցան ճարտարք կամ Հանճարաւորք. զի այնպէս ճարտարութեամբ և հանճարով փոյթ ունէին վայելչութեան և համեմատութեան գործոց իւրեանց, մինչև մեքենական արուեստին փոխել յազատական: Որպէս ՚ի հանդերձանս զոհից գիտնաւոր օրինականք, նոյնպէս ՚ի զարդ տաճարաց ներհուն ճարտարապետք իմաստասիրեցին: Դից անտառայնոց կառուցանէին տաճարս, որոց ճարտարապետեալ յօրինուած էր գեղջուկ. ցածուն, խոշորագեղ, և հաստաբեստ. անուանեալ Կարգ Տոսկեան: Դից միջակայնոց էր Կարգն Դորիացի, փոքր մի ևս բարձր և սեթևեթեալ: Դից մեծաց՝ Կարգն Յոնիական, առաւել ևս մեծավայելուչ և ճոխազարդ: Բայց Ափրոդիտեայ և Հերայի և Արտեմեայ յերկիւրէին զկարգ Կորնթեան, ծաղկայօրինուորակ վայելչութեամբ խարսխաց, խոյակաց և ծնօտից: Իսկ յաւերժահարսանց՝ որպէս գերակայից և գլխովին մաւուրաց՝ զկարգն Բաղադրեալ, որ պանծագոյնն էր և նուրբ և գիրգ քան զամենայն կարգ:

Ապա ՚ի դնել առաջի գեղեցիկ ինչ և իմաստուն գաղափար, հայի ուշի ուշով իշխանն մեծագործ թէ վախճանն արժանաւո՞ր իցէ ծախուց. կամ թէ ծախքն արժանաւո՞ր իցեն վախճանին. զի մի ծախուց կամ գործոյն զկնի եկեսցէ ապաշաւ: Ադրիանոս կայսր ՚ի հանդիսի որդեգրութեան Կեոնիոսի՝ ՚ի տօնախմբութեան մեծագործութիւնս, ՚ի շինուածս, ՚ի խաղս, ՚ի խրախճանս, ՚ի պարգևս հրապարակականս և առանձնաւորս, ՚ի գերապանծ հանդերձանս՝ ծախեաց տասն միլիոն ոսկի: Յաւուրս տօնախմբութեանն սկիզբն եղև կոծոյ: Կեոնիոս հիւանդացաւ ՚ի մահ: Ադրիանոս խելայեղեալ գոչէր. Վա՜յ է ինձ, քանի՜ ոսկի ՚ի զուր կորուսի: Առաւել ցաւ էր նմա կորուստ դրամոյն քան որդւոյն, զի դիւրագոյն էր նմա որդեգրել այլ տասն Կեոնիս, քան հաւաքել այլ տասն միլիոնս: Եւ նովին գնովք արարեալ էր արդեօք գործ՝ ոչ հրճուողական, բայց հասարակաց կարի պիտանի: Զի վասն ճանապարհին Ապպեայ չեղեն այնչափ ծախք: Այլ առաւել ևս յիրաւի էր սարջանալ Դեմետրի ուժեմն, որ ծա֊

խեաց զերկերիւր հազար նոմոսս ոսկւոյ 'ի ծախս սրահկականս. և Մեսաղայ, որ ծախեաց երկուս մեծագանձ հայրենի ժառանգութիւնս 'ի կատակերգակս, որ և եղև յետոյ առակ կատակերգուաց, որպէս և Մեսաղինա առակ եղերերգուաց:

Բայց կարևոր ես մտածութիւն է կշռել զգործն ընդ իւրում զօրութեան: Առանց այսր կշռութեան անհնար է զերծանել 'ի միջէ յերկուց աստի անպատշաճութեանց: Զի կամ գործն մնայ անկատար, և որ արարն՝ լինի առակ նշաւակի. և կամ որ արարն՝ այնուհետև զօշաքաղէ արծաթ՝ ուստի չէր արժան: Զի որպէս գրէ Պոլիտիկոս. Ի սպառիլ գանձուն փառասիրութեամբ, անդրէն մթերի անիրաւութեամբ: Առ երկրորդս այս անպատշաճութիւն՝ շատ է 'ի բիւրուց օրինակաց մի միայն օրինակն մեծի բրգան Կղէոպսի արքային Եգիպտացւոց, որ առաւելաւն 'ի բարձրութեան քան զհաստութիւն մնաց, և յիրաւի 'ի համար դասեցաւ եօթանց սքանչելեաց աշխարհի: Ի սակս սորա սպառեալ Կղէոպսի զամենայն զիւր գանձս. և տեսեալ թէ ոչ է ձեռնհաս հասուցանել 'ի կատար, եգիտ նոր ինչ ոսկեհանք յիւրում իսկ տան, վաճառեալ զիւրոյ դստերն զպատիւ: Եւ ո՞ւր է զոր ասացն Արիստոտէլ, թէ վախճան մեծագործութեան է հոյել 'ի համեստութիւն. զի Կղէոպսէ առանց ընկեցիկ առնելոյ զհամեստութիւն 'ի տանէ 'ի դուրս՝ չկարողացաւ 'ի կատար հասուցանել զիւր բուրգն:

Մեծ անպատշաճութիւն է չչափել զիւր ինչս, բայց ոչ փոքր է և այն՝ չչափել զիւր կեանս: Այսմ օրինակ եղեն առ իշխանս՝ այլ երկու սքանչելիք. գամբարանն Արտեմիսեայ, և տաճարն Եփեսոսի. գործք որոց անհնար էր կատարումն առնուլ 'ի վերայ երկրի, թէ ոչ արարողք նոցա լինէին ընդ երկրաւ: Որ սկսաւն զնոսա, ոչ ուրախ եղև տեսլեամբ կատարմանն. և որ կատարեացն՝ ոչ կալաւ յանձին պարծանս սկզբն առնելոյ նոցա: Թող զի մեծ սքանչելիք սկսին, թէ յաջորդն կատարեսցէ զգործ նախորդին: Իբր զի իւրաքանչիւր ոք սիրէ զիւր մտաց ծնունդ. և այժմ մեծ համարի անշքութիւն՝ վաճառել զիւր ինչս առ 'ի կատար հասուցանել զայլոյ խորհուրդս, ըստ ախմար հաւու՝ որ 'ի թուխս նստի 'ի վերայ ձուոց որ ոչ իւր իցեն: Սակայն իմն է այս, որպէս յիւրում տեղւոջ ասացի, թէ մեծանձին է թողուլ զգործն անկատար. ցուցեալ թէ 'ի կուրծս նորա տարածանիմ մեծ ևս քան զկար. և թէ դիւրին է ժամանակի 'ի նմանէ պակասիլ, քան նմա 'ի ժամանակէ: Բայց մեծանձնութիւնն չէ մեծագործութիւն. նա չափէ զմիտսն, և սա զգործն:

Զհուսկն ասացից. մեծագործն յամենայն 'ի գործս իւր է ժրաջան և զգուշաւոր և չքեղ. զի մի ինչ պակաս իցէ 'ի կատարելութենէ և 'ի վայելչութենէ: Պանծալի հանդիսացաւ յայսմ Պօղոս Եմիլիոս. որ զինչ և առնէր, եթէ շինուածս, եթէ խաղս, և եթէ խրախճանս, յօրինէր զայն մեծագործութեամբ և կարի իմն զգուշաւորութեամբ: Զարմանային Յոյնք թէ զիարդ միտք նորա զբաղեալ 'ի մեծամեծս, այդպէս ժրաջան էր 'ի մանունս: Առ որս առնէր պատասխանի. Նոյն արուեստ է քաջ կարգել զպատերազմ, և քաջ յարդարել զսեղան. զայն յահարկութիւն թշնամեաց, և զայս՝ 'ի ձգել զսէր քաղաքացեաց: Միայն Պարրասիոս 'ի պատկերահանս արժանացաւ մականուանիլ ἁβροδίαιτος, այս է անվթար. զի հասուցանէր զնկարս իւր յայնպիսի վերջին կատարումն, մինչև այն ինչ 'ի հանդէս հանէին այլ ամենայն պատկերահանք զգործս իւրեանց չև ևս աւարտեալ, զի անկատարութեամբ ծածկեսցի թերութիւն նոցին, և Ապեղէս իսկ ստորագրէր անկատար բայց թէ առնէր. սա միայն կարողացաւ ստորագրել, թէ Պարրասիոս արար: Սոյնպէս 'ի մէջ ամենայն մեծագործ գործոց՝ միայն Պանթէոն արժանացաւ այնմ մակագրութեան թէ Մարկոս Ագրիպպաս արար:



## ԳԼՈՒԽ Չ.

*Յաղագս փոքրավայելչութեան և չափազանց վայելչութեան:*

Չափազանցն 'ի վայելչութեան, և փոքրավայելուչն՝ ոչ 'ի վար արկանեն 'ի գործս իւրեանց զայլ ոք ճարտար, բայց զիւրեանց բնաւոր բերումն: Զի թէպէտ և հրաշափառ իցէ օրինակն, երկոքեանքն զայն խանգարեն: Նա 'ի վերայ յաւելեալ անպէտ մեծութիւն, սա խնայեալ յաշխատութիւն և 'ի ծախս. ոչ գիտելով ոչ սորա և ոչ նորա, ո՞ր իցէ համեմատութիւն և վայելչութիւն: Չափազանցն 'ի վայելչութեան՝ գործէ կամակար, բայց անմտաբար: Փոքրավայելչին գործ՝ խառն է 'ի կամաւորէ և յակամայէ. զի մղէ զնա փառամոլութիւն, և յետս ընկրկէ ագահութիւն: Վասն այսորիկ մին աղաւաղէ զգործն կարի իմն շռայլութեամբ, և միւսն խանգարէ կարի իմն գանգատանօք: Նա նման է ընձառիւծու, որ թէ ոչ փոյթ զբուռամբ ածէ զորսն, լքեալ թողու: Սա նման է լերին՝ որոյ երկնեալ մեծ ինչ երկն, յետ բազում գղրդմանց ծնաւ զչնչին մուկն: Ի գործս չափազանցին 'ի վայելչութեան՝ տեսցես դու արարս մեծամեծս արքական սրտի. բայց միշտ ունելով ինչ նիշ՝ անմտութեան: Եւ 'ի գործս փոքրավայել-

չին տեսցես դու ձիգն մեծագործութեան, բայց միշտ ունելով ինչ արատ կծծութեան: Որպէս ծնունդք խառնածինք՝ ծնեալք յերկտեսակ անասնոց, միշտ զնմանութիւն բերեն յոռեգոյն տեսակի, նոյնպէս գործք սորա՝ քանզի ծնանին 'ի մոլութենախառն առաքինութենէ, միշտ զնմանութիւն բերեն զմոլութեան քան զառաքինութեան: Անդէն եղև չափազանց վայելչութիւն Ներոնի, որ հրձիգ արար զՀռոմ, զի տեսցէ վերականգնել ևս գեղեցիկ, և անուանել զայն յիւր անուն՝ Ներոնիա: Բայց անողորմագոյն եղև յիմարութիւն նորա. զի զծաղու եկեալ 'ի հասարակաց հեծութիւնս, և զՀոմերոսի զգեցեալ հանդերձ, ջութակ 'ի ձեռին, 'ի հրայրեացն Հռոմայ՝ երգէր ողբս հրկիզութեանն Տրովադայ: Այլ Տրովադա (այսինքն Հռոմ) քինախնդիր եղև նմա. և Հոմերոս (այսինքն Ներոն) յետ երգոյն եկն 'ի լալիւն: Ծաղու արժանի եղև փոքրավայելչութիւն նախորդի նորա Կաղիգուլայ. որոյ փքացեալ ընդ նշանաւոր յաղթութիւնն, զորոյ լուաւ զաւետիս, գրեաց առ ծերակոյտն զյիշատակաց արժանի զայս բան. Պատրաստեցէք ամենամեծ յաղթանակ ամենանուաղ ծախիւք: Ուր տեսանես 'ի սիրտ նորա տարրացեալ զգէր 'ի վերոյ մեծագործութիւնն ընդ յետին գծծութեան: Այս էր հրէշ ինչ խառնածին:

Ի վերոյգրելոց աստի ունիս առնուլ 'ի միտ առաւելապէս, թէ քանի սակաւք եղեն յաշխարհի գործք անթերի մեծագործք. որովհետև յեւթ սքանչելիս իսկ աշխարհի է տեսանել թերութիւնս էապէս հակառակօղս ճշմարիտ մեծագործութեան: Թէ զԱրտեմեայ տաճարն տես, թէպէտ և ազնուագոյն առարկայ մեծագործութեան է տաճարն վասն գերակայութեան վախճանին, սակայն խոչ է նմա աստուածութիւնն. զոր սեղծաբանէին ճառասող բանաստեղծք, այլ յիմաստնոց ոք ոչ հաւատայր: Մինչև չիմանալ քեզ, ո՛ր անմտութիւն զրգռեաց զայնչափ թագաւորս՝ հիմնել զայնպիսի ընդարձակ և բազմածախ ամբարտակ 'ի վերայ բանաստեղծական ինչ ունայնութեան: Յորմէ մարթ է հաւատալ, թէ որ այրեացն զայն՝ առաւել ևս իմաստուն եղև քան զամենեսին զնոսա որք շինեցին: Եւ թերևս 'ի նախանձախնդիր փիլիսոփայից ոք էր Երոստրատոսն այն որ հրդեհեաց զայն տաճար, արժանացեալ՝ զի իւր անուն պայծառասցի նորուն լուսով, և շինողացն անուն կացցէ մնասցէ 'ի մթան: Թող զայն, զի թէ և գործն լինէր իսկապէս մեծագործ, ո՞ւմ արդեօք արժան էր տալ զմեծագործդ անուն: Ոչ հիմնարկուին՝ զի ոչ կատարեաց. և ոչ կատարողին՝ զի ոչ հիմնարկեաց, որպէս ասացաւ: Ուստի զայն տաճար Մարտիալէս կոչեաց Գործ յուշիկ, և Կրատինոս՝ Դանդաղ. և Ճարտարապետի նորա Կորեբայ՝ մականուն կոչեցաւ Յանդուգն: Այս մեծագործ



եղև Ամբարտակն Արտեմիսեայ, ըստ նիւթոյն, ըստ արուեստին, և ըստ բարձրութեան, որ ընդր զսահմանս օդոյ, որպէս երգէ Մարտիալէս: Բայց թէ հայեսցիմք 'ի վախճանն փոխադրելոյ զլեառն ինչ որբատառ քարանց կճեայց՝ 'ի ծածկոյթ ոսկերաց մոխրեալ ինչ շաղղի՝ առանց ինչ հասարակաց օգտի, յայտ է թէ չեղև ինչ ճշմարիտ մեծագործութիւն, այլ անմիտ չափազանց վայելչութիւն. որ և ետ օրինակ և անուն այլոց նմանակ անմտութեանց: Զնոյն մարթ է ասել զնժդժական բրգանց Եգիպտացւոց, որք 'ի սակս այսպիսի անպիտան վախճանի՝ յաղքատութիւն խոնարհէին զթագաւորութիւնս. ևս առաւել բուրգն այն արքային Կղէոփեայ՝ քան զամենայնն սոսկալիթիւր և անօթալի: Ողիմպիականին Դիոսի թէ հայիմք յանձն, էր անսուրբ ինչ: Թէ 'ի նիւթն, յանկագոյն ևս էր Դիոսի արձան ինչ յոսկւոյ՝ քան 'ի փղոսկրէ, զոր անգոսնէ Մարտիալէս: Թէ 'ի մեծութիւնն, չէր ինչ սքանչելի. զի չէր մարմին միաձոյլ, այլ ագուցիկ 'ի կտորոց: Թէ 'ի ճարտարութիւն արուեստագիտին, մարթ էր նմա առնել ինչ գործ մեծագին, այլ ոչ ընդվայրածախ, որով և անմեծագործ: Անդրիանտակերն Հռոդոսի՝ թէպէտ և յոյժ էր սքանչելի վասն վիթխարութեան, բայց նկարագրիւր յանձն նորա բանաստեղծական ինչ այլաբանութիւն, և մնոտի առասպել, և այնպէս անհիմն էր յամբարտակն՝ որպէս և 'ի գլուխն: Ոչ 'ի միտ ածին Հռոդացիք, թէ այնպիսւոյ յաղթ մարմնոյ, որ 'ի կշխակայր յերկուց ոտից վերայ, անհնար էր ընդ երկար կալ յակատանի՝ 'ի կղզւոջ, ուր ստէպ լինէին սասանութիւնք: Եւ արդարև եղև այն հրէշ յիսնամեայ միայն, և ոչ աւելի. զի գետնաշարժն ամաց 'ի ծով զայն անպիտան բեռն. և արեգականն Հռոդոսի եղև յանկարծակի իւր մուտ, որ այլ ոչ ծագեաց: Աշտարակն Փարոսի քան զամենայն նախայիշատակեալ գործս եղև յօգուտ հասարակաց և պիտանի, 'ի ցոյց նաւահանգստի, 'ի լինել բոցաճաճանչ լուսոյ զարեգական տեղի: Յայս սակս հաստահիմնութիւն նորա և բարձրութիւն էին վայելչականք, բայց զարդքն ընդվայրածախք էին և աւելորդք: Եւ զի վասն այսր ևեթ էր զարմանալի, ըստ առաւելոյ զարմանութեանն առաւելաւ և նորա չափազանց վայելչութիւն: Եւ որ չար ևս է, լուսաւորութիւն իւր ուսոյց բարբարոսաց զնաւահանգիստն, որք և առին զայն: Միայն գործն Շամիրամայ ամենայնիւ եղև մեծագործ. ըստ մեծութեան, ըստ մեծածախութեան, և ըստ վախճանին, հայեցեալ 'ի կերպ քաղաքաւորութեանց այնց ժամանակաց, յորս ոչ ինչ բարձրութիւն և ոչինչ խորութիւն պարսպաց էր աւելորդ: Բայց 'ի պաշտպանութիւն այնց՝ պիտէր և բազմամբոխ ժողովուրդ, որպիսի Բաբելոնացւոցն էր. և սիրտ մեծ՝ որպիսի Շամիրամայն էր: Իսկ ամփիթէատրոնն Վեսպասիանոսի, որ ըստ

գրելոյ Հռոմկլայի ածընկէց էր դէպ վերնականաց, մտածեալ միայն յինքեան և յիւրում վախճանի, չեղև ինչ գործ մեծապէս մեծագործ. զի էր 'ի պէտս դատարկ անձանց Հռոմայ, և ոչ կրօնաւորաց կամ պատերազմողաց նորա: Բայց թէ ընդդրէ ոք զսա ընդ միւս գործ տաճարին խաղաղութեան, 'ի կողմն անդ հեթանոսական մոլորութեան՝ խոստովանելի է, թէ այս կայսր բարձրագլուխ պարծի 'ի մեծագործութեան քան զամենայն հեթանոսս:

Յայսմ ամենայնէ ունիս իմանալ, թէ քանի տարժանաւոր է առաքինութիւն մեծագործութեան, փոխանակ զի այնչափ դժուարին է առնել գործս մեծագործս, և այնչափ դիւրին ազգիւս նոցա:

# ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՒՐՈՑ ԾԱՅՐԻՑ

### ԳԼՈՒԽ Ա.

*Թէ զինչ իցէ մեծանձնութիւն:*

ԱՅՍՐ առաքինութեան այնչափ են գեղեցիկ և գերապանծ յատկութիւնք, մինչև ոմանց իմաստասիրաց շփոթել զսա ընդ արիութեան, զի տանի ծանունց: Կիսոց՝ ընդ մեծագործութեան, զի գործէ զմեծամեծս: Կիսոց՝ ընդ արդարութեան, զի ոչ զարտուղի յուղղութենէ: Կիսոց՝ ընդ իմաստութեան, զի գիտէ ընտրել իւրաքանչիւր բախտի: Այլ է շփոթել զնիւթն ընդ տեսակի, կամ զյատկութիւնս ընդ էութեան. ունելով առաքինութեանց այնչափ սիրելութիւն ընդ միմեանս, որ չխորշին ծառայել միմեանց: Բայց Արիստոտէլ, որ զանազանէ զառաքինութիւնս ըստ առարկայից նորա, սահմանէ զսա այսպէս. Մեծանձնութիւնն է Առաքինութիւն ոգւոյ՝ հաստատեալ 'ի միջասահմանութեան զմեծամեծ պատուօք, միայն 'ի սակս համեստութեան: Արդ այս սահման նախ առաջին տարասորոշէ զմեծանձնութիւն յայլ ամենայն առաքինութեանց, որք չհային 'ի պատիւ՝ որպէս յիւրեանց առարկայ: Յետ այսորիկ որոշէ զնա 'ի պարկեշտութենէ. զի պարկեշտութիւնն հայի 'ի միջակային պատիւս, և մեծանձնութիւնն 'ի մեծամեծ պատիւս: Որպէս մեծագործութիւնն տարբերի յառատաձեռնութենէ. զի սա յածի զմիջակային ծախիւք, և նա զմեծամեծ ծախիւք: Իբր զի մեծութիւնն էական իմն է առարկայից նոցա, որպէս և անուան նոցին: Հուսկ ուրեմն որոշէ զմեծանձնութիւնն յերկուց իւրոց մոլեկան ծայրից. այսինքն է 'ի Փոքրոգութենէ, և 'ի Փըքացմանէ: Վասն զի փոքրոգութիւնն թէպէտ և ունիցի մեծամեծ առաքինութիւնս, չհամարի արժանի պատուոյ մեծի: Փքացումն անձկայ պատուոյ մեծի, թէպէտ և չունի առաքինութիւնս մեծս: Այս մեծանձնութիւնն է այն, որոյ ծա-

նուցեալ յինքեան առաքինութիւնս մեծս՝ համարի արժանի մեծի պատուոյ։

Եւ այս ևս առաքինութիւն, որպէս ասացաք զմեծագործութենէ, ունի զիւր միջասահմանութիւնն 'ի մեծութեան։ Մանաւանդ թէ այս իւր միջասահմանութիւն փակէ ընդ իւրև բաղում և մեծամեծ միջասահմանութիւնս։ Ճանաչել յինքեան մեծ ինչ արդիւնս, և անձկալ մեծի պատուոյ, է արդար իմն միջասահմանութիւն. զի արդարութիւնն տրամաբաշխական՝ մեծագոյն արդեանց նշանակէ մեծագոյն վարձս։ Եթէ պատիւ անձին ընծայի, ոչ կարի իմն ուրախանալ, և եթէ չընծայի՝ ոչ կարի իմն տրտմիլ, այս է իմաստասիրական իմն միջասահմանութիւն։ Վայելել 'ի մեծ պատիւս՝ որպէս արժան է, և խոժոռիլ ընդ անպատուութիւնս՝ միայն որչափ արժան է, այս է խոհական իմն միջասահմանութիւն։ Ըղձանալ պատուոյ մեծի և արհամարհել զայն, այս է մեծանձնական իմն միջասահմանութիւն. որպէս յիւրում տեղւոջ լուիցես։

## ԳԼՈՒԽ Բ.

### Թէ ո՛վ իցէ մեծանձն։

Թէպէտ և մեծանձնութիւնն սեպհականապէս չէ արիութիւն, և ոչ մեծագործութիւն, և ոչ արդարութիւն, և ոչ իմաստութիւն, որպէս ասացաւ. բայց և այնպէս մեծանձնն լինի արի, մեծագործ, արդար, և իմաստուն. և լինին 'ի նմա ամենայն առաքինութիւնք բարեկարգեալք կրից, կամաց, և մտաց։ Որովհետև 'ի խանգարել զծայրագոյն կատարելութիւն սրտի՝ շատ է մի միայն անկատարութիւն, որպէս 'ի խանգարել զծայրագոյն գեղեցկութիւն մարմնոյ՝ շատ է մի միայն պակասութիւն։ Լինի սիրտ նորա սեղան համեստութեան. տխրժակ նորա զերծ յամենայն ցածուն տխրժանաց. բան նորա չափ բանաւորութեան. խոհեմութիւն նորա ջահ ճշմարտութեան և մանգաղ երկբայութեան. միտք նորա սանդուղք առաքինութեանց, և գպրոց գիտութեանց[132]. բայց գիտութեանց օգտակարաց քան հետաքննականաց, մեծաց քան նրբից. մտադիւր իմաստասիրեալ նորա յանձին գիտաւոր լռութեամբ Պիւթագորայ, քան ճառասող իմաստակութեամբ Պրոտագորայ և Ակադեմեան։ Մինչև կարող լինել մեզ ասել թէ Մեծանձնութիւնն է չափաւոր ինչ իղձ պատուոյ մեծի, հիմնեալ 'ի մեծութիւն ամենայն առաքինութեանց համախմբելոց։ Կամ թէ մեծութիւն ամենայն առա-



քինութեանց իցէ նիւթ մեծանձնութեան. և չափաւոր ջան պատուոյ մեծի իցէ անսակ նորուն։ Ուստի Արիստոտէլ զմեծանձնութիւնն կոչեաց պսակ ամենայն առաքինութեանց։

Յայսմ մեծ է վերստացութենէ մեծանձին՝ յառաջ եկին այն ամենայն վերտառութիւնք պատուոյ, զորս ախնածութիւն ժողովրդեան արժանապէս սեպհականեաց մեծաց իշխանաց. վասահացեալ թէ ըստ մեծութեան իշխանութեան է և մեծութիւն ոգւոյ և առաքինութեանս, ոչ միայն յընտրութեամբ կարգեալ իշխանաւորս՝ վասն ընտրողացն խոհեմութեան, որ ընտրէ զլաւն 'ի բարեաց, այլ և 'ի պայազատութեամբ իջեալ իշխանաւորս, զօրութեամբ բարւոք սնդեան՝ որ առնէ զիշխանորդիս արժանաւորս ընտրութեան։ Այսպ իշխանաց մեծանձանց ընծայեցաւ Μεγαλοψυχος[133] անուն. զի մեծանձնութիւնն պայծառացուցանէ զամենայն առաքինութիւնս, որպէս լոյսն երևելի առնէ զամենայն զգոյնս մթին մարմնոյ։ Վեհ անուն՝ ըստ ասից Արիստոտէլի՝ սեպհական է մեծանձին. զի վեհութիւնն է եզր ինչ առնչական, որ ընդ իւրև փակէ զնուազն, և 'ի վերայ բերէ իմն աւելի. և մեծանձնութիւնն 'ի հասարակ առաքինութեան վերայ յաւելու առաւելութիւն ինչ կատարելութեան։ Ըստ այսմ և [illegible] անուն. զի մեծանձնն առ այլովք առաքինեօք՝ է որպէս զՎեսուվ լեառն Լիգուրիոյ առ մօտակայ լերամբք, որոյ գագաթն սարրաս է նորա։ Ուստի և [illegible] անուն։ Զի միտք մեծանձին իբրև զգագաթն Ողիմպեայ լերին՝ անցեալ զանցեալ զամպովք և զմրրկօք՝ վայելէ 'ի յաւերժական և յանխռով պարզութեան։ Այսպ յայս սակս Μεγ. անուն յիւրում ընծայի Պոմպէոսի, այլ ոչ նոյնպէս Աղեքսանդրի. վասն զի ոչինչ բարի առա 'ի սորինա է ճշմարտապէս մեծ՝ բաց յառաքինութենէ. և սիրտ մեծանձին է ընդունակ ամենայն առաքինութեանց։ Վասն այսորիկ մեծանձինք կոչեցան դիւցազունք, որպէս թէ դից ծնունդք. ուստի զԱքիլլէս բանաստեղծք կոչեցին վեհանձն Նեւպիդէ, աչեղ ծնունդ որոտաձայն Դիոսի։ Զի թէ միայն առաքինութիւնն է որ առնէ զմարդիկ աստուածանման, ոչ ինչ են վարմունք թէ առաքինութիւն ինչ դեր 'ի վերայ քան զմարդկային առաքինութիւնս, ընդ թիւ մացէ աստուածականաց, և ստացիչ նորա համարեցի Աստուած երկրաւոր։

Ներքին մեծութեան անձին՝ բնաւորապէս համեմատ լինի և արտաքին առուգութիւն մարմնոյ. գոլով բնութեան ներհուն ճարտարապետ բարեձևութեան։ Այսպ մեծանձնն ըստ համեմատութեան լինի և մեծամարմին, մեծագլուխ, մեծակնեայ, ծանրաքայլ, բարձրաձայն, և գոյն նորա անփոփոխ։ Հոգին՝ առէ ներբողաբանն, կամ գտանէ մարմին ինչ իւր արժանի, և կամ առնէ։ Որպէս Թագաւորն մեղուաց 'ի խաւն

գնդի նոյա թռուցեալ՝ 'ի մեծութենէ և 'ի վեհանձնութենէ ծանուցի, նոյնպէս մեծանձնն տեսլեամբ ծանուցի 'ի մէջ առաքինեաց: Որ ոք զնա տեսանէ, ընդ միտ ածէ. Յայժմ մեծի տաճարի ոչ գուշակեաց բնակէ վերին զօրութիւն: Այսպիսի նկարագրութիւնս առաջի առնէ մեզ Հոմերոս յիւրումն Ագամեմնոնի 'ի յօրինակ մեծանձին. Ցերեւայ նորա նշոյլք վայելչ փայլատակէին: Ըստ սրտի և մարմինն լինի յայտ: Ջսորին հակառակն, զփոքրոգին նկարագրէ Արիստոտէլ 'ի գիրս բնազննութեան՝ փոքրոգեմ, մանրակնեաց, նուաղաձայն, կարճահասակ. զոր թէ տեսանէ ոք, 'ի միտ առնու, թէ յայն անձուկ օթարան ոչ բնականայ ոգի մեծ: Եւ օրինակ փոքրոգւոյ առաջի առնէ մեզ զԼեկագիոս կորնթացի, որոյ էր մեծ զօրութիւն, այլ սիրտ տկար: Կապիկ մեծանձին է 'ի դէմս՝ փքացեալն. նա մեծ եւս և ուռուցիկ և լայնալանջ. բայց յայն կերպարան երեւի խառնուրդ նանրութեան և զաւանութեան, յոր կերպարան նկարագրէ բանաստեղծն խաւլական Լուդովիկոս Արիոստոյ, զամբարտաւանն Որլանդէս յանէլն.

Որդի է սա հըպարտութեան սըրամըտութեան.
Ի սպառնալիս 'ի թշնամանս բանից բերան.
Աչս արձակէ՝ զօրհանապազ խոժոռական,
Եւ բարձրայօն յաղջամղջին կայ 'ի մըթան:

## ԳԼՈՒԽ Գ.

### Առարկայք մեծանձնութեան:

Առարկայ մեծանձնութեան է վարձն պատշաճող մեծանձին վասն իւրոց մեծամեծ առաքինութեանց, որպէս արմաւենին յաղթողին: Բայց ո՞ր իցէ այս մեծ վարձ: Գուցէ ընթերցեալ իցէ քո կամ լուեալ զայն անուանի դրութիւն փիլիսոփայից ոմանց, թէ Միայն առաքինութիւնն է իւր ինքեան վարձ: Բայց այս դրութիւն կամ խոպան սուտ է, և կամ խրթնիմաց: Վասն զի արժանաւորութիւն վարձուն ոչ կարէ լինել վարձ արժանաւորութեան. իսկ զի արժանաւորութիւն է որակութիւն ներքին և նախընթաց, և վարձն գործ արտաքին և հետեւորդ: Այն զի, եթէ առաքինութեան հնար էր արժանանալ նոյն առաքինութեան, լինէր նա գործ և պատճառ իւր ինքեան. և եթէ լինէր գործ այլոյ առաքինութեան, լինէր յանդունս յառաջանալ 'ի պատճառս: Եւս առաւել չէ ճշմարիտ թէ ազնուութիւն, գեղեցկութիւն, և այլ պարգեւք



բնութեան, վարձք իցեն մեծանձնութեան: Զի ոչ լինի արժանաւորիլ այնմ, որ վաղու եւս է 'ի ստացութեան յառաջ քան զարժանաւորիլն. և պարգեւք բնութեան յառաջեն քան զստացութիւն առաքինութեանց, եւս առաւել մեծանձնութեան՝ որ յառաջ ենթադրէ զստացութիւն այլ ամենայն առաքինութեանց և պսակ է նոցա: Իսկ արդ եթէ առաքինութիւնն է արժանաւորութիւն ներքին, և վարձն է բարի ինչ արտաքին. նա է ստացեալ յառաքինւոյն, և սա պարգեւեալ 'ի սիրողէ առաքինութեան, պարտ և պատշաճ է ասել թէ լաւագունին քան զամենայն բարիս հոգւոյ, որպիսի է մեծանձնութիւնն, վայել է 'ի վարձ մեծագոյնն և լաւագոյնն քան զամենայն արտաքին բարիս. և այն է Պատիւ: Զոր օրինակ առաքինութիւնն ոչ այլ ինչ է, բայց համեստութիւն, նոյնպէս էական յատկութիւն առաքինութեան է լինել պատուաւոր: Եւ զոր օրինակ, առաքինութիւնն է որակութիւն ինչ աստուածային, որ առնէ զմարդ աստուածանման, որպէս ասացաւ. նոյնպէս անհնար է արժանագոյն վարձ փոխատրել նմա քան զպատիւ. զի Աստուծոյ իսկ ոչ ինչ լաւ քան զայն կարօղ եմք ընծայել: Ի կորուստ մատնին ինչք 'ի պահել զկեանս. կորնչին կեանք 'ի պահել զպատիւ. զի այնչափ յետնորդք են մարմնաւոր բարիք քան զպատուաւոր բարիս, որչափ օգտակար բարիք քան զմարմնաւոր բարիս: Ապա սխալէ յուղւոյ, որ կամի մտանել 'ի տաճար պատուոյ առանց անցանելոյ ընդ առաքինութեանն շաւիղ. զի սա դուռն է նորա: Այդպէս արքայ Մոլոսացւոց կամէր ամուսնացուցանել զչքնաղ զիւր դուստր և զժառանգ, այսպիսի եդեալ պայման, զի որ անձկայ առնուլ զնա կնութեան, և յաջորդ լինել թագաւորութեանն, յաղթեսցէ այլանդակ շանն՝ որում անուն կոչէր Կերբեր[134]: Գեղեցիկ հարսն է փառք. բայց ոչ կարողանայ առնուլ զնա կնութեան, որ ոչ յերկիր կործանէ զԿերբերն բազմագլխեան զմոլութիւն: Որ ոք զհետ պնդի լինել 'ի պատուի վասն առաքինութեանց իւրոց նախնեաց, զոտար փոխատուի զփոխ պահանջէ. և իւր մոլութեամբք զփոխատուութեան անուն աղճատէ: Որ այլոց երախտեօք և ոչ իւր արժանաւորութեամբ բարձրացեալ յիշխանութիւն՝ պահանջէ պատիւ, նման է գրաստուն որ իւր երկրպագուս կարծէր զերկրպագուս պատկերին Իսիդեայ, որ կայր 'ի քամակ նորա[135]:

Իսկ արդ եթէ մեծանձնութիւնն է մեծագոյն և գերագոյն և պանծագոյն և գեղացնագոյն 'ի մարդկային առաքինութիւնս, հարկաւ նմա վայելէ մեծն և գերագոյնն 'ի պատիւս որ ընծայլին մարդկան: Ապա սուտ է ասացեալն Սենեկայ թէ Մեծանձին է փոքու շատանալ պատուով: Մոլութիւն է այդ փոքրոգւոյն. որոյ անգիտացեալ զիւր առաքինութիւն, ոչ

չափէ զիւրն արժանաւորութիւն: Ի մէջեան Հերակլեայ ոչ մտանէին ձանձք. և 'ի սիրտ մեծանձին ոչ մտանեն հետամտութիւնք չնչին պատուոյ, որ 'ի չնչին ժողովրդենէ: Առիւծք զորս ծաղկապսակ վարէին 'ի թատերական հանդէսս, բարկութեամբ պատառոտէին զծաղկեայ պսակն 'ի տեսանել զատուեր նոցա: Իսկ զէնլիք անզօրք՝ գնային իբր խայտալով 'ի զոհ ծաղկազարդ պարանոցօք և ոսկեզարդ եղջերօք: Այսպիսի խտիր է ընդ մէջ փոքրոգւոյն և մեծանձին. նա խայտայ ընդ դոյզն փաղաքշանս, սա մերժէ զայն և արհամարհէ: Այսպատիւն է ճշմարիտ տարրկայ մեծանձնութեան. զի այն է ճշմարիտ վարձ առաքինութեան: Բայց քանզի արժանաւորն աւելւոյն՝ արժանի է և նուազին, յայտ է թէ արժանաւորն գերագոյն և իբր դիւցազնական պատուոյ 'ի մէջ մարդկան, արժանի է և ձոխութեան և բազում ստացուածոց, լանջագեղ կամարաց և պսակաց. զի փոքր բարիք են յաւելուածք մեծաց, առ որս և կարգին 'ի բնէ: Մինչև լինել մեծանձին կամ մեծահարուստ կամ արժանի մեծի հարստութեան. կամ իշխան, կամ արժանի իշխանութեան: Զի որ իշխէ բախտի, գիտէ վարել 'ի պէտս զբարիս բախտի. և որ գիտէ հրամայել անձին, գիտէ հրամայել և այլոց: Թող զի առանց իշխանութեան՝ անգործ մնայ իւր մեծ խոհեմութիւն, և առանց ձոխութեան՝ անգործ մնայ իւր մեծ մեծագործութիւն. և այն սիրտ մեծ ոչ կարողանայ առնել ինչ գործ մեծ:

Ամենայնի այսորիկ ճշմարիտ եղելոյ, և այն ևս է ամենայնիւ ճշմարիտ, թէ յաչս մեծանձին ոչ ինչ է մեծ՝ բայց միայն առաքինութիւնն: Զի որոշեաւ մեծաչուք պատիւ, և գերագահ իշխանութիւնք, և բազմահարուստ գանձք են արտաքին բարիք, և ամենայն արտաքին իրք այնչափ ստորագոյնք են քան զներքին առաքինութիւնս, որչափ մարդկային և անցաւոր իրք քան զանանցս և զաստուածայինս. մեծանձնն առաւել համարի զիւր առաքինութիւն՝ քան զամենայն պատիւ և քան զամենայն ինչս աշխարհի: Խելամուտ է նա և գիտէ, թէ պատիւն արտաքինն նշան է կարծեաց օտարի, զոր չէ մարթ գիտել: Գիտէ թէ բարիք բախտի չեն ինչ հաստատուն քան զանիւ բախտի: Գիտէ թէ աւագութեանց որչափ բարձր է գագաթն, այնչափ խոր է կործանումն: Գիտէ թէ բարիք մարմնոյ չեն ինչ լաւ քան զմարմինն, որ աղքատին ձորձ է հոգւոյ. և յիւրմէ ընդ փոյթ մխի թէ ոչ պատուով ամփոփի: Վասն այսորիկ մեծանձնն այն արժանաւոր է այսց բարեաց. բայց արհամարհէ զնոսա: Գիտէ թէ վարձք են, բայց վարձք յոյժ ստորագոյնք քան զիւր արժանաւորութիւն: Իրաւունս համարի ունել, զի արժանի է այնց. բայց քամահէ զնոսա զի անարժան են նմա: Անվայել համարի զգոյն նոցա. բայց և ոչ մեծ ինչ գրէ զստացութիւն նոցին: Զհուսկն ա-



ստացից. այնչափ է նորա արժանաւորութիւն, մինչև չբաւել բնութեան վարձահատոյց լինել նմա. զի ոչինչ բարի է զուգահաւասար առաքինութեան: Ապա յայս միտս իմանալ պարտ է զայն իմաստ, թէ Առաքինութիւնն միայն է իւր ինքեան վարձ վայելչական: Ոչ զի մեծ պատիւք չեն ճշմարիտ վարձք առաքինութեան մեծանձին, այլ զի անհնար է պատուել նմա՝ որչափ է պատուելի և իւրովի շատանայ:

## ԳԼՈՒԽ Դ.

*Թէ որ իցէ վախճան մեծանձին:*

Մեծանձնն ոչ ըղձանայ պատուոյ մեծի վասն փառամոլութեան, և ոչ մերժէ զայն վասն փոքրոգութեան: Չէ փառամոլ, զի ոչ ըղձանայ՝ աւելի քան զոր վայել է նմա: Եւ փոքրոգի լինել չէ նմա հնար, զի ունի սիրտ մեծ. և ճանաչէ զայն որ վայել է նմա: Ապա ուրեմն թէ ընկալցի զպատիւ, և թէ մերժեսցէ, չունի այլ յորդոր բայց զհամեստն և զպատշաճն: Կանոն մեծ է և անյեղլի թէ համեստն ոչ վասն այլ ինչ իրաց սիրի, բայց միայն զի է համեստ: Որ սիրէ զայն յայս սակս զի է օգտակար, կամ բերկրական, կամ փառաւոր, ոչ սիրէ զհամեստն, այլ զանձն իւր: Մեծագործն առնէ գործս մեծամեծս որք ըստ ինքեանց են գովելի. և չառնէ զնոսա 'ի լինել գովելի, այլ զի իւրում առաքինութեան այն է անկ. զոր թէ չառնէր, չար առնէր: Սոյնպէս մեծանձնն ըղձանայ պատուոյ մեծի, ոչ զի պատուեսցի, այլ զի առաքինութիւն իւր այդպէս պահանջէ. և ըստ գիտ լինէր նմա չըղձանալ այնմ: Մանաւանդ թէ արհամարհէ նա զպատիւ, որպէս ասացաւ. և վասն այսորիկ թէ ըղձանայ այնմ, իղձ իւր է չափաւոր և անտարբեր: Ոչ կագէ ընդ այլս առ 'ի զբաւմ առնել զայն. ոչ կողոպտէ զատոյլչն, զի ինքն ստասցի. ոչ անձկայ հասանել, ցոր վայր է բերումն ըղձի: Թէ մերժէ զաւագութիւնս, ոչ մերժէ զնոսա առ երկիւղի, որպէս փոքրոգին, այլ զի յանկաւոր է մերժել զնոսա: Թէ ընդունի, ոչ զհետ պնդի 'ի խնդիր նոցա, որպէս փքացեալն. այլ նոքա հետամուտ լինին 'ի խնդիր իւր, զորս և ժողովէ որպէս ազնուական իջաւորս առաւել 'ի պատուել զնոսա քան առ ընդունել 'ի նոցանէ պատիւ: Ի վիճակել վահանին Աքիլլեսի՝ դաւաճանութեամբ դատաւորաց՝ նենգաւորին Ոդիսեայ, և ոչ վեհանձին Այասայ, վահանն ինքնին 'ի լող անկեալ 'ի վերայ կոհակաց ծովու՝ եհաս առ Այաս, թէպէտ և էր նա թաղեալ[156]: Վահանն անզգայ գտաւ լաւ ևս զգայուն քան զդատաւորս.

զի 'ի խնդրել զնա անարժանին՝ ինքնին 'ի խնդիր չոքաւ արժանաւորին: Այն ինչ Սերանոս և Կինկիննատոս [157] մեկուսի յորքունեաց և 'ի հոգոց, որպէս հրաժեշտք 'ի պատուոյ, մին սերմանէր և միւսն հերկէր իւրաքանչիւր յիւրում վիճակի. Հիւպատոսութիւն մատուաւ յոյզք Սերանոսի, և իշխանապետութիւն յոյզք Կինկիննատոսի: Նա յակոս փախան հնձոց՝ քաղեաց զաւաղանս իշխանականն, սա զփողոտս մարմնով արկաւ քղամիդ. Թողեալ զմաճ, ընդ մէջ էած զսուսեր. Թողեալ զսուսեր՝ դարձաւ անդրէն 'ի մաճ. Թուէր ճնշել զյաղթութիւն, զի 'ի գլուխ տարցի զիւր արդարադրութիւն:

## ԳԼՈՒԽ Ե.

### *Թէ որով օրինակաւ գործիցէ մեծանձնն:*

Սա է գերապանծ 'ի բարոյական առաքինութիւնս. բայց և կարի խիստ սակաւք, որոց ոչ ճանաչեն զնա: Վասն զի որպէս նստելոյն 'ի բարձր աշտարակ՝ ամենայն մարդիկ, որք կան 'ի տարև, երևին մրջիւնք. նոյնպէս մեծանձնն արհամարհէ և զինչ որ համարի զամենայն մարդ առանձնաւոր. Թէպէտ և մեծատուն իցէ և ազնուական և հզօր. համարեալ զանձն այնչափ վերագոյն քան զնոսա յաստիճանի, որչափ նոքա ստորեն քան զինքն յառաքինութեան: Զբաղեալ է նա 'ի ներքս յինքեան. և այնպէս գոհ ընդ իւր գերազանցին վիճակ, որ չէ նմա փոյթ խմանալ զինչ այլք գործիցեն. և ոչ փոյթ է նմա, թէ գիտասցեն այլք զինչ գործ է նորա: Ոչ ինչ է յաչս նորա մեծ, բայց միայն առաքինութիւնք մեծամեծք, զորս անխար ճանաչէ նա յանձին. վասն որոյ և չզարմանայ ինչ ընդ այն՝ ընդ որ այլք զարմանան: Սմին իրի ոչ գովէ նա զոք և ոչ պարսաւէ. զի 'ի պարսաւելն թուի զինչ լինել գործոց ստորի. և 'ի գովելն՝ թուի թէ համարիցի զնոսա ինչ: Եւ ևս առաւել՝ ոչ փնտոյ մարդահաճութեամբ. առաւել ընտրէ յանդիմանել զոք ճշմարտութեամբ, քան հաճոյանալ նմա ստութեամբ: Սմին իրի և չէ նմա փոյթ թէ գովեսցի 'ի նոցանէ, կամ պարսաւեսցի: Զի ոչ համարի ինչ զգովեստ այնց զորս ինքն արհամարհէ. և չեն բաւական անարգել զնա, որք ոչն կարողանան պատուել: Մինչ զի ներանձնացեալ յինքեան, այլ չիմանայ զչիթել լեզուաց այլոց. որպէս և ոչ կրիայ զչիթել ճանճից: Այս յատուկ է մեծանձին լինել արհամարհոտ: Եւ վասն այսորիկ թիւրագասք զփոքրոգին համարին



պարկեշտ, և զմեծանձնն գոռոզ. զնա առաւել սիրեն և 'ի սմանէ ակնածեն:

Այլ թէպէտ և մեծանձնն արհամարհէ զանցաւոր անհաստս, բայց չարհամարհէ զբազմութիւնն. ածեալ զմտաւ, զի թէպէտ և առաքինութի անցնիւր մասնաւորի կարի խիստ ստոր և իցէ քան զիւրն, սակայն բնաւից միահաղոյն հնար է ունել զառաքինութիւն հաւասար՝ և մեծ ևս: Վասն այսորիկ 'ի բազմութենէ ըստ Արիստոտելի՝ պարտ է պատկառել և երկնչել: Զիք ինչ յաշխարհի այնպէս տկար և չնչին, որպէս չիթ մի անձրևի. բայց չիք ինչ այնպէս բռնաչոս, որպէս ամենայն չիթք միահաղոյն: Իւրաքանչիւրն իւրովի է արհամարհ՝ բնաւքն միահաղոյն ըղթումբս պատառեն, զերկիրս քակեն, զքաղաքս ընկլուզանեն: Վասն այսորիկ իմաստնապէս ազդ արար Պերիանդր մին յեօթն իմաստասիրաց. Զգոյշ լեր 'ի բազմաց: Այս խոհր է ընդ մէջ փոքրոգւոյն, փքացելոյն և մեծանձին: Փոքրոգին մեծ համարի զմասնաւորս: Փքացեալն արհամարհէ զբազմութիւն: Մեծանձնն արհամարհէ զմասնաւորս, և մեծ համարի զբազմութիւն: Ապա սիրէ նա զժողովուրդն, պատուէ զատենակալս՝ զկանոնագիրս ժողովրդեան. վերապատուէ զիշխանն, յոր ամփոփի զօրութիւն ժողովրդեան և իմաստութիւն ատենակալաց: Յարգէ և զմեծանձինս իւր նմանս, միայն թէ կայցեն 'ի սահման զուգակցութեան: Զի որպէս նմանութիւնն ծնանի զսէր, նոյնպէս զուգակցութիւնն ծնանի զնախանձաւորութիւն. որոյ լծորդեալ ընդ միտս ինչ՝ արկանէ նախանձուկս, և սա բերէ ատելութիւն մահուչափ: Միհրդատ եղև օրինակ մեծանձանց՝ չքեղ առատաձեռնութեամբ, մեծագործութեամբ և մեծանձնութեամբ յազգս արևելեայց: Նովին ձրիւք էր պճնեալ Նաթան, և սա ևս հզօր և մեծագանձ թագաւոր. էին երկոքին ընդդ ամալք արևափայլք սիրելիք և փրկարարք ամենայն Ասիոյ: Բայց քանզի առարկայ մեծանձանց է նոյն, այն է մեծ պատիւ, կարծեաց Նաթանայ, թէ իւր պատիւ չէ մեծ ցորչափ կայ ոք իւր հաւասար, խորհեցաւ խժդժաբար բառնալ յաշխարհէ զիւր նմանն, զի իցէ մի միայն: Տես, յոր փոքրոգութեան վիհ խաղացանէ երբեմն մեծանձնութիւն: Եւ 'ի գլուխ ելանէր արդեօք խորհուրդն, եթէ նոյն ինքն Միհրդատ, որոյ գործ էր միշտ զամենեցուն հաճել զկամս, չէր քաղցրութեամբ առաջի արարեալ զիւր գլուխ, ոյր ապառումն այն էր 'ի խնդիր. զի և զթշնամւոյն հաճեսցէ զկամս: Այս գործ գեր 'ի վերոյ քան զամենայն մարդկային մեծանձնութիւն՝ այնպէս ամաչեցոյց զՆաթան, մինչև անկեալ յոտս նորա՝ հլու լինել նմա այնուհետև իւրում ախոյեանին:

Յարգէ և զբարեկամս մեծանձնն, և պատուէ զնոսա՝ միայն վասն զի սիրէ, բայց սոքա լինին սակաւք, զի առաւել է սի-

րելի, որ սակաւապիտան է. և զի 'ի սակաւս հաւաքին հանգամանք, զորս խնդրէ նա յիւր բարեկամս. այսինքն, առորժ առանց առատաւորութեան, յորդութիւն առանց ընկճութեան, պերճաբանութիւն առանց շատախօսութեան. հանճար զուարթամիտ, բարք քաղցունք, աղգուութիւն խոհական. գիտութիւն անկծանող. և 'ի վերայ ամենայնի, աստիճան ստորին, և առաքինութիւն անհաւասար իւրումն: Զի առ երիցագոյնս չլինի ընտանութիւն. առ հաւասարս ծնանի նախանձաւորութիւն, և թէ և բարեկամք իցեն ստորագոյնք, տէրն հաւասարէ զնոսա անկասկած: Այսպիսի էին երկու բարեկամք Օգոստոսի վեհանձինն, Մարկոս Ագրիպպաս և Մեկենաս: Միայն ընդ երկոսին սոսա գնայր ընտանութեամբ, երկոցուն սոցա բանայր զիւր սիրտ, երկոցուն սոցա հարցանէր խորհուրդ, և 'ի նոցանէ առնոյր խրատ. որպէս ունիմք յիշել և զինի: Զարին հակառակն, ոխերիմ և անտանելի թշնամի մեծանձին՝ է փքացեալն, վասն լինելոյ սորա սուտ մեծանձն: Ապաղաղի տեսեալ զիւր սուտ պատկեր 'ի հայելւոյ՝ զգրգռի և 'ի բարկութիւն բրդի, և կայտռէ և թեւօք ողորկ ընդ իւրում թարմատար պատկերի: Ըստ սմին օրինակի, վասն զի փքութիւնն է սուտ ինչ պատկեր մեծանձնութեան, մեծանձնն խորշի 'ի փքացելոյն, և չարաչար հալածէ զնա իսպառ: Ոչ վայրապար ինչ եւ զրոյց յառասպելս, թէ առ Դիոսի կայր միշտ Ադրաստէ աստուածուհին բարկութեան, 'ի զգուշացող լինել ամբարտաւանին, որ 'ի բարձր բերի քան զարժանն: Այս միայն եղև պատճառ անհաշտ ատելութեան Կատոնի առ Կեսար: Փքացեալ էր Կեսար, այլ ոչ մեծանձն. զի յափշտակէր զգերակայ պատիւ, ուր չէր արժանի: Ճշմարիտ մեծանձն էր Կատոն, զի քան զնորայն ոչ մեծ առաքինութիւն և ոչ մեծ սիրտ երևեցան յիւր հայրենիս: Ոչ այնպէս կամակար 'ի դիմի հարաւ Հերակլէս Հիդրայի, որպէս Կատոն Կեսարու: Ոչ զի 'ի բուռն արկցէ զինքնակալութիւնն, որում էր արժանի. այլ զի մի անարժանութեամբ փքացելոյն 'ի բուռն անկցի: Սա միայն սրտապնդեցաւ պինդ ունել զհասարակաց ազատութիւնն որ կայր 'ի գալթի: Եւ եթէ ազատութեանն կամք եղեն տապալ կործանիլ, գէթ սա մեռաւ ազատ. զի ոչ ազատութեանն քան զԿատոնին. և ոչ Կատոնին քան զազատութեանն յերկարաձգեցան աւուրք:

Յասացելոց աստի մարթ է իմաստասիրել, թէ գլխաւոր առաջնորդեալն մեծանձին՝ է կեալ ազատ: Դիւրին է ընդդիլ երկուց ներհակմանցդ՝ բոցոյ և սառին, քան երկոցուն սոցա մեծանձնութեան և ծառայութեան: Զի չէ մեծանձն որ ծառայական կապանօք պրկի, և ոչ արժանի է պատուոյ մեծի որ 'ի ներքոյ է այլոց հրամանի: Վասն որոյ վերագոյն ասացաք, թէ մեծանձն կամ իշխան է, և կամ արժանի լինելոյ



իշխան: Բնութիւնն արար ազատս. բերումն բախտի արար ծառայս. բռնութիւնն արար գերիս: Մեծանձնն ոչ կորուսանէ երբէք զբնաւոր ազատութիւնն. զի չառնէ ինչ բռնութեամբ, և ոչ ընկճի երբէք ընդ բախտիւ: Իսկ զի՞նչ իցէ ազատութիւն, բայց եթէ կարող լինել գործել ըստ կամս իւր. և ո՞ քաջ գործիցէ ըստ կամս իւր, բայց որ միաբանէ զկամս իւր ընդ բանին: Ապա անհնար է աստուածային կամ բնական օրինաց՝ բառնալ 'ի մեծանձնէ զազատութիւն: Զի որովհետև երկաքանչիւրն հիմնեալ են յուղիղ բան, և զի մեծանձնն ոչ այլ ինչ կամի՝ բայց զկամեցեալն ուղիղ բանին, ոչ գործէ նա բռնադատեալ յօրինաց, այլ յազդմանէ իւրոց կամաց, որ իւր ինքեան է օրէն և օրէնսդիր: Զնոյն ասեմ զքաղաքական և զմարդկային օրինաց: Զի թէ օրէնն է արդար և համաձայն բանի, որպէս պարտ իսկ է, ոչ կարէ բռնաբարել զկամս մեծանձին, որ ոչինչ այլ կամի, բայց զկամեցեալն բանին: Ապա եթէ օրէնն իցէ անիրաւ և անարժան առաքինւոյն, ոչ ումեք առաքինւոյ արժան է կամել զայն, ևս առաւել մեծանձին, որ առաքինագոյնն է քան զամենեսին: Եւ վասն այսորիկ ոչ ինչ սպառնալիք կամ ողոքանք, ոչինչ աքսոր կամ արգելանք, ոչինչ ցաւագին կամ մահաբեր տանջանք բռնադատեն երբէք զկամս մեծանձին 'ի կատարել զայն: Մանուկ մի Սպարտացի կալանաւորեալ 'ի հինից ծովայնոց՝ վաճառեցաւ 'ի ստրկանոց: Հրամայեցաւ նմա 'ի տեառնէ իւրմէ առնել ինչ գործ ծառայական՝ անարժան իւրում ազնուութեան: Ըմբոստացեալ չէառ համբակն յանձն լնել նմա: Եւ յասել տեառնն. Առնելով արասցես, զի գնեցի զքեզ գերի. ետ պատասխանի. Այժմ իսկ տեսցես, զո՛ գնեցեր քեզ գերի. և ընկէց զինքն ընդ պատուհանն արտաքս. առաւել ընտրեաց խորտակել զպարանոց իւր, քան խոնարհել: Ոչինչ շղթայ կարող է կապել զսիրտ որոյ կամակար ընտրեալ իցէ մեռանիլ քան հնազանդիլ: Այո՛ հնար է բախտի զարս մեծամեծս և բարեբաստս 'ի ձեռս արկանել բռնաւորի թշնամեաց, որպէս զՀռեգուղոս զյաղթականն, և զՎաղերիանոս զինքնակալն, և զՊերսէոս զարքայ Մակեդոնիոյ, և զՍիփակ արքայ Նումիդացւոց. բայց մեծանձնն յամենայնի յայսմ վերագոյն երևի քան զբախտ. և 'ի յաղթեալ և 'ի շղթայակապ մարմնի մնայ սիրտ նորա անյաղթ և ազատ: Հռեգուղոս յետ ափրիկեան յաղթանակի՝ կալանաւորեալ յԱփրիկեցւոց մատնութեամբ, և առաքեալ 'ի նոցանէ 'ի Հռովմ՝ 'ի հաստատել զհաշտութիւն, խրատ ետ Հռովմայեցւոց հանապազորդել զպատերազմ: Եւ գիտելով թէ վասն խրատուս մնայր նմա մահ դառնամահ, դարձաւ 'ի բանտ իւր, ակնկալեալ այնմ: Զոր և կրեաց յերկաթափուշ տապանի, անքթթական աչօք միշտ յիւր մահ հայեցեալ, և իւրոց թշնամեաց պատերազմ սպառնացեալ: Ոչ ուրուք սիրտ եղև

երբեք այնպէս ազատ, որպէս Հռեգուղոսին, որ փակեալ կայր 'ի տապանի անդ: Զօրին հակառակն՝ Պերսէոս անկեալ 'ի ձեռս Եմիլիոսի, յոտս անկաւ նորա, գիրկս եարկ զծնգօք, լալով աղայաբար և խնդրելով ողորմութիւն 'ի յաղթականէն. որ և երգուեաւ, թէ ամաչեմ զի յաղթեցի առնն՝ որ յայսպիսի վատութիւն խոնարհեալ անկանի: Նոյն նորա սիրտ փոքրոգի, արժանաւոր շղթայի, յոր և մեռաւ: Ապա ոչ կամի մեծանձնն ծառայել: Յաւելում 'ի վերայ, թէ վասն նորին պատճառի ոչ սիրէ և հրամայել: զի ըստ ասելոյ Սենեկայի, Մեծ իշխանութիւն՝ է մեծ ինչ ծառայութիւն. և այնպէս տաղտկալի է հրամայել անբանից, որպէս ծառայել նոցա: Բժշկութիւն՝ ցորչափ հայի յընդհանուր սկզբունս, է խոր իմաստասիրութիւն. այլ յիջանել իւրում 'ի մասնաւոր գործս, փոխի յարուեստ: Նոյնպէս քաղաքականութիւն թէ զկայ առնու 'ի հանրական ծանօթութիւնս, գլխոյ է գիտութեանց. բայց մասնաւոր գործք քաղաքական կառավարութեան ոչ այլ ինչ են, բայց բազմաղբաղ ծառայութիւն:

Բառնալ զբեռն իրողութեանց և հոգոց, չհանգչիլ զի հանգիցեն այլք, լի ունել զականջս հասարակաց քրթմնջմնօք, և զաչս առանձնաւոր նամակօք, ձեռնարկել երբեմն 'ի չառեւութեան կեղծիս, երբեմն յահարկութիւն և երբեմն 'ի բռնութիւն ընդդէմ իւրոց կամաց, նկուն առնել զԹշնամիս, զուսպ ունել զիւրս. գլխահար լինել չարագործաց, հեղուլ զարիւն զիւրոց որդեպէս սիրելեաց, յորժամ գթութիւն քան զխստութիւն վնասակար իցէ, այս ամենայն է այնպիսի տարժանաւոր ծառայութիւն, մինչև ինքնակալին, որ կարի իմն անձուկ ունէր ինքնակալութեան, անիծանել զօրն յոր ձեռն եարկ ինքնակալել: Ապա մեծանձնն ոչ սիրէ ոչ հնազանդիլ, և ոչ հրամայել, բայց միայն անձին. զի այսու օրինակաւ հրամայէ նա այնմ որ մտադիւր հնազանդի, հնազանդի այնմ որ արժանի է հրամայելոյ նմա, մնալով ազատութեանն անկորուստ: Վասն այսորիկ վայելէ 'ի զուարթագին առանձնութեան, ոչ իբրև զՏիբերիոս, զի համարձակագոյն Թարթափեսցի ընդ եղեռնաւորս, այլ իբրև զԿիւրոս, զի համարձակագոյն միտ դիցէ անձին, հայեցեալ ընդ սքանչելի հանդէս երկնի և մեծի մօր հասարակաց. առարկայ մեծ, և արժանաւոր մեծի մտաւորի: Ապա չսխալէ Արիստոտէլ յասել իւրում թէ՝ Մենացեալն կամ Աստուած ոմն է, և կամ անբան, այսինքն կամ բոլորովին է անիմաստ, որ յամենայնէ երկնչի կամ բոլորովին մեծանձն, որ զամենայն արհամարհէ: Եւ ոչ խռովեն զառանձնութիւն նորա սիրելի բարեկամք, զի նոյն են ընդ նմա:

Ապա այս է գլխաւոր իղձ մեծանձին, պահել զիւր ազատութիւն, յորմէ յառաջ գան իւր մեծանձնեայ բարք: Ոչ



ծառայէ նա Ճոխութեան, ոչ մեծ ինչ գրէ զլայնատարր կալուածս, և ոչ զընդարձակ դաշտավայրս. ոչ զհոյակապ պալատս, և ոչ զպատուական կահս. ոչ զընտիր ընտիր նկարս, և ոչ զմեծանուն քանդակս. զի ամենայն որոյ կորուստ բերէ ցաւ, հոգովք ստացանի. և ամենայն գոյզն հոգ է ծառայութիւն ինչ: Ապա ստացեալ ունի մեծանձնն զայս ամենայն բարի, բայց ինքն 'ի նոցանէ ոչ ստացանի. զի կարևորքն այլոց աւելորդ են նմա: Կորուստ նոցա յաչս նորա չէ ինչ ընդհատ յունելութենէ. զի ոչ կորնչին այնմ որ ունի, այլ այնմ որ 'ի նոսա վայելէ: Ոչ ծառայէ նա իւրում մարմնոյ, զի համարի զնա սորուկ հոգւոյ: Վասն այսորիկ պերճ է առ այլս 'ի պարգևս և 'ի կոչունս. այլ առ անձն յարգար, և ոչ պճնասէր, խոշոր և ոչ փափկասէր: Գնայ ընդ մարմին իւր տնտեսութեամբ, որպէս վայելէ ընդ սորկի. զի մի տկարասցի առ 'ի չքոյէ բաւականին, և մի լրբեսցի 'ի յափրութենէ: Ոչ ծառայէ նա իւրոց կենաց. զի ոչ կեայ 'ի պահել զայն, այլ առ հասուցանել յելս պատուով մեծաւ. ոչ հայեցեալ թէ իցէ երկար, այլ զի իցէ մեծ: Եւ զի մեծն այն անձն լի է մեծամեծ առաքինութեամբ, վասն այսորիկ ոչ գնէ զկեանս զինչ և իցէ գնոյ, և ոչ ծախէ զնա վասն զինչ և իցէ իրաց: Խտիր է ընդ մէջ արիականին և մեծանձին, որպէս ընդ մէջ երկուց անդամանդաց՝ փոքու և մեծի: Երկոքանչիւրն են պատուական գոհարք՝ անբէկք, այլ անմիտ շռայլութիւն լինէր այնպէս առատաձեռն լինել 'ի մեծամեծ անդամանդս, որպէս 'ի մանունս. զի բազում առաւելութիւն է նոցա քան զայգա ըստ արժողութեան և ըստ սակաւագիւտ լինելոյ: Բազմաց հնար է լինել արի, բայց սակաւուց՝ մեծանձն. զի արիութիւնն է մի միայն առաքինութիւն. բայց մեծանձնութիւնն 'ի ներքս փակէ զամենայնն գերազանցօրէն: Ոչ ծառայէ նա համբաւոյ. զի ոչ ծառայէ կարծեաց օտարի: Առաւել արժէ մի միայն ստուգութիւն Ճշմարտութեան քան զանբաւ կարծիս. և ոչ ոք կարէ ստուգութիւն ունել բարութեան գործոյն, բայց որ առնէ զայն. զի նա միայն Ճանաչէ թէ ո՛րով հոգւով առնէ: Եւ վասն այնորիկ մեծանձնն առաւել համարի զիւր սեպհական գիտակցութիւն քան զամենայն մարդկան կարծիս: Հերակլէս կարգեաց զոհս առ ոչինչ գրելով զպչրանս պարսաւագրաց. յայտ արարեալ թէ մեծանձանց պարտ է գործել զբարին, ոչ ինչ փոյթ ունելով թէ այլք բարիս խօսիցին: Վասն այսորիկ ոչ դատէ և զայլոց գործս. զի ոչ համարի զնոսա արժանաւորս իւրում դատաստանի, և չերկնչի յայլոց դատողութենէ, զի ոչ ուրուք դատաստանի ծառայէ: Մոմոս որդի քնոյ և գիշերի՝ վատահացեալ դատողապետ լինել դից, ստգտանէր զնոցին գործս թէ ընդէ՞ր ցուլն կրէ զեղջիւրս 'ի գլուխն և ոչ 'ի թիկունս.

զիա՞րդ մարդ չունի պատուհան 'ի լանջս, առ իմէ՞ ապարանք Աթենասայ ոչ գնան 'ի վերայ անուոց: Այլ զոր օրինակ զեղերանս Մոմոսի իբրև զծաղր Միմոսի խաղ առնէին դէք վերնականք, ըստ առասպելաց, և ոչ ինչ գժգմնէին, նոյնպէս մեծանձնն, որ միայն է դատաւոր իւրոց գործոց, ծաղր առնէ զպայսխսի դատաւորս, իբրև զրուս և զչջջիկանս որդիս քնոյ և գիշերի: Ոչ ծառայէ նա իւրոց կրից. զի առաջնորդութեամբ բանի, որ միշտ է նոյն, ինքն ևս հանապազ է նոյն: Ի յաջողուածս է պարկեշտ, 'ի ձախողակս արի, յանտարբերս միօրինակ: Կեայ աներկիւղ, զի զօրաւոր է 'ի նմա բանն: Այլ եթէ կամք լիցին բանին, թէ պատուհասեսցէ զոք, պատուհասէ անցաւումն, յանդիմանեալ զյանցանսն, և ախտակցեալ յանցաւորին: Որպէս երկինք երբեմն փայլատակեն 'ի պարզի, նոյնպէս և նա սուսեր շողացուցանէ խաղաղական սրտիւ: Ոչ ծառայէ նա և բախտի, որ ոչ գիտէ թէ յոր կողմն ձգեսցէ զնա: Քանզի գիտելով մեծանձին թէ չէ կարող բախտն ոչ տալ և ոչ բառնալ զիւր առաքինութիւն, որ զինչ և բարի տացէ նմա, կամ բարձցէ 'ի նմանէ, ոչինչ այլափոխի: Ի բարեբաստութիւնս չէ ինչ վստահ. 'ի ձախողութեանց ոչ ինչ խռովի: Նա՝ յառաջ քան զեկաւորիլ յանկարծադէպ պատահարաց, կանխեալ սրտապնդի և քաջալանջ ելանէ ընդ առաջ. մինչև չունելով նորա ինչ անակնկալ, ոչինչ անկարծ 'ի վերայ գայ նորա: Սոկրատայ սկիզբն արարեալ իւրոց գիտնաւոր խօսից ընդ միումն յիւրոց համբակաց, եհաս նմա յանկարծակի գուժկան թէ Սոփրոնիսկոս որդի քո մեռաւ: Յայտ է ամենայն մտաւորի, թէ բորբոք նորա և գոյն և արիւն՝ վաղեցին 'ի սիրտ. և կսկծագին ցաւք թէ ոչ զկենաց՝ գէթ զխօսից նորա կարեցին զթել: Բայց և այնպէս Սոկրատ՝ անխռով զսկսեալ խօսսն տարաւ 'ի գլուխ, և ապա ասէ. Ո՞ն երթիցուք տալ Սոփրոնիսկոսի զյուղարկաւորութեան պատիւ:

Յայսմ մեծէ առաջագրութենէ մեծանձին մարթիս իմանալ. քանի՞ ճշմարիտ իցէ այն առած, թէ՝ Իմաստունն միայն է ազատ, և այլք ամենեքին ծառայ: Եւ յայսմ սկզբնէ յառաջ գան 'ի մեծանձնն յատկութիւնք ինչ, որք յաչս դռեհկաց երևին յառաջ գալ 'ի մոլութենէ, և են հիմնեալ յառաքինութեան: Նախ առաջին՝ երևի նա յամառ 'ի կարծիս. վասն որոյ և անխրատ. որպէս յանդիման ցուցանէ զայս Պլուտարքոս 'ի Կատոնի: Զի զոր օրինակ 'ի սրտի է նա յամենայնի միօրինակ, նոյնպէս 'ի միտս է նա միշտ 'ի նոյն կարծիս: Վասն որոյ և ասի, թէ մեղք իմաստնոց են մեղք հրեշտակաց: Զի զոր օրինակ կեանք մարդոյ են յաջորդական, և կեանք հրեշտակաց անհոսական, նոյնպէս մարդիկ այսօր մեղանչեն, վաղիւ զղջանան. բայց հրեշտակք յոր կամս եղեն



միանգամ, 'ի նոյն մնան յաւիտեան: Սակայն ստուգութեամբ 'ի ճշմարիտ մեծանձն չիք այս մոլութիւն: Փոքրոգին յորդորմամբ այլոց յեղամիտ է յառաջագրութեան, զի ամենեցուն հաւատայ: Փքացեալն ոչ ումեք հաւատայ. վասն այսորիկ 'ի սկսանել զգործ ինչ անխրատ, հաստատութիւն մտաց համարի հանապազորդել 'ի նոյն: Բայց մեծանձնն՝ վասն զի գործէ բանիւ, անյողդողդ մնայ 'ի գործն, թէ ոչ այլ զօրագոյն բան յաղթեսցէ նմա: Ճշմարիտ է թէ որպէս իմաստունն է նա քան զայլս, նոյնպէս դժուարին է նմա՝ զայլոց բան վերադասել քան զիւրն: Թող զի եթէ է ինչ 'ի նմա վրիպանք գործոյ, որովհետև զգործովք՝ հրեշտակաց իսկ, թող թէ մարդկան, հնար է սխալել, ոչ ոք իշխէ ազդ առնել նմա, բայց որ մտերիմ բարեկամ իցէ. որոյ խրատուց մտադիւր անսայ մեծանձնն, զի բարեկամն է միւս ինքն. և որպէս պարտութիւն խոստովանի սիրոյ նորա, նոյնպէս պարտութիւն խոստովանի և կարծեաց նորա: Օգոստոսի կայսեր հրապարակեալ զօրէնս Յուլիական ընդդէմ շնացելոց, իրազեկ եղև թէ Յուլիա դուստր իւր էր շնացեալ: Օրինացն որ 'ի Յուլիոսէ առեալ էր զանուն, հնար էր առնուլ զայն 'ի Յուլեայ: Օգոստոս արտասահմանեաց զնա, և հրապարակեաց ամենայն աշխարհի զխայտառակութիւն նորա, որ յանկեան ուրեք իւրոյ պալատի կայր ծածկեալ: Մեղապարտն աքսորեալ 'ի հօրէ աքսորեաց յիւրմէ զամօթ. և սկսաւ առնել համարձակ, զոր գող 'ի գող գործէր առ երկիւղի. և 'ի ծածուկ շնացեալն եղև յայտնի պոռնիկ: Յայնժամ ծանեաւ Օգոստոս, բայց կարի իմն անագան, թէ յորժամ չէ հնար պատուհասել զյանցուած՝ առանց խայտառակութեան պատուհասողին, լաւ է ծածկել զայն քան յայտնել: Վասն այսորիկ բարկութեան նորա զկնի եկեալ ապաշաւ, առաւել զայրագին էր 'ի վերայ իւրոց սխալանաց՝ քան դստերն: Գոչէր 'ի ձայն բարձր. Արդ ճանաչեմ թէ որչափ ինչ կորուսի, 'ի կորուսանել իմում զԱգրիպպաս և զՄեկենաս [138]: Եւ արդարև եթէ կենդանի լինէին նոքա, չէր սորա գործեալ զայն վրիպակ:

Միւս ևս մոլութիւն մեծանձին երևի լինել ծանրութիւնն, որ մայրն է մենակեցութեան. և արհամարհութիւնն ոչ միայն գործոց այլոց, զորս ոչ գովել արժան համարի և ոչ ուղղել, այլ և պատուոյ և մեծարանաց, որք ընծային նմա: Վասն այսորիկ է զի թէպէտ մեծանձնն առնէ այլոց երախտիս, բայց ոչ ընդունի զայն յայլոց. զի երախտիք են կապանք հակառակօղք ազատութեան, որք ոչ կարեն պարտաւորել, եթէ պարաւանդեն իբրև պարտնօք: Եւ թէ ուրեք երբեք ընդունիցի պարգև ինչ, վաղվաղակի փոխատրէ մեծ ևս պարգև. զի այսու օրինակաւ ոչ միայն լուծանի 'ի կապանաց, այլ և զկապիչ իւր կապէ: Նա երբեմն փոխադարձուցանէ պարգևի

պարգև ընդ խաղ, 'ի ցցացուցանել պարգևողին, թէ չհամարի ինչ զպարգևսն: Մեծանձնեայ արքայն Թրակացւոց Կոտիւս, ստարատւոյ ումեմն որ պարգևեալ էր նմա վագր, պարգևեաց առիւծ: Եւ քաջանայապետն Լևոն տասներորդ, ումեմն քիմիագիտի, յորմէ ընկալեալ էր 'ի պարգև գեղեցկահիւս ինչ մատեան արուեստի ոսկեգործութեան, պարգևեաց փոխարէն քսակ դատարկ: Եւ բանաստեղծի ումեմն, որոյ ընծայեալ էր նմա մեծ ինչ Ճառս ներբողական, փոխատրեաց սուղ ինչ վաշ վաշ: Զեղև այն ագահութիւն, այլ խոհական մեծանձնութիւն. օգ ընդ օգոյ պարգևեալ: Բայց երևելին քան զամենայն իւր յատկութիւնս, որ առաւել առելին է մեծամեծաց, է այն, զի թէպէտ ինքն ըստ քաջ ըմբշամարտից ոչ արժան համարի մրցիլ ընդ ակարաց, և ըստ մեծանձին առիւծու ոչ 'ի վար արկանէ զիւր զօրութիւն ընդդէմ մանունց դաղանաց, սակայն ընդ հզօր հակառակորդս խրոխտ մաքառի: Աղէքսանդր իբրև հարցաւ 'ի հօրէ իւրմէ, եթէ ընթանա՞յ յարշաւահանդէս Ողիմպիական խաղուց, ետ պատասխանի. Ընթացայց, եթէ կայցեն թագաւորք՝ ընթացակից լինել ինձ: Մեծանձին է ցուցանել մեծ սիրտ առ մեծամեծս, յորժամ զգրգռի 'ի նոցանէ. և չէք տեսարան արժանագոյն աշխարհախումբ ժողովոյ և ահեղագոյն, քան յորժամ առաքինութիւն ինչ մեծ 'ի գրգիռ մտանէ. կամ ոչ դիմակալէ մեծանձին, կամ դիմակալէ յամենայն սրտէ: Ոչ կորուսանէ զիւր դադար, և ոչ տայ թշնամւոյ իւրում դադար: ԶՄարկեղոսէ ասէր Աննիբաղ. Գործ է իմ ընդ առն, որ թէ յաղթի, չունի դադար: Արմաւենի է նա, որ թէ ցածնու ծանրոցաւ՝ բնագոյն ևս ամբառնայ 'ի վեր: Սունկ է նա, որ բնագոյն սուզեալ՝ բնագոյն 'ի վեր ելանէ: Կարկին է՝ ըստ ասից մեծանձինն Կարողոսի Եմմանուէլի, որ որչափ ճնշի, այնչափ տարածանի: Զօրութիւն Հռոմէական առաւելաւ կործանմամբ զօրաւորաց, որք գրգռեցին զնա: Հակառակութիւն Ամուլիոսի արքային Ալբայեցւոց՝ եղև նորա առաջին պարծանք. և պարտեալք Ալբայ չինեցին զՀռոմ: Փիդենացիք, Կամերացիք և հուսկ ուրեմն Վէոյեցիք զգրգռեալք զցասումն նորա, ոչ այլ ինչ գործեցին, բայց ընդարձակել զինքնակալութիւն Հռոմայ: Մեծ թշնամի ունի նա, զոր մեծանձնն համարի արժանի իւրում ցասման:

Զհուսկն ասացից. Մեծանձնն կամ իշխան է, կամ առընկեց իշխանս: Զի սիրէ զժողովուրդն, և իւր մեծամեծ առաքինութիւնք առնեն զնա սիրելի ժողովրդեան: Բայց 'ի ժողովրդական կառավարութեան պատգամատու է նա խորհրդականաց, և զինարան զօրաւորաց, զարդ հայրենեաց և սխրալի օտարաց. որոց չէք ցուցանել մեծ ինչ քան զնա: Որպէս նաւէին 'ի Գնիդոս՝ տեսանել զարձանն Ափրոդիտեայ, և 'ի



Սեգեստէ՝ զարձանն Արտեմեայ, նոյնպէս նաւէին 'ի Կորնթոս տեսանել զմեծանձնն Տիմոլէոն, թէպէտ և կուրացեալ էր նա 'ի ծերութենէ, և նստէր յիւրում աւանի որպէս մնացուած ինչ յիշատակի իւրոց քաջութեանց կամ յիշատակ իւր ինքեան: Անտի 'ի մեծամեծ խռովութիւնս 'ի վերայ ուսոց ժողովրդեան բարձեալ բերէին զնա 'ի մեծն թատրոն՝ հարցանել 'ի նմանէ խորհուրդ. ուր 'ի գովաբանել զնա ամենայն քաղաքացեաց յիշատակութեամբ իւրոց քաջութեանց՝ որ 'ի Սիկիլիա և յԱփրիկէ, զտեղի առնոյր վայր մի լռել զիւր գովեստ և առնուլ ոգի, և ապա տայր պատասխանի, ցուցեալ յիւրում խորհրդատուութեան՝ թէ յստակագոյն տեսանէին երկու աչք ուրումն կուրի, քան զամենայն աչս իւրոց քաղաքացեաց:

# ԳԼՈՒԽ Զ.

*Յաղագս փոքրոգութեան և փքացման:*

Փաղփուն պատուոյ և հրապարակական իշխանութեանց երկուս ազգէ ներհական գործս յայլեայլ անձինս: Քանզի ոմանք իբրև զթիթեռունս 'ի լոյս անդր ամռքեալք, այնչափ մերձին յայն՝ մինչ այրել թևոց նոցա, և սոքա են փքացեալքն և հպարտք: Այլք իբրև զչղջիկս՝ շլացեալք 'ի կարի իմն փայլմանէ անտի, փախչին թաքչին 'ի ստուերս. և սոքա են փոքրոգիք: Փքացեալն չունի մեծամեծ առաքինութիւնս, բայց համարի զանձն արժանի պատուոյ մեծի: Փոքրոգին ունի առաքինութիւն մեծ, բայց ոչ համարի զանձն ընդունակ պատուոյ մեծի: Նա կոչի փքացեալ, զի ունի սիրտ թափուր յառաքինութենէ, և լի հողմով անպիտանութեան: Սա կոչի փոքրոգի. զի թէպէտ և ունի սիրտ լի առաքինութեամբք, բայց չորտադնդի երևեցուցանել զայնս 'ի պայծառ պիտառութիւնս հասարակութեան:

Բայց ասիցես. Զիա՞րդ լի իցէ մեծամեծ առաքինութեամբք այն՝ որ չունի քաջալերութիւն 'ի գործ դնել զնոսա. կամ զիա՞րդ իցէ թափուր յառաքինութեանց մեծաց այն՝ որոյ սիրտ մեծ է քան զփոքրոգւոյն: Պատասխանեմ, մոլութիւն փոքրոգութեան ծնանի առաւել 'ի բնաւոր իմն պակասութենէ, քան 'ի բարոյականէ: Զի ունելով նորա մարմնաւոր ինչ խառնուած այլազգ քան զմեծանձին, որչափ մեծանձինն ջերմ է սիրտ, այնչափ փոքրոգւոյն ցուրտ է սիրտ: Եւ զի ոգին զհետ երթայ մարմնոյ, այն բնաւոր ցրտութիւնն անպարտելի երևեցուցանէ նմա զբազում դժուարութիւնս 'ի վէհ իշխանու-

թիւնս. վասն որոյ 'ի բաց հրաժարէ յայնց և շատանայ փոքու պատուով:

Զարրին հակառակն՝ փքացեալն թէպէտ չունի բազում առաքինութիւն յանձին, և ոչ բազում իմաստ 'ի միտս, բայց ունի 'ի սրտի բազում ջերմութիւն, և աւելի ևս քան զմեծանձինն, և վասն այնր խրոխտ վստահութեամբ հետամուտ լինի փառաց և մեծ իշխանութեանց, որոց չէ ընդունակ իբրև զմեծանձնն: Այլ կրկնեցես անդրէն. Եթէ փոքրոգւոյն են բազում և մեծամեծ առաքինութիւնք, հարկ է թէ իցէ 'ի նմա և մեծ ինչ արիութիւն. իսկ զիարդ լինիցի արի, որ այդպէս երկչոտ է: Առ այս պատասխանեմ, թէ կեանք և պատիւ են առարկայք ամենեւին այլեայլ, զի մին է մարմնական բարի, և միւսն կարծեաց բարի: Արդ յայտ թէ որպէս առիւծ առաւել երկնչի 'ի տկար աքաղաղէ քան 'ի դժնեայ ընձուէ, նոյնպէս սիրտ մարդոյ առաւել երկնչի 'ի միոյ առարկայէ քան յայլմէ: Փոքրոգին չերկնչի 'ի վտանգաց կենաց, բայց երկնչի 'ի վտանգաց պատուոյ. զի 'ի դնել զկեանս ամենայն քաջ զօրական է պատրաստական. բայց ստանձնել զհրապարակական իշխանութիւն այնպէս է տարժանաւոր, մինչ քաջասրտաց ևս և գերզօրնից մտադիւր 'ի վար արկանել զառաքինութիւնս իւրեանց ընդ հովանեաւ մենակեցիկ երկասիրութեանց, քան 'ի բացերևակ լոյս քաղաքական իրողութեանց, զհետ երթեալ իմաստուն այն առից. Սիրեա՛ լինել անծանօթ: Զարրին հակառակն փքացեալն սրտատոչոր անձկանօք հանդիսի գովութեանց, և մեծապայծառ իշխանութեանց, յանդուգն այնց զհետ սնդի. զի չունելով հանճար՝ ոչ իմանայ զկործանմանն վտանգ:

Ցաստցելոց ասի նախ առաջին 'ի միտ առջիր թէ՝ փքացումն նմանագոյն է մեծանձնութեան ըստ երևութին, այլ աննմանագոյն ըստ էութեան. և փոքրոգութիւնն նմանագոյն է ըստ էութեան, այլ աննմանագոյն ըստ երևութին: Զի փքացելոյն աւելի է համարձակութիւնն քան զարժանաւորութիւն, և փոքրոգւոյն աւելի է արժանաւորութիւնն քան զհամարձակութիւն: Վասն այսորիկ որպէս շռայլն է կապիկ առատաձեռին, և յանդուգնն կապիկ արիականին, նոյնպէս փքացեալն է կապիկ մեծանձին: Զի մտապարծութեամբ ախորժէ երևիլ մեծանձն, որպէս զի արժանաւոր համարեսցի պատուոյ: Զի յաչս ռամկաց որք ըստ աչս դատեն, փքացեալն համարի մեծանձն, և պատուի, թէպէտ և է մոլի. իսկ փոքրոգին թէպէտ և մեծամեծ առաքինութեամբ զարդարեալ՝ ոչ այդպէս համարի, զի ոչ ճանաչի: Փքացեալն կարի իմն արհամարհէ զմեծամեծս. փոքրոգին կարի իմն մեծ համարի զփոքունս: Նա առ հասանել իւրում զխմամն՝ սպառնայ և բարկացուցանէ. սա առ ընդունել զայն՝ խոնարհի և աղաչէ: Նա առ դոյզն վնաս ձեռնարկէ



'ի դառն վրէժխնդրութիւն, սա 'ի ներքս յինքեան տառապի և հեծէ: Նա սոդտանէ զգործս այլոց՝ ևս և զգերապանծս. սա գովէ ևս և զմանունս: Նա տեսեալ զգործս մեծանձնեայս՝ պանծայ լաւ ևս առնել. սա ոչ վստահանայ զհաւասարն առնել: Նա ըղձանայ այնմ, յորմէ պարտ էր խորշիլ. սա խորշի յայնմանէ, որում պարտ էր ըղձանալ:

Ի միտ առ և զայս, թէ յերկուց աստի մոլութեանց փոքրոգութեան և փքացման, դիւրագոյն հնար է շրջել յառաքինութիւն մեծանձնութեան զփոքրոգին քան զփքացեալն. թէպէտ և փոքրոգութիւնն երևի առաւել նախատական և ծառայական, և փքացումն առաւել պատուաւոր և տիրական: Որոյ այս է պատճառ. զի փքացելոյն պակասի էութիւն մեծանձնութեան որպէս ասացաւ, այսինքն հանճար մտաց և առաքինութիւն սրտի: Իսկ փոքրոգւոյն պակասի միայն ջերմութիւն և քաջալերութիւն: Մինչև մարթիմք ասել, թէ փոքրոգին է առաքինի ոմն երկչոտ, և փքացեալն մոլի ոմն խրոխտ: Ապա եթէ ցրտութիւն փոքրոգւոյն ջերմասցի 'ի բուռն ինչ կրից, կամ գրգռեսցի 'ի յորդորմանց բարեկամաց, կամ շարժեսցի յաղաչանաց հայրենեաց, կամ հարկեսցի 'ի ստիպող ինչ առթէ, և ևս առաւել թէ օգնեսցի յիմաստուն խորհրդականաց և 'ի ներկուռ պաշտօնէից, այն ինչ սկիզբն առնէ ճանաչել զիւր զօրութիւն և զչափ առնուլ զանձին, դիւրանան նմա դժուարինք, և ինքն վստահացեալ և բարեյոյս լեալ՝ 'ի փոքրոգութենէ լինի մեծանձն: Ո՞եղև երկչոտ 'ի պատուոյ քան զԳաղեսոս որդի Արիստիպպոսի ազնուականի կիպրացւոյ. որոյ խորշեցեալ 'ի լուսոյ ոչ միայն հրապարակական իրողութեանց, այլ և քաղաքային կենցաղավարութեանց, փոխանակեաց զքաղաքական և զազնուական կեանս 'ի ծառայական երկրագործութեան կեանս՝ ընդ իւր շինականս: Բայց ո՛ եղև յետ այնր քան զնա քաջակորով 'ի սրտի, և երևելի 'ի գործս, 'ի ժամանակի յորժամ սէր շքնաղին և ազնուականին Իփիգենեայ յանտառի ուրեք նմա պատահելոյ՝ ձգեաց զնա անդրէն յանտառէ անտի 'ի քաղաք. և նախանձաւորութիւն Հռոդիանոսի Պասմնդայ եբաց ճանապարհ քաջութեան նորա, և երևելի երևելի առաքինութեանց որք ծածկեալ կային յանձն նորա: Բայց թէ փքացեալն ճշմարտապէս լիցի մեծանձն, մեծի սքանչելեաց պէտք են: Լսեմք թէ Վեսպասիանոս ուղղեաց զոտն խեղացելոյ ուրումն Հռովմայեցւոյ, այլ ուղղել զխեղացեալ խելս անհնար թուի, թէ ոչ փոխեսցի և խելապատակն:

Ի վախճան ամենայնի իմա՛, թէ փոքրոգին ապահովագոյն է քան զփքացեալն. զի չելեալ նորա կարի իմն 'ի բարձր, ոչ կործանի կարի իմն 'ի խոր. և առաքինութիւն նորա է իւր հաստարան, զի մի՛ անկցի: Բայց փքացեալն ամբարձեալ 'ի

մեծ պատիւ, առանց հաստարանի հանճարոյ և առաքինութեան, որչափ 'ի վեր ամբառնայ՝ այնչափ գահավէժ կործանի. և իւրով կործանմամբ կործանէ և զհասարակութիւն: Այսպիսի օրինակաւ Փայեթոն անմիտ համբակ՝ տեսեալ զճառագայթարձակ նարօտս և զոսկեղէն կառս լուսոյ, և զականակուռ գանգանաւանդս թևաւոր երիվարացն արևու, կաթոգին ըղձանայր հեծնուլ յայն, զի կառավար երևեսցի տունջեան, և լուսատու աշխարհի. չածեալ զմտաւ թէ 'ի մեծէ լուսոյ անտի քանի խաւար պաշարել ունէր զինքն և զաշխարհ:

# ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ՊԱՐԿԵՇՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՈԼՈՒԹԵԱՆՑ ՆՈՐԱ ՈՐ Ի ԾԱՅՐՍ

## ԳԼՈՒԽ Ա.

*Թէ զինչ իցէ պարկեշտութիւնն:*

ԱՊԱՔԷՆ լուար թէ որպէս չափաւորութիւն 'ի մեծամեծ ծախս է մեծագործութիւն, և 'ի միջակային ծախս է առատաձեռնութիւն. Նոյնպէս չափաւորութիւն 'ի մեծամեծ պատիւս է մեծանձնութիւն, և 'ի միջակային պատիւս՝ Պարկեշտութիւն: Թէ իցէ սա ճշմարիտ առաքինութիւն բարոյական, յայտնի երևի. զի ուր գտանին ծայրք, գտանի և միջասահմանութիւն: Ապա եթէ զմիջակային պատիւս հնար է սիրել յաւէտ կամ նուազ, որք են մոլեկան ծայրք, սիրել զնոսա ըստ պատշաճի՝ լինի միջասահմանութիւն առաքինական: Ապա որ ոք ունելով զմիջակային առաքինութիւն, համարի զանձն արժանի միջակային պատուոյ, է պարկեշտ: Որ ոք ունի փոքր առաքինութիւն, և համարի զանձն արժանի միջակային պատուոյ, է փառամոլ: Որ ոք ունի միջակային առաքինութիւն, և չհամարի զանձն արժանի միջակային պատուոյ, է անհոգ: Մինչև պարկեշտութեանն համեմատիլ մեծանձնութեան, փառամոլութեանն՝ փքացման, և անհոգութեանն՝ փոքրոգութեան: Եւ որչափ պանծագոյն առաքինութիւն է մեծանձնութիւնն քան զպարկեշտութիւն, այնչափ նուազ է ամօթ ծայրից պարկեշտութեան քան զմեծանձնութեան, զի ապականութիւն լաւագունին է յոռեգոյն:

Ամենայն մեծանձին հնար է լինել պարկեշտ. այլ ոչ ամենայն պարկեշտի հնար է լինել մեծանձն: Որպէս և ամենայն մեծագործի հնար է լինել առատաձեռն, բայց ոչ ամենայն առատաձեռին հնար է լինել մեծագործ: Զի որ ձեռնհաս է առաւելին՝ ձեռնհաս է և նուազին. բայց ոչ հետևի թէ՝ որ ձեռնհաս է նուազին, ձեռնհաս իցէ և առաւելին: Ապա ու-

րեմն եթէ մեծանձնն համարեալ զանձն արժանի մեծի պատուոյ, ոչ մերժէ վարել զմիջակային իշխանութիւն առ օգնելոյ հայրենեաց, ոչ է այն մեծանձնութիւն, այլ պարկեշտութիւն։ Բայց որ արժանաւոր գոլով մեծի պատուոյ՝ միջակայնով շատանայ, զի ոչ ճանաչէ զիւր արժանաւորութիւն, ոչ պարկեշտ է և ոչ մեծանձն, այլ փոքրոգի. թէպէտ և 'ի տգէտ ռամկաց համարի պարկեշտ. զի բազում մոլութիւնք ներքոյ են տգեղ, և արտաքոյ գեղեցիկ. և ժողովուրդն դատէ, որպէս և տեսանէ։

## ԳԼՈՒԽ Բ.

*Որո՞վ օրինակաւ և առ ինչ վախճան գործիցէ պարկեշտն ։*

Պարկեշտն ամփոփ պարուրի յիւրում սահմանի, և ոչ տարածէ զթևս արտաքոյ քան զիւրն բոյն։ Ոչ ամենեքին բնաւորեալ են առ մեծ պատիւ, և ոչ 'ի կամս է իւրաքանչիւրոց արժանաւորիլ այնմ։ Նա՝ բազմաց դժուարագոյն է արժանաւորիլն քան զհասանելն։ Ի սերմանց ոմանք սիրեն զբլուրս, և ոմանք զդաշտավայրս, յորս բուսանին. և որ փոխէ զտեղի սերմանց, կորուսանէ զպտուղն և զմշակութիւն։ Բազումք են մտաւորք 'ի միջակային իշխանութիւնս. ամբարձեալք 'ի գերամբարձս՝ լինին այպն կատականաց։ Ի հարկանել կայծական պղնձի մեծի պատկերին Աթենասայ յԱթէնս, յանձն եղև նախանձաւորութեան երկուց անուանի քանդակագործաց Փիդեայ և Աղկամենեայ՝ ձեռնարկ նորոգութեան նորա։ Երկաքանչիւր մի քան զմի ճգամբ արկին ձեռն 'ի գործ. երկաքանչիւրն հանին 'ի հրապարակ զիւրեանց երկս։ Գլուխն արարեալ 'ի Փիդեայ էր այնպէս անհեթեթ, մինչև երևիլ գունտ ինչ խորտաբորտ. իսկ զոր արարն Աղկամենէս էր այնպէս արուեստակեալ, մինչ ոչ գոյր տեսանել քերուբ ինչ քան զայն։ Ապա զորայս գրուատեալ դատաւորաց բազում գովութեամբ, այպանէին առհասարակ զՓիդեայն. որոյ այպանեալ զպարսաւիչս իւր, ասէ. Մի դատէք դատաստան ոչ զմիոյ և ոչ զմիւսոյ, մինչև զետեղեսցին երկաքանչիւրն 'ի բուն տեղի։ Իբրև եդին 'ի վերայ խրանց բարձու դրօշուածոյն զգլուխն, զոր Աղկամենեայ էր արուեստակեալ, թուեցաւ գունտ ինչ անկերպարան. այլ իբրև եդին զմիւսն որ երևէր ուրուական իմն, այնպէս գաւահամեմատ, որ ոչինչ քան զայն կատարեալ՝ եղև երբէք հանճարել արուեստի։ Եւ չէն ինչ զարմանք, զի մին գործեցաւ գալ 'ի տեսութիւն 'ի բարձունս, և միւսն 'ի



տորէ։ Զմտաւ էած իմաստուն քանդակագործն Փիդիաս, թէ բարձրութիւնն փոխէ զհամեմատութիւնս և զերևոյթս. և վասն այսորիկ յիւրում՝ աչք, ականջք, ռնգունք, և ծնօտք, որք թուէին այտուցք և փորոքք դիպուածոյք, 'ի բարձրագիտակի անդ գային յանվրէպ չափակցութիւն։ Իսկ 'ի միւսն մանրութիւն ձևոց 'ի կարի իմն հեռաւորութենէ խառնեալ շփոթեցաւ։

Են որք բնաւորեալ են առ միջակային աւագութիւնս իշխանականս կամ զինուորականս. և այսպիսեաց ոչինչ այնպէս է վտանգաւոր, որպէս ամբառնալ 'ի գերաբարձր աւագութիւնս։ Այս ոք լինի քաջ խորհրդական, այլ ոչ գլուխ խորհրդականաց. և այն ոք լինի քաջ հաղարապետ, այլ ոչ քաջ ինքնակալ։ Գլուխն չէ համեմատ այդչափ բարձրութեան։ Գալբա 'ի մասնաւոր հրամանատարութիւնս համարեցաւ գերիմաստ. յինքնակալութեան ամենևին անմտացաւ։ Զառաջին հակառակն՝ Տիտոս 'ի ցածութեան վնասակար յայտնեցաւ հասարակապետութեան. ամբարձեալ 'ի գերագահ իշխանութիւն՝ թուեցաւ առաքեալ յերկնից։ Նա թուէր արժանի թագաւորելոյ, եթէ չէր թագաւորեալ։ Սա ոչ համարեցաւ արժանի թագաւորութեան, բայց յորժամ թագաւորեաց։ Զի նա զօրութիւն ունելով չափաւոր, ոչ կարողանայր տոկալ ծանր բեռին. և սա սիրտ ունելով վսեմական, ոչ հանդուրժէր անձուկ բախտի։ Վասն այսորիկ նա հասարակաց խնդութեամբ սպանաւ։ Սա հասարակաց երկիւղիւ յինքն էառ զինքնակալութիւն, և հասարակաց ցաւովք եթող զայն։ Երկաքանչիւրն թագաւորեցին սակաւ։ Նա առ գթութեան երկնից, որում ոչ եղէն կամք թէ հասարակաց չարիք յերկարեսցին։ Սա 'ի նախանձուէ օրհասին, որ ոչ հանդուրժէ աստ 'ի ստորինս յերկարաձգելոյ մեծի երջանկութեան։

Արդ ուրեմն եթէ դժուարին է ումեք լինել մեծանձն, այնպիսւոյն մեծ քաջալերութիւն լինի առ միջակային ինչ առաքինութիւն՝ պարկեշտութիւնն. որպէս մեծ փառս ստանայ նա, որ ոչ բաւեալ լինել մեծագործ՝ լինի առատաձեռն։ Նա որպէս յաչս ժողովրդեան առաւել հաճոյ է առատաձեռնն քան զմեծագործն. զի մեծագործութիւնն ծնանի զզարմացումն, և առատաձեռնութիւնն զսէր, նոյնպէս պարկեշտութիւնն առաւել է հաճոյական քան զմեծանձնութիւնն. զի մեծանձնն արհամարհէ զամենեսին բաց յանձնէ. պարկեշտն տանի հաւասարութեան բազմաց, և առ ամենեսին է քաղցր։ Վասն որոյ մեծանձնն է առաւել զարմանալի. պարկեշտն առաւել սիրելի։ Ապա գոհ է պարկեշտն ընդ միջակային պատիւ. ոչ առ երկիւղի անկման որպէս փոքրոգին, այլ վասն զի համեստ իմն է և վայելչական, թէ պատիւն համաչափ իցէ իւրում արժանաւորութեան, և արժանաւորութիւնն առա_

քինութեան: Ի դնել առաջի նորա զաւազան իշխանութեան և խոյր, ասէ համարձակ. Ոչ է այդ վասն իմ. կարի իմն է այդ. ոչ ցայդ վայր հասանէ իմ արժանաւորութիւն. խնդրեցէք զայլս՝ որ արժանաւորագոյն իցեն: Ոչ ինչ դիւցազնական առաքինութիւն արժանացաւ այնչափ գովեստի, որչափ այս հրաժեշտ:

Զոր ասացաքս զպարկեշտութենէ, շատ լիցի: Զի զամենայն զայլ հանգամանս՝ ամենայն մտաւորի դիւրին է յանկել յիւր վերայ յամենայնէ՝ զոր ասացաք զմեծանձնութեան և զծայրից նորա, պահեալ զհամեմատական կանոնս ընդ յաւէտ և ընդ նուազ:

## ԳԼՈՒԽ Գ.

### Յաղագս քրիստոնէական խոնարհութեան:

Սա է առաքինութիւն աւետարանական. որում հնար է կալ ընդ բարոյական պարկեշտութեան և մեծանձնութեան. զի թէ մեծ առաքինութիւն ունիցի ոք, և թէ միջակային, հնար է նմա լինել խոնարհ ըստ համեմատութեան: Սոյգ իմն է թէ ընդ մեծանձնութեան առաւել ևս փայլէ պայծառ. զի որչափ մեծ է արժանաւորութիւնն, այնչափ առաւել դժուարին լինի խոնարհութիւնն: Բայց նմանագոյն է նա պարկեշտութեան, զի փախչի 'ի մեծամեծ պատուոյ: Նա առ արտաքին իմաստասէրս, առաւել նման էր նա մոլեկան անհոգութեան, քան առաքինական պարկեշտութեան. զի ունելով արժանաւորութիւն՝ ոչ ինչ փոյթ է նմա զպատուոյ, իբրև զանհոգ ումն կամ փոքրոգի: Բայց բազում ինչ ընդ մէջ է խոնարհի և փոքրոգւոյ: Փոքրոգին փախչի 'ի պատուոյ, զի ոչ ճանաչէ զիւր առաքինութիւն: Խոնարհն ճանաչէ զիւր առաքինութիւն. բայց և այնպէս փախչի 'ի պատուոյ, զի ճանաչէ յանձին որ ինչ է իւր, և որ ինչ ոչն է իւր: Զէ նա որպէս զխլուրդս, որք ոչ ունին աչս ճանաչել զանձինս. այլ է իբրև զերկնային թռչունս Եզեկիելի. որք հանդերձ աչօք ունէին հարիւր աչս, ծածկեալս ընդ փետրօք, առ հասարակ դարձուցեալս 'ի հայել 'ի ներքս յինքեանս[159]:

Ապա ճանաչէ խոնարհն զիւր կատարելութիւնս. բայց ճանաչէ և զանկատարութիւնս: Գիտէ թէ որչափ ինչ կատարելութիւն է յինքեան, ամենայնն է յԱստուծոյ, և վասն այնորիկ ոչ պարծի: Եւ որչափ ինչ անկատարութիւն, ամենայնն է յիւրմէ. և խոնարհի և ամաչէ: Գիտէ, թէ Որդին Աստուծոյ եկն ուսուցիչ առաքինութեանս. վասն զի քաջածանօթ լեալ



նորա՝ զինչ աստուածային էր 'ի նմա և զինչ մարդկային 'ի միում անձին, վասն մարդկայնոյն խոնարհէր զանձն հօր, ում ըստ աստուածայնոյն էր հաւասար: Գիտէ թէ այսուիկ օրինակաւ նոյն ինքն Որդին Աստուծոյ ուսոյց մարդկան, ևս և գերակայից խոնարհել ստորագունից, թող թէ հաւասարից. հայեցեալ իւրաքանչիւրումն՝ զինչ պակասութիւնք են յինքեան, և բաղդատեալ ամենայնի՝ զոր ճանաչէ յայլս լինել յԱստուծոյ: Եւ գիտէ թէ որպէս Որդին Աստուծոյ որչափ խոնարհեցոյց զանձն Աստուծոյ, այնչափ բարձրացոյց զնա Աստուած, նոյնպէս խոստացաւ խոնարհի՝ այնչափ բարձրացուցանել զնա յերկինս, որչափ խոնարհի նա յերկրի:

Յասացելոց աստի ունիս քաղել թէ խոնարհութիւն է յոյժ առաւել մեծանձնեայ քան զբարոյական մեծանձնութիւն. զի սա վերագոյն առնէ զմարդ քան զայլ մարդիկ. այլ նա առնէ զնա նման Քրիստոսի: Թող զի մեծանձնն արհամարհէ զփոքր պատիւ, զի անձկայ մեծ ևս պատուոյ առ մարդիկ. բայց խոնարհն արհամարհէ զամենայն պատիւ երկրաւոր՝ զի անձկայ երկնայնոյն, և սա է մեծանձնեայ խոնարհութիւն: Իսկ եթէ ստիպի խոնարհն ընդունել զաւագութիւնս՝ որոց է արժանի և յորոց խորշի, առնու զայն յանձն արիաբար և չքով: Եւ թէպէտ ոչ մեծ ինչ համարի զանձն, բայց և այնպէս կամի, զի վերադունութիւն իւր մեծ համարեսցի. և առաւել նախանձախնդիր է արժանապարտ պատուոյ քան զամենայն մեծանձն: Զոր օրինակ պատկեր Աստուծոյ երկրպագի, ոչ որպէս պաստառ ինչ նկարեալ՝ այլ որպէս կենդանագիր երևեցուցիչ Աստուծոյ, նոյնպէս առաջնորդ ոք ամենեին խոնարհ՝ կամի զի աւագութիւն իւր 'ի ստորադունից պատուեսցի, ոչ որպէս զարդ իւրոյ անձին, այլ որպէս պատկեր աստուածային հեղինակութեան, որ բացափայլէ 'ի նմա: Զհուսկն ասացից: Եթէ Արիստոտէլի ծանուցեալ էր քրիստոնէական խոնարհութիւն, ասէր արդեօք անտարակոյս, թէ Մեծ է մեծանձնութիւն քան զամենայն բարոյական առաքինութիւն. բայց խոնարհութիւնն մեծ է քան զնոյն ինքն զմեծանձնութիւն:

# ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ՀՆԶՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՒՐՈՑ ՄՈԼՈՒԹԵԱՆՑ ՈՐ Ի ԾԱՅՐՍ

### ԳԼՈՒԽ Ա.

*Թէ զինչ իցէ հեզութիւնն։*

Է սա առաքինութիւն ցածուցիչ բարկութեան գրգռելոյ յանիրաւ իմն վնասուէ 'ի վրէժխնդրութիւն։ Մինչ զի չորք էական պարագայք ընթացակցին 'ի հեզութեան. Ըմբռնումն անիրաւութեան, Ցասումն գրգռեալ, Բաղձանք վրէժխնդրութեան և Ցածուցումն ցասման և վրէժխնդրութեան։ Ապա չէ հեզ, որ որպէս փայտեղէն ինչ արձան չզգայ զանիրաւութիւնն, և չզայրանայ. և ոչ այն որ իբրև զգազան անդէն իսկ 'ի զգալ զանիրաւութիւնն, յափշտակի 'ի բարկութենէ առաւել քան զարժանն։ Երկաքանչիւրն են մոլեկան ծայրք. մին կոչի անզգայութիւն, և միւսն բարկութիւն։ Նա անցանէ ըստ չափ 'ի նուազն, սա յառաւելն. նա է ջուր, և սա հուր։ Ապա հեզն է որպէս զՊեգաղոս 140, որ յանցանէր ընդ ջուր և ընդ հուր անսայղ և անկէզ, զգայ զանիրաւութիւն որչափ արժան է, և զայրանայ որչափ վայել է։ Թուիցի քեզ թերևս, թէ հեզութիւնդ անուն զկէսն միայն յայտ առնէ զառաքինութեանս, զմիւս կէսն լռելեայն ծածկեալ։ Զի երկեակ գոլով նորա գործ, մի՝ չզայրանալ արտաքոյ բանի, և երկրորդ՝ զայրանալ ըստ պահանջելոյ բանի. որ ասէն հեզութիւն, թուի թէ յայտ առնէ միայն զչզայրանալն. և ստգիւտ արկանէ այնմ՝ որ զայրանայ ըստ բանի։ Բայց և այնպէս բարուք թուեցաւ մեծամեծ իմաստասիրաց առնուլ զանուն յայնմ մասնէ, որ է դժուարագոյն, որով և պանծագոյն, այսինքն է 'ի չզայրանալոյ։ Որպէս և արիութիւնն թէպէտ և նշանակէ միջասահման ինչ ընդ մէջ երկնչելոյ 'ի վտանգից և չերկնչելոյ, բայց էառ զանուն 'ի դժուարագոյն մասնէ, այսինքն 'ի չերկնչելոյ՝ քան յերկնչելոյ։ Բայց չէ ինչ փոյթ զհնչմանէ անուան. միայն թէ սահմանն իցէ ծանուցեալ։ Զի սահմանք հիմնեալ են յանայլայլ էութիւն իրաց. և անուանք յայլ և այլ հաճոյս անուանադրաց։ Արդ առ ուսուցանելոյ զայս առաքինութիւն, կալցուք ոճ այլազգ քան զնախագրելոցդ։ Զի յայլս քննեցաք զառաքինութիւնն յառաջ քան զմոլութիւնս, որ 'ի ծայրս. այլ արդ քննեսցուք զմոլութիւնս որ 'ի ծայրս՝ յառաջ քան զառաքինութիւնն. զի այնք են առաւել զգալիք և ակներևք. սա առաւել վերացեալ և ծածկեալ։



### ԳԼՈՒԽ Բ.

*Յաղագս բարկութեան։*

Զբարկութիւն մարթ է մտածել երկակի. բարոյապէս և ֆիզիգապէս։ Ըստ բարոյական գոլոյ, է նա մոլութիւն առաւելեալ 'ի ցասման յղձի վրէժխնդրութեան վասն ընկալեալ անիրաւութեանց։ Ուր ծանիր զի բուն ցասումն է բնաւոր կիրք, և բարկութիւնն է մոլեկան ունակութիւն այնորիկ, որոյ դիւրավառ լեալ 'ի ցասումն կոչի բարկացող։ Բայց յոլովակի ցասումն կոչի ոչ միայն կիրքն, այլ և նոյն իսկ զայրացումն։ Վասն զի որպէս ամենայն մարդ բնաւորապէս սիրէ զինքն և զիւրսն, նոյնպէս այն ամենայն որ վնասէ մարմնոյ, որպէս հարուածք և խոցուածք, և այն ամենայն որ վնաս հասուցանէ համբաւոյ, որպէս անէծք և արհամարհանք, և այն ամենայն որ վնաս առնէ ընչից, որպէս գողութիւնք և յափշտակութիւնք, և այն ամենայն որ խոչ է հաճոյական կամաց, որպէս խնուլ զաղբիւր պաքելոյն, առնուլ զքուեայս խաղացողին, առհասարակ են առարկայք՝ որք առաջարկեալք յերևակայութենէ որպէս անիրաւք, զարթուցանեն զցասումն 'ի վրէժխնդրութիւն։ Բայց ըստ ֆիզիգական գոլոյ, ցասումն է բոց ինչ յերևակայեալ առարկայէ յանկարծակի իմն վառեալ զսրտիւ. որ եռացուցանէ զարիւն, և զգալի ցնցմամբ ձգեալ զսիրտն ընդդէմ վնասակարին՝ շարժէ զարտաքին կարողութիւնս 'ի վրէժխնդրութիւն։ Երևի այս բնաւոր գործ՝ որպէս ասացուք 'ի ճառս կրից, յամենայն կատարեալ կենդանիս, որոց իւրաքանչիւր ընդ զգալն զվնաս՝ վառի բոցով. հրանման նորա աչք, ցցուին հերք, խիզախէ բարբառ, և մերկեալ 'ի պատենից զբնատուր զէնս՝ բուռն 'ի վերայ յարձակի վնասակարին։ Եւ զի 'ի բնաւոր յարձակմունս մարդ չէ ինչ ընդհատ յանասնոց, ևս և 'ի սիրտ մարդոյ զայրացելոյ վառի այս հուր։ Ուստի սաստիկ բարկութիւնն յիրաւի կոչեցաւ բորբոքումն իբրև զշանթի երկաթոյ։ Նա՝ վասն զի դիմամար-

տուԹեամբ ջերմութիւնն ամփոփ ժողովեալ ցրտացուցանէ զորս շուրջն կան, վասն այսորիկ տեսանես 'ի ցասուցեալն մրցումն ինչ որակութեանց, և շարժմունս ներհականս, վառումն և սառոյց: Վառի սիրտն 'ի ներքին բոցոյ, և դիզանան հերք 'ի պաղելոյ մարթոյն: Դէմք է զի շառագունին, և է զի դալկանան. խառնին ձիւնաբերք Կովկասու ընդ բոց Եանայի: Սորէն աչք ջուր և հուր. փայլատակեալ 'ի կատաղութենէ և արտասուեալ 'ի ցաւոց: Ծուխ արձակեն ռնգունք և գոլորշին շրթունք. բոցավառին կուրծք և սառնանան զրոյցք. յանձին զգայ միանգամայն ցաւագին ինչ ուրախութիւն, և ուրախացեալ ցաւ, մաքառելով քինուխնդութեան ընդ յուսոյ վրէժխնդրութեան: Եւ այնպէս լինի մարդ ձիւաղ ինչ խառնեալ յամենայն գազանաց: Բառաչէ որպէս ցուլ, մռնչէ որպէս առիւծ, շչէ որպէս վիշապ, խածանէ որպէս շուն, ձիրան արձակէ որպէս արջ. զոտս զգետնի հարկանէ, երկնի սպառնայ. յառաջ քան զԹշնամին գտանել՝ զանձն չարաթոյլ կոչկոճէ: Յորմէ մարթիս իմանալ քանի լցէ ագեղութիւն այնպիսի ոգւոյ, որ այսպէս չարաչար զմարմինն այլանդակէ: Վասն այսորիկ Պղատոն խրատէ զմարդ բարկացեալ՝ հայել ընդ հայելի: Զի զոր օրինակ ըստ առասպելարկուաց Աթենաս 'ի հարկանել զփողն առ աղբեր, տեսեալ 'ի ջուրս անդ զծնօտս իւր այտուցեալ և զդէմս այլանդակեալ, զահի հարաւ յիւրմէ, և ընկէց զփողն 'ի բաց. նոյնպէս բարկացեալն հայեցեալ յիւր պատկեր, գարշեսցի 'ի ցասմանէ իւրմէ և սասանեսցի յիւրմէ:

Արդ այս բոց դիւրագոյն վառի 'ի ջերմագոյն խառնուածս՝ իբրև 'ի նիւթ պատրաստագոյն առ ընդունելութիւն և սնունդ նորա: Առ յարուցանելոյ մեծ ինչ հրդեհ՝ չէ ինչ փոյթ ուչափ ինչ իցէ լուցկին, այլ թէ ուր անկանի: Վտանգաւորագոյն է կայծ մի անկեալ 'ի վերայ վռոյ, քան բոց ինչ մեծ 'ի վերայ երկաթաքարի: Բայց ըստ այլ հայեցուածոյ՝ առաւել սուր է բարկութիւնն, ուր նուաղ է զօրութիւն. զի 'ի պակասել ուժոյ՝ յորդէ յօժարութիւն: Որպէս առաւել անկատար և անզօր կենդանեաց՝ իժից, կարճաց, սարդից և պիծակաց բնութիւնն ետ առաւել պատրաստական և թունաւոր զէնս 'ի վրէժխնդրութիւն, նոյնպէս բարկութիւնն 'ի տկարս է առաւել կորովի, 'ի ծերս աշխոյժ, 'ի կանայս առնացի. վասն որոյ և ասացաւ, թէ Ամենայն փոքրիկ ճանճ ունի զիւր մաղձ:

Սա է ճշգրիտ բարկութիւնն, զորմէ ցայսվայր եղեն բանք, ուժգնայարձակ և յայտնի, վասն որոյ և նուաղ մոլեկան. զի կարի լիմն եռայ, բազումս սպառնայ և անդէն շիջանի: Յորմէ իմաստնապէս կոչեցաւ անմտութիւն սուղ, սրտմտութիւն հարևանցեալ, արբեցութիւն ոգւոյ, բռնութիւն առօրեայ,



վասն որոյ և կարճատև. զի որ ինչ է բռնական, չէ տևական:

Բայց միւս ևս սաստիկան ցասման ևս մոլեկան՝ գազանական և անգթական՝ առաջի առնէ մեզ Արիստոտէլ, կոչեալ զայն ցասումն դժուարին և սևամաղձային: Զի առաջինն է հաստատեալ յարեան, որ վաղ եռայ, և վաղ եղկանայ. բայց սա բնակէ 'ի սևամաղձն, որ հիւթ գոլով ցրտագին և մածուցիկ, դժուարաւ մարփ կամ լուծանի. և որչափ չերևի, այնչափ առաւել վնասէ: Սմին իրի զոր օրինակ երկաքանչիւրոցն այլ և այլ են պատճառք, նոյնպէս այլ և այլ են հանգամանք և տխուր գործք: Նա հուր ծաւալէ յերեսս, և սա ծուխ: Նա արիւն է եռանդուն, և սա խանձող ծածկեալ 'ի գաղտնի. վասն այսորիկ ունակացեալն 'ի բարկութիւն՝ է արիւնռուշտ, և դժուարաշարժն՝ սևամաղձային, և գոյնն ցուցանէ զնոցին բարս: Յայս սակս նա խուճապի 'ի խորհուրդս, և բուռն բերմամբ յառաջ գործէ և ապա խորհի. սա հանդարտ սրտիւ անխուճապ խորհի ընդ միտս, և հնարս ընտրէ խժդժականս, և 'ի կամս վնասողութեան յաւելու արուեստս: Նա բանիւք և գործովք յայտնէ զսիրտն, և որոտայ զսպառնալիս, մինչև է արձակեալ զշանթ սուսերի, և յոլովակի լուծանի 'ի սնոտի փայլակն, բայց սա նենգամիտ անամօթութեամբ մրրիկ պատրաստեալ, լռելեայն կեղծեօք պարապ յարդարէ, և յանկարծ դարանաւ 'ի վերայ հասանէ չզգուշացելոյն: Նա իբրև զապուլեանն սարդ[141], աւաչ հնչմամբ բարեյորդոր բարեկամաց մեղմէ զիւր Թոյն. սա որպէս իժ խուլ՝ յոչինչ երգոյ փրկաւէտ ազդարարութեանց Թովլի: Նա իբրև զախտեան յետ գործոյն զղջանայ, և անագան լալեօք զվէրսն լուանայ. սա իբրև զկատաղի վագր՝ զկենդանին գիշատէ, և 'ի շաղիղ անդր Թափէ զցասումն: Նա որպէս մասնաւոր ինչ ախտ հարկանէ զմի միայն անհատ, և 'ի բարկացուցչէ իւրմէ խնդրէ առնուլ վրէժ. սա հալածէ զամենայն զզարմ և զամենայն զազգն. և 'ի բարկացուցանել զնա միոյ ուրուք՝ Թշնամանայ ամենայն ազգի մարդկան: Երկաքանչիւրն խափանեն զքուն, և խռովեն զհանգիստ. բայց նա յապաժոյժ ըղձէ վրէժխնդրութեան, և սա 'ի խոր մտածութենէ մեքենայից վրէժ խնդրելոյ: Բայց յոլովակի փոխարկեալ միոյն 'ի միւս՝ լինի չար ևս քան զոր էրն. զի հնացեալ բարկութիւնն փոխի 'ի յամառ ատելութիւն. և ատելութիւնն բորբոքեալ փոխի 'ի կատաղութիւն:

# ԳԼՈՒԽ Գ.

*Թէ որով օրինակաւ գործիցէ բարկացողն:*

Ապաքէն լուար թէ ո՛ր իցեն խառնուածք, առարկայք և տարբերութիւնք բարկութեան. մնայ մեզ խօսել, թէ որով օրինակաւ անցանիցէ նա ըստ չափ, և թափիցէ զիւր թոյն: Չափազանցութիւն բարկութեան հաստատեալ է 'ի բարկանալ վասն պատճառաց, որոց վասն չպիտի. և ընդդէմ այնմ, որում չպիտի, և աւելի քան զոր պիտի:

Ճշմարիտ և բուն պատճառ բարկութեան է Արհամարհութիւնն: Խօսիմ զբարկութենէ մարդկան, և ոչ զբուռն բերմանէ անասնոց: Զգայ ամենայն մարդ, թէպէտ և ցածուն, կարի ինն իղձ զերազանցութեան յիւրում կոպարի. որում ուղղակի ընդդէմ գնի անարգումն. և սա է ճշմարիտ նախատինքն, որ վառէ զբարկութիւն: Ամենայն վնաս պատճառէ զցաւ, բայց ոչ ամենայն ցաւ պատճառէ զբարկութիւն, եթէ ընդունող վնասուն ոչ ըմբռնէ զչար սիրտ իւրոյ վնասակարին. առանց որոյ վնասն, թէպէտ և է վնասող, այլ ոչ նախատագիր: Բայց 'ի չար սիրան ազդողագոյն ըմբռնի արհամարհութիւն քան զվնասն: Տեսեալ Աքիլլէսի[142] զխոյանալ արքային Ագամեմնոնի առ իւր Բրիսէյա, բորբոքեցաւ անշէջ բարկութեամբ. զի չհայէր նա յայն զի զրկեցաւ յիւրմէ սիրելւոյ, այլ յայն զի անարգեցաւ յարքայէ: Ասէ. Համարեցաւ զիս իբրև զնչին ոք 'ի մարդկանէ. եղերծ յինէն՝ որ ինչ իմ էր, իբրև յանարգ գիւղականէ, 'ի չքաւորէ և 'ի գերւոյ: Իսկ գազանք որք ընդունակ են ցաւոց, և ոչ պատուոյ, վասն զի զգան զվնասն, այլ ոչ ճանաչեն զնախատինսն, բորբոքին ցասմամբ, այլ ոչ ճշմարիտ բարկութեամբ: Վասն այսորիկ յաղագս մարդկան, առ որս տանել ցաւոց՝ է արիութիւն, այլ համբերել արհամարհանաց է անարգութիւն, ամենայն մեծի նախատանաց դեղ է խոնարհական ստորանկութիւն այնմիկ որ արարն. զի թուի գալ 'ի զուգակշռութիւն, եթէ փոխարկի բարկացելոյն այնչափ յարգ և մեծարանք, որչափ բարձին 'ի նմանէ արհամարհանք: Ապա հնար է ումեք ընդունել վնաս, այլ ոչ նախատինս. կամ ընդունել նախատինս, այլ ոչ երևելի: Դէպք ինչ իցեն, այլ ոչ մտադրութիւն. մտադրութիւն իցէ, այլ ոչ չարութիւն. ընդ խաղ ինչ իցէ, այլ ոչ արհամարհութիւն: Երևակայութիւնն զհետ երթայ կրից, և կիրք գործեն ըստ կորնթարդ ակնոցի, որոյ ընդարձակեալ զտեսութիւն մանր առարկայից՝ զնոյն երևեցուցանէ վիպ: Այսպէս



բարկացողն սաստիկ ունելով երևակայութիւն, մեծացուցանէ զվիրաւորն, զի երևակայէ: Ամենայն փոքր վնաս երևի նմա մեծ նախատինք, և կռուոյ արժան համարի զարժանին ծաղու:

Թալէս մեծ փիլիսոփայ, բայց և մեծ բարկացող, յերթալն աստղագիտակ գործեաւ զննել զաստեղս՝ անկաւ 'ի խորխորատ: Աղախինն զուարթաբարոյ և ծաղրասէր ժպտեալ առ փոքր մի, յօգնելն նմա առ ելանել 'ի խորխորատէ՝ ասէ. Կամիս զննել զորս 'ի բարձունս, և ոչ զննես զորս առ ոտս կան: Կարող էր տալ պատասխանի. Կարի իսկ քաջ. զի աչս ունիմ 'ի գլուխ, և ոչ յոտս: Բայց զի էր բարկացող, այն եղև նորա պատասխանի, զի ընդ ելանելն 'ի խորխորատէ՝ բռնցի և աքացի և կորոնաւ ուսոյ ողբածեծ արարեալ զողորմելին, կիսամեռ ընկէց 'ի խորխորատ անդր, ուր ինքեան արժան էր մնալ: Եւ զինչ զարմանք են թէ Տիբերիոս՝ որ չէր փիլիսոփայ, այլ բռնաւոր, հարցեալ ցմեծ հռետորն Զենոն, թէ յինչ բարբառ իցէ իւր յունական ինչ ճառ. և 'ի պատասխանել Զենոնի միամտութեամբ սրտի, թէ իմ ուսեալ է վարել զհռոդացւոց բարբառ. անդէն վաղվաղակի աքսորէ զնա, որպէս և այլուր տեսցուք[143]: Վասն զի որպէս բռնաւոր սրամիտ և սրալար 'ի բարկութիւն, մեկնեալ զնորա միամիտ պատասխանի յերկդիմի միտս՝ կարծեաց թէ կամք էին նմա 'ի դէմս ածել զաքսորանս իւր 'ի Հռոդոս. և եգիտ առիթ վրէժխնդրութեան յանմեղութեան անդ: Զինչ զարմանք են թէ Աղէքսանդր ևս՝ այր ուսումն թանկագին եղև յոյժ իւրոց ուսուցչաց, թիւր մեկնութեամբ նախատագիր չարութիւն կարծեալ զիմաստասիրական համարձակութիւն, և թշնամանագիր արհամարհանս՝ զլաւակամութիւնս, մատնեաց զԿալիսթենէս կապանաց, զԼիսիմաքոս առիւծուց, և զԿլիտոս իւրում ցասմանն որ դժնդակ ևս էր քան զառիւծուց, զի առիւծք ծանեան զառաքինութիւն Լիսիմաքոսի, և ինչ ոչ մեղան անմեղին. այլ Աղէքսանդր ոչ ծանեաւ զարժանաւորութիւն Կալիսթենէսի, և յանպարտ արիւն շաղախեաց զձեռն:

Միւս չափազանցութիւն բարկացողին է 'ի կիր արկանել զայն անզուսպ կիրս ընդդէմ որոյ չպիտի: Բարկանալ 'ի վերայ մեծաւորաց՝ է յանդգնութիւն, զի պարտ է տաւել խոնարհութեամբ ցածուցանել՝ քան յանդգնութեամբ զգրգռել զայն, որոյ ձեռնհաս լեալ առնել ինչ նախատինս՝ կարող է առնել միւս ևս մեծագոյն: Բարկանալ 'ի վերայ ստորնոց է անմտութիւն, զի որովհետև բարկութիւն տուաւ 'ի զօրացուցանել զակար զօրութիւն ընդդէմ հաւասարից, աւելորդ է այն՝ ուր զօրութիւնք են վերագոյնք: Բարկանալ 'ի վերայ բարեկամաց՝ է ապերախտութիւն, կամեցեալ զչար այնմ՝ որ կամեցողն է բարւոյ. և եթէ բարեկամն է նոյն ընդ իւր, ապա անմտութիւն է դժնէանալ յիւր վերայ: Բարկա-

նալ 'ի վերայ անմեղաց է անիրաւութիւն, զի չէ արժանի բարկութեան որ չէ արժանի պատժոյ, և չէ արժանի պատժոյ, որոյ ոչ գոն յանցանք: Բայց բարկացողն ունելով զաչս մթաց կուրացեալ 'ի կրից՝ ոչ որոշէ զվերնագոյնն 'ի ստորագունէ, և զառաքինն 'ի հաւասարէ, զբարեկամն 'ի թշնամւոյ, և զանպարտն 'ի պարտաւորէ, ըստ յունական հրոյ այնպէս վառի 'ի ջուր, որպէս 'ի խծուծ: Զի երևակայութիւն նորա այնպէս զեղծ է 'ի կրից, մինչ զի և յանբան անասունս կարծեալ լինել չարութիւն բանի, զայրանայ 'ի վերայ նոցա: Տեսիփոնս [144] արժանացեալն քաջայաղթ անուան, վասն լինելոյ նորա յաղթական 'ի հնգեակ խաղս ոլիմպիականս, աքացի հարեալ 'ի ջորւոյ՝ դարձոյց կատաղանօք զաւակ 'ի զաւակ, անդրէն կիցս արձակել 'ի ջորին: Նոյնս ամենայն Ոլիմպիա նորանշան ինչ օրինակ մրցողաց, մարդոյ ընդ անասնոյ. ոչ գիտելով ո՛ր իցէ անբանագոյն. զի 'ի կարծել մարդոյ զջորին բանաւոր, ինքն ցուցաւ անբան: Բայց զամենայն զպսակս և զարմանենիս զորս ստացեալ էր Տեսիփոնայ 'ի հինգ խաղս, ստացաւ ջորին միանգամայն. զի որ յաղթեալն էր հնգից դիմամրցանակաց, յայսմ նեթ դիմամրցանակէ տապալ յերկիր կործանեցաւ: Յայլմէ կողմանէ, չէք ոք ունակ այնպէս սաստիկ երևակայութեան, որպէս բարկացողն: Զի այնպէս կենդանագրի 'ի նմա պատկեր ճիւաղականին, մինչև յոր կողմն և դարձցի, թուի նմա տեսանել զնա ակնյանդիման. և յորս և հայի, զամենեսին կարծէ լինել մեղսակից, կամ նոյն ինքն մեղապարտ. վասն այսորիկ խեթահարի, և թափէ զցասումն յանգէտս իսկ, իբրև զշուն 'ի քար: Ներոն յընթրել խլրում իբրև լուաւ զապստամբել Գաղղիոյ, կործանեաց զսեղանն, և խորտակեաց զպատաս սառնատեսակս, որ գրգագոյն էին 'ի գրգանս նորա: Վեր 'ի վայր լինել թագաւորութեանն վեր 'ի վայր շրջեաց զմիտս նորա. թուեցաւ նմա թէ սեղանն Գաղղիա իցէ, ըստ միոյ միոյ 'ի սպասուց զարկուցելոց զգետնի՝ կարծէր զգետնել զիւրոյ տէրութեան սպասաւորս: Քանի առաւել խոհական գտաւ Կոտիս արքայն Թրակացւոց 'ի գործ նմանակ. որոյ ընկալեալ 'ի պարգև զսպաս ինչ սառնատեսակս՝ հրաշագեղս, արար հատուցումն փոխարինի արքայավայել մեծագործութեամբ. բայց անդէն փշրեաց զամենայն սպասն եւ խորտակէ. զի մի բարկասցի եթէ ոք վրիպակաւ խորտակեսցէ զնոսա: Մինչ զի Ներոն վասն զի բարկացեալ էր 'ի վերայ ապստամբաց, բարկացաւ 'ի վերայ սպասուց. և Կոտիս կորոյս յիւրմէ զսպասս, զի մի բարկասցի 'ի վերայ ընտանեաց: Նորայն եղև խժդժութիւն, սորայս գթութիւն. նորայն մոլեգնութիւն, սորայս իմաստութիւն: Իսկ զինչ յիմարութիւն կայցէ՝ քան զբարկանալն յիւր վերայ: Արջ խոցեալ՝ չհանդուրժեալ ցաւոյ՝ մխի 'ի



մացառախիտս, 'ի փուշս և 'ի բևեռս, և յամենայն ուր և պատահէ. դեղ՝ որ չար ևս է քան զվէրսն. զի փոխանակ բժշկելոյ, առնէ զնա անբուժելի: Այդպիսի արջ կատաղի եղև Եծելինոյ բանաւոր [145], որոյ բազում վէրս ընկալեալ, բայց զգուշութեամբ դարմանեալ և պատեալ, իբրև լուաւ զխորտակումն իւրոյ զօրուն, ոչ կարացեալ բարկանալ 'ի վերայ յաղթականին՝ բարկացաւ յիւր վերայ. և կրճտեալ գազանաբար՝ ատամամբք և եղնգամբք պատառոտեաց զպատանն և զվէրսն, կարծեալ հանել զվրէժ քինու կորստեան պատուոյ՝ կորստեամբ կենաց:

Յետին չափազանցութիւն բարկացողին է՝ յեղանակն: Մարթ է գիտել թէ ոք բարկասցի, 'ի վերայ որոյ պիտի, և վասն պատճառի յաղագս որոյ պիտի. բայց սաստկագոյն՝ քան զոր պիտի: Ամենայն բնական արարող գործէ միայն, որչափ կարող է. բայց անձնիշխան արարողն, որպէս մարդ, կամի երբեմն գործել աւելի քան զկարն: Զի բնաւոր ազդեցութիւնն է սահմանաւոր, ցանկութիւնն անսահման. և վասն այսորիկ սա հասանէ յոլովակի 'ի սահմանս թշուառութեան: Զայսր ազնիւ օրինակ ունիմք 'ի Ղուկիոս Սիղղա, որ վայրենաբարոյ ումն եղև 'ի հասարակապետութեանն Հռովմայ: Խոստացեալ էր նմա Գրանիոս՝ հատուցանել յիւրմէ զաւառէ 'ի պայմանեալ ժամանակի մեծ ինչ գումար դրամոյ 'ի նորոգութիւն Կապիտոլիոնի. բայց էանց ժամանակն, և դրամն չեհաս 'ի ձեռս: Յիրաւի էր Սիղղայի բարկանալ. զի թէպէտ ոչ թէ Գրանիոս չէր Սիղղայի, այլ գաւառն չէր Գրանիոսի, բայց և այնպէս բռնազունից կամ՛ չէ պարտ խոստանալ, կամ՛ պարտ է կատարմանն միտ դնել: Եւ մանաւանդ Սիղղայի, որոյ կարի ինչ բարեբաստութիւն ոչ թողացուցանէր միջոց ժամանակի ընդ մէջ կամելոյ և 'ի ձեռին ունելոյ: Արդ կոչեալ առ ինքն զԳրանիոս, այնպէս մեծասաստ 'ի բարկութիւն բրդեցաւ 'ի վերայ նորա, մինչև 'ի բուռն առնել աղեղադոչ բարբառոյ սպառնալեացն մահու, կորեցաւ նորա երակ սրտի, և ընդ սպառնալիսն ժայթքեաց արիւն: Անհնար էր այնմ բռնաւորի ճահողագոյն քան զայն պատուհաս 'ի վերայ ածել իւրում բարկութեան: Զի թէ բարկութիւնն է եռանդն ինչ արեան, ոչ պիտէր այլ հիւթ 'ի շիջուցանել զայն: Բայց դուզնաքեայ ինչ փոխարինութիւն եղև այն իւր սակաւ արիւն, առ վտակօք արեան այլոց՝ զորս եհեղ:

Իսկ արդ եթէ այսչափ գժնդակ և ահաւոր է իւրաքանչիւր մասն բարկութեան ուրոյն, քանի՛ գժնդակ իցէ նա ինքն, եթէ տեսցես դու զնա յօրինակի ուրեք ամենայն մասամբք և ահաւորութեամբք: Եւ արդ հնար է քեզ տեսանել զնա աչօք, և գիտել մտօք, եթէ առաջի կացցես պատկերի Յուլիոսի Կեսարու, ճշգրիտ և ահաւոր օրինակի եթէ սուր բարկու-

թեան և եթէ կատաղւոյ, եթէ արիւնայնոյ և եթէ սեւամաղձայնոյ, եթէ խստամբակի և եթէ մեղմոյ, եթէ գթասիրի և եթէ անգթականի: Եթէ կամք իցեն քեզ փոխել զանուն բարկութեան, մարթիս անուն կոչել նմա Կեսար, և նկարել զնա սուր 'ի ձեռին [146]: Անուն իւր եղև նմա փուշակ, որ ոչ կարաց ծնանիլ, բայց եթէ վիրօք մօրն. ոչ կարաց թագաւորել, բայց եթէ վիրօք հայրենեաց. և ոչ մեռանել, բայց եթէ վիրօք իւրովք: Սիղղա, որ բարկասիրան էր քան զամենեսին 'ի Հռովմ, ծանեաւ թէ մանուկն այն լինիցի չար ևս քան զինքն: Ի ցոփ և 'ի լոյծ հանդերձից 'ի միտ էառ զվարուց նորա ցոփութիւն: Զի ոչ արդեօք հանդուժէր օրինաց ինչ, որ ոչն հանդուրժէր կալ գօտէպինդ: Ի գործակալութեան շինուածոց՝ հանդիսադիր լեալ թատերական խաղուց, քանզի չառաջին ամպոց ժխորեր զձայն մրմնջաձայն մժմոսաց, ահեղ գոռմամբ սաստեաց որոտմանց, զի լռեսցեն: Յորժամ հիւպատոսութեան էր հետամուտ, առաքեաց զմի 'ի զօրավարաց 'ի ծերակոյտ անդր սպառնալեօք, աւէ. թէ ոչ տայք ինձ զիշխանութիւնդ, առից զայն սրով իմով: Նոր էր եղանակն, արիւնազդեցութեամբ արկանել զանձամբ զպայծառափայլ պատիւ: Լեալ հիւպատոս՝ այնչափ բարկացաւ իւրում իշխանակցի վասն ազատականին օրինաց, մինչև բռնի արտաքսեաց զնա յատենէ, և այնպէս զարհուրեցոյց, մինչև նստիլ նմա միշտ առ անին թաքուցեալ որպէս զձագար: Վասն որոյ և յերկուց հիւպատոսաց Կեսար միայն էր 'ի համարի: Բարկութիւն Կեսարու նախ առաջին եմոյծ զնոր օրինակ արձակ գանից խրձանց հիւպատոսականաց, 'ի վերայ ուսոց եթէ սինկղիտոսաց և եթէ սարկաց. մինչև մարթ եղև ասել. Այս անսովոր անգթութիւն՝ 'ի Հռովմ եղև սովորութիւն: Այսպէս ապաժոյժ եղև բարկութիւն սորա, որ չպատեալ լուսանալոյ աւուրն՝ տայր գլխատել զերևելի սինկղիտոս, և զազնուական բամբիշս լուսով ջրագաց յիւրում պարտիզի. թէպէտ և առ բոցակնութեամբ նորա չէին պէտք այլոյ ջրագի: Վատթարեակ լեալ յանչափ բարկութենէ 'ի վերայ այնչափ հռովմայեցւոց, ըղձանայր զի ամենայն հռովմէական ժողովրդեան իցէ մի միայն գլուխ, 'ի կառափնատել զնա միանգամայն: Եւ որ խան է և ոչ յերկնաւորաց ակն ածէր բարկութիւն նորա: Կոչունս արարեալ ուրախութեան իւրոց բարեկամաց, որ որչափ նման էին նմա՝ նոյնչափ և սիրելի, վասն զի ցոլմունք փայլատականց զարհուրեցուցանէին զկոչնականս՝ յոտն յառնէ սա, և ձգեալ զսուսեր գրգռէր զԴիոս գալ 'ի մենամարտութիւն: Եցոյց թէ արդարև բարկութիւն է անմտութիւն. կարծեալ թէ վերին զօրութիւն ոչ կարէր սատակել զնա, և ինքն կարող էր յաղթել վերին զօրութեան: Որպէս և իցէ, այս յետին բարկութիւն գրգռեցոյց զմարա-



նեալսն 'ի դաւադրութիւն. որ այլ ոչ կարացին հանդուժել այնմ, որ ոչ հանդուրժէր գիւց: Եւ այնպէս սրով եմուտ յաշխարհ, և սրովք բարձաւ յաշխարհէ:

## ԳԼՈՒԽ Դ.

*Յաղագս անզգայութեան:*

Է սա մոլութիւն յամենականին. և է պակասութիւն բարկութեան զվրէժխնդրութեամբ: Ծնանի մոլութիւն 'ի բնական թմրութենէ, և 'ի ծառայական անզգացողութենէ անիրաւութեանց, մինչև ոչինչ կամ նուազ ըմբռնողութեամբ նոցա, ոչինչ կամ նուազ բարկանայ. վասն որոյ և ոչինչ վրէժխնդիր լինի, ոչ որպէս պարտն է, և ոչ յորժամ պարտն է, և ոչ որում պարտն է: Երևի մոլութիւնս ազգակից անփառասիրութեան. և իրօք ինչ բաժանորդ է նմա ըստ պատահման, բայց ըստ էութեան է տարորոշ: Անփառասէրն ոչ անձկայ պատուոյ, որում էր արժանի. անզգայն տանի անարգանաց. նա է թերատ 'ի ցանկութեան, և սա թերատ 'ի բարկութեան: Անշէջի անսասանք թէպէտ և զէնս ունիցին, չանձկան վրէժխնդրութեան. և անզգայն վասն զի չզգայ զխթան բարկութեան, թէպէտ և ունիցի ոյժ, ոչ ինչ փոյթ է նմա 'ի գործ դնել զայն: Դէմք նորա են միշտ միօրինակ, ոչ 'ի բարկութենէ բորբոքեալ, և ոչ յերկիւղէ գալկացեալ. զի երկոքին իսկ չազդեն ինչ 'ի նա տպաւորութիւն: Մինչ զի զօրէն ան ընդարմացելոյ՝ մինչև 'ի միտ առեալ մռայնոյ զանիրաւութիւնս. մինչև զգացեալ զերկիւղ՝ զգայ զվնասն. և մինչչև զառաջնոյ անարգութեանն խնդրեալ զվրէժ ընդունի զերկրորդն: Դրդեալ 'ի վրէժխնդրութիւն, ատեայ զդրդողն. նա ինքն նուաղէ զվնասն, և 'ի չքմեղս լինի այնմ որ արարն: Նա ինքն նախ առաջին 'ի խնդիր լինի հաշտութեան. և 'ի հատուցումն փոխարինի յանձն առնու ամօթապարտ պայման: Պատրուակէ զիւրն նկունութիւն իմաստասիրական առակօք: Մեծ յաղթութիւն է, ասէ, յաղթել բարկութեան, քան յաղթել թշնամւոյ. և թէ՝ մեծ վրէժխնդրութիւն նախատանաց է արհամարհել զնախատինս. և թէ՝ սիրտ վեհական անցանէ զանցանէ զամենայն վնասուք. և թէ՝ բարձրեալն Աստուած ոչ միշտ պատուհաս 'ի վերայ ածէ, 'ի բարկացուցանել մեր զնա: Կամի զապիկարութիւնն 'ի համար դասել հեզութեան:

Բայց և այն ճշմարիտ է, թէ զոր օրինակ երկչոտն 'ի դէպս

ինչ արխանայ, և փոքրոգին զգաստացեալ՝ լինի մեծանձն, որպէս ասացաք յիւրեանց տեղիս, նոյնպէս անզգայն նախատանաց՝ յանակնկալ պատճառաց սթափեալ և զգօնացեալ փոխէ զբնութիւնն: Իբրև առաւ երկիրն սուրբ քաջութեամբ Գոփրէտոսի Բուլլոնի, առաջին Թագաւորն Կիպրոսի եղև այր իշխան բարի և անմեղ, բայց այնպէս մեղկ և Թուլասիրտ և Թմրեալ, մինչև ընդ առաքինութեանն չցնելոյ նախատինս՝ ընծորդել նմա զանզգայութեանն մոլութիւն: Որ ոք 'ի հպատակաց ընդ Թագաւորին ունէր ինչ գժգմնութիւն, խոժոռեցուցեալ զնա իւիք կամ ամաչեցուցեալ, կարող էր զիջուցանել զնա. և նա որպէս համակամ ցածնոյր՝ առանց բարկանալոյ և վրէժ խնդրելոյ: Դէպ եղև զի ազնուական ոմն բամբիշ վասկոնացի 'ի գալն իւրում 'ի սուրբ տեղեացուխտաւորի սքեմաւ, անօրէնք ոմանք 'ի Կիպրոս յարեան 'ի վերայ, և գեղջկօրէն Թշնամանեցին զնա: Կինն ազնուական անմխիթար սրտցաւութեամբ չոգաւ խնդրել իրաւունս յարքայէ. այլ ոմն ասէ ցնա. 'ի գլխէլ քեզ առ արքայ՝ յայանեսցես այս զնախատինս, այլ ոչ գտցես իրաւունս. զի ոչ խըստագոյնս ինչ խնդրեսցէ նա զվրէժ զոտարի նախատանաց քան զիւրոց: Այս լքուցիչ զրոյց ոչ եբարձ 'ի ցաւագնելոյն զըրտանդութիւն, այլ յաւել ևս 'ի վերայ: Խորհուրդ հարցեալ իւրոց ցաւոց՝ եկն եկաց առաջի արքային, որոյ յառաջածանօթ լեալ իրացն եղելոց 'ի կանխիկ լրոյ, զծաղու եկեալ էր ընդ քիմս ծաղրելով: Ապա մատուցեալ բամբիշին բազում արտասուօք, ասէ 'ի ձայն բարձր. Տէր արքայ, ոչ գամ առ քեզ՝ ակն ունելով առ 'ի քէն վրէժխնդրութեան ընդ արհամարհանան՝ զոր ընկալայ 'ի քում Թագաւորութեան. այլ զի ուսայց միայն, Թէ ո՞րպէս հանդուժես դու քոյոյդ, զորս օրըստօրէ, որպէս լսեմ, հասուցանեն քեզ: Ի քէն ուսեալ, Թերևս կարողացայց երկայնմտութեամբ տանել խմոյ նախատանաց. զորս Թէ հնար էր, յօժարամիտ քեզ ընծայէի, որովհետև այդպէս քաջ ժուժկալես քոյոցդ: Յայն բարբառ, Թագաւորն որ ցայնվայր կայր անզգայ և նիրհ, զարթեաւ իբրև 'ի խոր քնոյ: Յասումն սանաստառոյց և քնէած՝ ջեռնուլ սկսաւ առ սրտիւ, և խեթեաց 'ի վրէժխնդրութիւն: Ապա սկիզբն արարեալ Թագաւորին 'ի նախատանացն հասուցելոց յիւրոց հպատակաց առ այն կին, խստիւ եղև նոցա վրէժխնդիր: Յայնմ օրէ և առ յապայ ոչ ոք 'ի Թագաւորաց այնպէս խստիւ պատուհասեաց զօրինազանցս և զարքունի իշխանութեանն անարգօղս, որպէս սա:



## ԳԼՈՒԽ Ե.

*Յաղագս միջասահմանութեան 'ի մէջ բարկութեան և անզգայութեան:*

Արդ հնար է քեզ հեշտեաւ առնուլ 'ի միտ, Թէ ո՞ր իցէ հեզութիւն: Զի Թէ կարի ինն բարկանալ է մոլութիւն. և կարի ինն նուազ բարկանալ՝ է մոլութիւն, ապա բարկանալն միջասահման՝ լինի առաքինութիւն. և այն է հեզութիւն: Առիցես Թէ ոչ բարւոք է ձեռնարկդ: Զի Թէ գողանալ բազում, է մոլեկան, և գողանալ սակաւ՝ է մոլեկան. ապա գողանալն միջասահման՝ է առաքինութիւն: Պատասխանեմ. Ոչ հանդէտ է հետևութիւնդ. զի գողանալն ըստ ինքեան է միշտ մոլեկան, զի միշտ է հակառակ արդարութեան: Բայց բարկութիւնն ըստ ինքեան չէ ինչ չար, այլ կիրք պարգևեալ 'ի բնութենէ, որպէս յեսան արիութեան և խթան երկիւղի և հրահանգ հանճարոյ, գործի յոյժ կարևոր՝ դժուարին իրողութեանց: Ճարտարախօսն բարկացեալ՝ կորովագոյն ատենաբանէ, բանաստեղծն բարկացեալ՝ մտաւորագոյն սողէ, եղերերգուն բարկացեալ աղդողագոյն շարժէ, մարտիկն բարկացեալ՝ արիագոյն շահատակէ: Բայց յայս ամենայն բարկութիւնս՝ չափաւորութեան պէտք են, զի մի՛ հակառակ ինչ գործեսցեն:

Առիցես. եԹէ վնասեալն ունի զօրութիւն, աւելորդ է բարկութիւն. եԹէ չունի զօրութիւն, յիմարութիւն է բարկութիւն: Զի նմա հնար է վրէժ խնդրել անխռով, և սա փոխանակ վրէժ խնդրելոյ միոյ վնասու՝ գրգռէ միւս ևս վնաս: Պատասխանեմ Թէ բարկութիւնն զօրացուցանէ զհաւասար զօրութիւնս. առաւելու զփոքրն, և սթափեցուցանէ զմեծն: Փիղն Թէպէտ և գղեակ ինն է շնչաւոր, կնճիթ նորա 'ի տեղի ափգի, և մորԹն անԹափանց 'ի տեղի զրահի. բայց և այնպէս ցուրտ է և Թմրեալ, որպէս լեառն ձիւնաԹաղ 'ի պատերազմի. եԹէ ոչ կապերտ ինչ շառագոյն համակրութեամբ գունոյն ջեռուսցէ զարիւնն, և վառեսցէ զբարկութիւնն: Ո՞ էր հուժկու 'ի խնդրել զվրէժ նախատանաց զիւրոց և զօտարի, իբրև զնախայիշատակեալ արքայն Կիպրոսի. բայց եկաց նա անփոյԹ և անզգայ, մինչև 'ի քաջասիրտ յանդիմանութենէ անտի վառեալ բորբոքեցաւ բարկութիւնն 'ի պաղեալ սրտի անդ: Զիւրև ունիցի խրձունս գանից հիւպատոսն կամ Թագաւորն. իցեն առ նովաւ արբանեակք և սպասաւորք առանի. դէպ ք ինչ իցեն վրէժ խնդրելոյ ոչ անձին ինչ նախատա-

նաց, այլ յանցաւորութեան օրինաց. ոչ զինեալ ոք իցէ յանցաւորն կամ փախստական, այլ անզէն և կալանաւոր. բայց և այնպէս պիտի գրգիռ ինչ ցասմնականին, կամ 'ի ջեռուցանել զկարի իմն ցրտութիւն, և կամ 'ի յաղթել բնաւոր ախտակցութեան: Ոչինչ այնպէս է վնասակար, որպէս խնայել յարիւն չարագործաց. և ոչինչ այնպէս խժդժական, որպէս հեղուլ զայն արեամբ ցրտագին: Այն գրգիռ ոգւոյ՝ եթէ յիւրն հայի վնաս, կոչի բարկութիւն. և եթէ 'ի վնաս օրինաց, կոչի նախանձախնդրութիւն: Բայց եթէ նախանձախնդրութիւն և բարկութիւն չիցեն չափաւորեալ բանիւ. լինի անխոհական: Ապա հեզութիւն չէ ջերմութիւն ինչ սաստիկ, կամ թմբրութիւն ինչ սառնասառոյց, այլ չափաւորութիւն ինչ ցասմնականին, որ վասն ընկալեալ նախատանաց ոչ ջերմանայ և ոչ ցրտանայ, բայց եթէ վասն պատճառի, յոյր սակս պարտ է, և ընդդէմ որում պարտ է, և որով օրինակաւ պարտ է: Զայս չափ մարթ է ունել ամենայն մարդոյ, որ ընդունակ է բանի. զի խիղճն մտաց աղաղակէ յոգի, և ուսուցանէ քաջի ունկնդրի զեզր սահմանաց՝ որ ընդ յաւէտ և ընդ նուազ: Ոչ մեղանչէ, որ ոք ոչ ճանաչէ թէ մեղանչէ և չար առնէ. և որ ոք ճանաչէ զչարն, ճանաչէ և ըզբարին:

Հեզն ոչ բարկանայ և ոչ ցածնու, բայց եթէ վասն համեստ պատճառի՝ այսինքն վասն բանաւոր պատշաճողութեան: Պատշաճող իմն է մարդկային կենակցութեան, զի որ ոք հասուցանէ վնաս կամ անպատուութիւն, տուժեսցի զվնասն և զանպատուութիւն. զի պահեսցի 'ի հասարակութեան հաւասարութիւն. եւ առաւել եթէ նախատինքն իցեն ծանր և չար օրինակ, և մեծ եւս չարիք զհետ գայցեն այնմ. և յորժամ լինիցին կամօք նախատինս գնելոյ: Զի որովհետև որ վնասէն միում միայնոյ, կարող է ամենեցուն վնասել, առանձնաւոր ինչ նախատինք լինին այնուհետև դատ հասարակաց: Ապա հեզն՝ թէպէտ և չէ անզգայ իւրում վնասու իբրև զթմբեալն, և ոչ ցանկայ փոխադարձի, բայց շարժի ոչ 'ի թափոյ բարկութեան, և ոչ 'ի խնդութենէ ընդ այլոց վնաս, որպէս բարկացողն. այլ զի վնասակարին վայել է պատիժ: Ապա եթէ ցածնու, ոչ ցածնու 'ի տկարութենէ սրտի, այլ զի ոչ վայել է մարդոյ լինել ամարդի. և ոչ մահկանացու սրտի վառել անմեռ բարկութեամբ: Վասն այսորիկ վտանգաւոր իմն է նախատինս գնել հոգևոր անձանց: Զի եթէ առ անգամ մի հատուցանեն 'ի միտս, թէ ճահողական իմն է և աստուածահաճոյ պատուհասել զայն որ արար, այնուհետև ոչ զոք յաշխարհայնոց գտցես երբէք այնպէս անհաշտ: Առնէ առանց բարկութեան՝ զայն զոր հազիւ առնէր բարկացող ոք:

Հեզն հայի և յանձն որում բարկանայ, կամ զիջանի: Շունն



'ի լսել զբաղխումն դրան, զայրանայ և հաչէ. բայց տեսեալ թէ տէր իւր է, անդէն վաղվաղակի շնթէ և քծնի: Սոյնպէս այր հեզ յընդունել զնախատինս, զգայ զայն, և իբրև այն զի 'ի հասարակաց զանգուածոյ է զանգեալ, խռովի ընդդէմ նախատողին, թէպէտ և անծանօթ ոք իցէ: Բայց իբրև ճանաչէ, թէ է նա տէր իւր կամ սիրելի բարեկամ, կամ անմեղ ոք կամ անմիտ է գռեհիկ, ընդ տէր իւր ոչ խեթահարի, բայց իմացուցանէ զիւր իրաւունս. ընդ բարեկամին գանգատի, բայց անդրէն հաշտի. անմեղին չլինի վրէժխնդիր, անմտին ախտակցի, անարգին դիւրաւ ներէ, զի կարի իմն դիւրին է առնուլ 'ի նմանէ վրէժ:

Իսկ ըստ եղանակին, հեզն ոչ թողացուցանէ իւրում բարկութեան անցանել քան զպարտն: Նա յերկուց կողմանց միջի որ ընդ յաւէտ և ընդ նուազ, առաւել միտէ 'ի նուազն քան 'ի յաւէտն: Կարի իմն դիւրին է բարկացելոյն միտել 'ի չափազանցն. վասն այսորիկ առաւել փոյթ է հեզութեան սանձել զբարկութիւնն, քան գրգռել զայն: Եւ այս առաւել պատշաճող է մարդկութեան և բանաւորութեան. զի որ գործէ նուազ բորբոքմամբ, գործէ առաւել խոհականութեամբ: Պիւռոս քաջ վարժապետ մանկավարժութեան՝ զայս սակս յիշեցուցանէր նահատակաց և ըմբշամարտից, սանձել զբարկութիւն. զի սիրտ խռովեալ՝ առաւել ուշ եդեալ 'ի վնասել այլում քան 'ի պաշտպանել անձին, դիւրաւ ընկճի: Վասն այսորիկ գիտելով հեզահոգւոյն թէ բարկութիւնն է անհաւատարիմ խորհրդական, ոչ վաղվաղէ, այլ մեղմով բերի 'ի վրէժխնդրութիւն, զի տացէ ժամանակ հովանալոյ բարկութեան: Մեծ փիլիսոփայն Աթենոդորոս բնակեալ առ ժամանակ մի առ Օգոստոսի, իբրև արձակեցաւ դառնալ 'ի Յունաստան՝ ետ նմա զայս վերջին խրատ. Ի բարկանալ քում, կայսր, մի արասցես և մի ասասցես ինչ, բայց յետ քաղելոյ քոյ բովանդակ զայբուբենս: Ոչ գիտեմ, քաղեա՞ց արդեօք Օգոստոս զայբուբենս՝ 'ի վաղվաղել զպատուհաս դըստեր իւրոյ: Բայց գիտեմ, թէ զայս խրատ յանձին կալաւ Արքիտաս տարենտացի. որոյ խոժոռեալ ընդ ստահակութիւն իւրոց շինականաց՝ ասէ. Պատուհասէի արդեօք զձեզ, եթէ չէի բարկացեալ:

Ապա յամր շարժի հեզն, և դիւրաւ ցածնու բանաւոր փոխարինօք ըստ դատելոյ բարեկամաց, քան ըստ դատելոյ իւրոյ. զի ոչ ոք է յանկաւոր դատաւոր 'ի դատ իւր: Շատանայ և սակաւուք քան զարժան համարեալն. և անբասիր առնէ զմիտ իւրոյ վնասապարտին. զի որպէս ասացաւ, հեզութիւնն առաւել միտէ 'ի նուազն քան յառաւելն: Նա որպէս կիրն ջրով վառի, և իւղով շիջանի, նոյնպէս բարկութիւն հեզոյն դիմադարձութբ վառի, և խոնարհութեամբ և ողոք բանիւք

վնասապարտին չիջանի : Հեզութիւնն է մեծանձնեայ , ըմբռնացելոյն ընդդէմ դառնայ , այլ խոստովանողին զյանցանսն ների : Որպէս որոտումն գարնայնոյ է նշանն , նոյնպէս ըսպառնալիք հեզոյն յոլովակի են առանց վրէժխնդրութեան . և ընդ լռել բարկութեան՝ լռէ և յիշատակ վնասուն :

## ԳԼՈՒԽ Զ.

*Թէ զինչ ընդ մէջ է հեզութեան և խրոց համանմանից :*

Ասացաք 'ի սկզբան անդ , թէ հեզութիւնն ենթադրէ չորս պարագայս · Զըմբռնումն նախատանաց , զբարկութիւնն գրգռեալ յըմբռնմանէ , զբաղձանս վրէժխնդրութեան , և զչափաւորութիւն բարկութեան և վրէժխնդրութեան : Ապա նախ առաջին արաձի հեզութիւն յիւրոց ծայրից , 'ի բարկութենէ և յանզգայութենէ : Տրոհումն որ 'ի սկզբան անդ երեւի յայժ դժուարին · իբր զի մէջն այնպէս չփոթ է ընդ ծայրից , մինչ զի թէ զայրանայ հեզն , երեւի բարկացող · և թէ չզայրանայ , երեւի անզգայ : Եւ զորին հակառակն , թէ բարկացողն խնդրէ զվրէժ՝ երեւի նախանձախնդիր , և թէ անզգայն ոչ խնդրէ զվրէժ , երեւի հեզ : Այնպէս անգէտ են մարդիկ առ որոշել զմոլութիւնս յառաքինութեանց , որպէս անփորձ ակնավաճառք՝ զկեղծ գոհարս 'ի ճշմարիտ գոհարաց : Ապա թուի թէ պիտէր մեզ պատուհան Սոկրատայ [137] , յաւել զաչս 'ի խիղճ մտաց այլոց , 'ի կշռել զխորհուրդս և զմիտս · զի մի՛ յանդուգն դատեսցուք դատաստան : Բայց յայժ դիւրին լիցի այս դատաստան կշռադատութեան , թէ հայեսցուք յայն երիս պարագայս , որք ասացան , յորպիսութիւն նախատանաց , 'ի վիճակ անձին , և 'ի համեմատութիւն վրէժխնդրութեան :

## ԳԼՈՒԽ Է.

*Թէ զինչ ընդ մէջ իցէ հեզութեան և գթութեան :*

Հեզութիւնն ենթադրէ զըմբռնումն անձնական վնասու , որ բնաւորապէս վառէ զբարկութիւնն առ առանձնաւոր վրէժխնդրութիւն : Գթութիւն ենթադրէ զըմբռնումն վնասու օրինաց , և հասարակաց արդարութեան , որ շարժէ զնախանձախնդրութիւնն առ պատուհաս : Բարկութիւնն է շարժումն ինչ կրից , որ բաղձումն անգամ հրամայէ բանին : Նախանձախնդրութիւնն է շարժումն ինչ բանին , որ և սա յոլովակի շարժէ զկիրս փոխադարձ համախոհութեամբ : Մինչ զի հնար է բարկութեան լինել ակամայ , բայց նախանձախնդրութիւնն է կամաւոր · զի է շարժումն կամաց լուսաւորելոյ 'ի մտաց , և յայս սակս բաղձումն անգամ վրիպական մտաց՝ նախանձախնդրութիւնն լինի անընտրողական : Ապա որպէս հեզութիւնն է միջասահման իմն 'ի մէջ բարկութեան և անզգայութեան · նոյնպէս գթութիւնն է միջասահման իմն 'ի մէջ կարի սաստկապահանջութեան և կարի ներողութեան : Եւ վասն այսորիկ գթութիւնն՝ սեպհական է գերագահ ատենակալաց և իշխանաց , հեզութիւնն սեպհական է մասնաւոր անձանց : Թէպէտ ճշմարիտ է զի եթէ ընդ հասարակաց վնասուն լծորդի և անձնական վնաս իշխանին , յայնժամ հնար է ընթացակցել հեզութեանն ընդ գթութեան : Տիգրան [148] յայտնեցաւ հասարակաց թշնամի ժողովրդեանն Հռովմայ՝ պաշտպանութեամբ Միհրդատայ , և առանձինն թշնամի Պոմպէոսի արհամարհութեամբ անձին նորա : Իբրև պարտեցաւ քաջագիտութեամբ Պոմպէոսի , կամ ձախողութեամբ իւրոյ բաղդի , զզէնսն և զպսակ յոտս ընկէց յաղթականին · որ կարող գոլով պատուհաս 'ի վերայ ածել հասարակաց վնասուն , և հանել զվրէժ քինու զիւրոյ վնասուն , միանգամայն ներեաց՝ միումն գթութեամբ և միւսումն հեզութեամբ : Վասն զի թագ 'ի գլուխ եդեալ նորա , և զպարտութեան փարեալ , հաստատեաց զնա անդրէն 'ի թագաւորութեան · և ընկալաւ յիւր առաջին բարեկամութիւն : Բայց զգթութենէ դարձցին բանք յիւրում տեղւոջ 'ի ճառս արդարութեան :



## ԳԼՈՒԽ Ը.

*Թէ զինչ ընդ մէջ իցէ հեզութեան և ողորմութեան :*

Նման հեզութեան է ողորմութիւնն [149] առ ռամիկս , այլ ոչ առ իմաստասէրս՝ որք ոչ 'ի համար դասեն զնա առաքինութեանց , որպէս զհեզութիւնն · վասն զի հեզութիւնն չափաւորէ զկիրս բանիւ , բայց ողորմութիւնն է տկարութիւն ինչ կրից · որ բնաւոր համակրութեամբ ըմբռնեալ զայլոյ թշուառութիւն իբրեւ զիւր , տայ կարեկից լինել չարչարելոյն , և շարժէ յարտասուս եւս առանց պատճառի : Վասն այսորիկ սեպհական է սա երկչոտաց և տկարաց , կանանց և զառամելոց · ոյք 'ի կարի իմն գորովանաց սրտի լան ընդ լալիսն , և հեծեն ընդ հեծութիւն չարագործաց , յորժամ 'ի վերայ գայ նոցա արժանահաս պատուհասն : Եւ ոչ միայն չար-

ժին տաքս ընդ ճշգրիտ ողորմելութիւնս, այլ և ընդ կեղծս կամ ընդ նկարածս. որպէս 'ի պատկերս երևեցուցիչս տանջանաց Պրոմէթէոսի, և 'ի սուեղծաբանութիւնս արտասուաց Նիոբեայ, և յեղերերգութիւնս տառապանաց Եդիպոսի. թէպէտ և որ լայ զնոսա, գիտէ թէ են կեղծիք [150]: Վասն այսորիկ 'ի հասարակապետութիւնս հաստատեալ 'ի քաղաքայնոց եղերերգութիւնք և խաղք մենամարտից, առ փարատելոյ 'ի բաց՝ յաճախութեամբ ողորմ տեսարանաց, որ կեղծեօք և որ իրօք, զհամակրականն զայն ակարութիւն, զկնատ թշնամի արիութեան և արդարութեան: Վասն այնորիկ 'ի ծերակոյտն Աթենայ արգելեալ էր ատենախօսից շարժել զդատաւորս գորովանօք յողորմութիւն և յախտակցութիւն: Բայց և այնպէս, թէ կամք իցեն վերածել զսա 'ի մոլութիւն կամ յառաքինութիւն մարթ է ասել. զի թէ ողորմութիւնն ընդդէմ բանի շարժէ զմիտս կանայեաց և անարեաց 'ի դատաստանի՝ ախտակցիլ այնմ ում ախտակցիլ չէ արժան ոչ իրօք և ոչ կեղծեօք, վերածի 'ի մոլութիւն անզգայութեան: Եւ զորին հակառակն՝ թէ ախտակցի ոք ճշմարիտ թշուառութեան, որում յիրաւի է ախտակցիլ, վերածի յառաքինութիւն հեզութեան:

## ԳԼՈՒԽ Թ.

*Թէ զինչ ընդ մէջ իցէ հեզութեան բարոյականի և աւետարանականի:*

Հեզութիւնն բարոյական ընծայէ զվկայս բնութեան, որ թողացուցանէ մտանելոյն զբանաւոր վրէժխնդրութիւն ևս և իւրով ձեռամբ. ըստ այնմ կանոնի փոխարէն հատուցման, թէ զոր ինչ առնէ ոք, զնոյն և կրեսցէ: Հեզութիւնն աւետարանական ընծայէ զվկայս շնորհաց. յորում բանն յաւիտենական հայեցեալ՝ թէ իւր հաւատացեալք իցեն ինքեան նմանող, արգել նոցա զվրէժխնդրութիւն, պահեալ զայն աստուածային տեսչութեան, ըստ այնմ երկնաւոր կանոնի՝ թէ իմ է վրէժխնդրութիւն, և ես հատուցից: Մինչև հեզութեանն փիլիսոփայականի չափաւորել զբարկութիւն բարոյական առթիւ, և աւետարանականին չափաւորել զբարկութիւն գերբնական առթիւ: Նորայն վախճան է երանութիւնն ժամանակաւոր, և սորայս վախճան է երանութիւնն յաւիտենական:

Բայց որպէս ոչ գիտէ աւետարանն նպատամոյց լինել անիրաւութեան՝ անդատապարտութեամբ մեղաց, նոյնպէս ոչ արգելու արդարութեան պատուհասել զնոսա և յերկրի աստ. միայն թէ պատուհասն մի յառաջ գայցէ 'ի բորբոքմանէ բարկութեան, այլ 'ի նախանձուէ արդարութեան. ոչ վասն սիրոյ վրէժխնդրութեան, այլ վասն ուղղութեան յանցաւորին. և ոչ 'ի վնաս վնասարարին, այլ առ հասարակաց օգուտ: Նոյնպէս ոչ գիտէ աւետարանն, թէ ընդունողն վնասու և անպատուութեան չիցէ կարող դիմել առ դատաւորն առ անդրէն նորոգութիւն: Զի թէ դատաւորն ունի զտեղի Աստուծոյ, վնասաւորն՝ Աստուծոյ թողու զիւր վնասն, յորժամ թողու զայն 'ի ձեռս դատաւորի. որում պարտ է լինել արդար, վասն զի Աստուած է արդար: Բայց և յայս ևս դիպուած հեզութիւնն աւետարանական և բարոյական պահանջէ զի վնասաւորն մի շարժեսցի 'ի ծարաւոյ վրէժխնդրութեան, այլ 'ի պատշաճողութենէ արդարութեան: Այո, յորժամ վնասն է ծանր և բարկութիւնն շարժեալ, դժուարին իմն է որոշել զերկոսին զայսոսիկ վախճանս, և յաղթել յարձակման բնութեան բարոյական հեզութեամբ. բայց չէ այդ դժուարին աւետարանական հեզութեան՝ գերբնական շնորհօք, որ ոչ երբէք զլացեալ լինի այնմ՝ որ խնդրէ:

# ԳԻՐՔ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ՔԱՂՑՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ *կամ* ՀԱՃՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՅՐԻՑ ՆՈՐԱ.

### ԳԼՈՒԽ Ա.

*Յաղագս քաղաքական կենցաղավարութեան ընդհանրապէս:*

Ի կենդանեաց ոմանք են անընկերականք և մենակեացք, որպէս Թռչունք յափշտակողք. և ոմանք ընկերականք և ընտանեկանք, որպէս մեղուք: Զի նոքա հոգացեալ միայն վասն իւրեանց անհատից, սիրեն միայն զինքեանս. սոքա կեցեալ 'ի հասարակութեան, սիրեն զիւրեանց տեսակ: Մարդիկ առաւել են ընկերականք քան զայլ ամենայն շնչաւորս: Զի որովհետև ոչ ծնանին բնաւք վասն ամենայնի, այլ ուսանին 'ի միմեանց, և պէտս ունին իրերաց, հարկ է նոցա սիրել ըզկեանս ընկերական. և կենցաղակցութիւն նոցա է փոխապահպանողութիւն [131]: Վասն այսորիկ տեսչութիւնն ես նոցա բարբառ և արուեստ գրութեան, բարբառել 'ի մտաց և 'ի հեռաստանէ, և կենցաղակցել ընդ ամենայն աշխարհի, հաստատեալ զխօսս ուր ոչ հասանէ ձայն: Ապա որ ոչ սիրէ զքաղաքային կենցաղավարութիւն, ոչ կարէ լինել անդամ քաղաքական մարմնոյ, մեկուսացեալ 'ի հաղորդակցութենէ, որ է յօդ հասարակութեան: Վասն այսորիկ Արիստոտէլ 'ի վերայ բերէ, թէ մարդ մենակեաց կամ Աստուած է և կամ գազան. զի Աստուած վայելէ յինքեան միայն, և գազանք յափշտակողք ոչ սիրեն զընկերութիւն:

Արդ երեք ինչ զքաղաքական կենցաղավարութիւն տանեն բերկրական. երկուսն 'ի տոհմս կամ յանհատս, և մին յորս ընդ խառն: Ի տոհմս՝ բերկրութիւն ինչ պարգեւի, 'ի տալ զհաւանութիւն և զգովեստ ասից և իմաստից այլոց, և բերկրութիւն ինչ ընկալեալ լինի, 'ի հաղորդել այլոց զիւր իմաստս: Իսկ յորս ընդ խառն, պարգեւի և ընկալեալ լինի բերկրութիւն 'ի փոխադարձ հաճոյս ծիծաղական ասից և ծա-



ղուց: Զի հանապազորդ անծաղր առուգութիւն՝ 'ի տաղտկալեաց է համարի. և սիրտ իբրև զաղեղն՝ կորովանայ, եթէ երբեմն թողանայ: Ըստ այսց երից պարագայից, երիս ազնուական առաքինութիւնս որոշէ Արիստոտէլ 'ի քաղաքական կենցաղավարութեան: Առաջինն 'ի գովել զայլոց իմաստս, և սա կոչի Քաղցրախօսութիւն, կամ Հաճոյականութիւն, կամ Սիրողութիւն: Երկրորդ 'ի հաղորդել այլոց զիւր իմաստս. և սա է Ճշմարտախօսութիւն: Երրորդ 'ի զբօսաւրել փոփոխակի զուարթարար ասիւք, որ ընդ խաղս. որ և յայս սակս կոչի Զուարճախօսութիւն:

Զայսց երից առաքինութեանց խօսեսցուք ուրոյն ուրոյն յերիս յաջորդ գլուխս, սկիզբն արարեալ յառաջնոյն:

### ԳԼՈՒԽ Բ.

*Յաղագս քաղցրախօսութեան կամ հաճոյականութեան:*

Սա որպէս ասացաւ է միջասահման ինչ ընդ մէջ հաճոյանալոյ և հակառակելոյ այլոց՝ որչափ վայել է, 'ի քաղաքական կենցաղավարութեան: Որ անցանէ ըստ չափ 'ի հաճոյանալն, է մարդահաճոյ. որ անցանէ ըստ չափ 'ի հակառակիլն, է հակառակասէր. որ միջասահման հաճոյանայ կամ հակառակի, է քաղցրախօս: Բայց այս առաքինութիւն իբրև զհեզութիւնն ոչ բարւոք ճանաչի յիւրմէ անուանէ: Զի գոլով նորա երկու այլեայլ պաշտօն, մին հաճոյանալոյ և միւսն հակառակելոյ, հաճոյականութիւնդ անուն չէ համաչափ, վասն նշանակելոյ իւրոյ զմի մասն միայն իւրոյ սահմանի: Նա այնպէս չփոթ է սա ընդ երկոցունց ծայրից, որ թէ հաճոյանայ, երևի մարդահաճել. թէ հակառակի, երևի կռուել: Եւ զաւրէն հակառակն, մարդահաճոյն երևի հաճոյական. և հակառակասէրն երևի՝ իրաւամբք հակառակող: Մինչ զի 'ի սահմանէն իսկ անմարթ է ճանաչել, թէ այս առաքինութիւն հաճոյական իցէ թէ անհաճոյական, խայթիցէ թէ փայփայիցէ, խածանիցէ թէ համբուրեսցէ: Ապա և յայսմ վայրի հարկ է ճանաչել նախ զծայրսն, իբրև առաւել զգալիս և բացերևս. և ապա զմիջասահմանն, որ է առաւել խրթին և չփոթ:

# ԳԼՈՒԽ Գ.

## Յաղագս մարդահաճութեան:

Սա է աւելազանցութիւն հաճոյականութեան և սիրողութեան զգովեստս ասից, իմաստից և գործոց այլոց՝ 'ի քաղաքական կենցաղավարութեան: Բայց որպէս Տիմանթէս չափմամբ բութոյ՝ չափեաց բովանդակ զմարմին զանապատկերին մեծի[132], նոյնպէս յայսմ ընտանի մարդահաճութենէ մարթ է ամենայն ումեք ճանաչել համեմատութեամբ զմարդահաճութիւն արքունեաց և խորհրդականաց. իբր զի մեծ են սորա հեռաւորութիւնք, այլ բնութիւնն նոյն: Ապա երեք ինչ մտածին յայսմ մոլութեան: Ով և ով լիցեն անձինք, որք մարդահաճութիւն ընդունին: Յինչ վախճան հայիցի այն որ մարդահաճէ. և որով օրինակաւ վարիցի 'ի մարդահաճել խրում:

Յաղագս առաջնոյն, հաստատեալ է ամենայն մարդոյ իղձ գովութիւն ընդունելոյ: Այս իղձ ըստ ինքեան չէ մոլեկան. այլ մանաւանդ է գովելի ինչ յատկութիւն մեծանձնութեան, եթէ գովասքն են մեծամեծք. կամ համեստութեան, եթէ են միջակայինք: Բնութիւնն ետ զսէր գովութեան 'ի խթան առաքինութեան, և զերկիւղ պարսաւանաց 'ի սանձ մոլութեան: Որ չամչի 'ի գովեստ, չերկնչի 'ի պարսաւանաց, և որ չերկնչի 'ի պարսաւանաց, չզգայ զամօթ. և որ չզգայ զամօթ չարի, դիւրամէտ է առ ամենայն չարիս: Թեմիստոկլէս գտեալ 'ի ժողովս ուրեք երաժշտաց բազմաց որք զիմանկանակաւ երգէին, իբրև հարցաւ թէ ո՞ր ձայն առաւել հաճոյ եղև քեզ, ետ պատասխանի. Այն որ երգեաց զիմ գովեստ: Եւ յիրաւի էր նմա զայս ասել. զի գովութիւնք լիով ձայնակից էին իրացն խակութեան: Թեմիստոկլէս արժանի էր գովութիւն ընդունելոյ. ուստի և էր ճշգրիտ և բուն առարկայ գովասանութեան: Բայց բազումք առանց արժանաւորութեան սիրեն զգովութիւն, և սոքա են բուն առարկայ մարդահաճութեան: Դրախտահաւն անուն թռչուն՝ օդով կերակրի, օդով կերակրի և գետնասուն, բայց նա թռուցեալ 'ի բարձունս կերակրի յստակ և անխառն օդով. իսկ գետնասունն սողեալ ընդ երկիր՝ կերակրի անմաքուր և խառնակ օդով: Առաքինւոյն և փառամոլին սնունդ է գովեստ. բայց նա սնուցանէ զգովեստ ճշմարիտ զառաքինեացն. և սա զգովեստ սուտ՝ զապականեալն մարդահաճութեամբ:

Զի՞ք որք այնպէս թափուր յարժանաւորութենէ, որ ոչ ունիցի բարի կարծիս զանձնէ. և որ վստահ է յիմիք՝ դիւրահաւատայ այնմ, մանաւանդ եթէ յորում սակաւ գովի, ունիցի ինչ զոյն ուրուական: Ամենայն կին տգեղ իբրև զԳորգոնա՝[155] լուեալ թէ գեղեցիկ կոչի, խնդայ, կարծեալ թէ գէթ 'ի միջակայնոց իցէ: Կին որոյ գեղ միջասահման իցէ, լուեալ թէ չքնաղ կոչի, խնդայ, կարծեալ ըստ միտս այլոց լինել այնպիսի: Իսկ կին չքնաղ՝ լուեալ թէ հրեշտակ կոչի կամ աստուածուհի, խնդայ, կարծեալ թէ այնպէս համարիցին, որպէս և ասեն: Աստիճանք արժանաւորութեան այնպէս են հպաւորք, որ ստորինն չփոթի ընդ միջակայնոյն, և միջակայինն ընդ վերնոյն. և վասն այսորիկ բարւոք կարծեք զանձնէ՝ գոյզն աջակցութեամբ արտաքնոյ՝ երևելս առնէ դիւրաւ յաստիճանէ յաստիճան: Հռովմէական կայսերք 'ի մարդահաճոյ ծերակուտէն աստուածական անուն ընկալեալք, զառաջինն ամաչէին, ապա երկուանային, հուսկ ապա հաւատային. զի փառամոլութիւնն փոքր փոքր հաւատացուցանէ, թէ զոր բազումք պնդեն հնար է թէ լինիցի ճշմարիտ: Վասն այսորիկ անամօթաբար ակըն առեալ բազմաց, զոր անամօթաբար կանգնէր նոցա ծերակոյտն, հաւատային ունել աստուածական ինչ զօրութիւն 'ի կուրծս, և ճառագայթ յերեսս: Յայտ է թէ մարդահաճութիւն ինչ այդպէս յայտնի սուտ և չնչին, զերազանց արժանաւորութեան՝ բարկութիւն բերէ. զի երբեմն անարգ մարդահաճութիւն նուաղէ զյարգ ճշմարիտ գովեստից: Արիստոբուղոսի շարագրեալ ներբող ինչ քաջութեանց Աղեքսանդրի, սպրդեցոյց յայն սուտ ինչ 'ի ճոխութիւն, թէ նետահար սատակեաց նա զփիղ 'ի պատերազմի: Աղեքսանդր ընկէց զայն ներբող 'ի Հիդասպ գետ. փոքր միւս ևս՝ և զներբողաբանն ընկեցեալ էր յայն: Գովեստ էր այս անհաւատալի, զի 'ի մարթ փղի ոչ գծէ նետ, որպէս և ոչ խայթ ճանճի 'ի պղպատ: Իսկ զինարդ ոչ ընկէց 'ի Լիբիկ գետ զԱմմոնիոս քուրմ, որ կոչեաց զնա որդի Արամազդայ. մեծ ևս մարդահաճութիւն էր քան զայն. որչափ դիւրագոյն է նետահար սպանանել զփիղ, քան ծնունդ լինել Արամազդայ: Ապա ոչ ատեայր Աղեքսանդր զմարդահաճութիւն այլ ատեայր զփոքր մարդահաճութիւն, որում հնար էր 'ի սուտ հանել զմեծամեծս:

Մեծաց մարմնոց մեծ ճարակք պիտին, և մեծամեծ անձանց մեծամեծ մարդահաճութիւնք: Զի մեծ են յոյժ կարծիք նոցա զանձանց. և խնդան, թէ տեսանեն զանձինս 'ի կարծիս այլոց մեծ ևս քան զոր են. որպէս ամենայն որ խնդայ և ծիծաղի՝ տեսեալ 'ի մեծացոյց հայելւոջ զերեսս իւր մեծաքանակ: Վասն այսորիկ գովեստք թէպէտ և սուտ իցեն, և գովեստընկալն իսկ գիտիցէ թէ են սուտք, բայց և այնպէս միշտ են հաճոյականք: Զի զոր օրինակ ճշմարտութիւն հա-

կատակաբանին ծնանի զատելութիւն, նոյնպէս սոսութիւն գովասանին ծնանի զսէր. որպէս ասաց մեծն այն. Գիտեմ, զի մարդահաճես, բայց և այնպէս հաճոյ ես ինձ։ Ապա դժուարին է որոշել զմարդահաճոյն 'ի գովասանէն, բայց և դժուարին է որոշել, ո՛ առեցող իցէ մարդահաճութեան և ո՛ սարփացող։ Զի են որք ասիցեն թէ չեն հաւան ընդ մարդահաճութիւն. և բարկանան, եթէ ոչ մարդահաճութիւն ընդունին։ Աքաաբ մարդահաճեալ յիւրոց ըղձապատում քրմաց որք յորդորէին զնա ելանել 'ի պատերազմ, ասաց ցմարգարէն Միքիա. Երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած ճշմարիտ, զի ասասցես ինձ զճշմարիտն առանց մարդահաճութեան։ Միքիաս քաջ ես ըղձապատում վասն այլոց քան վասն անձին, յայտ յանդիման ասաց. Թէ ելցես 'ի պատերազմ, ընկանցիս։ Բարկացեալ թագաւորին՝ անդէն վաղվաղակի էարկ զնա 'ի կալանս. բայց և այնպէս մարգարէութիւնն ճշգրտեցաւ. չոգաւ նա 'ի պատերազմ, և սպանաւ։ Ով խորութեան և անհասութեան կամաց զօրաւորաց. բայց անհասանելի ևս եղեն վճիռք աստուածպետական զօրութեան։ Թագաւորն երդմնեցուցանէ զմարգարէն չմարդահաճել, և 'ի չմարդահաճել նորա՝ սպանանէ զնա։ Մարգարէն վասն հնազանդելոյ արքային՝ ասէ զճշմարիտն. և վասն զի ասաց զճշմարիտն, պատուհասի։ Յառաջատես աստուածպետութիւնն յառաջագէտ գոլով դրժողութեան արքային, էր նախակարգեալ. զի մարգարէն վկայական մահուամբ մեռցի վասն ասելոյ իւրոյ զճշմարիտն. իսկ թագաւորն սպանցի վասն չհաւատալոյ նմա։ Իսկ արդ ո՛վ իցէ որ սիրիցէ զմարդահաճութիւն։ Որ ունի բարիոք կարծիս զանձնէ, որ կամի լինել 'ի բարւոք կարծիս առ այլս, և որ զիւրաւ հաւատայ այնմ որում մեծապէս ըղձանայ։

## ԳԼՈՒԽ Գ.

*Յաղագս վախճանի մարդահաճոյին։*

Ո՛վ, որպէս նման են մարդահաճոյն և գովասանն [154] թէպէտ և մին է մօլի և միւսն առաքինի։ Բայց որչափ նման են միմեանց, այնչափ տարբեր են վախճանք նոցա։ Գովասանն դիտէ պատուել. մարդահաճոյն դիտէ օգտիլ. մին հայի յայլոյ օգուտ, և միւսն յիւր օգուտ։ Յայսմ անարգ և ծառայական վախճանէ մարդահաճոյք ստացան անուանս նախատականս։ Կոստանդիանոս կայսր կոչէր զնոսա Մկունս պալատականս։ Անաքսիլայոս, Յեցս քանկի։ Դիոգինէս, Շունս



արքունի։ Այլք Կապիկս եթովպականս, Պրոթէոս երկրաւորս, պատառաբոյծս սեղանոյ, որոտս պարգևաց, աղուէսս սովելս, նմանաբերեալ զգեղեցիկ առակ փուգացւոյ ծառային [155]։ Տեսեալ աղուեսուն զագռաւն յոստ մի 'ի կայտառի, պատառ մսոյ 'ի կտցի ունելով, հաւանեցոյց զնա թէ քաջ ևս յերաժշտութեան քան զսոխակ. և յորդորեաց զնա փորձ փորձել զիւրոյ քաղցր ձայնի։ Հաւատաց նմա ագռաւն. և այն ինչ կամէր երգել, անկաւ որսն 'ի վայր. և խորամանկ աղուէսն եկեր զայն։ Ագռաւ սնափառուր էր միանձնական զեմու՝ այլ աղխատակոփառ մաքրութեամբ Պետրոս Մորոնէ, որ ապա կոչեցաւ Կելեստինոս [156]։ Հին աղուէս էր Բենեդիկտոս Կայետան, որ յայս սակս 'ի յիշատակագրութիւնս սրբազանս աղուէս կոչեցաւ խորամանկ և անյագ։ Տեսեալ սորա զԿելեստինոս, զի ամբարձեալ յաթոռ գերագահ՝ վայելէր խաղաղութեամբ 'ի քահանայապետութեանն՝ որում էր արժանի, ցանկացաւ յինքն կորզել զայն անոյշ պատառ։ Սկսաւ շողոմելով այնչափ գովասանել զառաքինութիւն նորա, և զերջանկութիւն առաջնոց վարուց նորա՝ յորժամ երգէր ընդ հրեշտակս յիւրում դասի, մինչև հովլին բարի 'ի ժողովն Նեապօլսոյ նուագեալ զանլուր զայն երգ, Ես Կելեստինոս, և որ զկնի, հրաժարեաց 'ի քահանայապետութենէ։ Եւ աղուէսն անյագ՝ աջակցութեամբ արքային Կարոլոսի՝ առկ զայն յիւր բերան։ Գրեն բազումք թէ այն քահանայապետ ոչ ևս քահանայապետ՝ իբրև յելից իւրոցն ծանեաւ զնենգութիւնն, գուշակեաց զԲենեդիկտոսէ զայս գուշակութիւն։ Եմուտ նա որպէս աղուէս, թագաւորեսցէ որպէս առիւծ, և մեռցի անարգութեամբ. ամենայնն ճշմարտեցաւ։ Եւ 'ի վերայ այսպիսի անցից անցելոց, որ 'ի մէջս շողոմելոցն, և յօգուտ շողոմողին, հաստատեցաւ առակն վաղեմի. Ոչ վասն իւր երգեաց ագռաւն, այլ վասն աղուեսուն։

Բայց այսոքիկ են մարդահաճութիւնք դէթ ուղղեալք առ բարձր վախճան։ Անարգին թէ 'ի գերև ելանեն, բայց պատուին 'ի ռամկաց, թէ 'ի դէպ յաջողեն. զի առ նոսա՝ որք ըստ ելից իւրոցն դատեն, մեծ պատիւն ընծէ զմեծ ամօթ, և թէ միջոցն մեղադրի՝ վախճանն գովի։ Բայց վատանուն մարդահաճոյք են նոքա, որք ընդ անարգ վարձուց անարգաբար գովեն և ստեն։ Զի դժպատեհ ինն է թէ գովեսան, քան զոր չիք մեծագոյն նուէր՝ 'ի նուէրս իսկ Աստուծոյ, վարձուոր զոհ ընծայեսցի պիղծ մարդահաճութեան։ Սողութիւն է դատարկանձանց և յուլացելոց, որոց փախուցեալ յաշխատութենէ և 'ի պատուաւոր գործոց, ձեռնարկեն յամենայն արուեստս և հնարս սոսախոս լեզուի, զի զօտարին կերիցեն։ Ի ծունր իջանեն, զպարանոցս խոնարհեն որպէս կարթ, զի ընթրիս ինչ որսասցին։ Զիք գծծութիւն յոր ոչ մխին, և ոչ

նախատինք զոր ոչ յանձն առնուն. միայն թէ աչալուրջ լինին առ խորհրդոց չար։ Մեծն այն չաչատող Կատարուկիոս Կատոնեան՝ 157 որ զավելի ընծայեր զանձն խորովք քաղաքութեամբք, ասելով թէ մի 'ի մրցմանցս ընծայեր զոքեաս, զի կորզեսցէ զդամս, եթէ յերկուս աներեսին։ Նա անամաչ գիտէր, աւանդ զերեսս որբոցն, ասէ. Ձկնորսն յանձն առնու զխաղին թացանիլ 'ի ջուր ծովու, զի որսասցի ձուկն. եւ ոչ թողացուցանիցեմ թանալ զերեսս, զի որսասցեմ զուրս։ Բայց ոչ ձկան և ոչ արոց լեալ արժանի, թացերես և ձեռնունայն ել յերեսաց նորա 'ի բաց։

## ԳԼՈՒԽ Ե.

*Թէ որով օրինակաւ փախիցի մարդահաճոյն 'ի մարդահաճոյ իրաց։*

Անպատկառ և անմիտ մարդահաճոյն չէ արժանի այլում հաւատոյ, բայց որում արժանացաւ նախատանաց ձկնորսն կատարականեան։ Զէ հմաւ մարդահաճոյ, որ չունի մաւ փարժութիւն. և քաջասանն լինի նա, յորժամ փարժանելն նմա քաղց։ Բայց զխաւար ասաւմն մաւախարժ մարդահաճոյին է զխոսել ձանաչել զընաւորութիւն այլոց և զխոսել յերիւրել բառ այնմ, բանիւք, գործովք և կամակատար ծառայութեամբք։ Եւ զի մարդահաճութիւն է կաղնիկ բարեկամութեան, վասն այսորիկ ոչ ինչ նշան սիրոյ այնպէս ընտանի է նմա, որպէս կեղծաւորակցութիւն ընդ բարեկամին. մինչև երևիլ թէ յերկուս մարմինս էցէ մի միայն հոգի։ Ամ կայն մարդահաճոյն է որպէս զատուեր որ ոչ սիրէ զբեզ, բայց և այնպէս քո զկնի գայ, և առնէ զամենայն զոր առնես։ Արիստոն էր թօթով, և իւր հաւիրակք թօթովէին։ Պղատոն էր կոր, և աշակերտք 'ի կոր գնային, իբրև զկորարամոկ առնմատակերս զորս կանգնեն ձարտարապետք 'ի մեջ շինուածոց։ Աղեքսանդրի կոր էր պարանոց, և իւր պաշտօնեայք նորա կորանային. զի 'ի դէմ յաջողեսցէ նոցա։ Զգիտեմ Պատրոկղեդէս որ մարդահաճէր հօրն Աղեքսանդրի. ընկեց արդեօք զիւր մի ակն, զի նմանող լիցի իւրում տեառն։ Կերպարանակցի մարդահաճոյն քում այժմեան վիճակի. թէ զոմէս զովէ, թէ անարգես՝ անարգէ, թէ ծիծաղես՝ ծիծաղի, թէ լաս՝ լայ, և ոչ խնդրէ միխիթարել զբեզ. զի մի հակառակեսցի. այլ կեղծաւորի անմխիթար լինել 'ի քո ցաւս։ Նման է պղպջակի, որ բառ ժամանակին առնէ կամ նուազի, բառ ակլոյն փոխէ զգոյն. մինչև մանրիկ ձկունք և թիթռունք



չորոչեալ զնա 'ի ժայռէն, փառահութեամբ մաղձին 'ի նա, և ընկղմին 'ի խիղբ նորա։ Այլ այսորիկ են կարկայլին հնարք՝ մակերեսականք, նմանակցութեամբ խոյն, զորոց ասանց ձգանց մասուորութեան՝ բայց օգտիւ՝ հնար է բերել զխմանութիւն։

Այլք մեծ են արուեստաւորութեամբ ընդմանեալ 'ի բարս և 'ի յօժարութիւնս որոյ, առատաբարոյ զովութեամբ զմտութիւն առնեն առաքինութիւն. և զօրէն բանաստեղծից զձշմարիտն քողարկեն ձշմարտի կերպարանաւ։ Թէ յանդուգն ես, կոչէ զքեզ արի. թէ երկչոտ կոչէ զքեզ խոհական. թէ փառասէր, բարձրացուցանէ զքեզ որպէս մեծամեծ նեաց, առաւ 'ի վերայ բերեալ. թէ ցածասրտի է՝ ասել վերնագունի։

Բայց մասուրապոյն և վնասակարագոյն են նոքա, որք արծարծանեն զմարդահաճութիւն ուշեղ որամտութեամբ, որ առնէ զգովեստն շնորհարան, թէպէտ և բառ քմաց։ Մասցի մարդահաճոյ եղև Եւգենմնիկ. որոյ լուեալ զորատումն գործոց առ Աղեքսանդր և ասէ. Դու իսկ, որ որտասա, թէ որդին Արամազդայ։ Եւ Նիկեսեայ ասելով յերեսս նորա ձանձ մի. ասէ. Ո՜վ ձանձ բարերարի քան զամենայն ձանձս, որ արժանացար ծծշաշել զարիւն դիւցազին։ Հաձոյ եղեն այս փաղաքշանք արքային, և փոխատրեաց այնց մեծապանձ պարգեւս. զի մասուրութեամբ և անմտաբանծ հաճէին զկամս յիմարութեան նորա։ Բայց ոչ այդպէս 'ի դէպ յաջողեաց փիլիսոփային, որ իբրև ետես զնա վիրաւորեալ, զի հեղոյր զարիւն, ասաց առ նա զհամեմատական զայն առղ. Արիւն որ բղխէ 'ի գեց անմահից։ Դիեղեցիկ եղև ատացուածն. այլ գեղեցիկ ևս էր չասել զայն. զի առաւել կծեաց այն զԱղեքսանդր քան զխոյն ինքն զվէրս. զի գիտաց, թէ այն գովեստ 'ի բերան այլոց եղև մարդահաճութիւն, այլ 'ի սորայս հեգնութիւն։ Մեծի զգուշաւորութեան պէտք են 'ի մարդահաճել առնդ, զի ընդունողն մարդահաճութեան մի անաչեսցէ յընդունել խորամ. և զի կեղծ սէրն երևեսցի անկեղծութիւն։ Մարդահաճոյք որ 'ի Տարրակինայ քաղաքէ Աղանիոյ կամեցեալ զաշակել Օգոստոսի մասցի խին զուշակութիւն յաղթութեան և յաղթանակի, ասացին նմա, թէ 'ի վերայ սեղանոյ յանուն քո 'ի մէջ նուիրելոյ՝ բուսաւ արմաւենի։ Թագաւորն՝ որ մասցի ես էր, խոժոռահայեաց էր պատասխանի հեգնելով. Նշան է, թէ սակաւ զոհէք 'ի վերայ խոյ սեղանոյ։ Պատասխանին հավանեցուց մասուրագոյն ես եղև քան զպանծանցեալ առաջարկութիւն. և մարդահաճութիւն յայտնեցաւ խորամ. իբր զի եթէ սակաւ զոհեալ էր նոցա կրակարանութեամբ 'ի վերայ սեղանոյ, չէր արդեօք բուսեալ արմաւենին։

Բայց ճարտար ևս է այն ազգ մարդահաճութեան, որ երևի հակառակիլ և մարդահաճէ․ զի գովեստ անակնկալ՝ հիացումն արկանէ 'ի կարծիս, և առաւել բերկրեցուցանէ: Աղախինն Փիլոմմատեայ՝ ըստ բանաստեղծութեանն Պլուտոսի, առաւել բարձրացուցանելով զգեղ տիկնոջ իւրոյ, զլանայր նմա զգործին զոր խնդրէր նա 'ի գեղազարդել զանձն: Վասն այսորիկ 'ի խնդրել նորա սպիտակադեղ 'ի սպիտակացուցանել զերեսս, տայր պատասխանի․ Իմ ոչ են կամք տալ․ քանզի զիարդ սպիտակասցի փղոսկր՝ սևակաւ: Եւ 'ի խնդրել նորա ջուր 'ի լուանալ զձեռս․ ասէր․ Զգլխոյ, զի գեղադոյն է քոյ ձեռաց զջուրս լուանալ, քան ջրոյն զքո ձեռս:

Թանկագոյն յայսմ ազգի, և չարաչուք յոյժ եղև մարդահաճութիւն ուրումն յաւազաց անուն 'ի դասէ սենեկապանաց: Յառն եկաց սա յաւուր միում յատենի ծերակուտին, խօսել սկսաւ ընդ Տիբերիոսի յայրատագոյնս իմն և 'ի ձայն բարձր ասէ․ Տիբերիէ, ժամ է արդ խօսել ընդ քեզ համարձակ յօգուտ հասարակապետութեան, առանց մտահաճութեան: Ապշեցաւ ինքնակալն, և ծերակոյտն իսկ ոչինչ պակաս քան զնա: Յաւել ասել․ Լուր, ով կայսր, մեծ անիրաւութիւն է քոյ, զոր բովանդակ ծերակոյտս ստգտանէ․ թէպէտ և ոչ ոք իշխէ խօսել համարձակ: Սոսկացաւ ծերակոյտն առ այն բարբառ և առաւել ևս քան զծերակոյտն՝ Տիբերիոս, կարծիս 'ի մտի եդեալ թէ գաղտնի ինչ իրք դաւադրութեան 'ի վեր երևեսցին: Ապա ասէ․ Դու, ով Տիբերիէ, տաս զամենայն մեզ, վկայեցուցեալ զքեզ յօգտէ գանձուցն արքունի: Տքնիս 'ի գիշերի․ զի մեք անհոգ 'ի քուն լիցուք: Հաշես զքո մարմինդ յանդադար աշխատութիւնս, զի մեք յանձնդիւրութիւնս և 'ի դրգանս վայելեսցուք: Յայտնի անիրաւութիւն է այդ, 'ի վնաս մեծ հասարակապետութեան և ինքնակալութեան․ որոյ կեանք զքո կենաց կախեալ, ոչ կարէ կեալ, թէ դու զքոյդ արհամարհես: Կասսիոս Սևերոս՝ զգծնաւոր յառաջատես՝ լուեալ զայն բան, անդէն վաղվաղակի ասաց ցիւր ընթերակայս․ Երդուեալ 'ի Դիոս, այս մարդահաճութիւն՝ կործանումն է Տիբերիոսի, որ եղև իսկ: Տիբերիոս ետ զանձն փափկութեան կենաց և անդթութեան, 'ի զեղս քարանձաւս կղզւոյն Կապրեայ․ չունելով Հռովմայ այլ նշան թէ կենդանի է Տիբերիոս, բայց զկոտորած իւրոյ քաղաքացւոց: Բայց յայնմ վարի մարդահաճոյն եհաս իւրում օգտի: Տիբերիոս հրամայէր Հռովմայ, և նա Տիբերիոսի:



# ԳԼՈՒԽ Զ·

*Յաղագս հակառակասիրի, կամ կռուասիրի:*

Մարդահաճութիւնն է աւելազանցութիւն, իսկ հակառակասիրութիւնն պակասութիւն․ զի 'ի քաղաքական կենցաղավարութեան որչափ հաճութիւն բերէ նա զովելով, այն չափ բառնայ սա հակառակելով: Ամենայն ոք սիրէ զինքն, և զոր ինչ իւր է, և ևս առաւել զիւր կարծիս որպէս զազնուագոյն մասունս ազնուականագոյն մասին հոգւոյ: Վասն այսորիկ միտ մարդկան ընդ լսելն 'ի հակառակասիրէ, զի երգիծանութեամբ կրկտէ զիւր կարծիս, այնպէս դառնանայ, որպէս դառնանայր Ռէա, յորժամ ժանտն Կռոնոս կլանէր զնորա սիրելի ծնունդս[158]:

Հակառակասէրն ըստ երևոյթին է ընդ հակառակս մարդահաճոյին: Զի մարդահաճոյն է զուարթադէմ, քաղցրաբան, շնորհաշուք, բարեմարդ․ գլխովն շողոմող և քծնող: Իսկ կռուասէրն տխուր, սևամաղձոտ, թուխ, գլխախուռ, անպաճոյճ, գլխովն յանդուգն և արհամարհոտ: Վասն զի որ մարդահաճէ, ջանայ հաճոյանալ․ և որ հակառակի, անհաճոյ լինել: Այլևայլ են երկոցուն արարք և հնչիւն ձայնի, որպէս այլևայլ են արարք և ձայնարձակութիւն շան քծնողի և շան խածատողի, զի նա շարժի 'ի ցանկականէն, և սա 'ի ցասմնականէն․ որք են կիրք միմեանց հակառակք: Այլևայլ են և 'ի ձիգն մտաց: Ոչ այնչափ մտաւորութիւն պիտի առ ասել զչարին բարի, որչափ առ ասել զբարին չար: Առ մարդահաճել շատ է թէ գիտիցէ ոք տալ հաւանութիւն ակնարկութեամբ կամ ձայնիւ, բայց առ հակառակել պիտոյ է թէ գիտիցէ ոք զիմախօսել նուրբ փաստիւք, իբրև զկինիկեանս և զիմաստակս: Վասն այսորիկ մարդահաճոյին մեղր է 'ի լեզուի, այլ հակառակասիրին լեղի է յատամունս: Նա թէ խոցէ ևս, քաղցրութեամբ խոցէ․ այլ սա դառնապէս խածանէ, պատառոտէ և գիշատէ: Վասն այսորիկ ծանրատաղտուկ մականուամբք նկարագրեցաւ կենդանագիր հակառակասիրին․ որոց կէս զաննելութիւնն ածէ 'ի ցուցակութիւն, և կէս զգործն: Յաննելութենէն կոչեցաւ մանրակրկիտ կռուայոյզ, երգիծաբան Արիստարքոս, անիծաբան Տիմոն, և մոլի Մոմոս[159]: Եւ 'ի գործոյն՝ շուն տաղտկալի, ատելութիւն նողկալի, ժահահոտութիւն զզուելի, ժանտախտ կենակցութեան: Վասն զի ամենեցուն է ատելի և խորշելի, որպէս անդղն Թռչնոց․ իբր զի մի 'ի նոցանէ բա-

ւական է 'ի տիրեցուցանել բովանդակ զժողով ուրախութեան. որպէս մի միայն ձայն անհամաձայն բաւական է 'ի ժխորել զամենայն քաղցրանուագ եղանակ: Չհուսկն ասասցից: Ի հարցանել ց'Ինոգլինէս թէ որ գազան չարագոյնս խածանիցէ, իմաստնապէս ետ պատասխանի. Յընտանիս մարդահաճոյն. և 'ի վայրենիս՝ չարախօսն:

## ԳԼՈՒԽ Է.

*Յաղագս տարրկայից հակառակասիրի:*

Մարդկային խօսակցութիւնք կազմին առաջարկութեամբ. և պատասխանատուութեամբք. յորոց ոմանք են տեսական, և ոմանք գործնական. ոմանք ընդհանուր, և ոմանք մասնաւոր. Տեսական. որպէս, Լուսինն է փոքր քան զերկիր: Գործնական, որպէս Պարտ է իշխանի տաւելով 'ի գթութեան: Ընդհանուր, որպէս Գեղն է փաղփիւն իմաց հոգւոյ: Մասնաւոր, որպէս Հեղինէ է չքնաղագոյնն 'ի կանայս Յունաստանի: Ամենայն առաջարկութիւնք եթէ ճշմարիտք և եթէ սուտք, մարթին տեղի ունել 'ի քաղաքական կենցաղավարութեան. և որ ինչ տեղի ունի 'ի քաղաքական կենցաղավարութեան, մարթի լինել առարկայ հակառակասիրի, զի նա ամենայնի հակառակի: Թէպէտ և գիտիցեն լինել ճշմարիտ, կամ գիտիցեն լինել սուտ, զոր դուդ ասես, մարդահաճոյն ստորասէ եթէ ստորասես, և բացասէ եթէ բացասես: Այլ հակառակողն բացասէ եթէ ստորասես. և ստորասէ եթէ բացասես: Թէ դու գովես, նա պարսաւէ. թէ դու պարսաւես, նա գովէ. թէ դու խրատես առնել, նա խրատէ չառնել. Թէ դու խրատես չառնել, նա յորդորէ: Ասա. լաւ է մեռանել վասն հայրենեաց: Անդէն ասիցէ. Լաւ ևս է կեալ վասն հայրենեաց: Ասա. Այն որ է մեծատուն: Ասիցէ, Ոչ է նա ոսկեգեղմն: Ասա. Այն որ է աղքատ: Ասիցէ. Ոչ այդպէս. զի գաղեալ ունի յորովայնի զամենայն զիւր ժառանգութիւն հայրենի: Գովեա զքեզ ուրուք. տացէ պատասխանի. Զպակասորդ բնութեանն արուեստիւ լնու. Ասա. այն որ է տգեղ. տացէ պատասխանի. նա՝ գեղեցիկ է յոյժ նորա մարմին հայեցեալ 'ի հագին:

Ոչ բանից միայն, այլև գործոց դիմախօսէ հակառակասէրն: Յանդիմանէ զքո արարս, ձայնիւ ձայն նմանակէ, ծիծաղի զշարժմամբք, անդոսնէ զբարոդ, այպն առնէ զագանելիսդ: Թէ զհասարակաց զգենուս տարազ, կոչէ զքեզ հնասէր. թէ նորաձևս, ծաղր առնէ զքեզ որպէս կապիկ նմանորդ: Թէ



առատաձեռնես, կոչէ զքեզ անառակ որդի. թէ խնայօրէն գնաս, կոչէ զքեզ փցուն ոչլահար: Ամենայն ինչ ժահահոտ է նմա և զզուելի. ամենայն ինչ նիւթ է նորա արուեստի, և զարբնոց իւրոց երկաթոյ: Չհուսկն ասասցից. թէ կամք իցեն քեզ նկարագրել զհակառակասէրն, նկարեսջիր զայն, զոր օրինակ նկարեաց Անտիփիլոս զանընտրողն բարս, և Պարրասիոս զբնաւորութիւն Աթենայ (կամ Աթենացւոց) գլխովին ընդ հակառակս և անհեթեթ: Ուրախ՝ միանգամայն և տխուր. յամր՝ համայն և արագ. երկչոտ և յանդուգն. շռայլ և ագահ: Վասն զի որպէս մարդահաճոյն ամենայնի նմանակէրպի, նոյնպէս հակառակասէրն ամենայնի հակառակի:

## ԳԼՈՒԽ Ը.

*Թէ զինչ իցէ վախճան հակառակասիրին:*

Ոչ շարժի հակառակասէրն 'ի հակառակիլ վասն սիրոյ վարձուց հատուցման որպէս փաստաբանն. և ոչ վասն յայտնութեան ճշմարտութեան որպէս իմաստասէրն, և ոչ վասն ըղձի համբաւոյ որպէս հպարտն, այլ վասն ընդաբոյս չար կամողութեան 'ի հակառակիլ. որում սեպհական անուն կոչի ոգի հակառակութեան: Թէ սատանայական ազդումն ինչ իցէ այս ոգի, որպէս կոչեն սուրբք զոգի ամբարտաւանութեան կամ չար ցանկութեան, և թէ՞ բնաւոր յօժարութիւն ինչ, անանջրպետ 'ի սրտէ, որ չարաչար փորձիցն է իւր ինքեան քան զնոյն ինքն զդև: Այսպիսի եղև ոգի կամ այս չար Սաւուղայ, որ առանց գիտելոյ զվասն էրն, գեղարդն արձակէր 'ի վերայ պատանւոյն Դաւթի, ընդ հարկանել նորա զքնարն 'ի բժշկութիւն նորուն: Այո, այս ոգի հակառակութեան անանջրպետ զուգորդ է միշտ ընդ ոգւոյ ամբարտաւանութեան, կամեցեալ թէ իւր կարծիք յաղթ իցեն քան զայլոց կարծիս. զի երևեսցի թէ իւր ուշիմութիւն վերագոյն իցէ քան զայլոցն, որ է ինքնաբուն ամբարտաւանութիւն: Բայց 'ի հակառակասէրն, որ յայսմ վայրի դիմագրի հաճոյականին, ոգին ամբարտաւանութեան ծառայէ ոգւոյ հակառակութեան որպէս հրամայողի. զի գրգիռ հակառակասիրին ոչ է հակառակիլ 'ի ցուցանել զուշիմութիւն, այլ ցուցանել զուշիմութիւն 'ի հակառակիլ: Բայց առ նրբաբանել զայսմ նիւթոյ, գիտել արժան է, թէ այս ոգի հակառակութեան ծնունդ է գժնդակ ևս ոգւոյ, այսինքն է ստոյգ ատելութեան առ ամենայն ազգ մարդկան: Վասն զի չէ նմա փոյթ մաքառիլ ընդդէմ ստութեան քան ճշմարտութեան, միայն թէ

գիտիցէ բարկացուցանել և գժգմնեցուցանել զայն որ խօսի։ Զոյիլէ[160] անուանի օրինակն հակառակաւորաց, զոր յայս ասկս գիտնաւորք կոչէին շուն կատաղի, երբև հարցաւ յումեմնէ յընտանեաց, որովհետև հասարակաց Թշնամին շունէր զոք իւր բարեկամ, Թէ զիա՞րդ իշխեցեր պարսաւել զգիրս Հոմերոսի և Պղատոնի, զորս առ հասարակ իմաստունք և պատգամախօսք գործս համարին չնաշխարհիկս, յանդուգն ետ պատասխանի. Զար խօսիմ զգրուածոցս, զի չեմ կարող չար հասուցանել գրողաց։ Կատաղութիւն ունէր այս շուն՝ խածատել և մանրել զոսկերս իսկ մեռելոց, փոխանակ զի եղեն մարդիկ, և զի չէր ձեռնհաս այսմ, Թափէր զիւր ատելութիւն 'ի վերայ գրոց՝ յորս մարդիկ յերկարաձգեն զկեանս։ Արժան էր այսմ ատեցողի ազգի մարդկան՝ և զանձն ևս իւր ատել, եԹէ չէր նա երբեւ զմարդացեալն Լիկայոն կատաղանօք փոխակերպեալ 'ի մարդոյ 'ի գազան[161]։

## ԳԼՈՒԽ Թ.

*Թէ որով օրինակաւ գործիցէ հակառակաւորն։*

Զամենայն նախադասութիւնս զգործնականս կամ զտեսականս, զընդհանուրս կամ զմասնաւորս, զորս նշանակեցաք, հնար է ստորասել կամ բացասել, կամ ճշմարիտ և կամ վերերևոյԹ պատճառօք, ըստ երկոքանչիւր կողմանց։ Ի քաղաքական կենցաղավարութիւնս զինչ առաջարկութիւն և ելանէ 'ի քո բերանոյ, անդէն խափանէ հակառակասէրն և Թէպէտ և պայծառ իցէ քան զարև, աղօտացուցանել հնարի զայն ստապատիր հակառակութեամբք. և միոք, որոյ առարկոյ է ճշմարիտն, կուսակից լինի ստութեան։ Որպէս ձեռնածուք շուԹափութեամբ ձեռաց պատրեն զաչս, նոյնպէս իմաստակք ստապատիր պատճառանօք գիտեն յեղափոխել զանզգոյշ միտս։ Անկէպացի ակադեմեանք ջանային ճչգրտել զհակասական նախադասութիւնս, երևեցուցեալ Թէ ճշմարիտն է սուտ և սուտն ճշմարիտ։ Պնդէր Անաքսագորաս Թէ ձիւնն է սեաւ. և Զենոն Թէ ոչինչ շարժի և կամ Թէ շարժի՝ այնպէս երագ ընԹանայ մրջիւնն, որպէս արագոտն սուրհանդակ։ Զինչ Թշուառագոյն կայցէ մարմնոյ՝ քան զտենդ, և հոգւոյ՝ քան զխելացնորութիւն։ Բայց և այնպէս ստապատիր արամաբանութեամբ Փաւորինոս զտենդն և Երասմոս զխելացնորութիւնն գովեցին որպէս բարի ինչ. երկոքանչիւրն արժանացեալք 'ի հատուցումն փոխարինի իւրեանց ներբողենի՝ յանձինս ընդունել զիւրեանց գովածն։ Յայսմ աղան-



գոյ է հակառակասէրն։ Կամի պնդել, Թէ արևն է խաւար, յաւել քո Թէ է լուսաւոր։ Եւ չէ ինչ նմա փոյԹ, Թէ նախատակոծ լիցի որպէս ստաւաց, միայն Թէ խրախ լիցի 'ի զոյրացուցանել զքեզ՝ հակառակուԹեամբ քոց ասից։ Եւ ոչ միայն խրախ լինի՝ յընդդէմ դառնալ ճշմարտութեան քոց նախադասութեանց որպէս զիմաստակ, այլ և Թողեալ զէուԹիւն իրին, ձեռնարկէ 'ի քերԹողական մանրակրկտուԹիւն բառից, յորակ փաղառութեանց, 'ի շեշտմունս և 'ի կէտադրուԹիւնս, զի առաւել ևս երգիծուցէ զքեզ։ Այսպէս ոմանք քննիչք մանրաքննինք 'ի կարդալ զպատմուԹիւնս Լիվիոսի պատաւեցւոյ, ոչինչ փոյԹ կալեալ իմանալ զերևելի անցս հռովմայեցւոց, պտեղի կալան 'ի կշտադատել զբառս ինչ պատաւեցւոց։ Ասինիոս զԿիկերոն, և Կալբիղ զՎիրգիլիոս իշխեցին գտանել քերԹողական խարազանաւ, որում ինքեանք էին արժանի. անմտաբար բառգիտ արկեալ յոձս ինչ՝ առանց հայելոյ յանձն, Վիրգիլիոս յընԹեռնուլ զքարագրուԹիւնս Ենիոսի քերԹողի քաղէր ոսկի 'ի աղմոյ. գոքա յընԹեռնուլ զՎիրգիլիոս քաղէին տիղմ յոսկւոյ։ Ըստ օրինակի իշամեղուաց՝ Թռուցեալ շուրջ զմեղու, Թեակոխէին յանպէտն, Թողեալ զպիտանին։ Եւ որ չար ևս է, յայսպիսեաց խեչերանաց կշտադատուԹիւնս այնպէս ջերանի հակառակասէրն, մինչև յաղխաղխիլ խօսից, և գարշագարշ պատասխանատուութեանց՝ յոլովակի լինի յառաջատուԹիւն 'ի բանից 'ի գործ, և 'ի բանակռուուԹենէ 'ի սրաշարժուԹիւն։ Այսպէս կշտադատուԹիւն Կաստելվետրի 'ի վերայ ոսկի շուշանաց Աննիբաղայ Կարոսի՝ զգրգռեաց զամենայն զմեղուանոց գիտնաւոր համալսարանի։ Կարի իմն սուր գրիչք Վաղղայ և Պոճգոյ հեղին Թանաք բազում, բայց առաւել ևս արիւն։ Եւ գոյզն ուղղագրուԹիւն վերտառուԹեան արձանին Անաքսենորայ եարկ հրդեհ պատերազմի 'ի մէջ Մագնեսիոյ, և շրջակայ քաղաքաց[162]։

Բայց է և այլ եղանակ Թունաւորագոյն ևս քան զհակառակելն պարսաւանօք, այն է հակառակել գովուԹեամբ։ Գովէ այն ոք երբեմն, բայց յարէ յայն զբայց որ աղարտէ զգովեստն. ըստ օրինակի մեղուի, որ բարձեալ ունի զմեղր 'ի բերան, և զԹոյն 'ի տուտն։ Թէ համբաւի իմաստուԹիւն քաջի ուրումն ատենակալի, ասէ. Այո այնչափ է նորա իմաստուԹիւն և արդարուԹիւն, մինչ ունի անուն և վաճառել, կամելով ասել, իմաստուն է նա, բայց անիրաւ։ ԵԹէ ասի զտիկնոջէ ումեմնէ լինել գեղեցիկ, 'ի վերայ բերէ. Այո պարծանք էին ամենայն տիկնաց այնչափ լինել գեղեցիկ, որչափ դա կարծի լինել։ Է զի գովէ՝ գեղեցկահիւս առասպելուԹեամբ, բայց հեգնօրէն. կամ այնպիսի խորամանկուԹեամբ, մինչև պարսաւանաց երևիլ գովեստ։ Մինչ զի ոչ ոք իմանայ՝

գովիցէ՞ արդեօք, թէ պարսաւիցէ, բայց միայն որ ճանաչէ զխորհուրդս մարդկան։ Դարձեալ երբեմն, թէ գովես դու զոք յարգելոյ, նա առաւել ևս գովէ զնախնիս, ոչ զի գովեսցէ զնոսա, այլ զի ընդվայր հարցէ զսոսա։ Կամ թէ գովես դու զմի ոք, նա գովէ զամենայն ոք զի գովեսցէ և ոչ զոք։ Վասն զի, ըստ ասից Մարտիալիսի առ Զոյիլոս, Ում ամենեքին են բարի, ո՞վ լինիցի չար։ Զհուսկն ասացից, թէ գովես դու զոք, նա ինչ ոչ հակառակի, այլ ունչս առնէ, կամ ընդ քիմս ժպտի. և առաւել չարախօսէ լռել նորա քան զխօսել։ Ծաղր նորա և աչք՝ վատանուանութեան են նամակք։

Զգեղջկութիւնն, զոր ցուցանէ հակառակասէրն յիւր խօսս, ցուցանէ և 'ի գործս, զի որպէս բանք, նոյնպէս և գործք նորա յառաջ գան 'ի նոյն իսկ ընդաբոյս ատելութենէ առ ազգ մարդկան։ Խնդրեա ինչ 'ի նմանէ ծառայութիւն. կամ գեղջկօրէն հրաժեշտ տայ, կամ գեղջկօրէն կատարէ. ուր լաւ էր հրաժեշտ ինչ շնորհօք, քան շնորհ ինչ գեղջկութեամբ։ Բայց յատուկ է չարախօսի լինել չարաչար, և անմարթ է բարերար կոչել զայն՝ որ յոչ կամաց առնէ զբարի։ Ի տխրութիւնս այլոց զուարթանայ՝ յուրախութիւնսն տրտմի։ Թէ գտանի 'ի կոչունս, հոլովեցուցանէ 'ի սեղան խնձոր գժտութեան, 'ի խռովել զսեղանակցաց միաբանութիւն։ Յառաւելուլ ուրախութեան՝ տեսցես միայն յանցանօք 'ի խորտիկս անդ յառնել պատերազմի Լապիթայց և Կենտաւրոսաց [165]. և ըմպանակաց և պնակաց որ 'ի պէտս սեղանոյ, լինել զէն սպանութեան. և գինւոյն ընդ կոկորդս մտելոյ՝ 'ի դուրս հոսել ընդ վիրաբերանս։

## ԳԼՈՒԽ Ժ.

*Յաղագս միջասահմանութեան 'ի մէջ երկուց ծայրից.*

Արդ տգեղութիւն երկուց մոլեկան ծայրիցս յայտնի ծանուսցէ քեզ զգեղեցկութիւն քաղցրախօսութեան, որ է առաքինութիւն միջասահման 'ի մէջ աւելազանցութեան և պակասութեան, Որպէս 'ի խառնել մարմինս կան պարզ տարերք, բայց յորակ իւրեանց այնպէս մեղմեալք, որ հուրն ոչ վառէ և ջուրն ոչ թանայ, նոյնպէս 'ի քաղցրախօսութիւն մտանեն երկու գործօղութիւնք հակակայք, Հաճոյականութիւն և Հակառակութիւն բայց այնպէս բարեխառնեալք՝ զի հաճոյականութիւնն ոչ մարդահաճէ, և հակառակութիւնն ոչ դառնացուցանէ. և վասն այնր ոչ քակեն զբարեկամութիւն և ոչ զքաղաքական կենցաղավարութիւն, այլ առաւել հաստատեն և պահեն։ Ոմանք յիմաստասիրաց ուսեալք 'ի Հերակլիտոսէ, պնդէին թէ բարեկամութիւնն հիմնի առաւել 'ի ներհակութեան քան 'ի նմանութեան, յառաջ բերեալ զայն տող բանաստեղծական. Երկիր տապացեալ՝ սիրէ զօդ տարափ։ Արիստոտէլ մերժէ զայս մոլորութիւն նուրբ իմն զանազանութեամբ զի երբ ենթակայն՝ ասէ, է յանպատշաճ տրամադրութեան, սիրէ զիւր ներհակնն։ Բայց երբ է 'ի պատշաճ տրամադրութեան, սիրէ զիւր նմանն։ Վասն այսորիկ 'ի տապանալ մարդոյ 'ի տենդէ, սիրէ զջուր ցուրտ և առատ, բայց թէ է առողջ, սիրէ բարեխառն ըմպելի։ Եթէ ամենայն մարդիկ էին 'ի պատշաճ տրամադրութեան առ ճըշմարիտն և արդարն, ոչ ինչ պաշտօն էր քաղցրախօսին, բայց հաճոյ լինել և գովել։ Բայց քանզի միտ մարդկան յոլովակի 'ի բանս կամ 'ի գործս՝ խոտորի 'ի բանաւորէն. պիտի միւսևս պաշտօն՝ 'ի հակառակիլ նմա, և 'ի յանդիմանել ըստ պիտելոյ։ Այո, որպէս ասացաւ 'ի սկզբան անդ, քաղցրախօսութիւնն կամ սիրողութիւնն հայի նախ առաջին 'ի հաճոյականութիւն, և որպէս թէ ըստ պատահման՝ 'ի հակառակութիւն։ Զի այս առաքինութիւն ենթադրէ, թէ կենցաղավարութիւնն է ընդ մարդկան, որք են 'ի պատշաճ տրամադրութեան առ ճշմարիտն և արդարն 'ի գործս իւրեանց և 'ի բանս. և առ սոսա ուղղակի կարգէ զիւր խօսս. բայց թէ լսէ կամ տեսանէ ինչ ներհական, 'ի վար արկանէ զմիւս պաշտօն։ Բայց յերկաքանչիւրն պահէ զչափաւորութիւն և զվայելչութիւն, զտեղի առեալ 'ի սահմանի բանաւորութեան, ոչինչ զարտուղեալ ոչ 'ի գծծութիւնս մարդահաճոյին, և ոչ յապարասանութիւնս հակառակասիրին. և այս է մէջն առաքինութեան։

Այս քաղցրախօսն չունի գրգիչ զիւր օգուտն իբրև զմարդահաճոյն, և ոչ զայլոց խոժոռումն իբրև զհակառակասէրն, այլ զհամեստն և զպատշաճականն։ Վասն զի քաղցրախօսութիւնն է կարողական մասն արդարութեան, որ ուսուցանէ հաճոյ լինել ամենեցուն, որչափ հնար է։ Որ ոք չունի զայդ վախճան, չունի զայս առաքինութիւն։ Այս ամենեցուն է հաճոյական, բայց ոչ ամենեցուն նովին օրինակաւ։ Ընդ բարեկամս է մտերիմ, ընդ ստորադրեալս քաղցր, ընդ վերնագոյնս հլու, ընդ ծերս ծանրակաց, ընդ երիտասարդս զըւարթ, ընդ տղայս գգուող։ Ագեսիլայոս արքայ ոչ ամօթ համարէր խայտալ ընդ իւր մանկունս, յշտանակել ընդ նոսա յեղեգունս 'ի հարկանել աւիւս։ Եւ 'ի զարմանալ ուրուք 'ի վերայ թեթեւութեանցս յանձն մեծի արքայի, ետ պատասխանի. Զգիտես ուրեմն, զինչ իցէ լինել հայր։

Եւս և առ Թշնամիս լինի հաճոյական և քաղցրախօս. և ոչ փոքր յաղթութիւնս կատարէ 'ի շահել զսիրտ նոցա հաճութեամբ, քան 'ի յաղթել բռնութեան նոցա քաջութեամբ: Ակնյայտն իւրով բնաւոր քաղցրախօսութեամբ հաշտեցոյց ընդ Հռովմայեցիս զվերադն Սիփակ, զորոյ ոչինչ բռնութեամբ կամ աչարկութեամբ կարող էր զերծուլ զընդաբոյս ատելութիւն և զխժդժութիւն:

Մնայ արդ տեսանել թէ որով օրինակաւ բերիցի քաղցրախօսն առ մարդահաճոյն և առ հակառակասէրն, որք են իւր մեծ թշնամիք, թշնամիք գոլով իւրում առաքինութեան: Քաղաքական կենցաղավարութիւնն է փոխադարձ հաղորդութիւն ինչ խորհրդոց, որպէս բարեկամութիւնն է փոխադարձ հաղորդութիւն ինչ ախորժակաց: Վասն այսորիկ քաղցրախօսն սիրէ հաճել և հաճոյ լինել, որպէս որ սիրէն կամի զի փոխարէն սիրեսցի: Նոյնպէս սիրէ հակառակիլ, և հակառակութիւն ընդունիլ. զի վիճելն սրէ զմիտս, վասն որոյ և բերկրեցուցանէ: Կեղևոս անուանի ատենաբանն՝ հանդերձեալ ջատագովել զոմն որ ամբաստանեալ էր 'ի նա, և առաջի առնէր նմա զիւր փաստս. որոց ամբաստանն ոչինչ ընդդէմ դարձեալ, ամենայնի տայր հաւանութիւն: Վասն որոյ բարկացեալ Կեղևոսի, ասէ. Ասա ինչ ինձ ընդդէմ. զի դէթ յայտնեսցի, թէ եմք երկու [164]: Բայց եթէ 'ի գովելն և եթէ 'ի հակառակելն, պահէ զօրէնս վայելչականութեան, որպէս ասացաւ: Ոչ մարդահաճէ նա, զի ոչ գովէ առ իւր օգուտ. և թէ տայ գովութիւն փոքու ինչ առաւելեալ քան զճշմարիտն, չէ այն մարդահաճութիւն, այլ ընդ խաղ. զի վերաթառութեամբ ինչ յայտնէ զխաղն: Սիրէ նա զգովութիւն, այլ ոչ զմարդահաճութիւն. զի ոչ համարի գովութիւն զայն որ գայ 'ի վարձուոր գովչէ, և ոչ զայն որ առ հաճելոյ զոմն՝ զխմախօսէ ճշմարտութեան: Բայց իբրև իմանայ նա թէ մարդահաճութիւն ընդունի, ոչ թքանէ յերեսս մարդահաճոյին իբրև զԿատոնկիոս, զի աւելազանցութեան մարդավարութեան չէ արժան փոխարինել գեղջկութիւն. այլ քաղցրիկ ինչ կծանօք մերժէ զմարդահաճութիւնն առանց թշնամանելոյ զմարդահաճոյն, ցուցեալ զանձն քաղցրախօս և առ նա իսկ: Սարատոնիկ մեծանուն քնարահար, մարդահաճոյի ումեմն որ վերադասէր զնա քան զՈրփէոս և քան զԱպողոն, թեկն ածեալ ետ պատասխանի. Բարեկամ, ես քան զքեզ աղքատ եմ: Գեղեցիկ օրինակ մերժելոյ զմարդահաճութիւն է չտալ նմա ինչ: Նուագածուն նանրացոյց զձայն գովչին, զի չհնչեցոյց նմա ձայն արծաթոյ: Բայց զուարթառատ իշխանաւորի չէ քաղցրախօսութիւն այդ պատասխանի: Մերոց իշխանաց կնիք է ձեռն ոսկի, որպէս Պեղոպայ քամակ փղոսկրեայ [165]: Դուքսն Էմմանուէլ Փիլիբերտ, առատաձեռն և զուարճախօս, բանաստեղծի ումեմն օտարականի, որ մատոյց նմա շողոմաբան ինչ քերթութիւն անոճ, հրամայեաց տալ յիսուն դահեկան, ասէ. Քաջ բանաստեղծ է դա. զի խօսեցաւ զինէն, ոչ որ ինչ եմն, այլ որպիսի պարտ է ինձ լինել: Եգիտ իշխանն հնար հանճարաւոր վարձատրելոյ զքերթութիւն նորա, բայց 'ի սուտ եհան զմարդահաճոյն: Քանզի այս ինչ ընդ մէջ է բանաստեղծին և պատմաբանին. զի պատմաբանն գրէ որ ինչ է, իսկ բանաստեղծն, որ ինչ լինել մարթ էր կամ պարտ էր: Քաղցրախօս երևի և առ հակառակասէրն. թէպէտ և այս մոլութիւն արժանի է կշտամբութեան քան քաղցր խօսից. իրաւացի ինն գոլով, թէ որ ասէ զոր կամի, լուիցէ զոր ոչն կամի: Բայց քաղցրախօսն գտանէ եղանակ հեզիկ փոխադարձի կծանաց չարախօսի: Արիստիպպոս էր մեծ փիլիսոփայ, միանգամայն և մեծ պալատական, ուստի և ատելի ամենայն փիլիսոփայից. զի մարդահաճութեամբն առ Դիոնեսիոս բռնաւոր՝ արար զիմաստասիրութիւնն պատառաքաղ բազմախորտիկ սեղանոյ: Ցանցանել սորա ընդ երկայնաձիգ վտակ, ուր աղքատն Դիոգինէս լուանայր զիւր ընդեղէնս, ասէ ցնա. Թէ դու ևս մարդահաճէիր Դիոնեսիոսի, չլուանէիր զայդպիսի իրս: Որում անդէն վաղվաղակի Դիոգինէս ետ պատասխանի. Եւ դու թէ ուտէիր զայսպիսի իրս, ոչ մարդահաճէիր Դիոնեսիոսի: Բայց ապահովագոյն կանոն համարեալ է չգրգռել կծանօք զխայթ չարախօսաց. զի մի, որպէս ասէր Պիւթագորաս, յարծարծանել զխարոյկն ունելեօք՝ կայծակունք յաչս արձակեսցին: Վասն այսորիկ լաւ է ըղխօսն խափանել, կամ յայլ զրոյց շրջել: Զենոնի հանդիպեալ 'ի խնջոյս ուրեք, ուր էր մի 'ի դիմադարձիցս զոր ճանաչէր, իբրև հարցաւ 'ի նմանէ թէ առաքինութիւնն իցէ բարի, խոժոռադէմ ետ պատասխանի, թէ ոչ, և չոքաւ 'ի բաց: Ծանեաւ Զենոն, թէ այն հակառակասէր ոգի կամէր մտանել ընդ նմա 'ի վէճ: Բայց ևս քաղցրախօս գտաւ այլ ոմն, որ 'ի հարցանել այլոյ ուրումն հակառակասիրի. Ասա ինձ, ո՞ր ակն իցէ առաւել հեռատես, աջո՞յ ակն, եթէ ձախոյ ակն. ժպտելով ետ պատասխանի. Այն որ քեզ հաճոյ իցէ, և չոքաւ 'ի բաց: Այլ քան զամենայն քաջ է խրատն զոր տայ մեզ Արիստոտէլ, փախչել յայսպիսեաց աստի. զի մի վիճեսցուք ընդ նոսա, կամ նմանող լիցուք նոցա:

# ԳԼՈՒԽ ԺԱ.

## *Թէ զինչ իցէ քաջ մարդավարութիւն։*

Ծանօթագոյն է անուամբ և գործածութեամբ, քան սեպհական սահմանաւ այն աղնուական առաքինութիւն՝ որ առ աղնուազգիս և պալատականս կոչի Քաջ մարդավարութիւն։ Նա և այլովք յորջական անուամբք, որ ծաւալ և որ ամփոփ, նկարագրեցաւ մեզ այս գեղեցիկ առաքինութիւն։ Վասն զի զոր օրինակ բարոյական առաքինութիւնք հասարակ օրինօք ստացանին դաստիարակութեամբ, և ապա գործածութեամբ կամ սովորութեամբ, սոյնպէս սա հանրական անուամբ կոչեցաւ Քաջ մարդավարութիւն, և Բարեբարոյութիւն, որպէս այլ ամենայն առաքինական ունակութիւնք։ Բայց քանզի է սա մասնաւորապէս սովորութիւն ինչ աղնուական, զոր չէք ուսանել կամ 'ի գործ ածել 'ի գեօղս ընդ ռամկաբարոյս և ընդ գեղջուկս. այլ յաղնուական քաղաքս և 'ի Քաղաքական կենցաղավարութիւնս, վասն այսորիկ կոչեցաւ և քաղաքավարութիւն կամ Քաղաքականութիւն, որ են նոյն։ Նա՝ վասն զի առանձինն խնամ մեծ դնի այսմ յապարանս մեծամեծաց 'ի մէջ աղնուական արանց և կանանց, յատկագոյն ևս անուամբ կոչի Պալատականութիւն և Ազնուաբարոյութիւն, և Բարեձևութիւն։ Եւ բարեձև կոչին բարեբարոյք, որպէս թէ պահողք քաղաքականութեան օրինաց. զորս ամենայն աղնուազգի պատանիք առ հաճոյանալոյ 'ի դրունս մեծամեծաց՝ պարտին գիտել։ Զսորին հակառակն՝ վերջացեալքն յայսմ առաքինութենէ, թէպէտ և իցեն աղնուատոհմ, նախատական անուամբք լինին յառակս, թէ այն ոք է տմարդի, անքաղաքավար, սոսկ և ռամկաբարոյ։ Բայց թէպէտ և այժմուս ամենայն ոք իշխէ ստգտանել զայլս որպէս վարժապետ մարդավարութեանց ասելով. Այս ինչ է տմարդութիւն. այդ ինչ՝ անքաղաքավարութիւն. այն ինչ չինականի է. և ոչ աղնուազգւոյ. այն ոք կարծէ 'ի գեղջ լինել, և ոչ յապարանս։ Սակայն և այնպէս, ուսուցանել զքաջ մարդավարութիւն, կամ ստգտանել զտմարդութիւն, է յոյժ դիւրին, քան փակել ընդ որոշ սահմանաւ, թէ զինչ իցէ քաջ մարդավարութիւն։

Զգտանի 'ի վերայ այսր յայանի ինչ լոյս առ Նախնի իմաստասէրս։ Զի որովհետև իմաստասիրական կեանք սիրէին յամենայնի զազատութիւն՝ ուստի և զվայրենութիւն և զառանձնութիւն, չէր և ինչ նոցա փոյթ՝ կեանս վարել զօրէն այլոց,



կամ նմանեցուցանել զբարս իւրեանց պալատական օրինաց, այլ միայն իւրեանց խղճի մտաց որ քաջ օրէնդիրն էր նոցա, որպէս և լուար։ Վասն այսորիկ առ անբասիր առնել զոք 'ի տմարդութենէ և յանքաղաքավարութենէ, սովորութիւն է ասել, թէ փիլիսոփոս ոմն է նա։ Թէպէտ յիրաւի է խտրել 'ի մէջ փիլիսոփայի և փիլիսոփայի, 'ի մէջ Արիստիպպոսի յապարանս բնակելոյ, և 'ի մէջ Կինիկոսի բնակելոյ 'ի կարաս։ Բայց զգօնամիտն այն հռովմայեցի քերթող Ովիդիոս, որ գրեաց զարուեստ սիրելի լինելոյ, զոր ինքն չէած 'ի գործ առ Օգոստոս տէր իւր, յարահովագոյն և յաղդողագոյն գաղտնիս այնր սիրողական թովչութեան սրտի ուսոյց զայս թէ սիրողն լիցի քաջ մարդավար, զզուելով զամենայն գեղջուկ և անքաղաքավար գործս. որպիսի են, սանտրել զհերս, յատակել զատամունս, և հատանել զեղնգունս առաջի յարգելի անձանց։ Վասն զի ասէ բազում ինչ հաճոյ է թէ կանխաւ լեալ իցէ, այլ ոչ յորժամ լինի։ Ստգտանէ և զծիծաղելն բարձրաձայն, ատամնաբաց և ընտէրացոյց, իբր զյաւանակ զանչող։ Ազդ առնէ, թէ տարազ անձին 'ի գնացս մի իցէ անհեթեթ և խուճապ, այլ ծանր և բարեձև։ Եւ զկերակուրն առնուլ ծայրիւ մատին, և չթաթաւել զկզակս ըստ անսուրբ անասնոց։ Եւ չերևել առաջի այլոց մրճոտեալ, և խոժոռագէմ, ցուցեալ յերեսս նիշ ատելութեան և ոչ սիրոյ։ Այլ և զուարթագին այն ոգի՝ մտերիմ այնեստացւոց, Լուդովիկոս Արիոստոս քերթող իտալացի 'ի քաղել յիւրում հագներգութեան զզէնս, և զսէր աղնուազգեաց առ ժամանակօք Կարոլոսի Մեծի, խառնեաց զգործ քաջազանց, որք հայէին յարիութիւն զինուորական, ընդ պալատականութիւնս և աղնուաբարոյութիւնս, որք հային 'ի քաղաքականութիւն ապարանից։ Զի արիութեան սեպհական է երկեցուցանել, և քաղաքականութեանն սիրելի լինել։

Ապա յամենայն ժամանակի այս առաքինութիւն համարեցաւ էական, և ոչ թէ եկամուտ ինչ յատկութիւն աղնուազգեաց և պալատականաց։ Բայց յանցելում դարու վասն խժդժական անցից որք լուծին ցրեցին զամենայն մարդկային ընկերութիւն, իբրև վարեցաւ յԻտալիոյ ամենայն բարեբարոյութիւն, ծնաւ վերստին յաշխարհ Կասոն նորոգիչ բարուց, յանձն իմաստնոյն Յովհաննու Տէլլա Գազա։ Ծնեալ սորա և սնեալ 'ի Փլորենտիա քաղաքի, որ ստուգաբանութեամբ անուանն, և գերազանցութեամբ թաղից, և աղնուականութեամբ քաղաքացւոց, յիրաւի կոչեցաւ Ծաղիկ քաղաքաց Իտալիոյ, և մանր կրկնեալ նորա զամենայն զընդդիմակս քաջի մարդավարութեան, 'ի լոյս ընծայեաց գրքոյկ ինչ իբրև փոքրիկ հայելի քաջի մարդավարութեան, և մեծ խարազան տմարդութեան, որում և անուն կոչեաց Կալա-

գէոն։ Անչափ գովութեամբ ընդունելի եղև ամենայն Իտալիոյ այն ազնուական երկասիրութիւն, մինչ ոչ միայն տանուտեարց և ուսուցչաց, այլ և վարչաց համալսարանաց և մանկավարժից Իշխանազնից վարել զայն 'ի պէտս իբրև զկանոն Պոլիկլետոսի, յուղղել զբարս և զմարդավարութիւն իւրեանց համբակաց. որոց շատ էր ասել. Այդ գործ ընդդէմ է Կալագէոնի։ Այլ թէպէտ և 'ի վերայ նիւթոյս բազում ինչ խօսեցան գեղեցիկ և ընտրական, սակայն չէք գտանել 'ի ճառս նորա զգիտական սահման այսր առաքինութեան. և ոչ թէ իւ զանազանիցի յայլոց տեսակաց, և ոչ թէ յո՞ր վայր դասիցի սա 'ի դասակարգի բարոյական առաքինութեանց, և ոչ թէ ո՞ր իցեն որոշակի իւր ծայրք։ Ուր արժան էր և զայս ևս առաքինութիւն յեռուլ յայնս, և իմաստասիրաբար քննել սկզբամբք բարոյական գիտութեան։ Վասն զի թէպէտ և յաչս ռամկաց ոչ այսր առաքինութեան պիտանութիւն, և ոչ հակակայի սորա մոլութեան վնաս՝ երևին մեծ ինչ առ կեանս մարդկան, բայց և այնպէս ստոյգ իմն է թէ մեծ ինչ են առ կեանս քաղաքական։ Զի զոր օրինակ 'ի փոքր նշանաց գիմաց՝ հմուտ բնագիտք ճանաչեն զխառնուած մարմնոց, սոյնպէս 'ի քաջ մարդավարութենէ և 'ի տմարդութենէ խոհեմք ճանաչեն զբարս հոգւոյ։ Եւ անտարակոյս այս եղև իմաստ իմաստնագունին 'ի մարդկանէ, յայն բան սուրբ գրոց. թէ Զգեստ մարմնոյ, և ծաղր ատամանց, և գնացք մարդոյ պատմեն զնմանէ*։

Ապա վասն այսց պատճառաց՝ պատշաճ վարկուցեալ իմ, 'ի վերայ այսորիկ ևս խորհուրդ հարցանել մերում պատգամախօսի մեծին ասեմ Արիստոտէլի, որ զամենայն իրաց խօսի, 'ի միտ առի թէ քաջ մարդավարութիւն կամ քաղաքականութիւն փակի յերիս նախայիշատակեալ առաքինութիւնս, որք համեմեն զքաղաքական կենցաղավարութիւն. այն է Քաղցրախօսութիւն, Ճշմարտախօսութիւն և Զուարճախօսութիւն։ Բայց յերեցունց միջի՝ փակի նա յատկապէս յառաջնումն, որ առարկայ ունելով զհաճոյանալն յիրս ընտուգութեան այնոցիկ՝ ընդ որս կենցաղիմք, կոչեցաւ քաղցրախօսութիւն, Սիրողութիւն և Հաճոյականութիւն։ Այլ յայսմ վայրի յիրաւի է յուշ առնել քեզ, թէ Արիստոտէլ 'ի քաղցրախօսութեան հայեցաւ առաւել ընդ հաճոյականութիւնն 'ի գովել և 'ի հաւանիլ իմաստից այլոց. ոչ գեղջկօրէն հակառակելով և ոչ անարգաբար մարդահաճելով։ Բայց թէպէտ և այս է գլխաւոր գործ քաղցրախօսութեան, սակայն և այնպէս անուն իւր ոչ պարագրէ զամենայն զծիր իւրոյ պարունակի. որպէս և անուանք արիութեան և առատա-

* Սիրաք ԺԹ. 27։



ձեռնութեան արտայայտեն զէականագոյն մասն այնց առաքինութեանց, թողեալ գիտական սահմանին բացատրել զմնացուածն։ Ապա ըստ այսմ եթէ հայիմք 'ի քաղցրախօսութեանդ անուն, որ արտայայտէ ըստ հնչման ձայնին զեղանակ խօսակցութեան, թուի թէ ամփոփէ նա զքաջ մարդավարութիւնն միայն 'ի հաճոյականութիւն խօսից։ Բայց բաց 'ի խօսից՝ քաղցրախօսութիւնն տարածի և 'ի քաղաքականութիւն գրութեանց, հաճոյանալով այլոց և յողջունագիրս առաքեալս քաղաքական յորդանօք, և չքեղ վերտառութեամբք 'ի մակագրութիւնս, և պատկառաւոր և խոնարհական եզերօք 'ի ստորագրութիւնս. սակայն պահելով այնպիսի իմն վայելչականութիւն, զի կարի իմն հաճոյականութիւնն մի փոխեսցի 'ի քաղցրութիւն աղի։ Նա՝ նոյն իսկ քաղցրախօսութիւնն տարածէ զհաճոյականութիւն և առ ամենայն արտաքին և անտարբեր գործս քաղաքական կենցաղավարութեան։ Զի զոր օրինակ հնար է մարդահաճել և հակառակիլ խօսիւք, նշանօք, և գործովք, որպէս ցուցաւ, նոյնպէս հնար է խօսիւք, նշանօք և գործովք վարել զքաղցրախօսութիւն, որ է միջասահման 'ի մէջ մարդահաճութեան և հակառակութեան։ Աստ ասցի առ անտարբեր գործս։ Վասն զի աստանօր ոչ են մեր բանք զգործոց՝ որ 'ի բնէ են չարք այլ զգործոց, զորս առանց յանցաւորութեան մարթ է գործել գեղջկօրէն և յոչ հաճոյս, կամ ազնուօրէն և 'ի հաճոյս։ Նոյնպէս քաղաքականութիւն մարդավարութեան չէ օրէն քաղաքական, որ կանոնաւորէ զգաշինս արդարութեամբ. այլ օրէն ինչ պալատական, որ կանոնաւորէ զեղանակ գործողութեանց հաճոյականութեամբ։ Այն կոչի Ընկերութիւն, և սա Կենցաղավարութիւն. Ապա փոյթ յանձին կալցի քաղցրախօսն, զի մի միայն իւր խօսք, գովասանութիւնք, և շնորհակալիք, այլ և շարժմունք իւր և ծիծաղ, և յառնել և նստիլ և գնալ, և զգենուլ և յօրինիլ, և ուտել և խաղալ, և մեծարել, և այլ ամենայն անտարբեր գործք, որք լինին 'ի կենցաղավարութեան քաղաքային, լիցին այնպիսի քաղաքավարութեամբ. որ ոչ միայն ոչ զզուեսցեն, այլ և հաճոյ լիցին տեսողաց։ Արդ այս ամենայն է առարկայ քաղցրախօսութեան, ամենայնն է հաճոյականութիւն առաքինական, ամենայնն է քաջ մարդավարութիւն և հրահանգութիւն, որ 'ի պատուաւոր կենցաղավարութիւնս շնորհէ հաճոյս, և ընդունի սէր։ Եւ զսորին հակառակն, որ տմարդի է յայսմ ամենայնի, խորշելի և զզուելի է ազնուական անձանց որպէս անքաղաքավար։

Ապա ձեռնարկեալ 'ի յայտնի ինչ սահման ասեմք։ Քաջ մարդավարութիւնն է նոյն իսկ առաքինութիւն քաղցրախօսութեան, ըստ այնմ որ 'ի քաղաքական կենցաղավարութեան ջանայ հաճոյանալ այլոց՝ անկատակ, և հրահանգ 'ի բանս և

'ի գործս՝ ըստ պահանջելոյ վայելչականութեան: Յայսմ սահմանէ մարթ է քեզ նախ ճանաչել թէ լինել ամարդի ոչ նշանակէ լինել ամբարիշտ, գող կամ սպանող. և զորլին հակառակն, լինել մարդավար ոչ նշանակէ լինել արի, առատաձեռն կամ արդար: Վասն զի այս մոլութիւնք և այս առաքինութիւնք ունին այլ առարկայս և սեպհական անուանս և յատուկ սահմանս: Իսկ մարդավարութիւնն չունի զայլ անուն, բայց զքաղցրախօս հաճոյականութիւն. և ոչ զայլ օրէն, բայց զազնուաբարոյութիւն: Եւ պակասելն յայնմանէ չէ յանցանք. վասն զի ոչ ծնանի 'ի չարութենէ, այլ 'ի տգիտութենէ, և վասն այնր չէ արժանի այլում պատուհասի, բայց զզուանաց և քամահանաց: Մարթիս ճանաչել և ես, թէ քոյ մարդավարութիւնն ոչ վերաբերի տիրապէս, ոչ 'ի ճշմարտախօսութիւն, և ոչ 'ի զուարճախօսութիւն, այլ 'ի քաղցրախօսութիւն: Ոչ 'ի ճշմարտախօսութիւն, զի լինել ճշմարտախօս և ոչ ստախօս. է օրէնք բնական, եդեալ 'ի վերայ ամենայն մարդոյ, եթէ ազնուականի և եթէ շինականի: Բայց լինել քաղցրախօս և քոյ մարդավար, է օրէնք քաղաքական և պալատական պատշաճողութեան. որ ոչ պատշաճի շինականի, որպէս և ոչ քղամիդ՝ կապկի: Ոչ վերաբերի և 'ի զուարճախօսութիւն տիրաբար, զի թէպէտ զուարճախօսութիւնն 'ի կենցաղավարութիւնս է հաճոյական, բայց հաճոյ է յայնս որ ընդ խաղ, հիմնեալ 'ի տգեղութիւն ինչ ընդդէմ վայելչականութեան, որպէս ասացի յիւրում տեղւոջ. բայց քաղցրախօսութիւնն հաճոյ է յանկատակն և 'ի վայելչականն, և այն է քոյ մարդավարութիւն:

Եւ ոչ վայրապար յաւելաւ 'ի սահմանի անդ վայելչականութիւնն. որ հայի 'ի տեղին, 'ի ժամանակն և յանձինս: Զի այլ մարդավարութիւնք 'ի գործ ածին 'ի մէջ շինականաց և շինականաց, և այլ 'ի մէջ ազնուականաց և ազնուականաց: Ուստի է ինչ գործ յընտանեաց միջի սովորութիւն, որ յազնուականաց միջի է գեղջկութիւն: Նա, յազնուականաց միջի իսկ՝ ինչ ինչ 'ի գեօղս, և յոյս ընդ խաղ չէ հրաժարական, որ յանկատակս և յապարանս է անտանելի: Եւ ինչ ինչ 'ի սերտ բարեկամաց միջի է համարձակութիւն, որ առաջի օտարականաց է անքաղաքավարութիւն: Զի բարեկամն է միւս ինքն, և իւր ինքեան ոչ ոք դնէ նախատինս: Թող զայն, զի ինչ ինչ յերկրի ուրեք է անքաղաքավարութիւն, որ յայլում երկրի է քոյ քաղաքավարութիւն: Ի քաղաքս ինչ Իտալիոյ, վասն զի են տղմուտ, պատուաւոր տեղի գնացից է առ որմով. իսկ յայլ քաղաքս ողորկս և ցամաքս՝ պատուաւոր տեղի է աջակողմն: Յարեմուտս մեծարանք են այլում՝ բանալ զգլուխ. և բանալ զգլուխ յարևելս է անքաղաքավարութիւն: Հանել զհողաթափս առաջի հարկեոր անձին, է գեղջկու-



թիւն. և յերկիրս ինչ Հնդկաց է այն պատուաւոր ողջունատութիւն: Ապա չափ քաղաքավարութեան է վայելչականն. և չիք ուսանել զվայելչականն, բայց եթէ մատուորութեամբ կամ ընթերցմամբ և կամ կենակցութեամբ ընդ քաղաքավար անձինս:

Բայց առաւելապէս 'ի բուն իսկ սահմանէն է քեզ 'ի միտ առնուլ, թէ որով օրինակաւ գործիցէ քոյ մարդավարն: Զի որովհետև ասացաւ թէ քոյ մարդավարութիւնն հաստատեալ է 'ի բանս և 'ի գործս հրահանգս և հաճոյականս, կրկնակի յառաջանայ քոյ մարդավարն: Մի, զգուշացեալ չերևեցուցանել 'ի գործս և 'ի բանս առարկայ ինչ, որ պատուաւոր անձանց կենցաղակցաց բերիցէ նողկանս և տհաճութիւն: Եւ երկրորդ ջանացեալ զի իւր բանք և գործք երևեսցին նոցա իրօք հաճոյականք և ազնուականք վայելչականութեամբ: Ապա 'ի նողկալեաց անտի և յանքաղաքականաց ոմանք անհաճոյ են աչաց, և այլոց արտաքին զգայութեանց. ոմանք անհաճոյ են ներքին զգայութեանց, այսինքն երևակայութեան և կրից. և ոմանք անհաճոյ են բանի, այսինքն մտաց և կամաց: Թէ ակն յանդիման առնես դու անձանց քաղաքայնոց առարկայ ինչ աղտեղի և զզուական, այդ է մեծ գեղջկութիւն: Վասն զի աչքն է ճաշակագոյն 'ի զգայարանս, և զբաղում ինչ՝ ըստ ասից Արիստոտէլի, լաւ է չտեսանել քան տեսանել: Նոյնպէս, վասն զի ախորժագոյն առարկայ աչաց է համեմատութիւն իրաց, մեծապէս անհաճոյ է տարազ զգեստուց փերևեթեալ և օտարոտի, կամ տարազ անձին անշնորհ և անհեթեթ՝ յոտնկելիս, 'ի նիստս և 'ի շարժմունս. որպէս որք 'ի գնալն տատանեն զբազուկս, որպէս թէ սերմանիցեն յանդի. և այլք 'ի խօսելն շարժեն զգլուխ, որպէս թէ խօսիցին 'ի նաւակէ՝ որ կայ յերերի: Են և առարկայք ինչ անհաճոյ լսելեաց, որպէս փող հարկանել 'ի փնչելն, կամ սուլել և չչել իբրև զանդեորդս յանդի. կամ ծիծաղել կարկաչաձայն, կամ կրճտել զատամունս իբրև զկինճ կատաղի. կամ առնել զրնդիւն, մինչ այլք խօսին կամ 'ի քուն են: Են և առարկայք ինչ անհաճոյ հոտոտելեաց. որպէս հոտոտեցուցանել նեխեալ ինչ, կամ շիջուցանել զճրագ փչմամբ, կամ 'ի խօսելն մօտել զերեսս յայլոց երեսս, շունչ 'ի փորոտեաց 'ի վեր բերելով, որպէս և յետ ուտելոյ և ըմպելոյ զարահոտս: Եւ ոչինչ օգտէ յանձին կրել մուշկ և բուրկէն. զի ըստ ասից Մարտիալիսի առ ոմն 'ի տիկնաց. Ոչ միշտ անոյշ հոտ առնու, որ միշտ է յանուշահոտութեան: Զնոյն ասելի է և զայլոց երկուց զգայութեանց: Մարթ է թէ անհաճոյ լիցի ճաշակի ազնուական անձանց՝ համեմել զկերակուրս իւիք որ բերէ կծուութիւն կամ զզուանս, կամ սոփել գեղջուկ քաղաքականութեամբ յորբուամն ընդդէմ կա-

մաց. կամ մտել զձեռն 'ի սկաւառակս յառաջ քան զերկրպագոյս, կամ առնուլ ձեռամբ ցգի զկերակուրն 'ի մատուցանել սեղանակցաց, զի այդպիսի գործք տաղտկալի են փափկանից: Իսկ 'ի շօշափելեաց մասին, սա ոչ են բանք զչխոցելոյ կամ զչհարկանելոյ զայլս. զի որպէս ասացաւ, տմարդութիւնն չէ չարութիւն: Բայց հնար է թէ 'ի մէջ անկանիցի ինչ ինչ գեղջուկ, 'ի խթել կամ յընդհարկանիլ ընդ այլս անզգաստութեամբ, կամ 'ի հասուցանել զձեռն յերեսս պատուաւոր անձանց 'ի սրբել զբիծ ինչ, կամ դգուելով զայլս անշնորհաբար, իբրև զէշն Եսովպոսի, որոյ վեռարեալ զոտս գիրկս արկանել տեառն իւրում նստելոյ, զաթոռն և զտէր իւր յերկիր կործանեաց:

Արդ եկեսցուք յառարկայս որք անհաճոյ են երևակայութեան կամ կրից: Մեծ գեղջկութիւն է անուանել զամօթալիս կամ զնողկալիս, 'ի պատուաւոր կենցաղավարութիւնս: Զի զնոյն իսկ զզուումն զոր զգան աչք 'ի տեսանել զայնպիսի առարկայս, զգայ և երևակայութիւնն 'ի լսել զայնց անուանս. զի անուանքն են պատկերք իրաց, որք տպաւորին 'ի հասարակ զգայութիւնն: Նոյնպէս անհաճոյ է երևակայութեան՝ յիշատակութիւն անցից ինչ, որ եղեն 'ի սոգաանս և յամօթ ուրուք որ երբեմն լինի չարութեամբ առ երգիծուցանել զայն, որոյ կսկիծ է 'ի սիրտ, և երբեմն անմտածութեամբ: Այն է նախատինք, և այս անքաղաքավարութիւն, որ և հակառակ մեծապէս է անհաճոյ և դժգմին ընդ այն: Այսպէս Տիբերիոս 'ի լսել զանուն կղզւոյն Հռոդոսի, անդէն վաղվաղակի կարծէր թէ 'ի դէմս ածէին նմա զաքսորանս որում դատութեամբ տարաւ: Եւ Եւտրոպիոս Հիւպատոս, որ էր ներքինի, և 'ի շղթայակապ գերութենէ ամբարձեալ յաւագամեծար իշխանութիւն, 'ի լսել զանուն սուսերաց և շղթայից, կարծէր թէ 'ի դէմս ածէին նմա զգործիս իւրոյ անարգութեան. որոյ մանաւորութեանց քաջ մարդավարն միտ դնէ, այլ անքաղաքավարն ոչ մտադրէ: Ի զգայական կրից մասին, տմարդի է այն որ տխրեցուցանէ զուրախութիւն ուրուք. որպէս գեղջուկն այն, որ 'ի զօրացուցանել Հերակլեայ զսիրտ իւր 'ի մեծապատրաստ ընթրիս յետ տունջեանյին աշխատութեանց ընդդէմ Դիոմիդեայ, անմտաբար եդ նմա զգոյժ մահուն Աղկեստեայ, զոր Ադմետի մարդավար հիւրընկալն ծածկեալ էր 'ի նմանէ [166]: Եւ զորին հակառակն, թէ ոք մեծապէս է վշտացեալ վասն ցաւագին ինչ պատահարի, մինչ դեռ իսկ է հարուածն, տմարդութիւն է խօսել ընդ նմա զուարթերես առանց ինչ ցաւակցութեան նշանի. կամ այնպիսի առնել ցաւակցութիւն, որ փոխանակ նուազելոյ զցաւն և ևս յաւելուցու: Կամ ցաւակցել այնչափ անագան, մինչև ցածուցեալ ցաւոյն վէրսին նորոգել. իբր Թիբացիք, որոց



Տիբերիոս ետ պատասխանի. և ես ցաւակից եմ ձեզ վասն մահուն Հերակլեայ հազարաւոր ամօք յառաջ մեռելոյ:

Մնան արդ առարկայք, որք անհաճոյ են մտաց և կամաց: Յաղագս առաջնոյն ասացէն լուար, թէ մոլութիւն առաւել գեղջուկ և թշնամի քաղցրախօսութեան, է հակառակիլ կարծեաց այլոց: Վասն զի իւրաքանչիւր ոք սիրէ զիւր կարծիս որպէս զիւր ծնունդս: Եւ ոչ փոքր անքաղաքավարութիւն լինի խափանել զզրոյցս խօսողին, կամ 'ի քուն լինել և կամ յօրանջել 'ի խօսել նորա: Զի այսու ցուցանես թէ չես հաճեալ, և արհամարհես և յոչինչ համարիս զխօսս նորա: Իսկ յաղագս կամաց յետին անքաղաքավարութիւն է հակառակիլ այլոյ կամաց ոչ վասն իւրոյ ինչ օգտի, այլ վասն բնաւոր իմն գեղջկութեան: Որպէս շինականք Լիկիոյ՝ Ղէտովայ իւրովք մատաղ մանկամբք առ նոսա եկաւորելոյ, և պապաքելոյ 'ի ծարաւոյ, չթողացուցանէին ըմպել զջուր լճին, վասն որոյ և ըստ ասից առասպելաբանութեանց արժանապէս փոխեցան 'ի գորտս, զի միշտ արբցեն՝ զոր այլոց զլանային [167]: Եւ վասն զի ամենայն մարդ պատուաւոր՝ բնաւորապէս ըղձանայ պահել զիւր պատիւ և զաստիճան, գեղջկութիւն է ամենեւին և հակառակ վայելչութեան, չմեծարել զարժանաւորս, կամ առնուլ զերիցագունից զպատուաւոր տեղի 'ի գնացս, կամ 'ի սեղանս, կամ 'ի համախմբութիւնս, ոչ յառաւելութենէ յանդգնութեան՝ այլ 'ի պակասութենէ քաղաքավարութեան. որ չէ արժանի ցասման, այլ քամահանաց և ծաղու, որպէս բու 'ի կարապս զմիջին ունելով տեղի:

Մնայ մեզ արդ հաստատել թէ ո՞ր իցեն երկու մոլեկան ծայրք քաջի մարդավարութեան: Արդ դիւրաւ ճանաչին ոտքա 'ի ծայրից քաղցրախօսութեան. զի որպէս քաղցրախօսութիւնն է միջասահման ինչ 'ի մէջ գեղջուկ հակառակութեան, և աւելորդանց մարդահաճութեան, սորա յառաւելն սայթաքելով, և նորա 'ի նուազն, նոյնպէս քաղաքավարութիւնն՝ որպէս լուար, է միջասահման ինչ 'ի մէջ գեղջուկ անքաղաքավարութեան և 'ի մէջ աւելորդանց քաղաքավարութեան. Այս 'ի նուազն սխալէ գեղջկութիւն, որ է պակասութիւն քաղաքավարութեան և հաճոյականութեան, այնպէս վարելով 'ի գործս և 'ի բանս, որ անհաճոյ են գրգռութեան արտաքին զգայարանաց, կամ ներքին զգայութեան, կամ իմացական հոգւոյ, որպէս լուար: Եւ զի զսոցանէ ասացաւ լիով, չիք այլ յաւելուլ 'ի վերայ: Բայց յառաւելն սխալէ միւս մոլութիւն, է որ նուազ անհաճոյ ըստ երևութին, և որպէս թէ ծաղրական իմն. բայց յոլովակի տաղտկագոյն ևս: Եւ այս է աւելորդութիւն քաղաքավարութեան: Որ երբեմն ծագի 'ի ազխաւութենէ. կամելով նորա 'ի վար արկանել բառս հաճոյականս և քաղաքավարականս ընտրելագոյնս, բայց չու-

նելով յինքեան զօրգար չափ հաճոյականութեան՝ անմոռաբար անցանէ ըստ կոպար վայելչականութեան, և լինի ծաղրական։ Այսպիսի եղև պատանին այն լոմբարտացի, որոյ երթեալ 'ի Վենետիկ, և չգիտելով որով օրինակաւ լինելն անդ յարգանք. բայց և այնպէս կամեցեալ լոմբարտօրէն խոր խոնարհիլ աղնուականի ումեմն 'ի ոխոլցեան կամրջի[168], այնչափ ցածեաւ, մինչև ընդ հարկաւ գլխոյ նորա 'ի սրունս աղնուականին ընկեց զնա 'ի ջրանցս անդ։ Լինի երբեմն աւելորդանցութիւն և 'ի թեթևութենէ յորժամ առաւելու ոք 'ի յարգարուած զգեստուց, 'ի սպասահարկութիւն անձին, 'ի կանացի ծեքծեքումն գնացից. զի երևեսցի յանկաւոր և հաճոյական յընկերութիւնս. և ողբա գիւրաւ առաւելուն 'ի մարդահաճութեան, զի առաւել են հաճոյացոյն։ Բայց երբեմն այս աւելորդանցութիւն քաղաքավարութեան լինի 'ի խոր խոն փառամոլութենէ. վասն զի ոմանք կարծեն իմն անձկանօք մեծարանս ընդունելոյ առաւելուն 'ի մեծարել զայլս, և 'ի շքեղ երևիլ 'ի քաղաքավարական խօսս. բայց թէ դու ոչ փոխարինես նոցա նոյնչափ շքեղ զրոյցս, անդէն 'ի վեր երևի տրտունջ։ Մինչ զի լաւ է կենցաղավարիլ ընդ գեղջուկս, քան ընդ այսպիսի խմաստակս և պատուասիրօղս։

## ԳԼՈՒԽ ԺԲ.

*Յաղագս տմարդութեան, որ մուծաւ 'ի ծխախոտ*[169]

Խնդիր մեծ յուզեցաւ առ քաղաքականս, արդեօք չիցէ՞ թէ օգուտ եղև հնոյ աշխարհի՝ յայտնութիւն նորոյ աշխարհի։ Զանց զայլովք արարեալ, ոչ գոյզն օրինակ դատեցաւ այն, զի եկն յարեմտեան հնդկաց գեղջուկ ոմն թշնամի քաջի մարդավարութեան, անուանեալ ծխախոտ. յորմէ երևի գլխովին աղաւաղեալ յարգական հեզինակութիւն և ցրեալ օրէնք կոլոգեան զրոյն քաղաքավարութեան՝ Յովհաննու Տելլա Գազա, ձայնակից բարոյական իմաստասիրութեան։ Արդ իմն է թէ առգամնել զպէտս այսր խօսոյ՝ լինէր առգիտ արկանել 'ի խնամս արարչին, որ յամենայն մանրատունկս թէպէտ և չնչինս և անարգս՝ հաստեաց ազդուութիւն ինչ առողջարար մարդկային կենաց, եթէ էր 'ի մէնջ ծանուցեալ։ Բայց սա յայլ ամենայն անկոյ միջի առաւելու այնպիսի և այնչափ հրաշալի ազդեցութեամբ, մինչև կարծել ինձ, զուցէ սա իցէ գիցականն այն պէնթիս Հոմերոսի, մի միայն դեղ բժշկութեան ամենայն ախտից[170]։ Գտաւ սա 'ի մի ի գաւառաց հիւսիսային Ամերիկոյ, որում անուն կոչի Փլորիդա,



որ թարգմանի Ծաղկաւէտ բարեբեր, թէպէտ և երկիրն է անբեր. մեծահարուստ հանքօք, այլ չքաւոր փողովք. 'ի մէջ գրաստամբք և չարակեղա ժողովրդոց արևմտեայց. որոց խոյզ լինի միայն վասն ոսկւոյ՝ որ արհամարհ է յաչս նոցա, և վասն բուսոյս՝ որ միշտ առ նոսա եղև մեծարգի։ Վասն զի համակ այս բոյս՝ եթէ գոլար և եթէ չոր, եթէ այրեցեալ և եթէ թրմեալ, տերևովք, ծաղկամբ, սերմամբք և հիւթովք, 'ի փոշի դարձուցեալ կամ ծխեալ, մածուցեալ կամ մզեալ, տենդի և ցաւոց և վիրաց անրժշկականաց իբրև սքանչելեօք իմն մատուցանէր բժշկութիւն։ Նա եթէ ճշմարիտ իցեն պատմեալքն, սա միայն շոգեօք լոկովք ընդ անդունս, զնատուցանէ ղքաղց և զծարաւ. յորմէ թերևս խելեցին ասել պատմիչք թէ ժողովուրդք ինչ Հնդկաց կեան 'ի հոտոյ։ Եւ յայանի խակ զօրաց Սպանիացւոց առատ բաշխի այս ծխախոտ, զի 'ի պակասիլ ախտային զօրականին, ճարակ մատուցանէ սա սովու, և բժշկութեան վիրաց։ Ապա յիրաւի յԵւրոպացւոց անտի պատուեցաւ սա արքայենի անուամբ կոչեցեալ խոտ դշխոյական։ Զի թէպէտ խկութեամբ էառ սա զմակդիր անունս 'ի Կատարինեայ թագուհւոյն Գաղղիոյ, որում 'ի դեսպանէն Լուսիտանիոյ ընծայեցաւ որպէս հրէշ իմն նորոյ աշխարհի, բայց է այնպէս նոյն խակ անկոյն վասն իւրոց նշանաւոր առաւելութեանց մարթ էր վերաքարոզիլ, թէ թագուհի է խոտոց։

Այլ թէպէտ և այս ամենայն ճշմարիտ իցէ, բայց և այնպէս բազում ինչ ընդ մէջ է գործածութեան անկոյս 'ի կարգի առողջութիւն մարմնոյ, և չարաչար գործածութեան նորա 'ի կարգի առ բարոյական կենցաղավարութիւն։ Զի թէպէտ 'ի ձեռս է իւրաքանչիւր ուրուք առնուլ 'ի պէտս իւր զորպիսի և իցէ ազգ դեղոյ՝ թէպէտ և զզուականաց, միայն թէ իցէ յօգուտ, բայց չէ ինչ պատշաճող քաղաքականութեան առնուլ զայն յամենայն ժամանակի, յամենայն տեղիս, և առաջի ամենայն անձանց. զի բազում ինչ է օգուտ ընդունողին, այլ նողկալի տեսողին։ Ապա ատանոր ոչ են մեր բանք զգործածութենէ ծխախոտոյ առանձինն վասն հարկի, այլ զչարաչար գործածութենէ նորա յայտնապէս մոլեկան սովորութեամբ, յամենայն պահու, յամենայն ժողովս, և առաջի ամենայն անձանց, երբեմն ընդ անդունս ձգեալ զնորա կեղատ փոշի, երբեմն ծածկեալ զնորա փուռ տերևս երբեմն ընկլեալ ըղծանրահոտ նորա ծուխ, երբեմն յայլմէ զայն ընկալեալ, և երբեմն այլում կարկառեալ, առանց հայելոյ յայնս՝ որք զզուին 'ի նմանէ, և 'ի լոկոյ հոտոյ նորա թալանան։

Արդ եթէ բարոյական առաքինութիւն քաղցրախօսութեան և քաջ մարդավարութիւն հաստատեալ է յայն, զի անհետ լիցին ամենայն առարկայք, որք բնաւորապէս անհաճոյ են զգայութեանց, և երևակայութեան քաղաքայնոց, և

եթէ այս է ճշմարիտ սահման մարդավարութեան, և նպատակ կալաղէոնի, ով չասիցէ թէ զեղծ սովորութիւն ծխախոտոյ արտասահմանեայ յաշխարհէ զկալաղէոն հանդերձ իւրովք բարոյական օրինօք: Փաչ գիտեմ, զի յիշատակութիւնք ևեթ այնց աղտեղութեանց բերեն զզուանս, զի ասացաւ իսկ, թէ առարկայք որոց տեսութիւն անհաճոյ է աչաց, նոյնն և լսելութիւն անհաճոյ է երևակայութեան: Բայց քանզի հարկ է յառաջ բերել և ցոյց ինչ, առաջի արարից զօրինագրեալն 'ի կալաղէոնէ 'ի գլխաւոր կանոնս իւր, թէ քաջ մարդավարն յաղնուական ինչ կենցաղավարութեան՝ իբրև յանձին զգայ թէ առխալի ընկնել կամ մաքրել զունչս, դարձուսցէ զերեսս, և մի անձին իսկ երևեցուսցէ, թող թէ այլում, զոր ընկեցան կամ 'ի վարշամակի ծրարեսցէ. զի քան զամենայն դարշութիւն աշխարհի, ոչ ինչ այնպէս ժխորէ զստամոքս, որպէս յաւելուածք մարդկային մարմնոյ: Իսկ արդ՝ զի՞նչ դարշութիւն կայցէ առաւել հակառակ այսմ բնաւոր օրինաց՝ քան մտել յայնպէս յունչս մատամբք զկորկ այնր փոշւոյ, կամ ցամաքեցուցանել զաղտեղամած ռնգունս 'ի քամածոյ նորա, ժողովել զայն և 'ի ցոյց ընծայել 'ի լոյն պատառս, որ առաւել ևս աղտեղի են և ժահահոտ քան զամենայն ընչից պուտան և կճճոյ: Զի՞նչ առաւել ժխորիցէ զորովայն, քան 'ի խօսել ընդ այլում որոճել ստամամբք զայն դարշելի և զազրոտի նիւթ, արտաշնչելով 'ի համբուրել զխօսս, գրօնս ժահահոտ շնչոյ: Եթէ փռնչիւնն է ցնցումն ինչ ուղղոյ՝ այնպէս բուռն և աշաւոր, մինչև որք լսենն, զերկիւղ յօգնութիւն կարդան [171], և յայս սակս հրամայէ կալաղէոն զի 'ի գտանել քաջի մարդավարի յընկերութեան՝ ջանասցի զուսպ ունել զինքն բստ կարի, և կամ հեղձուցիկ առնել զփռնչիւնն ազխատ թաշկինակաւ, զի մի կարի իմն շռնչեսցէ, առ 'ի չապաղակեցուցանելոյ զընթերականս, զի՞նչ լինիցի գրգռել կամաւ ժամ 'ի ժամի՝ առանց ինչ հարկի զայն ազեղ և շառաչաձայն ցնցումն, չիթելով զաճառս հատանելեաց ծծմբային հոտով այնց փոշեաց. և ապա մնալ. զի որք լսենն, իբրև 'ի մեծ ինչ վտանկի՝ զԱստուած յօգնութիւն նորա կարդայցեն: Բայց զի՞նչ առաւել քամահելի անախիլ, քան մտել յիւր բերան զբերան գալարածոյ եղջեր խճողելոյ մրճառեալ և միկեալ աղտեղութեամբ, քարշել անուխ զատրատարասական գոլորշի ընդ քիմս 'ի վեր, և ընդ ռնգունս 'ի դուրս հանել, ըստ ձևոց Գերմանիգեաց և ըստ ցլուց Յասովնի, որք ընդ ռնգունս ժայթքէին ծուխ և կայծակունս [172]: Մարթ էր 'ի համար բերել այլ ևս ծանրատաղտուկ պատկերս այսր չարաչար կիրառութեան, որք թէ նողկացուցանեն զքաղաքավար ոք 'ի լսել, ևս առաւել 'ի տեսանել:

Բայց յայսմ վայրի տացէ թերևս ոք պատասխանի: Սոյդ



է թէ տմարդութիւն է այն՝ որ անհաճոյ է զգայութեանց ազնուականաց, ընդ որս լինի կենակցութիւն: Բայց առ այժմ ոչ միայն զօրականք պահապանք, և պանդոկապետք փոխավաճառք, այլ և պատուաւոր քաղաքացիք, և բազում ազնուական ասպետք այնպէս ընտել են սովորութեանս, մինչև զըզուանք փոխեցան 'ի բերկրանս. և որ առ ժամանակօք կալաղէոնի էր անքաղաքավարութիւն, շրջեցաւ 'ի քաղաքավարութիւն. զի չարաչար կիրառութիւնն եղև սովորութիւն, և վասն այսորիկ ծխախոտն չէ ինչ խափանարար առաքինութեանն քաղցրախօսութեան, զի ընծայութիւն նորա և ընդունելութիւն են հաճոյական: Առ այդ պատասխանէ բարոյական իմաստասիրութիւնն, թէ որպէս մարդահաճութիւնն ևս է աւելազանցութիւն հաճոյականութեան, բայց և այնպէս չէ առաքինութիւն, այլ մոլեկան ինչ ծայր քաղցրախօսութեան. զի հաճոյականութիւնն այն ոչ մնայ 'ի կոպար բնական պատճառի, նոյնպէս հաճոյականութիւն չարաչար կիրառութեան ծխախոտոյ չէ հաճոյականութիւն առաքինական, այլ մոլեկան և անբնական: Վասն որոյ ծայրի առաքինութեան անհնար է լինել առաքինութիւն, զի աւելազանցութեան անհնար է լինել մէջ: Ապա որպէս եթէ ամենայն մարդիկ լինէին մարդահաճոյք, և ամենեքին համ էին ընդ մարդահաճութիւն, ոչ վասն այդր լինէր երբէք մարդահաճութիւնն առաքինութիւն, սոյնպէս թէպէտ և ամենայն մարդ համ իցէ ընդ չարաչար կիրառութիւն ծխախոտոյ՝ ըստ ասացելումդ, 'ի քաղաքական կենցաղավարութիւնս, ոչ վասն այդր երբէք այդպիսի չարաչար կիրառութիւն լինի առաքինութիւն: Այնպէս զի կանոն քաղաքականութեան ոչ առեալ լինի 'ի սովորութենէ անքաղաքավար գործողին, այլ յայնմանէ որ գտանէ ըստ բնաւոր և բարոյական պատճառի իբրև զկալաղէոն: Եթէ ամենայն իմաստունք այնչափ մեղադրեցին զԱննիբաղ վասն աւելազանցութեան նորա յանուշահոտ գըրգանս կապուայեցի օծանելեաց [173], թէպէտ և անուշահոտութիւնն այն զուարթութիւն էր սրտի՝ որոց շուրջն կային, զի՞նչ արդեօք գրէին զայնց՝ որք առաւելուն 'ի ժահահոտ գըրգանս հնդկային ծխախոտոյ, որ բնաւորապէս է անախորժ: Թող զի այն աւելազանցութիւն ոչ միայն քաղաքականութեան, այլև մարմնաւոր առողջութեան է վնասակար. զի բազմաց 'ի ծխախոտս մոլելոց գտան ախտդանք խաչրեալք, և ուղեղ ծխոտեալ կամ խարակեալ: Յայտ իսկ է, թէ ուղեղն հանապազորդ զգրգռեալ՝ իբրև ծախէ զհիւթն զաւելորդ, ծախէ և զբնաւորականս: Ապաքէն ամենայն աւելազանցութիւն է վնասակար, և չարաչար կիրառութեամբ ամենայն գեղ բժշկական կամ կորուսանէ զազդուութիւն, և կամ փոխարկի 'ի թոյն: Նա՝ մարթ է ասել ստուգութեամբ,

*թէ չիք պատուաւոր ոք յաճախեալ յայս սովորութիւն, որ ոչ խոստովան լիցի, թէ մոլութիւն ինչ է այն և ոչ պէտք. և ոչ դատապարտեսցէ զյաճախել իւր յայն:*

*Արդ կնքեսցուք զբանս յայն զոր յառաջն ասացաք, թէ չէ պարտ մեղադիր լինել գործածութեան օգտամատոյց բուսոյս, և ոչ այլոց աղտեղի բժշկական դեղոց, զոր առնուն առանձինն յօգուտ. իբր զի ամենայն ոք պահապան է իւրոյ առողջութեան, և տէր 'ի տան իւրում և յիւրոց ընտանեաց միջի: Բայց 'ի քաղաքական կենցաղավարութեան մասին, թէպէտ և չեն ներքոյ անկեալ դատման կաղադէոնի արք խոտանք և գուէհիկք, բայց անձինք քաղաքականք և բարոյական իմաստից ընդունակք, զորոց են մեր բանք, ոչ պարտին խոտորիլ 'ի կանոնաց առաքինութեան և վայելչութեան, նմին իրի ամենայնն հաստատեալ է յեղանակն և 'ի չափն:*

# ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ՃՇՄԱՐՏԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՅՐԻՑ ՆՈՐԱ

### ԳԼՈՒԽ Ա.

*Յաղագս զինչ առաքինութիւն իցէ ճշմարտախօսութիւն:*

*Ի քաղաքական կենցաղավարութեան նախընթաց առաքինութիւնն հայէր առաւելապէս 'ի խորհուրդս՝ զոր այլք հաղորդեն մեզ: Սա հայի 'ի խորհուրդս զոր մեք հաղորդեմք այլոց: Վասն որոյ նա պահանջէ զհաճոյականութիւն, և սա զճշմարտախօսութիւն: Զի որպէս մեք հաւանիմք ասից այլոց, համարեալ թէ են ճշմարիտք, նոյնպէս այլք չհաւանին ասից մերոց, 'ի համարել թէ են սուտք. և կենցաղավարութիւնն ոչ փոխատրէ զփոխադարձ հաճոյս, յոր սակս խնդրի: Բայց 'ի դէպ է յիշեցուցանել, թէ խօսիմք աստ զճշմարտախօսութենէ կենցաղավարութեան, և ոչ զճշմարտախօսութենէ որ 'ի դաշնադրութիւնս: Այն է համաձայնութիւն գործոյ ընդ խոստմունս, սա է համաձայնութիւն մերոց ասից ընդ մեր գործառնութիւն, զորս կամաւ հաղորդեմք խօսակցաց: Այն է էական ինչ մասն արդարութեան, որ տայ զիւրն իւրաքանչիւրում. սա է կարողական ինչ մասնիկ բարեխառնութեան յընդունել և 'ի տալ բերկրութիւն 'ի խօսակցութիւնս: Սակայն ճշմարիտ է, թէ որ ունի զունակութիւն ճշմարտախօսութեան 'ի խօսակցութեան, առաւել պատրաստական է առ ճշմարտախօսութիւն 'ի դաշնադրութիւնս. զի որ ճշմարտախօս է ընտրութեամբ, առաւել ևս լինի այնպիսի պարտաւորութեամբ:*

*Արդ ճշմարտախօսութիւնն զորմէ խօսիմք, է առաքինական ունակութիւն ինչ հոգւոյ, որ հաստատեալ է 'ի միջասահմանութեան զճշմարտութեամբ այնց զոր հաղորդեմք այլոց 'ի քաղաքական կենցաղավարութիւնս, ևս առաւել այնց՝ որ բերեն 'ի գովեստ մեր: Վասն զի յարտայայտել զայնս որ-*

պէս մոլութիւն է ասել աւելի քան զոր էն, նոյնպէս մոլութիւն է ասել նուազ քան զոր էն, յորժամ խնդրի ճշմարտին. ըստ այսմ, ասել որ ինչ է, և երբ պատշաճ է ասել, է միջասահմանութիւն ինչ առաքինական: Աւելորդանցութիւն սորա է ճառատանք, և պակասութիւնն կեղծաւորութիւն. իսկ միջասահմանութիւնն կոչի ճշմարտախօսութիւն: Արդ այս առաքինութիւն յայտնագոյն ճանաչի իւրև քան իւրովք ծայրիւք. զի ճշմարտութիւն է որոշ իմն և եզական, իսկ ստութիւնն է անորոշ իմն և անբան:

## ԳԼՈՒԽ Բ.

*Յաղագս առարկայից ճշմարտախօսութեան:*

Ամենայն մարդ ընկերական բնաւորութեամբ ախորժէ հաղորդել ընկերին զիւր խորհուրդս, և մանաւանդ զյարգականս խօսողին և զհաճոյականս ունկնդրին: Որպէս գաղտնի վիշտք՝ նոյնպէս գաղտնի մխիթարութիւնք հեղձամղձուկ առնեն ըզսիրտ, թէ ոչ արտայայտին խօսակցութեամբ. զի վիշտք նուազեն և մխիթարութիւն առաւելուն 'ի հաղորդել զնոսա բարեկամաց: Ապա ամենայն ումեք քաղցր է խօսել զիւրոց առաքինութեանց, զիւրմէ գիտութենէ. զիւրոց քաջագործութեանց, զիւրոց տարժանաւոր և բարեբաստիկ պատահարաց, զընչից, զազգատոհմէ, զբնաւորութենէ իւրոց զաւակաց, զմեծահարկի բարեկամութեանց և զշնորհաց ընկալելոց 'ի մեծամեծաց: Զայս ամենայն, զորս հաճոյ է խօսել, հաճոյ է և լսել. զի երկաքանչիւր այս յօժարութիւնք միապէս են բնաւորականք, իմացուցանել զիւրոն, և իմանալ զօտարինն: Ամենայն մարդ ունի անյագ հետաքննութիւն գիտելոյ զամենայն, և առ 'ի գիտել զամենայն առաքէ միշտ շուրջանակի չորս աչալուրջ լրտեսս, երկուս աչս և երկուս ականջս: Եւ թէպէտ իւրաքանչիւրումն փոյթ է առաւել ճանաչել զինքն, բայց և այնպէս գտանի որում առաւել քաղցր է իմանալ զայլոց արարս քան զիւրոն: Եւ ոչ միայն հետաքննին է մարդ 'ի գիտել զիրողութիւնս ամենեցուն, որք կենդանիքն են, այլ և զամենեցուն նոցա՝ որք մեռան բազում դարուք յառաջ քան զծնունդ իւր. խոյզ և խնդիր արարեալ ծանօթութեանց 'ի պատմութեանց, 'ի մակագրութեանց, յարձանագրութեանց գերեզմանաց և 'ի վաղեմի գրոց: Բայց փափաք իւր ոչ գոյ 'ի լրումն, եթէ զայսց իրաց ոչ ճանաչէ զճշմարտութիւն. զի գիտել զսուտս ոչ է գիտել, և ճշմարիտն է ճշմարիտ առարկայ մտաց [174]: Դիդիմոս քերթող կորովամիտ շարադրեաց



չորս հազար գիրս ընդվայրաքննին հնութեանց, 'ի խնդիր լեալ ճշմարտութեան յառասպելս, թէ ո՞ր իցէ լեալ ճշմարիտ մայր Ենէասայ, և ճշգրիտ հայրենի գաւառ Հոմերոսի. թէ արդարև Դիոս էա՞ռ 'ի կնութիւն զիւր քոյր, և թէ Սափփով քերթողուհի ողջախո՞հ ոմն եղև թէ պոռնիկ: Որ իրք և այլ այսցին նման անբաւք, թէպէտ և չնչինք և անպէտք, զորս գիտողին իսկ պարտ էր 'ի մոռացօնս արկանել, այսու ամենայնիւ հաճոյ են զի ճշմարտութիւնն ինքնին է հաճոյական, և զի անաշխատ ուսեալ լինի՝ զոր ինչ անհնարին աշխատութեամբ հետազօտեաց նա 'ի գիրս: Արդ թէ այսչափ բերկրութիւն բերէ ճանաչել զդուզնաքեայ ինչ նշոյլ ճշմարտութեան այնց որք ընդ աշխարհի ծնեալ՝ 'ի մերմէ աշխարհէս գտան բացական, քանի՞ բերկրութիւն բերէ ճանաչել թէ ո՞վ և ով իցեն ճշմարտութեամբ այնք՝ որք ընդ մեզ կենցաղին: Ապա չէ բաւական հաճոյականութիւն 'ի պատմել այլոց զմեր իրս, թէ ոչ ընկերէ նմա ճշմարտախօսութիւն. զի որպէս պատմութիւնք գլխաւոր նիւթ են կենցաղակցութեան, նոյնպէս ճշմարտութիւն հոգի և պատմութեանց:

Ասացի նիւթ գլխաւոր: Զի որովհետև մարթ է խօսել ոչ բարբառով միայն այլ և գրովք, ակնարկութեամբք, արարողութեամբք, հանդերձիւք և լռութեամբ իսկ, որպէս լուար. այսպէս և այս ամենայն լեզուօք հնար է ճշմարիտն ասել, կամ ստել, ամենայնիւ լինի հաւանեցուցանել կամ պատրել, ամենայնն է նիւթ ճշմարտախօսի և ստախօսի: Ճակատ և աչք և դէմք ստեալ ստեն, այլ յաճախագոյն ես լեզու, աստ որ ասաց: Հարցեալ որսորդաց ցաղուէսն թէ ընդ ո՞ր էանց նապաստակն. ես պատասխանի, չգիտեմ. զի մի՛ մատնեսցէ զընկերն. բայց գնացիւք եցոյց նոցա զճանապարհն: Եւ աղուէսակն այն Փիլոկտետէս երդուեալ Հերակլէսի որ մերձ էր 'ի մահ, չյայտնել ումեք զնորա գերեզման, ապա իբրև հարցաւ 'ի Յունաց թէ ո՞ւր թաղեցաւ, աղաղակեաց 'ի ձայն բարձր չգիտեմ. բայց ոտն հարեալ 'ի գետինն յայտնեաց զտեղին [175]: Երկաքանչիւրն խօսեցան միանգամայն լեզուաւ և ոտիւք. ոտն ասաց զճշմարիտն, բայց լեզուն ստեաց. երկաքանչիւրն միանգամայն ստեցին և զճշմարիտն ասացին. այլ չեղեն ճշմարտախօս, զի ճշմարտախօսութիւնն ոչ լծորդի ընդ մասնութեան որպէս և լուիցես:

## ԳԼՈՒԽ Գ.

*Թէ ո՛ր իցէ յորդոր ճշմարտախօսին։*

Որ յորդորի ասել զճշմարիտն վասն փառամոլութեան՝ ոչ է ճշմարտախօս, այլ փառամոլ։ Որ վասն ղօշաքաղութեան, ոչ է ճշմարտախօս, այլ ագահ։ Որ վասն երկիւղի պատժոց, ոչ է ճշմարտախօս, այլ երկչոտ։ Որ վասն պարտաւորութեան խոստմանց, ոչ է ճշմարտախօս, այլ արդար։ Յորդոր ճշմարտախօսին ոչ այլ ինչ է բայց նոյն ինքն ճշմարտախօսութիւն. այսինքն նոյն ինքն ունակութիւն առաքինութեանս, որ յօժարեցուցանէ զմիտս համաձայնել զբանս ընդ սրտի, և ըղսիրան ընդ ճշմարտի. մանաւանդ յիւր իրողութիւնս. վասն զի զայդ պահանջէին հասարակութիւնն և բանն, և հակառակն է ատեղ ինչ և գեղջկական։ Որ յայլ յորդորանաց առէ ըզճշմարիտն, ցայնվայր և ճշմարտախօս, ցորվայր առէ յորդորն։ Որ զունակութիւնն ունի զճշմարտախօսութեան, միշտ է ճշմարտախօս։ Զի ունակութիւնն է հաստատութիւն 'ի հոգին, և հոգին մնացիւր և խնդամիտ առնէ զունակութիւնն 'ի գործ 'ի լինել պատշաճողութեան։ Ճշմարիտ է թէ այս ունակութիւն դիւրացուցանէ զգործս այլոց մեծամեծ առաքինութեանց արտաքոյ քաղաքական կենցաղավարութեան։ Վասն զի սէրս դաշնաւոր գոլով առաքինութեանց ընդ միմեանս ընդդէմ մոլութեանց, ոչ է հնար թէ ունակութիւն ինչ առաքինական արբանեկեացէ գործոյ ինչ մոլեկանի. բայց արբանեկէ գործոց առաքինութեանց, ընդ որս է դաշնաւոր։

Ճշմարտախօսս որպէս և ասացաւ, հաւատարմագոյն լինի 'ի կատարել զգործս ըստ խոստմանցն որ 'ի դաշնադրութիւնս իւր, արարեալ զհարկաւորն կամաւոր։ Անաչառագոյն լինի յընտրութիւնս քաղաքական կամ ծերակուտական խորհրդոց, վերադասեալ զճշմարտութիւնն քան զուտութիւն։ Համարձակագոյն լինի 'ի խիստ պատասխանատուութիւնս առ հզօր թշնամիս վասն իւրոց հայրենեաց, որպէս Դեմադէս կալանաւոր առ Փիլիպպոս, որ փքայրն վասն կորնեան յաղթութեան [176]։ Հաւատարմագոյն լինի 'ի հանդէսի վկայութիւնս դատաստանական իրողութեանց։ Վասն այսորիկ մեծագոյն հաւատ ընծայիւր Քսենոկրատայ առանց ինչ երդման, քան այլոց յունաց երդմամբ. մինչ զի չաս էր ասել թէ Քսենոկրատէս ասաց։ Վասն զի յամենայն բանս իւր եղև ճշմարտախօս [177]։ Իսկ չարախօսին որ ընդդէմ Հաւբերիոսի, այնչափ չհաւատային, որչափ յաճախէր երդնուլ [178]։ Ըզհուսկն ասացից։ Որ ոչ գիտէ ասել 'ի խօսելն զիւրոց իրողութեանց եթէ յիւր կողմն և եթէ իւր հակառակ, ոչ գիտէ ասել և 'ի խօսելն զիրողութեանց այլոց։



## ԳԼՈՒԽ Դ.

*Թէ որո՛վ օրինակաւ գործիցէ ճշմարտախօսն։*

Միջասահմանութիւն առաքինութեանս հաստատեալ է, յասել զճշմարիտն 'ի կենցաղավարութիւնս, յորժամ, և որպէս, ուր, և որքան արժան իցէ, ունելով միշտ ընտրողութիւն 'ի չափ խօսելոյ և լռելոյ։ Թէպէտ և չէ արժան երբէք ասել զստութիւն, բայց և ոչ միշտ արժան է ասել զճշմարտութիւն. ամենայնի որ ասի, պարտ է լինել ճշմարիտ. այլ ոչ զամենայն որ ճշմարիտ պարտ է ասել։ Քանզի զբազում ինչ լաւ ևս է չգիտել քան գիտել, և լաւ ևս է լռել զայնց, քան յայտնել։ Ըստ առասպելաբանուաց՝ Կորաքս, որ թարգմանի ագռաւ, էր գեղեցիկ և սպիտակ պատանի. բայց քանզի յայտնեաց զմեղս ինչ զիւրոյ տիկնոջ՝ թէպէտ և ճշմարիտ, փոխեցաւ 'ի սևափետուր ագռաւ և վարեցաւ յանտառս։ Վասն զի որ յայտնէ զճշմարտութիւնս վնասակարս համբաւոյ այլոց, արժան է զայնպիսին որպէս գեղջուկ ոք արտասահմանել 'ի կենցաղավարութենէ քաղաքայնոց։ Եւ ոչ իսկ ճշմարտախօսն 'ի կենցաղավարութիւնս խօսի զամօթական իրս զանձնէ, թէպէտ և ճշմարիտք իցեն. զի ոչ է օրէն ասել ինչ, զոր թէ այլք ասէին, պարտական լինէին կանդնել զանուն նորա։ Բարի համբաւն 'ի մէնջ ստացանի. բայց իբրև ստացեալ եղև, ոչ ևս է մեր։ Հայրենեացն է այն և որդւոց և ազգականաց և բարեկամաց. և ոչ կարեմք ընկեցիկ առնել զմերն առանց անարգութեան, և ոչ զայլոցն առանց անիրաւութեան։ Ոչ զամենայն ճշմարտութիւնս զորս յիրաւի էր հաղորդել բարեկամի, պարտ է հաղորդել ընկերաց 'ի կենցաղավարութիւնս։ Այս սոսկ է սիրողութիւն, այլ ոչ բարեկամութիւն. ազնուաբարոյութիւն, այլ ոչ վստահութիւն. քաղաքականութիւն, այլ ոչ գորովական մտերմութիւն։ Վասն որոյ այն ինչ ընդ մէջ է սիրոյ ընկերաց և բարեկամաց, որ ինչ ընդ մէջ է սիրոյ տեսակին, և սիրոյ անհատին. զի յընկերս են բազում սիրտք, բայց 'ի բարեկամութեան է մի միայն սիրտ։ Մինչ զի որ խօսի 'ի կենցաղավարութիւնս, խօսի առ այլս. այլ որ խօսի ընդ բարեկամի, խօսի ընդ ինքեան. վասն որոյ և ապահովագոյն ընդ բարեկամի քան 'ի կենցաղավարութիւնս կարող է մարդ յայտնել զիւր մոլութիւնս և զառաքինութիւնս։ Ա-

պա ուրեմն եթէ պահանջէ առաքինութիւնս՝ զի յայտնեսցէ ճշմարտախօսն ջինջ անկեղծութեամբ զիւր գովեստս և զիւր պակասութիւնս. իբր զի անկեղծութիւնն ծնանի զսէր, և մինտանց միւսոյ չերևի անկեղծ, այսու ամենայնիւ արժան է յերկաքանչիւրսն 'ի գործ արկանել բազում չափաւորութիւն: Վասն զի որովհետև 'ի կենցաղավարութիւնս միշտ գտանի ոք յոր զօրանայ նախանձուկ՝ քան զպարզմտութիւն, ոխերիմ չարակնութիւն՝ քան զջինջ հաճութիւն, 'ի չարաղգածս անդ գովեստք՝ կասկած 'ի միտս արկանեն փառամոլութեան, և պակասութիւնք կարծին աւելի քան զոր ենն, և ճշմարտախօսն փոխանակ սիրոյ յինքն առարկանէ զատգտանս, իբր թէ խոստովանութեամբ իւրոյ բերանոյ:

Ապա լինելոց է ճշմարտախօսն անկեղծ ընդ անկեղծս, կեղծ ընդ կեղծս, միջակային ընդ միջակայինս, և ոչ վասն այդր գադարէ 'ի լինելոյ ճշմարտախօս: Վասն զի առաքինութիւն ճշմարտախօսութեան չէ առաքինութիւն արդարութեան. որպէս ասացաւ: Չէ դատաստանական խոստովանութիւն եղելութեան այլ կամաւորական հաղորդութիւն մերոց մտաց. զորոց ոչ է հարկ ասել զամենայնն, թէպէտ և պատշաճական իմն իցէ և ճշմարիտ այն որ ասի: Եւ այս է միջասահմանութիւնն առաքինական: Վասն այսորիկ թէ հրաւիրեն զնա զրոյցք խօսել զիւրոց գործոց, զիւրմէ ազնուութենէ և զպատուոյ, զիւրոց որդւոց և զիւրոց զարմանաւոր անցից, ոչ միայն խօսի զնոցանէ անպարծ և անխրոխտ, այլ և յապաւէ ինչ 'ի ճշմարտէն, զի մի նախանձուկս արկանիցէ, և աւելի քան զոր էն կարծիցի: Եւ թէպէտ մէջ ճշմարտութեան հաստատեալ է 'ի չասել աւելի կամ նուազ քան զոր էն, բայց և այնպէս մէջ ճշմարտախօսութեան 'ի խօսել զիւրոց գովեստից հաստատեալ է յասել նուազ քան զոր էն, առ ասելոյ զպատշաճն. զի պատշաճաւոր իմն է հայել 'ի հանդարտութիւն խօսողին և 'ի նախանձ լսողին: Այնպէս 'ի պակասութիւնս, թէ արդարև մեծ իցեն և ամօթական, ճշմարտախօսութեանն ոչ են կամք ասել զճշմարիտն, զի մի վատանուն լիցի որ ասէն, և գայթակղեսցի որ լսէն: Սմին իրի մէջ ճշմարտութեանն է անբաժանելի, և թուաբանական. բայց մէջ ճշմարտախօսութեան համեմատական և երկրաչափական. զի չէ հաստատեալ յասել զայն ամենայն որ է, այլ զայն ամենայն որ պատշաճ է. հայեցեալ 'ի տեղին, 'ի ժամանակն, և յանձինս:

Ճշմարիտ է թէ ճշմարտախօսն չասէ ինչ բնաւ զի գովեսցէ զանձն, և ոչ զի գովեսցեն այլք. այլ ասէ զայն ինչ որ արժանաւոր է գովութեան, և թէ չեն այդպիսի, նա ինքն է իւր դատաւոր. զի առաւել համարի զճշմարտութիւնն քան զգովեստ: Ոչ միայն ճշմարտախօս է նա 'ի բանս, այլ և յամենայն գործս և զլխովին յանձն իսկ իւր. զոր ընդունողք



պղատոնական գաղափարաց կարող էին ցուցանել զայն կենդանի գաղափարաւ ճշմարտախօսութեան: Ճշմարտախօս են նորա դէմք. ոչ այլ ընդ այլոյ երևեալ մտախորհ նենգաւորութեամբ, և ոչ բարձրայօն արհամարհոտ պչրանօք. այլ զուարթ, հեզահամբոյր և անկեղծ. մինչև 'ի վճիտ ճակատ նորա երևութանան խորհուրդք, և ընդ պատուհանս աչաց երևի նորա սիրտ: Ճշմարտախօս է նորա անձնական սպասահարկութիւն. թէ գեղեցիկ է նա, ոչ պաշտէ զհայելի իբրև զՆարկիսոս, և ոչ ցանէ զերեսս իբրև զԱպորինէ[179]: Եթէ է գալկաւոր, ոչ շպարէ զգունատութիւնն պատուաստ գունովք: Թէ ալևոր է ոչ սափրէ զխարտեաշ դիսակս մեռելոց, ոսկեզօծել զարծաթափայլ զիւր ալիս: Եթէ է տգեղ, ոչ թագչի 'ի լուսոյ, այլ գեղերեսէ հանճարաւոր իմաստութեամբ զիւր տգեղութիւն իբր զՍոկրատէս, ջանացեալ զտգեղութիւնն ծածկել զերեսաց՝ գեղով ուշոյ իմաստից[180]: Ճշմարտախօս է յուժի և 'ի քաջութեան մարմնոյ: Ի խաղս, կամ 'ի պարանցիկս, կամ 'ի նէգընկէցութիւնս, կամ 'ի թատերական մրցմունս առնէ զոր կարողանայ, և մտադիւր խոստովանի ուր տկարանայ: Թէ յաղթէ, ոչ պարծի. թէ յաղթի, չամաչէ. անայլայլակ դիմօք զբրաբիոնն ընդունի և տայ. գովեստ ընդունի, և յաղթականին գովեստ ընծայէ: Ճշմարտախօս է 'ի ծագումն տոհմի: Թէ է ազնուազգի, զարդարէ զօրահս երևելի նկարագրութեամբք նախնեաց, զի նոքօք պատուեսցի: Եթէ է ցածազգի, ոչինչ ամօթ համարի զցածուն նշանս աղքատին նախնեաց, 'ի պատուել զնոսա. որպէս արքայն Ագաթոկղէս որ 'ի պատիւ հօր իւրոյ բրտի, խեցեղինօք զարդարէր զիւր արքայական սեղան[181]: Ճշմարտախօս է յիւր ախորժակս: Եթէ սիրէ նա կամ ատեայ, այնպէս մեկին է ատելութիւն նորա, որպէս սէրն: Եթէ ըղձանայ իմիք կամ մերժէ, ոչ գնայ ընդ գողուղի ուր դէմ եդեալ է մերժումն չերևի ըղձումն, և ըղձումն չերևի մերժումն: Ազատադէմ զհետ պնդի պատուոյ եթէ է արժանի. հրաժարէ յայնմանէ եթէ է անարժան[182]: Տերենտիոս Վարրոն յետ իւրոյ ձախող պատերազմի որ 'ի կողմանս Կաննայ, չէառ յանձն զգաւազան իշխանապետութեան, և Կիկերոն չէառ յանձն զպրետորութիւն, արժանաւորագոյն համարեալ այնմ զորդի մեծին Սկիպիոնի: Զհուսկն ասացից, ճշմարտախօսն 'ի քաղաքական կեանս առանոյ ինչ սակաւագիւտ, այն է գովեստ աննախանձ. զի իւր արդիւնք են անփառասէր: Այնպէս գովի 'ի յայտնել զիւր պակասութիւնս. որպէս 'ի յայտնել զառաքինութիւնս, ծնունդ գոլով երկաքանչիւրոցն՝ ճշմարտախօսութեան, որ գովելին է և սիրելի:

# ԳԼՈՒԽ Ե.

## Յաղագս ճառատանց և կեղծեաց:

Սոքա են երկու թշնամիք ճշմարտախօսութեան, բայց առաւել ևս թշնամիք միմեանց. մին սկսյալն և միւսն կարճիկ, զի նա վերամբառնայ քան զճշմարիտն, և սա ցածնու քան զնոյն: Երկաքանչիւրն են ստախօս. բայց մեծն է առաւել յիմար, և փոքրն՝ առաւել անքաղաքավար: Ճառատանքն է իբրև զընտանի սիրամարգ, որոյ թուացեալ 'ի բարձրակատար գագաթ, ուռուցիկ լանջօք և ընդվզեալ գլխով՝ նայի 'ի լուսափիլու բոլորածիր պարունակ իւրոյ փետրոց, և բիւրուք յինքն յառեալ աչօք, և զամենեցուն աչս յիւր տեսութիւն հրաւիրեալ, 'ի ձայն բարձր աղաղակէ, որպէս թէ ասելով. յիս հայեսջիք: Իսկ կեղծիքն է իբրև զբու վայրենի. որոյ խորշեցեալ 'ի պայծառ լուսոյ, գլխովն կծկեալ և ծածկեալ յիւր փետուրս, ծակամուտ լինի 'ի խորխորին խոռոչս. անձին իսկ լեալ ատելի. և հեկեկաձայն 'ի մթան՝ թուի ասել. մի՛ ոք յիս հայեսցի: Եթէ բանքն են զգիտութենէ, ճառատողն թէպէտ և ոչ ինչ գիտիցէ, պարծի գիտել զամենայն. իսկ կեղծն թէպէտ և գիտիցէ բազում, կեղծաւորի գիտել սակաւ: Եթէ զճոխութենէ, ճառատողն իբրև զՏիմագենէս չքաւոր գոլով՝ զարդարի սուտ գոհարօք: Իսկ կեղծն՝ իբրև զապարատացիս, հարուստ գոլով՝ զգենու հանդերձս վայրավատինս: Եթէ զքաջութենէ, ճառատողն իբրև զպլաւտեան զօրավար փչէ 'ի լեզէնախնամս կաճառս իբրև 'ի թուացիկ տերևս. կեղծն թէպէտ յուժի լիցէ, ոչ կամի զայն ցուցանել. և թէ առնէ ինչ քաջութիւն, այլում թողու զպատիւն: Առ քաղաքական կենցաղավարութիւն երկաքանչիւրն են անըմբռն. զի ճառատողն տարապայման վերադրութեամբ աղաւաղէ զճշմարտութիւն. և կեղծն ցածուն թերութեամբ առնէ զնա հեղձամղձուկ: Երկաքանչիւրքն վրիպեցուցանեն զընկերս 'ի հաճոյից, զորոյ առնուլ ունէին զճաշակ 'ի ճանաչել զճշմարտութիւն արարից այլոց. զի նմա՝ որ ասէ աւելաքանցութեամբ, չհաւատան ինչ, և նմա՝ որ չասէ ինչ, չգիտեն թէ զինչ հաւատասցեն: Այո, 'ի բաղդատել զսոսա ընդ միմեանս. ճառատողն յանկագոյն է 'ի կենակցութիւն քան զկեղծն. զի նա է բացերև, և սա խորախոհ. նա է ճոխաբան, և սա լուռ լուռ. և՛ իբրև ճանաչէին, նա է ծիծաղելի, և սա կասկածելի: Մինչ զի թէպէտ սնոտիապատուաստ զրոյց ճառատողին տաղտկալի է ճշմարտասիրին, բայց զուարճալի այնմ



որ կամի զծաղու գալ: Բայց կեղծն՝ ճշմարտասիրաց է խիթալի, և զուարթասիրաց ատելի. զի ոչ հաղորդէ զիւր խորհուրդս: Եւ վասն այսորիկ ճառատօղն սիրէ զկենցաղակցութիւն, զի 'ի գլուխ տարցի զիւր վաճառ, և կեղծն չցիտելով ընդ ում կենցաղիլ, միայն ընդ միայն կենցաղի:

Կարծեն ոմանք, թէ այս երկու մոլութիւնք ծագին յերկուց առաքինութեանց. ճառատանք 'ի քաջարտութենէ, և կեղծիք 'ի համդարտութենէ: Բայց այդ է սուտ. զի յառաքինական ունակութեանց անհնար է ծագիլ մոլեկան գործոց: Այլ ծագին յերկուց բնաւոր և ներհական անկատարութեանց: Ճառատանքն 'ի կարի խիտ ջերմութենէ, որ վրդովեցուցանէ. և կեղծիքն 'ի կարի խիտ ցրտութենէ, որ երկեցուցանէ: Եւ վասն այսորիկ ճառատօղն ըմբռնէ զիրս իւր աւելի քան զոր են. և քարոզէ աւելի քան զըմբռնեալն: Իսկ կեղծն երկնչի 'ի դատաստանաց այլոց. և չէ վստահ յանձն և յիրս իւր: Բայց յերկաքանչիւրսն ընթացակցի տկարութիւն ինչ մտաց: Զի ապականեալ կարծիք եթէ 'ի յաւէտ և եթէ 'ի նուազ, թէ կամք իցեն ասել, է երակ ինչ յիմարութեան. որ թէպէտ 'ի սկզբան անդ է թեթև, բայց յանցանել ժամանակաց՝ 'ի յաճախել գործոց՝ ծնանի զունակութիւն ինչ այնպէս զեղծ, որ 'ի բարոյական մոլութենէ փոխի իրօք 'ի յիմարութիւն: Եւս առաւել՝ եթէ 'ի մարդահաճոյից առ շնորհուկս, և 'ի չարայուզից ընդ խաղ, այն ներքին կարծիք արտաքուստ գացեն զօգնութիւն: Եմպեդոկլէս[183] բժիշկ այնպէս սովոր էր բարձրացուցանել զիւր յայնմ արուեստի ճարտարութիւն, մինչև կարծիս 'ի մտի դնել, թէ իւր բժշկութիւնք չէին գործք մարդկայինք, այլ՝ գերմարդկայինն սքանչելիք. յորմէ ախտէ ջանացան այլք բժշկել զբժշկապետն չարագոյն ևս ախտիւ: Մուծին 'ի խելապատակ նորա, թէ չէ նա մարդ, այլ թէ 'ի մարմին նորա բնակէ հոգի աստուածոյն Ասկղեպիոսի[184]: Որում 'ի հաւատալ Եմպեդոկլի թէ այնպէս իցէ, 'ի վերայ բերին. մեծ ամօթ է Աստուծոյ անմահի տուայտանօք կեանս վարել 'ի մահկանացուաց միջի: Եւ յայս ևս Եմպեդոկլի հաւատացեալ զմիտս, առ ելանելոյ 'ի հրեղէն երկինս ընկէց զինքն 'ի հրաբորբոք վիհ Ետնայի: Նոյն զօրութիւն է և յունակութեան կեղծեաց. որպէս երևի 'ի Վիբիոս Գաղղոս, որոյ ախորժեալ յիմար կեղծաւորել ընդ խաղ՝ իրօք յիմարեցաւ: Բայց առաւել ևս երևի 'ի նախայիշատակեալ աղանդ Սկեպտիկեան փիլիսոփայից, որք են Պիւռոնեանք, որք յայլոց փիլիսոփայից միջի սկսան ագիտութիւն խոստովանել: Զի 'ի սկզբան անդ հարցուփորձ փաստիւք յերկբայ լեալ և զքաջածանօթ իրաց, հուսկ ուրեմն կարծեցին զայս միայն գիտել թէ չիք հնար գիտել ինչ, թէ չկայ ինչ ստոյգ. բայց այն միայն, թէ չիք ինչ յաշխարհի ստոյգ: Եւ թէ և

խօսիցէիր դու զայս նոյա ճառագայթիւք արեգական, նոքա ուրանային թէ արեգակն իցէ լուսաւոր։

Ապա բնական յորդոր այսց երկուց մոլութեանց ոչ է զրկել զոք կամ ախորժել զպատիւ կամ զօշաքաղել զշահ։ Այսոքիկ են վախճան այլոց մոլութեանց, այսինքն է անիրաւութեան, փառասիրութեան, և ագահութեան, որք հակառակն են արդարութեան, մեծանձնութեան և առատաձեռնութեան։ Այլ բուն յորդոր այսց երկուց մոլութեանց հակակայից ճշմարտախօսութեան, առնու տեսակ 'ի նոյն իսկ ունակութեանց մոլեկանաց 'ի կարգի առ իւրեանց վախճան։ Ճառատողն յորդորի յիւր բնաւոր կամ յունակական թիւր յօժարութենէ մեծացուցանել քան զճշմարիտն, ոչ միայն զիւրն գովեստ. այլ և զամենայն զոր պատմէ։ Եւ հակակայ իմն յօժարութեամբ այն, զոր ստանոր կեղծ կոչեմք, փոքրկացուցանէ զնոսա։ Երկաքանչիւրն ընդ այս մոլեկան գործ են հաճ և հաւան, զի ոչ է բռնի այլ կամաւոր։

Ի նախատացելոցս մարթ է իմաստասիրել թէ այս երկու ունակութիւնք թէպէտ և են ճշմարտապէս մոլեկանք, ըստ այնմ որ խոտորին յառաքինական միջասահմանութենէ. բայց և այնպէս չեն ըստ ինքեանց չարարարք, զի չունին վախճան չար։ Եւ թէ 'ի քաղաքական կենցաղավարութեան չեն հաճոյականք, բայց չեն և վնասակարք։ Նա չափազանցութիւնք ճառատողին, որպէս ասացաւ, զբօսանս մատուցանեն ընդունողին. որպէս սպառնալիք վասկոնացւոյն, որ կոչեցաւ Թմբուկ զօրավարաց, և պէսպէս պարծանք Ապպիոնի, որ կոչեցաւ ծնծղայ աշխարհի։ Նոյնպէս եթէ կեղծն նուաղեցուցանէ կամ ծածկէ զիւր գովեստ, առաւել անձին վնասէ, քան այլում. նա երևի սովաւ հանդարտ, զի յայտնի առաքինութիւն թուի զիւր առաքինութիւնս քօղարկել, ըստ խրատուն թէ սիրեա 'ի թաքստի լինել։ Բայց ստախօս է հանդարտութիւնն, որ ծածկէ զճշմարտութիւն. զի թէ հանդարտութիւնն բառնայ յիւրմէ զգովեստ, ստութիւնն բառնայ յաշխարհէ զմարդակային կենակցութիւն։

Այլ այսոքիկ փոքր վնաս են ճառատանաց և կեղծեաց 'ի քաղաքական կենցաղավարութեան։ Յոռեգոյն ևս անկարգութիւնք 'ի վեր երևին յիրողութիւնս ծանուցս։ Զի զոր օրինակ ունակութիւն ճշմարտախօսութեան լծորդեալ ընդ այլ ունակութիւնս առաքինագոյնս յառաջ բերէ առաքինագոյն գործս, նոյնպէս այս երկու ունակութիւնք մոլեկանք լծորդեալք ընդ այլ ունակութիւնս մոլեգոյնս յառաջ բերեն գործս կարի իմն վնասակարս հասարակութեան և նոյն իսկ գործադրաց։ Որպիսի անկարգութիւնս նիւթեցին ճառատանք լծորդեալք ընդ սէր մեծաշուք պատուոյ։ Իմաստնապէս առասպելեաց Լուկիանոս, թէ իշխ անարգի անձկա-



ցեալ թագաւոր լինել գազանաց, և 'ի դիպել յաջողակի առիւծու մեռելոյ, զգիմակ նորա զերեսօք արկեալ և զմորթն զթիկամբք, առ ժամանակ մի պատուեցաւ 'ի գազանաց. և ահարկու եղև հովուաց, որոց չէր երբէք տեսեալ զառիւծ։ Բայց հուսկ ուրեմն իբրև Հայկազնի ումեմն քաջավարժի յորս առիւծուց յայտնեցան նորին պարանք, զօտարինն և զիւրն կորոյս զմորթ։ Յամենայն դարս գտան այսպիսի գըրաստք, որք զուրուականն առիւծու զիւրեամբք արկեալ առ ստանալոյ զարքայական պատիւ, խռովեցին զհասարակապետութիւնս և թշուառացուցին զանձինս։ Ի սպանանել Տիբերիոսի զպատանին Ագրիպպաս զեղբօրորդի Օգոստոսի, ում հասանէր ինքնակալութեանն յաջորդութիւն, ծառայն Ագրիպպասայ տեառն իւրում նմանաւոր կեղծաւորեցաւ թէ ինքն է Ագրիպպաս ապրեալ 'ի մահուանէ, և խնդրեալ իւր թիկունս, խռովեցոյց գլխովին զինքնակալութիւնն, և զՏիբերիոս վտանգեաց յոյժ։ Բայց իբրև յայտնեաց զնենգն մի ոմն յանհաւատարիմ ընկերաց, շղթայակապ տարան զնա առաջի Տիբերիոսի։ Որոյ հարցեալ թէ՝ Զիա՞րդ եղեր դու Ագրիպպաս. յանդուգն ետ պատասխանի. Եւ դու զիա՞րդ եղեր կայսր. բայց այն եղև իւր յետին բարբառ։ Այլ մեծ ևս խռովութիւնս յարոյց ապստամբեակն այն, որոյ կերպարանեալ թէ իցէ Կայիոս Գրակխոս տրիբուն ժողովրդեան. զոր ընդդէմ կամաց խուժանին սպանեալ էր ծերակոյտն, սեպհականեաց զորբունական իշխանութիւնն իբրև իւր. և թէպէտ և Մետեղոս համարակալ, որ գիտէր զամենայն զազգատոհմ Գրակխոսի, յայտ արար զնենգն, բայց և այնպէս առ ժամանակ մի ելեալ առնելով կողմանց, երբեմն բանտարկեալ 'ի ծերակուտէն և երբեմն 'ի բանակէ հանեալ 'ի ձեռն ժողովրդեան, 'ի սմանէ ստացաւ պատիւ և 'ի նմանէ նախատինս, ուր և բազում եղեն արեան ճապաղիք։

Իսկ զինչ կայցէ թշնամի մարդկային ընկերութեան, քան զկեղծիս լծորդեալս ընդ դժրողութեան խոստմանց։ Մարկոս Ատտիլիոս պանծացաւ 'ի ծերակուտին, թէ յանկարծակի իմն խոստմամբ խաղաղութեան և հաշտութեան յաղթեցի արքային Յունաց։ Գովեցին դեռահասակ սենեկիտոսք, թէ խորամանկութիւն Յունաց յամօթ եղև 'ի խորամանկութենէ Հռովմայեցւոց։ Բայց ծեր սենեկիտոսք նախատանօք անարգեցին զնա ասէ Լիւիոս. յառաջ բերեալ թէ Հռովմայեցւոց սովորութիւն այս եղև հանապազ, յաղթել քաջութեամբ և ոչ նենգութեամբ. և ոչ յարուցանել պատերազմ թէ ոչ նախ ազդ արասցեն։ Ամենայն քաջագործութիւնք մեծի զօրավարին Գոնսալվոսի[185] եղեն վատանուն երկոքումբք այնոքիւք, որ ընդ ամենայն դարս հնչեն։ Մի զի ընդ առնուլ զՏարենտ քաղաք, երդուեալ 'ի սուրբ նուէրսն թողուլ ա-

զատ զիշխանն Կաղաբրիոյ, կոչեալ կապեալ առաքեաց զնա առ Թագաւորն Սպանիոյ: Երկրորդ զի պաշտպանութիւն խոստացեալ և մեծ պատիւ ցուցեալ Վաղենտինոսի դքսի, որ ապաստանեալն էր 'ի նա, հաւատադրժութեամբ կալանաւորեալ առաքեաց 'ի Սպանիա: Այն, որ տուցաւ զայնպիսի դող սուսերաւ, կորոյս զայն գրչաւ: Եւ այնուհետև ոչ գիտաց ոք, ա՞յ եղև թէ ձախ. և իւր հաւատք սպանիականն եղեն թէ յունական:

Բայց ոչ երբէք այնպէս վտանգաւոր և վատանուն են կեղծիք, որպէս յորժամ լծորդին ընդ սուտ կեղծաւորութեան, որ 'ի կեղծեաց անուն առնու զանուն: Զի կեղծաւորն ըստ խեղկատակի շրջեալ դդէմս, այլ ոմն է և այլ ոմն երևի. այլ ինչ խօսի և այլ ինչ խորհի. հպարտ խոնարհութեամբ, կամաւոր այլագունութեամբ, արտասուաց ճնշմամբ խաբեալ զամենեցուն աչս, որ չեն սրատես, երևութիւ կրօնի զկրօն տապալէ. և որպէս գառնազգեստ գայլ յափշտակօղ զհօտն Քրիստոսի ցրուէ և գիշատէ: Բայց յայսմ վայրի զգուշանալ արժան է չշփոթել զկեղծիս զհակառակն ճշմարտախօսութեան ընդ խորամանկութեան, որ հակառակն է խոհեմութեան: Եւ ոչ ընդ հեգնութեանն որ ընդ խաղ, որ հայի 'ի զուարճախօսութիւն: Եւ ոչ ընդ առաքինական այլափոխութեան, որպիսի էր Դաւթին որ առ զերծանելոյ 'ի ձեռաց թշնամեաց երևեցոյց զինքն մոլաթափ: Զի զոցանէ խօսել ունիմք յիւրաքանչիւր տեղիս:

# ԳԻՐՔ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

## ՑԱՂԱԳՍ ԶՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՅՐԻՑ ՆՈՐԱ.

## ԳԼՈՒԽ Ա.

*Օգուտ զուարճախօսութեան:*

ԴԻՄԻՏՐԷ առաուածուհի[186] ընդերկար վատակեալ 'ի խնդիր Պերսեփոնեայ յանդնդախոր վայրս զօղէլոյ. այն ինչ 'ի վերայ քարի, որում անծիծաղ անուն կոչէին, յանապատս Եղևսեայ միշտ մաախորհ զՊերսեփոնեայ հիւծեալ հոշէր զխոհին 'ի տրտմութենէ, Յամբէ զուարճախօս պառաւ իւրովք զուարթարար զրուցիւք զնա ժպտեցոյց: Վասն այսորիկ 'ի խորհրդաւոր դահամունս Դեմետրեայ ընդ լրջութիւն յարգական ծխից խառնէին զուարճախօս զրոյցս ընդ խաղ, ուսալ և եղև յառակս, թէ գից իսկ հաճոյ են զուարթարար զրոյցք: Կամ եղև այնց վսեմախոհ մտաց բանաստեղծական իմաստասիրութեամբ յիշեցուցանել թէ 'ի լուրջ հետազօտութեան ճշմարտութեան զօղէլոյ 'ի խորս գիտութեանց միա մարդկային տխրագին և ներանձնացեալ, բազում ինչ ծախէ 'ի մարմնական զօրութենէ. և չկարողանայր տոկալ ընդերկար թէ ոչ երբեմն ծաղու և զուարթարար զրուցիւք առնոյր քաղաքական ինչ ախոյանս: Տրտմութիւնն հետևորդ լրջութեան անզմեալ զմիտ, կակկապ ունի զկենսական ոգիս, և հովացուցեալ զկուրծս, կնճռէ զերեսս և փակէ զչնչահան ձայնի. վասն այսորիկ բազմահօգք են սակաւախօսք: Զաղին հակառակն՝ ծիծաղն հետևորդ զուարճախօսութեան՝ ընդարձակեալ զմիտ՝ հանէ յաղատութիւն զճնշեալ ոգիս, և ջեռուցեալ զկուրծս պարզէ զճակատն և վարէ յորդ շունչ 'ի հագագ ձայնի, որպէս յիւրում տեղւոջ լուիցես: Որպէս դատարկութիւնն է հանգիստ մարմնոյ, նոյնպէս Զուարճախօսութիւնն է հանգիստ սրտի. այլ ոչ հանգիստ պարապորդ և անխորհ, զի միտք են կարողութիւն հոգեկէն, և հոգի թէ

չէ կատարեալ քնոյն այնչափ գործէ ցորչափ կեայ. զի կեանք իւր է գործել։ Նա թէ 'ի զրոյցս լուրջս առաւելու հանդարտութիւն, 'ի զրոյցս զուարճախօսս առաւելու սրութիւն, 'ի նոյին առաւելու խոհականութիւն և 'ի սոյին սրամտութիւն. վասն զի նոքա ծնանին 'ի ճշմարտութենէ իրաց, և սոքա ծընունդ են բեղնաւոր մտաց. որոյ գլխաւոր գոլով այնց ըստ իւրաքանչիւր մասանց, մեծապէս խնդայ. և 'ի գործողութեան անդ գտանէ զհանգիստ։

Ապա օգտակար են զուարճախօսութիւնք պահպանութեան անհատի. բայց առաւել ևս կենցաղավարութեան ընդ այլոց։ Զի որպէս բնութիւնն կապեաց զմարդիկ ընդ միմեանս գաղտնի կապանօք համակրութեան, և արամութիւն միոյն ցայտէ յերեսս միւսոյն, նոյնպէս զուարթագին երեսք ուրախ առնեն զսիրտ տեսողին. և վասն այսորիկ զուարճախօսն շահի զսիրտ խօսակցին։ Ապա զուարճախօսութիւնք են քաղցրիկ համեմունք քաղաքական կենցաղավարութեան 'ի ճեմս, 'ի խընջոյս, յարթնութիւնս, 'ի խաղս և 'ի կոչունս։ Յասել միոյն միւսն լսէ։ Նա անուշիկ նետաձգէ, սա սիրողապէս ընդունի և անդրէն դարձուցանէ. ըստ կորեանց շանց, որ ընդ միմեանս ծամածռեն անվնաս ատամամբք. կռուին ընդ միմեանս և հաշտ են, խածատեն զմիմեանս և գրկախառնին։ Վասն այսորիկ զզուարճախօսութիւնս յիրաւի կոչեաց Արիստոտէլ քաղաքավարութիւն. զի որպէս ասացաւ զքաջ մարդավարութենէ, ոչ ծնանին յանգործ երկիր վայրենի և 'ի խեղս գեղջկայինս, այլ 'ի միտս քաղաքայինս, որք կամ սովորութեամբ և կամ արուեստիւ հանճարաւորք հանդիսացան։ Սոյդ իմն է թէպէտ և ոմանց այլազգ թուիցի թէ և զուարճախօսութեանց կայ ուսումն և արուեստ ճշմարիտ, որպէս ցուցաք յԱրիստոտէլեան գիտական[187]. յորոյ իմաստից արժան է առանձինս յիշեցուցանել ինչ ինչ, վասն զի անդանօր բազումս ընկեցաք զայս պրակ Արիստոտէլի։

## ԳԼՈՒԽ Բ.

*Թէ զինչ իցէ քաղաքավարութիւն[188], կամ զուարճախօսութիւն։*

Խնդիր է սա արդարև հետաքննին և կարևոր մերումս առաջադրութեան, առ իմանալ թէ իւ զանազանիցին զուարճախօսութիւնք գիտնականք 'ի բարոյականաց, և ծանունք 'ի ծիծաղականաց. և թէ ոյք անկ իցեն իշխանի, ոյք քաղաքայնոյ և ոյք ծառայի։ Ապա ընդհանրապէս խօսելով, զուարճախօսութիւնն կամ քաղաքավարութիւնն է գործ մտաց, որ ուսուցանէ ինչ հանճարաւոր օրինակաւ։ Հանճարաւոր օրինակ այն է որ նշանակէ զիրս ոչ սեպհական և հասարակ եղերօք, այլ նմանականօք հնարելովք 'ի հանճարոյ, որ և են նոր և անակնկալ։ Որպէս բանաստեղծական գիւտք, որք չեն ճըշմարիտք, բայց նմանող են ճշմարտի։ Զոր օրինակ եթէ կամելով քոյ ասել սէր, ասիցես հուր։ Զի ոչ նշանակեցեր զայն կիրք իւրով սեպհական բառիւ, այլ նմանականաւ, որ հանճարեցաւ 'ի քոյ մտաց. բայց է քաջ յայտարար, վասն որոյ և բերկրարար։



Արդ այս հանճարաւորութիւն ամփոփի երբեմն 'ի մի միայն բառ հանճարաւոր, որպէս 'ի վերոյգրելոյդ օրինակի, որ է լոկ փոխաբերութիւն ինչ բառի։ Երբեմն տարածանի 'ի նախադասութիւն ինչ. որպիսի են առածք և իմաստք հանճարաւորք։ Երբեմն կազմակերպէ ձեռնարկութիւն ինչ պատրողական հանճարով. ուստի զզուարճախօսն կոչէ Արիստոտէլ գիտնաւոր պատրող։ Ի ժողովս ուրեք զրոյցք 'ի միջի լինէին զպատանւոյ ումեմնէ Սիկիլիացւոյ Տրանսիղղոս անուն, որ էր առափոռ, այլ ոչ իշխէր յայտնել զատփանս իւր։ Մի 'ի խօսակցաց արկ 'ի մէջ զայս զրոյց, Տրանսիղղոս է գլխովին հուր։ Այս է բառ փոխաբերական և հանճարաւոր։ Այլ ոմն ասէ. Եթէ Տրանսիղղոսի կայր հուր 'ի տան, ձայն արձակէր արդեօք։ Այս է նախադասութիւն հանճարաւոր։ Այլ ոմն 'ի վերայ բերէ. Գիտիցէ՞ք, զի՞րդ ոչ ձայն արձակէ հուրն. վասն զի է հուր մոլի։ Այս է ձեռնարկութիւն հանճարաւոր. զի հուր մոլի, որ 'ի գերեզմանատունս վառի, ոչ այրէ. և այսու տայ համարել զնա աղուաշ ոք։ Այլ ոմն կծողագոյն ևս ասէ. Նա հուր դժոխային է այն որ տանջէ զդևս, չթողու ձայն արձակել. և այսուիկ տայ համարել զպատանին եղեռնաւոր ոք։ Բայց այլ ոմն առաւել ևս հանճարաւոր և քաղաքային, յայս կնքէ զբանն. Ո՞չ գիտէք, զի սիկիլիացի է նա, հուր է այն իւրոյ Էտնայի, որ և ոչ զձիւնն որ զիւրև հալել զօրէ. և այսու տայ համարել զնա ցուրտ սիրող։ Այս են պատրանք հանճարաւորք և զուարճարարք։ Արդ երկու ինչ բաղկացուցանեն զզուարճախօսութիւն՝ նիւթ և տեսակ. զորոց վասն վախճանին որ ասացաւ, յիրաւի է խօսել սկիզբն արարեալ 'ի գլխաւորէն։

## ԳԼՈՒԽ Գ.

*Թէ որ իցէ տեսակ զուարճախօսութեանն և քանի՞ իցեն տարբերութիւնք նորա։*

Տեսակ զուարճաբար զրուցաց կայանայ 'ի հանճարաւորութեան անդ զոր ասացաք, այսինքն 'ի նշանակելն զինչ ոչ սեպհական և սովորական եղերօք, այլ փոխաբերական և նմանական եղերօք. զի այս է գործ լոկոյ հանճարոյ։ Արդ այս հանճարաւորութիւն բաժանի յայնչափ տեսակս սեռականս, որչափ են տարբերութիւնք փոխաբերական ձևոց. որպէս ցուցաք 'ի մերում գիտակն։ Առաջինն է համեմատութեան, որ նշանակէ զինչ այլով նմանակաւ, առեալ զմին փոխանակ միւսոյ. իբր այն զոր ասաց Անտիսթենէս. Կեփիսոդորոս ծառայ իմ խունկ է, որ ոչ բուրէ զհոտ, թէ ոչ քաջ ծեծի, կամեցեալ նշանակել թէ ծեծ պիտի նմա 'ի ձգել 'ի ծառայութիւն։ Երկրորդն է առատութեան, որ նշանակէ զինչ այլով որ կցորդ է նմա, որպէս պատերազմ փողով, և զհաշտութիւն պճնաւորաւ։ Ըստ այսմ Գաղղիացիք պատերազմ սպառնացան Փլորենտացւոց, թէ ոչ կամիցին յետս դարձուցանել 'ի նոսա զքաղաքն ամուրս, ասելով Թէ դուք ոչ առնէք մեք զմեր փողս հնչեսցուք։ Եւ Փլորենտացիք ետուն պատասխանի, թէ Դուք զձեր փողս հնչէք, մեք զմեր զանգակս հնչեսցուք։ Զի 'ի ձայն հասարակաց զանգակի, ժողովուրդն խուռն 'ի զէն ընթանային։ Եւ այս զուարճախօսութիւն զնոսա զարհուրեցոյց։ Երրորդն է հոմանունութեան հեգնելով զանունն։ Որպէս Մետեղոսի առն ծանծաղամտի, որ պարծէր թէ աշակերտեալ իցէ ազատ անուն մեծի հռետորի, Կիկերոն ընդ կատակս ետ պատասխանի. Այո, այն ազատ ուսոյց քեզ թռչել, այլ ոչ խօսել։ Չորրորդն է նկարագրութեան, որ առաջի աչաց դնէ զիրն ազդու և հատու իմն փոխաբերութեամբ։ Որպէս Դիոգինէս վասն անառակին որ արկ 'ի խաղ զպալատ իւր, ասաց. Սա յետ ուտելոյ զինչս հայրենի, փսխէ զտուն։ Հինգերորդն է չափազանցութեան, որպէս Լիւսիմաքոսին առ Պարսիդէս դեսպան բիւզանդացւոց. Արդ գան առ իս բիւզանդացիք, յորժամ գեղարդն իմ հասեալ է յերկինս։ Եւ Պարսիդէս դարձուցեալ 'ի նա զթիկունս ասէ ցիւրսն. Երթիցուք աստի, մինչև է սորա գեղարդեամբ իւրով փլուցեալ զերկինս 'ի ջախջախել զմեզ։ Վեցերորդն է լակոնացի ոճով, որ նշանակէ աւելի քան զոր ասէն. ընդ հակառակս չափազանցութեան, որ ասէ աւելի



քան զոր նշանակէն։ Այսպէս Սպարտացիք խրոխտ սպառնացեալ հրովարտակի արքային Մակեդոնացւոց Փիլիպպոսի, ոչ այլ ինչ ետուն պատասխանի, բայց զերկու զայս բառ 'ի մեծ ինչ թերթ թղթոյ. Դիոնեսիոս 'ի Կորնթոս։ Կամեցեալ ասել. Յիշեա, զի Դիոնեսիոս վասն իւրոց խրոխտանաց՝ հալածեալ 'ի թագաւորութենէ, չոգաւ 'ի Կորնթոս, ուսուցիչ լինել մանկանց, փոխեալ զգաւազանն արքունի 'ի ձաղկիչ տղայոց, զի ապրեսցի. զնոյն արասցուք ընդ քեզ, թէ խիզախես մեզ։ Եօթներորդ է հակադրութեան, որ ունի ինչ զօրութիւն հաւանեցուցանելոյ, զի քաջ արտայայտէ զներհակն ներհակաւ։ Որպէս Բիաս խրատէր զոմն պատանի չամուսնանալ, ասէ. Թէ զագեղն առնես, քեզ ոչ հաճոյասցի. թէ զգեղեցիկն առնես, այլոց հաճոյասցի։ Եւ պատանին ետ պատասխանի. Նա թէ զգեղեցիկն առնեմ, ինձ հաճոյասցի. թէ զագեղն առնեմ, այլոց չհաճոյասցի։ Ութերորդն է պատրողութեան, որ յանկարծ կոչի զրոյց անակնկալ. յորժամ ելք բանին է այլազգ, քան որում ակն ունէր ունկնդիրն. իբր այն զոր ասաց Մարտիալէս առ Զոյիլոս. Ի կոչել ուրուք զքեզ եղեռնաւոր, դու չես եղեռնաւոր, այլ նոյն ինքն եղեռնութիւն։

Այլ զոր օրինակ 'ի պատուաստել զտունկս՝ մի միայն տունկ բերէ ազգի ազգի պտուղս, նոյնպէս 'ի մի զրոյց զուարճախօս հնար է մտանել բազում հանճարաւոր ձևոց պատուաստ փոխաբերութեամբք, և այն է առաւել գովանի։

Յայս վայր խօսեցաք զտեսակէ. արդ խօսեսցուք զնիւթոյ։

## ԳԼՈՒԽ Դ.

*Յաղագս նիւթոյ և ներակայի զուարճախօսութեան։*

Ի զուարճախօսութիւնս է որ ծանր, և է որ ծիծաղաշարժ։ Խաբին որք կարծեն թէ Արիստոտէլ զուարճախօսութիւնս կոչէ միայն զզրոյցս ծիծաղաշարժս։ Զեկոյց նա զերկաքանչիւրն յայսմ իսկ գլխի, 'ի յիշեցուցանել իւրում թէ զուարճախօսն ընդ խրախճանս առնէ զզրոյցս զուարթարարս, այլ ընդ ծանունս առնէ զզրոյցս ծանունս։ Որպէս արուեստն ոսփեստական արբանեկէ միապէս եթէ ծիծաղաշարժ պատրողութեանց և եթէ լրջաց, նոյնպէս այս առաքինական ունակութիւն զուարճախօսութեան միապէս արբանեկէ եթէ ծիծաղաշարժ զուարճախօսութեանց և եթէ ծանունց։ Բայց ասիցես թերևս, եթէ զուարճախօսութիւնն է հակակայ լրջութեան, իբր զի սա պատճառէ զախորժութիւն և նա զզուար-

թութիւն. զի՛որգ հնար է թէ լինիցի զուարճախօսութիւն ինչ լուրջ, կամ լրջութիւն ինչ զուարճախօս. զուարթութիւն ինչ տխուր, կամ տխրութիւն ինչ զուարթ: Այլ որ զայս տամ պատասխանի թէ չիք ինչ ենթակայ այնպէս ծանր, այնպէս տխուր և այնպէս վայրենի, որում չիցէ հնար փոխել 'ի զուարճ ըստ նիւթոյ և ըստ տեսակի: Զի՛նչ ենթակայ կայցէ ծանրագոյն և լրջագոյն քան զաստեղս երկնից, և զի՛նչ նախագասութիւն կայցէ լրջագոյն և գիտնականագոյն քան զասութիւն այսպիսի. Աստեղք են պնդակազմ և գիմահար մասունք եթերական գաւառի. որք 'ի ցայտել ճառագայթից արեւու լինին լուսաւորք: Այս է նախագասութիւն գիտնական, այլ ոչ զուարճախօս: Ապա թէ ասիցես. Աստեղք են եթերական հայելիք. որք թէպէտ և են նսեմք, բայց թէ ցայտէ 'ի նոսա արեւ, լինին գիշերային արեգակունք: Այս է նոյն իսկ իմաստ, բայց առ փոքր մի զուարճախօս, զի եղերքն 'ի նիւթ և 'ի տեսակ են փոքր մի փոխաբերականք. և որչափ առաւել բացական լինին 'ի բուն եղերաց, նախագասութիւնն լինի առաւել զուարճախօս, և ծիծաղաշարժ իսկ:

Ծանր զուարճախօսին լինի նախագասութիւնս, թէ ասէ. Աստեղք են նուիրական կանթեղք եթերական տաճարի Աստուծոյ: Գեղեցիկն թէ ասէ. Աստեղք են ականակապ ազնեգործութիւնք վրանի աշխարհիս: Ուրախ թէ ասէ. Աստեղք են փթթեալ ծաղկունք երանաւէտ դրախտին. Գիտնաւոր թէ ասէ. Աստեղք են աչք երկնայինն Արգոսի, որք հսկեն զգիշերն ամենայն 'ի վերայ մարդկան: Վայրենի թէ ասէ. Աստեղք են երկնային ահեղ գիշերապահք, հիւսիւք վարսից ճաճանչաւոր օձից. առ 'ի բացէ ունելոյ զչարս յերկնից: Տխուր թէ ասէ, Աստեղք են ոգաւոր ջահք՝ հրավառ մատրան 'ի յուղարկաւորութեանն արեւու: Զօրէն հակառակն Ծիծաղաշարժ թէ ասէ, Աստեղք են փառաւորք թռուցիկք ընդ կապուտակ դաշտ երկնից: Եւս ծիծաղաշարժ թէ ասէ. Աստեղք են լապտերք դից, երբ շրջին գիշերայն: Եւ առաւել եւս ծիծաղաշարժ, թէ ասէ. Աստեղք են պատրոյգք առկայծեալք որք թօթափին յաշտանակէ արեւու: Ապա թէ զերկինս խարբալի նմանեցուցես, մարթ է քեզ ըստ Սոփլեանոսի [139], ընդ կատակս կոչել զաստեղս. Երկնային խարբալի լուսանցոյց ծակս: Յօրինակաց տալի ունիս առնուլ 'ի միտ թէ այս ամենայն նախագասութիւնք են զուարճախօսք, ըստ լոկոյ հանճարաւոր տեսակի՝ այսինքն ըստ համեմատական փոխաբերութեան, որ առնու զնմանն փոխանակ նմանւոյ. բայց ամենայնն պէսպիսակ ըստ նիւթոյ. որ յոմանս է ազնուագոյն, և յոմանս անարգագոյն. 'ի նոսա գեղեցկագոյն, և 'ի սոսա տգեղագոյն: Ապա ըստ Արիստոտէլի նիւթ ծիծաղաշարժ զուարճախօսութեանց է զազրութիւն կամ տգեղութիւն: Ուստի և նիւթ ծանր զուարճախօսութեանց է գեղեցկութիւն կամ վայելչութիւն:



Եւ 'ի վերայ ծիծաղաշարժից՝ իմանալ պարտ է երկակի տգեղութիւնս. մի ֆիզիգական, և երկրորդ բարոյական. յորոց բաղկանայ երրորդ իմն խառն 'ի ֆիզիգականէ և 'ի բարոյականէ: Ֆիզիգական տգեղութիւնն է անհամեմատութիւն ինչ՝ որպիսի և իցէ բնաւոր կամ արուեստագործ իրի, որ առաւելուցու կամ նուազիցի քան զպատշաճական չափ. որպէս խեղաթիւր երես, մեծ ինչ ունչ 'ի փոքր դէմս, չինուած ինչ անհամեմատ, երաժշտութիւն ինչ խառնաձայն և ամենայն զազրութիւն՝ որ ժխորէ զատամունս: Բարոյական տգեղութիւնն է անպատշաճութիւն վարուց, որ առաւելու կամ նուազի քան զմէջ բանի, որպէս անմտութիւն կամ խորամանկութիւն. վեհերոտութիւն կամ յանդգնութիւն, և ամենայն որպիսութիւն անչքական և ամօթալի: Խառն տգեղութիւնն է տգեղութիւն մարդկան, որ երեւեցուցանէ պակասութիւն ինչ անասնական, որպէս զայրոտի իմն կնճիթ ցցուեալ արտաքս երկայնաժանի իբրեւ զխոզի: Եւ տգեղութիւն անասնական որ երեւեցուցանէ յոռութիւն ինչ մարդկային. իբր կապիկն որ երեւի մարդ տգեղ և նենգաւոր, որ ոչ խօսի զի մի՛ աշխատ լիցի: Արդ տգեղութիւնն եթէ ֆիզիգական և եթէ բարոյական, է երկեակ. մին առաւել ամօթական, քան վնասակար. միւսն առաւել վնասակար, քան ամօթական: Յանդգնութիւնն է առաւել վնասակար քան զվեհերոտութիւն, և անիրաւութիւնն քան զանժուժկալութիւն. բայց անժուժկալութիւնն է առաւել ամօթական քան զանիրաւութիւն, և վեհերոտութիւնն քան զյանդգնութիւն: Ի վախճան ամենայնի և զայն եւս պարտ է յուշ ածել, թէ նոյն իսկ տգեղութիւնն է առաւել ամօթական յայս ոք՝ քան յայն ոք: Որպէս աղխութիւնն յայնմ՝ որ 'ի գլխոյ է համարի, և վեհերոտութիւնն յայնմ՝ որ 'ի քաջաց է համարի, և աղտեղութիւնն յայնմ՝ որ է գեղաւոր և պանծալի:

Ապա տամ թէ այս ամենայն տգեղութիւնք են նիւթ զուարճախօսութեան. այլ ոչ ամենայնն է նիւթ ծիծաղաշարժ զուարճախօսութեան: Զի թէպէտ երբեմն ինչ ծամածուռ ծիծաղեցուցանէ, բայց թէ իցէ ծամածռութիւնն 'ի հերձմանէ ծնօտից կսկծագին ցաւօք, ոչ եւս շարժէ 'ի ծիծաղ այլ յախտակցութիւն և 'ի զորհուրանս: Վասն այսորիկ 'ի վերայ բերէ Արիստոտէլ, թէ նիւթ ծաղու է տգեղութիւն անցաւ. որպէս երես ծամածուռ, որ ոչ ցաւի: Յորոց բանից մարթ է մեզ քաղել երկուս կարեւոր հետեւութիւնս. մի թէ մոլութիւնք որք են վնասակարք քան ամօթականք, ոչ են նիւթ ծիծաղաշարժ զուարճախօսութեանց, այլ թշնամանականաց և կծանողականաց. զորս պարտ է վարել 'ի քաղաքական

կենցաղավարութենէ: Ուստի և ծիծաղաշարժք են այնք որք զծաղու գան 'ի վերայ մոլութեանց առաւել ամօթականաց քան վնասակարաց. որպիսի են վեհերոտութիւն, ագահութիւն, անհամեստութիւն և արբեցութիւն, որք են մոլութիւնք առաւել անարգք և ծառայականք: Երկրորդ հետևութիւնն է թէ և 'ի վերայ այգպիսի ամօթական և անարգ նիւթոց զուարճախօսութիւնք չեն ծիծաղաշարժք, յորժամ կամ կարի իմն կծողագոյն խայթեն զայլս կամ կարի իմն յայտնի զրոյցք լինին զաղտեղեաց և զանպարկեշտից. Զի այնք ցաւագինեալ նախատելոյն, և այսոքիկ զզուեցուցեալ զունկնդիրս, ոչ կոչեն ագեղութիւնք անցաւք: Վասն այսորիկ 'ի սոցանէ ևս 'ի քաղաքական կենցաղավարութեան պարտ է խորշել: Եւ յիրաւի գտանին որք այնպէս անագորոյնք, որոց նիւթ ծաղու է անգթութիւն, և այլք այնպէս աղտեղիք որք ախորժեն զաղտեղի զրոյցս որպէս խողք զտիղմ: Պիւռոս 'ի սպանանել զծերունին Պրիամոս 'ի զոհանոցի, խաղ արար զնա զուարճախօս զրուցիւք: Եւ Աղեքսանդր Սեւերոս, զծաղու եկեալ 'ի տանջանս միոյ ուրուք յիւրոց սիրելեաց, որ վաճառէր զաւագութիւնս արքունի, հեղձոյց զնա 'ի ծուխ, ասելով. ծխով կորիցէ, որ զծուխ վաճառէ: Զուարճախօսութիւն արժանի Սեւերոսի: Իսկ Եղիոգաբաղոյ առաւել միտեալ 'ի չարչարութիւն քան յանգթութիւն, վարձս խոստանայր որոց հնարէին զրոյցս խենէշս [190]: Բայց այսոքիկ չեն համեմունք քաղաքական կենցաղավարութեան զորոց է աստանօր խնդիր:

Ապա կրկնակի զրոյց ինչ լինի միանգամայն ծիծաղաշարժ և քաղաքական: Մի եթէ ագեղութիւնն այնպէս թեթև իցէ, որ զոյցն խաղեսցէ այս, այլ ոչ ցաւեցուսցէ: Զի ոչ է հնար ունել զառաքինութիւն զուարճախօսութեան այնմ, որ գիտէ զայլս մարմաջեցուցանել, և զիւր մարմաջել ոչ կամի: Թող զի ոչ միշտ զուարճախօսութիւնք անկանին 'ի վերայ մոտակայից. այլ 'ի վերայ բացականաց. և ամենայն ոք հեշտալուր է ամենայնի, որ զայլս խոցէ: Երկրորդ, յորժամ ագեղութիւնն թէպէտ և աղտեղի իցէ կամ կծանող. թէպէտ և ամօթալի իցէ կամ վնասակար, այնպէս 'ի վայելուչ փոխակերպի հանճարաւոր ձեռվ, մինչև տեսակին գեղերեսել ըզնիւթն և կծողութեանն երևիլ գովեստ և անհամեստին՝ համեստ, իբր զի թէ ոչ գովի էութիւն զրուցոյն, գովի հանճարն: Երևի և յառաջարկութիւնս Փիլիփական իրաց գործ այար վայելչութեան: Չասաց Մարտիալէս բուն եղերօք. Բաղանիք քո չեն ինչ ջերմ, այլ ասէ. թէ պահել կամիցիս զձկունս, արկ 'ի քո բաղանիս: Չասաց թէ Այդ սենեակ է կարի գիջին. այլ թէ արկ ձկունս աստ 'ի ներքս, և կայտառասցին: Չասաց թէ Տոնգիլիանոս է մեծունչ. այլ թէ զՏոնգիլիանոսի տեսանեմ զունչս, այլ ոչ տեսանեմ զնա ինքն: Չասաց Որատիոս թէ Դա է յաղթահասակ, միականի. այլ թէ Կիկլոպայ 'ի կաքաւս ոչ պիտին դիմակք [191]: Եւ զայլմէ ուրեմն, որոյ աջոյ ակն էր կոյր և ձախոյ ակն ծնկէր արտօսր, ասացաւ թէ այդ ակն լայ զմահ զիւրոյ եղբօրն: Այսու օրինակաւ 'ի զուարճախօսութիւն փոխին ագեղութիւնք բարոյականք, թէպէտ և կծանողք կամ ամօթականք: Զոր օրինակ զգողաբարոյ ծառայէ ասացաւ, թէ Դմա միայնոյ 'ի ծառայից ոչինչ կայ փակ: Եւ զայնմանէ որ բարձեալ տանէր կեղծ ինչ գլխանոց, և համարեալ էր սնախոս. եթէ երկու գլուխք են դորա, ապա և երկու լեզուք: Եւ զանգէտ բժշկէ ումեմնէ. Բժիշկ է դա, որ ոչ կարի իմն հիւծեալ հաշէ զիւր ախտացեալս: Եւ զպատկերէ բամբիշի ուրումն, որ 'ի սնգոյր շպարիւր. Ոչ թէ նկարդ նման է նմա, այլ նա նման նկարիդ: Եւ զթուխ պատանեաց ումեմնէ սպիտակազգեստէ, որոյ էր կեղակարծ անուն. Կարապ է դա. որոյ մին է սեաւ, և փետուրք սպիտակք. բայց չէր նորա քաղցր ձայն: Եւ զդատաւորի ուրումն չեղասմեղս կնոջէ. Յիրաւի է այդմ դատաւորի լինել արդար, զի 'ի տան ունի զնոյն ինքն զարդարութիւն, որ իւրաքանչիւրում տայ զիւրն: Եւ զայնմանէ որ ունէր կին փոքրիկ բայց ագեղ. Դա 'ի բազում չարեաց էառ իւր զփոքրն:



## ԳԼՈՒԽ Ե.

*Ցողագս զուարճախօսութեանց ծանուցից:*

Վերագոյն յիշատակեցաք թէ որովհետև նիւթ ծիծաղաշարժից է զուլութիւն կամ ագեղութիւն, եթէ բնական և եթէ բարոյական, հարկաւ պատշաճի զի նիւթ ազնուականաց և ծանուց իցէ գեղեցկութիւն կամ կատարելութիւն իրաց, եթէ բարոյականաց և եթէ բնականաց և արուեստականաց, որք արժանի իցեն գովութեանց և զարմացման: Բայց աստանօր արժան է և զայն ևս յաւել ածել, զի թէպէտ և ամենայն առաջարկութիւնք գովանիք են ծանուցք, բայց ոչ վասն այդր բնաւքն են զուարճախօսիկք. եթէ նիւթն ծանր չէ զգեցեալ զանօսակ հանճարաւոր: Եթէ ասիցես դու թէ վարդն է գեղեցկագոյն քան զամենայն ծաղկունս, զոր արար բնութիւնն, լինի այս առաջարկութիւն ազնուական և ծանր, այլ ոչ զուարճախօսիկ. վասն զի է նշանակեալ ճշգրիտ և բուն եղերօք՝ իբր պատմաբանօրէն: Այլ զուարճախօսիկ և ծանր արար զայն Սափփով, յասել իւրում. Թէ արարեալ էր Դիոսի թագուհի ծաղկանց, արարեալ էր արդեօք զվարդն: Եւ թէ հաճոյ էր քեզ այլաբանել և ես, մարթ էր 'ի վերայ

բերել թէ փուշք են նորա արբանեակք և զօրականք: Ըզհուակն ասացից. գործք և բնականք և յանկարծադէպք, համձարաւոր մասնահունթեամբ լինին ծանր զուարճախօսութեան նիւթք. զոր օրինակ զծաղու եկն Մարտիալէս 'ի վերայ երէց, որոյ խոցեալ յորսորդաց՝ 'ի նոյն և երկնեաց. ասէ՝ Արտեմիս միանգամայն 'ի կիր էարկ զերկաքանչիւր զիւր գործ, զորսոյն և զծնուցչի. քանզի Արտեմիս աստուածուհին համարէր որսորդ, միանգամայն և մանկաբարձ դիւցազանց: Ապա եթէ 'ի մէջ երևեսցի ունկն ոք, և տղայ մի նորա երկաքանչիւրն գեղեցիկ, բայց երկոքին իսկ միականի, մարթ էր 'ի քաղաքական ինչ կենցաղավարութեան ծանու զուարճախօսութեամբ ասել. Եթէ տղայդ պարգևէր զիւր մի ակն մօր իւրում, լինէր դա կոյր Սէր [192], և մայրն գեղեցիկ Աֆրոդիտէ: Եւ այսպիսի են գովեստ գեղեցիկ արձանաց և գրօշուածոց և այլ ամենայն ձեռակերտ գործոց:

Այսոքիկ են զուարճախօսութիւնք հիմնեալք 'ի նիւթ բնական: Իսկ զբարոյական գեղով, եթէ Մարտիալիսի ասացեալ էր զՆերուաայ, իշխան է սա այնչափ բարի, որ ըղձալի տանէ բարեաց զմիապետութիւն քան զհասարակապետութիւն, լինէր այս առաջարկութիւն գովասանական և ծանր, բայց պատմական և ոչ զուարճախօս: Բայց 'ի ծանր զուարճախօսութիւն շրջեաց զայն, յասել իւրում. Եթէ դանայր արդ Կատոն յաշխարհ, զկողմն արդեօք ունէր զԿեսարու: Վասն զի Կատոն այնչափ խորշէր 'ի միապետութենէ, մինչև չոքաւ զիւրովի, զի մի տեսցէ զմիապետել Յուլիոսի Կեսարու [193]: Մինչ զի նոյն առաջարկութիւն, այնու ձևաւոր և լակոնական յառաջբերութեամբ, զգեցաւ զուարճախօսութիւն, անկորուստ պահեալ զծանրութիւն: Այսպիսի ձևով գովեաց Անգեղոս Փոլիցիանոյ զպերճախօսն Կիկկա կին սենայի. ասէ, Մնեմոսինէ (մայր Մուսայից) լուեալ զխօսիլ Կիկկայ, ասէ. Երբ ես տասներորդ դուստր. կամելով ասել. Կիկկա 'ի պերճախօսութեան թուի լինել մի 'ի Մուսայից: Եւ զումեմնէ գեղեցիկ և պարկեշտ օրիորդէ ասէ. Գիտէ դա, զինչ է լինել սիրեցեալ, այլ ոչ գիտէ, զինչ իցէ սիրել: Ըստ Պարթևաց նետաձիգ լինի 'ի սիրոյն՝ փախչելով իւրով: Եւ զումեմնէ իմաստուն փարթամ և գեղեցիկ տիկնոջէ ասէ. Եթէ գտեալ էր 'ի դատ Պարիսի, նա միայն շահեալ էր զխնձոր ոսկի՝ յերից տարփակցաց անտի [194]: Զի Աթենաս էր աստուածուհի իմաստութեան, Հերա՝ փարթամութեան և Աֆրոդիտէ՝ գեղեցկութեան. և սա յինքն միայն միաբանեալ ունէր զերեսին զայն ձիրս: Բայց դու տես զի ձև հակադրութեան առնէ զառաջարկութիւնս ևս զուարճախօսս և ծանունս քան զայլ ամենայն ձևս: Որպէս եթէ ասէիր. Սիրել արժան է, որպէս թէ պարտ էր քեզ ատել, և ատել, որպէս



թէ պարտ էր քեզ սիրել: Որպէս և այս որ անարգ է ըստ նիւթոյն այլ գեղեցիկ ըստ տեսակին. Պարտ է քեզ ուտել, զի կեցցես. և ոչ կեալ, զի ուտիցես:

Յօրինակաց աստի ունիս ճանաչել թէ 'ի զուարճախօսութիւնս ծանունս, ծանրութիւնն ոչ բառնայ զհաճոյականութիւնն և զքաղաքական ինչ զուարթութիւն. որ թէպէտ չէ ծիծաղաշարժ, բայց և այնպէս շարժէ զանուշակ ինչ ժպիտ, ոչ ձայնարձակ և անկարգ իբրև զզուարճախօսութիւնս խեղկատակս, այլ խաղաղական և հանդարտ, որպէս յորժամ տեսանեմք զսիրելի ոք բարեկամ կամ երեսս կայտառս կամ ճարտարարուեստ ինչ նկար, կամ հոյակապ ինչ ճակատ, կամ սքանչելի իմն և անակնկալ փոփոխութիւն թատերաց, զի նորութիւն և զարմանք մեծապէս բերկրեցուցանեն: Եւ այսոքիկ են 'ի գլխոյ կենցաղավարութիւնս ընտրելագոյն զուարճախօսութիւնք:

## ԳԼՈՒԽ Զ.

*Կիրառութիւն զուարճախօսութեանց 'ի քաղաքական կենցաղավարութիւնս:*

Երկակի են զուարճախօսութիւնք, այսինքն է Ասից, և Գործոց: Զուարճախօսութիւն ասից յատկապէս կոչի Զաւեշտութիւն: Զուարճախօսութիւն գործոց մասնաւորապէս կոչի Կատակ: Եւ յերկուց աստի բաղկանայ զուարճախօսութիւն խառն յասից և 'ի գործոց: Եւ երեքին իսկ յանկաւոր են քաղաքական կենցաղավարութեան:

Ապա կամեցեալ խօսիլ նախ զզուարճախօսութենէ ասից: Առաջին կիրառութիւն նորա է 'ի պատասխանիս. որոց հասարակօրէն պարտ է լինել համեմատ առաջարկութեանց. դարձուցանելով զխայթ զրուցաց խայթականաց կամ զգով զրուցաց գովականաց: Առաջի Կղեմայ ութերորդի ընտանի զրոյցք 'ի միջի լինէին թէ որով օրինակաւ հնար իցէ քաղել արծաթ, առանց արտմեցուցանելոյ զժողովուրդն: Էր անդ Արմելլինոս ոմն անուն, որ թարգմանի կուզ, զորմէ էին կարծիք՝ գտիչ լինել այսպիսի կապալոց: Զմանէ մի 'ի պալատականաց զծաղու եկեալ ասէ. Սրբութիւն ձեր ժողովեսցէ 'ի ժողովրդենէ հեշտեաւ գանձ բազում, թէ շուրջ յածեցուսցէ զմորթ այսր կուզի: Որում Արմելլինոս ետ պատասխանի. Ես գէթ 'ի մահու լինիցիմ իմիք պիտանի. այլ դու անասուն ես այնպիսի, որ ոչ 'ի կենդանութեան և ոչ 'ի մահու՝ չես ինչ իմիք պիտանացու: Նոյնպէս յընտանի գիներ-

բուս ուրեք, 'ի մատուցանել միոյ ուրուք զբաժակն 'ի շըրթունս, ասէ ցնա ընդ խաղ ընկեր իւր. զգոյշ լեր չարկանել զպտուղ 'ի յուռի տակառ: Եւ նա ևս ընդ խաղ ետ պատասխանի. արդ ուրեմն ասես ինձ չարկանել 'ի քոյդ. և էարբ: Այսպիսի դարձադարձ զրոյցք առաւել ևս են զուարճալիք, յորժամ մտանէ յայս ձև հակակայ: Ի կենցաղավարութեան ուրեք եկն եհաս 'ի վերայ պատանի ումն ուշեղ, բայց այնպէս վոխա, մինչ հազիւ անկանիլ նմա ընդ ականջ: Մի յընկերաց ողջոյն ետ նմա այսպիսի. Բարեաւ եկիր հոգի անմարմին: Եւ նա ասէ. Բարեաւ գտար մարմին անհոգի:

Բայց 'ի գովական պատասխանիս ընդ զուարճախօսութեան խառնի ծանրութիւն, ելեալ առնելով յազնուաբարոյութիւն և 'ի հանճար: Հետամուտ էին պրետորութեան Կուրտիոս և Լեպիոս սերտ բարեկամք միմեանց: Պրետորութիւնն 'ի կայսերէն տուաւ Լեպիոսի: Կուրտիոս քաղաքավարութեամբ խնդակցեալ բարեկամին, ասէ. Վասն զի գովել ակնյանդիման՝ ցոյց է մարդահաճութեան, ես ոչ խնդակցիմ քեզ, զի ստացար արժանաւոր պրետորութիւն. այլ խնդակցիմ պրետորութեան, զի ստացաւ արժանաւոր պրետոր: Պատասխանի ետ Լեպիոս. Դու ինքնին գիտես, զի ուր նուազ է խոհեմութիւն, առաւելու բախտ. Վասն այսորիկ իմ է պրետորութիւն և քո արժանաւորութիւն: Կրկնեաց անդրէն Կուրտիոս. Բախտի չիք տեղի, ուր մտանէ խոհեմութիւն. որպէս դուդ ասես. և վասն զի 'ի քում ընտրութեան եմուտ խոհեմութիւն կայսեր, բախտի այլ ոչ գտաւ մասն բաժնի: Պատասխանի ետ Լեպիոս. Կայսերք են աստուածք երկրի. և աստուածք է զի գործեն ինչ 'ի ցուցանել զծայրագոյն իմաստութիւն, և է զի գործեն՝ 'ի ցուցանել զինքնիշխան տէրութիւն: Ի յաւելուլ Կուրտիոսի և այլ ևս քաղաքավարութիւնս, Լեպիոս յայս կնքեաց զբանն. Որպէս և իցէ, ջանացայց չհանել 'ի դերև ոչ զկայսերն ընտրութիւն, և ոչ զքոյին կարծիս:

Են և պատասխանիք, որք ոչ խայթական են, և ոչ գովական. բայց են զուարճախօսիկ՝ վասն երագահաս մտաւորութեան: Ի կենցաղավարութեան ուրեք բանք 'ի մէջ եղեն. ո՞յք այնք իցեն որք չմիաբանին ընդ միմեանս: Մին ասէ, երկու տեարք 'ի միում թագաւորութեան: Եւ միւսն. Երկու տարփածուք 'ի սէր: Եւ 'ի լինել խնդրոյ միւսանգամ, ո՞յք այնք իցեն որք առաւել միաբանին ընդ միմեանս, ասէ ումն. Կոյրն և կաղն զի մին զոտս, և միւսն զակն փոխ տան ընկերին: Եւ առաւել ևս զուարճախօսիկ լինին պատասխանիք թէ մտանէ յայնս ձև անակնկալ: Որպէս իբրև հարցաւ Սոփրոնիկոս, ո՞ր նաւք են առաւել ապահովք, երկայնաձիգք թէ բոլորաձևք. ետ պատասխանի. Այնք որք կան 'ի նաւահանգստի:

Է և այլ կիրառութիւն իբրև հանճարաւոր ինչ մտածու-



թիւն 'ի վերայ նոր ինչ լրոյ, որ պատմիցի: Պատմեցաւ թէ Գորդիաս ծնաւ 'ի դագաղի. մինչ տանէին զմայր նորա 'ի գերեզման: Յայս վերայ Վաղերիոս արար այսպիսի ինչ մտածութիւն: Ով սքանչելեացս. կին եղեալ յաշխարհէ՝ եղև մայր. և որդի յառաջ քան զմտանել յաշխարհ, եղև տարեալ 'ի գերեզման: Է զի մտածութիւնն լինի օրինակաւ ստորասութեան կամ բացասութեան: Որպէս իբրև լու եղև, թէ Լաբրակ տխմար ծաղրածուն անկեալ էր 'ի ծով, ումն ասէ. Բարւոք արար, զի անալի գոլով իցէ թէ առնուցու փոքր աղութիւն. Եւ այլ ումն ասէ. Մի կարծէք թէ սուզեալ 'ի խոր, զի է թեթև: Է և այլ կիրառութիւն օրինակաւ խաբէական հաւաքաբանութեան 'ի նիւթ ծիծաղական. իբրև զՄենեկայինն, որ զծաղու եկեալ զիւրով Լուկիլլոսիւ 'ի խոստովանեցուցանել զնա թէ ունի եղջիւրս, ասէ. Զոր ինչ ոչ է քո կորուսեալ, ունիս. իսկ չէ կորուսեալ քո զեղջիւրս, ապա ունիս եղջիւրս: Բայց բազում անգամ ձեռնարկութիւնն ոչ տարածանի 'ի ձև հաւաքաբանութեան, այլ ամփոփի յեզրակացութիւն, կամ 'ի հնարական հետևութիւն: Որպէս յորժամ Վլադիսլաւոս արքայ Նէապօլսոյ տայր զամենայն աւագութիւնս կայետացւոց, թէպէտ և չէին ընդունակ, իբր զի կայետացիք սամնջական լեալ էին նորա յիւր տառապանս, ումն 'ի չինականաց ասաց ցէշ իւր: Ով փառաբաղդութեան յաւանակիդ իմոյ. թէ ծնեալ էր քո 'ի Կայետա, լեալ էիր արդեօք 'ի դասս սենեկապետաց, կամ մի 'ի բերդակալաց: Է միւս ևս կիրառութիւն օրինակաւ առաջարկութեան առեղծուածոց և առասպելաց առ միմեանս: Զոր օրինակ եղև առասպելն այն սփինգեան. Ո՞ր կենդանի իցէ, որ նախ է չորքոտանի, ապա երկոտանի, հուսկ ապա եռոտանի. զոր առեղծեալ Եդիպոսի, թէ է մարդ, ստացաւ զթագաւորութիւն[195]: Կամ օրինակաւ առակարկութեան, ուսուցեալ իմաստ ինչ բարոյական, կեղծ զրուցիւք շնչաւորաց կամ անշնչից: Յորոց առակարկութեանց ոմանք են ծիծաղականք. իբր այն, թէ Զհանդուրժեալ իշոյ հարուածոց գանից, ցանկացաւ մահու. բայց յետ մահուն՝ իբրև զերծին զմորթ նորա և արարին թմբուկ, առաւել ևս գանեցաւ 'ի մահուն քան առ կենդանութեամբ. առ ուսուցանել թէ բազումք կարծելով փախչել 'ի չարէ, չարագունի պատահեն: Այլ այս է անկատակ. Ի կրկտել աքաղաղի հաւու, եգիտ անգամանդ, և ասէ. ո՞ւր էր թէ գտանէի հատիկ մի գարւոյ. 'ի նշանակել թէ իւրաքանչիւր ոք յարգէ, զոր ըստ իւրում յօժարութեան գտանէ: Նման է այսմ կիրառութիւն զուարճախօս առակաց. զի առ ռամիկս ազդու են ռամկային ձեռնարկութիւնք. որք 'ի խոր ազդուորին: Եւ 'ի սոցանէ ոմանք են անարգք. իբր այն թէ Տապակն ասէ ցկաթսայ. 'ի բաց կաց յինէն, զի մի

մրճոտեցես զխս։ Եւ ոմանք ազնուականք. իբր այն թէ Արծուի ոչ ըմբռնէ զճանճս. այսինքն է, մեծանձնն ոչ ընդունի զփոքր պատիւ։ Նոյն որոշութիւն է և 'ի զուարճախօս առածս. Ծանր զուարճախօսութիւն է այն, Բազումս գիտէ, որ գիտէ լռել. և ծիծաղաշարժ այն. Գեղեցիկ փախուստ են՝ կենցաղոյս գնացք։ Միւս ևս քաղցրախորժ կիրառութիւն է զուարճախօս նմանութեանց, յարմարել ծանր ինչ կամ ծիծաղաշարժ իմաստ. զորս Արիստոտէլ կոչէ պատկերս, զի յայտնի երևեցուցանեն զմեր միտս։ Ծիծաղաշարժ եղև իմաստ Սեսսայ շատակերի, որ առ որս զարմանայինն թէ զիա՞րդ ուտէր այնչափ, տայր պատասխանի. Որովայնն է նման ծակ գրոյ։ Բայց ծանր եղև իմաստ Դեմոսթենեսի որ սուղ ինչ բանիւ նկարեաց ակնյանդիման աթենացւոց զբնաւորութիւն ռամկի. Նման է նա, ասէ, զեկի նաւաց. որ ամրակուռ է, բայց թեք։ Հուսկ յետին կիրառութիւն է 'ի պատմութիւնս, յորժամ 'ի պատմել զծանր ինչ կամ զծիծաղական, ի գործ ածին բառք ինչ կամ զրոյցք ձևաւորք և զուարճախօսք ծանունք կամ ծիծաղականք, որք արծարծ և շնորհաշուք յայտնեն զպատմեալն։ Որովհետև յամենայն մասունս բանի չիք ինչ որ այնպէս յօրանջեցուցանէ զունկնդիրն, որպէս յերկար և անծաղր վէպ. յայս սակս ոմա առաւել քան զամենայն զրոյցս պարտ է լինել պաճուճազարդ և զուարթարար՝ հիւսիւք հանճարաւոր ձևոց։

## ԳԼՈՒԽ Է.

### Զուարճախօսութիւնք գործոց։

Սոքա ևս են յանկաւորք քաղաքական կենցաղավարութեան, յորժամ չլինին կարի իմն միմոսականք։ Ի սոյս համարի են նախ նշանացի գործք, որք են պատկերք իմացուածոց իբրև զխօսս. վասն որոյ մարթ է կոչել զնոսա խօսս համերս, կամ բարբառս անձայնս։ Հորտենսիոս յատենաբանել իւրում, զինչ և ասէր, այնպէս արծարծ արտայայտէր ձեռօք որպէս խօսիւք. վասն որոյ Կիկերոն նախանձաւոր նորա՝ կոչէր զգործս նորա ճարտարութիւնս մատանց. և բազումք ընթանային առաւել 'ի տեսանել զնա քան լսել 'ի նմանէ։ Արդ որպէս խօսից՝ նոյնպէս 'ի նշանացի գործողութեանց ոմանք են զուարճախօսք և ոմանք ոչ։ Զեն զուարճախօսք, որք բնաւորապէս նշանակեն զիմացմունս. որպէս ծափ զծափի հարկանել, կամ կայթել յուրախութենէ, բաղխել զկկուրծս, կամ փետել զհերս առ ցաւոց, ձգել զբազուկն 'ի



ապաւինալ, ամբառնալ զյօնս 'ի զարմանս, տատանել զմատունս 'ի խնդրել զօգնութիւն։ Զուարճախօս այն են, որք նշանակեն զիմացմունս իւրովի զուարճականս։ Սերեսեան ժողովուրդք յայնկոյս Հնդկաց խօսէին միայն նշանացի. բայց և այնպէս 'ի մէջ իւրեանց խաղ առնէին, և զծաղու գային. զի որպէս խօսք, նոյնպէս և նշանացի գործք են պատկերք մտաւորութեան. և մտաւորութիւնն է աղբիւր զուարճախօսութեանց։ Մնջկատակք [136] շարժմամբ ձևոց և բովանդակ մարմնոյ նմանաբերէին զամենայն արարս ծիծաղաշարժս և անարգս, կամ անողորմս և անգթականս։ Անողորմ նշանացի կատակ եղև այն, զոր մի 'ի մնջկատակաց 'ի խաղսն երևեցոյց առաջի Ներոնի 'ի թատրոնի։ Լուղելով իւրով նշանակեաց զնաւաբեկութիւնն զոր նիւթեաց Ներոն մօր իւրում, և ըմպելով իւրով նշանակեաց զթոյնն, զոր արբուցեալ էր նորա հօր իւրում։ Բայց ևս կատակականք են գործք փոխաբերականք. իբր այն զոր առնէր կինն անզգամ որ երկճիղ մատամբք եղջիւրս 'ի գէմս ածէր առն իւրում որպէս շնացողի, և վասն այնր յընկենուլ զնա առնն 'ի գետ, այն ինչ ջրահեղձոյց կորնչէր, գեռ երկճիղ մատանցն քան զջուր 'ի վեր ամբարձմամբ՝ յանդիմանէր զնա լինել շնացող։ Փոխաբերական եղեն և նշանացի գործք այլոյ ուրումն. որ 'ի հատանել ընկերի իւրոյ զեղնգունս, էառ զմի 'ի կտորոց, և մերձեցոյց յատն իւր. կամելով ասել ընդ խաղ, Դու ես Աքիլես գաղտն մեծ, որոյ եղունգն բժշկութիւն է ախտից։ Եւ այլ ումն 'ի լսել զձայն երգեցկի ուրումն, որ էր գորտաձայն, արկաւ զիւրեաւ վերարկու, որպէս թէ ասելով. Ժամանակ է անձրևի, զի գորտ ձայն արձակէ։ Ընդ կատակս հաշուին և խաղք ինչ և ձեռնածութիւնք, որք այլ ընդ այլոյ երևեցուցանեն. և այլք որք յանկարծակի զգետնեն զընկերն անմիտս. զի 'ի պատրողական ձևոց են սակի։ Ապա թէ յանկանիցի վնասեսցի, ոչ ևս է կատակ. զի ոչ է տգեղութիւն անցաւ։

## ԳԼՈՒԽ Ը.

### Զուարճախօսութիւնք որք խառն են յարարից և յասից։

Այսպիսի եղեն այն երկու կատակք մնջկատակի առաջի Ներոնի։ Զի ընդ երգել նորա տող մի ողբերգական. Աւաղ հօր և աւա՜ղ մօր իմոյ, յասելն՝ Աւաղ հօր, արար արարս ըմպելոյ. և յասելն, Աւա՜ղ մօր իմոյ, արար արարս լուղելոյ. և տղիւս որ չէր իւր արար երգիծումն։ Լինին ևս զուարճախօսութիւնք կամ կատակք արարից և ասից, յորժամ երևե-

ցուցանէին բարք ուրուք 'ի պատկեր ինչ նկարեալ կամ քանդակեալ, յոյր վերայ գրեալ կայցէ զրոյց ինչ զուարճախօս: Օգոստոս արար մեծածախ կոչունս բանիչաց յաւուրս տօնամեծի. ուր բանիչք երևեցուցանէին 'ի զգեստս զակէսակէս աստուածուհիս, և ինքն զգեցեալ էր զԱպողոնին: Պատմացեալ ժողովրդեանն ընդ այն, եղին զանունն Օգոստոսի 'ի վերայ պատկերի միոյ Ապողոնի, որ քերթէր զմորթ Մարսիասայ, կոչեալ այսու զՕգոստոս Ապողոն մորթեղերծ: Կամ յորժամ գրոշմին տպաւորութիւնք ինչ կամ նշանք հանճարաւոր զրուցիւք 'ի նախատինս ուրուք կամ 'ի գով: Որպէս կամելով երևեցուցանել զոգաւ ոք՝ նկարեցաւ խող պարարեալ, այսպիսի զրուցիւ. Մխայն 'ի խորտիկս. զի միայն 'ի մահու է պիտանի: Եւ 'ի գով տիկնոջ ուրումն գիտնաւորի, որում անուն կոչիւր Լաւրա, այն է դափնի. նկարեցաւ պսակ 'ի դափնոյ այսպիսի իմն գրութեամբ. Անուն դուշակ իրի. դափնոյն վայելէ պսակ 'ի դափնոյ[197]: Երբեմն այն ինչ զոր հնար էր նշանակել խօսիւք, բացատրի կատակաւոր իմն աբարմամբ և ապա արտայայտի: Մատոյց ումն հրաւիրեալ ընդ այլոց 'ի ճաշ յումեմնէ խիստ բարեկամէ, տեսեալ առաջի իւր կոտոր մի դաշ մսոյ, անդէն վաղվաղակի յարեաւ 'ի սեղանոյ, և եկաց վայր մի արտաքոյ դահլճին. ընդ որ զարմացան կոչնականք: Յետ սակաւ միոյ դարձաւ և իբրև հարցաւ, թէ զի՞ է զի ելեր արտաքս, ետ պատասխանի: Տեսեալ զայս միս, թուեցաւ ինձ, թէ իցէ ուս խմոյ ջրւոյ. բայց գոհութիւն Աստուծոյ. զի գտի զջորի իմ կենդանի: Մարթ էր ասել նմա բացերևակի. Այս միս դաշ է իբրև զմիս ջրւոյ. այլ արարմամբն արծարծեցոյց զասացեալն: Ոչ ծիծաղեցաւ յայսպիսի իմն կատակէ մի 'ի ծաղրածուաց. որոյ տեսեալ տանիլ 'ի գերեզման զմին մեռեալ, ակն յանդիման Տիբերիոսի, կանեցոյց զդագաղն և կեղծաւորեցաւ խօսիլ յականջս մեռելոյն: Ի հարցանել Տիբերիոսի թէ զինչ խօսեցար, ասէ. Ասացի, թէ յերթալ քում 'ի միւս աշխարհ, պատմեսցես Օգոստոսի, թէ յաջորդ քո ոչ վճարէ զառ 'ի քէն կտակագրեալս: Եւ Տիբերիոսի ծաղր ընդ ծաղու փոխանակեալ գաղտնաբար ասէ. Լաւ ևս լինի, թէ դու ինքնին տարցիս Օգոստոսի զայդ լուր. և ետ զնա սպանանել: Է միւս ևս հանճարաւոր այլ վտանգաւոր օրինակ, խառնեալ 'ի խաղ զրոյցս զուարճախօս, որք երևին վերաբերիլ առ խաղն, և վերաբերին առ ծածուկ խորհուրդս փառաւորին և տիկնոջն, որք խաղան 'ի միասին, գաղտամբ այլաբանելով, և ճարտար պատասխանելով այլաբանութեանն. այնչափ առաւել խորագիտութեամբ, որչափ առաւել երևին պարզախօսք:



# ԳԼՈՒԽ Ժ.

## Յաղագս առաքինական ունակութեան զուարճախօսութեան

Յառաջագոյն եդեալ զնախընթաց ծանօթութիւնս, շատ է արդ ասել թէ զուարճախօսութիւնն է ունակութիւն հոգւոյ յասել և և 'ի լսել ինչ ինչ զուարճախօս և ընդ խաղ. միջասահմանութեամբ վայելչականաւ կենցաղավարութեան քաղաքային և պատուաւորաց: Ունակութիւնն պակասեալ յայսմ առաքինական միջասահմանութենէ՝ կոչի Գեղջկութիւն կամ Գռեհկութիւն: Ունակութիւն աւելադանց կոչի Խեղկատակութիւն կամ Ծաղրածութիւն: Զիք ծաղիկ գեղեցիկ, որ 'ի վիճակ ինչ գտանի ոչ ինքնին բուսանիցի: Սոյնպէս 'ի բարեբաստ միտս ինչ բնաւորապէս ծաղկին մտացի և զուարճախօս զրոյցք: Յայլս մշակին վարժիւք կամ երկասիրութեամբ, և 'ի սակս գործածութենէ գոյաւորի ունակութիւն: Ի վերայ բերէ Արիստոտէլ թէ մտացի և զուարճախօս զրոյց յառաջ գայ 'ի հանճարոյ կամ 'ի վարժից: Բայց լինելն զուարճախօսութեանց վայելչական և առաքինական, այսինքն է զի 'ի քաղաքական կենցաղավարութեան զկայ առցեն 'ի կոպար միջասահմանութեան, այս է գործ բարոյական իմաստասիրութեան:

Արդ կամեցեալ խօսել զբնաւորական ունակութենէ ասեմ, թէ առ զուարճախօսութիւնս բնաւորապէս վայելչականս նա է պատրաստական, որ ունի խառնուած բարեխառնեալ յարիւնային և 'ի սևամաղձային, դէմս խառնուածոյս 'ի ծանուէ և 'ի զուարթարարէ, աչս ուրախս քան տխուրս, այլ ոչ ծիծաղոտս: Զի արիւնայինն օգնէ զուարթութեան, այլ սևամաղձայինն օգնէ սրամտութեան, և էն չափաւորիչ միմեանց: Այսպիսի էր Կրասսոս ատենաբան հռովմայեցի, ծանր հաճոյական. որ առանց յեղափոխելոյ հոլովէր երբեմն զրոյցս, որ խնդացուցանէր զայլս ծաղու. և ինքն երբեք չծիծաղէր: Բայց յաղագս բարոյական ունակութեան մնայ արդ զննել, թէ էր աղագաւ և որով օրինակաւ գործիցէ այր զուարճախօս. որովհետև զնիւթ նորա և զտեսակէ եղեն զրոյցք:

## ԳԼՈՒԽ Թ.

### *Թէ ո՛ր իցէ վախճան զուարճախօսին ։*

Բուն վախճան զուարճախօսին ոչ այլ ինչ է, բայց 'ի կիր արկանել զառաքինական ունակութիւնն 'ի սակս համեստ ուրախութեան, որ զօրացուցանէ զսիրտ վաստակեալ 'ի լուրջ զբաղմանց։ Բայց չէ գլխովին ունակութեանս ունակ, որ յօժարամիտ է զայլս այպանել, և ինքն ոչ կամի այպն լինել։ Զուարճախօսութիւնն է բարեկամական ինչ անազ. և 'ի մէջ բարեկամաց ամենայնն է հասարակաց։ Որ պարգեւէ և չընդունի պարգեւս, առաւել շռայլ է քան առատաձեռն։ Որ առնէ զրոյցս ընդ խաղ, և չընդունի զրոյցս ընդ խաղ, առաւել գեղջուկ է քան զուարճախօս։ Պիծակի է այն և կարճի, խայթել զայլս, և ոչ տանիլ թէ ոք ընդհարցի ընդ նա։ Առաւել ևս գեղջուկ է զուարճախօսութիւնն որ 'ի բերկրեցուցանել զոք բարկացուցանէ զայլ ոք։ Վասն այսորիկ կոչեցաւ երգիծական կամ ձիւաղական, յանուանէ վայրենի մարդոց թշնամեաց մարդկան, որք նկարին որպէս մարդակերպ գազան, կամ որպէս մարդ պատուաստ 'ի գազան. զի կատակք կծանողք առաւել են գազանայինք քան մարդկայինք։ Բայց ևս անարգ է զուարճախօսութիւնն որ վաճառէ զծաղր գնոց, և ուրախ առնէ զունկնդիրն՝ զի բառեսցէ զծաղրածու։ Եւ այս իմաստնապէս կոչեցաւ Պատուաքաղութիւն, այսինքն արուեստ պորտաբուծից և կատակերգուաց, պատուաքաղ անուանելոց՝ յանուանէ սովեալ թռչնոց, որք դողանային միս 'ի սեղանոց. կամ պիղծ Հարպայից, որք թռուցեալ զսեղանով սլանային 'ի վերայ կերակրոց [198]։ Ապա զուարճախօսութիւնն ոչ արբանեկէ իմիք մոլութեան։ Բայց հնար է թէ արբանեկեսցէ այլում առաքինութեան, փոխեալ զվախճանն, այլ ոչ զտեսակն։ Զսա առնու յիւր պէտս ատենաբանն առ ամաչեցուցանելոյ զմեղապարտն. զի որպէս սլաք օծեալ իւղով խորագոյն ընդմտանէ, նոյնպէս նախատինք քաղցրացեալք զուարճախօսութեամբ խորագոյն ազդեն։ Պիտանայ և 'ի բթել զսուր սայրս, և 'ի վայր կործանել զձեռնարկութիւնս հակառակորդին. զի ծիծաղաշարժ ինչ պատասխանի գիտէ տկարացուցանել զհզօր ձեռնարկութիւնս, իբր կակուղ բուրդ զշանթս և զռումբս։ Որպէս Կիկերոն 'ի խոռոտ խիղախմանց Մարկոսի Անտոնիոսի՝ խուսափէր զուարճախօսիւք, և կարեւէր խոցել զհակառակորդս իւրով ծիծաղաշարժ սրամտութեամբ քան հաստատուն փաստիւք. որպիսի եղև այն



հանճարաւոր երկսայրի զրոյց իւր ընդդէմ անիրաւ օրինաց Վէրրէսի. Զիա՞րդ լինիցին, ասէ, բարի իրաւունք Վէրրէսի [199]։ Առաւել ևս պիտանայ զուարճախօսութիւնն՝ 'ի յայտնել զախորժակս մեր, և 'ի յանկուցանել զսիրտս այլոց։ Վասն այսորիկ զՀերմէսէ զԱստուծոյ ճոռոմախօսութեան առասպելէին առ իւրև ունել զշնորհս, և շնորհք իսկ կոչին զուարճախօսութիւնք. զի շնորհք խնդրեալք շնորհիւ դիւրաւ ստացանին, և առ շահելոյ զոքեր՝ այնչափ ազդու է գեղեցիկ ինչ ասութիւն, որչափ գեղեցիկ ինչ դէմք։ Զի՞ ևս յաւելից, առաջնորդք իսկ պատերազմի 'ի կիր արկին զզուարճախօսութիւն, 'ի քաջալերել զզօրս իւրեանց պատերազմիլ արիաբար. որպէս Լէոնիդէս, յորժամ իւրքն զարհուրեալք 'ի բազմութենէ թշնամեաց՝ ասէին նմա, որպէս էր իսկ ճշմարիտ. Այնչափ խուռն են նետք նոցա, մինչև մթացուցանել զարև, ծիծաղելով ետ պատասխանի. ընդ հովանեաւ ուրեմն պատերազմեսցուք. և այսու զուարճախօսութեամբ ամաչեցուցեալ զնոսա՝ փարատեաց 'ի նոցանէ զերկիւղ։

## ԳԼՈՒԽ ԺԱ.

### *Թէ ո՛րով օրինակաւ գործիցէ զուարճախօսն ։*

Յայտնի իսկ է, թէ այս առաքինութիւն հաստատեալ կայ 'ի միջասահմանութեան. բայց ոչ նոյնպէս յայտ է թէ յինչ հաստատեալ կայցէ միջասահմանութիւնն։ Օրէնսդիրք ոմանք արգելին զզուարճախօսութիւնս կծանողս և անհամեստս. զի նոքա դառնացուցանեն և սոքա գարշեցուցանեն զսիրտս։ Բայց որ բառնայ 'ի սպառ զայսպիսի նիւթս, բառնալ ունի յաշխարհէ զծիծաղաշարժս. և որ տեղի տայ ծիծաղաշարժից, ոչ երբէք կարողանայ նշանակել կատար 'ի մէջ օրինաւորի և չօրինաւորի։ Թող զի, ո՞ր օրէնսդիր կարող իցէ դնել օրէնս մասնաւորութեան խոժոռելոյն կամ ցանկասիրին։ Ապա չիք այլ օրէն առաքինութեանս զուարճախօսութեան, բաց 'ի դատմանէ ստացողին զայն։ Ոչ են աստանօր զրոյցք ընդ խածատող և ընդ պիղծ կենդանիս, ոչ ընդ ձիւաղս և ընդ պատուաքաղս, այլ ընդ քաղաքայինս և ընդ առաքինիս. և առաքինին է իւր ինքեան օրէնսդիր։ Ապա գեղեցիկ և յաւերժական օրէն է պահել զօրէնս վայելչութեան քաղաքական կենցաղավարութեան, զմտաւ ածեալ. Զինչ զուարճախօսութիւնք իցեն որ ասին. ո՞վ է որ ասէ, և ում ասին։ Այսորիկ են երեք ընդհանուր կանոնք, յորս մաց-

ւոյն պարտ է հայիլ յամենայն առիթս և 'ի մասնաւոր ժողովս:

Ըստ առաջնոյ կանոնի՝ վայելչական լինի զուարճախօսութիւնն, որ որպէս ասացաւ, 'ի մէջ բերէ տգեղութիւն ինչ անցաւ, կամ պատշաճողութիւն ինչ հանճարաւոր և մտացի: Զի ծիծաղաշարժք, որք ցաւ բերեն, չեն ծիծաղաշարժք. և իմաստք առանց սրութեան մտաց չեն զուարճախօսք: Այսուօրինակաւ զուարճախօսութիւնն ոչ լինի կծանող և ոչ խենէշ. ոչ ճիւաղական և ոչ խեղկատակ. լինի պարկեշտօրէն հաճոյական և հաճոյօրէն պարկեշտ, իբր զի վախճան քաղաքական կենցաղավարութեան է համեստ ինչ զբօսումն: Լինի և վայելչական, եթէ տեղւոյն և ժամանակին իցէ պատշաճող: Այլ զուարճախօսութիւնք ճահողանան 'ի խնջոյս ուրախութեան, և այլք 'ի լուրջ գումարման: Կատոնն թէպէտ և էր խիստ դատաւոր, ախորժէր զզրոյցս որ ընդ խաղ, յորոց և շարագրեաց գիրս: Եւ բազումք ասէին զնմանէ թէ եղանէին այն բանք 'ի նորա դեգութենէ իբրև կայծակունք յամպոց: Բայց յորժամ միտ դնէր իւրում պաշտաման, ոչ կամէր յայնց ասել ինչ կամ լսել. շաքարն թուէր նմա թոյն: Նստեալ երբեմն յաթոռ դատողական՝ 'ի քննել զՊորտիոս Նասիկ զասպետն շնորհաբան, իբրև եհաս ցայն սովորական հարցումն, է քո կին, 'ի հաճել զքեզ. Նասիկ անդէն վաղվաղակի ետ պատասխանի. Է իմ կին, ոչ 'ի հաճել զքեզ: Զայս անկարծ՝ ուսափ և զուարճախօս պատասխանի՝ եթէ Կատոնի լուեալ էր 'ի գիւղի, ոչ միայն ծիծաղէր, այլ գրէր արդեօք և յիւրում յիշատակագրի: Բայց հայեցեալ 'ի տեղին՝ ուր ասացաւ, այնչափ բարկացաւ, զի 'ի բաց էառ 'ի նմանէ զկամար գօտի և զձի. և զասպետն արար հետի: Այլ զուարճախօսութիւնք պատշաճին ուրախ ժամանակաց, և այլ տխուր ժամանակաց: Ինոսա լուրջ զրոյցք լինին ցուրտք, 'ի սոսա ցուրտք լինին ծիծաղաշարժք: Որ լայ, ատեայ զայն որ ծիծաղի, և որ ծիծաղի ատեայ զայն որ լայ: Ցամնեանն դեկտեմբերի դաշք սինկղիտոսաց 'ի բաց եդեալ զպճղնաւորն, բաճկոնիւ ընդ ծառայս կաքաւէին, և ընդ խաղ՝ զրոյցս 'ի միմեանս արկանէին. զոր թէ յայլ ժամանակս առնէին, արտաքսեալ լինէին արդեօք յարքունի դրանէն որպէս խելագարք, և խելագարագոյն համարիւր որ մտաւորագոյնն հանդիսանայր: Այն էին նոցա աւուրք բարեկենդանութեան: Այլ և 'ի հարսանիս յօրինէին և երգէին ցուցս խենէշս և աղտեղիս, բայց մտացիս և հանճարաւորս ըստ հեթանոսական կարգի: Եւ ոչ միայն մասնաւորք յօրինէին 'ի վերայ ինքնակալաց, որպէս Կղոդիանոս 'ի վերայ Ոնորիոսի, այլ և ինքնակալք 'ի վերայ մասնաւորաց, որպէս Օգոստոս 'ի վերայ Պողլիոնի: Եւ այն զրոյցք յայնմ ժամանակի էին շողոմականք, որ յայլ ժամանակս էին



սրբապիղծք: Ոչինչ այնպէս է անալի, որպէս զուարճախօսութիւն ապաժամ: Թովմաս Մոռոս, քաջ իմաստունն, բայց ամենաթշուառ գլուխ խորհրդականաց մեծին Բրիտանիոյ, այնպէս զակատեալ էր զհետ զուարճախօսութեան. մինչև յեղանել իւրում ընդ սանդուղս 'ի դահաւանդ գլխատութեան՝ ասաց ընդ խաղ միում 'ի սպասաւորաց դատաստանի. Օգնեա ինձ աղաչեմ՝ 'ի վերելս, զի յիջանել իմում ոչ խնդրեցից յումեքէ օգնութիւն: Ամենեքին լային զնա, և նա դեռ զծաղու գայր:

Երկրորդ կանոնն է, զի զուարճախօսութիւնն իցէ յանկաւոր այնմ որ ասէ: Զի զոր օրինակ այլ զրոյցք պատշաճին եղերերգուին Սենեկայ և այլ խաղարկուին Արիստոփանեսի, և 'ի խաղարկութեան իսկ այլ են զրոյցք ծերոյն Եւկլիոնի, այլ պատանւոյն Լիկոնիդեայ, այլ ծառային Ստրոբիղոսի և այլ օրիորդին Փեդրեայ. սոյնպէս ըստ հասակի, ըստ աստիճանի և ըստ վիճակի՝ այլ և այլ պիտին լինել զուարճախօսութիւնք 'ի քաղաքական կենցաղավարութեան: Կայսրն Կարոլոս հինգերորդ մեծապէս զուարճանայր ընդ ծիծաղաշարժ զրոյցս գաճաճի ուրումն պողոնիացւոյ, Ադրիանոսի սենեկապետի, և Պեդրիկկեայ Սանտերբասայ իւրոյ ծաղրածուի: Բայց թէ յասպետաց ոք ասէր ինչ այնպիսի ընդ կատակս, խոժոռութեամբ սաստեցուցանէր զնա. և այլ ոչ հանէր զնա յաւագութիւնս. որպէս գրեն 'ի վարս նորա: Իշոյն Եսովպոսի տեսեալ թէ սկունդ նորա ոստոստէր առ ոտս՝ քծնելով զտէրամբ իւրով, և պարգևս ընդունէր 'ի սեղանոյ նորա, ասէ ընդ միտս, եթէ և ես նոյնօրինակ կայթեցից առ տէրամբս, նոյն բարեմասնութեան վիճակ և ինձ դիպեսցի: Ապա յոտն յարուցեալ քծնել զնովաւ, զտէրն և զաթոռ նորա յերկիր կործանեաց. և փոխանակ պարգևի արժանացաւ մահակի: Լուդովիկոս մետասաներորդ արքայ գաղղիացւոց մինչև էր թագաւորեալ՝ աքսորեցաւ 'ի Բուրգունդիա. և որսոյ աղագաւ գնայր սակաւ 'ի հիւղ աղքատ շինականի ուրումն զուարճախօսի, ընդ նմա ընտանեբար ուտէր 'ի շողգամոց նորա զմեծամեծս: Իբրև եհաս նմա թագաւորել, չոքաւ շինականն 'ի խնդակցութիւն, և զուարճախօսութեամբ առաջի արար նմա շողգամ մի մեծ յոյժ: Թագաւորն ընկալաւ զայն խնդամիտ, և ետ պահել յիւրում մառանի, առատաձեռնեալ ընծայաբերին հազար դահեկան ոսկի: Յետ աւուրց ինչ մի ոմն յասպետաց լուեալ զհռչակ առատաձեռնութեան, ընծայեաց արքային երիվար մի, զուարճախօս զրուցիւք ինչ: Թագաւորն փոխարէն առաքեաց նմա զայն շողգամ՝ պատատեալ 'ի թուղթ սպիտակ: Տեսեալ ասպետին զիւր կրկնակի այպանութիւն, հասոյց յականջս արքային զմեծ զիւր գանգատ. որ և ետ պատասխանի. Ասասջիք նմա ոչ իրաւացի է գանգատ.

զի շողգամն արժէ ինձ հազար դահեկան ոսկի. և քոյդ ձի չարժէ և ոչ վեց։

Երրորդ կանոնն կարի յոյժ դժուարին է այն, զի յերկուբեսցին զուարճախօսութիւնք ըստ անձանց առ որս ասին։ Ըստ պէսպէս դիմաց մարդկան պէսպէս են և նոցա բնաւորութիւնք. ոմանք են ուրախ և ոմանք տրտում, ոմանք գիտունք և ոմանք ադէտք. ոմանք հեզք և ոմանք բարկացողք, է որ ախորժէ զայս ինչ նիւթ, և է որ ախորժէ զայլ. է որ խոժոռի ընդ այս ինչ, և որ խոժոռի ընդ այլ։ Ապա մեծի զգօնութեան պէտք են վարել ըստ իւրաքանչիւրում բնաւորութեան 'ի զուարճախօսութիւնս, զի ամենեքին իցեն հաճ, և մի ոք խոժոռեսցի։ Վասն այսորիկ զզուարճախօսն կոչէ Արիստոտէլ 'ի յունական բարբառ εὐτράπελος, որպէս թէ Դիւրադարձ և աջողակ. որ ըստ իւրաքանչիւր յօժարութեան յերիւրի, որպէս հայելին ըստ իւրաքանչիւր դիմաց։ Ընդ գիտնաւորի՝ գիտնաւորս վարէ զրոյցս, ընդ սրամտի՝ սուրս, ընդ պարզամտի՝ դիւրիմացս, ընդ տիկնայս՝ պարկեշտս, բայց առաւել ևս ընդ տեառն և ընդ իշխանի՝ պատկառաւորս. զի չէ ինչ աներկիւղ խաղալ ընդ առիւծուն, թէպէտ և ընտանի։ Օգոստոս շարագրեաց կծանող ինչ կատակս ընդդէմ Պողլիոնի, զգրգռել զնորա սրամիտ հանճար։ Բայց Պողլիոն ոչ կամեցաւ տալ պատասխանի, ասէ. Ոչ կամիմ զընդդէմն գրել այնմ, որ կարող է զիս տարագրել։ Հռամիրոս արքայ Սպանիոյ այնչափ էր պարզամիտ, զի պարզամտաց իսկ թուէր պակասամիտ. վասն այսորիկ բազում ազնուականք զմեծութիւն փառաց նորա արհամարհէին, և ծիծաղաշարժ զրուցիւք անուին զնա յառակս։ Բայց և այնպէս՝ եղև նորա այնչափ հանճար, զի գիտաց արտասանել զայս զրոյց. Են ոմանք որ շատախօսեն, այլ առ հնչիւն ինչ զանգակի առ հասարակ համրասցին։ Եւ այն եղև հնչիւն, զի 'ի վաղիւ անդր երևեցաւ 'ի հրապարակի մեծ ինչ զանգակ 'ի վերայ դահաւանդի, և առ եզերբ զանգակին շուրջանակի բազում գլուխք աւագանւոյն, որոց ծաղր արարեալ էր զնա. և 'ի վերայ զանգակին թուղթ գրեալ զայս օրինակ. Ոչ գիտէ աղուխակն, ընդ ում խաղայ։ Այս եղև զանգակն, որ համրացոյց զամենեսին, զոմանս մահուամբ և զոմանս ահարկութեամբ, և այս զուարճախօսութիւն զզուարճախօսութիւնս լռեցոյց։



## ԳԼՈՒԽ ԺԲ.

### Յաղագս գեղջկութեան և խեղկատակութեան։

Լուար արդ թէ գեղջկութիւնն է պակասութիւն, և խեղկատակութիւնն է աւելադանցութիւն զուարճախօսութեան։ Եւ առ առնելոյ ատանօր զերկաքանչիւրոցն տարաորոշութիւն, ասեմք։

Գեղջկութիւնն յառաջ գայ յերկուց այլ և այլ պատճառաց, որք մի քան զմի են մոլեկան։ Վասն զի ոմանք 'ի զուարճախօսութիւնս գեղջուկ են առ 'ի չգոյէ մտաւորութեան։ Զունելով խորախորհուրդ միտս 'ի խօսել ձևով, հազիւ գիտեն խօսել բուն եզերօք, թող թէ ճանաչել զնրբութիւն զրուցաց, ցուցեալ այնուիկ թէ կոշտ է նոցա բնաւորութիւն և գեղջկական։ Վասն այսորիկ որպէս ձձիք ծնեալք 'ի նեխոյ ոչ երբէք ընտանենան, նոյնպէս այսպիսի տրուպ և անաւագ մտաւորութիւնք սիրեն առաւել զգեղջկական առանձնութիւնս քան զքաղաքային հաղորդութիւն. նա և 'ի գեղջկաց իսկ միջի լինին յառակս, և շարժեն 'ի ծաղր անմտութեամբ իւրև զկիմոն, զորմէ այլուր խօսեցաք։ Բայց զայսպիսեաց չէ արժան ատանօր խօսել. զի պակասութիւն սոցա չէ մոլեկան, անհնար գոլով անմտի լինել զուարճախօս։ Է միւս ևս գեղջկութիւն մոլեկան, զի է կամաւոր, յառաջ եկեալ ոչ 'ի պակասութենէ մտաւորութեան, այլ 'ի կարի իմն լրջութենէ։ Վասն զի որպէս երբեմն ազնուական աղայք սնուցեալք 'ի գաղանաց 'ի վայրի՝ եղեն վայրենիք և գաղանաբարոյք, նոյնպէս ազնուական մտաւորութիւնք ինչ այնպէս խոյանան յուսումն և 'ի լուրջ զբաղմունս, մինչ այլ ոչ քաղցրանան նոցա իրք որ ընդ խաղ, և 'ի ներգոյանալ 'ի նոսա ունակութեան՝ հակառակի զուարճախօսութեան, իբրև զանհամբոյր և զվայրենի մարդիկ ոչ առնուն և ոչ տան ճաշակ քաղցրութեան յուրախական կենցաղավարութիւնս։ Այսպիսի էր Քսենոկրատէս [200] Ագելաստոս ասացեալ, այս է անծիծաղ, փիլիսոփոս այնպէս ծանր՝ զի պատկեր նորա կամ մտաբերութիւն կերպարանաց նեթ կազմ յարդարէր զերեսս և զխրատս կարի իմն զուարթս։ Վասն այսորիկ Փիլիպպոս Մակեդոնացի 'ի հրաւիրելն յուրախութիւնս կոչնոց զամենայն զդեսպանս աթենացւոց՝ զպաշտօնակիցս նորա, զնա միայն չհրաւիրեաց, զի մի ծանրութեամբ իւրով տրտմեցուսցէ զուրախութիւնն։ Բայց է միւս ևս գեղջկութիւն և ևս մոլեկան, հիմնեալ 'ի թիւրութիւն ինչ բնաւորական խորշելոյ յընկերական կենաց, իբր

զՏիմոնն մարդատեաց զոր յիշատակեցաք 'ի խօսելն զսիրողութենէ կամ զհաճոյականութենէ: Որ և եղև մեծ հրէշ բնութեան, և 'ի տաղ օձի զկերպարան մարդկան [201]: Արդ սոսափիւնք թէպէտ և ունիցին մտաւորութիւն 'ի խօսել զոյգս ընդ խաղ, բայց և այնպէս թէ լսեն ինչ այնպիսի, ատեան. զի ատեան զայն որ ասէ, և թէ ինքեանք ասեն ինչ՝ այնպիսի ցասմամբ ասեն և դառնութեամբ, զի ոչ կարէ թքանել ինչ քաղցր, որ ունի 'ի բերանն լեղի դառնութեան: Թէ լռեն, չար խորհին. թէ այլ ոք լռէ, զլռել նորա կասկածաւոր համարին: Թէ խօսին, վիրաւորեն. թէ այլ ոք խօսի, վէրս ընդունին. զի չարախորհն կասկածաւոր գոլով, որովհետև չզրուցէ ինչ բայց խեթիւ, կարծէ թէ և այլք խեթիւ զրոյցս առնիցեն: Մինչ զի թշնամի գոլով սոցա մարդակային կենակցութեան, արժան է թէ կենակցեսցին միայն ընդ գազանս, այսինքն է ընդ ինքեանս:

Իսկ խեղկատակութեան նոյնպէս երկու են տեսակք, երկաքանչիւրն աւելազանցք 'ի զուարճախօսութեան. բայց մին 'ի բնաւոր շատախօսութենէ, և միւսն 'ի ցանկութենէ շատկերութեան 'ի սեղանս մեծամեծաց: Այն յատուկ է արանց ծոռոմախօսից, բայց ազատաց, և այս ծաղրածուաց և ցածուն վատատոհմից. վասն այսորիկ 'ի զուարճախօսութեան մասինն առաւելու յանխտիր քանակն աւելորդաբանութեամբ, և սա 'ի լրբենի որակն ցոփաբանութեամբ: Զոր օրինակ ստամոքս, որոց պակասին թիւրաթեկ մանրերակք, ոչ կարէ պահել զկերակուրն, նոյնպէս մտաւորք՝ որոց պակասին խելք, ոչ կարեն զուսպ ունել զիմացմունս, և սոքա են շատախօսք: Այլք որոց փոյթ է ծիծաղեցուցանելով զայլս ձգել օգուտ, չհայլին 'ի պարկեշտութիւն և 'ի համեստութիւն զրուցաց կամ արարից, վասն վաճառելոյ իւրեանց զպատիւ ընդ յուսոյ, և սոքա են պորտաբոյծք: Բայց երկաքանչիւրոցն շաղակրատանք բերեն նողկանս վասն երկուց պատճառաց: Մի զի անհնար գոլով խօսել միշտ մտաւորութեամբ և խօսել բազումս, պատահէ նոցա, որ ինչ պատահեաց հռովմայեցւոյ ումեմն հրապարակախօսի, յիշատակելոյ 'ի ծերոյն Սենեկայ, որոյ ոչ կամեցեալ խօսել ինչ անուրբ, կամ զնոյն նրբութիւնս յեղյեղէր, կամ փոխանակ նրբութեանց աղաւաղս կցկցէր. Արդ եթէ բերկրութիւն նուրբ զրուցաց ծնանի 'ի սրութենէ և 'ի նորութենէ, ոչ ինչ այնպէս նողկացուցանէ զհանճարաւոր միտս, որպէս նրբութիւն աղճատ և անալի: Երկրորդ պատճառն է, զի որովհետև գոյզն հեռաւորութիւն է 'ի մէջ ծիծաղականի, և 'ի մէջ անհամեստի կամ կծանողի, և զի անհնար է զրուցին լինել սուր, որ ոչ խայթիցէ, վասն այսորիկ 'ի համարձակ լեզուաց ամենայն ոք երկնչի, և յորմէ ամենեքեան երկնչին, ամենեցուն է ատելի:



Արդ 'ի տարատրոհել զայսոսիկ երկուս ծայրս զուարճախօսութեան, ասեմք թէ 'ի գեղջուկն առաւելու սևամաղձն, որ առնէ զնա կարի իմն մենակեաց և տխուր: Իսկ 'ի խեղկատակն առաւելու արիւն մաղձային, որ առնէ զնա մեծապէս կենակցելի և զուարթ: Ի նորա դէմս են հետք գեղջկական տրամութեան, ճակատ կնճռեալ, աչք տխուրք, գոյն սևորակ, ձայն թանձրագանգաղ: Ի սորա յաչս և 'ի բերան կերպարանք ծիծաղոտի, երես տներես, գոյն շառագոյն, ձայն սրաձայն. զի երկաքանչիւրոցն որ ունակութիւն է գործելոյ այն տրամադրութիւն է ունականն: Նա 'ի զգեստս է անփոյթ, 'ի մարուսն անգարման. սա զգուշաւոր և յարդար. զի մին փախչի 'ի քաղաքական կենցաղավարութենէ, և միւսն 'ի խնդիր է նորա: Գեղջուկն ճիշդ է 'ի խօսս, և յաւէտ կծանող քան անհամեստ. խեղկատակն ճոխ է 'ի խօսս, և յաւէտ անհամեստ քան կծանող. զի նա է առաւել խորամանկ և ծանր, սա է առաւել պարզամիտ և ծիծաղաշարժ. և զազրութիւնն է բուն նիւթ ծաղու: Զհուսկն ասացից. գեղջուկն ընդ չքոտի խօսս կցկցէ և չքոտի արարս, վասն լինելոյ իւրոյ առաւել յարեալ 'ի տեսականն քան 'ի գործնական. բայց խեղկատակն այնպէս ճոխ է յակնարկութիւնս և յարարս, որպէս 'ի խօսս ծիծաղաշարժս. վասն այսորիկ նմանաբերեալ զայն մարդոյ աղճատախօսի և անսանձ զազրոտւոյ և զարարողութիւնս միմոսականս, և զարարս անարգս և տըգեղս, միտ դնէ ծիծաղականի քան վայելչականի: Բայց թէ կամք իցեն քոյ տեսանել յերկուս փիլիսոփայս երկուս պատկերս հակակայս զգեղջկի և զխեղկատակի, դիր առաջի աչաց զերկուս այլևայլ բնաւորութիւնս՝ զՀրակլիտոսի և զԴեմոկրիտոսի [202], որոց առաջինն զամենայն խաղարկութիւն փոխէր յեղերերգութիւն. և երկրորդն զամենայն եղերերգութիւն փոխէր 'ի խաղարկութիւն. զի յամենայնէ զոր տեսանէին, նա կարի իմն լրջութեամբ ձգէր նողկանս և դառնութիւն, և սա ձգէր զուարճախօսութիւնս և խաղս: Տխուրն լայր ընդ ծիծաղ զուարթացելոյն, և զուարթն ծիծաղէր ընդ լալիւն տխրելոյն: Մինչև չգիտել իմաստնոց թէ ո՛ր իցէ առաւել անմիտ. բայց միայն, զի մին միշտ ծիծաղելով կեայր ուրախ, և միւսն միշտ լալով հալէր և մաշէր:

# ԳԻՐՔ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ԱՄՕԹԽԱԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՅՐԻՑ ՆՈՐԱ

### ԳԼՈՒԽ Ա.

*Թէ զինչ իցէ ամօթխածութիւն:*

Երկուս սաստիկ կիրս եդ բնութիւնն 'ի զգայական բաղձանս, զմի առ 'ի փախչել 'ի ցաւագին առարկայից թէպէտ և պատուաւորաց և զմիւս առ 'ի փախչել յամօթական գործոց թէպէտ և բերկրականաց. և սոքա են Վեհերոտութիւն և Ամօթխածութիւն: Երկաքանչիւրն են վրդովութիւնք ցասմնականին զերկիւղիւ: Բայց նա է երկիւղ անարգ և ծառայական, և սա երկիւղ ազնուական և ազատական: Զի որչափ պարսաւելի է որ երկնչի 'ի պատուաւոր վտանգից, այնչափ գովելի է որ խորշի 'ի վատանուն գործոց: Երկաքանչիւր երկիւղ ընդ ամբոխեն զմիտս, փոխեն զերեսս, բայց նա 'ի մոխիր և սա 'ի հուր. նա դեղնեցուցանէ և սա շառագունէ: Յախտակրիլ մարդոյ, բնութիւնն առաքէ զարիւնն յօգնութիւն յախտակրութեանն տեղի: Եւ զի յերկիւղի մահու ախտակրի սիրտն որ աղբիւրն է կենաց, և յերկիւղի ամօթոյ ախտակրին երեսք որ տեսարան են պատուոյ, վասն այսորիկ յերկիւղի մահու արիւնն թողեալ զերեսս՝ վազէ 'ի սիրտ, և յերկիւղի ամօթոյ թողեալ զսիրտ՝ վազէ յերեսս: Կեանքն է ներքին ինչ բարի, և վասն այսորիկ 'ի պաշտպանութիւն նորա՝ արիւնն հաւաքի 'ի մակերեւութէն 'ի կեդրոն: Պատիւն է արտաքին ինչ բարի. վասն այսորիկ առ ընդառաջ ելանելոյ նմա՝ արիւնն ձգի 'ի կեդրոնէ 'ի մակերեւոյթն: Զհուսկն ասացից, յամօթխածութեան արիւնն վազէ յաչս. վասն զի պահապան գոլով սոցա, դէտ են պատուոյ և անարգոյ: Ապա առ սոսա առաւելապէս առաքէ բնութիւնն զօգնութիւն, 'ի ծածկել զնոսա ծիրանագոյն ինչ քօղով. և ձեռք ընթանան 'ի թաքուցանել զնոսա, զի մի տեսցեն և մի տեսցին. զի թէ հային, յանցաւորութիւն խոստովանին. և թէ



այլք 'ի նոսա հային, դատն է նոցա: Վասն այսորիկ Արիստոտէլ և Պղատոն յԵւրիպիդեայ բանաստեղծէ առին զայն առած թէ՝ Յաչս բնակէ ամօթ, զի ոչ կրէ ամօթ՝ որ աչս ոչ ունի: Նմին իրի թէ սիրտն իրագէտ է յանցանաց, այնպիսոյն աչք յերկիր 'ի խոնարհ նային, որպէս թէ կամելով ծածկիլ ընդ երկրաւ, զի մի տեսցի. զի ազնուական և պատուաւոր սրտի դիւրին է զմահ յանձն առնուլ քան զվատանունութիւն: Կիրք չեն առաքինութիւնք, այլ բերմունք բնաւորականք. զի ոչ ստացանին անձնիշխան ներգործութեամբք, այլ յառաջեն քան զմարդակային տրամաբանութիւն. ոչ կատարելագործեն զհոգի, այլ խռովեն զսիրտ և այլայլեն զերեսս: Ապա ըստ այսմ զամօթխածութիւն վասն այսց պատճառաց անմարթ է կոչել առաքինութիւն. ևս առաւել, զի թէպէտ պտուղն է բարի, այլ պատճառն՝ չար, արմատ ունելով 'ի գործ ինչ անարժան. և ոչինչ պտուղ չար պատճառի՝ բացարձակ կոչի բարի: Այլ թէպէտ և ամօթխածութիւնն չէ ինչ ունակութիւն, բայց և այնպէս է բերումն բարենշան, թէպէտ և չէ կատարելութիւն, բայց է անկատարութիւն ըղձալի, և թէ չէ առաքինութիւն, է ապաշաւ ինչ 'ի մոլութենէ, և վասն այսորիկ է գովելի. և ամենայն գովելի՝ կամ արգեամբք, և կամ առանձնաշնորհութեամբ 'ի շար մտանէ բարոյական առաքինութեանց:

Ճշմարիտ է թէ այս կիրք բաժանի յերկուս տեսակս, այսինքն է յԱմօթխածութիւն և յԱմօթ. մին ծագէ 'ի միւսմէ, և մին անկատարագոյն է քան զմիւսն: Ամօթխածութիւնն յառաջէ քան զամօթական գործ. ամօթն զհետ գայ. նա է որպէս դաստիարակ որ քեցէ զմարդ յանարժան գործոյ. սա է ձաղկիչ, որ գանէ զհոգի յետ գործելոյ նորա զայն: Զամօթխածութիւնն Արիստոտէլ յատկապէս սահմանէ յայսմ վայրի՝ Երկիւղ վատանունութեան. զի յառաջէ քան զնա: Նոյն՝ զամօթն 'ի հռետորութեան սահմանէ՝ Ցաւ վատանունութէ, զի հետևորդ է նորա: Մինչ զի խառն է 'ի մէջ երկոցունց այսց կրից, որպէս 'ի մէջ երկիւղի սխալանաց և երկիւղի պատժոց: Եւ այս խառն յայտնի երեւի 'ի պէսպիսակ կարմրութեան, զոր երկաքանչիւրն ծաւալէ յերեսս: Երկուս տեսակս ծիրանւոյ նշանակեն բնախօսք պէսպիսակս արժողութեամբ և գունով. մին է ծովու ծիրանին, որ երեւի արիւն ինչ պայծառ՝ որպէս տղայական հասակի. վասն որոյ և է մեծարգի. միւսն է ծիրանի այլոյ խեցեմորթի խառն ընդ լրթագոյն կապուտակի. որպէս արիւն ինչ ապականեալ և մածուցեալ. վասն որոյ և անարգ: Արդ ամօթխածութիւն նկարէ զծնոտս համեստ օրիորդաց պարկեշտ իմն կարմրութեամբ նման ծովու ծիրանւոյ. իսկ ամօթն ներկանէ համակ զերեսս գզջականաց լրթագոյն շառագունութեամբ իմն նման կարմրութեան միւ-

աոյ խեցեմորթի: Ոչ գտին երբէք ճարտար սնգրագործք այնպէս բնաւոր ծիրանիս անուշունս 'ի սնգուրել զերեսս, իբրև զաշնուականն զայն գոյն լծորդ պարկեշտութեան, պահապան համեստութեան, արտաքին կնիք ներքին առաքինութեան: Բազում զգօնութեամբ Պիւթիա արժանաւոր դուստր Արիստոտէլի՝ իբրև հարցաւ, թէ ո՞ր գոյն թուիցի նմա առաւել անուշակ. ետ պատասխանի. Գոյն ամօթխածութեան: Բայց շառագունութիւն ամօթոյ առ կարմրութեամբ ամօթխածութեան այնչափ է անարգ և տգեղ, որպէս ծիրանին միւսոյ խեցեմորթի առ ծիրանեաւ ծովու ծիրանւոյ. զի սա է լոկ և անմեղ երկիւղ յանցանաց. բայց նա իրագէտ գոլով յանցաւորութեան, խառնէ զգոյն պատկառանաց ընդ լրթագոյն ցաւոց վատանուանութեան, որում արժանացաւ: Այլ թէպէտ և շառագունութիւն ամօթոյ անարգ է յոյժ քան զկարմրութիւն ամօթխածութեան, բայց և այնպէս ըստ իրաց ինչ է գովելի. զի առաջին գովեստն է հրաժարեալ կալ 'ի գործելոյ զչար. այլ երկրորդն է ապաշաւել 'ի չարէ որ գործեցաւն: Տեսեալ Դիոգինէսի զպատանի ոմն շառագունեալ յետ գործելոյ նորա չար ինչ, ուրախ եղև ընդ նմա, ասէ. Քաջալերեաց, որդեակ. գոյն առաքինութեան տեսանեմ յերեսս քո: Եթէ յետ մրրկեալ գիշերի սկսանին մթագին ամպք շառագունիլ, նշան է թէ օրն պարզ լինիցի. և թէ յետ վատթար գործոց երեսք շառագունին, աւետաւոր նշան է ուղղութեան: Ցորչափ է բաղխումն շնչերակի 'ի մարմնի ախտացելոյ՝ կայ յոյս կենաց. և ցորչափ՝ որ զչարն գործեաց՝ ամաչէ, առաքինութիւնն չէ անյուսալի: Զորին հակառակն՝ յետ ամօթական գործոց չամաչել՝ յայտնի նշան է անյոյս թիւրութեան վարուց: Պտուղք որք աճեն 'ի ծմակի, երբէք չժամանեն 'ի կարմրութիւն և 'ի հասունութիւն, այլ մնան խակ 'ի համ և 'ի գոյն, մինչև փտին, և որ չզգայ զամօթ և զշառագունութիւն, ցուցանէ նշան թէ գեղջկասուն է և խակաբարոյ, և դիւրամէտ յամենայն 'ի պիղծ և յանհամեստ գործս: Իսկ կարի իմն ամօթահարութիւնն՝ որով մնոտի կարծեօք խռովի միտ և չփոթի, կամ երկնչի յանպատուութենէ ուր ոչ է, և կամ 'ի կարի իմն երկիւղէ յամօթ լինելոյ՝ փախչի 'ի հրապարակական և 'ի չքեղ գործոց, և թաքչի ուր պարտն էր հանդիսանալ, և այս է տգեղ մոլութիւն: Զի այնպէս է մեղադրելի որ ոչ գործէ զոր պարտ է, որպէս այն որ գործէ զոր ոչ է պարտ:

Ի նախասացելոյ աստի մարթիս ճանաչել թէ զի՞նչ իցէ ամօթխածութիւն և զինչ ծայրք նորա: Վասն զի որ չերկնչի յամօթոյ, է անամօթ և լիրբ. որ կարի իմն երկնչի, է երկչոտ և վատասիրտ: Երկաքանչիւրն է մեղադրելի, զի նա է պակասութիւն, և սա աւելաղանցութիւն բանաւորի: Բայց որ երկնչի 'ի վատանուանութենէ ըստ պատշաճի, է ամօթխած: Մինչև լինել ամօթխածութեան Միջասահման ինչ զերկիւղիւ խրողութեանց, որք բերեն զանպատուութիւն: Ցորմէ և մարթիս ճանաչել, զի թէ չէ նա առաքինութիւն՝ սակայն նման է առաքինութեան. զի ուր գտանին երկու մոլեկան ծայրք, միջասահմանն լինի առաքինական:



## ԳԼՈՒԽ Բ.

### Ցաղագս առարկայից ամօթխածութեան :

Ամենայն մոլութիւնք են ամօթականք, զի խոտորին 'ի համեստէ: Զոր օրինակ ամենայն առաքինութիւնք են նիւթք գովեստից դրուատանաց և ներբողից, նոյնպէս ամենայն մոլութիւնք են նիւթք պարսաւանաց՝ լուտանաց և կշտամբանաց: Ամենայնն երկնէ զվատանուանութիւն, զի ամենայնն հակառակի բարի անուան: Բայց յերկուց գլխոց մոլութիւն ինչ լինի առաւել ամօթական քան զայլս, յԱնագորոյնութենէ, և յԱնհամեստութենէ: Անագորոյնք են Հայրասպանութիւն և Ոճրագործութիւն. անհամեստք, Արբեցութիւն և Վաւաշոտ ցանկութիւն: Եւ թէպէտ հայրասպանութիւնն է առաւել քստմնելի քան զանհամեստութիւն, բայց և այնպէս անհամեստութիւնն է առաւել ամօթական քան զհայրասպանութիւն: Զի 'ի սմա զազրութիւնն է խառն ընդ գազանութեան, որ առնէ զգործն դժուարին. և 'ի նմա անարգութիւն գործոյն պատճառէ զմեծագոյն շառագունութիւն: Եւ յայս սակս, յամենայն այլ մոլութիւնս ծայրք անարգագոյնք են առաւել ամօթականք քան զայնս՝ յորս երևի ինչ դժուարին. թէպէտ և առաւել վնասակարք իցեն և գազանայինք, որպէս այլուր ցուցաւ: Առաւել ամօթալի եղև անմտութիւն Կղոդիոսի քան զխորամանկութիւն Աննիբաղայ, կաշառակերութիւն Սիսամնի քան զբռնաբարութիւն Ամուլիոսի. կծծութիւն Մենիպպոսի քան զշռայլութիւն Ապիկիոսի. վէհերոտութիւն Արտեմոնի քան զյանդգնութիւն Մանլիոսի. դաւաճանութիւն Պեղոպայ քան զանգթութիւն Միհրդատայ [202]: Ապա քանզի անժուժկալութիւնն արբանեկէ զգայարանաց անարգագունից, այսինքն է ճաշակելեաց և շօշափելեաց, յայս սակս համարեալ է այն մոլութիւն առաւել ամօթական, մանաւանդ կանացի բնութեան, որում զգաստութիւն և պարկեշտութիւն են սեպհական և գլխաւոր զարդ: Վասն այսորիկ իմաստասէրք ոմանք կոչեն զամօթխածութիւնն ամբողջական մասն ժուժկալութեան. զի թէպէտ կիրք ամօթ-

խածութեան երկիւղ ինչ գոլով. վերաբերի առ ցասմնականն, սակայն և այնպէս արքանեկէ ժուժկալութեան, որ է 'ի ցանկականն. բայց իրօք ծնանի նա յամենայն մոլութեանց. որ և յայտնապէս երևի. ամենայն գործ անարգ՝ յառաջ եկեալ 'ի մոլութենէ ինչ է ամօթական: Ամօթ է ամենեին ժխտել զաւանդն, զի է գործ հակառակ արդարութեան: Զէնընկէց լինել 'ի պատերազմի, զի է հակառակ արիութեան, Հարկս պահանջել 'ի չնչին իրաց, զի է հակառակ առատաձեռնութեան մեծի իշխանի. և թէպէտ յունչս Վեսպասիանոսի չէր ինչ ժահահոտ արծաթն կուտեալ 'ի լուալեաց, բայց յունչս ժողովրդեան ժահահոտ էր յոյժ ընչաքաղցութիւն նորա: Եւ ոչ միայն գործք, այլ և նշանք յիշատակութեան ամօթալի գործոց են ամօթականք: Կղոդիանոս յամօթ առնէր զՆեարոպիոս հիւպատոս, 'ի դէմս ածեալ նմա զկապուտակ սալս շղթայից և ծառայական կռճեղաց. և Կիկերոն Անտոնիոսի զնիշս համբուրի իւրոց սիրուհեաց, և Անտոնիոս Օգոստոսի՝ զկեղտ մատանց հաւու նորա յոսկւոյ լումայափոխութեան, այսինքն յանարգ արուեստէ վաշխառութեան: Եւ նոյն դէպք որք ումեմն էին 'ի պատիւ, այլում լինին ամօթական, ըստ պանծալի և ըստ ամօթական պատճառաց: Որպէս ցաւին վէրք ընկալեալք 'ի պատերազմի կամ 'ի փախըստի. բայց այնոքիկ են նախանձելի, և այսոքիկ քամահանաց արժանի: Որպէս տգեղ էր կորութիւն Իլոսի և Դեմոկրիտոսի, մինչև քստմնիլ տեսողաց զայն ջըցիր խոռոչս երկաքանչիւր դիմաց, որպէս մատանիս անգոհարս և ճակատս անպատուհանս: Բայց նոյն տգեղութիւն 'ի Դեմոկրիտոս եղև պանծալի, և յԻլոս ամօթալի զի սա կուրացաւ 'ի սեղանակապուտ յափշտակութեան Պալադիոնին [204], և նա կուրացաւ առ միտ դնելոյ փիլիսոփայական իմաստից, փակեալ զաչս մարմնոյ 'ի բանալ զաչս հոգւոյ: Վասն որոյ յիրաւի էր ասել Եւրիպիդեայ թէ յաչս Իլոսի բնակէ ամպարշտութիւն և ամօթ, բայց յաչս Դեմոկրիտոսի իմաստասիրութիւն և պանծանք:

## ԳԼՈՒԽ Գ.

*Յաղագս պատճառի ամօթխածութեան:*

Քաջ խտիր է ընդ մէջ պատճառի ճշմարիտ առաքինութեանց, և ընդ մէջ պատճառի ամօթխածութեան. զի նոցայն պատճառ է համեստն, և սորայս զաղէրն. իբր զի ծնանի ամօթխածութիւնն 'ի տգեղ ինչ գործոյ եղելոյ կամ լինելոյ



որպէս ասացաւ: Մեծ առանձնաշնորհութիւն արար յառաջատես բնութիւնն մարդկան միայն կարող լինել ամաչել. զի մարդ միայն զգայութիւն առնու պատուոյ: Անասունք որք գործեն վասն հեշտութեան և ոչ վասն պատուոյ, զգան զերկիւղ, այլ ոչ զամօթ: Այպա երկու ազգք են մարդկան, որք ոչ զգան զամբոխումն ամօթոյ. մեծապէս առաքինին և մեծապէս մոլին. զի մեծապէս առաքինին՝ չունի պատճառ ամաչելոյ, և մեծապէս մոլւոյն լճարեալ է ամօթ: Նա չերկնչի կորուսանել զպատիւ, զի ոչ մեղանչէ. սա մեղանչէ անամաչ, զի յոչինչ համարեալ զպատիւ չերկնչի կորուսանել զայն զոր ոչն ունի: Վասն որոյ յատուկ է ամօթխածութիւնն բարիոք սրտի, այլ ոչ կատարելոյ: Զի որովհետև պատիւն է բարի ինչ կարծեաց, միջակային ընդ մէջ բարեաց զգայութեան և բանի, ամօթխածութիւնն է միջակային ընդ մէջ անբանութեան և առաքինութեան, և շարժի ըստ չափու ըմբռնման անպատուութեան: Ի դէմս կոչացեալս վատանունութեամբ՝ չազդէ ինչ ամօթխածութիւն. և ուր մեռեալ է ամօթխածութիւն, ծնանի լրբութիւն: Սեպհական դեռահասակաց է ամօթխածութիւն և ոչ ծերոց. զի 'ի դեռահասակս փափկութիւն մորթոյ, և նրբութիւն ծիրանափայլ արեան՝ տայ կարմրութեան վաղ աճապարել 'ի ծնօտս, որք թէ ցուրտ են և խորշոմեալ, ոչ գիտեն շառագունիլ: Թող զայն, զի դեռահասակք չև են ունակացեալ 'ի մոլութիւնս, և ծերոց պարտ է ունակ լինել առաքինութեանց: Վասն այսորիկ ամօթխածութիւնն գովի 'ի դեռահասակս և ոչ 'ի ծերս. զի 'ի նոսա է ծաղկեալ ինչ յոյս ծերական առաքինութեան, և 'ի սոսա է լռելեայն ինչ կասկած մոլութեանց ես և մանկականաց: Երեք ինչ ըղձանայր Սոկրատէս թէ իցէ 'ի դեռահասակս. պարզմտութիւն 'ի սրտի, լռութիւն 'ի բերանն, ամօթխածութիւն յերեսս. և երեք ինչ 'ի ծերս. ծանրութիւն յերեսս, քաղցրութիւն ի խօսս, խոհեմութիւն 'ի սրտի:

Օտարոտի իմն այլափոխութիւն եղև յեղափոխութիւն բարուց ծանրակաց և արգոյ անձանց, եւ առաւել երկուց Կատոնից [205], որք յառաջ հասակի հայելի լեալ առաքինութեանց և օրինակ վարուց, 'ի ծերութեան եսուն զանձինս մին հանապազորդ արբեցութեան, և միւսն գիշերային տարփանաց: Գայթակղէին մանկահասակք 'ի Կատոնէ խստիւ խրատեալք, ամաչէին որդիք 'ի Կատոնէ սրբութեամբ սնեալք, զարմանային Հռովմայեցիք 'ի Կատոնի օրինակէ նորոգեալք: Պլուտարքոս մեծ փիլիսոփայն բարոյական 'ի վարս նոցա զզարմանս լուծանէ, ասէ. Հասակն վաստակաբեկ և նեղեալ 'ի լուրջ զբաղմանց մտաց՝ խնդրէր զօրանալ հեշտութեամբք զգայութեան: Վասն այսորիկ ոչ ամօթ համարէին զայն ինչ որ 'ի դեռահասակս էր ամօթալի. վասն զի վաղու և մթե-

րեալ նոցա պատիւ գործովք հասարակաց օգտի, չէրկնչէին զայն կորուսանել, բայց եթէ գործովք հասարակաց վնասու: Բայց Արիստոտէլ 'ի խօսելն զվարուց դեռահասակաց և ծերոց, յերկրորդ գիրս հռետորութեան, յայս կնքէ զբանն թէ ամօթխածութիւնն յատուկ է մանկանց և ոչ ծերոց. զի մանկութիւնն փառամոլ՝ նախամեծար ընտրէ զպատիւ քան զդիւրութիւն, իսկ ծերն երախտաւոր նախամեծար ընտրէ զդիւրութիւն քան զպատիւ:

Պարտ է հայել և յայն, թէ ոչ ամենայն շառագունութիւն է ամօթխածուի: Եւ յորոց առաւել պարտ է երկնչել յորժամ շառագունին, քան յորժամ դեղնին: Այսպիսի էր Սիղղա, ասէ Սենեկա: Այսպիսի էր և ապերախտ աշակերտն Սենեկայի[206]. որոյ դէմք ըստ անուանն և հոգւոյն, իբր գազանայր, թուէր տիղմ թաթաւեալ յարեան: Չէր այն շառագունութիւն ամօթխածութեան, այլ ցոյց անգթութեան: Ծիրանագոյն գրօշ պարզեալ յապարանս նշան էր մարտի. և կարմրութիւնն երևեալ 'ի դէմս Սիղղայ և Ներոնի գուշակ էր կոտորածի: Զի յայնժամ թիւրեալ բնութիւնն 'ի գունս տայր զշառագունութիւն, 'ի տալ տեղի գազանութեան: Արիւն արեան էր գուշակ. զի արիւնռուշտ դէմք յայտ առնէին զարիւնահեղ բարս:

## ԳԼՈՒԽ Դ.

*Թէ որո՞վ եղանակաւ գործիցէ ամօթխածն*

Եղանակն հաստատեալ է յամաչել յանձանց՝ յորոց պարտ է, և յիրաց՝ վասն որոց պարտ է և որչափ պարտ է: Ոչ ոք ամաչէ վասն առաջի լինելոյ անասնոց կամ քարանց կամ պատկերաց՝ յորժամ չար գործէ. բայց եթէ գուցէ երկչոտ խիղճն մտաց համարիցի թէ յայն անասունս իցէ բան մարդկային, և յայն արձանս հոգի և կեանք: Բազում անգամ նկարեալ պատկերք՝ երկչոտ երևակայութեան թուին կենդանի սկզբնատիպք. որպէս դիպէր Կասանդրոսի 'ի տեսանել զպատկեր Աղէքսանդրի վաղու եւս մեռելոյ: Ամպարշտին Թէոդորիկոսի, յետ հատանելոյ նորա զպատուական գլուխ Սիմաքոսի, գլուխ ձկան մեծի զոր առաջի արարին նմա 'ի սեղանի թուեցաւ գլուխ Սիմաքոսի, յորմէ և մեռաւ նա առ երկիւղի: Նոյն իսկ զօրութիւն երևակայական որ երևեցուցանէր նմա զյանցանս յանմեղութեան Սիմաքոսի, երևեցոյց նմա և զիւր մահ 'ի խորտիկս անդ. այլ դէպք ինչ եղեն այնք երևակայութեան:



Ապա ամենայն ոք ամաչէ յայնց յորոց երկնչի. որպիսի են ծնողք, ուսուցիչք, և իշխանաւորք: Եւ յայնց զորս արգոյ համարի, և յաչս որոց արգոյ լինել ըղձանայ. որպիսի են առաքինիք, ջանակիցք, ժողովուրդն և օտարք: Եւ յայնց որք կարող են վատահամբաւել զնա 'ի վեր հանելով զբանն. որպէս տղայք, նախանձոտք, թշնամանադիրք, ծաղրածուք: Վասն այսորիկ գեղեցիկ իմն հնար անձնապահ լինելոյ յամօթական գործոց՝ ուսուցին իմաստունք թէ իւրաքանչիւր ոք համարեսցի ընթերակաց ունել գործոց իւրոց զմեծարու ոք և զարգոյ դէտ, Զի ոչ է հնար զթիւր ինչ գիծ ածել յուղղութիւն, առանց առաջի ունելոյ զուղիղն: Այն ինչ կամէր ծերակոյտն Աթենացւոց գրել վճիռ մեծ զբաշխից կալուածոց Սամիացւոց, Կիդիադէս մեծանուն ատենաբան աղաչեաց զատեան ծերակուտին համարել թէ ամենայն Յունաստան առաջակայ իցէ վճռոյն: Ցայամ ազգարարութենէ 'ի միտս եկեալ այն զգօն ոգիք, և համարեալ թէ անդ յատենի կան եօթն թագաւորութիւնք, և զտոմսէն կախեալ կայ յարգ կամ վատանունութիւն ծերակուտին, նախամեծար ընտրեցին զիրաւունս, քան զիւրեանց կիրս, թէպէտ և սաստիկս: Սենեկա խրատ ետ իւրում Լուկիլիոսի առաջի նկարել զԿենոնիոս կամ զԼելիոս, զորս համարէր նա երկնաւոր գաղափարս ուղղութեան[207]: Այլ ո՞ր զօրութիւն իցէ առաւել ազդական. ցնորական ներկայութեանն մահկանացուի, թէ ճշմարիտ և անհրաժեշտ ներկայութեանն Աստուծոյ անմահի, որ ոչ միայն զարտաքին գործս, այլև զներքին գիտմունս, ես և 'ի խաւարի յայտնի տեսանէ, և ընդ գիր անցուցանէ: Հեթանոսք իսկ ունէին երկիւղ և շառագունութիւն յԵլէնքոսէ Աստուծոյ, զորմէ առասպելէին թէ տեսանէ զամենայն գործս անարժանս և գրէ զամենայն 'ի տումարի. զի պատուհաս 'ի վերայ ածիցէ յիւրում ժամանակի: Բայց թէպէտ և յերկինս և յերկրի չէր ոք դիտող մարդկային ապիրատութեանց, սակայն և այնպէս և պարտ է մարդոյ ըստ խրատուն Պիւթագորայ ամաչել յանձնէ, որում 'ի գործելն զչար մեծապէս նախատինս գնէ և թշնամանս: Վասն այսորիկ Աթենացիք տաճար կանգնեցին պատկառանաց. զի թէ պակասեսցի յաշխարհէ ամենայն աստուածավախ երկիւղածութիւն, գէթ նոյն ինքն ամօթխածութիւնն ուղիղ խղճի մտաց կալցի զտեղի աստուածավախ երկիւղածութեան: Ցամրափակ վայրի, 'ի մենակեցիկ անապատի, 'ի խաւար գիշերի մտացին տեսանէ զինքն, և տեսեայ զիւր չար գործս: Որ ամաչէ յայլոց և ոչ յանձնէ, ունի զերկիւղ այլ ոչ զամօթ. զի հայի 'ի պատիժն, այլ ոչ 'ի յանցուածն: Մեծ մոլութիւն է, որպէս ասացաւ, ամաչել յիրաց՝ որ չեն ամօթալի, և չամաչել յամօթալեաց: Կատոն Ուտիկեցի, որ չէր ինչ ընդհատ 'ի

Նախահաւոյ իւրմէ 'ի մեծէն Կատոնէ, յորժամ Հռովմայեցիք 'ի տօնախմբութիւնս շքեղ հանդիսանային ոսկեհանդերձ և ծիրանազգեացք, նա ելանէր սևազգեաց և բոկոտն իբրև զմի 'ի գռեհկաց. զի ըստ աւելոյ Պղուտարքոսի՝ ուսցի չամաչել, բայց 'ի գործոց եւեթ, որք տուգիւ անշքականք իցեն: Եւ զայս իմաստ տպաւորէր յիւր զօրականս, կամեցեալ երկչոտ լինել նոցա առ անհամեստ իրողութիւնս և քաջասիրտ առ համեստս, ոչինչ ակնածեալ կարծեաց օտարաց: Այսու որոշի յանամօթէն ամօթխածն զի 'ի յանկարծ դէպս ցուցանէ զնորուն նշան: Ողիմպիա մայր Աղեքսանդրի՝ կարեվէր խոցեալ 'ի սրոյ գռռոզին Կասանդրոսի, այն ինչ 'ի վերայ անոի քաղէին ոգիք, ոչ այլ իմիք այնպէս զգուշացաւ, որպէս անկանիլ համեստօրէն, պատատեալ զիւրև զհանդերձս երկոքումբք ձեռօք: Երկիւղ ամօթոյ յաղթեաց երկիւղին մահու: Օրինակ յիշատակաց արժանի յանձն բամբշի. այլ զարմանագոյն ևս յանձն պատերազմողի: Յուլիոս Կայսր քսան և երիս մահաբեր վէրս յանկարծակի յանձն ընկալեալ 'ի հայրախողխող սպանողաց, այն ինչ փչէր զոգի, զայն միայն յիշեաց, փաթութիլ պճղնաւորաւ, զի պարկեշտօրէն անկցի. որպէս գրէ իւրն պատմիչ: Ի նոյն արարս բամբիշն եցոյց արիութիւն այրական, և զօրավարն եցոյց համեստութիւն բամբշական: Երկոքին իսկ վկայեցան թէ էին ամօթխած 'ի կեանս իւրեանց, զի յետին ձիգն նոցա եղև առաւել խնամ ունել պատուոյ քան կենաց: Պատաղեցուցին զձեռս ոչ յաղերսարկութիւն, ոչ 'ի պաշտպանութիւն անձանց և ոչ 'ի վնասողութիւն այլոց, այլ 'ի պարտակել զանձինս, առաւել երկուցեալք յաչաց քան 'ի սրոյ հայրասպանաց: Այս պարկեշտութիւն առաւել շքեղացոյց զգատ սպանելոց, և առաւել նողկացոյց զանգթութիւն սպանողաց:

Զօրին հակառակն. ամաչել ընդ այն ինչ վասն որոյ չէ արժան, ոչ է արիութիւն ամօթխածական, այլ անարգութիւն ամօթական քան զայն վասն որոյ է արժան, և բաց 'ի վրիժուց արժանի է և քամահանաց: Այր իմաստուն 'ի վերայ յանցուածոց ոչ իւրոց՝ այո վշտագնի, այլ ոչ ամաչէ. զի վիշտն ծնունդ գոլով բնաւոր ախտակցութեան, զայլոց ցաւ որպէս զիւր զգայ. բայց ամօթն՝ վասն զի սեփհական է կամաւոր չարի, ոչ իրաւամբք սգասանէ զայն որ ոչն յանցեաւ: Նախայիշատակեալդ Ռուտիլեայի՝ արդար կշռադատող ճշմարիտ համբաւոյ, ոչ թթուեցոյց զերեսս, և ոչ ցածոյց զյօնս վասն լինելոյ իւրոց երկուց գաւերաց և երկուց կանանց: Եւ իմաստունն Սիմոնիդէս յանդիմանութիւն լուեալ թէ դուստր քո անառակ գնացիւք յամօթ առնէ զքեզ, ետ պատասխանի. Խաբիս, անհնար է ինձ այնպէս անպատուութիւն արկանել զինև իւրովք մոլութեամբք, որպէս ես պատիւ եմ նորա



իմովք առաքինութեամբք: Բայց անմտութիւն մեծ է մոլար կարծեօք ամօթալի համարել զգործ ինչ առաքինական: Ո՞ր մարտիկ եղև արի և պանծալի քան զՕթրիադէս սպարտացի. որ 'ի կռուին մեծի երից հարիւրոց Սպարտացւոց և երից հարիւրոց Յունաց՝ 'ի հատանել սրով 'ի վերայ փոքու դաշտի զվէճ Թիւրեննեան դաշտաց, նա միայն մնացեալ տէր դաշտին, յաղթող վիճին և յաղթական մահու, այնչափ ամօթ համարեցաւ, զի ոչ մեռաւ ընդ այլ մարտակիցս, մինչև չոքաւ զիւրովի[208]: Զեղև սա հաւան ընդ դատաստան երկնից, որ զնա միայն արժանի վարկաւ կենաց. շառագունեցան յամօթոյ աչք, որոց պարտն էր նշողել յուրախութենէ. ստացաւ յաղթութիւն հայրենեաց և սպան զյաղթականն. և թանկագին արեամբն անմտաբար միձոտեաց զիւր յաղթանակ: Ո՞ր բամբիշ եղև պարկեշտ քան զԼուկրետիա կին Կողատինոսի. որոյ արիաբար հերքեալ զհրապոյրս և մերժեալ զպարգևս բռնաւորին, պարտեալ 'ի մարմնի՝ առ չզօրելոյ ընդդէմ բռնութեանն, բայց անպարտելի լեալ 'ի հոգի, ուր դղեակն է պարկեշտութեան, իբրև առաւել երկեաւ 'ի սուտ կարծեաց այլոց քան յիւրմէ խղճէ, զմնութիւն բռնաւորին ընդդէմ արդարութեան պատուհասեաց յիւրում ողջախոհ անձին. և ոչ կարծեալ զերծ լինել 'ի ցնորական ամօթոյ, թէ ոչ զերծցի յաշխարհէ, զճշգրիտ պատկեր համեստութեան կործեաց յաշխարհէ: Առաւել արժանի էին այնմ խոցուածոյ ազգականք որք թողացուցին, քան զայն որ արարն: Յաչս ողջամտաց ոչ ստացան այնչափ գովեստ 'ի խնդրել զվրէժ այնր մահու, որչափ պարսաւանս 'ի թողացուցանել զայն. զի 'ի թողացուցանելն ցուցին զԼուկրետիա պարտաւոր ընդդէմ ճշմարտութեան, և 'ի վրէժ խնդրելն ցուցին զԼուկրետիա անպարտ, և զանձինս պարտականս մահու նորա: Այլև ամօթալի ակարութիւն է շառագնութիւնն ամօթոյ, որ 'ի հրապարակական և 'ի պատուաւոր գործս վառէ զերեսս, և թալկացուցանէ զսիրտ: Տկարութիւն որ ծագէ յանմիտ ըմբռնմանէ տեսոյ բազմութեան: Սնոտի պատրանք են երկնչել 'ի դատաստանէ բազմաց 'ի մի վայր եկելոց, որոց իւրաքանչիւրն ուրոյն ուրոյն է արհամարհ: Բազում փոքր զօրութիւնք միացեալք առնեն մեծ ինչ զօրութիւն, բայց բազում տխմարք 'ի մի վայր եկեալք չկացուցանեն իմաստուն մի: Այնպիսին չերկնչի 'ի զօրաց զինելոց յընդարձակ դաշտի, և երկնչի 'ի տեսոյ տկար ամբոխի յատենի կամ 'ի թատրոնի: Դանդաչէ նորա յիշողութիւն, շփոթէ զիմաստս, կակազէ 'ի բանս, և յանկարծակի տենդիւ հարեալ դողդոջէ որպէս տերև: Մեծն այն Պոմպէոս, որ դողացուցանէր զամենայն թագաւորս, իբրև կամէր հրապարակախօսել միշտ շառագունէր, և երկնչէր 'ի տեսոյ ռամկաց ըստ վկայելոյ Սենեկայի: Եւ Կիկերոն ընդ որում

ծնաւ ճարտարախօսութիւն, խոստովան լինի թէ քանիցս անգամ հանդիսանայր խօսել յատենի, վաղաջինն գլխովին դողայր երկիւղիւ. մինչև եռանդն խօսից վառէր զնա 'ի համարձակութիւն, և սկսեալ նախապատրաստօրէն հետ զհետէ առիւծանայր: Վասն այսորիկ վարդապետք ոմանք ոչ բաւեալ յաղթել երևակայութեանն, խուսեն. և որպէս որոյ պտոյտքն գլուխ յեղանեն 'ի բարձրաւանդակ՝ առ երկիւղի անկման կործանի, նոյնպէս 'ի գտանել այնպիսւոյն 'ի բեմբի առ երկիւղի յամօթ լինելոյ՝ ամաչէ:

## ԳԼՈՒԽ Ե.

### Յաղագս անամօթի և երկչոտի:

Ասպաքէն լուար, թէ ամօթխածութիւնն է միջասահման 'ի մէջ երկուց ծայրից, անամօթութեան և երկչոտութեան: Բայց դիւրագոյն է ճանաչել զմի քան զմիւս ծայր, սեպհական անուամբ: Վասն զի գոլով անամօթութեան պակասութիւն ամօթխածութեան, դիւրին իմն է ճանաչել զներհակն առ ներհակաւ: Բայց երկիւղ վատանունութեան չփոթեալ անուամբ ընդ երկիւղի ցաւոյ, դժուարին է այնմ նշանակել մասնաւոր անուն: Բայց և այնպէս շատ է մեզ իմանալ թէ անամօթութիւնն է պակասութիւն, և երկչոտութիւնն աւելադանցութիւն ամօթխածութեան: Առարկայք երկաքանչիւր մոլութեան են նոյն. այսինքն գործք պատուաւորք կամ ամօթալիք, բայց ներհական հայեցիւք: Երկչոտն ըմբռնէ կարի իմն, և անամօթն նուազ. և վասն այնորիկ անամօթն չամաչէ 'ի մոլութեանց, և երկչոտն երկնչի յառաքինութեանց: Երկչոտն նման է փոքրոգւոյ, և անամօթն վատահայեցելոյ: Փոքրոգին փախչի 'ի պատուոյ, որում էր արժանի, սուտ կարծեօք թէ չէ այնմ արժանի. և երկչոտն փախչի 'ի պատուաւոր գործոյ, սուտ երկիւղիւ, թէ չէ կարող պատուով 'ի գլուխ տանել: Վստահն անգոսնեալ զվտանգս՝ դիմադրաւէ ամենայն վշտաց վտանգի, և անամօթն անգոսնեալ զվատանունութիւն՝ ձեռներէց է յամենայն գործ ապիրատ: Վասն այսորիկ անամօթն միապէս բերի 'ի ծայրական մոլութիւնս, թշնամանադիր է և մարդահաճոյ, շռայլ և ագահ, յանդուգն և վեհերոտ, զի չունի ամօթ, որ սանձն է ամենայն մոլութեանց: Երկչոտն փախչի անխտիր յամենայն գովանի գործոյ, յընթացակցութենէ զինուց և գրոց, յաղատական և 'ի մեծագործ գործոց, 'ի հանդիսի ատենաբանութեանց և կարևոր խորհրդոց. զի երկուցեալ 'ի հասարակաց



դատողութենէ, որչափ առաւել պանծալի են գործք, այնչափ առաւել երկնչի զամօթի հարկանիլ: Մինչև անամօթութեանն լինել մոլութիւն տխրական միանգամայն և անասնական. զի ոչինչ ակն ածել կարծեաց այլոց գործ է ազատի, և չամաչելն բնաւ գործ է անասնոց անխօսի: Եւ երկչոտութեանն լինել մոլութիւն ամբարտաւանական, միանգամայն և անարգական, զի մեծապէս սիրէ զպարծ անձին, և չունի սիրտ ստանալոյ զայն. կորուսանէ զպարծանս առ երկիւղի եթէ կորուսցէ զայն: Զհուսկն ասացից, մին ունի իւր ապաստան զառանձնութիւն և միւսն զաներեսութիւն: Վասն որոյ և պատժոյ նորա պարտ է լինել առաւել ամօթական քան ցաւագին. և պատժոյ սորա առաւել ցաւագին քան ամօթական: Յորմէ մարթիս 'ի վերայ բերել թէ չկարելն մեղանչել է երջանկութիւն աստուածային: Փուժկալելն 'ի մեղանչելոյ առ ամօթոյ է պատուականութիւն մարդկային: Ամաչել յետ մեղանչելոյ՝ է ապերջանկութիւն գովելի: Չամաչել յամօթական գործոյ է աներեսութիւն անասնական. և պարծիլ ընդ այն է յամառութիւն դիւական:

Բայց ասիցես. Եթէ ամօթխածութիւնն չէ առաքինութիւն, այլ ամբոխումն ինչ ակամայ, զոր չէ հնար ըստ կամս ունել կամ վանել, ապա և իւր ծայրք չեն մոլութիւնք, այլ ախտից և բնաւոր յարձակմունք: Արդ զի՞նչ պիտի ճառել վնասնէ յայս գպրոց բարոյական, եթէ չէ 'ի կամս մեր ամաչել կամ չամաչել, որպէս և ոչ անձրև ածել, կամ զօդս պարզել: Պատասխանեմ. Թէպէտ ամօթխածութիւնն է բնաւոր ինչ յարձակումն, բայց և այնպէս ծագէ յըմբռնմանէ ամօթական և կամաւոր ինչ գործոյ: Եւ զի կամայական գործք կախեալ կան 'ի մերոց կամաց, վասն այսորիկ 'ի կամս մեր են 'ի բացէ առնել յերեսաց մերոց զամօթ բառնալով զնորին պատճառ: Որ չար ոչ գործէ, ոչ ամաչէ: Ապա չէ 'ի կամս այնորիկ որ չար գործէ, չամաչել. բայց է 'ի կամս իւրաքանչիւրոց չգործել զչար: Նա, որպէս ասացաւ, որ 'ի գործելն զչար չամաչէ, ոչ է մարդ, այլ անասուն չար ևս քան զանասունս. զի նոքա ոչ ճանաչեն զպատիւ, և մարդոյ պարտ է ճանաչել: Այն զի զայս բնաւոր յարձակումն իբրև զայլ ամենայն յարձակմունս, եթէ 'ի յանկարծ ամբոխման անհնար իցէ բառնալ, հնար է ժամանակաւ 'ի չափ ածել, չափաւորեալ զիւր ծայրս: Արդ այսմ քօղ հնար է լինել իմաստասիրական յորդորմամբ: Վասն զի որպէս ամօթխածութիւնն բնաւորապէս շարժի յըմբռնմանէ ամօթական առարկայից, նոյնպէս յորդորանօք հնար է ստանալ, զի որ փոքր ըմբռնէ զվատանունութիւնն, առաւելուցու. և որ կարի իմն մեծ, նուազեսցէ: Բանի պատկառ օրինօք յերևիլ ամբոխին ծածկէին զերեսս համեստ շառագունութեամբ: Բայց ապա իբրև 'ի հրամանէ կամ

'ի կարեաց ուստն երևել կիսամերկ՝ ծնծղայիւք կամ քնարօք 'ի հանդէս խաղալեաց, բրտացուցեալ զձևիստ, և խանդարեալ զչաւագունութիւնն, եղեն լիրբ կոչաւիչք, և առա յայանի պոռնիկք։ Մինչ զի թէպէտ և ամօթխածութիւնն է յարձակումն ինչ բնաւոր, բայց և այնպէս ցուցաւ այլուր, թէ յարձակմունք և կիրք բնաւորք, եթէ 'ի մարդիկ և եթէ 'ի գազանս յաղթին սովորութեամբ. զի սովորութիւնն է երկրորդ բնութիւն։ Արդ ամենայնի որում կարողանայ երկար ինչ սովորութիւն, անտարակոյս կարողանայ և սաստիկ իմն համոզումն, որ զօրութեամբ ձեռնարկութեանց և օրինակաց փոխէ զիմացումն յիմբռնողականն, և 'ի փոխիլ ներքին իմացմանց, փոխին և գործք արտաքինք։ Զչափ էառ զօրս թշուառականն Միսուա [209]. որ հայրական գեղջ կարի իմն հարեալ 'ի սէր, գողայր և տապանայր յամօթոյ իւրոց խորհըրդոց, պատրաստեալ չինչուցանել զայն բոլորով իւրով արեամբ։ Զորոյ լեզուագարութիւն լիրբ գայեկին պաճարամիտ պատճառանօք, և չեղտամեղտ օրինակօք այնպէս գրեաց զամօթխածութիւն, մինչև 'ի բաց եդեալ նորա զամօթ և զձորձս՝ իւրեաց ելանել յաղգապղինծ անկողինս հօր իւրոյ պատրելոյ, և ծնող լինել եղբօր իւրոյ։ Զսորին հակառակն, ո՞ր պատանի անամօթ երբէք յայտնեցաւ 'ի պատմութիւնս քան զնախայիշատակեալդ Պոլեմոն Աթենացի. որոյ արձակերասան հանապազորդեալ զգայս և զցերեկ 'ի պղծութիւնս, ոչ թէ երկընչէր 'ի վատանունութենէ, այլ պարծանս ևս գրէր զայն անձին. բայց և այնպէս, գրաստն այն՝ բարեխրատ յորդորանօք փոխեալ զմիտս՝ փոխեաց զբնութիւն։ Ելեալ սորա 'ի զեղխութեան սեղանոյ ծաղկապսակ գլխով, որպէս զոհ արբելոց, և խենեշութեամբ մտեալ 'ի զգաստ դպրոց Քսենոկրատայ՝ խաղ առնել զուսուցիչն և զաւածանել զաշակերտս, 'ի լսել զբանս մեծի իմաստասիրին 'ի վերայ ժուժկալութեան և ամօթխածութեան, այնպէս փոխեաց զպատկեր մտաց, մինչև անմնացեալ յանձնէ՝ ընկեց զծաղկեալ պսակն. և 'ի բաց եդեալ զիւր մոլութիւնս, յայնմ պարապափակ վայրի՝ յոր եմուտ որպէս անասուն, ել մարդ. և վատանուն անառակն ել մեծ իմաստասէր, մինչև հաւասարիլ նմա 'ի պարկեշտութեան և առաւելուլ յիմաստութեան քան զիւր վարժապետ։

# ԳԻՐՔ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ՍՐՏՄՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՒՐՈՑ ԾԱՅՐԻՑ

### ԳԼՈՒԽ Ա.

*Թէ զինչ իցէ սրտմտութիւն։*

ԱՅՍ այն է զոր Հեսիոդոս Նեմեսիս անուանէ, և Հոմերոս Ագրաստիա դուստր արդարութեան, զոր նախնի փիլիսոփայք 'ի բանաստեղծութիւնս իւրեանց դասեցին առ երի ատենին Դիոսի երկրաչափական չափու 'ի ձեռին. ոխերիմ թշնամի այնոցիկ, որք չափեալ զարժանաւորութիւն իւրեանց, բարձրանան 'ի վեր քան զարժանն [210]։ Սա ևս է կիրք ինչ բնաւոր քան թէ առաքինութիւն կամաւոր, բայց և այնպէս, ըստ օրինակի ամօթխածութեան՝ վասն իւրոյ գեղեցկութեանն արժանացաւ դասիլ ընդ բարոյական առաքինութիւնս։ Վասն որոյ յիրաւի է կոչել զսա քաջազնական և պատուաւոր ինչ ամբոխումն։ Գեղեցկութիւն այսր կիսամասնեայ առաքինութեան ճանաչի 'ի ոգեղութենէ իւրոց ծայրից. որք են Զարախամութիւն և Նախանձաբեկութիւն։ Նախանձաբեկութիւնն է անկարգ կիրք, որ խոժոռի ընդ բարին այլոց, թէպէտ և են այնմ արժանաւորք։ Զարախամութիւնն է անկարգ կիրք որ խնդայ ընդ չար այլոց, թէպէտ չեն այնմ արժանի։ Այլ սրտմտութիւնն է կարգաւորեալ ինչ կիրք, որ խնդայ ընդ բարին բարեաց, և ընդ չար չարաց. ուստի և խոժոռի ընդ բարին չարաց, և ընդ չար բարեաց՝ ըստ ուղիղ բանի։

Յայտնէ ունիս 'ի միտ առնուլ թէ սրտմտութիւնդ անուն արտայայտէ միայն զկէտն այսր առաքինութեան, այսինքն է զխոժոռիլն ընդ բարին այնց որք չեն այնմ արժանի։ Բայց պարտ է մասաւորին ճնուլ զմիւս կէտն, այսինքն է զխնդալն ընդ բարին այնց՝ որք արժանի են այնմ։ Բայց զգոյշ լեր չշփոթել քեզ ըստ ոգէտ ռամկաց զսրտմտութիւնն ընդ ցասման բարկութեան։ Բարկութիւնն է մոլեկան ինչ ծայր հեզութեան, որոյ վառեալ 'ի ցասմնականն մղէ 'ի վրէժխնդրու-

թիւն։ Իսկ սրամտութիւնն է ազնուական ինչ կիրք ցանկականին, որ չափաւորէ զհաճոյն և զոչ հաճոյն՝ յիւս այլոց, առանց խրոյ օգտախնդրութեան։ Վասն այսորիկ թէ ոք գժգմնի ընդ բարին չարաց, վասն ընդունելոյ խրոյ 'ի նոցանէ զնախատինս, լինի բարկութիւն։ Եթէ առ երկիւղի անպատուութեան, լինի ամօթ։ Եթէ առ աչի վնասու ինչ խրոյ, լինի երկիւղ, այլ ոչ սրամտութիւն։ Այսպէս այս ինչ հասարակ է սրամտութեան, նախանձու, չարակամութեան, զի խնդութիւն նոցա կամ խոժոռութիւն յիւս այլոց՝ ոչ հային յիւրեանց դիւրութիւն։ Բայց տարբերին յայնմ զի նախանձն և չարակամութիւն շարժին անամօրէն ընդդէմ բանի, բայց սրամտութիւնն խնդայ կամ խոժոռի ըստ բանի և ըստ պատշաճի։

## ԳԼՈՒԽ Բ.

*Թէ ո՛ր իցեն առարկայք սրամտութեան։*

Սրամտութեան, նախանձու և չարակամութեան առարկայք են նոյն. այսինքն բարիքն կամ չարիքն որք պատահեն օրըստօրէ մարդկան։ Բայց սրամտութիւնն հայի եթէ բարիքն կամ չարիքն իցեն պատշաճողք այնց՝ որոց պատահեն։ Արդ սեպհական և առաջին առարկայ սրամտութեան են ճոխութիւնք, ապարանք, ընչաւէտ կալուածք, մեծահարուստ ժառանգութիւնք, և գանձք դրեալք, եթէ չեն պատշաճականք այնմ որ ստացեալ ունի։ Կամ չքաւորութիւն, նուաբեկութիւն, անարգ կարասիք, ծխամած հիւղք, և անանկութիւնք, որք անարժանապէս 'ի վերայ գան արանց քաջաց և առաքինեաց, յայլոց չարութենէ, կամ 'ի բախտին ձախողութենէ։ Ո՞ւմ հնար էր անցատումն ականել 'ի դերլին Կլոդեայ կայսեր, յանուանեալն Նարկիսոս. ոյր փոխեցան ոտնակապք 'ի մանեակս և ձեռակապք 'ի չինդղ ապլետակսն. և ոյր այնչափ եղեն մթերք ոսկւոյ, մինչև Նարկիսեան գանձուց անցանել յառակս իբրև զՄիդայն[211]։ Եւ զորին հակառակն՝ տեսանել զԲեղիսարիոս որ իւր յաղթական ձեռամբն, որով բազում ընծայեալ էր յաղթութեան արմաւենիս Յուստինիանոսի ինքնակալի, մուրողապէս դանգ մի խնդրէր յանցաւորաց. թէպէտ և առ կուրութեան անկարողայր տեսանել, թէ ո՛ է որ տայ[212]։ Մեծ յանցանք եղև այն բախտի, թէպէտ և թուէր անմեղադրելի վասն լինելոյ խրոյ կոյր։ Բայց մեծ ևս եղև յանցումն նոցին իսկ կայսերաց, որոց մին կողոպտեաց զգանձս արքունի 'ի ճոխացուցանել զանուանարկ ոք, և միւսն կեղեքեաց զմեծանուն շահատակն, 'ի հաճել զմիտս կնոջ ուրուք։



Բայց առաւել ևս շարժէին 'ի ցասումն անհամեմատութիւնք պատուոյ։ Պերճազգեաց նախարարութիւնք 'ի ադէտս, և զինուորական քղամիդք 'ի վէհերատս՝ ձախողակի բաշխեալք։ Եւ զորին հակառակն՝ զխնաւորն անարգեալ և քաջ պատերազմողն թողեալ յանկեան ուրեք անգործ։ Զիա՞րդ հնար էր առանց պժգանաց տեսանել զԵւտրոպիոս ներքինին՝ զպահապան կանանցն և զհովանաբարձ կանանց, բարձրեցեալ Հռովմէական ծերակուտի, բազմեալ յիշխանաւորաց մէջ, որք դողացուցանէին զաշխարհ, և 'ի սակս սորա եղեն այպն կատականաց. զի էր որպէս վայրենաբես կապիկ, արկեալ զիւրեաւ զծիրապատատականն օթոց, որոյ շառագունութիւն էր առաւել յամօթոյ քան 'ի ծիրանւոյն[213]։

Այսոքիկ են գլխաւոր առարկայք սրամտութեան, յանմիտ բախտէ ոչ 'ի դէպ բաշխեալք. թէպէտ և ոչ առանց հեշտամտութեան ամբարձելոց և անմտութեան ամբարձողաց։ Բայց երբեմն և բարիք բնութեան, որպէս Գեղեցկութիւն, Առողջութիւն և Ազնուութիւն են առարկայք սրամտութեան, յորժամ հանդամանաց անձին չերևին դիպան։ Մեծ վրիպակ բնութեան թուեցաւ այն զի Ակիւղասայ, որ խեղաբարոյն էր և ապիրատ քան զբռնաւոր Հռովմ, վիճակեցաւ մարմին բարեձև, որ չէր երբէք երևեալ. և Սոկրատայ որ իմաստունն էր և առաքինի քան զամենայն Յունաստան, մարմին այլանդակ, խեղաթիւր իբրև զօձ, անհեթեթ ըստ կապիկ, ճաղատ իբրև զկունտ, և թաւամազ իբրև զծիւաղ. մինչև երևիլ թէ դողացեալ նորա հերք գլխոյ արկեալ էին զմարմնով, 'ի լինել ծաղածանակ։ Նա ինքն իսկ սոսկայր յիւրմէ, վասն որոյ երկոցունց կանանց Սանտիպպեայ և Միրրեայ, որք նախանձաւորութեամբ նորա կռուէին ընդ միմեանս, ասէ. Զի՞ վիճէք վասն իմ, քան զոր տգեղ ինչ չարար երբէք բնութիւնն։ Մինչ զի զբնութենէ կրկնակի մարթ էր գանգատել իմաստնոյ, փոխանակ զի եւ Ակիւղասայ մարմին որ անկ էր Սոկրատայ, և Սոկրատայ մարմին որ անկ էր Ակիւղասայ, բնակեցուցեալ զերկաքանչիւրոց ոգիս արտաքոյ իւրեանց մարմնոյ իբրև 'ի վարձու։

Յաւել և զայն, զի թէպէտ բարիք հոգւոյ որպէս Գիտութիւն. Ոյժ, և Արուեստք ազատականք և մեքենականք չեն ճշմարիտ առարկայք սրամտութեան, զի առաքինութիւն ընդդէմ այլում առաքինութեան ոչ ցասնու, այլ սիրէ զնա և պատուէ. բայց և այնպէս այս բարիք ևս երբեմն շարժեն 'ի սրամտութիւն, յորժամ են յենթակայս մոլեկանս և չարս, կամ 'ի հպարտս և յամբարտաւանս, մինչև առաքինութեանն երևիլ ձեռնատու մոլութեան։ Ոչինչ այնպէս է գժպատեհ, որպէս գիտութիւն յայր խեղաբարոյ։ Չար է սա քան զամենայն գազանս. զի գազանք կարող են վնասել, այլ սա կա-

րող է և գիտէ մնասել. իբր զի ընդ խեղաբարոյ բնութեան լծորդէ և զարուեստն։ Ոչ այնչափ մնասակար լինէր քրիստոնէական կրօնի Յուլիանոս, եթէ չէր այնչափ ուսեալ։ Զիք ինչ ժանտ իբրև զգիտուն, յորժամ զեղծմամբ փոխարկի 'ի թոյն։

## ԳԼՈՒԽ Գ.

*Թէ ո՞ր իցէ առիթ սրտմտութեան։*

Կեղծեցին բանաստեղծք թէ բարիք և չարիք կուտեալք յերկուս ամանս, 'ի սկզբանէ աշխարհի, ըստ բերման վիճակի թափեալք խառնխուռն յերկիր առնէին երջանիկ կամ թըշուառ զմարդիկ, որոց դիպէին [214]։ Բայց այր մտացի և բարեկիր, որպէս բնաւորապէս խելամուտ է թէ պարտ է աշխարհի կառավարիլ 'ի տեսչութենէ, նոյնպէս ըստ ընդարձակ լաւաբարոյութեան իւրոյ համարի թէ բարիք 'ի ստորինս լինելոց են վարձ առաքինեաց, և չարիք պատիժ չարագործաց. Վասն այսորիկ ոչինչ այնպէս շարժէ զբարեկիր ոգի, որպէս տեսանել վեր 'ի վայր շրջեալ զայս կարգ երջանկութեամբ խեղաբարոյից, և չարակրութեամբ առաքինեաց։ Երեւի այս կիրք և յանշունչ նկարս, յառասպել քերթածս, և յեղերերգութեան տեսարանս երևեցուցիչս անհարազատին Եգիսթոսի, որում խաղաղական ստացութիւն ժառանգութեան հարազատ որբոց յաջողեաց. և ոչ յաղթութիւն Հիպպողիտոսի, որ ամենևին անպարտ գոլով զրպարտեցաւ, զօտարի չարեաց ընդվրէժս լուծանել։ Որ անպատշաճութիւնք երբ երևին, կամ ընթերցեալ լինին, թէպէտ և մտացածին իմն են, բնաւոր շարժմամբ վառեն զճշմարիտ ցասումն բարեկիր սրտի [215]։ Ստոյգ իմն է թէ առ նախնի իմաստասէրս այս գեղեցիկ կիրք ունէր խառնուրդ բաղում մոլորութեանց, և բնաւոր բերման զհետ երթայր մտաւոր տրամաբանութիւնն։ Ոմանց 'ի հեթանոսաց տեսեալ 'ի ստորինս զանդէպ բաշխ բարեաց և չարեաց, գայթակղեալք ընդ դժպատեհ անտեսութիւն դից իւրեանց, հաստատութեամբ հաւատացին թէ չիք ինչ վերնախնամ տեսչութիւն, այլ բախտ բախտովի շրջէր զափոր մարդկային վիճակի։ Այսպէս նուագեաց քերթողն Կղոդիանոս, տեսեալ զգաւազանն տրեւելեան կառավարութեան 'ի ձեռս ուրումն ապիրատի. ասէ.

Տեսեալ 'ի ստորինս խառնակ զամենայն,
Զվիճակ մարդկային յաւերժ 'ի մըթան,
Ըզվատաց կայտառել և զլաւաց կական,
Կըրօնք 'ի սըրտէս անկանին կործան։



Եւ յիս գոյ խորհուրդ թէ աշխարհ համայն,
Վըխպակաւ վարի անհանճարական.
Եւ թէ չիք խընամ աստուածպետական,
Կամ թէ չունի փոյթ նա առ մեր խընամ։

Այլք իմաստասիրեցին թէ դիք ճշմարտութեամբ և ուղիղ վարեն զմարդիկ, բայց 'ի վերայ դից կայ, ասեն, զաղտնի օրէնք, անուանեալ ճակատագիր, հեղուսեալ յաւիտենից ադամանդեայ բևեռաւ անփոփոխ հարկի. որում 'ի դիպուածս ինչ դիք իսկ ոչ զօրեն ընդդէմ դառնալ. որպէս երգէ այլ ումն քերթողաբան Սենեկա.

Ոչ 'ի ձեռս է դից եղծանել զայն ինչ,
Զոր ճակատագիր՝ եդ յօրէնս անջինջ։

Իսկ այլք սահմանեցին թէ ոչինչ առաքինութիւն է անվարձ, ոչինչ ապիրատութիւն անպատիժ, բայց վարձն և պատիժ գան անագան, և անագանութեանն ծանրութիւն փոխարէ ըստ ասից Կղոդիանոսի.

Ամբարիշտք աջողակ ամբառնան բարձրագահ.
Զի անկցին չարաչար գահավէժ 'ի խոնարհ։

Բայց քանզի բազում անօրէնութիւնք երևին յոլովակի անպատուհաս, և Սիղլա յետ այնչափ յափշտակութեանց և անողորմ բռնաւորութեանց հասուցանէ ողջիկ զիւրն բարօրութիւն մինչ 'ի գերեզման, խոհականագոյնք յիմաստասէրս զերծուցին զիւրեանց դիս 'ի հասարակաց նախանձուէ և յանիրաւ քրթմնջանաց. վարդապետութեամբ որ չէ ինչ օտարաձայն 'ի քրիստոնէականէն։ Ուսուցին զի թէ առ կենդանեօք բազում յանցանք յաստիս մնան անպատուհաս, ոչ վասն այդր մնան անվրէժ, զի արդարութիւնն աստուածային 'ի խաւարչտին թագաւորութեան սանդարամետից՝ ունի իւր սաստկապահանջ և անհաշտ ատեան, 'ի քննել զնոսա անաչառ, և 'ի պատժել անբողոք, ըստ նուագելոյ Վիրգիլիոսի.

Զինչ սատ ոք արար յանխիս կրեացէ,
Զիւրոց յանցանաց վրէժըս լուծցէ։

Ապա որպէս 'ի վերայ այսորիկ պէսպէս կարծիք եղեն մարդկան, նոյնպէս պէսպէս զգածմունս ազդեցին 'ի սիրտ նոցա։ Դեմոկրիտոս վասն զի հաստատութեամբ եդեալ էր 'ի մտի, թէ դիպուածով կառավարի աշխարհ, հայեցեալ յայն իբրև 'ի խաղարկութիւն ինչ ծաղրական, ընդ ամենայն մարդկային պատահարս եթէ ընդ բարիս և եթէ ընդ չարիս, որպէս դէտ անգործ՝ հանապազ ծիծաղէր։ Զարդին հակառակն, Հերակլիտոս, որ զամենայն ընծայէր անխորշելի հարկի ճակատա-

գրական ինչ օրինի, ողբալով զթշուառ և զաննորոգելի վիճակ
մարդկան, և ախտակցեալ նոցին խիկ դից, ընդ ամենայն դա-
տաճար անմխիթար լայր. իբրև զի չէր ձեռնհաս օրէնս դնել
յաւիտենական օրինի: Բայց Արիստոտէլ և ամենեքին որք
բնաւորապէս ունէին բանաւոր և ճշմարիտ իմաստ աստուա-
ծային տեսչութեան, զգային յանձինս բանաւորագոյն ևս
զգածմունս: Վասն այսորիկ նմանակեալ զիմաստ իւրեանց
ընդ իմաստ Նեմեսեայ դիցն արդարութեան, և չհանդուր-
ժեալ թէ մոլէք որպէս անիրաւ յափշտակիչք, վայելեսցեն
'ի բարիսն որ առաքինեացն էին անկ, վասէին արդար ցաս-
մամբ: Եւ զօրին հակառակն, 'ի տեսանել զչարաց չարակրու-
թիւն և զբարեաց յաջողութիւն, սրտի դիւր էր նոցա յոյժ,
իբրև խնդակցութեամբ իմն ընդ տեսչութիւն դից իւրեանց:
Վասն այնորիկ որպէս Պղատոն կոչէր զՆեմեսիս Հրեշտակ
արդարութեան, առաքեալ 'ի Դիոսէ առ իշխանս և առեն-
կալս, նոյնպէս առաքինիք և իմաստունք արդար ցասմամբ 'ի-
բաւախնդիրք լինէին աստուածային արդարութեան: Արդ
այն էր խիկապէս սրտմտութիւն ինչ ընտրական և գլխովին ա-
ռաքինական, զի յառաջ գայր 'ի խոհական իմն և կատա-
րեալ հաւանութենէ կարգելոյ առ արդարութիւն. զի իւրա-
քանչիւր ոք կալցի որ ինչ անկ է նմա: Բայց այս սրտմտու-
թիւն կիսամասնեայ առաքինական, զորմէ են բանքս, վասն
զի սոսկապէս հաստատեալ է 'ի բնաւոր կիրս, կամ յամբո-
խումն քաջի ոգւոյ, որ բնաւորապէս յանկաւոր է բանաւորի.
չհասանէ 'ի գերակայութիւն միւսոյն, և ոչ դասի ընդ կատա-
րեալ առաքինութիւնս. բայց գիտութեամբ քաջ իսկ հնար
է նմա այնմ հասանել: Որպէս ամօթխածութիւնն չէ համես-
տութիւն, բայց ունելն զայն՝ նշան է սրտի յետնելոյ 'ի համես-
տութենէ. նոյնպէս սրտմտութիւնն չէ արդարութիւն, բայց
ունելն զայն նշան է սրտի յետնելոյ յարդարութենէ:

## ԳԼՈՒԽ Դ.

*Թէ որով օրինակաւ գործիցէ սրտմտանալն:*

Առաջէն լուար թէ չորս մեծամեծ գործս գործէ այս ա-
ռաքինութիւն 'ի սիրտ ստացողին զայն. Խոժոռիլ ընդ բարին
չարժանեայն. Խնդալ ընդ չար արժանեայն. Խնդալ ընդ բա-
րին արժանեայն, և Խոժոռիլ ընդ չար չարժանեայն: Արդ յիւ-
րաքանչիւրումն 'ի գործոցս այր առաքինի նմանակէ զիւր ըղ-
գածմունս բանին. և ըստ պէսպէս առթից առաւելու կամ
նուազէ բնաւորապէս զուրախութիւնն կամ զխոժոռումն ընդ
բարիս կամ ընդ չարիս այլոց:



Խուժանն վաղահ է 'ի դատել: Տեսեալ զապակի 'ի մասին
աշխարհականի՝ համարի թէ իցէ անդամանդ. և զանդամանդն
'ի մասին դուեհկի կարծէ լինել ապակի: Ըստ այսմ առ բա-
զումս մոլութիւն վեհանձանց պատուի որպէս առաքինու-
թիւն, և առաքինութիւն ցածուց քամահի որպէս մոլու-
թիւն: Բայց որ ունի զսրտմտութեանն առաքինութիւն, որո-
շէ ընդ մէջ ճշմարտին և առերևութին. և ըստ չափու արժա-
նեացն խոժոռի կամ խնդայ, որչափ վայել է: Այնչափ մեծ
է ցասումն ընդ բարին չարագործաց, որչափ առաւել մեծ է
չարութիւնն և պատուաւոր է բարին. զի փոքրիկն պատուոյ
մեծապէս երևեցուցանէ զլիծս սրտի և մեծապէս անարգէ
զանձն: Նոյնպէս այնչափ առաւելու ցասումն ընդ չարն ա-
ռաքինեաց, որչափ առաքինութիւնն է ծանօթագոյն, և չարն
ծանրագոյն. զի թուի կրկին անիրաւութիւն և անտեսու-
թիւն, ոչ միայն չվարձատրել զառաքինութիւն, այլ և պատ-
ժել: Բայց առաւել ևս առաւելու սրտմտութիւն, յորժամ
յաջողուած չարաց լինի 'ի վնաս բարեաց. զի առ ժամանակ
մի առ ռամիկս մոլութիւնն ստանայ մեծ յարգ, և առաքի-
նութիւնն 'ի սպառ զայն կորուսանէ: Մեծ է և ցասումնն
յորժամ անարժանն խնդրէ ինչ պատիւ ընդ արժանաւորին,
անարգն ընդ ազնուականին, մոլին ընդ առաքինւոյն: Վասն
այսորիկ ըստ ասելոյ Հոմերոսի, մեծապէս բարկացաւ Դիոս,
յորժամ Եգիսթոս ժպրհեցաւ հետամնդիլ ընդ Այասայ վասն
աքիլլեան զինուց և էառ, թողեալ անստոյգ թէ ո առաւել
ցուցաւ անմիտ՝ դատաւորք 'ի պարգևելն, թէ Ոդիսևս 'ի հե-
տամնդելն. որովհետև զէնք վայելէին քաջաց, և ոչ թէ խո-
րամանկաց: Այսպիսի սրտմտութեամբ վարեցաւ բորբոքեցաւ
ծերակոյտն Հռովմէական, յորժամ Վատինիոս զիմացա-
նակաւ ընդ Պորկիոսի Կատոնի հետամուտ եղև պրետորու-
թեան, անարժանն ընդ արժանաւորի. և փառանունն ընդ մե-
ծանունն հռովմայեցւոյ. և քուէարկութեամբ ժողովրդեան
դիւրաւ եհաս այնմ: Դատաստան նման դատաստանին Տմոլո-
սի, 'ի կագել Մարսեայ ընդ Ապողոնի. որում արժան էր ա-
ռաւել մորթեզերծ առնել զդատաւորն քան զիւր դիմամրցա-
նակն [216]. զի 'ի չարաչար հետամուտ լինելն՝ առանձնաւորն
վնասէ արդարութեան. այլ 'ի չարաչար դատելն՝ արդարու-
թիւնն վնասէ հասարակութեան: Բայց առաւել քան զա-
ռաւել՝ առաւելու սրտմտութիւնն յորժամ վատթարք հրա-
մայեն բարեաց, և ծառայք ազատաց. զի 'ի վարել մարդկային
իրաց շրջումն, շրջեալ երևի և վերնախնամ տեսչութիւնն:
Վասն այսորիկ Պղատոն 'ի խորշեցուցանել յայսմ մեծէ գայ-
թակղութենէ զիւր հասարակապետութիւնն՝ օրինադրէ, զի
առաքինեաց հարկ 'ի վերայ դիցի կառավարել զհասարակու-
թիւնն, որպէս զի մի կառավարեսցի յանարժան արանց: Կրե-

տացեք ոչ թողացուցանէին ծառայից ընթեռնուլ, զի մի ուսցին. և ոչ զէն առնուլ, զի մի կարող լիցին հրամայել: Վասն զի եթէ տէրութիւն ծառայից է անտանելի, և նկնութիւն բարեաց ևս անտանելի, ապա երկոցուն անիրաւութեանցս 'ի մի վայր եկաւորութիւն լինի ամենևին անտանելի: Ապա խընդայ սրտմտեալն ընդ յաջողուած առաքինեաց. զի և ինքն առաքինի գոլով, ակն ունի թէ և նմա յաջողեսցի 'ի վերուստ, տեսեալ զբաշխ բարեաց ըստ չափու արժանաւորութեան լեալ և ոչ ըստ կամաց բախտի: Խնդայ և ընդ տանջանս չարաց, և ևս առաւել եթէ տանջանքն համեմատ իցեն յանցանաց: Որպէս Սաղմոնէոս կամեցեալ կայծակնանման ինչ հնարել, զի համարեսցի աստուածական ունել զօրութիւն, կայծակնահար կորեաւ[217]: Եւ Պերիղլոս առաջին գտիչ անօգուտ պղնձի ցլուն, նախ առաջին ինքն ուսոյց իւրում ցլուցագինս բառաչել: Եւ սիրելին յաչս կայսեր Սևերոսի, որ զծուխ նպաստից վաճառէր, 'ի ծուխ հեղձաւ: Եւ իրաւամբք օրէնք զփախստէից զոտս հատանէին, և զաւազակաց զձեռս: Ընդ այսպիսի տեսարանս մեծապէս խնդայ սրտմտեալն. զի տեսանէ զկարգ արդարութեան պահեալ, ըստ արդար օրինի փոխարէն հատուցման, թէ զոր ինչ ոք առնէ, զնոյն և կրէ: Եւ ոչ միայն սրտմտի 'ի վերայ անարժանութեամբ ամբարձելոց, այլ առաւել ևս 'ի վերայ այնց որք բարձրացուցանեն զնոսա. զի փոքր սոգիւտ է ամբարտաւանին, քան այնմ որ ամբարտաւանեցուցանէ զնա. որ 'ի սիրելն զմի ոք 'ի չարաց յանձն ձգէ զատելութիւն ամենայն բարեաց: Եւ առաւել ևս սրտմտի 'ի վերայ այնց՝ որք բարեմարդիկն լինին, և գովեն որպէս արժանաւոր զանարժանութեամբ ամբարձեալն. զի նպաստամատոյցքն՝ երևին սկզբնապատճառք[218]: Մեծանունն այն Կատոն երթեալ 'ի Յունաստան իշխանութեամբ բազմաւ, ետես զի ընդ առաջ գային դասք դասք սպիտակազգեստ Աթենացւոց ստոյգ ձիթենեաց 'ի ձեռին, որ էր մեծաշուք ընդունելութեան հանդէս: Այն ինչ Կատոն մարդասիրապէս ժողովէր զնոսա, նոյա յառեալ հայեցեալ ընդ երեսս զտեղի տային, և հարցին, թէ Ո՞ւր իցէ Դեմետր: Այս Դեմետր էր ազատագրեալ ոմն ծառայ՝ սիրելի յոյժ յաչս Պոմպէոսի: Զամօթի հարաւ Կատոն, միանգամայն և զզուեցաւ, զի զայնպիսի մեծաշուք ընդունելութիւն առնէին վասն ստրուկն ծառայի և ոչ վասն իւր: Մեծագին էր յաչս նոցա ազատագրեալ ոք ծառայ Պոմպէոսի, քան զհազարապետ ոք զօրու: Յաչս նոցա չնչին ինչ էր անուն Կատոնի՝ առ անուամբ Դեմետրի. զի յաչս Պոմպէոսի զօրագոյն էր ընտածին ոք քան զզօրավարի: Ծառայք, ընդ որոց ձեռս անցանեն շնորհք իշխանի, սովոր են լինել առաւել երկրպագելի քան զնոյն ինքն իշխանն. զի անընդմէջ պատճառք առաւել են ծանուցեալք



քան զընդմիջականս: Եւ վասն այսորիկ սիրելիքն յաչս իշխանաց, թէ են խոհականք՝ զերծուցանեն զիշխանս 'ի նախանձուէ, և զանձինս 'ի կործանմանէ՝ ցածութեամբ:

## ԳԼՈՒԽ Ե.

Գործք սրտմտութեան:

Բայց զի՞նչ օգուտ իցէ առաքինւոյն կրծել ներքուստ զիւր սիրտ, և լռելեայն սրտմտութեամբ հաշիլ 'ի ցաւոց, հանելով յանձնէ զվերժ քինու յիմարութեանց բախտի: Ո՞չ ապաքէն դառն ևս լինէր այդ և մարդկային կրից օգուտ և ոչ մի: Հարկ էր լինել աչաց մերոց կրկնավտակ հանապազահոս աղբեր իբրև զՀերակլիտոսին. զի ըստ տեսլեան Սենեկայ, յոր կողմն և դարձցի մարդ, տեսանէ հանապազ նորանոր և մեծամեծ առարկայս սրտմտութեան. մինչ զի եթէ ընդ ամենայն իրս զզուանաց պարտ էր խռովիլ առաքինւոյն, ոչ սրտմտէր միայն այլ և կատաղութիւն զնա ունէր առանց ինչ օգտի: Ամենայն կիրք բնութեան տուեալ է մարդոյ վասն գործոյ ինչ: Ամենայն կիսամասնեայ առաքինութիւն արբանեկեալ ունի առաքինութեան ինչ: Ապա և սրտմտութիւնն բանաւոր գոլով, ոչ զկայ առնու 'ի ներքին հաճոյս կամ յոչհաճոյս. այլ երբեմն բղխէ 'ի բարկութիւն, և զեղու 'ի գործս արտաքինս: Զոր օրինակ ամօթխածութիւնն արբանեկէ ժուժկալութեան, նոյնպէս սրտմտութիւնն արբանեկէ արդարութեան: Խոժոռի ընդ դժպատեհ իրս, և ջանահնար լինի արժանաւոր դարմանոյ, ձեռն տալով մարդկային արդարութեան և աստուածախնամ տեսչութեան, մինչև լոկոյ կրից փոխիլ յընտրութիւն: Առաջին գործ սրտմտութեան 'ի քաջազանց ժամանակէ հետէ՝ եղև բորբոքել զսիրտ նոցա ընդդէմ գոռոզաց. ուստի առաւ Նեմեսիդ անուն, որպէս թէ ամբարտաւանատեաց. և Ադրաստիայդ անուն, որպէս թէ վրէժխնդիր հպարտաց[219]: Այսպիսի էր անպարտելին Աղկիդէս, որ որպէս պատգամաւոր Դիոսի, ուր և յառնէր անուանի ոք աւարահար, կամ անօրէն յափշտակող այլոց թագաւորութեանց, կամ բուռն բռնաւոր իւրոց ժողովրդոց, իբր Կակոսն էր և Բուսիրիս, և Անտէոս և Գերիոն, ոչ յղձանաց աւարառութեան՝ այլ յայսմ դիւցազնական առաքինութենէ վառեալ բորբոքեալ, 'ի վերայ յարձակէր խորտակել զնա, և մաքրել զաշխարհ յամենայն այսպիսի այլանդակաց[220]: Բայց թողեալ զայն անձինս, որք առաւել տաղտապէին վասն հեռաւոր իրողութեանց քան մօտաւորաց, այս այն առաքինու-

թիւն է որ վասն ըղձատաւորս և զատենակալս խնդրել զվրէժ նեղելոյ, և նեղել զնեղիչս. զի կարի խիստ ցուրտ է վրէժխնդրութիւնն, որ զօրէն անշէջ անասնոց՝ ապանանէ անբարկանիրս: Եւ ես առաւել յանկաւոր է այս իշխանաց և թագաւորաց՝ յերախտաւորութիւն ամենայն ժողովրդեանն, խորասուզել, և ոչ թէ ցածուցանել միայն զժպիրհս, և բարձրացուցանել զառաքինիս. բաշխեալ ըստ իւրաքանչիւրումն արժանեաց զշնորհս և զպատուհաս: Բայց թէ խօսիմք զանձանց, որոց ոչ է իշխանութիւն և զօրութիւն, 'ի սոսա եւ սրտմտութիւնն առնէ ինչ գործ արիական, բայց վտանգաւոր, այն է համարձակութիւն լեզուի: Թէ տեսանէ առուիւ հօսել բարեաց և չքոյ յանձինս անարժանս, և առաքինեայն առաքինութեամբ իւրեանց կալ յանշքրդուոջ, ոչ ժուժայ լռել: Երբեմն հեղձամղձուկ լինել սրտմտութիւնն 'ի սրտի, թէ ոչ 'ի դուրս շնչէ ընդ շրթունս 'ի պատիւ արդարութեան, և առ հասարակաց օգուտ: Բայց բաղում խորհուրդք են քաջք, մինչդեռ կան փակք. այլ յորժամ 'ի դուրս շնչեն, վնասակար են այնմ որ ոչ փակ պահէ: Ի ժամանակս հիւպատոսաց, յորժամ ազատ էր Հռոմ, ազատ էին և գործք և բանք: Առ Օգոստոսիւ սկսան պատուհասակոծ լինել գործք, այլ ոչ բանք: Առ Տիբերիոսիւ բանք և խորհուրդք համարեցան օրինազանցութիւնք. և յայնժամ առաքինութիւնն և ազատութիւն հալածական եղեն 'ի Հռոմայ, զի ըստ Տակիտոսի, անհնար է ազատութեան կալ ընդ ինքնակալութեան: Ապա գեղեցիկ առաքինութիւն է սրտմտութիւն, բայց վտանգաւոր յոյժ յորժամ է առանց ընտրողութեան:

## ԳԼՈՒԽ Զ.

### Յաղագս չարակամութեան և նախանձու:

Չարակամութիւնն է ախտ բնաւորական, որ խնդայ ընդ չար այլոց: Նախանձն է ախտ բնաւոր, որ տխրի ընդ բարին այլոց, որպէս և լուար: Չարակամութիւնն է կիրք ինչ անասնական: Ոչ են սոսա բանք զմասնաւոր ինչ չարակամութենէ վասն ընդունելոյն ինչ վնաս, այլ՝ զընդարձակ խիստ թիւրութենէ, որ տարածի առ ամենայն ազգ մարդկան. զի չատ է լինել մարդ, 'ի լինել առարկայ չար կամաց սորա: Եւ թէպէտ մահուամբ զրաւի ամենայն ոք 'ի լինելոյ մարդ, այլ ոչ վասն այդր զրաւի 'ի լինելոյ ատելի. զի չարակամն ատեայ զամենեսին որք ենն, և որք եղեն, կարծեալ թէ ամենեքին են չարք, և ամենայն չարեաց արժանիք: Բայց նախանձն է կիրք ինչ առաւել



կարճատես. հայեցեալ միայն 'ի մօտակայս և 'ի հաւասարս ըստ հասակի ըստ ընչից, ըստ գեղոյ ըստ ուժոյ, ըստ գիտութեան, կամ ըստ արուեստի. զի կամի լինել մեծ քան զնոսա: Մինչ զի նախանձոտն ոչ հանդուրժէ՝ թէ ոք իցէ իւր հաւասար. իսկ չարակամն ոչ հանդուրժէ, թէ ոք իցէ յաշխարհի: Սա ատեայ զանձինս, և նա զառաքինութիւնս անձանց: Երկաքանչիւրքն զայս ունին բարի, զի ոչ ումեք առնեն չար, բայց միայն անձանց. զի չար ախտն ներքին, որպէս տենդն, տանջէ միայն զունակն: Չարակամին երեսք են ծիծաղոտ, բայց դժնեայ և ժանտ, զի խնդալ ընդ չար այլոց՝ է թունաւորութիւն: Նախանձոտի աչք են արիւնռուշտք. երեսք գունաթափք և հիւծեալք. զի վշտագնիլ ընդ բարին այլոց է կրծել զիւր սիրտ: Պոպլիոս Միրոս[22]. տեսեալ տխուր և վշտագին զՄուտիոս զայր նախանձոտ, ասէր. Բա՛ց է, կամ չար ինչ պատահեաց Մուտիոսի, կամ այլոց բարի ինչ: Չարակամութիւնն երբեմն է կիրք առնացի. բայց նախանձ միշտ է կիրք անարգ, զի չարակամութիւնն ատեայ զայլոց պակասութիւն, և նախանձն ատեայ զայլոց կատարելութիւն. և վասն այսորիկ լաւ է լինել նախանձելի, քան առարկայ չարակամի: Բայց որ ատեայ զամենեսին, արժանի է ատելի լինել ամենեցուն, որպէս ամարդի ոք. և որ նախանձի ումեք, արժանի է չլինել ումեք նախանձելի, որպէս փոքրոգի ոք:

Թէպէտ չարակամութիւն և նախանձ են լոկ ներքին կիրք, բայց և այնպէս ոքին ես յերկարութեամբ ջեռեալք արտադրեն չարաչար գործս արտաքինս: Առաջին գործ չարակամին է լինել չարախօս: Ճանճք որ չունին զօրութիւն, ունին զխայթոց, որպէս պիծակք. և չարակամն, որ չէ ձեռնհաս վնաս հասուցանել գործովք, վնասէ լեզուաւ, վասն որոյ 'ի նշանակ Արքիլոքոսի՝ քանդակեցան պիծակք 'ի վերայ իւրոյ գերեզմանի[222]: Այս է և առաջին ձիգն նախանձու, որպէս առաւել ես փոքրոգւոյ. զի չկարացեալ առաւելուլ քան զայլս արդեամբք՝ ջանայ ցածուցանել զնոսա: Դրանիկես նախանձեալ ընդ քաջութիւն Տուռնոսի, խօսէր զնմանէ չարիս: Կոզրոս նախանձեալ ընդ Իլիական քերթած Հոմերոսի, գիրս գրեաց ընդդէմ, անուն անուանեալ, Փանք Հոմերոսի: Մեվիոս նախանձեալ ընդ Ենիական Վիրգիլիոսի, գրեաց ընդդէմ զՓանս Ենիականին: Պորկիոս Լատրոն նախանձեալ ընդ անման ճարտարխօսութիւն Կիկերոնի, գրեաց ընդդէմ զՓանս Կիկերոնի: Փանիչք արժանիք փանից: Ո՛ հաւատայր թէ և 'ի քաջազանց ոք ըմբռնեսցի յայս անարգ մոլութիւն: Կեսար նախանձեալ ընդ համբաւ Կատոնի, վասն բարձրացուցանելոյ զնա Կիկերոնի, գրեաց նմա զԸնդդէմն Կատոնի: Բայց ամենեքին ապաքէն առաւելեալ զպատիւ այնց առ որս ունէին նախանձ, անշքացուցին զանձինս: Կայ ինչ կենդանի,

որում ոմանք Բռնաւոր անուն կոչեն. որոյ ոչ կարացեալ գալարածոյ եղջերբք խեթկել զոլսորդս, արկանէ 'ի վերայ նոցա կորկ ինչ սեաւ իբրև զթանաք, վառ իբրև զկրակ, և ժահահոտ իբրև զջուր Սափագեան լճի [223]։ Զնոյն առնեն չարախօսք, այսու տաւեղութեամբ զի աղտեղի թանաքաւ իւրեանց պղծեն միայն զանձինս իւրեանց։

Ճշմարիտ է թէ ոչ նախանձ և ոչ չարակամութիւն զառեղի առնուն 'ի խօսս կամ 'ի գիրս. զի ամենայն մոլութիւն ունի ինչ շարժումն ոչ դադարուն, այլ գնայուն։ Ի չարակամութենէ լինի յառաջել 'ի չարախօսութիւն, 'ի չարախօսութենէ 'ի չարարութիւն, միայն թէ ունիցի ոյժ։ Նախայիշատակեալն այն Տիմոն Աթենացի, որում Մարդատեաց անուն կոչէին, ոչ թէ ըղձանայր միայն, այլ և ջանայր 'ի չէք դարձուցանել զամենայն ազգ մարդկան։ Զեցոյց երբեք ումեք քաղցր երես, բայց միայն առ Ալկիբիադէս խարտեաշ մանուկ։ Ընդ որ 'ի զարմանալ քաղաքացւոց, ասէ. Մի ինչ զարմանայք. սիրեմ ես զայդ տղայ, քանզի գիտեմ թէ դա լինելոց է կործանումն հայրենեաց մերոց և ամենեցուն ձեր։ Այս Տիմոն իւրով մարգախոշոշ իմաստասիրութեամբ ձգէր զմարդիկ ելանել 'ի կախաղան, և միայն սիրէր զկեանս զի կարողասցի խնդալ ընդ մահ այլոց։ Նա երբեմն յատեան, արար իւրում ժողովրդեան հրաւէր այսպիսի. Կայ մօտ տան իմոյ թզենի գեղեցիկ, յորմէ բազումք 'ի ձէնջ կախեցան. արդ կամ է իմ կարել զնա. զի ունիմ կանգնել շինուած. վասն այսորիկ թէ ոմանք 'ի ձէնջ կամիցին կախիլ, փութասցին գալ։ Իղձ անգթական, այլ անգթագոյն ևս եղև իղձ Յուլիոսի կայսեր. որոյ արդէն վատակեալ 'ի գլխատելոյ զայնչափ քաղաքացիս մի ըստ միոջէ, ըղձանայր թէ ամենայն ժողովրդեանն լինէր մի միայն գլուխ, 'ի հատանել զայն միանգամայն։ Ոչ այսպէս հանրածաւալ է իղձ նախանձու, բայց է առաւել դժնդակ։ Զի չարակամութիւնն ազատ է և յայտնի. բայց նախանձն, վասն լինելոյ իւրոյ փոքրոգի, է և գաւաճան։ Այն ինչ եղ աշխարհ 'ի խանձարրէ ջքութեան, ետես յառաջին երկուս եղբարս զօրինակ գաւաճանութեան։ Գուշակութիւն անվրէպ թէ այնպէս վախճան առնուլ ունի աշխարհ, զորօրինակ կալաւ սկիզբն [224]։

Այլ ասիցես. Իւ հնար իցէ ինձ զերծանել յերկուց այսց ժանտ ախտից, 'ի չարակամութենէ և 'ի նախանձուէ։ Սոկրատէս իբրև հարցաւ յԱլկիբիադեայ զնորա հնար իցէ ինձ խորշել 'ի նախանձուէ, ետ պատասխանի. Եթէ կեցցես ըստ Մարգիտայ, որ եղև յետինն յետամնաց, և անարգաց յունական զօրուն, բայց այս դեղ չար ևս է քան զհիւանդութիւնն։ Ապա իմ պատասխանի առ իմաստունս և բարեխրատս այս է։ Հանրական դեղ ընդդէմ չարակամութեան և նախանձու՝ է հաստանել ցայնչափ վեհ աստիճան՝ դիւցազնական գործովք քաջութեան, մինչև չարակամութեանն իսկ լինել տարփալի. և նախանձուն ամենևին անյոյս լինել ձգելոյ 'ի հաւասարութիւն։ Թէ փոքր է առաքինութիւնն, չարակամութիւնն չփութէ զայն ընդ մոլութեան. թէ միջակային, նախանձն ակն ունի ստանալ։ Բայց թէ է գեր 'ի վերոյ, չարակամն ամաչէ ատել զայն, զի մի լիցի ամենեցուն ատելի. և նախանձոտն՝ նախանձիլ ընդ այն, զի մի լիցի ամենեցուն ծանակ։ Նա՝ յայնժամ չարակամութիւնն փոխի 'ի նախանձ, և նախանձն 'ի նախանձաւորութիւն, որում հնար է ըծակցիլ ընդ սիրոյ։ Եւ ևս բարերարութեամբ թափի թոյն չարակամութեան. և ցածութեամբ շիջանի հուր նախանձու, որ ամբարտաւանութեամբ բորբոքի։ Ապա եթէ և յետ այսց դեղոց՝ չարակամն կամիցի կալ մնալ 'ի չարակամութեան, և նախանձոտն 'ի նախանձու, թող նոցա լինել անձնատանջ։ Հիարբիտաս 'ի ձիգն մտեալ նախանձու՝ հաւատարիլ պերճախօսութեան Տիմագենեսի, հուսկ ուրեմն պայթեցաւ։

# ԳԻՐՔ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

## ՑԱՂԱԳՍ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՑՐԻՑ ՆՈՐԱ

## ԳԼՈՒԽ Ա.

*Թէ զինչ իցէ արդարութիւն:*

ԽՈՐՀՐԴՈՎ առասպելեցին նախնի իմաստասէրք՝ թէ Դիոս յերկաթի դարուն խիթացեալ թէ ամենայն մարդիկ սրով 'ի միմեանց սատակեսցին, առաքեաց յերկիր երկուս զօրութիւնս փրկականս՝ զԱմօթխածութիւն և զԱրդարութիւն. զի որք չէին զգաստացեալ զանձինս յազնուական երկիւղէ ամօթոյ, սանձահարեսցին 'ի ծառայական երկիւղէ պատժոյ: Այսպէս իմաստնապէս Արիստոտէլ յետ ամօթխածութեան 'ի մէջ բերէ զարդարութիւն: Զօրութիւն քաջ և աչաւոր, միշտ սիրեցեալ և ատեցեալ, բարեացապարտից բարի և չարապարտից չարասակար. զի կոյր է առ կաշառս, և խուլ առ աղերսանս. սուր 'ի ձեռին ունելով և կշիռ, կշռէ զյանցուածս և պատուհասէ: Այսպէս գլխոյ է սա առաքինութեանց ցայս վայր 'ի մէջ երևելոց. և այս եթէ հայեցեալ 'ի վեհութիւն իւր, զի այնչափ բարձրագահ նստի սա 'ի մէջ նոցա, որչափ բարձրագոյն գահոյք են կամք՝ քան զզգայական բաղձանս. և եթէ հայեցեալ յիշխանութիւն իւր, իբր զի նոքա 'ի կարգաւորել զներքին կիրս՝ հային յառանձնական օգուտ. և սա 'ի կարգաւորել զարտաքին գործս՝ հայի 'ի հասարակաց օգուտ. և թէ պահի՝ պահպանէ զթագաւորութիւն: Այլ յայսմ վայրի արժան է քեզ վերստին յիշել, զոր տուաք 'ի սկզբան անդ, թէ զչորեսին գլխաւոր առաքինութիւնս մարթ է մտածել, կամ որպէս չորս տարերս պիտանիս իւրաքանչիւրում բարոյական առաքինութեան, կամ որպէս չորս մասնաւոր առաքինութիւնս տրոհեալս յայլմէ ամենայնէ սեպհական առարկայիւ: Այսպէս ըստ այսմ արդարութիւնն տարրական գտանի յամենայն առաքինութիւնս. ըստ որում յամենայնի 'ի նոսա պիտի ուղղութիւն կամաց, և որ գործէ բարոյապէս՝ գործէ ուղիղ: Բայց



արդարութիւնն մասնաւոր, զորմէ է աստանօր խնդիր, ոչ արտայայտի այլով անուամբ, բայց եթէ արդարութեամբ: Այսպէս գործ է գտանել զբուն և զգլխաւոր սահման արդարութեանն, զորմէ յայսմ վայրի են բանք. առ որ պիտի մեծ աշխատութիւն առաւել քան զոր կարծիցես:

Արիստոտէլ, վասն զի 'ի դժուարին խոյզս ոչ անդէն վաղվաղակի 'ի վերայ բերէ սահմանս, այլ 'ի խնդիր լինի այնց, որպէս թէ հատատելով զհետ հետոց հասարակաց կարծեաց, զի ապա քննեսցէ իւրով գատմամբ, վասն այսորիկ 'ի վերայ առաքինութեանս որ ազնուագոյնն է և պիտանագոյն, բայց և խրթնագոյն և շփոթ ընդ այլս, յերևելեաց անտի սահմանաց այլոց իմաստասիրաց քաղէ սահման այսպիսի: Արդարութիւնն է Ունակութիւն, որով յօժարի մարդ առ արդար իրս, եթէ առ առնել զնոսա, և եթէ 'ի կամել թէ արասցէ: Անիրաւութիւնն է Ունակութիւն, որով յօժարի մարդ առ անիրաւ իրս, եթէ առ առնել զնոսա, և եթէ 'ի կամել թէ արասցէ: Ուր ունիս տեսանել, զի չէ այս գլխաւոր և ճիշդ սահման Արիստոտէլի 'ի վերայ արդարութեան, որպէս ոմանք կարծեն, այլ բովանդակութիւն ինչ երից սահմանաց այլոց իմաստասիրաց. որոց ոմանք սահմանէին զարդարութիւնն 'ի տրամադրութենէ գատման մտաց, այլք 'ի գործոց, և այլք յունակութենէ կամաց: Բայց ամենեքին եդեալ զարդարն որպէս բուն առարկայ արդարութեան, թողուին 'ի տարակուսի՝ թէ զինչ իցէ արդարն: Մինչ զի սահման նոցա պէտս ունի այլում սահմանի. զոր օրինակ, եթէ 'ի հարցանել ցնոսա, զինչ է արդարութիւն, պատասխանէին, Ունակութիւն որ յօժարեցուցանէ 'ի գործել զգործս արիականս: Որոց յիրաւի էր անդրէն հարցանել, Զինչ իցէ գործն արիական, և յայսմ է գլխովին դժուարութիւնն: Այլ Արիստոտէլ ընկալեալ որչափ ինչ զօրէն այս հասարակաց իմաստք, կոչէ զնոսա առաջին ստուերագրութիւնս արդարութեան. որպէս թէ կամելով տալ, 'ի վերայ այսր ուրուական գծագրութեան գիտէ ինքն եւս արծարծ գունովք նկարել զկատարեալ պատկեր արդարութեան ճշգրիտ սահմանաւ, վաղվաղակի իբրև յայտ արասցէ թէ զինչ է արդարն: Բայց և յայսմ վայրի 'ի սահմանաց անտի առնու նա զայսոսիկ հանրական ծանօթութիւնս, որք սկիզբն առնեն հորդել նմա ճանապարհ 'ի դժուարինն յայն ձեռնարկ: Առաջինն է, թէ արդարութիւնն չէ ունակութիւն ուղղիչ կրից, իբրև զայլ առաքինութիւնս, որք կոչին, կարգեալք առ օգուտ անհատին. այլ ուղղէ զկամս առ գործս արտաքինս որք հային յօգուտ այլոց: Մինչ զի յայլ առաքինութիւնս նախ մտածի, զինչ զգածեալ իցէ մարդ. և ապա թէ զինչ գործիցէ. բայց յարդարութեան մտածի նախ՝ թէ զինչ գործիցէ մարդ, և ապա թէ զինչ զգացեալ իցէ. իբր զի գոր-

ծողութիւնք ծնանին 'ի ներքին տրամադրութենէ։ Երկրորդ թէ ուղղութիւն կամաց ենթադրէ զուղղութիւն գործնական մտաց, առանց որոյ է նա կոյր դշխոյ՝ անառաջնորդ. իբր զի հնար է կամաց մերժել զուղիղ խորհուրդն, այլ ոչ գործել ուղիղ առանց ուղիղ խորհրդոյ մտաց։ Բայց թէպէտ և միտք ճանաչեն զարդարն և զանիրաւն, և կամք ազատ են առ երկաքանչիւրն, սակայն և այնպէս ունակութիւն արդարութեան միտեցուցանէ միայն առ գործս արդարս, և անիրաւութիւնն առ անիրաւս։ Զի ճանաչումն ձգի առ երկուս ներհականս. բայց ունակութիւնն է որոշեալ առ մին միայն։ Որպէս գիտութիւն առողջութեան հայի յառողջութիւն և 'ի հիւանդութիւն, բայց ունակութիւն առողջութեան միտեցուցանէ միայն առ գործս առողջարարս։ Մինչ զի առ 'ի լինել արդար՝ շատ է ունել զունակութիւն արդարութեան. բայց առ ուսուցանել թէ զինչ է արդարութիւն, պիտի և ուսուցանել թէ զինչ է անիրաւութիւն։ Հուսկ ապա կնքէ թէ ունակութիւնք ներքինք ճանաչին յարտաքին գործոյ, և 'ի ներհականէն ճանաչի այլ ներհականն, և 'ի քանի տեսակս բաժանի մի 'ի ներհականաց, 'ի նոյնքանս բաժանի և միւսն։ Վասն այսորիկ արդարութիւն և անիրաւութիւն խնութեամբ ճանաչին 'ի գործոց իւրեանց. բայց յանիրաւ գործոց դիւրագոյն ևս ճանաչին գործք արդարք. և թէ քանի տեսակք են անիրաւ գործոյ, նոյնչափ տեսակք են և արդար գործոյ։ Եւ ահա ընդ այս հեռաւոր շրջան իջանէ 'ի ճանաչումն արդար գործոյ, և մասանց նորա, ձգեալ 'ի ներհականէն այսպէս։

Կրկնակի սովոր եմք իմանալ, թէ գործէ ոք անիրաւութեամբ. մի եթէ գործէ նա ընդդէմ գրաւոր օրինաց. և երկրորդ եթէ գործէ նա ընդդէմ բնաւոր կամ քաղաքական ուղղութեան։ Մին կոչի անօրէն, զի ոչ հատուցանէ օրինաց զիւր պարտս, պարտաւոր գոլով պահպանութեան նոցա։ Երկրորդն կոչի անիրաւ. զի աւելի առնու 'ի բարեաց, և պակաս 'ի չարեաց քան զարժանն՝ 'ի վարել իւրում ընկերական կենաց։ Արդ մեք խօսեսցուք նախ զօրինական արդարութենէ, որ հակադրի օրինական անիրաւութեան։ Եւ ապա զուղղութենէ, որ հակադրի անուղղութեան. անուն կոչեալ նմա արդարութիւն հանրական. և սմա արդարութիւն մասնաւոր։



## ԳԼՈՒԽ Բ.

*Յաղագս օրինական կամ հանրական արդարութեան։*

Օրէնք են գրական և հրապարակական կանոնք քաղաքական կենաց՝ կարգեալք առ երջանկութիւն հասարակապետութեան։ Ապաքէն լուար, թէ երջանկութիւնն առաւելապէս հաստատեալ կայ յառաքինութեան որ գերագոյնն է 'ի մարդկային բարիս։ Եւ վասն այսորիկ նիւթ օրինաց ընդ իւրև փակէ զամենայն առաքինութիւնս, առ 'ի վանել 'ի հասարակութենէ զամենայն մոլութիւնս որք ուղղակի հակառակին երջանկութեան, որպէս ախտք՝ կատարեալ առողջութեան։ Բարձ զմոլութիւնս, և ահա բարձեր զօրէնս։ Լիկուրգոս չետ գրաւոր օրէնս Սպարտացւոց. զի փոխանակ օրինաց ունէին բարի բարս գրեալս 'ի բնէ 'ի կենդանի կուրծս, և ոչ յօրէնագրաց 'ի մեռելոտի մաշկս։ Ոչ կային օրէնք յոսկեղէն դարուն, զի ոչ կային ապիրատութիւնք, յայնժամ ծնաւ իրաւախոհութիւն, յորժամ ծնաւ անիրաւութիւն. մոլութիւնք եղեն սկզբնապատճառք գեղեցիկ առաքինութեանս որպէս հիւանդութիւնք եղեն սկզբնապատճառք արուեստի բժշկութեան։ Ապա քանզի արդար է վախճան օրինաց, արդար են և օրէնք. և թէ չէին արդարք, ոչ լինէին օրէնք, այլ խեղճք հասարակաց ազատութեան, և գեղատուութեան թոյնք։ Արդ եթէ իւրաքանչիւր քաղաքացի մասն է հասարակութեան, և ամենայն մասն համաձայնիլ ունի իւրում բոլոր մարմնոյ, յայտ է թէ օրէնք որք պարտաւորեն զբոլոր մարմինն, պարտաւորեն և զիւրաքանչիւր մասն լինել առաքինի[225]։ Այո, առաքինութիւնք իսկ պարտաւորեն զմարդ խորշել 'ի մոլութեանց. ժուժկալութիւնն 'ի զեղխելոյ. արիութիւնն 'ի զէնընկեց լինելոյ. հեզութիւնն 'ի սպանանելոյ։ Բայց քանզի յոլովակի կամքն հակառակի բանին և իւրում օգտի, արդարութիւնն օրինական, 'ի վերայ բնաւոր պարտաւորութեան որ հայի յօգուտ անհատին, յաւելու զպատժական խստութիւն, բռնան առնել ստամբակելոյ, զի իցեն արդարք հայելով 'ի հասարակաց օգուտ։ Եւ ոչ վասն այսր գրաւոր օրէնք բռնաբարեն զազատութիւն, զի են համաձայն օրինաց բնութեան։ Թէ ոչ է արժան յափշտակել զօտարին և ոչ սպանանել զանպարտն, և ոչ երդնուլ սուտ, և ոչ զինել ընդդէմ հայրենեաց, կանոնք են. որք ըստ որում թելադրին մարդոյ յառաքինութենէ, կոչին բնական օրէնք։ Բայց ըստ որում հրատարակեալ են ժողովրդեան յօրէնսդրաց, կոչին օրինական և հանրական արդարութիւն։ Ապա ոչ այլ ինչ է

արդարութիւնն օրինական, բայց նոյն ինքն առաքինութիւնն ըստ այլեւայլ հայեցուածոյ։ Վասն զի ըստ այնմ որ բարի առնէ զէնթակայն՝ յոր գտանի, կոչի ունակութիւն առաքինական. իսկ ըստ այնմ որ հայի 'ի հասարակաց օգուտ, կոչի արդարութիւն։ Բազումք բարիոք են վասն հասարակաց, որք չեն բարւոք յանձինս իւրեանց. և են որք բարւոք և առաքինի են յինքեանս, բայց վասն հասարակաց են անպէտք։ Բարւոք ասաց Բիաս, իշխանութիւնն յայտ առնէ թէ որպիսի ոք է մարդ։ Ո՞ր թագաւոր եղև անմեղ քան զբարեպաշտն Հռամիրոս, յոր թագաւորեցին ամենայն առանձնական առաքինութիւնք. բայց ծանուցաւ նա այնչափ անբաւական 'ի հրամայել հասարակաց, մինչև ընտրեցաւ հրամայել անձին միայնոյ 'ի սենեկի ուրեք[226]։ Ո՞յք եղեն առաւել ապիրատք և յամենայն մոլութիւնս շաղախեալք քան զՊարիկոս և զՏրեբոնիանոս. և ահա սոքա եղեն ճարտարապետք քաղաքական իրաւանց, առագխատագունիւն 'ի կայսերս. որոց առեալ զօրէնս 'ի կնոջէ ետ օրէնս ամենայն աշխարհի[227]։ Ապա կնքէ Արիստոտէլ, թէ արդարութիւնն օրինական դշխոյ է առաքինութեանց, վասն երկուց, մի զի փակէ ընդ իւրև զամենայն առաքինութիւնս, և երկրորդ զի հայի 'ի հասարակաց օգուտ, և առաքինութիւնք որք առաւել օգտեն, են մեծագոյնք, որպէս և մոլութիւնք որք առաւել վնասեն, են յոռեգոյնք։

## ԳԼՈՒԽ Գ.

### Յաղագս ուղղութեան կամ մասնաւոր արդարութեան։

Թէպէտ ամենայն առաքինութիւն համաձայն է թելադրութեան բնական օրինաց, սակայն ոչ ամենայն առաքինութիւն յատկապէս կոչի արդարութիւն և ուղղութիւն մասնաւոր։ Երևին մոլեկան ինչ արարք առ մարդիկ, որոց չէք այլ անուն մոլութեան, բայց անուղղութիւն կամ անհաւասարութիւն 'ի հաղորդել կամ 'ի բաշխել զբարիս և զչարիս ընկերութեան մարդկան։ Փախուստ 'ի պատերազմէ և արբեցութիւն և կռիւ, թէպէտ խոտորումն են 'ի բնական օրինաց. սակայն և այնպէս ունին զսեպհական անուն, զվէհերոտութիւն, զանժուժկալութիւն և զցասումն։ Բայց առնուլ զխասուք այլոց՝ յաւէտ 'ի բարեաց կամ նուազ 'ի չարեաց, չունի զայլ անուն մոլութեան, բայց զանհաւասարութիւն, որ թէ զտեղի առնու յառանձնաւորս, կոչի անիրաւութիւն մասնաւոր։ Այո, երբեմն մոլութիւնք ձեռն տան միմեանց։ Որպէս գորգոնեան քուերք փոխ տային միմեանց զթունաւոր աչս,



որ էր նոցա հասարակաց[228]. այսպէս մի մոլութիւն փոխ տայ միւսումն զիւր չարութիւն։ Ուստի և դէպ լինի անիրաւութեան չփոթիլ ընդ այլում մոլութեան, յորում խառնութեան գործն մոլեկան առնու զանուն 'ի գլխաւոր վախճանէ գործողին։ Որ գողանայ վասն շնալոյ, առաւել շնացող է, քան գող, և որ շնայ վասն գողանալոյ, առաւել գող է, քան շնացող. առաւել անիրաւ, քան անժուժկալ. երկու յանցանք ընթացակցին 'ի մի յանցուած. և գլխաւոր դիտումն առաւելապէս տեսակաւորէ զգործն։ Բայց սեպհական չարութիւն մասնաւոր անիրաւութեան, թէպէտ և խառն իցէ ընդ այլ մոլութիւնս, է միայն անիրաւութիւնն, զոր ոմանք կոչեն անուղղութիւն։ Արդ եթէ գտանի անիրաւութիւն ինչ մասնաւոր հիմնեալ յանուղղութեան, հարկ է թէ իցէ և արդարութիւն ինչ մասնաւոր հիմնեալ յուղղութեան, 'ի չառնուլ վասն իւր, և 'ի չբաշխել յայլս յաւէտ 'ի բարեաց կամ նուազ 'ի չարեաց՝ քան զարժանն։ Այս կշիռ է զոր ունի 'ի ձեռին օրէնսդրն Աստրէա, այսինքն է անկաշառ արդարութիւնն. որում անհնար է լինել արդար, եթէ երկաքանչիւր թաթք չիցեն զուգակշիռ[229]։ Այս այն չափ է, զոր դնէին 'ի ձեռս Նեմեսեայ աստուածուհւոյ, որոյ մէջն էր արդար. և որ ինչ խոտորիւր 'ի ծայրս կամ առաւելոյ քան զմիջասահման, էր անիրաւ։ Նշանակ է չափուս գաւազանն արքունի կամ իշխանական. նշանակեալ զէնթակայն արդարութեան, զկոչեցեալն ուղիղ, արդար, և հաւասար։ Ապա արդարութիւնն է անուն հանրական, որ փաղանունաբար բաժանի յարդարութիւն օրինական և յուղղութիւն. գեղեցիկ քորք և արժանի ծնունդք երկնայնոյն Աստրէայ. բայց կրտսերն հասակաւ երիցագոյն է յաւագութեան. և անդրանիկին վասն զի է անմեղագոյն, չէ ինչ մեծարգի։ Այնչափ մանկագոյն է արդարութիւնն օրինական քան զարդարութիւն մասնաւոր, որչափ նախնագոյն է ուղղութիւնն քան զօրէնս։ Բայց նա ընդ աշխարհի ծնեալ, չունելով զայլ օրէնս բայց զբնութեանն, յանձուկ և 'ի ծխամած հիւղս անդէն և անմեղ հովուաց առաւել սիրեցեալ քան ահընկէց, եկեաց առանձինն։ Բայց արդարութիւնն օրինական ծնեալ զկնի 'ի դարս Հռադամանթեանց և Դրակոնաց[230], շուրջ պահ ունելով ձաղկաւորաց և տապարաւորաց՝ նստի թագազարդ յաթոռ արքունի, առաւել երկրպագեալ քան սիրեցեալ. իբր զի ոչ յոյժ է սիրելի, որ ահընկէց է։ Այս նմանք են միմեանց և աննմանք։ Նմանք՝ ըստ էնթակային, զի երկաքանչիւրն են առաքինութիւնք համանչականք, զի տրամադրեն զկամս առ արտաքին գործս, որք հային յայլս։ Բայց աննմանք ըստ վախճանի, ըստ նիւթոյ, ըստ առարկային և ըստ տեսակի։ Իբր զի օրինականն, հիմնեալ 'ի հրապարակական իրաւունս հայի 'ի հասարակա

բարին, ուղղութիւնն ամփոփեալ յառանձնական իրաւունս՝ հայի 'ի մասնաւորաց բարին: Նա յածի զբարեօք որոց 'անհընար է լինել չար, այսինքն է զառաքինութեամբք, որ միշտ են բարի: Սա յածի զբարեօք, որոց հնար է լինել չար այսմ կամ այնմ մասնաւոր ենթակայի. այսինքն է զմարմնական բարեօք, զընչիւք կամ զպատուով: Նա պէսպիսանայ ըստ պէսպիսութեան տեղեաց և ժամանակաց ըստ դատման օրէնսդրին: Բայց ուղղութիւնն թելադրեալ 'ի բնութենէ 'ի հանրական մօրէ, յամենայն տեղիս է նոյն:

## ԳԼՈՒԽ Դ.

*Յաղագս գերարդարութեան:*

Ի մէջ օրինաց և ուղղութեան է միջական ինչ արդարութիւն, որ մեկնէ զօրէնս ըստ ուղղութեան, և սա կոչի գերարդարութի: Զօրէնս արդարս պարտ է սրբութեամբ պահել, զանիրաւս 'ի սպառ նանրացուցանել, զերկբայականս՝ իմաստութեամբ մեկնել: Մետեղղոս փոխեաց զօրէնս Թուրացւոց յօրէնս Հռովմէականս՝ բազում առաւելութեամբ արդարս. և Աթենացիք յօրէնս Սողոնի փոխեցին զօրէնս Դրակոնի, զօրէնս արդարև վիշապի և ոչ մարդոյ, գրեալս արեամբ և ոչ մելանաւ. զի զամենայն թեթև ինչ վրիպակ պատուհասէր ծանու տանջանօք, բառնալով զգէր 'ի վերոյ 'ի բարիս բնութեան յայնմանէ, որոյ բարձեալ իցէ յայլմէ զգուշաքեայ իմն 'ի բարեաց բախտի: Անագորուն էին օրէնք Թասայ արքայի 'ի Տաւրիս, զոհել Արտեմեայ զամենայն զպանդուխտս: Վասն այսորիկ այն ինչ կամէին զոհել զպանդուխտն Ովրեստէս, նա ինքն զոհեաց զօրէնսդիրն, և արեամբ նորա ջնջեաց զնորուն օրէնս [231]: Հռովմայեցիք ոչ ջնջեցին զօրէնս երկոտասան տախտակաց [232], այլ մեկնեցին. վասն այսորիկ իրաւախոհք նոցա ոչ կոչեցան նորոգիչք, այլ թարգմանք օրինաց: Են պատկերք յորս թէ հայիս 'ի միջէ կողմանէ՝ երևին այլանդակ իմն. և թէ 'ի միւսմէ, երևին դէմք մարդկային: Սոյնպէս օրէնք ինչ թէ հայիս 'ի նկարագիրն, երևին դժընդակք. թէ մեկնես 'ի բարի՝ գերարդարութեամբ, լինին մարդկայինք: Զարութիւնն միտէ առաւել յազատութիւն քան յօրինապահութիւն, վասն այսորիկ օրէնք առաւել միտեն յահարկութիւն քան 'ի գթութիւն: Բայց գերարդարութիւնն որպէս քննող և միջնորդ երկոցուն, հայեցեալ յաւէտ 'ի միտս քան 'ի խօսս օրէնսդրին, բարիոք օրէնս համարի խուսել երբեմն 'ի հրապարակական օրինաց: Բնութիւնն, որ



'ի վերայ իւրոց երախտեաց ոչ երբէք սորջանայ, հայի 'ի պահպանութիւն իրաց ինքնաբերաբար, այլ յեղծումն՝ ըստ պատահման: Եւ ուղղութիւնն որ նմանող է բնութեան, հայի առաւել 'ի պահպանութիւն քան 'ի պատուհաս քաղաքացւոց: Կրէոն 'ի կոտորածի Թեբէացւոց ամբարձեալ 'ի թագաւորութիւն Թեբէի՝ խիստ օրինօք հրամայեաց, զի կենդանւոյն թաղեսցի, որ զմեռեալ Թեբացի թաղիցէ: Անտիգոնէ գթած կին, ընդդէմ հրամանին թաղեաց զՊողինիկէ զիւր եղբայր: Կոչեցեալ սորա առաջի Կրէոնի 'ի դատաստան, համարձակ ետ պատասխանի. Հնազանդ եղէ Կրէոնէ՝ օրինաց. ոչ այնմ, զոր յերէկ և յեռանդն եդիր դու Թեբացւոց. այլ այնմ, որ յամենայն յաւիտենից եդեալ կայ 'ի վերայ ամենայն ժողովրդոց: Այս էր օրէնք բնութեան, զոր և մրջիւնք պահեն. և այս է ուղղութիւնն, որով Անտիգոնէ մեկնեաց առաւել ևս ողջմտութեամբ զօրէնս Կրէոնի, քան զնոյն ինքն Կրէոն որոյ եդեալ էր զայն. այսինքն, թէ այն արգելումն ոչ 'ի ներքս փակէր զքոյր մեռելոյն, վասն լինելոյն ընդդէմ բնական իրաւանց:

Ապա առաջին գործ գերարդարութեան է չափաւորել ուղղութեամբ զխստութիւն գրաւոր օրինաց. զի ծայրագոյն խստութիւնն է ծայրագոյն անիրաւութիւն: Երկրորդ գործն է, 'ի լրումն ածել մեկնութեամբ զհամառօտութիւն օրինաց: Յերկոտասան տախտակս օրէնք էին սակաւք, և բանք սուղք, և Պղատոնի կամք են, այսպիսի լինել օրինաց: Զէ օգուտ կառավարութեան հասարակութեան բազմութիւն օրինաց: Յորժամ հատանի ինչ ուռ յորթոյ, բազում ուռք շառաւիղեն, և 'ի հօտոցէ անտի առնուն բեղնաւորութիւն. և հօտոց օրինաց յաճախէ զյանցուածս՝ յաճախելով զարգելմունս: Եւ ևս առաւել չէ օգուտ բազմութիւն բառից. զի որպէս ասէ Սենեկա, 'ի վերայ իւրաքանչիւր բառի օրինաց ծնանի ինչ վէճ: Յուլիոսի կայսեր կամք էին ամփոփել զքաղաքական իրաւունս 'ի գուղնաքեայ ինչ մատեան, բայց սուր դաւադրաց խողխողեցին զայն գեղեցիկ գործ 'ի սիրտ նորա: Վասն այսորիկ այն առաջին օրէնք էին իբրև զպատասխանատուութիւնս պատգամախօսից. այնչափ արդոյք, որչափ էին սուղք: Այլ զոր օրինակ մեհենապետն իբրև յոգեշարժ աղդմանէ թարգման լինէր պատգամախօսին, 'ի լրումն ածեալ զոր նոյն լռէր, նոյնպէս այր իմաստուն զհետ երթեալ ուղղութեան բնութեան մեկնէ զհամր օրէնս, և խօսեցուցանէ զմեռեալ օրէնսդիրն իւրով բարբառով: Ապեղէս նկարէր զգլխաւոր ձևս, թողեալ իւրոց աշակերտացն նկարել զմանրամանր գծագրութիւնս, զորս կոչէր նա յաւելուածս և գեղեբեսութիւնս պատկերին: Ըստ սմին օրինակի զգլխաւոր նկարագրութիւնք քաղաքական կենաց նկարագրեցան 'ի վերայ

այնց երկոտասան տախտակաց, Թողեալ զի 'ի մասնաւորս ուղղութիւն Թարգմանին տացէ գործոյն զկրումն: Թող զի թէ և օրէնք լինէին ճոխք, յոյժ դժուարին լինէր հպեցուցանել զնոսա անհատական դիպուածոց, զորս օրէնսդրին անհնար է տեսանել 'ի հեռաստանէ. զի անհնար է նմա լինել յառաջատես, ոչ գոլով գուշակ: Պարագայքն են որք տեսակաւորեն կամ ծանրացուցանեն և կամ նուազեն զյանցանսն: Դատապարտեն օրէնք զայն որ խոցէ զայլս: Գուցէ խոցիցէ ոք, բայց թեթև. ծանր խոցիցէ, բայց ակամայ. կամաւոր իցէ հարուածն, բայց ոչ ազատ. ազատ իցէ, բայց գրգռեալ 'ի ծանր [illegible]. Որ զայլ ոք գրգռէ, խնդրէ զվնաս անձին, և անիրաւութիւն ոչ լինի այնմ որ 'ի խնդիր է նորա: Ճարտարապետք 'ի յղկել զկիճս բոլորչի սեանց, ոչ 'ի գործ ածեն զքանոն Պոլիկլէտեան, որ 'ի խիստ և յանճապուկ երկաթոյ. այլ զքանոն Լեսբեան որ 'ի կապարէ, ուղիղ միանգամայն և ծեքական, յարեալ յարմարեալ ոչ զկիճն քանոնի, այլ ըզքանոնն կճոյ: Կանոն երկաթի են օրէնք, և կանոն կապարեայ է ուղղութիւն. երկաքանչիւրն ուղղորդք, զի հիմնեալ են 'ի բանն: Այլ այն անայլայլակ հայեցիւք 'ի դիպուածն, և ոչ 'ի պարագայս է կարի իմն խիստ: Եւ սա հայեցիւք 'ի պարագայս է գողտր և այլայլակ, պատշաճեալ զօրէնս դիպուածոյ, և ոչ զդիպուածն օրինի:

Պիտոյ է գերարդարութիւն և 'ի միաբանել զօրէնս, յորժամ երևին անմիաբան միմեանց: Էր օրէն ինչ յԱթէնս, զի մի ոք 'ի պանդխտաց ելցէ 'ի վերայ պարսպի: Էր միւս ևս օրէնք որ հրամայէր, զի 'ի հնչել ձայնի վառելոյ 'ի զէն, առ հասարակ ելանիցեն 'ի վերայ պարսպի: Սոլոն օրէնսդիր օրինացս Թուեցաւ խոսել պատուածոյս: Ապա իբրև պաշարեցաւ Աթէն, քաջն Սեմպրոնիոս 'ի պանդխտաց անուի ել 'ի վերայ պարսպին, և 'ի վայր հոսեալ զԹշնամին զելեալն 'ի պարիսպ անդր կանգնել յաղթութիւն, զերծոյց զքաղաքն: Առ կայթիւն հասարակաց կոչեցաւ Սեմպրոնիոս յատեան առեան Արիսպագին: Ամբաստանեցաւ, որպէս թէ զընդդէմ գործեաց պանդխտական օրինաց. և ջատագովեցաւ յայլմէ օրինէ համախուռն յարձակման: Օրէն ընդ օրէն մաքառէին: Սա ընդ հանրութեամբ ցրէր զմասնաւորն. նա մասնաւորութեամբ ցրէր զընդհանուրն, և ողորմելին յերկուց օրինաց միջի կայր ընդ ուռն և ընդ սուր, ընդ յաղթանակ և ընդ պատուհաս: Այլ պէտք եղեն գերարդարութեան. զի 'ի բացատրել զերկաքանչիւր օրինացն զխախճան, յաղթականն մի դատապարտեսցի յԱթենացւոց. և Աթենացիք մի լիցին վատանուն, թէ սպանին զյաղթականն առ չլինելոյ նմա վարձահատոյց:

Ապաքէն 'ի միտ առէր թէ արդարութիւնն օրինական հայի յօգուտ հասարակաց, և մասնաւորն յօգուտ առանձնական:



Ուսաւ և վերաբերին՝ նա 'ի քաղաքականութիւն, զի արասցէ քաջ օրէնսդիրս. և սա 'ի բարոյականն, զի արասցէ քաջ քաղաքացիս: Արդ Արիստոտէլ երկոցուն գիտութեանցս ուսուցչապետ՝ զճառս օրինական արդարութեան պահեալ դրոց քաղաքականութեան, ճառէ աստանօր միայն զմասնաւոր արդարութենէ. բաժանեալ զայն յերկուս տեսակս հաւասարս, ըստ երկուց գլխաւոր գործողութեանց նորա:

## ԳԼՈՒԽ Ե.

*Յաղագս արդարութեան տրամաբաշխականի և փոխարինականի՝ ընդդէմ Պիւթագորեանս:*

Տրամաբաշխական արդարութիւնն է, որ 'ի բաշխել զբարիս հասարակաց առ բաղումս, պահէ զհամեմատութիւն երկրաչափական, ըստ հանգամանաց ընդունողին: Փոխարինականն է որ պահէ զհաւասարութիւն թուաբանական 'ի փոխարինութիւնս և 'ի դաշինս որ 'ի մէջ առանձնաւորի և առանձնաւորի: Երկաքանչիւրն տայ իւրաքանչիւրում զիւր արժանն հաւասարութեամբ. բայց հաւասարութիւն տրամաբաշխականին է համեմատական, 'ի չափել նորա զհանգամանս անձին ընդունողի: Հաւասարութիւն փոխարինականին է անբաժանելի, 'ի չափել նորա զհանգամանս իրին, զոր պարտն է տալ: Երկաքանչիւր հաւասարութիւն հաստատեալ կայ 'ի միջասահմանութեան. զի տան ոչ յաւէտ և ոչ նուազ քան զպահանջել բանին: Եւ վասն այսորիկ երկաքանչիւրն են առաքինութիւն, զի առաքինութիւն զմէջն ունի զերկուց ծայրից: Եւ մի ինչ դժուարին լիցի քեզ իմանալ, թէ զիարդ մին երկրաչափական կոչիցի և միւսն թուաբանական: Թուաբանական կոչի փոխարինականն, զի հաստատեալ է 'ի մէջ անբաժան, իբրև զթիւս այսպէս. Տիտիոս պարտի Սեմպրոնիոսի վասն ընչից գնելոց վճարել հարիւր լիպրա ոսկի: Սա է դաշն փոխարինական. և հարիւր լիպրայն է թիւն, յորում հաւասարին պարտք և առնլիք. զի թէ վճարի հարիւրի հարիւր, մնայ և ոչինչ: Վասն որոյ 'ի կոչել Սեմպրոնիոսի զՏիտիոս 'ի դատաստան, իբր զի ոչ կայ 'ի խոստման, եթէ դատաւորն առնու 'ի Տիտիոսէ հարիւր լիպրա ոսկի, և տայ Սեմպրոնիոսի, լինի արդարութիւն փոխարինական, և հաւասարութիւն թուաբանական, զի թիւն է զուգահաւասար: Բայց արդարութիւնն տրամաբաշխական կոչի երկրաչափական, զի հաստատեալ է 'ի համեմատութեան երկու իրաց առ երկու իրս: Տիտիոս սակարկէ ուսեալ երկուց ծառայից, որոց մին է կար-

ճին և միւսն սկայ։ Յայտ է թէ նոյնաքանակ կերակրով կարճիկն ապրի, այլ սկայն սովամահ մեռանի։ Վասն այսորիկ կամք են օրինաց, զի տացի կերակուր ըստ համեմատութեան անձին։ Ապա պարտ է խնամածու բաշխողին հայել, որչափ ինչ ճահողական իցէ կարճկին, և ըստ համեմատութեան որչափ ինչ ճահողական իցէ մարմնոյ՝ քառապատիկ մեծ եղելոյ։ Արդ այս համեմատութիւն հաստատի 'ի չորս ծագս տարանջատս. այսինքն յերկուս իրս, որք տուեալ լինին, և յերկուս անձինս, որք ընդունին. և այս ծագք գրոշմին 'ի ձև երկրաչափական ինչ քառակուսւոյ։ Առաջին ծագն է կարճիկն, և երկրորդ կերակուր կարճկին. երրորդ սկայն, չորրորդ կերակուր սկային։ Արդ զայս կերակուր հաշուէ խոհական բաշխողն 'ի կերակրոյ կարճկին կանոնաւն համեմատութեան՝ որ կոչի կանոն ոսկի։ Եթէ առ սնունդ երկթզաչափ կարճկի պիտի երկու լիպրա ցորեան, քանի՞ լիպրայք պիտոյ իցեն վասն ութ թզաչափ սկայի։ Ապա յայնժամ պահի արդարութիւնն տրամաբաշխական և երկրաչափական, յորժամ չորրորդ ծագն զնոյն համեմատութիւն ունի ընդ երրորդին, զոր ինչ երկրորդն ընդ առաջնոյն. և փոխադարձեալ, յորժամ երկրորդն զնոյն համեմատութիւն ունի ընդ չորրորդին, զոր ինչ առաջինն ընդ երրորդին, այսպիսի իմն ձևով։

Ա. Կարճիկն. Գ. Սկայն.



Բ. Երկու լիպրա. Դ. Ութ լիպրա։

Եւ արդ քանզի բացատրեցան եղերք արդարութեանն երկրաչափականի և թուաբանականի, տրամաբաշխականի և փոխարինականի, սկիզբն արասցուք խօսել զերկաքանչիւրոյն ուրոյն։



## ԳԼՈՒԽ Զ.

### Յաղագս տրամաբաշխական արդարութեան։

Եթէ իւրաքանչիւր քաղաքացի մասն է հասարակութեան, պարտ է նոցա բաժանորդ լինել բարեաց և չարեաց հասարակութեան. զի զայս պահանջէ ընկերութիւն և արդարութիւն։ Այլ աստանօր մարթ է քեզ խնդրել երկու ինչ։ Մի եթէ՝ պա՞րտ իցէ իւրաքանչիւրում՝ բաժանորդ լինել թուաբանօրէն, ըստ հաւասար մասանց. թէ երկրաչափօրէն, ըստ համեմատութեան հանգամանաց անձանց։ Երկրորդ, ո՞ր իցեն հանգամանք որք առնեն զանձինս յաւէտ կամ նուազ արժանաւորս։ Երկաքանչիւր տարակոյս կախեալ կայ զկարգաւորութենէ հասարակութեանն բաշխողի, և զբնութենէ բարեացն բաշխելոց. որովհետև բարիք զհետ երթան արժանաւորութեան, և արժանաւորութիւնն զհետ երթայ կարգաւորութեան հասարակութեան։ Չորք են ըստ Արիստոտէլի, պարզ կարգաւորութիւնք հասարակութեան. Միապետութիւն, որ է կառավարութիւն միոյ իշխանաւորի. Աւագպետութիւն, որ է կառավարութիւն առաքինեաց. Ազնուապետութիւն, որ է կառավարութիւն ազնուականաց. Ժողովրդապետութիւն, որ է կառավարութիւն ժողովրդականաց։ Բայց 'ի պարզ կարգաւորութեանց աստի լինին պէսպէս խառնուածոյք. որպէս 'ի չորից պարզ գունոց բաղադրին անբաւ գոյնք։ Միապետութիւնն է կառավարութիւն ազնուագոյն բայց ըստ կառավարողին, այլ ծանրագոյն ըստ կառավարեցելոյն. իբր զի ամենեքին կախեալ կան զակնարկութենէ միոյ ուրուք։ Աւագպետութիւնն է կառավարութիւն սակաւուց առաքինեաց և իմաստնոց. որպիսի էր կառավարութիւն փիլիսոփայից և մոգուց և քրմաց եգիպտացւոց։ Ազնուապետութիւնն Արիստոտէլ կոչէ կառավարութիւն փարթամաց. զի նա զազնուականութիւնն սահմանէ հնութիւն զարմի հանդերձ փարթամութեամբ։ Փարթամութիւն առանց ազնուականութեան է նախանձելի. և ազնուականութիւն առանց փարթամութեան է ծիծաղելի։ Եւ այսպիսի եղև կառավարութիւն Հռովմէական ծերակուտին յետ թագաւորաց, և յառաջ քան զտրիբունութիւն։ Մինչև թուոյ տեարց մեծ լինել քան զաւագպետականն, և փոքր քան զժողովրդապետականն։ Իսկ ժողովրդապետութիւնն է կառավարութիւն առաւել անարգ, բայց առաւել ազատ. զի համակ են ժողովրդականք, բայց և համակ ինքնիշխանք. վասն զի այնչափ աղէկ քուարկութիւն ոստայնանկի, որչափ գլխաւորի, որ-

պէս 'ի Սպարտա։ Ապա 'ի ժողովրդապետութեան նա է առաւել արժանաւոր և բարեացապարտ, որ առաւել պինդ ունի զհասարակաց ազատութիւն. յազնուապետութեան՝ նա որ է առաւել. ազնուական յաւագպետութեան՝ նա որ է առաւել առաքինի և 'ի միապետութեան՝ նա որ աւագամեծար է առ արքայի։ Բայց որպէս յամենայն մարմնի կան անդամք մի քան զմի ազնուագոյնք, թէպէտ և 'ի նմին կաւոյ ստեղծեալք, սոյնպէս ամենայն հասարակապետութիւն թէպէտ և ժողովրդական, է յօդաւորեալ 'ի բազում կարգաց մի քան զմի արժանաւորաց ըստ պաշտամանց և սպասաւորութեանց վերագունից, միջակայնոց և ստորնոց։ Յամենայն բարեկարգ հասարակապետութեան միշտ եղեն քահանայք, իշխանաւորք, զօրականք, արուեստաւորք. բայց ըստ կազմութեան հասարակապետութեան՝ աստիճան քան զաստիճան էր առաւել յարգական. 'ի Թեբէ քահանայք, յԱթէնս գիտնաւորք, 'ի Սպարտա զօրականք, 'ի Հռովմ ազնուականք, և 'ի հասարակապետութեան ինչ սպանդապետք։ Թող զի անձն ոք բարեացապարտ հասարակաց՝ միշտ յաչս հասարակաց է մեծարգի։ Մինչ զի յամենայն հասարակապետութեան թէպէտ և թուաբանական, գտանի միշտ երկրաչափական ինչ համեմատութիւն անձանց։

Մեւս տարակոյս է զբարեօք՝ զորս հասարակութիւնն հաղորդէ իւրոց առանձնաւորաց։ Վասն զի ոմանք են սակարկեալք հանդերձ պարտաւորութեամբք. որպէս թոշակք քաղաքականք և զինուորականք, և վարձք գործաւորաց։ Այլք պարգեւականք 'ի պատիւ՝ որպէս յաղթանակք, պսակք, և առանձնաշնորհութիւնք վասն քաջագործութեանց եղելոց 'ի ծառայութիւն հասարակաց։ Այլք պարտաւորիչք միանգամայն և պատուաւորք. որպէս աւագութիւնք, հանդերձանք հիւպատոսականք, և գործակալութիւնք զինուորականք և պճղնաւորականք։ Այլք սոսկապէս ձրիականք 'ի յանկուցանել զկիրս քաղաքացեաց և զօրականաց. որպէս տուչութիւնք պարգեւականք, տուրք դրամոց՝ կամ չափու ցորենոյ, կամ բաշխիւք կոչուածոց և աւարաց։ Այս ամենայն է առարկայ արդարութեան, այլ ոչ ամենայնն տրամաբաշխականին. Վճարք և թոշակք՝ թէպէտ և առ անհաւասար անձինս, վասն զի են սակարկեալք ոչ բաշխին երկրաչափական արդարութեամբ այլ թուաբանականաւ. վասն զի ոչ լինի հայելով յորակ ընդունողին, այլ 'ի քանակն ճշդիւ պարտաւորեալ. և ոչ մտածի հասարակութիւնն որպէս վերագոյն ոք առ իւր հպատակ, այլ որպէս առանձնաւոր ոք առ առանձնաւոր. վասն զի փոխադարձ դաշինն հաւասար պարտաւորէ զդաշնագիրս։ Ի հատուցմունս պատուաւորս, յորս ոչ է ճիշդ պարտաւորութիւն սակարկութեամբ, այլ պատշաճողութեամբ և



հասարակաց օրինակաւ, պարտ է զի 'ի բաշխոյս պահեսցի արդարութիւն երկրաչափական, ըստ համեմատութեան անձանց. զի մի կանգնեսցի արձան քարեղէն մեծին Պոմպէոսի, և արձան ոսկեղէն Դեմետրի իւրոյ ազատագրեալ ծառայի։ Եւս առաւել զի նշանակք պատուոյ յոլովակի սակաւագին են պատուողին, և թանկագին պատուեցելոյն։ Մեծապէս շնորհապարտ է Հռովմ Ատտիլիոսի՝ շինուածոց գործակալի, որ նախ առաջին վարձահատոյց եղև ծերակուտին չքով. վասն զի որ յառաջն սինկղիտոսք և ազնուականք զամս հինգ հարիւր նստէին խառն ընդ ժողովրդականս 'ի թատրոնի, սա ետ նոցա տեղի ազնուականագոյն. որով տրամաբաշխական արդարութեամբ ձգեաց յանձն զսէր ամենայն ազնուականաց, և զատելութիւն ամենայն ժողովրդեան։ Բայց առաւել ևս շնորհապարտին ամենայն հասարակապետութիւնք աթենականին, որ եղև առաջին 'ի տալ յարգ անգին՝ տերևոց ծառոց, պսակեալ զյաղթականս ոստով ձիթենւոյ։ Տերևք այնր անկոյ ճարակ մատուցին զինուորական եռանդեան, քան հիւթ նորա լապտերաց։ Այլ չէր գիտելի, յաղթականն զպսակն պատուէր թէ պսակն զյաղթականն։ Յայնմ օրէ ձիթենիք եղեն թանկագին և արիւն թեթևագին, 'ի հեղուլ մարտկաց զարիւն 'ի ճակատամարտի, զի բարձեալ ունիցին ճիւղ մի։ Աւագութեամբք 'ի կիր արկանին կրկին արդարութիւնք. տրամաբաշխականն 'ի համեմատել զպաշտօնս անձանց, և փոխարինականն՝ 'ի վճարել զսակարկեալ թոշակս։ Աւագութիւնք են ծանրութիւնք պատուաւորք, և պատիւք ծանրաբեռինք։ Եւ վասն այսորիկ յիրաւի կոչին և բեռինք. զի տաժանաւորք են 'ի վարել, և ծանրածախք 'ի տանել, թէ ոչ թեթևաբեռնին օգտիւ և պատուով։ Ապա պիտոյ են երկու արդարութիւնք 'ի բաշխել զաւագութիւնս անձանց, զի մի առ անընդունակութեան գնոց գնիցեն, կամ առ աղքատութեան վաճառեսցեն զարդարութիւն։ Եւ այս լաւ ևս լինի 'ի միապետութեան, քան յայլ հասարակապետութիւնս։ Զի յաւագպետութեան առաւել առաքինիք չեն առաւել գործօնեայք։ Յազնուապետութեան, առաւել ազնուականք չեն առաւել առաքինիք։ Եւ 'ի ժողովրդապետութեան, ազնուական իշխանութիւնք բաշխին յաճախութեամբ քուէից, զորս դիւրաւ վաճառեն աղքատք. և որ գնէն զարդարութիւն, վաճառէ զայն։ Բայց 'ի միապետութեան հնար է արդար իշխանին յաննիաղ հանքաց ամենայն կարգաց առնուլ ընտրանաւ զանձինս համեմատս ամենայն աւագութեանց և պաշտամանց՝ վերագունից, միջակայնոց և ստորնոց՝ ըստ առաքինութեան, ըստ ճոխութեան, և ըստ հաւատարմութեան։ Թէպէտ վասն զի 'ի միապետութիւնս՝ բազումս ազդեն կիրք և նպաստք, որք են երկու ժանտախտք ընտրութեան, յայսմա-

նէ քաղաքականք առնուն առած, թէ յայլ հասարակապետութիւնս յոլովագոյն երևին անձինք գերապանծք: Իսկ 'ի հասարակաց պարգևատուութիւնս եթէ լինին բաշխումք ըստ համեմատութեան արժանաւորութեանց և գանձուց, մանեն երկու մեծ առաքինութիւնք. մեծագործութիւն 'ի պարգևելն, և արդարութիւն 'ի բաշխելն. և շնորհապարտ առնեն զհասարակութիւնն առ առանձնաւորս, և զառանձնաւորս առ հասարակութիւնն: Բայց եթէ պարգևք ընկեցիկ լինին անխտիր ում և իցէ, և առանց ինչ հարկի, աղքատացուցանեն զհասարակութիւնն. և ոչ զոք յառանձնաւորաց առնեն շնորհապարտ: Մանաւանդ թէ ծաղածանակ առնեն զպարգևատուն. իբր այն չափազանց տուչութիւնք Օգոստոսի, զորմէ առակաւ ասէին. ոչ ինչ եթող իւր, բայց զերկինս, և ըզտիղմ [235]: Ջհուսկն ասացից. այն իշխան ծաղկեցուցանէ զիւր հասարակապետութիւն, որ տայ զզգաստաւորութիւն գինեգունիցն, զզէնս զօրագունից, զքսակն հաւատարմագունից, զքննութիւն արդարագունից, զկառավարութիւն խոհեմագունից, և զաշխատութիւն կորովագունից:

Որ ինչ ասացաւ զբաշխէ բարեաց հասարակաց, պարտ է իմանալ զբաշխէ չարեաց հասարակաց. որպիսի են հարկք, և գլխահարկք, և տնահարկք, և զինուորական ծառայութիւնք, և արքունի ճանապարհաց տուրք: Զի ըստ ասից Արիստոտէլի, զարդարութիւն իւրովք հակառակօք լինի ուսանել. և յատուկ է ընկերութեան որ չէ գաղթնական մասնաւորիլ տուժից, որպէս շահուց: Սակաւ ապստամբութիւնք Հրէից առ ժողովուրդն հռովմէական լինէին, ասէ Ապպիանոս, յարդար գանգատանաց, զի էին նոքա առաւել ծանրաբեռնեալք քան զԱսորիս և քան զԿապադովկացիս և քան զայլ հարկատու ժողովուրդս: Ոչ մորմոքէին յաղագս բեռին, այլ յաղագս անհաւասարութեան բեռին. չէ ինչ ծանր բեռն բարձութիւն, որում ամենեքին միօրինակ տանին: Հաւասարութիւնն է մայր սիրոյ և խաղաղութեան. անհաւասարութիւնն ատելութեան և կռուոյ: Վասն այսորիկ գլխահարկն է բեռն արդասաւոր, բայց անիրաւ. զի 'ի բաժանիլն թուաբանօրէն 'ի հաւասար մասունս, և ոչ երկրաչափօրէն ըստ համեմատութեան, նոյն հարկ մեծատանն է անզգալի, այլ աղքատին անտանելի: Արգելեալ էր լծել զեզն և զէշ 'ի միասին, զի լծոյն ծանրութիւն անկեալ 'ի վերայ փոքուն ծանրի նմա յոյժ: Այս եղև անօրէնութիւն Օգոստոսի, որ յիւր գիրս գրեաց զանուանս ամենեցուն, այլ ոչ զամենեցուն ինչս: Դարման մատուցին յաջորդք այսմ անիրաւութեան, գրեալ և զամենեցուն ինչս. զի հանգանակեսցեն ըստ գոյին երկրաչափական համեմատութեամբ: Այն գիրք եղեն կշիռք արդարակշիռ, որ կշռեցին զիւրաքանչիւրոց զբեռն և զկար:



Ի դէպ է արդ յիշեցուցանել, թէ հայեցեալ աստանօր յարդարութիւն ոչ 'ի քաղաքական, այլ 'ի բարոյական, ըստ որում առնէ արդար զամենայն մարդ առանձինն, զամենայն զասացեալս զհամաբաշխական արդարութենէ իշխանին կամ հասարակութեանն պարտ է մասնաւորապէս հպեցուցանել պաշտօնէից, որք բաշխենն զբարիս և զտոյժս 'ի յանձնարարութենէ իշխանին, և հասարակութեան: Պատահէ յոլովակի զի պատուէրն է աստուածական, և կատարումն սատանայական: Միտ իշխանին է արդար և բարեպաշտ. այլ միտ գործակրին թիւրեալ, և շրջեալ յիւր օգուտ: Ընդ Սիմպլեգադեան ժայռս նաւարկէ 'ի դեղին ոսկի [234]: Մաքսաւորք՝ չար ևս քան զաւազակս՝ ստանկապահանջք արքունի հարկաց, անյագ վաշխիւ և անողորմ բռնութեամբ տառապեցուցեալ զժողովուրդս՝ անուանարկ առնէին զկառավարութիւն գթասիրին Օգոստոսի: Եւ վասն այսորիկ 'ի լինել արդար հրամանի զհարկսն ուղղակի յարքունի գանձս հատուցանել, այն զեղծագործ ձեռ 'ի բաց հալածեցաւ 'ի Հռովմէական հասարակապետութենէ: Միւս ևս անօրէնութիւն հնարեցաւ սիրեցեալն յԱղեքսանդրէ Սևերոսէ, զոր վերագոյնդ աստէպ յիշատակեցաք: Իբրև զգայր սա, թէ տէր իւր բաշխել կամի աւագութիւնս, կանխէր առ որս սահմանեալն էին առնուլ. ցուցեալ թէ կամի զպատիւսն 'ի նոսա առարկանել թէ տային նմա լիաձեռն պարգև: Աղեքսանդր որ 'ի տեսանել զանիրաւութիւն ինչ 'ի պաշտօնեայս իւր, բրդէր 'ի բարկութիւն, 'ի ծուխ հեղձոյց, որպէս արժան էր, զվաճառողն ծխոյ: Ոչ է արժան իշխանի անցուցանել զիւր պարգևս ընդ այլոյ ձեռն, բայց միայն ընդ իւրն: Գաղբա ետ Ոթոնի երկու հազար հինգ հարիւր գահեկանս, բաշխել աղքատ զօրականին: Ոթոն նոքիմբք կաշառաբեկս արարեալ զպահապանս, սպան զԳաղբա: Իշխանին պարտ է լինել նախանձախնդիր իւրոց շնորհաց. զի ժողովուրդն համբուրէ զձեռն որ պարգևէ, և ոչ զայն որ տայ պարգևել: Ծով ըմպէ զգետն, և յաղբիւր անդր ինչ ոչ հայի:

## ԳԼՈՒԽ Է.

*Յաղագս փոխարինական արդարութեան:*

Մինչ չև էր բանտաղերծ ոսկւոյ աքսորեալ զդարն զոսկեղէն, ամենայն սակարկութիւն լինէր փոխանակութեամբ. 'ի տալ իւրաքանչիւր ուրուք զայն ինչ զոր ունէր յաճախութեամբ, և յառնուլ զայն ինչ որում կարօտանայր: Բրուտն փոխանակէր դերձակի այնչափ անօթս խեցեղէնս, մինչև հա-

ւասարիլ արժողութեան հանդերձի. և դերձակն փոխանակէր ճարտարապետի այնչափ հանդերձս, մինչև հաւասարիլ արժողութեան տան: Ի գնոց աստի մարթիս իմանալ, որպիսի ինչ էր պերճութիւն այնր գեղեցիկ դարու, և որպիսի գանձք, զորս 'ի պաշտօն արկանէր ագահութիւնն 'ի գանձարանս: Վասն այսորիկ զսակարկութիւնս կոչէին փոխարինութիւնս, և զարդարութիւնն՝ փոխարինական: Բայց քանզի խոչ մեծ էր խճողել զանձուկ տունս այնչափ խառնաղանճ կահիւք, որոց դժուարին էր փոխադրութիւն որպէս և պահպանութիւն, եգիտ ագահութիւնն նոր հնար գնահատութեամբ ոսկւոյ, որում վասն քան զամենայն բնական մարմինս զանխուլ լինելոյ, առաւել եղեն հետազօտ. և ըստ սակաւագիւտ լինելոյ՝ եղև և թանկագին: Ապա ոսկւոյն վառեալ յաչս զնորահրաշ իմն սէր զնորոյ փայլման, անդէն վաղվաղակի եղև չափ գնոց և ըղձանաց. զի որ ունէր զոսկի, ունէր զամենայն. և զամենայնն ամփոփ 'ի մի արկղ: Յայնժամ սկսան իշխանք կենդանւոյն սողեցուցանել ընդ երկրաւ զգերիս, զի 'ի դուրս պեղեսցեն զոյս հրաշալելի պատուական, բայց և չարաչար. և այն ինչ յայտնեցաւ ոսկի, եւ արտաքս և երկաթ 'ի ծեծել զնա: Եւ յայնժամ ծեծեցաւ ոսկի 'ի կրպակս, յորժամ իշխանք դրոշմեցին 'ի նա զպատկեր իւրեանց, զի կրկնապատիկ լիցի երկրպագելի: Վասն որոյ չէին ինչ զարմանք, թէ ոսկին տանջեալ 'ի մարդկանէ տանջէ զմարդիկ, և զկեղծ խնդրէ զիւրոց հարուածոց կառումք: Բայց թէպէտ և այսու նորոգ եղանակաւ սակարկութեան՝ փոխարինութիւնն փոխեցաւ 'ի վճար, սակայն և այնպէս ամենայն սակարկութիւնք պահեցին զնախնի անունն փոխարինութեան: Վասն այսորիկ արդարութիւնն փոխարինական է այն, որ ուղղէ զանհաւասարութիւն սակարկութեանց 'ի մէջ առանձնաւորի և առանձնաւորի, բարձեալ յայնմանէ առ որում է աւելի քան զարժանն. և տուեալ այնմ առ որում է նուազ քան զարժանն: Ամէն իրի որպէս արդարութիւնն տրամաբաշխական փոխաբերէ ինչ ինչ 'ի հասարակաց առ առանձնաւորն նոյնպէս փոխարինականն փոխաբերէ ինչ ինչ յառանձնաւորէ յայլ առանձնաւոր 'ի պահել զհաւասարութիւն մարդկային տուրևառի: Աշխարհս է որպէս թատրոն ինչ, որոյ նստարանք են հասարակաց, ցորչափ են դատարկք. բայց որ նախ առաջին անդ տեղակալէ, եթէ 'ի վեր և եթէ 'ի վայր, զայն իւրացուցանէ, և ունի իրաւունս պինդ ունելոյ. այլ ոչ զրաւելոյ զայն՝ զոր այլ ոք ստացեալ ունի: Բնութիւնն մայր հասարակաց՝ արար զաշխարհս՝ հասարակաց: Բայց որ ժառանգութեամբ կամ սակարկութեամբ կամ այլ ինչ օրինաւոր անուամբ ստացեալ ունի զմասն ինչ նորա՝ եթէ փոքր և եթէ մեծ, ունի իրաւունս պահել զայն. և յայնժամ աշխարհ է 'ի խաղաղութեան, յորժամ



իւրաքանչիւր ոք խաղաղութեամբ ստացեալ ունի զիւրն: Թէպէտ և մասունք յիւրեանս իցեն անհաւասարք, եթէ իւրաքանչիւր ոք գոհ է ընդ իւր մասն, յայնժամ յանհաւասարութեան իսկ պահի հաւասարութիւն տուրևառի: Այո, բազում անգամ 'ի մէջ առանձնաւորի և առանձնաւորի առ պէսպէսութեան կարծեաց, 'ի վերայ հաւասարութեան լինի վէճ: Մեք կարծեմք թէ հակառակն կախեալ կան ընդ ոտիւք մերովք, և հակառակքն կարծեն, թէ մեք կախեալ կամք ընդ ոտիւք նոցա գլխիվայր. զի յերկնի չեք նշանակել սկիզբն, որ ցուցցէ ո՞ր կողմն իցէ վեր և ո՞ր կողմն վայր: Այսպիսի են վիճմունք կողման և կողման, 'ի պնդել երկաքանչիւրոցն թէ միւսն սայթաքէ յուղղութենէ. զի չերևի յայտնի, թէ ո՞ր իցէ մէջ չափուն, հանդիսամէտ կշռոյն և բուն մէտ բանին. վասն այսորիկ յոլովակի ոչ լուծանի կնճիռն առանց սուսերի: Արդ այս է սեպհական պաշտօն դատաւորին, որ և արժանապէս կոչի միջնորդ իրաւանց, զի լուեալ զերկոցունց կողմանց փաստս և մտախոհ լեալ, թէ ո՞ր իցէ ճշմարիտ մէջ երկոցուն ծայրից, և թէ ո՞ աւելի ունիցի և ո՞ նուազ քան զարժանն, հաստուցանէ զերկաքանչիւրն յայն հաւասարութիւն, զոր հաստատեաց յիւրում խորհրդեան: Վասն այսորիկ պարտ է դատաւորի լսել երկաքանչիւր կողման, 'ի տալ նմա բնութեան երկուս ականջս յայս սակս: Վասն զի որ դատէն՝ լսելով միոյ միայնոյ կողման, թէպէտ և դատեսցէ արդար, է դատաւոր անիրաւ: Ամէն իրի չէ պարտ նմա միտել զախորժակն 'ի մին քան 'ի միւսն, զի որ միտէ 'ի մի կողմն, ոչ ևս է միջնորդ, այլ հակամէտ. վասն որոյ և ոչ դատաւոր, այլ դատախազ: Վասն այսորիկ չէ պարտ նմա հայել ոչ յաւագութիւն, ոչ յազնուութիւն և ոչ յառաքինութիւն դիմելոցն առ նա. այլ միայն յառն և 'ի տուրն: Զի 'ի դատել թուաբանօրէն և ոչ երկրաչափօրէն, դատէ ըստ համեմատութեան հաւասարութեան, և ոչ ըստ հաւասարութեան համեմատութեան: Ընդհուսկն ասացից, պարտ է նմա լինել այնպիսի որ արդարութիւնն փոխարինական զգեցցի զմարմնեղէն պատկեր նորա, և ձայնիւ նորուն խօսեսցի առ մարդիկ, 'ի պահել զտուր և առ:

Արդ 'ի մարդկային տրոց և առից՝ ոմանք են կամաւորականք և քաղաքականք. ոմանք ակամայք և եղեռնականք. ոմանք զնիւթական և զմարմնեղէն իրօք. և ոմանք զաննիւթականօք և զանմարմնականօք: Բայց կանոն փոխարինական արդարութեան է նոյն: Կամաւորականք և քաղաքականք են վաճառմունք, գնմունք, 'ի վարձու տուչութիւնք, աւանդք, և այլ ամենայն սակարկութիւնք, որք պահանջեն զփոխադարձ և զուգաչափ կամս երկաքանչիւր կողման: Ակամայք և եղեռնականք են, գողութիւնք, հարուածք, զրպարտութիւնք և այլ ամենայն չարիք, որք բառնան յայլմէ նենգութեամբ զինչս,

զպատիւ, կամ զառողջութիւն, ընդդէմ կամաց միոյ 'ի կողմանց: Ոչ առնլին զրկանք, բայց եթէ կամելով. և ոչ ընկալեալ լինին, բայց եթէ չկամելով: Որ կամի զիւր ինչս, արժանի է թէ չար ևս ինչ լիցի նմա. և այնմ որ կամի զզրկանս, ոչ լինին զրկանք. սակայն թէ հաւանութիւնն ազատ իցէ, և ոչ բռնադատ: Բայց թէպէտ և ոչ լինին զրկանք այնմ որ կամի զայն, սակայն լինին զրկանք արդարութեան, որ ոչ երբէք կամի զանարդարն: Ապա այն է հանրական կանոն փոխարինական արդարութեան, զի որ ոք բառնայ զօտարինն, եթէ փող իցէ, եթէ համբաւ, եթէ աչք, և եթէ կեանք, պահէ առ իւր զոր եբարձ և շահեցաւ տուժիւք օտարի: Եւ ոչ երբէք լինի վճար արդարութեան, ցորչափ որ շահեցան չհատուցանէ զբարձեալն կամ զհաւասար գինն այնմ՝ որ տուժեցաւ: Եւ այս փոխարինութիւն է որ պահէ զհաւասարութիւն 'ի մարդկային կենակցութիւնս քաղաքականս կամ յատենականս: Եւ այսուիկ սկզբամբ ճանաչել ունիս դիւրաւ թէ զինչ է այն արդար և խիստ պատիժն, զոր կոչեն փոխադարձ տոյժ. զորմէ արժան է խօսել ինչ առանձին:

## ԳԼՈՒԽ Ը.

### Յաղագս փոխադարձ տուժի:

Հռադամանթն այն, որ արքանեկեալ արդարութեան՝ իմաստիւք, յօրինեաց քաղցր չափաւորութեամբ օրէնս փղձկեցուցիչս բազմաց, այնպիսի եղև Թագաւոր իրաւասէր, օրէնսդիր անաչառ և դատաւոր արդարակորով 'ի Լիկիա, մինչև բանաստեղծից ընտրել զնա և դատաւոր դատապարտ ոգւոց: Սա 'ի գրել իւրում համառօտ զփոխարինական արդարութենէ, զամենայն օրէնս յայս օրէն բովանդակեաց.

Թէ ոք կրէ զոր ինչ արար,
Արդարութեան առնէ վճար:

Այս է համբաւեալն այն Հռադամանթեան օրէն, որ կոչի փոխադարձ տոյժ, այնպէս իրաւացի, մինչև որպէս աստուածային պատգամ գրեցաւ 'ի բարոյական մատեանս, հրատարակեցաւ յօրէնսդրաց, 'ի գործ արկաւ 'ի դատաւորաց, և 'ի բանաստեղծից ևս գրեցաւ յատեան սանդարամետականաց գլխագրովք.

Զոր ինչ ոք առնէ, ըզնոյն և կրէ:

Այս այն անյեղլի չափ է Նեմեսեայ, որով չափին ոչ միայն



ամենայն իրաւունք քաղաքական և յանցաւորական, այլ և օրէնք իսկ ամենայն օրէնսդրաց: Զի կարի անգթականք համարին թէ անցանեն ըստ այս չափ, և կարի ներողականք թէ չհաւասարին այնմ: Կարի իմն ներողական եղև օրէն Լիկուրգոսի, որ ոչ պատուհասէր զգողն թէ ոչ ըմբռնիւր 'ի գողութեան անդ: Ոչ թէ պատուհասէր զյանցուածն, այլ զանհոգութիւն նորա 'ի յանցանել իւրում: Կարի անգթական եղև օրէն Դրակոնի, որ որպէս ասացաւ, զամենայն թեթև գողութիւն՝ կենօք պատուհասէր, զուգակշռեալ ըզգուզնաքեայն 'ի շահս ընդ մեծն 'ի կորուստս: Ապա ոչինչ օրէնք երևեցան երբէք այնպէս արդար և չափաւոր, որպէս այն թէ Իւրաքանչիւր ոք զայն կրեսցէ, զոր և արարն: Որ խորեացն զգրամ, տուժեսցի զգրամ. որ թափեաց զատամն, կորուսցէ զատամն. որ եհան զակն, կորուսցէ զակն՝ որ եբարձ զկեանս, կորուսցէ զկեանս: Այս է Թուաբանական փոխարինութիւն: Վասն այսորիկ ենթադրեալ բարոյապէս զօրէնս ըստ ասացելումդ, թէ Իւրաքանչիւր ոք ունի առ իւր զոր յափշտակեացն յայլմէ, ո՞ր տոյժ թուիցի այնպէս հաւասար, որպէս հատուցանել արդարութեամբ զոր առ իւր ունիցի ընդդէմ արդարութեան: Ոչ ոք պարտաւոր՝ յայսմ բնաւոր վճռոյ՝ թուի կարող լինել բողոքել զի նա ինքն 'ի գողանալ իւրում կամ 'ի սպանանել, գրէ ձեռամբացի զիւրն դատապարտութիւն. գիտելով թէ որչափ ինչ նա առնէ, այնչափ ինչ արասցի նմա: Որ ոք առնէ յանցանս ինչ, կամ դաշն, պարտաւորեալ զանձն արդարութեան լաւելեայն, կրել զայն ինչ չար զոր այլում առնէ, և վասն այսորիկ չունի զայլմէ տրտնջել, բայց միայն զանձնէ:

Այո, այս փոխարինութիւն Թուաբանական դիպաւոր է տուժից նիւթական և մարմնեղէն իրաց. զորս մարթ է Թուաբանօրէն չափել և Թուել. այլ չէ դիպաւոր անմարմնական իրաց և անհամեմատականաց, որպէս գեղջկութեանց, ստութեանց և շնութեանց. զի ոչ է հնար կշռել զհամբաւ կամ զվատահամբաւութիւն, և ոչ պատժել զյանցուած ինչ այլով յանցուածով: Սակայն և յայսպիսի խրողութիւնս ուղիղ դատաստանն եգիտ զիւր զուգակշիռն. արար երևելի զանմարմնականն, և փոխարինեաց անհամեստ յանցուածոց պատիժս համեստս: Զաղարտողն գեղջկութեամբ զհամբաւ օտարի, օծանէին մեղու, և մերկ առաջի արկանէին պիծակաց 'ի տապ արեւու. զի խայթոցք Թունաւոր ճանճոցս, որ նման են խայթոցի չարախօս լեզուի զայլս խթողի, և նա խթեսցի: Այս է՝ փոխադարձ տոյժ: Զսուտերդմաց հատանէին զլեզուս, զսուտգիր գրողաց հատանէին զձեռն. զի լեզուն, որ ողջ և խօսուն գոլով ուսոյց ստութիւն, համրութեամբ և պապանձմամբ քարոզեսցէ զճշմարտութիւն. և ձեռնն որ կենդանի և անկ-

տուր սղաւաղեաց զճշմարտութիւն, հատմամբ և մեկնութեամբ յայտ արարեալ զատութիւն: Այս է փոխադարձ տոյժ: Զշնացողի հանէին զաչս, զշնացելոյն թողուին զաչս, բայց հատանէին զունչս. զի տարփածուն կորուսեալ զաչս՝ որք անարժան սիրոյ էին առաջնորդք, կարօտասցի աչաց այլոց. և շնացեալն, որ առ հայելով գեղզեղէր զիւր երեսս, 'ի հայելոյ անտի սոսկասցի, և սիրողաց քստմնելի լիցի, թողեալ 'ի տարակուսի թէ ո՛ր իցէ կնոջ մեծագոյն տանջանք: Այսպէս ըստ արդար փոխադարձ տուժի, որով խելք մեղաւ ոք, նովին և պատժեցաւ, և դաւոյն ցաւ փոխատրեցաւ: Ապա կարի իսկ արդար էր յինքեան փոխադարձ տոյժն Հռադամանթեան. բայց միով խելք թուէր կարի իմն խիստ, զի չտայր տեղի ոչ ընտրողութեան և ոչ հանգամանաց անձանց: Ընդ դատաստանաւ արկանէր անխտիր եթէ զազնուականս և եթէ զանարգս, եթէ զմեծատունս և եթէ զմուրացս, եթէ զգիտունս և եթէ զտգէտս, եթէ զբարեպաշտս և եթէ զչարեպաշտս. որպէս մարմինս մերկեալս յոգւոյ. մինչև 'ի դժոխս իսկ դատէր զոգիս մերկեալս 'ի մարմնոյ: Հայէր 'ի գործն, և ոչ 'ի գործողն: Եւ այս իմաստ էր ամենայն օրէնսդրաց և դատաւորաց, որք զգուշաւորքն էին պահպանութեան Հռադամանթեան փոխադարձ տուժի. չխառնել 'ի մէջ պարտաւորի և պարտաւորի: Էր օրէնն խիստ քան զերկաթ, և դատաւորն խիստ քան զօրէնս. գթութիւնն յատենէ աստի էր արտահալած: Զաղևկոս օրէնսդիր Ղոկրաց՝ աշակերտ Հռադամանթայ, հրատարակեաց զնախայիշատակեալ օրէն թէ շնացողին բրեսցեն աչք: Դէպ եղև սմա, որպէս դէպ լինի այնոցիկ որք կարի իմն խուզարկութեամբ պատահեն իւրեանց վնասու, զի առաջին յանցաւոր օրինացս եղև միամօր իւր որդի: Տերակոյտն ամենայն աղաչեաց զԶաղևկոս ներել որդւոյն և պահել զաչսն, որք էին բնական աստեղք յուսոյ թագաւորութեան: Այլ Զաղևկոս խիստ ևս էր և անլոյծ քան զատարապասականն Հռադամանթ: Գիտելով թէ անուն դատաւորի սրբազնագոյն է քան զհօր, և թէ օրէնքն են աչք արդարութեան, առաւել պատշաճ համարէր կատարել զօրէնս, կուրացուցեալ զորդին, քան անցանելով զօրինօք կուրացուցանել զարդարութիւն: Բայց յաղաչել նոցա զԶաղևկոս առաւել ևս ժառութեամբ, չթողուլ զթագաւորութիւնն կոյր՝ կուրութեամբ յաջորդի, յետ բազում ընդդէմ դառնալոյ ուր ուրեմն զայս ետ պատասխանի. Խորհեցայ, ասէ, հնար ուրեմն հնար հաճելոյ զուէր ժողովրդեանդ, միանգամայն և վճարելոյ խստութեան օրինաց: Որդի և հայր են անձն մի. արդ բրեսցի միայն մի ակն իմոյ որդւոյ. և միւս՝ բրեսցի իմ ակն. և այնպէս օրէնք ոչ լուծցին, և յանցաւորն ոչ եղիցի կոյր: Եւ արդարև եթէ բանքն իցեն զիմաստունէ օտարի, երևի թէ ոչինչ գթութիւն



կարող է անօրինել յօրէնսն գրեալ 'ի Հռադամանթէ, բայց թևադրեալ 'ի բնութենէ: Զի հիմնեալ յայսպիսի բնաւոր կանոն թէ իւրաքանչիւր ոք հատուսցէ զայն, զոր եբարձ յաւուրս յայլմէ, այս, կարող է իշխանն գթած շնորհել զվնասն՝ որ եհաս անձին, այլ ոչ զվնասն որ եհաս այլում. եթէ իշխանն չվճարէ յիւրոց անտի վնասելոյն:

Բայց խստութիւն փոխադարձ տուժի Հռադամանթայ ոչ էր անզիջողութիւնն, 'ի շներել ումեք, այլ անհաւասարութիւնն 'ի պատժել զամենեսին միապէս վասն նմանակ գործոյ: Զի որպէս իմաստութեամբ ասէ Արիստոտէլ, եթէ 'ի և նոյն գործ ամենայն մարդիկ ունէին հաւասար ախորժակ, և ամենայն պարագայք լինէին հաւասարք, 'ի լինել անիրաւութեանն հաւասար. պարտ էր և պատժոյն լինել հաւասար: Բայց քանզի նոյն գողութիւն լինի յանցաւորագոյն 'ի միումն, քան 'ի միւսումն, և նոյն իսկ հարուածն առաւել նախատական յումեմնէ քան յայլմէ, անիրաւ փոխադարձ տոյժ լինի պատժել զանիրաւութիւնս մեծի և փոքու հաւասար: Ոչ ամենեցուն է գիտել չափել զչափ անիրաւութեան: Պատգամախօսն Դեղփեայ հրամայեալ էր Յունաց երկպատկել զսեղան Ապողոնի, եթէ կամէին ընդունել զիւրեանց հայցուածս. Նոքա այնչափ տապահով կարծեալ զընդունելութիւն շնորհին, որչափ դիւրին էր երկպատկութիւն սեղանոյն. անդէն վաղվաղակի կոչեցին զճարտարս. և 'ի սեղանն որ էր քառակուսի, յաւելին միւս ևս քառակուսի հաւասարաչափ: Պատգամախօսն խարդաւան, որ ոչ կամէր լսել նոցա, ծաղր արար զանմտութիւն նոցա. իբր զի առադրել քառակուսւոյ քառակուսի, ոչ է երկպատկել զքառակուսին տեսակապէս, այլ միայն նիւթապէս. մանաւանդ թէ է աղճատել զտեսակն, արարեալ 'ի հաւասարակողմն քառակուսւոյ՝ երկայնաձիգ իմն քառանկիւն: Այլ տեսական երկպատկութիւն քառակուսւոյ է գաղանի իմն. գծել բոլորակ ինչ զքառակուսեաւ, և ապա այլ քառակուսի զբոլորակաւ: Վասն զի քառակուսին արտաքին է արդար երկպատիկն ներքնոյն, որպէս ապացուցանեն երկրաչափք: Ըստ այնմ օրինակի ամենայն անմիտ գիտէ դատել, թէ գողութիւն հարիւր սկեղ կրկնապատիկ աւելի է քան զգողութիւն յիսուն սկեղ. այլ այս է չափել զնիւթական քանակ գողութեան, և ոչ զտեսական. որ միայն 'ի մտացի դատաւորաց չափի, ոչ թուաբանօրէն, այլ երկրաչափօրէն, քննեալ զանձն, զվախճանն, զտեղին, զժամանակն, և զայլ ամենայն պարագայս գործոյն, որք առաւելուն կամ նուազեն զչարութիւնն, որ է տեսակ յանցանացն: Ապաքէն գողանալ հարիւր սիկղ 'ի տաճարէ, է մեծագոյն յանցանք քան զգողանալ հարիւր սիկղ յումեմնէ ռամկանէ: Մանաւանդ թէ տեսակապէս մեծագոյն յանցանք են

գողանալ տասն սիկղ 'ի տաճարէ, քան հարիւր սիկղ 'ի սոսկականէ. զի այս է լոկ գողութիւն, և այն սեղանակապտութիւն: Յոյժ աւելի նախատինք են, ասէ Արիստոտէլ, ածել ապտակ սինկղիտոսի քան գիւղականի. զի նա է անձն արքունի. և նախատինքն որ լինի արքունեոյն, յոյժ մեծ է քան զեղեալն սոսկականին: Մինչ զի ըստ կանոնի երկրաչափական համեմատութեան, որչափ մեծագոյն է անձն սինկղիտոսին քան զգիւղականին, այնչափ առաւել մեծ է նախատինքն եղեալ սինկղիտոսին քան գիւղականին: Եւ վասն այսորիկ, չէ արդար կանոնն Հռադամանթայ, Որչափ ոք առնէ, նոյնչափ և կրեսցէ: Վասն զի, եթէ որ էածն ապտակ գիւղականի, արժանի է ապտակի, յայտ է թէ որ էածն ապտակ սինկղիտոսի մեծ ևս պատժոյ է արժանի: Բայց սոյնպէս եթէ 'ի փոխարինական արդարութեան պարտ է պահել զհամեմատութիւն տրամաբաշխական և երկրաչափական, ապա ոչ լինին երկու տեսակք արդարութեան, այլ մի միայն: Պատասխանեմ. յառնել անդ զարդարութիւն, կան երկու գործողութիւնք. մի չափել զանիրաւութիւնն, երկրորդ չափել զպատիժն: Ի վերայ առաջնոյն՝ պարտ է դատաւորին 'ի կիր արկանել զհամեմատութիւն երկրաչափական. բայց 'ի վերայ երկրորդին պարտ է նմա 'ի կիր արկանել զհամեմատութիւն թուաբանական, ոչինչ հայեցեալ յանձինս: Այնպէս զի մեծի անիրաւութեան տացի պատիժ մեծ, փոքուն փոքր, հաւասարին հաւասար: Այս էն կշիռք Աստրէայ կանխաւ յիշատակեալ: Եւ ըստ այսմ պարտ է իմանալ զփոխադարձ տոյժ Հռադամանթայ. Որչափ ոք արար՝ նոյնչափ և կրեսցէ. հայեցեալ 'ի գործն ոչ նիւթապէս, այլ տեսականապէս. ոչ 'ի գործողութիւնն, այլ 'ի չարութիւնն:

Զնոյն պարտ է իմանալ և 'ի վերայ փոխարինական փոխադարձ տուժի 'ի սակարկութիւնս քաղաքականս, որ հիմնեալն է յայսպիսի նմանակ կանոն. Որչափ ունի ոք տոյժ, այնչափ առցէ 'ի շահէն: Վասն զի որպէս յընկերութեան և 'ի տուրևառ քաղաքական՝ փոխանակութիւն ընչից հաւասարի գնահատութեան, որոյ չափ է փողն. սոյնպէս 'ի քաղաքական վէճս երկու ինչ ունի դիտել դատաւորն. մի հատանել զգինս, երկրորդ հաւասարել զփողն ճշտասուն: Առաջինն պահանջէ զհամեմատութիւն երկրաչափական, երկրորդն զհաւասարութիւն թուաբանական: Զի երկաքանչիւր կողմն ունիցի, որ ինչ նմա հասանի:



# ԳԼՈՒԽ Թ.

## Յաղագս քաղաքական և բնական իրաւանց:

Արդարութիւնն 'ի մէջ այլոց խորհրդաւոր գրոշուածոց նկարեցաւ 'ի բանաստեղծից որպէս աստուածուհի ինչ եռադիմի և եռանուն, որ միանգամայն բնակեալ յերկինս և յերկրի, և 'ի ստորինս երկրի. յերկնի կոչեցաւ Թեմիս [235], յերկրի օրէն, և 'ի ստորինս երկրի Պղուտոն: Կամեցան այն քաջուսումն խոհականք ձևացուցանել մեզ երիս տարբերութիւնս արդարութեան. զերակայ, զմիջական, և զստորին. զիրաւունս աստուածային՝ զառ 'ի յերկնից եկեալ զիրաւունս քաղաքական որ սեպհական է մարդկան, և զիրաւունս բնական, որ հասարակ է կենդանեաց: Պաշտել զերբեակ միութիւն Աստուծոյ, է յաստուածային իրաւանց, զի զայն ուսուցին մեզ միտք տեսող աներևութից: Պաշտպանել զիւր կեանս, է 'ի բնական իրաւանց, զի ամենայն կենդանեաց ուսոյց զայն բնութիւնն: Պահել զհաւատարմութիւն 'ի դաշինս, է 'ի քաղաքական իրաւանց, կամ յիրաւանց ազգաց, զի 'ի քաղաքական ընկերութենէ իմացան զայն մարդիկ լուսովբանի: Բայց պահեալ զաստուածային իրաւունս այլում վեհագոյն դպրոցի, երկու մեծ հոմանունութիւնք 'ի վեր երևին 'ի մէջ իմաստնոց 'ի վերայ բնական իրաւանց, և քաղաքական իրաւանց: Վասն զի ըստ որում հաղորդ է մարդ զգայական բնութեան որ հասարակ է կենդանեաց, և բանաւոր բնութեան որ սեպհական է մարդոյ, յայսմանէ ոմանք բնական իրաւունս կոչեն միայն զհասարակն կենդանեաց, և այլք բնական իրաւունս կոչեն և զբանաւորն. որպիսի է պահել զհաւատարմութիւն 'ի դաշինս: Նոյնպէս, քաղաքական իրաւամբք՝ ոմանք իմանան միայն զգրաւոր օրէնս, և ոմանք իմանան նովաւ և զբնական օրէնս բանաւորս: Բայց Արիստոտէլի իմաստասիրեալ բարձրագոյն ևս սկզբամբ, ընդհանրապէս բաժանէ զքաղաքական օրէնս հաւասար յերկուս տեսակս. այսինքն է, 'ի Գրաւոր օրէնս, և 'ի Բնական օրէնս. չորոշեալ 'ի մարդիկ զբնական բանաւոր 'ի բնականէն որ հասարակ է կենդանեաց, ըստ այնմ որ ծառայէն քաղաքական ընկերութեան: Վասն զի, որպէս 'ի կենդանիս օրէնք բնական կատարելագոյն է 'ի միում քան 'ի միւսում, ընկերութիւնն ամուսնական 'ի տատրակս քան 'ի ճնճղուկս, սնունդ զաւակաց 'ի ծիծառունս քան յարծուիս, հոգաբարձութիւնն տնտեսական 'ի մրջիւնս քան 'ի ճանճս, կառավարութիւնն կարգաւորական 'ի մեղուս քան 'ի մրջիւնս, սոյնպէս այս ամենայն բնական օրէնք կա-

տարելագոյնք են 'ի մարդիկ քան 'ի կենդանիս, զի են կարգաւորեալք 'ի բանէ և յօրինաց: Եւ որպէս զգիտութեամբք բնութիւնն ուսուցանէ սկզբունս ինչ հանրականս, յորոց միտ մարդոյ իմաստասիրեալ քաղէ իմաստս գիտնականս, նոյնպէս զանելի իրօք լոյսն բնական ծանուցանէ սկզբունս ինչ հասարակս կենդանեաց, և ինչ ինչ ևս հասարակ ամենայն մարդկան, որք փորձիւ և խոհեմութեամբ գան 'ի լաւ ևս կարգութիւն վասն ընկերութեան և կենակցութեան, և այս է հանրական իրաւունք քաղաքական:

Այս իրաւունքն քաղաքան հանրական, ըստ Արիստոտելի, է բաղկացութիւն ինչ գրաւոր օրինաց, և բնական օրինաց՝ կարգեալ 'ի պահպանութիւն քաղաքական ընկերութեան: Բայց որ ոք մտադրութեամբ ընթեռնու զկարգադրութիւն նորա. տեսանէ թէ որոշէ նա զքաղաքական իրաւունս ինչ զանձկագոյն և զյատկագոյն, այսինքն զայն որ կապէ զժողովուրդ ինչ ընդ գրաւոր օրինի: Մինչ զի ընկերութիւնն քաղաքական ընդարձակ, նշանակէ և զկենցաղավարութիւնն քաղաքական, զքաղցրախօսութիւն և զզուարճախօսութիւն: Բայց ընկերութիւնն քաղաքական անձուկ, նշանակէ զթիւ ինչ անձանց ազատաց, ըստ այնմ որ չեն միմեանց ստորագաս, այլ ամենեքին ստորագաս նոյն իսկ գրաւոր օրինաց, որոյ վախճանն է զի ամենեքին բաժանորդ լիցին բարեաց և չարեաց հասարակաց. և փոխադարձ փոխարինութեամբք պահեսցեն յիւրեանց միջի զկենակցութիւն վասն պիտոյից մարդկային կենաց: Բայց այս գրաւոր օրէնք է հիմնեալ 'ի բնականն: Բնութիւնն որ յամենայնի սիրէ զներդաշնակութիւն, ետ մարդկան որպէս ձայնս և կերպարանս, նոյնպէս յօժարութիւնս և խառնուածս պէսպէսս. զի պիտոյս ունելով միմեանց, իցեն ընկերական. և կազմեսցեն միաբանութեամբ մի նուագածութիւն ներդաշնակաւոր: Մի միայն մարդ չառնէ ինչ ընկերութիւն, զի մի լար միայն չառնէ ներդաշնակութիւն: Այնպիսին, որպէս յառաջն ասացաք, կամ է երէ ինչ վայրի, որ յամենեցունց խորշի, կամ աստուած երկնաւոր, որ չունի ուստեք պիտոյս: Բազում մարդիկ որ 'ի գրաւոր օրէնս իցեն այլևայլ, չառնեն ընկերութիւն քաղաքական. զի չառնեն զհասարակութիւն ինչ: Եւ բազում մարդիկ, որոց իցէ նոյն օրէն. բայց իցեն համարուեստ, չառնեն ընկերութիւն քաղաքական. զի ոչ հաղորդին ընդ միմեանս փոխանակութեամբ. ուստի և ասորութիւն է ասել, բրուտ զբրուտ՝ և բժիշկ զբժիշկ ոչ սիրեն: Ի տիեզերական հասարակապետութեան մի տարր նման է այլում տարեր 'ի միում որակութեան, բայց աննման յայլում, զի պիտոյասցին միմեանց 'ի գործել: Եթէ ամենեքեան լինէին ամենևին նման, սէրն լինէր անպտղական առ 'ի չգոյէ արտադրութեանց. և



տիեզերք ոչ ևս լինէին հանրական, առ 'ի չգոյէ պէսպիսութեան իրաց[256]: Այլ զոր օրինակ ընդ տիեզերս ամենայն տարերք թէպէտ և այլևայլք կառավարին 'ի մի միայն գերակայ մտաց, նոյնպէս 'ի միում հասարակապետութեան ամենայն առանձնաւորք թէպէտ ներքոյ և ազատք՝ են միոյ օրինի, և այնմ որ երևեցուցիչն է օրինին, այսինքն է իշխանի. որ է օրէն կենդանի, և իրաւունք քաղաքական անձնաւոր և խօսուն: Որպիսի և իցէ այս իշխանութիւն, եթէ միապետական, եթէ ազնուապետական, և եթէ ժողովրդապետական, սոյն իմն է, թէ ուր չիք իշխան, չիք գրաւոր օրէն. և ուր չիք գրաւոր օրէն, չիք յատկապէս և մարմին քաղաքական: Յայսմանէ մարթիս իմանալ, ո՞ր իցեն իրաւունք օրինաւոր իշխանութեան, ո՞ր իցէ նորա վախճան, և ցո՞ր վայր ձգիցի կարողութիւն նորա: Յայն վայր ձգի հեղինակութիւն իշխանին, ցոր վայր ձգի հեղինակութիւն գրաւոր օրինին. այսինքն է՝ Պահել զազատութիւն և զհաւասարութիւն կենակցութեան ժողովրդոց՝ 'ի բաժանորդն լինել բարեաց և չարեաց և 'ի փոխարինութիւնս գաշանց: Այս պաշտօն է օրինաց, և այս պաշտօն իշխանին: Բազում պանծալի վերտառութեամբք բարեմարդիկն Աթենք կամեցան բարձրացուցանել զանուն Պերիկլեայ իւրոյ իշխանի 'ի վերայ այլոց: Բայց Պերիկլէսի մերժեալ զամենայն՝ եցոյց թէ կամք են նմա կոչել, Պերիկլէս արդար, և հաչակեաց ժողովուրդն այնչափ գովութեամբ զայն նոր վերտառութիւն, մինչև 'ի պատմութիւնս ցայսօր իսկ հնչէ[257]: Պարտ է իշխանի յանձին բերել զամենայն առաքինութիւնս. բայց ոչ է նմա հնար առանց արատոյ փառամոլութեան՝ զմիոյ յառաքինութեանց թէպէտ և փոքունց յանձին բերել զանուն. որպէս եթէ տացէ կոչել իմաստուն, արի, սրբասէր, վեհանձն, կամ գթած: Արդար անուն վեհագոյն է քան զայլ անուանս. զի արդարութիւնն մեծագոյն է 'ի բարոյական առաքինութիւնս: Բայց թէպէտ և անունն է պանծագոյն, սակայն և այնպէս չէ ինչ փառամոլ. զի է սեպհական անուն օրինաց, և իշխանի որ երևեցուցիչն է օրինաց: Եւ որպէս օրէնն անիրաւ, թէպէտ և զինու զօրացեալ չէ օրէն, նոյնպէս իշխանն անիրաւ, թէպէտ և ամենայն առաքինութեամբք զարդարեալ, չէ իշխան, այլ բռնաւոր: Մինչ զի զոր օրինակ հնար է իշխանի առանց փառասիրութեան կոչել իշխան, նոյնօրինակ հնար է նմա առանց փառասիրութեան կոչել և արդար: Այն զի վերտառութիւնք այլ ամենայն առաքինութեանց հնար է թէ նախանձ արկանիցեն յայլ իշխանս. զի մարթ է միոյ իշխանի լինել քան ըզմիւսն առաքինի, իմաստուն, արի և ժուժկալ. բայց վերտառութիւնդ արդար ոչ արկանէ նախանձուկս. զի չընդունի առաւելութիւն, անհնար գոլով միոյ իշխանի լինել արդա-

րագոյն քան զմիւսն. վասն զի արդարն՝ որպէս ասացաւ, հաստատեալ կայ 'ի մէջ անբաժանելի։ Բայց յայսմանէ միւս ևս կարևորագոյն հետևութիւն յառաջ բերէ Արիստոտէլ, այսինքն թէ որպէս օրէնն ոչ իւր ինքեան արբանեկէ, այլ այնց որք ենն ընդ օրինօք, նոյնպէս իշխանին ոչ է պարտ հայիլ յիւր օգուտ, այլ յօգուտ իւրոց հնազանդելոց։ Արդարութիւնն ըստ այնմ որ արդարութիւն, է առաքինութիւն առընչական, որպէս ասացաւ. զի ոչ հայեցեալ առաւել 'ի բարութիւն անձին, այլ 'ի գործողութիւն նորա առ այլս, տայ իւրաքանչիւրում զիւր արժանն։ Ըստ այսմ իշխանն արդար ոչ կեայ վասն իւր, այլ վասն ժողովրդեան իւրոյ. զի թագաւորէ վասն ժողովրդեան. և ոչ վասն անձինն։ Եւ վասն զի մեծագոյնն 'ի մարդկայնին գործս է թագաւորել, և մեծագոյն գործք արժանի են մեծագոյն վարձուց՝ պարտ է իշխանի, ասէ Արիստոտէլ, շատանալ ընդունելութեամբ 'ի վարձ զփառս և զպատիւ։ Զփառս և զպատիւ, ասաց Արիստոտէլ, ըստ նախնի մեկնչաց։ Բայց արդէք, որոց հեզասէք հողմ փառաց և պատուոյ թուեցաւ վարձ ինչ կերակրելոյ զգեռնառիւծս և ոչ զիշխանս, փոխանակ փառաց և պատուոյ, կարգալ կամեցան, զփառս և զհարկս բանաւորս, որք յիրաւի կոչին պատուոյ տուրք վայելչականք իշխանի։ Այլ թէպէտ և այսոքիկ են բանաւորք և վայելչականք, բայց Արիստոտէլ խօսի զվարձուց, որ են 'ի վայելս իշխանին. և ոչ զայնց զորս ծախէ 'ի ժողովուրդս 'ի պաշտպանել նոցա, որպիսի են հարկք։ Թող զի խօսի նա զվարձուէ, որ զուգահաւասար լիցէ գործոյն. որոյ աստուածայլին գոլով, անհնար է զնորա հաւասարն կշռել, բայց այնուիկ, որ Աստուծոյ ընծայի։ Զհուսկն ասացից. խօսի նա զազատազնեայց և ոչ զընդ լծով եղելոց. և որոշէ զՊերիկլէս՝ որոյ փոյթ էր օգուտ հասարակաց, 'ի Դիոնեսիոսէ, որոյ փոյթ էր օգուտ անձին։ Եւ վասն այսորիկ 'ի վերայ բերէ. Եւ որ ոք փառօք և պատուով ոչ շատանայ, ոչ է իշխան, այլ բռնաւոր։

## ԳԼՈՒԽ Ժ.

*Յաղագս քաղաքական իրաւանց, որ անյատուկ և ընտանական։ Եւ նախ յաղագս հայրական իրաւանց*

Ի սահմանէ քաղաքական իրաւանց մարթիս քաղէն զիւրաւ իմանալ, թէ որ լիցէ իրաւունքն որ զնմանութիւն բերէ զքաղաքականին, բայց իրք չէ։ Ասպաքէն ասացաւ, թէ քաղաքական իրաւունքն է որ միաւորէ զմարդին ինչ ընկերական



ընդ մի և նոյն օրինօք. և ուր չեն օրէնք, և ոչ ընկերութիւն, և հաւասարութիւն, անդ անկար է. լինել ճշմարիտ և յատուկ իրաւունք քաղաքական։ Ապա հայրական իրաւունք չեն յատկապէս իրաւունք քաղաքական։ Զի ոչ գոլով յորդին ազատութիւն և հաւասարութիւն ընդ հօր, չկայ ընկերութիւն. և յաննուլ որդւոյն սնունդ 'ի հօրէ, չիք փոխադարձ փոխարինութիւն. և զի է ինն սեպհական հօր, 'ի վերայ իւրոյ սեպհական իրաց ոչ կարէ լինել գրաւոր օրէն, զի չիք անդ անիրաւութիւն քաղաքական, այլ միայն բնական։ Վասն այսորիկ օրէնսդիրք ոչինչ օրէնս եդին 'ի վերայ հօր, գիտելով թէ բնաւորապէս ոչ ոք կամի վնասել իւր ինքեան, և որ վնասէ զաւակին՝ վնասէ անձին։ Ամենայն արուեստաւոր սիրէ բնաւորապէս զգործ իւր, և թէպէտ և անկատար լիցեն երևին նմա գեղեցիկք. զի սիրէ 'ի նոսա զանձն իւր։ Մինչ զի փոխանակ քաղաքական օրինի, շատ է բնաւորականն. զի զերկիւղին տեղի լնու հայրական սէրն։ Այլանդակ ինն եղեն յաշխարհի Մանլիոս՝ Մանլիոսի որդւոյ իւրոյ սպանող, և Պողոմէոս՝ Պողոմեայ հօր իւրոյ սպանող. յոյր վերայ արկ համբաւն զվատահամբաւ մականունն հայրասպան [258]։ Անստոյգ է թէ ո՛ առաւել մեղանչական գտաւ բնութեան. արդեօք որ եբարձն ըզկեանս յայնմանէ որում ետ, եթէ որ եբարձն զկեանս յայնմանէ յորմէ էառ։ Բայց մարթ է մեզ ասել, թէ հայրասպանն է առաւել ապերախտ. և որդեսպանն առաւել անգութ։ Ի բաշխել բնութեանն զպաշտամունս, եհեղ յորդիս զպարտաւորութիւն և 'ի հարս զսէր, որ հուր ինն է հակառակ բնութեան տարրական հրոյ. զի սա 'ի վեր ցոլանայ, և նա 'ի ստոր։ Մինչ զի մեծ ևս այլանդակ է հայր որդիասպան, քան զորդի հայրասպանեայ։ Այսու ամենայնիւ գրաւոր օրէնք հեթանոսաց եդին ծանր ծանր տանջանս 'ի վերայ հայրասպանին, իսկ որդեսպանին և ոչ մի. թոյլ տուեալ հօրն առաջի արկանել զորդիս գազանաց և խողխողել իսկ, այնու անբանական փաստիւ թէ յիւրում իւրաքանչիւր ոք է ազատ հրամանատու. որպէս թէ որդիք ծնանիցին միայն վասն հօրն, և ոչ վասն հայրենեաց կամ տիեզերաց։ Բայց եգիպտացի օրէնսդիրք որք չէին այնչափ խժաբարոյք, որդեսպանին 'ի վերայ եդին զայս պատիժ, զի զերիս աւուրս պահպանութեամբ սպասաւորաց ամենին՝ նստցի առաջի անթաղ մարմնոյ մեռելոյն, զի 'ի տես ամենայն ժողովրդեան տեսցէ թէ զինչ արար։ Զինչ պատիժ քան զայդ մեղմ և խնայական. զինչ անպատժութիւն քան զայդ պատժական և անխնայական։ Ատեան էր թատրոնն քաղաքացեաց քանինելոց. ամբաստանող էր մեռեալն, վկայք աչք դատաւոր՝ խիղճն մտաց, երկու դահիճք՝ սէր և կսկիծ։ Անդ էր տեսանել ողորմ նշաւակ. 'ի ծիւրիլ նեխ և ժահահոտ մարմնոյ՝ հիւծեալ հաշէր հայրն յաղէկատուր կսկծանաց.

որդոցն զաղբերս կրծէին զմարմին մեռելոյն, և զոգի կենդանւոյն: Ցուրտ արիւնն, որ սալանոցին առաջի եռայ 'ի գլխակունս 'ի դուրս հոսել ընդ վէրս՝ անպարբառ կշտամբէր զհօրն զանգթութիւն: Եւ այն էր փոխադարձ տոյժն ոչ Հռադամանթայ, այլ Մեգենտիոսի անողորմ արքայի, որ ուսոյց մեռելոց տանջել զկենդանիս [239]:

## ԳԼՈՒԽ ԺԱ.

*Յաղագս տիրական իրաւանց 'ի վերայ ծառայից:*

Մարթ էր նախ առաջին խնդիր 'ի մէջ արկանել թէ արդեօք ծառայութեան իցէ ինչ բնական պատճառ. զի թուի թէ բնութիւնն մայր ամենեցուն զամենեսին կամեցաւ լինել ազատ: Գիտելի է զի բնութիւն մասնաւոր՝ հայի միշտ 'ի կատարելութիւն մասնաւոր իրաց: Բայց քանզի 'ի պակասութենէ նիւթոյ՝ ոչ ամենայն իրք կարողանան լինել կատարեալ, սմին իրի չէ ինչ անկատարութիւն, եթէ ընդհանուր բնութեան ծառայէ կատարելագոյնս 'ի հասարակաց ինչ պէտս: Ոչ ամենայն պտուղք միոյ ծառոյ՝ ողջնկ հասունանան, գնիլ 'ի սեղան մարդկան. բայց ոչինչ պտուղ է այնպէս թթու և ժողս, որ անպիտան իցէ 'ի բուս անասնոց կամ յաղբ երկրի: Չէք ինչ յաշխարհի աւելորդ: Ահա այսպիսի են խելք մարդկան. ոմանք ծնանին այնպէս զգօնք և կատարեալք որ երևին հաստեալք 'ի հրամայել. և այլք այնպէս տխմարք և խելաթափք, որ երևին կարգեալք 'ի ծառայել. վասն զի որոյ չէք զգօնութիւն, վարիլ ունի զգօնութեամբ այլոց: Արդ այս է ծառայութիւն բնական, պիտանի եթէ այնմ որ ծառայէ, և եթէ այնմ որ հրամայէ. զի չէք ոք այնպէս անպիտան, որ չիցէ բաւական 'ի կրել զջուր կամ 'ի բերել զփայտ կամ 'ի պահել զանդէայս. գործք, որք զգօնաւորի չեն ինչ ըմբռն. և 'ի դարձ փոխարինի՝ որ այլում ծառայէ, յայլմէ անտի կեայ: Որ ինչ ասի զանհատէ, զնոյն մարթ է ասել համօրէն զժողովրդենէ: ՅԱմերիկա գտան ազինք այնպէս անպարոյնք և այնպէս պաճարամիտք, որ գաղթականաց կենաց նոցա կամ պաճարամութեան, չէր հնար յաջողել քաղաքիկութիւն քան զայն զի եղեն ընդ լծով: Եւ այսու օրինակաւ Հռովմայեցիք երախտիս արարին Սարմատացւոց, Լիւբիկեցւոց, և Գեղոնացւոց, արկեալ զնոսա 'ի սարկութիւն, զի եկեսցեն 'ի մարդկութիւն: Բայց արժան է որոշել 'ի մէջ ծառայի և սարկի, որպէս լուիցես յառաջիկայդ:

Արդ որ ինչ առաջաւ զհայրական իրաւանց, զայն զօրագոյն



ևս պատճառաւ պարտ է խմանալ 'ի վերայ տիրական իրաւանցն ծառայս: Արժանի է ազատութեան, որ երբեք ոչ գիտաց զայն, արժանի է գթութեան, որ կորոյս զայն 'ի չար պատահարէ, արժանի է ծառայելոյ, որ վաճառեաց զայն փողոյ: Բայց որով օրինակաւ և իցէ, ծառայութիւնն 'ի բաց արտաքսէ զընկերութիւն, ուստի և զքաղաքական իրաւունս: Նա 'ի մէջ որդւոյ հօր, և թէ չէք ընկերութիւն, սակայն կայ սէր. բայց ընդ ծառայութեան այնպէս անյարիր է սիրելութիւն, մինչև ըստ վաղնջուց առակին, Որչափ են ծառայք, այնչափ են թշնամիք: Որ միշտ անձկայ ազատութեան, ոչ կարէ սիրել զծառայութիւն. և որ ատեայ զծառայութիւն՝ ոչ կարէ սիրել զտէրն. և վայ տերանց, որոց բազմացուցանեն զծառայս: Թռչուն արկեալ 'ի վանդակ, թէպէտ և քաջ կերակրի, յամենայնի զծերպս խնդրէ զիւրոյ վանդակագործի, ճողոպրել 'ի դուրս. և ծառայ առաւել ըղձանայ լինել մուրող և ազատ, քան կերակուր ունել և ընդ տերամբ լինել: Թող զթշուառ կեանս սարկութեան, անարգ և վատաչարեկ քան զանասնոցն, ձիգ 'ի կերակուրս և ծանրաբեռնեալ յերկաթս. և ըստ վաղեմի իրաւանց՝ այնպէս ներքոյ անկեալ ազատ իշխանութեան տեառն, մինչև 'ի տեսանել զտէրն տեսանել նմա զահիճ: Եւ մեք զարմանամք, զի որչափ են ծառայք, զոգցես մարթի գտանել և այնչափ թշնամիս: Փիլիպպոս Մակեդոնացի առեալ և հրձիգ արարեալ զՈղինթոս քաղաք Աթենացւոց, զքաղաքացիսն վաճառեաց 'ի սարկանաց: Պարրասիոս անուանի պատկերահան Աթենացի՝ 'ի նկարել զպատկեր Պրոմեթէոսի տանջելոյ 'ի Դիոսէ 'ի քարաժայռի վերայ, գնեաց զծերունի ոմն աղնուականագոյն և առաւել վշտագին 'ի միջոյ անտի Ողինթացւոց: Եւ 'ի նկարել զպատկեր Պրոմեթէոսի՝ բաւական էր առաջի ունել զդէմս սորա զխոտեալս 'ի սովէ և 'ի ցաւոց վասն կորստեան հայրենեաց, որդւոց, ընչից և ազատութեան: Բայց Պարրասիոսի կամեցեալ ճշգրտագոյն հանել 'ի նկար զդծագրութիւն ցաւագին դիմաց, զայտուցումն աչաց, զուռոյց կրծոց, զձգտումն մկանանց, և զխլխլել ոսկերաց Պրոմեթէոսի, ետ տարածանել մերկ զծերունին, և այնպէս բուռն ձգտեցոյց քարշողաց զայն կիսակենդան անդամս, մինչև ողորմելւոյն 'ի կարկամութենէ անտի անշնչանալ 'ի տանջանսն: Չար ևս չարիս անցոյց Պարրասիոս ընդ ծառայն, քան Փիլիպպոս ընդ թշնամին: Փիլիպպոս ոչ սպան, զի վաճառեսցէ զնա. Պարրասիոս գնեաց, զի սպանցէ զնա: Նա՝ չար ևս չարչարեցաւ անմեղ Ողինթացին 'ի բարեկամ տեառնէ, քան մեղապարտն Պրոմեթէոս 'ի ծանրացասումն Դիոսէ: Դիոս վշտացնեաց զՊրոմեթէոս 'ի պատժել զնա. Պարրասիոս սպան զծերունին 'ի նկարել զնա վշտագին: Զամենայն զինչ և կամիցի ձեռներէց պատկերահանի օրէն է

նկարել, բայց ոչ որպէս պատկերահան օրինաւոր համարեցաւ սպանանել զսկզբնատիպն, զի նկարեսցէ զպատկերն։ Սակայն օրէնք թողացուցանէին մեծ ևս ձեռներիցութեան տեառն, քան պատկերահանին։ Հռադամանթոս ըստ իւրում արդար փոխադարձ տուժի, դատապարտէր արդեօք զՊարրասիոս, զի նկարեսցի 'ի կերպարանս Տիտիոսի նովին արուեստիւ, որով նկարեաց ինքն զՈղիւնթացին 'ի կերպ Պրոմեթէոսի [240]։

Ի մեր մարդասիրագոյն դարս՝ արդարագոյն և պատշաճագոյն է վիճակ այնց ծառայից, որոց պայման եդեալ ծառայութեան իւրեանց ըստ կամս, փոխադարձ փոխանակութեամբ, տան զիւրեանց աշխատութիւն և ընդունին զարժանին թոշակ. և այնպէս դիւրաւ հրաժարելով 'ի ծառայութենէ իբր ապահարզանաւ, ազատ կացուցանեն զանձինս, այլ ոչ կամելով ծառայել։ Ոչ պակասին երբեք տեարք ծառայից, և ոչ ծառայք տերանց։ Այսու օրինակաւ լծորդի ընկերութիւն ընդ անհաւասարութեան, ազատութիւն ընդ ծառայութեան, և իրաւունքն տիրական ընդ իրաւունս քաղաքական, մինչև լինել տանն փոքրիկ ինչ հասարակութիւն, և ծառային ունել զտեղի արքունի սպասաւորի, և տանուտեառնն լինել ինքնուրոյն արքայիկ։ Արդ այսպիսիք են ծառայք, այլ ոչ թշնամիք տեառն. զի չեն բռնազբօսեալք։ Մանաւանդ թէ են սիրելի բարեկամք, զի են երախտաւորեալք և վասն այսորիկ առաւել ևս հաւատարիմք, զի են առաւել բարեկամք։ Ընդ այսպիսիս քաղաքավարագոյն ևս վարի տէրն, գիտելով յօր ըստ օրէ անցից, քանի դիւրին է նմա 'ի նոյոյն լինել վիճակի։ Ամենայն ծառայ սիրեալ է յումեմնէ թագաւորէ. և ամենայն թագաւոր սիրեալ է յումեմնէ ծառայէ։ Նա՝ վասն զի ամենայն տէր է ընդ ուազագոյն տէրամբ, այնպէս վարի ընդ ծառայս, որպէս կամէր թէ վարեսցի ուազագոյնն ընդ իւր։

## ԳԼՈՒԽ ԺԲ.

### Յաղագս ամուսնական իրաւանց ։

Առաւել ևս դժուարին իմն է սահմանել թէ որպիսի ինչ իրաւունք կոչիցին ամուսնականն. զի թուի թէ չէ այն ոչ յաստուածային իրաւանց, ոչ 'ի քաղաքականէն, ոչ յիրաւանց ազգաց, և ոչ 'ի բնականէն։ Զերևի լինել յաստուածայնոյն, ապա թէ ոչ, ամենայն մարդ պարտաւոր լինէր առնել կին, և մեղապարտ լինէր այնչափ սպանութեանց, որչափ որդիս յանհոգութենէ ամուսնութեան չընծայէր աշխարհի և Աստուծոյ։ Մանաւանդ զի այնչափ առաւել հաճոյ է Աստուծոյ վիճակն



կուսական քան զամուսնական, որչափ առաւել նման է աստուածեղէն բնութեան հոգի քան զմարմին։ Եւ եթէ մեծ առաքինութիւն է համարեալ չանցանել յերկրորդ ամուսնութիւն, մեծ ևս առաքինութիւն լինի չանցանել յառաջինն։ Եւս առաւել չթուի կախեալ զքաղաքական իրաւանց։ Զի թէ ամուսնութիւնն յառաջէ քան զտոհմ, և տոհմ քան ըզքաղաք, և քաղաք քան զքաղաքական իրաւունս, ապա և ամուսնական իրաւունք յառաջէն քան զքաղաքական իրաւունս. զի բաղկացուցիչ մասունք յառաջագոյն են քան ըզբաղկացեալն։ Այն զի, եթէ իրաւունքն քաղաքական որպէս ասացաւ, չէ 'ի մէջ վերնագունի և ստորագունի, այլ 'ի մէջ հաւասարից, անմարթ է այժմ հաւասարութեան ունել զտեղի յամուսնացեալս. վասն լինելոյ տանուտեառնն որպէս արքային յերկնի, և իշխան 'ի թագաւորութեան, և գլուխ 'ի մարդկեղէն մարմնի։ Թող զի, եթէ իրաւունքն քաղաքական է կարգեալ առ հասարակաց օգուտ, կարդա զամենայն պատմութիւնս, և գտցես զի ընդ միոյ կնոջ, որոյ գործեալ ինչ իցէ օգուտ հասարակութեան, բիւրաւորք եղեն պատճառք մեծամեծ չարեաց։ Եւս առաւել չերևի միաբանել ամուսնական իրաւունքն ընդ իրաւունս ազգաց։ Զի թէ հաստատեալ է սա առաւելապէս յընկերական կեանս, և յազատութիւն անձին. զի՞նչ ինչ կայցէ առաւել հակառակ երկաքանչիւր օգտի քան զամուսնութիւն։ Զի թէպէտ նախ առաջին՝ կարի իսկ ճշմարիտ է թէ միաբանութիւնն է մայր ամուսնութեան. բայց ամուսնութիւնն է հայր անմիաբանութեան։ Այն ինչ վառէ սէրն զջահ հարսանեաց, տէրութիւնն 'ի վերայ հասեալ շիջուցանէ։ Ի սուղ ժամանակի փոխի հաւանութեանն զհետ գայ համր ապաշաւ, և ուրախ հարսնածութեան տըխուր կոծութիւն [241]։ Մինչև անձամբ զչափ առեալ ուրումն իմաստնոյ կնքեաց, թէ երկուս միայն աւուրս բարօրութեան շնորհէ առնն կին, զհարսանեացն և զթաղմանն։ Իսկ յաղագս ազատութեան մասին ո՞ր ազատութիւն իցէ առաւել ծառայական քան զայն, յորժամ երկու ազատ անձինք անձնատուր լինին տէրութեան միմեանց, և երկաքանչիւրն զպարանոցս խոնարհեն ընդ միով լծով, ուր կամաւորութեամբ լինին 'ի խնդիր, և բռնեան ակամայ կամօք, զի մի միայն վայրկենական կամք լինի նոցա մշտնջենաւոր հարկ։ Ապա եթէ լինի անջատումն առագաստի, չար ևս է վիճակն. զի դու այնուհետև չես ծառայ, բայց և ոչ ազատ. ոչ ևս ես նորա, բայց և ոչ քոյ. զի ոչ կարես լինել այլում. մինչև զկնի սարկութեանդ դեռ ընդ քարշ տանել քեզ զքո շղթայդ։ Ապա եթէ խզեսցես իսկ զայն՝ իսպառ բաժանմամբ, կամ խոստովանիս թէ չար ընկերութիւն է ամուսնականն, կամ Թէ հարիւրոց ես արժանի, եթէ միով չշատանաս։ Հուսկ ապա երևի թէ անյարիր է

իրաւունքն ամուսնական ընդ բնականին։ Զի թէպէտ բնութիւնն ետ անասնոց սէր զուգակի, բայց ոչ կապեաց զսէր նոցա ընդ մի միայն անհատ։ Թող զի ամենայն նոյնատեսակ անհատից ետ զնոյն բարս, վասն այսորիկ յընտրութեան ընկերի ոչ կարեն անասունք սխալել կամ սորջանալ։ Այլ 'ի կանայս այնչափ բարք են և այնչափ մոլութիւնք 'ի միմեանց տարբերք իբրև զդէմս, սակայն համակ քօղարկեալք ընդ չքնաղ և համեստ կերպարանաւ իբրև օձք 'ի մէջ ծաղկանց. մինչև անհնար է ճանաչել զնոսա, բայց յորժամ ճանաչումն նոցա այլ ոչ օգնէ ինչ. զի ամենայն այլ դեղ չարագոյն գոլով քան զայն չար, հարկ լինի կամ հանդուրժել և կամ փախչել։ Բայց բաց յանհատական մոլութեանց կան և հասարակք բովանդակ իգական սեռի։ Վասն զի եթէ կինն է անպարկեշտ, ո՜վ քանի՜ ամօթ նախատանաց լցէ. եթէ պարկեշտ՝ ո՜վ քանի՜ նորա անսաստութիւն. եթէ աղքատ, ո՜վ քանի՜ վայրապար ծախք. եթէ փարթամ, ո՜վ քանի՜ խրոխտանք։ Թէ է ամուլ, քանի՜ վէճք. թէ է բազմածին, քանի՜ թշնամիք։ Թէ է մանկամարդ, լինի պճնասէր. թէ չափահասակ, լինի նախանձախնդիր։ Թէ է տգեղ, անհաճոյ է այնմ որ է. թէ գեղեցիկ, հաճոյ է այնմ որ չէ։ Եւ զի՞նչ այնպէս դժուարին լցէ պահել որպէս զայն որ բազմաց է ակնահաճոյ։ Զհուսկն տասցից. Պրոտագորաս առ 'ի հատուցանել զմեծն 'ի չարեաց իւրում թշնամւոյ, ետ 'ի նա զդուստր իւր կնութեան [242]։

Բայց յայլմէ կողմանէ, թուի թէ իրաւունքն ամուսնական փակէ յինքեան զայլ ամենայն իրաւունս։ Է նա ստուգապէս յաստուածային իրաւանց. զի կարգեցաւ յԱստուծոյ ընդ հանուր հրամանաւ որ պարտաւորէ զամենայն ազգ մարդկան 'ի լնուլ զաշխարհ որ արարաւ վասն նորա։ Նա՝ թէպէտ և կարող էր Աստուած կազմել իւրով ձեռամբ զամենայն մարդ իբրև զառաջինն, ոչ կամեցաւ թէ 'ի սկզբնատպէն լցի նոցա հաստուած. այլ զի սերեսցին 'ի միմեանց, 'ի պահել զսէր առ զուգակս և առ ընկերութիւն ամուսնական։ Վասն այսորիկ ձգեաց էառ զկինն ոչ 'ի գլխոյ, ոչ յոտից, այլ 'ի կողէ առնն. յայտ արարեալ թէ կինն ոչ է ինքնիշխան տիկին, և ոչ անարգ աղախին. այլ անանջրպետ ընկեր, և 'ի բարիս և 'ի չարիս մտերիմ վիճակակից։ Բայց իբրև հանրական սերնդեամբք՝ առաւել ևս պիտոյացաւ ժողովրդոց բնակութիւն, քան բնակութեան ժողովուրդ. և այնպէս 'ի լնանել աշխարհի՝ մնայր միայն լնուլ զերկինս, օրէնքն բնութեան տեղի ետ օրինաց շնորհաց, և պարծանք ծննդականութեան տեղի ետուն պարծանաց կուսութեան և անկնութեան։ Սակայն և այնպէս հրաման սերնդեան մնաց առ ամենայն ազգ մարդկան ընդհանրապէս, այլ ոչ առ իւրաքանչիւր մասնաւոր. ցոր վայր արարչին աշխարհի կամք իցեն պահել զայն։ Բայց բաց յայսմ գաղտնեաց, զոր



վաղնջուց իմաստասիրութիւնն ոչ ծանեաւ, ստոյգ իմն է թէ ամուսնական իրաւունքն մեծապէս անկ է քաղաքական իրաւանց։ Անկ է նախ 'ի սակս դաշին ճշմարիտ ընկերութեան երկուց, որք 'ի սկզբանէ ազատ գոլով հաւասարակէն 'ի մէջ իւրեանց զինչս և զանձինս, յորում բաժանորդութեան՝ վասն զի հնար է թէ դիպեսցի անիրաւութիւն և վնաս, ունին զտեղի արդարութիւն և օրէնք։ Եւ չէ ընդդէմ թէ ամուսնութիւնն եղև յառաջագոյն քան զքաղաքական օրէնս։ Զի և առաքինութիւնք և մոլութիւնք եղեն յառաջագոյն քան զօրէնս. սակայն և այնպէս օրէնք արգելուն զմոլութիւնս, և օրինադրեն զառաքինութիւնս։ Անկ է և 'ի սակս վախճանի քաղաքականութեան. իբր զի ամուսնութիւնն է սերմնարան հասարակապետութեան. որք առանց այսր նուազին, որպէս պարտէզք անջրդիք։ Վասն այսորիկ ամուսնացելոց՝ իբրև բարեացապարտից հասարակապետութեան, հռովմայեցի օրէնդիրք շնորհեցին ապահարկութիւնս նպաստամատոյցս, և մեծաշուք նախապատուութիւնս։ Եւ սպարտացիք ամուրեաց ոչ տային տեղի 'ի թատրոնս, ոչ կամեցեալ 'ի համար դասել քաղաքացեաց զայն որ ոչ յաւելոյր զթիւ քաղաքացւոց։ Եւս առաւել անկ են ամուսնական իրաւունք իրաւանց ազգաց։ Զի որովհետև այր մարդ առաւել մտաւորութիւն ունի 'ի վերայ ընդհանուր իրողութեանց, և կին մարդ առաւել զգուշաւորութիւն 'ի վերայ մասնաւոր իրաց, 'ի ծառայել նորա հայրենեաց սա պահէ զտունն։ Նա աշխատի 'ի կերակրել զզաւակն, սա պահապան է նորա. նա հրամայէ խմբից զօրաց, և սա ծառայից։ Մինչև կնոջն՝ ձեռամբ առնն զինիլ 'ի բանակի, թէպէտ և կայ 'ի տան. և առնն՝ աչօք կնոջն պահել զտունն, թէպէտ և կայ 'ի բանակի։ Եւ ո՞վ առաւել փութաջան իցէ վասն առնն, բայց որ վիճակակիցն է վիճակի նորա։ Ո՞վ քան զնա երկայնամիտ իցէ 'ի հիւանդութիւնս. ո՞վ քան զնա անձնատուր 'ի վտանգս. ո՞վ քան զնա քաղցր 'ի վիշտս. ո՞վ քան զնա հաւատարիմ 'ի խորհուրդս։ Զչափ էառ զսորա իմաստունն 'ի կայսերս Օգոստոս 'ի դաւադրութիւնս Կիննեայ. որ առանց հանճարոյ կնոջ իւրոյ չգիտէր ելանել 'ի լաբիւրինթոսէ հանապազորդ դաւադրութեանց։ Իսկ թէ իրաւունք ամուսնական անկ իցեն բնական իրաւանց, քաջայայտ է։ Զի որովհետև վախճան բնութեան է պահպանութիւն ազգի մարդկան, և զի չէ հնար անհատից լինել անմահ, և ոչ ծնանիլ միանգամայն առ չբաւելոյ գետնի այնչափ բազմութեան, պատշաճ եղև նոցա հետ զհետէ մեռելութեամբ վերստին ծնանիլ 'ի զաւակս, և մահկանացութեան անհատից անմահանալ յիւրեանց տեսակի։ Թող զի գեղեցիկ իմն գոլով վասն պէսպիսութեան աշխարհի, թէ 'ի մարդոյ միայն ծնցի մարդ, ամենեքին ծնանէին արդեօք նոյնատիպ և նոյնո-

բակ՝ իբրև զպտուղս միոյ անկոյ. ուր տարբերութեամբ սերմ՝ իբրև պատուաստիւ պէսպէս անկոց՝ ծնանի պէսպիսութիւն գիմաց և բարուց և բնաւորութեանց առ պէսպէս արուեստս: Եւ ոչ վասն այսր պատշաճող է մարդոյ՝ որպէս անասնոց, խառն զուգաւորութիւն. զի սէրն բաժանեալ մի ծնցի յաջախութեամբ վէճս քան զորդիս, և որդիս քան զնչս. իբր զի առնմից և հասարակութեանց մեծ է պիտանութիւն սատուգութեան և միաբանութեան քան բազմութեան զաւակաց: Վասն այսորիկ բնութիւնն իսկ ազնուագոյն և կատարելագոյն կենդանեաց՝ ետ մեծ ևս հաւատարմութիւն և հաստատութիւն 'ի սէր իւրեանց: Իսկ թէ 'ի կանայս իցեն աւելի մոլութիւնք քան յարս, ոչինչ են զարմանք. որովհետև ոչ այլ ինչ է կին բայց անկատար մարդ: Բայց և արժան է յուշ առնել, մի իցէ թէ մոլութեանց նոցա պատճառք իցեն մոլութիւնք արանց, որք են կարի յոյժ դժնդակք: Վասն այսորիկ նոյն ինքն բնութիւնն անզօր կենդանեաց ետ թոյն, և կանանց չարութիւն՝ 'ի պաշտպանութիւն իւրեանց: Որպէս և իցէ, մոլութիւնք կանանց չեղեն երբէք խոչ առաքինութեան արանց: Ոչ կարողացան խափանել թշնամանք Քսանդիպպեայ՝ Սոկրատայ իմաստասիրի, և ոչ Պաւլային՝ Կատոնի քննչի, և ոչ Սկրիբոնայն՝ Օգոստոսի քաջի, և ոչ Սաբինայն՝ Ադրիանոսի վեհանձին: Մանաւանդ թէ իբրև ոչ կարողացան բարւոքել զքա զկանայս իւրեանց գանիւ, բարւոքեցին զանձինս իւրեանց համբերատար ժուժկալութեամբ: Բայց կարի յոյժ դիւրին է առն մտաւորի՝ գիտել 'ի ձեռն բերել զվարդ զանփուշ. ընտրեալ կին գեղեցիկ, ազնուական, և հարուստ, բայց և պարկեշտ, իմաստուն, և հանդարտ: Այն է միայն դժուարին, թէ ուր գտանիցի:

## ԳԼՈՒԽ ԺԳ.

*Յաղագս իրաւանց զոր ունի մարդ 'ի վերայ անձին իւրոյ:*

Եւս և 'ի վերայ անձին իւրոյ իւրաքանչիւր ոք ունի ինչ իրաւունս, որով կարող է գործել արդարութեամբ կամ անիրաւութեամբ: Այլ այս է իրաւունք ինչ անյատուկ և փոխաբերական, Վասն զի եթէ մարդկայինս բաղկացութիւն մտածի որպէս փոքրիկ ինչ տուն, յորում հոգի և մարմին են երկու ընկերք, որոց հնազանդելի զաւակք, որ են կիրք. և ծառայեն զգայութիւնք իբր արբանեակք. ով քանիցս բանաբարին այս անտեսական իրաւունք կարի յոյժ մեղկութեամբ տանուտեառն, և ստահակութեամբ ծառայից: Կամ եթէ մտածի մարդ որպէս փոքրիկ ինչ հասարակապետութիւն, յորում միտք 'ի ձեռին ունի զմիապետական իշխանութիւն, ախորժակք են ազնուականք, և արտաքին զգայութիւնք ժողովրդականք. քանիցս բռնաւորին քաղաքական իրաւունք, վասն զի իշխանն պահանջէ զոր չէ արժան, կամ ժողովրդականք ապստամբին յիշխանէն: Բայց քանզի արդարն և անիրաւն է 'ի մէջ որոշ անձանց, որոց մին պահանջմամբ աւելի քան զարժանն, կամ առնլով աւելի քան զոր պարտն է, թիւրէ զարդարութիւնն տրամաբաշխական կամ փոխարինական. վասն այսորիկ այս մասնաւոր իրաւունք չեն յատկապէս անտեսական, և ոչ քաղաքական, այլ փոխաբերական, ըստ որում մասունք մի և նոյն բաղադրելոյ կեղծին որպէս անձինք որոշք 'ի միմեանց: Եւ այս իսկ եղև փոխաբերութիւնն, որով իմաստունն Ադրիպպաս զգաստացոյց զժողովուրդն ըմբոստացեալ առ ծերակոյտն յԱւենտին. բերելով օրինակ զանդամս ըմբոստացեալս առ որովայն, որում կամելով խափանել, ինքեանց հասուցանէին խնաս [245]:



Յայտնանէ մարթիս լուծանել զերկուս երևելի խնդիրս: Մի թէ որ սպանանէ զինքն, անիրաւեսցի՞ արդեօք առ ինքն: Երկրորդ թէ սպանողն ուրուք՝ որ կամի թէ սպանցի, անիրաւեսցի՞ առ սպանեալն: Զոր պարտ է իմանալ 'ի վերայ այլ ամենայն խնասուց պատուոյ կամ ընչից, զոր կամաւ ոք հասուցէ անձին, կամ յայլմէ կամաւ ընկալցի: Եւ առ առաջինն՝ դիւրաւ կարող ես տալ պատասխանի, որպէս ասացաւ. զի թէ և անիրաւութիւն լինէր խնասել կամաւ անձին, այն լինէր անիրաւութիւն փոխաբերական. ըստ որում երկու կարողութիւնք 'ի նոյն բաղադրեալ անբաժանաբար ընծորդք՝ կեղծին իբրու երկու անձինք 'ի միմեանց խակութեամբ որոշք, և ընդ միմեանս խռովք մինչև միոյն զմիւսն թշնամանօք անարգել: Ըստ օրինակի այլանդակին՝ որոյ երկու գլուխք էին և չորք բազուկք ընդ միմեանս մարտադիրք, մինչև նոյն այլանդակին թշնամացեալ անձին վէրս ընդունիլ և վէրս 'ի վերայ դնել: Բայց թէ զիսկն խօսիցիմք, անհնար է մարդոյ անիրաւիլ առ ինքն: Զի որպէս ոչ է հնար անիրաւիլ, բայց եթէ կամաւ. նոյնպէս ոչ է հնար ընդունել զանիրաւութիւն, բայց եթէ ակամայ, առնչակից գոլով այսց եղերաց: Ի կամս միայն է ոյժ անիրաւութեան: Որ խնասէ այլում յանդգնաբար կամ բռնութեամբ, առնէ այն՝ անարդար ինչ, այլ ոչ անիրաւի. զի անարդարութիւնն չափի յօրինաց, այլ անիրաւութիւնն չափի 'ի կամաց. նա է չար նիւթապէս, և սա չար տեսականապէս: Մինչ զի անիրաւել տեսականապէս ոչ է առնելն այլում չար, այլ կամելն առնել այլում չար: Արծուին չար արար Եսքիղոսի, բայց ոչ անիրաւեցաւ առ նա յորժամ

ընկէց զկրիայն 'ի վերայ ճաղատ գլխոյ նորա, կարծելով թէ լինէ քար: Կամէր զկրիայն խորտակել, և ոչ զբանաստեղծն սպանանել. իւրում օգտի ընձանայր, և ոչ թէ վնասու այլոց[244]: Արդ ասեմ, թէ այս հնար է մարդոյ վնաս հասուցանել անձին, այլ ոչ է նմա հնար անիրաւել առ անձն, զի անհնար է նմա կամել զչար իւր: Ապա եթէ կարողասցի կամել ինչ անձին իւրում չար, ոչ է հնար թէ կամեսցի տեսականապէս որպէս չար, այլ որպէս բարի. զի բարին է սեպհական առարկայ կամաց, որպէս ճշմարիտն մտաց[245]: Հերակլէսի չհանդուրժել ցաւոց արեան Նեսոսի, որ ուտէր զմարմին նորա, ընկէց զանձն 'ի հուր: Եւ Կատոնն 'ի չհամբուրել զզինեալ ձեռս իւրոյ թշնամւոյ, սրով իւրով զիւր երակս եհատ: Երկաքանչիւրքն ընձանային մահու, ոչ որպէս վնասակար առարկայի, այլ մին ընտրեաց զբոց 'ի դեղ իւրոյ ցաւոց, և միւսն զսուր որպէս բանալի իւրոյ ազատութեան: Երկաքանչիւրքն ախտային չարաբաստութեան, և ոչ թէ անձանց: Բայց կամեցեալ մաչիլ յետ մահուանն փորձս, թէ արդեօք սպանանել զանձն լիցի անիրաւել առ անձն, տեսցուք ո՞ւմ յերկուց ասալի արդարութեանց անկ լիցի զայս անիրաւութիւն առնել յուզլութիւն. արդեօք արդարութեա՞ն մասնաւորի թէ օրինականի: Յայտ է թէ ոչ արդարութեանն մասնաւորի: Վասն զի նոյն գոլով որ անիրաւէ՝ և որ զանիրաւութիւն կրէ, նոյնն միանգամայն լինէր պարտապան և պարտատէր: Ապա վասն զի պարտ է փոխարինական արդարութեան հրամայել զտոյժն անիրաւութեան ըստ թուաբանական հաւասարութեան, պարտ և պատշաճ էր նոյն ինքեան փոխատրել զկեանս՝ զոր եբարձ. կամ եթէ հոգին սպան ընդ մարմինն, պարտ և պատշաճ էր մարմնոյ սպանանել զհոգի: Իսկ ըստ օրինական արդարութեան՝ խոստովանելի է թէ օրէնսդիրք ոմանք հրամայեցին զդիակունս անձնասպանից ընկենուլ 'ի բացի, զի ըստ գաղափարին նոցա առ անձինս՝ փոր գազանաց լիցի նոցա գերեզման: Փոխադարձ տոյժ այս վայելչական, և աչընկէց կենդանեաց, քան պատժական մեռելոց: Բայց այս քաջ ցոյց է թէ անիրաւեցան նոքա առ հայրենիս, յանցանել ըստ օրէնս. և ոչ թէ անիրաւեցան առ իւրեանց անձինս: Իբր զի 'ի ծնանիլ ամենայն մարդկան վասն հայրենեաց, որպէս այլուր ասացաք, կամաւոր է այն սպանութիւն՝ հայելով 'ի սպանեալն. այլ ակամայ՝ հայելով 'ի հայրենիս. և վասն այնորիկ անիրաւ է առ հայրենիս, այլ ոչ առ սպանեալն: Վարդապետութիւնս հաստատի անընտել օրինակաւ: Մարսիլիա, որ երբեմն ազատ էր և բարեկարգ հասարակապետութիւն, էր անաչառ վրէժխնդիր՝ որոց կամաւոր դահիճն լինէին անձանց. բայց պահէր նա յարքունի պահեստ զթունաւոր մոլախինդ, որպէս զառաջնորդ ինչ դեղ ախտանի



ամենայն չարեաց, եթէ օրինաւոր թոյլտուութեամբ իշխանաւորաց լինէր առնուլ 'ի կիր: Վասն որոյ եթէ 'ի քաղաքացեաց ոք ախտաժէտ կամ դժբախտ՝ տաղտկանայր 'ի կենաց, խնդրէր աղաչանօք յիշխանաւորաց կենազրաւ լինել. որք թէ իրաւացի համարէին զնորա յառաջ բերեալ պատճառս, տային նմա զայն մահաբեր ումպ, որով 'ի դէպ ժամու, յետ հրաման տալոյ վասն տան իւրոյ՝ քաղցր 'ի քուն լեալ, զրաւիւր 'ի կենաց և 'ի տաղտապանաց: Գերմանիկոս Կեսար ըստ պատմելոյ Տակիտոսի, զայր գործական և խժդժական օրինի տեսեալ զվեհանձնեայ փորձ 'ի բամբիշ ոմն երեւելի, չուառ՝ միանգամայն և երջանիկ կարծեցեալ: Յայսմ օրինաց գրելոյ ըստ ազատանուաղ լուսոյ բնութեան, և ոչ ըստ լուսապայծառ աւետարանի, մարթիս ճանաչել նախ թէ ըստ դատման իսկ այնց իմաստնոց, որ սպանանէ զանձն անիրաւի առ հայրենիս. յորժամ հայրենիք չեն հաւան ընդ պատճառանսն. այլ ոչ յորժամ թողացուցանեն զմահ՝ որպէս մեծ ինչ երախտաւորութիւն՝ այնմ անձուկ ունողին: Եւ երկրորդ թէ նա առաւել չանիրաւէ առ ինքն, իբր զի յառաջ դայ գործն յիւրոյ կամաց, և ոչ 'ի կամաց այլոյ: Նա ըստ կարծեաց նոցա, առնէ անձին մեծ ինչ ծառայութիւն. զի այնուիկ կարճառէ և քաղցր դեղթափաւ բառնայ զբռնութիւն երկարաձգեալ ցաւագին թունոյ վտանկիր կենաց, և արարեալ հաճելի զահաւորն քան զամենայն որ յաշխարհի, քաղցր թխաւորէ 'ի քնոյ 'ի մահ 'ի միում բաժակի:

Ի նախընթաց վարդապետութենէ ասալի մարթիս դիւրաւ լուծանել և զմիւս խնդիրն, թէ սպանողն այնորիկ որ կամի թէ սպանցի, անիրաւեսցի՞ արդեօք առ սպանեալն: Յայտնի է թէ 'ի փոխարինութիւնս ոչինչ արդարութիւն կոչէ վնասել զայն, որ կամի զվնասն. կամ զրկել, զայն որ կամի զզրկանսն: Ի փոխանակութեան զինուց, զոր 'ի նշան դաշնաւորութեան արարին 'ի մէջ իւրեանց Դիոմեդէս և Գղաւկոս. թէպէտ զէնք Գղաւկոսի էին յոսկւոյ, և Դիոմեդեայն յերկաթոյ, ոչ դատապարտեցաւ Դիոմեդէս առնել 'ի հաւասարութիւն զանհաւասարութիւն գնոց. զի անհաւասարութիւնն էր նիւթական, այլ ոչ տեսական. ազատ հաւանութիւնն լնոյր զվնասն, զի ամենայն ոք տէր է իւրոցն: Ըստ այսմ սպանողն այնորիկ որ կամի թէ սպանցի, այս հնար է թէ անիրաւեսցի նիւթապէս, այլ ոչ տեսականապէս: Յիրաւի յանդիմանեցաւ յԱրիստոտէլէ Որեստէս յեղերերգութեանն Եւրիպիդեայ. զի խոստովանելով և 'ի չքմեղս լինելով եթ պատասխանի, թէ սպան զմայր իւր, ասէ.

Կամաւ զկամեցողն, ակամայ զչկամեցողն:

Որպէս թէ ասէր. Եթէ կամէր նա թէ սպանցի, սպանի կա-

մաւ. եթէ ոչ կամիցի նա, սպանի ակամայ: Ոչինչ զրոյց յայնմ մեծի բանաստեղծութեան քան զայդ եղերական, և ոչ ինչ քան զայդ յիմարական: Զգիտեմ ով առաւել շաղփաղփիցէ. Որեստէս եթէ բանաստեղծն, որ կամելով արդարացուցանել զՈրեստէս, լինի նորա չարախօս. զի անդ է տեսականապէս յանցուածն. ուր է նորա սկիզբն, և սկիզբն յանցուածոյն է կամքն: Ապա շատ էր ասել. Սպանի զմայրս, զի նա կամեցաւ թէ սպանցի. փոխանակ զի նա ինքն շնացողին ետ սպանանել զհայր իմ: Այսու օրինակաւ Որեստէս արկանէր զյանցուածն 'ի հեղինակին վերայ. զի արդարութիւնն ենթադրէ, թէ որ կամի զպատճառն՝ կամի և զգործն որ հարկիւ լծորդ է ընդ նմա: Ապա ոչ էր պարտ նմա ասել, կամաւ զկամեցողն. այլ թէ ակամայ զկամեցողն. զի կամքն բանադատեալ ոչ է կամք. և կրկին էր բանադատեալ կամք Որեստեայ. 'ի հարկէ վրէժխնդրութեան հօր, և 'ի հրամանէ պատգամախօսին: Իսկ արդ, եթէ մեկնողական կամք սպանելոյն՝ բաւական է զի ըսպանողն մի՛ անիրաւեսցի, որչափ ևս չանիրաւի, յորժամ յայտնի և ազատ կամք սպանելոյն առիթէ զսպանողն: Նա և թէ որ իւրով ձեռամբ սպանանէ զինքն, ոչ անիրաւի առ ինքն, որպէս ասացաւ, զիա՞րդ անիրաւութիւն ընկալցի, եթէ այլոյ ձեռօք կամի թէ սպանցի: Նա ինքն է սպանեալն և սպանողն: Արքայ Սաւուղ էր վիրաւորեալ 'ի մահ, բայց քանզի կամ յամառ ոգին չելանէր 'ի մարմնոյ 'ի տանջել զնա, կամ կարի իմն անձուկ դուռն թուէր իւրոյ հպարտութեան՝ մի միայն վիրաբերան, ողորմելին կիսամեռ և կիսակենդան տանջիւր և ոչ մաշանայր: Ապա հրամայեաց միում յիւրոց զօրականաց՝ Ամաղեկացւոյ, զրաւել զնա 'ի կենաց. նա 'ի հնազանդութենէ և յաղեխորով գթոյ ընդարձակագոյն ևս պատառուածով լայնեաց զելս հոգւոյ և զմուտ մահու: Ո՞ր չարագործ եղև երբէք քան զաս բարեգործ: Ո՞ր անիրաւութիւն կոչիցէ զայսպիսի հնազանդութիւն իւրում տեառն դիւրէջ [246]: Բայց ասիցես. Եթէ Ամաղեկացին չանիրաւեցաւ առ տէր իւր, զիա՞րդ ապա Դաւիթ այր իմաստուն և սուրբ մեռոյց զԱմաղեկացին վասն այդր բանի: Թէ չեղև նա անիրաւ, անիրաւեցաւ ուրեմն Դաւիթ 'ի դատապարտել զանպարտն: Եթէ Դաւիթ իրաւամբք դատապարտեաց զնա, ապա չէ ճշմարիտ թէ ոչ լինի անիրաւութիւն 'ի սպանանելն զայն որ կամի թէ սպանցի: Պատասխանեմ, որպէս յառաջն, թէ զոր օրինակ որ սպանանէ զինքն, ոչ անիրաւի առ ինքն, այլ առ հայրենիս. նոյնպէս Դաւիթ ոչ դատապարտեաց զԱմաղեկացին, զի անիրաւեցաւ առ Սաւուղ, այլ զի անիրաւեցաւ առ Աստուած, որ օծեալն էր զնա ձեռամբ Սամուելի: Այն սուրբ օծումն էր պահանորդ այնր մարմնոյ: Կեանք թագաւորի են 'ի ձեռս Աստուծոյ. 'ի նա պարտ էր Ամաղեկացւոյն առնել զայն ապաստան: Նա արար որ ինչ կամք էին Սաւուղայ. չարար՝ որ ինչ կամք էին Աստուծոյ: Բայց ցուցէ թէ այն եղև մնապարծութիւն ինչ Ամաղեկացւոյ:



## ԳԼՈՒԽ ԺԴ.

*Թէ ո՞ր իցէ ճշմարիտ և կատարեալ սահման արդարութեան:*

Աստուածաբանք ոմանք սահմանեն այսպէս. Արդարութիւնն է խոտորիլ 'ի չարէ, և առնել զբարի: Բայց սոքա շփոթեն զդշխոյն առաքինութեանց ընդ իւր աղախնայս: Քանզի և ժուժկալն, հեզն և առատաձեռնն առնեն զբարի, և խորշին 'ի չարէ. զի զմէջն ունին զառաքինութեան, և խորշին 'ի ծայրից. բայց վասն այնր ոչ ժուժկալութիւն, ոչ հեզութիւն, և ոչ առատաձեռնութիւն են արդարութիւն: Արիստիդէս ճարտարն յարդարութեան, որ էառ յիւր վերայ զարդար մականուն, իբրև հարցաւ թէ զինչ է արդարութիւն, ետ պատասխանի. Ոչ ցանկալ ընչից այլոց: Քաջ գիտաց դա 'ի գործ դնել զարդարութիւն, քան սահմանել զայն: Արժանի էր կիտոյ միայն իւրոյ անուան, թէ չէր արարեալ աւելի քան զիւրն սահման. որ սահման կարեալ զարդարութիւնն ընդ մէջ շատանայր թերևս վասն նորա, այլ ոչ վասն այլոց: Լաւագոյն ևս է սահմանն Իրաւագիտաց, թէ արդարութիւնն է հաստատուն և մշտնջենաւոր կամք տալոյ ամենեցուն, զոր պարտն է: Բայց և այդ է առաւել գաւեշտական, քան գիտնական. զի 'ի տեղի սեռի դնէ զէնթակայն, և թէպէտ էութիւնն է ճշմարիտ, բայց պարագայքն են աւելորդք. զի և արիութիւնն և այլ բարոյական առաքինութիւնք պահանջեն զհաստատուն և զմշտնջենաւոր կամս 'ի գործ դնելոյ զնոսա: Առաւել ևս տրամաբանօրէն և ևս ընդարձակ սահմանեցաւ յայն Նախնի փիլիսոփայից, որպէս 'ի սկզբան անդ ասացաք. Արդարութիւնն է ունակութիւն, որով մարդ լինի պատրաստական առնելոյ զիրս արդարս, և կամելոյ առնել զնոսա: Միայն թէ սոքա դնէին յայտնի զսեռն, այսինքն թէ արդարութիւնն է ունակութիւն. բայց թողուին անյայտ զտարբերութիւնն, մնալով 'ի մթան թէ ո՞ր իցեն արդար իրք, որպէս և թէ զինչ իցէ արդարութիւն. մինչ այնուհետև չերևիլ սահման, այլ վայրաբանութիւն: Ապա Արիստոտէլ 'ի վերայ այսց Նախնեաց գծագրութեանց աշխատասիրեալ, և զարդարութիւնն օրինական՝ որ ընդ իւրև փակէ զամենայն առաքինութիւնս, որոշեալ 'ի մասնաւոր արդարութենէ, որ հայի 'ի հաւասա-

րութիւն բաշխից և փոխարինութեանց, Ճշգրտիւ նկարէ զբուն և զկատարեալ պատկեր արդարութեան սահմանաւս 'ի բանից նորա քաղեցելով. Թէ արդարութիւնն է առաքինութիւն ինչ, որով յօժարին կամք տանել ուղիղ դատաստանաւ զիրս արդարս, և տալ անձին և այլոց համեմատութեամբ և հաւասարութեամբ զոր պարտն է, 'ի բաշխս և 'ի փոխարինութիւն: Յորում սահմանի արտայայտեալ տեսանես բովանդակ զէութիւն արդարութեանն, օրինականի և մասնաւորի, և զտարբերութիւն յիւրոց ծայրից և յայլոց բարոյական առաքինութեանց: Ասաց նա նախ առաջին, թէ արդարութիւնն է առաքինութիւն ինչ, կամ առաքինական ունակութիւն: Ուր պարտ է քեզ առնուլ 'ի միտ, թէ որպէս զարդարն մարթ է իմանալ յերկուս նշանակութիւնս, այսինքն կամ վասն առարկայի արդարութեան, և կամ վասն անձին որ առնէ, նոյնպէս արդարութեամբ մարթ է իմանալ կամ զգործն և կամ զունակութիւն արդարութեան: Վասն զի խմացուցեալ մեզ Արիստոտէլի, թէ արդարութիւնն ըստ որում գործ հայի 'ի բարիս այլոց՝ առ որս է կարգեալ. բայց ըստ որում ունակութիւն, առնէ բարոյապէս բարի զանձն նորա. յայս միտս խօսի նա տառանօր, ասելով լեալ բարեաց բարուց. և այս է հասարակ սեռ ամենայն բարոյական առաքինութեանց, որովհետև բնաւք են ունակութիւնք յօժարեցուցիչք առ առաքինական գործս իւրոյ տեսակի: Այնու զոր ասէ, թէ յօժարեցուցանէ զկամս, նշանակէ մեզ զենթակայն, յորում զտեղի առնու արդարութիւնն. զի թէպէտ ամենայն առաքինութիւնք ընդհանրապէս ընթացակցին առ ուղղութիւն կամաց. բայց արդարութիւնն մասնաւորապէս ունի ենթակայ զկամս, և ոչ զիրս իբրև զայլ առաքինութիւնս որ ասացան: Ուստի իրաւապէս կոչեաց զարդարութիւնն, հաստատուն և մշտնջենաւոր կամք, առեալ զենթակայն փոխանակ ունակութեան, որ և ասացաւ: Եւ վասն զի կամքն ոչ գործէ ուղիղ առանց ուղղութեան գործնական դատման որ է խոհեմութիւնն, 'ի վերայ բերէ, ուղիղ դատաստանաւ, զի 'ի մէջ այլ ամենայն առաքինութեանց՝ սա մասնաւորապէս պահանջէ զմտադիր ինչ դատաստան, 'ի ճանաչել զարդարութիւն միջոյն, յորմէ և դատաւորք առին զանուն: Խորհրդով 'ի վերայ բերէ անդանօր և զայն հանրական եղերս, որք երևին նոյնանշանք ընդ արդարութեան. յասելն թէ այս ունակութիւն յօժարեցուցանէ առ ամենայն արդար իրս. նշանակել կամեցեալ զօրինականն արդարութիւն, որ հրամայէ բազմաց առաքինութեանց, որք առանց օրինաց լինէին միայն ընտրութիւն, բայց օրինօք փոխին յարդարութիւն: Աւարտէ յայն, թէ հայի նա 'ի համեմատութիւն և 'ի հաւասարութիւն 'ի բաշխս և 'ի փոխարինութիւնս. որ է սեպհական տարբերու-



թիւն մասնաւոր արդարութեանն յայլ ամենայն առաքինութեանց որպէս լսար: Բայց բաց յայսմանէ՝ եղերօքս համեմատութեան և հաւասարութեան որք նշանակեն զհամեմատութիւն զերկրաչափական 'ի տրամաբաշխականս, և զթուաբանական 'ի փոխարինականս, արտայայտէ մեզ խոր ինչ գաղտնիս. այսինքն թէ որք իցեն ծայրք արդարութեան, և քանի՛ տարբերք իցեն 'ի ծայրից այլ ամենայն առաքինութեանց, որպէս լսեցես արդ: Ստոյգ իմն է թէ իւրաքանչիւր առաքինութիւն է միջասահման ինչ եդեալ 'ի միջի ընդ յաւէտ և ընդ նուազ, որք են նորա ծայրք, այսինքն առաւելութիւն և նուազութիւն: Այսպէս արիութիւնն է միջասահման ինչ ընդ մէջ կարի իմն երկիւղի, և կարի իմն աներկիւղութեան: Առատաձեռնութիւնն ընդ մէջ կարի իմն առաւելութեան և կարի իմն նուազութեան 'ի տալն: Բայց կարի իմն յաւէտն կամ նուազն այլոց առաքինութեանց են երկու չարութիւնք յառաջ եկեալք յերկուց մոլեկան ունակութեանց, որք չեն համակիր ընդ միմեանս, և դժուարին է որոշել զնոսա յառաքինութենէն որ 'ի մէջն: Եւ վասն այսորիկ այլևայլ անուանակոչութիւն է նոցա: Ծայրք արիութեան են յանդգնութիւն, 'ի կարի իմն աներկիւղութեան, և վեհերոտութիւն՝ 'ի կարի իմն երկիւղի: Եւ ծայրք առատաձեռնութեան են շռայլութիւն, 'ի տալ կարի իմն աւելի, և ագահութիւն, 'ի տալ կարի իմն նուազ. մինչև զի ծայր ընդ ծայրի են անհամակիրք: Բայց զորին հակառակն, միջասահմանութիւն արդարութեան կայ 'ի մէջ երկուց եղերաց անչափակցաց, միանգամայն և համակրաց, յառաջ եկելոց 'ի մի և նոյն մոլութենէ, այսինքն է յանարդարութենէ: Զի եթէ մատծի մարդ որպէս դատաւոր, անարդարութիւն լինի 'ի տալ միումն յաւէտ և միւսումն նուազ քան զպարտն: Իսկ եթէ մատծի որպէս մասնաւոր ոք, անարդարութիւն լինի յառնուլ վասն իւր աւելի քան զպարտն, և 'ի տալ այլոց նուազ քան զպարտն: Մինչ զի ոչ այլ ինչ է արդարութիւն, բայց հաւասարութիւն. և ծայրքն են երկու անարդարութիւնք կամ անհաւասարութիւնք. մին 'ի յաւէտն, և միւսն 'ի նուազն: Մին ներգործական և կամաւոր, միւսն ակամայ և կրաւոր: Ուստի որպէս երկաքանչիւր ծայրք ունին մի և նոյն անուն, այսինքն անհաւասարութիւն կամ անարդարութիւն, նոյնպէս սովոր եմք ասել, թէ առաքինութիւնն արդարութեան ունի մի միայն ծայր, և այլք երկուս: Յայսմանէ ունիս ճանաչել, թէ որ իցէ անարդարութիւն քաղաքական, և տնտեսական. զի եթէ անարդարութիւնն չէ կամաւոր, լինի անարդարութիւն նիւթական և քաղաքական. իսկ եթէ կամաւոր և ներգործական, լինի անարդարութիւն տեսական, և խղճական անիրաւութի:

# ԳԼՈՒԽ ԺԵ.

## Յաղագս անարդարութեան և բաղդատութիւն արդարոյ ընդ անարդարոյ:

Ի սահմանէ արդարութեան, ըստ նախադրեալ կանոնի ներհականաց, մարթիս ճանաչել, որ իցէ սահման անարդարութեան, այսինքն է. անարդարութիւնն է ունակութիւն մոլեկան, որով յօժարի մարդ առնել կամաւ, որ ինչ է անարդար, ոչ պահեալ 'ի բաշխս և 'ի փոխարինութիւնս զհամեմատութիւն և զհաւասարութիւն: Բայց քանզի գերիմաստ սուրբն Օգոստինոս համառօտեաց զսահման Արիստոտէլի, այսպիսի իմն օրինակաւ, որում զհետ չոգան և աստուածաբանք, թէ՝ արդարութիւնն է առաքինութիւն ինչ, որ տայ իւրաքանչիւրում՝ զիւր արժանն. մարթ է և մեզ ասել, թէ անարդարութիւնն է մոլութիւն, որ չտայ իւրաքանչիւրում զիւր արժանն: Եւ այս սակաւ բանք բաւական են 'ի նկարել ճշգրիտ բաղդատութեամբ զպատկերս առն արդարոյ և անարդարոյ:

Վասն զի արդարն առաջնորդեալ յառաքինական ունակութենէ առ ամենայն ինչ արդար՝ մեծապէս խնդայ ընդ ուղղութիւն: Եւ անարդարն վարեալ 'ի մոլեկան ունակութենէ առ ամենայն ինչ անարդար, մեծապէս խնդայ ընդ անիրաւութիւն: Վասն զի եթէ բնաւոր յօժարութիւնն հեշտ և քաղցր առնէ զգործն, ապա և ունակութիւնն որ է երկրորդ բնութիւն: Շուրջ զօրինական արդարութեամբ, արդարն ունելով զօրէնս որպէս իւր կամք, ատեայ ընդհանրապէս զամենայն մոլութիւնս. իսկ անարդարն՝ ունելով զիւր կամս միայն որպէս օրէնք, ատեայ ընդհանրապէս զամենայն առաքինութիւնս: Զի որովհետև ամենայն առաքինութիւնք են հրամայեալք յօրինաց, որ միանգամ վարէ 'ի սրտէ իւրմէ զօրէնս, դուռն բանայ ամենայն մոլութեանց: Իսկ զինչ 'ի քաղաքական կեանս: Արդարն 'ի բաշխս ունի չափ հատուցման զարժանաւորութիւն անձանց. իսկ անարդարն ունի չափ արժանաւորութեան զիւրն նպաստ. և վասն այսորիկ նա վերադասէ զառաքինիս քան զհզօրս, սա վերադասէ զմոլիս քան զառաքինիս. զի մոլին 'ի վարձահատոյց լինել մոլեաց՝ վարձահատոյց լինի անձին: Ի փոխարինական սակարկութիւնս, արդարն վերադասեալ զիրաւացին քան զօգուտն, եթէ գնեսցէ և եթէ վաճառեսցէ, ոչինչ կամի ունել աւելի քան զարժանն: Անարդարն վերադասեալ զօգուտն քան զիրաւացին, թէ վաճառէ՝ խաբէ, և թէ գնէ՝ գողանայ. մինչ զի ընդ շահասիրին ամենայն սակարկութիւն աւարտի 'ի վէճ: Տուր յաւանդ ոսկի և ականս յերկոցուն ձեռս. 'ի ձեռս արդարոյն իբրև յաւանդատեղի սուրբ՝ այնչափ գտցես, որչափ ետուր յաւանդ. 'ի ձեռաց անարդարոյն իբրև յԱխերոնեան գբոյ անհնար է թէ հանցես արտաքս զոր արկերն 'ի նա [247]: Յանձն արա երկոցուն զքանոն փիլոսոփայ առանձնաւոր ինչ դատաստանի, այն քանոն 'ի ձեռին արդարոյ լիցի կանոն Պողիկլետոսի, որ ոչ 'ի սիրոյ և ոչ յերկիւղէ թեքթեքի. 'ի ձեռին անարդարոյ է կանոն Լեսբեան, որ թեքի յոր կողմն իւր կամք իցեն: Յանձն արա երկոցուն զկշիռ արքունի իշխանութեան: Ի կշիռ արդարոյն՝ յանցանք աղքատաց և մեծատանց են հաւասարք. 'ի կշիռ անարդարոյն՝ յանցանք փոքունց են մեծամեծք, և յանցանք մեծամեծաց են փոքունք. զի նոցա ոչինչ, և սոցա զամենայն թողացուցանէ, և տուողին տայ տեղի [248]: Եթէ կարի իմն խիստ կամ մթին են օրէնք, արդարն առնէ օրէնս զբնաւոր ուղղութիւն. և բերանով նորա ննջեցեալ օրէնսդիրն յայտնէ կամ մեղմէ զիւր օրէնս: Անարդարն՝ կամ կարի իմն խնայութեամբ և կամ կարի իմն խստութեամբ, թարգման առնէ օրինաց զիւր կիրս: Ուստի օրէնք առ իւր սիրելիս են ոստայնք սարդի. առ ատելիս՝ են ադամանդեայ ցանցք Հեփեստեայ [249]: Ոչ լաւ ես ինչ ուղղութիւն պահէ 'ի տնտեսական իրաւունս քան 'ի քաղաքականս: Վարի դա ընդ իւր կենակից իբրև ընդ հարճ, ընդ որդիս իբրև ընդ ծառայս, և ընդ ծառայս իբրև ընդ անասունս: Արդարն գնայ ընդ ծառայս գթութեամբ, ընդ որդիս սիրով, ընդ կին իւր հաւատարմութեամբ, և ընդ ամենեսին մարդասիրութեամբ. զի սա զսիրողս իւր փոխարէն սիրէ, և նա ոչ կարէ սիրել բայց միայն զանձն: Առ անձն իւր արդարն վարէ զառաջնորդութիւն միանձնական, ըստ միապետական իմն առաջնորդութեան, հնազանդեցուցեալ զկիրս կամաց և զկամս բանին. այլ անարդարն վեր 'ի վայր շրջէ զառաջնորդութիւն անձին, որպէս և զհասարակացն, հնազանդեցուցեալ զբանն կրից, և զկիրս արտաքնոց զգայութեանց: Հուսկ ապա, նա 'ի տալ ամենեցուն զարժանն, ընծայէ քաղցրութիւն առ կրտսերս, հաւատարմութիւն առ հաւասարս, յարգութիւն առ մեծամեծս, հնազանդութիւն առ իշխանս, երկիւղածութիւն առ Աստուած: Սա չունի ոչ քաղցրութիւն, ոչ հաւատարմութիւն, ոչ յարգ և ոչ երկիւղածութիւն. զի անուղիղ միտս ունելով և ամբոխեալ, չփոթէ զամենայն իրաւունս, զաստուածայինս, զմարդկայինս, զքաղաքականս, զազգայինս, և զբնութեան:

# ԳԻՐՔ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ԽՈՀԵՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՒՐՈՑ ԾԱՅՐԻՑ:

### ԳԼՈՒԽ Ա.

*Յաղագս խոհեմութեան ընդհանրապէս:*

Ոչինչ 'ի բարոյական դպրոցի առաւ լուար ատեալ յիշատակեալ, որպէս զանունդ Ուղիղ բան. և յիրաւի. զի յայս հաստատեալ կայ մէջ առաքինութեան. զանձնէ կախեալ կայ ամենայն իմաստուն ընթացութիւն. առաւել որոշեն արարք մարդկան յարարից անասնոց, և առանց սորա մարդն է խլուրդ: Իսկ զինչ իցէ ուղիղ բան, բայց խոհեմութիւնն, որ թէ ուղիղ է պատշաճեալ, եթէ կարակնիւ չափէ զգիտումն ընդ ուղղութեան, և զմիջոցս ընդ գիտման: Որպէս Մնեմոսինէ մայր է ամենայն մուսայից [230], նոյնպէս խոհեմութիւնն մայր է ամենայն առաքինութեանց: Զի ճանաչումն յառաջէ քան զուգագործութիւն: Արդ քանզի այս մեծ առաքինութիւն այնչափ առաւել ազնուատոհմ է քան զայլս, որչափ առաւել ազնուական է միտք քան զայլ ամենայն կարողութիւնս հոգւոյ, վասն այսորիկ խոհեմութիւնն արժանաւոր է առաւել 'ի համար դասիլ առաքինութեանց իմացականաց քան բարոյականաց. և հարկ է խնդրել 'ի բարձրագոյն եւս ազգահամարէ գիտութեան հոգւոյ զնորայն ծնունդ:

Բայց պարտ է քեզ յուշ ածել, զոր վաղու եւս ասացաք յառաջին գիրս, թէ երկու են մասունք հոգւոյ, մին անբանական հասարակ անասնոց, և միւսն բանական սեպհական մարդոյ. և թէ երկաքանչիւր մասն ունի կրկին կարողութիւնս, մին ճանաչողական, և միւսն բաղձողական. զի ամենայն կենդանի բաղձայ իւրում բարւոյ, և ոչ ոք բաղձայ այնմ զոր ոչ ճանաչէ: Նոյնպէս, թէ յանբանական մասին ճանաչողական է երևակայութիւնն, բաղձողական է բաղձանքն զգայական: Եւ 'ի բանական մասին, ճանաչողական է միտքն, և բաղձողական է կամքն: Մինչև երևակայութեանն լինել իբրև միտք ինչ



նիւթական. և մտացն երևակայութիւն ինչ հոգեկան. բաղձանացն լինել իբրև կամք ինչ նիւթական, և կամացն բաղձանք ինչ հոգեկան: Հուսկ ապա, թէ առարկայ մտաց է ճշմարիտն, և առարկայ կամաց է բարին, բայց յոլովակի մտաց ըմբռնեալ զառերևոյթն որպէս ճշմարիտ, խաբէ զկամս. և կամաց ըմբռնեալ զսուտ բարին որպէս իրօք բարի, խաբէ զմարդ. և այնպէս եթէ կամք և եթէ միտք յոլովակի 'ի բաղձանաց և յերևակայութենէ խաբին և խաբեն: Արդ զոր օրինակ առարկայից մտաց ոմանք են ընդհանուրք, հարկաւորք և անայլայլելիք, որպէս էութիւնք իրաց, և ոմանք մասնաւորք, ներընդունականք և այլայլականք, որպէս այս մարդ, այս ծառ, այս քար, սոյնպէս 'ի ճանաչել զառարկայս այլ և այլ սեռի պահանջին այլ և այլ կարողութիւնք: Մինչև զիմացական կարողութիւնն՝ որ ճանաչէ զընդհանուր առարկայս, կոչէ Արիստոտէլ՝ միտք ընդհանուր, և զայն որ ճանաչէ զառարկայս մասնաւորս, միտք մասնաւոր: Նոյնպէս եթէ զսեպհական առարկայիւք զկայ առնու միտն 'ի ճանաչումն հայեցողական կամ վերացեալ ինչ ճշմարտութեան, կոչի միտք հայեցողական կամ տեսական: Բայց եթէ ուղղէ նա զճանաչումն առ վախճան ինչ առնելի և 'ի գործ դնելի, կոչի միտք գործնական:

Այս է ազգահամար կարողութեանց հոգւոյ, յորմէ մարթ է քեզ քոյին հանճարով տրամաբանել ընդհանրապէս, թէ ունակութիւն խոհեմութեան բնակէ յիմացական կարողութեան, զի կարգադրել, խորհուրդ տալ, ուղղել և պատճառս յառաջ բերել, են գործք յատկաւորք յառաջատես մտաց, և ոչ կոյր կամաց. թող թէ անբանական կրից, կամ խաբեբայ բաղձանաց: Եւ եւս, թէ խոհեմութիւնն ոչ զտեղի ունի յընդհանուր և 'ի հայեցողական միտս, այլ 'ի գործնական և 'ի մասնաւոր միտս. զի ունի իւր առարկայ զառնելի և զներընդունական իրս և վախճան՝ զբարոյական իրս և զառաքինականս. որպէս յիւրում տեղւոջ լուիցես: Մնայ միայն առ այժմ գիտել թէ զո՞ր տեղի ունիցի խոհեմութիւնն 'ի մէջ իմացական առաքինութեանց, և իւ տարբերիցի յայլոց իւրոց քերց:

### ԳԼՈՒԽ Բ.

*Յաղագս իմացական առաքինութեանց:*

Ասացեալ լուար թէ ունակութիւնք են կատարելութիւնք կարողութեանց հոգւոյ: Իւրաքանչիւրում կարողութեան՝ բնութիւնն, որ ոչինչ գործէ վայրապար, ետ տրամադրու-

թիւնս ինչ յօժարեցուցիչս առ առաքինութիւն. զորս մարթ է կոչել առաքինութիւնս անկերպարանս. առ 'ի թողուլ մարդկային ճարտարմտութեան տալ նոցա կատարելութիւն և կերպարան: Այդէն իսկ 'ի տիս մանկութեան ծանուցաւ և գուշակեցաւ 'ի Դրուսոսէ անկեղծ ծանրութիւն Կատոնի, 'ի Սկիպիոնէ՝ քաղաքավար խոհեմութիւն Մարիոսի, 'ի Պոմպէոսէ արիական համարձակութիւն Կասիոսի, և 'ի Միղդայէ անզուգական վեհանձնութիւն Պոմպէոսի: Այն մեծամեծ առաքինութիւնք սաւերագրեալք 'ի փոքր տիս յընդարոյս բնաւորութենէ, իբրև ընկալան յերեանց առաքինական ունակութենէ լոկ զկատարումն, յանձանց իւրեանց և ոչ 'ի բնութենէ բարգաւաճեցին: Ապա այնչափ տարբերութիւնք են ունակութեանց, որչափ բնական կարողութիւնք 'ի նոցանէ կատարելագործեալք. և այնչափ տարբեր են 'ի միմեանց կարողութիւնք, որչափ տարբեր են նոցին առարկայք. զի ամենայն առնչացեալ առնու տեսակ յիւրմէ առնչակցէ: Եւ յայսմանէ ճանաչել ունիս տրամպէս զերկուս գերագոյն սեռս առաքինական ունակութեանց: Զի որք կատարելագործեն զկարողութիւնս իմացականս, կոչին առաքինութիւնք իմացականք. և որք կատարելագործեն զկարողութիւնս բաղձողականս, կոչին առաքինութիւնք բարոյականք: Այլ թողեալ 'ի մի կողմն զառաքինութիւնս բարոյականս, զորոց արդէն խօսեցաք. խօսեսցուք միայն զիմացականաց: Սոքա կամ կատարելագործեն զհայեցողական և զընդհանուր միտս, և կամ կատարելագործեն զգործնական և զմասնաւոր միտս: Եւ ահա քեզ երկու գերագոյն սեռք իմացական առաքինութեանց, այսինքն է առաքինութիւնք հայեցողականք, և առաքինութիւնք գործնականք:

Արդ հայեցողական առաքինութիւնք թէ կատարելագործեն զմիտս 'ի ճանաչումն առաջնոց սկզբանց հանրականաց, ծագի ազնուականն այն առաքինութիւն, կոչեցեալ առասութեամբ, ունակութիւն մտաց. այն է որ յոյնոց հանճար կոչի: Բայց եթէ կատարելագործեն զմիտս 'ի հայեցողական եզրակացութիւնս, որք յայնց սկզբանց հաւաքին, ծագի այն միւս ազնուագոյն առաքինութիւն որ 'ի փիլիսոփայից կոչի գիտութիւն: Սակայն թէ այս գիտութիւն ունի իւր առարկայ զվսեմական ինչ և զաստուածային, կոչի իմաստութիւն, և գերապանծ գլխոյ առաքինութեանց: Ունակութիւնք գործնականք թէ կատարելագործեն զգործնական միտս 'ի կարգի առ արտաքին գործուածս, ծնանի արուեստն: Բայց թէ կատարելագործեն զնա 'ի կարգի առ մարդկային ներգործութիւնս, ծնանի խոհեմութիւն. զորմէ է առանձնոր խնդիր: Սոքա են ունակութիւնք կատարեալք, և առաքինութիւնք իմացականք, բայց մնան մեզ դեռ երկու ունակութիւնք անկատարք. մին



'ի հայեցողական միտս, և միւսն 'ի գործնական միտս: Նա խօսի կարծ 'ի կարծ 'ի վերայ ընդհանուր իրաց, և է կարծիք: Սա խօսի կարծ 'ի կարծ 'ի վերայ մասնաւոր իրաց, և է կասկած: Բայց քանզի ճանաչումն հիմնեալ 'ի կարծիս է առաւել պատիր քան ճշգրիտ, վասն այսորիկ այս երկու ունակութիւնք չեն կատարեալ առաքինութիւնք, այլ ըստ մասնեայ առաքինութիւնք, ըստ օրինակի այնց կիսակենդան կառաբուսից, որ են տեսակ ինչ միջակային 'ի մէջ տնկոց և կենդանեաց, թերազդացք քան զկենդանիս, և առաւելեալք քան զտունկս, որպէս սպունգք: Արդ որպէս այլուր եդաք քոյ առաջի աչաց զծառ ճիւղագրութեան ամենայն բարոյական առաքինութեանց 'ի մի էջ, կամ է ինձ առնել նոյնպէս զճիւղագրութիւն իմացական առաքինութեանց, մինչ չև ձեռնարկեալ է իմ խօսել զիւրաքանչիւրոցն մի ըստ միոջէ:

## ԻՄԱՑԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆՔ

Եթէ կատարելագործեն զմիտս շուրջ զառաջին սկզբամբք,

ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՄՏԱՑ

Եթէ կատարելագործեն շուրջ զեզրակացութեամբք,

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Եթէ զվսեմական ինչ և զաստուածային առարկայիւ,

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

## ԻՄԱՑԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՔ ԳՈՐԾՆԱԿԱՆՔ

Եթէ կատարելագործեն զգործնական միտս զգործուածովք,

ԱՐՈՒԵՍՏ

Եթէ կատարելագործեն զնա մարդկային գործովք,

ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ

Կիսամասնեայ առաքինութիւն 'ի հայեցողական միտս,

ԿԱՐԾԻՔ

Կիսամասնեայ առաքինութիւն 'ի գործնական միտս,

ԿԱՍԿԱԾ

# ԳԼՈՒԽ Գ.

*Յաղագս ուսանողութեան մտաց կամ սկզբանց:*

Միտք մարդկային ստուգաբանեցաւ յիմաստասիրաց որպէս թէ ճրագ, զի վերծանէ զիրս 'ի ներքս յինքեան [251]: Կամք վերծանէ զիրս արտաքոյ իւր, զի շարժի ըստ իրաց ինչ հայեցեալ յառարկայս արտաքինս, որոց ըղձանայ. մինչ զի ոչ թէ գիտէ զնոսա, այլ հետամուտ է նոցա: Բայց միտքն հայեցողական է մատեան ինչ հոգեւոր, իւր ինքեան վերծանող. զի զգլխովին ամփոփեալ յինքեան, նկատէ զգեղեցիկ իրս զոր ունի 'ի ներքս յինքեան, ըստ օրինակի սիրամարգի, վայելէ 'ի զբօս գեղեցկութեանց զոր զիւրեւ ունի, լեալ իւր ինքեան գիտող և գիտարան: Բայց գեղեցկագոյն նկարք, զորս գիտէ նա 'ի պատկերատան իւրոց մտաց, են առաջին սկզբունք, և ընդհանուր առածք, որք ոչ ցուցանին պատճառօք, այլ նոքօք ցուցանէ զամենայն պատճառաբանն: Չեն գիտութիւնք, այլ սերմանք գիտութեանց: Ի սոցանէ ոմանք են առաւել մասնաւորք, որպէս սահմանք սեռից և տեսակաց: Եւ ոմանք առաւել ընդհանուրք և բնական լուսով ծանուցեալք, որպէս սոքին. Բոլորն է մեծ քան զմասն: Ամենայն պատճառ յառաջագոյն է քան զգործն: Յոչնչէ ոչինչ լինի: Իսկ ոմանք են ևս ընդհանրագոյնք. և վասն այսորիկ կոչին վճիռք անհրաժեշտք, և ճշմարտութիւնք անջրելիք ամենայն ողջամտի. որպիսի են այսոքիկ. Անհնար է թէ նոյն իցէ և ոչ իցէ: Յերկուց հակասական նախադասութեանց, հարկիւ մինն է ճշմարիտ, և միւսն սուտ: Այսոքիկ են բնական լոյսք վառեալք յիմացական կարողութեան, առ 'ի կարող լինելոյ տրամաբանել 'ի վերայ իրաց գործնականաց և հայեցողականաց օգնութեամբ ունակութեանց:

Ոչ յոյժ իմաստութեամբ խօսեցաւ զգիտութեանց աստուածային կոչեցեալ իմաստասէր՝ Պղատոն: Քանզի համարեցաւ եթէ գերագոյն արարիչն յետ ստեղծանելոյ զամենայն ոգիս միանգամայն՝ յամենայնն եհեղ զամենայն սկզբունս ընդհանուրս, և զամենայն գիտութիւնս կատարելապէս: Ի վերայ բերէ թէ ապա յընկղմիլ ոգւոց 'ի մարմինս նիւթականս, և 'ի փոխաբերիլ նոցա հետզհետէ 'ի մարմնոյ 'ի մարմին, կորուսանեն զյիշատակ գիտութեանց, զոր յառաջն ունէին. բայց առ իւրեանս պահելով զյիշատակ ընդհանուր սկզբանց: Մինչ զի ըստ սորա կարծեաց, մարդիկ 'ի հասու լինել գիտութեանց, ոչ հասու լինին այնմ զոր ոչ գիտէին. այլ վերա-



-ուին յիշատակեն զայն ինչ զոր մոռացեալ էին, անմոռաց ունելով զընդհանուր սկզբունս: Ո՞ երբէք լուաւ բան քան զայս անբան, և քան զայս անմիտ իմաստասիրութիւն: Եթէ Աստուած հեղոյր յոգիս զգիտութիւնս կատարեալս, զի՞նչ պիտէին սկզբունքն նոցա տարատարրոնք. Եւ թէ անդնդախոր լիճ մարմնոյ ոչ մոռացոյց նոցա զսկզբունս, զի՞արդ ընկլոյզ զգիտութիւնս զնոյին ծորդս: Զի՞նչ է գիտութիւն, բայց իմացական ինչ կապակցութիւն եզրակացութեանց ընդ իւրեանց սկզբունս: Եւ թէ աստուածային ձեռամբ գիտութիւնն ընդ իւրոց սկզբանց գրեցաւ 'ի հոգի անմահական, հարկ էր նոցա կամ 'ի միասին յարանալ, կամ 'ի միասին 'ի մոռացօնս լինել: Ապա այն է ճշմարիտ թէ միտք 'ի սկզբանէ են սոսկ կարողութիւն իմն որպէս յղեալ ինչ տախտակ, բնաւորեալ առ ընդունել զպատկերս առարկայից, որպէս նիւթն առաջին զտեսակս. և ապա յօդել զնոսա ընդ միմեանս և կազմել զնախադասութիւնս, և հուսկ ապա 'ի նախադասութեանց անտի հանել եզրակացութիւնս, որ է յետին ճիգն մտաց: Ապա ոչ այլ ինչ են սկզբունք զորոց խօսիմք, բայց եթէ նախադասութիւնք ընդհանուրք, ըմբռնք յերկնել զգիտութիւնս՝ ծնուցիչ զօրութեամբ մտաց: Եւ վասն այսորիկ միտքն 'ի հայել յիւր սկզբունս՝ մեծապէս զուարճանայ. վասն զի ունելով զճշմարիտն իւր սեպհական առարկայ, ոչ տեսանէ ինչ ճշմարտագոյն քան զայն հանրական առածս. իբր զի գիտութիւնն ըստ այնմ է ճշմարիտ, ըստ որում ճշմարիտ է սկիզբն՝ ուստի իջանէ նա, անմարթ գոլով առուին լինել յստակագոյն քան զիւր աղբիւրն: Եւ թէպէտ ընդհանուր սկզբունք, ըստ թռչնոց անուանին Արգուենայ [252], բերին ընդ իւրեանս լոյս, որով լուսաւորին 'ի խաւարի, այսինքն է զբնաւոր և զանշուշտ ճշմարտութիւն նոցին իսկ եզերաց, յոր բնաւորապէս բայց անկատար միտէ կարողութիւնն: Սակայն և այնպէս, առ 'ի կարող լինելոյ մտաց կազմակերպել անտի հաստատուն ինչ դատումն, և շրջշրջիկ դիւրութեամբ վարել զայն 'ի պէտս, հարկ է նմա ունակութիւն ինչ երկնեալ 'ի փորձոյ. և այն է ունակութիւն մտաց, զորմէ խօսիմք: Ապա ճշմարտութիւն գիտութեան ճանաչի պատճառաբանութեամբ. բայց ճշմարտութիւն սկզբանց ոչ ճանաչի պատճառաբանութեամբ, այլ միայն փորձառական մակածութեամբ յանհատական իրաց, զոր նկատեն միտք յինքեան: Մինչ զի սկիզբն առնէ մարդ ուսանել զնոսա, յորժամ սկիզբն առնէ կեալ. և յանկ հանէ զուսումն նոցա, յորժամ կերպարանէ զունակութիւն սկզբանց: Եւ ոչ կարէ մոռանալ զնոսա, մինչեւ կազմ են միտք: Այլ 'ի խանգարիլ նորա հիւանդութեամբ կամ մոլեգնութեամբ՝ մարթի 'ի վերայ հասանել թիւր ըմբռնումն, մինչեւ մոռանալ զիւր իսկ անուն, զոր օրինակ պա-

տաճեաց Ոբելիսոսի առն քաջիմաստի, որպէս պատմեն: Ամենայն ոք որ ունի միտս, ամօթ համարի հակառակիլ սկզբանս թէ բոլորն է մեծ քան զմասն. զի չատ է ունել աչս 'ի ճանաչել թէ բովանդակ մարմինն մեծ է քան զգլուխ: Բայց որ ունի զունակութիւն մտաց, կերպարանեալ ունի զլիուլի իմացումն նախադասութեանս զգալի մակածութեան բազմաց անհատից այլ և այլ սեռի. որպէս 'ի թուաբանական բոլորէ, յերկրաչափական բոլորէ, 'ի համեմատական բոլորէ, 'ի սեռական բոլորէ, 'ի բարոյական բոլորէ, 'ի քաղաքական բոլորէ, և 'ի բաղադրեալ բոլորէ որ մեծ է քան զբաղադրիչն: Եւ այդ ունակութիւն բազումս օգտէ մտաց 'ի մակաբերել զգիտնական հետեւութիւնս, մերձեցուցեալ զայն սկիզբն յայլ և այլ ենթակայս. զոր օրինակ, նուազ բոլորաձայն է ներդաշնակագոյն քան զատեղաձայն, զի բոլորն է մեծ քան զմասն: Թէ արժան է կորուսանել զմի ակն' 'ի պահել զկեանս, զի բոլորն է մեծ քան զմասն: Թէ պարտ է քաղաքացւոյն դնել զկեանս վասն իշխանին, զի իշխանն երևեցուցանէ զբովանդակ հասարակապետութիւնն, և բոլորն է աւելի քան զմասն: Թէ օրինական արդարութիւնն է առաքինութիւն մեծ քան զարիութիւն. զի նա բովանդակէ զամենայն առաքինութիւնս, և սա զմի միայն. և բոլորն է մեծ քան զմասն:

Բայց առաւել ևս պիտանի է ունակութիւն սկզբանց 'ի վիճաբանութիւնս. զի թէպէտ զսկզբունս ոչ է հնար ապացուցանել, բայց և այնպէս հնար է պաշտպանել: Զի՞ք ճշմարտութիւն յաշխարհի, որում չեղև դիմամարտութիւն, կամ տգիտութեամբ և կամ չարութեամբ: Զի՞նչ սկիզբն կայցէ ընդհանրագոյն և յայտնագոյն քան զայն, թէ յերկուց հակասականաց հարկ է միումն լինել ճշմարիտ, և միւսումն սուտ. անհնար գոլով թէ իմն համանգամայն իցէ և չիցէ: Այս այն սկիզբն է, որ յանկ հանէ զամենայն վիճաբանութիւնս, և խեղդ 'ի պարանոց արկանէ ըմբռստացելոց: Սակայն և այնպէս ճշմարտութիւնս պայծառ քան զլոյս միջօրէի' եգիտ երկուս չքինկանս, որոց թուեցաւ մթին քան զմէջ գիշերի: Զի Անաքսագորայ ոչ բաւեալ լուծանել զհաւաքաբանութիւն ինչ խաբէական, և Պրոտագորայ 'ի պարանել զայլս խորամք խաբէպատիր ձեռնարկութեամբք, հակառակ կացին ճշմարտութեանս, իբր Տիտանեանք ընդդէմ արեւու [233]: Պնդէին թէ արեգակն է լուսաւոր, և ոչ լուսաւոր. հուրն է ջերմ, և ոչ ջերմ. գետն միանգամայն հոսէ և չհոսէ: Բացասէին զամենայն, զոր դու ստորասես. ստորասէին զամենայն, զոր դու բացասես: Այժմ և ոչն առ նոսա էր նոյն: Եւ զիա՞րդ հնար էր ըմբերանել զնոսա, որք արհամարհէին զամենայն զէնս, որովք հնար էր յաղթել նոցա: Եթէ ուռկան թակարդելոց



զյամառս յիմաստասիրական վիճմունս է միայն հարկադրել զնոսա հակառակաբանել անձանց, ո՞ր Արիստէոս կարող էր կապել զայն Պրոտէոս [234], որք 'ի ստորասել և 'ի բացասել ամենայնի, երկոքումբ ևեթ բառիւք այո և ոչ, լուծանէին ըստ ձեռնածուաց զամենայն զկնճիռս: Ապա երկաքանչիւրոցն աղաւաղեալ զունակութիւն սկզբանցս ունէին միտս այնպէս անբոյժս 'ի փառաց, մինչև Արիստոտէլ խակ, որ 'ի զարմէ էր Ասկղեպիոսի բժշկապետի, որպէս հաստատեն վիպագիրք վարուց նորա, զուր կորոյս 'ի պատճառս նոցա զժամանակ և զդեղս, որ 'ի բնազանցական գիրս: Սակայն նա ինքն խոստովան լինի, թէ առաւել անբուժելի գտաւ Պրոտագորաս քան զԱնաքսագորաս, զի սորա ախտաւորութիւն էր 'ի միտս, այլ նորայն էր 'ի կամս: Անաքսագորաս սխալէր 'ի տըգիտութենէ, Պրոտագորաս յամառիւր 'ի չարութենէ: Վասն այսորիկ որ մեղանչէ տգիտութեամբ, յերկարեալ դիմախօսել անձին, հնար է թէ զգաստասցի: Բայց հետամուտ լինել բժշկութեան, այնմ որ ոչն կամի բժշկիլ, է զրաջան ընդ քիրտըն մաշել, իբրև Հերակլէս ընդդէմ խեցգետնի: Ի վերայ բերէ Արիստոտէլ, թէ ընդդէմ ժխտողի առաջնոց սկզբանց, թէ ժխտէ անգիտութեամբ, պարտ է վիճել տրամաբանութեամբ. թէ ժխտէ յիմարութեամբ, պարտ է դեղ մատուցանել զեղբորոս. ապա եթէ ժխտէ 'ի չարութենէ, պարտ է վիճել ընդ այնպիսւոյն գաւազանաւ: Այսու մարթիս իմանալ զմոլեկան ծայրս այսր առաքինութեան: Զի են միաք, յորս ոչինչ ստուգութիւն է սկզբանց. և այս կոչի տգիտութիւն բացասութեան: Եւ են յորս տարրացեալ են սկզբունք ամենեւին սուտք, համարեալք որպէս ճշմարիտք, և այս է տգիտութիւն թիւր տրամադրութեան:

## ԳԼՈՒԽ Դ.

### Յաղագս գիտութեան:

Ահաւասիկ քեզ գեղեցիկն 'ի զգեստս, զոր զիւրև արկանիցէ իշխան [235]: Ծիրանագոյն տառատոնք զօրագլխաց, ճոխաճեմ արկանելիք պատրկաց, պարգևական լօդիկք յաղթականաց, փողփողեալ օթոցք թագաւորաց, ականակուռ քղամիդք ինքնակալաց, են ցնցոտի վերարկուք առ արկանելեօք գիտութեանց: Նոքա զգեցուցանեն զմարմին, և ընդ մարմնոյ փտին. սոքա զգեցուցանեն զոգի, և ընդ ոգւոյ յետ մահու անմահանան: Լիկիանոս կայսր կոչէր զգիտութիւնս թոյնս և ժանտախտս իշխանաց, և չէն ինչ զարմանք, զի զիւր անուն

անգամ չգիտէր ստորագրել 'ի հրովարտակս: Աղարտէր զգրագիտութիւն, զի մի լուիցէ զիւրոյ անգրագիտութեան վատանունութիւն, սովորեալ առ անգիտութիւն, իբր Միհրդատ առ թունարբութիւն, արհամարհէր զգիտութիւն որ դեղթափն է տգիտութեան: Աւասիկ եւ իմաստուն գտաւ Վեսպասիանոս, որ բնաւորեալ 'ի գիտութիւնս, բայց մնեալ 'ի զինաշարժութիւնս, թէպէտ և չեղև գիտուն, սակայն սիրէր զգիտունս. և հնարեցաւ ստանալ զգիտութիւն առանց ուսանելոյ: Որպէս փարթամ է որ թէպէտ և չունիցի ոսկի 'ի ծոցի, ունի հանգս ոսկւոյ յիւրում վիճակի, նոյնպէս գրագէտ է, որ ունի առ իւր այս գրագէտս: Երանի էր Աղեքսանդրի եթէ գիտէր վարել 'ի պէտս զիւրն վիճակ: Ունէր նա 'ի տան հանգս գիտութեանց, և շրջէր 'ի խնդիր նորա այլուր: Կոչէր զբանաստեղծութիւնս Հոմերոսի իւր պաշար, և միշտ ունէր զայն 'ի տուէ 'ի ծոցի, և 'ի գիշերի 'ի սնարից: Լաւ եւս պաշար լինէին նմա մատեանք իւրոյ ուսուցչին Արիստոտէլի. այլ զի քան զիմաստասիրութիւն՝ ցանկալի էին նմա քերթողականին հրահանգք՝ վասն որոյ և կայր մնայր կարօտեալ: Ապա ամենայնիւ մեծ եղև բարեբաստութիւն թագաւորաց, որ ինքեանք իմաստուն գոլով ընդ իմաստունս կենցաղեցան. իբր Պերիկլէս 'ի Յոնաստան, Պտղոմէոս յԵգիպտոս, և Օգոստոս 'ի Հռովմ: Սոքա ուսուցեալ զոր գիտէին, և ուսեալ զոր ոչն գիտէին, առաւելուին բազում տոկոսեօք զիւրեանց գիտութիւն. որովհետև չէք յաշխարհի տուրևառ առաւել շահեկան և բերկրական, որպէս տալ զիւրն առանց կորուսանելոյ, և ստանալ զօտարինն առանց գնոյ:

Ապա երկու ինչ նկատէ Արիստոտէլ զունակութեամբ գիտութեան, մի՝ թէ ո՞ր իցէ իւր առարկայ. երկրորդ թէ ո՞ր իցէ իւր պատճառ: Բայց քանզի առարկայք գիտութեանց այնպէս շփոթ են ընդ միմեանս, մինչև շփոթել և զունակութիւնս, կարծեմ չլինել քեզ տաղտկալի լսել սուղ ինչ և օրոշ բաժանարարութիւն, հետազօտեալ զայն 'ի բարձրագոյն սկզբնէ առարկայից նոցա: Ապաքէն լուար թէ 'ի գիտութեանց ոմանք են գործնականք, և ոմանք հայեցողականք: Արդ 'ի գործնականաց ոմանք կանոնաւորեն զներքին ներգործութիւնս վերաբերեալս առ բաղձանս, և են գիտութիւնք բարոյականք: Այլք կանոնաւորեն զներքին ներգործութիւնս մտաց կարգեալս առ խօսս, և սոքա են զրուցականք. այսինքն է տրամաբանութիւն, որ գտանէ փաստս զվիճաբանելի իրօք, և հրետորութիւն, որ գտանէ փաստս զհաւանելի իրօք: Բայց սա 'ի ներքս փակէ երկս այլ մակացութիւնս, այսինքն զՊատմութիւն, որ պատմէ զճշմարիտն. զԲանաստեղծութիւն. որ 'ի պատմել ընդ իւրում նմանող է ճշմարտի, և զՔերականութիւն որ ուսուցանէ ուղղախօսել: Այսոքիկ են գործնականք: Իսկ 'ի հայեցողականաց, որք ոչ հային յայլ վախճան, բայց 'ի ճանաչումն ճշմարտութեան, ոմանք նկատեն զնիւթական իրս ներքոյ անկեալս փոփոխութեան. և այսոքիկ են Բնականք, որք և 'ի ներքս փակեն զԲժշկութիւն հայեցողական: Ոմանք նկատեն զքանակութիւն վերացեալ 'ի նիւթոյ. և սոքին են Մաթեմաթիկականք, այսինքն Երկրաչափութիւն շուրջ զշարունակ քանակութեամբ, և Թուաբանութիւն շուրջ զտարորոշ քանակութեամբ: Են և այլք խառն 'ի բնականէ և 'ի մաթեմաթիկականէ, այսինքն Երկրագրութիւն որ չափէ զերկիր, Աստղաբաշխութիւն, որ չափէ զերկինս, և Երաժշտութիւն, որ չափէ զձայնս: Է միւս եւս գերագոյն քան զամենայն, որ հայի յիրս բարձունս և յաստուածայինս, վերացեալս բոլորովին 'ի նիւթոյ և 'ի քանակութենէ, բնազանցութիւն կամ Համաբնաբանութիւն կոչեցեալ. որ եթէ խօսի բնական ճանաչմամբ, կոչի բնազանցութիւն կամ Համաբնաբանութիւն բնական. իսկ եթէ սկզբամբք յայտնեցելովք յԱստուծոյ, այն ինքն է Սրբազան աստուածաբանութիւն:



Արդ զորօրինակ ամենայն ակունք են պատուականագոյնք քան զհասարակ քարինս, բայց ակն քան զակն է պատուական, զի ջուր նորա է յստակագոյն և սակաւագիւտ, նոյնպէս ամենայն գիտութիւնք են ազնուագոյնք քան զարուեստս, բայց գիտութիւն քան զգիտութիւն այնչափ է ազնուագոյն որչափ առարկայ նորա է ստուգագոյն և յստակագոյն, այսինքն առաւել վերացեալ 'ի զգալի նիւթոյ: Յետինն գիտութեանց է ազնուագոյն քան զազնուագոյնն յարուեստս. զի արուեստն յածի զարտաքին, զնիւթական, և զզգալի գործուածով. իսկ գիտութիւնք են գործողութիւնք մտացի հոգեղէնք և ներքինք: Վասն այսորիկ Քերթողութիւնն որ ստորինն է գիտութեանց՝ ազնուագոյն է քան զՊատկերահանութիւն, որ գերագոյնն է արուեստից. զի նա է զրուցական, և սա գործողական. նա կանոնաւորէ զմարդկային ինչ զխօսս, և սա է արտաքին ինչ գործուած: Ազնուագոյն են հայեցողական գիտութիւնք քան զգործնականս. զի զոր օրինակ այն է ազնուականագոյն որ առաւել զերծ է յամենայն ծառայութենէ, նոյնպէս այն գիտութիւն է ազնուագոյն, որոյ նուազ է առ այլս արբանեկութիւն. ունելով իւր վախճան միայն զճանաչումն ճշմարտութեան: Այլ ինչ է գիտութիւն ազատական, և այլ ինչ գիտութիւն ազատ: Ազատականն է որ արժանի է անձին ազատի և ազնուականի, ոչ ցածազգւոյ և ծառայականի, որպիսի են ամենայն արուեստք ազատականք: Բայց գիտութիւն ազատ՝ է այն որ միայն վասն իւր է ըղձալի, որպէս հայեցողականք: Մինչ զի ամենայն գիտութիւնք ազատք՝ են ազատականք. բայց ոչ ամենայն ազատականք են

ազատք: Ուստի տրամաբանութիւնն, որ ծառայէ հայեցողականաց առ անվթար խօսել՝ է ազատական, այլ ոչ ազատ: Բայց 'ի մէջ հայեցողականաց՝ ազնուագոյնք են մաթէմաթիգականք քան զբնականս. զի բնականք հային յիրս նիւթականս իբր 'ի նիւթ զգալի և փոփոխելի, բայց մաթէմաթիգականք հային 'ի նիւթ իմանալի, այսինքն 'ի քանակ վերացեալ 'ի նիւթոյ: Օրինակ իմն, հայեաց 'ի պարունակն իբրև 'ի մակերևոյթ իմն զուգահեռական 'ի կեդրոնէ, առանց զմտաւ ածելոյ 'ի քարէ իցէ այն, 'ի պղնձո՞յ թէ 'ի փայտէ: Յայսմանէ և բնազանցականք այնչափ են ազնուագոյնք և վսեմագոյնք քան զմաթէմաթիգականս, որչափ առարկայն է զատագոյն և վսեմագոյն. հայեցեալ յէակն ըստ որում էակ. այսինքն յէութիւն իրաց վերացեալ յինչ և իցէ զգալի և իմանալի նիւթոյ: Յիրաւի ճարտարապետք կոչեցան հանճարաւորք, զի մեծ հանճար ցուցին 'ի գործս իւրեանց, ևս առաւել 'ի հինգ կարգս սեանց, որք են տարբերք արուեստին, համեմատեալք հինգ այլ և այլ բարձրութեանց մարդկային մարմնոյ: Կարգն Գեղջուկ սակաւս ունելով տրամագիծս, ըստ ստուարութեան մարմնոյ, նիազ է նորա բարձրութիւն: Կարգն Բաղադրեալ աւելի ունելով տրամագիծս, այնչափ ունի բարձրութիւն, որչափ նիազ է նորա մարմինն: Եւ վասն այսորիկ նա երևեցուցանէ զանձինս ցածունս և ծառայականս. և սա երևեցուցանէ զուսումնականս. նշանակեալ թէ գիտութեանց որչափ նիազ է նիւթականութիւն, այնչափ առաւելու ազնուութիւն և վսեմութիւն: Ապա ճշմարիտ գիտութիւնն զորմէ աստանօր են բանք, ոչ է զեղականաց այսինքն զանհատից, որք ներքոյ անկանին աչաց կամ այլոց զգայութեանց. զի ճանաչումն զգայութեան այնչափ միայն տևէ, որչափ առարկայն առաջի կայ, և զգալն չէ գիտել: Անասունք զգան զիրս, բայց ոչ գիտեն զնոսա. զի գիտելն է ճանաչել զիրս 'ի պատճառաց իւրեանց, և այս սեպհական է մտաց. և վասն այսորիկ իբր հեռագոյնք 'ի մարմնաւոր աչաց լաւ ևս ճանաչին աչօք մտաց: Չիք ճշմարիտ գիտութիւն և զներընդունական իրաց և զփոփոխականաց. զի եթէ առարկայն է փոփոխելի, փոփոխելի լինի և գիտութիւնն. և որ այսօր է ճշմարիտ, վաղիւ լինի սուտ: Ապա պարտ է առարկայի գիտութեան լինել անփոփոխ և յաւերժական, վասն որոյ և իմանալի և ընդհանուր. զի ընդհանուր իրք են հաստատունք, և հարկաւորք. իսկ մասնաւորք են առօրեայք և վաղանցիկք: Այո, և զփոփոխելի առարկայից հնար է թէ լինիցի կատարեալ գիտութիւն. բայց միայն ըստ որում ներքոյ են ընդհանուր և յաւերժական պատճառաց: Ի վաղաթառամ ծաղկանց իսկ, որ յայգուէ ծաղկին և առ օրին թօշնին, էութիւնս մշտնջենաւորէ հանճարահնար ցաքահանն. որոյ որոշեալ ըզթանձրագանդաղն և զապականացուն յազնուական մասանց բնութեան, հանէ անտի անուշահոտ ցքիս, և որակս զօրաւորս և մնայունս. մինչև 'ի ցրտասարսուռ ձմերայնի զգալ քեզ զօգի ծաղկի, և չտեսանել զմարմինն: Ըստ սմին օրինակի բնախօս զննիչն՝ յիմաստասիրել իւրում 'ի վերայ արտադրութեան և փտութեան բնական իրաց, մեկուսեալ զներընդունականութիւնն և զեղականութիւն, հանէ անտի էական ինչ վսեմութիւն ընդհանուր և մշտնջենաւոր իմաստից, յորոց վերայ հիմնէ զիւր գիտնական և անվրէպ ապացուցութիւնս: Այսչափ ինչ 'ի վերայ առարկայի, արդ խօսեսցուք զպատճառէ:



Պատճառ ճշմարիտ և կատարեալ գիտութեան են ընդհանուր սկզբունք, յորոց տրամախոհութեամբ մտաց ապացուցաբար յառաջ բերին գործք ճշգրիտ և անմիջական պատճառաց: Զի ոչ այլ ինչ է ապացուցութիւն, բայց տրամախոհութիւն, որ ուսուցանէ գիտել կատարելապէս զիմն: Ապա ոչ է կատարեալ գիտութիւն ճանաչել զառարկայ ինչ լոկով ըմբռնողութեամբ, կամ լոկով դատմամբ. որպէս ճանաչին առաջին սկզբունք, զորոց ասացաւ. այլ հարկ է թէ իցէ երրորդ իմն գործողութիւն մտաց, իջուցանելով հաւաքաբանօրէն զմի ինչ յայլմէ: Ուստի տեսանել զիր ինչ ոչ է գիտել զայն: Չէ կատարեալ գիտութիւն ճանաչել զճշմարտութիւն ինչ մակածութեամբ. որպէս թէ հուրն այրէ, զի այս և այդ և այն հուր այրէ զայրելիս: Վասն զի մակածութիւնն է հիմնեալ 'ի փորձ զգայութեանց. և հպագոյնն զգայութեանց, հեռագոյն է 'ի գիտութենէ: Եւ վասն այսորիկ լաւ ևս էր Պլինիոսի հաւատալ այնմ, քան 'ի փորձ մատչիլ[256]: Ոչ է ճշմարիտ գիտութիւն ճանաչել զառարկայս հաւանական պատճառօք, որպէս տրամաբանութիւնն և հռետորութիւնն: Վասն զի որպէս անբաւ հասարակ քարինք չառնեն անդամանդ մի, սոյնպէս անբաւ կարծիքական ձեռնարկութիւնք չառնեն ինչ ձեռնարկութիւն ապացուցական: Եւս առաւել չէ ճշմարիտ գիտութիւն ճանաչել զեզրակացութիւնս խաբէական ձեռնարկութեամբք. թէպէտ և երևին անլուծանելիք. որպէս որք իմաստակացն էին՝ ըղբենի խաղալկաց, որք զանուն առին զիմաստութեան 'ի ցոյց ագիտութեան: Դիոգինէս՝ այնմ անլուծանելի սուտ ձեռնարկութեան, որով եզրակացուցանէր Զենոն, թէ անհնար է իմիք շարժիլ, ոչ այլ ինչ արար պատասխանի, բայց յոտն յառնել յաթոռոյ և շրջիլ: Եւ այնպէս ոչ կարացեալ լուծանել զձեռնարկութիւնն մտօք, եցոյց ոտիւք: Չէ ճշմարիտ գիտութիւն և յանդիմանել զստութիւն հակառակորդին, 'ի նեղ լծեալ զյամառութիւն նորա, 'ի հակառել. զի իմացուցանել զայլոց ագիտութիւն, չէ ճշմարիտ ցոյց ճշմարտութեան: Ուստի 'ի խնդիր անհնոյն, դիւրագոյն մարթ է քեզ զիմամարտիլ կարծեաց

օտարի, քան նշանակել զզուգահաւասար պատճառ քոյոյդ: Եւ եւս, չէ կատարեալ գիտութիւն ծանուցանել զպատճառն 'ի գործոյ: Թէ ասես դու, Աստեղք որք ոչ շողշողեն՝ մօտագոյն են մեզ, մոլորակք ոչ շողշողեն, ապա են մեզ մօտագոյն: Սա է ապացուցութիւն սոյդ, զի գործք ծանօթագոյն են մեզ քան զպատճառս, և չշողշողելն ոչ է պատճառ, այլ գործ մօտաւորութեան: Բայց քանզի պատճառք բնութեամբ իւրեանց յառաջագոյն են քան զգործս, շրջումն իմաստասիրութիւն է ապացուցանել զպատճառս 'ի գործոց: Սակայն թէ ասես. Լուսաւորք մօտագոյնք մեզ ոչ շողշողեն. մոլորակք են մեզ մօտագոյնք. ապա ոչ շողշողեն: Սա է բուն և կանոնաւորեալ ապացուցութիւն, զի ցուցանէ զգործն 'ի պատճառէն: Ձհուսկն ասացից. չէ կատարեալ գիտութիւն, եթէ պատճառն չէ անընդմիջական: Այո, հնար է թէ գործ ինչ կախեալ կայցէ զբազում պատճառաց. որոց բնաւ են ճշմարիտք և հարկաւորք, բայց կարգեալք ընդ միմեանս, իբրև զանուրս շղթային Հոմերոսի: Եւ են բնաւք իբրև զապացուցութիւնս Եւկղիդեայ, զի կախեալ կայ մին զմիւսմէ: Զարմանայ մարդ ընդ նոր իրս, զի խորհի 'ի մտի զպատճառն, զոր ոչ գիտէ. և խորհի մարդ 'ի մտի, զի է կենդանի բանական: Մինչ զի լինելն բանական է պատճառ անընդմիջական՝ լինելոյ տրամախոհական, և լինելն տրամախոհական է պատճառ անընդմիջական՝ լինելոյ զարմացական: Արդ եթէ ցուցանես դու թէ մարդն է զարմացական, զի է տրամախոհական, գիտութիւնն չէ կատարեալ. զի թէպէտ և պատճառն է ճշմարիտ և անընդմիջական, բայց և զայդ պիտի ցուցանել վերագոյն իմն պատճառաւ: Եւ նոյնպէս, եթէ ցուցանես դու թէ մարդն է զարմացական, զի է բանական, գիտութիւնն չէ կատարեալ. զի պատճառն ընդմիջական պէտս ունի անընդմիջական պատճառի: Ապա եթէ միակցես դու զերկաքանչիւր պատճառս աստիճանաւ, գիտութիւնն կատարեալ է 'ի քեզ, բայց անկատար յուսուցանելդ զայն. զի միտք համբակին գահավիժեալ ընդ սանդուղս պատճառաց, մինչ առաւել շուարեալ, քան հաւանեալ: Վասն այսորիկ ասաց ոմն թէ այս եղանակ ձեռնարկութեան աստիճանեալ, որ կոչի համաբարդութիւն, ունի ինչ յիմաստակականէն և 'ի խաբէականէն, ոչ զի է այնպիսի. այլ զի նման է նմա, և է երկեղուտ. զի իմաստակաց է սովորութիւն լարել որոգայթս այսպիսի համաբարդութեամբք:

Ապա յայս կնքեմք զբանս թէ կատարեալ գիտութիւնն է անվրէպ և յայտնի ճանաչումն հայեցողական ինչ գործոյ՝ ապացուցեալ հաւաքաբանութեամբ յընդհանուր և 'ի հարկաւոր նախադասութեանց, յորս բովանդակի անընդմիջական պատճառն: Եւ առ չխոտորելոյ յօրինակաց Արիստոտէլի,



այսպիսի ապացուցութիւն լինի եթէ ցուցցես դու թէ 'ի մէջ շնչաւորաց մարդն է ընդունակ ուսման. զի մարդն է ընդունակ բանի: Կամ թէ լուսինն խաւարի, զի երկիր ընդ մէջ անկանի արեգական և լուսնի: Վասն զի սոքին են ճշմարիտ և հաւաստական և անընդմիջական պատճառք այսց գործոց: Մնայ քեզ գիտել թէ 'ի վերայ իւրաքանչիւր առարկայի չորս խնդիրս մարթ է ապացուցանել: Առաջին, թէ իցէ՞. զոր օրինակ, թէ յաշխարհի կայցէ՞ լուսին թէ ոչ: Երկրորդ, թէ զի՞նչ իցէ. զոր օրինակ, թէ զինչ իցէ լուսինն, արդեօք լուսաւո՞ր ինչ երկնային, թէ գունտ ինչ երկնային: Երրորդ, թէ որպիսի՞ ինչ իցէ. զոր օրինակ, թէ լուսինն յիւրմէ պայծառ իցէ թէ մթին: Չորրորդ թէ զիա՞րդ այդպիսի իցէ. զոր օրինակ թէ ե՞ր աղագաւ լուսինն խաւարիցի: Արդ 'ի չորից աստի խնդրոց զերիս առաջինսն մարթ է ապացուցանել 'ի գործոց: Թէպէտ երկրորդն է առաւել սահման, քան ապացուցութիւն: Բայց 'ի չորրորդն միշտ ապացուցանի գործն յիւրմէ պատճառէ. և վասն այսորիկ սա է ճշմարիտ ապացուցութիւն, յորժամ պատճառս ունի զասացեալ պարագայս: Զի ոչ ամենայն պատճառք են հաւաստականք:

Արդ յայսմ ամենայնէ մարթ է քեզ դիւրաւ ճանաչել թէ ո՞րք իցեն մոլեկան ծայրք առաքինութեանս, որպէս ասացաւ զսկզբանց: Այսինքն է անգիտութիւն. և անգիտութիւն թիւր տրամադրութեան, որում մարթ է ծնանիլ կամ 'ի սուտ ուսմանց, կամ 'ի տկարութենէ, և կամ 'ի չարութենէ: Սոսկ անգիտութիւն ճշմարտութեամբ բժշկի: Երկրորդին դժուարագոյն է դարման. զի թէ յառաջ գայ 'ի սուտ ուսմանց, կրկին աշխատութեան պէտք են 'ի խլել զսուտն, և 'ի պատուաստել զճշմարիտն: Եթէ 'ի տկարութենէ, եղբօրսաւ բժշկի: Իսկ եթէ 'ի չարութենէ, որպէս իմաստականն որ ճանաչէ զճշմարիտն, և յարի 'ի սուտն 'ի պատրել զայլս, այս ոչ բժշկի երբէք, բայց եթէ մահաւ:

## ԳԼՈՒԽ Ե.

### *Յաղագս իմաստութեան:*

Այս այն մեծ առաքինութիւն է որ յԱրիստոտէլէ պատկեցաւ, և բարձրաբարբառ քարոզեցաւ գերապանծ դշխոյ առաքինութեանց: Յիւրաքանչիւրում սեռի ճշմարիտ առաքինութեանց՝ մին միայն է պսակաւոր. զի բովանդակեալ յինքեան զկատարելութիւնս սորինց, ինքն է վերջին կատարելութիւն կարողութեան: Յառաքինութիւնս կանոնաւորիչս

կրից, առաքինութիւնն դիւցազնեայ է դշխոյ. զի որ ստացեալ ունի զնա, այնպէս ինքնիշխան տէր է իւրոց կրից, մինչև ըստ առասպելականն դիւցազանց երևել նմա ստորին քան զաստուած, և վերագոյն քան զմարդ։ Յառաքինութիւնս կանոնաւորիչս կամաց արդարութիւն է դշխոյ. զի անհնար է չկամել զամենայն բարոյական առաքինութիւնս այնմ որ կամի զարդարն։ Ապա յառաքինութիւնս կանոնաւորիչս մտաց, մի միայն է դշխոյ. որ գերագոյն բովանդակէ զկատարելութիւնս այլոց ամենայնի, և սա է իմաստութիւն։ Նա, վասն զի 'ի տիեզերական դաստակարգի ստորինն վերին պարունակի՝ ազնուագոյն է քան զվերինն ստորին պարունակի, ուստի գերագոյնն վերագոյն պարունակի ամենայնիւ երիցագոյն է քան զամենայն պարունակս, հարկաւ հետևի թէ 'ի լինել կամաց ազնուագոյն քան զկիրս, և մտաց քան զկամս, և 'ի միտս անդ գերագահ գոլով իմաստութեան, նա միայն ամենայն մարդկային առաքինութեանց է դշխոյ։ Զևս ասացից, զի թէպէտ իմաստութիւնն պատահումն ինչ է հոգւոյ, ստացեալ 'ի մարդոյ, բայց և այնպէս յոյժ է ազնուական քան զնոյն ինքն հոգի աստուածաստեղծ։ Լոյսն պատահումն ինչ է մակերևութ մարմնեղէն գոյացութեանց. բայց և այնպէս այս պատահումն ազնուագոյն է քան զխմահար մարմին։ Գոյացութիւն է հոգի, պատահումն է գիտութիւնն, բայց և այնպէս գիտութիւնն ազնուագոյն է քան զհոգի. զի հոգի առանց գիտութեան է որպէս մարմին անլոյս։ Իսկ արդ եթէ գիտութիւն առ իմաստութեամբ ջահ իմն է առ արեգակամբ, քանի՜ ազնուական և արդոյ իցէ իմաստութիւն՝ թէպէտ և որակ է ստացական և պատահական, քան զհոգի որոյ և իցէ անիմաստ արքայի։

Բայց ո՞ր իցէ այս դշխոյ առաքինութեան իմաստնագոյն քան զգիտութիւն, և կատարելագոյն քան զամենայն կատարելութիւն։ Թուեցաւ ոմանց թէ լինի միայն իմաստուն, որ ոչինչ իմիք անգէտ գոլով՝ կատարելապէս ստացեալ ունի զամենայն գիտութիւնս և զամենայն արուեստս զազատականս և զոչ ազատականս. մինչև մտաց հաւասարիլ բովանդակ պարունակի իմանալեաց. զի միապէս հնարաւոր թուի միոյ կամաց զամենայն կամիլ, և միոյ մտաց զամենայն իմանալ։ Հռչակ հարկանէ նախնին Յունաստան զիւրն Հիպիան իմաստակ, որ պանծայր 'ի խաղսն ոլիմպիական ոչ միայն գիտել զգիտութիւնս ամենայն, և զամենայն արուեստս ազատականս, այլ և զարուեստս մեքենականս և ծառայականս. իբր զի իւր ձեռակերտ էր ամենայն զոր արկեալ ունէր զանձամբ. արտախուրակն, թիկնոցն, ասուի ամղանն, մաշկեղէն գօտին, արծաթի ճարմանդք, ոսկի մատանին, երկաթի կարոյն, մինչև մաշիկն իսկ սպարտացի։ Այո, արար սա զկրպակն համալսարան, կամ զհամալսարանն կրպակ. բայց դիւրագոյն կարողացաւ



անչքացուցանել զիմաստութիւն անարգ արուեստիւք, քան չքեղ ընծայել զանարգ արուեստս իմաստութբ։ Յայտ է թէ ոչ ոք յեօթանց իմաստասիրացն Յունաց մեծ համարեցաւ գիտել զարուեստ կօշկակարի։ Այլք կարծեցին թէ ճշմարիտ իմաստութիւն իցէ գիտութիւնն քաղաքական. որ ունի իւր առարկայ զմարդ, որում ծառայէ աշխարհ ամենայն. և վախճան՝ զկառավարութիւն քաղաքական, զոր փիլիսոփայք կոչեցին արուեստ արուեստից, և գիտութիւն գիտութեանց։ Բայց սոքա կամ կարի իմն մարդահաճեն, կամ կարի իմն անգիտանան. յայն ինչ ոչ հային, թէ յիմանալեաց աշխարհի կան առարկայք յոյժ ազնուագոյնք և բարձրագոյնք՝ այսինքն աննիւթական գոյացութիւնք, միտք անջատեալք և ներգործութիւնք մաքուրք. առ որովք մարդս է արձան ինչ Պրոմեթէոսի, ոգի ընդ տիղմ շաղախեալ[257]։ Թող զայն, զի եթէ գիտութիւնն հայեցողական ազնուագոյն է քան զգործնական, վասն լինելոյ գիտութեանց այնչափ ազնուագոյն որչափ են ազատագոյն, յայտ է թէ 'ի լինելն իմաստութեան գործնական, անարգագոյն լինէր քան զգիտութիւնս հայեցողականս, և ոչ լինէր դշխոյ գիտութեանց, եթէ էր աղախին արքունեաց, ոչ այլ ինչ գոլով արքունի իշխանութիւնն բայց եթէ արքունի ինչ ծառայութիւն։ Ապա երկու են առաւելութիւնք իմաստութեան քան զգիտութեան, այսինքն մեծագոյն սրատեսութիւն մտաց, և մեծագոյն բարձրութիւն առարկային, զորոց խօսեսցուք ուրոյն։

## ԳԼՈՒԽ Զ.

*Յաղագս թէ զինչ իցէ սրատեսութիւն մտաց։*

Որպէս կարողութիւնն տեսողական, նոյնպէս կարողութիւնն իմացական կատարելագոյն է և սրագոյն 'ի միում քան յայլում։ Տիբերիոս 'ի մթին գիշերի տեսանէր յստակ. և ո՞վ կարող էր լինել անհոգ 'ի նմանէ, որ 'ի տուէ էր յոլով, և 'ի գիշերի չշլէկն։ Ստրաբոն յափրիկեան պատերազմի 'ի դարափնէ Սիկիլիոյ նշմարէր զելումուտ նաւահանգստին Կարքեդոնի։ Հնար էր Գալիլէոսի յայնց աչաց ուսանիլ զաստղագիտական[258]։ Այլ սքանչելի ևս էր սրատեսութիւն Սարգիւացւոց, որք տեսողական շառաւիղօք ընդմտեալ 'ի սիրտ երկրի՝ տեսանէին զգիւղունս, և զթաղեալ գանձ. մինչև 'ի զննութենէ այնց բբաց ոչ հանգիստ մեռելոց, և ոչ ապահովութիւն կենդանեաց էր ծածկեալ։ Այսպիսի են ամենեին միտք մարդկան զառարկայիւք արուեստից և գիտութեանց. ոմանք

են չղջիկն, և ոմանք յօվազ. Նոքա ոչ տեսանեն զերևելին, սոքա տեսանեն և զաներևոյթն: Ապա իմաստունք կոչեցան յարուեստի Ապելլէս և Լիւսիպպոս. զի նա 'ի նկարչութեան, և սա 'ի դրօշուածս այնպէս 'ի խոր թափանցեցին ուժգնութեամբ իւրեանց հանճարոյ, մինչ զի Ճշմարիտն Աղեքսանդր՝ նկարեալ կամ դրօշեալ յայլոց՝ թուէր կեղծ, և կեղծեալն 'ի սոցանէ թուէր Ճշմարիտ [259]: Ըստ սմին օրինակի 'ի գիտութիւնս նա կոչի իմաստուն որ առաւել սրբութեամբ ընդմըտեալ ընդ ամենայն ծանօթութիւնս, և ընդ գաղտնածածուկ պարագայսն որ յառարկայս, և լծորդեալ զնոսա ընդ միմեանս, արագ նկատէ զկցորդութիւնն յայտնիս և յաւերժականս, զպատճառն ոչ մակերևակս կամ հասարակս, այլ զանընդմիջականս, զխորինս և զնորս. որոց առաւել եւս ստուգութիւն հաւատալի լինի, առաւել եւս հաստատութիւն պահէ 'ի մտի, և առաւել եւս յայտնութեամբ ուսուցանէ, զոր ոչ անենն այլք, որք առ իմաստնով երևին տղայք: Ապա օրինակաւ իմն, բայց իմաստութեամբ ասացաւ թէ Աթենաս աստուածուհի իմաստութեան՝ ծնաւ զինեալ յուղղոյ Արամազդայ: Ցուցզս, զի որ այն մտան է զաւագոյն, է մտաւորագոյն. ուստի Կառնէադէս, յորժամ հանդերձեալ էր վիճել ընդ Ստոյիկեանս, մաքրէր զուղեղ իւր եղեբորոսաւ: Եւ զինեալ. զի այլ գիտութիւնք են պաշտպանեալ յիմաստութենէ, բայց իմաստութիւնն միայն է ինքնուրոյն պաշտպան, և ցորչափ չէ զինեալ անյաղթելի ապացուցութեամբք, չէ իմաստութիւն: Ահա այս է սրատեսութիւն մտաց:

## ԳԼՈՒԽ Է.

*Թէ որք իցեն առարկայք իմաստութեան:*

Նշան մեծ երևեցաւ 'ի հռովմէական հրապարակի, յորժամ յանկարծակի բացաւ այնպիսի խոր վիհ որ որչափ նիւթ յայն արկանէին, զամենայն ընկլնոյր, և ոչ լնանէր: Բայց զարմանագոյն եւս նշան արար բնութիւնն, բացեալ 'ի մարդկային միտս անդունդ անյատակ, այն է անբաւ խղձ գիտելոյ: Ինչք 'ի յաճախել յաչաց անկանէին, Կրատէս ամաց զնոսա 'ի ծով, և Միդաս յղփացեալ ոսկւով տաղտկացաւ յիւրոց ըղձից: Փափկութեանց ելք են զզուանք. և ոչինչ այնպէս մօտալուտ է հեշտութեան, որպէս ապաշաւն կամ դառնութիւնն: Պատիւ և փառք որչափ են մեծ, այնչափ և ծանր. և որ անձկայրն արքունի իշխանութեան, յոգւոց եհան փոխ առանձնաւոր կենաց: Կեանք իսկ ատելի է իւր ինքեան. և բաղումք



վաղեցին 'ի մահ, որ էր 'ի նոցանէ փախստեայ: Այս ամենայն բարիք են վիհք, բայց ոչ կարի խորք, բաղումք ըղձանան, և վաղ յափրանան: Միայն մարդկային միտք են վիհ թափուր, մանաւանդ թէ յորձանուտ. որ որչափ ինչ Ճարակէ յառարկայից այնչափ առաւել սովի. որչափ ինչ գիտէ, այնչափ առաւել ըղձանայ գիտել: Զի այլ ամենայն բարիք ընդ 'ի բուռն ածել թողանան, բայց սոքա միայն և յետ մահու անմռաց մնան: Առարկայն զգալի է սահմանաւոր, այլ առարկայն իմանալի՝ անսահման:

Ապա ամենայն միտք են միապէս անյագք 'ի գիտել. բայց այսու տարբերին, զի որպիսի են միտք, այնպիսի են և առարկայք. մինչև անարգ մտաց անյագ լինել առ աղտեղիս և անարգս. ընդվայրաքննից առ անպիտանս և սնոտիս, և իմաստնոց առ հաստատունս և վսեմականս: Անպատուական լուալիք պղծութեանց էր Տիբերիոս, որ դատարկեալ զմիտս իւր 'ի քաղաքային խոկմանց, 'ի լնուլ զանձն վաւաշանօք, մեկուսացաւ 'ի կղզին Կապրեայ. այս՝ 'ի կղզի վայրի անասնոց, զի մեծաջան մտադիցէ անասնական արուեստից, զոր չէր արարեալ 'ի կղզին Հռոդացւոց 'ի ստացութիւն ազատական արուեստից: Անդ թէպէտ և վաղու եւս ուսուցիչ էր գիտնաւոր՝ այպանելի գիտութեանս, ոչ ամօթ համարեցաւ աշակերտիլ լաւ եւս ուսուցչաց, զի առաւելցի քան զոր էրն, ուսեալ անյագուրդ 'ի վաւաշ գրոց, յաղտեղի պատկերաց, 'ի պիղծ խօսից, յանառակ խաղուց, և 'ի կենդանի օրինակաց զամենայն զամօթալի խոհերս, զոր ուրեք երբեք ուսեալ իցէ ուրուք յաշխարհի: Եւ ոչ շատացեալ այսու, խոստացաւ մեծապարգև վարձս ամենայնի որ գտանիցէ նոր ինչ և անլուր ազգ պղծութեան, կարգեալ ոստիկան այնմ դպրոցի զՏիտոս Կեսոնիոս ոմն, որ մեծանունն էր յայնմ անառակ իմաստասիրութեան քան զՍոկրատէս 'ի բարոյականս: Թերևս մարթ իցէ ումեք ասել թէ այդպիսեաց որպէս և անասնոց՝ տուաւ հոգի, ոչ որպէս գործարան գիտութեանց, այլ որպէս աղ 'ի պահել զմարմինն 'ի նեխոյ: Իսկ զի՞րդ միտք տուան սոցա, և ոչ անասնոց, բայց եթէ զի իցէ յաշխարհի անբանագոյն քան զամենայն անասուն: Զի՞րդ հաստեցան ուղղորդք, եթէ փոխանակ հայելոյ յերկինս, հայիլ ունէին միշտ յերկիր: Արժան էր սոցա խոտաճարակել, ոչ հաց ուտել. որովհետև ըստ գրելոյ բնախօս իմաստասիրին, կենդանիք որք ցորեան ուտեն, իմաստնագոյնք են. և սոքա անբանագոյնք:

Կարի առաւել վերամբարձ և հանճարաւոր են միտ ընդվայրաքննից. միայն թէ և սոքա թողեալ զուղիղ ճանապարհ իմաստութեան. 'ի խնդիր լինին առարկայից անյայտից. վասն որոյ և անպիտանեաց կամ խաբէականաց. և յայնպիսի սնոտի խնդիրս հատատեն զանձուկ իւրեանց և զանյագ փոյթ, յորմէ

և յիրաւի կոչեցան ընդվայրաքնինք։ Ընդվայրաքնին եղև յոյժ հանճար Դիոգինոսի քերթողի, զորմէ վաղու ևս խօսեցաք. որ շարագրեաց չորս հազար գիրս ընդվայրաքնին խնդրոց նորբից, 'ի քաղել զառասպելս 'ի բանաստեղծից, և 'ի հանել զճըշմարտութիւն յառասպելաց։ Գործ ընդարձակ, բայց այնպէս ունայն, մինչև գովեաց իսկ նորա ախոյեանն, զի մի միայն մատենագիր կարողացաւ գրել այնչափ, որչափ ոչ ոք 'ի վերծանողաց կարողացաւ ընթեռնուլ անտաղտուկ։ Բայց առաւել ևս ընդվայրաքնին գտաւ մեծն այն Տիմէոս [260], որոյ սրեալ զհանճար իւր յեռանաւ իմաստակութեան, և ոչ կաղմակերպեալ զայն ըստ ճշգրիտ ոճոյ տրամաբանութեան, զարմանաւոր և օտարոտի առարկայից եղև հետամուտ։ Նախ սա ընդ Կոմէաս՝ 'ի հետազօտել զգիւթական գուշակութիւնս փիլիսոփայիցն հնդկաց. նուաճեալ ընդ ծով արևելեան՝ հասուլինել նախարդական սնապաշտութեանց մերկիմաստակաց Եթովպիոյ. կամեցաւ հասկանալ զլեզուս թռչնոց, ընդմտանել 'ի գաղտնիս երկնից, և հրամայել սանդարամետական այսոց։ Մինչև դժուարակիս գնացիւք և աշխատութեամբք 'ի խնդիր լեալ գիտութեան, եգիտ զանգիտութիւն. և պատրեալ 'ի մոլար ուսուցչաց՝ պատրեաց զիւր աշակերտս սուտակապատցնորիւք։ Յոյժ կարճօրեայ են մարդկան կեանք, և յոյժ ընդարձակատարր է աւելորդաց ճանաչումն։ Ուղին է երկար, և ժամանակն սուղ։ Որ կամի հասանել իմաստութեան, չունի ժամ կորուսանելոյ յընդունայն զբօսանս. զի այն է յետինն գիտութեանց։ Բաղում ինչ է զոր լաւ է աչաց չտեսանել քան տեսանել. և բաղում ինչ, զոր լաւ է մտաց չգիտել քան գիտել. և գիտողին արժան էր առնուլ զքարն գաղակոխ, այն է կաթնծոր, 'ի մտանալ [261]. զի մի պղծեսցի պխտեանն 'ի միտս ընդ անարգ առարկայս, որպիսի են սնապաշտութիւնք Տիմէոսի, դժպատեհութիւնք Դիոգինոսի, և անբանութիւն Տիբերիոսի։

Ապա ոչ ուրուք միտք են առաւել անյագ առ գիտութիւն, քան զիմաստնոյն։ Բայց 'ի գիտել զամենայն, ոչ է հարկ գիտել զմիրսամիօջէն. շատ է գիտել զվերադոյն իրս, որք ճարտարապետօրէն և գերազանցապէս բովանդակեն զստորինս։ Որպէս ճարտարապետն հրամայէ որմնադրին, հիւսան, քարակոփին, դարբնին, բրչին, և ամենայն արուեստաւորաց գործադրաց իւրոյ գաղափարին, թէպէտ և ոչ ձեռն մերձեցուցանէ 'ի գործ նոցա. սոյնպէս իմաստութիւնն ուղէորէ, և սահմանէ և որոշէ, և դատէ զամենայն գիտութիւն, և զամենայն արուեստ։ Ապա բղձանայ իմաստունն գիտել յամենայն արուեստս մեքենականս զոչ մեքենականն։ Զպարծի 'ի գործ դնել զնոսա 'ի կրպակս, իբրև կլիմաստակն Հեղիոն. այլ ճանաչել զնոսա 'ի համալսարանի, որպէս փիլիսոփոս։ Ոչ գիտէ



նկարել և ոչ քանդակել. սակայն նմա է անկ որոշել զվէճ 'ի մէջ նկարչութեան և քանդակագործութեան, ընտրութիւն առնել ճարտարութեան գործոց նոցա։ Մինչև գործնականին իւրաքանչիւր արուեստի լինել յարուեստագէտն, բայց հայեցողականին ամենայնի սոցա լինել յիմաստունն։ Իմաստութիւնն է թագուհի գիտութեանց. շատ է թագաւորի գիտել հրամայել ում հրամայէ։ Առաջին շարժիչն մեծ ինչ գործէ, եթէ տայ գործել։ Յեթէովպիս՝ առ իմացուցանելոյ ժողովրդեան զգերակայութիւն իւրեանց թագաւորի, 'ի սկիզբն տարւոյն շիջուցանէին զամենայն կրակ։ Եւ թագաւորն հարեալ զգայլախազ ընդ պողպատ, լուցանէ նոր հուր. յորմէ առեալ ջահս ըստ թուոյ գաւառաց, առաքէ մի մի յիւրաքանչիւր գաւառ. և գաւառք լուցեալ նովաւ այլ ջահս առաքեն յիւրաքանչիւր քաղաքս, և քաղաքք 'ի տունս, մինչ զի 'ի լուցանել թագաւորին մի միայն կրակ, լուցանէ զամենայն կրակ. զի արարք ընծայեն իւրեանց սկզբան։ Արդ ըստ այսմ օրինակի է թագաւորութիւն իմաստութեան. վասն զի որովհետև ամենայն արուեստք են ստորադասք գիտութեանց, և գիտութիւնն իմաստութեան, իմաստութիւնն որպէս թագուհի վառէ զառաջին ջահն, այսինքն է զուղղութիւն դատման. և այս գերակայ լոյս յաջորդութեամբ փոխանցի 'ի գիտութիւնս հայեցողականս, անտի 'ի գործնականս, ապա յարուեստս արարողականս, հուսկ ապա 'ի ծառայականս։ Եւ ոչ միայն իմաստութիւնն կատարելագործէ զունակութիւնս գիտութեանց, այլ և պաշտպանէ զնոսա և բուժէ 'ի մոլորութեանց, որք են ախտք մտաց, որում բժշկութեան անհնար է լինել, թէ ոչ ճանաչէ սա զճշմարտութիւն առարկայից նոցա։

Քանի՞ անհեթեթս խօսեցան նախնի իմաստունք, զորովք այսօր տղայք իսկ ծիծաղին։ Ի վերայ աշխարհագրութեան յերազեցին ամենայն իմաստասէրք զոր ինչ ուսուցին վասն այրեցածին, որ ընդ հասարակածաւ. կարծեալ զայն անբնակելի 'ի սաստիկ տապոյ, և սակայն գտաւ այն առաւել բարեխառն և բերրի կողմն երկրի, խուժադուժ Ափրիկոյ նախանձելի։ Վրէպ յայտնեցան կարծիք երկուց գերզգօնից Օգոստինոսի և Լակտանտիոսի, թէ երկիրս իցէ կիսագունտ ինչ. զի անհնար թուէր նոցա, թէ 'ի ներքոյ մեր 'ի կախ կայցեն բնակիչք առանց անկանելոյ։ Եւ սակայն գտան բնակիչք որք շրջին ընդ ոտիւք մերովք անկախ և անանկ։ Եւ զիարդ հնար էր այնց փիլիսոփայից ճանաչել զերկինս որ ոչն ճանաչէին զերկիր յոր վերայ կային։ Յաստեղաբաշխութեան իսկ, որ ազնուագոյնն է յուսմունս, դրուատանօք ուսոյց Պղատոն, թէ պնդութիւն պարունակաց վերնոց ներդաշնակաւոր համեմատութեամբ հոլովելոց 'ի վերայ ստորնոց յօրինէ աստուածային խմն նուագ։ Պտղոմէոս ուսոյց, թէ 'ի թանձրութեան

պարունակաց կառուցան այլ շրջանակք արտակեդրոնք, համակեդրոնք և մակաշրջանակք միապէս պնդակազմք, անրափակ կայանաւորինք եօթանց աստեղաց մոլորակաց. բայց մոլորակ էին միայն իւրեանց մտօք: Շարժումն արուսեկի և հրատի ծանուցեալ 'ի մեր ժամանակս, և զգալի վերելք գիսաւորաց յենթալուսնեայ գաւառէ մինչև 'ի վեր քան զերևակն, ըստ նշմարելոյն Տիքոնի, յայտնի ցուցանէին ականողն թէ այս ամենայն ընդարձակութիւն յերկրէ մինչև ցհաստատութիւնն, ոչ այլ ինչ է, բայց լոյծ և միայար ձգումն լոկոյ օդոյ: Թող զբիծս լուսնի, զորս բազումք 'ի փիլիսոփայից համարեցան տարասեռ կեղտս նորուն պայծառ դիմաց. և արդ Յովհաննէս Լինգոնացի սլացեալ աչօք յերկինս երկոքումբք Թևօք ապակւոյ, ստորագրէ զլուսինն որպէս երկրագունդ ինչ, որոյ բիծք են ծովք: Եւ 'ի գունտ ինչ աշխարհագրական՝ տրոհէ մեզ զկղզիս, զծովեզերս, զգետափունս, զցամաք երկիր և զլերինս հանդերձ իւրեանց ստուերօք. որ և պարգևեաց զայն աշխարհ Թագաւորաց այսմ աշխարհի, իւրաքանչիւր յանուանէ: Այսու օրինակաւ մեք ծիծաղիմք զտգիտութեամբ նախնեաց, և յետնորդք մեր ծիծաղեսցին զմերովք, և իմաստունն ծիծաղեսցի զամենեքումբք. զի իւր բուն առարկայ է առաւել վսեմ, և վերառեալ և անվրէպ քան զայլոցն ամենեցուն:

Ապա ինքնաբուն և գլխաւորագոյն առարկայ իմաստութեան, որպէս նշանակեցաք, է էակն ըստ որում էակ. այսինքն սոսկ էութիւնն իրաց, մշանջենաւոր, աննիւթական, անայլայլակ և անվրէպ: Եւ վասն այսորիկ այս գիտութիւն կոչի Մետաֆիզիգա. որ թարգմանի Բնազանցութիւն, այսինքն 'ի վերոյ քան զբնականն, և իբր աստուածային. զի է վերագոյն քան զֆիզիգա: Վերացուցանէ, որպէս լուար, իմաստութիւնն՝ նրբին իմացողութեամբ զաննիւթականն 'ի նիւթականէն, զանզգալին 'ի զգալւոյն, զգոյացութիւնն 'ի պատահմանց, զտեսակն յանհատէն, զսեռն 'ի տեսակէն, և յընդմիմեամբ սեռից զսեռն զսեռականագոյն. և կառուցեալ սկզբունս ընդհանրականս՝ քննէ զճշմարտութիւն ամենայն գիտութեանց. և որ ծնաւն հուսկ յետոյ քան զամենայնն, իւրով մեծաւ զօրութեամբ գլխոյանայ: Եւ ոչ շատացեալ իմաստնոյն արտաքին իրօք, իբր զի գերագոյն իմաստութիւն է ճանաչել զինքն, բաժանէ զինքն իսկ յիւրմէ, և անմեռ զատուցեալ զոգի յիւրմէ մարմնոյ, կամի ճանաչել թէ զի՞նչ իցէ այն. արդեօք կուտակութի՞ւն ինչ հիւլէից, որպէս կարծեաց Դեմոկրիտոս. եթէ հուր, որպէս Հերակլիտոս. եթէ օդ, որպէս Դիոգինէս. եթէ ջուր, որպէս Թալէս. եթէ արիւն, որպէս Կրիտիաս, և եթէ ներդաշնակութիւն ինչ, որպէս Եմպեդոկլէս: Իմաստասէրք ոչինչ քան զանասունս զգօնագոյնք.



որք ունին ոգի, և չճանաչեն զայն. և չեն արժանի ունելոյ: Բայց ծանուցեալ նորա յիւրմէ վերացուցիչ իմացողութենէ, թէ ոգին է հոգի անմահական, կամի իմանալ թէ զի՞արդ իմանայ, ո՞րպէս զգայ, ո՞րպէս գործէ, ո՞րպէս կերպարանէ զանգամս. և թէ յի՞նչ զօրէ, յորժամ 'ի մարմնոյ հրաժարի: Այսուիկ մտադիւրագոյն ևս վերելս առնէ յազնուագոյն և 'ի վերառեալ մասն աշխարհի. այսինքն է, առ սոսկ գոյացութիւնս հրեշտակական հոգւոց, կամեցեալ գիտել ոչ մնապաշտ ընդվայրաքննութեամբ Տիմնէոսի, այլ հաստատուն սկզբամբք, թէ լիցե՞ն, թէ ո՞րպէս շարժիցին, զի՞արդ ընդ միմեանս խօսիցին, ի՞ւ տարբերիցին 'ի միմեանց, և համօրէն 'ի հոգւոց մարդկան. անհնար թուելով, թէ ծանիցէ զհրեշտակս, որ ոչն է հրեշտակ: Եւ ոչ յայս սակս այս ամենայն մեծամեծ առարկայք, և տիեզերք ամենայն լնուն զլլիհ մարդկային մտաց: Ելանէ իմաստունն արտաքոյ աշխարհի. անձուկ ունելով ճանաչել զամենամաքուր և զամենապարզ էակն էից, զպատճառաց, զսկիզբն անսկիզբն, և անչափ, իւր ինքեան միայն հասանելի. զի միտ հունաւոր ոչ կարողանայ բովանդակել, բայց զառարկայ հունաւոր: Չիք ազգ այնպէս խուժադուժ, որ ոչ ծանիցէ թէ է մի Աստուած. և ոչ ըղձանայցէ ճանաչել թէ ո՛ իցէ այն: Եւս և 'ի հեռաստան ընդ բևեռօք, ուր 'ի կէս տարւոյն չծագէ արև յայն խաւարային օդս և 'ի միտս՝ ճառագայթէ այս ճշմարտութիւն. ամենայն ուրեք կանգնին սեղանք և տաճարք, ամենեքին երկրպագուք են աստուածպետութեան, նմա աղերս արկանեն, յանուն նորա երդնուն և չճանաչեն զնա: Հայեաց 'ի տուէ յիսկն գեղանկար ծաղկանց. հայեաց 'ի գիշերի ընդ կանոնաւոր շրջանս աստեղաց. ամենայն ինչ թէպէտ և անմռունչ, քարոզէ քեզ, թէ է Աստուած. զի այսպիսի գեղեցիկ արուեստաւորութիւն՝ չէ առանց արուեստապետի: Նայեաց յոստայն սարդից ոստայնանկաց. 'ի տնտեսական կենակցութիւն մրջմանց. 'ի քաղաքական հասարակապետութիւն մեղուաց. այսպիսի մանունց աշակերտաց միայն բնութիւնն է վարժապետ. մինչև հարկիս ասել, կամ Աստուած է բնութիւնն, և կամ գործ Աստուծոյ: Իսկ արդ եթէ առ ամենայն առարկայ իմանալի կարգեալ է կարողութիւն իմացական, որ յառարկայէն առնու զտեսակ, և կատարելագործի, զի՞նչ զարմանք են թէ միտ մարդկային անձկանօք բերիցի 'ի ճանաչել զառարկայ ինչ այսպէս մեծ և աստուածային, յորմէ միայն ընդունի զվերջին զիւր կատարելութիւն: Հայեաց 'ի գեռածին լակոտ շան զի 'ի լոյս ընծայեալ աչօք փակօք՝ 'ի խնդիր է թաւամազ ստեանց, զոր ոչ ետես երբէք. զամենայն մերժեալ և յամենայնէ խորշեցեալ՝ միշտ կաղկանձէ, միշտ կնծկնծէ, մինչև գտանել նմա զծոց մայրենի. և իբրև գտանէ, զայն դիէ, յայն հանգչի և վայելէ:

Ըստ սմին օրինակի միտքն արարեալ յԱստուծոյ վասն Աստուծոյ, ոչինչ իմիք այնպէս սաստիկ և ներքուստ անձուկ ունի, որպէս ճանաչելոյ զԱստուած. բայց քանզի որպէս զաչացու առ աստուածայինս, յորի յառարկայս զգալիս, յաբարածս խնդրէ զարարիչն. յանցաւոր բարիս խնդրէ զգերագոյն բարին. և չգտեալ 'ի ստորինս զոր խնդրէն, տառապի, և չգիտէ էր աղագաւ: Ապա այս է գերագոյն բերկրութիւն իմաստնոյն, այս է առարկայն ընդ որ զուարճանայ: Զի որովհետև միտք իւր լուսաւորագոյն են և սրատես քան զայլոցն, կերպարանէ ես բարձրագոյն և ճշգրտագոյն և յանկագոյն իմաստս զայն անբաւ մտաց, որչափ հնար է տանել մտացնաւորի. յայնմ ընկղմի, յայն յառեալ հայի, և յայնմ վայելէ զերանութիւն ինչ յերկրի: Զի, որպէս ուսուցանէ Արիստոտէլ, առաւել չքեղ է և զուարճալի փոքր 'ի շատէ ճանաչել զաստուածայինս, քան լիուլի զմարդկայինս: Այս վսեմական տրամախոհութիւնք են իմաստնոյն, յորժամ ներանձնանայ: Սոքօք յափշտակէ զունկնդիրս և ապշեցուցանէ: Վասն այսորիկ ասացաւ յառասպելս, թէ Աթենաս աստուածուհի իմաստութեան, զորս միանգամ տեսանէր, արձանացուցանէր: Անմիտ քան զանասուն են այնք որք կարծեն թէ Որփէոսի յաղուշ կրթեալ լցէ զանասունս՝ քաղցրանուագութեամբ իւրոյ քնարի [262]: Քնար էին երգք 'ի նմանէ յօրինեալք 'ի վերայ երկնային իրաց և աստուածային առաւելութեանց, առակաւ ծածկեալք 'ի տգիտաց առասպելեաց քօղով. որ եղև բնաւոր աստուածաբանութիւն այնց դարուց, յորս միայն իմաստունն էր համարեալ մարդ, և այլ մարդիկ վայրի անբանք: Յասացելոց աստի մարթիս իմանալ զսահման իմաստութեան և զևրոց ծայրից. Իմաստութիւնն է ուղիղ ամենայն գիտութեանց՝ որպէս գիտութիւն բարձրագոյն և ընդհանրագոյն. խօսելով ընդհանրագոյն սկզբամբք 'ի վերայ իրաց ամենևին վերառելոց 'ի նիւթոյ. ունելով գլխաւոր առարկայ զէակն ըստ որում էակ, և զգոյացութիւնս հոգեղէնս և զաստուածայինս: Ծայրք իմաստութեան են տգիտութիւն այսց գերագոյն առարկայից, և սնապաշտ կամ յանդուգն ընդվայրաքննութիւն:



# ԳԼՈՒԽ Ը.

## Յաղագս արուեստի:

Ոչ խօսիմք մեք աստ զազատական արուեստից, որք 'ի դասակարգէ են գիտութեանց, որպէս ասացաք, այլ զմեքենական արուեստից կերտուածոց, որք յածին զգործովք արտաքնովք, որ 'ի պէտս են մարդկային կենաց: Վաղնջուց տրտունջ է հանապազ ազգի մարդկան՝ զմօրէ հասարակաց, թէ անասունք անաշխատ և տնջան գտեն զարուեստս որ պիտոյ է նոցա. իսկ մարդկան բազում աշխատութեան պէտք են 'ի գտանել զնոսա, և ևս առաւել առ ուսանել զնոսա: Ոչ պիտի չերամոյ արարգործ 'ի մանել զիւր թելս, և ոչ ծիծռան ճարտարապետ 'ի կերտել զիւր պալատ և ոչ ցլու վարժեալ, վարել 'ի պէտս զիւր եղջիւրս: Ծնանին արուեստք ընդ նոսա. իւրաքանչիւրն է իւր վարդապետ և աշակերտ, և յամօթ առնեն զմարդ, որ իմաստունն է քան զնոսա: Որ շատ գիտէ, սակաւ գիտէ: Բայց որ ոք վասն այդր քրթմնջէ, նախատինս դնէ անձին և իւրում արարչին, որ նախ առաջին զատոյց զմարդ յանասնոց. կամեցեալ՝ զի սոքա ուսցին զարուեստս խոշորս 'ի բնէ, և մարդ ուսցի զգեղեցկագոյնս յիւրմէ հանճարոյ: Եւ երկրորդ՝ զատոյց զգերազանց միտս 'ի ռամկայնոց, 'ի տալ նոցա զընդունակութիւն ազատական արուեստից. և սոցա զյարմարութիւն առ ծառայականս, տալով զուշիմութիւն բաւական 'ի գտանել, և ձեռն հնարաւոր 'ի կատարել: Զինչ լինէին հասարակապետութիւնք առանց ռամկաց. և զինչ լինէին ռամիկք առանց արուեստից: Ապա տեսչութեամբ անօրինէ գերագոյն արուեստագէտն, զի ռամիկք ծառայեսցեն իմաստնոց արուեստիւք, և իմաստունք ծառայեսցեն հասարակապետութեան խոհեմութեամբ: Նա 'ի պահել զյառաջադէմ կարգ յանկատարից առ կատարեալս, նոյն ինքեան արարչին կամք եղեն, զի անասունք ուսցին զարուեստ 'ի բնութենէ, և մարդիկ յանասնոց: Զճարտարապետութիւն ուսուցին մեղուք, զերաժշտութիւն սոխակք, զքանդակագործութիւն արջք, զբրտութիւն բզէզք, զնաւարկութիւն կարապք, զնետաձգութիւն ոզնիք, զականահատութիւն նապաստակք, և զդալարիս բժշկականս հիւանդացեալ անասունք: Իմաստնապէս առեղծաբանեցին խորախոհ իմաստասէրք, թէ Թաւմաս որ է Զարմանութիւն եղև ծնող ծիածանի [265]. 'ի նշանակել, ասէ Պղատոն, թէ զարմանքն է ծնող արուեստից: Բայց 'ի դէպ է զանազանել զայս իմաստուն ասացուած: Զարմանքն

եղև ծնօղ ազատական արուեստից. ուստի և առած է, թէ 'ի զարմանալոյ սկսաւ մարդ իմաստասիրել: Բայց հարկն եղև ծնօղ ծառայական արուեստից. ուստի է և այլ առած թէ Հարկն առնէ զմարդ հնարագէտ: Ապա հարկն բռնադատեաց զմարդիկ 'ի խնդիր լինել այնց. օրինակն անասնոց ուսոյց նոցա, հնարագիտութիւնն յաջախեաց, և պերճասիրութիւնն կատարելագործեաց:

Եօթն արուեստս ազատականս տրոհէ Նախնի իմաստասիրութիւնն. այսինքն Քերթողութիւն, Հռետորութիւն, Տրամաբանութիւն, Թուաբանութիւն, Երաժշտութիւն, Երկրաչափութիւն, և Աստեղաբաշխութիւն: Եւ զուգաթիւ տրոհէ զվարձկականս և զծառայականս. այսինքն է Երկրագործութիւն, Որսորդութիւն, Զինուորութիւն, Դարբնութիւն, Վիրաբուժութիւն, Ասրագործութիւն և Նաւարկութիւն: Բայց այսմ եղև պատճառ կամ պարզմտութիւն այնց դարուց, կամ խորհուրդ եօթնեակ թուոյ նուիրական համարելոյ, և կամ համանունութիւն անուանց նշանականաց աւելի քան զոր հնչէն: Որպէս և իցէ, յայտ է թէ որպէս եօթնեակն ազատական արուեստից է թերատ, զի ոչ յիշի Քաղաքականութիւն և Բարոյականն, նոյնպէս թերատ եղև և եօթնեակն ծառայականաց, ոչ յիշելով զՊատկերահանութիւնն և զՔանդակագործութիւնն, որ յանարգաց միջի են ազնուագոյնք: Մինչև մարթ է ասել թէ այնք իմաստունք ընդ թուով արկին միայն զարուեստս հարկաւորս հասարակապետութեան, և ոչ զփափկականս և զաւելորդս: Թող զի, ստոյգ իմն է թէ արուեստն զինուորական 'ի կողմանէ հրամայողին վերաբերի առ քաղաքականութիւն. այլ 'ի կողմանէ հնազանդելոյն, այո՛ մարթ է կոչել զայն Թոշակական, բայց ոչ մեքենական, և ոչ ծառայական, սեպհական գոլով արիութեան: Սակայն թէ չիցէ իմաստն զարուեստ զինագործութեան, և ոչ զինակրութեան:

Բայց որպէս և իցէ բաժանումն արուեստից, սահմանն բառնայ զամենայն համանունութիւն: Ապա նեղապէս խօսիլ կամեցեալ զկերպողական արուեստից, որք կոչին մեքենականք, և ոչ զներգործականաց, որք որպէս ազատականք 'ի համար դասին գիտութեանց, այս է նոցա ճշմարիտ սահման: Արուեստն է հմտութիւն մուծանելոյ ձեռագործութեամբ զկերպարանութիւն իմն մտաւոր 'ի նիւթ ինչ արտաքին, 'ի պէտս մարդկային կենաց: Հմտութիւն կոչի ուղիղ եղանակ արուեստաւորին, հիմնեալ 'ի ճանաչումն ճշգրիտ կանոնաց, որ ինքնին չեն սխալական: Որով զանազանի արուեստն 'ի բաղդէ, որոյ երբեմն զծաղու եկեալ, առնէ զգործս արուեստի, 'ի ծաղր առնել զարուեստաւորն: Որպէս յորժամ Նէաղկէս անգիտացեալ նկարել զփրփուր ամեհի երիվարի, և Պրոտոգենէս զփրփուր կատաղի շան, կոյր բերումն բախտի արար զոր երկու անուանի նկարիչք ոչ գիտէին առնել, առ այպանել զերկաքանչիւրն:



Կերպարանութիւնն արտաքին և երևելի որ մուծանի, կախեալ կայ զներքնոյն և զիմանալւոյն. որպէս գաղափարեալն զգաղափարէն, օրինակեալն զնախագիծ օրինակէն, և տիպն զնախատիպէն: Զի արուեստաւորն ոչ գործէ իբրև զանասունս կոյր ազդմամբ, այլ որպէս արուեստապետ, հայեցեալ յիրս 'ի ներքս յինքեան: Նիւթ է այն յոր մուծանի կերպարանութիւնն, հնար գոլով զնոյն կերպարանութիւն մուծանել յայլևայլ նիւթս այլևայլ արուեստիւ. որպէս Կուրիոն արար զԹատրոն 'ի փայտէ, Պոմպէոս 'ի կճոյ, և Սկաւրոս յապակւոյ: Գործուածն իսկ առաւել նիւթական կամ առաւել ազնուական պէսպիսացուցանէ զարուեստս. որպէս զկենդանագրութեամբ Աղէքսանդրի երեք միայն արուեստաւորք այլևայլ ճարտարութեամբ աշխատասիրեցին դիմամրցանակաւ. Պիւրգոտեղէս ակրով փորագրողի, Ապեղէս գրչաւ նկարչի, Լիւսիպպոս ձուլիւք անդրիագործի, և ոչ ոք յաղթեաց այլում. այլ երեքին իսկ գտան ամենեցուն յաղթական [264]: Վախճանն է կրկին: Անմիջական վախճան է նոյն իսկ գործուածն. վերջին վախճան է կիրառութիւն գործոյն: Նա է վախճան արուեստաւորին. սա է վախճան արուեստին. այսինքն է դիւրութիւն մարդկային կենաց: Յայսմ վերջին վախճանէ առնու արուեստաւորն զկանոնս արուեստին: Զի թէ շինէ նա զնետ, զի թռուցեալ խոցեսցէ, առնէ զնա թևաւոր և սայրասուր:

## ԳԼՈՒԽ Թ.

### Առաւելութիւնք և վերադասութիւնք ծառայական արուեստից:

Ի սահմանէ անտի մարթիս իմանալ թէ որչափ հմտութիւնն է կատարեալ, և կերպարանութիւնն չքնաղ, և նիւթն պատուական, և գործուածն քերուբ, և վախճանն մեծարգի, այնչափ առաւել ազնուական է արուեստն: Բայց քանզի դժուարաւ պատահէ այս ամենայն կատարելութեանց ընթացակցութիւն 'ի մի արուեստ և 'ի մի գործ, գտանի գոլով ոմանց 'ի միում և ոմանց յայլում, որպէս կազմութիւնք 'ի մարդկային մարմնի, յայսմանէ ծագեն վէճք արուեստից, և դժուարութիւնք 'ի գտանել զնոսա և յորոշել: Բայց և այնպէս ստոյգ իմն է թէ որչափ արուեստ ինչ ծառայական աւելի մերձաւորութիւն ունի ընդ ազատական արուեստս և ընդ

գիտութիւնս, այնչափ առաւել է ազնիւ. զի ազնուութիւնն չափի 'ի ծագմանէ իւրմէ: Ապա ազնուագոյն են պատկերահանութիւն և քանդակագործութիւն, քան զդարբնութիւն կամ զհիւսնութիւն. զի սոցա կանոնք են բոլորովին մեքենականք, զորս ուսուցանէ փորձն. այլ երկոքին առաջինքն առնուն կանոնս 'ի բանաստեղծութենէ, որ կեղծեօք զնմանութիւն բերէ զճշմարտի: Բայց յերկուսին յայսոսիկ բարեկամ հակառակորդս՝ այնչափ ազնուագոյն է պատկերահանութիւնն քան զքանդակագործութիւն, որչափ նմանողութիւնն է առաւել հանճարաւոր: Վասն զի քանդակագործութիւնն զնմանութիւն բերէ զհաստատուն մարմնոց եզրնդօք և խորոփեօք նիւթականօք, բայց պատկերահանութիւնն նմանաբերեալ զելունդսն պայծառ գունովք, և զխորոփիսն ստուերարկութեամբ, զարմանաւոր զօրութեամբ հանդիպահայեցութեան, առ մակերևութին լինել մարմին, և ճշմարտանմանին երևել ճշմարիտ: Ուստի և վիրաբուժութիւնն լինի ազնուագոյն քան զպատկերահանութիւն. զի սա առնու զկանոնս 'ի հանդիպահայեցութենէ, որ խաբէ երևութիւք, և նա առնու 'ի բնաբանութենէ, որ է գիտութիւն իրական և վերագոյն: Այո, յեղանակ գործելոյն առաւել արգոյ և ազնուական է քանդակագործութիւն քան զվիրաբուժութիւն, զի կեանս տալ մարմարինի մեռելոյ անիծաս երկաթով տաշեալ 'ի նմանէ տաշուածս անցաւս, այնչափ է զուարճալի, որչափ տաղտկալի է և սոսկալի՝ տեսանել արիւնաշաղախ ձեռօք տաշել զմիս ցաւակիր, և խարել զոսկերս զմարմնոյ կենդանւոյ: Բայց եթէ ազնուութիւն արուեստից չափիցի յազնուութենէ վախճանին, որ պիտանագոյն իցէ առ հասարակաց օգուտ, խոստովանելի է թէ վիրաբուժութիւնն է ազնուագոյն քան զքանդակագործութիւն, և արուեստն որ վարէ զսուր և զվահան վասն հասարակաց պաշտպանութեան, քան զայն որ վարէ յղկիչս և սղոցս 'ի պէտս կահուց կարասեաց տան: Եւ երկրագործութիւնն, որ օգնէ բնութեան 'ի հասարակաց պէտս, քան զորսորդութիւն որ խաթարէ զայն վասն առանձնաւոր բերկրութեան: Բայց յայլմէ կողմանէ, եթէ հայեցողական գիտութիւնք որք հաճեն միայն զմիտս՝ ազնուագոյնք են քան զգործնականս, որք ծառայեն հասարակաց, իբր զի նիւաղն 'ի ծառայութեան է առաւել ազատ, և առաւելեալն յազատութեան է առաւել ազնուական և վեհական, հարկաւ հետևի թէ որսորդութիւնն է առաւել վեհական քան զերկրագործութիւն. զի սա 'ի վար արկանի վասն օգտի, և նա վասն լոկոյ բերկրութեան: Ուստի և արուեստք պիտանագոյնք՝ են առաւել անարգք. և զբօսականքն՝ առաւել ազնուականք, զի են ազատականք: Իսկ եթէ մտածի նիւթն, խոստովանելի է թէ ազնուագոյն է արուեստն ըստ ազնուութեան և պատուականութեան նիւթոյն և ենթակային, յոր գործի: Վասն այսորիկ ոչ առանց պատճառի՝ դշխոյ արուեստից կոչէին զիւրեանց քուրայս քիմիագործք. որոց կամեցեալ կեանս տալ բոցով՝ փիւնիկանն 'ի հրահալէլս, մերձեցուցմամբ ներգործաւորաց 'ի կրաւորս, ջանան առնել արուեստիւ ըզչքնաղն 'ի գործս բնութեան, որ չափն է ամենայն գնոց, և իւրեանց ըղձանաց: Արուեստս այս՝ ըստ ինքեան իրական, այլ 'ի գործադրութեան երևակայական. զի չիք գտանել զճշմարիտ նիւթն ուստի բնութիւնն արտադրէ ոսկի. և ոչ զորոշ չափն առաջնոց որակութեանց հանգամանաւորաց 'ի մուծանել յայն զտեսակ ոսկւոյ: Ուստի այն ազնուական Հեփեստեանք, փչմամբ 'ի քուրայս զոսկին զոր ունէին վասն 'ի ձեռն բերելոյ զայն յոր յուսացեալ էին, փակէին յապակեղէն աման իբր յանօթ Պանդորեան՝ զյոյս իւրեանց. որ հուսկ ուրեմն անյոյս՝ ծիծաղելի ճայթմամբ ոստուցեալ արտաքս, թողունոցա միայն զոսկին յաչս, և զմուրն յերեսս [265]: Բայց թէ խօսիմք զիրական նիւթոյ և զճշմարիտ արուեստէ, անտարակոյս ազնուագոյն է ոսկերիչն քան զպողպատագործն. և ակնագործն քան զարծաթագործն. և ազնուագոյն քանդակագործ եղև Պիւրգոտելէս որ քանդակէր յականս պատուականս, քան զՓիդիաս՝ որ քանդակէր 'ի մարմարինի: Սակայն յայլմէ կողմանէ, վասն զի գործք Պիւրգոտելայ վասն մանրութեան իւրեանց պարծանք էին արկեղաց, այլ ոչ զարդ տաճարաց և քաղաքաց իբրև զգործս Փիդեայ, սոքա բազում առաւելութեամբ վասն մեծութեանց իւրեանց էին անուանի: Վասն այսորիկ առաւել ընթանայր աշխարհ 'ի Գնիդոն տեսանել զԱփրոդիտեան կուռս Փիդեայ, քան 'ի Մակեդոնիա տեսանել զԱղեքսանդրն Պիւրգոտելայ. իբր զի առաւելոյր քան զյարգ նիւթոյն գեղ տեսակին: Յայսմանէ որպէս ազնուագոյն են գիտութիւնք, ըստ որում ազնուագոյն է նոցին առարկայ, սոյնպէս տեսակ գործոյն առարկայ գոլով գործաւորին, ազնուագոյն լինի գեղեցիկ ինչ տաճար քան զգեղեցիկ ինչ ապարանս. և դիւցազնեայ պատկերք Տիմանթեայ, քան զծաղրական գեղջուկս Լուցինեայ [266]: Ապա եթէ գեղեցկագոյն տեսակաւ իմանայցի նմանագոյնն բնականին, սոյգ իմն է զի թէպէտ և ազնուագոյն է մարդ քան զգրաստ, բայց և այնպէս՝ գեր 'ի վերոյ մեծարգի եղև մատակ ձին նկարեալ 'ի Պրոքսիտեղայ, քան զԱղեքսանդրն նկարեալ յԱպելլէսէ. զի թէ սա զարհուրեցոյց զԿասանդրոս, նա վրնջեցոյց զերիվարս: Եւ թէ համեմատեսցէ զխաղող Զեւքսեայ ընդ վարագոյր Պարրասիոսի, սա եղև նմանագոյն իսկականին. վասն որոյ և առաւել գովելի. զի Զեւքսիս նկարեալ խաղողիւ խաբեաց զթռչունս, և Պարրասիոս նկարեալ վարագուրաւ խաբեաց զնոյն ինքն զԶեւքսիս: Բայց եթէ առարկայք գիտու-

թեանց են ազնուագոյնք՝ որչափ են զարմանագոյնք և վերագոյնք ըստ կարծեաց ամբոխին, յայտ է թէ ազնուագոյն լինին այն արուեստք, որք ցուցանեն գործս հիանալիս և իբր հրաշալիս, մինչև թուիլ նոցա ոչ գործ մարդկային, այլ գերատուածային: Այսպիսի եղեն պարունակն Արքիմեդեայ և ժամացոյցն անուաւոր, պարփակեալ յապակւոջ՝ մին զերկնից անքաւութիւն, և միւսն զժամանակին փախուստ: Եւ այսպիսի եղեն աղաւնիքն Արքիտասայ, որք թռչէին՝ փայտեղէն գոլով. և արձանք Դեդալոսի, որք փախչէին, թէ չէին կապեալ. ունելով երկաքանչիւրոց փոխանակ հոգւոյ զանխերեւոյթ հանճար հեղինակաց իւրեանց 267: Բայց և այսու ամենայնիւ հնար է մեզ հաստատութեամբ կնքել, թէ որպէս այն արուեստաւոր է գերապանծ, որ յարուեստի իւրում որ զինչ և իցէ՝ գիտէ զամենայն զոր հնար է գիտել, և առնէ զամենայն զոր հնար է առնել. սոյնպէս գերապանծ լինի գործն, յոր գերիմաստ արուեստաւորն 'ի վեր արկանիցէ զյետին ձիգն զիւրոյ գիտութեան: Այսպիսի եղև արձանն Պողիկղետոսի, անուանեալ կանոն կանոնաց, և չափ չափուց. զի անտի միայն ամենայն նկարիչք և քանդակագործք առնուին ըղձագաղափարական համեմատութիւնս մարդկային մարմնոյ 268: Մինչ զի ոչ տաճարն Արտեմեայ, և ոչ այլ վեց զարմանագործութիւնք արուեստի հաւասարիլ կարողացան սմա միայնոյ: Զի զայլովք ամենեքումբք՝ յաճախութեամբ ոսկւոյ և ճարտար արուեստաւորաց հնար եղև անցանել զանցանել. այլ այսմ միոյ միայնոյ հանճարոյ մտաց ոչինչ այլ հանճար կարողացաւ կատարելապէս լինել նմանող: Բնութիւնն իսկ ուսուցիչ արուեստից՝ յայսմ միայնոյ ճարտարէ կարող էր ուսանիլ ինչ, քան ուսուցանել. զի նախատիպք նորա երբեք չհասանեն, ցոր վայր եհաս այս օրինակ:

Յայսմ ամենայնէ որ ասացաւ, մարթիս իմանալ թէ յինչ հաստատեալ է արուեստն մեքենական, և որք իցեն ծայրք նորա: Մի ծայրն է տգիտութիւն պակասական, անուանեալ անարուեստութիւն. և միւսն տգիտութիւն վատթար տրամադրութեան, որպէս իսկ լուար: Նա չունի զսկզբունս արուեստին. սա ունի խանգարեալս. վասն այսորիկ առաւել վնասակար է սա քան զնա: Զի որ չառնէ զոր ոչ գիտէ, գովութեան է արժանի. այլ որ առնէ զոր ոչն գիտէ, զայլս խաբէ, զարդիւնս կորուսանէ, և պատժոյ լինի արժանի: Ոչ սխալէ յարուեստն, որ կամաւ սխալէ ընդդէմ արուեստին, որպէս այլուր ասացաւ. նա՝ երբեմն ճարտարութիւն է սխալել յարուեստն: Անյատկութիւն լեզուի ամօթ է քերթողի, յորժամ անյատկութիւնն դուստր է տգիտութեան. բայց որ կամաւ խոտորի 'ի քերթողական կանոնաց, առնէ քերթողութիւն վթար, այլ չէ քերթող վատթար: Նա երբեմն 'ի վրի-



պակ անդր ցուցանի հանճար. և անյատկութիւնն լինի ձև, յորժամ քերթողն ասէ ինչ, և կամի թէ իմանայցի այլ ինչ. որպէս 'ի փոխաբերութեան, որ որչափ խոտորի 'ի յատկութենէ, սաստանայ հանճար. և քերթողութիւնն փոխի 'ի բանաստեղծութիւն: Այդպիսի փոխաբերութիւնք լինին և յարուեստս մեքենականս: Նկարիչն հնարագէտ՝ գիտութեամբ խանգարէ զհամեմատութիւնս մարդկային մարմնոյ, 'ի նկարել զայլանդակ ինչ, և որ 'ի տգէտ նկարչի է տգիտութիւն, 'ի ներհուն նկարչի է հմտութիւն: Բայց յայսմանէ պարտ է որոշել 'ի գործն և յարուեստաւորն զբնական բարութիւն 'ի բարոյականէն: Եթէ նուազ է գիտութիւնն, բայց բարւոք գիտումն արուեստաւորին, բարի է արուեստաւորն, այլ գործըն յոռի: Եւ զորին հակառակն՝ եթէ վարէ զարուեստն վասն յոռի ինչ վախճանի, յոռի է արուեստաւորն, այլ ոչ արուեստն: Միրտիղոսի կամեցեալ դաւաճանութեամբ վըտանգել զՕենոմաոս զտէր իւր յոլիմպիական խաղս, կառոյց կառս յանկաւորս 'ի կործանումն, քան յառաջնորդութիւն 'ի նպատակ անդր: Ներոն առ հեղձուցանելոյ զմայր իւր, ետ շինել նաւակ յանկաւոր 'ի նաւաբեկութիւն: Բարւոք եղեն գործաւորքն, զի բարութիւն գործոյն չափի յարուեստէն, որ է ունակութիւն մտաց. այլ չարաչար կիրառութիւն արուեստին չափի 'ի չարութենէն, որ է 'ի կամս: Վասն այսորիկ և արուեստք անմեղանք որչափ հնանան, այնչափ յոռանան. և հնարեալքն վասն հարկի՝ արբանեկեն հեշտութեան: Յոռանայ արուեստն, յորժամ շահասիրութիւնն լինի արուեստաւոր. քանզի յորժամ հանճարն ոչ առաջնորդի 'ի բանէն, այլ առաջնորդի 'ի շահասիրութենէ, միտք կորուսանեն զհանճար, և մոլութիւնն լինի հանճարաւոր: Բժշկականութիւնն եգիտ առողջարար իւղս 'ի զօրացուցանել զմարմինս. իսկ շահասիրութիւն իւղավաճառաց քնքշեցոյց զիւղս 'ի նուաղել զոգիս 269: Կտաւագործութիւնն, որ անկանէր հաստ թելս 'ի ծածկել զմերկութիւն, ուսաւ ապա 'ի սարդից՝ ոստայնս թափանցիկս 'ի ցոյց մերկութեան: Արուեստ խոհակերութեան 'ի մերժել զքաղց, արուեստակեաց հուսկ ուրեմն պատուական համեմունս 'ի զարթուցանել զնա: Պերճասիրութիւն ոչ շատանայ սակաւուք, թանկագինն են չար սովորութիւնք:

# ԳԼՈՒԽ Ժ.

## Թէ զինչ իցէ խոհեմութիւն։

Իմաստնապէս Արիստոտէլ մօտ առաջրէ զխոհեմութիւնն՝ արուեստի. զի 'ի մէջ երկոցունց՝ տարբերութիւն միոյ լոկոյ բառի մեծ տարբերութիւն 'ի մէջ բերէ ազնուութեան, որպէս լուիցես [270]։ Ապա ոչ այլ ինչ է խոհեմութիւն, բայց առաքինական ինչ ունակութիւն մտաց, 'ի կարգել ստոյգ և ուղիղ բանիւ զմարդկային արարս՝ զայնոսիկ, որք բարոյապէս են բարի կամ չար։ Այսուիկ սահմանաւ Արիստոտէլ որոշէ մեզ նախ՝ զխոհեմութիւնն յայլոց բարոյական առաքինութեանց. զի այլք հանգչին 'ի կանոնաւորեալ բաղձանս, և սա 'ի կանոնաւորիչ միտս։ Ուստի այնչափ ազնուագոյն է սա քան զայլ առաքինութիւնս, որչափ միտք ազնուագոյն են քան զայլ կարողութիւնս։ Այլ և որոշէ զխոհեմութիւնն յայլոց իմացական առաքինութեանց, եթէ 'ի հայեցողականաց և եթէ 'ի գործնականաց։ Վասն զի հայեցողականք զուզի առնուն 'ի խոկումն ճշմարտութեան, և սա է կարգեալ առ արարս։ Եւ գիտութիւնք ներգործականք հային յուղղութիւն իմացական, և սա յուղղութիւն բարոյական. և վասն այսորիկ նոքա առնեն գիտուն, և սա բարի։ Եւ ևս առաւել որոշէ զխոհեմութիւնն 'ի կարծեաց և 'ի կասկածանաց. զի այնք են անկատար ճանաչմունք, մին հայեցողական, և միւսն գործնական. բայց խոհեմութիւնն է առաքինութիւն ամենակատար, զի ունելով ստոյգ և ապահով կանոնս, ոչ խաբիլ կարող է, և ոչ խաբել կամի։ Բայց ասիցես, եթէ խոհեմութիւնն է զմարդկային արարովք, զիարդ ճշմարիտ և ապահով լինիցին կանոնք խոհեմութեան. եթէ մարդկային արարք են եղականք և ներընդունականք, զիարդ միաբանիցին անվրիպութիւն, և ներընդունականութիւն. ստուգութիւն, և անստուգութիւն։ Պատասխանեմ, թէ ճշմարտութիւնն է երկտեսակ. մին հայեցողական, և միւսն գործնական։ Հայեցողականն է համաձայնութիւն ճանաչման ընդ իմանալի առարկայն. և սա չէ անվրէպ, եթէ առարկայն չէ անվրէպ, որպէս 'ի գիտութիւնս։ Բայց ճշմարտութիւնն գործնական է համաձայնութիւն ինչ կանոնի ընդ առարկայ գործելի. և սա է ինքնին ստոյգ, եթէ գործողութիւնն չէ արգելեալ։ Բայց բայց յայտնանէ, խոհեմութիւնն կանոնաւորէ զբաղձանս՝ բանիւ, և համաձայնութիւն բանին ընդ բարեկարգեալ բաղձանս՝ ոչ սխալէ երբէք. Յետ այսորիկ՝ որոշէ զխոհեմութիւնն



'ի մեքենական արուեստէ. զի նա կանոնաւորէ զներքին ներգործութիւնս, և սա զարտաքին կերտուածս։ Եւ վասն այսորիկ նա է ճշմարիտ առաքինութիւն, և սա ոչ. վասն զի արուեստն հայի առաւելապէս 'ի բարութիւն գործոյն, և խոհեմութիւնն 'ի բարութիւն գործողին։ Հուսկ ապա որոշէ զխոհեմութիւնն ունակական 'ի ներգործականէն. զստացականն 'ի բնականէն, և զմարդկայինն յանբանականէն։ Ոչ կոչի խոհեմ, որ առնէ զմի միայն գործ խոհեմութեան. որպէս և ոչ իմաստուն, որ ճանաչէ զմի միայն ճշմարտութիւն. նա է խոհեմ, որ ունի յինքեան զսկիզբն խոհեմաբար գործելոյ դիւրաւ. և սա է ունակութիւն։ Միոյ ներգործութեան հնար է լինել առանց ունակութեան. բայց ունակութեան անհնար է լինել առանց ներգործութեանց. զի ծնունդ գոլով ներգործութեանց՝ ինքն ևս ծնանի։ Եւս և 'ի տղայս երևի ինչ ինչ խոհեմական՝ յառաջ քան զժամանակն. բայց միշտ խակ է խոհեմութիւնն, որ չէ հաստատեցեալ ունակութեամբ. և չէ հաստուն ունակութիւնն, որ չէ կերպարանեալ փորձիւ, որ անլծորդն է ընդ տղայութեան։ Անասունք մի քան զմի յաւէտ՝ արագ և զգուշաւոր հնարիւք 'ի պաշտպանութիւն և 'ի հոգաբարձութիւն անձանց, կոչին խոհեմք կամ խորագէտք. որպէս մեղուք, աղուեսք և արջք։ Բայց չէ ճշմարիտ խոհեմութիւն, ուր չիք ուղիղ բան. և չիք ուղիղ բան յայն արարող, որ չէ բաւական զպատճառն տալ զիւրոց արարից։ Ապա չեն խոհեմ անասունք, այլ բնութիւնն, որ գործէ 'ի նոսա. և ոչ այլ ինչ է խոհեմութիւնն բնութեան, բայց նոյն ինքն աստուածային տեսչութիւնն։ Այո, և մարդկային ուսուցմանց ոմանք յանասնոց են ընդունակք քան զայլս, որպէս շունք, կապիկք և փիղք, յորմէ երևի թէ և անբանք իբրև զտղայս ուսանիցին խոհեմութիւն 'ի խոհեմ մարդկանէ։ Բայց այնչափ խոտր է ընդ մէջ երևելոյ և գոլոյ, որչափ ընդ մէջ ճշմարտանմանի և ճշմարտի։ Ստոյգ է թէ որպէս խոհեմութիւնն յածի զառնելի իրօք եղականօք, նոյնպէս եղական պատկերք՝ վասն զի մարմնաւորք և զգալիք, ոչ տպաւորին յանմարմին և յընդհանուր միտս, այլ 'ի կարծողականն, որ է կարողութիւն զգալի և մարմնաւոր, հասարակ և անասնոց։ Յայս սակս անասունք, որք ունին կազմուածս մարմնականս նմանակս մարդկայնոց, ունին և կարծողական՝ պնդապահ պատկերաց եղականաց. և որ առաւել պինդ ունի զնոսա, է առաւել ընդունակ ուսանելոյ. զի այն տպաւորեալ պատկերք սովորութեամբ կամ գանիւ՝ շարժեն զանասունս և զտղայս 'ի նմանակել զայն՝ որ տեսանեն, և 'ի գործել զայն՝ զոր ըմբռնեն։ Բայց բազում ինչ ընդ մէջ է մարդկային խոհեմութեան, և այսմ անասնական նմանողութեան։ Վասն զի անասունք և տղայք՝ զհարկն ունելով փոխանակ կանոնաց, 'ի յանդիման լի-

նել նոցա այնց պատկերաց, գործեն միշտ միօրինակ: Բայց այր խոհեմ համեմատէ զպատկեր առ պատկեր. հետևեցուցանէ զմի 'ի միւսմէ, և յեղական պատկերաց կերպարանէ նախադասութիւնս հանրականս, և հպեցուցեալ զնոսա 'ի տեղիս, 'ի ժամանակս, և յանձինս, գործէ կամ չգործէ, որպէս զիարդ առաւել պատշաճ թուիցի, և այս է կանոն ուղիղ բանին. որում տղայք և անասունք չեն ընդունակ:

## ԳԼՈՒԽ ԺԱ.

*Ցուցանի թէ խոհեմութիւն իցէ՞ առաքինութիւն բարոյական:*

Ասացաքէն լուար թէ յամենայն մարդկային արարս մարթ է մտածել իմն բնական և իմն բարոյական: Բնականն ծնանի 'ի բնական կարողութենէ, և հայի յամբողջութիւն գործոյն. բարոյականն ծնանի յառաքինական պատշաճողութենէ, և հայի 'ի բարութիւն գործոյն: Մինչև լինել գործոյ ինչ բնապէս բարի, բայց բարոյապէս չար. որպէս նկար ինչ գեղապանծ, բայց անհամեստ. գործոյ ինչ՝ բնապէս չար, բայց բարոյապէս բարի. որպէս նկար ինչ սրբազան, բայց գեղջկօրէն նկարեալ: Յայնմ կատարեալ է արուեստն, բայց մոլի՝ արուեստաւորն. յայսմ առաքինի է արուեստաւորն, բայց անկատար՝ արուեստն: Արդ բարոյական բարութիւնն յատկապէս հաստատեալ է յուղղութիւն բանական բաղձանաց, և զգայական բաղձանաց. մինչև կամացն՝ համակերպիլ արդարութեան, ցասմնականին արիութեան, և ցանկականին բարեխառնութեան: Այս երեքին բարոյական ուղղութիւնք կոչին բարի սովորութիւնք. զի այն երեք կարողութիւնք կատարելագործին բարւոք ունակութեամբ, և ունակութիւնք կերպարանին սովորութեամբ, որպէս այլուր ասացաւ: Ստոյգ է թէ և ունակութիւնք արուեստից և գիտութեանց ստացանին սովորութեամբ, վասն որոյ և կոչին առաքինութիւնք. բայց ոչ կոչին բարի սովորութիւնք, զի բարութիւն նոցա է բարութիւն բնական, այլ ոչ բարոյական. են առաքինութիւնք մտաց, այլ ոչ ախորժակաց. առնեն գիտուն, այլ ոչ բարի զստացիչս իւրեանց. և իրօք բազումք եղեն ուսեալք, բայց ողգէտք. և այլք գիտնաւորք, բայց մոլիք: Յայսմ տրամաբանութենէ մարթիս եզրակացուցանել, թէ ճշգիւ խօսելով՝ ըզխոհեմութիւնն ոչ է պարտ համադասել ընդ առաքինութիւնս բարոյականս, այլ ընդ իմացականս. զի ոչ հանգչի 'ի բաղձանս, այլ 'ի միտս, իբրև զգիտութիւնս. վասն լինելոյ



իւրոյ խնկութեամբ գիտութիւն առնելի իրաց: Եւ ոչ վասն այսր նուազ է յազնուութեան քան զբարոյականս, զի որպէս ասացաւ, այնչափ է ազնուագոյն քան զնոսա, որչափ միտք են ազնուագոյն քան զբաղձանս, այսինքն քան զկամս և քան զկիրս: Բայց և այնպէս, որպէս բուսան է բոյս 'ի մէջ քարանց և քար 'ի մէջ բուսոց, նոյնպէս զխոհեմութիւնն առ առաքինութեամբք բարոյականօք մարթ է կոչել իմացական, և առ իմացականօք՝ բարոյական, վասն ներքին և փոխադարձ հաղորդութեան, զոր ունի նա միանգամայն ընդ իմացականս և ընդ բարոյականս: Հաղորդի նա ընդ իմացականս, զի քաջ խորհրդածել՝ գործ է մտաց: Հաղորդի և ընդ բարոյականս, զի գործ է նորա կանոնաւորել զբաղձանս: Վասն որոյ տիրապէս խոհեմութիւնն կոչի ակն հոգւոյ. ակն՝ որպէս իմացական, հոգւոյ՝ որպէս բարոյական: Եթէ արդարութիւն, եթէ արիութիւն, և եթէ բարեխառնութիւն գործեն բարւոք, ըստ այնմ գործեն բարւոք, ըստ որում զհետ երթան առաջնորդութեան խոհեմութեան, առանց որոյ առաքինութիւնք բարոյականք են կոյրք: Մարդն է առողջուն. գլուխն է արմատ, և անդամք ոստք: Որպիսի է մարմինն բնական, այնպիսի է և մարմինն բարոյական. առաքինութիւնքն են անդամք, խոհեմութիւնն գլուխ. նոքա ոստք, և սա արմատ: Հնար է արմատոյ լինել դալար, թէպէտ և ոստք իցեն խանձրեալ. բայց թէ արմատն է խանձրեալ, ոստք միան անպըտուղք: Հնար է մարդոյ լինել խոհեմ հայեցողապէս, թէ և բարոյապէս չիցէ առաքինի. բայց անհնար է նմա լինել բարոյապէս առաքինի, եթէ չէ խոհեմ: Վասն այսորիկ Պղատոն վերածէ զամենայն բարոյական առաքինութիւնս 'ի խոհեմութիւն. և որպէս արձանք Դեդալոսի չէին կապեալք՝ փախչէին, սոյնպէս, ասէ, առաքինութիւնք բարոյականք առանց կապանաց խոհեմութեան չեն հաստատուն, չքանան և նուաղին: Զի և խոհեմութեանն իսկ առանց բարոյական առաքինութեանց անհնար է լինել ամբողջ: Զի զի՞նչ օգուտ իցէ քաջ խորհրդածել, քաջ դատել, և քաջ հրամայել խոհեմութեանն, եթէ բանական բաղձանքն ոչ կամիցի լսել բանին, և խուժան կրից նշկահեսցէ զօրէնս նորա: Զէ՞ ճշմարիտ թագաւոր, որ հրամայէ, և ժողովուրդն չհնազանդի նմա. և զուր պարծի խոհեմութիւնն իբր դշխոյ առաքինութեանց բարոյականաց, եթէ չեն սոքա կամակատարք հրամանաց նորա: Վեր 'ի վայր է թագաւորութիւնն, յորժամ որ հրամայէն ծառայէ, և որ ծառայէն հրամայէ: Թող զի անհնար է խոհեմութեանն քաջ հրամայել, և քաջ խորհրդածել, յորժամ երկաքանչիւր բաղձանք չեն քաջ կարգաւորեալք: Զի զոր օրինակ շոգիք որ ընդ օդս՝ այլ ընդ այլոյ երևեցուցանեն ըզգոյն և զմեծութիւն արևու, սոյնպէս ծուխ կրից խանգարէ

զգաստաստան, երևեցուցեալ նմա զաներևոյթ բարին՝ ճշմարիտ բարի։ Ապա այս է առանձինն իւր առաւելութիւնն խոհեմութեան՝ 'ի մէջ այլ ամենայն առաքինութեանց, զի թէպէտ և կանոնաւորէ զբարոյական առաքինութիւնս, սակայն ինքն է առաքինութիւն իմացական. և թէպէտ հանգչի 'ի միտս, սակայն է նա առաքինութիւն բարոյական։

## ԳԼՈՒԽ ԺԲ.

*Յաղագս տեսակաց խոհեմութեան և յաղագս քաղաքական խոհեմութեան։*

Որչափ են տեսակք արդարութեան, նոյնչափ են և տեսակք խոհեմութեան. այսինքն խոհեմութիւն Քաղաքական, Տնտեսական և Անձնական։ Յայլևայլ վախճանաց այսոց իւրաքանչիւր տեսակաց ծնանին այլ և այլ կանոնք. զի յաւելն իւր վախճան տրուեսալն է սկիզբն իւրոց կանոնաց։ Ապա վախճան քաղաքական խոհեմութեան, որպէս անուն իւր ցուցանէ, է օգուտն հասարակաց։ Զի վախճան իւրաքանչիւր անհատի՝ ըստ որում անհատ, է օգուտ իւր. և վախճան իշխանին ըստ որում իշխան, է օգուտ այլոց։ Տիբերիոս 'ի յաջորդել իւրում այնմ որ գաղափարն էր իշխանաց (այսինքն Օգոստոսի), զայս վկայութիւն վկայեաց յառենի ծերակուտին. Ես յամենայն ժամ ասէի, և այսօր ևս զնոյն քարոզեմ. պարտ է քաջի իշխանի ծառայել ամենեցուն ընդհանրապէս, և իւրաքանչիւրոց մասնաւորապէս։ Զայս ճշմարտութիւն խոստովան եղև նա ինքն, ցորչափ էր իշխան, այլ մոռացաւ՝ յորժամ փոխեցաւ 'ի բռնաւոր։ Որպէս արդարութիւնն, նոյնպէս և քաղաքականութիւն, են առաքինութիւնք առընչականք առ օգուտ այլոց։ Ուստի ամենայն քաղաքականաց հաւանութեամբ, ընդ մէջ իշխանի և բռնաւորի այս միայն է էական տարբերութիւն, զի բռնաւորն թագաւորէ առ իւր օգուտ, և իշխանն թագաւորէ առ օգուտ իւրոց հպատակաց։ Յայսմ հիմնական ճշմարտութենէ քաղաքական խոհեմութեան՝ բղխեն ամենայն կանոնք թագաւորելոյ, զի բովանդակ ուղերձին առ հասարակութիւնն։

Ապա առաջին կանոնն է, թէ օրէնք լիցին օգտակարք հասարակութեան, և բարիոք պահեսցին։ Օրէնք են կապանք հասարակապետութեանց, զի կապեսցեն զամենայն ժողովուրդն 'ի մի միայն մարմին։ Վասն որոյ ըստ պէսպիսութեան օրինաց՝ պէսպէս են և հասարակապետութիւնք։ Ամենայն



օրէնք բնաւորապէս են ատելիք վասն հարկի հնազանդութեան. և ամենայն իշխանութիւն բնաւորապէս է նեղացուցիչ վասն հրամայական իշխողութեան։ Բայց օգուտ ժողովրդեան բառնայ՝ որ ինչ ատելին է յօրէնս, և որ ինչ նեղացուցիչ յիշխանութեան. զի իւրաքանչիւր ոք երջանիկ համարի զհարկն և քաղցր զհրամանն, յորժամ հրամանն յորդէ յօգուտ հնազանդելոյն, և ոչ հրամայողին։ Ապա երկու օգուտք են ժողովրդեան յօրէնս. ապահովութիւն ընչից, և բարեկեցութիւն սովորութեանց։

Ամենայն ոք սիրէ զիւր ինչս. և սիրէ զայն, որ պահպանիչ է նոցա։ Վասն այսորիկ ժողովուրդք, թէպէտ և ազատք, ներքոյ արկլին զազատութիւն իւրեանց հզօրագունի, զի բռնամբ պաշտպանեսցին 'ի բռնութենէ։ Բայց սակաւ օգտէր պաշտպանելոյն լինել ապահով 'ի վնասակարաց, եթէ ոչ ապահովանայր 'ի պաշտպանողէն։ Եւ յայտ է եթէ առանց ընչից ժողովրդոց ոչ կայ իշխանութիւնն 'ի կայի, որպէս և ոչ Ովկիանոս՝ առանց ջուրց գետոց որոց է ասպնջական։ Ուր է հպատակ, անդ և հարկ. և ամենայն հարկ բնաւորապէս ցաւ բերէ հարկատուի. որպէս եթէ հատցի մի կենդանի 'ի մարդկային մարմնոյ։ Բայց որպէս հիւանդն յանձն առնու զիւր ցաւ, յորժամ սակաւն այն որ հատանի՝ պահպանէ զմարմինն, նոյնպէս հարկն բռնական՝ լինի կամաւոր, յորժամ տեսանեն զայն կարգեալ առ հասարակաց օգուտ 'ի խաղաղութեան կամ 'ի պատերազմի։ Այլև քաղցր եղանակ պահանջողութեան առնէ զհարկն քաղցրիկ։ Պերիկլէս յորժամ կամէր նոր ինչ հարկս հանել յԱթենացւոց, յառաջագոյն ուրախ առնէր զնոսա հասարակաց խրախութեամբք, և մեծահանդէս տօնախմբութեամբք և թատերական հանդիսիւք. և յորժամ ջերմանէին յուրախութիւնն, ապա առաջի առնէր զխնդիրն. ըստ օրինակի ճարտար երակահատի, որ մեղկաշօշափ շփեալ զերակունն՝ մխէ զնշտրակն յերակն, և առնու արիւն անցաւ։

Միւս օգուտ օրինաց է առաքինի առնել զժողովուրդս։ Զի առաքինութիւնն մեղմէ զսիրտ 'ի նոսա, և հնազանդս առնէ զնոսա իւրեանց տեարց. բայց առաւել ևս կրօնն, որ ամենայն առաքինութեանց սկիզբն է և վախճան։ Վասն այսորիկ ամենայն օրէնսդիրք սատի սկիզբն արարին քաղաքական իրաւանց։ Յաստուածային օրէնս առաջին պատուիրանն է աստուածպաշտութիւն։ Յօրէնս Հելլենացւոց՝ առաջին օրէնք հրամայեցին պաշտել զԱստուած։ Յօրէնս Հռոմուլոսի առաջին խօսք այս են. Պաշտել զաստուածս հայրենիս։ Վասն այսորիկ 'ի վերայ բերէ Պողիբիոս մեծանուն քաղաքական հեթանոսաց, թէ ինքնակալութիւնն Հռովմայեցւոց զօրագոյն եղև քան զամենեսին, զի Հռովմայեցիք եղեն կրօնաւորք քան

ղամենեսին։ Այսու օրինակաւ 'ի խաւարի հեթանոսութեան այն անկատար լոյս բարեպաշտութեան օգնեաց ինքնակալութե. զի ուսցին առաւել եւս լուսաւորեալքն յԱստուծոյ։ Հպատակն որ պատուէ զԱստուած, պատուէ և զիշխանն. զի որովհետեւ թագաւորեալն է գործ աստուածային՝ հաղորդեալ մահկանացուի. յիրաւի զթագաւորն կոչեաց Սենեկա՝ փոխանորդ Աստուծոյ, և Պղատոն՝ Աստուած մարդկեղէն։ Ուստի և որ արհամարհէ զԱստուած, արհամարհէ և զիշխանն. զի որ ոչն երկնչի 'ի կայծականց, որք են գաւազանք թագաւորին երկնաւորի, առաւել եւս չերկնչի 'ի գաւազանաց՝ որք են կայծակունք Աստուծոյ երկրաւորի։ Եւ անտարակոյս՝ յանցուցեալն ընդդէմ աստուածային մեծվայելչութեան՝ ոչինչ խղճէ յանցաւորել առ մարդկային մեծափառութիւն։ Զփորձ սորա յայտնի տեսաք յանցեալ դարուն յաղմուկս Գերմանիոյ և Փռանգիոյ, որոյ սկիզբն եղև ընդդէմ եկեղեցւոյ, և յանկ ել ընդդէմ իշխանաց. զի 'ի չառնել հոգեւորական միաբանութեան, չարրան և ժամանակեան թագաւորութեան։

Ապա չէ բաւական քաղաքական խոհեմութեան գիտել՝ օրէնս դնել պիտանիս, եթէ չէ ձեռնհաս տալ պահել։ Զի կրկին նախատինք են օրինաց, տեսանել զնոսա զպարտէ կախեալս և անգոսնեալս, ուր կախել արժան էր զանգոսնիչս։ Բայց առաջին կանոն քաղաքական խոհեմութեան՝ պահելոյ օրինաց զիւրն պատիւ, է այն՝ զի օրէնսդիրն պահեսցէ զիւր մեծափառութիւն։ Մեծափառութիւն մարդկային, որպէս ասացաւ, ոչ այլ ինչ է, բայց նշոյլ իմն աստուածային մեծվայելչութեան. որ առ կարծիս հպատակաց առնէ զանձն իշխանին սքանչելի և արդոյ. զի որպէս որ յարգէ զԱստուած, յարգէ զիշխանն որպէս պատկեր Աստուծոյ, նոյնպէս որ յարգէ զիշխանն, յարգէ զօրէնս որպէս պատկեր իշխանին։ Պահի մեծափառութիւնն մեծագործութեամբ, ծանրախոհութեամբ, և անարատութեամբ վարուց։ Մինչև գործոյն երևել գործ քաջաղանց, խօսիցն՝ պատասխանատուութիւն պատգամախօսից, և վարուցն՝ անախտական գաղափար։ Անթերի լրումն մեծափառութեան սովոր է լինել փառացի կերպարանքն. մինչև 'ի մարմնաւոր բնակարանէն ճանաչել զհոգին բնակեալ 'ի նմա, թէ վեհ է և արժանի իշխանութեան։ Բայց քանզի չէ այս գործ արուեստի, այլ բնութեան, որ սիրէ երբեմն ծածկել զՍոկրատէս՝ Սիլենոսի կերպարանաւ [271], զայս պակասութեան արուեստն լնու զտեղի՝ գուն ուրեք երևութիւ. մինչև երևել իշխանին պատկեր ինչ նուիրական, որ 'ի տօնախմբութեան աւուրս միայն գնի յերևան։ Տաճարք մթինք, փառաւորք խորինք, և ստուերք գիշերականք, պատճառեն ինչ յարգ և ահարկութիւն։ Ոչինչ այնպէս է գեղեցիկ, որ 'ի հրապարակ հանեալ, ոչ լիցի ձանձրալի։ Արեգակն անդրանիկ է մոլորակաց. բայց քանզի է մշտերև, ոչ ոք գիտէ. գիսաւոր աստեղք են տխուր վիժածք օդոյ. բայց քանզի գուն ուրեմն երևին, առաւել եւս ձգեն 'ի դիտողութիւն։ Զիք ինչ այնպէս կատարեալ, յոր ոչ կայցէ ինչ թերութիւն. 'ի հեռաստանէ չնշմարի, բայց 'ի մօտոյ երևի։ Երևոյթք տեսափոխութեանց խաղալկաց 'ի բացուստ երևին տաճարք, աշտարակք, թատրոնք, անտառք, և ծովք. բայց թէ մօտ մատչիս, են կցկտուր փայտակերտք, և հնոտի կապերտք և չնչին թուղթք խաչորաներկք։ Գործք իսկ խնդրեցին զամն թագաւոր. Դիոս ընկէց 'ի ճահիճս գերան ինչ մեծ թագաւորել 'ի վերայ նոցա։ Դրնգիւն նորա, մեծութիւն և նորաձևութիւն՝ արկ յայն ճախնայլին ժողովուրդ՝ յարգ ինչ ապշութեան։ Բայց իբրև 'ի բաց եդեալ զերկիւղն, և մօտ եկեալ 'ի թագաւոր անդր, ծանեան թէ էր անզգայ իմն բուն ծառոյ, ոստեան 'ի վերայ, և արարին իւրեանց խաղալիկ։ Ստոյգ իմն է թէ 'ի թագաւորութիւնս ինչ ընտանութիւն իշխանին է առաւել հաճոյական. բայց ստոյգ է և այն, թէ այնպիսի թագաւորութիւնք առաւել նշաւակ են աղէտաւոր պատահարաց. զի ընտանութիւնն՝ գուն բանայ նորաձևութեանց։

Բայց մեծափառութիւնն չէ մեծափառութիւն, թէ չունիցի առընթեր զայն երկու դիւցազնուհիս, որք ըստ Հեսիոդոսի՝ կան միշտ արթուն աստի և անտի աթոռոյ մեծին Դիոսի։ Այն են Շնորհք պսակ 'ի ձեռին, և Վրէժխնդրութիւն սուր 'ի ձեռին. այսինքն են Երախտաւորութի և Արդարութիւն. վարձ, և պատիժ. վարձ՝ յերախտաւորել զօրինապահս, և պատիժ՝ 'ի պատուհասել զօրինազանցս։ Երախտաւորութիւնն է առաւել սիրելի, բայց արդարութիւնն առաւել եւս պիտանի. զի 'ի ժողովուրդս առաւել յորդէ չարութիւն քան զերախտագիտութիւն. և առաւել է միոյ ուրուք չարութեանն ախտս քան զբազմաց երախտագիտութեանն օգուտ։ Իմաստունն այն թագաւոր Լուդովիկոս մետասաներորդ՝ ոչ ումեք յիւրոց հպատակաց խոնարհէր զգլուխ, բայց միայն կախաղանի. ասէ, սա է որ առնէ զիս թագաւոր. զի առաւել շարժէ երկիւղ պատժի, քան յոյս վարձուց հատուցման։ Այո՝ ստոյգ իմն է թէ երկաքանչիւր այն դիւցազնուհիք թէպէտ և բարեգործ մարք, ծնանին ծնունդ չար. զի արդարութիւնն ծնանի զատելութիւն, և երախտաւորութիւնն զնախանձ։ Բայց երկաքանչիւրոցն բարի են ելք և անարատ, յորժամ երկաքանչիւրն գիտեն զհասարակաց օգուտ։ Յանժամ ատելի է արդարութիւն յորժամ պատժէ զաղաւնիս, և թողու անպատիժ զագռաւս. կամ յորժամ առաւել ցասնու 'ի վերայ յանցուցելոյն՝ քան 'ի վերայ յանցանացն։ Վասն զի միտումն 'ի կողմն առաւել զարհուրեցուցանէ զբարիս քան

զչարս. և առաւել ատելի է հասարակաց, քան օգտակար առանձնաւորին: Նոյնպէս յայնժամ երախտաւորութիւնն արկանէ նախանձուկս, յորժամ շնորհք 'ի շնորհաց վերայ անձրևեն առ մի ոք միայն. կամ յորժամ երախտաւորութիւնն է միտումն առ անձն, և ոչ հատուցումն առաքինութեան: Զի յայնժամ երախտապարտ առնէ զմի միայն, և աներախտապարտ զժողովուրդն ամենայն: Զորին հակառակն, յորժամ երախտաւորութիւնն է հատուցումն արդեանց, յայնժամ իշխանն 'ի վարձահատոյց լինել միում ումեք ուրախ առնէ զամենեսին. զի խնդան առ հասարակ, թէ առաքինութեանն փոխատրեցաւ վարձ. և զի ակն ունին թէ թերևս և նոքեանք առաքինութեամբ վայելեսցեն յայն յոր այլք վայելեցին: Մինչ զի ոչ է ատելի արդարութիւն, և ոչ նախանձուկս արկանէ երախտաւորութիւն, յորժամ արդարութիւնն 'ի պատժելն պահէ զհամեմատութիւն թուաբանական, և երախտաւորութիւնն 'ի պարգևելն պահէ զհամեմատութիւն երկրաչափական. զի երկրաքանչիւրն են յօգուտ ժողովրդեան:

Այս են գլխաւոր սկզբունք, և այս բանալիք քաղաքական խոհեմութեան՝ հայելով յիշխանն: Բայց քանզի անհնար է թէ արուեստաւոր ոք՝ թէպէտ և քաջահմուտ՝ գործիցէ անգործի, և գործի իշխանին են պաշտօնեայք և խորհրդականք, գերագոյն կանոն խոհեմութեան է, զի իշխանն մի վստահասցի յիւրն խոհեմութիւն: Պարտ է իշխանի կառուցանել 'ի սրահի այնպիսի սենեակ խորհրդոյ, որպէս թէ չպիտէին նմա խորհրդականք. բայց ընտրել իւր այնպիսի խորհրդականս, որպէս թէ ոչ կայր իւր խորհուրդ: Եւ զորին հակառակն, պարտ է խորհրդականաց լինել այնպէս խոհեմ, որ կարող իցեն լինել և իշխան. բայց և այնպէս հանդարտ, որ ոչ 'ի նախանձ արկանիցեն զիշխանն. գիտելով թէ եկամուտք են ոչ գլխաւորք, հպատակք և ոչ ընկերք, խորհրդականք և ոչ ուսուցիչք: Վասն այսորիկ պարտ և պատշաճ է զի իցեն աւելի քան զմի. զի իրողութիւնք բաշխք լաւ ևս կատարին, և բազմաւորութիւն իրագէտ առնէ զիւրաքանչիւրսն թէ չեն ինքնիշխան: Եւ թէ մին միայն բաւական լինէր ամենայնի, լինէր արգելք խնկելի: Բարւոք կանոն է ամփածածուկ պահել զիւր միտս 'ի սրտի, որ իբրև զանգիկ քիմիականաց նանրանաց եթէ յայտնի: Բայց քանզի է և վտանգաւոր 'ի կարևոր իրս գործել առանց խորհրդի, և ոչ մարթ է հարցանել խորհուրդ առանց վտանգ լինելոյ, պիտոյ է գտանել մէջ 'ի մէջ վստահութեան և չվստահութեան: Ապա քաջ կանոն է, չհարցանել զկարծիս ամենեցուն միահաղոյն, այլ իւրաքանչիւրումն ուրոյն. և ոչ որոշակի որպէս դիպուած ինչ առոյգ, այլ երկբայօրէն որպէս դիպուած ինչ կարելի, հանդերձ այլայլակ ինչ պարագայիւք, զոր յայտնեսցէ գաղտնեացն յայտարար.



և թէ արժան ևս իցէ վստահանալ ումեք զամենայն զխորհուրդն, մի վստահասցի ումեք զիւր մտաց որոշումն: Բայց եթէ իշխանն ունի վախճան զհասարակաց օգուտ, և ընտրէ խորհրդականս համաձայնս իւրում վախճանի, ամենայն խորհրդականք՝ թէպէտ և անգէտք 'ի միմեանց, գտցին համաձայնք. որպէս այլևայլ գործի ներդաշնակութեանց համաձայնին միմեանց, եթէ բնաւքն համաձայնին ընդ գլխաւոր թուաձայն:

Ապա ամենայն կանոնք քաղաքական խոհեմութեան յայս միայն բովանդակին, զի ժողովուրդն հնազանդ իցէ օրինաց իշխանին. և իշխանն հնազանդ իցէ բնական և աստուածային օրինաց: Զի թէպէտ ինքնագլուխ իշխանն վերագոյն է քան զիւր օրէնս, և քան զքաղաքական օրէնս իւրոց նախորդաց, սակայն յաստուածային և 'ի բնական օրինաց ոչ թագաւորական վեհափառութիւն կարող է զնա անօրինել, և ոչ աստուածային մեծվայելչութիւնն կամի անօրինել:

## ԳԼՈՒԽ ԺԳ.

### Յաղագս տնտեսական խոհեմութեան:

Որ ոչ գիտէ վարել զտուն իւր, ևս առաւել ոչ գիտէ վարել զթագաւորութիւն ինչ. ասէր իմաստունն Քիլոն: Զի ընդ մէջ տան և թագաւորութեան այն միայն է խտիր, որ ինչ ընդ մէջ մեծի և փոքու. իբր զի թագաւորութիւնն է մեծ ինչ տուն, և տունն թագաւորութիւն ինչ փոքրիկ: Բայց առածն Քիլոնի չէ ճշմարիտ, թէ ոչ տրոհի ընդունակութիւնն յունակութեան. այսինքն բնաւոր կարողութիւնն մտաց 'ի հանճարոյ ստացելոյ հայեցողական գիտութեամբ կամ գործնականաւ: Նկարել պատկերս մեծամեծս և նկարել պատկերս մանունս՝ թէպէտ և միաբանին 'ի մի հասարակ սեռ նկարչութեան, բայց երկու տեսակք են ընդ միմեամբք՝ տարբերք 'ի միմեանց. զի բաց յընդհանուր կանոնաց՝ որք հասարակ են երկաքանչիւրոց, իւրաքանչիւրն պահանջէ կանոնս մասնաւորս, և գործածութիւն տարբեր: Որ ունի զբնաւոր տրամադրութիւն առ նկարչութիւն հանրական, ունի զտրամադրութիւն առ երկաքանչիւր տեսակ: Բայց որ 'ի վար արկանէ զերկաքանչիւր տեսակ, է զի ստանայ զսորայս ունակութիւն, և զնորայն ոչ: Նա, ունակութիւն ունակութեան ներհականայ, և միայն գործածութիւն ապականէ զմիւսայն: Վասն այսորիկ ոչ երևեցաւ, թէ Ռուպէնս մերոյ դարուս Ապելլէս, Նրբացոյց երբեք զիւր գրիչ 'ի նկարել մանր ըստ Հանիբալի,

թեպէտ և ունէր զնորա կատարեալ հայեցողական հմտութիւն [272]։ Ըստ այսմ քաղաքականութիւն և տնտեսութիւն են երկու տեսակք խոհեմութեան, բայց այնպէս տարբերք, որպէս նկարել խոշոր, և նկարել մանր. իբր զի՝ որպէս ասացաւ, տնտեսութիւնն է փոքրիկ ինչ իշխանութիւն, և իշխանութիւնն մեծ ինչ տնտեսութիւն։ Ապա սոյգ է ամենայնիւ, թէ որ ոչ ունի զգօնութիւն 'ի վարել զտուն ինչ, ևս առաւել չունի 'ի վարել զթագաւորութիւն ինչ. զի զգօնութիւնն է բնական կարողութիւն. որ թէ ոչ զօրէ առ դիւրին արարս, ևս առաւել չզօրէ առ դժուարինս։ Բայց թէ բանն է զունակութենէ, դիւրին է պատահել, թէ իշխան ոք իցէ գերազանց վարիչ հասարակապետութեան, և ոչ իւրում տան, ոչ առ 'ի չգոյէ զգօնութեան կամ հայեցողական հմտութեան, այլ զի զբաղանք մեծամեծք ընկլնուն զմանունս. կամ զի անարժան վարկուցեալ մեծի հանճարոյ զփոքր արարս, որպէս քաջաց պատկերահանաց զամփոփ նկարս, կերպարանէ զունակութիւն խոհեմութեան 'ի հասարակաց իրաւունս, թողեալ այլոց զհոգ ընտանի իրողութեանց։ Ոչ ոք յիշխանաց եղև զգուշաւոր քան զՕգոստոս 'ի քաղաքականս. բայց և ոչ ոք քան զնա անհոգ 'ի տնտեսականս։ Կարգէր նա զամենայն իրս ինքնակալութեան, և տուն իւր յանկարգութեան կայր կործան. և որչափ հնչէր նորա համբաւ առ օտարս, այնչափ վատանունութիւն զիւրեամբ արկանէին իւր ընտանիք։ Այլ մարթ էր նմա անպարտ առնել զանձն յամօթոյ բանիւ մեծի քաջամարտին՝ առ Եւրիպիդեայ, զոր յառաջ բերէ Արիստոտէլ։

Զիա՞րդ իմաց ես միտ դնել կարողացայց,
Որ հանապազ յիրս օտարաց եմ ընկղմած։

Զնոյն ասեմ և զայնց փիլիսոփայից որք ունելով զհայեցողական գիտութիւն քաղաքականութեան և տնտեսութեան, անկիրթ էին ամենևին առ երկաքանչիւրն. զի յառաւելուլ 'ի նոսա հայեցողական ունակութեան ստացելոյ 'ի դպրոցս, պակասէր գործնականն որ ստացանի գործածութեամբ։ Այսպիսի եղև Փորմիոն իմաստակ, որոյ չէր երբէք տեսեալ զսուսեր մերկեալ 'ի պատենից, և խօսէր առաջի Աննիբաղայ զզինուորական արուեստէ, որ և կոչեցաւ որպէս ճարտարախօս յիմար [273]։ Իսկ յաղագս տնտեսական կանոնաց խօսել կամեցեալ, յայտ է թէ արուեստք բնական նկարչութեան (որ պահէ զչափ մեծութեան սկզբնատպին), և ամփոփ նկարուց (որ 'ի դոյզն քանակ վերածէ զգաղափարն) առնուն զհանրական կանոնս 'ի հանրական նկարչութենէ. բայց ամփոփ նկարն առնու զմասնաւոր կանոնս 'ի համեմատութենէ, զոր ունի նա ընդ բնական նկարչութեան, ամփոփեալ զայնս հա-



փակցութեամբ 'ի մեծէ 'ի փոքր։ Արդ ըստ այսմ տնտեսականն՝ բաց 'ի կանոնաց հանրական խոհեմութեան, որ հասարակ է քաղաքականին, տնտեսականին և անձնականին, առնու կանոնս մասնաւորս 'ի համեմատութենէ 'ի մէջ մեծի և փոքու. այսինքն 'ի մէջ կառավարութեան թագաւորութեան և կառավարութեան տան։ Համեմատին, որպէս վաղ ուրեմն ասացաւ, համեմատանուն համեմատութեամբ, տանուտէրն՝ իշխանի, կինն՝ տակիկանի, որդիքն՝ ազնուականաց, ծառայք՝ ժողովրդականաց, տունն՝ ապարանից, հպատակք՝ հարկատուաց, ազգականութիւնք՝ դաշնաւորութեանց, հրամանք՝ օրինաց, հեղինակութիւնն՝ մեծափառութեան, կերակուրք՝ տրամաբաշխական երախտաւորութեանց, յանդիմանութիւնք՝ պատժողական արդարութեան. և եթէ վախճան քաղաքականութեան է երջանկութիւն ժողովրդոց, վախճան տնտեսութեան՝ է երջանկութիւն տան։ Ապա նա է քաջ տնտես, որ քաջ ճանաչէ զհամեմատութիւնս. և քաջ գիտէ մերձեցուցանել զկանոնս քաղաքականութեան՝ տնտեսականին. ձգեալ զհամեմատութիւնս 'ի մեծէ առ փոքրն, որպէս ամփոփ նկարն 'ի բնական նկարչութենէ։

Առ ժամս պարտ էր այսմ բաւական լինել առ ընդհանուր կանոն տնտեսութեան. որովհետև վաղու ևս զրոյցք եղեն զտնտեսական իրաւանց 'ի ճառս արդարութեան։ Բայց քանզի այս է իւր բուն տեղի, ձեռնարկեմ յուշ առնել քեզ ըզկանոնս ինչ մասնաւորս, և զգործնական առածս, զորս փորձն ուսոյց խոհական արանց, և նոքա տնտեսաց։ Եւ զի պահեսցի նոյն կարգ համեմատական, խոհեմ տնտես լինի տանուտէրն եթէ հայի նա ուղիղ յիւր վախճան։ Վասն զի եթէ առաջադրի նմա օգուտ տան, լինի փոքրիկ թագաւոր. եթէ իւրն իղձ, լինի մեծ բռնաւոր, կործանումն տան, և իւր իսկ անձին։ Տանուտէրն է և օրէնսդիր, բայց ճշմարիտ օրէնք է օրինակն իւրոյ վարուց։ Բանք՝ են օրէնք թռուցիկ. վարք՝ են օրէնք հաստատունք. որոյ պահպանութիւն հաստատեալ է 'ի նմանողութեան. և չէ հնար նմանողութեանն լինել բարի, եթէ օրինակն է չար։ Թագաւորի վայել է մեծափառութիւն, և տանուտեառնն ծանրութիւն. որ վասն զի խառնուրդ իմն է լուրջ առաքինութեան՝ և առաքինի լրջութեան, ծնանի յընտանիս յարգական իմն երկիւղ և երկիւղած ինչ յարգ, բազում իւիք տարբեր 'ի ծառայական երկիւղէ. զի ծառայականն երկնչի, գուցէ պատժեսցի. և յարգականն երկնչի, գուցէ բարկացուսցէ։

Ի մշտնջենաւորել զթագաւորութիւն ինչ յաջորդական՝ չէ բաւական թագաւոր առանց թագուհւոյ. և 'ի մշտնջենաւորել զտուն ինչ չէ բաւական հայր առանց մօր։ Չէ նա ա-

ղախին. բայց և ոչ տէր տանն, այլ ընկեր։ Մատանին ամուսնական չէ շղթայ գերութեան, այլ յօդ ընկերութեան. հաստարակաց ունելով զզաւակս, զկեանս, և զանձինս. բայց 'ի հաստարակութեան անդ բարեաց այլևայլ են նոցա պաշտամունք։ Անմարթ է կնոջ ունել հաւասարութիւն 'ի հեղինակութեան, զի չունի հաւասարութիւն 'ի զգօնութեան։ Երկաքանչիւրոցն եա բնութիւնն հանգամանս հակառակս 'ի սոյն սակս։ Այրն է հոգատար և ձեռներէց՝ 'ի շահել, կին երկչոտ և կծծի՝ 'ի պահել։ Ունի նա զգօնութիւն բաւական 'ի կառավարել զտունն, այլ ոչ 'ի կառավարել զանձն։ Փիդիաս քանդակեաց զպատկեր կնոջ ընդ ոտիւք ունելով զկրիայ՝ զերկչոտ սողուն, որոյ բնաւորեալ պահել զտուն իւր չելանէ երբեք 'ի տանէ։ Իբրև չոքաւ Արտեմիս 'ի մանկաբարձութիւն երկանցն Ոլիմպեայ, Երաստրատոս այրեաց զտաճար նորա [274]. և երբ տիկինն ելանէ 'ի տանէ, անկարգութիւնք մտանեն 'ի տուն։ Երկու գլուխք 'ի միում տան՝ լինին երկու թագաւորք 'ի միում թագաւորութեան, հրէշ երկգլխի՝ իւր ինքեան թըշնամի։ Վասն այսորիկ բնութիւնն վարսիւք, և օրէնք քօղով ծածկեն զգլուխ կնոջ. զի չունի նա այլ գլուխ և կամք, բայց զառնն իւրոյ. անլծորդելի գոլով երկուց կամաց ընդ մի միայն, կամ երկուց սրտից ընդ միասիրտ համակամութիւն։ Ընդ մեկնիլ երկնային համակամութեան՝ մտանէ դժոխային գժտութիւն. և 'ի փոխել սիրոյ յատելութիւն՝ փոխի անմեղ ջահ նորա 'ի խանձող գեհենական, որ տատի անտի փչմամբ ընտանեաց արձակէ ծուխ և կայծակունս ընդ կողմն ամենայն։ Պատրուակաւ կուսակից լինելոյ միոյ 'ի կողմանց՝ ծառայք կախս և գրգիռս տածեն 'ի մէջ տերանց, զի աւար հարկանիցեն 'ի հրայրեացն. և եղկութիւնք տանն առանձնաւորի գուժեն 'ի յայանի հրապարակս, 'ի վերայ բերեալ ծիասուն և եպերանս։ Այրն սիրեսցէ զկին իւր, եթէ կամի լինել նմա սիրելի. ընտրողութեամբ գնասցէ, եթէ կամի զլինել նորա հլու. և եթէ կամի զնորա պարկեշտութիւն, ինքն լիցի պարկեշտ։ Կայիա Կեկիլիա եղև օրինակ կանանց, և Կայիոս Սեռուիոս Տուղղոս օրինակ արանց։ Վասն այսորիկ 'ի հանդէսս հարսանեաց առ Հռովմայեցիս ամենայն փեսայ հարցանէր զհարսնն. Լինիցիս դու ինձ կին բարի։ Եւ հարսնն առնէր պատասխանի, Թէ դու Կայիոս, և ես Կայիա. թէ դու լիցիս ինձ միւս Սեռուիոս, և ես եղէց քեզ միւս Կեկիլիա [275]։ Գըծուծ անտեսութիւն է կապտել զընտանիս 'ի զգեցուցանել զլծակիցն։ Հանդերձ նորա մի լիցի անարգ և մի պճնական, այլ բամբշտական. զի թէ զարդարի նա առ երևելոյ գեղեցիկ յաչս առն, աւելորդ են զարդք. եթէ առ երևելոյ գեղեցիկ յաչս օտարաց, ամօթալի են զարդք։ Որ բաէ զաղաւնոյ՝ կոչէ զօտար աղաւնիս։ Ճշմարիտ պճնութիւն կնոջ է պատիւ առնն.



և այս առաւելապէս կախեալ կայ զնմանէ։ Զի 'ի պահել նորա զպատիւ առնն, պահէ զիւրն. և 'ի պահել զիւրն, պահէ զառնն, որ է անմեկնելի։ Մի լիցէ նա միամիտ, և մի խորագէտ։ Միամիտն չիմանայ զչարութիւն ծառայից. խորագէտն ախորժէ անցանել զանցանել զխոհեմութեամբ արանց։ Երկաքանչիւր ծայրք են վտանգաւորք. բայց մին յոռեգոյն է քան զմիւսն։ Լաւ է լինել միամիտ քան խորագէտ. զի միամիտն յետ ժամանակաց լինի աչալուրջ, այլ խորագէտն յետ ժամանակաց լինի ժպիրհ։ Լինել ճարպիկ և ճոռոմ առաւել պատշաճող է սիրուհւոյ, քան տիրուհւոյ. նա՝ թէ մտանէ յուղեղ նորա նշոյլ ինչ բանաստեղծութեան, այնուհետև մի ակնկալցիս անտեսութեան. փոխան Կայիայ Կեկիլեայ ստացիս քեզ զԿորիննէ. նա լիցի Մուզա կորովաբան, և դու Սիղենոս ապաբան [276]։ Մի խօսեսցի կին ընդ օտարս՝ առանց գիտելոյ առն իւրոյ, ամենայն զրոյց գաղտագողի ծնանի ըղձայտնի կասկած. և ամենայն կասկած մտանէ 'ի ձախող միտս. զի սիրտ մարդոյ է 'ի ձախակողմն իւր. և թէ այրն չունիցի կասկած զկնոջէն, աշխարհ կասկած կալցի զառնէն։

Որդիք են սկիզբն երջանկութեան ամուսնացելոց. զի են վախճան ամուսնական սիրոյ։ Եւ զորքին հակառակն, թէ պակասի շաղկապ սիրոյ, յոլովակի սէրն 'ի բաց փախչի, և ծնայ ատելութիւն։ Ցանկալի են որդիք 'ի պահպանութիւն տեսակի, բայ առաւել ես 'ի պահպանութիւն անձանց ծնողաց։ Զի թէ հարք չափահասք կերակրեն զդեռածին որդիս, որդիքն 'ի չափ հասեալ՝ կերակրեն զզառամեալ հարս. և 'ի փոխատրել զկեանս՝ տուողին, փոխարինեն զերախտիսն որ է անփոխարինելի։ Թող զի հարկաւոր են որդիք վասն անտեսական ընկերութեան։ Վասն զի երկու ինչ պիտելով առ ամենայն գործողութիւն մարդկային, այսինքն գիտել և զօրել, գեղեցիկ յաջողէ այս գործ մեծ ընտանի կառավարութեան, յորժամ 'ի մի զուգաւորին խորհուրդք ծերոց ընդ ժրութե երիտասարդաց։ Բնաւոր իմն է զի ուստերք առաւել սիրելի են հօր, և դստերք մօր. զի ամենայն նման սիրէ զիւր նմանն։ Եւ վասն այսորիկ օրէնք են սիրոյ և բնութեան, զի ուստերք դաստիարակեսցին 'ի հօրէ, և դստերք 'ի մօրէ. զի մնուցելոցն զնմանութիւն բերելով զմնուցչաց, ուստերք լիցին քաջք և անվեհերք, և դստերք երկչոտք և պարկեշտք։ Առաւել փոյթ կալցի հայրն ճոխացուցանել զորդիս առաքինութեամբք քան բարեօք բախտի. զի զճոխութիւնս իբրև զանտարբեր բարիս հնար է մարդոյ վարել 'ի բարի և 'ի չար. և առաւել վարէ 'ի չարն քան 'ի բարին, յորժամ ոչ իւր է ստացեալ։ Բայց զառաքինութիւնս՝ վասն զի ինքնին են բարի, ոչ է հնար վարել, բայց եթէ 'ի բարի։ Թող զի առաքինութեամբք ստացանին ճոխութիւնք. այլ ճոխութեամբք ոչ գնին առաքինութիւնք։

Հօր աչալրջի պարտ է ճանաչել զընտանութիւն որդւոց. զի կարգեսցէ զիւրաքանչիւր յիւր վարժս: Բնութիւնն, որ չառնէ ինչ վայրապար, տեսչութեամբ ետ իւրաքանչիւր ծննդոց բնաւոր յօժարութիւնս պէսպէս որպէս և զկերպարանս: Որպէս ամենայն կատարեալ հասարակապետութիւն է բաղկացեալ յերից կարգաց, այսինքն 'ի քահանայից, յիշխանաւորաց և 'ի զինուորաց, նոյնպէս ամենայն կատարեալ տան պիտի ոմն եկեղեցական, ոմն իշխանական, և ոմն զօրական: Վասն զի զօրականն 'ի բանակի և 'ի դուռն արքունի, իշխանականն յատեկանութիւնս և 'ի ծերակուտի, եկեղեցականն յեպիսկոպոսարանս և յեկեղեցի, առաջինն սուսերաւ, երկրորդն գրչաւ, և երրորդն աստուածպաշտութեամբ և տրովք սեղանոյ՝ փոխս զպէտս հայթհայթեն, և ամենեքին տածեն զինչս և զպատիւ տանն 'ի պատերազմի և 'ի խաղաղութեան: Այո, ճշմարիտ է թէ այս այլևայլ բնաւոր յօժարութիւնք պահանջեն այլ և այլ մշակութիւն. և գործ է խոհեմութեան հօր լուսել զիւրաքանչիւրոց բնաւոր յօժարութիւն, և դաստիարակել զնոսա ըստ իւրեանց յօժարութեան: Չլինի ոք երբէք գերապանծ, թէ ոչ զհետ գնայ իւրոց բնաւոր ձրից: Դիւրին է ճանաչել զյօժարութիւնս 'ի խառնուածոց, 'ի դիմաց, 'ի խօսից, և 'ի գործոց, բայց առաւելապէս 'ի խաղուց նոցա, որպէս առնէին սպարտացիք. զի սիրտ արձակ և զուարթ 'ի բաց արարեալ զկեղծաւորութիւն՝ յայտնէ զյօժարութիւն: Ըղձակաթն ուսման մի՛ թողցի դեգերել յապարանս. ըղձակաթն զինուց մի՛ թողցի զքնովանիկանիլ 'ի դպրոցս. ըղձակաթն յեկեղեցի մի՛ թողցի խենեշանալ 'ի խնջոյս, և ուր ժողովք են կանանց: Մեծապէս սխալեն հարք, որք զորոշեալն յորդւոց 'ի զինուորութիւն՝ հասանել կամին նախ 'ի մարդկային իմաստից մարզս: Սուղ են կեանք, յերկարաւոր է արուեստն, ժամանակն տուեալ յայս ինչ մարզ, բառնի 'ի միւսմէ. և ոչ 'ի միումն լինի նա կատարեալ: Այլ թէպէտ և յաւելուր ժամանակ, չէ համամանունդ մարտ ընդ իմաստս. և ոչ մի՛ պատերազմ գրովք կամփրչօք: Պալլաս ծնաւ սպառազէն. պարտ և պատշաճ է զինուորի 'ի մանկութենէ զձայն լսել զփողոյ, յածել զզինուք. դիել ընդ կաթին զոգի արիական, ելանել 'ի տանէ հայրենի խնամոց, զհետ վարել դաշտաց, զի ուսցի տանել ըստ ողոցի անկոց վայրի՝ տօթոյ հարաւային, և սառնամանեաց հիւսիսոյ: Պափինի լուս եւ գալարի ընդ մայրենի հովանեաւ 'ի գետնի անդ ուր բուսաւ. բայց թունաւոր տունկ Պարսկաստանի այլուր անկեալ՝ մերկանայ զթոյն: Որ ծնեալն առ ընդունելոյ զվարդապետականն գարնեայ պսակ, մի՛ թողցէ զնա իւրոյ հովանի, զի մի՛ պանդխտութեամբ զբաղեսցի. բայց ոգի աշխոյժ և պատերազմասէր փոխադրեալ յերկիր օտար՝ լիցի առաւել ևս քաջաքական, ուսեալ կեալ ընդ կեն-



դանականս: Եւս դիւրին և եւս դժուարին է դաստիարակութիւն դստերաց քան զուստերաց. եւս դիւրին, զի են երկչոտք և ամօթխածք. բայց եւս դժուարին, զի երբեմն սէրն վանէ զերկիւղն, և զուարթութիւնն զամօթխածութիւն: Ոչ բաւեցին հարիւր աչք Արգոսի, զգուշանալ 'ի պահպանութիւն Յովայ իբրև զերինջ կայանելոյ 'ի պատրանաց Հերմէսի [277]: Յամր ամուսնասցին ուստերք, բայց դստերք վաղվաղ. զի այն է վաճառ, որ երթալով երթայ և բարուոքանայ 'ի տան, և սա վաճառ որ յոռանայ: Որդիք երթալով երթան և առաքինանան, և դստերք երթալով երթան և կորուսանեն զգեղ և զամօթ: Մեծն Կարոլոս յայնչափ իւր իմաստուն գործոց զայս միայն արար անմտութիւն, և յայնչափ իւր փառս զայս միայն յինքն էարկ կեղտ անուն, զի յապաղեաց ամուսնացուցանել զդստերս քան զարժանն: Այն ինչ սպասէր փեսայից ըստ իւրում սրտի, նոքա գտին տարփածուս ըստ իւրեանց սրտի. և ինքն առանց փեսայից ստացաւ թոռունս: Ընդհանրապէս պարտ է տանուտեառն առանց սերտ ընտանութեան լինել սիրելի, և առանց խստութեան լինել ահաւոր. զի մի՛ կարի իմն խստութիւն նկուն արասցէ զսիրտ մանկական, և մի՛ կարի իմն ընտանութիւն նուաղեսցէ զիշխանութիւնն տիրական: Մի՛ միտեսցէ նպաստաւորութեամբք 'ի մի քան 'ի միւս որդի. զի մի՛ վառեսցէ նախանձ առ սիրելին իւր, և ատելութիւն առ անձն իւր. այլ գովեսցէ և վարձահատոյց լիցի առաքինութեան. զի յուսացուցեալ զամենեսին մրցակիլ այնմ, առանց նախանձու արկցէ նախանձաւորութիւն նմանող լինելոյ: Մի՛ յայտնեսցէ մի՛ բանիւ և մի՛ գրով, թէ զոր յորդւոց ընտրեալ իցէ լինել ժառանգ. զի բարեկամս լեալ ամենեցուն, ամենեքին լիցին նորա կամակատարք: Ապա եթէ յայտնեսցէ զժառանգն, այլ ոչ սիրեսցի յայլոց, և ոչ 'ի ժառանգականէն իսկ. զի որ սպասէ մահու ուրուք, ոչ ըղձանայ կենաց նորա: Բայց և խոստովանելի է, թէ անհնարին ցաւ է, յորժամ առ անզաւակութեան տանուտէրն երևի հայր անորդի. բառնայ զբեռն զամուսնութեան՝ առանց սփոփութեան, և զաշխատութեան առանց դիտելոյ թէ ոյր աշխատէ. և տանջեալ յըղձանաց առանց ակնկալութեան, մեկնի ունի յաշխարհէ որպէս թէ չէր եկեալ յաշխարհ: Սակայն և յայսմ մեծի արկածի մեծ քաջալերութիւն զգենու խոհեմութիւնն տնտեսական որդեգրութեամբ: Սա է սքանչելի իմն բեղնաւորութիւն, իբրև զԴիոսն որ 'ի գլխոյ իւրմէ երկնեաց զԱթենաս: Այսպէս Յուլիոս կայսր և Օգոստոս և Ներուաս, ընդ հակառակս բնութեան և ճակատագրի բարեբաստ պատուասիրք բեղնաւորեցին զտուն իւրեանց և բովանդակ զինքնակալութիւնն: Ծնունդք անտարակոյս բարեբաստագոյնք. իբր զի բնական որդիք ընտրին, որպէս 'ի բնութենէ տուան, այլ որ-

գեղջկականք ընտրին որպէս ըղձալիք։ Նոքա 'ի տղայութեան պատճառէն առաւել երկիւղ քան քաջալերութիւն, և յոլովակի խակ լինին կամ խեռ կամ ապերախտ· բայց սոքա առանց աշխատութեան սննդեան՝ ծնանին չափահաս· և յառաջագոյն են ծանուցեալ, մինչ չև են ծնեալ։

Թագաւորութեանց պիտոյ են դաշնաւորութիւնք, և բարետոհմիկ տան բարեկամութիւնք· բայց մտերմագոյն բարեկամ պարտին լինել փեսայք։ Դստերք ամուսնասցին ընդ մեծատունս, զի ելեալք 'ի տանէ մի կորստասցին հանապազ տան։ Որդիք ամուսնասցին ընդ մեծուհիս· զի զաւակք ուռճասցին, և մի ապատոհմեսցին։ Որպէս զօրութիւնք անկոց, նոյնպէս զօրութիւնք տոհմից գնան միշտ յապատոհմութեն։ Զի որպէս փիլիսոփայն ասէ, և փորձն իսկ ցուցանէ, իմաստուն տոհմք յանկելին 'ի յիմարս, և պատերազմականք 'ի կատաղիս։ Բայց որպէս հինաւուրց տունկք աշխոյժ պտուղս տային, նոյնպէս տունք յապատոհմութիւն խոնարհեալք ազնուական ամուսնութեամբ անդրէն նորատունկ նորոգին։ Ամենայն գործ բնաւորապէս նմանի իւրում պատճառի· բայց և այնպէս յոլովակի երևին զի 'ի ժիրաժիր հարց ծնանին որդիք մեղկք, և յաւիծուց ճագարք։ Հրէշք անտարակոյս՝ ծնեալք 'ի խառնութենէ օտար արեան։ Վասն այսորիկ երբեմն ծնունդք ոչ հայրանան, այլ մայրանան· կերպարանեալք յանձինս զոմն 'ի նախահարց մայրենի տոհմի։ Յայն հայիլ պարտ է զգուշութեամբ, զի որպէս տուաք ինչ մարմնոյ, նոյնպէս տուաք ինչ հոգւոյ են փոխանցիկք, անցմամբ 'ի մայրական գծէ՝ որ շաղախեալ էր այնուիկ, 'ի հայրականն, որ անշաղախ էր յայնմանէ։ Որ ոք ամուսնանայ ապաւինեալ 'ի շնորհս բարեկամաց կամ հզօրաց, բազում անգամ գտանի պատրեալ· և ուր ակն ունէր թէ սկիզբն լիցի բարձրութեան, անդ սկիզբն լինի գահավէժ կործանման տան։ Զոր օրինակ մարդկային իրք իբրև զերկնային մարմինս՝ են 'ի մշտնջենաւոր շարժման, և բարձրագոյն կէտ գագաթան է առաջին կէտ յետադարձի մոլորակաց, սոյնպէս անկումն բարեկամին պարանէ 'ի կործանումն զապաստանեալն 'ի շնորհս նորա։

Իշխանի պիտին սպասաւորք, և տնտեսի պիտին ծառայք։ Երկու ազգք ծառայից պիտոյ են 'ի տան· ոմանք 'ի հոգաբարձութիւն, և ոմանք յաշխատութիւն։ Ի նոսա պահանջի աչալրջութիւն և հաւատարմութիւն, 'ի սոսա կորովութիւն և հնազանդութիւն։ Եւ վասն այսորիկ զնոսա պարտ է պահել հաւատարիմս՝ անյապաղ թոշակօք, և զսոսա զօրաւորս պատշաճաւոր կերակրովք։ Լաւ ևս են վարձուոր ծառայք, քան զարծաթագին գերիս։ Զի նոքա ծառայեն 'ի լրումն պիտոյից և ոչ բռնութեամբ· վասն որոյ սիրեն զտեարս որպէս զբարերարս։ Սոքա ծառայեն բռնի, վասն որոյ են ներքին թշնամիք· զի որ առեալ զծառայութիւն, առեալ զտէր։ Մի իցէ թիւ ծառայից աւելի քան զպիտոյն։ Որ ունի մի միայն ծառայ, ունի զնա բովանդակ· որ ունի երկուս, ունի մի և կէս· որ ունի երիս՝ ունի և ոչ մի· զի 'ի վստահիլ միոյն թէ միւսն ծառայեսցէ, և ոչ մին ծառայէ։ Եթէ տէրն է առաքինի, ծառայքն ևս լինին առաքինի։ Չար նշան է տեառն տանել ծառայ ապիրատ· զի այնպէս համարի, թէ նա ինքն ուսուցեալ իցէ նմա, կամ ուսեալ 'ի նմանէ։ Վասն այսորիկ չէ արժան տեառն թողուլ անպատիժ 'ի ծառայս զծանր յանցանս· վասն զի որ ներէ յանցանաց ինչ, հրապուրէ յևս մեծամեծս· և որ թողացուցանէ զայն, երևի հեղինակ նորուն։ Եւ չէ իսկ արժան ծանր պատուհասել վասն թեթև յանցանաց· վասն զի պատիժն փոխանակ ուղղութեան մատուցէ 'ի խոժոռութիւն, և լաւ է արտաքսել 'ի տանէ զխոժոռեալն քան ունել 'ի տան զթշնամի։ Բարւոք է գիտել զամենայն, բայց ոչ ցուցանել թէ գիտէ զամենայն։ Կարի իմն հետաքննին գտանէ ինչ, զոր ոչ կամէր գիտել· կարի իմն անհոգն տեսանէ ինչ զոր ոչ կարծէր տեսանել։ Կատոն պահէր զծառայս 'ի զգօնութեան· զի իրազեկ լիցի յամանց զինչ այլոց է գործ։ Այլ այս դեղ չար ևս է քան զախտն· զի 'ի ծառայս թագաւորէ նախանձ, և նախանձուն մատուցէ զրպարտութիւն։ Ոչ ինչ այնպէս պիտանի է կառավարչի, որպէս լրտեսութիւն· բայց և չիք ինչ քան զայն գարշ և վտանգաւոր։ Ծառայ որ աչս ունի յովազի, լեզու նորա լինի կաչաղակի։ Որ հաստուցանէ յունկն տեառն զայլոց մոլութիւնս, հասուսցէ յունկն այլոց և զմոլութիւնս զիւրոյ տեառն։ Անմեկնելի են 'ի միմեանց լրտեսութիւն և զրպարտութի, երկաքանչիւրոցն չար ծնունդ գոլով չարախօսութեան որ դուստրն է դիւական չարակամութեան։ Ամենեքին սրատես և յստակատես լրտեսք են աչք տղայոց· որ որչափ փոքր են, նոյնչափ և սուր· և որչափ յըստակ, նոյնչափ և հաւատարիմ։ Զի որովհետև աւելի սիրեն զհայր քան զայլս, և ջանան լինել նմա սիրելի, առ նա քան առ այլս տանին զրոյց զամենայնէ զոր տեսանեն։ Չիք ոք թշուառ քան զտանուտէր, որ փոխանակ անձամբ կառավարելոյ զտունն, թողու կառավարել միում 'ի ծառայից տան։ Զի ոչ ինչ կեանք է թշուառական քան զծառայութիւն· և ոչինչ ծառայութիւն է թշուառ քան զծառայանալ ծառայի։ Ապերախտ է որսորդն որ վարէ 'ի տանէ զշունն, որ երբեմն էր պիտանի, այլ առ ծերութեան եղև անպիտան։ Բայց անգթագոյն է տէրն, որ ոչ կերակրէ զծառայ ծերունի, յորմէ մինչ էրն յուժի, ընկալաւ քաջ ծառայութիւն։ Եթէ տեառն այլ չպիտի նա, նմա պիտոյ է տէր։ Յայնմ հետէ այլ ոչ զօրէ բարիս արդիւնաւորել, բայց է բարեացապարտ։ Որ ոչն է թոշակ արդի ծառայութեան, եղիցի հա-

տուցումն անցելոյն. և թէ պակասի նորա ոյժ ծառայելոյ, յաւելցի յոյլս սէրս քոյ ծառայելոյ։ Բայց և այն ճշմարիտ է, թէ մինչև ցյետին շունչ ծառայն ծերացեալ 'ի տան՝ է յոյժ պիտանի. զի ոչ այլում ումեք ապահովագոյն յանձն լինին փականք դրան և կրպակի, բայց այնմ որ գտաւ հաւատարիմ։ Եւ թէ և բոլորովին խեղանդամ իցէ, շատ է նմա աչս ունել. զի թէ չէ կարող գործել ինչ, կարող է դիտել զինչ այլք գործիցեն։ Են և այլ ծառայք, ոչ նուազ հարկաւորք՝ բայց եւս վտանգաւորք. այն են աղախնայք։ Հարկաւոր են աղախնայք 'ի ծառայել մօր և դստերաց, և մանկանց աղայոց. բայց ծառայութիւն նոցա է վտանգաւոր։ Զի թէ են պատանեակք, առաւել պիտոյս ունին ծառայութիւն ընդունելոյ քան ծառայելոյ։ Եթէ են գեռահասակք և առոյգք, փոքր ազնութիւն պիտի պահպանութեան բերդի 'ի թշնամեաց, քան աղախնայ յիւրոց ծառայակցաց։ Եւ ո՞ կարող իցէ պահել զայն, որ իւրովի ըղձանայ կորնչել։ Հաւատարութի վիճակի է միաբանեցուցիչ սիրոյ. դիւրութիւն բնութեան՝ է փեսաւէր ցանկութե, և ցանկութիւնն լծորդեալ ընդ աղքատութեան՝ է միջնորդ ընտանի գողութեց։ Ոչ բաւեն փականք՝ անջրպետել 'ի մէջ յարկաց արանց և կանանց. զի ըստ ասից վաղեմի առակին, սէրն առ իւր ունի զամենայն բանալի։ Չէ բաւական և տգեղութիւն առ պահպանութիւն համեստութեան. զի չիք կենդանի այնպէս տգեղ, որ ոչ գեղեցիկ թուիցի միում 'ի կենդանեաց։ Թող զի որ վտանգել կամի զհամեստութիւն տիկնոջ և դստերաց, կաշառէ զհաւատարմութիւն պահապան կանանց. որոց թափուր գոլով յընչից, և 'ի խորամանկութեան պատարուն, ոչինչ է նոցա դըժուարին վաճառել զայլոց համեստութիւն քան զիւրեանցն։ Այսմ անկարգութեան, որ պատահէ առէպ՝ վասն լինելոյն բնաւոր, երկու միայն են հնարք։ Մի՝ ակն ծեր ծառայի, և մանկանց աղայոց, որպէս ասացաւ. զի զգան 'ի հեռաստանէ զառաջին նշանն։ Երկրորդ՝ յառաջին նշանն թէպէտ և անստոյգս, այնպիսիս վարել խստութիւնս և զգուշաւորութիւնս և տեսչութիւնս ընդդէմ չարութեան, մինչև անմեղութեանն իսկ զահի հարկանիլ։

Որպէս հաստատակայութիւնն, նոյնպէս և տունն փակէ յինքեան երկու ինչ. զանձինս, և զինչս։ Այսպ խօսեցեալ զտնտեսութենէ՝ որ զանձամբք, մնայ խօսել զտնտեսութենէ՝ որ զինչիւք. և առ հաստատեալ կայ 'ի ստանալ զայնս, 'ի պահել, և յաւելուլ։ Են տունք յորս են մեծամեծ ստացուանի. և են յորս անձինք գեհիկք, և են յորս միջակայինք 'ի մէջ բարձր և ցած վիճակի։ Եւ իւրաքանչիւրն 'ի սոցանէ լինի ճոխ յոյժ, եթէ ունի զբաւականն իւրում աստիճանի. և երջանիկ յոյժ, եթէ շատանայ բաւականաւն։ Զի մարդ-



կային իղձն է միայն որ ճոխացուցանէ զաղքատութիւն, կամ աղքատացուցանէ զճոխութիւն։ Ըստ Հեսիոդոսի, որպէս յիշէ Արիստոտէլ, հոլլե, և կին նորա, և մանուկ, և երինջակ 'ի սնունդ նոցա բաղկացուցանէին զնախնի տունս։ Վսեմական ստացութիւնք, հոյլք ծառայից, ոսկեզօծ ապարանք, մեծածախ սեղանք, անբաւ վիճակք գետնի, կացուցանեն մեծ եւս տուն, բայց չառնեն ինչ առաւել երջանիկ. զի յառաւելուլ ընչից՝ առաւելուն և դժուարութիւնք։ Մեք աստ խօսիմք առաւելապէս զմիջակային ընչից. զի որպէս չափազանց առաւելութիւն և նուազութիւն նիւթոյ խանգարեն զարուեստ մեքենական, սոյնպէս չափազանց առաւելութիւն և նուազութիւն տան խանգարեն զարուեստ տնտեսական, յեղափոխեալ զկանոնս։ Երկու ազգ անձանց չգիտեն զոր ունին յաշխարհի աստ, այն որ չունի ինչ, և այն որ ունի յաճախութեամբ յոյժ։ Փոքրիկ նաւակք 'ի մրրկի կորնչին. մեծամեծ նաւք 'ի խաղաղական պահու միայն անպիտան։ Միջասահման ճոխութիւնք իբրև զմիջակային նաւս դիւրագոյն ղեկավարին եթէ 'ի խաղաղական պահու և եթէ 'ի մրրկի։

Երկակի են ինչք, Բնականք և Արուեստականք։ Բնականք հիմնեալ են 'ի սեպհական կալուածս. արուեստականք 'ի սեպհական հանճար։ Աւա՜ղ այնմ որ բնակեալ 'ի հասարակաց երկրի, չունի թիզ մի գետնի որ իւր իցէ։ Որ չունի տուն սեպհական, է մեռեալ անթաղ։ Է նա յաշխարհի, և արտաքոյ աշխարհի. թշուառ քան զգաղանս, որք 'ի խորխորին փապարս առնեն իւրեանց որջս, 'ի բնակութիւն իւրեանց, յառագաստ հարսանեաց, յօրոց ձագուցն և 'ի գերեզման մահու, յուսացեալք առ հասարակ թէ ծերանալ ունին, ուր մանկացան. և մեռանիլ ուր ծնան։ Տոհմք տանուտէրականք, առին զանուն 'ի տանց։ Որ չունի տուն, չունի տոհմ. օտար է նա յիւր հայրենիս։ Որ 'ի վարձու ունի զտուն, միշտ է տատանդական, ոչ բնակէ, այլ պարգխտի. վաճառէ զկահ և կարասի, և գնէ օդ։ Ոչ հաստատմամբ ածեն տունք որք առէպ տեղափոխին։ Եղիցի տունքո 'ի քաղաքս ամուրս. բայց հեռի 'ի բերդէ։ Եղիցի գեղեցիկ և առողջարար, զի գեղեցկութիւն տան օգնէ գեղեցկութեան զաւակաց, և առողջարարութիւն օդոյ՝ առողջութեան անձանց։ Լինի գեղեցիկ, թէ ունիցի դուռն և սանդուղք և սրահ մեծակառոյց. սենեակս պայծառս և զարդարեալս իմաստալից նկարուք, որք արթնեկեն յուսումն և 'ի զբօսանս։ Լինի առողջարար, թէ մի կողմն հայեսցի 'ի ջերմային հարաւ, և միւսն 'ի ցրտային հիւսիս, 'ի պատսպարել յերկաքանչիւրոց փոփոխուէ յեղանակս հակառակս։ Բայց և կողմն մի բնակութեան հայեսցի յարեւելս։ Զի առաւել գեղեցիկ և արգասաւոր են տունք, որք ընդունին զառաջին շա-

ռաւելոս արեգական։ Այսու օրինակաւ հողմ զհողմոյ փչսա 'ի բաց արասցէ. և ամենեքումեք օգն արբեսցի։ Այնչափ լիցի տունն, որ բաւական լիցէ 'ի զետեղել անդ զընտանիս, և 'ի վարձել զայն խաղաղական արուեստաւորաց. զի ոչինչ եկամուտ է ապահով՝ իբրև զվարձ տան, և ոչինչ դրացի է օգտակար իբրև զվարձուորս տան։ Ապա եթէ յաւելցի քեզ տեղի 'ի պարտէզ բանջարոյ, և 'ի հաւանոց, լիցի 'ի տան քում դիւրութիւն քաղաքի և գեղջ, զորմէ արդ հանդերձիմք խօսել։ Ձոխութիւնք առաւել բնաւորք և աղնուականք են հասք կալուածոց քոց։ Սոքա են գանձք որք ունին արմատս, և առանց ուրուք տուժելոյ՝ բազմանան։ Ոսկի կլկլի 'ի տղմոյ, բայց և այնպէս շողշողէ։ Միայն յերկրէ օրէն է ագահել զագահութիւն, պահանջելով 'ի նմանէ ընդ միոյ հազար. զի մայր է նա միապէս շռայլ և ժլատ. և վասն այսորիկ տայ որդւոց մեծամեծ տոկոսիս, գիտելով թէ ամենայն ինչ դառնայ յինքն։ Բայց չէ նա շռայլ առ անփոյթս, և ոչ գթած առ այն, որ կարի իմն գթայ 'ի նա. կամի նա սնունդ առնուլ, բայց տառապանօք։ Թէ չպարարես զնա և չարօրագրես, 'ի դերև հանցէ զքոյդ մանգաղ ունայն հասկօք։ Բայց ոչինչ այնպէս արգասաւորէ զնա, որպէս աչք քո, և ոտք քո։ Թէ ապաւինիս յարօրագիրս քո և 'ի վանապանս, կամ լիցի նա անբեր, և կամ պտղաբերեսցէ վասն նոցա և ոչ վասն քոյ։

Երկրորդ ձոխութիւնն է արուեստական, զի մթերի յարուեստից։ Եթէ արուեստն է մեքենական, ձոխութիւնք լինին մեքենականք. եթէ ցածուն, լինին ցածունք. եթէ ազատական, լինին ազատականք. զի այնպիսի են գործք, որպիսի են նոցին պատճառք։ Բայց թէ և հարստութիւնք ծնեալք յազատական արուեստից՝ առ մեքենականօք են ազնուագոյնք, սակայն առ այնոքիւք, որք ծնանին 'ի սեպհական կալուածոց՝ առանց ձեռագործելոյ տեառն, են նուաղ բնաւորք և նուաղ պատուաւորք։ Զի առաքինութիւնք՝ որպէս չեն ըղձալի վասն այլոց, այլ վասն իւրեանց, սոյնպէս ոչ հային յօգտակարն, այլ 'ի պատուաւորն։ Մինչ զի թէպէտ և գիտութիւնք ազնուագոյն են քան զկալուածս, սակայն եկամուտք կալուածոց են տիրական, և եկամուտք գիտութեանց վարձկանական։ Լումայափոխութիւն սեղանաւորաց թէ դուզնաքեայ լիցէ, օգտակար է. թէ յորդութեամբ՝ վտանգաւոր է. երկաքանչիւրն են անշնորհական ընդ քաջի ազնուութեան։ Արծաթն թէպէտ և է սպիտակափառ, սևագոյն ներկանէ զձեռս. որպէս յանդիմանեցաւ պաշտօն Օգոստոսի, որ էր սեղանաւոր։

Դիւրին է հարստի լինել բազմահարուստ, քան աղքատի լինել հարուստ. զի դժուարին է 'ի չունելութենէ անցանել յունակութիւնն, բայց ունակութիւնն գործովք հեշտեաւ առաւելու։ Ձոխութիւնն յանիրաւութենէ ժողովեալ ոչ է



ձոխութիւն, այլ աղքատութիւն. զի անմարթ է քեզ հաշուել 'ի քո հասոյթ զայն՝ որ է օտարի։ Զի ձոխութիւնն ըստացեալ յանիրաւութենէ՝ տայ քեզ կորուսանել և զարդար վաստակսդ, 'ի թշնամութիւնս, 'ի վէճս և յապաշաւս։ Բառնայ 'ի քեն զայն ինչ որ աւելի արժէ քան զձոխութիւնս, այսինքն զանուն բարի և զերկնաւոր շնորհս։ Մեծ եկամուտ է խնայութիւն, և մեծ մսխումն աւելորդութիւն։ Այն տուն է բարեկարգ, ուր չիք ինչ աւելորդ, և չիք ինչ պակասորդ։ Որ ոչ խաղայ, առնէ մեծ խնայութիւն. զի ամենայն փող և տունք և կալուածք խաղացողի կախեալ կան զքուէից. և աւուրն բախտ արկեալ զքուէսս մերթ 'ի սորա և մերթ 'ի նորա կողմն, չքաւորէ զերկաքանչիւրն, 'ի ձոխացուցանել զըղձեռնածուն։ Ապա եթէ դէպ լինի բախտի ձոխացուցանել զոք խաղիւ, զոյգ ընդ բախտի մտանէ դաւաճանութիւն. և մուտք դաւաճանք չանցանեն յերրորդ ժառանգ։ Բայց առաւել քան զխնայութիւն՝ օգուտ է ապահովել զտունն յօտարոտի և յընտանի յափշտակութեանց։ Ի ձեռաց օտարոտաց ապահովէ զնա հսկողութիւն ծառայից, և 'ի ձեռաց ծառայից՝ հսկողութիւն տանուտեառն։ Տանուտէրն, ասէ Արիստոտէս, մնասցէ յանկողին յետ ամենեցուն, և յարիցէ յանկողնոյ յառաջ քան զամենեսին. զի 'ի քուն լինել նորա ծառայք դարան գործեն։ Մի կալցի առ իւր ծառայս ամուսնացեալս. զի ամենայն կենդանւոյ՝ որոյ է ծնունդ, բնութիւնն ուսուցանէ լինել գող։ Մի թողցէ դեգերիլ 'ի տան զկարօտեալս. թէպէտ և հաւատարիմ թուիցին և բարեպաշտ։ Ի չարաչար ազգէ է գողոց, զոր հարկն ստիպէ գողանալ. քանզի գողութեան նորա չիք դարման վասն չքաւորութեան, և կարեկցութեան իսկ է արժանի վասն հարկի։ Ուստի ոչ ստգտանի այն որ ձեռն ձգեաց, այլ այն որ թողացոյց լինել ձեռնաձիգ։ Ուր տանուտէրն է ագահ, ծառայն լինի գող։ Վասն զի տեսեալ սորա թէ ագահն ոչ վարէ 'ի պէտս զոր ունի յաճախութեամբ, լնու նովաւ զիւրն պակասորդ, և գթութիւն համարի հանել 'ի բանտէ զբանտարկեալ ձոխութիւնն։

# ԳԼՈՒԽ ԺԴ.

## *Յաղագս անձնական խոհեմութեան:*

Խոհեմութիւնն Քաղաքական հայի յերջանկութիւն հասարակապետութեան. Տնտեսականն յերջանկութիւն տան. Անձնականն յերջանկութիւն անհատի: Անհատն է յառաջ քան զտեսակս, և տեսակն քան զսեռն. զի եզականք են յառաջ քան զընդհանուրս: Արդ զինչ օգուտ լիցի գիտել կառավարել զայլս, և ոչ գիտել կառավարել զանձն: Չէ իմաստուն որ անգէտ է անձին. և ոչ խոհեմ, որ չէ խոհեմ վասն անձին: Սա է խոհեմութիւն մասնաւոր, որ յառնելն իրս ուսուցանէ զհետ երթալ արդար, օգտակար և համեմատ իրաց, և խորշել 'ի հակառակաց, առ 'ի վայելել 'ի մահկանացուաց միջի յերջանիկ կեանս: Այս անձնական խոհեմութիւն հաստատեալ է 'ի միջասահմանն 'ի մէջ երկուց մոլեկան ծայրից. ոչ գործելով ոչ ըստ դիպման և ոչ թափով. այլ մտախորհ, և ուղիղ խորհրդով: Որ գործէ թափով կամ ըստ դիպման, արժանի է քամահանաց վասն ձախող ելից. և ոչ ոք գովէ զնա թէ յաջողեն ելք. զի չէ նա տէր իւրում առնելութեան: Բայց խոհեմն է տէր իւրոց գործոց և անձին. զի կիրք նկունք հնազանդին կամաց, և կամքն կանոնաւոր հնազանդի մտաց: Մինչ զի 'ի խնդրել բաղձանաց զհամեստն, և 'ի չզլանալ կամաց զխնդրեալն, մարդն է երջանիկ:

Խոհեմն կազմ ունի զմիտս այնչափ գիտութեամբ, և ըզսիրտն այնչափ առաքինութեամբ, որ ոչ տգիտութիւն և ոչ չարութիւն կարող են խոտորեցուցանել զկիրս նորա 'ի բանաւորէն: Կենդանի է 'ի նմա արդարութիւն, որ ոչ թողացուցանէ նմա գործել ինչ ընդդէմ քաղաքական օրինաց, կամ բնաւոր ուղղութեան: Կենդանի է արիութիւն, որ ոչ թողացուցանէ յանդուգն ձեռներէց լինել յամօթալի վըտանգս, կամ վեհերոտութեամբ խոյս տալ 'ի պատուաւոր վտանգից: Կենդանի է բարեխառնութիւնն, որ ոչ թողացուցանէ նմա խամրիլ 'ի դատարկութիւնս և իգանալ 'ի գըրգանս: Յատուկ է խոհեմի ձեռնարկել յօգտակար իրս. բայց ոչ համարի օգտակար լինել զայն որ չէ համեմատ և պատուաւոր, և ոչ շատ է նմա թէ վախճանն իցէ արդար և համեստ, եթէ չէ հնար ստանալ բայց անհամեստ և անիրաւ միջոցօք: Ամպարիշտ խոհեմութիւն եղև զոր արարն Տուղլիա յընթացուցանել զկառս 'ի վերայ որովայնի հօր իւրոյ, միայն զի հասցէ 'ի դէմ եդեալ սահման [278]: Ճշմարիտ խոհեմն գիտէ թէ ոչ ամենայն հաճոյք' են օրինաւորք. և ոչ զամենայն օրինաւոր արժան է առնել: Կշռէ նա խոհականութեամբ զամենայն զմիջոցս. և 'ի բազմաց անտի ընտրէ զլաւն: Հայի 'ի պարագայսն. զի բարին և չարն հաստատեալ է յաւէտ 'ի պարագայսն, քան յէութիւն իրին: Կերպարանք նորա և ձայն և շարժմունք են ծանր: Զի 'ի լինել սրտի կազմ, արտաքինք ներքնոյն լինին նմանող: Խօսի, շարժի և գործէ մեղմօրինակ. զի չառնէ ինչ 'ի թափոյ կրից: Ի գործս իւր ոչ է դիւրորոշ. և ոչ դիւրափոփոխ: Շատ խորհի, յամր որոշէ, բայց վաղ ձեռնարկէ 'ի կատարումն. գիտելով թէ ոչինչ ժամանակ է այնպէս դիպող ձեռն 'ի գործ առնելոյ, որպէս յորժամ ջերմ է սիրտն. վասն այսորիկ որոշէ անշտապ, բայց շուտափոյթ ձեռն մխէ 'ի գործ: Ոչ համարի ինչ այնպէս դիւրին, որում չիցէ հնար ընդառաջ ելանել ծանր դժուարութեան. և ոչ այնպէս դժուարին, որում արիութեամբ և զգօնութեամբ չիցէ հնար յաղթել: Եւ վասն այնորիկ յոչինչ ձեռնարկէ, զոր ոչ հասուցանէ 'ի կատար: Բայց և չէ այնպէս յամառ, զի յառաջ քան զգործելն լուեալ լաւ ևս ինչ խորհուրդ' ոչ փոխիցէ զիւր կարծիս. գիտելով թէ եզական իրողութիւնք առնելիք' են պատահականք և փոփոխականք. վասն այսորիկ փոփոխութիւնք ոչ լինին յիւրում սրտի, այլ յիրս: Յայս սակս և յետ եղանութեան իրին եթէ 'ի յաջող ելս և եթէ 'ի ձախող, ոչ ստրջանայ երբէք. քանզի գիտէ թէ յիւր կողմանէ ոչ պակասեաց. զի ունելով գիտումն ուղիղ, զայն իւր գիտումն եդ 'ի գործ: Մինչ զի 'ի բարեբաստ ելս' իւր են պարծանք. և 'ի ձախող ելս բախտին է մեղ: Չիք ինչ ներկայ, յոր ոչ ակնարկէ. չիք ինչ անցեալ, զոր ոչ վերծանէ. և յանցելոցն և 'ի ներկայից այնպէս անշուշտ զապագայիցն առնու ճաշակ, մինչև երևել գուշակ: Հիպպոկրատէս 'ի հողմոյ ինչ շնչելոյ գիտաց թէ յայնմ մարզէ գայ ժանտախտ, որ եղև իսկ: Եւ խոհեմն 'ի նշանաց ինչ զոր ոչ նշմարեն այլք' յառաջ գուշակէ զապագայ դիպուածս: Վասն այսորիկ յոչինչ իրաց խռովի, զի ոչինչ է նմա յանկարծադէպ: Համարեալ է նա պատգամախօս ոք, մանաւանդ թէ Աստուած ոմն երկրաւոր. զի որպէս ասէր Սենեկաս, այս խտիր է 'ի մէջ Աստուծոյ և խոհեմի, զի Աստուած ոչ կարէ և սա ոչ կամի գործել ինչ հակառակ ուղղութեան:

# ԳԼՈՒԽ ԺԵ.

## Յաղագս ուսանողութեան հանրական սկզբանց խոհեմութեան:

Զոր օրինակ 'ի գիտութեան պիտոյ են հայեցողական սկըզ-
բունք առ .քաջ իմաստասիրելոյ, նոյնպէս 'ի խոհեմութեան
պիտոյ են առնելի սկզբունք առ .քաջ խորհրդածելոյ. բայց
բազում ինչ ընդ մէջ է սոցա և նոցա: Սկզբունք գիտու-
թեանց են ընդհանուրք, հարկաւորք և անապացուցանելիք.
բայց սկզբունք խոհեմութեան են գործնականք, մասնաւորք,
ներընդունականք և բազում անգամ իրթինք՝ միմեանց դի-
մամարտք: Թէ դու յառաջ բերես զայս առած, Չէ պարտ խո-
հեմի փառահանել յոք, բայց միայն յանձն. այլ ոք յառաջ
բերցէ զառած սմին ներհական, Խոհեմութիւն է չապաւի-
նել յիւր խոհեմութիւն: Եւ թէ ցուցանես դու թէ այս
ինչ գործ է պատշաճող, զի է օգտակար, ցուցցէ ներհակա-
նաւն, թէ այդ գործ է անպատշաճ, զի է անիրաւ: Եւ ես
սկզբունք գիտութեան վասն զի են ընդհանուրք և յաւերժա-
կանք, զեանդամն յընդհանուր և յանմահ միտս. և սկզբունք
խոհեմութեան յոլովակի յեղծական միտս, այսինքն է 'ի խո-
կայցողական կամ 'ի կարծողականն. որ կոչի զգայութիւններ-
քին, ուր են եղական պատկերք: Այպա որպէս .քաջ իմաստա-
սիրելն հաստատեալ է 'ի գիտել համակերպել 'ի հայեցո-
ղականն և 'ի յաւերժական սկզբանց հաւաքարանութիւնս
գիտնականս, նոյնպէս .քաջ խորհրդածելն հաստատեալ է 'ի
գիտել կազմակերպել 'ի սկզբանց խոհեմութեան հաւաքա-
րանութիւնս գործնականս: Այպա այն է խոհեմագոյն քան
զայլս, որ 'ի գանձ իւրոյ յիշողութեան գանձեալ իցէ ոչ մի-
թերս հայեցողական սկզբանց, այլ գործնականաց. և յա-
ռաջադրել նմա զինչ և իցէ առնելի խնդրոյ. գիտիցէ 'ի վար
արկանել զնոսա հեշտեաւ 'ի լուծումն նորին: Յայտ է, որ-
պէս խոկ լուար, թէ .քաջ տրամաբանութիւն զհայեցողական
գիտութեանց և .քաջ խորհրդածութիւն զկրայ առնելեաց,
են ունակութիւնք կարի իմն տարանջատք. նա, յոլովակի եղ-
ծին են միմեանց, զի սկզբունքն են այլևայլք:

Արդ այս հաւաքումն 'ի խոհական առնէ՝ լինի հնդակի, զոր
մարթ է մեզ կոչել հինգ յորդ աղբիւրս խոհեմութեան: Ա-
ռաջինն է 'ի սեպհական և յընդարձակ բնական լուսոյ: Եր-
կրորդն յուսուցանելոյ իմաստասիրաց կամ ծերոց, ձայնիւ
կամ գրովք: Երրորդն յիւրմէ գիտողութենէ 'ի վերայ բնա-



կան կամ արուեստական իրաց: Չորրորդն 'ի փորձոյ դիպուա-
ծոց օտարաց: Հինգերորդն 'ի փորձոյ իւրոց դիպուածոց: Եւ
'ի յայսնել .քեզ յիւրաքանչիւր աղբերէ երախս ինչ այսց
առնելի սկզբանց, սկիզբն արասցուք յառաջնոյ անտի: Ամե-
նայն խորհրդածութիւնք առն խոհեմի յածին զծղխնեօք եր-
կուց այսց խնդրոց, եթէ զայս ինչ հնար իցէ առնել. և եթէ
զայս ինչ պատշաճ իցէ առնել: Զի բազում ինչ է պատշաճ,
բայց անհնար է առնել զնոսա. և բազում ինչ հնար է թէ լի-
նիցի, բայց ոչ է պատշաճ: Վասն առաջին խնդրոյ հարկաւոր
են սկզբունք և առածք կարելւոյ և անկարելւոյ. վասն եր-
կրորդին՝ առածք պատշաճողի և անպատշաճի: Արդ որպէս 'ի
կենդանեաց ոմն է բնաւորապէս խորագէտ քան զմիւսն 'ի
պաճարել զկերակուր և 'ի պաշտպանել զիւր կեանս, նոյն-
պէս 'ի կազմակերպել բնութեան զմարդիկ պէսպէս հանճա-
րով վասն պէսպէս վախճանի, յոմանս տերրայցց առածս և
սկզբունս իմանալիս և հայեցողականս՝ վասն գիտութեանց,
և յայլս առածս և սկզբունս գործնականս վասն մարդկային
կենաց: Այպա նախնական խնդրոյն արբանեկեն, օրինակ իմն,
այս սկզբունք. Յայնժամ իրն է կարելի, յորժամ բաւ կամաց
է և կարողութիւնն: Զի 'ի դնել վախճանի և միջոցաց, զհետ
գայ գործն. Յորժամ մեծ են կամք, իրն լեալ է կիսով չափ:
Զի կամակար կամք արեն զհանճար. վասն որոյ առի, թէ ոչ
ինչ է դժուարին այնմ որ կամի. Զոր ինչ կարող է առնել
բնութիւնն, հնար է առնել զայն և մարդկային ճարտարմու-
թեան: Զի արուեստին հնար է հետեւող լինել բնութեան,
բայց բնութեանն ոչ է հնար հետեւող լինել արուեստի. Զոր
ինչ արար ոք, կարող է առնել և այլ ոք: Որ ինչ առանց
օգնականութեան է դժուարին, հզօր օգնականութեամբ լինի
դիւրին: Եթէ հնար է լինել մասին, հնար է լինել և բոլորին:
Եթէ եղև աւելին, եղիցի և նուազն: Եթէ եղև նմանն, եղիցի
և այլ նման: Եթէ հակառակն է կարելի, միւս ևս հակառակ
է կարելի: Եւ յսկզբանց հակառակաց սոցա ցուցանի և հա-
կառակն: Երկրորդ խնդրոյն արբանեկեն այս սկզբունք: Այն
է պատշաճ, որ է բնաւոր: Զի բնութիւնն է .քաջ օրէնսդիր,
և օրէնք քաղաքականք հիմնին 'ի բնաւոր օրէնս: Այն է պատ-
շաճ, որ է օգտակար մարդկային կենաց: Զի ամենայն ոք
պարտական է պահել զայն: Եւ ևս առաւել, եթէ իրն է
հարկաւոր. զի հարկն է 'ի վերոյ քան զօրէնս: Եւ ևս՝ Այն է
պատշաճական որ է գովելի: Զի ոչ գովի, բայց միայն հա-
մեստն: Այն է անպատշաճ, որ է անիրաւ: Զի զօգուտ մեր
ոչ է պարտ գնել տուժիւք այլոց: Այն է մեզ պատշաճ, ընդ
որ բարեկամք մեր խնդան և թշնամիք մեր տրտմին: Զի ան-
հնար է լինել չար զոր ըղձանայ մեզ բարեկամ մեր, և ան-
հնար է լինել բարի զոր ըղձանայ մեզ չարակամ մեր: Այլև

Նուազ անպատշաճն լինի պատշաճական, յորժամ անհնար է խորհել յերկաքանչիւրոցն: Զի 'ի յետին նեղութեան փոքր չարն զգենու զբարութիւն: Քաջ կարող ես տեսանել թէ այս առածք չեն յաւերժական ճշմարտութիւնք իբրև զառածս գիտութեան, այլ մասնաւորք և ներընդունականք ըստ պարագայից, զորոց կախեալ կան: Զի յաւնելի իրս յիմարութիւն է խնդրել զապացուցութիւնս:

Երկրորդ աղբիւր են ուսուցմունք իմաստնոց և խոհական անձանց: Այսպիսի եղեն այն յիշատակելի ասացուածք եօթանց իմաստասիրաց Յունաստանի. որոց իւրաքանչիւրն մըզեալ քամեաց զիւր ամենայն իմաստութիւն յերկուս խօսս, որք են գերակատար կանոնք մարդկային կենաց, և առաջին սկզբունք խոհեմութեան: Կղէոբող ասէ. ՊԱՀԵԱ ՉԵՂԱՆԱԿ. որ է փականք խոհեմութեան. զի միջասահմանութիւնն է չափ պատշաճականին: Պիտակոս ասէ. ՄԻ՛ ԻՆՉ ԻՑԷ ԱՒԵԼԱԶԱՆՑ: Զի որ խորշի 'ի մոլեկան ծայրից, հարկաւ զտեղի առնու յառաքինական ուղղութեան: Պերիանդր ասէ. ՍԱՆՁԵԱ ԶԲԱՐԿՈՒԹԻՒՆ: Վասն զի բարկութեանն առաւել անսանձ գոլով 'ի կիրս, որ ոք սանձէ զսա, տիրէ այլոց ամենայնի, և 'ի բաց առնէ զքող յաչաց խոհեմութեան: Սողոն ասէ. ՀԱՅԵԱՑ Ի ՎԱԽՃԱՆՆ: Զի թէ վախճանն է թիւր, գործոյն անհնար է լինել ուղիղ. և որ հայի յելս իրաց, զգուշանայ ձեռնարկել յայն: Բիաս ասէ. ԲԱԶՈՒՄ ԵՆ ՉԱՐՔ: Քաջ կանոն քաղաքական կենաց: Զի որ գիտէ թէ բարիք են սակաւք, և չարք անբաւք, ոչ յուսկէ խաբի, զի սակաւուց հաւատայ: Թալէս ասէ. ՄԻ՛ ԼԻՆԻՐ ԵՐԱՇԽԱՒՈՐ: Զի վտանգաւոր յանձնառութիւն է խոստանալ վասն անձին, ոչ գիտելով զինչ անցք առ յապայ անցանելոց իցեն ընդ նա: Բայց վտանգաւորագոյն է խոստանալ վասն այլոց, ոչ գիտելով զայլոց կամս: Հուսկ ուրեմն Քիլոն ասէ. ԾԱՆԻՐ ԶՔԵԶ: Ուսումն խոհականագոյն քան զամենայն, զի որ ճանաչէ զիւր տկարութիւնս, ոչ խոնարհէ զպարտանոց իւր ընդ բեռամբ որ 'ի վեր է քան զկար իւր: Բայց և ուսումն դժուարագոյն քան զամենայն. զի ամենայն սէր է կոյր, և ամենայն ոք սիրէ զանձն իւր: Ստուգութեամբ գրէ զանձնէ Գաղենոս. Մինչդեռ էի ես տխմար, տխմարական թուէր ինձ այդ յիշատակութիւն. այլ իբրև 'ի չափ հասի, առաւել ևս յուշի կալայ: Հանգոյն ասացուածոցս են հասարակ առակք, որոց ծնունդ գոլով հասարակաց ձայնի՝ որ ուր ուրեմն սխալէ, և հաստատութիւն ընկալեալ 'ի ժամանակէ, որ որպէս ծերագոյն՝ քաջ քան զամենեսին գիտէ, եղեն իմաստալիր առածք խոհեմութեան: Վասն այսորիկ խրատէ Արիստոտէլ, թէ արժան է աւելի հաւատս ընծայել բանից ծերոց առանց հիման պատճառի, քան պատճառի պատանւոյ առանց հիման փորձոյ: Այսպիսի են



այն հասարակաց ասացուածք: Առաջին անմտութիւն յիմարի է համարել զանձն իմաստուն: Մի յիմար յիմարեցուցանէ զհարիւրաւորս: Որ ոչ կարէ զոր կամի, կամեսցի զոր կարէ: Շուն վաղածին ծնանի լակոտս կոյրս: Ամօթ է ասել, թէ ոչ կարծէի: Բուռն հար դիպող առթից զվարսից: Ծեծեա զերկաթ, մինչ ջերմ է: Նետ զգուշացեալ սակաւ խոցէ: Գնա յուշիկ՝ ուր դժուարին են անցք: Ընդ Կրետացիս լեր Կրետացի: Ուր յանկ ելանեն պատրանք, սկիզբն առնուն տուգանք: Ճշմարտութիւնն միշտ մնայ անսայզ: Հաստատութիւն մտաց է բազում անգամ փոխել զկարծիս:

Երրորդ աղբիւր է դիտողութիւն բնական իրաց կամ արուեստականաց, որք ընթերցեալ լինին կամ նկատին: Ոմանք ընթեռնուն զգիրս, որպէս ստայօդ զրոյցս, ժամանակ անցուցեալ և կորուսեալ: Հային յառարկայս աչօք և ոչ մտօք. ոչ իմանան թէ բնութիւնն յամենայն իւր բնական գործս ընդ խփանաւ ծածկէ զսկզբունս բարոյականս, որոց խոհեմն ուշի ուշով խելամուտ լինի, և նմանաբերութեամբ յանկաւորէ զնոսա մարդկային գործողութեանց, այսպէս. Երկչոտ կենդանեաց բնութիւնն չետ զէնս 'ի կռուել, այլ ոտունս 'ի փախչել. զի տկարի իմաստութիւն է փախչել 'ի վտանգից. և հզօրի ամօթ է չելանել նոցա ընդ առաջ. և վասն այսորիկ հզօրաց պիտոյն զէնք: Կատարելագոյն կենդանեաց յերկարագոյն ժամանակ պիտի 'ի ծնանել. և զմեծամեծ գործս պարտ է յերկարագոյն խորհել: Կենդանիք որ շուտ ծնանին, վաղ մեռանին: Ի դոյզն ջրոյ ցօղելոյ յամարայնի 'ի վերայ փոշւոյ՝ անդէն ոստնլի գորտ. բայց անդէն վաղվաղակի դառնայ 'ի փոշի. փիղն 'ի տասն ամս ծնանի, բայց ապրի ընդ դարս: Սոյնպէս գործք, որք շուտափութեամբ լինին, վաղվաղ չքանան. այլ որք յերկարաւոր մտածութեամբ, յերկար տեւանան: Յամենայն փեթակի գործասէր մեղուաց՝ ծնանի իշամեղու ինչ գործատեաց, որ ծախէ զմեղր: Նոյնպէս 'ի տունս քաջազունս ծնանի ոք անմիտ, որ վատնէ զինչս: Զնոյն ասեմ և զազատական արուեստից և զմեքենականաց: Վասն զի որովհետև խոհեմութիւնն է արուեստ արուեստից, յառածից ամենայն արուեստի հաւաքին առածք խոհեմութեան: Բժշկութիւնն է դարմանիչ մարմնոց, և խոհեմութիւնն դարմանիչ հոգւոց: Մասն ինչ բժշկութեան է նախապահողական, և մասն ինչ ապաքինողական. նա նախապահէ 'ի հիւանդութենէ, սա անդրէն յառողջութիւն հաստատէ զհիւանդն: Ըստ սմին օրինակի մասն ինչ խոհեմութեան նախապահէ զմարդ 'ի գործելոյ զչար, և մասն ինչ յանդիմանէ և յուղղութիւն ածէ զգործեալ չարն: Յորժամ ոչ օգտեն դեղք մաքրողականք, 'ի վար արկանին դեղք կտրողականք: Յորժամ ոչ օգտեն յանդիմանութիւնք, ձեռն արկանի 'ի սուր: Առաւել վտանգաւոր է

փոքր ինչ խոց անբաց, քան զվէր ինչ լայնաբաց։ Առաւել դժուարին է դարման գաղտնի չարութեան, քան զյայտնի ցոփութեան. զի յայտնի ախտին յայտնի է դեղ, այլ անտես ախտին՝ դժուարին է դարման։ Յամենայն թունաւոր զեռնոց հանեն դեղթափ, ծեծելով զնա։ Յամենայն մոլեկանէ հանենք դեղթափ մոլութեան նորա պատժելով զնա։ Դիւրաբժշկելի վէրք որոց են յանձին հասակի՝ քան զվէրս չափահասից. զի 'ի նոսա աճեցուն ոյժն առնէ նոր մարմին։ Դիւրագոյն գան յուղղութիւն մանկահասակք քան զծերս. զի 'ի նոսա դիւրագոյն կերպարանի նոր ունակութիւն. բայց ունակութիւնն հնացեալ ոչ փոխի երբէք։ Յերկրագործութենէ որ քաջ ուսուցիչն է վարուց, հնար է ուսանել զայսպիսի իմաստս։ Ուր մոլախոտք ուռճանան, երկիր է բարի՝ սերմանել անդ սերմն բարի։ Երիտասարդք որք ձեռներէց են 'ի մեծամեծ մոլութիւնս, ընդունակ են և առաքինութեանց մեծաց։ Առաւել պտղաբերէ փոքրիկ ինչ անդ քաջ մշակեալ, քան զմեծ ինչ անդաստան անխնամ թողեալ։ Լաւ ես զարգանայ չափաւոր ինչ միտ մեծաւ ջանիւ, քան զմեծ ինչ ուշ սակաւ ջանիւ։ Տունկք քաջ մշակեալք, լինին առաւել պտղաբերք. բայց իբրև պտղաբերեն բազում, վաղագոյն գօսանան։ Սոյնպէս բազում ջան առաւելու զիմաստս, բայց նուաղէ զկեանս։ Ամենայն տունկք՝ որք վաղ ծաղկին, վաղ գօսանան։ Եւ ամենայն տղայք, որոց կանխահաս է խոհեմութիւն, լինին կարճակեաց։ Սերմանել կարի վաղագոյն՝ յոլովակի խաբէ. բայց սերմանել կարի անագան՝ միշտ խաբէ։ Շուտափոյթ խորհուրդ երբեմն ոչ յաջողէ 'ի բարի. բայց կարի յամր խորհրդոց միշտ ձախող են ելք։ Ջուր երկնից արդասաւորէ յոյժ, զի բաժանորդ է յաւերժական ինչ զօրութեան. ջուրք երկրաւորք ձգեն յիւրեանս զյոռի որակութիւնս երկրի։ Ի դժուարին ձեռնարկս պարտ է հայցել զօգնութիւն երկնային. զի օգնութիւնք մարդկան են օգտախնդիրք անձանց վասն որոյ և դժրողք։ Վայրենի անկոց պտուղք են տխուրք. բայց պատուաստիւք ազնիւ ուռոյ՝ փոխեալ զբնութիւնն՝ քաղցրանան։ Եւ տունք յապատոհմութիւն խոնարհեցեալք և աղխացեալք, ազնուական ամուսնութեամբ դառնան 'ի բարետոհմութիւն։ Լաւ են պատուաստք նմանւոյն 'ի նման, քան 'ի տունկ տարազգի։ Բարեբաստ են ամուսնութիւնք և բարեկամութիւնք 'ի մէջ հաւասարից, քան 'ի մէջ անհաւասարից։ Ի նաւարկութեան արուեստէ քաղէ խոհեմն այսպիսի իմաստս. Պարտ է քաջի նաւապետի ակնարկել ստէպ յաշխարհացոյց, և գիտել թէ ընդ որով բևեռաւ և ընդ որով աստիճանաւ և ընդ որով շնչմամբ հողմոյ իցեն իւր ընթացք. առ 'ի խորշել 'ի ժայռից, 'ի ցամաքաց, և 'ի ծովափանց վտանգաւորաց։ Եւ որ ձեռնարկէ 'ի գործ ինչ մեծ,



պարտ է այնպիսւոյն հայել 'ի պարագայս տեղեաց, ժամանակաց և անձանց, առ զգուշանալոյ 'ի չար պատահարաց։ Որում չէ հնար ընթանալ ամբողջ հողմով, ընթասցի կիսով կիսով. և որում չէ հնար ընթանալ հողմալից առագաստիւ, պարզեսցէ 'ի հողմընդդէմ։ Ըստ սմին օրինակի, որ ոչն կարէ առնել՝ որչափ ինչ կամի, պարտ է նմա պատշաճել զկամս իւրում կարի։ Զի լաւ է այնպիսւոյն յառաջ խաղալ աշխատութեամբ, քան ընդ կրունկն դառնալ վերջոտութեամբ։ Յառաջ քան զմրրիկն՝ երևին նշանք հմուտ նաւուղղի։ Եւ յառաջ քան զձախող պատահարս երևին 'ի բացուստ չար գուշակութիւնք քաջի խոհեմի։ Յորժամ երկու հողմք հակառակին՝ լինի փոթորիկ, որ ընկլնու զնաւն։ Եւ յորժամ երկու գործավարք հակառակին 'ի վերայ գործոյ ինչ, վէճն յանկ ելանէ 'ի շահ երրորդին։ Վտանգաւորագոյն փորձ նաւավարութեան է, դարձուցանել ընդդէմ հողմոյ զառագաստն, 'ի դառնալ յետս։ Եւ վտանգաւորագոյնն յանէլիս է փոխել զառաջագրութիւնն յետ յառաջադէմ լինելոյ գործոյն։ Մագնիսն՝ անցեալ քան զհասարակածն՝ իբրև այլ ոչ տեսանէ զմերս բևեռ, անդէն վաղվաղակի շրջի 'ի հակակողման բևեռ։ Եւ շնորհընկալն զրկեալ 'ի շնորհաց, անդէն իսկ դառնայ յոխերիմ թշնամի այնմ յորոյ էր 'ի շնորհս։ Ըստ սմին օրինակի 'ի ճարտարապետութենէ, 'ի դարբնութենէ և յայլ ամենայն արուեստից յինքն առարկանէ խոհեմն ուսուցչական իմաստս վասն բարոյական գործոց։

Բայց քան զսոսա ազդողագոյն են իմաստք, որք քաղին 'ի կենդանի օրինակէ յաջող կամ ձախող գիտուածոց այլոց։ Վասն այսորիկ որպէս 'ի հայեցողական գիտութիւնս առաւել ազդու ձեռնարկութիւն է մակածութիւնն, նոյնպէս յառնելի իրս ազդողագոյն ձեռնարկութիւն է օրինակն։ Բայց այս ինչ ընդ մէջ է սոցա, զի մակածութիւնն ոչ եզրակացուցանէ ինչ թէ ոչ ընդ թիւ մտանեն բազում գիտուածք. բայց յօրինակն մի միայն գիտուած եզրակացուցանէ, քանզի մարթ գոլով թէ ամենեցուն պատահեսցէ որ միում միայնոյ պատահեաց, 'ի միջէ լոկոյ գիտուածոյ՝ կազմի իմաստ հանրական. որոյ յաջողուած՝ զքեզ քաջալերէ, և որոյ ձախող ելք առնեն զքեզ զգուշաւոր, և երկաքանչիւրն առնեն զքեզ խոհեմ։ Քսերքսէս արքայ Պարսից առնէր պատրաստութիւն մեծ արել Եգիպտոսի։ Խոհեմ Աթենացին տայր խորհուրդ ընդ իւրոցն յօգնութիւն հասանել Եգիպտացւոց, այսուիկ և եթ օրինակաւ. Դարեհ արքայ Պարսից յետ առնլոյ զԵգիպտոս, վաղվաղակի եանց յայսկոյս ծովու 'ի մեր փիտս։ Զնոյն արասցէ և այդ թագաւոր։ Եթէ թողացուցանեմք նմա զայս որս, Յունաստան կորնչելով կորնչիցի։ Վասն այսորիկ Կոռնելիոս Տակիտոս երաց նոր գալոց քաղաքայնոց յիւր առ_

ընդրութիւնս և 'ի պատմութիւնս, արարեալ 'ի վերայ իւրաքանչիւր դիպուածոց թէպէտ և պատահականաց՝ խորին խորհրդածութիւնս: Եւ առ 'ի քաղել ինչ ինչ օրինակ միայն 'ի Տիբերիոսէ անտի իւրմէ, ընթերցիր զառաջին վեց գիրս տարեգրութեանց, յորս բովանդակի ինքնակալութիւն այսր գոռոզի: Անտանօր ուսուցանէ քեզ Տակիտոս, թէ որովք սկըզբամբք վարիցի իշխան ոք զգուշաւոր բայց չար: Եւ թէ որովք սկզբամբք վարիլ ունիցի բարի ոք քաղաքացի ընդ այնպիսում իշխանի: Եւ օրինակօք այլոց, որ չար և որ բարի, առնէ զքեզ իմաստուն: Զի առաքինութիւնն ուսեալ լինի եթէ յառաքինութենէ, և եթէ 'ի հակառակէ նորա. զայնր զհետ երթալով, և 'ի սմանէ խորշելով: Խոհեմութիւնն է արուեստ ուղղելոյ զմիջոցս 'ի գիտել վախճան: Եթէ վախճանն է արդար, խոհեմութիւնն է խոհեմութիւն. եթէ վախճանն է անիրաւ, խոհեմութիւնն է չարութիւն: Խոհեմութիւնն է դիւրագոյն, զի գնայ ընդ հարթյատակ ճանապարհ. չարութիւնն է դժուարագոյն, զի գնայ ընդ առապար: Նմա պիտի անկեղծութիւն և առաքինութիւն. սմա կեղծիք և ապիրատութիւն. և այսպիսի էր չարայոյզ խոհեմութիւն Տիբերիոսի, որպէս եցոյց վախճանն:

Տիբերիոս որդի էր Կղոդիոսի Ներոնի, և Լիւիայ Դրուսիլլայ, որ ապա եղև ծննդական, այլ անծնունդ կին Օգոստոսի [279]: Այս Տիբերիոս ընդ հայրենի անգթութեան լծորդեաց զմայրենի կեղծիս, ուստի և հնարեաց զայն խժդժական առած. Որ ոչ գիտէ կեղծել, ոչ գիտէ թագաւորել: Առեալ Լիւիա զքաջատոհմ զաւակ կեսարեանց, 'ի բարձրացուցանել յաթոռ զայս ամբարտաւան զածած կղոդեանց. զի այն էր նորա իղձ, ըստ սովորութեան խորթ մարց: Այսմ անձկացեալ և Տիբերիոս՝ խորհէր զբռամբ ածել զինքնակալութիւնն, որ բնաւորապէս անկ էր Ագրիպպայ՝ առաջնոյ արքայազնի 'ի զարմէ Օգոստոսի: Մայր և որդի յայն առած էին ապաստան, թէ՝ Ա՛ւ թագաւորել արժան է ցրել զամենայն օրէնս բնութեան և ազգաց: Ունէր մայրն վաղեմի ինչ իշխեցողութիւն 'ի վերայ ծերակուտին, իշխեցողութեամբ զոր ունէր 'ի վերայ Օգոստոսի: Ունէր և Տիբերիոս զտրիբունական իշխանութիւն, որով աճեալ էր նորա զօրութիւն. մինչև անհնար էր չինքնակալել նմա, որ զփականսն ունէր 'ի ձեռին: Ապա լծորդեալ զխորամանկութիւն աղուեսու ընդ անգթութեան առիւծու, լռեաց զմեռանել Օգոստոսի մինչև ցհրատարակել մահուն Ագրիպպայ. որ միայն էր մնացեալ 'ի թոռանց Օգոստոսի, որ և աճընկեց էր 'ի նա քան զթոռնորդիս. զի յանհնչացուցանել զմեծն յոյսս, սրաթափ առնէր զմանուկն: Բայց և այնպէս երդուեալ, թէ ոչ իւր էր հրամայեալ սպանանել զԱգրիպպաս. այլ պալատականք, ասէ,



կատարեցին զպատուէր Օգոստոսի մինչ 'ի հոգեվարս էր. գովլին զայս առած ուսուցեալ նորոց յաջորդաց, Զապիրատութեանն մեղ արկանել 'ի վերայ իւրեանց նախորդաց: Զրպարտութիւն անհաւատալի, բայց եղև հաւատալի՝ յաւէ այնորիկ որ կարող էր սպանանել զորս ոչն հաւատային: Ապա իբրև առաջնոյ չարութեանն յաջողելով՝ հորդեցաւ ճանապարհ առ այլն ամենայն, ձեռնտուութեամբ մօրն և ծերոց ծերակուտին որ կուսակից էին նորա, ջանացաւ զի ծերակոյտն ամենայն առաջի արասցէ նմա զինքնակալութիւնն 'ի Հռովմ, մինչչև գնդաց զօրաց ընծայեալ էր զայն Գերմանիկոսի 'ի Գերմանիա: Եւ զի՞արդ հնար էր ծերակուտին զլանալ նմա զայն պատիւ, որ 'ի պատրաստի ունէր սատակել զայնոսիկ որք իշխէին խափան լինել այնմ. 'ի գործ արկեալ զբռնաւորութիւն յառաջ քան զիշխանութիւն: Ապա իւրաքանչիւր զհետ չոքան կեղծ կամաց նորա: Կամէր Տիբերիոս հաւատացուցանել ծերակուտին թէ ակամայ ընդունի զայն, որում տարփմամբ փափաքէր: Կամէր ծերակոյտն հաւատացուցանել Տիբերիոսի թէ յօժարամիտ ընծայէ, զոր զլանալ ոչ կարէր: Ապա իբրև ծերակոյտն ամենայն 'ի ծունկս անկեալ աղաչէր զՏիբերիոս յանձն առնուլ զինքնակալութիւնն, որ 'ի գիրկս նորա էր ապաստան, ետ պատասխանի ակամայ մարդահաճութեանն կեղծ ցածութեամբ, 'ի յայտնել զգաղտնի միտս ծերակուտին՝ զիւրն ծածկելով: Ոչ պատասխանէր նա երբեք մեկին, այո կամ ոչ. 'ի գործ արկեալ զբռնաւորացն զառած, խօսս վարել երկդիմիս, ըստ պատասխանատուութեանց դեղփեան պատգամախօսի, որոց ոչ իմացեալ լինէր միտ, բայց եթէ յետ 'ի գլուխ ելանելոյ գործոյն 'ի մեկնել նորա ըստ հաճոյս իւր: Վասն այսորիկ պատասխանի ետ Տիբերիոս. Ուսայ 'ի փորձոյ Օգոստոսի, քանի՛ դժուարին իցէ մի միայն մտաց՝ վարել բովանդակ զծանրութիւն հռովմէական ինքնակալութեան: Տես զի Տիբերիոս դժուարին կոչէ, այլ ոչ անհնարաւոր, զվարելն բովանդակ զինքնակալութիւն. և եթէ չառնու զայն յանձն, բայց և ոչ մերժէ. այլ թողու տեղի մեծ ևս աղաչանաց ծերակուտին. կամ յայտնագոյն ևս նշանաց ձախող կամաց նոցա, 'ի սպառսպուռ սատակումն նոցին: Եւ արդարև Ասինիոս Գաղղոս, ծեր համարձակախօս, բայց անզգոյշ, կեղծաւորեալ յանձն՝ հաւատալ թէ Տիբերիոս անկեղծ խօսիցի, ասէ. Ցքեզ հարցանեմ, կայսր, զոր մասն հասարակապետութեան՝ կամք են քո զի տացուք քեզ: Տիբերիոս յետ երկիւղագին ինչ լռութեան՝ քաղցրութեամբ ետ պատասխանի. Ոչ հաճանէ ինձ ընտրել կամ մերժել ըզմասնն, որ զամենայն անձկամ թօթափել յանձնէ: Յայժամ ծանեաւ Ասինիոս թէ այնու հարցմամբ եդ 'ի կշիռ զկեանս իւր. որպէս և եղև: Ուր Տակիտոս կերպարանէ զայս ա-

ռած. Չէր ինչ այնպէս վտանգաւոր, որպէս թեակոխել իմանալ զմիտս իշխանի: Այլ մանաւանդ, զոր կամէր Տիբերիոս, էր այն զի ինքնիշխան հրամայել՝ իւր իցէ. իսկ ծերակոյտն զյանձնեալն յիւրմէ ծառայաբար կատարեսցէ. զի ինքն միայն իցէ առաջնորդ պանծալեաց, և ծերակոյտն անգթականաց: Այսու օրինակաւ զբաւմէ ածեալ զինքնակալութիւնն սկսաւ հնարս հնարել նորոց եղեռնագործութեանց 'ի հաստատել զայն. զի առած է հասարակաց, թէ Որով արուեստիւ ստացանի բռնաւորութիւն, նովին և պահի: Երկնչէր 'ի Գերմանիկոս Կեսարէ, վասն ամուսնութեանն ընդ Ագրիպպայ՝ բարեբաստիկ մօր տոհմին կեսարեանց, բայց առաւել ևս վասն քաջութեան նորա և մեծամեծ յաղթութեանցն 'ի Գերմանիա, որով սիրելի էր յոյժ ժողովրդեան և զօրուն, և վասն այնորիկ ատեայր զնա Տիբերիոս, թէպէտ և հայրագիր էր նորա: Երկնչէր յերեւելի աւագանւոյն, զորս Օգոստոս 'ի յիշատակագրի ուրեք համարէր բաւականս ինքնակալութե. իբր զի ահընկեց են չար իշխանաց արժանաւորքն իշխանութեան: Երկնչէր 'ի յիշատակէ սպանելոյն Ագրիպպայ, որոյ վասն ամենեքին ողբային և յոգւոց հանէին: Վասն այսորիկ մի 'ի գերեաց Ագրիպպայ, որ ամենևին նման էր նմա, առեալ զանուն և զզգեստս մեռելոյ տեառն՝ մեծապէս յուսացոյց զժողովուրդն, և երկեցոյց զՏիբերիոս, որ թէպէտ և քաջ գիտէր զմահ Ագրիպպայ, բայց և այնպէս ծանեաւ թէ կեանք իւր չէին յապահովի: Երկնչէր և յիւրմէ խղճէ մտաց, գիտելով թէ՝ Որ ատեայ, է ատելի. և որ կամի լինել ահընկեց, լինի յերկեղի: Եւ վասն այնորիկ ոչ համարէր զանձն ապահով թէ ոչ սպանիցէ զամենեսին զնոսա յորոց երկնչէր. ածեալ զմտաւ զայն առած, թէ՝ Իշխանի չէ պարտ լինել 'ի միտս կասկածոտս: Ապա ձեռնարկեալ յայս երկար և դըժուարին ձեռնարկ, պատրուակ արկանելոյ անգթութեանն զարդարութիւն, զամենայն հնարս հնարեցաւ զի երևեցուսցէ զամենայն անմեղութիւն՝ վնասապարտ: Առաջինն եղև վերստին յարուցանել զթաղեալ օրէնսն՝ որ 'ի վերայ մեղանչականաց առ իշխանս. բայց յոյժ առաւել անողորմ և սարսափելի քան զնախնին: Զի առաջինն այն պատուհասէր միայն ըզգործս, կամ թէ աւելի՝ զգրուածս նախատադիրս իշխանի. թողեալ յազատ համարձակութեան անդ զբերանս ազատս: Բայց այս նոր օրէնք պատուհասս 'ի վերայ կայէին ամենայն երգիծանաց ակնարկութեանց և խորհրդոց: Ճար էր չփոխել զնորա ապիրատութիւնս՝ 'ի լինել ապիրատ: Եւ ևս, 'ի նախնումն օրինի էր տեղի ապաշխարութեան, աղերսարկութեան և ներման. և պարտ էր իշխանի դեղ մատուցանել չարաբանութեանց գործովք բարեաց: Բայց յայսմ, միայն լուր դոյզն վրիպանաց էր յանցաւորութիւն անթողլի



և մեծ եղեռն: Եւ 'ի կարկաչել անզուսպ ձայնի չարախօսաց՝ լռէր ամենայն պաշտպանութիւն ամբաստանելոյն. խզէին ամենայն կապք բարեկամութեան և ազգականութեան, լինէր յաչս տոհմային առ կենդանութեամբ զզուելի, և 'ի մահուն հայրենի գերեզմանաց անարժան, զի մի կարծեսցի թէ հասարակաց իցէ յանցանքն, որպէս գերեզմանն: Յետ այսորիկ ձեռն էարկ յայլ հնար՝ չար ևս քան զառաջինն. ելից բովանդակ զՀռոմ և զամենայն գաւառս խորամանկ լրտեսօք, ոչ միայն ռամկայնովք՝ որք սիրողքն են վատանուանութեան, այլ և ազնուազգեօք որք թշնամիքն էին աղքատութեան և փառամոլք. և ոչ ամօթ համարէին զայսպիսի անարգ սպասաւորութիւն. տեսեալ թէ չամաչէր իշխանն պատուել զնոսա իւր օգնականս կոչելով, և ճոխացուցանէր զնոսա ընչիւք դատապարտելոց: Վասն այսորիկ 'ի հաճել զմիտս բռնաւորին՝ ոչ միայն զրոյց բերելով, այլ և բարուրանս բարդելով անամօթաբար կատարէին երիս պաշտօնս, զլրտեսաց, զամբաստանողաց և զվկայից: Եւ քանզի արգելուլին օրէնք՝ տանջանօք վկայութիւն առնուլ 'ի ծառայից ընդդէմ տեարց, հաստատեաց Տիբերիոս նոր օրէնս, զի ամբաստանեալն վաճառեսցէ զծառայս իւր ամբաստանողին. որպէս զի տանջանքն լիցին օրինաւոր: Այսու օրինակաւ աճիւ պարանէր զամենեսին. քանզի այնուհետև ոչ ոք վստահ էր 'ի ծառայս տան. զի չար էր ծառայական սրտի յոյս վարձուն՝ առանց տանջանաց՝ 'ի լինել զրպարտող: Բայց մեծ քան զամենայն բռնաւորական հնարս եղև ընտրել նորա զոք բարեկամ կարի խիտ մտերիմ և անօրէն յոյժ: Եւ այն եղև Եղիոս Սէյիանոս. մտերիմ յոյժ, վասն լինելոյ նորա ընկեր և մեղսակից Տիբերիոսի յաքսորանս Հռոդոսի. և անօրէն յոյժ, զի ոչ կամէր լինել լաւ քան զտէր իւր, որ նմա միայնոյ բանայր զգաղտնիս իւրոյ խորհրդոց. իբր զի իրագէտ գոլով նոցա գաղտնեաց վարուց միմեանց, ոչ բռնաւորն ամաչէր յայտնել սպասաւորին զիւր ամպարիշտ միտս, և ոչ սպասաւորն խղճէր 'ի կատար հասուցանել զնոսա: Ապա էր սա գործեաց գործի 'ի նիւթել զնենգութիւնս, 'ի հենուլ զամբաստանութիւնս, 'ի գեղերեսել զզրպարտութիւնս, 'ի զգրգռել զծերակոյտն առ ատելիս կամ կեղակարծս, և 'ի կատարել անողորմ զգաղտնի սպանութիւնս, կամ զյայտնի կոտորածս: Այնպիսի էր երկաքանչիւրոցն արուեստ, որ բռնաւորն երևէր միտեալ 'ի գթութիւն, և սպասաւորն 'ի վայրագութիւն, ցուցեալ զանձն առաւել նախանձախնդիր բարօրութեան իշխանին քան զնոյն ինքն իշխանն: Վասն որոյ և ծերակոյտն մատուցէր շնորհակալութեամբ անսայր ակնարկութեան Սէյանոսի, քան կենդանի բարբառոյ Տիբերիոսի: Այսու նենգաւ Տիբերիոսի բարձան 'ի միջոյ ամենեքին նոքա, զորս 'ի մտի եդեալ էր նորա մատնել 'ի մահ.

ոմանք սրով, ոմանք Թունով, որպէս և ոմանք՝ իւրեանց իսկ ձեռօք. քանզի տեսեալ զանձինս՝ անմեղս և անօգնականս, զբռնաւորն առանց ողորմութեան և առանց բարկութեան, զծերակոյտն առանց ազատութեան և առանց իրաւանց, լաւ համարեցան զմահ կամաւոր քան զմահ նախատական: Յետին ճիգն նորա եղև 'ի կենաց կարճել զնոյն ինքն, յոյր ձեռն հնարեցաւ 'ի կենաց կարճել զայլսն ամենայն, կարծելով վայելել իբրև 'ի հանդէս ինչ եղերական, 'ի հոսել զնա 'ի բարձանց 'ի վայր: Գիտէր Տիբերիոս, թէ մի միայն ճանապարհ գահավէժ առնելոյ զՍէյիանոս՝ էր մեծաշուք մեծարել զնա. զի փառամոլութիւն չունելով սահման, այնչափ վերաբերի 'ի բարձունս, մինչև անտես առնել և զանձն: Քանզի բաժանորդ լեալ էր Սէյիանոս ձախորդութեանց, եղև բաժանորդ և բարեբաստութեանց: Իշխանութիւն առեալ գործակալութեան պրետորական գնդին, ոչ հանդեաւ, մինչև զամենեսին ամփոփեաց յիւր պալատ. զի կախեալ կայցեն զիւրմէ հրամանէ միայնոյ: Հոգաբարձու լեալ Դրուսոսի որդւոյ Տիբերիոսի, որում մնայր յաջորդ լինել ինքնակալութեան, ամուսնացոյց զդուստր իւր ընդ Կղոդիոսի իշխանի որ յազգականութենէ Օգոստոսի, 'ի հաստատել զիւրն ակնկալութիւն. և անդէն զհետ պնդի ամուսնանալ ընդ Լիւիայ կնոջ Դրուսոսի: Մինչչև ածեալ զնա կնութեան՝ շնացաւ ընդ նմա. զի արբուցեալ Դրուսոսի դեղ մահու, բացցէ ինքեան ճանապարհ ինքնակալելոյ. և ոչ ինչ դժուարին եղև հրապուրել զնա յայն անգթութիւն, յետ կորուսանելոյ նորա զհամեստութիւն: Հուսկ ուրեմն իբրև յայտնեցան յայսմ յետնում նուագի՝ նորա ամենայն անօրէնութիւնք, որոց հասեալ 'ի ծագ ինքնին եկին 'ի յայտ, յանկ ել եղերերգութիւնն կատարմամբ ամենայն զարմի նորա մինչև ցանմեղ սանդխացս: Եւ յետ սակաւուց Տիբերիոսի իսկ եհաս օրհասն, աղաղակելով ամենայն ժողովրդեան. Տիբերիոս ընկեցի 'ի Տիբերիս: Այսպէս իմաստք հիմնեալք 'ի խորամանկութիւն և ոչ 'ի խոհեմութիւն, ընդ ճանապարհ ընդ նոյն, որով կարծիւր լինել կանգնումն, առաջնորդեն 'ի կործանումն:

Վերջին աղբիւր խոհեմութեան է փորձ իւր: Բայց քանզի այս առածք՝ ըստ պէսպէս մանաւոր դիպուածոց, որոց հնար է պատահել ամենայն մարդկան՝ են անբաւք. վասն այսորիկ պարտ է թողուլ զի իւրաքանչիւր ոք արասցէ զայն իւրովք ճգամբք: Դատ է ասել ընդհանրապէս, թէ ոչինչ այնպէս իմաստուն առնէ զմարդ, որպէս փորձն. զի ոչինչ լաւագոյն տպաւորի 'ի սիրտ քան զկսկիծ:



# ԳԼՈՒԽ ԺԶ.

## *Յաղագս ներգործութեանց խոհեմութեան:*

Հինգից ներգործութեանց պարտ է ընթացակից լինել առ գործողութիւն ինչ կատարելապէս խոհեմ: Առաջինն է կամաց. որոյ տենչացեալ առարկայի իմիք պիտանացուի և բարւոյ առ մարդկայինն կեանս, շարժէ զմիտս 'ի գտանել միջոցս առ ստանալ զայն: Երկրորդն է մտաց. որոյ հնազանդեալ կամաց՝ հետազօտէ բազում միջոցս, որոց հնար է պիտոյ լինել առ ստացումն տենչացեալ վախճանին: Երրորդն է նոյնպէս մտաց. որոյ քննեալ մի ըստ միոջէ զմիջոցս, և բաղդատեալ միմեանց, ընտրութիւն առնէ՝ թէ ո՞ր լաւ իցէ: Չորրորդն ևս է մտաց. որ զեկուցանէ կամաց, զոր համարեցաւն լաւագոյն, և յորդորէ զնա գիրկս արկանել այնմ: Հինգերորդն է միայնոյ կամաց. որ վասն զի յայր խոհեմ ենթադրի կարգաւորեալ՝ զհետ երթայ բարւոյ խորհրդոյ. և հրամայէ զայն գործադրիչ կարողութեանց:

Առաջին ներգործութիւնն պատկանի ոչ խոհեմութեան, այլ արտնջականին, որում անկ է ըղձանալ համեստ իրաց, և խորշել 'ի հակառակաց: Մինչ զի խոհեմութիւնն ոչ թէ առաջադրէ զվախճան, այլ միայն խորհի զմիջոցաց՝ առ 'ի հասանել այնմ: Որպէս արդարակորով իշխան՝ 'ի մտի եդեալ մարտ դնել ընդ սահմանակցին, ժողովէ զխորհրդականս պատերազմի, ոչ առ հարցանելոյ խորհուրդ, եթէ պա՞րտ իցէ յարուցանել զպատերազմ, այլ թէ ո՞ր ճանապարհ լաւ օգուտ իցէ 'ի յարուցանել զայն. սոյնպէս յայր խոհեմ՝ ուղիղ գոլով կամաց և մտաց, կամք ոչ առաջադրեն մտաց, բայց եթէ զուղիղս, վասն որոյ և միտք ոչ խորհին 'ի վերայ բարութեան վախճանին, այլ միայն զմիջոցաց: Եւ այս է պաշտօն խոհեմութեան, անուանեալ յԱրիստոտելէ εὐβουλία, որ է բարեխոհութիւն: Անհնար է խորհրդոյն լինել բարի, եթէ վախճանն է չար: Եւ թէ և միտք գտանիցեն կարի իմն նուրբ և զօրաւոր միջոցս առ հասանելոյ 'ի չար ինչ վախճան, չէ խորհրդածութիւն ճշմարիտ, այլ այլաբանեալ. ոչ է խոհեմութիւն, այլ չարութիւն. ոչ է εὐβουλία (բարեխոհութիւն), այլ κακοβουλία (չարախոհութիւն). որպիսի է աւազակացն, որք խորհիցին թէ զիա՞րդ կողոպտեսցեն զփարթամ ոք վաճառական: Եւ այսպիսի էր խոհեմութիւն Տիբերիոսի և Սէյիանոսի:

Ճշմարիտ բարեխոհութիւնն է ուղղութիւն մտաց 'ի հասանել բարւոք միջոցօք առ բարի ինչ վախճան: Եւ վասն այսո-

ըին հետազօտէ զբազում միջոցս և զամենայնն քննէ, առ ընտրելոյ զլաւն: Ոմանք 'ի բնէ վիճակեալ են այնպիսի երագութեան մտաց, որ յառաջագրել վախճանի ինչ, անդէն վաղվաղակի 'ի պատրաստի ունին միջոց իմն առ ստանալ զայն. և յայնմ զկոյ առնուն, և երբեմն հաստինեն խոկ: Այլ այդ չէ ճշմարիտ խոհեմութիւն. զի չէ ճշմարիտ խորհրդածութիւն: Խոհեմն հայեցեալ 'ի վախճանն, 'ի խորհուրդ կոչէ զամենայն զիւր խոկմունս. հարցանէ իւրում մտերիմ յիշողութեան զնմանակ դիպուածս. զի չիք ինչ որ ոչ լեալ իցէ յառաջ. հայի յօրինակս. քննէ, զինչ ընդ մէջ է նոցա. 'ի միտ առնու զանցեալ անցս. մատուցէ յապագայս. խնդրէ միջոցս յաղբերաց անտի, ուստի իմաստասէրն խոյզ և խնդիր առնէ միջնորդ եզերաց հաւաքաբանութեանց, այսինքն է 'ի պատճառաց արարչականաց, նիւթականաց, տեսականաց, և յաւարտականաց. հայի թէ սկիզբն գործողական, այսինքն զօրութիւնն գործելոյ իցէ 'ի նմա, թէ արտաքոյ նորա: Վասն զի եթէ գործողական կարողութիւնն է 'ի կամս գործողին, այլ ինչ ոչ պիտի, բայց միայն իւր կամք: Բայց թէ կախեալ կայցէ զայլմէ, որ կարող է օգնել կամ խափանել, հայի թէ զիարդ հնար իցէ բառնալ զխոչս և ստանալ օգնութիւնս. յորդորմամբք, թէ փողովք, թէ աղաչանօք, թէ սպառնալեօք, թէ բռնութեամբ: Զի ոչ ոք խոհեմ խորհրդածէ, բայց եթէ զիրօք, որ յիւր ձեռս են. որպէս այլուր ասացաւ: Բաց յայսմանէ հայի 'ի պարագայս տեղւոյ, ժամանակի և անձանց: Քանզի յայտ է թէ այս ինչ միջոց յայն ինչ պարագայս լինի ազդու և օգտակար, որ յայլս լինէր ներհակ և վնասակար: Եւ ուր պակասին մարդկային օգնութիւնք, պարտ է դիմել յաստուածայինսն: Որպէս քաջ իմաստասէր գտանէ բազում միջնորդ եզերս 'ի ցուցանել զմի և նոյն եզրակացութիւն, սոյնպէս խոհեմն գտանէ բազում միջոցս առ որոշել զգործողութիւն ինչ. և զամենայն քննէ և կշռէ զդիւրութիւն և ըզհետեւակս նորաւն. քանզի չիք ինչ այնպէս ամօթալի առն խոհեմի, որպէս ասել թէ զայդ չածի զմտաւ: Ոչ է պարտ երբէք խորհրդածութեանն լինել այնպէս երկար, մինչև 'ի խորհրդածել անդ՝ դիպողութեանն 'ի ձեռաց ելանել. զի որպէս ասացաք, կարի իմն շտապ յոլովակի խաբէ. բայց կարի իմն դանդաղանք միշտ խաբեն: Զհուսկն ասացից. չէ խոհեմ խորհրդածութիւնն. թէպէտ և յաջողեսցէ գործն, եթէ յաջողել գործոյն չիցէ 'ի զօրութենէ խորհրդածութեան: Որպէս չէ ճշմարիտ գիտութիւն եզրակացուցանել զճշմարիտ ինչ նախադասութիւն 'ի սուտ առաջարկութեանց, նոյնպէս չէ ճշմարիտ խոհեմութիւն հասանել 'ի դէմ եդեալ վախճան յետ անմիտ խորհրդածութեան: Առաւել է գովելի յետ քաջի խորհրդածութեան՝ չհասանել 'ի վախճան, քան հա-



սանել 'ի վախճան յետ չարաչար խորհելոյ: Ի պաշարել Աթենացւոց զՍպարտացիս 'ի կղզւոջ ուրեք, Նիկիաս քաջ զօրավարն Աթենացւոց՝ թէպէտ և գուն գործէր ամենայն իրօք, սակայն դեռ չէր յաղթեալ նոցա: Կղէոնն երիտասարդ յանդուգն անձնամատոյց եղև սիրել նոցա յաւուրս քսան: Անժուժութիւն Աթենացւոց շրջեցաւ յանմտութիւն. առին վաղվաղակի զհրամանատարութիւնն 'ի Նիկիասայ, և ետուն Կղէոնին: Դէպ եղև զի յայնմ պահու Սպարտացիք, որք 'ի նեղելոյ Նիկիասայ՝ յոգիս էին ապաստան, հաստատեցին 'ի միտս տալ զկղզին Աթենացւոց. և արարին այնպէս: Ժողովուրդն մեծաբարբառ գովէր զԿղէոնն, այլ ծերակոյտն շնորհ ունէր Նիկիասայ, գիտելով թէ յաղթութիւնն էր 'ի խոհեմութենէ նորա՝ թէպէտ և յանծանօթէ, և ոչ 'ի յանդգնութենէ Կղէոնի՝ թէպէտ և յաջողելոյ:

Բայց չեն ինչ պարծանք գիտել գտանել միջոցս յոլովս և օգտակարս առ վախճան, յորժամ չգիտիցէ ոք գտանել՝ որ իցէ միջոց ճահողագոյն: Ապա այս դատումն, զոր Արիստոտէլ կոչէ զննէսիս, այսինքն հանճար, կամ հաստատուն վճիռ, է այն յոյր սակս այր խոհեմ կոչի զգօն և անյաղթող և քաջասիրտ յանձնելի իրս: Այո, բազումք են ճոխք 'ի գիւտս և 'ի միջոցս. բայց տարտամ յամենայնի 'ի նոսա, նմանեալ գրաստու, որ զմէջն ունելով զերկուց պարկաց հաճարոյ, զոր բարձեալ ունէր յերկոցունց կողմանց, կայր 'ի մէջն նդողեալ: Բայց ճշմարիտ խոհեմն առատ է 'ի գտանել, և անսայթաք 'ի դատել և հաստատուն 'ի դատումն իւր: Զի քաջ խորհեցաւ և քաջ դատեաց. ոչ կարէ փոխել զիւր կարծիս, թէ ոչ փոխին պարագայք: Բայց 'ի փոխել պարագայից՝ չէ ամօթ փոխել զկարծիս. զի փոփոխութիւնն ոչ է 'ի նմա, այլ՝ յառարկայն: Ապա զննէսիսն կամ հանճարն է ուղղութիւն մտաց, որով խոհեմն ուղիղ դատէ զմիջոցաց, զորոց ուղիղ խորհեցաւ: Որ եթէ այս դատումն համաձայնի օրինական արդարութեան, կոչի զգօնութիւն. եթէ բնական արդարութեան, կոչի գերզգօնութիւն:

Չորրորդ ներգործութիւն խոհեմութեան համարի Արիստոտէլ սեպհականագոյն խոհեմութեան. այն է կշռադատեալ և հրամայողական ներգործութիւն ինչ մտաց, որ շարժէ և գրգռէ զկամս ձեռնարկել 'ի միջոցն, զոր ինքն լաւ համարեցաւ. զի 'ի գլուխ ելցէ գործն: Վասն զի և 'ի գիտութիւնս պահանջի հետազօտութիւն միջնորդ եզերաց, և ուղղութիւն դատման յորոշել զլաւագոյնս, բայց ոչ է հարկ, թէ իցէ հրաման ինչ մտաց, որպէս յառնելի իրս, 'ի շարժել զկամս: Բայց են և արգոյ իմաստասէրք, որոց բացատրեալ զհրամայել մտաց, համարին զայս չորրորդ ներգործութիւն մտաց ոչ պատշաճիլ խոհեմութեան. իբր զի կամաց միայն է

սեպհական, որպէս ազատ կարողութեան՝ լինել հրամայողական։ Վասն որոյ զայդ ներգործութիւն աւելորդ համարին խոհեմութեան. զի թուի նոցա թէ 'ի դնել հետազօտութեան միջոցաց, և հաստատուն դատման լաւագոյն միջոցի, առանց ինչ հրամայելոյ մտաց՝ կամքն հաճեալ ընդ վախճան և կանոնաւորեալ, դիմէ ազատօրէն առ 'ի գործ դնել։ Այլ Արիստոտէլ խորագոյն ևս նկատեալ թէ միտքն երևեցուցանէ կամաց զիւր որոշողական դատումն՝ որպէս ուղղութիւն և կանոն և օրէնք տանելեաց, որք են սեպհական ներգործութիւնք մտաց՝ կարգեալք 'ի շարժել և 'ի դրդել զկամս, վասն այսորիկ կոչէ զայս երևեցուցումն հրաման մտաց։ Ստոյգ է թէ որովհետև միտքն է կարողութիւն բնաւորապէս արարող, և կամքն կարողութիւն ազատ, հրամայելն մտաց ոչ է ազատ իբրև զհրամայել կամաց. մինչ զի միտքն ոչ կարէ չհրամայել կամաց, այլ կամքն կարող է չհնազանդել մտաց։ Բայց յայր խոհեմ. քանզի միտք և կամք են ուղիղք, և կիրք են կարգաւորեալք. չէք ինչ որ ընդդէմ դառնայ ուղղութեան։ Վասն այսորիկ որպէս առ հրաման կամաց, որ է առաջարկութիւն վախճանին, միտք 'ի խնդիր լինին միջոցաց, սոյնպէս առ հրաման մտաց՝ որ է որոշեալ երևեցուցումն միջոցի, կամք դիմեն 'ի կատարումն։ Մինչև հասարակաց հաւանութեամբ՝ կամաց շարժել զմիտս, և մտաց շարժել զկամս։ Ի վերայ խորհրդածութեան և ընտրութեան լիով խօսեցաք յառաջին գիրս, 'ի ճառել զմարդկային ներգործութեանց։

## ԳԼՈՒԽ ԺԷ.

### Յաղագս անխոհեմութեան և խորամանկութեան։

Այս ինչ ընդ մէջ է անխոհեմի և խորամանկի, զի խորամանկին կամքն է աւեր, այլ միտքն առողջ. և անխոհեմին հնար է թէ կամքն իցէ առողջ, այլ միտքն է աւեր։ Երկաքանչիւրոցն կիրք են անբարեկարգք. բայց անխոհեմն յայտնէ զնոսա պարզմտութեամբ, իսկ խորամանկն ծածկէ կեղծեօք. և որպէս թէ իցէ առանց բարկութեան և առանց սիրոյ, 'ի ժամանակի յորժամ առաւել ամբոխեալ է նորա սիրտ՝ ցուցանէ երեսս զուարթս և խաղաղականս։ Երկաքանչիւրքն են մեծ մոլութիւն, զի հակադրին այնմ որ մեծն է յառաքինութիւնս. բայց անխոհեմութիւնն է առաւել ամօթալի, և խորամանկութիւնն առաւել վնասակար։ Խորամանկութիւնն առ անխոհեմութեամբ երևի խոհեմութիւն. և անխոհեմութիւնն առ խորամանկութեամբ երևի անմեղութիւն։ Խորամանկն իբրև



զՏիբերիոս՝ ունի խառնուած չոր և սևամաղձային, երեսսուր, և կերպարանս զողուխոռ ծերոյ որպէս և զբարս։ Անխոհեմն իբրև զՎիտելլիոս՝ ունի խառնուած զուարթաբարոյ, և դէմս պարարտս, ունելով ինչ նմանութիւն հայեցուածոյ և տխմարութեան եզին։ Խորամանկն է քաջափորձ, վասն կենցաղելոյ նորա ընդ բազում նենգաւորս. և վասն տեսանելոյ և ընթեռնլոյ և գիտելոյ նորա բազում ինչ. հաւաքեալ հանապազ զչար օրինակս, և մեկնեալ զամենայն 'ի չար միտս։ Վասն որոյ կազմակերպեալ 'ի միտս իւր սկզբունս և առածս ամբարիշտս՝ վնասակարս և անգթականս, թաքուցանէ զնոսա 'ի սրտի իւրում, որպէս 'ի մթերանոց դաւաճանութեանց և հնարից, զորոց ինքն միայն ունի զբանալի։ Զսորին հակառակն անխոհեմութիւնն ծնանի առաւելապէս 'ի լինելոյն անփորձ, կամ 'ի բնաւոր տխմարութենէ, որ պատճառէ ըզպարզմտութիւն ինչ որ ագիտաց երևի առաքինութիւն. բայց 'ի յայտ գայ 'ի գործոց. զի խորամանկութիւնն գիտէ վնասել այլոց, բայց անխոհեմութիւն վնասէ միայն անձին։

Առարկայ երկոցունց մոլութեանցս երևի լինել նոյն ընդ առարկայի խոհեմութեան, այսինքն է բարին մարդկային կենաց. բայց է 'ի նոսա աննմանութիւն մեծ։ Խոհեմութիւնն հայի 'ի ճշմարիտ բարին. այսինքն յօգտակարն՝ լծակցեալ ընդ բանաւորի և ընդ առաքինութեան. զի ոչ է հնար, թէ լինիցի խոհեմութիւն՝ առանց առաքինութեան, և ոչ առաքինութիւն ինչ առանց խոհեմութեան։ Բայց անխոհեմութիւն և խորամանկութիւն հային միայն 'ի մասնաւոր ինչ բարի, եթէ ճշմարիտ իցէ այն և եթէ առերևոյթ. եթէ արդար և եթէ անիրաւ. միայն թէ բաղձանքն առաջի արասցէ զայն մտաց, 'ի գտանել զեղանակ ստացութեան նորա։ Բայց յայսմ այլազգ առաջնորդի խորամանկն, և այլազգ անխոհեմն. զի անխոհեմն չունի այնչափ չարայոյզ միտս, մինչև ճանաչել զանիրաւութիւն առարկային. շատ է նմա թէ առարկայն հաճոյ իցէ բաղձանաց։ Բայց խորամանկն ճանաչէ թէ չար է այն. սակայն և այնպէս ջանայ ստանալ, միայն թէ իցէ նմա օգտակար։ Եւ ևս, անխոհեմն շատ խօսի, սակաւ խորհի. ամենեցուն յայտնէ զխորհուրդ իւր, և ամենեցուն վստահանայ. զի պարզամիտ գոլով համարի զամենեսին իւր նման։ Բայց խորամանկն խօսի սակաւ, խորհի բազում, և ոչ ումեք վստահի. զի զամենեսին համարի խորամանկս և խաբեբայս, և վասն այսորիկ ծածկէ զիւր գիտմունս. զայս ինչ կամեցեալ, կեղծաւորի կամել զներհակն. և ոչ ճանաչի երբեք կամք նորա, բայց եթէ 'ի գործոյն։ Անխոհեմն թէպէտ և եռանդագին անձուկ ունիցի առ առարկայն, ոչ ունի հանճար 'ի խորհրդածել. այլ զառաջին միջոց, որ ընդ առաջ լինի մտաց նորա, համարի լաւ. որպէս զպանդուխտ ոք, որ առ հասանել 'ի քաղաք, ոչ

տեսանէ բայց զմի միայն ճանապարհ, որ բաղում՝ անգամ խաբէ, կամ 'ի չարանիւթից խցանի։ Իսկ խորամանկն ճանաչէ զամենայն ճանապարհս, և զամենայն դժուարութիւնս. բայց ընտրէ զզարտուղին և զզանխուղն, և միայն թէ հասցէ իւրում վախճանի, ձեռնարկէ յամենայն միջոց եթէ յիրաւացի և եթէ յանիրաւ։ Վասն այսորիկ անխոհեմն յամենայն դոյզն դժուարութենէ զանգիտեալ՝ վասն լինելոյ նորա անակնկալ և յանկարծադէպ, սոսկայ, կամ զտեղի առնու։ Բայց խորամանկն որ ամենայնի է յառաջատես, զամենայնի հնարս հնարի. և թէպէտ և միջոցն իցէ ապիրատ, դժուարութեանն ապիրատութեան յաղթէ մեծ ևս ապիրատութեամբ։ Զհուսակըն ասացից. եթէ անխոհեմն և եթէ խորամանկն՝ ձեռնարկեն 'ի չար միջոցս վասն բարւոյ վախճանի. կամ 'ի բարի միջոցս վասն չար վախճանի. և կամ 'ի չար միջոցս վասն չարագոյն ևս վախճանի։ Բայց անխոհեմն վասն անմտութեան, և խորամանկն վասն չարութեան։ Վասն այսորիկ անխոհեմն չհասանէ երբէք իւրում վախճանի, բայց եթէ ըստ հանդիպման, ըստ որում բախտն երբեմն նպաստամատոյց լինի անմտաց և պակասամտաց։ Բայց խորամանկն յոլովակի հասանէ այնմ, որում ըղձանայ. զի չարութեանն թէ և անմասն իցէ յառաքինութենէ, ոչ պակասի հանճար։ Բայց թէ զարդարն խօսիցիմք, որովհետև խորամանկութիւնն իւրովք գործովք յայտնի է ամենեցուն և ատելի, և ամենայն չար գործոց զհետ գան չարաչար հետևութիւնք, ուր ուրեմն պատահէ թէ այնպիսի չարարուեստն ոչ ըմբռնիցի իւրովք արուեստիւք։ Եւ ուր անխոհեմն ամենայն ոք ախտակցի, ընդ վնաս խորամանկն ամենայն ոք խնդայ։

# ԳԻՐՔ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

## ՑԱՂԱԳՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՐԻՑ ԵՒ ՑԱՂԱԳՍ ՀԵՇՏՈՒԹԵԱՆ

## ԳԼՈՒԽ Ա.

*Պատճառ ճառիս։*

ՅԱՌԱՋ քան զմխել 'ի որոշութիւն իւրաքանչիւր բարոյական առաքինութեանց, ըստ բնաւոր ոճոյ պիտէր նախակարգել իմաստս ինչ հանրականս, առ կարգաւ յառաջանալոյ 'ի մասնաւորս։ Բայց Արիստոտէլ, որ միշտ հայի 'ի լուսաւորել զմիտս առանց խառնելոյ զմտաց աչս, երևեցոյց 'ի սկզբանն անդ աղօտանուաղ նշոյլ, այսմ պահու պահեալ զկատարեալ հետազօտութիւնն, յորժամ աչք ակնողաց կարողանային ժուժալ անաղօտ լուսոյ։ Խօսեցաւ այո, 'ի սկզբան անդ զցանկութենէ. բայց չեցոյց թէ զինչ է հեշտութիւն՝ զլխաւոր առարկայ ցանկութեան. և ոչ թէ զինչ է ժոյժ և անժուժութիւն, որք տարօրինակ հային 'ի հեշտութիւն։ Խօսեցաւ զզգայական բաղձանաց, որ վտարանն է կրից. բայց ոչ խօսեցաւ զթուոյ կրից. և ոչ զբարեկամութենէ, որ գեղեցիկ դուստր է գեղեցկագունին 'ի կիրս։ Խօսեցաւ զառաքինութեանց և զմոլութեանց մասնաւորաց. բայց ոչ զդիւցազնական առաքինութենէ, որ գագաթն է ամենայն առաքինութեանց. և ոչ զգազանաբարոյութենէ, որ գիրան է ամենայն մոլութեանց։ Խօսեցաւ զերջանկութենէ, բայց անմարթ էր ճանաչել զգեղեցկութիւն երջանկութեան յառաջ քան զգեղեցկութիւնս առաքինութեանց, որոց ծնունդ է նա։ Արդ քանզի զայսոքիւք նիւթովք՝ յիմաստասիրաց միջի ծագէն բազում և դժուարին երկբայութիւնք, որոց լուծումն այնպէս կարևոր է 'ի գիտել, որպէս զուարճալի 'ի հետազօտել, կամ է ինձ 'ի յաջորդ գիրս՝ զքո բարեբաստիկ հանճարոյ հաճել զմիտս, հետազօտեալ կարգաւ 'ի բարձրագոյն սկզբանց զիրացդ ստուգութիւն։

## ԳԼՈՒԽ Բ.

### Ցաղագս մարդկային կրից։

Չեղև ինչ անտեղի կարծիք Եմպեդոկղի, թէ աշխարհի բաղկացութիւն լեալ իցէ 'ի բարեկամութենէ և 'ի հակառակութենէ. զի չիք ինչ 'ի նմա, որ չունիցի զիւր ախորժակ. և ոչ ախորժակ ինչ որ չունիցի զիւր ընդդիմակ։ Չիք ոսկի անկղկըղանք, և ոչ վարդ անփուշ. և ոչ 'ի փեթակէ քաղր մեղր՝ անվտանգ 'ի խայթոցաց։ Չիք ինչ բարի 'ի սորինս, ոյր խնդրողին ոչ պատահիցի ինչ հակառակութիւն։ Վասն այսորիկ բնաւոր տեսչութիւնն ամենայն շնչաւորաց և անշնչից՝ ետ երկուս կարողութիւնս, մի՝ ըղձանալ իւրում օգտակարի, և երկրորդ՝ դիմակալել հակառակողի իւրոց ըղձանաց։ Հրոյ ետ սաստիկ թեթևութիւն և սաստիկ վառումն. զայն՝ 'ի վերասլանալ յիւրն սիրելի կամար, որ պահէ զնա. և զայս՝ 'ի քակել զաշտարակս, զքարաժայռս և զերլինս, և զամենայն որ խոչ իցէ վերելից նորա։ Առ այս երկու գործ՝ արբանեկեն, եթէ 'ի մարդիկ և եթէ յանասունս՝ այն երկու կարողութիւնք զգայական բաղձանաց, զորս սոյն յիշատակեցաք. ցանկականն և ցասմնականն։ Ցանկականն 'ի խնդրել զբարին, և 'ի փախչել 'ի չարէն։ Ցասմնականն 'ի դիմակալել այնմ որ հակառակի իւրոց ըղձից և փախստեան։ Մինչև ցանկականին լինել անյագ և հոգաբարձու պիտոյից մարդկային կենաց. և ցասմնականին լինել զինակիր և պաշտպան ցանկականին։ Տես քանի՞ սրտնութեամբ ամենայն անասուն՝ կամ ատամամբք, կամ եղջերբք, կամ ճիրանօք, կամ այլովք զինուք վանիկէ զխափանարարն իւրոց հաճոյից։ Այս զէնք են արտաքինք ցասմնականին։ Ամենայն գազան զգրգռեալ՝ և ես գազանանայ։ Տես որպիսի՞ սրտմտութեամբ այր զայրագին՝ ներքուստ զինի կատաղնօք, և արտաքուստ ձեռն 'ի զէն արձակէ. գոռայ, կրճտէ զատամունս, սպառնայ, արձակէ բոմբիւն 'ի կրծոց, բոց յաչաց և ծուխ յռնգաց. այս են արտաքին յարձակմունք ներքնոյ ցասմնականին. որոյ հանդիպեցեալ 'ի ճակատ մարտի, առնու իւր կուսակից զցանկականն։ Ապա զգայական բաղձանքն է հրէշ երկկերպարան, բաղկացեալ յերկուց հրէշից. մին բոլորովին խանդակաթ և հեշտահամբոյր. միւսն գլխովին բարկացայտ և կռուարար, փակեալ 'ի մի սիրտ զերկուօրեակ տարերս բարեկամութեան և հակառակութեան։ Այլ զոր օրինակ ամենայն գլուխ հիդրայի շառաւիղէր բազմապատիկ գլուխս հրէշաւորս, սոյնպէս ցանկականն



և ցասմնականն երկնեն այնչափ կիրս, որչափ են նոցա շարժմունք զբարեաւ և զչարաւ։ Եթէ յըմբռնողականէն առաջադրի զգայական բաղձանաց առարկայ ինչ բարի, կամ կարծեալ բարի, ծնանի 'ի ցանկականն սէր. ապա եթէ առարկայն է բացական, յառնէ յետ սիրոյ ցանկութիւն. և թէ ցանկութիւնն ունի զլրումն, զհետ գայ բերկրութիւն։ Եւ զորին հակառակն, եթէ առարկայն է տաղտկալի և չար, ցանկականն շարժէ զատելութիւն. և թէ առարկայն է բացական, զհետ գայ փախուստ. իսկ թէ չիք հնար փախստի 'ի չարէն, անդէն 'ի վերայ հասանէ ցաւագին տրտմութիւն, որ զմեզ հալէ և մաշէ։ Բայց թէ առաջեդեալ բարին է դժուարին և խիստ վասն դիմադրութեան ինչ, եթէ 'ի մտի դնէ մարդ թէ կարող է յաղթել, ծնանի 'ի ցասմնականն յոյս. եթէ 'ի մտի դնէ թէ չէ կարող, ծնանի յուսահատութիւն։ Զորին հակառակն եթէ չարն դժուարին է բացական, ծնանի կամ ջեռեալ համարձակութիւն ունելոյ զայն 'ի բացեայ, կամ ցուրտ երկիւղ, եթէ վտանգն է մեծ քան զյոյս։ Բայց եթէ չարն 'ի վերայ հասեալ իցէ, ծնանի բարկութիւն 'ի խնդրել զվրէժ նորա, և կամ մեղկութիւն 'ի համբերել այնմ. բայց մեղկութիւն բնական, ոչ մոլեկան և ոչ առաքինական։ Արդ թէ կամիս տեսանել զճիւղագրութիւն կրից, որպէս տեսեր զառաքինութեանցն, աւասիկ քեզ։

### ԲԱՂՁԱՆՔ ԶԳԱՅԱԿԱՆ

| ՑԱՆԿԱԿԱՆ<br>ԶԲԱՐԵԱՑ ԵՒ ԶՉԱՐԱՑ<br>ՍՈՍԿԱՊԷՍ | | ՑԱՍՄՆԱԿԱՆ<br>ԶԲԱՐԵԱՑ ԵՒ ԶՉԱՐԱՑ<br>ԴԺՈՒԱՐԱՑ | |
|---|---|---|---|
| Սէր. | Ատելութիւն. | Յոյս. | Յուսահատութի. |
| Ցանկութի. | Փախուստ. | Համարձակութի. | Երկիւղ. |
| Բերկրութի. | Ցաւ։ | Բարկութի. | Մեղկութիւն։ |

Քաջ գիտեմ, թէ ոմանք տաղտկացեալք 'ի դեգերելոյ 'ի շաւիղս իմաստասիրաց, ասասցեն թէ չկայ կիրք աւելի քան զմին, և այն է սէրն։ Ցանկութիւն, բերկրութիւն, յոյս, և ևս առաւել՝ ատելութիւն, փախուստ, բարկութիւն, և երկիւղ ոչ են, ասեն, այլ և այլ կիրք, այլ այլ և այլ գործք մի

և նոյն սիրոյ, որ փոխէ զանուանս և զկերպարանս, այլ ոչ զէութիւն: Եւ թերևս ճշմարիտ իցէ, զոր ասեն. այլ ոչ նոր ինչ. զի խաղաղ կամին 'ի վերայ բառից: Թէ դու սէր կամիցիս կոչել զզգայական բաղձանս, որ ոչ այլ ինչ է բայց ախորժակ մարմնական, որպէս և ամենայն իսկ կիրք կոչին ախորժակք, այո, հնար էր քեզ ասել՝ թէ ամենայն շարժմունք զգայական բաղձանաց են շարժմունք սիրոյ. բայց չփոթելիր զեզերս՝ 'ի ցուցանել զհանճար:

## ԳԼՈՒԽ Գ.

### Թէ ո՛ւր բնականան կիրք:

Ի վերադաս աղխատակէդ մարթիս իմանալ զանմիտ մոլորութիւն Քրիսիպպոսի [280], թէ կիրք բնականան 'ի միտս. 'ի կոչել նորա զբերկրութիւնն կարծիք ինչ ներկայ բարւոյ, և զցաւն կարծիք ինչ ներկայ չարի. և ամենայն իսկ կիրք ըստ նորա ոչ այլ ինչ են, բայց կարծիք: Բայց որպէս եթէ գրեալ էր նա 'ի ցուլ Փաղարեան, զչափ անոյր արդեօք, թէ ցաւք իցեն կարծիք. նոյնպէս իւր մոլորութիւնն ինքնին ստի. զի մտաց առարկայ է ճշմարիտն, և ոչ թէ բարին: Մարթիս ասել և զայնց ևս մոլորութիւն, որք օթեցուցանեն զկիրս յիմացական բաղձանս, այսինքն 'ի կամս. տեսեալ քո թէ բազում անգամ կիրք յառաջեն քան զկամս, և բազում անգամ հրաման կամաց յաղթի 'ի հրամանէ յամառ կրից: Ստոյգ է թէ կամքն իսկ բաղձանք իմն գոլով և սա ևս ունի զիւր շարժմունս սիրոյ և ատելութեան, ցանկութեան և փախստեան, ուրախութեան և տրամութեան, բայց քանզի է նա բաղձանք ինչ իմացական և ոչ զգայական. շարժմունք իւր չեն զգայականք, այլ իմացականք. նմանողք կրից, այլ ոչ կիրք: Նա՝ թէպէտ և երբեմն կարող է նա կամ շարժել և կամ մեղմել զգայական կիրս իւրով քաղաքական, այլ ոչ տիրական իշխանութեամբ, որպէս իսկ լուար, բայց և այնպէս՝ առ այս ծառայեցուցանէ զզգայական բաղձանս, որ բազում անգամ ընդդիմանայ: Մինչ զի թէպէտ և կիրք են ընդ կամաւ, այլ ոչ 'ի կամս: Ապա յայտ է թէ զգայական կիրք օթին 'ի զգայական բաղձանս, որոյ աթոռ է 'ի սրտի: Եւ որպէս ուղեղն է գործարան ըմբռնողական կարողութեանց, նոյնպէս սիրտն է գործարան բաղձողական կարողութեանց, զգալեաց. կամեցեալ տեսչութեան զատանել զայսոսիկ անարգ գործառնութեանս յազնուագունից: Ապա ոչ շարժին կիրք 'ի սրտի, թէ ոչ յառաջէ 'ի գլուխն երևեցուցանի առարկայն. զի որպէս առանց



աչաց՝ սայթաք է ոտն, նոյնպէս առանց ըմբռնողականին՝ կոյր է բաղձողականն: Ապա սիրտն անդրանիկ անդամոց և արմատ կենաց, է միանգամայն և գործարան բաղձանաց, և թարգման կրից և ախորժակաց՝ իւր սքանչելի շարժմամբք: Ովկիանոսի տուաւ 'ի բնութենէ սեպհական ինչ և կարգաւորեալ հոսումն, որ կոչի տեղատուութիւն և մակընթացութիւն. զի կալով յերկրի որպէս տղայ յօրոցի, յիւրում շարժման 'ի քուն լիցի. բայց թէ 'ի ցրտատարոսուս հողմոց հիւսիսոյ, և 'ի տապախառն հողմոց հարաւոյ յուզի, ոչ ևս կարացեալ զուսպ կալ, է զի գայ և է զի գնայ, է զի յամպս վերանայ, և է զի յանդունդս իջանէ: Նոյն տեսչութիւն ետ սրտի մշտնջենաւոր իմն և բնաւոր շարժումն պատշաճող խառնուածոյ անհատին, լայնեալ և կծկեալ բազմօրինակ չափու, 'ի ասուրևառութիւն շնչոյ և 'ի ծաւալել զկենսական ոգիս ընդ ամենայն մարմին: Բայց թէ յուզի նա 'ի հողմոց կրից, յայնժամ օտարոտի լայնմամբ կամ կծկմամբ այլայլեալ զհամեմատութիւն բնաւոր շարժմանն, այլայլէ զզգայարանս, և այնչափ են փոփոխութիւնք սրտի, որչափ և կրիցն: Եւ յայտ է թէ յառաջ շարժի հոգին յառարկայէ, քան գործին 'ի հոգւոյ: Սա է շարժումն բնական, և այն բարոյական: Տեսարան լինէր զուարճալի եթէ ընդ ապակի ինչ 'ի կրծոց անտի հնար լինէր երևել շարժմանց սրտի՝ իբրև զժամացուցացն: Եթէ ըմբռնողականն առաջի առնէ զառարկայ ինչ սիրելի, սիրտն գլխովին խանդակաթ՝ յառաջ մատչի, և ընդարձակի գիրկս արկանել նմա: Եւ թէ զառարկայ ինչ ատելի, սիրտն գլխովին զզուանօք կծկի, և որպէս թէ փախչի: Ի կարի իմն ուրախութեան, կայթէ սիրտն և ոստոստէ. և 'ի վիշտս ամփոփի, և լքեալ երևի: Ի բարկութեան սիրտն եռայ, և արիւն 'ի դուրս տայ. և յերկիւղի սառի, և բաբախէ և դողայ: Փոքրիկ անդամ է նաւի՝ ղեկն. բայց ամենայն փոքրիկ շարժումն ղեկի շարժէ զմեծ զայն մեքենայ լայնատարր շրջանաւ յաջ և յահեակ: Եւ ամենայն փոքրիկ շարժումն սրտի, որ կայ 'ի մէջն, պատճառէ 'ի շրջանակ մարդկային մարմնոյ շարժմունս մեծամեծս: Այն քաղցր ծիծաղ և անձուկ գրկախառնութիւնք պատահելոյն սիրելւոյ բարեկամի, այն երեսդարձութիւն և խոժոռումն 'ի տեսանել զանհաճոյ ինչ կամ զզուելի, այն ծափիւն ձեռաց և ցոփիւն ոտից յուրախութեան, այն հեծութիւնք և հառաչանք 'ի տրամութեան, այն վառիլ երեսաց և շըրջշըրջիլ աչաց և կրճել ատամանց 'ի բարկութեան, այն սառնասառոյց դեղնութիւն և դողդոջումն անդամոց 'ի տագնապել երկիւղի, առ հասարակ են արտաքին գործք ներքին շարժմանց սրտի. որք փոքր են 'ի մէջն, այլ մեծամեծք 'ի շրջանակն:

Ապա գեղեցիկ սահմանեաց Արիստոտէլ զկիրս այսպէս.

Կիրքն են շարժմունք զգայական բաղձանաց՝ ըմբռնմամբ բարւոյ և չարի, հանդերձ մարմնական ինչ փոփոխութեամբ 'ի բնաւոր վիճակէ յանբնաւոր վիճակ: Ուր ունիս տեսանել երկուս շարժմունս 'ի կիրս. մին բաղձանաց, որ այլայլէ զզգայական հոգի. միւսն սրտի, որ յայլայլել զինքն այլայլէ և զմարմինն. վասն այսորիկ կիրք կոչին ամբոխմունք: Ի սահմանէ աստի առցես դու 'ի միտ, թէ որպէս երբեմն հոգին միով ներքին պատերազմաւ պատերազմի, և պատերազմ կրէ ընդդէմ իւր: Առաջին մարտն է 'ի մէջ զգայական բաղձանաց և բանական բաղձանաց՝ շարժմամբ կրից 'ի սրտի, և բանին 'ի միտս, դէմ ընդդէմ միմեանց յերկուս այլեայլ թատրոնս: Զայսպիսի մենամարտութիւն յանձին զգայր Օգոստինոս՝ տարտամութեամբ իբրև յերկճիղ ճանապարհ Պռոդիկոսի [281]: Յինքն ձգէր զնա սէրն երկնաւոր. յինքն ձգէր և սէրն երկրաւոր. մին զինեալ իմանալի բանիւք, միւսն զգալի ախորժակօք, բաղխեցան 'ի միմեանս, և ինքն յերկուց կողմանց կայր հարուածեալ: Ասէիր արդեօք, թէ յՕգոստինոսի էին երկու Օգոստինոսք, որոց մին կամէր, և միւսն ոչ կամէր պարկեշտանալ: Կամ թէ 'ի մի միայն Օգոստինոս էին երկու կամք, մին պարկեշտ և միւսն անառակ: Յերկարեաց կռիւն, վասն լինելոյ միոյ սիրոյ իմաստնագոյն, և միւսոյն բռնագոյն. և ոչ արդեօք յաղթ ելանէր, բայց եթէ ընդ կենաց, թէ շնորհն երկնային չէր լեալ զօրավիգն սիրոյն երկնայնոյ, և գլխահար երկրայնոյն: Բայց յառաքեալն հեթանոսաց, որպէս նա ինքն խոստովան լինի [282], տեւեաց կռիւս որ 'ի մէջ բանի և զգայութեան մինչ 'ի մահ, առ առաւելութիւն փառաց նորա: Վասն զի յամենայնի յաղթական գտեալ բանին, հանապազորդ մարտն եղև նմա հանապազորդ յաղթանակ: Երկրորդ մարտն է միայն 'ի զգայական բաղձանս, մարտն ընդերաց և սրտի. յորժամ յառաջադրել երկուց ներհակական առարկայից զգալեաց, պատերազմին 'ի թատրոն սրտի երկու ներհական կիրք: Մարտ այսպիսի գրգռեցաւ 'ի սիրտ Մեդեայ [283], 'ի մէջ երկուց բռնագոյն կրից բարկութեան և սիրոյ: Ապաշնորհին Յասոնի մերժեալ էր զՄեդիա, զի ածցէ կնութեան զդուստր Կրէոնի: Կինն զայրագին հաստատեաց 'ի միտս ըսպանանել զզաւակսն, զորս ծնեալ էր 'ի Յասոնէ: Սիրէր զորդիսն, զի էին իւր. ատեայր զնոսա, զի էին Յասոնի. բարկութիւնն վանէր զսէր, և սէրն փոփոխակի վանէր զբարկութիւն: Աստի բորբոք բարկութեան, և անտի բորբոք սիրոյ. բոց զբոց շիջուցանէր, և ինքն երկոքումբք բորբոքիւր: Վազեցին աստի և անտի ձեռն առ յօգնականութիւն կողմանց այլ ամենայն կիրք: Նախանձաւորութիւնն ընդ սիրոյ, ատելութիւնն ընդ բարկութեան զհասարակաց դատ վարէին: Մի առ միով մարտնչէին՝ երկիւղն ընդդէմ համարձակութեան,



համարձակութիւնն ընդդէմ յուսահատութեան, և յուսահատութիւնն ընդդէմ երկիւղի: Իբրև այնպէս 'ի վարանս էր ողորմելին 'ի բազմադէմ մենամարտութեանց աստի, ոչ պարտեալ և ոչ յաղթական, սիրող միանգամայն և թշնամի, ահարեկ և խրոխտ, աղեխորով և անգորով. հուսկ ուրեմն բարկութիւնն յաղթեաց սիրոյ: Ուշ եղեալ թէ այնուհետև չէ կին, մոռացաւ զլինել իւր մայր, խողխողեաց զանմեղսն, վասն զի չէր ձեռնհաս խողխողել զդաւաճանն:

## ԳԼՈՒԽ Դ.

### Հարցուածք 'ի վերայ կրից:

Խնդրիցէ նախ քոյին զգուշաւոր հանճար. Եթէ բնութիւնն ոչ բազմացուցանէ զկարողութիւնս և զգործս վայրապար, զի՞ է զի 'ի պարգևել մարդոյ զիմացական բաղձանս, յաւել 'ի վերայ որպէս մակդիր՝ զզգայականն, զոր Պղատոն կոչէ բազմագլուխ գազան: Պատասխանեմ, թէ վասն զի մարդն է բաղադրեալ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ, պիտէին նմա երկու ըմբռնողական կարողութիւնք. մին հոգեղէն, և միւսն մարմնական. այսինքն միտք և երևակայութիւն, զի ըստ եղանակի գոլոյ յերիւրի եղանակ գործելոյ. և այլեայլ առարկայից պիտին այլեայլ կարողութիւնք: Ուստի և պիտէին երկու բաղձողական կարողութիւնք. մին հոգեղէն, և միւսն մարմնեղէն. այսինքն կամք համեմատ մտաց, և զգայական բաղձանք համեմատ երևակայութեան. զի ըստ եղանակի ըմբռնման յերիւրի եղանակ բաղձման: Վասն այսորիկ երբեմն ըմբռնումն մարմնական երևեցուցեալ զառարկայ ինչ պատշաճող մարմնոյ, և ըմբռնումն հոգեղէն երևեցուցեալ զառարկայ ինչ պատշաճող հոգւոյ, յարուցանեն զայն կռիւ 'ի մէջ հոգևոր և մարմնաւոր բաղձանաց, որ ոչ վերջանայ երբէք մինչև ցբաժանիլ հոգւոյ 'ի մարմնոյ:

Խնդրիցես երկրորդ. Ի՞ւ տարբերին զգայական բաղձանք անբանից 'ի զգայական բաղձանաց մարդկան, և կիրք մարդկան 'ի կրից անասնոց: Պատասխանեմ. բաղձանք անասնոց հարկիւ զհետ երթան առարկային, և բաղձանք մարդկան ազատօրէն զհետ երթան առարկային, կամ բանին. առարկային կարող է շարժել զնա, բայց բանն կարող է զսպել: Վասն այսորիկ մարդկային կիրք բաժանորդ գոլով ազդեցութեան կամաց, կամ առաքինականք են և կամ մոլեկանք. բայց անասնային կրից ոչ է հնար լինել՝ ոչ առաքինական, և ոչ մոլեկան: Սոքա զհետ երթան ազդեցութեան բնութեան, որ

է անվրիպակ. Նոքա զհետ երթան մարդկային կարծեաց, որ ներքոյ անկեալ է բազում վրիպանաց, և յոլովակի կուրացեալ 'ի նոյն իսկ կրից: Այլ է դատումն մարդոյ ախտակրի, և այլ իրաւախոհի. վասն այսորիկ յԱղեքսանդրէ ցասուցելոյ բողոք լինի յատեան Աղեքսանդրի հանդարտելոյ 284: Եւ վասն զի անասունք ոչ ըմբռնեն ոչ զբարի և ոչ զչար, բայց միայն զներկայն, կամ զփոքր մի բացական, սակաւ կրից են ներքոյ անկեալ. և թէ 'ի բաց առնուս զսէր կենաց և զզաւակաց, այլ ամենայն առարկայք անտարբեր են նոցա: Բայց մարդ յօրինէ իւր ցանկութիւնս և երկիւղս. գնայ 'ի խնդիր կարի իմն հեռաւորաց, կամ աւելորդաց, և անբաւից, յոլովակի՝ և անհնարաւորաց: Մինչև տանջիլ նմա յանցելոյն և 'ի ներկայէն և յապագայէն, և 'ի ճշմարտէ և 'ի ստոյ. և տանջիչ է իւր ինքեան:

Ասիցես. Կամիս գիտել յայտնագոյն ևս, թէ որպէս կամք շարժեն զկիրս, և որպէս կիրք շարժեն զկամս: Կամք շարժեն զկիրս. զի բնաւոր կարգն պահանջէ, թէ վերնագոյնն հրամայեսցէ ստորագունին: Եւ զայս առնէ նա երկակի. կամ հրամայելով մտաց՝ առաջադրել զզգայական բաղձանաց զայն առարկայս, որք շարժեն զկիրս: Եւ կամ հրամայելով իշխանաբար բաղձանաց, զի շարժեսցի 'ի յառաջեդեալ առարկայն. որպէս Ոդիւսս հրամայէր իւրում սրտի չերկնչել յալէկոծութենէ, ըստ գրելոյ Հոմերոսի.

Փութեա սիրտ իմ համբերատար,
Որ բռնագոյն չարեաց տարար:

Իսկ կիրք շարժեն զկամս, ոչ հրամայելով, զի ստորինն ոչ հրամայէ վերնագունին, և ոչ նիւթականն՝ հոգեղինին. այլ գիտուածով, կամ պատճառաբար: Գիտուածով, եթէ առարկայն այնպէս 'ի հրապոյրս ձգիցէ, զի կիրք յառաջեսցեն քան զկամս, և կամքն յառաջեսցէ քան զբանաւորութիւն մտաց. մինչև շարժել կամաց յառաջ քան զուշաբերել: Իսկ պատճառաբար, յորժամ կիրք մթագնեն զմիտս, որպէս ասացաք. զի յայնժամ կոյր կուրի առաջնորդէ 'ի խորխորատ:

Խնդրիցես և ևս. Որո՞ց կրից դժուարագոյն իցէ յաղթել: Բարկութիւնն է բռնագոյն, բայց հեշտութիւնն կարի յամառ: Վասն զի բարկութիւնն է զայրոյթ հակառակ բնութեան և վասն այսորիկ սուղ. այլ հեշտութիւնն է քաղցր իմն քնածութիւն, որ յանոյշ քուն ըմբռնէ զզգայարանս. բայց դժուարաւ սթափի: Բարկութիւն գրգռեալ 'ի բանէ՝ բանիւ դիւրաւ զիջանի: Հեշտութիւնն բթացուցեալ զսուր մտաց, ոչ անսայ բանի և ոչ յորդորանաց: Զհուսկն ասացից. բարկութիւնն է որպէս առիւծ, որ թէպէտ և գազանաբարոյ, կրթանօք ընտելանայ: Հեշտութիւնն է որպէս ձուկն, որ թէ-



պէտ և անմեղ է, ոչ շողոմութեամբ և ոչ ահարկութեամբ նուաճի:

Հարցանիցես և ևս. Եթէ յայր իմաստուն ունիցի՞ն զտեղի կիրք. քանզի ազգու երևի այն ձեռնարկութիւն ստոյկեանց, թէ կիրք են ամբոխմունք սրտի. ամբոխմունք են հիւանդութիւնք. սիրտ հիւանդագին չէ առողջ. ապա՝ թէ չէ առողջ, չէ իմաստուն: Պատասխանեմ. կիրք ոչ են ամբոխմունք և ոչ ախտք սրտի, բայց միայն յորժամ չեն կանոնաւորեալք: Եւ զի յիմաստունն են կանոնաւորեալք, ոչ են ախտք և ոչ ամբոխմունք, այլ ճշմարիտ առաքինութիւնք: Ճշմարիտ իմաստութիւն է կանոնաւորել զկիրս: Բայց զիա՞րդ զամբոխմունս հնար իցէ, ասես, կանոնաւորել: Պատասխանեմ. բանն կանոնաւորէ զնոսա կրկնակի. բնապէս, հրամայելով զզգայական բաղձանաց և իւրում սրտի. որպէս ասացաւ: Եւ բարոյապէս, վերածեալ 'ի միջասահման, զոր օրինակ յիւրում տեղւոջ ասացաւ. այսինքն է խորշելով 'ի ծայրից, և չափմամբ պարագայից: Սէր և ատելութիւն են կիրք բնականք և անտարբերք: Լինին առաքինութիւնք, եթէ լինի սիրել և ատել զայն զոր արժան է, և որչափ արժան է, և որպէս արժան է: Լինին մոլութիւնք. յորժամ զանցանեն զչափովս. չափ է բանն, և բանն է յիմաստունն: Մինչ զի բարութիւն և չարութիւն ոչ են 'ի կիրս, այլ 'ի գործածութեան կրից:

Տարակուսիցիս և ես, թէ զարմացումն և ծիծաղ 'ի համար մարդկային կրի՞ց իցեն. կամ առ ո՞ 'ի նոցանէ վերածիցին. Իբր զի երկաքանչիւրն զգալապէս այլայլեն զմարդ. զարմացումն ընդարմացուցեալ զնա, 'ի զարմանալ նորա. և ծիծաղն ծաղածանակ արարեալ զնա, 'ի ծիծաղել նորուն: Զպատասխանին մարթ է առնուլ 'ի սահմանաց նոցին: Զարմացումն է ուշադիր յառումն մտաց 'ի նորանշան իմն առարկայ, զորոյ ոչ գիտելով զպատճառն՝ ոգին տարտամ, ըղձանայ գիտել զայն. և յայնմ սուղ յափշտակութեան մարմինն ևս մնայ իբրև յանկարծ ապշութեամբ ընդարմացեալ, սառացեալ անշարժ և անբարբառ: Ուստի որ զարմանայն՝ բացագանչէ բարբառ այսպիսի. Մարթ ինչ իցէ այդմ լինել: Ճշմարիտ իցէ զոր տեսանեմս, թէ ցնորք ինչ իցեն: Ուր ունիս տեսանել, թէ զարմանքն չէ կիրք. զի ոչ է գործ զգայական բաղձանաց, այլ մտաց և կամաց: Տարտամութիւնն և չգիտութիւն պատճառին՝ հայի 'ի միտս: Իղձն և խնդութիւնն ընդ գիտութիւն նորա՝ ոչ հայի 'ի զգայական բաղձանս, այլ յիմացականն, որ է կամքն: Իսկ թէ զարմանքն այլայլէ զերեսս, այն չէ գործ կրից, այլ՝ մտաց. որոյ զարմացումն զեղու և 'ի մարմինն, որպէս պատահէ յապշութեան: Եւ վասն այսորիկ զարմանք ոչ հիացուցանեն զանասունս, զի տեսանեն զգործս, և ոչ 'ի խնդիր են պատճառին: Իսկ ծիծաղն է բուռն շարժումն ինչ

ոգւոյ, նշանակեն ներքին խնդութեան վասն զուարթարար ինչ առարկայի՝ երևեցուցչի անցաւ իմն տգեղութեան: Եւ շարժման ոգւոյն զհետ գայ շարժումն սրտի և կրծոց, որ ցնցէ զատոծանելին և զմկանունս բերանոյ և աչաց: Ուստի որ ծիծաղի, բացագանչէ բարբառ այսպիսի. Ո՛վ հաճութեանս մեծի: Բաւէ, այլ ոչ կարեմ ժուժալ: Մահ է ինձ 'ի ծաղուէ: Բայց յուշ լիցի քեզ, զի թէ տգեղութիւն առարկային է աղտեղի, և զգալի, շարժի նախ բաղձանքն զգայական, և կիրք անարգ խնդութեան, որ ձևացուցանէ ծիծաղ ինչ ուժնգակ և տարապայման: Այլ թէ տգեղութիւնն է իմանալի, որպէս 'ի զրոյցս նուրբս կամ երգիծականս և հանճարաւորս, շարժի նախ բաղձանքն իմացական. և ծիծաղն է առաւել պայմանաւոր, վասն լինելոյն առաւել 'ի միտս քան 'ի զգայութիւնս: Իսկ թէ առարկայն է խառն 'ի զգալւոյ և յիմանալոյ, խառն լինի և ծիծաղն:

Ապա թէ կամիցիս գիտել, զինչ կիրք իցէ այն՝ զոր արտաքին և սրբազան իմաստասէրք կոչեն Ցանկութիւն: Պատասխանեմ, է սա բառ բազմանշան: Վասն զի ընդարձակապէս նշանակէ զամենայն զգայական բաղձանս, բովանդակելով զցասմնականն համայն և զցանկականն: Նշանակէ զցանկականն. և զկիրսն յօժարեցուցիչ սրտի առ հեշտութիւն, զորմէ՝ վասն զի նիւթ է ժուժկալութեան և անժուժկալութեան, յիրաւի է մեզ խօսել ընդարձակագոյն:

# ՅԱՂԱԳՍ ՀԵՇՏՈՒԹԵԱՆ

## ԳԼՈՒԽ Ա.

*Յաղագս երկեակ ազգի հեշտութեան:*

ԱՅՍ այն է, որ յամենեցունց խնդրեալ, այլ 'ի սակաւուց ծանուցեալ, զզգալիցս ևս յաւէտ տխրեցուցանէ քան ուրախ առնէ: Եւ այս պատահէ վասն մարդկային ցանկութեան՝ խաբեալ խաբեբայի, որ անզգուշութեամբ ըմբռնէ զհեշտութիւն ինչ փոխանակ այլոյ: Երկուս Ափրոդիտաս առասպելէին նախնի դիւցաբանք [285]. մի երկնային՝ դուստր Դիոսի և լուսոյ, մայր առաքինական սիրոյ. և միւս դժոխային՝ դուստր



սանդարամետի և գիշերի, մայր մոլեկան սիրոյ հակամարտի: Զի ոչ ինչ բարի առանց հակառակի, և ոչ հակառակ ինչ առանց վիճի: Երկաքանչիւրոցն յԱթէնս նուիրեցաւ մեհեան՝ պէսպէս զոհիւք. զի նա օգտեսցէ, և սա մի՛ վնասեսցէ. յորմէ ծագեաց այն ճարտար զրոյց, թէ և չարաց դից պարտ է մատուցանել զոհս: Այս երկու Ափրոդիտք, որպէս մեկնէ մեզ Պղատոն, ոչ այլ ինչ են բայց երկու այլևայլ հեշտութիւնք. մին ազնուական, և միւսն որ սեպհական է մարդոյ ըստ որում բանական. միւսն անարգ և ծառայական, որ հասարակ է անասնոց անբանից: Նա ծնեալ յերկինս, այսինքն 'ի բարձրագոյն մասն հոգւոյ, միշտ առաջնորդէ յերջանկութիւն. սա ծնեալ 'ի սանդարամետս զգայութեանց, յորժամ շիջնի յերկնայնոյն, առաջնորդէ 'ի թշուառ կեանս: Թէ յիշես դու զայն երկու աղջկունս երկճիղ ճանապարհին Պռոդիկոսի, այնպիսի երեսք են երկոցուն Ափրոդիտացս: Երկնային բամբիշն ցածուն, և ծանրութեամբ զարդարեալ, առաւելու 'ի ճշմարտութեան քան 'ի նանրութեան: Դժոխայինն պերճ և զուարթագին առ երեսս՝ սնապաճոյճ պճնութեամբ, իբրև զհուկն Կիրկէ, թէ զերծուն 'ի նմանէ զարտաքնայարդար կերպարանն և լուծանեն զկամարն, մնայ անպաճոյճ՝ դժոխային ինչ ուրուական: Վասն այսորիկ անզգոյշք, որպիսի են բազումք 'ի մարդկանէ, զստապատիր հեշտութիւնն ճշմարիտ կարծեալ՝ ըմբռնին 'ի հաղբս. և յայնժամ առաւել թշուառանան, յորժամ կարծեն զանձինս 'ի բարօրութեան: Ապա միայնոյ բարոյական իմաստասիրի անկ է իմացուցանել, որ իցէ ճշմարիտ, և որ սուտ. իբր զի հեշտութիւնն է գլխաւոր վարձ բարոյականին, որ բովանդակ ամփոփեցաւ յայս իմաստ: Նա է առաքինի, ոյր բերկրութիւն և տխրութիւն է 'ի վերայ այնր, որ արժան է: Նա է մոլի, ոյր բերկրութիւն և տխրութիւն է 'ի վերայ այնր, որ չէ արժան: Արդ այս ծանօթութիւն կախեալ կայ զսահմանէ, որպէս արդ լուիցես:

## ԳԼՈՒԽ Բ.

*Թէ զինչ իցէ հեշտութիւն:*

Հեշտութիւնն է կատարելութիւն ինչ գործողութեանն, զոր համարի իւրաքանչիւր ոք պատշաճող անձին: Այս հաւաստեալ սահման է ճեմականաց. որոյ մասունք՝ թէ քաջ մտաւսն, բովանդակեն զամենայն զոր ինչ մարթ իցէ ասել 'ի նիւթ այսչափ հաճելի, միանգամայն և վտանգաւոր:

Որովհետև կեանն է կարգեալ առ 'ի գործել, ընդհանուր

առաքինութիւնն համեմատ զամենայն բնաւոր գործողութիւնս մանաւոր իմն բերկրանօք, 'ի յօրդոր գործելոյ. զի ոչինչ կարողութիւն մնայցէ անգործ յինքեան, և անպիտան աշխարհի: Հաճութիւնն զոր զգան աչք՝ 'ի վայելել 'ի լոյս և 'ի զուարճալի գոյնս, անուշութիւնն որ հեղու յունկն զօդային մեղր մեղեդեաց, և ամենայն փափկութիւնք այլոց արտաքին զգայարանաց, ոչ այլ ինչ են, բայց անուշակ համեմունք բնաւոր գործողութեանց: Բայց բաց 'ի հաճութենէ արտաքին զգայութեանց, հաճեալ է և երևակայականն ընդ իւր երևակայմունս. և անրջական ձախութիւնք իսկ՝ թէպէտ և սուտք, են բերկրականք, զի են երևակայեալք: Հաճ է և յիշողականն ընդ անցեալ հաճոյս, առաջի արարեալ զնոսա յիշատակութեամբ նոցին: Նա, որ ինչ դառն էր 'ի կրել, քաղցրանայ 'ի յիշատակել զայն: Զի որպէս չունելութիւն բարւոյ մեծի՝ է մեծ ինչ չար, նոյնպէս չունելութիւն մեծի չարի է մեծ ինչ բարի: Հաճեալ է կամքն ընդ մարդութիւն իւրոյ առաքինութեանց. զի եթէ պտուղք իսկ չար ունակութեանց են քաղցր, ևս առաւել քաղցր են պտուղք առաքինական ունակութեց: Հաճեալ է միտքն ընդ տրամաբանել, ընդ հրամայել և ընդ ուսանել իւր, և ևս առաւել ընդ խորհել իւր զխորին խորհուրդս երկնայնոց և աստուածայնոց: Զի յերևել նմա, թէ յափշտակեալ իցէ յերկինս, կամ յինքն կորզեալ զերկինս, վայելէ 'ի մահկանացուաց միջի յերջանկութիւն անմահից: Արդ այս ամենայն համեմունք գործողութեանց զգայականաց կամ իմացականաց՝ կոչին վերջին կատարելութիւնք գործողութեանց, և այն է հեշտութիւն:

Ապա ամենայն հեշտութիւնք բերկրալի առնեն զգործողութիւնս, բայց ոչ ամենայն գործողութիւնք են բերկրականք: Այնք են բերկրականք, որք ըմբռնին որպէս պատշաճականք. և այս պատշաճողութիւն հաստատեալ է 'ի համեմատութիւն առարկային ընդ տրամադրութեան կարողութեան: Առարկայից ոմանք բնաւորապէս պատշաճին ամենայն մարդկան. ոմանք իւրաքանչիւր հասակի, ոմանք ասախձանի իւրաքանչիւրոց, և ոմանք այժմու տրամադրութեան, և ըստ պիտոյից իւրաքանչիւրոց. որպէս սովելոյն կերակուր, վաստակելոյն հանգիստ, կալանաւորին ազատութիւն: Բայց ընդհանրապէս ամենայն ինչ բաղձալի՝ 'ի լինել զբաղձանս է բերկրական: Վասն այսորիկ Պղատոնականք սահմանէին զհեշտութիւնն լրումն պակասորդի. և զցաւն պակասորդութիւն լրման: Մինչ զի թէպէտ և գործողութիւնքն իցեն մտաց, կամ զգայութեանց ներքնոց, և կամ զգայութեանց արտաքնոց, հեշտութիւնն միշտ է 'ի բաղձանս: Հեշտութիւնք զգալիք 'ի զգայական բաղձանս, այսինքն է 'ի կիրս. և հեշտութիւնք իմանալիք յիմացական բաղձանս, այսինքն է 'ի կամս:



Մնայ արդ ճանաչել, թէ որպէս հեշտութիւնն իցէ կատարելութիւն գործողութեան: Երկուս կատարելութիւնս ունի իւրաքանչիւր գործողութիւն բերկրական: Մի ներքին, և էական գործողութեանն. ըստ այնմ որ ամենայն գործողութիւն է կատարելութիւն գործողական կարողութեան. որպէս ամենայն պտուղ է կատարելութիւն տընկոյն, և ըստ այսմ ամենայն ներգործութիւն է կատարելութիւն ունակութեան: Այս է ներքին և էական կատարելութիւն գործողութեան: Երկրորդն է կատարելութիւն ինչ պատահական և արտաքին, ծագեալ 'ի բաղձանս (որպէս ասացաւ) 'ի պատշաճող գործողութենէ: Առաջին կատարելութիւնն է տեսակ ինչ, որ տարբերէ զէութիւն գործողութեան իւրք յէութենէ այլոյ. որպէս զտեսանել 'ի լսելոյ, կամ զտեսանել զայս ինչ առարկայ՝ 'ի տեսանելոյ զայլ առարկայ, քանզի յայտ է թէ տեսանել զծառ չէ տեսանել զգաղան: Բայց հեշտութիւնն է տեսակ ինչ եկամուտ, որ տարբերէ զհաճոյական գործողութիւնն յանհաճոյ գործողութենէ. կամ զհաճութիւն ինչ յայլմէ, իբր զի յայտ է թէ մի և նոյն գործողութիւն է զի հաճոյանայ միում և ոչ միւսում, վասն զի միում է պատշաճական, և միւսում ոչ. որպէս մի և նոյն կերակուր քաղցր է առողջի, և տաղտկալի հիւանդի: Ապա հեշտութիւնն է վերջին կատարելութիւն մարդկային գործողութեանց. զի յանկ հանէ նա զշարժմունս ոգւոյ, կարէ զթևս սիրոյ և ցանկութեան, սպանանէ զյոյս և զերկիւղ, յաղթանակէ բարկութեան և ցաւոյ, և ստացութեամբ առաջակայ բարւոյն՝ ամենայն անհանգըստութեանց տայ հանգիստ և դադար: Ապա չորք իրք ընթացակցին 'ի հեշտութեան. Կարողութիւն, Առարկայ, Գործողութիւն, և Հաճութիւն: Կարողութիւնն է սկիզբն շարժեալ, առարկայն է սկիզբն շարժիչ, գործողութիւնն է շարժումն, հաճութիւնն է աւարտ: Գործողութիւնն է նիւթ, հաճութիւնն տեսակ, բայց տեսակ արտաքին և պատահական: Մինչ զի 'ի լինել կարողութեանն տրամադրագոյն, և առարկային ամոքագոյն, և գործողութեանն պատշաճողագոյն գործօղին, հեշտութիւնն լինի քաղցրագոյն, և հանգստագոյն 'ի հանգստեան: Բայց 'ի վեր քան զամենայն հարկաւոր է ըմբռնումն պատշաճողութեան. զի բաղձողական կարողութիւնք ոչ շարժին, բայց եթէ լուսով ըմբռնողականին. և առանց ըմբռնման առարկայք ցաւագինք ոչ ցաւեցուցանեն, և բերկրականք ոչ բերկրեցուցանեն: Եւ զօրին հակառակն, շատ է թէ իցէ ըմբռնումն, 'ի լինել բերկրականաց ցաւագին, և ցաւագնաց բերկրական: Բազումք են թշուառք, զի ոչ ճանաչեն զիւրեանց երջանկութիւն. և բազումք են երջանիկք, զի ոչ ճանաչեն զիւրեանց թշուառութիւն. մինչև կարծել

միում 'ի փիլիսոփայից թէ երջանկութիւն և թշուառութիւն իցեն կարծիք։ Այնչափ երջանիկ էր աղքատն Թրասիւղոս[286], որ կարծէր զինքն լինել թագաւոր. որչափ թշուառ էր արքայն Դիոնեսիոս, որ կարծէր հանապազ ունել սուսեր կախեալ 'ի վերայ գլխոյ։

## ԳԼՈՒԽ Գ.

### Յաղագս հեշտութեան մարմնոյ և հոգւոյ։

Հոգին է սկիզբն մարդկային գործողութեանց, և մարմինն է գործի հոգւոյ, որպէս այլուր տեսցուք։ Բայց անհնար է մարմնոյ լինել ըմբոն գործի, թէ չիցէ 'ի նմա բնաւոր ինչ կազմութիւն պատշաճական։ Պիտի 'ի մարդկային մարմնի կուռ ոսկերաց, աղխաղխեալ յօդակապօք և մկանամբք և ջղօք 'ի դիւրութի շարժման, ծեփեալ մսանամբք 'ի դրդութիւն զգայութեան, պատատեալ երակօք և շնչերակօք 'ի ճապաղիս արեան և ոգւոց, հաստատեալ բարեխառնութեամբ չորից հիւթոց և չորից առաջնոց որակութեանց, յորոց ծագեն պէսպէս խառնուածք և 'ի խառնուածոց անտի այլևայլ բնաւորութիք յիւրաքանչիւր անձանս։ Պիտին և 'ի հոգին բազմօրինակ համեմատութիւնք կարողութեանց արտաքնոց և ներքնոց, կենսականաց և կենդանականաց, բաղձողականաց և իմացականաց, որք կազմ իցեն և պատրաստական առ իւրեանց անբանական և բանական գործողութիւնս։ Իւրաքանչիւր մասնիկ մարմնեղէն կազմուածոյ թէ խախտի կամ այլայլի, բովանդակ բաղադրեալն զգայ զցաւ։ Նմին իրի անդամք ընդ թուով անկանին, այլ ցաւք նոցա են անթուելի։ Ծառ մի 'ի ծովեզեր Թրակիոյ կարեալ յԵնէասայ եհան 'ի վերայ արիւն, և 'ի կրծոնոյ անտի հեծութիւն։ Զի եթէ բուսականք ունէին զգայութիւն, ցաւ լինէր ծառոյ զգալ թէ զրկի 'ի մասնէ ինչ, որ ամբողջութեան իւրոյ կազմածոյ և ազատութեան իւրոց գործողութեանց էր պատշաճող։ Եւ բերկրութիւն լինէր նմա ծծել արգաւանդ հիւթս, ճապաղել ոստս, արձակել տաղարթս և բերել պտուղս։ Ըստ այսմ օրինակի՝ յորժամ մարմինն ունի զամենայն պատշաճեալս իւրոց բնաւոր գործողութեանց առանց ինչ խափանածոյ, բնութիւնն 'ի նմա է կատարելապէս արամադրեալ, վասն որոյ և ուրախ։ Եւ զորին հակառակն՝ այնչափ ցաւ է նմա և տրտմութիւն, որչափ 'ի բնաւոր վիճակէ այլայլի կամ խափանի։ Արդ ոչ այլ ինչ է հեշտութիւն պատշաճականաց մարմնոյ, որպիսի են գործողութիւնք զգայութեանց արտաքնոց։ Եւ հեշտութիւնն հոգւոյ՝ կատարելութիւն ինչ գործողութեանց պատշաճականաց հոգւոյ, որպիսի են խօսել, հրամայել և խոկալ։ Այսպիսի է բերկրութիւն զգօնամտաց, որք հասանեն 'ի ճանաչումն գաղանի և նոր ինչ գիտողութեան։ Այսպիսի եղև բերկրութիւն Արքիմեդեայ, որում իբրև հրամայեցաւ 'ի Հերոնէ արքայէ գտանել՝ քանի խառնուրդ ստար հրահալելոյ կայցէ 'ի պսակ մի ոսկեղէն՝ առանց հալելոյ զայն, գտեալ սորա զապացոյցն ամանով ինչ ջրոյ, իբրև խելայեղ աղաղակէր 'ի խնդութենէ եթէ գտի, գտի, որպէս թէ գտեալ էր մեծ ինչ գանձ։ Այսպիսի եղև և բերկրութիւն Պիւթագորայ. որոյ գտեալ զհռչակաւոր զերկրաչափական ցոյցն, որ առ Եւկլիդեայ է երեսներորդ ութերորդն առաջին գրոց, զոհեաց Դիոսի հարիւր զուարակս, որպէս թէ ստացեալ էր մեծ ինչ թագաւորութիւն[287]։ Ապա այսու օրինակաւ՝ է հեշտութիւն, որ հաճէ զբաղձանս զգայական, և է որ զիմացականն։ Բայց միոյ հաճոյք զեղուն 'ի միւսն. և թէ մին ախտակրէ, միւսն ախտակցի։ Կարի գորովանօք սիրեն զմիմեանս այս երկու անբաժան ամուսինք հոգի և մարմին. և 'ի լծակցութեան իւրեանց՝ հասարակաց են նոցա բարիք և չարիք։ Թէպէտ երբեմն՝ որպէս պատահէ 'ի մէջ սիրելի լծակցաց, երբեմն առ միմեանս խեթահար, բայց և այնպէս՝ առ վայր մի է կռիւն, և երկար՝ հաշտութիւնն, և սէրն է նոցա թարգման և միջնորդ հաշտութեան։ Մինչև հեշտութեան մարմնոյ յոլովակի ընկլուզանել և 'ի մոռացօնս արկանել զոգի. և ուրախութեան ոգւոյ ցայտել 'ի մարմինն, և փայլատակել յերեսս։ Վասն այսորիկ իմաստնապէս ասացաւ թէ դիւրութիւնք մարմնոյ՝ դեղ են ոգւոյ։ Զի զոր օրինակ ցաւք, երկիւղ, անսուաղութիւն և ախտք, 'ի շարշարել զմարմինն՝ ամբոխեն և խափանեն զոգի յիւրոց ազնուական գործոց, նոյնպէս չափաւոր հաճոյք, զուարթութիւնք ընդ խաղ, անոյշ կերակուրք և քաղցր հանգիստ, 'ի կազդուրել զոյժ մարմնոյ՝ զօրացուցանեն զզօրութիւնս ոգւոյ։ Թող զի հաճոյք մարմնոյ ունին իւրեանց կոպար. յոր իբրև լինի հասանել, խնդութիւնն յետս ընկրկեալ փոխի 'ի տաղտկութիւն։ Յորժամ որովայնն է յագեալ, անուշութիւն կերակրոյն փոխի 'ի զզուանս, և հաճոյքն լինին տանջանք։ Բայց բերկրութիւն մտաց չունի ինչ կէտ նպատակի. որչափ առաւել ճարակէ, այնչափ առաւելու ախորժակ քաղցի. հնար է մարդոյ ուտել աւելի քան զչափն, այլ ոչ է հնար գիտել աւելի քան զչափն։ Ապա թէ երբէք հոգի՝ երկասիրութեամբ մտաց խոնջի, խոնջութիւնն չէ հոգւոյն, այլ մարմնոյն. զի արուեստաւորն է անձանձիր, այլ գործին տկար։ Յասացելոյս մարթ է քեզ դիւրաւ որոշել զերկեակ արոհմունս հեշտութեան։ Ոմանք ինքեամբք ամենայնիւ են բարի. զի ծագին 'ի գործողութեանց բնութեան բոլորովին

կատարելոյ, որպիսի են առաքինութիւնք և գիտութիւնք։ Ոմանք են հեշտութիւնք, ոչ ամենայնիւ ինքեամբք բարի, այլ ըստ այնմ որ արբանեկեն 'ի կատարելագործել զբնութիւնն. որպէս դիւրութիւնք մարմնականք, որք 'ի բաց առնեն 'ի հոգւոյ զխափանարարն բնաւոր և առաքինական գործողութեանց, և սոքա են դեղք հոգւոյ։

Արդ դիւրին լիցի քեզ որոշել զերկուս Ափրոդիտոս, առ իմանալ՞ որ իցէ երկնաւորն, և որ դժոխականն։ Այսուհետև ոչ են մեր զոյգք առ որոշելոյ զհեշտութիւն մարմնոյ 'ի հեշտութենէ ոգւոյ, այլ առ որոշելոյ զհեշտութիւն մոլեկան յառաքինականէն. զի եթէ մարմնական և եթէ իմացական հեշտութեանց ոմանք են առաքինականք, և ոմանք մոլեկանք, ոմանք ճշմարիտք, և ոմանք սուտք. որպէս և լուիցես։ Եւ արդ տաժանն է, որ ցրեալ զթուլութիւն և 'ի բաց արարեալ ըզպատրուակ հեշտութեանն ծածկելոյ՝ 'ի յայտ ածէ զնորա տղծութիւնս և զգարշ տգեղութիւնս, և զհետևողաց նորա նախատինս։ Ապա մոլեկան հեշտութիւնն է սուտ զուարճութիւն ինչ ծագեալ յայնմ գործողութենէ, որ պատշաճական թուի միայն տրամադրեցելոյն առ մոլութիւն. որպէս արբեցութիւնն անժուժկալին։ Ուստի և մոլեկան տխրութիւնն է ախտ ինչ ծագեալ յայնմ գործողութենէ, որ անպատշաճ թուի միայն տրամադրեցելոյ առ մոլութիւն. որպէս զգաստութիւնն անժուժկալին. և աշխատութիւնն ծուլին։ Մի և նոյն ախտ է չարազգած կարողութեան, միտել 'ի չարն և փախչել 'ի բարւոյն. խնդալ ընդ վնասակարս, և խորշել յօգտակարաց։ Սմին իրի որպէս մոլութիւնք և առաքինութիւնք զանազանին 'ի միմեանց պէսպիսութեամբ կարողութեանց և առարկայից, նոյնպէս մոլեկան հեշտութիւնն ընդհանրապէս բովանդակէ յինքեան զամենայն հեշտութիւնս ծնեալս յանկարգ կարողութիւնս 'ի մոլեկան առարկայից։ Ուստի և առասական անուամբ հեշտասէրս կոչեմք զամենեսին զնոսա, որք զհետ երթան մոլեկան հեշտութեանց, և փախչին յառաքինական գործոց. զի չարայօժար բնութեան այնպիսի են դիւրինք, և այսպիսի դժուարինք։ Արդ զոր օրինակ 'ի կարողութեանց ոմանք են զգալիք, և ոմանք իմանալիք. նոյնպէս 'ի հեշտութեանց՝ որք թշնամիքն են առաքինութեան, ոմանք անկեալ դնին 'ի ստորայարկ զգայական մասին, և ոմանք 'ի գահաւանդ իմացականին։ Բայց է միւս ևս ազգ միջնայարկեան, յորում կամ զգօնութիւնն զգաստացուցանէ զզգայութիւն, և կամ զգայութիւնն կուրացուցանէ զզգօնութիւն։ Եւ բաց յայսմանէ՝ հեշտութիւնք ինչ են մոլեկանք վասն առարկային, որ յիւրմէ է ապօրինաւոր. և այլք վասն չափազանցութեան միայն, որ անցուցեալ զգործն յօրինաւորէ յապօրինաւոր՝ փոխէ զդեղն 'ի մահադեղ։



Ապա 'ի մոլեկան հեշտութեանց ոմանք են անասնայինք, աղտեղիք, և ամօթականք. և ոմանք փարազնականք, հետաքնինք, և գրգականք։ Անասնայինք են այնք որք խնդրեն զանխառն տեղիս առ ապահովութեան և առ ամօթոյ։ Ափրոդիտք այս՝ դժոխականք, խաւարասէրք, և արժանիք թաղելոյ 'ի դժոխային խաւարի։ Աւելի քան զդժոխականն եղև Արտաշէսինն, որոյ ազգապիղծ բազմակնութեամբ ածեալ կնութեան զերկուս զիւր դստերս, նախանձաբեկս արար զերկաքանչիւրն հարճիւք ըստ աւուրց տարւոյ, և եկամուտ յաւելուածովք ըստ ժամաթուի աւուր։ Այսչեան սանդարամետք, զի թագաւորն Մարաց ոչ ժուժեաց կեալ՝ առանց այնչափ Ափրոդիտաց, մինչ պեան սանդարամետից շատացու միով միայնով։ Ոչինչ նուազ անասնայինք և ամօթականք են և հեշտութիւնք շուայտութեան և արբեցութեան. որպիսի էր Արիգամասայն, որ հրաւիրեալ յԱրիոբարզանայ արքայէ 'ի մեծապատրաստ հանդիսի կոչունս, անձամբ միայն լափլիզեաց զամենայն զոր հանդերձեալ էին ուտել կոչնականք, և ցամաքեցոյց զամենայն կարասս։ Ինքն միայն եղև կոչնական, իսկ այլքն ամենայն ակնկառոյց դէտք, զարմացեալք թէ զիարդ մի միայն փոր զամենայն փորոց նոցա տարաւ զուտեստ։ Այս հեշտութիւնք են անասնայինք և հիւթանիւթեայք, որք աւելազանցութեամբ օգտակարաց մարմնոյ այնպէս զնա յուռացուցանեն, մինչև նոյն իսկ մեղաց լինել նմա պատուհաս։

Իսկ այլք են հեշտութիւնք նոյնպէս անասնայինք ըստ ըզգայական բաղձանաց, այլ անծանօթք անասնոց։ Զի են ճապկութիւնք ջանաջնարեալք 'ի մարդկային մտաւորութենէ, և վասն այնորիկ կոչին փարազնականք։ Եւ որ անձնատուր լինի 'ի սոսա, ոչ հեշտասէր կոչի, այլ գիրգ։ Ծառայական մոլութեանն զեղխութեան սովոր է յաջորդել փարազնական մոլութիւն պերճութեան, գոլով փափկութեան և գրգանաց ամենայն զգայարանաց։ Մինչև նոցա ակարացուցանել զմարմինս. այլ սոցա ակարացուցանել զոգիս։ Չիք մոլութիւն քան զայս գիրգ, բայց և չիք քան զայս բուռն յիգացուցանել զհուժկու արս։ Զօր ջանաջնար եղև տեսչութիւնն զբօսեցուցանել զաչս այնչափ գեղեցկապիտակ տեսարանօք, ծաղկազարդութեամբ աստեղաց յերկինս, և աստղազարդութեամբ ծաղկանց 'ի դաշտս, և այնչափ պէսպիսակ գեղովք, առ ածքել 'ի սէր և 'ի զարմանս։ Անցոյց զանցոյց Ոստիոս Լիբերոնիոս գտանել գրգանս ընդվայրաքնինս և նախատս, 'ի զբօսեցուցանել զաչս իւր, ագուցեալ պէսպէս հայելիս 'ի սենեակս իւրոց հաճոյից, 'ի փոփոխել զանձն՝ ըստ Նարկիսոսի։ Դոյզն և թարմատար գրգանք թուէին թագաւորաց Աստրեասանեայց արբենալ քաղցր օշարակօք, թէ ոչ արբեցուցանէին և զականջս անառակ երգօք մերկ յուշկապարկաց։

Նա՝ առ առաւել՝ յանցաւորել զերաժշտութիւն, կարէին ցաւագին կորզաւ զպուռութիւն ազնուական ալայոց, զի՛ ի նրբաձայն աւաչելոյ՝ երգեցիկք թռուցին վարձակք: Բայց վասն հաստատելոյ ոչ չար եղև Վերրէսի պրետորի Սիկիլեայ նմանապէսել զբարս խողի, զորոյ կրէր և զանուն, յորժամ ընկողմնեալ՝ ի պատգարակ շրջէր ընդ գաւառն, որպէս խոզ ինչ մայլեալ. եգիտ և գիւտ գրգանաց, կախեալ զանգայ վանդակագործ քսակս վարդալիրս. գրգանք որ ոչինչ էին ճահողական անգայ անասնոյ աղմաւրի [288]: Բայց զանցոյց զամրաւ Աւրէլիոս Անտոնիոս, որոյ գլխովին ուշ եդեալ բարեբասել զանգուռն՝ լուղէր՝ ի ոսթագին աւուրս՝ ի լիճ ինչ անուշահոտ ջուրց. և լողեցուցանէր զլյա ձրագաց՝ ի բալասանի, զի և ծուխն լիցի նմա խնկենի: Բանի Նուկուղղոսք աշխատ եղեն զենի՝ ի տալ ճաշակելեաց ճաշակ՝ օտարոտի ինն և անլուր համեմիւք: Բայց չեղև ինչ անլուր օրինակ քան զԱնտոնիոսին և զԿղէոպատրայն: Սոցա մեծագործութեամբ ընթրեաց անցեալ զանցեալ զամենեքումբք, որք գտող եղեն արուեստի՝ ոչ մերժելոյ, այլ զարթուցանելոյ զքաղց, 'ի բաստ եկին ընդ միմեանս, թէ ո՛ կարող լիցի գտանել գրգանս մեծահարուստս, և գրգական մեծութիւնս 'ի հրաւիրել զմիմեանս 'ի կոչունս: Անչափ մեծածախ համադամս Նուկուղղեան գպրոցի եգիտ Անտոնիոս, մինչև թուէր անյաղթելի: Բայց պարտեցաւ յեգիպտական հանճարոյ. քանզի կորզեալ տարփածուի նորա Կղէոպատրայ յիւրմէ ունկանէ մարգարիտ մի որ արժէր զԹագաւորութիւնն, եա ընկել Անտոնիոսի՝ ողղեալ և համեմեալ. կամէր ողղանել և զլյդ նորա, բայց Անտոնիոսի պարտութիւն խոստովանեալ, չթողացոյց: Բանի փափկութիւնք հասին ուրեմն յնորհեցան 'ի նուաղել զյեանորդ զգայութեանն ապականութիւն 'ի նեղութենէ. աքսորեցան մաշկեայք և ասուիք, որք պաշտպանէին զմարմինս 'ի պատահարաց օդոյ. սկսան քողել զմերկս ծառոց վասն մետաքսի. ծեծել զվուշ Հոլանդիոյ, անկանել ոստայնս թափանցս և թեթևս, մինչև չիմանալ թէ մարմինն զգեցեալ ինչ իցէ թէ մերկ: Ոչ կարէին գտանել քուն գիշերոյ՝ բայց 'ի փափուկ անկողինս, որոց առընթերնոյին աշխատութիւնք կակղէին արդեօք և զապառաժ քարինս: Ոչ տեսան առանց հեծութեան, ոչ թէ ցաւոց վէրաց, այլ և ոչ չիթելոյ ճանճից. որ և զմի 'ի հռովմէական կայսերաց արար ճանճորս [289]: Չհաւսին առացից. ոչ զօրէն հանդուրժել այնմ, որում ամենայն մարդոյ պարտ է հանդուրժել. ոչ 'ի սակս անզօր և ակար խառնուածոյ, այլ 'ի սակս մոլեկան ունակութեան, որ թուլամորթից զդոյզն տաղտկութիւն առնէ ծանրատաղտուկ: Ի ցուցանել քաջի արքային Լիւսիմաքոսի դեսպանաց եգիպտի արքային Դեմետրի զպղխս ժանեաց առիծու, յոյր վերայ ցասումն



Աղեքսանդրի զնա յարձակեցոյց, դեսպանքն ետուն պատասխանի. Դու ցուցանես մեզ զպղխս ժանեաց առիծու. և մեր թագաւոր ցուցցէ քեզ 'ի պարանոցի և 'ի բազուկս զպղխս ժանեաց յուշկապարկի: Եւ այն էր հարճ նորա սիրելի, Լամիա անուն որ թարգմանի յուշկապարիկ:

Ամենեքին այսոքիկ են մոլեկան հեշտութիւնք ցանկականին. ամօթականք հեստամոին, քան մնասակարք օտարի: Բայց ահաւոր և երկիւղալի հեշտութիւնք են հեշտութիւնք ցասմնականին: Ահընկէց են և այսօր ուշոյ յիշատակաց ցուլն Փալարեան, երիվարք Բուսիրեան, առիւծք Թէոդամասայ, ընկողինք Պրոկրուստեայ, ընթրիք Ատրէոսի, հերձիք ծառոց Սկինեսի [290]. և այլ մեքենայք հնարեալք 'ի մարդախոշոշ մարդկանէ. որոց քաղցր էր որպէս ազնկաց արիւն կենդանի, և որպէս ամէնի գաղանաց գիշատութիւն մարդկային մարմնոց: Նատ լիցի առաջի առնել զանգթութիւնն Աստրուբաղայ, որոյ կուտակեալ 'ի վերայ պարսպաց Կորքեգոնի ակնյանդիման Շիպիոնի և հռովմէական զօրուն զամենայն հռովմայեցիս, զորս ունէր 'ի կալանս, իբրև 'ի խաղալիկս խնդրոյս զուարճանայր յանձն, զի զմիոյ ուրուք բրէին զաչս, զայլոյ կտրէին զլեզու, զոմանս կարթակոտորս առնէին, և զոմանց կենդանւոյն զերծուին զմորթ, և զամենեսին բերադգի կառանօք տանջեալ կախէին զպարսպաց: Տեսիլ երկակի հեշտալի խժաբարոյին, 'ի լսել նորա զհեծութիւն ականջաց և ականելոյ. և 'ի տեսանել զաւոր զհոսումն արտասուաց, և անուի արեան: Նման են այսոցիկ հեշտութիւնք չարախօսաց. իբր զի բղխեն 'ի մի և նոյն աղբերէ ցասմնականին չարագործութիւն և չարաբանութիւն, որպէս այլուր ասացաք: Կարի անողորմ չարագործութիւն է սպանանել լեզուաւ քան սրով. և խոցել գրչաւ, քան նետիւ. զի մեծ կորուստ է կորուսանել զպատիւ քան զարիւն: Թող զի սպանողն վտանգելով իւրով սպանանէ զկենդանիս, այլ չարախօսն աներկեան սպանանէ և զմեռեալս: Բայց դոյզն և ծառայական հեշտութիւն բերէ անպաճոյճ և յայտնի չարաբանութիւնն. չարաչար ևս բերկրութիւն բերէ երգիծականն և հանճարաւորն: Որպէս բևեռ օծեալ հիթով ուժգնագոյն մխի 'ի փայտ, նոյնպէս չարաբանութիւն համեմեալ սրամտութեամբ խորագոյն խոցէ: Ոչ սխորժէր Մարտիալէս քերթող զկլոյցս նրբինս, թէ չէին կծանողք: Ջնոսա անուանէր խիւսս տղայոց, և զառաս կերակուրս տեարց: Ուստի գրի զնմանէ, թէ դիւրին էր նմա առնուլ 'ի բերան կայծ ինչ վառ, քան զբոյց ինչ չարախօս. և մատղիւր կորուսանէր զբարեկամ ոք, քան զմի 'ի զբուարճ խօսից: Են և այլ հեշտութիւնք մեծամեծք և մոլեկանք, որք գտան կարծեօք յարտաքին բարեաց. որպէս երևի յագահս, որք ըստ Պիտմաղիոնի [291] 'ի մթերել զինչս միշտ են ընչայեղցք,

և 'ի փառամոլս՝ որ ըստ գեանաւիծոց կերակրեալք հողմով գովութեան և պատուոյ, միշտ են փքոցուցոյցք և ուռեալք: Ցայժմ աղահական հեշտութենէ՝ ծնանի հեշտութիւն խաղացողաց, այս երկրական վասն յուսոյ յաղթութեան և շահելոյ ինչ, այլ միայնակար ազատ խաղացողի. որոյ յաջողութենէ 'ի շահելութիւն յեղեալ՝ վասնէ զինչս 'ի հեռաւորել ստացութեան. և չքաւորէ զառնն առ հարստացուցանելոյ զնա: Են և այլ ևս մոլեկան հեշտութիւնք իմացականք, որք ծնանին յանկարգ ցանկութենէ գիտելոյ. որպէս սնապաշտական կամ կախարդական և սատանայական արուեստք, որոց լաւ ևս է չգիտութիւն քան գիտութիւն: Եւ կամ ժամավաճառ գեղերանք աշտական արուեստից, որպէս վատնգաւոր բանաստեղծութիւնք, և գերասանական խաղարկութիւնք, վասնիչք ժամանակի և խանգարիչք բարի վարուց: Զհուսկն ասացից, այն ամենայն որում ստորին կամ վերին բաղձանք ըղձանան աւելի քան զպիտոյն, կամ ընդդէմ բանի, բովանդակ է հեշտութիւն մոլեկան. և զսորին հակառակն, այն ամենայն որ բերկրեցուցանէ 'ի կոպար բանի, է հեշտութիւն առաքինական:

## ԳԼՈՒԽ Դ.

*Հարցուածք 'ի վերայ հեշտութեան:*

Ի նախընթաց վարդապետութենէ զարթուցեալ՝ այլ ոչ լիով շատացեալ քո ուշիմ մտացդ, դուցէ նախ առաջին ցես հարցանիցես. Ո՞ր հեշտութիւնք իցեն մեծագոյնք, հոգեւորականք թէ մարմնականք: Որում ընդհանրապէս ասեմ պատասխանի, թէ մարմնականք են մեծագոյնք հայելով 'ի զգայական բաղձանս. զի են առաւել զգալիք, և հոգեւորականք են մեծագոյնք հայելով յիմացական բաղձանս, զի են առաւել իմանալիք: Իւրաքանչիւրն հաճ է ընդ այն, զոր համարի պատշաճագոյն իւրեան: Բայց թէ խնդրի բացարձակ, ո՞րք իցեն մեծագոյնք, յայտ է թէ կարողութեանն կատարելագունի կատարելագոյն է գործողութիւն. և գործողութեանն կատարելագունի կատարելագոյն է հեշտութիւն. վասն որոյ և մեծագոյն: Այն զի հոգեւորական հեշտութեանց ներքին գոլով, և զգալեացն արտաքին, մարթ է ասել թէ զգալին է 'ի ներքս 'ի հեշտութեան, և հոգեւորականն զհեշտութիւնն ներառնու յինքեան: Հարցանիցես և ևս. Եթէ ճշմարիտ է այն սահման, բարին է՝ որում ամենեքեան բաղձան, զի՞ է՝ զի ոչ ամենեքին ըղձանան առաքինական և իմանալի հեշտութեանց, այլ առաւել ընկղմին 'ի մարմնականս և 'ի մոլեկանս: Պատասխանեմ նախ, թէ թէպէտ ոչ ամենեքեան ըղձանան մի և նոյն հեշտութեան 'ի տեսակի, սակայն ամենեքին ըղձանան նմին 'ի սեռի. այսինքն, այնմ որ երևի պատշաճական և բարի: Զի ամենեցուն է բարի ոչ այն որ է բարի, այլ այն որ երևի բարի: Բայց բաց յայսմանէ՝ պարտ է հայել յայն, զի ընդհանուր բնութիւնն է աստուածական իմն. զի կախեալ կայ զառաջնոյն սկզբնէ որ է Աստուած. և ամենայն աստուածային գիծ առ ևս բարեգոյնն և կատարեալն: Վասն այսորիկ բնութիւնն միտեցուցանէ զամենեսին առ ճշմարիտ և կատարեալ հեշտութիւնն, որ է երջանկութիւն. որ և հաստատեալ կայ յիմացական գործողութիւնս: Բայց որպէս յառաջն ասացի, անզգուշաւոր միտք տարտամեալ 'ի խնդիր նորա, ըմբռնեն այլ ընդ այլոյ: Բայց ասիցես. Զի՞ է, զի զգալի հեշտութիւնք վաղվաղակի գան 'ի յափրութիւն. և որ մեծապէս էր հաճոյ՝ լինի մեծապէս անհաճոյ: Պատասխանեմ, թէ զգալի հեշտութիւնք ծնանին 'ի կրից. և զի կիրք են բուռն բերմունք վայրկենականք հաստատեալք 'ի բաղձողականն և ոչ 'ի բանաւորականն, ընդ դադարել բուռն բերմանն դադարէ և բերկրութիւնն: Նմին իրի առարկայք առ որս եռանդնաշարժ է տարփումն, վաղագոյն լինին ատելի: Բայց զի՞արդ գէթ իմանալի բերկրութիւնք ոչ հանապազորդեն. և զի՞արդ ուսումն և խոկումն մշտնջենաւորաց ոչ մշտնջենաւորեն 'ի միտս զհաճութիւն իւրեանց: Պատասխանեմ, թէ առարկայ ինչ էապէս կատարեալ, և կատարելապէս ըմբռնեալ կապէ զմիտս և զկամս մշտնջենաւոր կապանօք: Որ նկատէ զԱստուած դէմ յանդիման լուսով փառաց, անհնար է թէ յագեսցի երբէք: Բայց որ նկատէն լուսով գիտութեան, հնար է այնպիսւոյն զգալ յագուրդ վասն երկուց: Մի՝ զի մարմնեղէն կազմուածն, որ արբանեկէ մտաց, 'ի գործել անդ խուռն վատակի. որպէս խարտոց 'ի մաշել զերկաթ ինքն ևս մաշի: Եւ երկրորդ, զի այլ ինչ առարկայ առաւել սախպող կամ բերկրական լինի յանդիման. և ինքն անձկանօք և ևս գիտելոյ, թողու զայն որոյ էր 'ի խնդիր. որպէս որսորդ շունք փոխուցեալ զմի յերէոց վազեն յայլ: Վասն այսորիկ պէսպիսութիւն բնաւորապէս է հաճոյական, վասն անյագ գոլոյ զգայութեան առ անուլ զփորձ, և մտաց առ իմանալ զնորանորս: Եւ վասն զի նորոց իրաց առաւել մտադիր է միտք մարդկան, այնչափ առաւելու բերկրութիւնն, որչափ առաւելու մտադրութիւնն: Կամիցիս դուցէ գիտել և զայն, թէ երկու մեծամեծ՝ բայց բոլորովին տարբեր հեշտութիւնք՝ լինիցի՞ն միահաղոյն 'ի միում ժամանակի: Պատասխանեմ. ստոյգ է թէ որ յառեալ զմայլեալ իցէ 'ի քաղցրանուագ ինչ եղանակութիւն, այնպիսւոյն ոչ հնար հաւասարապէս միտ դնել միանգամայն 'ի հայել և

'ի զմայլել չափակցութեամբ քերութ ինչ նկարու: Վասն զի որպէս գործողութիւն ինչ խափանէ զայլ, նոյնպէս հեշտութիւն միոյ գործողութեան խափանէ զհեշտութիւն այլոյ գործողութեան. դէթ չթողացուցանէ լինել 'ի հաւասար աստիճանի: Վասն այսորիկ ասացաւ, թէ 'ի հարկանել Թրակացւոյ նուագածուին Որփէոսի զքաղցրանուագ զիւր կիթառ, մոռանային անդեայք զորսս, թռչունք զբոյնս և մարդիկ զիւրեանց գործս, յայն համաձայնութիւն լարից քաղցրութեամբ յափշտակեալք և անշարժ կացեալք: Որոյ պատճառն է, զի որպէս ամենայն բնական արարօղք, նոյնպէս ամենայն մարդկային կարողութիւնք ձգին ցորոշ ինչ կատար ներգործականութեան, յորմէ և անդր ոչ գործեն, կամ տկար գործեն: Եւ վասն այսորիկ որ ուշ դնէ գործոյ ինչ, ոչ կարէ միանգամայն ուշ դնել այլում գործոյ: Եւ յայսմանէ մարթիս քեզէն լուծանել զայս միւս եւ խնդիր, թէ էր աղագաւ վաղանց թուիցի ժամանակն այնմ որ 'ի վայելս իցէ, և երկար այնմ որ 'ի վիշտս իցէ: Նոյն է պատճառն: Իբր զի բերկրութիւնն այնպէս ընկլնու զմիտս այնորիկ որ 'ի վայելս իցէ, մինչ զի ոչինչ ուշ եդեալ նորա յաջորդական տեւողութեան ժամանակի, միակցէ զառաջին վայրկեանն ընդ յետնոյն, որպէս որ 'ի քուն իցէ. վասն այսորիկ յերկարաւոր ինչ ժամ թուի նմա բոպէ: Եւ զորին հակառակն, որ 'ի ցաւս է և 'ի վիշտս, ոչ այլ ինչ ըղձանալով, որպէս հասանելոյ 'ի վերջ, չափէ զամենայն բոպէս. և ամենայն բոպէ թուի նմա դար: Վասն այսորիկ նշան մեծ՝ լինելոյ ուրուք կատարեալ յիւրում արուեստի՝ է այն յորժամ ընդերկար աշխատի նա և չխմնայ. վասն զի, որպէս լուար, ունակութիւնն առնէ զերիս զայսոսիկ օգուտ. զի տայ պատրաստել զգործով բերկրանօք, դիւրութեամբ, և ընդերկար: Յայսմանէ իմանաս և ես թէ զիարդ յոյժ առաւել բերկրեցուցանեն քերթածք ոգեշարժք, որպէս եղերերգականք և գորովականք, քան զատենաբանական և զվարդապետական ճառս: Պատճառ այն է, զի ոգեշարժ իրք մեծապէս շարժեն զկիրս վասն զգալի իմն համակրութեան 'ի մէջ ախորժակին և առարկային. և 'ի շարժել զգայութեան ազդողագոյն գործէ երեւակայութիւնն. և վասն այսորիկ առաւել զմայլի քան 'ի խօսս սոսկապէս մտաւորականս: Եւ ես, կարողութիւնք իմացականք վասն զի վարեն 'ի պէտս ըղգործարանս զիրգս, դիւրագոյն խոնջին: Այն զի իմանալի խօսք միանգամայն հաճոյանան, զի լիով հաճեն զմիտս. բայց ոգեշարժք կրկին և կրկին լսելութեամբ կամ ընթերցմամբ՝ միշտ բերկրեցուցանեն. զի բաղձանքն չյագենայ երբէք: Խնդրիցես հուսկ ուրեմն. Արդեօք մարդիկ սիրիցեն զկեանս վասն հեշտութեան, թէ զհեշտութիւն վասն կենաց: Պատասխանեմ. կարի դժուարին է որոշել զսէր կենաց 'ի սիրոյ հեշտութեան: Զի որովհետև կեանք հաստատեալ են 'ի գործողութեան, և ոչ այլ ինչ է հեշտութիւն, բայց կատարելութիւն ինչ գործողութեան, ոչ է հնար սիրել զմին առանց միւսոյ: Սակայն և այնպէս երևի թէ առաւելապէս սիրելի իցեն կեանք քան զհեշտութիւն. զի որովհետև հեշտութիւնն հանգիստ իմն է բաղձանաց 'ի պատշաճական գործողութեան, ինձ թուի թէ ցանկութեանն պատշաճական գործողութեան պարտ է յառաջել քան զցանկութիւն հանգըստեան: Բայց և խոստովանելի է թէ ոմանք 'ի մարդկանէ սիրեն զհեշտութիւն առաւել քան զկեանս, և ոմանք զկեանս առաւել քան զհեշտութիւն: Վասն այսորիկ ոմանք առ չհանդուրժելոյ ցաւոյ կամ վատանունութեան, սպանանեն զանձինս: Եւ կամ առ վայելելոյ 'ի հաճոյս մարմնոյ, որպիսի են վավաշականք, կամ 'ի հաճոյս սրտի, որպիսի են փառք, բարձի թողլ առնեն զկեանս. զթիթռանն առելով. Մինչ թէ 'ի լոյս վայելեսցեն իմ աչք, թող այրեսցին փետուրք: Իսկ այլք զորին հակառակն հանդուրժեն հարուածոց և տանջանաց, կամ վատանունութեան և անարգ ծառայութեան, միայն թէ կեցցեն: Որոյ այն է պատճառ, զի որովհետև իւրաքանչիւր ոք զայն համարի լաւ, զոր համարի առաւել պատշաճական, ոմանք ըմբռնեն զայն պատշաճականութիւն 'ի կեանս, և այլք 'ի կատարումն հաճոյից իւրեանց: Բայց այր առաքինի, յաչս որոյ չիք ինչ յարգի բայց միայն համեստն, առաւել պատշաճական համարի զհամեստութիւն առանց կենաց, քան ըզկեանս առանց համեստութեան:

# ԳԻՐՔ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

## ՅԱՂԱԳՍ ԺՈՒԺԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՂԱԳՍ ԴԻՏԱԶՆԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

### ԳԼՈՒԽ Ա.

*Թէ զինչ իցէ ժուժկալութիւն:*

ԼՈՒԱՐ բազում անգամ, թէ բան և բաղձանք են երկու սկզբունք մարդկային առնելութեանց: Ասել բաղձանք՝ է ասել ցանկութիւն. է ասել կիրք ցանկականին և ցասմնականին, է ասել սէր հեշտութեան, և փախուստ 'ի ցաւոց: Եւ այսմ հակադրի անկրութիւն կամ անզգայութիւն և թմբրութիւն: Ասել բան՝ է ասել միտք լուսաւորեալ յունակութենէ բնական սկզբանց, որ է տրանջականն կամ խիղճ մտաց. է ասել համաձայնութիւն ընդ աստուածային կանոնի յորմէ յառաջ գան ամենայն օրէնք: Եւ այսմ բանի հակադրի չարութիւն կամ ազխտութիւն: Թէպէտ և բանն միտէ 'ի համեստն, և բաղձանքն 'ի բերկրականն, բայց և այնպէս յոլովակի միաբանին ընդ միմեանս և յոլովակի տարաձայնին: Յորժամ բանն է կանոնաւորեալ, և բաղձանքն կանոնաւոր, երկոքանչիւրն միաբանին 'ի բարին. և անտի ծնանին գեղեցիկ և կատարեալ առաքինութիւնք, որք ցուցան քեզ 'ի նախընթաց գիրս: Յորժամ ոչ բանն է կանոնաւորեալ, և ոչ բաղձանքն կանոնաւոր, երկոքանչիւրն միաբանին 'ի չարն. և յայնմանէ ծնանին ագեղ մոլութիւնք՝ այնց հակառակք: Յորժամ բանն է կանոնաւորեալ, բայց բաղձանքն անկանոն, յառնէ 'ի նոսա տարաձայնութիւն և վէճ, և որ զօրագոյնն է յաղթէ: Վասն այսորիկ եթէ բանն զօրանայ քան զբաղձանս, ծնանի ժուժկալութիւն. բայց եթէ բաղձանքն զօրանայ քան զբանն, ծնանի անժուժկալութիւն: Ապա ժուժկալութիւնն է առաքինութիւն ինչ հոգւոյ, որով կանոնաւորեալ բանն սանձէ զանկանոն բաղձանս հեշտութեան: Իսկ անժուժկալութիւնն է մոլութիւն ինչ հոգւոյ, որով բանն թէպէտ և կանոնաւո-



րեալ՝ զառածանի և յափշտակի յանկանոն բաղձանաց երթալ զհետ հեշտութեան: Մինչ զի յանժուժկալութեան ցանկութիւնն է ուժգնագոյն քան զբանն, և 'ի ժուժկալութեան բանն է ուժգնագոյն քան զցանկութիւն. զի յաղթեալն է տկարագոյն քան զյաղթողն:

Յասացելոց աստի մարթիս իմանալ նախ առաջին թէ ժուժկալութիւնն է առաքինութիւն ինչ անկատար. զի 'ի կատարեալ առաքինութիւնս եթէ բանն և եթէ կիրք են կանոնաւորեալք և միաբանք, բայց 'ի ժուժկալութեան ցանկութիւնն դեռ մարտնչի ընդ բանին. թէպէտ և հուսկ ուրեմն գայ 'ի պարտութիւն: Ուստի և անժուժկալութիւնն է մոլութիւն ըստ իրաց ինչ անկատար. զի թէպէտ բաղձանքն է տկար և անզօր, բայց դատումն է բանաւոր և ողջամիտ: Եւ ևս մարթիս իմանալ զտարբերութիւնն որ 'ի մէջ ժուժկալութեան և բարեխառնութեան: Վասն զի 'ի բարեխառնն ուղիղ է բանն, և ուղիղ բաղձանքն. բայց 'ի ժուժկալն բանն է ուղիղ, այլ բաղձանքն դեռ ըմբոստ: Մինչ զի բազումք են ժուժկալք, բայց սակաւք բարեխառնք: Եւ առ լաւ ևս իմանալ զայս, յուշ լիցի քեզ զոր լուարն 'ի ճառս բարեխառնութեան. այսինքն թէ ընդ մէջ գործողութեանց անբանից և անբարեխառն մարդկան այս է խտիր, զի յառաջադրիլ բերկրական ինչ առարկայի, անբանն առանց ինչ տրամաբանութեան բնաւորապէս յայն ընթանայ, որպէս քարն 'ի կեդրոն. բայց անբարեխառնն կազմէ 'ի սրտի տրամաբանութիւն ինչ առ ժամեան ըստ օրինակի գործողական և եզական հաւաքաբանութեան, այսպէս.

Ամենայն բերկրական է բաղձալի.
Այս առարկայ է բերկրական.
Ապա ուրեմն է բաղձալի:

Արդ քաջ տեսանես, թէ մեծագոյնդ այդպէս ընդհանուր և անկատար է սկիզբն ինչ զեղծ դատման և թիւրեալ բանի: Նմին իրի, եթէ զգալի ըմբռնողականն յառաջադրիլ բերկրական առարկայի՝ առնէ զփոքրագոյնն, այնուհետև թիւր ցանկութիւնն անբարբառ, բայց գործադրաբար, եզրակացուցանէ 'ի կողմն հեշտութեան, դիմեալ արագ գիրկս արկանել զնովաւ: Վասն զի 'ի միաբանիլ թիւր բանին ընդ թիւր բաղձանաց, այնուհետև առանց ինչ խափանածոյ բնաւորապէս զհետ գայ թիւր գործն: Այլ անժուժկալն, յորում բաղձանքն է զեղծ, այլ ոչ զեղծ է դատումն, ոչ ընդունի 'ի միտս իւր զայն ընդհանուր սկիզբն, այլ ամփոփէ զնա և կապարաւորէ բանիւ այսպէս. բերկրականն է բաղձալի, միայն թէ իցէ

համեստ: Բայց եթէ ըմբռնողականն, յառաջադրելնմա հրապուրողական ինչ առարկայի կողմէ զփոքրագոյնն հաւաքաբանութեան, խոկ այս ինչ է բերկրական. անդէն անժուժկալն առանց զկայ առնլոյ յայնմ դատողական կոպարի, թողու հրապուրանօք յափշտակիլ յանկարծ բաղձանաց առանբանաւորն հեշտութիւն: Բայց ժուժկալն՝ թէպէտ և չունի բարեկարգ բաղձանս, սակայն և այնպէս կացեալ հաստատուն յիւր սկիզբն կոպարաւորեալ 'ի բանէ, բուռն առնէ ցանկութեան, թէպէտ և միտեալ իցէ նա 'ի չարն և ըմբոստ, զի մի զանցանիցէ զկոպարաւ համեստութեան: Վասն այսորիկ անժուժկալն է առաւել ախտակցելի քան զանբարեխառնն զի ըստ ամենայն դատաստանաց՝ յանցանք որք գործին բորբոքեալ կրիւք, համարին առաւել արժանի ախտակցութեան: Եւ յայտ է թէ անբարեխառնն մեղանչէ կամաւոր ընտրութեամբ, և այս է չարութիւն. այլ անժուժկալն մեղանչէ 'ի թափոյ կրից: Վասն զի 'ի նմա բաղձանք հոլութեամբ զառածանին 'ի մտաց, 'ի սմա միտք ջերաջերմ վարին 'ի հրատապ բաղձանաց: Յորմէ զհետ գայ և այս ևս, զի անժուժկալն դիւրաւ ուղղի քան զանբարեխառնն, զի 'ի նմա չար է ուղղել զապականեալ բաղձանս. բայց յանբարեխառնն ապականեալ են և բաղձանք և դատումն, և դժուարագոյն է վանել զերկուս թշնամիս քան զմի միայն թշնամի:

## ԳԼՈՒԽ Բ.

*Առարկայք ժուժկալութեան և անժուժկալութեան:*

Յայտ է սահմանաւն թէ առարկայ ժուժկալութեան է հեշտութիւն: Բայց քանզի 'ի հեշտութեանց՝ որպէս տեսեր, ոմանք ծագեն 'ի ցանկականէն, և այլք 'ի ցասմնականէն, ոմանք 'ի մարմնաւոր բարեաց, այլք յարտաքին բարեաց. և այլք յիմանալի բարեաց, յիրաւի է քեզ խնդրել արդեօք այս ամենայն հեշտութիւնք իցեն առարկայք և նիւթք ժուժկալութե կամ անժուժկալուե: Թէ խորհուրդ հարցանես Արիստոտէլի, դիւրին է քեզ առնուլ 'ի միտ, թէ նիւթ բարեխառնութե և ժուժկալութեան է նոյն. զի երկաքանչիւրն նման են 'ի նիւթն, բայց աննման յեղանակն, ըստ որում 'ի միումն բաղձանքն է հլու քան 'ի միւսումն, որպէս ասացաւ. և վասն այսորիկ մին է առաքինութիւն, և միւսն կիսամասնեայ առաքինութիւն: Արդ յուշ լիցի քեզ զի 'ի ճառս բարեխառնութեան ասացաք թէ յատուկ նիւթ բարեխառնի է հեշտութիւն երկուց առողին և անարգագոյն զգայութեանց, որք հասարակ են ընդ



անասնոց. այսինքն ճաշակելեաց և շօշափելեաց. որոց մին հայի 'ի պահպանութիւն անհատին, և միւսն 'ի պահպանութիւն տեսակին: Ուստի և Արիստոտէլ 'ի ճառէն աստանօր զժուժկալութենէ թուի յայն կնքել զբանն, թէ յատուկ և ճշմարիտ ժուժկալութիւնն հայի միայն 'ի հեշտութիւն ճաշակելեաց և շօշափելեաց. և այլ ամենայն ժուժկալութիւն է նմանուկ և այլաբանական: Բայց յայլմէ կողմանէ, եթէ մոլութիւն է անժուժկալութեան՝ չանձնել զհեշտութիւն վաւաշ ցանկութեան, զիա՞րդ չիցէ մոլութիւն անժուժկալութեան չանձնել զհեշտութիւն վրէժխնդրութեան, գողութեան, փառամոլութեան, չարաբանութեան, ընդվզբրաքինութեան, և գինութեան ևս. 'ի մատնել անչափաւոր կրից, որք բաղում անգամ զեղուն յանհնարին աւելադանցութիւնս: Եթէ ժուժկալութեան է ճնշել զցանկութիւն, ո՞չ չասիցէ թէ ցանկութիւնն թևարկէ յամենայն ուրինչ է հաճոյ, եթէ զգալի իցէ և եթէ իմանալի: Ցանկութիւնն կրէ 'ի կապարճս ազգս ազգս նետից, է որ կապարեայ, է որ ոսկեղէն և է որ բոցեղէն. որովք խոցէ բազմօրինակ. ոմն սիրահարի անարգ հաճոյից, ոմն մեծութեան, և ոմն պատուոյ. ամենայնն է ցանկութեան: Ասիցէ ոք. ճնշել զայսսիկ մոլութիւնս՝ յատուկ է հեզութեան, արդարութեան, համբերութեան, քաղցրաբարոյութեան, խոհեմութեան, իմաստութեան, և այլ մասնաւոր առաքինութեանց: Եւ ես ասեմ, թէ ճնշել զցանկութիւն այնց երկուց զգայութեանց՝ յատուկ է բարեխառնութեան, և ոչ ժուժկալութեան: Եւ թէ կրկնիցէ ոք. թէ 'ի բարեխառնութեան առողջ են միտք, առողջ են և բաղձանք. բայց յանժուժկալութեան առողջ են միտք, և հիւանդ բաղձանք: Ի վերայ բերեմ և ես, թէ 'ի բարկութեան, յագահութեան և 'ի փառամոլութեան միտք առողջ են, և բաղձանք հիւանդ: Եւ զիա՞րդ չիցէ պատշաճող ճշմարիտ անունն անժուժկալութեան այնմ որում պատշաճի ճշմարիտ սահմանն: Բայց թէ յայն մոլութիւնս տրոհի գործողութիւնն 'ի հեշտութենէ գործողութեան, յայտ է թէ թէպէտ և ճնշել զմոլեկան գործողութիւնն անկ է կատարեալ առաքինութեան, սակայն և այնպէս՝ ճնշել զցանկութիւնն զհեշտութեամբ այնր մոլեկան գործողութեան, պատշաճի ժուժկալութեան: Ատրէոսի [2/2] խորհեալ զանողորմ վրէժխնդրութիւն առ եղբայր իւր, առաւել յափշտակիւր 'ի հեշտութենէ եղանակի, քան պատշաճողութեան պատժին. ասէ.

Քան վրէժ քինու ինձ եղանակ այս քաղցրանայ,
Որ կերպարան այժմէն 'ի յաչս իմ ձևանայ,
Ի վառակաց հօսման արեան սիրտ զովանայ,
Ես զի՞ հեղգամ զիմ բերկրականն չածել նըմա:

Ճանաչէր Ատրէոս զչափազանցութիւն յանցանացն, բայց 'ի բերկրանաց էր յափշտակեալ: Բարկութիւնն է դառն քան զօշինդր, և քաղցր քան զմեղր: Ատրէոս միանգամայն կայր սաստանեալ և զուարճացեալ: Դառնումն էր առոյգ, այլ ցանկութիւնն թիւրեալ: Եւ զինչ այլ իցէ ճշմարիտ անժուժկալութիւնն: Աւտոլիկոս [295] աւազակ առասպելեալ որդի Մերկուրիոսի աստուծոյ աւազակաց, կամ ծնեալ ընդ համանուն յափշտակիչ փայլածու մոլորակաւ, էր յօժարամիտ 'ի գողանալ ոչ վասն օգտի ինչ որ 'ի յափշտակութենէ, այլ զի հեշտալի էր նմա յափշտակել: Գիտէր թէ չար է զոր գործէ. բայց առիթն առնէր զնա գող: Որպէս մագնիս առ երկաթ, այնպէս ձեռն նորա վազէր յոսկի. ոչ յափշտակութիւն զնա յափշտակէր: Ուստի Մարտիալէս կոչեաց զայն ձեռն ձիւթաղօծ: Եւ զինչ այլ իցէ ճշմարիտ անժուժկալութիւնն, բայց ցանկութիւնն մոլեգին, և դառնումն ողջամիտ: Զայն անզուսպ հեշտութիւն, զոր զգայր Զոյիլոս յերգիծանել զայլս, և Լեպիդոս 'ի սիրել զորս զառաջինն քերթողք կոչեցին Զարտաբարոյութիւն, և զերկրորդն Տուղլիոս Անկարութիւն, որո̊վ անուամբ հնար էր խակագոյն իմանալ, բայց կոչելով անժուժկալութիւն. վասն անկար լինելոյ երկաքանչիւրոցն սանձել զանյագ կամս, թէպէտ և երկաքանչիւրն գիտէին թէ այլ ոչինչ քաղեն անտի, բայց եթէ ցաւս [294]: Բանից անգամ տարապայման հեշտութիւն յիմարեցուցանէ զքաջիմաց իմաստութիւն: Արքիմեդէսի 'ի բաղանիս լեալ, և 'ի համեմատութենէ ջրոյն՝ որ ելանէր յաւազանէն 'ի մտանել իւրումն անդր, 'ի միտ առեալ զասացեալ ապացոյցն ոսկեղէն պսակին, ընդ որում էր խառնուրդ օտար հրահալելոյ, չհանդուրժեալ զապել զզեղումն ուրախութեան նորահնար գիւտոյ, ել 'ի բաղանեաց, և գլխովին մերկ և օծեալ վազէր ընդ տունն որպէս խելագար, ձայն բարձեալ թէ գտի գտի: Թէ չէ այս անժուժկալութիւն իմանալի հեշտութեան, զինչ այլ իցէ: Ապաքէն Դեմոկրիտոս ածեալ զմտաւ խոր իմաստութեամբ զյիմարութիւն մարդկան, այնպէս բուռն խնծղայր ծաղու, մինչև լինել նմա ծաղածանակ: Եւ Քսենոփոն չհանդուրժեալ զապել զպայթիւն ծաղու, պայթեցաւ [295]: Արդ մեք զինչ առիցեմք թէ իցէ չկարելն զապել զայն չափազանց կիրս, բայց եթէ ճշմարիտ իմն անժուժկալութիւն: Արդ եթէ յայտնի օրինակս տեսանես դու զկանոնաւոր դառնումն բանի, և զանկանոն բաղձանս ցանկութեան զհեշտութեամբ, որք չեն հեշտութիւնք ճաշակելեաց, և շօշափելեաց, ապա է անտանօր ճշմարիտ իմն և ոչ այլաբանական ժուժկալութիւն. կիսամասնեայ իմն առաքինութիւն, որոյ չեն նիւթ այն երկու սուրբն զգայութիւնք: Իսկ յայսմանէ զինչ ունիցիմք եզրակացուցանել. բայց զայն թէ թարգմանիչք ոչ բարւոք թարգմա-



նեցին զբան մերոյ պատգամախօսի, որ ոչ երբէք գտաւ երկխօս, և ոչ երբէք իւր ինքեան ներհակախօս. թէ քաջ իմանայցի:

Արդ ասեմ, եթէ զգուշագոյն հայիս դու 'ի միտս քան 'ի խօսս Արիստոտէլի, տեսանես զի որովհետև մեծ փոյթ էր նորա կարճ 'ի կարճոյ ուսուցանել, և ոչ միում յառաքինութեանց կամեցաւ ներքոյ արկանել նիւթ անբաւ, այլ չափաւոր. զի մի ընկղմեսցէ յընդարձակ ծովածոցի զհամբակ լուղորդս: Վասն այսորիկ որոշեալ նորա զմասնաւոր խոհեմութիւնն յընդհանրոյն, և զմասնաւոր արդարութիւնն յընդհանրոյն, նշանակեալ մասնաւորին առարկայս ինչ մասնաւորս, ըստ նմին օրինակի և յայս ևս խրթին ճառ ժուժկալութեան որ 'ի պղատոնեանց և 'ի ստոյիկեանց խաբանօք կրէր մաքառումն, որոշէ զմասնաւոր ժուժկալութիւն յընդհանուր ժուժկալութենէ, զերկոսին իսկ զհեշտութեամբ. բայց զմասնաւորն զառարկայիւք բարեխառնութեան, և զընդհանուրն զառարկայիւք այլոց առաքինութեանց: Կարի իսկ կարեւոր է առ դիւրութիւն վարդապետութեան որոշումն բառից, զի ակիզբն գիտելոյ է միաբանել 'ի խօսս: Նմին իրի 'ի խօսել նորա զժուժկալութենէ լոկոյ, իւր կամք են թէ իմանայցի ժուժկալութիւնն որ ունի առարկայ զհեշտութիւնն որկորոյ և վաւաշ ցանկութեան վերաբերելոյ առ բարեխառնութիւնն: Բայց 'ի խօսել իւրում զժուժկալութենէ, որ ունի առարկայ զհեշտութիւնն՝ վերաբերեալ առ այլ առաքինութիւնս, կամի զի կոչեսցի ժուժկալութիւն վերադրաւ, 'ի վերայ բերեալ զվերտառութիւն այլոց առարկայից. ժուժկալութիւն բարկութեան, ժուժկալութիւն արծաթսիրութեան, ժուժկալութիւն փառամոլութեան, առ 'ի չշփոթելոյ ընդ մասնաւոր ժուժկալութեան, որ ունի զհասարակաց առարկայ ընդ բարեխառնութեան: Եւ թէ այս իցէ միտ մեծի իմաստասիրին, երկու յայտնի ձեռնարկութեամբք քաջայայտ երևի: Վասն զի նախ առաջին, որպէս որոշեաց նա զժուժկալութիւնն 'ի բարեխառնութենէ, ըստ այնմ որ բարեխառնութիւնն է կատարեալ առաքինութիւն և ժուժկալութիւն կիսամասնեայ առաքինութիւն զնովիմբ առարկայիւ, նոյնպէս զբարկութեամբ կայ կատարեալ առաքինութիւն, այսինքն է հեզութիւն. և անկատար առաքինութիւն, այսինքն ժուժկալութիւն բարկութեան. որ զնովին առարկայիւ ունի ուղիղ դառնումն, բայց բուռն ցանկութիւն: Միւս ձեռնարկութիւնն է, զի յայս ճառ ժուժկալութեան ոչ միայն խօսեցաւ զմարմնական հեշտութեանց ընդդէմ պղատոնեանց, այլ զամենայն սեռէ հեշտութեանց ընդդէմ ստոյիկեանց. յայտ արարեալ թէ բովանդակ իմաստասիրութեան բարոյական կայ 'ի կշիռ 'ի վերայ երկուց առանցից. գիտել ուրախանալ

և արամիլ որպէս արժանն է։ Այլ որպէս հեշտութեան մասնաւորի պատասխանէ ժուժկալութիւնն մասնաւոր, նոյնպէս հեշտութեան ընդհանրոյ պատասխանէ ժուժկալութիւնն ընդհանուր։ Յաւել և զայն, թէ որովհետև կարգէ նա զայս ձևս ժուժկալութեան առ առաքինութիւն դիւցազնական, որ է յաղթութիւն ինչ վախճանական, և անթերի յաղթանակ ցանկութեան ամենայն հեշտութեանց որք հակառակին առաքինութեան, թերի արդեօք լինէր յաղթանակն եթէ միայն ժուժկալութիւնն այսց երկուց անարգ զգայութեանց չաս համարիւր առաքինութեանն դիւցազնականի։ Որկորամոլութիւն և վաւաշ ցանկութիւն՝ յառաջատութեամբ ամաց, և իբրովի իսկ երթալով երթան և նուազին, և փոքր յաղթութիւն է յաղթել նկուն եղելոյն. բայց բարկութիւն, ագահութիւն, և ամբարտաւանութի, որչափ ծերանայ մարդ, այնչափ զօրանան և ընդոստնան, և վասն այսորիկ առաւել ժուժկալութեան պէտս ունին։

## ԳԼՈՒԽ Գ.

### Տեսակք ժուժկալութեան։

Եպիկտետոս փռիւգիացի ծառայ, որ եթող իշխանաց իմաստս տիրականս, բովանդակեաց զբարոյական իմաստասիրութիւնն յերկուս սուրբ գրոյս. Հրաժարեա և համբեր [296]։ Այսոքիկ են երկու գլխաւոր տեսակք ժուժկալութեան. անձնապահ լինել յամօթական հեշտութեանց, և համբերել պատուհասից։ Իւրաքանչիւր 'ի սոցանէ ստորաբաժանի յայլ երկուս տեսակս, որք լաւ ևս ճանաչին 'ի հակակայութեանց։ Զի ընդդէմ անձնապահութեան մեղանչեն երկու ազգք անբարեխառնութեանց, ձեռներիցութիւն և տկարութիւն, և ընդդէմ համբերութեան այլ երկուք, ապաժուժութիւն և մեղկութիւն։

Ձեռներէցն է այն անժուժկալ, որում երբ առաջի լինի առարկայ հեշտալի, բայց անպատշաճական, ճանաչէ այս զանպատշաճութիւնն, բայց անձին և ապաժոյժ ցանկութիւնն առանց ժամանակ տալոյ հայել յայն մտածութիւն, վաղ 'ի վաղ ձգի յայն որում ըղձանայ։ Իսկ տկարն է, որ ունի ուշով հայեցեալ յանվայելչութիւն և 'ի զազրութիւն գործոյն, խորհի ընդ միտս հրաժարել, բայց խաբեալ և դրդեալ 'ի ցանկութենէ հուսկ ուրեմն մատնի 'ի պարտութիւն։ Մինչ զի ձեռներէցն և տկարն ոչ տարբերին 'ի նիւթն, այլ յեղանակն։ Երկոքանչիւրն անձնատուր լինին հեշտութեան, բայց



մին դիւրաւ և միւսն դժուարաւ։ Հոգին յոլովակի զհետ երթայ խառնուածոյ մարմնոյն։ Ի մարմնի են չորք հիւթք, որք համեմատին չորից տարերաց. մաղձն՝ հրոյ, սեաւ մաղձն՝ հողոյ, արիւնն՝ օդոյ և մաղասն՝ ջրոյ։ Արդ որպէս հուր և հող ունին ինչ սեպհական կայան, և սեպհական ինչ սահման, բայց օդ և ջուր են հոսական, և յամենայն արտաքին սահման փոխեն զկերպարան. Նոյնպէս մաղձոտք և սևամաղձոտք են առաւել ժուժկալք, և հաստատունք 'ի բարի առաջադրութեան. բայց մաղասուտք և արիւնայինք դիւրագոյն դիմեն 'ի բերկրական առարկայս, որք յանդիման երևին նոցա։

Այս երկու տեսակք են անժուժկալութեան զհեշտալի առարկայիւք։ Մնան այլ երկու զցաւագին առարկայիւք։ Ապաժոյժն է, որ տակաւ փոքունց նեղութեանց, այլ ոչ մեծաց։ Ի թեթև չարիս արի է քան զայր, 'ի ծանունս կնատ է քան զկին։ Փիլոկտետէս հարեալ յիժէ, թէպէտ և բուռն առնէր իւրոց ցաւոց, ոչ կարէր զսպել զարտասուս, և ոչ ընկրկել զկողկողագին կականս և զհեծութիւնս։ Այնպէս ապաժոյժ էր վիշտուն, մինչև լինել անտանելի ամենայն զօրուն։ Վասն այսորիկ վարեալ յանապատ ծովեզերեայ, անդ առ խուլ ալիս և յօդս թեթևս թափէր զիւր արտօսր, և արձակէր կական [297]։ Բայց մեղկ և գիրգ այն է որ և ոչ փոքր նեղութեանց ժուժայ. ոչ առ հիւանդութեան և ոչ առ տկարութեան խառնուածոյ, այլ առ իգութեան, և չար ունակութեան, կամ կարի իմն ճապուկ սննդեան, որպէս վերագոյն ասացաւ։ Այնպէս այլ ընդ այլոյ էր սնունդ փռիւգիացւոց և լատինաց, մինչև երևել թէ 'ի մարմինս նոցա բնակէին այլ և այլ ոգիք։ Լատինք ուսեալք զուսպ ունել զխառնախառն վարսս սաղաւարտիւ, և զպնդակազմ անդամս թաւամաղ մորթովք գազանաց, զհետ երթեալ գազանաց 'ի տօթագին և 'ի սառնասառոյց եղանակս, զզբօսանս համարէին պատերազմ, և զպատերազմ զբօսանս։ Փռիւգիացիք արկեալ զեւղաթուրմ վարսիւք պսպղուն ծամակալս, և զմարմնով օթոցս թեզանաւորս նրբամանս, որպէս կնամարդի և անարի զեղխէին 'ի գրգանս և յօծութիւնս. զորս ոմն 'ի լատինաց ծաղր արարեալ՝ ասէ [298].

Ո՛վ փռիւգեան կնամարդիք, ոչ փռիւգացիք,
Երթայք, ուր են ձեր դինդիմեան բարձր մայրիք,
Ուր ոչ փողոց պատերազմի հնչէն բարբառք,
Այլ կանացի թմբկաց պարուց են դեգերանք։

Ապա չափ ժուժկալութեան է հասարակաց սովորութիւնն։ Որ ոչ հրաժարէ 'ի հեշտութեանց, որք 'ի հասարակաց սո-

վորութենէ են մեղադրելի, է ձեռներեց կամ տկար. բայց տկարն է նուազ անժուժկալ քան զձեռներէցն։ Եւ որ ոչ տանի տաղտկութեանց, որք 'ի հասարակաց սովորութենէ են տանելի, է ապաժոյժ կամ մեղկ. բայց մեղկն է առաւել անժուժկալ քան զապաժոյժն։ Այն է առաւել անժուժկալ, որ 'ի փոքր հեշտութեանց յաղթի. և այն է առաւել ժուժկալ, որ մեծաց հեշտութեանց յաղթէ։ Այն է առաւել ժուժաւոր, որ տոկայ մեծաց նեղութեանց. և այն է առաւել մեղկ, որ խորշի 'ի փոքունց նեղութենէ։ Զի որ խորշի 'ի փոքունց, առաւել ևս խորշի 'ի մեծաց. և որ տանի մեծաց, առաւել ևս տանի փոքունց։ Հուսկ ապա մարթիս եզրակացուցանել, թէ որպէս զժուժկալն ոչ է մարթ կոչել բացարձակապէս բարի, զի չունի ուղղութիւն բաղձանաց. նոյնպէս զանժուժկալն ոչ է մարթ կոչել բացարձակապէս չար. զի չունի թիւրութիւն դատման։ Իսկ արդ խնդրիցես. Եթէ առաքինութիւնք հաստատեալ կան 'ի միջին երկուց ծայրից, ո՞ր իցէ միջին ժուժկալութեան։ Եթէ ցայտնայր ոչ եղև զլոյց, բայց եթէ զմիոյ ևեթ ծայրէ, այսինքն է զանժուժկալութենէ, ապա ժուժկալութիւնն ոչ է 'ի միջին. ուստի և ոչ առաքինութիւն է, և ոչ կիսամասնեայ առաքինութիւն։ Պատասխանեմ թէ և ժուժկալութիւնն ունի զիւր միջին իբրև զբարեխառնութիւնն։ Ապա որպէս բարեխառնութիւնն եդեալ կայ 'ի մէջ անբարեխառնութեան, և թմբրութեան. նոյնպէս ժուժկալութիւնն եդեալ կայ 'ի մէջ անժուժկալութեան և թմբրութեան։ Բայց քանզի թմբրութիւնն է մոլութիւն նուազագիւտ և անծանօթ, և անժուժկալութիւնն առէպ և յայտնի, ընդդէմ այսմ միայն բողոք ունին ամենայն դպրոցք և ամբիոնք։ Զնոյն է ասելի զանժուժկալութենէ շուրջ զբարկութեամբ, և զայլ ամենայն առարկայից մասնաւոր առաքինութեանց. պահեալ միշտ զտարբերութիւնն, որ 'ի մէջ կատարեալ առաքինութեանց և կիսամասնեայ առաքինութեանց, և 'ի մէջ կատարեալ մոլութեանց և կիսամասնեայ մոլութեանց։



# ՅԱՂԱԳՍ ԴԻՒՑԱԶՆԱԿԱՆ

## ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

### ԳԼՈՒԽ Ա.

*Թէ զինչ իցէ առաքինութիւնն դիւցազնական։*

ԱՌԱՍԻԿ քեզ առաքինութիւն, որ կարող է առնել զքեզ մեծ քան զամենայն մեծս, քաջ քան զքաջս, և 'ի մարդկանէ դիւցազն[299]։ Յամենայն 'ի տիեզերական շարգս գտանի կարգ. և կարգն հաստատեալ կայ 'ի համեմատութեան մասանց՝ գերակայից, ստորնոց, և միջակայնոց։ Յիմացական կարգի գերակայ է Աստուած, ստորին մարդս, և միջակային է հրեշտակն։ Հրեշտակն բոլորովին է հոգի. բայց բաղադրեալ 'ի ներգործութենէ և 'ի կարողութենէ։ Մարդն է բաղադրեալ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ։ Աստուած է հոգի ամենապարզ, անստեղծ, անհուն. չէ մասն տիեզերաց, այլ 'ի վերոյ քան զտիեզերս. չէ ներառեալ 'ի կարգ, այլ 'ի վերոյ քան զկարգ։ Նախնի իմաստասէրք, յայն միջակային աստիճան 'ի մէջ Աստուծոյ և մարդոյ ուր մեք դասեմք զհրեշտակ, դասեցին զդիւցազնն, փոքր քան զԱստուած բնութեամբ, մեծ քան զմարդ առաքինութեամբ. որպէս մարդ ոք աստուածեղէն, կամ Աստուած ոք մարդկեղէն։ Եւ այսպիսիս անուանեցին զՀերակլէս, զՈսիրիս, զԿաստոր և զՊոլիկևսիս. որք թէպէտ և մահկանացու էին, ստացան անուն անմահութեան քաջութեամբ[300]։ Արդ որովհետև մարդն է բաղադրեալ ինչ 'ի հոգւոյ և 'ի զգայութենէ, և միջակային 'ի մէջ դիւցազին և անասնոյ, ունելով հասարակ ընդ դիւցազին զհոգի իմացական, և ընդ անասնոյ զոգի զգայական։ Վասն այսորիկ 'ի հաղորդիլ միջակայնոյն երկոցունց ծայրից, եթէ հաղորդի միում աւելի քան միւսում, նմանագոյն լինի միում քան միւսում։

Ուստի և որչափ առաւել հեռանայ մարդ յանասնային զգայականութենէ, լինի առաւել նման դիւցազին. և որչափ առաւել հեռանայ 'ի դիւցազնական վսեմութենէ, լինի առաւել նման անասնոյ: Զնոյն համեմատութիւն նկատել արժան է յառաքինութիւնս, տրոհեալ զայն յերիս աստիճանս, 'ի գերակայ, 'ի ստորին, և 'ի միջակային: Առաքինութիւնն միջակային հասարակ է բարի մարդոց, որպէս բարեխառնութիւնն: Ստորինն է առաքինութիւն անկատար, որպէս ժուժկալութիւն: Իսկ գերակայն է առաքինութիւն գերակատար, կոչեցեալ դիւցազնական: Զստորին հակառակն, երեք են աստիճանք մոլութեան. չար, չարագոյն, ևս չարագոյն: Միջակայինն է չարութիւն հասարակ մարդկային մոլութեանց. յորս զեղծ է բանն և բաղձանքն. որպէս անբարեխառնութիւնն: Փոքր մոլութիւն է այն, յորում զեղծ է բաղձանքն, այլ ոչ բանն. որպէս անժուժկալութիւնն: Եւս չարագոյն է այն յորում յայն ապականութիւն հասանէ բանն և բաղձանքն, մինչև այլ չերևել մարդոյ՝ մարդ, այլ վայրենի գազան. և այս կոչի գազանաբարոյութիւն: Ապա քանզի 'ի նախընթաց գիրս խօսեցաք զառաքինութեանց և զմոլութեանց մարդկայնոց, և 'ի սմին յայսմիկ զառաքինութեանց և զմոլութեանց անկատարից, ոչ ինչ մնայ այլ մեզ, բայց խօսել զառաքինութենէ որ գեր 'ի վերոյ է քան զամենայն առաքինութիւնս, և զմոլութենէ որ անցանէ զանցանէ զամենայն մոլութեամբք:

Ապա ոչ այլ ինչ է դիւցազնական առաքինութիւնն, բայց եթէ այնպիսի կատարեալ կանոնաւորութիւն դատման, և այնպիսի բացարձակ տէրութիւն 'ի վերայ կրից, մինչև ոչ ինչ առարկայի զօրել խախտել զդիւցազնն 'ի բանաւորէն: Ցորմէ երևի լինել 'ի նմա յաւէտ աստուածեղէն իմն քան մարդկեղէն. որպէս ասէ Հոմերոս զՀեկտորէ

Ձերևի ծընունդ մահական մարդկան,
Այլ յանմահ զարմէ դիցըն վերնական:

Եւ ոչ 'ի միում միայն առաքինութեան գերապանծ է նա, այլ զամենայն առաքինութեամբք է 'ի նմին տրամադրութեան: Զէ նմա մեծ աշխատութիւն զհետ երթալ ամենայն առաքինութեանց քան միում միայնոյ. և ոչ խորշել յամենայն մոլութեանց, քան 'ի միոյ մոլութենէ միայնոյ: Զի այլ ամենայն առաքինութիւնք ունին սեպհական ինչ առարկայ. բայց ամենայն առարկայք այլոց առաքինութեանց են սեպհական առարկայք առաքինութեան դիւցազնականի, սակայն յաստիճան գերակայ: Բաղում ինչ ընդ մէջ է մեծանձին և դիւցազին: Մեծանձնութիւնն ունի սեպհական առարկայ՝ զմեծ պատիւ. և



է մի միայն առաքինութիւն, ընկերելով նմա ամենայնի, բայց յաստիճանի մարդկային առաքինութեանց: Դիւցազնութիւնն է առաքինութիւն ինչ ընդհանուր իբրև առաքինութիւն աստուածային, որ զանցանէ զանուամբ առաքինութեան: Առաջի առնէն Սկիպիոնի յափրիկեան աւարէ օրիորդ մի քան զամենայնն չքնաղ և ազնուական, յորժամ առաւ Կարթագինէ. և Սկիպիոն անդէն անվթար առաքէ զնա առ ծնողս իւր: Պանծագոյն գտաւ անյաղթութեամբ 'ի կարթագինուհւոյն քան յաղթութեամբ Կարթագինեայ: Այս է դիւցազնական բարեխառնութիւն: Կալանաւորի 'ի պատերազմի Ագեսիղայոս իշխան սպարտացւոց. և խժդժական կտտանօք տանջեալ յարքայէն Պարսից, ոչ յօգւոց հանէ, ոչ յողւք խոնարհի. մինչև երևել թէ տանջեալն ոչ Ագեսիղայոս իցէ, այլ արձան նորա. վասն այսորիկ կարծիս 'ի մտի եդեալ թշնամւոյն թէ գերմարդկային ոմն իցէ, արձակէ յազատութիւն, զի մի 'ի դից զոք ունիցի 'ի կալանս: Այս է դիւցազնական արիութիւն: Տուռնոս պարտեալ 'ի մենամարտի՝ մատուցանէ Ենէասայ բաղում տաղանդս ոսկւոյ, զի շնորհեսցին նմա կեանք: Ենէաս թէպէտ և 'ի կարօտելոց էր սակի, մերժէ զամենայն զգանձսն, զի մի գծրեսցէ արդար վրէժխնդրութեանն բարեկամի իւրոյ Պալլասայ: Այս է դիւցազնական զգաստութիւն: Ցանդիման լինին Կամիլլոսի 301 ընտիր ընտիրքն ազնուական որդւոց Փաղիսկեանց պաշարելոց, որք մատուցան նմա որպէս պատանդք յաղթութեան՝ մատնութեամբ դաստիարակի իւրեանց. նա տայ կապել զդաստիարակն, և գանակոծ արարեալ զնա ձեռամբ իւրոց աշակերտաց, նոքօք հանդերձ առաքէ անդրէն առ պաշարեալսն. վասն զի սիրելի էր նմա յուշիկ յաղթութիւն իւրով քաջութեամբ, քան զարագ յաղթութիւն մատնութեամբ: Այս է դիւցազնական հաւատարմութիւն, որ յաղթեաց պաշարելոցն՝ առանց զինուց, զի այնուհետև երջանկութիւն անձանց համարեցան նոքա հարկատու լինել այնմ, որ գեր 'ի վերոյ թուէր քան զմարդ: Ապա 'ի ճշմարիտ դիւցազնն հաւաքի բարեխառնութիւն Սկիպիոնի, արիութիւն Ագեսիղայոսի, զգաստութիւն Ենէասայ, հաւատարմութիւն Կամիլլոսի. և այս ամենայն, որ սքանչելի առնէ զամենայն քաջազունս, միաբանի 'ի մի միայն դիւցազն: Տես արդ, որպիսի առաքինութիւն իցէ դիւցազնութիւն:

Թէ այդպէս իցէ, ապա գազանաբարոյութիւնն է մոլութիւն ինչ, որ յուացուցանէ և զեղծանէ զզգաստումն և զկիրս ցայն վայր, որ յառաջադրել որպիսի և իցէ անձնոնի և մեծեղեան առարկայի, մարդ զօրէն անասնոյ բնաւորապէս գըրգռելոյ՝ անզուսպ յայն դիմէ. մինչև ճշմարիտ կերպարանափոխութեամբ երևել նմա փոխակերպեալ 'ի գազան, իբր Լի-

կայոն 'ի գայլ. և ընկերք Ոգիսեայ 'ի դարշ անասունս [302]։ Զի չիք յաշխարհի գազան ահաւոր և այլանդակ քան զմարդ գազանաբարոյ։ Զի իւրաքանչիւր մասնաւոր տեսակ անասնոց ունի ինչ մասնաւոր անբանութիւն՝ անհաղորդական այլոյ տեսակի, այլ 'ի մարդ անբանական՝ բնաւք միահաղոյն միաբանին։ Ի նմա լինին միանգամայն աղտեղութիւն խոզի, մրզայլութիւն գայլոյ, անգթութիւն վագեր, նենգութիւն աղուեսու, բռնութիւն վարազու, կատաղութիւն շան։ Իսկ արդ եթէ մարդ՝ յոր տարրացեալ իցէ մի միայն մոլութիւն, չար է քան զանասուն յայնմ մոլութեան, որպէս ասէ Արիստոտէլ. զի թիւր կամաց 'ի վերայ գայ հնար մարդկային, որպիսի գազան իցէ այն յոր չեղջակուտին ամենայն մոլութիւնք։

## ԳԼՈՒԽ Բ.

*Թէ որո՞վ օրինակաւ լինիցի հասանել յառաքինութիւն դիւցազնական, և 'ի գազանաբարոյութիւն։*

Ուղղութիւն 'ի մարդ է առաքինութիւն, այլ յԱստուած է կատարելութիւն անբաւութեամբ առաւելեալ քան զառաքինութիւն, որ և կոչի աստուածութիւն։ Թիւրութիւն 'ի մարդ է մոլութիւն, բայց յանբանս է որակութիւն յոռի յոյժ, վասն լինելոյ նոցա անընդունակ ամենայն բանի. և վասն այնորիկ կոչի անբանութիւն։ Ապա զոր օրինակ այն ամենայն որ խոտորի 'ի միջոյ, դիմէ 'ի ծայր և 'ի նմանէ առնու անուն, այնպէս առաքինութիւնն յանցանել իւրում քան զսովորականն մարդկային առաքինութեանց, երևի բաժանորդ լինել աստուածայնոյն. և մոլութիւնն յանցանել իւրում քան զսովորականն մարդկային մոլութեանց, երևի բաժանորդ լինել գազանականին, որպէս արդ լսար։ Բայց ոչ առաքինութեան և ոչ մոլութեան մարդկայնոյ հնար է թէ անցանիցէ յայսոսիկ ծայրս 'ի մի վայրկեան։ Ոչ ոք լինի յանկարծակի բարի կամ չար, և ոչ ոք յանկարծակի 'ի բարւոյ լինի ևս բարեգոյն, կամ 'ի չարէ ևս չարագոյն, անհնար գոլով անցանել ծագէ 'ի ծագ առանց ընդ մէջն անցանելոյ։

Երեք են մէջք, ընդ որս լինի ժամանել յառաքինութիւն դիւցազնական, կամ 'ի գազանաբարոյութիւն։ Առաջին է բարքն։ Երկբայական է թէ որ զօրագոյն իցէ, վիճակ ծննդեան թէ սովորոյթ սննդեան։ Բայց ստուգութեամբ երկաքանչիւրն ունին բուռն զօրութիւն յանկուցանելոյ զմիտն



'ի մեծամեծ մոլութիւնս, կամ 'ի մեծամեծ առաքինութիւնս։ Այո, երևի երբեմն զի 'ի կրպակէ բրուտի 'ի վեր երևի դիւցազն Սիրակուսացի, որպիսի եղև Ագաթոկղէս զգօն արքայ Սիրակուսացւոց, որոյ հայրն էր բրուտ. և յընտիր ընտիր հռովմայեցի դիւցազանց 'ի վեր երևին կայսերք անասնաբարոյք. բայց սոքա են հրէշք կերպարանեալք յայլ պատճառաց, զորոց ասացի առորև։ Զէ ինչ բնաւոր թէ 'ի հաստաբեստ կաղնոյ բուսցի դիւրաբեկ մոշայ. և ոչ 'ի կաղամբոյ ամբառնայ արմաւենի։ Զարմին Պեղոպեայ ուսք էին փղոսկրեայ, զարմին Թեսէոսի դէմք արծուային. և Լենտուլեանց պիսակոտ էին մորթք։ Եթէ նիշք մարմնոյ անցանեն 'ի զաւակս, ապա և նիշք ոգւոյ։ Ի դիւցազանց ծնանին դիւցազունք, 'ի գազանաց գազանք։ Թող զի, որպէս այլուր ասացաւ, ոչինչ պատուէր, ոչինչ ուսումն, ոչինչ օրէնք այնպէս խոր տպաւորին, որպէս օրինակն հայրենի։ Այս օրէնք են, որք աւանդին գործովք, ուսեալ լինին աչօք, գրին 'ի սրտի. և որդիականն հնազանդութիւն միապէս արդոյս յարդարէ զուսուցիչն և զուսումն։ Այլ և հայրենի երկիր, և հայրենի օդ միանգամայն ազդեն առ առաւելութիւն դիւցազնական կամ անասնական բարոյից։ Կիմմերացիք, որոց կէս տարւոյն է գիշեր և կէս արշալոյս, կրեն զիւրեանց խաւար 'ի միտս։ Սարմատացիք ծնեալք յապառաժուտս՝ արդաւանդաբերս երկաթոյ քան կերակրոյ, զապառաժն 'ի սիրտ արկեալ, և զերկաթն 'ի ձեռս առեալ, որ զօրագոյնն է կեալ յաւարէ ակարին։ Մարդակերք, որպէս անունն իսկ ցուցանէ, վասն զի մարդկան միս է նոցա կերակուր, շամփրով և պառականաւ որսացեալ զօտարս յանտառս, յայն մարդկեղէն որսոց միայն սնանին, առաւել գազանացեալք 'ի թաղել զնոսա քան 'ի սպանանել։ Զսորին հակառակն, նախնի Եգիպտացիք, Թեբացիք և Հռովմայեցիք համարեալ զմարդկութիւն որպէս ընդհանուր ինչ ազգակցութիւն, կարծէին նախատինս գնել աստուածութեան Դիոսի վանատրի, եթէ առ հիւրս ոչ ցուցանէին զանձինս կրօնասէրս և մարդասէրս։ Զհուսկն ասացից. այնպիսի են մարդիկ, որպիսի են այնք, ընդ որս կենցաղին. զի ամենայն ոք ամաչէ չնմանիլ իւրում նմանւոյն։

Երկրորդ պատճառն է պատահական ինչ տրամադրութիւն բնաւորապէս կամ 'ի վերնախնամ տեսչութենէ 'ի վերայ եկեալ խմոցական կամ զգայական կարողութեան։ Դիւցազնն Ովրեստէս [303], այր քաջայաղթ բայց գժբախտ, գրգռեալ 'ի հայրենի ուրուականէն սպանանել զծնացեալ մայրն, այլ 'ի մայրենի ուրուականէն դիւագնեալ, ուր և փախչէր՝ թուէր նմա թէ բռնագբօսի յԵւմենեայ, ջահիւք և օձիւք՝ սպանանել զմարդիկ, և ուտել զիւր մարմին։ Այսա՛ 'ի լռկոյ տխրութենէ վասն յեռնեալ համարելոյ 'ի Յունաց քան զՈդիսեւս

'ի կապել խլրում 'ի վերայ գլխոյ Աքիլլեսի, այնպիսի հարաւ սրացաւութեամբ և գաղտնային կատարողութեամբ, մինչ զի 'ի կոտորել և 'ի պատառոտել համակ զանդեայս, կարծէր հանել զվրէժ քինու 'ի Յունաց: Եւ զարին հակառակն' զքանչելի ինն ազդէ առ դիւցազնական գործս նախանձաւորութիւն մեծանուն դիւցազանց: Վասն այսորիկ լոկ երևակայութիւն յաղթական հանդիսից Միլտիադեայ ոչ թողացուցանէր 'ի քուն լինել քաջասիրտ հետևողաց [304]: Այլ զօրագոյն զարթուցիչք են երկնային ազդեցութիւնք, զորս բաշխէ Աստուած իւրոց սիրելեաց: Վասն այսորիկ հեթանոսք խսկ պաշտօն մատուցանէին Կոնսոսի աստուծոյ, իբր ստգրողի խորհական խորհրրդոց, և Պալլասայ ընծայէին զխոր գիտութիւնս, Հերմեսի զհանճարաւոր արուեստս, և Արէսի զդիւցազնական ձեռնարկս. որք իրօք ոչ այլ ինչ էին, բայց երկնային օգնականութիւն ճշմարիտ աստուածպետութեան:

Բայց հասարակ և բնաւորական պատճառ դիւցազնական առաքինութեան, և յետաւմիտ անբանութե՛, հաստատեալ է 'ի վարժս առաքինական կամ մոլեկան ունակութեանց: Ի դուզնաքեայ սկսուածոց լինին հասանել 'ի մեծամեծ աւելացանցութիւնս: Ցորդախաղաց հոսանք սկսանին երբեմն 'ի կաթուածոյ. և անչէջ հրայրեացք 'ի կայծէ: Ամենայն ունակութիւն ունի որոշ ինչ սկիզբն, բայց ոչ որոշ ինչ աւարտ. գիտէ ոք թէ երբ սկսանի, բայց ոչ գիտէ' ուր յանկ ելանէ: Մի ներգործութիւն է արմատ տրամադրութեան. 'ի տրամադրութենէ բողբոջէ ունակութիւն. և ունակութիւն արձակէ զշառաւիղս իւր աւելի քան զամենայն նշանակեալ վայր: Որպէս սիսեռն չունի վերջ աճման, այլ ցորչափ սնանի աճէ, սոյնպէս ունակութիւնն չունելով աւարտ դադարման' միշտ միտէ 'ի նոր ներգործութիւնս. և ամենայն ներգործութիւն առաւելու զունակութիւն, մինչև առաքինութեան և չարութեան մրցիլ ընդ անբանութեան: Մի միայն լոկ հաճութիւն մղէ երբեմն զմիտ անմեղ յանակնկալ ինն անհամեստութիւն: Մի միայն վայրկենական տկարութիւն հրապուրէ զցանկութիւն 'ի համանման ներգործութիւնս: Յաճախութիւն ներգործութեանց անկարգացուցեալ զկիրս' լինի անժուժկալութիւն: Անժուժկալութիւնն խաւարեցուցեալ զմիտս հասուցանէ յանբարեխառնութիւն: Եւ անբարեխառնութիւնն անցեալ զանցեալ զսահմանօք մարդկային վիճակի, խարդաւանէ 'ի վէհ ազգապղծութեանց և անասնական եղեռնութեանց, և որ 'ի սկզբանն էղև ազատութիւն, հուսկ ապա լինի հարկադրութիւն: Այսպէս ընդ աստիճանս' 'ի միոյ լոկոյ ներգործութենէ առաքինական յառաջատութեամբ, և սքանչելի աճելութեամբ բարեբաստօրէն հասին 'ի գագաթ դիւցազնական և աստուածային առաքինութեան թէ



ոչ Քսենոկրատէսք, Սոկրատէսք և Կատոնք 'ի հեթանոսաց, այլ Պախոմէոսք, Բենեդիկտոսք և Փրանկիսկոսք և այլ քրիստոնեայք քաջազունք. որք բարոյական առաքինութեանց 'ի վերայ յաւելին գերբնական ունակութիւնս, հանապազորդ հոսմամբ երկնային շնորհաց, որ ոչ պակասի երբեք որոց խնդրենն զնա 'ի սրտէ:

# ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ

## ՅԱՂ· ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ *կամ* ՍԻՐԵԼՈՒԹԵԱՆ [305]

### ԳԼՈՒԽ Ա·

*Յաղագս սիրելութեան առ հասարակ :*

Սէրն է այն սուրբ յօդակապ, որ 'ի խառնիխուռն վէհի զատուցեալ զհակառակամարտս 'ի միմեանց, զնման առ նման ածորդեաց, և յանկերպարան ձուլոյ կերպարանեաց զգեղեցիկ կազմութիւն տիեզերաց [306]: Սա յանշնչականս պահէ զէութիւն, 'ի զգայականս զընկերութիւն, և 'ի բանականս զառաքինութիւն: Յանշնչականս է սէր փոխադարձ, այլ չծանուցեալ. Ի զգայականս է փոխադարձ և ծանուցեալ, բայց կանոնաւորեալ 'ի զգայութենէ. Ի բանաւորս է ծանուցեալ և փոխադարձ, բայց կանոնաւորեալ 'ի բանէ: Վասն այսորիկ առ ընտրելագոյն ցուցանելոյ զգործս փոխելով զանուանս, յանշնչականս է լոկ համակրութիւն, 'ի զգայականս է բնաւոր ազդեցութիւն, և 'ի բանաւորս է կամաւոր սիրելութիւն, որ կոչի 'ի մեզ սեպհական անուամբ բարեկամութիւն: Արդ ազնուագոյնն 'ի մարդկային կիրս է Սէր. և ազնուագոյն պտուղ սիրոյ է բարեկամութիւնն. որ թէպէտ և է անկատար առաքինութիւն, իբրև զժուժկալութիւնն. բայց և այնպէս իբրև զի է յոյժ գեղեցիկ և յոյժ պիտանի քաղաքական կենաց և մարդկային երջանկութեան, արժանի համարեցան իմաստասէրք և զսա ևս դասել ընդ բարոյական առաքինութիւնս: Եւ արդարև զինչ կայցէ աստուածայնագոյն յերկրի քան զկատարեալ բարեկամութիւն, 'ի հաղորդել Աստուծոյ անմահի մահկանացուացս զայն որ սքանչելագոյնն է 'ի նմա և երանական, այսինքն է զմիութիւն 'ի բազմաւորութեան: Զինչ սքանչելագոյն կայցէ քան զլինել երկուց մի, և ունելով երկաքանչիւրոց զիւր սիրտ՝ կեալ 'ի սիրտ միմեանց: Երկաքանչիւրն ունին երկու ոգի կամ և ոչ մի. զի կեան միմեանց ոգւով, և ոչ իւրեանցայնով: Զինչ զուարճագոյն,



բայց համարակաց առնել զիւղ բարւոյ իւրերաց: Վասն այսորիկ որպէս ջերմ շառաւիղք արեգական անդրէն ցոլացեալք յերկուց հայելեաց 'ի նոյնս առաւելուն զնոցա ջերմութիւն, նոյնպէս 'ի վայելել երկաքանչիւրոց 'ի բարիս միմեանց սքանչելապէս առաւելուն 'ի նոսա վայելք:

### ԳԼՈՒԽ Բ·

*Պատճառ բարեկամութեան կամ սիրելութեան :*

Ի ներհակութենէ ծնանի ատելութիւն, և 'ի նմանութենէ ծնանի սէր. որպէս մարթիս իմանալ մակածութեամբ յամենայն գոյացութեանց անուանելոց անշնչական, զգայական և բանական: Սքանչելի սէր յանշնչական մարմինս է սէրն մագնեստիս վիմի ընդ երկաթոյ [307]. որ ապշեցուցանէ զքեզ թէ զիա՞րդ մագնիսն գեղջուկ սիրուհի բուռն յափշտակէ զսիրեցեալն երկաթ. կամ երկաթն եռանդագին սիրող տեսեալ 'ի հեռաստանէ զսիրեցեալն առարկայ, անակն 'ի նա յառի, անփետուր ընդ օդս սլանայ, և անբաղձուկ գիրկս արկանէ: Սքանչելիք են ընծայեալք յիմաստասիրաց նմանութեան բնաւոր խառնուածոյ տարերաց և տարրականաց, կարգելոյ առ պաշտպանութիւն միմեանց. իբր զի մագնիսն է երկաթ քարացեալ, և երկաթն մագնիս մետաղական: Վասն որոյ և ընդ միմեանս միակցեալ՝ երկպատկեն զիւրեանց ոյժ, և հաղորդեն միմեանց զիւրեանց զօրութիւն. մագնիսն երկաթանայ, և երկաթն մագնիսանայ: Բայց զորին հակառակն՝ թէ մատուցանես դու երկաթոյ այլ մագնիս, որոյ խառնուած հակառակ լիցէ իւրոյն, տեսցես զայն բանամարտիկ՝ սնոտի երկիւղիւ յետս ընկրկել, և թիկունս ընդդէմ դարձուցեալ նախատանօք 'ի փախուստ դառնալ:

Հայեաց և 'ի տունկս անձեցուն, ո՞րպէս արմաւենի առ արմաւենի խայտայ, և դարձուցեալ 'ի միմեանս զսաղարթազարդ դէմս՝ փոփոխ գրկախառնութեամբ արմատոց զանխուլ զմիմեանս ողջագուրեն. և որ էինն անուշակ ծնունդք՝ գան 'ի մայրութիւն. և թէ մին կորի, միւսն ունեալ ողկուզօք և ոլոխուր դալկութեամբ թօշնի և գօսանայ: Հայեաց զորին հակառակն յորթն, որ քան զամենայն տունկս է արգասաւոր և զուարթարար. բայց թէ զգայ մօտ իւր զկաղամբ, որոյ ոլորագին և ցուրտ է հիւթ, իբր արհամարհանօք և ցասօք դարձուցեալ զխիղս և զարմատս յայլ կողմն, խորշի յատելի երեսաց նորա, թող թէ 'ի շօշափմանէ: Եւ թէ ոչ բառնան յերեսաց նորա զիւր թշնամի, կամ 'ի ցաւոց և կամ 'ի կատաղութենէ ծիւրեալ հաշի:

Իսկ արդ եթէ բնական սիրով այնպէս վառին դոյացութիւնք անզգայք, մինչև երևել գործովք, և որպէս թէ լսելի լինել հեծութեանց նոցա, ո՞րչափ ևս առաւել զգայցեն ըղձայունք: Ո՞վ ոչ տեսանէ որպէս նոյնատեսակ անասունք համահամդէսք 'ի խորագիտութեան հնարս՝ ընկերական ազդմամբ սիրեն զմիմեանս, ընկերշակելով ձեռնտու լեալ միմեանց 'ի գործս իւրեանց: Այսպիսի է գործակցութիւն մեղուաց 'ի քաղաքականս, մրջմանց 'ի տնտեսականս, և ամենայն չորքոտանեաց և թռչնոց 'ի ծնունդ ձագուկաց և 'ի փոյթ որոց, 'ի մաքառել ընդ թշնամիս՝ և 'ի խաղալ ընդ միմեանս սիրողաբար. և ոչ պակասի նոցա բարբառ 'ի կոչել զիրեարս, և 'ի յայտնել միմեանց զսէր իւրեանց: Եւ զսորին հակառակն՝ ո՞վ ոչ տեսանէ, քանի՞ դժնէութեամբ զարշին խորշին 'ի կենակցութենէ անասնոց, որոց օտար է խառնուած և բոյս բարուց. և թէպէտ չկցեն յառաջածանօթ և նախատես, կամ երկիւղիւ 'ի նոցանէ փախչին, կամ ատելութեամբ զնոսա հալածեն. մնալով ոխութեան նոցա և երկիւղի ևս և յետ մահու: Վասն այսորիկ փետուրք արծուոյ յափշտակողի ուտեն զփետուրս աղաւնոյ անմեղի. և աղիք գառինն անմեղի ոլորեալ և տողեալ 'ի լար քնարի ընդ աղիս յափշտակող գայլոյ՝ ոչ երբէք միաբանին 'ի ձայնարձակութեան, յայտնի նշանակ գոլով անմիաբանութեան:

Արդ քանզի 'ի վերագոյն կարգի միանան կատարելութիւնք ստորադաս կարգի, վասն այսորիկ 'ի կենդանիս բնաւոր համակրութիւնն միանայ ընդ զգայական ընկերութեան. ուստի և 'ի մարդիկ որ գերագոյնն են յաստիճանս, միանան սէր համակրութեան, սէր ընկերական, և սէր բանական: Սէր համակրութեան և բնաւորական եղև Պողիւսարատոսինն և Հիպպոկլիդեայն [308]: Ծնեալ սոցա յաշխարհ 'ի մի և նոյն օր, 'ի նմին կլիմայի ընդ նովին համաստեղութեամբ, համանման խառնուածով, դիմօք, հանճարով և բախտիւ, զառաջինն 'ի տեսանել զմիմեանս, սիրտք նոցա գաղտնի կապանօք սերտ կապեցան ընդ միմեանս. և որպէս 'ի միասին ծնան, նոյնպէս 'ի միասին կեցին, 'ի միասին հիւանդացան, և 'ի միասին մեռան. որպէս թէ մի միայն հոգի յերկուս մարմինս էր արարեալ մուտ և ել: Է 'ի մարդիկ և բարեկամութիւն ընկերական սիրոյ, բայց բանաւորագոյն քան զմեղուայն, հիմնեալ 'ի նմանութիւն համարուեստութեան կամ քաղաքային իրագործութեանց, յարեալ յարմարեալ այնց զինչս և զուշխութիւն, 'ի ձգել անտի զհասարակաց օգուտ: Այսպիսի եղև երդմնակուռ բարեկամութիւն Թեսէոսի և Պերիթոսի [309], վասն փոփոխ նիզակակցութեան 'ի ձեռնարկս պատերազմի, առ ստանալոյ պարծանս և ինքնակալութիւնս: Վասն այսորիկ որ ոք զմի 'ի նոցանէ ունէր իւր թշնամի, երկուս ունէր



ոսերիմ թշնամիս, կամ մի թշնամի երկգլխի՝ և քառաբազուկ. որ և էր օրինակ դաշնաւորութեանց երկրաւոր իշխանաց: Այսպիսի եղև բարեկամութիւն Դամոնի և Պիւթեայ [310], որք եառն զանձինս 'ի ձիգն հասարակաց իմաստից, 'ի դպրոցի Պիւթագորայ. օգնելով միմեանց յուսումն իմաստից իբրև յընթերցասիրաց շահավաճառի: Այսպիսի է և բարեկամութիւն արուեստաւորաց և վաճառականաց, որք կոչին միմեանց ընկերք և սիրելիք, զի յօգտէ անտի ծնանի սէր: Բայց որպէս սիրելութիւնն համակրական՝ հասարակ է մարդոյ և անշնչական իրաց, և սիրելութիւնն ընկերական հասարակ է մարդոյ և անասնոց. սոյնպէս սիրելութիւնն սեպհական մարդոյ, այն է տիրապէս բարեկամութիւն, հաստատեալ է 'ի նմանութիւն բարի վարուց: Գաղափար այսր բարեկամական սիրոյ 'ի մէջ հեթանոսաց եղև բարեկամութիւն երկուց ազնուական Թեբացւոց Պեղոպիդայ և Եպամինոնդայ. որք յերկարուստ փորձիւ ծանուցեալ ներքուստ զառաքինութիւն իրերաց, կապեցան ընդ միմեանս անքակ սիրով բարեկամութե մինչ 'ի մահ: Տեսին 'ի միմեանս մեծ խոհեմութիւն, սիրելի ծանրութիւն, պարկեշտ զգաստութիւն, անկաշառ արդարութիւն, դիւցազնական արիութիւն սրտի. և 'ի վեր քան զամենայն եռանդագին սէր առ հայրենիս, յոր վերայ բռնանայրին Սպարտացիք: Ապա վախճան բարեկամութեանս էր, ոչ պատիւ, ոչ ճոխութիւն, ոչ իւրեանց օգուտ, որպէս յընկերութեան. այլ սէր առաքինութեան, մինչ զի 'ի միաբանիլ իւրեանց 'ի վախճանն, այլ չէր հնար նոցա բաժանիլ: Երկաքանչիւրն մարտնչէին այլ ոչ գիմամրցանակաւ, ուրախէին ընդ յաղթութիւն միմեանց. զի ուր է սէր, անդ չիք նախանձ. և ուր չիք նախանձ, զուարճալի է այլոյ առաքինութիւն իբրև զիւրն: Եւ զի սէրն արարեալ էր յերկուց անձանց մի միայն անձն՝ փոխակերպեալ զմին 'ի միւս, 'ի յաղթանակել միոյն յաղթանակէին երկոքին իսկ. և երկոցունց նոցա յաղթանակէր սէրն: Ապա նմանութիւնն է մայր սիրելութեան կամ բարեկամութեան. ուստի առած է հասարակաց կրկնեալ յԱրիստոտէլէ, և առեալ 'ի հոմերական գաբերայէ. Նմանւոյն առ իւր նման, առաջնորդէ խնամ վերնական: Որպէս և ասացեալն Պղատոնի, զոր յառաջ բերէ Կատոն կրտսեր. Դիւրակի իմն նմանի, հաւասար ընդ հաւասարի:

## ԳԼՈՒԽ Գ.

*Յաղագս սիրոյ ցանկութեան և բարեկամութեան:*

Թէ Նարկիսեայ տեսեալ զինքն յականակիտ աղբեր հարաւ 'ի սէր իւր, չեղեն ինչ զարմանք. զի սիրոյ ակն յանդիման ունելով զառարկայ սիրելի, և յագչել 'ի նա բորբոքմանն որ բիւրուց ազդէր յաւերժահարսանց, չէր նա խաբեալ յիւրոց աչաց, այլ միայն 'ի կարծեաց թէ ոչ իւր իցէ որ իւրն էր: Մեծ ևս զարմանք այն եղեն, զի Ակկա գարշատեսիլ պառաւ, յիշելով զգեղ մանկութեան իւրոյ կարծեալ զինքն ոչ տգեղ միայն, այլ և չնաշխարհիկ աստուածուհի գեղոյ, այն ինչ ականէր 'ի հայելւոջ յանկերպ իւր կերպարան, որպէս կռապարիշտ ընդ բագին խանդակաթեալ կաթոգնէր, գիրկս արկանէր և յիմարէր, իւր ինքեան լեալ նախանձախնդիր տարփածու, ոչ զոք ունելով տարփակից: Այս է աւելաղանցութիւն ինքնասիրութեանն, որ 'ի տեսչութենէ տպաւորեցաւ յոգի 'ի պահպանութիւն անհատի: Բայց թէ չէ չափաւորեալ 'ի բանէ, լինի վնասակար սիրողին, և ծաղածանակ տեսողաց, իբրև զանմիտն Ակկա և զխուառացեալն Նարկիս: Ոչ այլ ինչ է ինքնասիրութիւն, բայց իւրական ցանկութիւն, արմատ այլ ամենայն մարդկային բաղձանաց. որ է հետամուտ լինել իւրոց բարեաց, և խորշել յիւրոց չարեաց. վայելել 'ի բարիս զորս ունի, և ցաւել վասն բարեաց զորս չունի: Եւ այս զգալի բարեօք՝ ունի դադար 'ի ստորին բաղձանս, և զիմանալի բարեօք՝ 'ի վերին բաղձանս: Բայց քանզի նոյն ինքն տեսչութիւնն արար զմարդն ընկերական, հաստեաց 'ի նա միւս ևս ազդեցութիւն, հաղորդել այլոց զիւրն սէր: Ըղձալի է առատաձեռին հաղորդել այլոց զիւր ինչս, և ուսումնականին զիւր ուսմունս: Ըղձալի է հոգւոյ փոխաբերել յայլս զիւր խոկմունս և զսէր իւր: Ամենայն ծաղիկ ծնունդ իմն է սերման, և սերմն ծնունդն այլոյ ծաղկի: Ծնանի սէրն յանհատ ոք, և տարածի յայլ անհատ 'ի ձեռն կամաց: Ոչ ոք շատանայ կամելով բարի իւր ինքեան, թէ ոչ կամի բարի այլում իւրականի: Այն է սէր մնայուն 'ի ներքս. այս է սէր զեղուն առ արտաքս, այն է սէր ցանկութեան, կամ բարեյօժարութեան: Բայց դեռ ամուլ է այս սէր բարեյօժարութեան առ սիրեցեալն, թէ ոչ արտածէ 'ի սիրեցելոյն փոխադարձ սէր առ սիրողն, որ յերկուց սիրողաց առնէ երկուս սիրելի բարեկամս: Սկիզբն բարեյօժարութեան է սէրն իւրական, բայց ոչ է բարեյօժարութիւն: Սկիզբն բարեկամութեան է բարեյօժարութիւն, բայց ոչ է բարեկամութիւն: Ամենայն բարեկամ է բարեյօժար, բայց ոչ ամենայն բարեյօժար է բարեկամ: Թէպէտ աչք են հաւատարիմ առաջնորդք սիրոյ, բայց և այնպէս զսէր բարեյօժարութեան մարթ է իմանալ և ականջօք, զի շատ է համբաւն առաքինութեան 'ի ծնանել զսէր առ անծանօթն 'ի մի վայրկեան: Բայց սէրն բարեկամութեան ծնունդ է փղի, որ վասն զի է երկայնակեաց, երկար ժամանակ պիտի նմա 'ի ծնանիլ: Յոյժ կեղևապատ և խորածոց են ոգիք մարդկան. չէ հնար խելամուտ լինել կամ ճանաչել, բայց եթէ ուշեղ հետազօտութեամբ, երկար ընտանութեամբ և ապահով փորձիւ: Զանասունս իսկ և զտունկս մարթ է սիրել սիրով բարեյօժարութեան, բայց ոչ սիրով բարեկամութեան. զի ոչ փոխարէն սիրեն զսիրողն: Սօսն սիրով պաշտեցեալ և զարդարեալ 'ի Քսերքսեայ, այնչափ անզգայ էր առ այն սէր, որչափ սիրողն եղև անմիտ: Գլաւկոս այնչափ սիրէր զիւր երիվար, մինչև միս մարդոյ ջամբէր նմա, և փոխանակ այսր ինքն եղև նորա կուր: Սիրեցեալ էր գրաստըն, այլ ոչ սիրէր. կամ թէ սիրէր՝ զմիս տեառն իւրոյ և ոչ թէ զտէրն: Բարեկամութիւն թուի սիրելութիւն շան, որ 'ի գգուել իւրում գգուէ, 'ի շողոմելն շողոմէ, սիրեցեալ՝ փոխարէն սիրէ զտէրն. բայց քանզի այն է լոկ կիրք և ախորժակ զգայական, ոչ ընտրողական, և ոչ բանական, կոչի ազդեցութիւն և ոչ բարեկամութիւն: Սիրէ զի բարերարութիւն գըտցէ. ոչ եթէ փոխարէն սիրէ, վասն զի է սիրեցեալ: Չէ բարեկամութիւն եթէ սիրեցեալն ոչ ճանաչէ զսէր սիրողին, և ոչ փոխարէն սիրէ ընտրութեամբ: Ապա երեքկին է սէր. մնայուն 'ի ներքս, ածանց յայլս, և փոխադարձ: Սէր իւրական, սէր բարեյօժարութեան, և սէր բարեկամութեան:



Ստոյգ իմն է, թէ որ սիրէ արժան է թէ սիրեսցի, բայց և այնպէս սիրել զի փոխարէն սիրեսցի, է առաւել սէր ցանկութեան քան բարեկամութեան. և ևս առաւել, եթէ սիրէ նա առ ընդունելոյ զօգուտ կամ զբերկրութիւն: Որ բարերարէ, արժան է թէ բարերարութիւն ընկալցի. բայց որ բարերարէ առ ընդունելոյ զբարերարութիւն, ոչ է բարերար, այլ բարերարութեանց վաճառող: Եւ որ սիրէ առ ընդունելոյ զսէր, ոչ է բարեկամ սիրելի, այլ սիրոյ վաճառող. ոչ սիրէ զբարեկամն, այլ զանձն իւր: Վասն այսորիկ սէր ցանկութեան ոչ պարտաւորէ առ փոխադարձ սէր. զի փոխարէն այնր սիրոյ ունի 'ի վարձ զբերկրութիւնն կամ զշահն:

# ԳԼՈՒԽ Գ.

## Տեսակք բարեկամութեան։

Երեք են սիրելի առարկայք, օգտակար, բերկրական, և համեստ։ Բարիք բախտի են օգտակարք. բարիք մարմնոյ են բերկրականք, և բարիք հոգւոյ են համեստ. որպէս այլուր ասացաւ։ Օգտակարք չեն սիրելիք ըստ ինքեանց, այլ ըստ պատահման. ըստ այնմ որ արբանեկեն 'ի ստացութիւն բերկրականաց կամ համեստից։ Բերկրականք են սիրելիք ըստ ինքեանց բնութեանն զգայականի ըստ պատահման այլայլելոյ։ Համեստք են սիրելիք ըստ ինքեանց բնութեանն բանաւորի և կատարելոյ։ Մինչ զի ըստ կարգի տեսչութեան օգտակարք մարմնականք են կարգեալք առ բերկրականս, և բերկրականքըն առ համեստս. զի արտաքինքն արբանեկեն մարմնոյ, և մարմինն ոգւոյ։ Ապա երեք են տեսակք բարեկամութեան. օգտակար, բերկրական, և համեստ. զի ունակութիւնք 'ի ներգործութեանց, և ներգործութիւնք յառարկայից առնուն տարբերութիւն։ Յորմէ մարթիս ճանաչել, թէ այս երեք տեսակք բարեկամութեան ոչ բաժանեն զսեռն միեղինապէս, այլ համեմատօրէն. վասն զի երից սիրելի առարկայիցս մի քան զմի առաւել գոլով, սիրելութիւնդ կամ բարեկամութիւնդ առնուն գլխաւորաբար և յատկապէս պատշաճի համեստին, ապա բերկրականին, հուսկ ապա օգտակարին, մինչ զի համեստն էապէս, իսկ օգտակարն և հեշտականն՝ միայն նմանական իմն փոխաբերութեամբ են սիրելութիւնք կամ բարեկամութիւնք։ Վասն այսորիկ բարեկամութիւնն որոյ առարկայ է օգուտն, որպէս 'ի խորհրդակցութիւնս և 'ի վաճառական ընկերութիւնս, քանզի չէ հիմնեալ 'ի հաստատուն և 'ի ներքին առաքինութիւն, այլ յարտաքին և 'ի պատահական օգտակարութիւնս, 'ի փոխել սոցա փոխի. և յոլովակի բարեկամութիւնն 'ի թշնամութիւն շրջի, և ընկերութիւնն մարդկային յընկերութիւն գազանային։ Ի հռովմէական երրորդպետութեան Լեպիդոսի Անտոնիոսի և Հոկտաւիանոսի՝ այնչափ տեւեաց բարեկամութիւն նոցա, ցորչափ տեւեաց յոյս բաժանելոյ 'ի մէջ իւրեանց զհռովմէականն ինքնակալութիւն կործանմամբ Բրուտոսի և Կասսիոսի։ Բայց իբրև կործանեցան երկոքին սոքա, և բաժանեցաւ ինքնակալութիւնն. բաժանեցին և երրորդապետք զբարեկամութիւնն։ Վասն զի իւրաքանչիւրոց անձուկ ունելով բոլորին, միաբանեցան Անտոնիոս և Հոկտաւիանոս 'ի մերժել զԼեպիդոս յիւրմէ բաժնէ. ապա ամբարձաւ Անտոնիոս 'ի մերժել և զՀոկտաւիանոս յիւրական մասնէ. բայց 'ի զօրանալ քան զնա Հոկտաւիանոսի քաջութեամբ կամ բերմամբ բախտի, սա միայն մնաց միահեծան [511]. և այլ ոչ պիտոյացան նմա բարեկամք. զի ամենեքին եղեն նմա հպատակք։ Այս վախճան օգտակար բարեկամութեան։



Չէ ինչ հաստատուն քան զայս բարեկամութիւնն հեշտական։ Հեշտութիւնն է արագագոյնն 'ի մարդկային կիրս, և յատուկ է կրից լինել առօրեայ. և այնչափ անկայուն, որչափ են արագագոյն։ Վասն զի բովանդակ են անբանաւոր շարժմունք, որք 'ի վայրկենի փոփոխին, որչափ առաւել են բուռն, նոյնչափ կարճատև։ Յիրաւի հեշտական սէրն նկարագրեցաւ տղայ թեւաւոր, անբան գոլով քան զտղայ, և թեթև քան զխուր փետուրս. ճրագ 'ի ձեռին ունելով 'ի ցոյցս, որ շուտ վառի և վաղ շիջանի։ Տեւէ սէր հեշտական, ցորչափ տեւէ հեշտութիւնն։ Թէ տուրք շրջան և կամ խօթութիւն փոխէ յերեսս զծաղկեալ գարուն յեղեմնապատ ձմեռն, կամ գեղեցիկ ինչ դէմք 'ի գեղեցկագոյն ինչ դիմաց առնու խաւարումն, սիրելին լինի ատելի, և որ յառաջն էր համոյական՝ բերէ զզուանս։ Իրաւացի և ոչ ծանր ինչ եղև տրտունջ Արիանեայ առ Թեսէոս, և Դէանիրայ առ Հերակլէս. որք քաջքն էին 'ի շահատակութիւնս, այլ յողդողդք 'ի սէր. զի յերևել նորոյ գեղոյ խզէին զհաւատարմութեանն կապ առ առաջինն, վասն որոյ շահատակէին որպէս քաջք, և սիրէին որպէս հեշտասէրք։ Մեծ ևս զարմանք այն եղեն, զի Պերիանդր մի յեօթանց իմաստասիրացն Յունաց՝ իբրև հարաւ 'ի սէր Փրինիայ օտարատւոյ ումեմն կնոջ, թշնամացաւ Մելիսեայ իւրում զուգակցի. կարեալ սրով զկապ ամուսնութեանն և զկենաց նորա [512]։ Բայց սէր այն իմաստնոյ չէր արմատացեալ յիմաստութեան, այլ 'ի բերկրականս։ Նա գիտէր բայց չէր գիտուն, թող թէ իմաստուն. զի ճշմարիտ իմաստունն ոչ սիրէ վասն հեշտութեան, այլ վասն համեստութեան։ Ուստի այն իմաստունք լաւ ևս գիտէին ուսուցանել քան առնել։

Ապա չէ ճշմարիտ բարեկամութիւն ոչ օգտակարն, և ոչ հեշտականն. զի և ոչ մին հայի 'ի բարին բարեկամին, այլ յիւրական բարին. ուստի սէր է ցանկութեան, և ոչ թէ բարեկամութեան։ Վասն որոյ ճշմարիտ և կատարեալ բարեկամութիւն է միայն համեստականն՝ հիմնեալ յառաքինութեան. որպիսի եղև Եպամինոնդայն և Պեղոպիդայն, որպէս ասացաւ։ Չիք ինչ յաշխարհի կայուն և հաստատուն քան զառարկայ առաքինութեան, համակերպութիւն իմն գոլով նորա ընդ ուղիղ բանի, այսինքն ընդ յաւերժական և անփոփոխ օրինաց աստուածային մտաց։ Ապա անյեղլի և անփոփոխ է

ըստ իւրեան բարեկամութիւնն առաքինական. զի առարկայն չէ փոփոխելի. և անձնն ոչ սիրէ կրիւք, այլ ունակութեամբ։ Բայց թէպէտ ճշմարիտ բարեկամութիւնն ոչ սիրէ վասն օգտի, և ոչ վասն բերկրութեան, այլ վասն համեստութեան, սակայն և այնպէս համեստ գոլով՝ հարկիւ է և օգտակար և բերկրական։ Թէ բերկրութիւն է ամենայն ումեք տեսանել հայելւոյ զպատկեր իւրոյ դիմաց, յորժամ դէմքն են զուարթ և գեղեցիկ, քանի բերկրութիւն իցէ առաքինի սիրողի, յորժամ փողփողեալ տեսանիցէ յառաքինի բարեկամին իւր սիրելի զպատկեր իւրոյ առաքինութեանց, և իւրոյ բարի վարուց։ Իսկ եթէ փոխադարձ իցէ սէրն, քանի առաւելու բերկրութիւնն, իբր զի յոլովամբ սիրոյ 'ի միմեանս, երկաքանչիւրն վայելէ 'ի վայելս յիւրականս և 'ի բարեկամին։ Թող զի զինչ օգտակարագոյն կայցէ երկաքանչիւր վիճակի քան զբարեկամ որ հաւատարիմ, մերթ խորհրդատուութեամբ յիրողութիւնս, և մերթ ձեռնտուութեամբ 'ի վիշտս։ Ոչինչ ընկերութիւն շահավաճառի երկպատիկ զգլուխ գրամոյ, որպէս ճշմարիտ բարեկամութիւնն. զի 'ի տալ զսէր իւր փոխարէն, ստանայ որչափ ինչ ունի սիրելի բարեկամն, առանց կորուսանելոյ զիւրն. իբր զի 'ի սիրելի բարեկամաց մէջի ամենայնն է հասարակաց, որպէս և լուիցես։ Յասացելոց աստի մարթ է քաղել, թէ հասակ սեպհական ճշմարիտ բարեկամութեանն է հասակն միջակային։ Աշխոյժ երիտասարդ ուժգնակի յուզեալ 'ի կրից, սիրէ վասն հեշտութեան։ Ծեր ակար որում բազում օգնականութեան պէտք են, սիրէ վասն օգտի։ Միջակայինն, յոր ցածուցեալ են կիրք, բայց ոյժն դեռ չէ թօշնեալ, սիրէ վասն համեստութեան։ Երիտասարդն կարի իմն դիւրահաւան, հաւատայ ամենայն սիրելեաց իբրև բարեկամաց։ Ծերն կարի իմն կասկածոտ, յամենայնէ առնու կասկած։ Միջակայինն զմէջն ունելով զերկուց ծայրից, գտանէ ըստ ճշմարտութեան և սիրէ ըստ դատման։

## ԳԼՈՒԽ Ե.

### Գործք ճշմարիտ բարեկամութեան։

Երեք են գործք ճշմարիտ բարեկամութեան, այսինքն Բարեյօժարութիւն, Բարերարութիւն, և Միաբանութիւն։ Բարեյօժարութիւնն որ և ասի բարեհաճութիւն, է սոսկ շարժումն ինչ կամաց, որ ըղձանայ ումեք բարի, բայց առանց կամելոյ առնել նմա բարի։ Թէ դէպ լիցի քեզ տեսանել հանդէս ինչ զինաշարժութեան, կամ զուարճալի ինչ



շահատակութիւն երկուց ասպետաց զօրս չիցէ երբէք քո տեսեալ, բնաւորապէս յանձին զգաս յանկարծակի իմն և միակողմանի միտումն 'ի յաղթութիւն սորա քան նորա. բայց վասն այդր չշարժիս մատուցանել նոցա օգնութիւն։ Այո, բարի կամք է այն պատճառեալ 'ի բնաւոր համակրութենէ կամ 'ի յանկարծ կրից. բայց է սէր բարեյօժարութեան, և ոչ թէ ցանկութեան. զի ըղձանաս նմա բարի վասն օգտի նորա, և ոչ վասն օգտի քոյ։ Սակայն ցայսվայր է այն գործ ներքին և ամուլ, զի ոչ ծնանի գործ ինչ արտաքին առ սիրեցեալն։ Ոչ կարէ լինել բարեկամ, որ ոչն է բարեյօժար. բայց որ էն բարեյօժար, ոչ վասն այդր է իսկ և իսկ բարեկամ։ Եւ թէ և սոսկ սէրն բարեյօժարութեան լինէր փոխադարձ, անմարթ էր կոչել զնա բարեկամութիւն ճշմարիտ, այլ այլաբանական և անգործ. սկիզբն բարեկամութեան, այլ ոչ բարեկամութիւն։

Ապա առաջին գործ բարեկամութեան է կամել բարի բարեկամին. ըղձանալ, զի կեցցէ նա, և կեցցէ զուարթամիտ. խնդակցիլ բարեբաստութեանց նորա, և կարեկցիլ դժբախտութեանց։ Բայց ծաղրական է այս բարեյօժարութիւն, թէ ոչ ձեռն կարկառեսցէ բարերարութիւն։ Զէ կամք գործադրիչ այն որ կամի զայլոյ բարի, բայց ոչ պուն գործէ թէ հասցէ այնմ։ Որ ոչ ըղձանայ օգնել, ոչ սիրէ. բայց որ կարող է օգնել և չօգնէ, ոչ ըղձանայ օգնել։ Սիրտ ճանաչի 'ի գործոյ, որպէս առողջութիւնն 'ի զարկէ բազկի։ Ծիծաղեցաւ Դիոս 'ի վերայ հերկագործին, որ ուխտս դնէր, զի սայլ իւր ելցէ 'ի տղմոյ յոր խրեալն էր, և ինքն չարկանէր ձեռն 'ի գործ։ Այնչափ արժէ բարեկամն որ չօգնէ, որչափ թշնամին որ չվնասէ։ Բարերարութիւն և անիրաւութիւն են երկու ներհականք։ Անիրաւութիւնն քակէ զբարեկամութիւն, և բարերարութիւնն սնուցէ։ Այո, սիրել առ ընդունելոյ զբարերարութիւն, ոչ է սէր բարեկամութեան. բայց սիրել վասն այսորիկ զի ընկալաւ զբարերարութիւն, գեղեցիկ սկիզբն է բարեկամութեան։ Ապա բարերարութիւնք յառաջ են տարերք, և ապա սնունդք բարեկամութեան. զի ամենայն մարմինք որով իւիք բաղադրին, նովին և պահին։ Այլ ոչ ամենայն բարերարութիւն, է բարերարութիւն, թէ չէ համեստ։ Բարերարութիւնն երբեմն է չարարութիւն, զի 'ի հաճոյանալ բարեկամին վնաս առնէ բարեկամութեան, և առնէ զնա չար ևս քան զթշնամութիւն։ Էին սերտ բարեկամք Հռոտիլիոս և Սկաւրոս. բայց 'ի խնդրել Սկաւրոսի 'ի Հռոտիլիոսէ անիրաւ ինչ, նա չէառ յանձն։ Խռովեցաւ Սկաւրոս ընդ մերժումն, ասէ. Զի՞ պիտի ինձ բարեկամութիւնդ, թէ չընդունիմ ինչ 'ի քէն բարերարութիւն։ Եւ Հռոտիլիոս ետ պատասխանի. Զի՞ պիտի ինձ բարեկամութիւնդ, թէ մնայ ինձ

վասն քո անիրաւիլ: Եւ անդէն վախճանեաց զբարեկամութիւնն: Մէրն եբեկ զաղեղն և չիջոյց զշահն: Գեղեցիկ եւս եղև պատասխանին Պերիկլեայ, բայց ոչ նոյնպէս գեղեցիկ հետևութիւնն: Խնդրեաց աղաչել զնա մի 'ի բարեկամաց իւրոց 'ի շնորհս բարեկամութեան երդնուլ սուտ' 'ի նպաստ իւր. և նա ետ պատասխանի. Բարեկամք մինչև ցսեղանս. կամիմ, ասէ, զի լիցուք բարեկամք, բայց մինչ 'ի սուրբ սեղանս: Սովոր էին հանդիսապէս երդնուլք դնել զձեռն 'ի վերայ սեղանոյ: Վասն այսորիկ առաւել եւս յիշատակաց արժանի եղև իւրն պատասխանի քան զՀռոտիլլիոսին. բայց սա ոչ անդէն վաղվաղակի կորեաց իբրև զՀռոտիղիոս զամօթական բարեկամութիւն: Ճշմարիտ յօդ բարեկամութեան ոչ է այն, որ ընդէ զսուտ ոք բարեկամ. և սուտ բարեկամ է այն, որ 'ի պէտս բարերարութեան պահանջէ առնել ինչ սեղանակապտութիւն: Բարեկամութիւն լինէր այն ըստ ասից Կատոնի, ոչ քակելի, այլ խզելի:

Ի բարեյօժարութեան կցորդելոյ ընդ բարերարութեան ծնանի միաբանութիւն կամ միասրտութիւն. որ ոչ այլ ինչ է, բայց միութիւն երկուց սրտից: Սիրտ մարդկային է իշխան անդամոց, սկիզբն կենսական շարժմանց. գործարան կրից և աղբերակ սիրոյ: Յերկուց քնարաց միաբանելոց 'ի նոյն ձայնարձակութիւն' թէ մոտի ոք 'ի մինն, միւսն իւրովի միաձայնի: Որ ինչ են 'ի քնարն լարք, այն են 'ի սիրտս նոցին սիրտք: Վասն այսորիկ թէ երկու ճշմարիտ բարեկամք յետ ժամանակաց ինչ պատահեն միմեանց, յանկարծոյց լինել նոցա' երկոցուն սիրտք բաբախելով դիմեն 'ի միմեանս, և 'ի թարգման իւրեանց փոփոխ ախորժակաց բեկբեկ ձայն արձակեն 'ի լեզու, ջերմաջերմ ոգիս յերեսս, քաղցր արտասուս յաչս, անոյշ ժպիտ 'ի բերանն, և գորովական գրկախառնութեամբ լանջակցեալ զսիրտ ընդ սիրտ միաւորեն ըստ մարթելոյ: Ապա 'ի հաղորդիլ սրտից ընդ միմեանս 'ի ճշմարիտ բարեկամս, փոփոխակի հաւասարորդ լինին և խորհուրդք նոցա և կամք. զայն կամեցեալ, զոր միւսն կամի, և այնմ հաւանեալ որում միւսն է հաւան. անմարթ գոլով մնաց նոցա լինել տարաձայն, որոց սիրտն է միաձայն: Յայսմանէ ծագէ ծայրագոյնն այն սրտի դիւր' 'ի կենցաղիլ նոցա 'ի միասին, և յականել 'ի միմեանց ոգիս ընդ աչս' որք պատուհանքն են սրտի. որ և լեալ միմեանց տեսարան, պշուցեալ հային 'ի գեղեցիկ տրարս իրերաց: Յայսմանէ ծնանին և այն ծանր անձկութիւնք 'ի մեկնիլ նոցա 'ի միմեանց, զի բաժանին սիրտ 'ի սրտէ: Այն 'ի հեռաստանէ խոսակցութիւնք առաքմամբ խորհրդոց փակելոց 'ի նամակի: Այն աղէկտուր կսկիծ 'ի մահու անքակ սիրելւոյն. մինչև մլիլ երբեմն կենդանւոյն 'ի փոյթագոյն մեռելոյն յայրումն. կամեցեալ մանաւանդ մեռանիլ ընդ նմա' քան կեալ առանց նորա, և իբրև զամիանտեանն կապերտ' առաւելուլ բոցով զփայլումն իւրոյ մաքրութեան [315]: Եւ զինչ զարմանք իցեն զի, գոլով 'ի նոսա մի միայն սիրտ, մի միայն կամք և մի միայն միտք, էր յերկուս մարմինս մի միայն հոգի: Մայր Դարեհի խաբեալ 'ի շքեղ հանդերձից Հեփեստիոնի, նմա մատոյց մեծարանս փոխանակ Աղէքսանդրի. և 'ի լինել նորա 'ի չքմեղս վասն սխալանացն, ասէ Աղէքսանդր. Ոչ սխալեցեր աւիկն. դա է միւս ես: Սքանչելի է սէր և թովիչ հզօր, որ օտարոտի իմն' այլ ճշգրիտ ոգեփոխութեամբ զայս ոք յայն ոք փոխարկէ, և յերկոցունցն առնէ մի: Ապա ոչ ստեցին առաջի բանաւորի այն անուանի ախոյք սիրելի բարեկամաց Պիւղադէս և Որեստէս. երբ վասն մեռանելոյ փոխանակ միմեանց, Պիւղադէս ընդէր թէ է Որեստէս, և Որեստէս թէ է Պիւղադէս: Զստոյգն ասէին 'ի ստութեան անդ: Որեստէս կենդանի էր 'ի Պիւղադէս, և Պիւղադէս յՈրեստէս. 'ի սպանանել բանաւորին զմին' սպանանէր զմիւսն. և 'ի սպանանել զերկոսին' սպանանէր զմի ոք. նա և ոչ զմի ոք. զի համբաւ սքանչելի սիրոյն արար զնոսա անմահս [314]:



## ԳԼՈՒԽ Զ.

*Արդեօք բարեկամութիւնն իցէ՞ առաքինութիւն, և թէ որպիսի՞ առաքինութիւն իցէ:*

Անարժան են սրբազան անուան առաքինութեան' բարեկամութիւնք որք հային 'ի հեշտութիւն և յօգուտ զգայական. զի չամբառնան 'ի համար համեստութեան, այլ անկեալ դնին 'ի ստորին սահման ցանկութեան, որ հասարակ է և անբանից: Բայց սիրել զոք վասն լինելոյ նորա առաքինի, է ներգործութիւն առաքինական բարեյօժարութեան, վասն ունելոյ նորա եղր զառաքինութիւնն: Եթէ սիրես դու զայրն Լէոնիդաս վասն լինելոյ նորա արի, լինի ներգործութիւն ինչ ընտրական որ վերածի յարիութիւն. եթէ զքաջախոհն Կատոն որպէս քաջախոհ, վերաբերի 'ի քաջախոհութիւն. եթէ զԱստիկոս ճշմարտախօսն, 'ի ճշմարտախօսութիւն. եթէ զՔսենոկրատէս պարկեշտն, 'ի պարկեշտութիւն. զի այնպիսի է ներգործութիւնն, որպիսի է առարկայն: Թէ այս ներգործութիւնք լինիցին ստէպ, ծնանին ունակութիւնս ընտրականս և առաքինականս համատեսակս. զի այնպիսի է ունակութիւնն, որպիսի է ներգործութիւնն: Բայց այս առաքինական բարեյօժարութիւն չէ առաքինական բարեկամութիւն, եթէ ոչ է փոխադարձ: Պրիմասոս առաքինասէր դրադէտ, այնչափ

հարակ 'ի սէր մեծամեծ առաքինութեանց աբբային Կղուկնեայ զորոյ լուեալ էր զհամբաւ, մինչև եւ 'ի Բարիզէ՝ երթալ հաստել սէր բարեկամութեան ընդ այնպիսում առաքինասէր առաջնորդի: Իսկ աբբայն որ ոչ ճանաչէր զնա, ընդ տեսանելն կարծեալ թէ գեղջուկ ոք իցէ, այնպէս սաստիկ հակակրութիւն կալաւ առ նա, մինչև զոր չէր երբէք արարեալ այլում, զդուրս ընդդէմ փակել նմա, զի մի տեսցէ զնա: Երկոքանչիւրն էին առաքինիք. բայց Պրիմասոս սիրէր զաբբայն, և էր ատեցեալ 'ի նմանէ. իսկ աբբայն ատեայր զՊրիմասոս, և էր սիրեցեալ 'ի նմանէ: Մին էր բաղեղն, որ սիրէ զկնձնի. և միւսն կնձնի, որ ատեայ զբաղեղն: Բայց իբրև ծանեաւ աբբայն զառաքինութիւն Պրիմասոսի, եղև սէրն փոխադարձ և մեծ. և պնդեցին ընդ միմեանս բարեկամութիւն առաքինական և նշանաւոր:

Ապա սեպհական է բարեկամութեան յաւելուլ 'ի վերայ լոկոյ առաքինութեան զդժուարագիւտ ինչ և զգերազանցիկ որակ, այսինքն է զփոխադարձութիւն: Է սա առաքինութիւն ինչ ծագեալ յերկուց առաքինութեանց. որպէս յանդրէն ցոլմանէ նշուլից ծնանի ջերմութիւն, նոյնպէս 'ի միաւորութենէ առաքինական գործոց երկուց սիրողաց ծնանի սէր: Ի փոխադարձ ատելութենէ բորբոքի թշնամութիւն. և 'ի փոխադարձ սիրոյ բարեկամութիւն: Ապա առաքինութիւն բարեկամութեան հաստատեալ է 'ի փոխադարձութիւն առաքինական սիրոյ. որպէս փոխանակութիւն և անդրէն փոխանակութիւն 'ի քաղաքական ընկերութիւնս: Սէրն է հարուստ ինչ գլուխ դրամոյ տուեալ մարդկան յերկնից. զոր մարթ է նոցա 'ի գործ արկանել 'ի բարի կամ 'ի չար. է որ պարգևէ, է որ ընդվայր հարկանէ, է որ վաճառէ, և է որ վատնէ 'ի սնոտիս. է որ յանառակս, և է որ 'ի համեստս. և այնպիսի է սէրն, որպիսի է պատաղումն: Բայց արդ որպէս ճշմարիտ բարեկամութիւնն է իբրև փոխ ինչ և լռելեայն դաշն 'ի մէջ երկուց առաքինեաց և հաւասարից՝ սիրելոյ և փոխարէն սիրելոյ զմիմեանս վասն առաքինութեանց իւրեանց ըստ հաւասարութեան, սոյնպէս հայի նա յառաքինութիւն արդարութեան, որ առարկայ է հաւասարութիւն 'ի տուրևառս և 'ի դաշինս: Ոչինչ կարող է քակել զբարեկամութիւն, բայց միայն անիրաւութիւն. և ոչինչ կարող է պահել զնա, բայց միայն արդարութիւն: Ապաքէն լուար թէ արդարութիւնն է հաստատուն ինչ կամք տալոյ այլում հաւասարութեամբ զիւր պարտս, և բարեկամութիւնն ևս է կամք որ հայի 'ի բարին այլոց՝ և ոչ յիւրն, ըստ արդեանց: Վասն այսորիկ ոչ այլ ինչ է սիրել զբարեկամն, բայց կամել բարի բարեկամին վասն իւրոյ առաքինութեան: Բայց յարդարութեան բաւական է առնչական կամք միոյն առ միւսն, և 'ի բարեկամութեան երկու են կամք առընչակիցք: Ճշմարիտ է թէ առաքինութիւն հաճոյականութեան, զորմէ խօսեցաք, ունի ինչ նմանութիւն ընդ բարեկամութեան. բայց այն է առաքինութիւն տարբեր յոյժ: Դիտաւորութիւնն է որ տարբերէ զներգործութիւնս և զունակութիւնս մարդկայինս: Հաճոյականութիւնն յորդորի հաճոյանալ ամենայն մարդկան. զի այսպէս պահանջէ մարդկութիւնն և քաղաքական կենցաղավարութիւն: Բայց բարեկամութիւնն յորդորի փոխարէն սիրել զբարեկամն, զի արդարութիւնն բարեկամական այդպէս պահանջէ: Ամենայն մարդ քաղաքավար՝ ևս և առ թշնամին 'ի կիր արկանէ զքաղաքավարութիւն և զհաճոյականութիւն, այլ ոչ զբարեկամութիւն: Բայց քանզի բարեկամութիւնն է որպէս դաշն ինչ բարոյական և ոչ քաղաքական, և չափ հաւասարութեանն չէ բնական, այլ բարոյական, վասն այսորիկ ոչ է նա կատարեալ արդարութիւն: Եւ յայս սակս ասացաք թէ բարեկամութիւնն չէ կատարեալ առաքինութիւն: Ոչ է նա արդարութիւն օրինական համեստութեան, այլ արդարութիւն բարոյական համեստութեան. բայց այնչափ կանոնաւորեալ 'ի բանէն սկզբամբք օրինական արդարութեան, և այնչափ գեղեցիկ և օգտակար մարդկային կենաց, մինչև բազում իրաւամբք 'ի փիլիսոփայից ընդ առաքինութիւնս դասեցաւ: Երկու են տեսակք արդարութեան, որպէս լուար յիւրում տեղւոջ, Փոխարինական և Տրամաբաշխական: Եւ երկու են տեսակք բարեկամութեան, Փոխարինական, որ չափէ զքանակ իրին զոր պարտի ոք. Տրամաբաշխական, որ չափէ զորակ անձին որում պարտի ոք: Այն է բարեկամութիւն հաւասարութեան, որ տայ հաւասար ընդ հաւասարի: Այս է անհաւասարութեան, որ տայ զհամեմատականն ընդ համեմատականի: Զերկաքանչիւրոցն արժան է խօսել:



## ԳԼՈՒԽ Է.

### Յաղագս հաւասարական բարեկամութեան:

Նախկին հիմն օրինական փոխարինական արդարութեան է փոխադարձ տոյժն Ռադամանդեան. այսինքն զի իւրաքանչիւր ոք ընկալցի զոր արարն ըստ հաւասարութեան: Սոյն սա է հիմն բարեկամութեան հաւասարականի. զի այնչափ ոք փոխարէն սիրեսցի, որչափ սիրէ: Այս հաւասարութիւն է հարկաւոր 'ի վիճակ անձանց որք սիրեն, 'ի քանակ սիրոյն որով սիրեն, և յորակ բարեացն զոր երկաքանչիւր սիրողք ընծանան միմեանց: Բայց թէ և 'ի փոխարինական հաւասարու-

թեան մասին բարեկամութիւնն նման է օրինական արդարութեան, սակայն այլազգ է նա յեղանակ փոխարինելոյն: Արդարութիւնն փոխարինական ենթադրէ զանհաւասարութիւն 'ի մէջ պարտապանին և պարտատեառն, և անէ զայն 'ի հաւասարութիւն: Ենթադրէ թէ Տիտիոս ունի առ Սէյոսի զկէս գնոց կալուածոյ ինչ, և տալով նմա վճարել զայն կէսն հաւասարէ զպարտն առնլեաց: Բայց բարեկամութիւնն փոխարինական ենթադրէ զհաւասարութիւն արդեանց 'ի մէջ սիրողին և սիրեցելոյն, և ըստ հաւասար արդեանց հաւասարէ զփոխադարձ ներգործութիւնս բարեյօժարութեան և բարերարութեան և միաբանութեան: Վասն այսորիկ ճշմարիտ և կատարեալ բարեկամութիւնն է հիմնեալ 'ի նմանութիւն առաքինութեան. զի առաքինութիւնն հաւասար՝ հաւասարէ զարդիւնս, և հաւասար արդեանց համեմատի հաւասար սէր և հաւասար գործք. և այս է արդարութիւն ինչ, որ տայ իւրաքանչիւրում զոր պարտն է: Բայց և ճշմարիտ է թէ 'ի կատարեալ բարեկամութեան փոխարինականի ընդ նմանութեան առաքինութեան պահանջի և հաւասարութիւն անձանց, զի արդիւնք երկաքանչիւր կողման իցեն հաւասարք: Աւաւելուն արդիւնք առաքինութեան՝ ըստ առաւելութեան արժանապատուութեան անձին: Ապա եթէ կրտսերն 'ի փոխարինել զսէր երիցուն պահէ զհամեմատութիւն անձանց, այնուհետև ոչ լինի բարեկամութիւն փոխարինական, որ հայի 'ի բացարձակ հաւասարութիւն, այլ լինի բարեկամութիւն տրամաբաշխական, որ հայի 'ի հաւասարութիւն համեմատական. ուստի և ոչ լինի կատարեալ բարեկամութի̃ որպէս և լուիցես:

Բայց ատտանօր ընդդէմ դառնայ մեծ ոմն փիլիսոփայ. պնդեալ թէ ճշմարիտ բարեկամութիւնն ոչ ծնանի 'ի նմանութենէ, այլ 'ի ներհակութենէ: Ո՞չ տեսանէք ասէ Եմպեդոկլէս, որպէս երկիր պապաքեալ 'ի ծարաւոյ սիրէ զզով տեղատարափ, և մարմին սարսռացեալ 'ի ցրտոյ սիրէ զջերմ շոգի ջերմուկի. ապա ներհականն սիրէ զներհականն: Ո՞չ տեսանէք, որպէս գիտնաւորք անմիաբան աղանդովք սրեն զլեզուս ընդդէմ միմեանց, և զգրիչս խայթիչս. և արուեստաւոր արուեստաւորի նախանձ բերէ և ոխակալէ: Ապա 'ի նմանութենէ ծնանի ատելութիւն, և ոչ թէ սէր: Իմաստուն յանմտաց, այլ անմիտ յիմաստնոց համարեցաւ այս իմաստ: Առ որ ասելի է թէ յորժամ ենթակայ ինչ գտանի քաջ տրամադրեալ յիւրում պատշաճական և բնաւոր վիճակի, բնաւորապէս սիրէ զիւր նմանն, կամ վասն պահպանութե̃ և կամ վասն կենակցութեան: Բայց թէ է այլայլեալ, և արտաքոյ իւրում պատշաճական վիճակի, սիրէ ըստ պատահման զիւր ներհակն. զի դարձցի անդրէն յիւր բնաւոր խառնուած: Ախտք ցուրտք բժշկին ջերմային դեղօք, և ջերմք ցրտայնովք,



զի զխմամարտելով ծագի ընդ ծագ դարձցի առողջութիւնն, որ հաստատեալն է 'ի միջասահմանութեան: Մինչ զի նմանն բնաւորապէս սիրէ զիւր նմանն. և ըստ պատահման սիրէ զիւր ներհակն: Ուստի և 'ի նմանութենէ ծնանի բարեկամութիւն բնաւորապէս. և թշնամութիւն ըստ պատահման: Երկու ամոլք գեղյորջորջակ պատկերահանաց, Պրոտոգենէս ընդ Ապելեսի, և Սոլրա ընդ Բակարակայ, եղեն յարուեստի և 'ի բարեկամութեան անքակ լծորդք: Եպիկուրոս և Մետրոդորոս փիլիսոփայք, Դամոն և Պիւթիաս աշակերտակիցք եղեն տիպք բարեկամութեան ըստ նմանութեան: Նա՝ ոչ միայն նմանութիւն առաքինական գործոց՝ այլ և մոլեկանաց պատճառէ զբարեկամութիւն: Բարեկամութի̃ Ատտաբայ և Նումենիոսի այնպէս սերտ, մինչև լինել յառակս, էր հիմնեալ 'ի նմանութիւն արուեստի գողութեան. որպէս և Սիմոնին և Նիկոնին յարուեստ սաերգմնութեան [515]: Ապա նմանութիւն արուեստի եթէ ազատականի, և եթէ մեքենականի ըստ ինքեան բնաւորապէս ծնանի զսէր: Բայց քանզի յոլովակի պատահէ զի արուեստաւոր ոք կամ ճարտարութեամբ նուազէ զփառս, և կամ մտաւորութեամբ նուազէ զշահավաճառ այլոյ, նախանձ, ատելութիւն և թշնամութիւն չեն բնաւոր գործ նմանութեան արուեստին, այլ մոլեկան դէպք արուեստաւորաց: Բայց ատտանօր մեր զոյգք չեն զորպիսի և իցէ նմանութենէ, այլ զայնմանէ եւեթ որ հաստատեալն է յառաքինութեան: Արդ այս է ըստ ինքեան սիրելի և անլծորդելի ընդ նախանձու և ընդ փառամոլութեան, զի առաքինութիւնն է անլծորդ ընդ ամենայն մոլութեան:

## ԳԼՈՒԽ Ը.

### Յաղագս անհաւասարական բարեկամութեան:

Ըստ հայեցողութեան ընդհանուր բնութեան՝ պիտէր ամենայն մարդկան լինել հաւասար յառաքինութեան, յիմաստութեան, 'ի բախտի և 'ի վիճակի, զի չունելով ոչ երկիւղ և ոչ պիտոյս 'ի միմեանց՝ հաւասարութիւնն պահեսցէ զսէր, և սէրն զխաղաղութիւն: Եւ այսպիսի եղև թերևս բնաւոր վիճակն յայնմ բարեբաստ բայց վաղանցիկ ոսկեղէն դարուն, մինչև դեւքն երկաքին ԻՄ և ՔՈ՝ խորտակմամբ դրանց սանդարամետից, 'ի վեր բղխեցուցեալ էին զյորձանս անմիաբանութեան: Բայց քանզի մասնաւոր բնութիւնն՝ կամ առ պակասութեան նիւթոյ, և կամ առ 'ի պէտս նիւթոյ առաքինութեան ոչ կարէ հաւասարապէս առնել զամենեսին իմաս-

տունս, և ոչ զամենեսին առողջս, և ոչ զամենեսին մեծատունս, և ոչ զամենեսին Թագաւորս, խնամ կալաւ զի բարեկամութիւնն անհաւասարական, կամ սիրելութիւն անհաւասար, առաւելութեամբ միոյն լցուսցէ զպակասութիւն միւսոյն՝ համեմատութեամբ: Վասն այսորիկ հիւանդն սիրէ զբժիշկ որպէս զիւր բնեռական ասող. աղքատն զմեծատուն որպէս զիւր ապաստան. ողջքաւորն զիմաստունն որպէս իւր փաստաբան. հպատակն զիշխանաւորն որպէս իւր պաշտպան: Բայց այս է սէր ցանկութեան, և ոչ բարեկամութեան. է լոկ առնչութիւն չունեւորին առ ունեւորն, առանց առնչակցութէ սիրոյ ունեւորին առ չունեւորն: Այլ սէր վերադարձի յինքն, այնպիսին ոչ սիրէ զայլս, այլ զինքն: Թող զի ոչ գոլով անուանոր հաւասարութիւն 'ի մէջ ունեւորի և չունեւորի, անհնար է թէ լինիցի անդ ճշմարիտ սէր բարեկամութեան: Նա աւելադանցութիւնն է թոյն սիրոյ: Այս հնար է, թէ անգեղեայն Գղաւկոս սիրեսցէ զհրաշագեղն Ներէա. բայց ոչ է հնար Ներէայ փոխարէն սիրել զանգեղեայն Գղաւկոս 516: Գեղեցկութիւն չափազանց է միշտ ամբարտաւան, ապշեցուցանէ զսիրողս և անգոսնէ զնոսա. կամի զի պաշտեսցի, և ոչ թէ սիրեսցի. և ինքն ոչ սիրէ, այլ բռնակալէ: Չէ ճշմարիտ բարեկամութիւն, առէր Սոլոն, 'ի մէջ սոսկականի և 'ի մէջ Թագաւորի. զի Թագաւորն կարող է առնել ընդ բարեկամս զոր ինչ առնէ խաղարկուն ընդ քուէս, արժեցուցեալ զնոսա ըստ կամս իւր երբեմն դահեկան մի և երբեմն լումայ: Այնչափ առաւելուն արդիւնք առաքինութեան, որչափ առաւելու արժանապատուութիւն անձին, որպէս ասացաւ: Զի թէպէտ ներքին արժողութիւն առաքինութեան նոյն է յիշխան ոք, և 'ի ժողովրդական, բայց և այնպէս՝ ըստ արտաքին արժողութեան, որ յաչս ռամկաց առնու փայլուն յանձնէ, առաքինութիւնն մեծարգի է յիշխան ոք քան 'ի ժողովրդական: Թէ սիրելի է նա 'ի ժողովրդականն, խնկելի է յիշխանն: Ապա պարտ և պատշաճ է վերածել զայս անհաւասարութիւն 'ի հաւասարութիւն. զի սէրն առնչական ծնցի զառնչակիցն, և լոկ սէրն փոխեսցի 'ի բարեկամութիւն համեմատութեան: Զոր օրինակ 'ի հաւասար անձինս վերածի սէրն 'ի հաւասարութիւն բացարձակ փոխարինական արդարութեամբ, այնպէս յանհաւասար անձինս վերածի սէրն 'ի հաւասարութիւն համեմատական տրամաբաշխական արդարութեամբ. զի որ արժանաւորագոյն է՝ առաւել ևս սիրեսցի: Հաւասարի առաւելապէս ազդ ինչ սիրոյ ընդ սէր այլասեռ: Գեղեցիկ հաւասարութիւն եղև հաւասարութիւն կաղի և կուրի առ Խիֆորոսի: Կոյրն կարող էր գնալ, այլ տեսանել ոչ. կաղն կարող էր տեսանել, այլ գնալ ոչ: Ապա կոյրն վարեալ զկաղն զոր բարձեալ էր շալակաւ, և



կաղն ուսուցեալ կուրին զուղին, կոյրն փոխ տայր զոտս կաղին, և կաղն փոխ տայր զաչս կուրին. և յերկուց մարմնոց լեալ մի մարմին, կրկնակի աքանչելեօք կոյրն տեսանէր, և կաղն գնայր: Այսուիկ փոփոխ երախտաւորութեամբ ցուցեալ 'ի միմեանս զփոփոխ սէր, արձանացուցին զճշգրիտ տիպ անհաւասարական բարեկամութեան, ըստ անզուգականութեան գործոց, բայց վերածեալ 'ի փոխարինական ըստ հաւասարութեան երախտեաց: Զինչ անզուգականութիւն մեծ Արիստիպպոսի աղքատի և մեծահարուստ արքային Դիոնեսիոսի: Բայց յընդունել աղքատին 'ի փարթամէ անտի զինչս, և փարթամին յաղքատէ անտի զիմաստութիւն, փոխանակելով համեմատական հաւասարութեամբ ըզբարիս հոգւոյ ընդ բարիս բախտի, 'ի փոխադարձ արդեանց ծնաւ փոխադարձ սէր: Ըստ սմին օրինակի, 'ի պարգևել ագեղին Գղաւկոսի չքնաղին Ներէայ մարգարիտս, և յընդունել իւրում 'ի Ներէայ բերկրանս, սէրն բերկրական հաւասարեցաւ ընդ սէր օգտաւոր. և յերկու այլ և այլ սիրոյ ծնաւ հասարակ սէր բարեկամութեան օգտաւոր համայն և բերկրաւիթ: Չէ այնպէս հակառակ հիւսիս հարաւոյ, որպէս տէրութիւնն գերութեան: Սակայն և այնպէս Մարկոս Անտոնիոս հաճոյական հրամայողութեամբ, և գերի նորա կամակատար ծառայութեամբ՝ այնչափ վառեցան բորբոքեցան սիրով առ միմեանս, մինչև համբերեալ գերւոյն դժնդակ տանջանաց վասն տեառնն, և տեառնն հաղորդեալ իւրում գերւոյ ազատօրէն զիւր ինչս, դասեցան երկաքանչիւրն ընդ երևելի օրինակս բարեկամութեան: Զիք ինչ այնպէս փանաքի, որում չիցէ բաղդատ անբաղդատ ինչ երախտաւորութիւն, և մեծի սիրոյ արժանաւորութիւն: Աղաւնոյն արկեալ 'ի գետ շիւղ մի, ապրեցոյց զփոքրիկ մրջիւն 'ի հեղձմանէ. և մրջիմնն խածեալ զոտս հաւորսին զերծոյց զբարեացապարտ աղաւնին յոստղէ, զոր լարեալ էր հաւորսին առ որսալոյ զնա: Բայց թէ պակասեսցի ևս ոյժ 'ի փանաքն՝ փոխարինել հաւասար երախտիս ընդ երախտեաց, միշտ հնար է համեմատօրէն փոխան երախտեաց փոխարինել շնորհակալիս: Ոչ եթէ արժողութիւնն է, որ մեծացուցանէ զպարգևն, այլ սիրանոյով պարգևի. և ոչ երբէք այնպէս մեծ է սիրտ պարգևօղին, որում չիցէ բաւական հաւասարիլ ըստ իրաց ինչ սիրտ ընդունողին: Վճարք են մեծաց շնորհաց շնորհակալիք 'ի սերտ սրտէ. զթերին ընու զտկար զօրութեան առատաձեռն կամք: Մեծափափաք իղձ բարերարելոյ՝ է մեծ ինչ բարերարութիւն: Այսու օրինակաւ տրամաբաշխական արդարութեանն հաւասարեալ երկրաչափական համեմատութեամբ զփոքրն ընդ մեծի, հաւասարէ նոյնն զպարտաւորութիւնն ընդ արդեանց և զմեծ բարերարութիւնն ընդ մեծի բարեյօժարութեան, և փո-

խադարձ սիրով հիմնէ յանհաւասարութեան հաւասարութիւն ինչ բարեկամութեան, թէպէտ և անկատար:

Յայսմ ամենայնէ, զոր ցայսվայր որոշեցաւ, դիւրին է քեզ փարատել զշփոթ կատարեալ և անկատար բարեկամութեան իւրովք սեպհական և բովանդակեալ սահմանօք: Կատարեալ բարեկամութիւնն է փոխադարձ և գործունեայ բարեյօժարութիւն 'ի մէջ երկուց հաւասար անձանց. պատճառեալ 'ի նմանութենէ առաքինութեան, անձկալով բարւոյ միմեանց, հանդերձ փոփոխ բարերարութեամբ և միաբանութեամբ: Բարեկամութիւնն անհաւասարութեան է փոխադարձ բարեյօժարութիւն 'ի մէջ երկուց անհաւասար անձանց, համեմատական հաւասարութեամբ բարերարութեան և միաբանութեան առ միմեանս:

## ԳԼՈՒԽ Թ.

### Հարցուածք 'ի վերայ բարեկամութեան :

Ո՞ր լաւ իցէ. ունե՞լ զբարեկամս, թէ չունել: Զի բարեկամութիւնն է պինդ կապ, և ամենայն կապ բառնայ զազատութիւն կապելոյն: Շատ է աչաց լալ զիւր չարիս, առանց լալակից լինելոյ չարեաց այլոց: Եթէ կիսով չափ դու այլոյ իցես, ապա կիսով չափ ոչ քոյ իցես. և որ ոչն է բոլորովին իւր, չէ ազատ: Մեծամեծ փիլիսոփայք իսկ պնդէին, թէ լաւ է իմաստնոյ չունել զբարեկամ քան ունել. զի վերադասելոյն քան զամենեսին չէ արժան լինել ումեք ստորադաս: Ապա պատասխանեմ, թէ կապեալն իւրով ազատ կամաւ չէ կապեալ: Մանաւանդ թէ այնչափ կապէ նա զկամս օտարի ընդ իւրումն, որչափ զիւրն ընդ օտարին. և այնչափ ինչ ստանայ, որչափ ինչ կորուսանէ: Բայց թէ և մարթ իցէ ասել թէ ազատութիւնն ըստ իրաց ինչ նուազի 'ի բարեկամութեան, այնմ փոխատրին այնչափ պիտանի բարիք կարեւորք առ կեանս մարդկան, մինչ մեծ ևս երջանկութիւն է լինել կապեալ քան լինել ազատ:

Արդեօք զանձն առաւել պարտաւոր իցէ սիրել մարդ թէ զբարեկամն: Ըստ իրաց ինչ ամօթալի ախտ է սէր իւրական, զի՞ է սէր ցանկութեան, մահացուցիչ սիրոյ բարեկամութեան: Յայլմէ կողմանէ եթէ արժան է սիրել զբարեկամն, զի լծորդ է 'ի սէրն, ո՞ առաւել լծորդ իցէ մեզ քան զանձինս մեր: Որ չէ բարի վասն անձին, չէ բարի և վասն այլոյ: Պատասխանեմ, թէ 'ի բէրկրական բարիս, կամ 'ի բարիս գովելի ևս է վերադասել զբարեկամն քան զանձն. բայց 'ի բարիս հոգւոյ՝ զըս-



րովելի է յետնիլ յառաքինութենէ վասն հաճոյանալոյ բարեկամին, կամ ջանաջնար լինել առաքինութեանց առաւել վասն այլոյ քան վասն անձին: Բարեկամութիւնն է մեծագոյնն արտաքին բարեաց, բայց ներքին բարիք լաւ ևս են քան զբարեկամութիւն: Օրինակ առաջնոյն եղև Սկիպիոն Ափրիկեցի որ 'ի հետամտել հիւպատոսութեան, առաւել ևս փառս ստացաւ տալով զայն բարեկամին, քան կորզելով յանձն: Օրինակ երկրորդին եղև Հռոտիլիոս, որ առաւել ընտրեաց կորուսանել զբարեկամութիւն, քան զարդարութիւն: Եւ երկոքին իսկ չեն ընդդէմ օրինաց ոչ ինքնասիրութեան, և ոչ սիրելութեան այլոյ: Զի թէ բարեկամն է առաքինի, զնոյն առնել ունի առ քեզ, ապա թէ է մոլի, չէ ճշմարիտ բարեկամ. և կորուստ սուտ բարեկամի է մեծ գիւտ:

Արդեօք բարեկամ ոք իցէ՞ պարտաւոր դնել զկեանս վասն բարեկամի: Զի 'ի միոջէ կողմանէ որպէս գործելն ենթադրէ զգոլ, նոյնպէս բարեկամութիւնն ենթադրէ զկեանս. և 'ի կորնչել կենաց կորնչի և բարեկամութիւնն: Ճշմարիտ չափ բարեկամութեան է սիրել զբարեկամն իբրև զանձն: Զանցանէ զկանոնաւ, որ 'ի կեցուցանել զայլ ոք իւրական՝ կորուսանէ զանձն. զի ոչ սիրէ զնա իբրև զանձն, այլ աւելի քան զանձն: Եղծանել զանգրնատիպն առ անեղծ պահելոյ զպատկերն է անմտութիւն մեծ: Վասն այսորիկ Մեկենաս, տիպ բարեկամաց ասէր թէ՝ զամենայն վասն բարեկամի արասցուք, միայն թէ կեցցուք: Իսկ յայլմէ կողմանէ, եթէ գովելին է չափ համեստի, յայտ է թէ գրչօք գովեաց իբր թեօք յերկինս վերաթեւեցին այնք, որք վասն կենաց բարեկամի զանձինս իւրեանց պատարագեցին: Պատասխանեմ թէ 'ի համեմատել զկեանս ընդ կենաց՝ ամենայն ոք պարտաւորի վերադասել զիւր կեանս քան զայլոյ. զի կարգաւորեալ սէրն սկըսանի յանձնէ: Բայց թէ համեմատին կեանք ընդ առաքինական ինչ գործոյ, մարթ է վերադասել զառաքինականն գործ քան զիւր կեանս: Եւ զինչ առաքինագոյն գործ կայցէ քան դնել զկեանս վասն հայրենեաց, վասն իշխանի և վասն հօր: Բայց այնչափ առաւել արիական առաքինութիւն է դնել զկեանս վասն բարեկամին քան վասն հօր, որչափ առաւել սէրս պնդէ կապ արենակցութեան քան զկապ բարեկամութեան: Այն է պարտք օրինական արդարութեան. այս է արդիւնք բարոյական համեստութեան: Եւ առաւել արիական է առաքինութիւնն կամաւոր քան զբռնադատ: Ճշմարիտ է և այն թէ պարտաւոր գոլով ճշմարիտ բարեկամն սէր փոխարինել հաւասար ըղձմամբ, եթէ դու դնես զկեանս վասն նորա, պարտի և նա դնել զիւրն վասն քոյ: Եւ եթէ 'ի հասարակաց նաւաբեկութեան, մի միայն տախտակ գոլով քոյ՝ արիական առաքինութեամբ թողցես զայն 'ի նա, նոյնգունակ

առաքինութեամբ պարտ է նմա հրաժեշտ տալ զի դու ապրեսցիս. ապա թէ ոչ, ոչ հաւատար և ոչ փոխադարձ է սէր: Եւ յայս հաւատարմութիւն հիմնեցան այն խանդակաթ վճռմունք Պիւղադեսի և Որեստեսի, որք և ցարդ 'ի թատրոնս երևեալ՝ յարատասուս լուծանեն զլսողս, քանի՜ ևս յորժամ լիօք եղեն:

Եթէ սիրելն ոչ այլ ինչ է, բայց ըղձանալ բարւոյ բարեկամին, կամիլ գիտել որչափ ինչ բարի պարտ իցէ ըղձանալ նմա: Վասն զի թէ ըղձանալ նմա փոքր բարիս՝ է սիրել զնա սակաւ, ապա որ մեծապէս սիրէ զնա, ըղձանայ նմա մեծամեծ բարիս, մեծ բարեբաստութիւն, և մեծ իշխանութիւն: Դարեհ վասն զի մեծապէս սիրէր զԶովպիւրոս, ըղձանայր նմա այնչափ ոգիս և այնչափ մարմինս, որչափ հատք էին 'ի նռան, զոր ունէր նա 'ի ձեռին [317]: Պատասխանեմ թէ ցանկութիւն գործադրիչ ոչ անցանէ ըստ կոպար կարելւոյ. և իղձ ճշմարիտ բարեկամաց ոչ են անբաղդատ ընդ բարեկամութեան: Տկարամտութիւն է կանացի ըղձանալ տղայոց մեծութիւնս ցնորականս, և անմիտ է իղձ բարեկամի ուրուք սոսկականի ըղձանալ բարեկամին մեծ ինչ իշխանութիւն: Զի թէ ըղձանաս դու և քեզ իսկ իշխանութիւն հաւասար, է ունայնութիւն մեծ: Եւ թէ յամառիս քո 'ի սոսկականութեան՝ բարեկամդ քո ամբարձցի յաթոռ թագաւորութեան, բարձմամբ հաւասարութեան բառնի և բարեկամութիւն: Կղէոփն ակամայ կամօք լեալ թագաւոր Աթենայ՝ կոչեաց զիւր սիրելի բարեկամս, արտասուօք արձակեաց զնոցայն բարեկամութիւն, գիտելով թէ բարեկամութեան և մեծափառութեան անմարթ է բազմիլ 'ի մի գահոյս. և որ արկանէ զանձամբ զարգարութիւն, զերծու յիւրմէ զբարեկամութիւն: Մինչ զի 'ի տանել նոցա զԹագաւոր զոմն՝ կորուսին զբարեկամ ոք:

Ո՞ր արդեօք յատկագոյն իցէ բարեկամութեան, սիրել եթէ սիրիլ: Քանզի որպէս լաւ է պատուել քան զպատուիլ, իբր զի 'ի պատուելն՝ դու յարգես զայլոյ առաքինութիւն, իսկ 'ի պատուիլդ՝ քոյդ յարգի առաքինութիւն. սոյնպէս 'ի սիրելն պատուես դու զայլոյ առաքինութիւն, իսկ 'ի սիրիլն՝ քոյդ պատուի առաքինութիւն: Պատասխանեմ թէ 'ի սէր ցանկութեան լաւ է սիրիլ քան զսիրել, բայց 'ի սէր բարեկամութեան լաւ է սիրել քան զսիրիլ. զի այն սէր անդրէն ցոլանայ 'ի սիրօղն, և սա ուղղակի հայի 'ի սիրեցեալն: Բարեկամութիւնն է ունակութիւն ինչ առաքինական, և ամենայն ունակութիւն է ներգործական քան կրաւորական. զի յօժարեցուցանէ առնել զներգործութիւնս իւրոյ տեսակի: Սէր ցանկութեան է սէր կրաւորական. սէր բարեկամութեան է սէր ներգործական: Սա սիրէ 'ի սիրել, նա սիրէ 'ի սիրիլ:



Ունակութիւն առատաձեռնութեան թէպէտ և առաքինութիւն է չափաւորիչ ախորժակի 'ի բարերարել և յընդունել զբարերարութիւնս, որպէս և լուար, բայց և այնպէս ըստ ինքեան առաւել միտէ առ առնել զբարերարութիւնս, քան առ ընդունել. զի այն է իւր սեպհական. ուստի և յատկագոյն է բարեկամութեան սիրել, քան սիրիլ: Բայց բաց յայսմանէ որ սիրէ, գիտէ թէ սիրէ, բայց սիրեցեալն ոչ գիտէ թէ սիրի: Զի իւրաքանչիւր ոք լաւ ևս ճանաչէ զսիրտ իւր քան զայլոյ: Իսկ արդ գոլով մինն ստոյգ և միւսն անստոյգ, ուր մեծ է ստուգութիւն՝ մեծ է և սէրն:

Արդեօք ո՞ր լաւ իցէ. ունել բազո՞ւմ բարեկամս թէ զմի միայն բարեկամ: Զի 'ի միոյն կողմանէ առաւել հաստատուն է նաւ բազմախարիսխ, և առաւել ապահով բեռն բազմամսյթ: Բարեկամք՝ են խարիսխք ընդդէմ ալէկոծութեան, և մսյթք ընդդէմ անկման: Ապա լաւ է ունել զբազումս քան զսակաւս: Յայլմէ կողմանէ, գովեցաւ ասացեալն մեծի ուրումն իմաստասիրի, թէ չէ բարւոք կնոջ լինել առանց առն, որպէս և ոչ ունել նմա բազում արս. և չէ բարւոք իմաստնոյ լինել առանց բարեկամի, և ոչ իսկ ունել բազում բարեկամս. զի որ ունի բազումս, չունի և ոչ մի: Պատասխանեմ յաղագս օգտակար և բերկրական բարեկամութեան, թէ ունել բարեկամութեան երկուց՝ է դժուարին. բազմաց է անհնար, վասն զի ոչ մին և ոչ միւսն են կատարեալ բարեկամութիւն, չունելով մշտատև հիմն. օգուտն և բերկրութիւնն փոփոխին ժամ 'ի ժամէ: Բայց յաղագս կատարեալ բարեկամութեան, գտանել զբարեկամ ոք նման քեզ ըստ վիճակի, ըստ խառնուածոյ, ըստ բնաւորութեան և ըստ առաքինութեան, է դժուարագիւտ իմն. իսկ գտանել զբազումս՝ է անհնարին իմն: Կատարեալ բարեկամութիւնն պահանջէ մեծ բարեյօժարութիւն, մեծ բարերարութիւն և մեծ միաբանութիւն: Ի բազմաց միջի չլինի մեծ բարեյօժարութիւն. զի սէրն առ այս ոք նուազէ զսէրն առ այն ոք: Եւ ոչ մեծ բարերարութիւն. զի որ 'ի բազմաց ընդունի, բազմաց պարտի: Եւ ոչ մեծ միաբանութիւն. զի մարթ է սրտի միաբանիլ ընդ այլ սիրտ, այլ ոչ ընդ բազումս. զի որչափ են մարդիկ, այնչափ և յօժարութիւնք: Ապա սիրել զբազումս թուլակի, և սիրիլ 'ի բազմաց թուլակի չէ ինչ դժուարին առաքինւոյն. բայց հարիւր թոյլ սէր՝ չարժեն մի կատարեալ սէր: Բայց սիրել զբազումս կատարելապէս իբրև զանձն քո՝ չէ քեզ հնարաւոր, թէ չբաժանիս դու 'ի բազումս կամ չմիակցես զբազումս: Լալ ընդ միում, և խնդալ ընդ այլում միանգամայն, յերիւրել զքոյդ բնաւորութիւն ըստ այլ և այլ բնաւորութեանց՝ այնպէս է դժուարին, որպէս ծառայել տեարց բազմաց: Մինչ զի իղձ Դարեհի թէ իցեն նորա այնչափ գերա-

կատար բարեկամք, որչափ հատք են 'ի նռան, մի էր յերազոյ Դարեհի, որ որում խմեք ըղձանայր զայն երազէր: Զսկիպիոնէ Ափրիկանոսէ կրսերոյ գրի, թէ չելանէր երբէք 'ի տանէ, զի մի տեսցի զոք բարեկամ: Ճշմարիտ բարեկամք չգտանին իբրև զքարինս 'ի վերայ ճանապարհի: Էին նոքա բարեյօժարք, ոչ բարեկամք: Մի միայն և ճշմարիտ բարեկամ նորա էր Պողիբիոս, որ զայն խրատ տուեալ էր նմա: Ապա լաւ է առն խոհականի ոչ զոք ունել թշնամի, զամենեսին ունել բարեյօժարս, այլ բարեկամ մի միայն:

Ո՞ր կապ արդեօք պնդագոյն լիցէ, եղբայրութիւնն թէ բարեկամութիւնն. և ո՞ւմ աւելի պարտիցիմք, եղբօր թէ բարեկամի: Պատասխանեմ. կապ եղբայրութեան հիմնեալ է յայն սկիզբն երկրաչափական. եթէ երկու ինչ հաւասարին ընդ միում երրորդի, հաւասարին ընդ միմեանս: Եւ զի երկաքանչիւր եղբարք մի ինչ են ընդ հօր, երևին մի ինչ ընդ միմեանս: Ի նոյն սկզբան վերայ հիմնեալ է կապ բարեկամութեան. զի երկաքանչիւր բարեկամք միանան 'ի մի ինչ երրորդ, այսինքն 'ի սէր առաքինութեան: Մինչ զի 'ի սիրել նոցա զառաքինութիւն միմեանց, սէրն միաւորէ զնոսա ընդ միմեանս. նա՝ փոխակերպէ իսկ 'ի միմեանս: Ապա յոյժ ազնուագոյն է կապ բարեկամութեան քան զեղբայրութեան. զի սա է մարմնական և հասարակ ևս և՛ անբանից, և նա հոգևոր և սեպհական մարդոյ: Սա միաւորէ արիւն ընդ արեան, նա զկամս ընդ կամաց, զմիտս ընդ մտաց, զոգի ընդ ոգւոյ: Վասն այսորիկ 'ի մէջ եղբարց թէպէտ և ողջիկ կայցէ կապ արեան, ուր ուրեմն է միաբանութիւն, և որ միաւորիչն է նոցա, լինի բաժանարար: Զի ակն եդեալ իւրաքանչիւրոյ յինչս հօր, մի զմիոյ ըղձանան կորզել 'ի ձեռաց զինչս: Բայց 'ի մէջ սիրելի բարեկամաց՝ ցորչափ տևէ կապ սիրոյ, անհնար է թէ տեղի ունիցի անմիաբանութիւն ինչ. զի իւրաքանչիւրոյ միաբանեալ 'ի կամել միևնոյն բարի, հասարակաց լինին իւրական ինչք: Ապա տեսլի է թէ եղբայրութիւնն է կապ բնական, բարեկամութիւնն է կապ առաքինական: Նա պարտաւորէ 'ի բարերարել վասն օրինական արդարութեան, և սա վասն բարոյական համեստութեան: Եւ որպէս լսար, մեծ ևս առաքինութիւն է առնել այլում բարի յօժարամիտ բարեյօժարութեամբ, քան պարտաւորութեամբ արդարութեան:

Հուսկ ապա խնդրիցես. Արդեօք մահն լուծանիցէ՞ զբարեկամութիւն: Վասն զի գոլով մահու վերջին գիծ մարդկային իրաց, երևի թէ նովին կտրոցաւ օրահասի՝ կտրէ զկապ կենաց և սիրոյ: Ոչ են բանք տատանօր զգերբնական և զերկնային սիրոյ. իբր զի երկինք գլխովին սէր են, և դժոխք գլխովին դժնեայ ոխութիւն. այլ բանք են զընաւոր վիճակէ անջատեալ հոգւոյ, հրաժարեցուցեալ զայն 'ի յաւիտենական փառաց և 'ի յաւիտենական դատապարտութենէ: Ապա պատասխանեմ թէ զգայական սէրն վախճան առնու ընդ վախճանիլ կենաց. բայց իմացական սէրն կեայ և յետ մահու, զի մարմնական կարօղութիւնք մեռանին ընդ մարմնոյ, բայց հոգեղէն կարօղութիւնք մնան յոգւոջ: Մնան 'ի հոգի միտք, ուստի մնան 'ի հոգի և կամք. զի բաղձողական կարօղութիւնք անանջրպետք են յըմբռնողականաց. և 'ի կամս մնան ունակութիւնք հոգեղէնք, որպիսի է ճշմարիտ բարեկամութիւնն: Արդ թէ յիշէ միտք մեռելոյն զայն առարկայ, որ եղև նմա սիրելի յոյժ և զուարթարար, 'ի նոյն շարժի միանգամայն և կամքն իւրական ունակութեամբ, և այն շարժումն է առաջին սէրն: Նա վասն զի յանջատեալ հոգւոջ միտքն յօժարական առ մարմին է առաւել մաքուր և յստակատես, կամքն ևս լինի առաւել եռանդագին, և սէրն առաւել ջինջ. զի որ լաւագոյն ճանաչէ զառարկայն սիրելի, առաւել ևս սիրէ: Ապա եթէ յանջատ հոգւոջ՝ որպէս ուսուցանեն որբազան դպրոցք, կենդանի է յօժարութիւն ինչ բնաւոր անդրէն միաւորելոյ ընդ իւր անդամս, և խնդութեամբ միւսանգամ տեսանելոյ զիւրն չիրիմ կաթոգին է առ իւր սիրելի կողպուտ, և ըստ կարի ըղձանայ զայն անդրէն զիւրև արկանել. իբր զի մարմինն սիրելի իմն բարեկամ եղև հոգւոյ, ոչ փոքր խնձ է նորա միւսանգամ ընդ միտ ածել և անդրէն տեսանել զճշմարիտ բարեկամն, որ եղև առարկայ սիրոյ իւրոյ, և ոգի ոգւոյ իւրոյ: Զսորին հակառակն, զոր ոգի մինչ էրն ընդ մարմին միաւորեալ, մեծապէս ատեայր, բնաւորապէս ատեայ և յորժամ է բաժանեալ. մնալով ատելութեանն՝ որպէս և սիրոյն՝ միապէս յոգի: Յայտնի վկայեն այսմ մարմինք սպանելոց, որք եթէ առաջի բարեկամի և եթէ առաջի թշնամւոյ՝ հոսեն 'ի վիրաց արեան ճապաղիս: Չէ այս սքանչելիք, այլ ցոյց զարմանալի, որ առադրի յիմաստնոց ատելութեան և սիրոյ. որ խոր տպաւորեալ յոգի սպանելոյն, որպէս թէ արեան բարբառով զարիւն կոչէ զսպանողին. և զբարեկամին տեսլեամբ արեան վառէ որպէս զփիղ 'ի վրէժխնդրութիւն:

## ԳԼՈՒԽ Ժ.

*Օրէնք բարեկամութեան։ Բովանդակութիւն ճառիս։*

Եթէ 'ի բարեկամութեան և եթէ յայլ փոխարինական դաշինս, պիտին օրէնք, դատաւորք, ատեանք, վարձք, և պատիժք. զի հաւասարութիւն պահեսցի, և անհաւասարութիւնն հաւասարեսցի։ Այսր ազնուական դաշին բարեկամութեան վարձ՝ է երջանկութիւնն, պատիժ՝ սագիւսն. ատեան՝ խիղճն մտաց. դատաւոր՝ բանն. օրէնք՝ արդար փոխարինութեանն սկզբունք։ Օրէնք բարեկամութեան համարեցան սրբազանք, զի փոխանակ ձեռագրի առեալ զերդումն, և փոխանակ վկայից զաւենտինեանն Դիոս [318], համարեցան այն նախնի իմաստունք, թէ դաշանց սրտից անմարթ է լինել այլ վկայ, բայց ակնն սրտատես։ Օրէնք իսկ հիւրասիրութեան կոչէին սրբազանք, զի հաստատեցան 'ի վերայ օրինաց բարեկամութեան։ Բայց հիւրասիրութիւնն է բարեկամութիւն ինչ առժամայն և անցաւոր. բարեկամութիւնն է հիւրասիրութիւն հանապազորդեան. յորում օթեվան միոյ 'ի բարեկամաց է սիրտ միւսոյն։ Մինչ զի, եթէ անցանել զօրինօք հիւրասիրութեան՝ էր դրժողութիւն, անցանել զօրինօք բարեկամութեան էր սեղանակապտութիւն։

Արդ.քանզի չորք են ներգործութիւնք բարեկամութեան, որպէս երևի 'ի նախադրելոց, ընտրութիւն, բարեյօժարութիւն, բարերարութիւն և միաբանութիւն, չորեքին իսկ ներգործութիւնք առնուն զօրէնս իւրեանց 'ի հաւասարութենէ փոխարինական արդարութեան։ Առաջին օրէնք ընտրութեան է այս, նմանւոյն ընտրել զնմանն. զի ոչ կարէ լինել կատարեալ փոխադարձութիւն սիրոյ, բայց եթէ 'ի հաւասարս։ Սակայն և ոչ նմանութիւնն կարէ լինել կատարեալ, բայց եթէ այն որ առաքինութեանն է. զի այլք ամենայն են սիրելի ըստ պատահման, միայն առաքինութիւնն կատարելապէս է սիրելի ըստ ինքեան, առ որ են կարգեալ այլք ամենայն։ Զայսմ ընտրութենէ կախեալ կայ հաստատութիւն կամ յողդողդութիւն բարեկամութեան։ Ի դառնանալ ուրուք և յասել, Բարեկամն իմ յողդողդ է և անհաւատարիմ և ապաշնորհ. այդ դանդատ առաւել յամօթ առնէ զդանդատաւորն, քան զայն զումմէ է դանդատն։ Եթէ չճանաչէիր դու զնա, ապա անմիտ էիր զի ընտրեցեր զնա կոյր զկուրայն. իսկ թէ ճանաչէիր, ապա մոլի ոք էիր. զի ընտրեցեր զմոլին. քանզի յայտ է թէ նմանն սիրէ զիւր նմանն։ Բայց եթէ էր նա սուտ



բարեկամ, չէր բարեկամ։ Ոչ կորոյս նա զհաւատարմութիւն, այլ զկեղծիս. և քեզ պատիր ընտրութիւնդ լինի 'ի պատիժ և 'ի խրատ։ Բևեռացոյց մոգնիան նաւորդաց թէպէտ և աչս ոչ ունի, յայնչափ կիսագնտեան աստեղաց միջի գիտէ ճանաչել զայն միայն, որ է անփոփոխ։ Այլ ամենայն աստեղք պտոյտքին յառաջնում շարժունի, որ անդադար գոլով չթողու իմիք կալ դադար։ Միայն աստղն բևեռական յայնչափ շարժական աստեղաց միջի կայ անշարժ. զի յեցի 'ի բևեռն հաստատուն։ Զուր ետ բնութիւնն զգօնութիւն մարդկան, եթէ յընտրութեան հաւատարիմ բարեկամի անզգօն են քան զանզգայ քար։ Ծերակոյտն հռովմէական 'ի բարեկամութիւն ընկալաւ զԵւմենէս արքայ. ամենայն ծերք ծերակուտին ընթացան գովել զնա. միայն Մարկոս Կատոն ոչ հաճեցաւ ընդ բարեկամութիւն նորա, և 'ի յորդորել զնա ամենեցուն, պնդեալ թէ Եւմենէս սիրէ զհռովմայեցիս, և յոյժ պիտանի է մեզ և հաւատարիմ, ասէ Կատոն. Թէպէտ և այդպէս իցէ, գազան է նա ամեհի. իմ ոչ են կամք լինել դմա բարեկամ և դրացի։ Եւ Կատոն միայն դատաւ անխաբ։

Բարեյօժարութեանն օրէնք այս են. սիրել զբարեկամն իբրև զանձն, և փոխարէն սիրել, որչափ ինքն սիրէ։ Այս է կանոն փոխադարձ տուժի փոխարինականի, թէ իւրաքանչիւր ոք որպէս առնէ, նոյնպէս ընդունել ունի։ Զափ սիրոյ յերկաքանչիւր բարեկամս է սէր անձին. ոչ մին և ոչ միւսն պարտաւորի առ աւելին. զի 'ի սիրել երկաքանչիւրոց զընկերն իբրև զանձն, յերկու սիրոյ առնէն մի միայն սէր. որ այնչափ տայ, որչափ առնու. և այս է կատարեալ հաւասարութիւն։ Վասն այսորիկ որ սիրէ զբարեկամն, սիրէ և զորս ենն բարեկամին. զի իւրաքանչիւր ոք 'ի սիրել զանձն, սիրէ և զիւրսն. ըստ առակին, իւրաքանչիւրում գեղեցիկ են իւրքն։ Այլ աստանօր արժան է որոշել զառաքինականն անձնասիրութիւն 'ի մոլեկանէ։ Մին սիրէ զանձն, և միւսն անձին շողոքորթէ։ Եւ վասն այսորիկ նա այնչափ սիրէ զիւր իրս, որչափ ունի զնոցանէ համարումն. սա այնչափ ունի զայնց համարումն, որչափ սիրէ։ Զի նա հայի աչօք բանին, և սա շլացութեամբ կրից։ Յորժամ կամէր արծուի ընտրել զգեղեցկագոյնս 'ի ձագուց թռչնոց՝ իւր սպասաւորս 'ի պալատն, մատոյց բու զիւր ձագս, և ասէ. Առ զսոսա արքայութիւնդ, որ գեղեցիկ են քան զամենայն ձագս, զի նման են ինձ։ Մոլին առաւել սիրէ զիւր մոլութիւնս քան զայլոց առաքինութիւնս. բայց առաքինին սիրէ զիւրս բարեկամին, որպէս սիրել պարտի զիւրսն. զի ոչ շողոքորթելով յիւրսն, ոչ շողոքորթէ և յայլոցն։ Ոչ գովէ զգովելիս առ նախանձու, և ոչ գովէ զգովելիս 'ի շնորհուկս։ Եւ եթէ հնար իցէ ուղղել զգովելիս, խրատէ զբարեկամն. որպէս և ինքն կամի

թէ խրատեսցի։ Ապա եթէ ուղղել չէ կարող, գոնէ զդետումն և անմեղադիր տանէ զեղեալն. զի բարեկամութիւն և հաճոյականութիւն եթէ չեն քորք, սակայն են խնամիք։ Ուստի և այս ևս օրէն է բարեկամութեան. Եթէ քոյդ բարեկամ ունի թշնամիս, և դու ևս կալջիր զնոսա որպէս թշնամիս. զի ոչ է նման նմանւոյն, որ չիցէ հակառակ հակառակին։ Հերովդէս մտերիմ բարեկամ Գեմեղոսի քակեաց զբարեկամութիւնն, զի Գեմեղոս բարեկամ եղև Աղեքսանդրի ոխերիմ թշնամւոյն Հերովդի [319]։ Որ ոք բարի կամի բարեկամին որպէս անձին, ոչ կարէ բարի կամել այնմ որ բարեկամին չար կամի. զի այդ լինէր ատել միանգամայն և սիրել զանձն։ Հարկ է կամ բաժանել 'ի միոյն 'ի սիրել ընդ միւսն, կամ բաժանել յերկոցունց 'ի կալ երկուսեք հրաժեշտ. և կամ հաշտեցուցանել զնոսա ընդ միմեանս, զի մնասցէ կցորդ երկոցունց։ Այս երրորդ խորհուրդ է բանաւոր. զի թէ բարեկամ քո է առաքինի, համեստ պայմանօք հաշտի ընդ իւրում թշնամւոյ. և թէ չէ առաքինի, չէ քո ճշմարիտ բարեկամ. զի ճշմարիտ բարեկամութիւնն հիմնի յառաքինութեան։ Բայց թէ այն թշնամի է անհաշտելի և մոլի, արժան է քեզ ատել զնա որպէս մոլի, թէպէտ և քեզ թշնամասցի. և թէ զէն առնու անիրաւութեամբ ընդդէմ քումդ բարեկամի, պարտ է քեզ պաշտպանել զբարեկամդ որպէս զանձն քո։ Այս օրէն է մարդկային բարեկամութեան ըստ բնաւոր սկզբանց։

Բարեյօժարութեան հպատոր է բարերարութիւն։ Ճշմարիտ է թէ մի միայն պտուղ բարեկամութեան է սէրն. բայց թէ և բարեկամութիւնն ոչ զհետ երթայ օգտի, օգուտն ընդ հետ երթայ բարեկամութեան։ Ընտրել զոք բարեկամ կարօտեալ, ոչ է յատուկ բարեկամութեան հաւատարմանի. բայց թէ կարօտութիւնն՝ 'ի վերայ գայցէ բարեկամութեան, զմիմեանց պարտաւորին խափանել ըստ կարի զճնան, որ երկաքանչիւրոց հնար է գիւտել։ Դժբախտութիւնք առաւել են պատրաստական քան զբարեբաստութիւնս։ Ապա օրէնք բարերարութեան է առնել բարեկամին զբարին, զոր կամէր թէ լիցի նմա 'ի բարեկամէն 'ի կարիս իւր։ Գաղբա 'ի տալ զգերագահ ինքնակալութիւնն որդեգրելոյն Պիսոնի, զամենայն զկանոնս բարւոք թագաւորելոյ յայս կանոն ամփոփեաց. Լեր դու այնպիսի իշխան 'ի վերայ այլոց, որպիսի կամէիր թէ լինէր այլ ոք իշխան 'ի վերայ քո։ Այնպիսի է այս օրէն բարերարութեան, որպիսի եղև միւս օրէն բարեյօժարութեան, երկաքանչիւրն հիմնեալ 'ի փոխարինական ուղղութիւն. բայց միայն զի նա կամի առնել և սա առնէ։ Բայց զայս ևս օրէն պարտ է մեկնել իբրև զնախընթացն, զի փոխադարձութիւնն իցէ յառաքինւոյ առ առաքինի։ Մինչև առնել քեզ բարեկամին զայն բարերարութիւն, զոր և քեզ համեստօրէն արժան էր խնդրել 'ի նմանէ 'ի նմանակ դիպուածս։ Այսու օրինակաւ բարերարութիւնն մնայ 'ի կոպար բարեկամութեան, որպէս բարեկամութիւնն 'ի կոպար համեստութեան. և կարող լինիս ասել զՊերիկլեայն. Բարեկամք մինչ 'ի սեղանս։ Այսու նման է բարեկամութիւնն առատաձեռնութեան, զի երկաքանչիւրն է բարերար. բայց այնու տարբերի բարերարութիւնն բարեկամութեան 'ի բարերարութենէ առատաձեռնութեան, զի 'ի սմա ոչ լինի տրտունջ զապաշնորհէն. բայց յայնմ լինի. զի բարեկամութիւնն էապէս է փոխադարձ. բայց առատաձեռնութիւնն ոչ։ Առատաձեռնն առնէ բարերարութիւն օտարի, բայց պահանջել զայն 'ի նմանէ չէ նմա արժան։ Բարեկամն առնէ բարերարութիւն բարեկամի, և արժան է նմա պահանջել զայն 'ի նմանէ, յորժամ պէտս լինիցի։ Նախատինս դնէ բարեկամին, որ դիմէ յայլ ոք մինչչև է դիմեալ առ նա. զի փոխադարձ բարերարութիւնն է փոխարինական հաւասարութիւն բարեկամութեան։ Որ ընդունի յառատաձեռնէ, պարտի նմա շնորհակալութիւնս փոխանակ գործոց. բայց որ ընդունի 'ի բարեկամէ, պարտի գործս փոխանակ գործոց. զի բարերարութիւնն լինի արդարութիւն։ Այո, յոլովակի 'ի մէջ բարեկամի և բարեկամի 'ի գործ ածի առատաձեռնութիւն ձրիական պարգևօք արտաքոյ պիտոյից. այլ այնք են առհաւատչեայք սիրոյ, և ոչ հարկ.ք բարեկամութեան։ Բայց է և այլ մեծ առաւելութիւն 'ի մէջ բարեկամի և առատաձեռնի. զի առատաձեռնն պարգևէ զմասն ինչ իւրոց ընչից, բայց բարեկամն պարգևէ զամենայնն։ Զի որ պարգևէ բարեկամին բովանդակ զինքն, պարգևէ զամենայն ինչ զիւր։ Պիւթագորաս, որ մեծին Յունաստանի՝ չասացից թէ մոլեկանին ուսոյց զօրէնս բարեկամութեան, եդ զայս օրէն հիմնական. 'ի մէջ բարեկամաց ամենայն ինչք են հասարակաց։ Կամէր հալածել 'ի բարեկամութենէ զայն երկեակ դեւ տարաձայնութեան զիմ և զքո. և վասն այսորիկ հասարակաց եդ զամենայն զսեպհական գոյս բարեկամաց, զկալուածս, զգրամս, զտունս, զհանդերձս, ևս և զկանայս։ Ուստի սկիզբն կալաւ պիւթագորեանն այն առած. Բարեկամաց ամենայն ինչ է հասարակաց։ Այլ այս էր հալածել զդև չար ևս դիւաւ։ Այդ օրէն էր մասամբ իմն անհամեստ, և մասամբ իմն անքաղաքական։ Անքաղաքական, կողոպտելով զբուն ստացիչ իրին, զի արասցէ զնա պտղոյն միայն բաժանորդ։ Եւ անհամեստ, հասարակաց արարեալ զայն ինչ, որում պահմամբ համեստութեան անմարթ է լինել հասարակաց։ Զտալ զոր պարտն է տալ, և տալ զոր չէ արժան տալ, 'ի բարեկամութեան են միօրինակ յանցանք։ Ճշմարիտ օրէնք բարեկամութեան զամենայն 'ի մէջ բարեկամաց առնէ հասարակաց

ըստ օրինակիս ըստ այսմիկ. Զի երկաքանչիւրն իցէ տէր իւրոց ընչից. բայց երկաքանչիւրքն պարտաւոր իցեն հաղորդել զայնս միմեանց 'ի դիպող առիթս, ըստ պահանջելոյ փոխադարձ և բանաւոր սիրոյ: Այսու օրինակաւ չկողոպտեն զմիմեանս, և երկաքանչիւրքն վայելեն յինչս միմեանց: Երկաքանչիւրքն են կարեւորք, և են ազատք: Որ բոլորովին չքաւորի յիւրոցն, այլ ոչ կարէ լինել բարերար. որ ծախէ զգլուխ դրամոյ, չքաւորի: Ի փոխանակ առնուլ բարերարութեանն փոխանակ առնու և բարեկամութիւնն: Վասն այսորիկ գոյիչափ պարգեւատուութիւնք առ կենդանութեամբ են անվաւերք, զի հակառակին բարեկարգութեան: Թէ որպէս բարերարիցէ բարեկամ ոք իւրում բարեկամի 'ի լինել բարեկամութեանն կատարեալ, որ գրագէտն է ուսցի օրինակաւ յորջորջակ գաղափարաց: Բարեկամք, 'ի բարեբաստութիւնս՝ լինին. 'ի դժբախտութիւնս՝ ճանաչին:

Իսկ յաղագս միաբանութեան գլխաւոր օրէն այս է. Զի հաւասար վստահութեամբ մին հաղորդեսցէ զիւր գաղտնիս, և միւսն նովին հաւատարմութեամբ պահեսցէ զնոսա: Որ գնէ յաւանդի զսիրտ իւր 'ի կուրծ բարեկամին, ոչ կարէ ծածկել 'ի նմանէ զայն որ է 'ի սրտի. և որ ընդունի յինքն զայն մեծ աւանդ, երկիւղածութեամբ պահել ունի զայն: Զարմանալին քաղաքականք իբրև ընդ գիւտական ինչ պատգամ ընդ այն կանոն Բիասայ, որ մի էր յեօթանց իմաստասիրաց Յունաստանի. Այնպէս սիրեա զբարեկամդ, որպէս թէ ունի լինել քեզ թշնամի: Այս ասացուած իմաստնոյս մեծի յիրաւի թուեցաւ Սկիպիոնի մեծ ինչ հայհոյութիւն. զի է առած ինչ դեմընդդէմ թշնամի բարեկամութեան[520]: Ճաա է այդ 'ի բառնալ 'ի բարեկամաց զմիաբանութիւն գաղտնի կասկածանօք, և զհաւատարմութիւն փոխադարձ անվստահութեամբ. կամելով ասել համառօտ. Բարեկամք մի՛ վստահասցին 'ի միմեանս: Թէ բարեկամն չէ հաւատարիմ, չեղև երբէք բարեկամ. և թէ յերկբայս ես դու ընդ հաւատարմութիւն նորա, լաւ եւս էր քեզ չսկսանիլ սիրել զնա, քան սարջանալ 'ի սիրոյ նորա: Ապա պատշաճող կանոն է այդ վասն բարեկամութեան տարփածուաց և աւազակաց. բայց վասն բարեկամութեան առաքինեաց այն է լաւ կանոն. Մի արասցես ինչ, զոր ոչ կարող իցես վստահանալ և թշնամեաց: Դարձեալ սնապաշտական է այն միւս կանոն. Հաղորդեա քում բարեկամի զքո յաջողակ դէպս, զի ուրախ արասցես զնա. այլ ոչ զձախողս, զի մի տրտմեցուսցես զնա, զի ուրախ առնել է հաճոյական, այլ տրտմեցուցանել է գեղջկական: Բայց խորխ մեծ է ընդ մէջ լոկոյ հաճոյականութեան և բարեկամութեան: Այդ առած յօտարաց միջի է քաղաքավարական հաճոյականութիւն, բայց 'ի բարեկամաց միջի է ան-



քաղաքավարութիւն, նախատադիր միում և վնասակար միւսում: Բառնայ 'ի բարեկամէդ զվստահութիւն թեթեւաբեռնելոյ ընդ քեզ փոխանակաւ զիւր վիշտս, և 'ի քէն զդիպողութիւն ընդունելոյ զօգնութիւն կամ գէթ զքաջալերութիւն: Իբրև եհաս Հերակլէս յԱմփիրիւս՝ 'ի ցաւագին պահու, յորում Ադմետ արքայ վաղնջուց իւր ընդակից լայր զյանկարծադէպ մահ չքնաղին Ալկեստեայ, Ադմետ կեղծաւորեցաւ լալ յուրախութենէ վասն եկաւորութեան նորա. և ետ ըզբօսեցուցանել զնա 'ի զուարճալի ուրեք պարտիզի, մինչ ինքն ցաւագին հանգուցէ գաղտագողի 'ի շիրմի զսիրելին զիւր աւանդ. պատուէր տուեալ ծառային չհանել 'ի վեր զբան տխուր պատահարին: Զգացեալ Հերակլէսի 'ի նշանաց ինչ, և ստուգեալ 'ի ծառայէն զգաղտնիսն սպառնալեօք, յանդիմանեաց զԱդմետ վասն ցրելոյ նորա զբարեկամութիւն կեղծ թաքստեամբ ճշմարիտ ցաւոց: Բայց և անդէն կորզեալ 'ի ձեռաց Պերսեփոնեայ զթագուհին որ ընդ մեռեալս էր համարեալ, դարձոյց կենդանի առ արքայ, որոյ և ոգիք արծարծեցան անդրէն[521]: Որպէս սիրտ բարեկամի ոչ է բոլորովին իւր, նոյնպէս ոչ տրտմութիւն և ոչ ուրախութիւն է բոլորովին իւր: Ապա ոչ իրաւամբք տարատրոհէ զանտրոհելին, եթէ հաղորդէ բարեկամի իւրում զմին և թաքուցանէ զմիւսն: Թէ հաղորդես զերկաքանչիւրն, յերջանկութեան և 'ի թշուառութեան գտանես ընկեր: Որով ոչ երջանկութիւնն զեղու զքև, և ոչ թշուառութիւնն առնէ հեղձամուղձ, յառնուլ նորա 'ի քէն և 'ի կորուսանել քո զկէսն:

Միւս ևս օրէն միաբանութեան է, հրաւիրել զմիմեանս փոփոխակի 'ի ճաշ, որ համեմեալ իցէ առաւել զուարթութեամբ քան զեղխութեամբ. զի փոխադարձ խրախութիւնք սնուցանեն զբարեկամութիւն, իսկ զեղխութիւն արտաքսանէ զընտանութիւն որ ընկերն է բարեկամութեան: Տարկուինիոս 'ի կապակցել զբարեկամութիւն Հռովմայեցւոց և Լատինացւոց կարգեաց տօնս հռովմէալատինս 'ի լերինն Ալբեայ, ուր տարւոյէ 'ի տարի կոչունս արարեալ Լատինք և Հռովմայեցիք, ուտէին 'ի մի և նոյն զոհից որպէս մի մարմին, զի իցէ նոցա մի ոգի: Այլ և Կատիլինաս 'ի կապակցել զսէր երդուելոցն ընդդէմ հայրենեաց, խառնեալ զարիւն իւրաքանչիւրոց 'ի մի, արբոյց անտի իւրաքանչիւրում զիւր մասն, կոչնականք սեղանակապուտք և կոչունք նզովելիք. զորոց յիրաւի էր ասել թէ ոգի անասնոց է յարեան: Բայց և այնպէս զարմանալի իմն միաբանութեամբ հեղին վասն միմեանց զարիւն և զոգի ընդ վէրս[522]: Իսկ արդ եթէ 'ի սուտ բարեկամութիւնս, կոչունք այսչափ ինչ ներգործեն, զինչ ոչ ներգործիցեն ճշմարիտ կոչունք:

Արդար օրէն բարեկամութեան է՝ գիտել կեալ 'ի միա-

ոին ընդ մասնկայ բարեկամն, միակցեալ նախնական ըզկարծիս և զկամս, զի մասնկայ անձանց սիրոյն մի լինի բազմակիք. բայց և արդար օրէն է զինել կեալ ընդ բազմկամս, զի և ձեռաւոր անձանց՝ մասնկայ լինի սիրոյ։ Օրէն անջրէլի ճշմարիտ բարեկամութեան է, այնպէս սիրել զձեռաւոր բարեկամն, որպէս զմասնկայն։ Նա՝ որպէս ծխածանն լու եւ երեւի 'ի ձեռաստանէ քան 'ի մասն, նոյնպէս ճշմարիտ բարեկամութիւնն առաւել ճանաչի 'ի ձեռաւորութեան քան 'ի մերձակայութեան. զի զերկրական տարրիցն առաւել զգամն զզա զբեկման, քան զձաճայս տատցութեան։ Այսր է սիրեցեալ և ոչ սրտին որ 'ի ձեռանալ յայսց՝ ձեռի լինի 'ի սրտէ։ Հագին կեայ. ուր սիրէ. և սիրէ ուր խորհի։ Սեր ձառանէ խորհուրդն՝ ձառանէ և սէրն. և չեն լեառն կամ ծով կամ այրեցած գօտի, որ խափանեսցէ զընթացս, կամ այրեսցէ զթեւս խորհրդոյ։ Պաշտէ զբարեկամն փակեալ 'ի բարձրաբերձ պարիսպն, որ երկաթի թմբաք և խիտ առ խիտ աշտար յանկապատէ զամենայն ճանապարհս տեղաց և լերանց։ Հիպոկրատ և Սիւաստոս համապատասխանեցին ընդ այս զերթեւեկ թղթոց թեւք թռուցիկ պատուոյ[595]։ Նոյն աղինչ սիրոյ զարմանալ ընդ այն պատուէր. որովհետեւ պատուէրն լերբաւոյն այն է Կոլոսիա, թեւք ատագատակը եկիս երթեւեկ 'ի մէջ միջ և միւսոյ աշխարհի[596]։ Այսպս չարդարման սուտ բարեկամք յատել թէ ձեռաւորութիւնն խզանիցէ զբարեկամութիւն։ Եւկ զինչ ձեռաւորութիւն կայցէ մեծ քան ըզմահուն. սակայն և 'ի մահուանէ և անդր պարտ է ձգեապարզել զմտածութիւն բարեկամութեան։

Ապա վերջին օրէն բարեկամութեան է թէ որ սիրեսցէ զբարեկամն առ կենդանութեամբ, սիրել ունի և յետ մահու։ Սիթէ ոգի մեռելոցն սիրէ զեռ զող Աստուծոյ, մեծ անիրաւութիւն է սիրոյ եթէ մեռեալն սիրեսցէ զկենդանին, և կենդանին ոչ սիրեսցէ զմեռեալն. և մին փոխման արասցէ սիրոյ, յորժամ միւսն 'ի փոխման ձառանէ կենաց։ Պարտ է կենդանւոյն գարմանացանել 'ի կեանս զբարեկամն ձառանցաւորդ յիշատակութեամբ խոսոց պանծալի առաքինութեանց, խոսից և բարի գործոց, ձայնելով բարեաց 'ի պատկեր նորա, այց արարեալ գերեզմանի նորա, և զթախծութեամբ ողբանելով զայն ձայնի, որ առեալ զառնալ անձնարկէր յետ նորա. զինելով առաւել զի թէ առաքինի անն էր բարեկամն, որպէս առաջ, վայելէ յուրախութեան և ձեռնձառ եւս է ողջերթ։ Այսպս անդրադարձն զթուլթիւն եղև զթուլթիւն մահուցէնս Աղերսայ, որք փակեալ 'ի չիրիմ' մեռելոյն բարեկամի, զգեստաւորեալ ընդ նմա միաձայնն նեխիլն. զի այլ մի փայլեսցէ 'ի կեա-



նոր մին քան զմիւսն։ Այլ ոչ եր սիրել զբարեկամն իբրև զանձն, այլ առաւել զինչն և զբարեկամն. իբր զի մեռելոյն ապաւինէր զկենդանին, և կենդանին բանալ 'ի մեռելոյն զայն երկրորդ կեանս որ Աստուած նոյա, երկինակի զնա մեռացեալ։ Լաւ է կեալ բաս կիսոյ, քան մեռանիլ բոլորովին։ Բաս կիսոյ կեայ մեռեալն, որ կեայ գեռ 'ի կենդանին։ Բոլորովին մեռանի, որ ոչ թողու 'ի կեանս բարեկամ' և ոչ մի։ Այսպս յայս լեցի մեզ կոչել զբանս թէ կատարեալ բարեկամութեանն չէ պարտ լինել իբրև զձայր մայի, որ 'ի վերայ գերեզմանաց առ վայր մի երեւեալ և անդէն չքանայ. այլ իբրև զձայր մշտանել, որ 'ի վերայ սեղանոյ սրբոյ առ անդամ' մի վառեալ անշէջ ճառագայթէ։

# Գ Ի Ր Ք Վ Ե Ր Ջ Ի Ն

## ՅԱՂԱԳՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ

## ԳԼՈՒԽ Ա.

*Թէ զինչ իցէ երջանկութիւն:*

ԱՌԱՍԻԿ քեզ հաւասի ուրեմն այն որ հաւաքեալ 'ի Կապիտոլին փառաց զծրագրան ստացիչս դիւցազնական առաքինութեան, փոխատրէ պանծալի վաստակոց յաղթական և յաւերժական հանգիստ [325]: Ահա այս ամենայն մարդ ընթանայ թէպէտ և չգիտէ. բայց է որ որչափ առաւել ընթանայ, առաւել ևս հեռանայ. զի զհետ երթեալ սուտ երջանկութեան՝ որպէս Ճշմարտի, զզարտուղին գնայ շաւիղ. և որ չարաչար սխալի, երթալով երթայ և յոգնանայ: Ապա սա յընթացս իմոց բանից բացցէ քեզ դուռն. և սա առաջի արասցէ քեզ նպատակս. վասն զի 'ի մարդկային գործողութիւնս առաջին անկեալն 'ի միտս, վերջին է 'ի ստացութեան: Արդ ուրեմն եթէ 'ի մատենի աստ գտեր դու ինչ առաւել անախորժ քան ախորժելի, գէթ զայն խոստովան լիջիր, թէ ըսկիզբն նորա և կատարած եղև երջանիկ. զի սկիզբն արարեալ յերջանկութենէ, աւարտ էառ երջանկութեամբ: Գիտեմ զի 'ի սկզբան անդ տեսեր դու զերջանկութիւն իբրև 'ի հեռաստանէ, ընդ աղօտ, առանց հասու լինելոյ գեղեցիկ հանգամանաց նորա և զարդուց և մեծագին կահուց. զի որպէս ասեն իմաստասէրք, առաջին ծանուցեալն է միշտ ընդհանուր, վասն որոյ և չփոթ: Զկնորսի, որ գիտէր 'ի հեռաստանէ զառաջին նաւն Արգոնաւորդաց, այն նաւ թուեցաւ զառաջինն հաստատուն ինչ ժայռ յանկարծ ուրեմն 'ի վեր ելեալ. ապա վիշապ ձուկն կոյտական. բայց առաւել ևս 'ի մօտոյ և 'ի լոյս տունջեան տեսեալ նորա զօրինուած թառուցին կերտուածոյն, զկայմն, զառագաստն, զղեկն, և զըսպառազէն քաջազունս որ 'ի նմա, յապուշ հարաւ ընդ այն տեսիլ զուարճալի: Ի սկիզբն գործոյս հարկ եղև մեզ խօսել



զերջանկութենէ, որ վերջին վախճանն է բարոյական իմաստասիրութեան: Բայց քեզ անհնար էր լիով խելամուտ լինել այնմ մինչև 'ի վերայ հասեալ էր քո զինչ իցեն մարդկային կիրք, զինչ բարոյական առաքինութիւնք, և զինչ իմացական գործողութիւնք, առ որս պիտէր մեծ ևս յայտնութիւն: Արդ վասն զի այդմ ամենայնի հասու եղեր դու, մարթիս յայտնագոյն ևս խելամուտ գաղտնի իմաստից սահմանի երջանկութեան, որ 'ի սկզբան անդ առաջի եդաւ քո: Ծայրագոյն երջանկութիւնն է ամենակատար գործողութիւն հոգւոյ, ոչ առանց բարեաց արտաքնոց և մարմնականաց՝ որպէս օգնչաց. ընկերելով զուարթութեան և մեծարոյութեան որպէս լծակցաց, և ապահովութեան և յաջողուածոյ հանապազորդելոյ: Մեծամեծս խոստանայ այս սահման. բայց ամենայնն է Ճշմարիտ և բացայայտ. զի է հաւաքումն ինչ վարդապետութեանց որ ասացան, և բարոյական իմաստասիրութիւն ինչ 'ի քառեակ տողս ամփոփեալ:

Արդ առէ նախ Արիստոտէլ թէ երջանկութիւնն հաստատեալ կայ 'ի գործողութեան: Զի որպէս և տեսեր չէ նա ունակութիւն, թէպէտ և ծնանի յունակութեանց: Գործ է նա առաքինօրէն, բայց չէ առաքինութիւն ինչ: Չէ նա նոյն ինքն առաքինութիւն, այլ դուստր նորա: Եթէ երջանկութիւնն լինէր ունակութիւն ինչ, մարդ և 'ի քուն լինէր երջանիկ. զի քունն խափանարար է գործոց, այլ ոչ ունակութեանց որպէս և լուար: Որ ոք ննջէ, կեայ կենօք տնկոյ. զի գործէ 'ի նմա միայն աճողականն որպէս 'ի տունկս: Որ ոք գործէ զգայապէս, կեայ կենօք անասնոյ. զի զգայութիւնն է որ գործէ 'ի նմա, որպէս յանասունս. որ երջանիկն է, կեայ կենօք մարդոյ. զի գործողութիւնն է բանաւոր, և սեպհական մարդոյ:

Եւ արդ թողեալ զգործողութիւնս հասարակս մարդկան ընդ տնկոց և ընդ չորքոտանեաց, յորս երջանկութիւն չունի տեղի, 'ի միտ առեր դու թէ այն գործողութիւնք են առաւել կատարեալք և առաւել սեպհականք մարդոյ, որք վերաբերին առ կարողութիւն գերագոյն, այսինքն առ իմացականն: Միտք են կարողութիւն երիցագոյն քան զամենայն մարդկային կարողութիւնս. նա է դատաւոր գործողութեանց ամենայն զգայութեց արտաքնոց. նա է իշխան երկիւղի և սանձ բարկութե: Կամքն ցայնվայր է ուղիղ, ցորվայր 'ի մտաց առնու զօրէնս: Նա է գրատուն անցից անցելոց, պատգամախօս ապագայից, գործատուն արուեստից, գանձարան գիտութեանց, տաճար մտաւոր առաքինութեանց, առաջին շարժուն գործողութեանց, հրեղէն երկինք հոգւոյ, պաշտօնակից հրեշտակաց, պատկեր երկնաւոր աստուածպետութեան. նա աստուածպետութիւն է երկրաւոր. զի նա է իշխան հասարակապետութեան

փոքու աշխարհի, որպէս Աստուած է իշխան հասարակապետութեան մեծի աշխարհի։ Բայց 'ի մէջ ազնուական գործողութեանց մտաց տեսեր զի երկու են գերազանցագոյնք և կատարելագոյնք. մին է գործածութիւն խոհեմութեան, որ կանոնաւորիչն է առնելեաց և առաքինութեանց բարոյականաց. միւսն է գործածութիւն իմաստութեան, որ կանոնաւորիչն է հայեցողական իրաց, և նկատող անմահականաց և աստուածայնոց։ Արդ ծանեաք թէ 'ի մի և նոյն աղբերէ բղխեն երկու երջանկութիւնք. որոց մին վերաբերի առ գործնական կեանս, և միւսն առ տեսական կեանս. զորոց թողլն իմաստասէրք վէճ թէ ո՞ր լաւագոյն իցէ։ Սիմոնիդէս որ 'ի մտաւորաց ոք էր, աքսորեալ զտեսական գիտութիւնս, հաստատէր զերջանկութիւնն 'ի բարոյական առաքինութիւնս, 'ի վերայ բերեալ զհասարակաց զայն առած. Որ ինչ 'ի վեր է քան զմեզ, չէ անկ մեզ։ Թողոյր զգիտութիւն երկնային գաղտնեաց այնմ որ արարն զնոսա. կարծէր թէ յանկագոյն իցէ մարդոյ բարոյական կարգաւորութիւն մարդկային կրից, քան զընդվայրաքննին հետազօտութիւն աստուածային գաղտնեաց, զոր ինքն Աստուած իններակ անթափանց ադամանդեայ վարագուրօք պարածածկեաց։ Ծագէր այս իւր նիւթական իմաստասիրութիւն 'ի թանձրամտութենէ, զի կարծէր թէ հոգի չէ ինչ բարեվլիճակ քան զմարմին. և վասն այսորիկ ծիծաղէր եթէ մահկանացուք մեծամեծս խորհէին զանմահականաց։ Բայց ճշմարիտ իմաստասիրողք որոց սրատես միտք տեսանէր որ ինչ 'ի միտս է անբաժան, անմահ և աստուածային, իմաստնապէս 'ի վերայ բերին, թէ արժանագոյն և իսկագոյն գործողութիւն այսպիսի գերապանծ կարողութեան, է հետազօտել զբարձունս և զաստուածայինս, որով մահկանացուն մօտի յաւիտենականին ըստ կարի։ Այս գերահրաշ իրք 'ի յառաջատես աստուածպետութենէ ոչ կարի ինն յայտնեցան և ոչ կարի ինն ծածկեցան. իբր զի սրամիտք 'ի նմանէ սիրեցեալք որպէս իւր նմանակք, մեծապէս խնդայցեն 'ի խոյզ նոցա։ Անմիտք անծանօթք անձանց, և եւս առաւել աստուածային առարկայից, կեցցեն արբանեկեալ այլոց. փոխանակ զի չեն արժանի վայելել յերջանկութեան։ Բայց որք ոչ անմիտ են և ոչ սրամիտ, թէ չվայելեն 'ի հայեցողական երջանկութեան՝ վայելեսցեն 'ի գործնականն առ իւրեանց քաջալերութիւն։ Այո, կեանք գործնական պիտանագոյն են քան զհայեցողականն. զի առաւել պիտոյ է մարդոյ լինել բարի, քան լինել գիտուն առ 'ի լինել երջանիկ։ Բայց գործողութիւն հայեցողական կենաց նմանագոյն գոլով գործողութեան անմարմին գոյացութեանց, այնչափ է կատարելագոյն քան զգործնականն, որչափ մերձաւորագոյն է աստուածայնոյն։ Արդարև սեպհական են մարդոյ բարոյական առա-



քինութիւնք. բայց ըստ իրաց ինչ թէպէտ և թերապէս՝ ընծային և անասնոց. զի և սոցա բաժանորդ գոլով զգայական բաղձանաց, մարդկային ուսուցչութեամբ և սովորութեամբ ուսանին և սոքա սանձել զնոսա, 'ի սանձել զբարկութիւն և զցանկութիւն յուսով և երկիւղիւ։ Զի իմաստասէրք ետուն մարդկան ուսուցիչ բարոյական առաքինութեանց զնոսին իսկ զանբանս, զառիւծն՝ արիութեան, զարագիլ՝ երախտագիտութեան, զտատրակ՝ ողջախոհութեան, և զշուն՝ հաւատարմութեան. զի 'ի նոսա գործէ բնութիւնն, որում անհնար է սխալել։ Բայց հայեցողութիւնն է գործ մտաց այնպէս ամբարձեալ 'ի զգայութեանց, և վերացեալ 'ի նիւթական առարկայից, զոր ոչ լիուլի և ոչ թերի հնար է պատշաճել անբանից. այլ միայն Աստուծոյ և հրեշտակաց և մարդկան։ Ապա անանջրպետ են 'ի մարդ այս երկու կեանք հայեցողական և գործնական, առ հասանելոյ 'ի ստացութիւն կատարեալ երջանկութեան։ Վասն զի գոլով նորա իմացական և զգայական, ոչ կարէ լինել կատարելապէս երջանիկ, եթէ որպէս իմացական ոչ կատարելագործէ զմիտս իմաստութեամբ. և որպէս զգայական ոչ չափաւորէ զկիրս խոհեմութեամբ։ Բայց քանզի յարանուանութիւնք առեալ լինին 'ի կատարելագոյն և յազնուագոյն մասնէ ենթակային, վասն այսորիկ Արիստոտէլ յարանուանեաց զերջանկութիւնն միայն 'ի հայեցողութեան աստուածայնոց իբրև 'ի կատարելագոյն և յաստուածայնագոյն գործոյ։ Այլ քանզի յընդմիմեամբ դասաւորեալս կարգն վերին 'ի ներքս փակէ զկարգն ստորին, թէպէտ և ստորինն ոչ փակէ զվերին, վասն այսորիկ երջանկութիւնն գործնական թէպէտ ոչ 'ի ներքս փակէ զհայեցողականն, բայց և այնպէս հայեցողականն փակէ գերազանցապէս զգործնականն։

## ԳԼՈՒԽ Բ.

*Նկարագրութիւն տան երջանկի։*

Իսկ արդ ո՞վ իցէ երջանկագոյն քան զայն, որոյ ունակացուցեալ զմիտս իւր երկար սովորութեամբ յամենայն բարոյական առաքինութիւնս, վասն որոյ և ազատ լեալ 'ի ծառայական կապանաց մոլութեանց, յայնպիսի հասուցանէ զըղձական ախորժակս, և յայնպիսի հանդարտութիւն զաղմկալի երկիւղս, մինչև պատրաստական գտեալ առ ամենայն պատահար, թէպէտ և փոխեսցի բաղդն, ինքն երբէք ոչ փոխի. և թէպէտ և կործանեսցի աշխարհ, ոչինչ զարհուրի. զի

յինչ իրաց երկնչիցի, որ 'ի ծայրագունէն աճարկուաց չերկնչի։ Եւ զի փոքր կարող է մարդոյ իւր անձամ, զեղու յիւրմէ և անդր զօրդեալ զիւր առաքինութիւն առ օգնելոյ հասարակութեան, որոյ ինքն է ընտրելագոյն մասն. վերամբարձեալ զհայրենիս խորհրդով և գործով, իբր տալոս զերկինս զլխով և ձեռամբ [328]։ Որով անդէն իսկ հանդիմանոյ աղաչաւորս զիւրն ունելով բաղումն, և շնորհակալուս անբաւ. բարեհամբաւեալ 'ի ասմկոյնոց, և մեծարգի յոյս ապագայ, սիրելի իւրոց, և մեծանուն առ օտարս. որում ամենքին խորհուրդ հարցանեն, և որպէս պատգամախօսի ծունր ածեն։

Բայց չէ պարագրեալ իւր երջանկութիւն մարդկայնովքս կամ եղականօքս։ Ոչ չատանոյ այնուիկ զոր առնէ, թէ ոչ ճանաչէ և զամենայն որ լինի ընդ անեղերս։ Ամբառնայ մտօք 'ի գիտութիւն համակ տիեզերական աշխարհի. և 'ի վերայ հասեալ ճշգրիտ պատճառաց բարձանց բնաւոր գործոց՝ և ընթեռնու 'ի ծովս և ցամաքի, յօդս և յերկինս, ուր պարզամիտ ամբոխին թուին անհաս պանչելիք, ծիծաղի ընդ զարմանս տխմարաց. յանդիմանէ զմոլորութիւնս խմասնոց, և ինքոյ վասն գիտելոյ իւրոյ զոր այլք ոչ գիտեն. մինչև թուիլ նմա, թէ ոչ վասն այլոց, այլ վասն իւր միայն արարեալ իցէ աշխարհ։ Անցեալ զանցեալ զհիւթականօք և զփոփոխելեօք, և 'ի գերմարդկային գործոց ծանուցեալ զգոյութիւն գերմարդկային գոյացութեանց (հրեշտակաց), որք 'ի վեր են քան զմարդ, և ստորև քան զԱստուած, չինչ միտք, պարզ իմանալիք, սոսկ հոգեղէնք, անմարմին գեղեցիկք, անթև երագունք, անուսումն իմաստունք, ընդ նոսին կենցաղ նա. ածեալ զմտաւ, որպիսի ինչ իցեն նոցա կեանք, որպէս գիտցեն, զինչ տեսանիցեն, որպէս շարժիցին, որպէս միմեանց խօսակից լինիցին։ Եւ այս իսկ են զարմանք մեծ, թէ որպէս մարդ ծանիցէ զհրեշտակս, և յերկրի գոլով բնակեսցէ յերկինս։ Բայց անբաւութեամբ առաւելու նորա երջանկութիւն, յորժամ ոչ միայն յիւր փոքր աշխարհէ ելանէ յաշխարհ տիեզերական, և 'ի տիեզերականէն 'ի հրեշտակական, այլ և 'ի հրեշտակական աշխարհէ ելանոյ 'ի սկզբնատիպ և յաստուածային աշխարհ։ Եւ նշոյլք բնաւոր լուսոյ իւրոյ որ յարարածս, նկատեալ զարարիչն, խորհի զայն հրաշափառ և յաւերժական տաճարից, զոր այլ մարդիկ որպէս խորհուրդ 'ի միջօրէի իսկ չտեսանեն։ Յինչ մեծագոյն երջանկութիւն հնար իցէ մարդկային մտաց վայելել, քան 'ի նկատել զաստուածային միտս, և 'ի ճանաչել թէ որով օրինակաւ ճանաչէ Աստուած զեղականս, և ճանաչելով 'ի գոյ ածէ զամենայն յոչինչէ, թէ քանի գեղեցիկ իրս արար, և թէ ևս գեղեցիկս կարող է առնել։ Եւ թէ կարել և կամել են յԱստուած էապէս մի և նոյն, զինչ ապա ոչ կամիցի զայն ամենայն զոր



կարէ։ Եւ որպէս ազատօրէն կամելով առնել կամ չառնել, ազատութիւնն որ կարող է կամել կամ չկամել, ոչ յաւելու ինչ գործ պատահական, որում իցէ հնար լինել կամ չլինել յԱստուած։ Եւ թէ կարող է նա առնել 'ի միում վայրկենի զայն ամենայն, զոր կարող է առնել առանց ծախելոյ զիւր կարողութիւն։ Ապա յանբաւ կարողութենէ անցեալ յանբաւ բարութիւն, ճանաչէ թէ քանի երախտիս ոչ միայն յամենայն կեանս, այլ և յամենայն վայրկենի ընդունի նա։ Եւ զի յայտնի ճանաչէ թէ յԱստուծոյ միայնոյ կախեալ կայ ամենայն իւր բարութիւն, 'ի նա միայն ապաւինի, և առ նա միայն զիմէ։ Եւ յայտնանէ առ այլ բազում ախորժական խակմանս միայն առաքինութեամբ իմաստասիրութեան գնայ խրախուսմամբ, որոց իւրաքանչիւրն կարող է արդահատել յաւիտեան զամենայն անդորր միտս։ Ապա այս է այն կատարեալ իմաստութիւն՝ գչնոյ առաքինութեանց, յոր հանգուցանէ Արիստոտէլ զգերակատար երջանկութիւն բնական։

## ԳԼՈՒԽ Գ.

### Օգնականք երջանկութեան։

Զոր ինչ ցայս վայր լուար, է երջանկութիւն էական։ Յաւելու ապա Արիստոտէլ, թէ մարմնական բարիք և արտաքին բարիք են օգնիչք երջանկութեան։ Եթէ լինէր մարդ միայն վերացեալ և սոսկ հոգի, հայեցողութեամբ լոկով վարէր զերջանիկ կեանս, և այլ ամենայն բարիք լինէին նմա աւելորդք։ Բայց անհնար է նմա ստանալ զերջանկութիւն առանց արբանեկութեան եղ-գոյութեանց, որք են գործիք ընդ որս մտանեն ճանաչելի առարկայք 'ի տաճար մտաց, և ոչ զօրէ 'ի վար արկանել զայն եթէ մտաւոր գործողութեանց չօգնեն մարմնականք։ Ապա պիտոյ են բարիք մարդոյ, առողջութիւն, ոյժ, կերակուր, ըստ այնմ որ արբանեկեն գործողութեանց հոգւոյ։ Վասն որոյ պիտոյ են և բարիք բախտի, ճոխութիւնք, կալուածք և դիւրութիւնք. ըստ այնմ որ արբանեկեն 'ի հասարակ զմարդկային մարմին։ Զէն ինչ անլծորդականք ընդ երջանկութեան ճոխութիւնք. ոչինչ արդարութիւն պարտաւորէ զփիլիսոփայական իմաստութիւն առ խիստ մուրացութիւն։ Կատակի նախանձ եղև նախանձ չնական աղանդոյ Կիւնիկեանց. որոց որպէս ազատ էին գնացք, նոյնպէս և հանդերձք. որ և յիմաստասիրել իւրեանց 'ի մարդս, հաջէին ընդդէմ Պղատոնի, Արիստիպպոսի և Զենոնի, ասելով. Ատացեալ ունին բազում ճոխութիւնս, մեծակառոյց ապարանս, զուարճալի դրախտս,

պերճապաճոյճ պճնութիւնս, բազմախորտիկ սեղանս, և ուսուցանեն թէ կեանք փիլիսոփայի առնուլ չտամանոյ։ Առ իմաստասիրել ոչ պիտոյ ընկենուլ զգանձս 'ի ծով իբրև զԿրատէս, և ոչ բրել զաչս իբրև զԴեմոկրիտոս, և ոչ մուրանալ զցնցոտիս իբրև զԴեմետրիոս, և ոչ բնակել 'ի կարաս իբրև զԴիոգինէս։ Նա որպէս 'ի Հնդիկս բուսանի ծառ, որ արմատովքն կայ երջանիկ՝ զի յիւրմէ ելեալ արտաքրէ, տանի, պտուղս և խեղ և տուր և զգեստ, և զամենայն որ ինչ պիտոյ առ մարդկային կեանս. նոյնպէս պարտ է լինել երջանկութեան իմաստնոյն, ըստ ամենայն բարեաց, և ոչինչ խնդրել կարօտել. զի երջանկութիւնն կոչի միայն կենաց ամենայն մասամբք կատարելոյ։ Զեն ինչ արտաքոյ յերջանկութենէ իշխանք և մեծատունք, զի չեն արտաքոյ յիմաստութենէ։ Նա՛ որչափ առաւելուն քան զայլս բարեօք, այնչափ զիւրաքանչիւր քան զայլս կարող են իմաստասիրել և լինել երջանիկ։ Նա ես իմաստասիրէր Պղատոն մեծահարուստ և դիտակաւոր, դիտելով աչօք յերկինս, 'ի գիրս, և 'ի մեծագին տափարակ աշխարհագրութիւնս զննելով տառեղս, քան անձամբ Դեմոկրիտոս բրելով զիւր աչս, 'ի նկատել կայր զնուրբսն։ Նա ես իմաստասիրէին մերկիմաստակք 'ի գիրս կոչեցեն, քան սովորել Կիւնիկեանք իբրև զանասուն ձաղանեալ. նա ես իմաստասիրէին Պղատոն և Զենոն 'ի կրակատունս ապարանից իւրեանց, քան Դիոգինէս 'ի տակառ ալբեալ, 'ի կարասի անդ իւրում, զոր երգիծաբանն զամէ և մանկանցն պախարակէ։ Ու քան իմաստասիրելոյ, նա է առաւել լինել քան մուրալ. նա է մեծատուն լինել, քան զմեծատանց զձեռս ընթանալ. ժամանակն զոր կորուսանէին Կիւնիկեանք փոխառութեամբ հնարելոյ 'ի տունս տունս, խափան էր հայեցողութեան տառասնծայրոյ, ուսման և երջանկութեան։ Թող զի որովհետև երջանկութիւնն ոչ է բովանդակ հայեցողական, այլ մասամբ ինն գործնական, բազում ինչ պիտոյ է իմաստնոյն ըստ գործնականին, որ ըստ հայեցողականին էր աւելորդ։ Կատարել և ժողովել խոհեմութեան պիտոյ մեծ իշխանութիւնք և մեծ գերդաստան. արդարութեան՝ առատ կենաց և տանց, մեծագործութեան մեծ ծախուց, մեծամեծութեան մեծ պատւոյ, բարեխառնութեան մեծ գրգռանք։ Իսկ Կիւնիկեանի չէ մեծ բարեխառնութիւն ժուժկալել յայնմանէ զոր ոչն ունի։ Մինչ զի ճոխութիւնք լաւ են կան 'ի ձեռս իմաստնոյ քան մերկանք, զի նա կամ վարէ 'ի պէտս կամ բաշխէ. սա կամ մնայ և կամ զայլ։ Նա է և ճոխութիւն Պղատոնի քան զնուրբութիւն Կիւնիկեանի, զի նա պատուէ զիմաստասիրութիւն և սա անարգէ։

Բայց առնիցէ Կիւնիկեանն. Իսկ զիարդ Զենոն և Պղատոն և Արիստոտելէս ուսուցանէին թէ կեանք իմաստնոյ շատանայ տակաւ ոք, և ինքեանք առաւել ունէին ինչս բազումս։ Զոր օրինակ անուանոր ժամացոյց, յորժամ անիւ ցուցանէն չէ բազմաղդեալ ընդ անիւ զանգակին, մի ժամ ցուցանէ և տասն հարկանէ, այնպէս այն իմաստասէրք բազմաձայնք յինքեանց, այլոց աղքատութիւն քարոզէին, և ինքեանք փարթամութեան զհետ վարէին։ Իսկ ընդէր այնպիսի իմաստասէրն փիլիսոփայք ոչ կէին որպէս քարոզէին, կամ ոչ քարոզէին որպէս կէին։ Ասելի է թէ արդարև ոչ բազմաձայնէին նոցա կեանք 'ի վարդապետութենէ։ Ոչ եթէ ճոխութիւնք խոչ են իմաստութեան, այլ կիրառութիւնն։ Հնար է լինել աղքատ յառաւելութեան, և ճոխ 'ի չքաւորութեան, յորժամ ճոխին խնդալ որէն վարէ 'ի պէտս զայն զոր ունի, և աղքատն առաքինաբար ըղձանօք այնմ զոր չունի։ Սակայն իսկ զիա՞րդ լինել աղքատ 'ի ճոխութիւնս. բայց այսպէս թշուառութեամբ կեալ 'ի պահել. իմաստասէրն խնայօրէն վարէ զայն առանձինն առ օգտակար հասարակաց. առաւել խնդամիտ լեալ 'ի պարգևել զայն քան 'ի վայելել։ Ասա վարէին 'ի պէտս իմաստասէրք զճոխութիւնս, այլ ոչ ծառայէին ճոխութեանց. ծառայել ունէին զայնս, այլ չէին ստացեալ 'ի նոցանէ։ Էին այնք՝ ինչք արտաքինք, այլ ոչ ներքինք։ Ունէին զնոսա առ մարմնով, այլ ոչ 'ի ներքս 'ի հոգի. զի 'ի հասանել առ նոսա ժառանգութեամբ, կամ վարձատրութեամբ, խաղաղական անձամբ ընկալեալ ոչ ցնծային 'ի ստացութեան նոցա, ոչ խռովէին 'ի պակասութեան և ոչ տառապէին 'ի կորստեան։ Ջնջելն ասացից. զիարդ լինել երջանիկ նոքօք, և առանց նոցա. որպէս արդ տեսցուք։



## ԳԼՈՒԽ Գ.

### Յառաջնորդիւք երջանկութեան։

Առաջին յառաջնորդութիւն երջանկութեան՝ ըստ Արիստոտելի, է լինել նմա կեանք ինչ ծայրագոյն բերկրալից. Զի եթէ երջանկութիւնն չէ բերկրալից, զինչ ինչ բերկրալից կայցէ յաշխարհի։ Բայց գործ է գիտել, մի իցէ նորա բերկրութիւն։ Աստի սկիզբն առնու աստուածն այնպիսի, որք պատերազմ 'ի բանին զուտ հեշտութիւնն կարծեն ձգնորին։ Այսպէս աշակերտքն Եպիկուրոսի լուեալ թէ վարդապետն իւրեանց զմարդկան գերագոյն բարին հաստատէր 'ի հեշտութեան, և չիմացեալ թէ մի հեշտութիւն իցէ այն, արձակերպեալ զիմեղս 'ի հեշտութիւն զգայական. խնդրելով ոչ զբերկրութիւն յերջանկութեան, այլ զերջանկութիւն 'ի բերկրութեան։ Թէ հարցանես զու զրաստոտ, մի քանի իցէ համա-

ճաշակ, տայէ պատասխանի. Եւս մանիսի, և փարատէ օգտատափ. և թէ չեչտասխի հարցմանս, որ խելէ մեծագոյն երջանկութիւն, յայտ է թէ տայէ պատասխանի. Հեշտութիւն զգայութեան։ Այլ զգախուռ բնաց այդպիսի փոյթէ ջանի։ Ոչ կարէ ասնել կատարեալ պատասխան զիրաց որոյ ոչ կատարեալ են խելք։ Նախակարգ երեւելին 'ի հանդերձեալն կենոց մարթի ընտրութիւն առնել հանդէ, և ոչ թէ կին յոյժ որոց թիւր երեւակայութիւն զատանանէ զճաշակ. մինչև զառին թուել նմա քաղցր, և քաղցուն զառն։ Այսպէս իմաստունք և ոչ ամենայնիւք առնուն զճշմարիտ ճաշակ բարեկամանին։ Արդարեւն յայտ թէ բարեկամութիւն է վերջին ինչ կատարելութիւն, և անուշակ իւն հաճել գործողութեանց իւրաքանչիւրում պատշաճելոյ։ Իսկ արդ եթէ հաճոյութիւնն է գործողութիւն առնելի սեպհական և առնել պատշաճական մարդոյ, որպէս ասացաւ, ապա չէք ինչ գործողութիւն քան զայն բարեկամական. զի չէք ինչ քան զայն պատշաճական։ Եւ եթէ այնչափ բարեկամականագոյն են գործողութիւնք իմացականք, որչափ լաւագոյն են առաքինք, ապա այնչափ լաւագոյն են բարեկամք իմաստնոյն քան զայլոց մարդոց, որչափ առաքինի աստուածային է լաւագոյն քան զայլ առաքինոյս։ Եթէ զբարեկամս մեզ ընկալեալ 'ի խոկումն աստուածային, կարող լինելին ունանել հեշտանալ, առաջինն առժեւք զատագեանն յինկերաց Ովսեայ. որոց 'ի ճաշակել զեղեցնաչաքար 'ի ծախսէսեաց անձնութիւնս Կիրիաց, անկքեալք յայնժամ անոյններ քաղցրութեանէ և մասնաւորք ըղձութեան Յունաստանի և զիրութեանս հայրենի փաստակաց, կամէին յայնժամ մնացորդի փոխանակել զինուոր [327],

Արդարեւ 'ի մեզ առեր զու թէ երջանկութիւնն չէ ինչ նուազ պատուաւոր քան բարեկամական։ Եթէ պատիւն է յարգ ինչ, զոր ընծայեմք այլում գերազանցութեան, և փառս այսքեկ առաքինութիւնն է պատուաւորագոյն քան զայլ ամենայն մարդկային բարիս. ապա իմաստունն այնչափ է պատուաւորագոյն քան զայլ առաքինիս, որչափ առաքինութիւնք աստուածայինք են գերագոյնք քան զմարդկայինս առաքինութիւնս։ Բայց յայսմ վայրի իւրով խորին խոհականութեամբ որոշեալ Արիստոտէլ երկուս ազգս գերազանց կատարելութեանց. մին բացարձակ, որ կատարելագործէ զմարդ 'ի ներքս յինքեան, և միւսն առնչական՝ որ կատարելագործէ զմարդ հաշւով այլոց։ Զառաջինն կոչեաց նա պատուաւոր, և զերկրորդն գովելի։ Զի պատիւն հայի յանձն, իսկ գովեստն հայի յարտաքին գործս։ Վասն այսորիկ ասէ նա թէ Աստուած առաւել պատուելի է քան գովելի։ Աստուածութեանն առաւել վայելէ լռելեայն երկրպագութիւն, քան բարձրաբերբառ գովասանութիւն. վասն զի գոլով Աս-



տուած միշտ պարապածեալ յինքեան՝ է կատարեալ զինքեամբ 'ի հաճոյութիւն իւր, է ինքնաբաւ առանց գործելոյ ինչ արտաքոյ իւր։ Եւ թէպէտ և գործէ արտաքոյ իւր բարւոք ինչ գեղեցիկ և սքանչելի, սակայն և այնպէս գործէ հաճոյացութեամբ յինքն իւր 'ի զուարճութիւն պատճառ անձնային։ Մինչև յԱստուած հաճոյական կենաց լինել հարկաւոր և գործունեանն այսոր։ Այսպէս յայսմ արտաքարգութենէ բաղէ, թէ որովհետև մարդ երջանիկ պատշաճեցեալ զմիայնաստուածային խոկմունս կենաց յինքեան, առաւել յարգելի է նա և պատուելի քան գովելի. իւր զի երեւին առաւել աստուածանման ամե քան մարդ մաքառնեալ։ Բայց քանզի իմաստունն ընդ առաւելութեան հաճոյականին ընտրէ երբեմն զառաւելութիւն գործնականին, որ հայի յարտաքինս, ամենապակաս է նա և մեծապէս գովելի. որպէս Աստուած բաց յերկրպագութենէ վասն իւրոյ կատարելութեան՝ գովի ևս երգովք վասն իւրոց բարեհրաշ գործոց արարչութեան։ Առայժ ինն է թէ ոչ միայն պատուելի է այս անձն երջանիկ որպէս աստուածանման յերկրի, այլ և պատուելի առաւել զճշմարտութի որ 'ի լոյս ընծայեցին զնա, պաշտպանելով որ եղեն նմա փառատուք, զանեղին յոր են գանձն խորհրդոյ, և ուր միայն նորա երկնեաց զայն աստուածային իմաստս. որպէս պատուելի որոյն ուրծնուն Դիոս յԻդայ լերին։ Երկեէին 'ի Սամոս արդեն ուեկամբ ըստ խորձելին, ուր հանգոյց ուսոյց Պիւթագորաս զիմաստութիւն։ Եւ Սողոնին 'ի Սաղամին, և Անաքսագորայն 'ի Կղազոմէնէ, և Դեմոկրիտոսին 'ի Աբդերացոց. և արտաքոյ Աթենայ (քաղաքի) նուէր քարուղին Սոկրատայ և Մետրոդորոսի, որ 'ի հանգուստ նոցա պարծանացաւ։ Ասա չէն ինչ զարմանք, եթէ Արիստոտէլի մահուան զոյգ մեծ հանդերձում զինատնոց, և ծանուցեալ զանուն նորա 'ի զիւղական յիւր վարժապետ 'ի Պղատոն, ձանեաց նմա սեղան, և առ նմին զինուան տեղուոյ, որում օրհնաուէ մատուցանէր խունկս ծաղկահամ յաւելեալ 'ի մեծաց այգամիայ իւր մեծառնութիւն. Սա է, որում պարտ է ըստինչ պատիւ ընծայել, և նմանող լինել։ Յանձին կալամեծն Աղեքսանդր զնորայն փարգաւորութիւն և զգեստանապատուեաց և առ ես զիւրն Արիստոտէլ, որպէս Արիստոտէլի պատուեալ էր զիւրն Պղատոն։ Արդեւ քանզի մեծ զհայր Սոկրատայ, որ ուսուցիչ իւր էր ծնեալն և մանկանութեամբ չարարգելով երանոյ զերկիրն ծանր զերկրորդ։ Եւ Արիստոտէլ զերս երկինք իւրում աշակերտի. եւ աշակերտին իւրում ուսուցչի զերկիրն, յորում ծնեալն էր. Պարգեպատուական. այլ այնչափ մեծարանք, որչափ երկիր երկնի. զի մեծամեծս զհայ պարգեւել իմաստունն իշխանի, քան իշխանն իմաստնոյ։

քեն 'ի միտ առեր թէ երկու են երջանկութիւնք. մին ճշմարիտ և միւսն սուտ. այն է առաքինական և այս մոլեկան. այն է բանաւոր և սա անբանական: Առ երջանկութիւն հեշտախտութե բաղում բարեք մարմնոյ և բախտի են հարկաւորք: Ամենայն խայծ՝ սակաւ է քաղցու մեծի: Բազմաց պէտս ունի, որ բաղում ինչ առացեալ ունի: Ամենայն ինչ պակասի այնմ, որ ամենայնի ըղձանայ, զի խղճն է անբաւ և բարիքն նիազ: Բայց երջանկութիւն առաքինական՝ յետ միանգամ ստանալոյ, սակաւուք պահի. և այլ չեն նմա հարկաւոր ճգանք և ճոխութիւն, որք օգնեցին 'ի ստանալ զայն: Ապա եթէ իմաստունն, մինչդեռ կեայ՝ պիտոյս ունիցի բարւոյ ինչ արտաքնոյ կամ մարմնականի, ոչ պիտոյս ունի այնմ որպէս իմաստուն, այլ որպէս ըզգայական: Զի որպէս իմաստուն՝ կեանք իւր է իմացական իւրև չատացեալ, որպէս հրեշտակականն և աստուածականն: Գիտես զի վերագոյն իրք բովանդակեն զստորինս. և որ ստացեալ ունի զառաւելն՝ ստացեալ ունի և զնուազն: Զունի հրեշտակն զզգայութիւն անոյշ հոտոց և ոչ ներդաշնակութեան հնչմանց և ոչ քաղցրութեան կերակրոց, բայց է 'ի նմա հոգեղէն ինչ զօրութիւն, որ բաղում իւիք առաւելու քան զայսոսիկ զզգայութիւնս. և յայսպիսեաց աստի ինչ ոչ պակասի նմա. զի և ոչ մի 'ի սոցանէ պիտի նմա: Երջանկութիւն իմաստնոյ է կեանք ինչ իմացական՝ կատարելագոյն յոյժ քան զգործնական և քան զհեշտականն: Նկատող լինել և կեալ առաքինօրէն՝ չէ ինչ թանկագին մարմնոյ և գանձուց: Որ կեայ մտօք, չունի պիտոյս հեշտութեան մարմնոյ: Զի հոգի իմաստնոյ, որպէս լուսար, ես և անջատ 'ի մարմնոյ՝ վայելէ յիւրում իմաստութեան. և նկատող է գեղեցիկ գաղափարաց կրելոց յինքեան լաւ ես, քան թէ լինէր 'ի բանտի մարմնոյ:

Յատուցելոց աստի յատկութեանց հարկաւ զհետ գայ յետևնն այն և մեծն քան զամենայն թէ երջանկութիւնն է կեանք ինչ երանական: Վերատաութիւնն գերագանց, զոր նախնի փիլիսոփայք ընծայէին գից իւրեանց, եղև երանելին, նշանակեալ նովաւ զիմացական կեանս մեծին Աստուծոյ, որ միշտ գործէ մտօք և միշտ է անդադար 'ի նկատումն իւր. ուստի և կեանքն զոր կեայ, է զուրև և ինքնաբաւ. և վասն այսորիկ ամենազուարճ և երանական: Զմտաւ ածին զի թէպէտ և մարդիկ կերպարանեն իմաստս զԱստուծոյ մարդկօրէն, բայց և այնպէս յԱստուած տիրաբար չունին զաեղի առաքինութիւնք բարոյականք, զի չունի ծայրս առ չափաւորելոյ միջասահմանութեամբ, այլ 'ի տեղի ամենայն առաքինութեանց ունի զիւր միտս, զէական և զգերագոյն կանոն ուղղութեան: Ապա վասն զի Աստուած է ամենապարզ ներգործութիւն, ըստ այսմ իմաստութիւն նորա որպէս և բարութիւն՝ են մի և նոյն



ընդ իւրումն էութեան: Մինչ զի յԱստուած ըստ իսկութեան, ոչ միայն իմաստութիւնն է բարի, և բարութիւնն իմաստուն, այլ իմաստութիւնն է նոյն ինքն բարութիւն, և բարութիւնն նոյն ինքն իմաստութիւն: Յայս վայր եհաս Արիստոտէլ իւրով բնաւոր տրամաբանութեամբ. յորմէ իմաստասիրեալ 'ի վերայ բերէ, թէ որպէս երջանկութիւնն Աստուծոյ իրօք հաստատեալ է 'ի նկատումն իւր ինքեան, նոյնպէս գերակատար երջանկութիւն մարդոյ տիրապէս հաստատեալ է 'ի նկատումն Աստուծոյ: Եւ որպէս երջանկութիւն Աստուծոյ կոչի երանութիւն, նոյնպէս երանութիւն կոչի երջանկութիւն իմաստնոյ. այսուիկ տարբերութեամբ, զի Աստուած է երանեալ էութեամբ, և իմաստունն է երանեալ հաղորդութեամբ: Արդ եթէ 'ի նմանութենէ ծնանի սէր, և 'ի սիրոյ հաստարակութիւն բարեաց, ո՛ լիցէ այնպէս սիրեցեալ և նպաստաւորեալ յԱստուծոյ որպէս զիմաստունն, որոյ ամբարձեալ զմիտս յերկրաւոր առարկայից յաստուածայինն առարկայս ըստ արևաւէր անկոց, թէպէտ և ոտիւք կառեալ ընդ գետին, աչօք միշտ հայի յարեգակն, դէտ ակն ունելով նորա յԱստուած, և Աստուծոյ 'ի նա: Ապա միայնոյ իմաստնոյ ես 'ի մահկանացու յատուկ կեանս յիրաւի պատշաճի երանեալդ անուն: Այս այն անուն է զոր հռովմէական կայսերք 'ի հրովարտակս իւրեանց և 'ի յաղթական կամարս յիւրեանս կորզեցին յաղկաղկ ժողովրդոց, որք ակամայ կամօք կոչէին զնոսա երանեալս և աստուածեանս, և 'ի սրտէ կղկաթէին կոչել զնոսա ծիրանազգեաց գազանս և ստանս սանդարամետականս: Առաւել ես իրաւամբք քրիստոնէական եկեղեցի, որ չափէ զպատուոյ անուանս ոչ 'ի բարձրութենէ լերանց, և ոչ 'ի բնաւոր լուսոյ պարզութեան երկնից, այլ 'ի բարոյական առաքինութեանց, 'ի վերաձայնել նորա զվեհանձունս Ընտրողութիւն ձեր, Սէր ձեր, Սրբութիւն ձեր, արժանապէս զայս մեծ վերտառութիւն Երանութիւնդ ձեր, ընծայեաց այնց սրբազան վեհապետաց, որք ըստ օրինակի Ատլասայ աստուածիմաստ գլխով բարձեալ ունին զերկինս 'ի յերկրի: Եւ թէպէտ և նոքա կոչեն զանձինս տրուպ ծառայս, բայց և այնպէս հաւատացեալք կոչեն զնոսա երկքերանեան հարս: Եւ երկաքանչիւրոցն է իրաւացի պատճառ: Զի որ զայդ վերտառութիւն ընդունի, հայի 'ի մարդկայինն իւրոյ անձին. և որ տայ, հայի յաստուածականն որ յիշխանութեան անդ. որ կամ իրօք կամ համարմամբ լծորդ է ընդ իմաստութեան աստուածայնոց:

# ԳԼՈՒԽ ՎԵՐՋԻՆ

*Յաղագս աւետարանական երջանկութեան. Աւարտ գործոյս։*

Տեսեր դու 'ի բովանդակ յայսմ մատենի, որպէս Արիստոտէլ քաջ վարժապետ 'ի բարոյական իմաստասիրութենէ առաջնորդէ յերանութիւն իմաստասիրական. Նոյ քեզ տեսանել 'ի զուարթարար լուսումն որպէս երանութիւնն իմաստասիրական առաջնորդիցէ յերանութիւնն աւետարանական։ Իմաստասիրականն հաստատեալ է 'ի հայեցողութիւն աստուածային իրաց, սկզբամբք ուսուցելովք յիմաստասիրական և 'ի բնաւոր լուսոյ։ Աւետարանականն հաստատեալ է 'ի հայեցողութիւն աստուածայնոց սկզբամբք յայտնեցելովք 'ի լուսոյ հաւատոյ. բայց չարտաքսելով զլոյս իմաստասիրական և բնական։ Եւս և բնականն և իմաստասիրական նշոյլ իմն են աստուածային լուսոյ. և 'ի Քրիստոս իսկ համօրէնակէին իմաստութիւնն անստեղծ և ստացական, և մին զմիւս ոչ արտաքսէր։ Մեծ եղև այս երջանկութիւն աստուածանկատ սրբոց, որք թողեալ զիմաստասիրական գիտողութիւնս գիտնոց ճառաստաղաց 'ի Ստոյիկեան և 'ի Լիկէականն սրահի, և միտ եդեալ առաւել անձանց քան իւրեանցայնոց, աւետարանչաց քան փիլիսոփայից, Աստուծոյ քան մարդկան. գտին 'ի լռին անապատս Նեղոսի և Եփրատայ զկորուսեալ շաւիղս երկրաւոր դրախտին, որ մուտն է երկնայնոյն։ Բայց խոստովանելի է, թէ մեծ ևս եղև երջանկութիւն Օգոստինոսի, Հերոնիմոսի և Թովմայի և այլոց սրբոց վարդապետաց, որք յաստուածային գիտողութիւնս իւրեանց՝ ընդ աւետարանական լուսոյ կցորդեցին և զիմաստասիրականն։ Եւս և 'ի սուրբ սեղանս, թէպէտ և 'ի լոյս արևու՝ լուցանին փոքր ճրագունք 'ի պատարագի։ Բայց մեծ խտիր է 'ի մէջ երկուց երջանկութեանցս. զի իմաստասիրականն ունի վախճան առաքինութեան զհայեցողութիւնն, իսկ աւետարանականն ունի վախճան հայեցողութեան զառաքինութիւնն։ Եւ իրաւամբք: Վասն զի ներգործութիւնք մտաց ազնուագոյն են քան զներգործութիւնս բարոյական առաքինութեանց, զի կարողութիւնն է վերագոյն. բայց առաքինութիւնն աւետարանական է ազնուագոյն քան զմ և իցէ ներգործութիւն մտաց. զի լծորդ է ընդ աստուածային սիրոյ։ Յայսմ Արիստոտէլի պիտէր մեծ ևս ուսուցիչ. բայց և այնպէս ախտակցութեան է արժանի, զի ոչ ծնաւ երեքհարիւր ամօք անդան 329։ Աստ



կամք էին նորա, զի բարոյական առաքինութեամբք ցածուցեալ մարդոյ զկիրս՝ խաղաղեսցէ զմիտս, առ յստակագոյն ընդունելոյ զապաւորութիւնս գերագոյն հայեցողութեանց, զոր օրինակ ջինջ և հեղահոս գետ յստակագոյն ընդունի զպատկերս աստեղաց երևելոց 'ի նմա. և յայնմ դնէր զիմաստասիրական երջանկութեանն վերջին կատար սահմանափակ 330։ Բայց իմաստասիրութիւնն քրիստոնէական թէպէտ և արամադրէ զմիտս առ ճանաչումն երկնայնոց, բայց յայնմ չառնու զտեղի, այլ կարգէ զճանաչումն Աստուծոյ 'ի սէր Աստուծոյ, որ է գերագոյն առաքինութիւն աւետարանական։ Առաւել հաճոյ է Աստուծոյ սէր ընդունել 'ի մահկանացուաց քան հայեցողութիւն։ Մտադիւր բնակէ նա 'ի սրտի քան 'ի միտս. նա ինքն խնդրէ յիւրոց որդւոց զսիրտ զաթոռ սիրոյ, և ոչ զուղեղ զաթոռ իմաստութեան. զի զիմաստութիւն նա պարգևէ իբրև իմն իւր, զսէր խնդրէ իբրև իմն մեր։ Այս սէր միայն է որ կատարելագործեալ զերանութիւնն աւետարանական, արժանացուցանէ երանութեանն յաւիտենականի։ Այս է ձողն ոսկի, որով չափի երկնայինն Երուսաղէմ. զի երանական տեսութիւնն չէ հատուցումն գիտողութեան, այլ սիրոյ։ Զի բովանդակ իմաստութիւնն աւետարանական՝ որ է հաւատն, չարժանանայ երկնայինն երանութեան, թէ ոչ արծարծանի սիրով։ Եւ զինչ իցէ սէրն հեղական, բայց սուրբ սէր 'ի մէջ մարդոյ և Աստուծոյ, և 'ի մէջ մարդոյ և մարդոյ, ըստ որում երկաքին կցորդ են Աստուծոյ. զի որպէս լուար, որք միաբանին ընդ միում երրորդի, միաբանին ընդ միմեանս։ Իսկ արդ եթէ 'ի մարդկայնում սիրելութեան ոչինչ օգտէ ճանաչել զսիրելին, եթէ ոչ սիրի, յայտ է թէ առանց հեղական սիրոյ ոչ միայն ամենայն իմաստութիւն իմաստասիրական, այլ և ամենայն իմաստութիւն մարգարէից և հրեշտակաց լինէր անգիտութիւն վնասակար. զի ճանաչել զԱստուած, և ոչ սիրել զնա չար ևս է քան զչճանաչել զնա. զի այդ է ապիրատութիւն դիւաց։ Եւս և յերկինս տեսութիւն երանելոց հարկիւ եղանայ 'ի սէրն։ Յաստուած իսկ նկատողութիւնն արտադրէ զբանն, և եղանայ 'ի սէրն։ Մինչ զի սէրն է լրումն երջանկութեան աւետարանականի, երանականի և աստուածայնոյ։ Նոյնպէս մտաց այնց որք գիշերավարժ տքնութեամբք և տունջենային վիճմամբք դղրդեն զդպրոցս, ընտն զթուղթս և առ թղթովք գալկանան, 'ի ճանաչել թէ զինչ է Աստուած. զուր ժամանակ կորուսանեն, և հողմոյ հոսեն զաշխատութիւնս, եթէ վախճան ճանաչման նորա չիցէ սէր նորուն։ Ո՛վ կոյր անմտութեան բարձրամտաց. դիւրին է սիրել զԱստուած քան 'ի խնդիր լինել նորա. 'ի խնդրել զնա բազում է աշխատութիւն, 'ի սիրել զնա բազում է օգուտ. բայց և այնպէս առաւել սի-

րեն աշխատիլ 'ի խոյզ և 'ի խնդիր, քան վայելել 'ի սէր գերագոյն բարւոյն. որ թէ ոչ սիրի՝ 'ի զուր խնդրի, և տուժիւք գտանի: Ծիւրիցս երջանկագոյն են այն ազգք, որք թէպէտ և անծանօթ են բարձանց ստորոգելեաց և խորոց գաղտնեաց աստուածային էութեան, բայց գլխաւորն գտեալ կոյր հաւատով քան ականի իմաստասիրութեամբ, լոկով սիրով նորա արժանանան տեսանել զնա. և յառաջ քան զիմաստասիրել 'ի գալրոյս՝ թէ զինչ է Աստուած, գնան վայելել 'ի նմա: Եւ զինչ իցէ այս սէր, բայց եթէ համեմատական իմն բայց խանդակաթ բարեյօժարութիւն առ առարկայ ինչ անբաւապէս սիրելի վասն իւր. որոյ գերազանցութիւն է այնչափ գերազանցեալ, մինչև շարժել զսիրտ խոնարհ 'ի խոր երկրպագութիւն: Այսմ բարեյօժարութեան զհետ գայ անքակ միաբանութիւն, կերպարանակցեալ զկամս մեր իւրոց կամաց յարգական երկիւղիւ չբարկացուցանելոյ զայն անբաւ բարութիւն որ ամենեցուն է ձեռնկալու: Եւ յայսմանէ ծնանի փոխադարձ բարերարութիւն, ըստ մարթելոյ սիրելութեան՝ անբաւութեամբ անհաւասարականի, 'ի տալ բոլորովին զանձքո այնմ որ ետ քեզ զամենայն զոր ունիս. և կարող է տալ զամենայն որում ըղձանաս:

Իսկ արդ եթէ սոսկ երջանկութիւնն բարոյական է բարի ինչ այնչափ գերազանցեալ, որչափ լուար, որպիսի՞ լուսոյ երջանկութեան լինիցի 'ի հոգի, որ թէպէտ և ընկղմեալ 'ի մարմին, զկնովին ընկղմիցի յաստուածայինս. և 'ի վերայ յաւելեալ լուսոյ փառութեան զլոյս հաւատոյ զպայծառագոյն և բնական սիրոյն Աստուծոյ զգերբնականն սէր զեռանդագոյն, արծուօրէն յայն լոյս յառեալ հայիցի. և ըստ հրակեաց թիթռան յայն վառ վայելեսցէ, ես քան զեւ բորբոքեալ սաստկագոյն եւ ներգործութեամբք երկրպագութեան և սիրոյ: Վասն զի է այն շարժումն ինչ հանապազորդեան, և փոփոխ պատճառելութիւն գերբնական կարգի. զի յառաւելուլ սիրոյ առաւելուն շնորհք, և յառաւելուլ շնորհաց առաւելու սէրն: Եւ թէպէտ զբաղնու յոլովակի սիրտ 'ի խոր իրողութիւնս 'ի պէտս հասարակաց, և միոյ միոյ 'ի մասնաւորաց, բայց վասն այդր չհեռանայ յաստուածայնն սիրոյ, որ գլխաւոր առարկայն է մտաց նորա: Նա՛ վասն զի սիրէ զԱստուած, օգնէ ամենեցուն, վասն լինելոյ աստուածութեան այնչափ սիրելի, մինչ անհնար է նմա սիրել զայլ ինչ և ոչ իսկ զանձն իւր, բայց եթէ ըստ այնմ որ դարձ առնէ 'ի սիրել զայն ծայրագոյն սէր, որ զամենեսին սիրէ: Վասն այսորիկ սէր իւր առ այլս չէ այնուհետեւ սէր մարդկային, այլ սէր աստուածային: Այսր աղագաւ բազմապատիկ առաւելու զիւր երջանկութիւն. իբր զի 'ի սիրոյ զոր ունի յայսմ կեանս, ծնանի 'ի նմա յոյս յաւիտենական երանութեան. և այնու-



հետև զհանդերձեալ բարեացն աստատին առեալ զճաշակ, նախապատւէ յերկրի զերջանկութիւն երանելոց: Եւ այս է յետին եզր երջանկութեան, յոր մարթի հասանել հոգի աստ 'ի ստորինս պանդխտեալ: Զի որովհետև միտք նկատող փոխակերպի յառարկայն զոր նկատէ, և սէրն ևս փոխակերպէ զսիրողն յայն զոր սիրէ, ապա հարկաւ զհետ գայ, թէ առաքինութեամբ կատարեալ սիրոյ՝ որպէս թէ սքանչելի իմն անձնաւորական միաւորութեամբ՝ իբրև անքակ յօդի սիրող մարդկութիւնն ընդ սիրեցելոյ աստուածութեան. մարդ փոխակերպէ զԱստուած յինքն, և զինքն յԱստուած. մինչև կարող լինել. Կենդանի եմ այսուհետև, ոչ ես, այլ կենդանի է յիս Աստուած: Որ է ճշմարիտ աստուածայնութիւն մարդոյ մահկանացուի [331]:

Արդ առ այս վախճան մեծապէս օգտամատոյց կայ քեզ զբարոյականս իմաստասիրութիւն. միայն թէ 'ի սկզբան անդ գիտամամբ սերտ ուղղեսցես զայն 'ի սէրն Աստուծոյ, իբրև 'ի վերջին նպատակ քոյդ իմաստութեան: Ո՛վ սքանչելի զօրութեան մարդկայինս գիտման: Սա է ակն աստուածական, որ 'ի սկզբան իրաց հայի 'ի վախճան: Սա է ճարտար ձեռնածուորոյ յեղափոխեալ զմարդկային գործս, կարող է լոկով ակնարկութեամբ փոխադրել 'ի ստորէ 'ի վերին կամար, և փոխակերպել յանարգէ 'ի պատուական, 'ի նիւթականէ 'ի հոգևոր, յերկրաւորէ յերկնաւոր, 'ի մարդկայնոյ յաստուածային: Արդ այս գիտումն որպէս հաւատարիմ ուղեցոյց՝ աստուածային օգնականութեամբ առաջնորդեսցէ քեզ յիմաստասիրական երանութենէ յաւետարանականն. և յաւետարանականէն 'ի յաւիտենականն, եթէ 'ի սկզբան անդ հայիցես 'ի վախճան: Զի թէ քո քաջ մտաւորութիւն, մնեալ յուղղափառ հաւատս, և ոչ աղճատեալ թիւր ունակութեամբք, ուսցի յիմաստասիրէն, քանի ինչ իցեն կարողութիւնք հոգւոյ և որոյք ունակութեամբք կատարիցին, քանիօն իցեն կիրք մարդկայինք և որովք կանոնօք նուաճիցին, քանի իցեն ծայրք մոլեկանք, և որ իցէ մէջ բանին, անտարակոյս կարող լիցիս բարոյական առաքինութեամբք առնել ըզքեզ ընդունակագոյն իմացական ունակութեանց, որք ամբառնան զմարդ 'ի նկատումն երկնայնոց և աստուածայնոց: Ամբոխեալ կիրք ամբոխեն զմիտս. որ վճռագոյն ըմբռնէ զճըշմարիտն, յորժամ է խաղաղ, քան յորժամ է ամբոխեալ 'ի կրից: Եւ վասն զի բաղձողական զօրութիւնք բնաւորապէս զհետ երթան ըմբռնողականաց, անտարակոյս որչափ յայտնագոյն ծանիցես դու իմաստասիրական և աւետարանական ուսմամբք զանբաւ բարութիւն արարչին, այնչափ յորդեւանդն վառեսցի 'ի քում սրտի սուրբ սէր առ Աստուած, որ ոչ երբեք պարտեսցի 'ի սիրոյ:

Ապա ոչ էր հնար բնաւորական նկատողութեան հեթանոս փիլիսոփայից, և ոչ բնաւոր սիրոյ որ հետևորդ է բնաւոր նկատողութեան, խուզել արժանանալ յաւիտենական փառաց. զի ոչ գոլով ինչ համեմատութիւն 'ի մէջ բնական կարգի և գերբնականի, անհնար է թէ պատճառ ինչ ստորին կարգի արտադրեսցէ զգործ ինչ վերադոյն կարգի: Մինչ զի իմաստասիրականն այն երանութիւն ոչ կարողանայ առնել զիմաստասէրն իսկապէս երանեալ: Ապա եղէն նոքա գիտողութեամբք իւրեանց իբր Հերմէսեան անդրիք քառուղեանք[334], զի մատամբ ցուցեալ այլոց զճանապարհ երջանկութեան և ոչ զհետ երթեալ, մեզ օգտեցին և ոչ անձանց: Բայց 'ի քրիստոսասէր իմաստասիրի եթէ այն գիտութիւն ուղիղ գիտմամբ կարգի առ սուրբ սէր, աստուածային շնորհօք 'ի հողոյ փոխի յոսկի, յիմաստասիրական երանութենէ յերանութիւն աւետարանական. զի սէրն իմաստասիրական հոգևորեալ հեղական սիրով յեղափոխի 'ի գերբնական: Ապա այս է ճանապարհ, ընդ որ ամենայն սոսկական և ամենայն իշխան քրիստոսասէր կարողանայ դիւրաւ վերանալ 'ի բարոյական իմաստասիրութենէ յերկնային երանութիւն: Այո, կամեցեալ Աստուծոյ երբեմն շնորհ առնել պարզամտաց և տգիտաց, հեղու 'ի նոսա նշոյլ բաւական 'ի վառել զբոց սիրոյ իբր 'ի ցօղուն ինչ. և ընդ գաղտնի և համառօտ ճանապարհ յափշտակէ զնոսա յերկինս կամ ինքեանք իբր սատամբ գողեգող յափշտակեն զայն: Բայց ազնուական սիրտ նախատինս դնէ իւրում ազնուութեան, և հոգւոյ բանականի զոր Աստուած եհեղ 'ի նա, եթէ կարող գոլով ելանել յերկինս ընդ արքունի և լուսաւոր ճանապարհ իմաստութեան, շատասցի ելանել յայն ընդ մթին շաւիղ անգիտութեան: Ապաքէն ստոյգ իմն է առ մեկնիչս սուրբ գրոց. թէ ուշիմ մտաց ուղղափառաց որք փայլեն իմաստութեամբ 'ի մէջ կենդանեաց, և յերանելեաց միջի պատրաստեալ է մասնաւոր իմն փառք 'ի վերադաս կարգի:

Ապա այս լիցի, արքայազուն բողբոջ սաբաւդեան քաջազանց, վախճան քումդ իմաստութեան. և աստանօր լիցի վախճան իմում բազմաջան երկասիրութեան. զոր ոչ յիմէ յանդուգն ձեռներիցութենէ, այլ 'ի վսեմական հրամանէ արքայապատիւ հօր քո և տեառն իմոյ գթասիրի, 'ի վերջին աւուրս ութսնամեայ իմոյ ծերութեան 'ի պէտս քո հնազանդութեամբ յանձն առի, զոր և մատչիւր քեզ վերընծայեմ[335]:

ՎԵՐՋ

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

## Ի ԹԱՐԳՄԱՆՉԷՆ

ԼՆՈՒԼ կամեցեալ զխոստումն մեր որ 'ի յառաջաբանի անդ, մատչիմք աստանօր յաւարտ գործոյ Թարգմանութեանս տալ փոքր 'ի շատէ տեղեկութիւնս ընթերցասիրաց 'ի վերայ վիպասանական և բանաստեղծական օրինակաց, զորս 'ի մէջ առնու սակս հեղինակս մեր Թէոկրիտոս: Փոքր 'ի շատէ ասեմ, որպէս և կանխաւ յուշ արարաք 'ի խոստման մերում 'ի համառօտն բերել ծանօթաբանութիւն. զի թէ զամենայն իրաց մի առ մի ձայնել կամէաք, հարկ լինէր մեր 'ի վայր յեղյեղել 'ի կարգիս զբանաստեղծութիւնս Հոմերոսի, Վերգիլիոսի, Ովրատիոսի, Ովիդիոսի, Մարտիալէսի և զայլոց բազմաց. յորոց բազում ինչ քաղէ հեղինակս. նոյնպէս և զերևելի երևելի վիպասանից Հելլենացւոց և Հռովմայեցւոց զոչ սակաւ բանս կրկնել: Մեր փոյթ այս եղև, զի ընթերցողք առցեն ինչ հանրական տեղեկութիւն, և մի գտցին անծանօթ ծանօթագոյն հնախօսութեանց հարևանցի յիշատակելոց 'ի Թէոկրիտոսէ. զնմաստ առաջի եդեալ օրինակին իմացցին, և ոչ եթէ զամենայն հանգամանս առապելաց լուիցեն: Այլ 'ի վերայ այսր ամենայնի ոչինչ տարադէպ վարկաք ուրեք ուրեք փոքր մի ընդարձակագոյնս քան զոր առաջիկայ բանն պահանջէր, զիրսն ստորագրել. զի յայտնի լիցի թէ յորպիսի անցից պատմութեանց կամ 'ի քերթածաց բանաստեղծութեանց զմաննաւոր ինչ պարագայ եւեթ վեր 'ի վերոյ յիշէ հեղինակս. և թէ 'ի բազմապատիկ աւանդութեանց հնախօսից զո՞րն ընտրէ յօրինակ բանից իւրոց: Թող զայն զի յոլովակի նոյն պատմութիւն կամ առասպելք ըստ այլում մասին յայլում վայրի պէսս ունէին առանձին բացատրութեան. և մեր չկամեցեալ կարի յոյժ ցրիւ դնել զգիտելիսն, 'ի մի վայր հաւաքեցաք ըստ կարի. և այլուստ անդր յղեցաք, ասելով թէ տես զայսմանէ յայն ինչ թիւ համարոյ: Ուրեք ուրեք եւս ոչ յան-

դէպս ինչ արդեօք երկարեցան բանք մեր 'ի պատճառս բերելոյ զվկայութիւն նաև 'ի հայերէնագիր մատենից. այսինքն եթէ 'ի բանից մատենագրաց ազգիս մերոյ, և եթէ 'ի յունական մատենագրութեանց թարգմանելոց անդստին 'ի մերոց նախնեաց:

Ի հաւաքումն նիւթոց ծանօթութեանց է զի 'ի հին հեղինակս անդր ընթացաք, զորոց զանուանս յիշատակեմք առընթեր, և բազում այն է զի յերևելի բառարանաց հատընտիր արարաք. և յայսպիսիս չեղև ինչ մեզ փոյթ նշանակել զանուն գործոյն կամ հաւաքողին: Ի տառադարձութիւնս յատուկ անուանց զգուշագոյնս զհետ գնացաք նախնի սովորութեան թարգմանչաց մերոց. այլ քանզի գտանին և այլազգս գրութիւնք նոյն անուանց յաճախեալ առ բազումս, ըստ տեղւոյն նշանակեցաք և զայնս. որպէս և բազում անգամ զբնիկ հնչումն այլոց ազգաց հարկ համարեցաք երկրորդել, մանաւանդ 'ի ստուգաբանելն:

Համարքն կամ թուանշանքն յաջորդաբար եդեալք յընթացս ծանօթութեանց ցուցանեն ըստ կարգի զիւրաքանչիւր տեղիս յորս հային այս բանք 'ի կարգի անդ մատենին, համեմատութեամբ նոյն թուանշանաց որք եդան անդէն: Թող զայն համառօտ տեղեկութիւնս, զորս կանխաւ անցուցաք փակագծիւ 'ի կարգ բանից հեղինակին. իբր զի որչափ ինչ բառք կամ բանք տեսանին յընթացս թարգմանութեան եդեալ 'ի մէջ փակագծի, եթէ հային 'ի բացատրութիւն յատուկ անուանց կամ մթին իմացուածոց, առ 'ի մէնջ եդան. իսկ եթէ հային առ դիւրութիւն ընթերցանութեան առ ամփոփ նշանակելոյ զմիջանկեալ ինչ ասացուած, նորին իսկ հեղինակի են փակագծութիւնք:



# Ծանօթութիւնք յառաջին գիրս:

1. Սովորութիւն էր առ հեթանոսս ոչ միայն զերևելի անձինս, այլ և զանուանս առաքինութեանց, որպէս երբեմն և մոլութեանց, կրից և ախտից յաջող բախտից և ձախող ելից, ձևացուցանել իբր աստուածս և աստուածուհիս՝ կանգնելով արձանս յանուն նոցա և պաշտօն մատուցանելով, հանդերձ ազգի ազգի առասպելօք զոր պատմէին զնոցանէ. զորս և յետինք պէսպէս օրինակաւ այլաբանեն, ոմն այսպէս և ոմն այնպէս բացատրելով, առ 'ի չգիտելոյ բազում անգամ զըստոյգն: Որպէս և յառաջիկայդ զՎոլուպիա և զԱնգերոնա դիս յիշատակեալս 'ի Թէսաւրոսէ ոչ միօրինակ ստորագրեն. զի ոմանք մի և նոյն աստուածուհի ասեն լինել զերկաքանչիւրն կրկնակի անուն առեալ ըստ այլ և այլ գործոյ. քանզի ասեն Վոլուպիա, այն է ըստ լատինացւոց Վօլուբիա աստուածուհին հեշտութեան, անուանեցաւ Անգերոնա կամ անճէրօնա, որպէս թէ փարատիչ ցաւոյ, զի 'ի ժամանակին յորում փարատեցաւ 'ի Հռովմ քաղաքէ հանրական ինչ ախտ փողացաւի, համարեցան կռապաշտքն թէ 'ի ձեռն Վոլուպիայի եղեալ իցէ այն դիւրութիւն: Իսկ այլք պնդեն թէ այլ էր 'ի Վոլուպիայէ Անգերոնա աստուածուհի. միայն թէ չունէր ասեն առանձին մեհեան, այլ արձան նորին եդեալ կայր 'ի մեհենին Վոլուպեայ առընթեր բագնի նորա, և կամ թէ 'ի մեհենի միայն պաշտօն մատուցանէին և միասումն:

2. Կրիտողայոս էր անուն իմաստասիրի ուրումն Աթենացւոյ 'ի դասէ Ճեմական փիլիսոփայից որ գեղեցիկ վճիռ եհատ թէ բարիք հոգւոյ և առաքինութիւնք անհամեմատ առաւելութեամբ ծանրակշիռ են քան զբարիս մարմնոյ և զբախտի. կամ որ նոյն է, հոգեորն յանչափս առաւել է քան զմարմնաւոր: Այլ զայս յայտնի իմաստ սորա հանդիպացոյց բանն Կիկերոնի Ճարտարախօսի յասելն 'ի Ե. գիրս տուսկուլանեան խնդրոց 17. « Զինչ զօրութիւն իցէ կշռոյդն այն Կրիտողայ, որ իբրև 'ի մի կողմն եդ կշռոյն զբարիս հոգւոյ, և 'ի միւսումն զմարմնոյն և զարտաքինս, այնչափ ծանրակշիռ եցոյց զառաջինն զայն թաթ բարւոյ մասին հոգւոյ, մինչև զծով և զցամաք ընդ իւրև ճնշել »:

3. Ցուլ Փաղարիսի կամ Փաղարեան ցուլ կոչի զանուն 'ի Փաղարիս անուն բռնակալէ Ակրականդացւոց 'ի Սիկիլիա, որ բաց յայլոց նորաձևոց տանջանարանաց՝ ունէր և պղնձի մեքենայ մեծ ցլաձև, յոր արկանէր զմահապարտս, և 'ի ներքոյ հուր բորբոքէր. զի յորժամ փակեալն 'ի ներքս ճչեսցէ առ տագնապին, բառաչ ցլու լսելի լիցի արտաքս: Ցայս անողորմ տանջանս եարկ նախ զարուեստապետն գործոյն զՊերիղոս. և այն ըստ արժանւոյն, զի սա 'ի շնորհս բռնաւորին հնարեալ էր զայնպիսի չարարուեստ ճարտարութիւն: Այլ 'ի վախճանի ինքն իսկ բռնաւորն արկաւ 'ի ժողովրդենէ յայն մեքենայ. և այնպէս կորեաւ իբր 'ի ԼԹ. Ողոմպիադի, յաւուրս Ցախեայ արքային Ցուդայ, կամ քանի մի ամօք զկնի: Ուր ծանիր զի Նոննոս մեկնիչն աստուածաբանին յիշատակելոյ 'ի Գրիգորէ աստուածաբանէ նոյնացուցանէ զՊերիղոս շինողն ցլու ընդ Փաղարիսի, և փոխանակ անուան բռնաւորիս դնէ զԴիոնեսիոս զերևելի բռնակալն Սիրակուսայ որ 'ի Սիկիլիա. բան նորա է այս ըստ հայերէն հին Թարգմանութեան. « Եւ Փաւղաւիդոս այսպիսի ոմն է, զի և նա նորագոյն տանջանարանաց եղև գտիչ. այլ էր ինքն ազգաւ Սիկիլացի: Նա Դիոնեսեայ բռնաւորի շնորհս առնելով առնել ցուլ պղնձի, յոր պարտ վարկանէր արկանել զպատժապարտսն, և հուր առ նովաւ վառեալ. զի 'ի ներքս գոլով և կիզեալ լինելով աղաղակեսցեն. և ձայնին ելանելով ընդ բերան ցլուն՝ Թուեսցի ցուլն կիզելով գոչիւն հանել: Իսկ Դիոնեսիոս Թէպէտ խստագոյն գոլով և պատժասէր, սակայն տեսանելով զՓաւղաւիդոս 'ի տմարդութիւնն, զինքն արկ 'ի ցուլն և կիզեալ հրով սպան »: Դիոնեսիոս Սիկիլիոյ բռնացաւ բազում ամօք յետոյ քան զՓաղարիս բռնաւոր, այլ Թէ յորոյ աւուրս լեալ իցէ այս գործ, մեզ չէ փոյԹ:

4. Ուր ուրեք յիշատակի յընԹացս Թարգմանութեան մերոյ անուն Արիստոտէլի, իմա 'ի Թեսաւրոսէ եդեալ յիտալականն առանց անուան Փէր ֆիլօզօֆօ. այսպէս անուանէ միշտ զԱրիստոտէլ. որում յամենայնի զհետ երԹայ 'ի բարոյական իմաստասիրութեան. զի և այլ ոչ ոք 'ի փիլիսոփայից այնպէս գեղեցիկ ճառեաց զայսմանէ իմաստասիրական ոճով, որպէս ներհունն այն իմաստասէր:

5. Կինիկոս կամ Կիւնիկոս անուամբ նշանակի աստանօր Դիոգինէս կարասաբնակ փիլիսոփայն, որ էր աշակերտ ԱնտիսԹենեայ առաջնորդի Կիւնիկեան կամ Շնական կոչեցեալ աղանդոյ: Արդ սա ինքն Դիոգինէս ծաղկեալ յաւուրս Աղեքսանդրի մակեդոնացւոյ, գտաւ 'ի մէջ արտաքին իմաստասիրաց առաւել խստակեաց և գլխովին Թշնամի դիւրութեան



կենաց. կեայր անյարկ բնակեալ 'ի կարաս, որով աստ անդ հոլովեալ յածէր ըստ ժամանակին. և ասէր ընդ կատակս ունել իւր տուն շրջական և հոլովական, որ ընդ փոփոխական ժամանակի շրջան առնուցու. զի յաւուրս ձմերան՝ զբերան կարասին 'ի հարաւակողմն դարձուցանէր, և յամարայնի առ հիւսիսակողմն. այլ սակս 'ի ցերեկի յոր կողմն և դառնայր արև, յայն կողմն և նա զկարասն շրջէր: Բազում են սորա գործք յօրինակ խստակրօն և տառապագին կենաց: Սոյնպէս և Մետրոդորոս էր այլ ոմն խստակեաց փիլիսոփայ ժամանակակից Դիոգինեայ, բնակեալ 'ի քարանձաւս. և քարոզէր հանգոյն նմին գործով քան բանիւ, Թէ կարող է մարդն բնաւ պէս երջանիկ գտանիլ յոր և իցէ վիճակս Թշուառութեան: Եւ զի առաւել քան զչափն տացին և արարին սոքա, նմին իրի հեգնէ զնոսա հեղինակս: Իսկ Կիկերոն զՄետրոդորոս կոչէ երկրորդ Եպիկուրոս, 'ի կշտամբել զերկոսին եւ յԵ. գիր. յաղագ. վախճանաց:

6. Բռնաւոր Սիրակուսայ կոչի երևելին 'ի բռնաւորութեան Դիոնեսիոս արքայ Սիրակուսացւոց 'ի Սիկիլիա. որպիսի եղև նախ հայրն և ապա որդին համանուն, զորս յիշատակէ Եւսեբիոս 'ի ՃԲ. Ողոմպիադն. ասելով. « Դիոնեսիոս վախճանի, տիրեալ սիկիլացւոց ամս ԽԸ. յետ որոյ մանուկն Դիոնեսիոս »: Եւ սոքա երկոքին իսկ 'ի բռնաւորութեան անդ ունէին իմաստասէր բարս, այլ առաջիկայ բան Թեսաւրոսի հայի առ առաջինն Դիոնեսիոս, զորմէ պատմի այսպիսի ինչ: Ի զարմանալ երբեմն Դամոկլեայ կամ Դէմոկլեայ ուրումն ընդ յաջողուածս և ընդ փառս Դիոնիսեայ, և յերանելն զնա մարդահաճութեամբ, պատասխանի ետ նմա բռնաւորն. Կամիս և դու հաղորդ լինել իմում բարեբաստութեան և զփորձ առնուլ երջանկութեան իմոյ: Եւ 'ի հաւանիլ նորա խնդութեամբ, հրաման ետ արքայ զգեցուցանել նմա Թագաւորական ծիրանիս, և բազմեցուցանել զնա յոսկեղէն գահոյս իւր 'ի սենեակն արքունի, որ զարդարեալն էր բեհեզօք և մեծագին սպասուք. եդ առաջի նորա սեղան բարելից համադամ կերակրովք և ծաղկահոտ ըմպելեօք, կարգեալ մանկունս գեղեցիկս զարդարեալս 'ի զգեստս պայծառս սպասաւորել նմա ըստ ամենայն ակնարկութեան նորին: Եւ յետ ամենայնի ետ կախել 'ի բարձանց սուսեր մի մերկ ուղղակի 'ի վերոյ գագաԹան Դամոկլեայ կախեալ զԹելէ միոջէ, որ մերձ ընդ մերձ Թուէր անկանիլ: Եւ այն ինչ սոսկացեալ կայր նա յերեսաց սրոյն, ասէ ցնա արքայ. Մի երկնչիր, վայելեա 'ի բարիս որ կան քո առաջի. կեր արբ և ուրախ լեր: Իսկ նա աղաչէր լալով արձակել զինքն 'ի բաց. Լաւ էր ինձ ասէ վիճակ իմ անփառաւոր, չկամիմ զայդպիսի երջանկութիւն,

միայն զերծայց 'ի սոյն աստի։ Յայնժամ ասէ ցնա Դիոնեսիոս, ահա և ես զօր ամենայն զփորձ առնում այդպիսի առաւելի երջանկութեան. զի հանապազ թուի ինձ տեսանել սուր այնպիսի կախեալ 'ի վերայ գագաթան իմոյ զդիւրախզելի տաղանւոյ. որով և դառնանան ինձ ամենայն վայելք իշխանութեան իմոյ։ Զայս յիշէ Կիկերոն և Պերսէոս Փլակկոս բանաստեղծ ընդ այլ մատենագիրս։ Արդ որոյն այնուիկ իմանայր Դիոնեսիոս ըստ կարծեաց ոմանց զյիշատակ մահուն կամ զերկիւղ հանդերձելոյն. և ըստ այլոց զխայթ խղճի մտաց իւրոց վասն ազգի ազգի չարութեանց 'ի գործս բռնաւորութեան։

7. Կրասոս Մարկոս Լիկինիոս էր երևելի զօրավար և հիւպատոս Հռոմայեցւոց, այր ընչաւէտ և անյագ. որ յաղախեաց օր քան զօր 'ի մեծութիւն և յիշխանութիւն, և համարէր վայելել յերջանկութեան, այլ 'ի վախճանի թշուառացաւ յոյժ. զի յետ լինելոյ դաշնակից Կեսարու և Պոմպէի՝ յորժամ խաղաց պատերազմաւ 'ի վերայ Պարթևաց, այսինքն Հայոց և Պարսից, չարաչար 'ի պարտութիւն մատնեցաւ 'ի Տիգրանայ միջնոյ Հայոց արքայէ, և ինքնին եղև զօրքն հանդերձ. և ամենայն գանձք և մեծութիւն նորա յաւարի եղեն զօրացն Տիգրանայ։ Յայնժամ է և պատմութիւն Կրեսոսի Լիւդացւոց արքայի, որ ճոխացաւ գանձուք և մեծութեամբ քան զամենայն թագաւորս իւրոյ ժամանակի, և համարէր զանձն հասեալ 'ի կատարեալ երջանկութիւն. այլ խրատեցաւ 'ի Սողոնէ իմաստնոյ աթենացւոյ չերանել զբարեբախտութիւն մարդոյ մինչև ցվախճան, զոր և արդեամբք յանձին իւրում ետես. զի յետ այնչափ փառաւորութեան իւրոյ անարգաբար 'ի ձեռս մատնեալ թշնամեաց իւրոց, յերկաթի տապակ հանաւ 'ի Կիւրոսէ Պարսից արքայէ, կամ ըստ Խորենացւոյն յԱրտաշիսէ Պարթևէ Հայոց արքայէ. այլ 'ի յիշելն հառաչանօք զբան Սողոնի եգիտ զթողութիւն, և արձակեցաւ 'ի տանջանաց։ Երանի թէ ամենայն մեծատունք և փառաւորք աշխարհի, կամ որք երջանկական յանձինս իւրեանց, 'ի միտ ածէին զօրինակն Կրեսոսի, և առեալ ասէին 'ի յաջողութեան զասացեալն 'ի Կրեսոսէ 'ի ձախողութեան. «Աւաղ փառացս անցաւորի»։

8. Հարևանցի, բայց որոշակի ծանոյց բանիւս հեղինակն զընթացս և զնպատակ գործոյս. յորում ամենայն բանք ուղղին առ բնական երջանկութիւն բնական իմաստասիրութեամբ. որպէս և 'ի յառաջաբանի անդ լեալ յուշ արարաք, նմին իրի և խոնարհութեամբ հրաժեշտ տայ Թէսաւրոս խօսել զգերբնական երանութենէ, որ աստուածաբանից և աստուած-



իմաստնոց է անկ. զոր և յաստուածեղէն գրոց և յայլոց հոգեւորական մատենից լսել ուսանիմք, զաստուածայինն ասեմ գիտութիւն և զգերբնական իմաստութիւն. որ ուսուցանէ զաւետարանական երանութիւնս որք առաջնորդեն յերանութիւն յաւիտենական։ Այլ 'ի սոյն խոկ կնքէ և հեղինակս զվախճան գրոց իւրոց, որպէս և տեսեր։

9. Ագղայոս հայրենեօք 'ի Փսոփիս քաղաքէ Արկադացւոց՝ էր այր նուաստատոհմիկ և աղքատ ծնեալ և սնեալ 'ի հայրենաժառանգ փոքրիկ կալուածի իւրում. որ մինչև 'ի խոր ծերութիւն ոչ ել արտաքոյ քան զսահմանս անդոյ իւրոյ. զի 'ի հասից նորին զակաւորէս կերակուր իւր հոգայեալ կայր զլխովին շատացեալ և գոհ ընդ վիճակ իւր յառանձնութեան անդ, զերծ 'ի բազում հոգոց աշխարհի։ Եւ եղև յորժամ Գիգէս արքունի հովիւ ըստ յաջողելոյ բախտին զօրացաւ և թագաւորեաց 'ի Լիւդիա՝ 'ի տեղի Կանդաւղէսի արքային Լիւդացւոց, մեծամտեալ ընդ յաջողուածս իւր որով անկարծ 'ի նուաստութենէ վերացեալ եղև յայն պատիւ բարձրութեան, եհարց ցդեղփեան պատգամախօսն դից Ապողոնի թէ կայցէ արդեօք այլ ոք երջանիկ իբրև զնա 'ի վերայ երկրի. և լուաւ պատասխանի թէ բազմօք երջանիկ է քան զքեզ Ագղայոս Փսոփացի։ Զայս պատմէն Պլինիոս և Վաղերիոս Մաքսիմոս։ Յիշէ և Պաւսանիաս, այլ առ փոխանակ Գիգեայ դնէ զԿրեսոս երևելին զարքայն Լիւդացւոց։ Իսկ թէ զիարդ եհաս Գիգէս յաթոռ թագաւորութեան, այլ և այլ գրեն վիպասանք. յորոց միջի Հերոդոտոս համարի թէ Կանդաւղէս զկին իւր ցուցեալ իցէ Գիգեայ. և ընդ այս դժուարեալ տիկնոջն միաբանեալ իցէ ընդ Գիգեայ և 'ի ձեռն նորա սպանեալ զայր իւր, և զնա ինքն զԳիգէս հանեալ յաթոռ տէրութեան։ Այլ զայս բան Հերոդոտեայ հերքէ մերս Մովսէս քերթող 'ի գիրս պիտոյից յօրինակ հակաճառական եղծման. ուր անուն արքային կոչի Կանտաւղէս կամ Կանդաւլէ։

10. Ոսկեղէն դար կոչի յընթացս մատենիս ըստ առման բանաստեղծից նախկին դար աշխարհի, կամ առաջին ժամանակն, մինչդեռ որդիք մարդկան շատանային բնաբոյս բարեօք երկրի, և չև էին զբաղեալ 'ի ծփանս մեծամեծ հոգոց վասն ազգի ազգի հանդերձանաց կերակրոց և զգեստուց, վաճառականութեանց և արուեստագործութեանց, խռովութեանց և պատերազմաց։

11. Ապեղէս երնկարիչ երևելի՝ հայրենեօք 'ի Կով կղզւոյ, յաւուրս մեծին Աղեքսանդրի Մակեդոնացւոյ։ Սա գերա-

զանցեալ յարուեստ զամենեքումբք՝ որ յառաջ քան զնա էին, և 'ի յետնոց իսկ առաւել հասին 'ի չափ նորա: Այնչափ անուանի եղեն նկարք սորա, մինչև պատուէր հրամանի եա Աղեքսանդր զի մի ոք այլ իշխեսցէ նկարել զպատկեր իւր բաց յԱպելլեսէ. զի 'ի ձեռն այնպիսւոյ պանծալի արուեստաւորի մնասցէ փառք յիշատակ իւր յաւիտեան: Վասն որոյ և Թէոսւրոս կոչէ զԱպելլես նկարիչ դիւցազանց: Թող զայն զի նկարեաց նա և զերկուս պատկերս Ափրոդիտեայ քաջ ճարտարութեամբ, որոց մեծ էր յարգ առ Հելլենացիս. որպէս և զպատկեր բարեկամին իւրոյ Անտիգոնոսի միականւոյ, զմի կողմն նորա եթէ ցուցանելով, առ առագաստել զթերութիւն կոյր ականն: Նկարեաց և զերիվար մի այնչափ բնական կենդանագրութեամբ, մինչև 'ի տեսանել զնա այլոց երիվարաց խնչային. ուստի և ասի թէ ասացեալ իցէ երբեմն Ապելլես ցԱղեքսանդր ընդ խաղս. երիվար քո առաւել իրագէտ է նկարուց քան զքեզ: Իսկ Լուդիոն որ և Լուդիոս, էր նկարիչ ոմն 'ի Հռոմ յաւուրս Օգոստոսի կայսեր: Սա, ըստ ասելոյ Պլինիոսի հնարեաց զառաջինն զվայելուչ նկարս որմոց առ 'ի զուարճութիւն, ստուերագրելով գիւղս և ագարակս, գաւառս և հովիտս, լերինս և բլուրս, անտառս և գետս, ծովափունս և նաւահանգիստս. և յիւրաքանչիւր տեղիս զկենկաւոր արարս մարդկան և անասնոց. զոր օրինակ շինականս որ բառնան բեռինս 'ի վերայ իշոյ կամ գրաստու, հնձողս հանդերձ որայիւք, հովիւս հանդերձ խաշամբք, եղնավարս և անդէորդս, որսորդս, ձկնորսս, նաւորդս, և այլն: Արդ զայս ամենայն յուշ առնել կամեցեալ Թէոսւրոսի, 'ի մասնաւոր ինչ գործոյ կոչէ զԼուդիոն նկարիչ եղնավարաց. որով տայ իմանալ զնուաստութիւն արուեստին առ համեմատութեամբ Ապելլեսի, որ նկարէր զդիւցազունս:

12. Բոյիէս կամ Պայս էր 'ի հնումն անուն քաղաքի, այժմ աւանի, 'ի Կամպանիա գաւառն Իտալիոյ. երևելի ըստ զուարճալի դրից և ըստ առողջարար ջուրցն տաքութեան յանկաւոր 'ի շինութիւն բաղանեաց. առեալ զանուն 'ի Բայոսէ ումեմնէ անդ թաղելոյ, որ համարի հիմնադիր քաղաքին: Արդ հեղինակն որպէս զՓաղարեան ցուլ բերէ յօրինակ դառն վշտաց, նոյնպէս և զԲայեան բաղանիս յօրինակ զուարճութեանց:

13. Հերակլէս կամ Երակլէս կոչի 'ի գիրս մեր այն զոր Հերքիւլէս կոչեն, զորմէ բազմապատիկ առասպելս յօդեն նախնի բանաստեղծք, համարելով զնա իբր մի միայն քաջ 'ի մէջ քաջացն Հելլենացւոց, գլուխ հսկայից և վեհ դիւցազանց. են և որք հաւասարեն զնա Սամփսոնի, որպէս և զժամանակ նորա փոքր



մի յառաջ դնեն քան զՍամփսոն առ ժամանակօք Արգոնաւորդաց, իբր 1200 ամօք նախ քան զՔրիստոս. թող զի բազումք բազում Հերակլէս թուեն և յայլևայլ ժամանակս դնեն: Այլ զերևելին Հերակլէս Հայք կոչէին երբեմն նաև Վահագն 'ի մի կարգ դասելով զնա ընդ քաջին Վահագնի հայկազնոյ: Իսկ Հեղինէ էր քոյր երկուորեակ եղբարցն Կաստովրի և Պողիկեւտեայ, և կին Մենելաւոսի դքսին Սպարտիոյ, համբաւեալ վասն գեղոյն 'ի մէջ Հելլենացւոց. և յափշտակեալ նախ 'ի Թէսէոսէ, և ապա 'ի Պարիսայ տրոյացւոյ, զորմէ բազում բանք լինին յառասպելայօդ պատմութեան Արգոնաւորդաց և Տրոյացւոց. և սա իսկ էր, յորոյ 'ի պատճառս եղև իլոնական պատերազմն այն տասնամեայ հանդիսացեալ առ հին վիպասանս արտաքինս:

14. Առ բարւոք իմացուած բանից հեղինակիս յառաջիկայս գլուխ ծանիր նախ, զի առ Լատինացիս և Իտալացիս մի և նոյն բառ է, որ նշանակէ զ[illegible] և attitudine. այն է ըստ նոցա habitus կամ abito, և ըստ սմին Թէոսւրոս զզօրութիւնն բաժանէ յայլ և այլ տեսակս, և ըստ կարգի ուղղէ զբանս իւր 'ի վերայ բարոյական առաքինութեան: Ձգոյն իսկ և 'ի մեր բարբառ մարթ է իմանալ. զի ձայնս attitudine ըստ ինքեան առեալ նշանակէ զարիական զօրութիւն, կամ զքաջամարտիկ շահատակութիւն, այլ 'ի բարոյական կարգի ունի զիւր մասնաւոր նշանակութիւն: Ծանիր երկրորդ զի պատմուճանի կամ զգեստու նմանեցուցանէ հեղինակն զունակական առաքինութիւնն, ոչ միայն վասն պաշաճական ինչ նմանաբանութեան, այլև յաւէտ վասն յարմարութեան համաձայն բառիս առ Իտալացիս abito, որ միօրինակ նշանակէ abitudine և veste. առեալ յայնմանէ զի զգեստն կամ ձորձն է այն ինչ, զոր ունի ոք 'ի վերայ մարմնոյն:

15. Կենտաւրոս, ստուգաբանի ցլավար. որով նշանակի հրէշ ինչ առասպելեալ՝ կիսով չափ մարդակերպարան յառաջոյ կողմանէ, և կիսով չափ իբր ցուլ ձիախառն յետոյ կողմանէ. որ և 'ի գիրս Հայոց կոչի ձիացուլ, համառօտեալ 'ի յունական բառէս Ἱπποκένταυρος՝ որ թարգմանի [illegible]: Կոչի սա 'ի մեզ նաև [illegible]. որ է անուն հրէշաւոր կենդանեաց՝ ըստ հաճոյս բանաստեղծից կերպարանեալ. որպէս և պարիկն, և համբարուն կամ իշացուլն, ծովացուլն, եզջերուաքաղն, յարալեզն, և այլն. զորս առ հասարակ կեղծիք մտացածին լինել գիտեն ամենայն մտացիք, որպէս և բազմօք ցուցանէ մերս Եզնիկ կողբացի: Իսկ թէ ուստի սկիզբն առեալ իցէ առասպելն Կենտաւրոսաց կամ ձիացլոց, աւանդեն հին պատմիչք թէ 'ի փախչել երբեմն եզանց և ցլուց,

ախոյեան զշեա նոցա այլք մնացեալք և հասեալ առ նոսա խնդրոյք վարկեցին և զարմացին յետս· իսկ չմնացինք տեղւոյն՝ որոց չև էր տեսեալ զայլ հեծեալ 'ի ձի, ընդ տեսանելն զնոսա՝ համարեցան թէ 'ի վերայ ձիոյ բուսեալ իցէ կերպարան մարդոյ. և զգուշ՝ որ առ նոքօք՝ երր խառն ընդ նոսա նշմարեալ, կարծեցին լինել նորասունդ կենդանի ձիախառն և ցլախառն։ Եւ այս առի լինել յաշխարհին Թեսաղացւոց կամ 'ի Թեսաղիա գաւառի, 'ի սահմանս Պելեւոյն քաղաքի առ Պելիոն գետով· զի աւեն նախ 'ի Թեսաղիա եղև զիւսռանձեալ զերիվարս և հեծանելոյ 'ի նոսին· փոխանակ աւելոյ թէ Թեսաղացիք քաջավարժ էին 'ի ձիավարել։ Որ զինչ և իցէ բնակիչք Թեսաղիոյ ըստ մասին կոչեցան Լապիթեայք, և ըստ մասին Կենտաւրոսք կամ ձիացուլք, զորոց ունիմք յիշել և 'ի սորին։

16. Պրաքսիտեղէս էր մեծանուն անդրիագործ յաւուրս Արտաշէսի Ոքոսի որդւոյն Պարսից, իբր 350 ամօք յառաջ քան զՔրիստոս։ Սա քաջարուեստ գտաւ 'ի դրօշել զորձոյս կճեայս. և բաց յայլոց բազմապատիկ գործոց դրօշեաց երկուս արձանս Ափրոդիտեայ· զմին զգեստաւորեալ, զոր գնեցին բնակիչք կղզւոյն Կովոյ, և զմիւսն մերկանդամ 'ի Կնիդոս Կնիդացւոց. և այս զնիդեան արձան այնչափ մեծահամբաւ գտաւ, մինչև 'ի հեռաւոր վայրաց նաւել գային 'ի Կնիդոս 'ի տեսանել զայն։ Կամեցաւ Նիկոմիդէս արքայ Բիւթանիոյ յիւր ժամանակի գնել զայն, խոստանալով բնակչաց անդւոյն վճարել զամենայն պարտս զոր ունէին նոքա առ օտարս, կամ զչափս որ յորդորէին· այլ նոքա չառին յանձն. որպէս գրէ Պլինիոս։ Այլ այս արձան Ափրոդիտեայ՝ որչափ էր ճարտար կենդանագրեալ, այնչափ աւել եղև նշաւակ անպարկեշտութեան 'ի գայթակղութիւն տեսողաց· զորմէ բազում ինչ գրեն հնախօսք, և յայս յաւէտ հայի բան Թէաւորաի 'ի յետագոյ բացատրութիւնս իւր։ Այլ է և Պրաքսիտեղէս ճարտարարուեստ արձանագործ յաւուրս մեծին Պամփէլի։ Այսպէս և Փիդիաս էր հնագոյն անդրիագործ և ընկեր յաւուրս երկայնաձեռն Արտաշէսի Պարսից արքայի, իբր 450 ամօք յառաջ քան զՔրիստոս։ Սա յաջողաձեռն գտաւ յոյժ 'ի քանդակել արձանս փղոսկրեայս պատուելի ճարտարութեամբ. յորոց միջի նշանաւոր եղև արձանն Աթենասայ աստուածուհւոյ, զոր արար յԱթէնս 'ի փղոսկրէ։ Թող զԴիոսն Ովլիմպիական նոյնպէս փղոսկրեայ, և զԱփրոդիտէ, և զայլ դիս քանդակեալս 'ի նմանէ. մինչև առել Կուինտիլիանոսի թէ Փիդիաս յաջողակ ևս էր 'ի դրօշել զդիս քան զմարդիկ։ Այսի թէ 'ի դրօշել սորա զարձանն Աթենասայ, չեշտելով զանուն իւր դրոշմել զի չէր օրէնս, ձեւացոյց հնա-



րուք իւրն 'ի զարդ զպատկեր զինւոյ իւրոյ 'ի վահանի անդ զոր առեալ էր 'ի ձեռս արձանին։ Այսծ ինն եղև նշանակ փէտէոյ անուանել զգործս ճարտարութեան, որք բազում աշխատութեամբ լինէին և ընտիր գտանէին։ Այն առ Փիդիաս էր միանգամայն և պատկերահան քաջ։

17. Կղաւդիանոս էր անուանի բանաստեղծ կամ տաղասաց 'ի լատին բարբառ, հայրենեօք Եգիպտացի, 'ի վախճան չորրորդ դարուն յաւուրս մեծին Թէոդոսի կայսեր· որոյ որդիքն Արկադէոս և Ոնորիոս եղեն կանգնել արձան 'ի յիշատակ Կղաւդիանոսի. թէպէտ հեթանոս ոք էր նա։ Են սորա բազմապատիկ ստանաւորք քաջարան և խնամոտ։ Իսկ Սիմոնիդէս էր հին բանաստեղծ Հելլենացւոց և նուագարար 'ի Կեոյ կղզւոյ, յաւուրս Կիւրոսի և Դարեհի Վշտասպեան Պարսից արքայի։ Սա առաւել յաջողակ էր 'ի յօրինել զողբական կամ զեղերերգական տաղս քան զուրախականս և զզյաղթողականս։ Եւ զի առ ձեռն էարկ գովել զՑօրին յաղթական յմրցոյն Ովլիմպիական խաղուց, ասեն որպէս թէ նախանձ էարկ Վիրգիլեայ ևս քան զեա մեծացուցանել զերագընթաց վարս Կամիլլայի յիւրում բանաստեղծութեան. իսկ թէ ո իցէ Կամիլլա, ունիս տեսանել զնին 'ի համարն (32)։ Կան և այլ բանաստեղծք Սիմոնիդէս անուամբ յետոյ ժամանակաւ։ Այլ Թեմիսոն էր անուն ուրումն երեւելի բժշկի զորմէ գրէ Պլինիոս.« Հաշակ եհար առ և Թեմիսոն բժիշկ զչասարակ զայն բայց քշախտս, իբր գտակ նորին, զիւս չարագրելով 'ի վերայ նորա »։ Սա աշակերտ էր Ասկղեպիադեսի և յետ մահու վարդապետին իւրոյ բազում ինչ 'ի գրուածոց նորա ըստ կամս ուղղագրեաց։ Իսկ նա ինքն Ասկղեպիադէս էր անուանի բժշկապետ 'ի Պրուսիոյ Բիւթանացւոց, ծաղկեալ 'ի Հռովմ յաւուրս մեծին Պոմպէի իբր 100 ամօք յառաջ քան զՔրիստոս։ Զոր ասէ զանանէ Թէոփրաստոս թէ զովեալ իցէ զԱրտեմիսիա, թուի առեալ 'ի Պլինիոսէ. այլ անդ ոչ գրի Արտեմիսիա, այլ Անթեմիս. « Անթեմիս խոտ, ասէ, մեծաւ գովութեամբ հռչակի յԱսկղեպիադեայ »։ Եւ թէպէտ կայ նաև այլ խոտ ծանօթագոյն Արտեմիսիա անուն, զոր յիշէ Պլինիոս. բայց ոչ գիտեմք թէ մնանաւոր գովութիւն տուեալ իցէ և այնմ Ասկղեպիադէս։ Այսպէս և Բանիոս էր ընտրելին որ որ բազում գովութիւնս խօսեցաւ զեղինչ, ըստ վկայելոյ Պլինիոսի ուր 'ի խօսելն 'ի վերայ եղինջ խոտոյ, ասէ. « Յօրինեաց զգովութիւն սորին Փանիաս բժիշկ »։ և յորս զպատճառս գովութեանն, թէ յորչափ ինչ իցէ օգտակարութ իցէ եղինջն։

18. Աղկիդէս է մականուն կամ ազգական անուն քա-

ջին Հերակլեայ. իբր զի Աղկիդէս և Հերակլէս է նոյն այր, որպէս Տուղղիոս և Կիկերոն. վասն որոյ և բանաստեղծք անխտիր փոխեն զերկոքանչիւր զայս անուանակոչութիւնս։ Իսկ թէ ուստի եղև Հերակլեայ կոչիլ Աղկիդէս, ոմանք համարին թէ անուն հաւու նորա էր Աղկէոս. վասն որոյ և նա Աղկիդէս ձայնի. որպէս թէ Աղկիդեան կամ Թոռն Աղկէոսի։ Իսկ այլք դնեն թէ 'ի գործոց քաջութեան առեալ իցէ զայս անուն. զի Աղկիդէս, թարգմանի զօրաւոր, հզօր, ուժեղ։

19. Արիստիդէս Թեբայեցի էր նկարիչ երևելի ժամանակակից Ապելլէսի. սա առաջին նախ քան զամենեսին ձեռնամուխ եղև նկարագրել 'ի պատկերի զկենդանական շարժմունս հոգւոյ և զկիրս մարդոյ. թէպէտ և փոքր մի գունեղ յօրինէր։ Ի նկարս սորա այն պատկեր էր առաւել 'ի համարի, յորում ձևացոյց մանուկ դիեցիկ զիմեալ 'ի ստինս մօրն առ 'ի մահ վիրաւորելոյ. ուր մայր նորա ձեռօք արգելոյր զաղյն, որպէս թէ զգուշացեալ զի մի փոխանակ կաթին զարիւն դիեցէ մանուկն։ Զայն պատկեր տեսեալ Աղեքսանդրի՝ եառ պահել ուրեք 'ի պատուի։ Իսկ թէ այն այս պատկեր իցէ, զոր յետ ժամանակաց գնեաց Ատտաղոս, և կամ այլ, չունիմ ասել զհաւաստին։ Իսկ նա ինքն Ատտաղոս էր արքայ Պերգամայ՝ ընչաւէտ յոյժ և առատաձեռն. և այնչափ բազում էին նորա մեծագին ստացք, մինչև մեծածախ և մեծաշէն իրաց Ատտաղական կոչիլ առ մատենագիրս։ Սա անզաւակ մեռեալ՝ եթող զամենայն ինչ իւր կտակաւ 'ի ժառանգութիւն Հռովմայեցւոց, իբր 200 ամաւ յառաջ քան զՔրիստոս։

20. Տիմոլէոն Կորնթացի էր սատարապետ անուանի, քաջութեամբ և առաքինութեամբ փայլեալ՝ իբր 350 ամօք նախ քան զՔրիստոս։ Խաղաց նաւօք 'ի Սիկիլիա 'ի վերայ բռնաւորին Դիոնեսիոսի կրտսերոյ. և առեալ զՍիրակուսա քաղաք՝ աքսորեաց զբռնակալն հանդերձ գործակցօք նորին 'ի Կորնթոս։ Դիմեաց ապա և 'ի վերայ Լեոնտացւոց, և ձերբակալ արարեալ զբռնաւոր նոցա սպան։ Յաղթեաց և այլոց բազմաց բռնաւորաց և զօրավարաց յայլ և այլ կողմանս, ուր ուրեք յօգնութիւն կոչէին զնա նեղեալքն 'ի բռնակալաց։ Իսկ զՍիկիլիա ողջոյն որ 'ի բազմաց հետէ հեծէր ընդ հարստահարութեամբ ինքնիշխան բռնաւորաց, գլխովին յազատութիւն դարձոյց։ Եւ ինքն յետ բազմապատիկ գործոց քաջութեան՝ նստաւ խաղաղութեամբ 'ի Սիրակուսա իբրև ռամկական ոք առանձնացեալ իւրովք ընտանեօք։ Ի մեռանել սորա կանգնեցաւ յանուն նորուն մեծաշէն մահարձան 'ի հրապարակին Սիրակուսայ. յորմէ և կոչեցաւ տեղին հրապարակ Տիմոլէոնեան։



21. Ակադեմիա՝ էր զուարճալի վայր պարտիզաց և անտառաց՝ իբր մղոնաչափ հեռի յԱթենայ. ուր ծնաւ Պղատոն, և ուր կարգեաց դպրոց, և ուսոյց փիլիսոփայական իմաստս բազմութեան աշակերտաց իւրոց. վասն որոյ և հետևողք նորա Ակադեմականք կոչեցան. և յայս անուն զուսումնարանս սովորութիւն եղև Ակադեմիա ձայնել։ Իսկ Լիկէոն կամ Լիւկիոն էր անուն Ճեմարանի՝ յորում Ճեմելով ուսուցանէր զաշակերտս նրբախօսն Արիստոտէլ աշակերտ Պղատոնի։

22. Ակատ է ակն ինչ պատուական, որ նախ 'ի Սիկիլիա ասի գտեալ առ Ակատ գետով, և անտի առեալ զանուն։ Էր առ նախնիս 'ի մեծ յարգի, զի համարիւր ցածուցանել զխռովութիւն օդոց, և մեղմել զհոսանս բռնութեան գետոց։ Արդ ասի թէ Պիւռոս թագաւոր Եպիրոսայ, այն որ մղեաց պատերազմ ընդ Հռովմայեցիս իբր 300 ամաւ յառաջ քան զՔրիստոս, ունէր զմի յականց աստի, այսինքն ական մի, յորում 'ի բնէ ձևացեալ էին ուրուական պատկերք ինն մուսայից. որք համարէին առ Հելլենացիս չաստուածուհիք բանաստեղծութեան և իմաստութեան և այլ և այլ ազատական արուեստից հանդերձ իւրեանց նշանակօք, ընդ որս և Ապողոն աստուածն երաժշտութեան՝ հանդերձ քնարաւ իւրով։ Զայն ակն օրինակ 'ի մէջ առնու Թեաւերոս նմանեցուցանելով գլխոյ, յորում հաւաքեալ իցեն բազմազգիմի իմաստութիւնք և մակացութիւնք։

23. Փաղերէոս, որ և Դեմետրիոս Փաղերեւս կոչեցեալ՝ էր մեծանուն հռետոր և փիլիսոփոս Ճեմական աշակերտ Թէոփրաստոսի, յաւուրս Աղեքսանդրի Մակեդոնացւոյ և Պտղոմէոսի առաջնոյ արքային Եգիպտացւոց։ Սա վասն պճնութեան իւրոյ ընտրեցաւ իշխանապետ Աթենացւոց ամս տասն, և արար բազում բարեկարգութիւնս. վասն որոյ և յանուն նորա կանգնեցին Աթենացիք արձանս պղնձիս թուով 360։ իբր ըստ աւուրց տարւոյն. այլ զկնի այսր փառաւորութեան, մինչև լցեալ էին այնչափ աւուրք՝ որչափ էր թիւ արձանացն, կործանեցին արք յաչաղկոտք զարձանս նորա. և զՓաղերէոս արտաքսեալ արարին. և նա դիմեալ անկաւ յԵգիպտոս առ Պտղոմէոս։ Սա եղև ըստ ասելոյ ոմանց, յորդորիչ Պտղոմէոսի Փիղադելփեայ շինել զգրատունն մեծ յԱղեքսանդրիա, և հաւաքել անդ ընտիր ընտիր մատեանս. ընդ որս և զաստուածաշունչն Եբրայեցւոց տալ թարգմանել 'ի Յունական բարբառ 'ի ձեռն եօթանասուն և երկու ծերոց։ Գրեաց սա և պէսպէս պիտանութիւնս. յորոց մնացուածք ինչ հռետորականք կան մինչև ցայսօր։ Յիշէ զսա Եւսեբիոս 'ի Քրոնիկոնն։

24. Յառաջինկոյ բանոգ հայր առելն Եւսեբի 'ի քրոնիկոն կանոնի, 'ի ժամանակին՝ յորում մարգարէանային Դանիէլ և Եզեկիէլ « Սողոն եդ օրէնս և քաղաքաց զԴրակոնին »: Քանզի Դրակոն, որ թարգմանի վիշապ, առաջին օրէնսդիր Աթենացւոց՝ անագորոյն մտօք փճիւ հատեալ էր՝ զամենայն մեղս միօրինակ պատժել չարաչար, մինչև զդդմերգս անգործս կամ զչնչին ինչ իրաց գողացողս անհնարին տանջանօք պատուհասել, նա և գլխատել տանել. վասն որոյ և ասած էր առ Հելլենացիս, թէ Դրակոն զօրէնս իւր ոչ մելանաւ, այլ արեամբ արձանագրեաց: Իսկ Սողոն այր իմաստուն մին յեօթն իմաստասիրաց, նոր օրէնսդիր եղեալ Աթենացւոց, մերժեաց զամենայն օրինադրութիւնս Դրակոնի, բաց յայնց որք հայէին առ արիւնահեղս:

---

## Ծանօթութիւնք յերկրորդ գիրս:

25. Մարգիտէս ասի լինել իշխանաւոր ոք յաւուրս կործանման Տրովադայ՝ եկեալ յօգնութիւն Պրիամոսի յանագան ժամու, այր ապուշ մտօք և իրք անշնչոյ. մինչև անգէտ իսկ էր օրինաց ամուսնութեան, զոր խարանօք իւն ձգեալ առեն կին նորա 'ի զուգաւորութիւն: Այլ որպէս կարծի ոչ գոյր ոք այսպիսի անուամբ. այլ այս եղև գիւտ բանաստեղծական. իբր զի ըստ ասելոյ ումանց անունս Մարգիտէս ծագի 'ի բառից մի էրգօն, այսինքն ոչ գործ, այն է անգործ և անգէտ յամենայնի: Եւ 'ի սոյն անուն վերագրեցաւ բանաստեղծութիւն ինչ հոմերական. ուր ասի վասն Մարգիտեայ.

Զոր ոչ եդին դիք վերնական,
Գործել ինչ գործ 'ի մէջ մարդկան.
Ոչ մշակել զերկիր անդամ,
Զանել արուեստ իմաստութեան:

26. Հերմէս ըստ բանաստեղծիցն դիցաբանութեան էր որդի Դիոսի ծնեալ 'ի Մայեայ, և համարիւր դեսպան և թարգման աստուածոց, իշխանաւ ամենայն գիտութեանց. գտիչ ազգի ազգի արուեստից, և միանգամայն առատած պերճախօսութեան և վաճառականութեան: Թող զայն զի անունք բազումք թուէին Հերմէս կամ Մերկուրիոս: Իսկ ասացուածն այն Թէոդորոսի վասն արձանին Հերմէսի է բան



Պիւթագորայ փիլիսոփայի որ ասէր. « Զէ օրէն յինչ և իցէ փայտէ դրօշել զարձան Հերմէսի ». այլ թէ զօրպիսի ազնիւ փայտ կամ նիւթ այլ ընտրելին վասն արձանի նորա, չէ մեզ յայտ:

27. Աքիլլէս կամ Աքիւլէս է ծանուցեալ անուն առն քաջի առ Հելլենացիս և արքային Թեսաղացւոց յաւուրս Տրովական պատերազմին. զորմէ բազմօրինակ քաջութիւնս գրեն հնախօսք ազգի ազգի յաւելուածովք. մինչև աւարժել Խորենացւոյն զի մերս Զարմայր հայկազն հզօր 'ի հանդէս արութեան, որ անկաւ յայնմ մարտի, չիցէ սղաննեալ յոյլմէ, այլ 'ի քաջ բազկէն Աքիլլեայ. « Ի քաջացն հելլենացւոց վիրաւորեալ մեռանի, այլ կամիմ յԱքիլլեայ, և մի յայլ ումեքէ 'ի քաջացն »: Որպէս և զԱլորադդատ քաջ արքայ Հայոց արշակունի՝ համեմատէ նմին Աքիլլեայ. « Եւ անդ էր տեսանել նոր զոմն Աքիւղես՝ ընդ Սկամանդրոս գետ վազելով »: Իսկ մեկնիչն Գրիգորի Աստուածաբանի Նոննոս յաւելու 'ի մէջ բերել և զստուգաբանութիւն անուանն Աքիլլեայ, յասելն ըստ հին թարգմանութեան. « Ծնեալ Աքիւլես սնանէր առ Քերոն. որով վարեալ լինէր անուցողան համանգամայն և վարդապետաւ ազնուութեան. և էր այս Քերոն Իպպոկենդաւրոս (ձիայր) ընակեալ յայրս ինչ քարանձաւացն 'ի Թեսաղեայ. որդ առեալ Քերոն զայս Աքիւլես, և նուաճեալ յեաոյ իւր 'ի վերայ ձիեղէն կողմանն. սնուցանելով զնա ոչ կաթամբ կամ հացիւ, այլ ուղղովք առիւծուց և այլոց կենդանեաց. վասն որոյ Աքիւլես անուանեցաւ, իբր ոչ Քիղոսի անեալ. քանզի Քիղոս ասորական 'ի կերակուրս է »: Այլ վասն Քերոնի ձիայլու տես 'ի ստորև 'ի համարն (34): Իսկ Ոդիսեւս էր այլ ոք երևելի ժամանակակից Աքիլլեայ, այր ճարտարամիտ և խորագէտ. որ և եղև թագաւոր Իթակեայ և Դուլքիոյ կղզեաց. և վասն բազմադիմի գործոց իւրոց առ տրոյական մարտիւ համարեցաւ 'ի կարգս դիւցազանց. յորոյ վերայ բանաստեղծական առասպելք ուրոյն գիրս ստանաւոր յօրինեաց Հոմերոս: Զսա ևս յիշէ Խորենացին: Ոսնիմք և մեք յիշատակել 'ի կարգի ինչ ինչ 'ի գործոց ընծայելոց սմա:

28. Գեղեցիկ է օրինակս, բայց զի մի խրթնասցի առ ումանս յընթերցողաց, համառօտ թուի և ևս պարզել այսպէս. Որ խաղայ քուէիւք ցանկայ յաջողութեան քուէից. բայց թէ և անյաջող գտցէն, նա հնարի ըստ կարի այնպէս զեռեղել զքարինս զի մարթասցի շահել զխաղն, որպէս և շահի իսկ յոլովակի: Իսկ իմաստ օրինակիս յայն հայի թէ նաև 'ի բնական ձիրս թէ և նուաղեալ գացի ոք, չպարտի լքանել, այլ ջանալ

լինել առաքինութեամբ զպսակսն. որպէս և տեսանեմք իսկ, զի ժրաջանք թէպէտև տկարք կամ տգէտք, առաւել յառաջադէմ գտանին յառաքինութիւնս, քան զայնոսիկ որք ունին ձիրս բնաւորս, այլ հեղգասէրք են և անփոյթ: Զայն ահա արկէ և նախակարգեալ օրինակն անդաստանի. որ թէ և չիցէ քաջ արգասաւոր, 'ի ձեռն հանապազորդ մշակութեան բերէ արդիւնս շահեկանս քան զայլ արգաւանդագոյն տեղիս, ուր նուազ լինի մշակութիւն:

29. Կադմոս էր որդի Ագենովրայ, ըստ նախնեացն եգիպտացի և իւքն փիւնիկեցի. որ և թագաւորեաց 'ի կողմանս Փիւնիկեցւոց յերկրին Ասորւոց. և աստ անցեալ 'ի Յունաստան շինեաց զքաղաքն Թեբաս 'ի Բիովտիա գաւառի, և անդ եղ զաթոռ իւր: Սա, ասեն, առեալ զուսաքնին նշանագիրս Յունաց, բերեալ ընդ իւր ալփաբետս ինչ 'ի Փիւնիկեայ՝ թուով վեշտասան՝ որովք առ ժամանակ մի վարեցան Հելլենք. և ապա այլք ևս յաւելին հետ զհետէ քանի մի տառս: Գործակից էր Կադմոսի և եղբայր նորա Փիւնիքս. այլ անուն Կադմոսի նշանաւոր եղև յոյժ: Էր սա ասեն առ ժամանակօք Մովսէսի փոքր մի զկնի, և կամ ըստ ոմանց փոքր ինչ յառաջ: Նուերիոս դնէ յաւուրս Յեսուայ և Գոդոնիէլի:

30. Անաքսիմանդր Միլեացի էր փիլիսոփայ ոմն աշակերտ և գործակից Թաղեսի առ ժամանակօք Կիւրոսի մեծի. եղև քաջ աստեղաբաշխ, և եգիտ պէսպէս գիտութիւնս լուսաւորաց և պարունակաց երկնից. սա ասի լինել առաջին հնարող ժամացուցի արեգական. եգիտ և զսկզբունս աշխարհագրութեան և գծագրեաց աշխարհացոյցս:

31. Փոխանակ անուան Դիպենոսի, առ որ հայի բան հեղինակիս, յետագական ապագրութեան վրիպակաւ միոյ տառի դնի Դիպեսոս. այլ չէք այնպիսի անուամբ անդրիագործ ոք. թող զայլ և այլ անձինս Դիփիլոս կոչեցեալս, յորոց մին էր յամրագործ ճարտարապետ շինուածոց. մինչև յառակս եղև զյուշիկ գործօղս կոչել Յամր քան զԴիփիլոս: Արդ Դիպենոս Կրետացի, զորմէ մեր բանքս են, որ և գրի Դիպինոս կամ Դիպոյենոս, է այն զոր յիշատակէ Պլինիոս. « Ի գրօշել զկըռճեայս նախ քան զամենեսին ծաղկեցան Դիպենոս և Սկիւղիս ծնեալք 'ի Կրետէ, մինչդեռ տակաւին տիրէին Մարք՝ յառաջ քան զսկիզբն թագաւորելոյ Կիւրոսի 'ի Պարս, այս է իբր 'ի Ծ Ողոմպիադի: Սոքա դէմ եդեալ գնացին յերկիրն Սիկիոնացւոց, որ ընդ բազում ժամանակս եղև տեղի գործարանաց ամենայն մետաղաց. գըրօշեալս քանի մի դից եդին հրապարակաւ 'ի Սիկիոնի. այլ մինչև էր լրումն առնել այնց



գործոց, արուեստաւորքն հարստահարութիւն ինչ կրեալ խոյս ետուն առ Եաողացիսն: Իսկ և իսկ զօրացաւ 'ի Սիկիոնիսն սով և անպտղութիւն և աղէտք անհնարինք: Ի խնդիր լինել հնարից դեղոյ՝ Ապողոնն Պիւթեան ետ պատասխանի խոստանալով հասանել նոցա յօգնութիւն՝ եթէ Դիպենոս և Սկիւղիս 'ի գլուխ հանցեն զգրօշեալս դիցն: Վասն որոյ և բազում վարձուք և աղաչանօք կոչեցին զնոսա 'ի կատարումն գործոյն. և էին գրօշեալքն այն Ապողոնի, Արտեմիդեայ, Հերակլեայ և Աթենասայ որ յետոյ շանթահար եղև »: Եւ ահա 'ի սոսին հայի նաև աւանդեալն 'ի Խորենացւոյն, յասելն վասն Արտաշէսի Պարթևի Հայոց արքայի. « Գտեալ յԱսիա պղնձաձոյլ ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպողոնի տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր: Զոր առեալ քրմապետացն որ էին յազգէ Վահեւնեաց, զԱպողոնին և զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաւիր. իսկ զՀերակլեայն զառնապատկերն, որ արարեալ էր 'ի Սկիւղեայ և 'ի Դիպինաէ Կրետացւոյ, զՎահագն իւրեանց վարկանելով նախնի՝ կանգնեցին 'ի Տարօն յիւրեանց սեպհական գիւղն յԱշտիշատ յետ մահուանն Արտաշէսի »: Իսկ Պալլաս է անուն աստուածուհւոյ պատերազմաց. որ ըստ առասպելաց ծնաւ յուղղոյ Դիոսի առանց մօր, և զի ջախջախմամբ գլխոյ Դիոսի հնար եղև հանել զնա 'ի դուրս, 'ի վերայ անուանն նորա սոսի ծնեալ Պալլաս զինավառեալ անձամբ. նմին իրի և նկարիւր զինեալ և վահանաւոր, որ և վահանաւ իւրով վանեաց, ասեն, զոմանս 'ի մարդկանէ 'ի քարինս: Համարակօրէն նոյն համարի սա ընդ Աթենասայ աստուածուհւոյ գիտութեան, որ 'ի Լատինացւոց կոչի Միներվա. զի սա իսկն է, ասեն, ծնեալն յուղղոյ Դիոսի 'ի նշանակ իմաստութեան. վասն որոյ և ոմանք զՄիներվայդ անուանադրութեանն՝ սպառնացող, այլք աղդարարող, և կէսք նուազեցուցիչ կամ ակերպացուցիչ ջլաց, վասն մաշելոյ ուսմանց զգիտնականս: Իսկ Պալլաս կոչեցաւ, ասեն, կամ վասն սպանանելոյ նորա զերևելի ոմն հսկայ Պալլաս անուն, և կամ զի ծագի 'ի յունական բայէս πάλλειν, այսինքն ձօձել կամ կշռել զնիզակն. վասն որոյ և հասարակօրէն նիզակ 'ի ձեռին նկարի՝ իբր պատրաստեալ 'ի ձգել 'ի վերայ թշնամեաց:

32. Կամիլլէ էր դուստր Մետաբոսի արքային Վոլսկաց 'ի սահմանս Իտալիոյ առ ժամանակօք տրոյական պատերազմին. զոր ընդ ծնանելն նուիրեցին Արտեմեայ աստուածուհւոյ ընկեցեալ յանտառս. ուր 'ի կաթանց էրիվարաց սնաւ, ասեն. և 'ի մանկութենէ անտի իւրոյ ուսեալ վարժեցաւ 'ի ձիընթացս և 'ի մարտադրութիւնս, և առաւել ևս յերագասն վազս. մինչև ըստ բանաստեղծութեանն Վիրգիլիոսի երագաթռիչ

լինել քան զթեւս հողմոյ, և անթաց ոտիւք անցանել ընդ երեսս ծովու։ Եկեալ ապա 'ի տուն հայրենի սիրեաց զպարկեշտութիւն, և ոչ կամեցաւ լինել առն իբր նուիրեալ կուսան ոք․ զորմէ երկար ճառէ Վիրգիլիոս յԵնէականին։ Յօդեն զնմանէ և այլք ազգի ազգի առասպելս, և հասարակօրէն յօրինակ բերեն երագութեան և պարկեշտութեան։ Այլ ընդհանրապէս անունս Կամիլլոս յարականն, և Կամիլլա յիգականն, էր առասական յորջորջումն ընծայեալ այնոցիկ որք 'ի մանկութենէ կարգեալ լինէին 'ի սպաս դից․ վասն որոյ և այս անուն նշանակէր արբանեակ կամ պաշտօնեայ աստուածոց։

33․ Յայս իմաստ հայի և պարզէ իսկ զառաջիկայս տեղի այն խոնարհական ասացուած սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ (կե)․ «Ատտիկեցիս ըստ վատթարութեան, այլ ոչ ըստ բարեբաստութեան»։ Իբր զի Ատտիկեցիք որ և Աթենացիք, ունէին բարեբաստութիւն ըստ իմաստութեան մասին, և միանգամայն վատթարութիւն ըստ մոլեկան վարուց։

34․ Ագասիկլէս էր մեծանուն և իմաստուն արքայ Սպարտացւոց իբր 650 ամօք յառաջ քան զՔրիստոս, առ ժամանակօք Մանասէի արքային Յուդայ։ Արդ 'ի դէմս սորա յառաջ բերեն վիպասանք քանի մի իմաստուն ասացուածս, զի իմաստնագոյն գտաւ 'ի մէջ Լակեդեմոնացւոց՝ որոց եղանակ խօսից արդէն էր հռչակեալ իբր վճռական և իմաստալից յաւէտ 'ի Լակոնիա գաւառի, յորմէ և կոչին Լակոնացիք։ Հռչակաւոր է այն առած Ագասիկլեայ առ Պլուտարքեայ․ Զիք այլ ամրութիւն աներկեան 'ի հաստատութիւն թագաւորութեան՝ քան վարել թագաւորի առ քաղաքացիս իբրև հայր առ որդիս։ Իսկ զոր գրէ Թէոդորոս ասել Ագասիկլեայ 'ի մանկութեան՝ այլք այսպէս 'ի մէջ բերեն․ 'ի հնչել համբաւոյ Փիլոփանեայ սոփեստի 'ի մէջ Յունաց, ասաց ոմն ցԱգասիկլէս արքայ Լակեդեմոնացւոց․ Քանզի այդչափ մեծ է քո սէր առ ուսումն գիտութեանց, զարմանամ զի ոչ ունիս առ քեզ զայնպիսի այր մեծանուն։ Առ որ պատասխանի տուեալ նորա իմաստութեամբ ասէ․ Նոցա կամիմ աշակերտ լինել, որոց եղէ ես որդի։ Յայտ արարեալ թէ շատ է ումեք եթէ հետեւող գտանիցի հայրենի առաքինութեանց։

35․ Բելլերոփոն էր թագաւոր Եփիւրոսի առ ժամանակօք դատաւորացն Իսրայէլի․ որ իբրև անկաւ 'ի թագաւորութենէ, կայր յարքունիս Պրիտոյ արքային Արգիւացւոց․ և 'ի լինել չարախօսութեան որպէս թէ Բելլերոփոն բռնադատեալ իցէ զկին արքային, առաքեաց զնա թագաւորն առ աներ իւր Յոբատ արքայ Լիկիացւոց․ և նա յղեաց զԲելլերոփոնա 'ի պատերազմ, զի մեռցի 'ի նոսա։ Այլ իբրև յաղթող գտաւ նա, զի էր այր քաջ և վարժ 'ի ձիավարել, առաքեցաւ դարձեալ 'ի վերայ խուժադուժ բնակչաց լերինն Քիմեռայ որ 'ի նմին Լիկիա գաւառի․ բայց նա և անդ զօրացաւ, և լցոյց զլեառն զայն շինութեամբ և նոր բնակութեամբ․ որոյ վասն սիրելի եղև Յոբատայ, և փեսայացեալ նմա կարգեցաւ յաջորդ թագաւորութեան։ Արդ քանզի լեառն Քիմեռայ հուր ծնչէր 'ի գագաթանէ հանգոյն Եռնային Սիկիլիոյ, և 'ի լանջակողմանս նորա առիւծք որջացեալ կային, որպէս և յայլ կողմն քաղք և քօշք վայրի, և 'ի ստորոտն զեռունք և վիշապք, առասպելաբանք զՔիմեռայն ասացին լինել հրէշ ինչ հրաշունչ և բազմագլխի, որոյ գլուխք և լանջք առիւծու իցեն, որովայն այծի կամ քաղի և տուտն վիշապի․ ընդդէմ որոյ կռուեալ իցէ Բելլերոփոն հեծեալ 'ի Պեգասոս ձի թեւաւոր, և սպանեալ զհրէշն զայն։ Սոյն այս անգղ Քիմեռա կոչեցաւ 'ի հայումս Եղջերաքաղ։ Այլ 'ի թարգմանութիւնս պահի և բառս քիմեռ կամ քեմեռ․ որպէս է տեսանել 'ի բանս Նոննոսի, ուր այս առասպել համառօտի այսպէս․ «Է լեառն յորում երևեցաւ գազան ինչ, որոյ առաջին կողմն էր առիւծու, և վերջինն վիշապի․ և 'ի մէջն էր քեմեռ (քաղ կամ այծ)․ յորմէ հուր ելեալ ապականէր զպատահեալսն․ իսկ յետոյ եկեալ Բելլերոփոնտէս ունելով զերիվարն Պեգասոս սպան զնա»։ Նոյնն ընդարձակ ևս գրի այլուր 'ի նոյն գիրս, հանդերձ յիշատակութեամբ Պախախս անուն արքային Լիւկացւոց։

36․ Վասն Եպիկուրոսի յաւուրց անտի նորա մինչև ցայժմ հակառակութիւն է, թէ արդեօք յինչ միտս ասաց զերջանկութիւն մարդոյ լինել 'ի հեշտութեան կամ 'ի բերկրալից հաճութեան․ Տիմոկրատէս որ էր յեպիկուրեան դպրոցէ, որոշեալ զանձն յայնմ աղանդոյ գրով և բանիւ եպերեաց զԵպիկուրոս և զվարդապետութիւն նորա․ և զի եղեն ոմանք 'ի մէջ Եպիկուրեանց խառնակեաց և անկարգ վարուք, յանցանք նոցին առ ուսուցիչ իւրեանց վերագրեցաւ։ Բայց սակայն ելին և բազում մատենագիրք՝ որք 'ի ձեռն գրոց Եպիկուրոսի, ուր ընտիր ընտիր խրատք գտանին առ պարկեշտ և առաքինի քաղաքավարութիւն, միանգամայն և 'ի խստակեաց վարս նորին հայելով, բազմապատիկ պատճառօք ցուցին թէ բանք նորա ոչ հայէին 'ի մարմնապաշտութիւն, այլ 'ի ներքին հանդարտութիւն կրից և յանդորրութիւն հոգւոյ յինչ և իցէ վիճակս տառապագինս, որպէս և Թէսաւրոս զնոյն պնդէ։ Գեղեցիկ կշտամբէ Սենեկա զայնոսիկ որք պատճառս առնուին անառակութեան իւրեանց զվարդապետութիւն Եպիկուրոսի, յասելն 'ի գիրս որ յաղ․ երջանիկ կե-

նայ. (ԳԼ. ԺԲ). « Ապաքէն դոքա ոչ 'ի սադրելոյ Եպիկուրեայ, ասէ, անառակին, այլ անձամբ զանձինս մատնեալ 'ի ձեռս ախտից զանառակութիւն իւրեանց 'ի գիրկս իմաստասիրութեան ղուղակեն, և անդ ուրեմն համախուռն ընթանան, ուր լսենն զգոլ հեշտութեան: Զառնուն երբէք 'ի միտ թէ հեշտութիւնն այն Եպիկուրեայ, որպէս ինձ թուի, զխորդ պարկեշտ է և չորակեր. այլ 'ի լոկ անուն անդր դիմեալ ապաւինին, խնդրելով հեշտախտութեան իւրեանց պաշտպանութիւն ինչ և քօղարկութիւն: Որով և զոր ունէին ինչ մի բարի 'ի չարիս անդ, կորուսանեն, զամօթն ասեմ 'ի մեղանչելոյ: Զի գովեն զայն ինչ ընդ որ պարտ էր ամաչել, և անպատկառ ընդ ախտս պարծին »:

37. Զայս առաւել սերափոխութեան 'ի մէջ բերէ Պլինիոս յասելն. « Լիկինիոս Մոկիանոս աւանդեաց, թէ տեսեալ իցէ ինքն յԱրգիացւոց երկրի զԱրեսկոս ոմն (այր), որում անուն լեալ էր յառաջն Արեսկուսա (կին). և թէ յորժամ տուաւ 'ի կնութիւն, նոյնժամայն մօրուս և այրականութիւն ստացաւ, և էառ ևս իւր կին: Սմին նման և 'ի Զմիւռնա տեսեալ իցէ նորա զմանուկ մի »: Եւ թէպէտ նա ինքն Պլինիոս ոչ անհաւան ցուցանէ զինքն այսպիսի կեղծեաց, այլ մանաւանդ և այլովք օրինակօք ջանայ հնարաւոր ցուցանել, այլ մեզ աւելորդ թուի զայնպիսի իրաց խնդիր 'ի մէջ առնուլ: Շատ լիցի իմանալ թէ Թեսաւրոս զայսպիսի օրինակ իբր անհնարաւոր 'ի մէջ առնու՝ խօսելով 'ի ձև չափազանցական, 'ի կամել իւրում ցուցանել թէ իբր անհնարին իմն է ունակացելոյն 'ի մոլութեան յանկարծակի միով և եթ ներգործութեամբ փոխել յունակութիւն առաքինութեան:

38. Եթէ ճշմարիտ իցէ և եթէ սուտ այս պատմութիւն քրմապետի առ Նախինի Հռովմայեցիս, 'ի դէպ գայ օրինակս առ 'ի խրատ լսողաց. զի թէ հեթանոսք այնչափ մեծ յարգ ունէին առ կրօնս իւրեանց, և ամենայն իրօք պարտ վարկանէին պաշտօնէից կռոց անարատ վարուք քաղաքավարել, զինչ պարտ իցէ ասել վասն ծառայից ճշմարտին Աստուծոյ, և մանաւանդ վասն անմիջական պաշտօնէից նորա որք մատչին յահաւոր խորհուրդս աստուածայինս: Զայս յայն սակս յուշ արարաք, զի մի անպատուղ լիցի ընթերցումն այսպիսի օրինակաց 'ի սմին մատենի. և մի վայրապար ինչ կարծեսցի յառաջ բերեալ 'ի հեղինակէս, որ զամենայնն խորհրդով դնէ 'ի խրատ ընթերցողաց:

39. Լուտոս է անուն բանջարոյ կամ ծառոյ, որոյ տեսակ ինչ ասի լինել յԵգիպտոս բուսեալ 'ի Նեղոս գետ, և 'ի



կիր առեալ 'ի Նախնեաց անտի Եգիպտացւոց 'ի պաշտամունս գիցս: Եւ այլ տեսակ յԱփրիկէ դառնարմատ և քաղցրապտուղ: Արդ ասի 'ի բանաստեղծութիւնս պատմութեանն Տրոյական պատերազմի, թէ յորժամ Ոդիսևս դիւցազն 'ի նաւել իւրում հանդերձ ընկերօք բռնութեամբ հողմոց անկաւ 'ի ծովափն Ափրիկոյ, տեսեալ ուղեկցաց նորա զբոյս լուտոսայ 'ի դաւառն Լուտոսակերաց, և ճաշակեալ զքաղցրահամ պտուղ նորա՝ ոչ ևս յօժարէին դառնալ 'ի հայրենիս իւրեանց. չէ արժան մեզ, ասեն, մեկնել յերկրէ աստի որ բերէ այսպիսի ազնիւ բոյս, և զրկել 'ի վայելից լուտոսայ. մինչև հազիւ ուրեմն մարթացաւ Ոդիսևս հաւանեցուցանել զնոսա գնալ զճանապարհ իւրեանց: Եւ ահա յայս հայի այն բան Խորենացւոյն յաշխարհագրութեան. « Լինի յԱփրիկէ բանջար ինչ լուտոս անուն. զոր թէ ուտէ ոք, զհայրենիսն մոռանայ »: Իսկ թէ ուստի անուն առեալ իցէ բոյս այս, յաւելուն առասպելարկուք թէ՝ Լոտիդէ մին 'ի յաւերժահարսանց փախուցեալ յերեսաց Պրիապոսի, իբրև ետես թէ չկարէ զերծանիլ փախստեամբ, աղաչեաց զդիս զի կերպարանափոխ արասցեն զնա. և նոյնժամայն փոխեցաւ 'ի ծառ. և այնպէս հետամուտն անցեալ առ նովաւ չկարաց գտանել զնա, և այն է, ասեն, լուտոս ծառաբոյսն:

40. Կուինդոս Մուտիոս մականուանեալն Սկեւոլա, էր ազնուական ոմն հռովմայեցի այր կորովի և սրտեայ. որոյ առեալ հրաման 'ի ծերակուտէն միաբանեաց ընդ իւր զօրս զօրաւորս դաւել զթշնամիս. և նախ ինքնին առանձին գնաց 'ի բանակն Պորսենայ արքայի որ պաշարեալ էր զՀռովմայեցիս, եդեալ 'ի մտի մեռանել վասն հայրենեաց՝ միայն թէ մեռուսցէ զթշնամին հայրենեաց: Եւ զի ոչ ճանաչէր զՊորսենաս, տեսեալ զդպրապետն արքունի համարեցաւ թէ նա ինքն թագաւորն իցէ, և անդէն եհար և սատակեաց զնա: Եւ իբրև կալան զնա և ածին առաջի թագաւորին, աներկիւղ խոստովանեղև թէ ես այս անուն հռովմայեցի եմ թշնամի ձեր, եկեալ 'ի սպանանել զթշնամին մեր, և մի կարծէք, ասէ, թէ ես միայնակ յայս յօժարեցայ, զի են և այլք 'ի քաջաց որք սովին օրինակաւ պատրաստեալ կան դնել զանձինս 'ի մահ: Յայնժամ հրաման ետ Պորսենաս բորբոքել խարոյկ, և սպառնայր զՄուտիոս բացայայտագոյնս 'ի յայտ ածել զդաւադրութիւն իւր և զընկերացն. ապա թէ ոչ, ասէ, կենդանւոյն 'ի հուր այրեսցիս: Իսկ Մուտիոս ձգեաց վաղվաղակի զաջ բազուկ իւր 'ի խարոյկ անդր, և ետ այրել չարաչար 'ի բոց հրոյն, ես ինքնին վրէժ խնդրեցից, ասէ, յաջոյ իմմէ որ վրիպեցաւ 'ի հարկանել զայլ ոք փոխան արքայի. և ցուցից թէ ոչ ինչ տանջանք կարեն ահ արկանել յիս: Սքանչացեալ արքայի ընդ անպար-

տելի արխութիւն ամեն, հրաման եառ արձակել զնա յազատութիւն։ Յայնժամ ապա և Մուտիոս փոխարէն կամելով հատուցանել շնորհի նորա՝ պատմեաց անպատրուակ, թէ երեքհարիւր կորովի երիտասարդք յիմում խորհրդի են դաւել զանձն քո։ Որոց վասն զահի հարեալ Պորսենայ յետս եկաց 'ի պաշարմանէ. և առեալ պատանդս դարձաւ 'ի տեղի իւր։ Աստի Մուտիոս Սկեւոլա անուն եառ, այսին, որպէս թէ ձախաձեռնեայ, իբր զի անպիտանացաւ աջ նորա և այնուհետև միայն ձախու ձեռամբն վարէր։

41. Ի խաղալ Ենէասայ յետ Տրոյական պատերազմին յարեւմուտս, եառ ընդ իւր զՊալլաս Արկադացի զորդի Եւանդրի պատանի կայտառ և զօրաւոր. և ունէր զնա իբրև զմի յիւրոց մտերիմ սիրելեաց։ Եւ եղև զի յեղանելն 'ի մարտ պատերազմի ընդդէմ Տուռնոսի իշխանին Ռուտուլեաց, սպանաւ Պալլաս 'ի Տուռնոսէ։ Ընդ այս կարի յոյժ տրտմեցաւ Ենէաս, և կոծ առեալ 'ի վերայ պատանւոյն առաքեաց զմարմին նորա առ հայր նորին։ Եւ ինքն իբրև միւսանգամ ել 'ի պատերազմ, յարձակեցաւ գազանաբար 'ի վերայ Տուռնոսի և սատակեաց անխնայ։ Վերգիլիոս բանաստեղծ 'ի վախճան Ենէական գրոց իւրոց գեղեցիկ նկարագրէ թէ զիարդ Տուռնոս 'ի պարտութիւն մատնեալ յորժամ աղաչէր զԵնէաս խնայել յինքն. այլ նա ոչ իւիք յանձն էառ. զի դառնացեալ էր ոգի նորա վասն սպանանելոյ Տուռնոսի զՊալլաս պատանին զիւր սիրելի։

42. Ոդիսևս յետ մեկնելոյ 'ի դաւառէն Լուսատակերաց՝ զոր 'ի վերայ յիշեցաք, նաւեաց 'ի Սիկիլիա. և 'ի հասանել իւրում անդր, բանս եդեալ ընդ ուղեկիցս իւր փութով դառնալ առ նաւս, ել 'ի ցամաք հանդերձ երկոտասան ընկերօք. այլ յակամայս յամեաց անդ վասն այսպիսի պատճառանաց՝ ըստ առասպելաց։ Էր անդ, ասեն, Պողիփեմոս որդի Պոսիդոնի՝ Կիկլոպ կամ Կիկլոպս կոչեցեալ, այն է հրէշ գագաթակնեայ բնակեալ յայրի ուրեք ուր էին գառք խաշանց, զի էր խաշնարած. առ սա գնաց Ոդիսևս իւրովքն հանդերձ ակն ունելով գտանել 'ի նմանէ մարդասիրութիւն. այլ նա անդէն և անդ գիշատեալ եկեր զերկուս յընկերաց նորա, և յետ սակաւուց զայլ ևս երկուս։ Եւ թողեալ զՈդիսևս մնացեալ ընկերօքն յայրի անդ իբր 'ի կերակուր այլոյ պահու, թաւալեցոյց վէմ մի ահագին 'ի դուռն այրին. և ինքն մեկնեցաւ 'ի բաց ընդ ջոկս ոչխարաց։ Յայնժամ Ոդիսևսայ հնարս խորհեալ հանել զվրէժ Կիկլոպայ, և ազատել զանձն և զօրս ընդ նմա 'ի ձեռաց վիթխարին այնորիկ, պատրաստեաց գինի ազնիւ զոր բերեալ էր ընդ իւր, ընծայել նմա։ Եւ իբրև դարձաւ Կիկ-



լոպ, և մտեալ 'ի ներքս փակեաց անդրէն քարամբ զմուտս այրին, մատոյց նմա Ոդիսևս զգինին աղաչելով զնա խնայել յինքն և յընկերս իւր։ Իսկ նա արբեալ զայն ասէ. Խնայեմ 'ի քեզ, եթէ միւսանգամ տացես ինձ 'ի գինւոյ այտի, և իբրև էարբ երկիցս և երիցս, եհարց ցՈդիսևս, զի՞նչ անուն է քո. և նա ասէ, Ոտիս (որ յունարէն նշանակէ ոչ ոք)։ Յայնժամ ասէ ցնա Կիկլոպ. փոխանակ զի ետուր ինձ այսպիսի ըմպելի ազնիւ, ահա 'ի մեծարանս երախտեաց քոց յետ ամենեցուն պահեմ զքեզ ինձ 'ի կերակուր։ Այլ յետ սակաւուց թմրեալ Կիկլոպայ 'ի գինւոյն զոր էարբ, ննջէ 'ի քուն թանձրութեան։ Զոր տեսեալ Ոդիսևսայ փութացաւ հրացոյց զփայտ ինչ, և մխեաց ուժգին յաչս Կիկլոպայ և անդէն կուրացոյց։ Եւ 'ի ձայնել նորա աղաղակաւ առ իւրսն որ արտաքոյ այրին, հասանել յօգնութիւն. եկեալ ոմանց առ դուռն որ փակեալն էր, հարցանէին ցԿիկլոպ, թէ ո՞ վնասեաց քեզ. և նա ասէ. Ոտիս։ Եւ նոցա պատրեալ 'ի ձայնէ անտի, համարեցան թէ ոչ ուրուք վնասեալ է նմա, այլ ախտ ինչ բնական խօթութեան պատահեալ իցէ, և ասեն. Զդիւցազն հայր քո կարդա քեզ յօգնութիւն. և թողեալ զնա 'ի բաց գնացին։ Յետ այսորիկ սթափեալ Կիկլոպայ երաց զդուռն այրին, զի հօտք ոչխարաց որ կային 'ի ներքս, ելցեն արտաքս. այլ յելանել նոցա նստեալ էր ինքն առ դրօքն, և շօշափէր ձեռօք զմի մի 'ի նոցանէ. զի մի և Ոդիսևանք ընդ նոցա զերծցին։ Յայնժամ Ոդիսևս և ընկերք նորա մտին 'ի ներքոյ խաշանց, կամ արկին զանձամբք զմորթս ոչխարաց. և այնպէս պատրեալ զԿիկլոպ՝ ճողոպրեցան 'ի ձեռաց նորա, և ելեալ գնացին 'ի տեղիս իւրեանց։ Այս ամենայն է առեղծուածութիւն բանաստեղծից, զոր ոմանք մեկնաբանեն այսպէս. Պողիփեմոս էր այր աչալուրջ և զգաստ, և վասն այսորիկ ասացաւ ունել զաչս 'ի գագաթան կամ 'ի ճակատն մերձ յուղեղն, զի խորագիտութեամբ իւրով քաջատես երևէր յամենայնի, և զի Ոդիսևս խորագիտագոյն ևս գտաւ և խոհական հնարիւք ինչ յաղթեաց նմա, յայս սակս կեղծեցին բանաստեղծք թէ նա կուրացոյց զԿիկլոպ։ Այլ վասն Կիկլոպայց բնակչաց Սիկիլիոյ ունիմք յիշել և 'ի սորա 'ի համարն 69։ Զսոյն զայս առասպել Կիկլոպայ այսպէս համառօտէ Նոննոս մեկնիչն Աստուածաբանի. «Կիկլոպսս այս ասի դիւցազն [illegible] և հովիւ, որ բնակեալ էր 'ի Սիկիլիայ, և ունէր մի ակն։ Արդ Ոդեսևս յետ Տրովական պատերազմին մոլորեալ ընկերօքն իւրովք եկն 'ի Սիկիլիա. և Կիկլոպեայ ըմբռնեալ զնոսա եկեր նախ զընկերսն Ոդեսևայ. իսկ զՈդեսևս պահեաց յետոյ ուտել. այլ ոչ կարաց. քանզի զերծաւ արբեցուցեալ զԿիկլոպսն և կուրացուցեալ, և ընդ աստուց խոյի միոյ գաղտաբար կախեալ զանձն իւր ել։ Ասէ Գրիգորիոս (Աստուածա-

[illegible]

43. [illegible]

44. [illegible]



[illegible]

45. [illegible]

46. Եղերերգութիւնք անուն որ և ողբերգութիւն կոչի, առեալ լինի 'ի մէնջ փոխանակ ողբերգական տաղից կամ խաղուց, յորս նկարագրին աղէտալի դիպուածք, այն է բառ յունաց տրաղէդիա ասացեալ որ թարգմանի նոխազերգութիւն. զի առաջ էին 'ի նուիրումն նոխազ պարգևել ողբերգակաց, այսինքն այսպիսի երգարանից կամ խաղարկուաց։ Այլք ասեն թէ նուագեալ լինէր 'ի պատիւ Բաքոսի աստուածոյն խաղողոյ և գինւոյ, որում զոհէին զնոխազ՝ որ ապականիչ է այգեաց։

47. Ոմանք որոշեն զՊիտակոս օրէնսդիր Հելլենացւոց կրտսեր կոչեցեալ, 'ի Պիտակոսէ Միտիլենացւոյ որ մին էր յեօթն իմաստասիրաց, իսկ ոմանք նոյնացուցանեն. և 'ի մէջ այլեայլ խրատուց և օրինադրութեանց նորա գտանեն և զայս, թէ սահմանեաց զի առաւել ծանունս պատժեսցին զինչ և իցէ յանցանք արբելոց յանցգաւորից. զի կրկին է ասէր նոցա մեղն, մի արբեցութիւն, և միւս ևս գործն չարաչար զոր առնեն վասն արբեալ գոլոյ։ Գոյր և այլ ևս Պիտակոս անուն իմաստակ, որ առ ցուցանելոյ զծառայութիւն մտաց իւրոց յօրինեաց նկարել 'ի վերայ երկանաքարի։

48. Կղիտոս այր քաջ և իմաստուն էր եղբայր Հելլանիկեայ դայեկին Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, և սիրելի յոյժ նորա։ Սա առ Գրանիկ գետով տեսեալ զԱղեքսանդր զգլխոյ կառուց վաշտաւ իւրով ծածկեաց զգլուխ նորա. և զձեռն Հռոսակայ որ ձգեալ էր 'ի հարկանել զԱղեքսանդր սուսերահար կտրեաց 'ի բաց։ Եւ յայնմ հետէ առաւել ևս յարգելու էր Աղեքսանդրի 'ի վերայ Կղիտոսի իբրև աղաւնի իւրոյ։ Եւ եղև զի 'ի կոչունս ուրեք ընդ գինի մտեալ ընդ արքային սկսաւ Կղիտոս գովել զգործս և զպատերազմունս Փիլիպպոսի քան զԱղեքսանդրի, և յօժարել զնա լինել նմանող հօր իւրում։ Ընդ որ ծանրացուցեալ լեալ արքային՝ եհար զնա նիզակաւ, զոր ունէր մօտ առ իւր, և անդէն սատակեաց։ Այլ յորժամ սթափեցաւ 'ի գինւոյն, այնչափ սորջացաւ Աղեքսանդր ընդ կորուստ այնպիսի առն, մինչև կամէր նովին նիզակաւ հարկանել և զանձն իւր, թէ չէր արգելեալ 'ի մերձակայից, և ապա եօրեաց անկաւ 'ի սուգ թախծագին փակեալ յառանձնութեան, եղեալ 'ի մահ անձնասպան լինելոյ։ Եւ թէպէտ բարեկամք արքային մխիթարել կամէին զնա ասելով, թէ խրատեաց սպանաւ Կղիտոս, այլ նորա զիտելով զսուտ փաղաքշանս նոցա առաւել ևս 'ի խոր խոցէր, այլ 'ի փոխարէն առ փոքր մի գիրութիւն սրտի իւրոյ հրամայեաց ևս մեծաշուք փառաց թաղել զԿղիտոս։ Միւս այլ կանխագոյն ազդարարութիւն Կղիտոսի առ Աղեքսանդր յիշատակեալ 'ի յետագայ բանս Թէսաւրոսի, այն էր զի 'ի հաճել ոմանց 'ի աստուածապատիւ զմիտս Աղեքսանդրի, որպէս թէ չիցէ նա որդի Փիլիպպոսի, այլ ծնունդ ուրումն յաստուածոց, որ 'ի կերպարանս Փիլիպպեայ մտեալ իցէ առ Ողիմպիա մայր Աղեքսանդրի, Կղիտոս մեղմով իմն ազդեաց արքային թէ այդ հրապոյրք ստութեան դառնան 'ի նախատինս հօր քո և քոյդ անձին զլխովին։



49. Թեմիստոկլէս էր մեծանուն և քաջ զօրավար Աթենացւոց, որոյ գործք յայտնի են 'ի պատմութիւնս պատերազմացն Յունաց ընդ Քսերքսեայ Պարսից արքայի։ Այլ թէ ուրու՞ որդի իցէ Նէոկլէսոս, կամ այլոյ ուրուք, ոչ գիտեմք։ Յիշեն ոմանք Նէոկլէս անուն զնա որդի Անտիփոնոսի. այլ ոչ ինչ գործ արժանի 'ի մէջ բերեն։ Ի դէպ գայ իմաստիւ բանից Թէսաւրոսի այն որ առի յոմանց զԹեմիստոկլեայ թէ սովոր էր ասել. «Զանցանեն զամէնին երիվարք՝ անսանձ քուռակք, եթէ քաջ կրթանիցին սանձեսցին». ցուցանելով այսու զանձն իւր զյառաջադիմութիւն. զի յառաջն էր պատանի ցոփակեաց, և ապա 'ի զօրավարութեան առաքինի հանդիսացաւ։

50. Կամի ասել թէ Պարիս որդի Պրիամոսի Տրովացւոց յափշտակելով զՀեղինէ զկին Մենելաւոսի արքային Սպարտացւոց, նովին իսկ և ինքն յափշտակեալ էր 'ի նմանէ, այսինքն ընդունելով և գերեալ զգլխովին 'ի սէր նորա. և այս եղև պատճառ տասնամեայ պատերազմին և աւերածոյն Տրովադայ. զի Յոյնք խնդրէին զՀեղինէ, և Պարիս չառնոյր յանձն տալ։

51. Կիրկէ ըստ աւանդելոյ էր դուստր արքային Կողքիսայ կոչեցելոյ հինգերորդ արեգակն, և Պերսիդայ յաւերժահարսին, առ ժամանակս Տրովական պատերազմին։ Սա, ասեն, այնչափ հմուտ գոլով յարուեստ դեղութեան և կախարդական դեղապատութեան, մինչև յարուցանել զբաժակ իւր ունելով՝ դարձուցանէր զնա 'ի կերպարանս անասնոց։ Ամուսնացեալ ընդ արքային Սարմատացւոց՝ դեղամահ սատակեաց զնա. և իբրև սկսաւ խորհական անազորոյն օրէնս, հալածեցաւ 'ի բնակչաց տեղւոյն, և փախուցեալ անկաւ յԻտալիա. և արար իւր իշխանս բնակութեան 'ի Լատեան լեառն երկրին Վոլսկեաց 'ի տեղի խաստաւէտ. ուր ընթանայ առ նա բազումք 'ի հեռաւոր վայրաց վասն համբաւոյ կախարդութեանց նորա. և զի զբազումս աշակերտեալ յանխնայ մոլորութիւն իւր և յանդգնութիւն զգլխովին դարձոյց զմիտս նոցա, բանք եղեն յաւանդելս թէ զամենս փոխարկեաց 'ի չորքոտանիս,

զմին 'ի Թաշտոն և 'ի Ճկաճոն, և այլն. զոր բազում մի պէսպէս մեկնութեանն. Աւ, ասեն, և զննեցեր Արմենակ նախ զազգս 'ի կեանս ժողովոյ, և ապա անուանեն եւ նոյն զնախնեացն կերպարանն՝ 'ի չորրորդ նորին Արմենակ, որում և կին լինել ծնեալ նմա զՎերկերեան. [illegible] Արեգ [illegible] Աշոտոյ, կոչեցաւ յանուն նորա Արեգեան. այն է ասեն՝ որ այժմ կոչի Զէյթունէերոն որ [illegible] քաղաք.

# Ծանօթութիւնք յերրորդ գիրս.

52. Կովկաս կոչի 'ի զաւակէ Թորգոմայ և Տիրեթեայ՝ անցեալն 'ի մանկութենէ եր ապառաժ մայր, որպես և մարմնով ակութ. մինչ մայր նորա 'ի պահպանութեան զոր իւրն ածեալ և ածեալ, ասէր. Ձիւրդ նման է զա որդւոյ [illegible] Կովկասայ. Աւ [illegible] 'ի [illegible], երկեր [illegible] մայր և [illegible] 'ի [illegible] և 'ի [illegible], այլ [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], մինչ [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible].

53. Արգաս, այն է Կամենիկոս [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]



54. Աստղագէտ [illegible] 'ի [illegible] 18, [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible].

55. Պաղեստինոս էր երեւելի [illegible] [illegible] [illegible] Ասորեստանեայց, [illegible] [illegible] [illegible] [illegible], իբր 400 ամաց յառաջ քան զՔրիստոս. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

56. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

բեւացք մեծ եղեն յԱթովպիա․ որպէս յիշէ Եւսեբիոս 'ի ժամանակագրութեան աւելով 'ի Պղատոնէ ։

57․ Վասն Նեմեսեայ աստուածուհւոյ ունիս տեսանել 'ի տարբ․ 'ի համարն 210 ։

58․ Դեդալոս էր անուանի անդրիագործ Աթենացի, որ գրօշեաց, ասեն, արձանս շարժաւնս․ մինչև բաս բանաստեղծից թէ չէր վնաս կապեալ, ապա աւելով փախչէին 'ի տեղւոյէն, որպէս և այլ մեքենայս ճարտարապետաւ ։ Եւ զի կասկածէր սա թէ թոռն իւր Տալոս անուանի լիցի քան զինքն 'ի գիւտս ճարտարութեան, հնարիւք սպան զնա․ և ինքն աւելով զորդի իւր զԻկարոս՝ փախստեայ անկաւ 'ի կղզին Կրետայ առ Մինոս արքայ ։ Անդ շինեաց լաբիւրինթոս երեւելի կամ բանս անելանելի․ և իբրև կամէր մեկնիլ 'ի կղզւոյ անտի, արգել զնա Մինոս յայն բանս անել համբերել որդւովն ։ Յայնժամ բաս աւանդելոց նոր հնարս խորհեցաւ Դեդալոս․ շինեաց թևս մեծամեծս վասն իւր և վասն որդւոյն, և մածուցեալ մամով փարժ փորձեաց թռչելոյ․ և այնպէս թեւաւորեալ՝ վերացաւ յօդս, դիմել յԻտալիա, պատուէր տուեալ որդւոյն միջասահման բարձրութեամբ միշտ թռչել ։ Իսկ Իկարոս ոչ պահեալ զխրատ հօրն վերացաւ 'ի բարձրունս քան զահման օդոյ․ և այրեալ զթևս իւր 'ի կամարն հրոյ՝ թևաթափ անկաւ 'ի ջուրս ծովու, 'ի տեղին որ յանուն նորա առ կոչեցեալ Իկարեան ծով ։ Այլ Դեդալոս եհաս անվնաս մինչև 'ի Կալաբրիա․ և յետ ժամանակաց դարձ արար, ասեն, 'ի կողմանս Սիկիլիոյ և անդ սպանաւ ։ Զայս աւանդել գրեթէ առհասարակ մեկնեն վասն փախչելոյ Դեդալոսի 'ի Կրետէ առագաստեալ նաւաւք, և չկարելոյ այլոց համանել զհետ նորա թիավարութեամբ․ որպէս և զարձանս նորա շարժականս իմանան վասն արուեստագործ գրօշուածոցն․ իբր զի ինչ ինչ նորագիւտ ճարտարեաց սա յայնմ արուեստի քան զառաջինսն ։ Յիշէ զայսոսիկ Եւսեբիոս 'ի քրոնիկոն կանոնի յաւուրս Դեդէոնի դատաւորի, յասելն․ « Դեդալոսյ իրքն․ որ կարծեցուցանէր, թէ պատկերս շարժաւնս առնիցէ․ քանզի նախ զատս պատկերաց 'ի միմեանց զատանէր․ պատմէ Պաղեփատոս, և թէ որպէս համբերել որդւովն իւրով Իկարոսիւ զնաւէ հալեալ փախեաւ 'ի Մինովէ․ և վասն չգտանելոյ պատասխան փախստեանն համարեցաւ թռանել » ։ Թէևաւրոս անգղիական կղզի կոչէ զԿրետէ վասն արգելեալ գոլոյ անդ Դեդալոսի, կամ վասն լաբիւրինթոսին որ անդ շինեցաւ 'ի նմանէ ։ Իսկ զԻտալիա կամ զԿալաբրիա կոչէ երկիր խաղաղական, կամ լաւ խաղաղական բառին բարեկամական, զի անդ զերծաւ․ եթէ ոչ՝ գուցէ այլ ինչ աստուածաբանութիւն գիտէ ։



59․ Մանլիոս պատանի Հռովմայեցի էր որդի Մանլիոսի Տիտոսի հիւպատոսի Տորկուատոս կոչեցելոյ ։ Սորա գնացեալ 'ի պատերազմ՝ թէպէտ և յաղթեաց քաջութեամբ, այլ քան զի արտաքոյ հրամանաց հօրն եղև ճակատամարտ նորա, տապարահար սպանաւ 'ի հօրէ իւրմէ ։ Զայս յիշէ և Եւսեբիոս իբր 335 ամօք յառաջ քան զՔրիստոս, յասելն․ « Հռովմայեցւոց հիւպատոսն զորդի իւր տաշեաց տապարաւ, թէ ընդէր առանց նորա կամաց ճակատ եդ և յաղթեաց » ։

60․ Սա ինքն է Տորկուատոս Մանլիոս հայրն նախասացեալ Մանլիոսի պատանւոյն ։ Սորա սա 'ի մանկութեան թէպէտ և երևէր աշխոյժ բարուք և եռայր 'ի սրտի, այլ անյաջող էր յոյժ 'ի քաղաքական կենցաղավարութիւնս, վասն որոյ և հայր նորին կոչեցեալն Մանլիոս Լուկիոս չէր նմա թոյլ կալ 'ի Հռովմ քաղաքի, այլ յղեաց զնա յագարակս իւր արածել զհաւս 'ի գաւառի ։ Եւ եղև զի Պոմպոնիոս տրիբունն թշնամացեալ ընդ հայր մանկանն, խորհեցաւ 'ի մահ մատնել զնա ազգի ազգի ամբաստանութեամբք, յորոց մի էր և անգթութիւն նորա առ որդին ։ Զայն իմացեալ մանկանն եկն գիշերայն 'ի քաղաքն․ և մտեալ 'ի տուն Պոմպոնիոսի, և գտեալ զնա դեռ յանկողնի, մերկեաց զսուսեր և ահացոյց զայրն․ մինչև եառ 'ի նմանէ երդումն չառնել ինչ չար հօր իւրում․ մի լիցի, ասէ, վասն իմ վնաս ինչ նմա՝ որ ետ ինձ զկեանս, և այնպէս ազատեաց զհայր իւր ։ Եւ իբրև յարբունս եհաս նա՝ եղև այր զօրաւոր, և արար բազում քաջութիւնս 'ի հանդէս մարտի․ և 'ի միում նուագի մենամարտեալ ընդ գաղղիացւոյ ումեմն հզօրի սպան զնա, և եառ զանի մանեակ 'ի պարանոցէ նորա, յորմէ և ընկալաւ զանունն Տորկուատոս, այն է մանեկաւոր կամ մանեկաւորեալ ։ Սա բազում անգամ կարգեցաւ հիւպատոս, և բազմապատիկ մրցանօք յաղթահարեաց զթշնամիս Հռովմայեցւոց․ այլ 'ի վերջոյ ինքնակամ հրաժարեաց 'ի պատուոյ հիւպատոսութեան ասելով թէ չկարեմ առնել մաքեկան բարուց ժողովրդեան․ որպէս և ժողովուրդն իսկ զայն կամէր՝ զի և նոքա չկարէին առնել խիստ բարուց նորա ։

61․ Հաչակեալ է առ ամենեսին անուն մեծանուն զօրավարի Հռովմայեցւոց Շիպիոն կամ Սկիպիոն կոչեցելոյ, այն որ բազմագիմի քաջութիւնք հանդիսացաւ ընդդէմ Աննիբաղայ քաջի զօրավարին Կարքեդոնացւոց․ և յաղթական գտեալ ընդդէմ նորա և նորայոյն այսինքն Ափրիկեցւոց, եառ մականուն Ափրիկանոս․ բաս որում յիշէ և Նոննոս մեկնիչն Աստուածաբանի, յասելն․ « Այլև Սկեպիոն զօրավար էր Հռոմայեցւոց . . . յաղթեաց և սոյ Կարքեդոնական մարտին, որ և 'ի յաղթու-

թենէն ազգին՝ ընկալեալ մականուանութիւն. վասն զի կոչեցաւ Սկեպիոն Ափրիկեցի. և Ափրիկեցիք Կարքեդոնացիք են»։ Արդ սա ինքն Սկիպիոն թէպէտև ՚ի մանկութենէ անտի առաւ գասու, այլ ինքն զգեցաւ զզօրութիւն արութեան յերկնասարգական անս՝ եցոյց յանձին զգօնելի օրինակս պարկեշտութեան։ Այլ առաւել մեծապէս համբաւեցաւ առ Հռովմայեցիս այն առանձին գործ Սկիպիոնի, զի յաւնուլ իւրում զԿարքեդոն քաղաք, անսեալ ՚ի մէջ գերելոց աղջկանց օրիորդ մի նշանաւոր գեղով, զորմէ չիջէին ամենայն զըբ բանակին, ՚ի ցոյց համեստութեան իւրոյ հրաման ետ արձակել զնա և դարձուցանել պատուով ՚ի տեղի իւր, որպէս և զայլ մեծազգի տիկնայս հանդերձ որդւովք ազատաց։

62. Այս Կադմոս այն է որ ասի լինել առաջին գտիչ յունական նշանագրաց, որպէս յիշատակեցաք վերագոյնդ ՚ի համարն 29, որդւոյ Թեբոյ՝ որդի Ագենովրայ արքային Փիւնիկեցւոց առ ժամանակօք Մովսէսի կամ դատաւորացն Եբրայեցւոց։ Զամենէ բազմապիսի առասպելս յօդին առ հնախօսս յորոց միջի է և առաջիկայս օրինակ. զի ՚ի միում նուագի յորժամ կամէր, ասեն, զոհ մատուցանել Դիոսի, յղեաց զընկերս իւր ՚ի մերձակայ անտառ բերել անտի ջուր. իսկ վիշապ օձն որ կայր մօտ աղբերն, սատակեաց զնոսա։ Ի վերայ հասեալ ապա Կադմոս սպան զօձն. և լուաւ ձայն որ ասէր առ նա, թէ հանդերձեալ ես դու յօձ փոխարկիլ։ Եւ մինչդեռ ՚ի վարանս էր նա, եկն եկաց, ասեն, առ նմա Պաղլաս աստուածուհին զինուորութեան. և հրամայեաց Կադմոսի ցանել յերկիր զատամունս օձին սպանելոյ. և նոյնժամայն ՚ի վեր բուսան ՚ի հողոյ անտի բազմութիւնք երիտասարդաց քաջ սպառազինեաց. որոց ՚ի դէն ամբարտակեալ մարտ եդին ընդ միմեանս. և անդէն սատակեցին զիրեարս, և մնացին միայն հինգ ոմանք ՚ի նոցանէ. ուք հրամանաւ Պաղլասայ ՚ի համբոյր հաշտութեան եկեալ միաբանեցան ընդ Կադմոսի. և շինեցին նմա քաղաք Թագաւորութեան եօթնադրունն ՚ի Բիովտիա գաւառին Եղլադացւոց, որ կոչեցաւ Թեբաս կամ Թեբէ յանուն Թեբոյ քաղաքին Եգիպտացւոց, ուստի էին նախնիքն Կադմոսի։ Զայս ամենայն այսպէս համառօտէ Նոննոս. «Ի Թեբաս Բիովտացւոց սաւ թէ Կադմոս և կամ այլ ոմն՝ առեալ զԱռեփիկոս վիշապին զատամունս սերմանեաց ՚ի յերկիր. և վերաբուսեալք եղեն այր սպառազինեալք. այլ եղեն վերաբուսեալք ՚ի բարձիցն մինչև ՚ի վեր. նոյնպէս կալով մարտնչէին ընդ միմեանս և ընդ այլս»։

63. Ինկարագրել հեղինակին զգեհագործութիւն հեթանոսական՝ պարտ է քաջ դիտել զկախման նորին, որ ոչ յայն



հայի թէ դից զոհէր Օգոստոս, այլ թէ զգործ կրօնի առնէր, ոմին իրի և իրր գոլութեամբ առաջի գնէ. իրր զի լսա ինքեան էր գովելի եթէ առ Ճշմարիտն Աստուած ուղղեալ լինէր։ Վասն որոյ և խորհուրդ սղանութեանն զոր մերենայէր Կինա ՚ի գործ դնել յայնժամ պաշտօն զոհից, լինէր առաւել չարագոյն, և առաւելուր զյանցանս նորա. զի մեծապէս անարգութիւն էր կրօնի թէպէտ և սուտ կրօնի, ՚ի դէպ եկեալ խնասութեանն առածի. «Զի ոչ եթէ երգմնելեալն զօրութիւն, այլ մեղուցեալն զատաստան հանէր ընդ գլուխ զանիրաւոց զյանցանս». Իմաստ. գլ. 31։

---

## Ծանօթութիւնք ՚ի չորրորդ գիրս։

64. Որպէս վերագոյնդ յիշեցաք ՚ի թիւն 31, Պաղլաս համարիւր աստուածուհի պատերազմաց, և Աթենաս աստուածուհի գիտութեանց. մանաւանդ թէ մի և նոյն կայր ընծայիւր քաջութիւն Պաղլաս անուամբ, և իմաստութիւն Աթենաս անուամբ. վասն որոյ և առեալ ՚ի գործ ածին այս անուանք փոխանակ պատերազմական արութեան և մակացական գիտութեան։ Այլ զնախընթաց նկարագրութիւնս հեղինակիս ՚ի վերայ արիութեան ազգի ազգի նմանութեամբ և խորհրդածութեամբ, ոչ ինչ հարկ համարեցաք մի առ մի բացատրել աստանօր. զի յայտ է ընթերցողաց խմանալ թէ արիութիւնն առ արդարս երևի մեծ քան զխոհեմութիւն և քան զօրութիւն. այլ ըստ սոսկ անուանց թագուհի իւրք նախադասեալ են սոքա քան զնա, որպէս և ցուցանէ նա ինքն Թէոդորոս ՚ի բազում գլխոց։

65. Պաւլոգացիք կամ Պափլեայք էին ժողովուրդք միոյ մասին Լիբիայ, առեալ զանուն ՚ի Պափլոսէ ումեմնէ արքայէն իւրեանց։ Արդ որպէս յիշէ Պլինիոս և այլք ՚ի հնախօսից, ՚ի մարմինս Պափլացւոց ասիւր լինել բնածին թոյն ինչ սաստկից օձի, կամ հաւ զօրաւոր թմրեցուցիչ թունաւոր գեանց։ Եւ էր առ նոսա սովորութիւն, ընդ ծնանիլ զմանկունս առաջի արկանել զժողովրդոյն օձի, առ ՚ի փորձ առնուլ հաւատարմութեան ընդկեցոյ. քանզի ասէին թէ ՚ի խառնածին մանկանց ոչ ինչ խորշի օձն. իսկ յերեւաց հարազատածին աղայոց ասպնաղի և կամ թմրեալ ընդարմանայ. մինչև համարձակ բուռն հարկանել նոցա զօձն, և ինչ ոչ վնասել։ Եւ Պլուտարքոսդ թէ Կատոնն զօրավար յանցանել իւրում

ընդ ամայի և ընդ օձաբնակ տեղիս Լիբիոյ, տանէր ընդ իւր սպասաւորս Պսիւղացիս· որք դարման մատուցանէին ընդդէմ խայթուածոց օձից, երբեմն բերանովք իւրեանց ծծելով ըզթոյնս նոցին, և երբեմն թովչութեամբ թափելով զզօրութիւն նոցա։

66. Ամփիարիոն էր իշխան Թեբայեցի որդի Ալկէոսի· սորա կին եղև Ալկմենէ մայր երկուորեակ եղբարց Հերակլեսի և Իփիկլեսի· որք որպէս համամայր էին նոյնպէս և համահայր, բայց մայր նոցա յայտնի, և հայր նոցին անյայտ· վասն խառն անկողնոյ մօրն իւրեանց։ Իսկ բանաստեղծք ըստ կամս որոշելով զերսն՝ հայր Հերակլեայ համարեցան զԱրամազդ զհայր աստուածոց, և Իփիկլեայ զԱմփիարիոն։ Ըստ որում յիշէ և Նոննոս յասելն զՀերակլէ· « Եւ սա ասի որդի գոլ Արամազդայ· քանզի Ջեւս Արամազդ նմանեալ Ամփիւդրիոնի շաղաշարի ընդ Ալկմինեայ, և ծնանի 'ի նմանէ զհերակլէս »։ Եւ դարձեալ ասէ այլուր· « Ուժգին Ճառս հրատարակեալ լինի զՀերակլեայ, իբր թէ որդի է Արամազդայ և Ալկմենեայ· և դիցազն գոլով զերկոտասան նահատակութիւնսն կատարեաց »։ Այլ այս գիւտ հեթանոսական 'ի նախանձու դառնայր քաջին Հերակլեայ· զի թէպէտ իբր 'ի պատուոյ սակս ընծայի նմա աստուածորդի լինել, բայց ընդ նմին կրէ և զանուն աղջկորդւոյ· իսկ Իփիկլէս միայն որդի հօր իւրոյ հարազատի Ամփիարիոնի։

67. Պրիամոս, որպէս յայտ է, էր արքայ Տրոյացւոց· յորոյ աւուրս եղև առումն Տրովադայ կամ Իղիոնի։ Զսա սպան Պիւռոս, որ էր որդի քաջին Աքիլլեսի, և եղև առաջինն որ եմուտ յառասպելեալ ձին փայտակերտ, և 'ի գիշերին յորում առաւ քաղաքն, արար կոտորածս մեծամեծս, և անխնայ խողխողեաց զարքայն Պրիամոս 'ի մէհենի։ Արդ Թէոսաւրոս ըստ օրինակի բանաստեղծից նկարագրէ իբրև արիական գործ զանգործունեայ քաջութիւն Պրիամոսի 'ի յետին պահու անդ, յորում յոգիս ապաստան եղեալ մրցեցաւ ընդ Պիւռոսի· յաղթեցաւ ասէ, այլ եցոյց զարութիւն իւր նաև 'ի ծերութեան անդ։

68. Կեղտացիք կամ Կեղտք, որ և Գաղատացիք կոչէին, որք կորովիք և յոխորտք, էին 'ի նախնումն մասն ինչ Փռանկաց, որք երբեմն Կոմատեան Գաղղիացիք ասացան· և հուսկ յետոյ Լուգդոնացիք անուանեցան։

69. Կիկղոպայք էին առասպելեալ հսկայք գագաթականեայք, այսինքն են նախնի ժողովուրդք Սիկիլիոյ առ Ետնայ



լերամբ· զորոյ ասացին բանաստեղծք ունել մի եւեթ ակն մեծաբոլոր 'ի գագաթան կամ 'ի ճակատու· զի և անուն նոցա յունարէն κύκλωψ ստուգաբանի բոլորակն կամ շրջանաւոր։ Ասի թէ սոքա նախ գտին զպղնձագործութիւն 'ի Սիկիլիա· յորմէ և ել առասպելն այն թէ Կիկղոպայք էին դարբինք արբանեակք Հեփեստեայ, որ հրոյ դտակ կոչի· և կայծակունս շինէին Արամազդայ որոյ գործ համարիւր շանթառաք լինել կամ արձակել զկայծակունս յերկնից 'ի յերկիր· և զի 'ի ձեռս Կիկղոպայց էր պատրաստել նմա զկայծակունս կամ զշանթս, իշխէին սպառնալ նաև նմին իսկ շանթառաք Արամազդայ։ Յայս հայի բան Կաստորի ժամանակագրի, զոր 'ի մէջ բերէ Եւսեբիոս յառաջին մասին քրոնիկոն գրոց· « Բելոս էր Ասորեստանեայց թագաւոր, և առ նովաւ Կիկղոպայքն՝ փայլատակունս և շանթս հրացանս Արամազդայ մատուցելոյ ընդ Տիտանացիսն նպաստ 'ի կռիւ լինէին »։ Եւ Նոննոս մեկնիչն Աստուածաբանի ասէ· « Ի Սիկիլիա կղզւոջն առ լեռնակողմամբքն բնակել, ասեն, Կիկղոպեանքն հովուական կենցաղով կեալ ճաշաւորեալք, և մանաւանդ բռնութեամբ· և ասին մարդահկերք գոլ սոքա· որք և զընկերս Ոդիսեայ կերան· այլ երիս ասացեալ լինին 'ի սոցունց առ տուն անկեալքն դարբինք արուեստիւ· որք 'ի ձեռն իւրեանց արուեստին զորոտումն և զփայլատակումն Արամազդայ կազմեցին, և ասին առ տուն անկեալքն գոլ այսոքիկ, Բռոնտէս, Ստերոպէս, Արգէս։ Կիկղոպեանք անուանէին որպէս Իսովդոս (Հեսիոդոս) ասէ, զի մի ակն ունէին բոլորեալք· և որպէս այլք ասեն զի 'ի բոլոր կղզւոջ բնակէին »։ Եւ Կիկերոն հեգնելով իմն ասէ· « Ոչ կարծեմ զքեզ յայն կարծիս լինել, որպէս թէ Կիկղոպայք յԵտնայ շանթ կազմեալ իցեն Դիոսի· քանզի արժան էր զարմանալ թէ զիա՞րդ Դիոս այնչափ կայծակունս արձակէ, երբ մի շանթ իցէ նորա »։

70. Հիդրայ կամ Հիւդրաս, է օձ ջրային։ Այլ ըստ առասպելաց՝ Հիդրայ լեռնեան ասի լինել վիշապ օձ եօթնգլխեան կամ բազմագլխի 'ի լճ՞ն Լեռնայ· ընդ որում իբրև կամեցաւ կռուիլ Աղկիդէս՝ այն ինքն է քաջն Հերակլէս, անկարանայր սատակել զնա· զի ընդ հատանել զմի 'ի գլխոց նորա՝ կրկին բուսանէր, և կամ փոխանակ միոյ եօթն ևս այլ գլուխք 'ի վեր երևէին· մինչև եհաս յօգնութիւն Հերակլեայ եղբօրորդի նորա Յօլաոս որդի Իփիկլեայ· որոյ առեալ, ասեն, ջահ մեծ իսկ և իսկ կիզոյր բոցով նորին զանեղի գլխոցն հատելոց սրով Հերակլեայ, զի մի ևս բուսցի նոր գլուխ· և այնպէս 'ի ձեռն սրոյ և հրոյ կարողացան երկոքին կորուսանել զՀիդրայն։ Զոր այսպէս 'ի մէջ բերէ Նոննոս։ « Առասպելեալ եղև գազան ինչ 'ի Լեռնէ (անուն լճի՝) գոլով յիսուն-

գլխի, և այլք ասեն ինն գլխի, զգլուխն օձի ցուցանելով. զոր եկեալ Հերակլէս հանդերձ Հեղաւիւ մանկամբ իւրով սպան: Այլ առասպելաբանի և այլ, թէ 'ի հատանել միոյ գլխոյն' 'ի տեղւոջ անդ երկու գլուխք բուսանէին, որպէս զի լինել գազանին հարիւրագլխի. այլ Հիւղոս իմացեալ այսպիսի ինչ, հուր բերեալ և զհատեալ գլխոյն տեղիս այրէր հրբոցիւ. այնպէս կարացին սպանանել զնա»: Զայս առասպել թէպէտ և պէսպէս մեկնաբանեն ոմանք, այլ գուցէ յարմարագոյնս գրեցին այլք 'ի վիպասանից թէ Հիդրայ էր անուն լճի 'ի Լեռնայ գաւառն Արգիացւոց. որոյ առատացեալ և բաժանեալ յայլևայլ առաջս հեղեղեալ ապականէր զշրջակայ տեղիս. և եթէ ուրեք փակէին զանցս' այլուր յորդեալ տարածանէր. զոր տեսեալ Հերակլեայ փոխեաց զճանապարհ գետոցն, որք 'ի լիճ անդր իջանէին, և այնպէս ցամաքեցոյց զլիճն, կամ գէթ չափաւոր արար զջուր նորա: Իսկ ըստ առնելոյ Պղատոնի, զոր և յիշէ Եւսեբիոս 'ի քրոնիկոն կանոնի, Հիդրայ էր սոփեստուհի ոմն խորագէտ. զորոյ զհարցուածս դժուարանային լուծանել արք իմաստունք. զի 'ի պատասխանել միոյ 'ի բանից նորա' նա այլ ևս բազմապատիկ ընդդիմութիւնս հանէր: Որպէս զխորդ և լցէ, յառաջս եղև ասել, զՀիդրայն հաջանէ դա, երբ 'ի ջանալ ուրուք բառնալ զդժուարութիւնս առաջիկայ գործոյ' այլ նորանոր դժուարութիւնք ընդառաջ ելանեն: Ցայսպիսի առասպելաց առեալ եդին 'ի կարգս համաստեղութեանց զՀիդրայն կամ զօձն ջրային: Իսկ խեցգետինն սպանեալ 'ի Հերակլէ յիշատակի 'ի կարգի նախասացեալ առասպելաց. քանզի ասի թէ 'ի վտանգել Հիդրայի յերեսաց Հերակլեայ, Հերա աստուածուհի օգնականութեան հրաման ետ խեցգետնի միում մեծի հասանել յօգնութիւն Հիդրայի, և ապրեցուցանել զնա 'ի ձեռաց Հերակլեայ: Եւ եղև իբրև դիմեաց խեցգետինն 'ի լճէ անտի, և եխած զոտս նորա, աճապարեաց Հերակլէս և օգնականութեամբ Յովլասի եհար և ջախջախեաց զխեցգետինն. և ապա սպան և զՀիդրայն: Իսկ Հերա վերառեալ զխեցգետինն դասեաց 'ի կարգս կենդանակերպից, որպէս և զՀիդրայն ըստ առասպելաց: Արդ քանզի Հերակլէս 'ի մարտնչելն ընդդէմ երկուց գազանացս կարօտացաւ գործակցութեան Յովլասի, վասն որոյ և առած եղև ասել. «Եւ ոչ Հերակլէս ընդդէմ երկուց կարող եղև առանձինն մենամարտել»:

71. Ասկանիոս էր որդի Ենէասայ Տրովադացւոյ, և յաջորդ նորա 'ի թագաւորութեան Լատինացւոց: Իսկ առաջիկայս բան Թէոկրիտոսի զԱսկանեայ առեալ է 'ի Վիրգիլիոսէ, որ 'ի գիրս իւր նկարագրէ զելանելն Ենէասայ ընդ որդւոյ իւրում Ասկանեայ յորս երեոց. ուր, ասէ, այծեամունք և եղ-



ջերուք ընթանային ընդ լերինս և ընդ դաշտս. իսկ մանուկն Ասկանիոս հեծեալ յերիվար յայսկոյս յայնկոյս վազս առնոյր 'ի ծործորս, և քերեալ զփախստեայ երէոյք անփոյթ առնէր. քանզի ցանկայր զի 'ի բարձանց իջցէ կինճ կատաղի կամ առիւծ ամեհի, և կամ այլ ինչ գազան աչաղին, և 'ի նոսա ցուցցէ զքաջութիւն իւր: Այլ յանկարծակի յարեաւ, ասէ, խռովութիւն օդոց, և տեղաց անձրև կարկտախառն. մինչև փախչել Ասկանիոսի և Ենէասայ յայլևայլ ծերպս և 'ի խորշս լերանց: Ա՛յլ է և այն առասպել զոր 'ի մէջ բերէ Եւսեբիոս 'ի պատմութեանց Հռովմայեցւոց վասն Ենէասայ. թէ յորժամ կամէր նա զոհել գէթ խոզ մի մատակ համակ սպիտակ, որ մերձ էր 'ի ծնանել, զերծաւ այն 'ի ձեռաց նորա, և ելեալ 'ի բլուր մի ծնաւ անդ երեսուն խոճկորս, և ասացաւ Ենէասայ թէ յետ երեսուն ամի 'ի տեղւոջ անդ շինեսցի քաղաք, այն է Ալբան քաղաք զոր շինեաց յետոյ Ասկանիոս որդի Ենէասայ:

72. Յուգուրթաս էր թագաւոր Նումիդացւոց մի 'ի գլխաւոր թշնամեաց Հռովմայեցւոց, այր խորոխտ և սէգ. որ յետ պէսպէս պատերազմաց յորս յաղթեաց և յաղթեցաւ, հուսկ յետոյ 'ի նենգ անկեալ դիմեաց առ Բոկքոս արքայ Մաւրիտանացւոց. և 'ի ձեռն նորա մատնեցաւ 'ի ձեռս Սիղղայի զօրավարին Հռովմայեցւոց, և ածաւ կապանօք 'ի Հռովմ, ուր հանաւ 'ի հանդէս յաղթանակի, և ապա արգելաւ 'ի կալանս. և այնպէս 'ի չղթայս մեռաւ դառնութեամբ, իբր 105 ամօք յառաջ քան զՔրիստոս: Սոյնպէս և Սիփակ էր թագաւոր միոյ մասին Նումիդացւոց, որ նախ 'ի կողմն Հռովմայեցւոց գոլով միաբանեցաւ յետոյ ընդ թշնամիս նոցա ընդ Կարքեդոնացիս, և 'ի պարտութիւն մատնեալ ձերբակալ եղև 'ի Հռովմայեցւոց, և եդաւ 'ի բանտ հանդերձ կնաւ իւրով. և 'ի բանտի անդ մեռաւ տուայտանօք առ անհնարին ցաւոց սրտին, իբր 200 ամօք յառաջ քան զՔրիստոս, յաւուրս պատերազմացն Սկիպիոնի և Աննիբաղայ: Իսկ պատմութիւն Կրասոսի և Կրեսոսի յայտնի է, որպէս և փոքր 'ի շատէ յիշատակեալ է մեր 'ի համարն 7: Արդ Թէոսուրոս որպէս բոց Կրեսոսի կոչէ զելանելն նորա յերկաթի տապակ հրացեալ, նոյնպէս և արհամարհանս Կրասոսի անուանէ զչարաչար խորտակումն սորին ամենայն զօրօքն հանդերձ 'ի Պարթևաց. զի արդարև ամենայն իրօք ամօթապարտեալ խայտառակեցաւ առաջի Տիգրանոյ Հայոց արքայի յարհամարհանս անձին իւրոյ և 'ի նախատինս բովանդակ ծերակուտին Հռովմայ: Յոր յաւելուն պատմիչք Հռովմայեցւոց և այլ ինչ նոր հանդամանս արհամարհանաց. և զայն իսկ թուի յուշ առնել Թէոսուրոս, քանզի ասեն թէ յորժամ զգլուխն Կրասոսի տարեալ

եղև առ Արշէզ արքայ Պարսից (զոր ինքեանք Որոտէս կոչեն), անդ գտաւ առաջիկայ և Արտաւազդ որդի Տիգրանայ արքայի Հայոց․ ուր յետ անարգելոյ, ասեն, զմեռեալ գլուխն բանիւք թշնամանաց, ետուն հալել ոսկի և ընուլ ընդ բերան նորա ասելով․ Ոսկւոյ և մեծութեան էր փափաքող այրդ այդ, որ յայսչափ չարիս ձեռնարկեաց․ արդ ոսկի լցի վերջին տանջանք դորա, և գէթ յետ մահուն յագեսցի ոսկւով։

73․ Կղէոպատրա Թագուհի որպէս և յայտ է, եղև վերջին ՚ի Թագաւորս Եգիպտացւոց․ որ միաբանեալ ընդ Անտոնինոսի զօրավարին Հռովմայեցւոց պարտեցաւ յՕգոստոս կայսերէ․ և առ չատալոյ զանձն ՚ի ձեռս կայսեր չոքաւ զիւրովին․ վասն որոյ և չկարաց Օգոստոս կենդանւոյն ըմբռնել զնա, և հանել ՚ի հանդէս յաղթանակի․ այլ փոխանակ նորա արձան մի յանուն նորա ետ բերել զհետ կառաց իւրոց ՚ի հանդիսի անդ։ Իսկ Զենոբիա էր Թագուհի Պալմիրայ, որպէս կարծի ՚ի զարմէ Թագաւորացն Եգիպտացւոց և Կղէոպատրայ, յերրորդ դարուն յետ Քրիստոսի, դշխոյ իմաստունագրադէտ և սրտեայ․ այլ ՚ի յանդգնիլն ընդդէմ կայսեր Աւրելիանոսի կայսեր ՚ի պարտութիւն մատնեցաւ, և կենդանւոյն ձերբակալ եղև յանդս Եփրատայ յամի տեառն 272․ զոր բերեալ կայսեր հանդերձ որդւովք նորա ՚ի Հռովմ, եհան ՚ի հանդէս յաղթանակի ՚ի պարծանս իւր, և ապա բնակեցոյց զնա յագորրու։ Արդ հեղինակս ըստ արիութեան մասին նուաստացուցանէ զնա քան զԿղէոպատրա․ այլ ըստ այլ բանի բազմօք գովելի էր սա քան զնա։ Թող զայն զի և արիութիւն Կղէոպատրայ յառաջիկայս օրինակ ոչ պարզապէս գովի, այլ ըստ իմիք տեսութեան․ ապա թէ ոչ անձնասպանն լինել չէ արիութիւն, այլ յետին կնատութիւն և վատասրտութիւն․ զի է գործ անյուսութեան։

74․ Կամի ասել թէ որպէս յետ յաղթութեան պատերազմի օրէն էր ՚ի պատիւ յաղթանակի ծիրանիս սփռել ընդ ճանապարհն ընդ որ մտանէր ՚ի քաղաքն կամ ՚ի պալատն յաղթող զօրավարի կամ Թագաւորի, ես և կամիմ կանգնել յաղթողական, զի ընդ այն անցցէ փառօք յաղթականն եթէ կենդանի, և եթէ դի նորա պատկեալ և եդեալ ՚ի դագաղս, սոյնպէս և արիւն ՚ի տալ զանձն ՚ի մահ վասն հայրենեաց և օրինաց պատճառ արեամբ իւրով ծիրանազարդ առնէ զճանապարհ իւր տանի ՚ի հանդերձեալն․ և կամիմ նորա համարի գոյն վիրաբերանին կամ պատառուած վիրացն։

75․ Վասն Մանլիոսի ասացաւ վերագոյն, թէ յինչ առթէ կառ զանունն Տորկուատոս։ Իսկ Կուրիոս Մանիոս մականուանեցաւ Դենտատոս՝ այսինքն ատամնաւոր, զի այնպէս ծնաւ, ասեն, ըստ Պլինիոսի․ իբր զի ընդ ծնանիլն գտան ատամունք նորա բուսեալ ըստ կարգի ՚ի տեղիս իւրաքանչիւր։ Սա եղև այր հզօր և հանճարեղ․ երիցս կարգեցաւ հիւպատոս Հռովմայեցւոց, և արար բազում յաղթութիւնս և գործս գովելիս, իբր 280 ամօք յառաջ քան զՔրիստոս։ Կայ մին ևս այր երևելի Սիկկիոս անուն, մականուանեալն նոյնպէս Դենտատոս զոր յիշէ Պլինիոս։ Որոյ բազմապատիկ են քաջութիւնք և հանդէսք մրցանաց, ազգի ազգի յաղթութեամբք և ընդունելութեամբք յաղթանակաց։ Երկոցուն ևս միօրինակ պատճառի բան Թեսաւրոսի, եթէ չիցեն նոյն։ Իսկ Կոսսոս Կոռնելիոս որ և կոչի Կոռնելիոս Կոսսոս, էր ազնուական Հռովմայեցի՝ կարգեալ ՚ի պատիւ դիկտատորութեան իբր 380 ամօք յառաջ քան զՔրիստոս․ սա բազում պատերազմունս մղեաց ընդդէմ շրջակայ Թշնամեաց, և սպան զԼարէս Վոլումնիոս զարքայ Վէյենտացւոց, և զզէնս սորին իւրոյ կողոպտեալ կախեաց ՚ի մեհեան Դիոսի։ Համարեալ էր առ Հռովմայեցիս իբր նոր Աքիլլէս կամ նմանող Հռոմուլոսի։



76․ Ասացուածն Պաղլասայ կամ Աթենասայ աստուածուհւոյ առ Տելեմաքոս առեալ է ՚ի բանաստեղծութենէն Հոմերոսի․ ուր նկարագրին ազգի ազգի արարք Տելեմաքոսի և հօր նորա Ոդիսեայ դիւցազին․ զի յաւուրս դարձի զօրավարացն Հելլենացւոց ՚ի պատերազմէն Տրովադայ Տելեմաք որդի Ոդիսեայ տեսեալ թէ յամէ հայր իւր, եւ ՚ի խնդիր նորա․ և հազիւ ուրեմն մարթացաւ զնա գտանել․ և եղև գործակից հօր իւրում յայլևայլ գործս քաջութեան, և զօրացաւ յոյժ․ և այս ըստ դիւցաբանից ՚ի ձեռնտուութենէ և ՚ի յորդորմանէ Պաղլասայ։ Յիշէ զՏելեմաքոս զոգխեան Նոննոս մեկնիչն Աստուածաբանի այսպիսի օրինակաւ․ « Ագամեմնոն յորդորէր զՈվլգեոս (զՈդիսևս) ելանել ՚ի Տրովադայ․ և նորա ոչ կամեցեալ ձևանայր մոլութիւն և լծեալ էշ և արջառ, իբր թէ արօրադրել ձևով մոլութեան․ իսկ Պաղամիդէս յանդիմանէր զայն ոչ դոլ մոլեալ, և յանդիմանեաց այսպէս, զՏեղեմաքոս զորդի նորա եդ առաջի արօրոյն․ ապա հասեալ Ոդիսեայ մինչև ցմանուկն վերացուցանէ զարօրն, զի մի գանեսցի մանուկն, և ծանուցաւ թէ զգաստ է »։ Յայս հայի և ասելն Գրիգորի Մագիստրոսի ՚ի Թուղթն առ կարծեցեալ ոմն դիտնական․ « Բայց եթէ պատճառես այժմ իբրև զՈդիսևս, զի մի զինուորիցիս ընդ մեզ զեզն և զէշ ՚ի միասին լծեալ, սակայն գտցի քեզ Պաղամիդէս և զՏելեմաքոս կալեալ ՚ի պատճառս զենման զի զգաստասցի »։ Իսկ պատմութիւնն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ յայտնի է, զի հայեցեալ նորա ՚ի դերազանց գովութիւնս ընծայեալս քաջին Աքիլլեայ ՚ի Հո-

մերոսէ ,՛ըղձակերտ լինէր և ինքն ունել զկնի իւր վիպասան զոք նոյնօրինակ գովիչ գործոց իւրոց։ Որպէս և յետ ժամանակաց Յուլիոս Կեսար տեսեալ զմեծամեծ գովութիւնս զորս ընծայէին պատմաբանք նմին Աղէքսանդրի, նախանձաւոր եղև նմանիլ նմա, և ունել զնմանօրինակ գովասանս. և արդարև ոչ վրիպեցաւ յակնկալութենէ իւրմէ. զի ոչ նուազ գրեցին և Հռովմայեցիք զՅուլիոսէ քան Հելլենացիք զԱղէքսանդրէ։

77. Եպամինոնդ էր ազնուական Թեբայեցի իբր 350 ամօք յառաջ քան զՔրիստոս, որդի Պողիմնեայ, այր զգօն և արի, աշակերտեալ Փելլայոսի պիւթագորականի, և ծաղկեալ ՚ի մէջ Հելլենացւոց փիլիսոփայութեամբ, պերճախօսութեամբ, և նուագածութեամբ, մանաւանդ թէ և առաքինի քաղաքավարութեամբ. զի այնպէս ճշմարտախօս էր, մինչև չառնուլ յանձն և ընդ կատակս ասել ինչ սուտ։ Հուսկ յետոյ եղև զօրավար քաջ, եգիտ զհայրենիս իւր ՚ի ծառայութեան, և ՚ի մեռանելն եթող յազատութեան։ Սա զկնի բազմապատիկ մրցանաց՝ ՚ի միում նուագի մարտնչելոյ իւրոյ ընդ Լակեդեմոնացիս ՚ի կողմանս Մանտինիոյ կարեվէր խոցեցաւ ՚ի ճակատու. և յորժամ բարձեալ ՚ի զօրականաց ածաւ ՚ի բանակն կիսամեռ, և հազիւ հազ կարէր բարբառել, զայս մի ինչ և եթ խնդրեաց ՚ի մերձակայից ասել նմա, թէ ՚ի խոցել իւրում և յանկանիլ արդեօք ախոյեանն կորզեա՞լ իցէ զվահան իւր. և իբրև ասացին թէ ոչ, այլ ահա առ քեզ կայ ասպար քո, ետ բերել զայն և համբուրեաց իբրև գործակից ճգանց իւրոց և պարծանաց։ Եւ յաւել հարցանել. ո՞ր կողմն յաղթեաց. և յորժամ լուաւ թէ Թեբացիք, ասէ. Ուրախ մեռանիմ՝ ուրախակից լինելով հայրենեաց իմոց, և անդէն փչեաց զոգին։ Այլք ասեն թէ յորժամ խոցեալն էր նետիւ ՚ի ճակատամարտի անդ, չեթող ումեք հանել յանձնէ զնետն, այլ հանդերձ նետիւն մնալով յառաջ մղեաց զմարտն, հրաման տալով զօրացն զոր ինչ օրէնն էր. մինչև յետ խապառ վանելոյ զթշնամիս ասէ. Արդ շատ է ինձ կեալ, զի անյաղթ մեռանիմ. իբր այն թէ միւսանգամ ծնանիմ. և յայնժամ հանեալ յանձնէ զնետն ընդ նմին և զոգին եհան։

78. Վասն Պալլասայ շատ լիցի զոր ասացաքն ՚ի համարն 31, և յայլ տեղիս։

79. Այս բան թուի հայել ՚ի պատմութիւն Կրեսոսի Լիւդացւոց արքայի. զոր իբրև կամէր հարկանել սուսերաւ ոմն ՚ի զօրականաց Կիւրոսի յանդգնօս, որդի նորին Կրեսոսի համր ՚ի ծնէ բարբառեցաւ, ասեն, առ սաստիկ սրտին. Մի մխեր ըղձեռն քո, զի հայր իմ Կրեսոս է դա։ Զայս պատմէ Հերոդոտոս, և այլք յետ նորա։



80. Գեղարդն Հռոմուլոսի ծառացեալ ՚ի հովանի լինել քաղաքացւոց, ոչ այլ ինչ թուի, բայց եթէ բանաստեղծական ասացուած ինչ, իբր զի ՚ի ձեռն գործոց քաջութեան նորա կանգնեցաւ Հռովմ և պաշտպանեցաւ ընդդէմ թշնամեաց։ Յիշէ Պլինիոս յայլ և այլ տեղիս զայլ և այլ ծառս տընկեալս ՚ի Հռովմ՝ ՚ի Հռոմուլոսէ կամ յանուն Հռոմուլոսի. ընդ որովք ժողովեալ քաղաքացւոց յաւուրս հանդիսից առնէին ազգի ազգի խաղս և զուարճութիւնս։ Պատմէ և Պլուտարքոս այսպիսի ինչ. Հռոմուլոս ուխտեաց Դիոսի յելանելն ՚ի պատերազմ ընդդէմ Ակրոնի Կենինեցւոց արքայի, զի թէ յաղթեսցէ թշնամւոյն, զզէնս նորա նուիրեսցէ նմին Դիոսի։ Եւ իբրև ՚ի գլուխ տարաւ զյաղթութիւնն և սպան զԱկրոն, եբարձ ինքնին շալակաւ զզէն և զզարդ նորա, և եբեր ՚ի Հռովմ քաղաք. ետ կտրել և զկաղնի մի բարձր որ կայր ՚ի տեղի պատերազմին, և ածել ընդ իւր. զոր կանգնեալ ՚ի մէջ հրապարակի քաղաքին իւրոյ կախեաց զոստոց նորա զզէնս Ակրոնի. և արար մեծաւ շքով հանդէս յաղթանակի հանդերձ բազմութեամբ ժողովոյն, ըստ նկարագրելոյ Պլուտարքեայ. որ և յարէ թէ աստի սկիզբն կալաւ առ Հռովմայեցիս սովորութիւնն առնելոյ զհանդիսաւոր յաղթանակ մարտի։ Ի վերայ այսր ամենայնի գրեն ևս պատմիչք թէ Հռոմուլոս ընկալաւ զմականուն Կուիրինոս. զոր բազումք պէսպէս ստուգաբանեն, որպէս և ոմանք ըստ նորին Պլուտարքեայ վկայելոյ ասացին, թէ առ նախնիս ըստ բարբառոյ Սաբինացւոց գեղարդն կամ նիզակն կոչիւր քուիրիս և կամ գուրիս. և զի նիզակն էր նշանակ Հերայի և Արէսի դիցն պատերազմաց և յաղթութեան, և զի յաղթող զօրականացն նոր նիզակ տային ՚ի պարգևս, Հռոմուլոս ևս վասն յաղթութեանց իւրոց անուանեալ իցէ Կուիրինոս, որպէս թէ նիզակաւոր, կամ իբր երկրորդ Արէս աստուած նիզակաց. որպէս և տունն կամ տաճարն կանգնեալ ՚ի Հռովմ յանուն Հռոմուլոսի կոչեցաւ Կուիրինեան։

81. Նեսոս է անուն միոյ յառասպելեալ Կենտաւրոսաց, այսինքն ՚ի ձիացլոց կամ ՚ի յուշկապարկաց. զորմէ ասի թէ տեսեալ զԴէյանիրա դուստր Ենեայ արքայի Ետողացւոց ըղհարսնացեալն Հերակլեայ քաջի առ ափն գետոյ, զի վարանէր անցանել յայնկոյս և ոչ կարէր, գոլով ինքն քաջ լողորդ եբարձ զնա հրամանաւ Հերակլի ՚ի վերայ ուսոց իւրոց, և անցոյց յայն կողմն. և իբրև ելին ՚ի ցամաք, յափշտակեալ զաղջիկն փութացաւ փախչել։ Իսկ Հերակլեայ տեսեալ զնենգ Նեսոսի՝ արձակեաց զկնի նորա զնետ իւր, և կարեվէր խոցեաց զնա։ Յայնժամ դառնացեալ յոյժ Նեսոսի, և յուսահատեալ ՚ի կենաց իւրոց անձկայր մեռանել և աղաւիլ ՚ի ցա-

ւոյ. այլ կամեցեալ նախ վրէժ խնդրել յերկոցունց անտի դաւանօք, եւ յարենէ իւրմէ կամ զարիւնաթաթաւ հանդերձս իւր զկախարդեալն բժժանօք իբրև ընծայ յիշատակի Դէյանիրայ, ասելով թէ ունի սա զօրութիւն ձգելոյ 'ի քեզ զգլխովին զսէր առն քո: Եւ եղև յետ ծնանելոյ Հերակլի զորդի մի 'ի Դէյանիրայ, իբրև հովացաւ 'ի սիրոյ նորա, 'ի կին եառ Դէյանիրա զայն կախարդեալ պատմուճան կամ զարիւնն Նեսոսի. որով դեղեալ Հերակլի անկաւ յախտ չարաչար. այն է ըստ ոմանց ժանտախտ. մինչև ցնորեալ 'ի մտաց էարկ անձամբ զանձն 'ի խարոյկ հրոյ, և մեռաւ. զոր տեսեալ կընոջն առ դառնութեան սրտին չոքաւ և նա զիւրովի: Զայսոսիկ յիշատակէ և Նոննոս դոյզն տարբերութեամբ. իսկ վասն մահուն Հերակլեայ այսպէս գրէ. «Յորժամ զգեցաւ Հերակլէս (զպատմուճանն օծեալ յարենէն Նեսոսի), վառեալ պատմուճանն եկեղ զնա. իսկ նա մինչդեռ այրէր, ընկեց զանձն 'ի գետն որ մերձն էր, և ջերմացոյց զջուրսն. յորմէ և եղեն ջերմաջուրք և ջերագրութիւնք 'ի մէջ Թեսաղացոցն և Փովկիսոյ»: Այլ Եւսեբիոս 'ի քրոնիկոն կանոնի համաձայն նախագրելոցս ասէ. «Հերակլէս 'ի սրտծութեան խօթութիւն անկեալ 'ի կրակ դիմեաց. և այնպէս 'ի մարդկանէ վճարեցաւ, կեցեալ ամս ԾԲ»:

82. Նիսոս էր արքայ Մեգարացւոց յԱքայիա, որ 'ի գագաթան գլխոյն ունէր, ասեն, քանի մի հերս ծիրանեգոյն. զորս և պահէր ամենայն զգուշութեամբ իբրև սրբազան ինչ և բարեգուշակ. քանզի ասացեալ էր նմա պատգամախօսն թէ ցորչափ անկորուստ պահիցէ 'ի քեզ այն հերք, ոչ պարտեսցիս յումեքէ, այլ մշտայաղթ և անասան մնասցես 'ի թագաւորութեան քում: Եւ եղև 'ի պաշարել Մինոսայ արքային Կրետացւոց զՄեգարա, դուստր Նիսոսի Սկիւղէ անուն որ կամէր հաճոյ լինել յաչս Մինոսայ և հարսնանալ նմա, գերծեաց հնարիւք զծիրանի հերս 'ի գլխոյ հօր իւրոյ, և մատնեաց զքաղաքն 'ի ձեռս թշնամեաց: Իսկ թէ զինչ յետոյ գործեցաւ, բազում են բանք առ առասպելարկուս: Մի արդեօք 'ի պատմութենէ Սամփսոնի գողացեալ իցեն զայս բանաստեղծք, որպէս և զայլ պատմութիւնս ինչ սուրբ գրոց խառնեալ 'ի նոսա ազգի ազգի մոլորածին առասպելս:

83. Քաջայայտ է օրինակ մահուն Յուլիոսի Կեսարու, յորոյ վերայ յարեան ոմանք 'ի ծերակուտէն և չարաչար խոցոտեցին սրով տալով նմա իբր քսան և երեք վէրս: Սոյնպէս և վախճան Սոկրատայ յայտնի է, որում արբուցին Աթենացիք դեղ մահու Կոնիոն անուանեալ առ Յոյնս, որ 'ի մեզ մոլեխինդ կամ խնդամոլի ասի: Զայս յիշէ Նոննոս յասելն.



«Սոկրատէս այս էր ազգաւ Աթենացի՝ իմաստասէր հրահանգաւ.... և դատապարտեալ եղև մեռանել .... և ապա ըմպելով Կոնիոն, և արբեալ մահացաւ»: Եւ զնոյն յիշատակէ Եւսեբիոս 'ի քրոնիկոն կանոնի ասելով. «Սոկրատէս արբ զԿոնիոնն և մեռաւ, որ է խնդամոլի»: Յայս հայի և ասելն Խորենացւոյն (Բ. 89) յողբերգութեան իւրում 'ի վերայ սըրբոյն Տրդատայ. «Տան նմա արբուճմն, որպէս անդ ուրեմն 'ի հնում Աթենացիքն Սոկրատայ զմոլեխինդն»: Ասի թէ յորժամ պատմեցաւ Սոկրատայ դատապարտիլն իւր յԱթենացւոց 'ի մահ, եւ պատասխանի անխռով սրտիւ. Ես անդստին 'ի բնութենէ վաղու ես դատակնքեալ եմ 'ի մեռանել: Եւ զի կին նորա լայր դառնապէս վասն յանիրաւի դատապարտութեան առն իւրոյ առանց իրիք յանցանաց, սաստեաց նմա Սոկրատէս ասելով. Եւ զինչ, կամէի՞ր արդեօք զի իրաւացի լինէր իմ դատապարտութիւն իբրև զմիոյ 'ի չարագործաց:

84. Ատտիլիոս Ռեգուլոս հիւպատոս Հռովմայ, այր անուանի, յետ յաղթահարելոյ զԿարքեդոնացիս 'ի բազում մրցմունս մարտի հուսկ յետոյ անկաւ 'ի ձեռս նոցա, իբր 251 ամօք յառաջ քան զՔրիստոս: Յորում ժամանակի կամեցեալ Ափրիկեցւոց առաքել դեսպանս 'ի Հռովմ վասն հաշտութեան, արձակեցին ընդ նոսա և զՌեգուլոս. զի թէ հաստատեսցի խաղաղութիւն 'ի միջի, ազատ լիցի և նա. ապա թէ ոչ, անդրէն դարձցի: Եւ եղև յորժամ լուաւ ծերակոյտն զխնդիր Ափրիկեցւոց, և թուէր յանձն առնուլ զհաշտութիւն, նա ինքն Ռեգուլոս զընդդէմն հաստատեաց. քանզի հայելով յօգուտ և 'ի պարծանս հայրենեաց և ոչ յազատութիւն անձին իւրոյ, յանձն էառ զի ինքն դարձուսցի անդրէն 'ի ձեռս թշնամեաց իւրոց: Եւ այսպէս հաստատուն կացեալ 'ի վերայ բանից իւրոց՝ գնաց անդրէն յԱփրիկէ իբրև գերի: Իմացեալ թշնամեացն թէ Ռեգուլոս ինքնին խափանիչ եղև հաշտութեան, վառեցան անհնարին սրտմտութեամբ ընդդէմ նորա, և նորահնար տանջանօք խորհեցան սպանանել զնա. 'ի բաց կորեցին յարմնտոց զարտևանունս նորա, զի մի կարասցէ փակել զաչս իւր և 'ի քուն լինել. և ապա եդին զնա 'ի մէջ մեքենայի որ լի էր երկաթի սլաքօք կամ ածելեօք. և այնպէս չարաչար տուայտանօք անքուն արթնութեան, և դառնամահ կտտանօք սայրասուր կորոյց բարձին զնա 'ի կենաց: Իսկ Սենեկայ փիլիսոփային՝ այրն մեծիմաստ, որ դաստիարակն եղև Ներոնի կայսեր, 'ի նմին իսկ մարդախոշոշ բռնաւորէ մահու դատեցաւ. որ ապառում մօք զայս մարդասիրութիւն ևեթ եցոյց առ վարժապետն իւր, զի ասաց. Ընտրեա քեզ Սենեկա զտեսակ մահու, որով ըստ հաճոյս քո սպանից զքեզ, և նա յանհնարս մտեալ խնդրեաց,

զի հատցին երանգք նորա 'ի բաղանիս, և առ սակաւ սակաւ գիտութեամբ լուծցի 'ի կենաց խոսակից լինելով ընդ բարեկամս իւր։ Եւ իբրև արարին այնպէս, տեսեալ նորա թէ տագնապ մահու կրէ ընդ երկար, խնդրեաց և մահադեղ. այլ ոչ այնչափ 'ի զօրութենէ թունիցն, որչափ 'ի հոսմանէ արեանն և 'ի ջերմութենէ բաղանեաց հեղձամղձուկ լեալ և անշնչացեալ մեռաւ։

85. Դիտեա ինձ աստանօր զգեղեցիկ ասացուածս հեղինակիս յաղագս քրիստոնէական արիութեան, որով նահատակեցան երջանիկ վկայք 'ի սէր Փրկչին, և 'ի միտ առ զհետեւանս բանից թէ որպէս յարիութեան մասին՝ նոյնպէս և յայլ ամենայն առաքինութեանց կարգի այնչափ վսեմ է և գերագոյն քրիստոնէական առաքինութիւնն քան զբարոյականն, որչափ 'ի վեր են աստուածայինն իրք քան զմարդկայինս։ Եւ ահա առլին համառօտ ապացուցութեամբ այս իմանալ Թեսալուրս, թէ ինքն 'ի մատենի աստ խօսելով միայն զբարոյական առաքինութեանց, և ցուցանելով զկատարելութիւն նոցին զօրութեամբ իւր միշտ մեծացուցանէ զգօլութիւն աստուածային առաքինութեանց ևս քան զևս, և որպէս թէ անբաւական զանձն խոստովանի ճառել զնոցանէ։ Զայս յայն սակս երկրորդեցաք աստ, զի ընթերցօղք 'ի հայել անդ 'ի կատարելութիւն բարոյական առաքինութեանց՝ յորդորեսցին առաւել ևս բորբոքիլ 'ի սէր գերագունիցն քրիստոնէական և աստուածային առաքինութեանց, զի և հեղինակն զխօսլին զայն յուշ առնէ։

86. Վասն Սկիպիոնի և Սիփակայ փոքր 'ի շատէ բանք եղեն վերագոյն. տես 'ի համարն 61, և 72։

87. Կեպիոն էր հիւպատոս Հռովմայեցւոց, որ նիզակակցութեամբ Մանիլոսի հիւպատոսի եւ 'ի պատերազմ ընդդէմ ազգացն Գերմանացւոց՝ որք կոչէին Կիմբրացիք և Տեւտոնեանք. այլ զի անխորհրդաբար մխեցաւ 'ի գործ մարտի, անստատ գտեալ խրատու խորհրդականաց, յաղթեցաւ չարաչար. իբր 100 ամօք յառաջ քան զՔրիստոս։ Սոյնպէս և Մինուտիոս էր զօրավար ոմն հեծելազնդին Հռովմայեցւոց յաւուրս պատերազմին Փաբիոսի մեծի սպարապետի ընդդէմ Պենացւոց, այսինքն ընդդէմ Լիբէացւոց զօրացն Աննիբաղայ Կարքեդոնացւոյ. որոյ տեսեալ զզանգաղանս Փաբիոսի՝ զի ոչ համարձակ մխէր 'ի ճակատ ընդդէմ Աննիբաղայ, այլ ընդգուշութեամբ սպասէր դիպող ժամու և տեղւոյ, չկարաց հանդուրժել. այլ որոշեալ զխուր գունդ ձեռներէց եղև 'ի դիմի հարկանել թշնամեաց. խրատեաց զնա Փաբիոս հանդարտել առ վայր մի, և ոչ կարաց խափանել։ Ապա իբրև յարձակեցաւ Մինուտիոս յանդգնաբար իւրովքն հանդերձ, չարաչար խորտակեցան զօրք նորա և ինքն սակաւ արամբք մազապուր զերծաւ. իսկ Փաբիոս 'ի դէպ ժամու պատերազմեալ վանեաց զթշնամիս։ Զայս ամենայն երկար ճառագրէ Պլուտարքոս 'ի գործս Փաբիոսի Մաքսիմոսի, և 'ի վերջոյ յարէ թէ զկնի ամօթապարտ կորանօք յանդիման եղեալ Մինուտիոսի առաջի Փաբիոսի խոստովան եղև զանխորհուրդ գործ իւր. այլ Փաբիոս մարդասիրութիւն ցուցեալ առ նա չկամեցաւ յերեսս հարկանել զանմտութիւն նորա և կամ պատուհասել։ Յայնժամ ասէ Մինուտիոս զՓաբիոս, ըստ գրելոյ Պլուտարքեայ. « Կրկնակի յաղթութիւն 'ի գլուխ տարար այսօր, իշխանդ քաջ, մի արութեամբ ընդդէմ թշնամեաց, և միւս ևս՝ ընդդէմ նիզակակցացդ քոց խորհրդով և մարդասիրութեամբ. առաջնովն ապրեցուցեր զմեզ, և երկրորդիւս հրահանգեցեր. և այն ինչ մեք չարաչար կորանօք 'ի պարտութիւն մատնեալ էաք յԱննիբաղայ, ահա և առ 'ի քէն հանդարտամիտ և ազատարար յաղթութեամբ պարտեալ գտաք »։



88. Կոդրոս որդի Մելանթոսի էր արքայ Աթենացւոց. յորոյ աւուրս իբրև յարձակեցան թշնամիք պատերազմաւ 'ի Պեղոպոնէսոս, լուեալ Կոդրոսի, 'ի պատգամախօսէն թէ այն ժողովուրդ լինի յաղթող որոյ առաջնորդն մեռանի 'ի պատերազմի, ծպտեցաւ 'ի հանդերձս ռամկականի, և մտեալ իբր անգէտ 'ի ճակատ թշնամեաց՝ գրգռեաց զզօրական մի, և սպանաւ 'ի նմանէ իբր հազար ամօք յառաջ քան զՔրիստոս։ Զայս յիշէ և Եւսեբիոս 'ի քրոնիկոն կանոնի յաւուրս Դաւթի արքայի. « Կոդրոս վախճանեցաւ, տուեալ զանձն 'ի մահ վասն յայտնութեան ». և յարէ թէ յայնմ հետէ բարձաւ թագաւորութիւն Աթենացւոց, և սկսան նստիլ իշխանք, որոց առաջինն եղև Մեդոն որդի Կոդրեայ։ Ոմանք ասեն թէ 'ի յիշատակ այսր քաջութեան Կոդրոսի ոչ ևս կամեցան Աթենացիք ունել թագաւոր, այլ լոկ իշխան, որ 'ի Յունաց կոչի արխոն։ Իսկ Կիւգնոսդ անուն նշանակէ զթռչունն անուանեալ կարապ կամ սոր։ Եւ զի ոմն 'ի թագաւորացն Լիգուրացւոց Կիւգնոս կոչիւր, ասացաւ յառասպելս թէ 'ի կարապ թռչուն փոխարկեալ իցէ զնա Արամազդ։ Քանզի ասեն թէ յորժամ Փայեթոն որդի արեգական կայծակնահար եղեալ անկաւ 'ի Պադոս գետ, քորք Փայեթոնի որք լային ընդ կորուստ եղբօր իւրեանց, փոխեցան 'ի կաղամախ կամ 'ի սօս, և արտասուք նոցա 'ի բուրկէն կամ յամբեր. և զի Կիւգնոս ևս էր մերձաւոր ազգական նոցա և լայր, փոխեցաւ և նա 'ի կարապ թռչուն, և նստեալ յոստս քերցն Փայեթոնեայ ծառացելոց, կամ ընդ հովանեաւ նոցին ձայն արձակեալ եղա-

նակէր զերգս ողբոց։ Զայս ամենայն նկարագրէ Ովիդիոս և Վիրգիլիոս բանաստեղծք. զորոց զբանսն պէսպէս մեկնաբանեն այլք։ Իսկ առաջիկայս բան Թէսաւրոսի հայի յայն զի 'ի գագաթան Կիւդնոսի ասին բուսեալ փետուրք պայծառք և արծաթափայլք իբրև զսպիտակ կարապոյ, զոր ոմանք իմանան վասն սպիտակացեալ հերաց նորա։

89. Կամի ասել թէ կայսերք որք յաջորդեցին զկնի Յուլիոսի Կեսարու, յետնեալ գտան 'ի քաջութենէ գործոց նորա իբր յանարժանս կրելով զանուն նորա. զի կայսրդ անուն ինքնակալաց տուեալ էր 'ի բառէս Կեսար որ մականունն էր Յուլիոսի։ Մեք հասարակօրէն առ որոշումն անուանց զՅուլիոս՝ Կեսար կոչեմք, և զայլ ինքնակալս կայսր. թող և զնոսա որք Կեսար կոչին իբր գահակից կայսեր. թէպէտև Թէսաւրոս զամենայն միօրինակ Կեսար կոչէ յԻտալականն. զի մի և նոյն անուն է ըստ ինքեան Կեսարոս, Կեսար և Կայսր։

90. Համեմատութիւն սերմնարանի ընդ ուսումնարանի ընտել է առ իտալացիս, վասն համաձայն առման բառիս «սեմինարիօ». որ ստուգաբանի սերմնարան. և նմանութեամբ 'ի գործածի փոխանակ ուսումնարանի կամ համալսարանի։

---

## Ծանօթութիւնք 'ի հինգերորդ գիրս։

91. Յաղագս առասպելեալ Հիդրայի և Խեցգետնի լիով ասացաւ 'ի համարն 70, տես անդ։

92. Հանգոյց Հիմենեան նշանակէ զկապ ամուսնութեան, այսինքն զպսակն անլուծանելի. քանզի Հիւմէն կամ Հիմենէոս, համարեալ էր առ Հելլենացիս աստուած հարսանեաց կամ ամուսնութեան, զոր և նկարէին պատանի առոյգ պսակեալ ծաղկօք, ունելով 'ի միում ձեռին ջահ բոցավառ, և 'ի միւսում քօղ կարմիր։ Բազում են առասպելք՝ զոր յօդեն զնմանէ բանաստեղծք տարբեր յիրերաց։

93. Զոր ինչ խօսի հեղինակս զազդեցութենէ երկնից ըստ այլ և այլ կլիմայից պարտ է իմանալ 'ի բնական կարգի ևեթ և ոչ բարոյապէս, որպէս և յայտ է. իբր զի տեղիք ծննդեան կամ դիրք բնակութեան ոչ եթէ առնեն զոք առաքինի կամ մոլի, այլ միայն զբնական խառնուածն պէսպէս տրամադրեն։



Արդ թէպէտ այլ և այլ խառնուածք այլ և այլ գործս յառաջ բերեն, մինչև լինել ոմանց 'ի բնէ յայս կամ յայն առաքինութիւն և կամ 'ի մոլութիւն առաւելագոյնս տրամադրեալ, բայց 'ի ձեռս անձնիշխան կամաց իւրաքանչիւր անձին է ուղիղ անօրինել զկեանս իւր ըստ ուղիղ թելադրութեան բանի։ Թող զարտաքին ձիրս բնաւորականս, որք չեն 'ի ձեռս մեր. որպէս լինել սրամիտ, սրատես, ուժեղ, և այլն։

94. Քիրոն կամ Քերոն է անուն միոյ յառասպելեալ ձիացլուց իմաստնագոյնն համարեալ 'ի նոսա և ամենայն իրաց խելամուտ. սա, ասեն, նախ որսորդութեամբ թափառեալ 'ի լերինս անվրէպ նետաձգութեամբ ստացաւ զյաջողութիւն ձեռաց առ ամենայն գործս. և ապա զննելով զզօրութիւնս բուսոց որ 'ի լերինս և 'ի դաշտս, հմուտ գտաւ կատարեալ արուեստի բժշկութեան. նոյնպէս և գիտողութեամբ աստեղաց եղև քաջ աստեղաբաշխ. վասն որոյ և այնչափ անուանի եղև, մինչև ըստանալ իւր աշակերտս զամենեսին զնոսա որք ականաւորք եղեն յայլ և այլ գիտութիւնս և յարուեստս, որպէս Ասկղեպիոսի՝ աստուածոյն բժշկութեան՝ ուսոյց, ասեն, զբժշկականութիւն. Հերակլեայ դիւցազին զաստեղագիտութիւն. քաջին Աքիլլեայ զերաժշտութիւն և զզօրութիւն խոտոց, և այլն։ Եմուտ 'ի նաւ Յասոնի ընդ Արգոնաւորդս, և եղև նոցա բժիշկ։ Ի վախճանի դիպուածով իմն խոցեցաւ, ասեն, 'ի թունաւոր նետից Հերակլեայ մխելոց արեամբ Հիդրայ գազանին, 'ի խառնելն անզգուշութեամբ զկապարճս նորա. և առ զերծանելոյ 'ի ցաւոյն աղաչեաց զդիս հանել զինքն յերկրէ, և Արամազդ վերաբերեաց զնա 'ի կարգս աստեղաց։ Այն է մին 'ի կենդանակերպից կոչեցեալն աղեղնաւոր. զի առաջին գործ Քիրոնի էր աղեղամբ շրջել յորս։ Եւ զի վիրահատութիւն Յունարէն «քիրուրղիա» ասի, համարին ոմանք թէ անտի առեալ իցէ անուն Քիրոնի, վասն լինելոյ նորա գիւտակ ամենայն տեսակաց բժշկութեան. մանաւանդ թէ վասն անուանն ընծայեալ իցէ նմա այնպիսի արուեստ։

95. Զեքսիս էր պատկերահան երևելի 'ի Հերակլիոյ, ծաղկեալ ըստ ոմանց 'ի ՀԸ Ողոմպիադին՝ յաւուրս Քսերքսեայ առաջնոյ Պարսից արքայի. իբր 460 ամօք յառաջ քան զՔրիստոս։ Սա ըստ պատմելոյ Պլինիոսի և այլոց 'ի վէճ մտեալ ընդ Պարրասիոսի նկարչի Եփեսացւոյ, նկարեաց ողկոյզ մի խաղողոյ այնչափ բնական, մինչև իջանել թռչնոց 'ի յափշտակել զայն։ Իսկ Պարրասիոս նկարեաց վարագոյր մի իբրև 'ի ծածկոյթ պատկերի. զոր տեսեալ Զեքսեայ 'ի հեռուստ, և համարեալ իսկական պաստառ ինչ, ասէ ցՊարրասիոս։ Զի՞ է զի ընդ վարագուրաւ ծածկես զարուեստդ. բայց զի տեսցէն ա-

մենքին. այլ իբրև գիտաց եթէ այն խաբ է պատկեր նկարեալ, 'ի միտ էառ թէ քանի քաջ է արուեստն Պարրասիոսի, որ գիտաց խաբել ոչ զթռչունս, այլ զայր պատկերահան: Նկարեաց Զեքսիս և այլ պատկեր, այսինքն մանուկ մի բարձեալ զողկոյզս խաղողոյ, և դարձեալ իջին թռչունք 'ի վերայ պատկերին: Զոր տեսեալ Զեքսեայ զայրացաւ ընդ անարուեստ նկարչութիւն իւր. զխաղողս ասէ լաւ ես նկարեցի քան զմանուկն. զորոյ զչափաւորն պարտ էր գործել. զի յայնժամ խուսափէին արդեօք թռչունք յերեւոյթ մանկանն, և չիշխէին իջանել 'ի վերայ խաղողոյ. վասն որոյ ջնջեաց զխաղողսն 'ի պատկերէ անտի. զի փուցէ մանուկն առանձին կենդանատիպ երեւեսցի. այլ ասին լինել սորա և այլ նկարք նշանաւորք: Իսկ վասն գրաստուն նկարելոյ 'ի Պրաքսիտեղեայ չունիմք ինչ ասել. զի Պրաքսիտեղէս համբաւեալ է յարուեստ անդրիագործութեան, որպէս ասացաւ 'ի համարն 16. և թէպէտ գիտէր, ասեն, ոմանք և զնկարչութիւն, այլ այսպիսի ինչ գործ ոչ յիշատակեն: Յիշին առ Պլինիոսի կառք և երիվարք դրօշեալք 'ի նմանէ, և փուցէ յայնս հային առաջինկայ բանք Թեատրոսի, և կամ թէ շփոթութիւն անուան իցէ ստատնօր. զի 'ի դէպ գայ յառաջ բերեալ օրինակն այնմ երիվարի զոր նկարեաց Ապեղէս. տես 'ի համարն 11. բայց սակայն Թեատրոս և այլուր երկրորդէ զյիշատակութիւն այսր նկարու Պրաքսիտեղեայ:

96. Բրաքմանեայք էին կարծեցեալ իմաստունք Հնդկաց 'ի կարգէ մերկիմաստակաց, քննիչք աստեղաց և որդիք աստեղաբաշխից. զի կրկին ազգ մերկիմաստակաց ասին լինել, նոքա որք ինքնակամ ընտրութեամբ փիլիսոփայէին, Սամանեանք անուանէին. իսկ որք իբր ժառանգորդ հայրենի իմաստասիրութեան յաջորդութեամբ իջեալ պարապէին 'ի քննութիւնս իրաց, Բրաքմանեանք կոչէին, և սոքա յետինքս յոլովակի զանունն ևեթ կրէին իմաստասիրութեան. և արդեամբք անիմաստք էին, ցոփակեացք, մարմնապարարք և պորտաբոյծք:

97. Վասն ակամայ կամօք հարկելոյ Ագամեմնոնի 'ի զոհել զԻփիգինէ զդուստր իւր յիշեցաք վերագոյնդ 'ի համարն 44:

98. Պռոդիկոս էր Սոփեստէս ոմն 'ի Կոլոյ, մեծապէս համբաւեալ 'ի մէջ Աթենացւոց: Սա շարագրեաց գիրս մի յորում ընտրական ստեղծաբանութեամբ առաջի արար զայն նմանութիւն զոր յառաջ բերէ հեղինակս, իբր զի նկարագրեաց զդիւցազն Հերակլէս իբրու վարանեալ 'ի վերայ երկշաւիղ պողոտայի կամ փողոցի բաժանելոյ յերկուս առաջս



որոց մին ընդ զառ 'ի վեր տանէր, այն է դժուարակոխ ճանապարհ առաքինութեան. և միւսն ընդ զառ 'ի վայր, այն է հաճոյք մարմնոյ կամ հեշտութիւնն, յոր ինքնին միտէ բնութիւնն: Առաքինութիւնն իբրև օրիորդ համեստ յորդորէր զնա գնալ ընդ իւր ճանապարհ. և ընդ հակառակն՝ հեշտութիւնն լինեալ հրապուրէր զնա գալ զհետ իւր. այլ հուսկ յետոյ քաջն Հերակլէս՝ որ ցուցանէ զանձն առաքինասէր, ընտրեաց, ասէ, զառաքինութիւն և անգոսնեաց զհեշտութիւնն:

99. Դիդէ որ և Եղիսա կոչի, էր դուստր Կարքեդոնի կամ Բեղոսի արքային Տիւրոսի տուեալ 'ի կնութիւն Աքերբայ կամ Սիքեայ ընչաւէտ քրմի. և եղև 'ի թագաւորել Պիգմալիոնի եղբօրն Դիդեայ, իբրև սպան նա զքեռայր իւր առ 'ի ժառանգել զհարստութիւնս նորա, Դիդէ այրի մնացեալ էառ զթագուցեալ ինչս առն իւրոյ, և մեկնեցաւ 'ի Կիպրոս, և ապա եանց յԱփրիկէ. ուր շինեաց զհոյակապ քաղաքն Կարքեդոն. և արարեալ այլ ևս բազում շինութիւնս և կարգաւորութիւնս նստաւ անդ իբր դշխոյ զօրաւոր: Եւ իբրև տարածեցաւ անուն նորա ընդ ամենայն տեղիս, պատգամ յղեաց առ նա Յարպաս թագաւորն Մաքսիտանեցւոց ամուսնանալ ընդ իւր. ապա թէ ոչ ասէ, եկից ծանր պատերազմաւ 'ի վերայ քո: Իսկ Դիդէ որ 'ի սէր փոխանեալ առն իւրոյ առաջնոյ 'ի սուգ էր համակեալ զամենայն աւուրս, և հաստատեալ էր 'ի մտի չլինել առն այլում, իբրև լուաւ զայսպիսի պատգամ, սկսաւ յոգւոց հանել և լալ դառնագին: Ժամադիր եղև յետ երից ամսոց տալ պատասխանի բանից արքային. և ինքն լուծեալ լքեալ 'ի խորհուրդս իւր՝ ետ կանգնել 'ի մի կողմն քաղաքին փայտակոյտ մեծ. և 'ի խարոյկ անդ նուիրեաց զոհս բազումս 'ի պատիւ առն իւրոյ քրմի. և ապա առեալ սուր 'ի ձեռս ել անձամբ 'ի վերայ խարուկին յանդիման ամենայն բազմութեան. և ասէ ցնոսա. Ահա գնամ ես առ այր իմ, որպէս եղև ինձ հրաման. և անդէն սպան զանձն սրով, և այրեցաւ 'ի մէջ բոցոյն: Այլ ծանիր զի Թեատրոս ստատնօր զհետ գնայ ստեղծաբանութեանցն Վիրգիլեայ լատին բանաստեղծի, որ փոխանակ Յարպասայ արքային Մաքսիտանեցւոց դնէ զԵնէաս Տրոյացի զեկեալն յարեւմուտս, և ճոխագոյնս նկարագրէ յԵնէականին (դ) թէ զիարդ բանս եդ Դիդէ ընդ Ենէասայ լինել նմա կին, և այնուհետև կասեցաւ 'ի գործոց շինութեան: Եւ ահա նոյն իսկ համառօտ ստանաւորն յառաջ բերեալ 'ի հեղինակէս, առեալ է յընդարձակ բանից անտի Վիրգիլեայ: Բայց սակայն ըստ ստոյգ պատմութեանց, առումն Տրովադայ՝ առ որով էր Ենէաս, բազում ամօք յառաջ էր քան զշինութիւն Կարքեդոնի 'ի Դիդեայ: Յայս հայի և ասելն Եւսեբեայ 'ի քրոնիկոն կանոնի, յաւուրս

Դուլթի աղքայի. «Կարքեդոն շինեցաւ ըստ ոմանց 'ի Կարքեդոնէ Տիւրացւոյ. և ըստ այլոց 'ի Դիդեայ նորին դստերէ, յետոյ քան զՏրովայեցւոց իրքն ճԼԳ ամօք»․ զոր այլք ընթեռնուն ճԼԳ ամօք:

100. Եւադնէ որ տափ լինել դուստր Արեսի ծնեալ 'ի Թեբեայ կնոջէն Ասովպոսի, տուաւ 'ի կնութիւն Կապանէոսի քաջ զօրավարին Արգիացւոց: Սա այնչափ սիրէր զայր իւր, մինչև 'ի լսելն զմեռանիլ նորա 'ի պատերազմի 'ի կողմանս Թեբայեցւոց, ցնորեալ անկաւ 'ի մռայլ. և իբրև բերաւ մարմին առն նորա, զի այրեսցի հրապարակաւ իբր 'ի նշանակ պատուաւոր Թաղման, Եւադնէ զգեցաւ հանդերձ հարսանեաց, և էարկ զանձն 'ի նոյն բորբոքեալ խարոյկ, որպէս զի գէթ մոխիր ոսկերաց իւրոց միասցի ընդ ոսկերս առն իւրոյ. և մի զատցի 'ի նմանէ 'ի մահու, ընդ որում միացեալ էր ամենայն սիրով 'ի կենդանութեան: Իսկ Պղոտիոս էր իշխան ոմն Հռովմայեցի, որ հրամանաւ ծերակուտին խաղացոյց յԱսիա վաթսուն նաւս պատերազմի, և կին նորա Որեստիլլա ընդ նմա. և եղև իբրև հասին 'ի Տարենտոն, անդ ծանրացեալ կինն 'ի խօթութենէ մեռաւ: Յորոյ վերայ սուգ մեծ էառ այր նորա, և ապա ինքնին օծեալ զմարմին նորա պատրաստեաց զհանդէս այրման նորին 'ի խարոյկ, և առ սաստիկ սիրոյն որ առ նա, մերձ եղև 'ի փայտակոյտ անդր, և մխեալ զսուրն 'ի կողս իւր չոքաւ զիւրովի: Յայնժամ առեալ զնա բարեկամաց նորին եդին 'ի վերայ նոյն խարուկի հանդերձ զինուքն, որպէս և էր զինեալ ամենայն զինուորական զարդուք. և ապա հուր մատուցեալ այրեցին 'ի միասին զերկոցունց լծակցաց զմարմինս: Ուր արժան է գիտել, զի զգործ սոցա գովութեամբ ճառագրէ Թեսաւրոս լոկ ըստ բարի կատարեալ սիրելութեան, զոր անկ է ունել լծակցաց առ միմեանս, այլ ոչ ըստ անկարգ եղանակին որով զանձինս մահացուցին յումպէտս 'ի սէր իրերաց. քանզի մահ բերել անձին վասն սիրելւոյն, ոչ զանձն է սիրել, որում նախ է ամենայն ոք պարտական, և ոչ զընկերն (որում ինչ ոչ օգտէ), այլ է անմտութիւն գլխովին, կամ կուրութիւն սիրոյ: Վասն որոյ և հեղինակս զայս անկարգ գործ հեթանոսական յառաջ բերէ միայն 'ի նշանակ սաստկութեան սիրոյն, զոր ունէին լծակիցք 'ի կենդանութեան իրերաց:

101. Փիլոքսենոս, որ Թարգմանի օտարասէր կամ հիւրասէր, եղև անուն այլ և այլ որկորամէտ անձանց. յորս առաւել գտաւ Փիլոքսենոս Կիւթեռացի որդի Եռիքսիդեայ, մականուանեալն ՓԻԼԻԽԹԻ (Ձկնասէր): Սա ըստ գրելոյ Արիստոտելի 'ի բարոյական գիրս, մոլեալ զհետ համառութեան



կերակրոց ասէր. Երանի թէ երկայնաձիգ լինէր իմ որկոր քան զպարանոց կռնկան, առ 'ի կարող լինելոյ երկարագոյնս վայելել զհամեղութիւն ճաշակաց: Պատուիրէր որդւոյ իւրում գնել ազնիւ կերակուրս. և յասել մանկանն թէ Թանկագին է այն ինչ ուտելի, տայր պատասխանի. Այնչափ քաղցր լինի 'ի կոկորդս իմ, որչափ Թանկ գնեցից: Խրատ տայր խոհարարին զի ջերաջերմ բերցէ զկերակուրս 'ի սեղան, մինչև չկարել այլոց ուտել. և այն ինչ սպասէին բազմականք զի փոքր մի հովասցի կերակուրն, նա իսկ և իսկ լափէր զամենայնն. և նոքա զարմացեալ հայէին ընդ երեսս նորա: Երբեմն ևս այնչափ մոլեգին յարձակէր 'ի խորտիկս, մինչև մխել 'ի ներքս և զանգուածս իւր. յորմէ տաղտկացեալ սեղանակցաց յետս կային 'ի սկտեղէ անտի, և նմա միայնոյ մնայր ամենայն:

102. Յունական հուր կոչիւր արուեստական ինչ նիւթ հնարեալ 'ի նախնեաց առ 'ի պէտս ծովային պատերազմաց, զոր արծարծեալ ձգէին 'ի ծով. որ և առաւել բորբոքեալ 'ի մէջ ջրոյ բոցավառ տոչորէր զնաւս Թշնամեաց, և դժուարին էր շիջուցանել զայն. զի 'ի փչելն 'ի նա կամ 'ի շնչել հողմոյ՝ առաւել սաստկանայր, և ջրով ոչ յաղթահարէր: Այլ այս գիւտ բարձաւ յետոյ 'ի միջոյ: Իսկ մոլի հուր կոչի վառուած իւղային գոլորշեաց յօդս 'ի վերայ գերեզմանաց և 'ի վերայ մարմնոց կախելոց զփայտէ. և ասացաւ մոլի վասն յայսկոյս յայնկոյս շրջշրջելոյ 'ի շարժութենէ օդոյն. զի թէ ոք զհետ նորա ընթասցի, 'ի բաց խուսափէ մղանօք օդոյն. և թէ ոք 'ի բաց հեռասցի՝ նա զկնի գայ վասն օդոյն յայնկոյս ձգելոյ:

103. Ի միտ առ և աստ թէ զիարդ համառօտ բանիւ գեղեցիկ արտայայտէ Թեսաւրոս զգերազանցութիւն քրիստոնէական կուսակրօնութեան: Ախորժէր արդեօք երկարագոյնս ճառել զգովութենէ նորա, բայց քանզի դիտաւորումն իւր յայս գիրս է խօսել միայն զբարոյական բարեխառնութենէ որչափ ինչ լուսով բանի ճառեցին զնմանէ փիլիսոփայք, շատ համարի կարճ 'ի կարճոյ անցանել զմիւսոյն, յուշ արարեալ թէ կամաւոր ժուժկալութիւն քրիստոնէից 'ի վեր էր քան զառեսութիւն արտաքին փիլիսոփայից:

## Ծանօթութիւնք 'ի վեցերորդ գիրս։

104. Վերտումնոս էր Աստուած ոմն առ Հռովմայեցիս, որ յամենայն կերպարանս յեղափոխէր զանձն, որպէս կերպարանափոխն Պրոտէոս առ Յոյնս։ Բազում են առասպելք որ զմանէ, և բազմօրինակ մեկնաբանութիւնք բանաստեղծից։ Իսկ բան Թեսաւրոսի հայի յայն, զի ասի թէ կամեցեալ Վերտումնոսի հաճոյ լինել յաչս միոյ 'ի յաւերժահարսանց որ կոչիւր Պոմոնա, եմուտ 'ի պարտէզ նորա, և յայլ և այլ կերպարանս երևեցոյց զանձն. զի գէթ ընդ միով կերպարանաւ սիրեսցի 'ի նմանէ. ձևացաւ ասեն 'ի կերպարանս երկրագործի, հնձողի, այգեպանի և ծերունւոյ։ Եւ զի Պոմոնա ծագի 'ի բառէս pōmum՝ որ է խնձոր կամ պտուղ, ուղիղ մեկնաբանեն ոմանք ասելով, թէ աստուածն անուանեալ Վերտումնոս այլայլափոխ՝ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ նկարագրութիւն չորից եղանակաց տարւոյն, որ պէսպիսանայ ըստ ժամանակին առ 'ի հասուցանել զպտուղս երկրի և շատացուցանել զմարդիկ։ Վասն որոյ Վերտումնոս իբրև երկրագործ՝ նշանակէ զգարուն, իբրև հնձող՝ զամառն, իբրև այգեպան կամ կթող խաղողոյ՝ զաշուն, և իբրև ծերունի անչքացեալ և ալևորեալ՝ զձմեռն։

105. Աստուգի օրինակ Թեսաւրոսի ըստ երկաքանչիւր կարծեաց եւս. իբր զի եթէ ըստ նախնեաց ոմանց դիցին 'ի յատակս ծովու ստորերկրեայ անցք ջրոց, և 'ի նոցունց լինիցին աղբերակունք յորոց բղխեն գետք, և թէ ըստ արդեաց ոչ դիցին այնպիսի անցք, այլ լոկ 'ի գոլորշեաց ելելոց յերեսաց ծովու և յամպացելոց՝ եկաւորութեամբ անձրևաց անպակասմնասցեն լիճք և բղխմունք աղբերաց և գետոց, ըստ երկուց կարծեաց իսկ ծովն է աղբիւր աղբերաց և գետոց. կամ է շտեմարան աղբերականց, յորոց բղխեն գետք. որպէս և գետք անդրէն հոսեն 'ի ծով անդր։

106. Պրոտէոս որդի անուանեալ Ովկիանոսի, համարիւր մի յաստուածոց ծովու՝ արածող ծովային որթուց. էր ասեն գուշակ ապագայից, այլ շատոյ ստոյգ պատգամ եթէ չլինէր կապեալ և ստիպեալ բռնութեամբ. բայց դժուարին էր ունել զնա. զի ոչ միայն երագ փախչէր, այլև կերպարանափոխութեամբ անյայտացուցանէր զանձն այլափոխեալ ըստ հաճոյս յայլ և այլ կերպարանս մարդկան և անասնոց, ինչաւո-



րաց և անշունչ տարերաց. զորմէ բազում են բանք առասպելարկուաց. և են որք կարծեն զսա նոյն լինել ընդ նախասացեալ Վերտումնոսի։ Այլ ըստ Դիոդորոսի Սիկիլիացւոյ Պրոտէոս էր մի 'ի թագաւորացն Եգիպտացւոց, որ եմոյծ սովորութիւն կրել յառաջոյ կողմն թագի կամ սաղաւարտի ազգի ազգի զարդս փոփոխելալս. զի երբեմն առիւծաձև ունէր զայս նշան, և երբեմն վիշապաձև. է զի սաղարթազարդ կամ փետրաւոր, և է զի հրակերպ կամ բոցատերև, առ ահաւոր և փառացի երևելոյ յաչս տեսողաց։ Եւ զի սա ընդարձակեաց զտէրութիւն իւր ընդ ծովակողմն, վասն որոյ և իշխան ծովու կամ աստուած ծովային համարեցաւ։ Յիշէ զսա Նոննոս յասելն, թէ յորժամ երկոքին որդիք նորա Մողոն և Տեղագունոս յաւազակութեան ըմբռնեալ սպանան 'ի Հերակլեայ, «Սգացեալ Պրովտէս վասն սպանման զաւակացն իւրոց ընկեաց զանձն իւր 'ի ծով. զոր անմահացուցին աստուածքն ողորմելով նմա, և եղեալ դև ծովային եկն բնակեցաւ 'ի Փարոս կղզոջ... այլ ասի զՊրովտեայ կերպափոխիլ առ հանդիպեալսն պէսպէս, բայց 'ի սպիտակէ»։ Եւ դարձեալ այլուր գրէ զնմանէ. «Լինէր փոխակերպեալ առ մերձաւորսն, զի մի հայցեսցի գիւթութիւնս ասել և նախագիտութիւնս». և յանուն սորա Փարոս կղզին կոչեցաւ ասէ Պրովտեան կղզի։ Այլ զոր ասէ Թեսաւրոս վասն յաջորդին Դարեհի՝ իմանալ զՔսերքսէս առաջին զարքայն Պարսից. նմին իրի և 'ի ստորև բացարձակ ծանուցանէ թէ յիշեսցէ վերագոյն զՔսերքսէս։ Արդ կոչէ զնա յաջորդ ատելութեան Դարեհի. զի Դարեհ թշնամութիւն մեծ ունէր ընդ Յոյնս, և պատրաստեալ էր ելանել ընդդէմ նոցա 'ի պատերազմ. այլ իբրև եհաս նմա վախճան, յաջորդ նորին Քսերքսէս 'ի գործ եդ զայս պատերազմ աշխարհագումար ամբոխիւ զօրաց ընդ ծով և ընդ ցամաք. ձգեաց և նաւակամուրջ 'ի վերայ ծովուն Հելլեսպոնտեայ, և անցոյց զզօրս։ Եւ եղև իբրև 'ի պարտութիւն մատնեցաւ յերեսաց Յունաց, առ զայրոյթ սրտի կամելով վրէժ առնուլ յաստուծոյն ծովու 'ի Պրոտէոսէ՝ վասն չյաջողելոյ նորա զծովային պատերազմ մեծ, ընկէց 'ի ծով ոտնակապս որպէս թէ կապել զաստուածն 'ի շղթայս, կամ ծառայեցուցանել զծով, թէպէտ և ոսկի արար զոտնակապսն 'ի պատիւ աստուծոյն։ Յիշէ զայս և Արրիանոս 'ի գիրս արշաւանացն Աղէքսանդրի Մակեդոնացւոյ, յասելն. «Ոմանք ասացին, թէ Աղէքսանդր հրամայեալ իցէ քանդել զմեհեան Ասկղեպիոսի որ յԵկբատան. բայց և այս գործ է բարբարոսական, և ոչ իւիք յանկաւոր Աղէքսանդրի. այլ յաւէտ 'ի դէպ գայ ամպարշտութեանն Քսերքսեայ առ դիս, և ոտնակապից նորա զորս ընկէց նա ասեն 'ի Հելլեսպոնտոս առ 'ի վրէժ խնդրելոյ»։ Եւ Սենեկա ասէ 'ի գիրսն յղ. հաստատութեան

իմաստնոյ. «Զկնի՛ր Թուի քեզ յորժամ խակամիտ աշխարհ բազմութեամբ նետից սուսերացոյց զլոյս տունջեան, մինչ գծեա՞լ ինչ նետ արեւու. և կամ յարկանել նորա շղթայս 'ի խորս ծովու, կարո՞ղ ինչ եղև արկել զՊոսիդոն:

107. Հեսպերեան պարտէզ, կամ պարտէզ Եսպերիդեայց է այն զոր յիշէ Խորենացին յաշխարհագրութեան իւրում, և կոչէ «Երեկորնական պարտէզս»: Այս տեղի ըստ առասպելաց էառ զանուն յերից օրիորդաց, որք անուանէին Եգղէ, Արեթուսա և Իպերթուսա կամ Եսպերեթուսա, դստերք Եսպերայ (երեկոյի) և Նիւկտեայ (գիշերոյ): Էր սոցա, ասեն, դրախտ զուարճալի յԱփրիկէ, ուր կային ծառատունկք ոսկեպտուղք. կամ որոյ ծառքն բերէին ոսկի խնձորս. և զի մի ոք մերձ լիցի 'ի պտուղ ծառոցն այնոցիկ, կարգեալ էր 'ի պահպանութիւն դրախտին վիշապ օձ մի ահագին բազմագլուխ և բազմաբարբառ, միշտ արթուն զոխ և զգիշեր: Այլ քաջն Հերակլէս եմուտ, ասեն, անդր հրամանաւ Եւրիսթեայ արքային Միկենայ. և սպանեալ զվիշապն եբեր զոսկի խնձորս առ արքայ: Ոմանք ես ասեն թէ որովհետև յունական բառս մէլօն, որ է խնձոր, նշանակէ երբեմն և խաշինս կամ ոչխարս, փոխանակ ասելոյ թէ Հերակլէս յԱփրիկոյ եբեր 'ի Յունաստան զխաշինս որք ունէին ասր ծիրանեգոյն, առասպելս յառասպելս թէ ոսկի խնձորս լիցէ բերեալ: Իսկ այլք այլ և այլ օրինակաւ մեկնաբանեն զայս ամենայն. որպէս և ոմանք կարծեն ինչ ինչ խառնեալ յայսոսիկ և 'ի պատմութեանց դրախտին Ադենայ:

108. Պոմոնա, որպէս վերագոյնդ յիշատակեցաւ, ծագեալ 'ի լատին բառէս pomum, այն է խնձոր կամ պտուղ, էր անուն միոյ յառասպելեալ յաւերժահարսանց, որ համարիւր իբրև աստուածուհի պտղոց իշխել պտղաբեր ծառոց, որոյ և մեհեանն կայր 'ի Հռովմ. և քուրմ նորա ըստ ժամանակին զոհէր նմա զի տացէ պտղաբերութիւն երկրի. արձանն նորա գրոշեալ լինէր իբրև կին նստեալ 'ի վերայ պտղալից կողովոյ ունելով 'ի ձեռին պտուղս և ոստս 'ի ծառոց: Նոյնպէս և Փլորա համարիւր աստուածուհի ծաղկանց. այլ ըստ Հելլենացւոց կոչիւր χλόη (կանաչ), և համարիւր իշխել ամենայն բուսոց: Սորա ևս գոյր առանձին մեհեան 'ի Հռովմ, և դրոշեալ լինէր իբրև կին ծաղկապսակ ունելով 'ի ձեռին անօթ ծաղկալից: Այլ բազում են զմանէ բանք առասպելաբանից. և մեծ էր հանդէսն զոր առնէին հեթանոսք 'ի տօնի նորա անհամեստ սովորութեամբք:

109. Առասպելեալ աստուածն ստորայնոց կամ սանդարամետականց, որ և միանգամայն համարիւր աստուած ձոխութեանց, կրկնակի անուն ունէր առ Հելլենացիս. մի՝ Ադէս որ թարգմանի դժոխք կամ դժոխական. և միւս ևս Պղուտոն կամ Πλούτων, այն է մեծատուն կամ ձոխ. իբր զի ինչք և գանձք ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց 'ի ստորայնոց ելանեն, այս է 'ի ներքին ընդերաց հողոյ. յոր միտս և առ Ասորիս Մամոնայ կոչիւր աստուածն ընչից, և ինչքն: Եւ էր մականուն այսր դից Ագեղայոս (անծաղը). զի ստորինք երկրի կամ դժոխք անմասն են յամենայն ծաղուց և յուրախութեանց: Նկարէին զսա այր խոժոռադէմ նստեալ 'ի կառս լծեալս 'ի չորից սեաւ երիվարաց, ունելով 'ի ձեռին երեքժանի և փականս դժոխոց. և էին արօտք երիվարաց նորա մարմինք մարդկան որք թաղին 'ի ծոց երկրի: Ի կարգի դից համարիւր, այլ ատելի էր ամենեցուն. ոչ կանգնէին ուրոյն տաճար կամ բագին յանուն նորա. և ոչ երգ ինչ յօրինէին 'ի պատիւ նորա. և թէ ուրեք երբեք զոհէին նմա, միշտ սեաւ անասունս կամ ցուլս մատուցանէին. և զամենայն ձախող պատահարս և զդժբախտ գուշակութիւնս նմա ընծայէին: Ոմանք 'ի վիպասանից ասեն զսա լինել մի յերից Տիտանեանց, որդի Կռոնոսի և եղբայր Արամազդայ և Պոսիդոնի. և եղև ասեն 'ի բաժանիլ թագաւորութեան հօր իւրեանց՝ երկինք վիճակեցաւ Արամազդայ, ծով Պոսիդոնի և ստորինք երկրի Պղուտոնի. զի նա էր կրտսեր, այսինքն է՝ ասեն, առաջինն տիրեաց արևելեան կողմանց տէրութեան հօր իւրեանց թագաւորեալ 'ի Կրետէ. երկրորդն տիրեաց կղզեաց թագաւորեալ 'ի Պեղոպոնեսոս, և երրորդն տիրեաց ստորին գաւառաց յարևմտակողմն թագաւորեալ յԵպիռոս: Որպէս և լիցէ, այլ և այլ արձանք Պղուտոնի կային յԱթէնս. և անուն նորա առաւել առ Աթենացիս էր ծանուցեալ: Բայց են ոմանք որք երկու Պղուտոնս որոշեն, և զայլ և այլ անուանս նորա այսպէս մեկնաբանեն: Անուն սորա 'ի գիրս Խորենացւոյն (Բ. 62), կոչի Պղոտենէոս կամ Պղետոնիոս. և 'ի թարգմանութեան բանից Նոննոսի գրի միշտ Պղատոն, փոխանակ գրելոյ Պղուտոն:

110. Փորփիւրոս Լոսկինոս էր ազնուական Հռովմայեցի, որդի մեծատան. այլ ինքն աղքատ կոչի, զի էր այր անպաճոյճ զկնովին և աղքատութեան սիրող. որ ոչ թողոյր վարել 'ի տան անօթս ոսկեղէնս և արծաթեղէնս բայց 'ի քանի մի սպասուց 'ի պաշտօն դից իւրոց, այլ պատուանդան նոցին ևս եղջերեայ կազմեալ: Եղև հիւպատոս իբր 280 ամօք յառաջ քան զՔրիստոս: Գնացեալ դեսպանութեամբ առ Պիւռոս արքայ պատուեցաւ 'ի նմանէ. և 'ի տալ նմա արքայի ինչս բազումս և պարգևս մեծամեծս չէառ ինչ բնաւին: Ելեալ 'ի

պատերազմ ընդդէմ Սամնիացւոց և ընդդէմ Պիւռոսի վանեալ նուաճեաց զնոսա, և զբժիշկն Պիւռոսի, որ խոստանայր Փաբրիկեայ դաւել զարքայ մահադեղով, կապեալ առաքեաց 'ի ձեռս տեառն իւրոյ: Իսկ Սամնիացիք իբրև անկան ընդ ծառայութեամբ Փաբրիկիոսի, առաքեցին նմա ընծայս տասն տաղանդս ոսկւոյ, և հնգետասան տաղանդս արծաթոյ. հանդերձ հնգետասան ծառայիւք 'ի սպաս նորա. այլ նա զամենայնն յետս դարձոյց ասելով. Եթէ միոյ միոյ 'ի Հռովմայեցւոց բերէիք զոյնչափ, ընդունէի և ես. այլ ինձ միայնոյ և ոչ դանիկ մի առնում: Իբրև կարգեցաւ Փաբրիկիոս քննիչ կամ դատաւոր ժողովրդեան, փոյթ կալաւ զի յամենեսին պահեսցի չափաւորութիւն, և մի ոք արասցէ աւելորդ ծախս 'ի պէտս շքոյ. սմին իրի և մերժեաց 'ի դասէ սենկղիտոսաց զԿ. Հռուփինոս հիւպատոս զայրն երևելի, զի չինել տուեալ էր նորա անօթ մի արծաթի 'ի տասն տաղանդոյ: Ի վախճանի իբրև մեռաւ, այնչափ անինչ գտաւ, մինչև առամուսնացուցանելոյ զդստերս նորա հարկ եղև ծերակուտին 'ի հասարակաց արկեղէ պատրաստել զօժիտս նոցա:

111. Սա ինքն է Ապեղէս անուանի նկարիչն յաւուրս Աղեքսանդրի մեծի, յիշատակեալն 'ի մէնջ 'ի համարն 11: Ցորում ժամանակի էր և Արկեսիղայոս փիլիսոփայ 'ի Պիտանայ առաջնորդ աղանդոյն իմաստասիրաց Երկրորդ Ակադեմեան կոչեցելոյ, որք զամենայն ինչ անստոյգ ասէին լինել, և անհնար համարէին որոշել զստոյգն 'ի ստոյ: Սա ինքն Արկեսիղայոս էր այր քաղցրաբարոյ, բարեկամասէր և առատաձեռն. որպէս և ընդ խաղս եցոյց Ապեղեսի զառատաձեռնութիւն իւր հնարիւք իմն գնելով ընդ սնարիւք նորա քսակ լի ոսկւով: Էր նաև գրասէր յոյժ. մինչև ասել թէ յորժամ ընթեռնում զգրուածս երևելի արանց, և մանաւանդ զՀոմերոսին, այնչափ քաղցրանամ, որպէս թէ ընդ սիրելի ումեք բարեկամի խօսակից լինէի անդադար սիրով: Զառաջինկայ գործ Արկեսիղայոսի 'ի մէջ բերէ Սենեկա (յԲ. գիրս Բարերարութեանց, գլ. ժ). «Արկեսիղայոս, որպէս ասեն, 'ի տես երթեալ բարեկամի իւրոյ աղքատի, որ առ ամօթոյ ծածկէր զիւր աղքատութիւն, և 'ի հիւանդութեան իսկ չիշխէր ասել զչքաւորութիւն անձին 'ի պէտս կարևորս, բարւոք համարելով լռիկ նմին նպաստել զանխուլ, արկեղեցոյց զքսակն ընդ սնարս նորա. որպէս զի այրն առաւպետեալ որ 'ի զուր ամաչէր, յաւէտ գտցէ քան թէ տացէ' որում կարօտէր»: Ապա 'ի վերայ բերէ. «Ես չէ ինչ թէ անգէտ լիցի որ էառն թէ յումմէ էառ. նախ զի և այդ իսկ գործ է երախտեաց... և միւս ևս, թող չգիտասցէ նա թէ էառ, շատ է այն զի ես գիտեմ զոր ետու... Պարտ է շատանալ անձին վկայութեամբ. ապա



թէ ոչ, յայտ առնես թէ ոչ բարերարել, այլ բարերար երևիլ խնդրես»:

112. Փիլոկտետ որդի Պէասայ էր մին յԱրգոնաւորդաց մտերիմ բարեկամ քաջին Հերակլեայ: Արդ ասի յառասպելս, թէ Հերակլէս 'ի մեռանիլ իւրում երդմնեցոյց զՓիլոկտետ չյայտնել ումեք զտեղի ոսկերաց իւրոց. և ետ նմա 'ի յիշատակ պարգևի զկապարճ իւր, յորում կային նետք դեղեալք լեղեաւ հիդրայի կամ մխեալք յարիւն նորա: Եւ եղև յորժամ ել պատգամ 'ի դեղփեանն Ապողոնէ առ Յոյնս, թէ առ 'ի կարող լինելոյ կործանել զՏրոյա պէտք են նետից Հերակլեայ, եկեալ Յունաց հարցանէին ցՓիլոկտետէս. Ո՞ւր թաղեցաւ Հերակլէս, և ո՞ւր իցէ կապարճ նորա: Իսկ նա թէպէտև յօժարէր լնուլ զխնդիր նոցա, բայց վասն երդմանն չկամեցաւ բերանով ասել զտեղի գերեզմանին, այլ ժխտեալ թէ ոչ գիտեմ, եհար միով ոտամբ զգետինն յորում էին ոսկերք Հերակլեայ: Եւ վասն կապարճին խոստովան եղև թէ առ իս է. այլ չկարէ ոք ասէ ձգել զնետս նորա բաց յինէն. վասն որոյ առեալ Յունաց զՓիլոկտետ կամէին տանել 'ի Տրոյիա: Այլ յանցանել նոցա ընդ Լեմնոս կղզի, իբրև փորձել կամեցաւ Փիլոկտետ զնետաձգութիւն իւր, առ անվարժութեան նորա սահեալ նետին խոցեաց զոտս նորա, որով ցուցեալ էր զգերեզման Հերակլեայ. և անկեալ հիւանդագին չկարաց գնալ յոր դէմ եդեալն էր. մինչև զկնի ժամանակաց եկեալ Ոդիսեայ' տարաւ զնա: Եւ յետ առման Տրոյիոյ էանց, ասեն, Փիլոկտետ յարևմուտս, և եկեալ 'ի Կալաբրիա' շինեաց զՊետիլիա: Բայց ըստ Հոմերոսի' ոչ եթէ 'ի նետէ խոցեցաւ Փիլոկտետ, այլ 'ի թունաւոր զեռնոյ, կամ 'ի ջրային օձէ:

113. Սա ինքն է Կրատէս Թեբայեցի, որդի Ասկոնդեայ և աշակերտ Դիոգինեայ, փիլիսոփայ նշանաւոր. որ զամենայն ինչս իւր ընկէց, ասեն, 'ի ծով առ ազատօրէն բերիլ յիմաստասիրութիւն: Այլք ասեն թէ ետ զգոյս իւր 'ի ձեռս աւանդապահի ուրումն կամ սեղանաւորի, այսու դաշամբ զի եթէ որդիք իւր անիմաստ գտանիցին, դարձուսցէ զամենայնն 'ի ձեռս նոցա. ապա թէ իմաստունք լինիցին' քեզ լիցի, ասէ, ամենայնն. զի եթէ իմաստասէրք գտանիցին նոքա, ոչ ինչ պիտոյ են նոցա ինչք: Իսկ Նոննոս այսպէս պատմէ զնմանէ. «Կրատէս Թեբայեցի' էր Բիովտացի ազգաւ. սա կամեցեալ իմաստասիրել ըստ նշանակի իմաստասիրութեան, առեալ զգոյս իւր ընկէց 'ի հանդէսն, բողոքելով այսպէս. Կրատէս արձակեմ զոր ինչ Կրատեսին են, զի մի յաղթեսցեն Կրատեսի գոյքս Կրատեսի. և թողացոյց զվայրս իւր լինել միլօբուտք. և միլօբուտ է վայրն ուր արձակեալ լինին ոչ-

խաղքն 'ի Ճարակս․ քանզի մելօ զոչխարն է ասացեալ Հոմերոս․ աստուստ և մելաճարակք են հօվիւք, և մելօտէ է մորթ ոչխարին»։ Զայս յետին բանքս՝ որք հային առ բառս մելօ, յայն սակս օրինակեցաք աստ, զի օգտեսցեն առ իմաստ ասացելոցս 'ի համարն 107։ Կայ և այլ ոմն Կրատէս անուն փիլիսոփայ Ակադեմեան, որոյ աշակերտ եղև, ասեն, Արկեսիղայոս՝ զոր փոքր մի յառաջ յիշեցաք։ Իսկ վասն Քսերքսեայ թէ զիարդ ոտնակապ ոսկի ընկէց 'ի ծով, ասացաւ 'ի համարն 106։

114. Իմաստ բանին կախեալ է զստուգաբանութենէ անուանն Դիոսի․ զի Դիոս ըստ Իտալացւոց ասի Giove, իսկ Giova նշանակէ օգնէ։ Նոյնպէս է և 'ի Լատինս, զի զԴիոս ('ի սեռական հոլովն) կոչեն Jovis․ և Juvo է օգնեմ։ Նովին մօք մեկնաբանեն և զանունս Jupiter ընծայեալ Դիոսի (յուղղականն), այսինքն է ասեն Juvans pater, այն է օգնող հայր․ որպէս և զՀերա զկին Դիոսի որ և Էրա կամ Իրա, անուանեն Juno, և Իտալացիք Giunone․ որ և համարի աստուածուհի օգնականութեան նեղելոց 'ի մարմնի․ կամ յաղթութեանց պատերազմի, եւս և ծնունդեանց և պարգևաց։ Արդ մեզ հարկ եղև պահել զստուգաբանութիւն հեղինակին․ զի մի հարկեսցուք նոր ինչ ստուգաբանութիւն հնարել ըստ հայումս․ զոր օրինակ, թէ Դիոս դիզէ զպարգևս կամ դիեցուցանէ զկարօտեալս․ թէպէտև քաջ յարմարէր անդուստ։ Թող զայն զի և անունս Դիոս փոխառեալ է 'ի յունականէն․ զի առ Յոյնս Դիոսն անուանի Ζεὺς կամ Δεὺς, որոյ սեռականն լինի Διός․ որ 'ի մեզ փոխանակ ուղղականի վարի։ Իսկ ըստ հասարակ գործածութեան՝ որ 'ի գիրս նախնեաց, կոչի նոյն Արամազդ․ այն է որ ըստ պարսկականին գրի երբեմն Որմիզդ կամ Որմըզդ։ Սա ինքն է Ներրովթ հսկայն ըստ գրելոյ Յովհաննու իմաստասիրի 'ի ճառն ընդդէմ Պաւղիկեանց․ քանզի ասէ․ «Ըստ այսմ օրինակի Բաղդեացւոցն տեսեալ զխառնեանն զայն վիթխարի և աշխոյժ... զգերամբարձեալն մարմնոյն արամադրութեամբ՝ աստուածօրէն իմն պատուով պատուեցին․ և սորա խաւարչտ ռապաշտութեանն զբոլոր անեզերս ընդ իւրև կալեալ կուրացոյց՝ ըստ իւրաքանչիւր լեզուաց այլաձևելով զնորա զանուն․ Քուշացիք Ներրովթ կոչելով, Բաբելացիք Բէլ, Փղշտացիք Բահաղ, Ելլենացիք Դիոս, Պարսիկք Որմըզդ, Հայք Արամազդ»։ Իսկ Կիկերոն բաղում Դիոսս կամ Արամազդս 'ի թիւ արկեալ 'ի գիրսն յղ․ բնութեան աստուածոց, ասէ (Գ․ 16)․ «Հինգերորդ (Դիոս) 'ի Հնդիկս, որ Բէլ անուանի»․ իբր զի ըստ թուոյ քաղաքանց կամ հսկայից որք անուն ստացան յայլ և այլ ժամանակս և 'ի տեղիս, բազմացան և դիւցազունք Դիոս կամ Արամազդ անուամբ․ յոր միտս ասէ և Խորենացին․ (Ա․ 30)․ «Բայց ըստ



դիւցազնութեանն կարծեաց՝ ճշմարիտ է և ասելս մեր․ ոչ Արամազդ ոք, այլ 'ի կամեցողն լինել Արամազդ, զորից եւս այլոց անուանեցելոց Արամազդ․ յորոց մի է և կունդ ոմն Արամազդ»։

115. Մեկենաս Կիլնիոս էր 'ի զարմէ նախնի թագաւորացն Տոսկանայ, այր ճոխ և պգօնամիտ, սիրեցեալ յոյժ յաչս Օգոստոսի կայսեր և երևելի 'ի տան նորա 'ի կարգէ ներքին խորհրդականաց։ Սա եղև ամենայնիւ խնամածու և պաշտպան գիտնաւորաց ուսումնասիրաց և բանաստեղծից, և առաւել եւս Վիրգիլիոսի և Որատիոսի․ զորս ընկալաւ 'ի սէրս բարեկամութիւն իւր, և 'ի նոցանէ ընկալաւ տաղս յօրինեալս յանուն իւր։ Եւ զի առատաձեռնէր սա գրասիրաց ինչս բաղումս և պարգևս մեծամեծս, և յորդորէր 'ի պիտանի գրութիւնս, այսպիսի գործ սորա եղև յիշատակ մեծ առ Հռովմայեցիս, մինչև այնուհետև զերևելի սատարիչս ուսումնականաց Մեկենաս անուանել։ Եւ ինքն իսկ Մեկենաս էր այր գրագէտ, որ և յօրինեաց, ասեն, քանի մի գրուածս, այլ չերևին այժմ 'ի միջի։ Նա է այն զի մնաց անուն նորա գովութեամբ 'ի գործս այլոց՝ որոց նա եղև սատար 'ի գրել։

116. Անունս Տիբերիոս յոմանց ստուգաբանի անագորոյն կամ խիստ, հանելով 'ի յունական բառէս Τῦφος, որ է անիրաւութիւն, հարստահարութիւն, ամբարտաւանութիւն, թշնամանք և խաւարութիւն։ Այլ թէ միթէ Թեսաւրոսի առ այսպիսի ստուգաբանութիւն հայի արդեօք, և կամ առ սովորական բարս Տիբերեայ կայսեր, չէ յայտ։

117. Գետ Լիւդիոյ իմա զՊակտողոս անուն գետ 'ի Լիւդացւոց աշխարհի, որ անցանէր առ Սարդիս քաղաքաւ կամ ընդ մէջ քաղաքին․ իսկ լեառն Միդայ կոչեցեալ թերևս յանուն ոսկեմոլ արքային Միդասայ, յայլոց կոչի Տմոլոս լեառն Լիւդացւոց։ Արդ որպէս գրէ Հերոդոտոս 'ի լեռնէ աստի իջանէ ոսկի բաղում 'ի գետ անդր, նմին իրի և 'ի յատակս նորա է աւազ ոսկեխառն, կամ ոսկի աւազ․ զոր ժողովեն ըստ մասին բնակիչք երկրին․ այլ բաղում մասամբ եւս վարի ոսկին 'ի հոսանաց ջուրց 'ի Տմոլոս գետոյ 'ի Հերմոս գետ, որ անկանի 'ի ծով։ Եւ դարձեալ նոյն հեղինակ ասէ այլուր թէ Լիւդիա ոչ ինչ այլ ունի արժանի յիշատակի բաց 'ի հատուածոց ոսկւոյ, որ իջանեն 'ի Տմոլոս լեռնէ։ Բանաստեղծք զՏմոլոս կոչեն լեառն քրքմաւէտ, և զՊակտողոս ոսկեբեր գետ Լիւդիական։ Իսկ լերինք Արիմասպեայ առին զանուն յԱրիմասպեանց, որք են ազգ ինչ Սկիւթացւոց 'ի հիւսիսակողմն Եւրոպիոյ, կամ Սարմատացիք արևմտեանք

'ի սահմանս Մոսկոլաց, որք աղեղնաւորք, կարծեցեալքն միականիք կամ Ճակատակնեայք վասն խփելոյ զմի ակն 'ի նետաձգութեան առ ուղիղ դիտողութիւն նպատակի: Արդ որպէս աւանդէ Հերոդոտոս և Պլինիոս սոքա սովոր կռուէին ընդ մրջիմնաձեւ գազանս 'ի պատճառս հանքաց ոսկւոյ. զի մրջիմնաձեւքն փորեալ զմետաղս հանէին դիզէին զոսկին 'ի բացի, և պահէին զգուշութեամբ. իսկ Արիմասպեանք 'ի վերայ հասեալ 'ի տօթաժամու յորում գազանքն յորջս իւրեանց գնային, առնուին զոսկին և երագոտն ուղտուք 'ի փախուստ դառնային. այլ սակայն շատ ևս այն էր զի գազանքն զհոտ առեալ եկւորութեան նոցա, կատաղաբար յարձակէին զկնի, և գէշադէշ պատառեալ զարսն հանդերձ ուղտուքն, անդրէն յետս դարձուցանէին զոսկին, բնաւոր իմն սիրով մոլեալ զհետ ոսկւոյն. այլ զայս ոմանք ընդ անստոյգս դասեն:

118. Եպամինոնդ այր իմաստուն և քաջ զօրավար Թեբայեցւոց, զոր յիշեցաք 'ի համարն 77, յետ բազմապատիկ երախտեաց զոր եցոյց առ հայրենիս իւր, որով և սիրելի դտաւ յոյժ յաչս ամենեցուն, մեռաւ իբր անինչ. զի էր ատեցող ընչից, և ոչ ինչ փոյթ տանէր ժողովելոյ զգանձս կամ փարթամացուցանելոյ զիւրսն. վասն որոյ և գանձ սորա կոչի լի բարեկամօք, այլ թափուր յընչից: Իսկ Պաւսանիաս էր երեւելի զօրավար Լակեդեմոնացւոց. որ քաջութեամբ վանեալ զզօրս Քսերքսեայ արքային Պարսից ոչ միայն անուն մեծ ստացաւ, այլ և լցաւ փարթամութեամբ ընչից. այլ յետոյ դաւաճան գտեալ առ հայրենիս իւր՝ բանս եդ ընդ Քսերքսեայ մատնել 'ի ձեռս նորա զտէրութիւն Սպարտիոյ, եթէ տացէ ինքեան արքայ զդուստր իւր: Զայս իմացեալ իւրայոց սպանին զնա, և այսպէս թէպէտ և հարուստ մեռաւ, այլ ատելի հայրենեաց իւրոց. սմին իրի և գանձ նորա կոչի լի դրամօք թափուր 'ի բարեկամաց: Կայր և այլ ոմն Պաւսանիաս Մակեդոնացի, որ սպան զՓիլիպպոս արքայ, և յորդւոյ նորա յԱղեքսանդրէ մեծէ 'ի փայտի բեւեռեցաւ. իսկ Ողիմպիաս արքայ Եպիրոսոյ գործակից մահուն Փիլիպպեայ եկեալ սրտութեամբ 'ի լուր զՓիլիպպոս, գիշերայն թագ ոսկի եդ 'ի գլուխ Պաւսանեայ կախելոյն զփայտէ: Բայց բան Թեաւրոսի առ առաջինն հայի:



## Ծանօթութիւնք յեօթներորդ գիրս.

119. Հռոդոպէ կին Թրակացի էր ծառայակից Եսովպոսի, այսինքն աղախին նորին տեառն որում ծառայ լեալ էր Եսովպոս առասպելաբանն. եղև նմին և գերեկից 'ի միասին վարեալ 'ի գերութիւն. այլ իբրև զերծաւ Հռոդոպէ 'ի գերութենէ տուեալ զանձն 'ի գործս անարժանս, ժողովեաց չարեօք իւրովք գանձ բազում. մինչև կարող եղև շինել զմեծ ամբարտակ մի յԵգիպտոս տուաւել շքեղ քան զամենայն բուրգունս թագաւորացն Եգիպտացւոց. մանաւանդ թէ ըստ ասելոյ ոմանց եղև և թագուհի Եգիպտացւոց, լեալ կին Պսամմետիքոսի արքայի: Բայց են որք սուէն զայս ամենայն, և զմեծ ամբարտակն զայն որ համարեցաւ մի յեօթն սքանչելեաց աշխարհի, ընծայեն Միկերինոսի արքային Եգիպտացւոց: Թեաւրոս զհետ երթայ բանից Պլինիոսի:

120. Զասացուածն Տիտոսի այլք այսպէս յիշատակեն. Տիտոս որդի Վեսպիանոսի էր այնչափ բարի, մինչ զի թէ յիշէր 'ի սեղանի ընդրեաց ոչ ումեք յայնմ աւուր բարի ինչ արարեալ, ասէր. սիրելիք, զօրս զայս կորուսի:

121. Եօթն սքանչելիք տիեզերաց կամ եօթն հրաշք աշխարհի անուանեցան 'ի հնախօսից եօթնեակ հոյակապ կերտուածք կամ ամբարտակք մեծակառոյց և ահաւոր տեսլեամբ յայլ և այլ տեղիս: Արդ թէպէտ թիւ եօթանցն ամբողջ պահի 'ի վիպասանից, այլ ոմանք զայս և ոմանք զայն ինչ երեւելի շինուած յայն թիւ մուծանեն: Քանզի բազումք եօթներորդ դնեն զբուրաստանն կախաղանեայ անուանեալս որ 'ի Բաբելոն, բարձրացեալ յօդս իբրև վերնայարկ ինչ սեամբք կալեալ 'ի չորից կողմանց, յորում կային և ծառատունկք և ջրբուղխք: Յիշէ զայս Եւսեբիոս յառաջին գիրս Ժամանակագրութեան, ուր յետ յառաջ բերելոյ զբանս Աբիւդենեայ, թէ զհարդ Նաբուգոդոնոսոր՝ զարքունիսն մատաղատունկ անկովք ծառոց զարդարեաց, և անուն կոչեաց կախաղանաբուրաստանս», յարէ. «Եւ մի ըստ միոջէ մեկնութիւն ընծայեցուցանէ (Աբիւդենոս) անուանելոյ կախաղանաւոր բուրաստանին. զոր ասէ և Յոյնք յանուանելոց յեօթն չքնաղ հրաշակերտից համարին»: Այլք յաւէտ 'ի նոյն կարգ դասեն զՇամիրամայ քարն միապաղաղ բերեալ 'ի լերանց Հայոց, և կանգնեալ իբրև կոթող 'ի Բաբելոն. որոյ բարձրութիւնն

ասի հարիւր յիսուն ոտնաչափ, և լայնութիւնն քառնչորս: Ըստ այլոց 'ի կարգի եօթն հրաշից դնի Կապիտոլեան տաճարն Հռոմայ. Թէատրոնն ևս 'ի Հերակլիա շինեալ 'ի վերայ գլխոյ անդրւոյ միոյ. մեհեանն քարաշէն 'ի Կիզիկոն, զորոց չէ տեղւոյս գրել: Շատ լիցին յիշատակեալքն 'ի հեղինակէս հանդերձ համառօտ բացատրութեամբ իւրեանց յայլ և այլ տեղիս:

122. Պարծանքն արեգական վասն մի միայն գոլոյն ախորժալուր ձևանայ յիտալականն վասն մերձաւորութեան ձայնիցս «սօ՛լէ» և «սօ՛լօ». որոց առաջինն է արեգակն, և երկրորդն միայն:

123. Բանաստեղծք զանողութիւն ժամանակի նմանեցուցանեն Կռոնոսի Աստուծոյ՝ որկորեայ ծերունւոյ, որ ուտէր զիւր ծնունդս, իբր զի գործք 'ի ժամանակի եղեալք ժամանակաւ ծախին և սպառին: Արդ կամի ասել Թէատրոս, թէ գէթ հաստատուն գործս շինեսցէ մեծագործն, զի ժամանակն մի՛ կարասցէ դիւրաւ ծախել և եղծանել զայն, այլ դժուարասցի 'ի ծամել. որ է ասել լիցի գործ հաստատալինդ և երկարատև: Ի դէպ գայ նմանութիւնն յաւէտ 'ի յունական բարբառ. զի ըստ Յունաց Քռօ՛նօս է Աստուածն Կռոնոս, և Խռօ՛նօս Թարգմանի ժամանակ: Այլ Կիկերոն քաջ յարմարէ զայն և 'ի լատին բարբառ վասն կոչելոյ Լատինացւոց զԿռոնոս Սատուռնուս, որպէս թէ ծագեալ 'ի բայէս Սատու՛ռօ, որ է յագեցուցանել կամ շատացուցանել. «Դարձեալ և յայլ պատճառէ, այսինքն է 'ի բնախօսութենէ, յառաջ եկին բազմաթիւ հոյլք աստուածոց. որոց զգեցեալ զձև մարդկային՝ նիւթ առասպելաց ընծայեցին բանաստեղծից, և ամենայն աւելորդապաշտութեամբք լցին զմարդկան կենցաղս... Որպէս Սատուռնոս համարեցան զնա լինել, որ զընթացս և ըզշրջանս ամաց և ժամանակաց յանձին կրեսցէ. և այս այն աստուածն է որ և առ Հելլենացիս զնոյն անուն կրէ. քանզի Կռոնոս անուն, որ նոյն է ընդ ձայնիս Խռօնօս, զչափ ժամանակին յայտ առնէ: Իսկ Սատուռնոս կոչեցաւ, զի շատանայ ամօք, իբր զի յոգեն բանս զնմանէ որպէս թէ սովորեալ իցէ ուտել զիւր ծնունդս. վասն զի ամանակն ծախէ զմիջոցս ժամանակաց, և անյագաբար յագենայ ամօք անցելովք: Որ և կապեցաւ 'ի Դիոսէ, զի մի՛ յանչափս երագեսցէ յընթացս, այլ կապեալ կայցէ ընդ դիրս աստեղաց»:

124. Լապիթք կամ Լապիթեայք էին ժողովուրդք Թէտաղիոյ, այսինքն Թեսաղիոյ գաւառի, մօտ յՈղիմպիոսլեան և 'ի Լարիսսա քաղաք, առեալ զանուն 'ի Լապիթեայ գաւառէ-



րէն Ապողոնի: Արդ ըստ առասպելաց, 'ի ժամանակի հարսանեաց Պերիթոսի որդւոյ Իքսիոնի արքային Լապիթաց, յարձակեցան Կենտաւրոսք կորզել զՀիպպոդամէ հարսն. վասն որոյ և գրգռեցաւ պատերազմ մեծ ընդ Լապիթս և ընդ ձիացուլս, և եղեն բազում հեղմունք արեան. այլ հուսկ յետոյ 'ի պարտութիւն մատնեցան ձիացուլք յերեսաց քաջին Հերակլի և Թեսէոսի, որք էին գլխաւորք գնդին Լապիթաց: Յիշէ զայս Եւսեբիոս 'ի քրոնիկոն կանոնի յաւուրս Թողայ դատաւորին Եբրայեցւոց, այսու օրինակաւ: «Իշացլուց և Լապիթաց կռիւ: Իշացուլքն Թեսաղացւոց հեծեալք էին, որպէս պատմէ Պաղեփատոս յառաջնումն վասն անհաւատից»: Որպէս և Խորենացին 'ի պատմել անդ զկռուին Տըրդատայ Բագրատունւոյ ընդ Բակրոյ նահապետի Սիւնեաց 'ի պատճառս Նազինիկ անուն կնոջ 'ի վերայ սեղանոյ, ասէ. (Բ. 60). «Եւ անդ էր տեսանել նոր զոմն Ոդիսևս զՊենոպեայ զսեղեխն սատակելով, և կամ զԼապիթեայսն և զուշկապարկացն կռիւս 'ի վերայ Պերիթեայ հարսանեացն»:

125. Նիմփարան Թարգմանի հարսնարան. այլ յառասպելարկուաց զրոյցս Նիմփայք կոչին յաւերժահարսունք, որք համօրէն աստուածուհիք խրախութեանց, լուացմանց, աղբերականց, գետոց, անտառաց և ամենայն զուարճալի տեղեաց. ըստ նմին՝ և Նիմփարանն կամ հարսնարանն այսպէս առեալ լինի 'ի բանաստեղծից: Իսկ 'ի մատենագրի Հռոմայեցիք տային զայս անուն երբեմն բաղանեաց կամ ջերմկաց, և երբեմն ջրմղաց կամ ստորերկրեայ անցից ջրոյ, և յաւէտ ևս լուալեաց, ուր հաւաքին աղտեղութիւնք քաղաքի:

126. Կամի ասել թէ յաւուրս յետագայ կայսերաց՝ 'ի բազմանալ կճեայ շինուածոց 'ի Հռոմ, մեհեանն Դիոսի ոչ ըստ կճեայ այլ և ոսկեայ գլխովն երևէր. զի հեղահետէ զարդարէին զայն և ընուին փարթամութեամբ ընծայատուութիւնք և յիշատակք ինքնակալացն Հռոմայեցւոց. և թէ երբեք վնասիւր 'ի կայծականց կամ յայլոց պատահարաց, կրկին ևս նորոգէին հոյակապ զարդուք. և զի Դիոս համարիւր աստուած շանթարաք, 'ի շանթահար լինել մեհենի նորա ասէին ռամիկք թէ Դիոս կամելով զի առաւել հոյակապ նորոգեսցի տաճար իւր, հրդեհեաց զհինն:

127. Միդաս էր ընչաւէտ և ոսկեսէր արքայ Փռիւգիոյ. վասն որոյ և յօրինակ բերի փարթամից և արծաթասիրաց: Շատ լիցի յառաջ բերել զբանս Նոննոսի զնմանէ. «Մինդաս այս Թագաւոր էր Փռիւգացոցն, և էր արծաթասէր յոյժ և ոսկէմոլ, որպէս և գործք նորա յայտնեն: Արդ ըն-

ծացաւ սա, թէ յոր ինչ և մերձեսցի ոսկի լինիցի. և կատարեցան խնդիք սորա, և յոր ինչ և մերձենայր ձեռամբ կամ բերանով, ոսկի լինէր. և այնպէս ամենայն ինչ նմա ոսկի էր. այլ ուտել ոչ կարելով մաշուամբ կորուսեալ լինէր. զի տրւեալ նմա կերակուր 'ի ձեռն բերանոյն ոսկիացեալ լինէր. վասն որոյ և ապականեցաւ սովով: Այլ պատմեն այլք ոմանք, թէ հրաման առեալ եկեաց. և հրամանն էր այսպիսի ինչ. վարել զկառսն, և ուր արգելցին կառքն՝ լինել քաղաք. և արար այնպէս, և շինեաց զԱնկիւրիաս Գաղատացւոց. քանզի խարիսխ երկաթի գետանաւի կառուցեալ 'ի կառսն արգելու և առկայացոյց զՄինդաս. և այնպէս շինեցաւ քաղաքն, և կոչեցաւ Անկիւրիայ, որ թարգմանի խարիսխ»: Այլ այս ամենայն է մոգացածին գիւտ բանաստեղծից, որպէս և յայտ է:

128. Պանթէոն, թարգմանի ամենաստուածեան կամ ամենայն դից. նմին իրի և 'ի թարգմանութեան Եւսեբեայ գնի ամենադից մեհեան: Այսպէս կոչեցաւ տաճարն շինեալ 'ի Մարկոսէ Ագրիպպասայ 'ի փեսայէն Օգոստոսի կայսեր 'ի Հռովմ քաղաքի յանուն ամենայն աստուածոց. բոլորաձև կառուցեալ, մի եւեթ լուսամուտ ունելով 'ի գագաթան. այն է որ յետոյ 'ի ժամանակս քրիստոնէութեան սրբեալ նուիրեցաւ 'ի պատիւ ամենայն սրբոց Ճշմարտին Աստուծոյ:

129. Այս յիմարական փառասիրութիւն սովորական ինչ եղև առ նախնի կայսերս զկնի Տիբերեայ. զի անպատկառ ոմանք 'ի կենդանութեան զանձինս աստուածացուցանէին, և զայլս երևելիս յետ մահու ծերակոյտն 'ի նոյն պատիւ դրէր: Որպէս է տեսանել 'ի քրոնիկոնն Եւսեբեայ. ուր ասի. «Գայիոս զանձն աստուածացոյց... Սինկղիտիկոսն վճիռ պատգամաւորութեան տալով Տիտոս աստուած անուանեցաւ... Սինկղիտոսն զՆերուաս աստուած համարեցաւ... Սինկղիտոսն համարեցաւ զԱդրիանոս աստուած»:

130. Յառաջ բերեալն 'ի սրբոյն Պօղոսէ բան կրետացւոյն մարգարէ անուանելոյ. «Կրէտացիք հանապազստուտք, չարաճճիք, դատարկապորտք», (Տիտ. Ա. 12). է ասացուած Եպիմենիդեայ փիլիսոփայի, որ էր 'ի Գնոսոս կամ 'ի Փեստոս քաղաքէ Կրետայ կղզւոյն. և վասն մեծակեաց առանձնութեան իւրոյ, և 'ի ձեռն բազմապատիկ գրուածոց իւրոց զոր արար ոտանաւոր չափմամբ, առացեալ էր անուն մեծ առ Կրետացիս իբր պատգամախօս 'ի կողմանէ դից. մինչև կոչել զնա և Պղատոնի այր դիւցանման: Ասի թէ սա 'ի մանկութեան վաստակեալ ննջեաց 'ի քարանձաւի միում անընդհատ ամս իբր յիսուն:



131. Ափրոդիտէ կոչին սոա կանայք, որք խոտորեցուցին զսիրտ Օգոստեայ կայսեր ապողոնականերպ զգեստաւորեալս խենեշանալ և շռայլել 'ի խրախճանս խնճոյից յաղետալի պահու անդ սովու:

---

## Ծանօթութիւնք յութերորդ գիրս:

132. Այս փոխաբերութիւնք յարմարին կլիմալոկանն առաւելապէս ըստ նմանութ գոլոյ բառից. զի φῶς նշանակէ ջուր, և φωλεὸς մանդալ. σκάλα սանդուղք, և σχολή դպրոց. որպէս եթէ և մեք 'ի հայումս յարմարեսցուք այսպէս. Ճշմարտութեան ջուր, երկրայութեան նաւ. առաքինութեանց սանդուղք, և ջանք գիտութեանց սանդուղք:

133. Առաջինկոյ անուանք պատուոյ կամ վերտառութիւնք հայլին 'ի սովորութիւն արեւմտեայց յաւէտ ըստ վիճակի յետին դարուց, զորս դժուարին է պահմամբ նախկին նշանակութեան վերածել 'ի հայ. և մանաւանդ զբառդ serenità կամ serenissimo, որ է պայծառութիւն օդոյ կամ ամենապարզ իբրև զօդ յստակ, ուր մեք եդաք վսեմ:

134. Ըստ առասպելաց Կերբերոս կամ Կերբեր անուանեալ շունն էր գազան եռագլուխ կարգեալ 'ի Պղուտոնէ սանդարապետէն պահապան դրանց դժոխոց. որ սիրով ընդունէր, ասեն, զինքն եկեալսն, այլ չտայր թոյլ ումեք ելանել արտաքս. սա սպան զՊերիթոս որ եկեալն էր 'ի յափշտակել զՊերսեփոնէ դուստր Դիոսի և Դեմետրեայ զյափշտակեալն 'ի Պղուտոնէ. գործակից էր Պերիթոսի և Թեսեւս, որ արգելաւ 'ի դժոխս. այլ զերծոյց զնա, ասեն, Հերակլէս և զԿերբերոս կապեալ շղթայիւք նուաճեաց: Զայս ոմանք մեկնաբանեն այսպէս. Կերբերոս, ասեն, էր շուն Պղուտոնի արքային Եպիրոսի կամ սորին Ալբանիոյ, ուր գտանէին շունք աչագին, որպէս թէ եռապատիկ աւելի լինել քան զհասարակ շունս. և եղև յորժամ Թեսեւս ըմբռնեցաւ 'ի կալանս Պղուտոնի արքայի, Հերակլէս հնարիւք հանդարտեալ զշունն որ կայր առ դուրս բանտին, ազատեաց զԹեսեւս: Իսկ ոմանք գնեն թէ Կերբերոս էր օձ մեծ զոր սպանեալ իցէ Հերակլէս: Այլք այլազգ մեկնեն, Կերբերոսդ անուն ծագի, ասեն, 'ի բառէս κρεοβόρος, այն է մսակեր. որով նշանակի, ասեն, գերեզման կամ հող երկրի, որ կլանէ զմարմինս մեռելոց. և վասն

ղպատելոյ Հերակլի զԹեսեւս 'ի մահուանէ, տացաւ թէ աղատեալ իցէ 'ի գերեզմանէ, կամ 'ի Կերբերոն մահուն ջանէ. և այս առակ թուի, ասեն, ծագեալ 'ի սովորութենէ Եգիպտացւոց, որք դնէին շուրջ աճաւորս 'ի պահպանութիւն գերեզմանաց: Յիշատակէ զայս առասպել նաև Եւսեբիոս 'ի քրոնիկոնն գրելով յաւուրս դատաւորացն Իսրայէլի այսպէս. « Աղջկան (Պերսեփոնեայ) յափշտակութեան իրք յԱյդոնեայ Մոլոսացւոց արքայէ. որոյ էր շուն մի յաղթանդամ Կերբերոս. որ զՊերիթոս յետոյ սպան եկեալ 'ի կնոջն առևանգութիւն Թեսեաւ հանդերձ, և զԹեսեւս ապրեցոյց, որ մերձ էր յապականել, պատահեալ Հերակլի. իսկ վասն յայտնի վտանգին 'ի դժոխոց ելեալ կարծէր. պատմէ և Փիլոքորոս »: Իսկ Նոննոս ըստ նախագրելոցս ասէ. « Առասպելեալ լինի թէ է ինչ շուն՝ որ ունի գլուխս երիս, որ և կոչի եռանդամ, ասեն, պահէ զդրունս դժոխոց. և զիջեալսն 'ի դժոխս ողջեկլով շողոմէ. իսկ զելեալսն խածանէ և ոչ թողացուցանէ ելանել. արդ ասի թէ Հերակլէս յորժամ էջ յափշտակել զՊերինթոս և զՊերսեփոնէ՝ ելանելով սատակեաց զԿերբերոսն »:

135. Իսիս էր աստուածուհի Եգիպտացւոց պաշտեալ 'ի նոցանէ 'ի կերպարանս արջառոյ. զի ըստ առասպելաց Յով դուստր Ինաքայ փոխեալ յարջառ կամ յերինջ 'ի Դիոսէ գնաց յԵգիպտոս, և անդ աստուածացեալ՝ Իսիս անուանեցաւ, որ էր անուն գերագոյն պաշտաման առ հեթանոսս: Այլ ոմանք ասեն թէ Իսիս պաշտեալն յԵգիպտացւոց էր լուսին, որ նշանակիւր եղջերաւոր անասուն. որպէս և արեգակն կոչիւր 'ի նոցանէ Ոսիրիս՝ այսինքն բազմաչեայ, վասն լուսանշոյլ ճառագայթիցն. զոր համարէին եղբայր Իսիդեայ՝ միանգամայն և այր. վասն այսորիկ կոչէին և զնա Ապիս, որ թարգմանի արջառ: Իսկ զոր ասէ Թեսաւրոս վասն գրաստուն որ բարձեալ ունէր զպատկեր Իսիդեայ, թուի զրոյց բանաստեղծից. իբր զի կամ որոշեցին ոմանք զարջառն Իսիս յայլմէ գրաստէ, և կամ հեգնօրէն ասացին թէ գրաստն կարող էր պարծիլ, որպէս թէ երկրպագուք արժանին՝ զոր բարձեալ տանէր, ինքեան երկիր պագանէին և ոչ արժանին:

136. Այաս էր անուն երկուց քաջ արանց. որոյ մին կոչեցաւ Ոյլէոս յանուն հօր իւրոյ Ոյլեայ, և միւսն Տեղամոնիոս յանուն հօր իւրոյ Տեղամոնի: Արդ սա ինքն Այաս Տեղամոնեան որ էր արքայ Սաղամինոյ, եղև նշանաւոր արութեամբ առ Հելլենացիս իբր երկրորդ յետ Աքիլլեսի. վասն որոյ և պնդէր թէ ինքեան անկ է ժառանգել զվահանն կամ զզէնս քաջին Աքիլլեայ. այլ Ոդիսեւս այր խորամանկ հաճոյց զդատաւորս Յունաց, զի ինքեան տացեն զիրաւունս ժառանգելոյ զայն զէնս: Ընդ որ յանհնարինս դառնացեալ Այասայ ցնորեցաւ 'ի մտաց, և դիմեալ 'ի դաշտն 'ի վերայ հօտից անդէոց արար կոտորած մեծ, կարծելով զՅոյնս կոտորել. այլ իբրև 'ի յուշն դարձաւ և 'ի միտ եառ զանմտութիւն իւր, առ ամօթոյ անձամբ զանձն սպան: Այլ ասի յառասպելս, թէ վահանն Աքիլլեայ անկեալ 'ի ձեռաց Ոդիսեայ 'ի ծով, և վարեալ յալեաց եհաս 'ի ցամաք անդր, ուր թաղեալն էր Այաս ցուցանելով թէ նմա էր անկ:



137. Կուինտիոս Կինկիննատոս երկիցս եղև դիկտատոր կամ իշխանապետ հրամանատար 'ի Հռովմ. զի զկնի առաջին նուագի իշխանութեան իւրոյ յորում ժամանակի արար գործս մեծամեծս, իբրև եհաս յամս ծերութեան առանձնացաւ 'ի փոքրիկ կալուածոց իւրոց յութնամեայ հասակի. ուր 'ի հերկելն նորա զերկիր կամ 'ի սերմանելն զցորեան, յանկարծակի հասին պատուիրակք 'ի ծերակուտէն Հռովմայ, և դարձուցին զնա 'ի քաղաքն կացուցանել անդրէն դիկտատոր: Արդ 'ի գործոյ աստի մականունն եդաւ նմա, ասեն, Սերրանոս կամ Սերանոս. զի *sero* 'ի լատին բարբառ նշանակէ սերմանել: Սմին նման անցք անցին և ընդ Ատտիլիոս Հռեգուղոս որոյ վասն և նա Սերանոս կամ Սարանոս կոչեցաւ, ասեն: Բայց են ոմանք որք նոյնացուցանեն զանցս երկոցունց: Թեսաւրոս առնու զբանս իւր 'ի գրոց Պլինիոսի: Յայս հայի և ասելն Սենեկայ. « Կուինտիոս փութայ յանձնէ թօթափել զպատիւ դիկտատորութեան, այլ յետս կոչի 'ի գործոյ արօրադրութեան »: Եւ Կիկերոն. « Յագարակս գտանէին և անձինք ծերակուտի, և այն ծերունիք: Զի ահա յարօրադրել անդ Կուինտիոսի Կինկիննատոսի տուան նմա աւետիք, եթէ եղեր դիկտատոր... Յանդաստանէ 'ի ծերակոյտ հրաւիրեցան և Կուրիոս և այլ ծերք. յորմէ և հրաւիրակք նոցին ուղեգնացք անուանեցան »:

138. Ագրիպպաս էր փեսայ Օգոստոսի շինողն Պանթէոնի, զորմէ տես 'ի վերոյ 'ի համարն 128. և Մեկենաս մտերիմ սիրելի նորին կայսեր, որպէս յիշեցաք 'ի համարն 115: Արդ սոքա երկոքին էին իմաստուն խորհրդականք և խրատտուք կայսեր 'ի բազում իրս. վասն որոյ և յետ մեռանելոյ նոցա՝ որչափ ինչ վրիպակ գործէր Օգոստոս անխորհրդաբար, յոգւոց հանէր վասն չունելոյ առ իւր զԱգրիպպաս և զՄեկենաս:

## Ծանօթութիւնք յինններորդ գիրս:

139. Արգոս որդի Արիստորայ ըստ առասպելաց ունէր հարիւր աչս, որոց կիսոյնքն միշտ բաց էին՝ ՝ի փակել այլոց կիսնից ՝ի քուն. վասն որոյ և ՝ի Հելլենացւոց կոչեցաւ Πανόπτης, այսինքն ամենատես: Արդ բանաստեղծք յօդեցին, թէ Հերա կին Դիոսի կարգեաց զԱրգոս պահապան Յովայ դստերն Ինաքայ ՝ի փոխել նորա յարջառ կամ յերինջ. որ այն ինքն է Իսիս նախայիշատակեալն ՝ի մեզ. այլ յետոյ Հերմէս հրամանաւ Դիոսի սպան զԱրգոս, և յափշտակեաց զՅով. վասն որոյ և կոչեցաւ Արգոսասպան: Իսկ զաչս Արգոսի էառ, ասեն, Հերա՝ և ընդելուզեաց յագիս թռչնոյ իւրոյ, այն է սիրամարգ: Զայս առասպել ոմանք մեկնեն այսպէս. Արգոս ասեն՝ հարիւրաչեայ աստղալից երկինքն է բազմանշոյլ լուսով փայլեալ իբրև բազմաչեայ. Յով կամ Իսիս յարջառ փոխեալն է երկիրս, զոր Եգիպտացիք ՝ի նմանութիւն արջառոյ ձևացուցանէին ՝ի խորհրդաւոր նկարագրութիւնս. և զի աստեղք երկնից լուսատու լինին երկրի ՝ի գիշերի, վասն որոյ ասացաւ թէ Արգոս բազմաչեայն կայ իբրև դէտ ՝ի պահպանութիւն Յովայ. և այն ՝ի ձեռն Հերայի, այն է այեր կամ օդ. իսկ Հերմէսիւ նշանակի արեգակն, որ յայնժամ սպանանել ասի զԱրգոս, յորժամ ծագեալ ընդ առաւօտս ծածկէ զլոյս աստեղաց իւրով պայծառութեամբ ՝ի տեսութենէ մարդկան, և յինքն յափշտակէ զՅով այսինքն զերեսս երկրի: Եւսեբիոս այսչափ ինչ յիշատակէ ՝ի կանոնն յառաջին ամի Մովսէսի. « Առ սոքօք այլք լեալ պատմեն . . . զԱրգոսյ ամենադիտակ, զՅովայ դստերէ Պրոմիթեայ »:

## Ծանօթութիւնք ՝ի տասններորդ գիրս:

140. Վասն Դեդալոսի լիով ասացաւ վերագոյնդ ՝ի համարն 58, տես անդ:

141. Մարդ ապուլեան է տեսակ ինչ թռչնոյ սարդի, որ ուտէ զայլ սարդս և զխարդս. թշնամի է կարճաց, և լոկ տեսլեամբ իւրով ահցուցանէ և թմրեցուցանէ զնոսա. և զի ոչ այնչափ գտանի յայլ գաւառս Իտալիոյ, որպէս յԱպուլիա գաւառն Նէապօլսոյ, անտի էառ զանունն: Ունի սա և աստղանիշ կիտուածս ՝ի վերայ մարմնոյն, վասն որոյ և լատինք կոչեն զնա նաև stellio այսինքն աստղանիշ: Բայց քանզի stellio է յատկապէս տեսակ ինչ մողէզի կոչեցեալն ՝ի մեզ կովագլից, թուի թէ ոմանք ՝ի մի շփոթեն զյատկութիւնս երկոցունց կենդանեացս: Եւ յիրաւի ըստ Թեսաւրոսի ՝ի դէպ գայ նաև կովագլխացի. զորմէ ասի թէ ունի թոյն վնասակար, այլ ոչ մահաբեր. և կամ թէ ՝ի ձեռն թուլութեան տկարացեալ ոչ յոյժ ազդէ թոյնն նորա. է խորամանկ բարուք, ամ ըստ ամէ փոխէ զմորթն, և ուտէ, ասեն, զայն՝ զի մի լիցի դեղ ՝ի պէտս այլոց:

142. Բրիսէյա կամ Վրիսէյիս էր մականուն Հիպպոդամեի դստեր Վրիսէսի արքային Լիւռնեսացւոց՝ յաւուրս տրովական պատերազմին. և եղև յառնուլ Յունաց զԼիւռնեսս քաղաք, և ՝ի բաժանել վիճակաւ զգերիս ՝ի մէջ իւրեանց, Բրիսէյա անկաւ բաժին Աքիլլեսի: Իսկ Ագամեմնոն արքայ Արգիացւոց և Միկենացւոց որ սպարապետն էր բովանդակ զօրուն Յունաց, աչս արձակեալ ՝ի Բրիսէյա՝ կորզեաց զնա ՝ի ձեռաց Աքիլլեայ: Ընդ որ գժգմնեալ նորա յոյժ յետս եկաց ՝ի գործոյ պատերազմին, և չկամեցաւ այլ ևս մարտնչել ընդ թշնամիս Յունաց ընդ Տրովադացիս. մինչև յետ աւուրց միոյ ՝ի սպանանել Պատրոկղի սերտ բարեկամին իւրոյ ՝ի Հեկտորէ Տրովացւոյ, վառեալ ՝ի վրէժխնդրութիւն արեան նորա անդրէն բուռն եհար զգործոյ քաջութեան, մինչև սպան անձամբ զՀեկտոր:

143. Որպէս այլուր յիշէ սա ինքն Թեսաւրոս, պատճառ զայրանալոյ Տիբերեայ եղև անտի կասկած իւր. զի ՝ի յիշելն Զենոնի հռետորի զՀռոդոս՝ ՝ի միտս անկաւ Տիբերի աքսորանքն իւր յառաջ ժամանակաւ յայն կղզի, և համարեցաւ թէ նաև Զենոն առ ՝ի նախատինս դնելոյ նմա յիշեալ իցէ զանունն կղզւոյն այնորիկ. նմին իրի և ՝ի բարկութիւն անհնարին բրդեալ սպան զնա վաղվաղակի:

144. Նոյն համարի Թեսաւրոս ըստ ոմանց ՝ի մատենագրաց զխաղն կոչեցեալ Պենտաթղոս կամ πένταθλον ընդ միասին, որ կոչիւր Պանկրատիոն կամ παγκράτιον. արդ πένταθλον թարգմանի հնգամրցական կամ հնգեկի մրցանք. իսկ παγκράτιον ամենազօր կամ ամենայաղթ մրցանք, այսինքն յորում ամենայն տեսակ մրցմանց կատարիւր. վասն որոյ և ՝ի թարգմանութեան Եւսեբեայ դնի ամենախումբ մարտ: Արդ եթէ Տեսիփոնս քաջայաղթ կամ ամենայաղթ կոչեցաւ, կամ

որ նոյն է [illegible], որպէս ասէ հեղինակս, կամ 'ի հնգեան մրցմանց խաղի եղև յաղթող, և կամ յայնմ յորում ամենայն տեսակք ըմբշամարտութեան կատարէին: Քանզի և են որք պնդեն թէ մի և նոյն հանդէս էր հնգեակ մրցմանցն. յորում թէ ոք ըստ ամենայնի յաղթող գտանէր՝ կոչէր ամենայաղթ:

145. Եծելինոս էր բռնաւոր ոմն 'ի կողմանս Իտալիոյ յ՚ ԺԳ դարուն. որ զամս քառասուն վեր 'ի վայր արտար զբաղում տեղիս, և մանաւանդ զսահմանս Վերոնայի և Պատաւիոյ: Ընդ բանիւ արարին զնա քահանայապետք, զի թերևս զգաստասցի. այլ նա և ևս սաստկացաւ: Հուսկ յետոյ 'ի գլխեն 'ի վերայ Մեդիոլանու՝ 'ի պարտութիւն մատնեալ յիշխանացն Լոմպարտացւոց՝ վիրաւորեցաւ չարաչար, և ձերբակալ եղեալ եդաւ յարգելանս. ուր անձամբ զանձն պատառեալ յուսահատաբար կորեաւ յամի տեառն 1259:

146. Անունն Կեսար յայն սակս ասի ընծայեալ Յուլիոսի. զի 'ի ծնանիլ նորա հարկ եղև, ասեն, հատանել զորովայն մօրն. արդ Թեսաւրոս կամելով նկարագրել զբարկասիրտ բարս Յուլիոսի՝ առնու զանուանակոչութիւն նորա: Եւ 'ի վերջոյ յայս աւարտէ զբանն, թէ Յուլիոս՝ Կեսար ծնաւ, և Կեսար մեռաւ. այսինքն հատմամբ կամ կտրմամբ մօրն ծնաւ, և ինքն սրակոտոր եղեալ 'ի դաւադրաց մեռաւ: Եւ արդարև ըստ բարկացողութեան մասին այսչափ պախարակելի եղև Յուլիոս. բայց յայլ գլխոց բազմապատիկ ձիրս բարելաւութեան յանձին բերէր, որպէս և ուրեք ուրեք յիշատակէ հեղինակս:

147. Առ ինչ հայի պատուհան Սոկրատայ, չէ մեզ յայտ. բայց առաջիկայ բանք հեղինակիս քաջ յարմարին պատուհանին Մոմոսի, որ ըստ որում ունիմք յիշել 'ի համարն 159, ստգտանէր զգործս Հեփեստոսի աստուածոյն ասելով, թէ պարտ էր քեզ դնել պատուհան մի 'ի վերայ կրծոց մարդկան, զի ընդ այն տեսցի զոր ինչ ունին մարդիկ 'ի սրտի, և մի՛ մեղցի ումեք գաղտնի ինչ չարիս խորհել: Այլ մարթ է յարմարել տեղւոյս և զայլ անցս որ պատմին զՍոկրատայ: Առաքեաց, ասեն, երբեմն մեծատուն ոք զորդի իւր առ Սոկրատ՝ փորձել և տեսանել զուշիմութիւն մանկանն. և եղև իբրև ասաց մանկածուն ցՍոկրատ, ածի առ քեզ զպատանի զայս ըստ հրամանի հօր իւրոյ զի տեսցես. ասէ Սոկրատ ցմանուկն. Խօսեաց որդեակ, զի տեսից զքեզ. յայտ արարեալ թէ 'ի բանից ճանաչի իւրաքանչիւր ոք, և իբրև ընդ հայելի կամ ընդ պատուհան տեսանի բերանն սրտի նորա. զի 'ի յաւելուածոյ



սրտի խօսի բերանն: Ա՛յլ է և հայելի Սոկրատեան, իբր զի խրատէր Սոկրատէս զմանկունս կամ զաշակերտս իւր հայել երբեմն 'ի հայելիս. զի թէ գեղեցիկ իցեն դիմօք, զգուշասցին չարատել զոգիս չարեօք. և թէ տգեղ, փութասցին ընուլ առաքինութեամբ զթերին բնութեան, գեղազարդելով զհոգիս փոխանակ մարմնոյ: Դարձեալ պատմի թէ Անտիսթենէս Կիւնիկեան փիլիսոփոս արկեալ զիւրև վերարկու կարկատուն և պատառոտեալ, շրջշրջէր զպատառուածս նորա 'ի ցոյցս մարդկան. զոր տեսեալ Սոկրատայ ասէ. Ընդ ձեղքուածս վերարկուիդ տեսանեմ ես իբրև ընդ պատուհան զքո մնափառութիւն:

148. Սա ինքն է միջինն Տիգրան արքայ Հայոց Արշակունի, որդի Արտաշիսի Պարթևի, քաջազօր ախոյեան ընդդէմ Հռովմայեցւոց զօրութեան գործակցութեամբ քեռայն իւրոյ Միհրդատայ: Զսորին Տիգրանայ զմեծամեծ գործս բազում անգամ տեսին Հռովմայեցիք, և զարմացան և սասանեցան. այլ 'ի յաղթիլ նորա 'ի միում նուագի յանպատրաստից, առաւել քան զչափն ուրախացան, և մեծ ինչ համարեցան զի յաղթեցին անպարտելւոյն. վասն որոյ և մեծացուցին ևս քան զևս զանունն Պոմպէի որ դիմամարտն էր Տիգրանայ. և բազմօրինակ նկարագրեցին զայն յաղթութիւն, որպէս թէ Տիգրան յոտս անկեալ իցէ Պոմպէի, և զթագն յերկիր եդեալ. այլ 'ի նմանէ մարդասիրութեամբ ընկալեալ. բայց զստոյգն ունիս տեղեկանալ 'ի գրոց պատմութեանց Հայոց:

149. Յայս գլուխ բառս συμπάθεια կամ [illegible] առեալ լինի փոխանակ ախտակցութեան 'ի գործածելր սրտէ ընդ թշուառութիւն ուրուք, մինչև յողորմ գալ և ցաւիլ նաև ընդ դոյզն իրս, և կամ ընդ արժանահաս պատիժ յանցաւորաց: Մարթ էր զայս կոչել կարեկցութիւն, աղեկիզութիւն, կամ ըստ իտալական բառի՝ ողորմտութիւն: Զայս կարևոր է 'ի միտ առնուլ, զի մի՛ շփոթեսցի ընդ առաքինութեան ողորմածութեան, և կամ նաև ընդ գթութեան զորմէ 'ի նախընթաց գլուխն Ճառեաց հեղինակս:

150. Պրամեթէոս կամ Պռոմեթևս, որ թարգմանի յառաջախնամ կամ նախահոգակ, ըստ առասպելաց էր այնպիսի ոք ճարտարահնար, մինչև՝ ասեն, իմաստութեամբ իւրով 'ի հողոյ երկրի կերպարանեաց զբազում մարդիկ. և ապա ելեալ նաև յեթերս վերին մերձեցոյց խրձունս ինչ դիւրավառ խըռուոյ յանիւս արևու. և գողացեալ անտի հուր՝ եբեր և ետ 'ի պէտս իւրատեղծ մարդկան. ընդ որ ցասուցեալ ասեն Արա-

մաղգայ առաքեաց 'ի մարդիկ պէսպէս ախտս հիւանդութեան. և զնոյն ինքն զՊրոմիթևս ետ կապել 'ի ձեռն Հերմեսի 'ի վերայ քարի միոյ 'ի լերինն Կովկասու. և արձակեաց 'ի վերայ նորա արծուի մի, զի կրծեսցէ և կերիցէ զլեարդ նորա: Եւ ահա այս է առասպելեալ տանջանքն Պրոմիթեայ: Յաւելուն առասպելաբանօք թէ յետոյ եկեալ Հերակլի սպան զարծուին, և ազատեաց զՊրոմիթևս: Զայս ամենայն այսպէս համառօտէ Նոննոս. «Արդ Պրոմիթևսս այս ասի թէ գողացաւ զհուր յաստուածոցն, և շնորհեաց մարդկան, և եթէ առ միս զոհիցն պատրեաց զԱրամազդ, և 'ի բարկութենէն շարժեաց զնա կրկին. իսկ Արամազդ զսա կամեցեալ պատուհասել, եդ արծուի ուտել զլերդ նորա. և գիշերի դարձեալ ողջանայր, և միւսանգամ արծուին սկսանի ուտել 'ի վաղիւն. մինչև եկեալ Հերակլեայ նետիւք խոցեաց զարծուին»: Ոմանք ըստ Եւսեբեայ դնեն զՊրոմիթևս յաւուրս Յովսեփայ նահապետի, և զառասպելն վասն ստեղծանելոյ նորա զմարդիկ՝ այսպէս մեկնեն. քանզի, ասեն, իմաստուն էր՝ 'ի մարդկութիւն և 'ի գիտութիւն փոխակերպէր զանասնաբարոյս 'ի մարդկանէ: Այլք ասեն թէ նախ առաջին սա ուսոյց դրօշել արձանս. որպէս և զելս նորա յերկինս մեկնեն ոմանք վասն պարապելոյ նորա յաստղաբաշխութիւն, կամ՝ վասն քննելոյ զպատճառս փայլատակմանց, և այլն: Գրիգոր Մագիստրոս 'ի թուղթն առ Պաւղոս պատրիկ այսչափ ինչ յիշէ. «Զոր իւր բերեալ զՊրոմիդոսն զայն յաստուածոցն զհուր գողացեալ շնորհէր աշխարհի հանդերձ Հեփեստոսիւ»: Եւ 'ի թուղթն առ Պետրոս կաթուղիկոս զնախանձն անուանէ, «Կայծակն հրափայլութեան քան զՊրոմիդեայն և զՅեփեստոսին»: Իսկ վասն Գիգեայ այրասէր կնոջ, որ անմխիթար լայր ընդ մահ առն իւրոյ, և առ չառնլոյ յանձն լինել առն այլում ցաւագին մահուամբ չոքաւ զեւրովի, յիշեցաք 'ի վերայ 'ի համարն 99: Յորոյ վերայ Վիրգիլիոս և այլ բանաստեղծք այնպիսի ցաւագին ստեղծաբանութիւնս յօրինեն, մինչև յոյժ շարժել զընթերցողս կամ՝ զլսողս: Այլ առաւել ողբալի ձևանան 'ի խաղս եղերերգութեան մոացածին անցք Եդիպոսի որդւոյ Լայոսի արքային Թեբայ: Արդ ըստ առասպելաց Լայոս լուեալ 'ի պատգամախօսէն, թէ յորդւոյ քումմէ սպանցիս, հրաման ետ հովուի միոյ տանել զմանուկն Եդիպոս 'ի դաշտ և կորուսանել: Իսկ հովիւն ողորմեալ 'ի վերայ արքայորդւոյն, և միանգամայն երկուցեալ յահէ արքային, առեալ ծակեաց զպճղունս ոտից մանկանն իբրև զշխարի, և կախեաց զծառոյ. որպէս զի մի լիցի կերակուր գազանաց, այլ առ սակաւ սակաւ ինքնին մեռցի 'ի սովէ: Եւ մինչդեռ կայր այնպէս կախեալ Եդիպոս, և ձայն բարձեալ լայր, եկն 'ի տեղի անդր Փորբաս հովիւ Պոլիբոսի արքային Կորնթացւոց. և գթացեալ 'ի տղայն իջոյց զնա 'ի վայր, և առեալ տարաւ առ թագուհին իւր Մերոպէ, որ էր անզաւակ. վասն որոյ և գութ մեծ անկաւ 'ի սիրտ թագուհւոյն, և սիրեաց զմանուկն. և ետ դարմանել. մինչև ողջացաւ 'ի վիրաց ոտիցն. յորմէ կոչեցաւ նա ասեն Իդիպուս, ցաւոտն կամ՝ ոտնուռոյց: Եւ իբրև աճեաց մանուկն, տեղեկութիւն առեալ վասն հայրենեաց իւրոց դարձ արար յերկիր իւր, և մինչչև էր ծանուցեալ զծնողս իւր, հանդիպեալ յաղմուկ ինչ քաղաքական սպան զհայր իւր իբրև զմի 'ի թշնամեաց, ապա ասեն յանգէտս ամուսնացաւ ընդ մօր իւրում և թագաւորեաց: Եւ այլ ևս անհեթեթ զրոյցք խառն յաղետաւոր և յեղեռնաւոր գործոց. մինչև հուսկ յետոյ ինքնին կուրացոյց, ասեն, զաչս իւր վասն հայրասպան և աղգապիղծ լինելոյ, և ինքնակամ յաքսորս չոքաւ յԱթէնս. իսկ որդիք նորա անցեալ 'ի տեղի նորա սպանին զիրեարս: Յորոց յայտ է թէ բովանդակ պատմութիւն Եդիպոսի ծայրէ 'ի ծայր է շեղջակուտեալ մոացածին հեղծեօք աղետալի դիպուածոց 'ի պէտս եղերերգական խաղուց. վասն որոյ և բարւոք ասէ հեղինակս, թէ նաև այն որ լայ 'ի վերայ այսպիսի աղէտից, գիտէ թէ են կեղծիք:



## Ծանօթութիւնք 'ի մետասաներորդ գիրս:

151. Ի դէպ դոյ առացուածս յիտալական բարբառ վասն մերձաւորութեան բառից գօնվիվացիօնէ և գօնսէրվացիօնէ. որպէս եթէ և 'ի հայում առէաք նմանաւոր ձայնիւ, կենցաղակցութիւն և կենսապահութիւն. կամ կենաց կցորդ լինել 'ի վարիլ ընդ իրեարս և 'ի պահել զիրեարս:

152. Տիմանթէս էր անուանի պատկերահան 'ի վերջին աւուրս Աղէքսանդրի Մակեդոնացւոյ: Ի մէջ նկարուց սորա երևելի էր այն զի ձևացոյց զԻփիգինէ զդուստր Ագամեմնոնի մատնեալ 'ի սպանդ զոհից. ուր յետ նկարելոյ զդէմս ամենայն մերձաւորաց նորա տխրագին և լալագին, անկարացեալ այլազգ արտայայտել զանհնարին աղէտս հօրն նորա էարկ քօղ զերեսօք նորին. որով եցոյց թէ ցաւ նորա է անպատմելի: Իսկ բան Թէոսւրոսի հայի յայն նկար Տիմանթեայ, զի ձևացոյց զԿիկլոպ հսկայն անհեթեթ 'ի փոքրիկ տախտակի. յորում կամեցեալ քաջ ևս բացատրել զբարձրութիւն հասակի նորա, նկարեաց առ նովաւ ճիւաղս կամ այծամարդս որք ունէին 'ի ձեռս ըստ Բաքոսի գաւազանս կամ ոստս 'ի

թաւ ծառոյ, և նոքօք չափէին զբոյթ Կիկղոպայ. որով տայր իմանալ թէ երբ մին 'ի մատանց այնպիսի քանակաւ չափի. որչափ ևս մեծ իցէ բովանդակ մարմինն։ Զայս ամենայն 'ի մէջ բերէ Պլինիոս և ասէ, թէ «Յամենայն գործս նորա միշտ տաւել իմն նշմարի քան զոր նկարի. և թէպէտ արհեստն է գերագոյն, այլ հանճարն 'ի վեր է քան զարհեստն»։

153. Գորգոնա կամ Գորգոնայք կոչին ըստ առասպելաց երեք քորք ծովածինք, նստեալք յեզր կիսագնտոյ երկրիս կամ առ դուրս դժոխոց, պղնձանիւթ ձեռօք և օձախռիւ գիսովք. որոց այնչափ ագեղ էին, ասեն, կերպարանք՝ մինչև տեսողացն առ ահի ցնորիլ, և 'ի գժնեայ հայեցուածոյ նոցա թունաւորիլ. և այլ պէսպէս բանք մտացածինք. զորս բազմօրինակ ընդլայնեն մեկնաբանք ըստ այլ և այլ պատմութեանց։ Այլ սակայն բազումք ևս ընդ հակառակն առացին, թէ սոքա այնչափ գեղեցիկ էին, մինչև զքանչանալ տեսողաց և թմբրիլ և քարանալ ևս։ Եւ յայս միտս գրէ Եւսեբիոս առ ժամանակօք դատաւորացն Իսրայելի 'ի կանոնի իւրում. «Պերսեւս Պարսից զօրաժողով եղև. զԳորգոնա գլխատեաց, և ինքն այլ կին գեղեցիկ արար, որ ապշեցուցանէր զտեսողսն գեղով, մինչ քարանալ համարել»։ Իսկ Նոննոս ըստ առաջին կարծեաց խօսի յասելն. «Այլ յաղագս Գորգոնեացն այսպիսի ինչ է. երեք աչագին կանայք էին, այնպէս զարհուրական ունելով զդէմսն որպէս զի մահացուցանել զտեսողսն. այլ ասի Պերսեայ զմին 'ի սոցանէ սատակել նիզակաւ գերանդւոյ»։

154. Ի մէջ առնու Թեսաւրոս նաև զնիւթական նմանութիւն 'ի մէջ մարդահաճոյի և գովասանի վասն նոյնատառ գոլոյ երկուց բառիցս adulatore, որ է մարդկեղծ կամ մարդահաճոյ, և laudatore, այն է գովիչ։ Այլ զի չէր մարթ նիւթապէս վերածել զնոյն 'ի հայերէն, մեք ընդ հանրապէս զմիտս բանին եդաք այլով բացատրութեամբ։ Իսկ բուն բան հեղինակին ըստ բառիցն է այս. «Ո՛վ որպէս նման են անուանք մարդահաճոյի և գովասանի, մինչև առաքինութեան և մոլութեան 'ի նոյն տառից յօդել. բայց որչափ նման են միմեանց անուանքն, այնչափ տարբեր են նոցին վախճանք»։

155. Փռիւգացի ծառայ կոչի նա ինքն Եսովպոս առասպելաբանն և առակախօսն, զի հայրենեօք էր 'ի Փռիւգիոյ. և ըստ վիճակին 'ի ծառայական կարգէ, մանաւանդ թէ և 'ի ստրկութեան անդ ծնեալ։ Յիշէ զսա Եւսեբիոս 'ի ԾԴ ողոմպիադին առ ժամանակօք Կիւրոսի և Աժդահակայ յասելն. «Եսովպոս բանաստեղծ 'ի Դեղփացւոց սատակեցաւ»։



156. Սա ինքն է Կելեստինոս հինգերորդ պապն Հռովմայ 'ի վախճան ԺԳ դարուն. որ յառաջն էր կրօնաւոր 'ի կարգէ սրբոյն Բենեդիկտոսի, և եղև սահմանադիր կարգի Կեղեստինեանց 'ի լերինն Մաեղայ։ Ընտրեցաւ քահանայապետ արժանաւոր յամի տեառն 1294. այլ զկնի հնգից ամսոց ինքնակամ հրաժարեցաւ յաթոռոյն՝ հրատարակեալ զհրաժարումն իւր 'ի ժողովն Նէապօլսոյ. և այս եղև, ասեն, թելադրութեամբ հնարից Բենեդիկտոսի Կայետանոսի, որ ջանայր հասանել յայն իշխանութիւն. որպէս և եղև իսկ. զի ինքն նստաւ 'ի տեղի նորա, և կոչեցաւ Վոնիփակիոս ութերորդ, և զերանելին զԿեղեստինոս ետ փակել 'ի բերդի ուրեք, զի մի ևս կարասցէ դառնալ յիշխանութիւն իւր։

157. Կաստրուկիոս Կաստրական (Գաստրուչչիոյ Գաստրագանի), էր երևելի իշխանաւոր Լուկայեցւոց յերկրին Տոսկանայ 'ի սկիզբն ԺԴ դարուն, այր զօրաւոր զինուք և զգօն մտօք, որ մեռաւ յամի տեառն 1328։

158. Ոէա կամ Ոփա և կամ Հռէ, որ և Կիւբեղէ կոչի. մայր անուանեալ աստուածոց, էր ըստ դիցաբանից քոյր և կին Կռոնոսի. և յորժամ ծնանէր զորդիս, այր նորա որկորեայն Կռոնոս կլանէր զմանկունսն, կասկածելով թէ մին 'ի նոցանէ յարիցէ 'ի վերայ իւր և թագաւորեսցէ, որպէս ինքն բռնացեալ էր ընդդէմ հօր իւրոյ Ուռանոսի։ Այլ յորժամ ծնաւ Ոէա զԴիոս՝ որ և Արամազդ, հնարս խորհեցեալ ապրեցուցանել զնա, առաջի եդ Կռոնոսի արձան մի քարեղէն իբրև զծնունդ իւր. և նա եկուլ զայն. և նոյնժամայն զառաջին կլեալսն ևս արտաքս փսխեաց։ Իսկ Դիոս ապրեալ և աճեցեալ զօրացաւ ընդդէմ հօր իւրոյ Կռոնոսի, և ընկէց զնա յերկնից. և փակեաց 'ի սանդարամետս ընդ այլ Տիտանեանս։ Երկար են առասպելք հեթանոսաց վասն սոյին իրաց. զորս պէսպէս մեկնաբանեն բազումք։ Յիշատակէ զայս Գրիգոր Մագիստրոս 'ի թուղթն առ Անանիա վանահայր 'ի խօսելն զառասպելեալ կանանց դից. «Սոցա կանայս, ասէ, որպէս զՍեմելայն, և զՈէայն՝ ոմն արձանական ան կլուցեալ, և ոմն չանթիւք սատակեալ, իբրու զԱփրոդիտէս որ 'ի փրփրոյ և յարենէ ծնեալ»։ Իսկ Նոննոս գրէ այսպէս. «Այլ յաղագս այնր՝ որ զամենեսին զաստուածսն կլանէր, ոչ ասէ յաղագս Երիկապէոսի, այլ յաղագս Կռոնոսի. զի ասի թէ զորդիսն զորս կանխաւ ծնաւ, դարձեալ զնոսա եկուլ. և դարձեալ 'ի վեր եբեր զորս միանգամ եկուլն. զի ասի քար կլանել փոխանակ Զևսայ. և քարիս լծեալ զամենեսին ետ 'ի վեր բերել»։ Այլ վասն Կռոնոսի տես և 'ի համարն 123։

159. Արիստարքոս Սամոթրակեցի որ կարգեցաւ դաստիարակ որդւոց Պտղոմէոս Փիլոմետորի արքային Եգիպտացւոց, էր սոփեստէս ոմն իմաստակ հետամուտ 'ի խուզարկել և 'ի պախարակել զգրուածս այլոց. որ և առաւելապէս արար զծիչ քննութիւն կշտամբողական 'ի վերայ քերթուածոյն Հոմերոսի. նմին իրի և առեալ եղև յուշս Յունաց որք զՀոմերոս անաղարտ բանաստեղծ գնէին: Եւ առաւ եղև սովորութիւն Արիստարքոս ձայնել զայնոսիկ որք վայրապար զհետ լինին խուզարկել և երգիծանել զբանս և զգրութիւնս իմաստնոց: Իսկ Տիմոն Աթենացի մականուանեալն 'ի Հելլենացւոց միսանթրոբոս, այսինքն մարդատեաց, էր փիլիսոփոս առանձնասէր՝ մանաւանդ թէ անմարդասէր և վայրենասէր, գլխովին թշնամի մարդկային ընկերութեան: Հարցին ցնա ոմանք թէ զի՞ է զի սիրես դու զԱլկիբիադէս փոքր, երբ ատելի են յաչս քո ամենայն մարդիկ, նա ետ պատասխանի, քանզի գիտելով գիտեմ, ասէ, զի նա հանդերձեալ է լինել պատճառ կործանման Աթենացւոց: Սա ինքն Տիմոն է որ եկեալ 'ի հրապարակ քաղաքաց առ ժողովուրդն ասելով. կամիմ կորել զթզենին որ կայ 'ի պարտիզի իմում. որ ոք կամի կախել զանձն փութասցի գալ. զի յետոյ ոչ կարէ գտանել զայն ծառ, որ լեալ էր կախաղան հասարակաց: Ասի ևս թէ սա նախ քան զմեռանիլ իւր յօրինեաց տապանագիր վասն շիրմի իւրոյ. ուր անէծս և չարամտութիւնս էր կարգեալ 'ի վերայ այնոցիկ որ ընթեռնուն զայն. և յայս յաւէտ հայի առաջիկայ բան հեղինակիս: Այլ Մոմոս որ թարգմանի ստգտանք կամ մեղադրանք, համարիւր աստուած խեղկատակութեան կամ կծանելոյ զայլս բանիւք եղերանաց, կարծեցեալ ծնունդ քնոյ և գիշերոյ. որ այսպէս անէր և ծիծաղէր զարարուածովք այլոց դից. զի որպէս ասի յառասպելս, Հեփեստոս և Պոսիդոն և Աթենաս դիքն դատաւոր կացուցին զՄոմոս ընտրել, թէ ո՞ր 'ի նոցանէ գործք առաւել գովելի իցեն: Իսկ նա զերեսին ևս սկսաւ երգիծանել. քանզի մեղադիր եղև Հեփեստոսի թէ պարտ էր քեզ դնել պատուհան մի 'ի վերայ կրծոց միոյ միոյ 'ի մարդկանէ, որպէս զի տեսցի ընդ այն սիրտն, որ կայ 'ի ներքս. և մի՛ ոք կարասցէ ունել ինչ ծածուկ 'ի սրտի: Եւ Պոսիդոնի մեղադրեաց ասելով. պարտ էր քեզ զեղջիւրս ցլու առաջի աչացն դնել, զի տեսցէ թէ զո՞ և ու՞ր հարկանէ. և կամ 'ի թիկունս կոյս, զի ուժգին ևս հարցէ: Իսկ զԱթենաս ստգտանէ ասելով. պարտ էր քեզ զտուն քո շարժական շինել. զի յորժամ դրացի ոք չար հանդիպի, դիւրաւ այլուր փոխադրեսցի բնակութիւնդ:

160. Զոյլէ կամ Զոյլոս էր հռետոր ոմն յԱմփիպօլիս քաղաքէ Թրակիոյ իբր 270 ամօք յառաջ քան զՔրիստոս,



բարուք նման վերոյիշեալ Արիստարքոսի և առաւելեալ քան զնա 'ի զիմախօսել և յերգիծանել զբանս այլոց. զի և սա ձիչդ խուզարկու և կշտամբիչ հարգիւացաւ գրուածոց նախնեաց, որպէս Պղատոնի, Իսոկրատեսի, և յաւէտ ևս Հոմերոսի. ընդդէմ որոյ յօրինեալ ստանաւորս ինչ ընթերցաւ առաջի Պտղոմէոսի Փիղադելփեայ գրասէր արքային Եգիպտացւոց. ընդ որ դժուարեալ արքայի ամօթով արձակեաց զնա. և որպէս այլք ասեն՝ ետ սպանանել զնա քարկոծմամբ կամ 'ի փայտ հանելով, և են որք ասեն թէ կենդանւոյն այրեցաւ 'ի Զմիւռնիա: Յանուն սորա ևս դժնեայ դատաւորք գրուածոց այլոց կամ ընդվզօրահար քննիչք Զոյլէ ձայնէին իբր ատելի անուամբ:

161. Լիկայոն կամ Լիկայոնիէս, եղեալ 'ի յունական բառէս լիւքօս որ է գայլ, ասի լինել թագաւոր Արկադացւոց՝ անուանեալ որդի Տիտանայ և երկրի, կամ որդի Պեղասգոսի առաջնոյ արքային Արկադիոյ. սա՝ ըստ առասպելաց՝ վասն արիւնահեղ բարուց իւրոց, որով խողխողէր զհիւրս, կամ թէ զենեալ զորդի իւր արկամբ շաղախեալ էր զսեղանն Դիոսի, պատուհասեցաւ և փոխակերպեցաւ 'ի գայլ: Բանաստեղծք այսպէս նկարագրեն զիրսն: Լուեալ ասեն Դիոսի թէ ամպարշտութիւնք մարդկան յաճախեալ են յերկրի, և ոչ դիւրաւ հաւատացեալ այնմ, եթող զերկինս և էջ անձամբ յերկիր տեսանել զգործս նոցա. և եկեալ զհասարակ գիշերաւ յԱրկադիա գաւառ՝ իջեանս կալաւ 'ի տան Լիկայոնի. և ազդարար բնակչաց տեղւոյն, թէ ինքն իսկ է Դիոս հայր դից ամենայնի: Եւ այն ինչ պատրաստեալ էր ժողովուրդն զոհիւք պատուել զնա, Լիկայոն արքայ ծաղր արարեալ զզիւրահաւան բարուք ամբոխին՝ ասէ ցնոսա. թոյլ տուք առ վայր մի, զի ես յայտ գիշերի հնարիւք զփորձ առից, եթէ դա ինքն իցէ Դիոս անմահ կարգացեալ: Մոլին խորհրդով ննջեցոյց զԴիոս, և յանկարծակի յարեաւ 'ի վերայ սպանանել զնա: Այլ իբրև ետես, թէ նա և 'ի քուն իբրև արթուն կայ, չկարաց առնել զոր խորհէր. և յայլ ինչ ձեռն էարկ: Զոմն 'ի պատանդից յղեցոց առ նա յազգէն Մոլոսացւոց զենեալ իբրև զոչխար, եփեաց և եդ առաջի Դիոսի, տեսանել թէ ուտէ՞ զայն, և կամ խմանայ զոր ինչ էն: Յայնժամ չհանդուրժեալ, ասեն, Դիոսի ընդ այնպիսի մեծեղեան գործ նորա, հրձիգ արար զտուն բնաւորին շանթահար զօրութեամբ իւրով. և զնա ինքն զԼիկայոն՝ որ 'ի փախուստ աճապարէր յանտառս, փոխեաց 'ի գայլ:

162. Ոչինչ փոյթ կալցուք մի առ մի բացատրել թէ ո՞յք ոմանք էին այս մատենագիրք կամ անձինք, և զինչ գործք սո-

ցա. շատ է իմանալ թէ վասն պախարակելոյ ոմանց անզգուշից զգրուածս այլոց՝ մեծամեծ յոյզք և դիմամարտութիւնք եղեն և լինին 'ի մէջ դպրոցաց գրոց և բանից. և 'ի դոյզն իրաց երբեմն ծանր աղմուկք յառնեն, երբ երկոքին կողմանք եւս ունիցին իւրեանց կուսակիցս և թեւակիցս 'ի յաղթահարել զմիմեանս:

163. Վասն Լապիթաց և Կենտաւրոսաց կամ ձիացլուց տես 'ի համարն 124, եւ և 15:

164. Այս բան առեալ է յԳ գրոց Սենեկայի որ յաղագս Բարկութեան (ը) ուր կամեցեալ նորա ցուցանել, թէ զիարդ բարկասիրտք երբեմն առաւել բորբոքին 'ի տեսանել իւրեանց զհակառակորդն խաղաղ զիջանիլ ինքեանց կամ շողոմել, ասէ. « Կեղիոս Ճարտարախօս, որպէս յայտ է, էր այր բարկասիրտ յոյժ. ընդ որում նստէր, ասեն, երբեմն յընթրիս 'ի սենեկի նորին՝ ոմն ապաստանեալ 'ի նա՝ այր համբերատար. այլ իբրև ընդ գինի մտին, դժուարին էր սմա խուսափել 'ի հակառակաբանութենէ անտի նորա, ընդ որում ուտէր. նմին իրի լաւ վարկաւ զիջանիլ նմա զոր ինչ և ասիցէ, և զայն զհետ բերել առանց դիմադարձութեան: Չկարաց հանդուրժել Կեղիոս ընդ զիջողական հաւանութիւն առնն, այլ գոչեաց մեծաձայն. Ասա ինչ ընդդէմ, զի երկու լիցուք: Բայց ինքն իսկ ընդ բարկանալն վասն չբարկանալոյն, իսկ և իսկ հանդարտեաց առանց հակառակորդի»: Արդ զոր բերէ Սենեկա յօրինակ բարկութեան, զնոյն յարմարէ Թէոաւրոս բանից իւրոց որ յաղագս հաճոյականութեան 'ի փոխադարձ հակառակաբանութեան:

165. Պեղոփս կամ Պեղոպս և կամ Պելոպս, յորմէ էառ զանուն կղզին Մոռայու տացեալ Պեղոպոնէսոս, այսինքն կղզին Պեղոպոսի, էր որդի Տանտաղոսի արքային Փռիւգացւոց: Արդ ասի 'ի բանաստեղծական առասպելս թէ Տանտաղոս ընկալաւ երբեմն 'ի տուն իւր զդիս, և եդ առաջի նոցա սեղան բարելից. ուր կամեցեալ զփորձ առնուլ եթէ խաբին արդեօք աստուածքն, ընդ այլ խորտիկս եհան 'ի սեղան և զմարմին որդւոյ իւրոյ Պեղոպայ խորովեալ: Եւ իբրև այն ինչ Դեմետրէ աստուածուհին յանդէտս սկսաւ ուտել 'ի մսոյ անտի, և համեղագտեալ զայն սպառեաց զմի կողմն քամակին, զգացեալ Դիոսի զդաւաճանութիւնն, պատուհասեաց զՏանտաղոս առաքելով զնա 'ի դժոխս. իսկ զՊեղոպայ զխորովեալ մարմինն անդրէն կենդանացոյց. և 'ի տեղի այնր մասին որ կերեալն եղև, հաստեաց նմա նոր քամակ փղոսկրեայ, կամ 'ի փղոսկրէ շինեաց զմի կողմն ուսոյ նորա: Իսկ թէ զիարդ



մեկնեն ոմանք զայս առասպել, չէ տեղւոյս զհետ լինել այնմ:

166. Հերակլէս հօկայն յաղթահարեալ զԴիոմեդէս զարքայն Բիստոնից կամ Թրակից, որ զերիվարս իւր կերակրէր 'ի մարմնոց օտարաց և հիւրից եկելոց առ նա, զնա ինքն էարկ առաջի երիվարաց իւրոց 'ի կերակուր: Եւ յորժամ վաստակեալ անձամբ գնաց Հերակլէս առ սիրելի բարեկամն իւր Ադմետոս արքայ Փերէյացւոց 'ի Թեսաղիա. և հիւրընկալեալ 'ի նմանէ նստաւ յընթրիս, տեսանէր զերեսս Ադմետայ տխուր. եհարց զպատճառն. այլ նա ոչ եհան նմա 'ի վեր, զի մի և նա տխրեսցի: Իսկ մի ոմն 'ի ծառայից տանն գաղտ ծանոյց Հերակլի, թէ մեռաւ 'ի սոյն աւուրս Ալկեստիս թագուհին, և այն իսկ է պատճառ տրտմութեան տեառն մերոյ: Յայնժամ տրտմեցաւ յոյժ և Հերակլէս, և ընթրիքն համադամ կերակրոց դառնացաւ նմա: Այլ սկսաւ սիրով գանգատել զԱդմետայ, և ասէ. Եթէ ճշմարիտ բարեկամ զիս քեզ գիտէիր, չէր պարտ թաքուն ունել զցաւս քո և առանձինն վշտագնիլ, այլ հաղորդել և ինձ զնոյն տրտմութիւն: Իսկ մահ թագուհւոյն այսպիսի օրինակաւ աւանդի լինել ըստ առասպելաց: Հիւանդացեալ, ասեն, երբեմն Ադմետոյ՝ լուաւ ասել 'ի դից թէ ոչ այլազգ հնար է քեզ ազատիլ 'ի մահուանէ, եթէ ոչ փոխանակ քո յանձն առցէ ոմն 'ի սիրելի մերձաւորաց քոց ինքնակամ մեռանիլ: Զայս լուեալ կնոջ նորա Ալկեստեայ՝ խնդրեաց մահ անձին և մեռաւ. և յայնմ միջոցի եհաս, ասեն, Հերակլէս 'ի տուն անդր: Այլ յաւելուն առասպելարկուք թէ յետոյ դիքն յարուցին զԱլկեստիս:

167. Ղէտով կամ Լէտոն էր դուստր Կէոսի Տիտանեան, կամ ըստ այլոց Կաոնոսի: Արդ՝ ըստ առասպելաց, յորժամ սիրեաց զսա Դիոս և յղացոյց, Հերա կին Դիոսի զչարեալ ընդ այն, երդմնեցոյց, ասեն, զերկիր զի մի տացէ ուրեք Ղէտովայ տեղի ծնանելոյ զմանկունս իւր. և կարգեաց զվիշապ օձ մի Պիւթոն անուն զհետ լինել նմա ուր և երթիցէ: Այլ Պոսիդոն աստուած ծովու գթացեալ 'ի նա 'ի վեր եհան 'ի ծովէ նոր կղզի. և անդ ծնաւ, ասեն, Ղէտով զԱրտեմիս ըզդուստր իւր. որ և Անահիտ, և յետ սակաւուց զեղբայր նորա զԱպողոն. որում մանկաբարձ լեալ համարին զնա ինքն Արտեմիս: Յետ այսորիկ դէպ եղև, ասեն, Ղէտովայ անցանել ընդ գաւառն Լիկիոյ հանդերձ մանկամբք իւրովք. և յորժամ վաստակեալ և ծարաւեալ անձամբ խնդրեաց ըմպել ջուր 'ի լճէ միոջ. ոմանք 'ի շինականաց արգելին զնա և պղտորեցին զջուրս, և նա անէծ զնոսա. և նոյնժամայն 'ի գորտ դարձան նոքա, որպէս ասեն առասպելարկուք:

168. Գլխաւոր կամուրջն որ 'ի Վենետիկ կղզւոջ, միակամար մեծագիր և լայնանիստ, շինեալ 'ի վերայ լայն առուի կամ ջրանցից ծովու, կոչի կամուրջ ռիալթեան, կամ Պօնթէ տի Ռիալթօ:

169. Ծխախոտն առեալ լինի սա եթէ 'ի անուն տերևոյն, որ այլազգաբար Թիւթիւն ասի առեալ 'ի ծխոյն, և եթէ 'ի անուն կղզւոյն որ Տապաքօ կոչի, վասն ընդ ռունգունսն ձգելոյն: Արևմտեայք զերկաքանչիւրն ևս կոչեն Տապաքօ, յանուն կղզւոյն ուր յառաջ բուսանի ասեն. որպէս և երբեմն Նիկոտեան խոտ անուանեն, երբ զնա ունէին թէ յետ բացման Ամերիկոյ, նախ զսաւաչինն բերին ոմանք 'ի Փլօրիտայ կղզւոյն Ամերիկոյ զծխախոտ առ Նիկողայոս դեսպան արքային Փորթուգալոյ Յօվլիսիպպոնս. և նա եմուծ զգիտութիւն նորա առ Փողղիացիս, յորոց և առ այլ Եւրոպացիս տարածեցաւ: Իսկ թէ արևելեայք երբ սովորեցան յաւէտ 'ի գործ արկանել զխոտն քան զփոշին, չէ մեզ յայտ: Զիարդ և իցէ, որովհետև յաւուրս Թեսաւրոսի դեռ այն ինչ սկսեալ էր յաճախել սովորութիւն ծխախոտի յարևմուտս, բազումք հնարեցան պէսպէս պատճառօք համոզել զմարդիկ յետս կալ 'ի յաճախ կիրառութենէ նորին, ոչ միայն վասն չլինելոյ նորա այնչափ օգտակար որպէս կարծիւր, այլ և վասն պժգանացն որ հանդիպէր յանվայել կիրառութեան նորին ընդդէմ քաղաքավարութեան յանդիման այլոց. և ահա յայսմ մասին ծանունս և սաստիկս խօսեցաւ հեղինակս. և այն՝ որպէս երևի, 'ի մասնաւոր թելադրութենէ դքսին Սաբաւդեայ առ 'ի կարճել զայս սովորութիւն 'ի միջոց մեծամեծաց, կամ գէթ մեղմել. այլ ոչ սորա բանք և ոչ այլոյն ազդեցին կամ ազդեն ինչ ընդդէմ արմատացեալ սովորութեան: Երանի թէ առնուն ոմանք 'ի բանից առաւ սորա խրատու զգուշութեան գէթ վասն չսկսանելոյ՝ թէ չեն սկսեալ. զի դիւրին է չսկսանիլ՝ քան յետ սկսանելոյն դադարել:

170. Հեգնօրէն նմանեցուցանէ հեղինակս զծխախոտն առաջարար խոտոյն այնմիկ, զոր Հելլենացիք կոչէին Բէքիոն, դեղութեամբ յիշատակեալ 'ի Հոմերոսէ 'ի Ե գիրս բանաստեղծութեանց Իլիականն պատերազմի: Անուն այնր խոտոյ կոչեցաւ, ասեն, 'ի գաղղէ նորա, որում անուն էր Պէքոն կամ Բէքոն. որոյ բժշկեալ իցէ սովաւ զՊղուտոն անդուժելին ըղկարեվէր խոցեալն 'ի Հերակլէ: Այլ թէ և Ամերիկացիք ըզծխախոտն կոչեն Պետոն կամ Բեդուն:

171. Կամի ասել թէ 'ի փռնգալն մարդոյ՝ սովորութիւն է մերձակայից ողջունել զնա բարեմաղթութեամբ, որպէս թէ զերծեալ իցէ 'ի վտանգէ որ կարէր պատճառիլ 'ի ցնցմանէ ուղղոյն և ոգւոյն. քանզի և դիպեալ իսկ է մեռանել ոմանց յայնպիսի արկածից. և կամ թէ համարելով զայն յառաջեկեալ յաւելորդ և 'ի վնասակար հիւթոց, մաղթեն զերծ լինել անտի անվնաս:

172. Սա ինքն է Դիոմեդէս որդի Արեսի ասացեալ՝ արքայ Թրակիոյ. զորմէ յիշեցաք 'ի վերոյ թէ զերիվարս իւր կերակրէր 'ի մարմնոց մարդկան. արդ ասի առ բանաստեղծս, թէ երիվարք նորա էին ամեհիք յոյժ, և հուր շնչէր ընդ ռընգունս և ընդ բերանս նոցա, փոխանակ ասելոյ թէ արեամբ շաղախեալ էին: Սմին նման ասացաւ և զառասպելեալ ցլուց կարգելոց 'ի պահպանութիւն ոսկի գեղմանն. զորս ցուլս Յասոնին կոչէ Թեսաւրոս, զի Յասոն էր առաջնորդ Արգոնաւորդաց որք գնացին 'ի յափշտակել զոսկի գեղմն. և Մեդիա որ եղև կին Յասոնի, ուսոյց ասեն առն իւրում սանձել զայն ցուլս հրաշունչս, և թմրեցուցանել զանքուն վիշապն ահագին:

173. Վասն օծանելեացն Կապուայ զորս 'ի կիր առնոյր Աննիբաղ, տեսցես 'ի ստորև 'ի համարն 269:

---

## Ծանօթութիւնք յերկոտասաներորդ գիրս:

174. Դիդիմոս քերթող Աղեքսանդրացի ծաղկեցաւ յաւուրս Օգոստոսի կայսեր. կարգեցաւ ուսուցիչ 'ի Հռոմ, և գրեաց գիրս կամ ճառս և քերթածս թուով 3000, կամ 3500. ըստ այլոց 4000. և վասն անձանձիր ուսումնասիրութեան իւրոյ կոչեցաւ Խալքէնդէռոս, այսինքն ունող պղնձանիւթ աղիս, կամ պղնձի աղիք: Ոմանք ևս կոչեցին զնա գրամոռաց. զի այնչափ ինչ էր շարագրեալ՝ մինչև մոռանալ զասացեալսն այլուր, որպէս և փորձիւ տեսաւ. զի 'ի պախարակել նորա զպատմութիւն ինչ գրեալ յայլմէ իբրև յայտնի սուտ, հակառակորդն 'ի մէջ եբեր թէ ահա և 'ի գիրս քո աւանդի այդ իբրև ստոյգ յայն ինչ գլխոյ բանից, զոր ինքն ոչ յիշէր: Այլք ևս գրամոլ անուանեցին, և յաւէտ ևս վայրախօս և ժամավաճառ. զի զբաղում ինչ իրաց անօգուտ գրեաց ընդ վայր, որպէս յիշէ և Սենեկա: Այլ է և Դիդիմոս Աղեքսանդրացի եկեղեցական մատենագիր յաւուրս որոյն Աթանասի մեծի:

175. Զայս գործ փիլոկտետեայ լիագոյնս առաջի եդաք 'ի վերոյ 'ի համարն 112:

176. Դեմադէս էր ճարտարաբան Աթենացի՝ յառաջ եկեալ 'ի նաւավարութենէ, նախանձաւոր պերճախօսութեան Դեմոսթենեայ և նմանող նմա: Եւ սոքա երկոքին այլ և այլ ճանապարհաւ հնարէին պատել զհայրենիս իւրեանց 'ի ծառայութենէ Փիլիպպոսի արքային Մակեդոնացւոց. Դեմոսթենէս զԱթենացիս գրգռելով, և Դեմադէս որ անկեալ էր 'ի ձեռս Մակեդոնացւոց՝ զնոսա համոզելով: Բազում ինչ խօսէր Դեմադէս քաղցրաբանութեամբ առաջի արքային, և սիրելի լինէր յաչս նորա. այլ երբեմն ևս ճարտար բանիւք յանդիմանէր զարքայ վասն հարստահարելոյ նորա զգերիս կամ զատրուկս, և առաւել ևս վասն սնոտի խրոխտանաց նորա ընդ յաղթութիւնն զոր արար 'ի Քերոնիա, և էառ զԿորոնիա քաղաքն Աթենացւոց:

177. Քսենոկրատէս փիլիսոփայ անուանի էր աշակերտ Պղատոնի, միանգամայն և աշակերտակից Արիստոտելի, ծաղկեալ բարոյական վարդապետութեամբ և անստգիւտ վարուք, մականուանեալն Անծիծաղ վասն ծանր բարուցն: Զամանէ բազում ինչ իրք պատմին վասն առաքինի քաղաքավարութեան նորա, և մանաւանդ ըստ պարկեշտութեան, ըստ անընչութեան և ըստ անկեղծ ճշմարտախօսութեան. մինչև զի ծերակոյտն Աթենացւոց որ ոչ ուրուք վկայութեան հաւատայր երբէք յատենի առանց երդման, սմա ևեթ տիրապէս հաւատս ընծայէր առանց պահանջելոյ զերդումն ինչ:

178. Հաբիրիոս էր ասպետ Հռովմայեցի, որ սպան զՍատուռնինոս Ապուլէոս տրիբուն՝ զայր վնասակար. և զի առանց իրաւանց թուէր զայն արարեալ, չարախօս եղև զՀաբիրիոսէ Տիտոս Լաբիենոս տրիբուն. այլ Կիկերոն հռետոր արդարացոյց զՀաբիրիոս: Կայ և այլ Հաբիրիոս ասպետ Հռովմայեցի Պոստումոս կոչեցեալ. յորոյ վերայ ևս եղեն այլ ամբաստանութիւնք 'ի Մեմմիոսէ տրիբունէ վասն կաշառոյ կամ գողունի դրամոց. բայց նա ինքն Կիկերոն եկաց 'ի պաշտպանել և նմա: Այլ է և Հաբիրիոս բանաստեղծ ժամանակակից Ովիդիոսի, և Հաբիրիոս ճարտարապետ անուանի յաւուրս Դոմետիանոսի կայսեր: Բան հեղինակիս հայի առ մին յերկուց ասպետաց, յորոց վերայ կան ատենախօսութիւնք Կիկերոնի:

179. Նարկիսոս ըստ առասպելաց կոչեցեալ որդի Կեփիսոյ գետոյն, և Լիւրիոպեայ յաւերժահարսին դստերն Ովկիանոսի, էր մանուկ գեղեցիկ յոյժ. որ արհամարհէր զգեղ կանանց առ հպարտի, և ոչ ումեք 'ի նոցանէ հաւանէր: Եկեալ սորա երբեմն 'ի դաշտէ մատեաւ յաւազան աղբեր՝ կամ յառու մի գետոյ ըմպել ջուր. և 'ի խոնարհել զգլուխն՝ տեսեալ զպատկեր դիմաց իւրոց 'ի ջուր անդ իբրև 'ի հայելւոջ, հարաւ 'ի սէր իւր, և ընդարմացեալ փոխեցաւ 'ի ծաղիկ, որ յանուն նորա կոչեցաւ նարկիս: Եւ այս դիպաւ, ասեն, առասպելարկուք 'ի պատիժ նորա. զի որ անգոսնէր զգեղ այլոց 'ի սիրոյ գեղեցկութեան իւրոյ վնասեցաւ: Ցայս հայի ասելն Մագիստրոսին մերոյ 'ի թուղթն առ կարծեցեալ ոմն գիտնական. «Բայց քեզ գերապանծ պանծալովդ ըստ Նարկիսեայ յորսոց դարձեալ պատահեսցի աղբիւր»: Այլք ասեն թէ Նարկիսոսի էր քոյր մի ամենևին նման նմին. և եղև 'ի կորնչել կամ 'ի մեռանել քեռն նորա՝ երթայր նա յափն գետոյն, զի տեսեալ զդէմս իւր 'ի ջուր՝ մխիթարեսցի իբր տեսութեամբ քեռն իւրոյ: Թող զոր այլք այլազգ գրեն, և պէսպէս մեկնաբանեն. բովանդակն է կեղծիք: Գրեն վիպասանք թէ կայր շիրիմ յանուն Նարկիսեայ 'ի Բիովտիա գաւառի. առ որով լռիկ և անշշունչ գնային անցաւորք, վասն որոյ և կոչիւր գերեզման լռութեան: Իսկ Սպորինէ էր, ասեն, այլ մանուկ գեղեցիկ դիմօք և իմաստուն մտօք. որոյ տեսեալ թէ գեղ իւր 'ի գայթակղութիւն լինի բազմաց, խոցոտեաց ինքնին զշրթունս իւր, և խանգարեաց զվայելչութիւն դիմաց իւրոց:



180. Զենոկրատէս փիլիսոփայն զծաղկեալն բարոյական իմաստութեամբ և ընտիր քաղաքավարութեամբ իւր մի միայն առաքինի 'ի մէջ Հելլենացւոց, 'ի մէջ բերէ հեղինակս առ 'ի խրատ իմաստուն անձանց. որք թէպէտ և չիցեն վայելուչ դիմօք կամ առոյգ մարմնով, շատ է նոցա զգօնութիւն մտաց և վարք բարի. զի այս ձիրք բազում առաւելութեամբ լնուն զպակասութիւն բնական և առնեն գովելի ոչ միայն յաչս Աստուծոյ, այլ և առաջի մարդկան. քանզի ամենեքին առաւել գովեն զիմաստունն և զառաքինին անմասն 'ի գեղոյ, քան ըզգեղեցիկ մոլին: Թող զի ասէ Կիկերոն «Ողջութեամբ մարթի և գեղեցիկ կոչիլ (այր իմաստուն և առաքինի). քանզի գծագրութիւնք հոգւոյ առաւել գեղաւոր գտանին քան մարմնոյ»:

181. Սա ինքն Ագաթոկլէս որ էր որդի առն բրուտի 'ի Կալաբրիոյ, եղև անուանի բռնակալ 'ի Սիկիլիա որ և բազմօք յաղթահարեաց զԿարքեդոնացիս իբր 300 ամօք յառաջ քան զՔրիստոս: Սա, որպէս ասի, նաև յաւուրս իշխանութեան իւրոյ խեցեղէն անօթս 'ի կիր առնոյր յարքայական սեղանի,

առ անմահաց ունել զարհեստ հօրն և զնուաստ վիճակ տոհմին իւրոյ։

182. Մարկոս Տերենտիոս Վարրոն էր հիւպատոս Հռովմայեցի, որոյ ելեալ 'ի պատերազմ նիզակակցութեամբ Լուկիոս Եմիլիոսի Պաւղոսի՝ ընդդէմ քաջին Աննիբաղայ Կարքեդոնացւոյ առ Կաննայ քաղաքաւ Ապուլիոյ Պեւկետեայ, 'ի պարտութիւն մատնեցաւ չարաչար, և խորտակեցան զօրք նորա. մինչև անկանիլ քառասուն հազար արանց 'ի դիմաց Հռովմայեցւոց։ Եւ եղև 'ի դառնալ նորա կորանօք 'ի Հռովմ, մեծամեծք Հռովմայ փոխանակ պատուհասելոյ զնա՝ ընկալան բազում մարդասիրութեամբ, և կամեցան ընտրել 'ի պաշտօն դատաւորութեան որ կոչիւր տիկտատօր. զի մի անկցի լըքումն 'ի սիրտ քաղաքացւոց վասն այնպիսի մեծի կոտորածին. բայց նա առ ամօթոյն չէառ յանձն զայն պատիւ։ Այլ է և անուանակից սորա Մարկոս Տերենտիոս Վարրոն երևելի մատենագիր Հռովմայեցի, ժամանակակից Կիկերոնի. որպէս և այլ ոմն ժամանակակից նոցուն Տերենտիոս Վարրոն Ատակինոս կոչեցեալ, անուանի բանաստեղծ Գաղղիացի 'ի Նարբոնայ. զորոյ զգրուածս օրինակ առնոյր Վիրգիլիոս 'ի յօրինուածս ընտիր քերթուածոց իւրոց։

183. Եմպեդոկլէս Ակրագանդացի 'ի Սիկիլիոյ՝ իբր 450 ամօք յառաջ քան զՔրիստոս, էր փիլիսոփայ բնազննին և բժիշկ. որոյ գնացեալ 'ի լեառն Եթնայ եթող զընկերս իւր առ ստորոտով լերինն, և ինքն մերձեցաւ 'ի հրաբուղխ տեղիս. զի 'ի բացակեզ լինել իւրում անտես 'ի մարդկանէ՝ կարծեսցի յերկինս փոխադրեալ. այլ սակայն երկաթի կօշիկք նորա 'ի դուրս ստուցեալ 'ի լեռնէ անտի յայտնի արարին զչարաչար կիզումն նորա։ Այլք ասեն թէ դիպուածով կիզաւ նա, և ոչ կամովին. իսկ այլք թէ 'ի նուէր իւրում 'ի ծերութեան 'ի ծով անկաւ և հեղձաւ. զոր արդէք ոմանք առաւել հաւանական համարին։ Այլ զառաջին կարծիս հաստատէ և Նոննոս մեկնիչն Աստուածաբանի գրելով այսպէս. « Եմպեդոկլէսս այս Սիկիլիացի էր ազգաւ, վարժեալ պիթագորական իմաստութեամբ, և կամեցեալ սնափառիլ եթէ սրբազանեալ յերկինս վերացաւ, արկ զանձն իւր 'ի հուրն որ ելանէ 'ի լեռնէն Սիկիլիացոց յԵթնէ, զի այս է անուն լերինն. այլ հուրն ասի թէ Հեփեստոսի խառնելիքն է։ Արդ նա կորեալ 'ի ձեռն հրոյն, այլ Աստուած կամեցեալ հրապարակել զունայնփառութիւն նորա և զդի նորա ողջ հրոյն 'ի բաց ետ թքանել, նախ զհողաթափն և ապա զմարմինն այրեցած խանձողեալ. և այսպէս ծանուցաւ թէ ոչ վերացաւ, այլ կիզալոյ արժանի սնափառութեան իւրոյ »։



184. Ասկղեպիոս համարիւր աստուած բժշկութեան, որդի Ապողոնի և աշակերտ Քիրոնի ձիացլոյ. բժշկէր, ասեն, ըզցաւս անբուժելիս, յորոց յուսահատ լինէին բժիշկք, մինչև մեռելոց անգամ յարուցիչ լինել 'ի ձեռն դեղոց առասպելեն դիւցաբանք։ Հնութիւն ժամանակին ետ զայսպիսի ընծայել նմա. այլ ըստ ստոյգ պատմութեանց՝ քանի մի ևեթ սկզբունք բժշկութեան գտան յԱսկղեպիոսէ, որպէս և արուեստն հանելոյ զատամունս։ Նկարիւր սա երբեմն 'ի ձև օձի, և երբեմն որպէս ծերունի ոք ունելով 'ի ձեռին գաւազան օձապատ։ Մին 'ի համաստեղութեանց որ կոչի օձ, սմա ընծայի. որպէս թէ նա ինքն Ասկղեպիոս անդր փոխեալ իցէ. իբր զի օձն է նշանակ բժշկականութեան վասն պիտանութեանն 'ի դեղորայս. և դարձեալ նշանակ նորոգութեան կենաց վասն փոխելոյ զկաշին հնացեալ. որպէս և խորագիտութեան կամ հանճարոյ որ հարկաւոր է բժշկի։ Բայց ըստ ոմանց, Ասկղեպիոսի նշանակն 'ի համաստեղութիւնս ոչ է օձն, այլ օձակալն. և յայս միտ գրէ Նոննոս ասելով. « Իսկ օձակալ ասի զալ Ասկղեպիոս վերատեսուչ բժշկականին. և նշանակէ օձդ զոչ ծերանալն. զի ասի թէ մերկանայ զծերութիւնն, և նորոգի. արդ քանզի Ասկղեպիոս 'ի ձեռն բժշկականին նորոգէ զմարդկային մարմինս, առնեն զնա հանդերձ վիշապաւ. արդ կամելով աստուածքն սրբազանել զնա, փոխանակ պատուերի 'ի ձեռն աստեղաց սրբազանեցին յերկինս »։

185. Գոնսաղվոս Կորդովա, անուանի զօրավար էր 'ի Կորդովեան երևելի տանէ Սպանիացւոց. դուքս Դեռանովայի և իշխան Վենուսայի, և Գոնդստապլ Թագաւորութեան Նէապօլսոյ, մեռաւ յամի տեառն 1612։

---

## Ծանօթութիւնք չորեքտասաներորդ գրոց։

186. Դեմետրէ ըստ դիցաբանութեան Հելլենացւոց էր դուստր Կռոնոսի, և քոյր Դիոսի. համարեալ աստուածուհի արմտեաց և պտղաբերութեան երկրի, որպէս և անունն իսկ ստուգաբանի առ Յոյնս երկիր մայր, կամ տուիչ մայր։ Սա, ասեն, ամուսնացեալ ընդ եղբօր իւրում Դիոսի ծնաւ ուստր մի Բաքոս անուն, որ և Դիոնիսոս ասի աստուած խաղողոյ և գինւոյ. և դուստր մի որ կոչեցաւ Պերսեփոնէ, զոր գտեալ 'ի դաշտի ուրեք Սիկիլիոյ յափշտակեաց, ասեն, անդարապետն Պղուտոն, և տարաւ 'ի խորշս խաւարինս որ 'ի դժոխս, առ-

նել իւր հարսն։ Իսկ մայր նորա Դեմետրէ խնդրեալ զնա զօրն ողջոյն և ոչ գտեալ, եղեց առաս ջահս 'ի հրոյ Եռնայ լերին. զի և 'ի գիշերի շրջեսցի 'ի խնդիր դստեր իւրոյ։ Եւ յետ յածելոյ ընդ ամենայն երկիր, իմացեալ թէ նա 'ի սանդարամետս անդնդոց պահի, գիմեաց առ Դիոս զի նա հնարեսցի հանել զդուստր իւր. իսկ նա ասէ. Հնար է նմա ելանել յանդնդոց, եթէ չիցէ ինչ ճաշակեալ անդ. այլ քանզի կերեալ էր նորա զերիս կամ զեօթն հատս նռան յեղիսեան դաշտէ, վասն որոյ չկարաց ելանել անտի։ Այլ հուսկ յետոյ թոյլ տուաւ զի զկէս տարւոյն ընդ առն իւրում Պղուտոնի լիցի 'ի ստորինս երկրի, և զկէս այլ ընդ մօր իւրում Դեմետրեայ 'ի վերայ երկրի։ Ահա յայտնի առասպել ձևացուցանէ՛ն բանաստեղծք զսերմն, որ երբեմն լռանայ և երբեմն նուազի, երբեմն է 'ի մի կողմն՝ և երբեմն 'ի միւս կողմն հողագնտոյս։ Թողից և զայլ հեռևանս այսր առասպելոյ վասն Ցամբեայ պառաւոյն. զի ըստ բաւականին բացատրէ հեղինակն 'ի կարգի անդ բանից իւրոց։ Ըստ մասին յիշատակէ զսյսոսիկ և Նոննոս յասելն. «Դիմէտր ունէր դուստր զՊերսեփոնէ. զնա յափշտակեաց Պղուտոն. և շրջելով Դիմէտրի և խնդրելով զդուստրն՝ եկն յԱտտիկէ. և իջավանեալ առ Տրիպտողմէոսի ումեմն 'ի գեղն որ կոչի Եղևսինէ. արդ իմացեալ 'ի Տրիպտողմէոսէ թէ Պղուտոն յափշտակեաց զՊերսեփոնէ, յաղագս այսր երախտեաց ետ Տրիպտողմէոսի զսերմանիս ցորենոյ և գարոյ, տալն և օձոն և զայլ սերմանիս, պատուէր տուեալ ոչ մնխալ, այլ շրջել և ցրուել զսերմանիսն առ ամենայն մարդիկ. զի ուսցին զսերմանելն և ուտել զպտուղս ընտանիս՝ գործելով զերկիր. քանզի յառաջագոյն ուտէին կաղինս վայրի անկոց անտի. վասն որոյ քանզի կաղնոյն յունարէն փիգոս (φῆγος) ասեն, ուտելոյն ասացաւ փագին (φαγεῖν)»։

187. Հեղինակս մեր Թեսաւրոս՝ բաց յայլ գործոց իւրոց ունի և գիրք մի շարադրեալ խառլերէն 'ի վերայ հռետորական ձևոց և արուեստաւոր ասացուածոց՝ ըստ ընթացից Արիստոտելի, անուանեալ Դիտակն Արիստոտելեան. և ահա այն գիրք է յոր յղէ աստ զընթերցողս։

188. Բառս [illegible] անձկօրէն առեալ լինի աստ որպէս և առ Լատինս [illegible], 'ի տեղի հաճոյական զբօսցաբանութեան, զոր վարեն անձինք ազնուականք և գիտնաւորք 'ի վայելուչ և յախորժալուր զուարճախօսութիւնս, յօդելով զբանս իմաստալից եղերօք, յորս պէսպէս գիւտ և անակնկալ ձևք կամ փոխաբերութիւնք առաջի դնին։ Ցայս միտս և 'ի նախընթաց գլուխ ծանոյց հեղինակն թէ Արիստոտել իսկ քաղաքավարութիւն կոչեաց զզուարճախօսութիւնն։



189. Թովմաս Ստիլիանոս ասպետ Մալդայու, էր բանաստեղծ կամ տաղասաց յիտալական բարբառ. որ մեռաւ յ՚ՃԻ դարու։

190. Սա ինքն է Մարկոս Որեղիոս կայսր մականուանեալն Եղիոգաբաղոս 'ի սկիզբն երրորդ դարու, խենէշ բարուք և անառակ վարուք։

191. Կիկղոպ կամ Կիկլոպս կոչին առասպելեալ հսկայք գազաթակնեայք կամ միականիք 'ի Ճակատս, որպէս յիշեցաւ 'ի համարն 42, և 69։ Արդ կամի ասել Որատիոս, թէ Կիկղոպն կամ այլ ոք նմանեալ Կիկղոպայ ըստ կերպարանացն, վասն միականի գոլոյ և յաղթանդամ և այլանդակ յելանելն 'ի հանդէս չունի կարօտութիւն արկանել յերեսս դիմակ նորատես 'ի ծաղր շարժել զայլս, երբ ունի յինքեան բաւական այլանդակութիւն անհեթեթ և ծիծաղաշարժ կամ ահարկու։

192. Սէր առեալ լինի աստանօր փոխանակ աստուծոյն սիրոյ, որ նկարիւր երկոքումբք աչօք կոյր. և համարիւր որդի Ափրոդիտեայ, որ համարեալն է աստուածուհի գեղոյ։

193. Ցայտնի են իմաստք բանիցս որոց գիտակն են պատմութեանց Հռովմայեցւոց։ Վասն Կատոնի ունիմք ասել 'ի ստորև 'ի համարն 205։ Իսկ Ներուաս կայսր Հռովմայ որնրատաւ յամի տեառն 97 կամ 98, եղև մին 'ի գովելի ինքնակալաց, հեզութեամբ և իմաստութեամբ թագաւորեալ. մինչև 'ի տեսանել երևելի անձանց զայսպիսի իշխան, առաւել ընտրելի համարէին զկայսերական միապետութիւն քան զծերակուտական հասարակապետութիւն, որպէս և զհնականն գտէին երբ յայլ անպիտան կայսերս հայէին։ Եւ ահա զայս կամի յայտնել բանաստեղծն Մարտիաղէս այնու բանիւ, «Եթէ դառնայր արդ Կատոն յաշխարհ, զկողմն արդեօք ունէր զԿեսարոսի». որպէս թէ ասել. Կատոն ճարտարախօս՝ որ չէր հաւան ընդ միահեծան ինքնակալութիւն Յուլիոսի Կեսարու, այլ ջատագով էր հասարակապետութեան, եթէ կենդանի լինէր յաւուրս Ներուասայ, տեսանելով զբարեկաւութիւն նորին՝ ջատագովէր զկարծիս Յուլիոսի, այսինքն թէ լաւ ևս է միապետութիւն քան զհասարակապետութիւն։

194. Պարիս որ և Աղէքսանդրոս հոլիւ, որդի Պրիամոսի արքային Տրովացւոց, ըստ առասպելաց ընտրեցաւ 'ի Դիոսէ դատաւոր առ որոշելոյ զդատ երից աստուածուհեաց, Աթենասայ, Հերայ և Ափրոդիտեայ, որք վիճէին ընդ միմեանս 'ի վերայ ոսկի խնձորոյ միոյ, որ եդեալ կայր յատենի գիցն սյս-

պխալի իմն մակագրութեամբ. Գեղեցկագունին։ Եւ իւրաքան-
չիւրն յերից անտի խոստանային Պարիսի տալ մեծ ինչ պար-
գեւ ըստ զօրութեան իւրեանց, եթէ զինքն 'ի մէջ երից դա-
տեսցէ արժանի ոսկի խնձորոյ։ Յայնժամ Պարիս անգոսնեալ
զԱթենաս՝ զօրինակն իմաստութեան, և զՀերա զօրինակն
փառաւորութեան, ընտրեաց զԱփրոդիտէ զօրինակն գեղեց-
կութեան, իբրև արժանաւոր ժառանգելոյ զայն ոսկի խնձոր։
Ընդ որ ուրախացեալ Ափրոդիտեայ՝ ետ, ասեն, Պարիսայ 'ի
պարգեւս զՀեղինէ, զկին Մենելաւոսի արքային Սպարտա-
ցւոց զհամբաւեալն գեղեցկութեամբ. փոխանակ ասելոյ՝ թէ
Պարիս յափշտակեաց բռնութեամբ 'ի Յունաստանէ զՀեղի-
նէ. յորոյ 'ի պատճառս եղև մեծ պատերազմն Իլիականն, և
քանդումն Իլիոնի կամ մեծի քաղաքին Տրովադայ։ Զայս նշա-
նակէ և Եւսեբիոս 'ի կանոնի իւրում՝ յաւուրս Եսեբոնի դա-
տաւորին Եբրայեցւոց, յասելն. «Աղեքսանդրոս զՀեղինէ
առևանգեաց. և Իլիական պատերազմն զտասն ամ գումա-
րեցաւ՝ վասն խնձորոյ գեղոյ. որոյ ընտրող տէր էր Պարիս ան-
գիտոյ»։

195. Սա ինքն է Եդիպոս որդի Լայոսի արքային Թեբայ,
որ յանգէտս սպան զհայր իւր, և թագաւորեաց. որպէս ա-
սացաւ 'ի համարն 150։ Իսկ Սփինքս ասի լինել դուստր թա-
գաւորի ուրումն, կամ կին Կադմոսի. և վասն իւիք յանցա-
նաց իւրոց փոխեալ 'ի խառն ձեւոյ ըստ աւանդելոյ իբրև
գազան չորքոտանի, առիւծաձև, թեւաւոր և մշտապատառուն,
դարանէր յայրի միում 'ի դուրս Թեբայ կամ 'ի կիրճս լերանց
զյափշտակել զանցաւորս. քանզի առաջի առնէր նոցա առակս
խրթինս և առեղծուածս մթինս. և յոչ կարելն նոցա լու-
ծանել, ձգէր զնոսա ատամն, և տարեալ յայրն իւր յօշո-
տէր։ Արդ 'ի մտանել Եդիպոսի 'ի Թեբէս առաջի արար նմա,
ասեն, Սփինքս զայն առած. ո՞ր կենդանի է այն որ ընդ ա-
ռաւօտս է չորքոտանի, 'ի հասարակ աւուր երկոտանի, և ընդ
երեկս եռոտանի։ Եւ նա իսկ և իսկ եղոյծ առակն. Է մարդն,
որ 'ի տիս տղայութեան է իբր քառատանի 'ի քայլելն. զի առ
չկարելոյ յառնել կալ յոտսիթերս զնոյ, երկու ձեռօք և եր-
կու ոտիւք սողելով ընդ գետին. այլ յորժամ զարգանայ և
քայլէ ոտիւք համարձակ, է տիրապէս երկոտանի. իսկ 'ի ծե-
րութեան առ տկարութեան ոտիցն կարօտի յենուլ և 'ի գա-
ւազան, որով լինի եռոտանի։ Յայսմ պատասխանւոյ զամօթի
հարեալ Սփինգայ՝ առ կատաղութեան ընկէց զանձն ընդ
ժայռս, և սատակեցաւ. կամ թէ նա ինքն Եդիպոս սատա-
կեաց զնա և թագաւորեաց։

196. Մնջկատակ էին ծաղրածուք կամ կատակերգուք,



որք 'ի թատրոնս և 'ի հանդէսս խաղալեաց ձևացուցանէին
զամենայն ազգ շարժմանց 'ի յայտարարութիւն այլ և այլ
կրից կամ գործոց այլոց, երբեմն անչչունչ իբրև զհամրս. և
երբեմն հանդերձ ձայնիւ. այլ առաւելապէս բան հայի յաւէտ
առ անձայն կատակողս։

197. Այս գրուաց խորհրդաւոր կախեալ է յաւէտ զնմա-
նաձայնութենէ լատին բառիցս, նօմէն էթ օմէն. որ թարգմանի
ըստ ձայնին, անուն և գուշակութիւն (բարեբախտութեան). որ
է ասել. զոր ինչ նշանակէ անունն արգեամբք արժանի է
այնմ ունողն զնոյն անուն։

198. Ծաղրածուք պորտաբոյծք զորս մեք պատառաքաղս
կոչեցուք, 'ի Յունաց կոչին սեղանակապուտք կամ սեղանա-
նենգք, որպէս թէ 'ի ձեռն արուեստի ծաղրածութեան վա-
յելողք 'ի սեղանոյ այլոց։ Նոյին և թռչունք ինչ յայն անուն
անուանեալք 'ի Հելլենացւոց վասն յարձակելոյ նոցա 'ի մե-
հեանս գիցն, և գողանալոյ 'ի սեղանոյ բագնաց զմիս զոհից։
Իսկ Հարպուցք այսինքն յափշտակիչք, էին ըստ բանաստեղ-
ծից թռչունք գիշատիչք անյագ 'ի կերակրոյ, 'ի կերպարանս
աղջկանց հիւծելոց 'ի սովէ. որ և կոչէին գաւէրք ծովու և
ցամաքի. ուր և հասանէին՝ ծախէին զամենայն ճարակ, և
պատճառէին սով անհերքելի. ընդ առանելն ուրեք սեղան
եգեալ 'ի վերայ զիմէին և լափէին զամենայն. յոր ինչ և հը-
պէին զօրէ հառով պղծէին, մինչև անմերձենալի լինել մարդ-
կան. և որչափ որ վանէր զնոսա 'ի բաց անդրէն դառնային։
Թող և զայլ բանս աւանդապատումաց. յորոց ոմանք զևս յա-
փըշտակիչս կոչեն զնոսա, և այլք այլազգ մեկնեն։

199. Վերրէս որ ըստ ձայնին և ըստ նշանակութեան գրե-
թէ նոյն է ընդ բառիս վարազ, զի թարգմանի խոզ արու
կամ ոչ մալեալ, էր անուն ուրումն յիշխանացն Հռովմայե-
ցւոց։ Սա կարգեալ 'ի ծերակուտէն 'ի վերակացութիւն Սիկի-
լիոյ՝ հարստահարեաց զբնակիչս տեղւոյն բռնութեամբ,
և կեղեքեաց զնոսա յոյժ. և զայլևս բազում չարիս գործեաց
յայլևայլ տեղիս։ Վասն որոյ և Կիկերոն Տուղլիոս մեծ ճար-
տարաբանն յոյզ և խնդիր արարեալ ամենայն գործոց նորա՝
խօսեցաւ ընդդէմ նորա երկարագոյնս և զօրագոյնս յատենի
դատաւորաց. և 'ի կարգս այլոց բանից կշտամբել կամեցեալ
զնա և 'ի ստուգաբանութենէ անուանն 'ի մէջ եբեր զայս-
ոիկ. Տեսեալ, ասէ, ժողովրդեանն զանօրէն օրինագրութիւնս
դորա վկայէին ասելով. Չեն ինչ զարմանք թէ 'ի Վերրեսէ
վարազային գործք գործեսցին, կամ զիա՞րդ լինիցին իրաւացի
իրաւունք Վերրեսի։ Այլք, ասէ, դժուարէին ընդ գործս քըր-

մաց, որոց թողեալ զՎերրէս դատապարտման՝ զարժանին սատակման, կամ զպարարեալն իբրև զխոզ օտարին ընչիւք, զայլս յանասնոց զանձեղս կամ զվատեալս՝ 'ի սպանդ զոհից մատնէին:

200. Վասն Անծաղին Քսենոկրատայ յիշեցաք 'ի վերոյ 'ի համարն 177: Այլ այս Անծաղս անուն առակելապէս սեպհականեալ է Կրասոսի Հռովմայեցւոյ հաւուն Կրասոսի կոտորելոյ 'ի Պարթևաց. քանզի ասի թէ միանգամ ևեթ ծիծաղեալ իցէ 'ի կեանս իւր, այսինքն յորժամ ետես զէշ մի որ ուտէր զեկքան փուշ զճարակ ուղտու. և ասաց. Ահա ծամելիք գտեալ են զիւր ծամելին, կամ ահա աղցան յարմար քիմաց:

201. Թէ ո՞ ոք իցէ Տիմոն՝ տես 'ի համարն 159: Իսկ աստ կամի ասել հեղինակն, թէ բնութիւնն իւր վրիպակաւ հրէշս ինչ առնելով՝ ետ օձաբարոյ Տիմոնի զկերպարան մարդկային. որում յաւէտ օձադէմ կամ գլխովին օձ պարտ էր լինել. որովհետև ունէր զգժնեայ բարս անմերձ 'ի մարդկանէ հանգոյն օձի:

202. Երակլիտոս կամ Հերակլիտոս էր փիլիսոփայ Եփեսացի, աշակերտ Քսենոկրատայ, կամ ըստ ասելոյ այլոց, առանց ուսուցչի ինքնին մտավարժ գտեալ և բնական ճարտարութեամբ յիմաստասիրութիւն կրթեալ: Սա ոչ միայն անծիծաղ էր ըստ Քսենոկրատայ, այլ և դիւրապատրաստ 'ի լալ. զի յելանելն 'ի տանէ՝ յորժամ տեսանէր զաղմուկ որդւոց մարդկան, հայելով 'ի վերայ բազմավրդով վիճակի նոցա՝ յարտասուս հարեալ լայր իբրև սգաւոր ոք: Իսկ Դեմոկրիտոս էր փիլիսոփայ Աբդերացի մականուանեալ Ծիծաղող, զի 'ի տեսանել զգործս որդւոց մարդկան ստէպ 'ի ծաղր շարժէր 'ի վերայ տղայամտութեան նոցա, և ծիծաղէր զնոքօք: Սա հուսկ յետոյ կուրացոյց, ասեն, զերկոսին զաչս իւր, զի մի խափան լիցին անդրադ խոկմանց հոգւոյն: Զերկու զայս փիլիսոփայս միանգամայն յիշատակէ և Նոննոս յասելն. « Հերակլիտոս և Դիմոկրիտոս ոչ 'ի միում ժամանակի լեալք, այլ բնաբանականք գոլով նմանապէս զաշխարհիս զայսորիկ զհետեւմունս խաղ առնէին. մինն ծիծաղելով, և միւսն լալով. Դիմոկրիտոս ստէպ զիրողութեամբք աշխարհիս ծիծաղելով, և Հերակլիտոս լալով. այլ Դիմոկրիտոս Աբդերացի էր, և Հերակլիտոս Եփեսացի »:



## Ծանօթութիւնք 'ի չորեքտասաներորդ գիրս:

203. Աւելորդ համարեցաք մի առ մի յիշել զարան մի ըզկնի միոյ յիշատակեալս 'ի բանի անդ հեղինակիս. յորոց ոմանք 'ի սովորականբարս՝ զայս կամ զայն պակասութիւն մալեկան բարձեալ բերէին: Բաւ լիցի իմանալ զմիտս Թեսալոսի, թէ զիարդ ըստ համեմատութեան մի մոլութիւն քան զմիւսն ամօթալի կոչի. և այն երբեմն առաւել կամ նուազ գտանի ըստ վիճակի իւրաքանչիւր անձանց: Թող զայն զի ինչ ինչ 'ի մոլութեանց, որ նուազ ամօթալի երևին առաջի մարդկան, առաւել յամօթ առնեն զմարդ առաջի Աստուծոյ յահեղ ատենին, քան զայլ մարդկային պակասութիւնս ինչ որ առ մարդկան առաւել ամօթալի թուին:

204. Իլոս որ և Տրովս կոչի, էր որդայ Դարդանիոյ՝ որ շինեաց զԻլիոն կամ զՏրովաս, այն է մեծ քաղաքն Տրովիոյ: Արդ ըստ առասպելաց Դիոս ընկեց յերկնից զարձան մի Պալլասայ աստուածուհւոյ Պալլադիոն անուանեալ. զոր նա ինքն Իլոս յափշտակեաց, և փոխանակ նորա դրօշեաց զայլ արձան նման նմին, որոյ վասն և պատուհասեալ կուրացաւ: Յաւելուն առասպելարկուք, թէ յետ ժամանակաց յառման Տրոյիոյ Յոյնք կարծելով զերկնաւոր արձանն 'ի քաղաքի անդ լինել կորզեցին հնարիւք. այլ Հռովմայեցիք համարէին թէ Յոյնք զերկրորդն առին. իսկ առաջինն այն փոխադրեցաւ, ասեն, 'ի Հռովմ: Իսկ վասն Դեմոկրիտեայ փոքր ինչ 'ի վեր ասացաւ:

205. Կատոն անուամբ բազում եղեն արք երևելիք 'ի մէջ Հռովմայեցւոց. այլ առաւել անուանի գտաւ Մարկոս Պորկիոս Կատոն մականուանեալն Իմաստուն և Մեծ, որ մեռաւ իբր 150 ամօք յառաջ քան զՔրիստոս՝ 'ի հասակի 86 ամաց. այր իշխանաւոր և գիտնաւոր, զօրաւոր գրով և բանիւ և գործով. մինչև ասել Կիկերոնի զնմանէ թէ եղև ատենաբան ճարտարախօս, խորհրդական հանճարեղ և զօրավար քաջ: Սա ասէր թէ վասն երից իրաց ևեթ զղջացեալ է իմ. վասն անցուցանելոյ զօր յորում չիցէ իմ ուսեալ ինչ նոր, վասն հաւատալոյ զգաղտնիս իմ կնոջ իմում, և վասն նաւելոյ ընդ ծով երբ կարողն էի ընդ ցամաք ճանապարհորդել: Յետ սորա անուանի եղև թոռնորդի սորին Մարկոս Կատոն իմաստասէր՝ այն է մականուանեալն Ուտիկեցի, կամ Կատոն կրտսեր, և-

բանին գտանել յամենայնի հանդոյն նախահաւուն իւրոյ, և տառապելեալ 'ի մեծանձնութեան և 'ի քաջասրտութեան. սիրէր զիմաստասիրութիւն, այլ միայն զհետ աւանդոյ Ստոյիկեան փիլիսոփայից: Սա է որ երբեմն միախոհ գտաւ ընդ Կիկերոնի հռետորի, և ապա հակառակ. ջանացաւ միաբանել զՅուլիոս Կեսար ընդ Պոմպէի, և յոչ կարելն խաղաղել՝ եկաց 'ի կողմն Պոմպէի, և բազմօք ընդդէմ եկաց միահեծան իշխանկալութեան Կեսարու. վասն որոյ և 'ի մեռանել Պոմպէի և 'ի զօրանալ Յուլիոսի, փախստեայ անկաւ Կատոն յերեսաց նորա. և առ դառնութեան սրտին մահ խնդրեալ անձինն, հրաման ետ վասն տան իւրոյ, և ընթերցեալ երկիցս զՃառն Պղատոնի որ վասն անմահութեան հոգւոյն, արհամարհեաց զմահ մարմնոյ, և մխեալ զսուրն 'ի կողս իւր մեռաւ յՈւտիկէ քաղաքի. ուստի և էառ զՈւտիկեցիդ անուն: Զսա ստգտանէ Թեսաւրոս վասն արբեցութեան, որպէս և զառաջինն վասն տափանաց 'ի ծերութեան. զորոց ուրոյն ուրոյն ճառեաց Պղուտարքոս:

206. Աշակերտ իմաստնոյն Սենեկայի եղև անիմաստն Ներոն կայսր հրէշ մոլութեանց, ամենեւին աննման իւրում վարժապետի և չարարար նմին, որպէս այլուր յիշեցաք: Ներոն ըստ ոմանց ստուգաբանի 'ի յն. և լտ. ջիղ. իսկ Թեսաւրոս ստանոր թուի խալէրէն ստուգաբանել սեաւ կամ թուխ, թղմատեսակ կամ արիւնըռուշտ: Այլ 'ի հայումս ոչ ինչ տարադէպ նոյնանուն ընդ անուան քրիստոսամարտ դերաքրիստոսին, այն է Նեռն. մանաւանդ թէ որպէս կարծի անուանս Նեռն առեալ է 'ի Ներոնէ:

207. Բան Սենեկայի այսպիսի ինչ է. « Պարտ է մեզ ընտրել զայր ոք բարի, և հանապազ առաջի աչաց ունել զնա. որպէս զի իբր յառաջիկայութեան նորա քաղաքավարեսցուք, և զամենայն ինչ այնպէս արասցուք որպէս թէ նա հայեցեալ տեսանէ... երանի այնմ որ գիտէ այնպէս պատկառել յումեքէ, մինչև ընդ յիշելն իսկ զնա յարդարեսցէ և ուղղեսցէ զանձն իւր: Որ այսպէսն գիտէ պատկառել յայլմէ, փութանակի և ինքն լիցի պատկառելի: Եւ արդ ընտրեա քեզ զԿատոն. և եթէ սա թուի քեզ կարի խիստ, ընտրեա զբարեմոյն անձն զԼելիոս. ընտրեա զայն, որոյ վարք և բանք հաճոյ եղեն քեզ... Չէ մարթ քեզ ուղղել ինչ առանց մերձ գնելոյ զկանոն »: Ի բանից աստի որպէս և յայլոց տեղեաց Սենեկայի երևի թէ 'ի գիրս Թեսաւրոսի փոխանակ անուանս Կատոնի՝ սպրդեալ է Կենսորինոս. քանզի և Կիկերոն իսկ որ 'ի բազում տեղիս գովէ իբրև առաքինի զԼելիոս, առ նմին յարէ միայն զԿատոն:



208. Զայս պատմութիւն գրէ Հերոդոտոս: Ի լինել, ասէ, հակառակութեան 'ի մէջ Արգիացւոց և Սպարտացւոց վասն անդոյն կամ դաշտին, որ կոչիւր Թիւրէա, ընտրեցան յերկուց կողմանց եւս երեքհարիւր արք մարտնչիլ ընդ միմեանս մինչև իսպառ կոտորելոյ միոյ կողման զմիւսն. և յորում կողմն մնացորդք արանց գտցին, նոցա լիցի տեղին, և իբրև կռուեցան մինչև ցերեկոյ, 'ի Սպարտացւոց մնաց միայն Ոթրիադէս. իսկ յԱրգիացւոց մնացին երկու արք Ալկինոր և Քրոմիոս, որք իբրև յաղթողք դարձան յետս անհոգութեամբ. իսկ Ոթրիադէս կողոպտեաց զզէնս անկելոց թշնամեաց, և բերեալ 'ի կողմն բանակի իւրոյ եկաց մնաց արիաբար 'ի տեղւոջ մարտի: Ի վաղիւ անդր պնդէին Արգիացիք թէ մեր է յաղթութիւնն. զի 'ի մէնջ երկուք մնացին. և ընդ հակառակն Սպարտացիք ասէին, թէ մինս 'ի մէնջ տակաւին անպարտելի կայ մնայ. և այն զի ձերքդ 'ի բաց փախեան 'ի տեղւոջէ պատերազմին, և մերս հաստատուն և անվեհեր սրտիւ ժուժեաց և զաւար եւս զձեր էառ: Ի սաստկանալ վիճմանց այնուհետև խմբեցաւ պատերազմ մեծ յերկուց կողմանց և յաղթեցին Սպարտացիք քաջք: Յարէ ապա Հերոդոտոս. « Այլ վասն Ոթրիադեայ որ միայն էր մնացեալ յերից հարիւրոց անտի ընտրելոց, ասեն թէ ամօթ համարեցաւ դարձ առնել 'ի Սպարտա յետ նիզակակցացն անկանելոյ. և անդրէն 'ի Թիւրէա անձամբ զանձն կարճեաց 'ի կենաց »: Իսկ վասն Լուկրետիայ Հռովմայեցւոյ յիշեցաք վերագոյնդ 'ի համարն 45:

209. Միռռա կամ Միւռոս, որ թարգմանի զմուռս և զմռսենի, ըստ առասպելաց էր դուստր Կինիւրայ արքային Կիպրոսի. որոյ տարփեալ, ասեն, առ հայրն իւր հնարիւք դայեկին եմուտ առ նա 'ի մթան, և յղացաւ 'ի նմանէ. իսկ Կինիւրաս իբրև խնդրեաց լոյս, և իմացաւ զի դուստր իւր է նա, իսկ և իսկ կամեցաւ սպանանել զնա. այլ նորա օգնական իւր առեալ զգիշեր փախեաւ 'ի տանէ հօր իւրոյ, և գնացեալ անկաւ յԱրաբիա. ուր փոխեցաւ, ասեն, 'ի համանուն ծառ:

---

## Ծանօթութիւնք 'ի հնգետասաներորդ գլուխ:

210. Թէպէտ ոմանք այլ և այլ դիս համարին զՆեմեսիս և զԱդրաստիա, բայց բազումք եւս մի և նոյն դնեն: Արդ Նեմեսիսդ անուն, որ կրկնակի ստուգաբանի, այսինքն բաշխումն և սրտմտութիւն, ընծայիւր աստուածուհւոյ համարելոյ վրէժ

խնդիր արդարութեան. զի փոյթ նորա է, ասէին, պատժել զյանցաւորս զառ 'ի մարդկային դատաստանէ զերծեալս, և պսակել զարժանաւորս զառ 'ի մարդկանէ անտես եղեալս. վասն որոյ և կոչիւր դուստր արդարութեան: Իբրու Նեմեսիս բաշխէ, ասէին, բարիս իւրաքանչիւր ըստ արժանի արդեանց, և իբրև Ադրաստիա (անխուսափելի), անվրէպ հատուցանէ յանցաւորաց զպատիժ: Ասէին ունել նմա աչս մշտաբաց և սրատես դիտել զամենայն որ ինչ գործի յաշխարհի: Նկարիւր օրիորդ Թևաւոր որպէս և երբեմն նստեալ 'ի վերայ անուոյ կամ եդեալ զմի յոտիցն յանիւս, առ 'ի նշանակել թէ հոլովեալ շրջի ընդ ամենայն տիեզերս, և երագ 'ի վերայ հասանէ տեսանել և քննել զգործս որդւոց մարդկան: Նշանակ նորա յատենի աստուածոց՝ էր ունել 'ի ձեռին չափ երկրաչափական, որ է անվրէպ: Գոյր առանձին մեհեան նորա 'ի Հռովմ 'ի կողմն մի Կապիտոլիոնի. ուր պահիւր արքունի չափ կանգնոյ իբրև յատենի արդարութեան. Հռովմայեցիք հանդիսապէս զոհ մատուցանէին նմա, յորժամ ունէին ելանել 'ի պատերազմ:

211. Նարկիսոս որ երբեմն ծառայ ոք էր և անարգ գերի, ամբարձեալ 'ի Կղոդեայ կայսերէ 'ի պատիւ աւագութեան մեծացաւ յոյժ յոյժ իշխանութեամբ և հարստութեամբ. մինչև ըստ գրելոյ Դիոնի ունել նմա աւելի քան զտասն միլիոն ոսկի: Յոբնաղ բանաստեղծ 'ի մի կարգ դասէ զնա ընդ Կրեսոսի Լիւդացւոյ ընչաւէտ արքայի, և ընդ հարըստագոյնս 'ի Թագաւորացն Պարսից. և այլք նմանեցուցանեն զնա Միդասայ որ խնդրեաց ոսկի լինել ամենայնի, յոր ինչ և մերձեցի: Արդ Նարկիսոս, որ այնչափ համարձակութիւն եգիտ առ Կղոդեաւ, մինչև չանկանիլ միոյ 'ի բանից նորա 'ի գետին, և ըստ խրատու նորա սպանանել կայսեր զկին իւր, յետ սակաւուց յաւուրս Ներոնի սպանաւ չարաչար թելադրութեամբ Ագրիպպինայ մօրն Ներոնի:

212. Յայտնի է պատմութիւն գործոց քաջ զօրավարին Բելիսարիոսի. որ յետ մեծամեծ յաղթութեանց՝ որովք մեծացոյց զանուն մեծին Յուստինիանոսի կայսեր Յունաց, հուսկ յետոյ ամբաստանեալ եղև իբրև դաւադիր ընդդէմ ինքնակալին. վասն որոյ և կայսրն ըստ սադրելոյ կնոջ իւրոյ մերկեաց զԲելիսարիոս յամենայն ընչից և 'ի պատուոյ, և բրեաց զաչս նորա. և այնուհետև անկեալ նորա 'ի հրապարակս՝ մուրացիկ լինէր ընդ աղքատս: Բայց են և ոմանք որք ասեն թէ կայսրն 'ի պատուոյ ևեթ զրկեալ իցէ զնա առ ժամանակ մի, և անդրէն դարձուցեալ 'ի նոյն պատիւն առաջին. սա ասի վախճանեալ յամի տեառն իբր 565: Յետագայ բան Թեաւ-



րոսի հայի առ նախատացեալ կայսերս. յորոց Կղոդիոս յարքունի ընչից ճոխացոյց զՆարկիսոս գերի անպիտան, և Յուստինիանոս կեղեքեաց զԲելիսարիոս և էառ զինչս նորա յարքունիս յորդորանօք կնոջ իւրոյ:

213. Եւտրոպիոս էր ներքինի 'ի պահապանաց կանանոցին յաւուրս Արկադեայ կայսեր որդւոյ մեծին Թէոդոսի: Սա որ քան զոր յառաջեալ 'ի պատիւ, եհաս մինչև յաւագութիւն հիւպատոսութեան. և անձանաչօղ գտեալ չափու անձին յանդուգն ձեռնամուխ լինէր 'ի բազում իրս ընդդէմ իրաւանց. նմին իրի և առաւել եղև յաչս ամենեցուն մանաւանդ վասն հարստահարելոյ նորա զեկեղեցականս և զերևելի եպիսկոպոսունս: Այլ իբրև իշխեաց խրոխտալ նաև ընդդէմ Եւդոքսիայ Թագուհւոյն, առաքեաց Թագուհին արս զկնի նորա առնուլ զգլուխ նորին. և նա փախեաւ յեկեղեցին: Ապա 'ի դիմել բազմութեան ամբոխին յափշտակել զնա՝ ոչ ետ թոյլ սուրբ հայրապետն Յովհան Ոսկեբերան վասն ապաւինելոյ նորա 'ի տունն Աստուծոյ. և խօսեցաւ առ ժողովուրդն 'ի վերայ այսր քարոզ սքանչելի: Յետ այսորիկ աքսորեցաւ Եւտրոպիոս 'ի Կիպրոս. և հուսկ յետոյ գլխատեցաւ 'ի Քաղկեդոն յամի տեառն 399:

214. Վիճակ կամ վիճակընկեցութիւն, 'ի գործ ածիւր առ հեթանոսս բազմապատիկ սնապաշտութեամբ 'ի գուշակութիւնս բախտից. քանզի ընուին 'ի բախտանոցս կամ յամանս ինչ որպէս յեղջիւրս կամ 'ի սափորս վէգս կամ քուեայս և կամ այլ ինչ բեկորս, յորոց վերայ կային նշանակեալ մտացածին տառք կամ գիծք առ որոշումն յաջողութեանց և ձախողութեանց. և 'ի դատարկել անդ զամանն ում և ելանէր այս կամ այն նշանակ, համարիւր այնմ նմին գուշակ երջանկութեան կամ թշուառութեան: Արդ ըստ այսմ նմանութեան յօդեցին բանաստեղծք, թէ վիճակն իբրև զօրութիւն ինչ վերին թափէ 'ի վերայ մարդկան զայլ և այլ դիպուածս բախտից յերկուց ամանոց, յորոց 'ի միումն կայցեն քուեայք երջանկութեան, և 'ի միւսումն թշուառութեան: Այլ այս ամենայն է ունայնաբանութիւն, եթէ չիցէ նմանաբանութիւն. զի փոխանակ ասելոյ թէ Աստուած է որ յաջողէ զամենայն յամենայնի, և բաժանէ զպարգևս իւրաքանչիւր որպէս և կամի, այսպիսի բանից սնոտեաց զհետ կրթեցան:

215. Եգիսթոս որ թարգմանի այծասուն կամ սնուցեալ յայծէ, ըստ առասպելաց էր որդի Թիէստէսի՝ ծնեալ յանկարգ խառնակութենէ այսինքն 'ի դստերէ նորա 'ի Պելոպեայ. արդ ասի թէ մայր մանկանն 'ի ծածկել զչարիսն ըն-

կէս զաղայն յանտառս, զի լիցի կերակուր գազանաց. այլ գըտեալ զնա հովուի միոյ սնոյց կաթամբք այծից։ Իբրեւ եհաս յարբունս, եղեւ այր զօրաւոր, այլ վայրագ եւ անառակ. եւ յետ սպանանելոյ զհօրեղբայր իւր զԱտրեւս եւ զորդի նորա զԱգամեմնոն՝ սպանաւ ապա եւ ինքն յՈրեստեայ յորդւոյ Ագամեմնոնի։ Իսկ Հիպպողիտոս էր որդի Թեսէոսի 'ի Հիպպողիտեայ ամազոն կնոջէ. սա ըստ առասպելաց անգոսնեալ զաղջկանանց՝ սիրեաց զամուրի կեանս եւ պարապէր յորսորդութիւն։ Իսկ մօրու նորա Փեդրա աչս արձակեալ 'ի նա՝ բռնադատեաց 'ի պղծութիւն. եւ յոչ առնուլ նորա յանձն՝ չարախօս եղեւ զպատանւոյն առաջի հօր նորա. եւ նա յաքսորս առաքեաց զնա։ Կամ ըստ այլոց, իբրեւ գիտաց Հիպպողիտոս զցասումն հօր իւրոյ, հեծեալ 'ի կառս փութացաւ փախչել. այլ յանիծից հօր իւրոյ՝ անկեալ 'ի կառաց, յօշոտեցաւ յերիվարաց իւրոց, բայց յաւելուն առասպելաբանքն թէ դիքն անդրէն կենդանացուցին զնա։ Մտացածին պատմութիւնք Եգիսթոսի եւ Հիպպողիտոսի հանդիպացեալ են առ բանաստեղծս եւ առ եղերերգուս։

216. Մարսիաս էր փողահար Փռիւգացի, որ ըստ առասպելախօսաց իշխեաց կոչել իւր ախոյեան 'ի նուագածութիւն զՓեբոս զաստուածն երաժշտութեան, տեսանել թէ ո՞ր գործի քաղցրաձայն հնչիցէ, փո՞ղ իւր եթէ քնարն Ապողոնի։ Իսկ դատաւորք հանդիսի սոցա ասին լինել Տմողոս արքայ Լիւդացւոց որդի Արեսի կարծեցեալ, եւ Միդաս արքայ կողմանցն Փռիւգացւոց։ Տմողոս յաղթող դատեցաւ զԱպողոն, եւ պարտաւոր զՄարսիաս. իսկ Միդաս գովեաց զՄարսիաս. ընդ որ զայրացեալ Ապողոնի ասէ. Փոխանակ զի այդչափ թանձրալուր գտար, եւ ոչ գիտացեր որոշել ընդ քաղցրալուր եւ ընդ խաշոր հնչիւն նուագաց, բուսցին քեզ ականջք իշոյ. իսկ զՄարսիաս կապեալ 'ի ծառ մի արար մորթեղերծ ըստ դատաստանին Տմողոսի, վասն իշխելոյ նորա 'ի վէճ մտանել ընդ իւր։ Այլ ոմանք զդատաստան Տմողոսի եւ Միդասայ դնեն լինել յայլ առասպելեալ դիպուած, յորժամ Պանէս աստուածն հովուաց նոյնօրինակ 'ի վէճ եմուտ ընդ Ապողոնի։

217. Սալմոնէոս որդի Եոլոսի՝ արքայ Հեղիացւոց կամ Թեսաղացւոց, ըստ առասպելաց ցանկացեալ յաստուածոց կարգի համարել խորհեցաւ որոտմունս եւ կայծակունս հնարել հանգոյն Արամազդայ հօր աստուածոյն, այն է Դիոս շանթաւորք. շինեաց կամուրջ մի պղնձի, բարձր, լայնանիստ եւ երկայնաձիգ. յորոյ վերայ ընթացուցանէր զկառս իւր ամեհի երիվարօք՝ մտրակեալ զնոսա արշաւաքօք. եւ առնէր շառաչիւն մեծ եւ դղրդիւն որոտաձայն, եւ միանգամայն լու-



ցեալ ջահ բոցավառ սպառնայր կիզուլ զմարդիկ իբր յօրինակ կայծականց։ Զայն տեսեալ, ասեն, Արամազդայ յարոյց յանկարծակի զհսկական որոտմունս, եւ արձակեալ կայծակունս 'ի վերուստ՝ շանթահար իջոյց յանդունդս զՍալմոնէոս։ Ստորագրէ զսոյն անցս Վիրգիլիոս 'ի Զ Ենէական գիրս։ Նոննոս փոքր մի այլազգ գրէ. « Սալմոնէս որդի էր, ասէ, Եոլոսի թագաւորին Թեսաղացւոց. սա ամբարշտեալ առ աստուածս չոր եւ կարծր արջառակաշիւք եւ կաղապարօք թնդմունս եւ հնչմունս գործէր, 'ի ձեռս ունելով լապտերս վառեալս՝ պործէր եւ մեծաբանէր որոտալ որպէս Զեւս եւ փայլատակունս առնել. մինչեւ շանթահար եղեալ կիզաւ յԱրամազդայ։ Իսկ վասն Պերիլղոսի որ գտակն եղեւ փաղարեան պղնձացլու, տես 'ի համարն 3։ Այլ յաղագս առն որ սիրելի էր յաչս Աղէքսանդրոսի Սեւերոսի կայսեր, բայց քանզի զձիրս կամ զաւագութիւնս շնորհեալս յարքայէ կաշառօք վաճառէր այլոց, 'ի ծուխ հեղձուցաւ, բազում անգամ յիշատակեաց Թեսաւրոս։

218. Ցիտալականն առած ձեւանայ 'ի ձեռն նմանաձայն բառից μεταίτιοι, αἴτιοι. որոց առաջինն նշանակէ զնպաստամատոյց կամ զգործակից ձեռնտուս. իսկ երկրորդն ըղբուն հեղինակս գործոյն կամ զսկզբնապատճառս։

219. Լայնաբար առեալ լինի աստանօր նշանակութիւն անուանցս Նեմեսիս եւ Ադրաստիա, հայելով 'ի գործս ընծայեալս նոցին. այլ զճիշդ ստուգաբանութիւնն ունիս տեսանել 'ի համարն 210։

220. Ի չորից անտի արանց զորս ասաց, ասեն, Աղկիդէս այսինքն Հերակլէս քաջն. Կակոս որդի Հեփեստեայ կարծեցեալ էր աւազակ ոմն առ Տիբերիս գետովն ուր յետոյ Հռովմ շինեցաւ. սա գողացաւ, ասեն, զարջառս Հերակլի 'ի դառնալ նորա 'ի Սպանիոյ յայն տեղիս. քանզի յանկարծուստ 'ի վերայ յարձակեալ անդեոց 'ի թիկանց կուսէ բուռն զօրութեամբ ձգէր զագիսնոցա, եւ տանէր յայր իւր. այլ 'ի բառաչել նոցա յայրի անդ զգացեալ զայն Հերակլի դիմեաց 'ի տեղին, եւ հաստ բրովն իւրով հարեալ սատակեաց զԿակոս. եւ ապա զօհս մատոյց դից վասն այսր յաղթութեան 'ի տեղին որ կոչիւր հրապարակ արջառոց։ Կակոս թարգմանի չար կամ չարագործ. վասն որոյ եւ 'ի հայերէն թարգմանութեան առաջին մասին Ժամանակագրութեան Եւսեբեայ գրի այսպէս. « Հերակլէս երթեալ 'ի Սպանիայ աշխարհէ՝ բագին կանգնեաց 'ի հրապարակի Բոյարեայ, վասն զի զչար որդին Եփեստեայ սպան »։ Իսկ Բուսիրիս էր բռնակալ ոմն յԵգիպտոս համարեալ որդի Պոսիդոնի աստուծոյն. սա ըստ

ասելով ոմանց զանցաւոր օտարին հիւրընկալեալ դաւաճանութեամբ՝ զոչէր զնոսա գլխ իւրոց. և իբրև զնոյն կամեցաւ առնել և ընդ Հերակլէս՝ 'ի վեր եղ նենգութիւնն և սպանաւ 'ի Հերակլէ։ Առ սա հայի ասացեալն Եւսեբեայ 'ի կանոնի իւրում յաւուրս Յեսուայ. « Բուսիրիս առ կողմամբքն Նեղոսգետոյ բռնանայր, և զանցաւորս զօտարս կողոպտէր »։ Ոմանք գտնեն թէ սպանեալն 'ի Հերակլէ Բուսիրիս իցէ այլ ոմն բռնաւոր 'ի Սպանիա։ Իսոկրատէս սոփեստէս յօրինեաց առանձին ճառ 'ի գովեստ գործոց Բուսիրիսի անողորմ բռնաւորի՝ 'ի ցոյց ճարտարութեան մտաց իւրոց։ Անտէոս էր հսկայ ոմն վլթխարի և ուժով անպարտելի 'ի Լիբիա՝ համբաւեալ 'ի խաղս ըմբշամարտութեան. որում Հերակլէս ևեթ կարողացաւ, ասեն, յաղթել. և բազում են բանք բանաստեղծից զնմանէ։ Զսա ևս յիշէ Եւսեբիոս 'ի կանոնի առ ժամանակօք Գեդէոնի, յասելն. « Հերակղէս զնահատակութիւնս կատարէր. և զԱնտէոս սպանանէ, և զԻղիոն աւար հարկանէ. ասի թէ երկրածին էր Անտէոսն. քանզի միայն յանուանելոյն կռուողաց 'ի գետնի՝ հմուտ էր կռուոցն. մինչև կարծել յերկրէ մօրէն իւրմէ օգնականութիւն գտանել »։ Սոյնպէս և Գերիոնէս կամ Գերիւոն բռնաւոր արքայ Սպանիոյ էր այր քաջալանջ և քաջաբազուկ՝ եռամարմին ասացեալ ըստ առասպելոց, թերևս վասն տիրելոյ երից կղզեաց՝ որպէս կարծեն ոմանք, կամ զի ունէր և զերկոսին եղբարս իւր համակամ թևակիցս և օգնականս, որպէս այլք գնեն. ընդ որում մարտուցեալ Հերակլի յաղթահարեաց, ասեն, զնա և ձերբակալ արարեալ եբեր յԻտալիա։ Զայս ամենայն գտանես յիշատակեալ առ Վիրգիլիոսի և առ այլ բանաստեղծս՝ 'ի խօսելն նոցա զքաջութեանց Հերակլի։

221. Պուբլիոս Սիրոս կոչեցեալ, այսինքն սիւրացի կամ ասորի վասն գոլոյն հայրենեօք յերկրէն Ասորւոց, էր բանաստեղծ միմոսական՝ անուն մեծ ստացեալ 'ի Հռովմ յաւուրս Յուլիոսի Կեսարու, և սիրելի յոյժ յաչս նորա վասն հանճարոյ իւրոյ։

222. Արքիլոքոս էր բանաստեղծ ոմն կամ երգայարդար լակեդեմոնացի, այսինքն սպարտացի, իբր 650 ամօք յառաջ քան զՔրիստոս. որոյ որչափ ճարտարարուեստ և ազդու էին բանքն, նոյնչափ և խայթողական. վայելչահիւս, այլ երգիծաբան։ Լիւկամբէս ոմն խոստացեալ էր զդուստր իւր տալ Արքիլոքոսի 'ի կնութիւն. և ապա սուտ եղեալ՝ նմա այլում ետ. վասն որոյ և Արքիլոքոս զայրացեալ յօրինեաց 'ի կշտամբանս նորին տաղս ինչ այնչափ զկծեցուցիչս, մինչև Լիւկամբէս չկարացեալ տանել այնմ խեղդ եարկ անձին։ Ի մեռանել առա և Արքիլոքոսի՝ քանդակեցան պիծակք 'ի վերայ շիրմի նորա 'ի նշանակ խայթողական բանից նորին։ Արգելեալ էր 'ի Սպարտիա ընթերցումն ոտանաւորաց սորա. զի մի՛ ուսցին համբակք վարել զայնպիսի ոճ կծանողական։ Զհետագայս անձանց որք բանիւ կամ գրով չարիս խօսեցան զայլոց, չկամեցաք կարգել աստ ծանօթութիւն. զի ոչինչ աւելի օգտէր առ իմանալ զմիտս բանին։



223. Ստիւգս կամ Ստիւգեան լիճ կոչի 'ի բանաստեղծից տարտարոսեան լուալիքն իբր ընդունարան ամենայն ժահից. որ էր, ասեն, յառաջն դուստր Ովկիանոսի, և մայր լեռնեանն Հիդրայի. և ապա փոխեցաւ 'ի ջրակոյտ դժոխոց։ Այս առասպել առեալ է ըստ ոմանց յՍտիւգս անուն աղբերէ բղխելոյ յԱրկադիա գաւառի. որոյ ջուրն այնչափ ցուրտ էր՝ ասեն՝ և գժնեայ, մինչև սպանանել զըմպողն, զերկաթ և զպղինձ մաշել, և զայլ անօթս իսկ և իսկ խորտակել. միայն կճղակք ջորւոյ տոկային ընդդէմ նորա։ Եւ 'ի ջրոյ աստի էր՝ ասեն, թոյնն որ տուաւ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ։ Իսկ զԲոնասոս գազանն յիշէ և Խորենացին յաշխարհագրութեան յասելն. « Եւ լինի 'ի Դաղմատիա գազան, որպէս զեզն, Բոնասոս անուն, որ զկոյն ձգէ որսորդացն, և այրէ »։ Զնոյն երկրորդէ և Վանական վարդապետ 'ի հարցմունս իւր, ասելով. « Ի Դաղմատիա գազան ինչ է որպէս զեզն, Բոնասոս անուն. զկոյն ձգէ որսորդացն, և այրէ »։

224. Յայտնի է իմաստ բանին, զի այն ինչ իբր նորածին էր աշխարհս, ետես զդաւաճանութիւնն Կայենի ընդդէմ եղբօր իւրոյ Հաբելի. յորմէ ձեռնարկէ Թեսաւրոս, թէ և 'ի կատարածի իւրում ոչ նուազ ապիրատութիւնս տեսցէ այս աշխարհ հնացեալ։

## Ծանօթութիւնք 'ի մետասաներորդ գիրս.

225. Ցանց արարաք զստուգաբանութեամբ անուանս [illegible]. ըստ [illegible]. [illegible], զոր հանէ Թեսաւրոս յերկուց բայից, [illegible] որ է [illegible], և [illegible] որ է [illegible]. զի կայէ ասէ զընթերցողն պարտաւորելով լինել օրինապահ և առաքինի։

226. Հռամիրոս եղբայր թագաւորին Արագոնացւոց ընտրեալ էր իւր վարս միակեցական. այլ 'ի մեռանել արքայի՝ ստիպեցին Արագոնացիք զքահանայապետն, զի տացէ հրա-

ման Հռամիրոսի գաղ նստիլ 'ի տեղի եղբօր իւրոյ, և կանգնել զԹագաւորութիւնն և զզարմ արքունի, և այնպէս յակամայս Թագաւորեաց նա, և ամուսնացաւ. այլ յետոյ անսեալ զանձն անբաւական 'ի բառնալ զբեռն արքունի հոգոյ, և ցանկացեալ իւրում առաջին վիճակի, դարձաւ 'ի միայնութիւն իւր, որպէս և ժողովուրդն խիկ զայդ կամէր, զի տեսանէին զնա անյաջող 'ի հասարակաց տնտեսութիւն:

227. Պատրիկիոս և Տրիբոնիանոս որք անուանիք ուշիմութեամբ, միանգամայն և ապիրատութեամբ անիրաւ գործոց, եղեն իրաւագէտք 'ի վեցերորդ դարու յաւուրս մեծին Յուստինիանոսի կայսեր. որ 'ի ձեռն նոցա և այլ ևս իմաստուն անձանց յօրինեաց զհաւաքումն գրոց իրաւանց և օրինաց. որոյ դատաստանագիրքն նշանաւոր է յոյժ մինչև ցարդ: Արդ Թէպէտ ինքն Յուստինիանոս չէր գիտնական ոք, բայց սիրող էր գիտնաւոր արանց: Եւ զի սոյն այս կայսր արար և ինչ ինչ անկարգ անսալով խրատու կնոջ իւրոյ, գուցէ նմին իրի պախարակէ զնա Թէոդորոս ասելով, Թէ որ օրէնս ետ աշխարհի գրով, օրինագրեալ լինէր 'ի կնոջէ գործով:

228. Վասն Գորգոնեանց երից առասպելեալ քերց փոքր 'ի շատէ ասացաւ 'ի համարն 153:

229. Աստրէա ըստ դիւցաբանից էր դուստր Աստրէոսի, որ 'ի Տիտանեաց անտի պատերազմողաց ընդ Դիոսի, և կամ ծնունդ Դիոսի 'ի Թեմեայ կնոջէն Աստրէոսի: Արդ որպէս Թեմիս համարիւր աստուածուհի իրաւանց և արդարութեան, նոյնպէս համարեցաւ և Աստրէա, մանաւանդ Թէ և արդարութիւն անուանեցաւ. որ նկարիւր իբրև օրիորդ զգաստ և անաչառահայեաց, ունելով 'ի ձեռին երկԹաԹ կշիռ զուգահաւասար: Սա ասեն նախ յերկնից եկն յերկիր յոսկեղէն դարու անմեղութեան աշխարհի. այլ յետոյ 'ի զօրանալ չարեաց որդւոց մարդկան՝ անդրէն 'ի վեր չուեաց. կամելով ասել Թէ արդարութիւն նուազեաց յերկրէ: Իսկ վասն Նեմեսեայ տես 'ի համարն 210:

230. Վասն Դրակոնի որ Թարգմանի վիշապ, որ և եղև գժնդակ օրէնսդիր Աթենացւոց դնելով գազանային օրէնս, յիշեցաք 'ի համարն 24: Իսկ Հռադամանթէս էր օրէնսդիր Կրետացւոց. որ սահմանեաց կարգս անաչառ իրաւանց և դատաստանաց. զորմէ յօդեցին բանաստեղծք լինել դատաւոր անդրաբարձեանին, խիստ և ահարկու: Հռադամանթեան դատաստան կոչի յառակս անհրաժեշտ վճիռն անկաշառելի և անողոքելի դատաւորի, կամ ճիշդ և անվրէպ դատաստանն:



Յիշէ զսա Նոննոս, և կոչէ Հռադամանթէս արդար դատաւոր եղբայր Մինովսայ, և որդի Արամազդայ. և յաւելու Թէ ըստ քերԹողաց և ըստ Պղատոնի ասի զՄինովսայ և զՀռադամանթեայ Թէ « Սոքա մեռեալք՝ ոչ ընդունակ լինին խաւարի, այլ երանելեաց կղզիքն և Ելեսեան դաշտն ընկալաւ զնոսա »:

231. Թոաս էր արքայ Տաւրիոյ, ուր կայր երևելի մեհեան Արտեմեայ դից. և էր օրէնք եդեալ յարքայէ զի որ միանգամ յօտար երկրէ նաւարկեալ հանդիպի յայն տեղի, զոհ լիցի նա Արտեմեայ: Եւ էր անդ քրմուհի կարգեալ Իփիգինէ դուստր Ագամեմնոնի, զոր յափշտակեալ էր Արտեմիս 'ի զենմանէ, որպէս յիշեցաք 'ի համարն 44: Եւ եղև զի յորժամ Որեստէս եղբայրն Իփիգենեայ սպանեալ զմայր իւր զԿլիտեմնեստրա՝ լկէր չարաչար 'ի դիւաց, տասցաւ նմա 'ի պատգամախօսէն Ապողոնի Թէ ոչ այլազդ զերծցիս 'ի տանջանաց այտի, եԹէ ոչ առեալ բերցես յԱԹէնս զարձանն Արտեմեայ որ 'ի Տաւրիս, զկարծեցեալն յերկնից իջեալ. և նա գնացեալ գողացաւ զայն հնարիւք. և այն ինչ խորհէր փախչել, 'ի վեր եղ բանն. և հրաման ետ Թոաս զենուլ զՈրեստէս 'ի զոհ Արտեմեայ իբրև զայլսն. բայց նա օգնականութեամբ քեռն իւրոյ որում ետ ծանօԹս զանձնէ, սպան զարքայն. և այնպէս արեամբ նորա ջնջեաց զօրէնս նորա. և զարձանն տարաւ յԱԹէնս: Իսկ Նոննոս գրէ այսպէս. « Տաւրոսք ազգ են ՍկիւԹացւոց առ որս փոխադրեցաւ 'ի ձեռն Արտեմիդեայ Իփիգինիա դուստր Ագամեմնոնի. յորժամ հանդերձեալ էին զոհել զնա յաղագս Ելլենացոցն յԱւլլիդիա. վասն որոյ եղն փոխանակ տուեալ աստուածուհւոյն՝ ոչ ետ զոհել զկոյսն. արդ այս Իփիգենիա 'ի Տաւրոս գոլով, զի մի ծանիցի 'ի հիւրոցն եկելոց՝ եԹէ ո ոք իցէ, հրամայէր զոհել զնոսա Արտեմիդեայ. և նա էր օտարասպանն զոր ասէ աստուածայինն Գրիգորիոս: Յետ այնորիկ երկուցեալ Որեստէս առ 'ի Կղեիտեմնեստրայ, և եկեալ 'ի Տաւրոս և ըմբռնեալ 'ի նոցանէ իբրև հիւր 'ի սպանումն ածաւ առ իւր քոյրն Իփիգենիա իբր առ քահանայուհի. և ծանուցաւ վասն փղոսկրեկից ուսոյն, և Թողաւ 'ի զենմանէն. և այսպէս առեալ Որեստէս զքոյրն իւր զԻփիգինիա՝ բերէ յԵլլադա »: Հարևանցի յիշէ զայս պատմութիւն և Գրիգոր Մագիստրոս 'ի Թուղթն առ Անանիա վանահայր. ուր զայն բազմին կոչէ տաւրական արտեմիս օտարասպան:

232. Յայս հայի ասելն ոմանց Թէ 'ի ՃԲ ողոմպիադն Հռոմայեցիք 'ի Յունաստանէ օրէնս խնդրեցին, յորոց զերկոտասան մատեանն շարադրեցին: Եւ այն մատեանք կամ տախտակք համարեցան առ նախնի Հռոմայեցիս իբր անվրէպ կանոն օրինաց. և 'ի մեկնութիւն նոցա դեգերէին իրաւագէտք նոցին:

233. Այս առած կախեալ է յաւէտ զնմանաձայնութենէ լատին բառիցս չէլում եւ չէնում. այսինքն են երկինք և տիղմ. որպէս եթէ և մեք ասէաք երկին և երկիր, կամ եթեր և երր։ Եւ միտ բանին է, թէ Օգոստոս վասն չափազանց առատաձեռնութեանն՝ ՚ի մեռանել իւրում ոչինչ այլ պահեաց վասն իւր, բայց միայն վասն հոգւոյն զհանդերձեալ աշխարհ, և վասն մարմնոյն զհող գերեզմանի։ Սոյնպէս և միւս այլ առած որ ՚ի ստորև, այն [illegible], կախի զնմանաձայն խաղական բառից [illegible] և [illegible]. ուր և ՚ի մեզ նմանաւոր գան երկոքին բառք։ Որպէս և այլուր յիտալականն գնի փօղ և փօղրէ, և ՚ի մեզ ՚ի դէպ յարմարի դա և չա։

234. Սիմպղեգական ժայռք, որք և հասարակօրէն Կիանեան վէմք կոչին, են երկու փոքրիկ կղզիք Եւքսինեան ծովու ՚ի բերան Վոսպորին Թրակիոյ, մերձ յանցս Սեաւ ծովու ընդ կիրճս Կոստանդնուպօլսոյ. որք այնչափ մերձ են միմեանց, մինչև փոքր մի ՚ի հեռուստ միացեալ համարին. վասն որոյ և յունարէն կոչեցան սիմպլիղադէս, այսինքն միացեալք կամ զօդեալք կամ ընդհարեալք ընդ միմեանս։ Արդ ասի թէ ՚ի գնալ Արգոնաւորդաց ՚ի գիւտ ոսկեգեղմանն, իբրև հասին մօտ յայն տեղի, տեսեալ զհօհակս փրփրադէզ ալեաց որք բաղխէին ընդ այն ժայռս, և միգապատ տանէին զօդն, երկեան յոյժ. և յետ բազում աշխատութեան հազիւ անցին ընդ այն տեղի. յորոյ վերայ ազգի ազգի առասպելս յօդեն բանաստեղծք։

235. Թեմիս է բառ յունական, որ թարգմանի իրաւունք։ Արդ Թեմիս անուն ընծայիւր աստուածուհւոյ իրաւանց և արդարութեան իբր ծնողի ամենայն ուղիղ կարգաց. վասն որոյ և դստերք նորա անուանէին ուղղութիւն, օրէնք և խաղաղութիւն. կամ ըստ այլոց՝ մի և նոյն համարէին ընդ նմա, ըստ այլ և այլ գործոց այլ և այլ անուանս առեալ։ Իսկ վասն Պղուտոնի այլուր յիշեցաք թէ թարգմանի Ճոխ, և համարի Աստուած ստորայնոց. որ և առ լատինս կոչի դիս իբր թէ դիվէս, այսինքն Ճոխ կամ մեծատուն, և խալդէրէն [illegible]։

236. Առ խալդեայս մի և նոյն բառ այն է [illegible], նշանակէ հանրական և [illegible]. վասն որոյ և ՚ի դէպ դոյ ասացուածն այն, ախեղերք են հանրական։

237. Պերիկլէս Աթենացի որդի Քսանթիպպոսի, աշակերտեալն այլ և այլ երևելի արանց ՚ի բազմապատիկ գիտութիւնս, եղև մի ՚ի նշանաւոր արանցն Յունաստանի ծաղկեալ իմաստութեամբ և քաջութեամբ, ատենախօս ճարտար և հզօր զօրավար։ Յորժամ կարգեցաւ իշխան Աթենացւոց, այնպէս յինքն ձգեաց զսիրտ ամենեցուն, մինչև ոչ ևս համարիւր ժողովրդական իշխանութեամբ վարիլ ժողովրդեան, այլ ՚ի միահեծան արքայէ առաջնորդիլ։ Ի տալ նմա Աթենացւոց զպէսպէս վերատեսութիւնս կամ զանուանս պատուոյ, ընտրեաց միայն կոչիլ Արդար։ Սա քանզի կարի եռանդեամբ և առաւելագոյն սաստկութեամբ բորբոքէր յատենախօսութեան, կոչեցաւ յոմանց փայլատակող և որոտացող. և յայլոց Ողիմպոս ձայնեցաւ։ Մեռաւ իբր 430 ամօք յառաջ քան զՔրիստոս։ Որդիք նորա Պարաղոս և Քսանթիպպոս ուսան ՚ի հօրէ իւրեանց զարուեստս իմաստութեան, այլ ոչ զառաքինութիւն։

238. Վասն Մանլիոսեանց տես ՚ի վերոյ ՚ի թիւն 59։ Իսկ հայրասպանն ասացեալ Պտղոմէոս է չորրորդն Պտղոմէոս արքայ Եգիպտացւոց որդի Պտղոմեայ Եւերգետի, մականուանեալն Փիլոպատովր. և թէպէտ այս անուանակոչութիւն նորին նշանակէ հայրասէր, բայց որպէս ասի, ՚ի նախատինս իւր կոչեցաւ այնպէս. իբր զի համբաւ էր զնմանէ թէ դեղ մահու արբուցեալ հօր իւրում կարճեալ իցէ զնա ՚ի կենաց։ Եւ չէն ինչ զարմանք. զի և վասն Պտղոմէոսի փիլադեղփեայ (Եղբայրասիրի), ասեն, ընկալեալ զոյգ անուն հեգնօրէն. զի սպան ասեն զեղբարս իւր. որպէս և վասն այլոյ Պտղոմէոսի՝ Փիղոմետոր կոչեցելոյ, այն է մայրասէր, ասի թէ որովհետև ատէր զմայր իւր զԿղէոպատրա՝ ներհական անուն ընծայեցաւ նմա ՚ի նախատինս նորուն։

239. Մեզենտիոս էր արքայ Ետրուրիոյ առ ժամանակօք Ենէասայ և Տրովականն պատերազմին, այր բռնաւոր և անողորմ առ հպատակս իւր. որ բաց յայլոց դժնդակ տանջանաց զոր տայր յանցաւորաց և անմեղաց, հնարեցաւ և զայս անգթութիւն, զի ընդ մեռեալ դիակունս տայր կապել զկենդանի մարդիկ երես ընդ երես, բերան առ բերան, ձեռն ՚ի ձեռն. և այնպէս թողուր տագնապիլ կամ մեռանիլ կենդանւոյն ՚ի դարշութենէ մեռելոյն։ Մինչև չհանդուրժեալ ժողովրդեանն հալածական արարին զնա ՚ի տէրութենէն. և նա յետ դեգերելոյ յայլևայլ տեղիս՝ գնաց և ՚ի պատերազմ ընդդէմ Տրովացւոց. և հուսկ յետոյ ՚ի մարտ գրգռեալ նաև ընդդէմ Ենէասայ՝ յաղթեցաւ ՚ի նմանէ։

240. Տիտիոս ըստ առասպելաց էր ծնունդ Դիոսի յԵղաբայ դստերէն Որքոմենոսի, ծնեալ յանդնդս խորշս երկրի. վասն որոյ և ասացաւ երկրածին։ Եւ իբրև եհաս ՚ի չափ հասակի, չեղև հնկայ անհեթեթ. մինչև յընկողմնիլն ՚ի դետնի

լոյր, ասեն, զանզի ինն արտաչափ հողոյ։ Ի յառնել սորա բռնութեամբ 'ի վերայ Ղետովայ մօրն Ապողոնի' եհար զնա Ապողոն նետիւ, և ընկեցեալ յանդունդս դժոխոց կապեաց զնա անդ, և հրաման ետ զի ցինք կրծեսցեն զլեարդ նորա. և այն հանապազ. զի ընդ սպառիլն բուսանէր նոր լեարդ 'ի փոխարէն Տիտիոսի, և այնպէս ցինք միշտ կրծէին, և Տիտիոս միշտ չարչարէր։ Նոննոս այլազդ գրէ զառնչանաց Տիտիոսի. « Տիտիւոս ցանկացաւ, ասէ, Լետոսի. և տագնեալ բուռն եհար զգլխապլինդ վարշամակէն. ապա Արտեմիս և Ապողոն մանկունք գոլով Լետոսի նետիւք վիրաւորեցին զնա, և սպանին. և այժմ է 'ի դժոխս, և ունի զնետսն կառուցեալս 'ի նմա, և այնոքիւք պատուհասեալ լինի »։ Իսկ զառնչանս Պրոմիթեայ յիշեցաք վերագոյնդ 'ի համարն 150. ուր և տեսանես զի Նոննոս ըստ մասին զայն ինչ գրէ զՊրոմիթեայ. զոր ինչ այլք զՏիտիոսէ ասեն։

241. Ձնմանաձայն եղերս հեղինակին Տօտօսօ և Տօտօսը թարգմանեցաք ըստ ճիշդ նշանակութեան ֆոֆոխ և հանդ, այլ մարթ էր և 'ի հայումս նմանաձայն յօրինել ըստ յարմարութեան իրայն այսպէս. « Փոխադարձ հաւանութեանն անդարձ ապաշաւ զհետ գայ »։ Իսկ անմիջական հետեւորդն այն, « Եւ ուրախ հարսնածութեան' տխուր կոծութիւն », քիտալական դնի այսպէս. « Եւ ուրախ հիմենէից' տխուր օմէլք »։ Ուր օմէի յայտ առնէ զաւաղական հեծութիւն ձայնից որպէս ըղկոծ 'ի վերայ մեռելոց. իսկ Հիմենէոս է նշանակ ուրախութեան Հարսանեաց համարեալն Աստուած ամուսնութեան, որպէս յիշեցաւ վերագոյն 'ի համարն 92։

242. Պրոտագորաս էր փիլիսոփայ Աբդերացի 'ի Թրակիոյ աշակերտ Դեմոկրատեայ և օրինադիր Թուրացւոց. ուսոյց առ ժամանակ մի յԱթէնս, և ապա աքսորեցաւ վասն նորաձայն վարդապետութեանց իւրոց. զորս Ճառատանս և Պղատոն առանձին ճառիւք կշտամբեաց։ Եւսեբիոս 'ի Զ. ողոմպիադն ասէ. « Պրոտագորաս սոփեստէս, զորոյ զգիրսն վճիռ ետուն այրել Աթենացիք »։ Եղեն և այլ իմաստասէրք կամ իմաստակք ոմանք նովին անուամբ։

243. Ագրիպպաս Մենենիոս էր իմաստուն և զօրաւոր հիւպատոս Հռովմայեցւոց իբր 500 ամօք յառաջ քան զՔրիստոս. յորոյ աւուրս ամբոխ ժողովրդեանն Հռովմայ ընդվզեալ ընդդէմ ծերակուտին' մեկնեալ որոշեցան, և համախումբ դիմեցին յԱւենտին լեառն, որ այժմ կոչի լեառն սուրբ։ Իսկ Ագրիպպայ գնացեալ առ նոսա խրատեաց զնոսա այսու առակաւ. տեսեալ, ասէ, անդամոց մարմնոյն զորովայնն անգործ, որ զխաէ ուտել եւեթ զվաստակս իւրեանց, զայրեցան ընդդէմ նորա, և ոչ ևս կամեցան տալ նմա կերակուր. և եղև 'ի նքողնել որովայնի լուծեալ լքան և անդամքն ամենայն. և յայնժամ 'ի միտ առին զպիտանութիւն որովայնի, որ սնուցիչն է բովանդակ մարմնոյն։ Սովին առակախօսութեամբ շահեցաւ զմիտս ժողովրդեանն, և հաճեցոյց զնոսա հպատակիլ անդրէն ընդ իշխանութեամբ ծերակուտին. յայտ արարեալ զի թէպէտ ծերակոյտն վայելէ 'ի վաստակս ժողովրդեան, այլ ոչ եթէ առանց նորա կարէ յաւին կալ ժողովուրդն։



244. Եպքիլոս էր անուանի երգահան, այսինքն յօրինող ապչի ապչի երգոց 'ի պէտս թատրոնական խաղուց, այր կուռն կամ ճաղատ գլխով։ Արդ ասի 'ի պատմութիւնս ոչինչ ընդհատ յառասպելաց' գուշակութիւն լինել յոմանց առ Եպքիլոս, թէ քար անկցի դիպուածով 'ի վերայ գլխոյ քո և այնպէս մեռցիս, վասն որոյ և զգուշանայր ասեն շրջիլ 'ի ներքոյ շինուածոց։ Դէպ եղև զի յելանել նորա երբեմն 'ի դաշտ և 'ի նստիլ ուրեք, արծուի մի որոյ բարձեալ էր 'ի մագիլս իւր զկրիայ, և կամէր գտանել տեղի ապառաժ ուր ընկեցեալ խորտակեսցէ զայն առ 'ի կարող լինելոյ ուտել, տեսեալ ըղճաղատ գլուխ Եպքիլոսի' համարեցաւ թէ վէմ հաստատուն իցէ. վասն որոյ և ընկէց ուժգին զկրիայն 'ի վերայ գագաթան գլխոյ նորա 'ի բարձանց. և այնպէս փոխանակ խորտակելոյ զկրիայն ջախջախեաց զգլուխ Եպքիլոսի, որով և մեռաւ իսկ։ Եւ սա ևս ծաղկեցաւ իբր 500 ամօք յառաջ քան զՔրիստոս։

245. Վասն Նեսսոսի և մահուն Հերակլեայ լսով ասացաւ 'ի համարն 81. որպէս և վասն Կատոնի որ սպան զանձն 'ի չառեսանել զՅուլիոս 'ի պատիւ ինքնակալութեան, տես 'ի համարն 205։

246. Մի ոք 'ի պարզամտաց համարեսցի թէ Թեսաւրոս գովէ ըստ ինքեան զգործ Ամաղեկացւոյն, կամ անպարտ կացուցանէ 'ի մեղաց. զի ոչ երբէք արդարանայ ոք 'ի սպանանելն զայր որ կամիցի սպանանիլ. այլ զայս միայն պնդէ հեղինակս 'ի բովանդակ յայս խնդիր, թէ ըստ ճիշդ բանի անձնական իրաւանց' առ 'ի լինել ումեք անիրաւութիւն' պահանջի ընդդիմութիւն կամաց յանիրաւեալն. և զի Ամաղեկացին ենթադրի լինել կամակատար Սաւուղայ, ըստ այսմ բանի ոչ ասի անիրաւեալ առ նա. ապա թէ ոչ, ըստ ինքեան ծանուցս յանցեաւ և անիրաւեցաւ. զի պարտական էր գիտել թէ չունի ոք իշխանութիւն 'ի վերայ կենաց իւրոց, որով կարող լիցի

հրաման տալ սպանանել զնոքն. և հետևաբար թէ նաև ինքն չկարէ ունել իշխանութիւն սպանանելոյ. և այն զի այր թագաւոր էր և օծեալ տեառն. վասն որոյ գեղեցիկ ասէ Թէոդորոս. Արար որ ինչ կամք էին Սաւուղայ, չարար որ ինչ կամք էին Աստուծոյ: Թող զայն, զի որպէս բազումք հաւասարի համարին ընդ հեղինակիս, Ամաղեկացին ստութեամբ յօդեաց զայն պատմութիւն սպանման Սաւուղայ յիւրմէ՝ կարծելով հաճոյանալ յաչս Դաւթի, և ընդունել պարգևս 'ի նմանէ. այլ փոխանակ պարգևաց զարժանին պատիժ մահու ընկալաւ: Ասացի թէ չունի ոք իշխանութիւն 'ի վերայ կենաց իւրոց. և այս ոչ միայն լուսով հաւատոյ յայտ է, զի չեմք անձանց տէր, և զի ոչ ոք 'ի մէնջ անձամբ կեայ, և ոչ անձամբ մեռանի. զի եթէ կեամք՝ տեառն կեամք, և եթէ մեռանիմք, տեառն մեռանիմք. այլ և 'ի բնական լուսոյ ինքնին քաջայայտ է. զի որպէս ոչ մեզէն եղաք, այլ յԱստուծոյ արարաք, և նա արար զմեզ և ոչ մեք էաք, և նովաւ կեամք, շարժիմք և եմք. նոյնպէս և կեալն և մեռանիլն մեր ոչ 'ի ձեռս մեր է, այլ տեառն մերոյ և արարչի. ապա որ ոք ըստ կամս իւր իշխէ բառնալ զկեանս իւր, յայտնապէս անիրաւի առ տէրն կենաց և մահու, այսինքն առ Աստուած. որով և գործէ ապիրատութիւն մեծ ընդդէմ աստուածային և բնական օրինաց: Զայս ամենայն իբրև անտարակոյս ենթադրէ հեղինակս. վասն որոյ և բանք նորա ոչ են զայսմանէ թէ արդեօք անձնասպանն անիրաւի՞ առ Աստուած, կամ մեղանչէ՞ թէ ոչ. այլ զայն ևեթ դնէ ըստ ոմանց 'ի հին փիլիսոփայից թէ առ անձն իւր չառնէ անիրաւութիւն այսինքն զկեանս. իբր զի ոչ է ինքն յինքենէ բաժանեալ զի ընդդէմ իւր զինեսցի, և ոչ յակամայս առնէ զայն գործ զի ընդդէմ կամաց իւրոց անիրաւեսցի. որ է տեսական խնդիր ինչ սոփեստական, և ոչ իւիք գործադրական:

247. Ախերոն էր անուն զանազան գետոց երեցունց 'ի Կաղաբրիա, յԵպիրոս, և 'ի Բիւթանիա, յոր եթէ յաւելցես և զԱխուրեանն որ 'ի Հայս, իբր նմանաւոր ըստ անուան, լինին չորք: Եւ զի ջուր Եպիրոսեանն Ախերոնայ էր դառնահամ և ճխտասակար, և միանգամայն երկար միջոցաւ ընդ ստորերկրեայ անցս յածեալ՝ աներևութանայր, յօդեցին առասպելարկուք թէ իցէ նա մի 'ի գետոցն անդնդոց դժոխոց, կամ թէ ակն այնր գետոյ իցէ 'ի տարտարոսն. վասն որոյ փոխանակ ասելոյ դժոխային և անել դուռ, յոր թէ անկցի ինչ՝ չէ մարթ հանել 'ի վեր, ասէին Ախերոնեան դուռ կամ Ախերուսիա: Թող և զայլ հանգամանս այսր առեղծաբանութեան: Անուանս Ախերոն ըստ ոմանց ստուգաբանի 'ի յունական հոսանք ցաւոց, կամ յորձանք տրտմութեանց. որ 'ի



դէպ գայ դժոխոց ամենայն իրօք: Իսկ վասն Պողիկլէտեան և Լեսբեան քանոնաց ստէպ յիշատակելոց տես 'ի համարն 55:

248. Նմանաւոր բառիւք վարեցաք յայն բան, « Եւ տուողին տայ տեղի », իբր համաձայննմանաձայնութեան բնագրին, ուր ասի. « τῷ φέρω, ἐξεφέρω ». այսինքն տուողին ներէ: Եւ միտ բանին է թէ անիրաւ դատաւորն դիւրաւ ներող գտանի այնմ որ տայ ինչ նմա. որ է ասել, կաշառօք զիջանի:

249. Հեփեստոս համարիւր առ հեթանոսս աստուած հրոյ, կամ առաջին գտող կրակի և վերակացու դարբնաց. որ 'ի դարբնոցի իւրում չինէր, ասեն, 'ի ձեռն պաշտօնէից իւրոց Կիկղոպայց շանթս կամ կայծակունս 'ի պէտս Դիոսի, և զէնս պէսպէս 'ի պէտս այլոց դից ընդդէմ հսկայից ոխանեանց: Արդ ըստ առասպելաց Հեփեստոս, որ ամուսնացեալ էր ընդ Ափրոդիտեայ, տեսեալ զկին իւր յարեալ յԱրէս աստուած, արար ցանց մի անխզելի կամ ուռկան երկաթի, և ըմբռնեալ զերկոսին զնոսա զԱփրոդիտէ և զԱրէս 'ի ներքս անդ կապեաց աներևոյթ շղթայիւք. մինչև չկարել նոցա զերծանիլ, և ածեալ զնոսա 'ի հրապարակ ատենի ուր ժողովեալ էին ամենայն դիք, նշաւակեաց զչարիս նոցա: Զայս առասպել ոմանք մեկնեն 'ի վերայ զօդուածոյ երկաթոյ և պղնձոյ և այլոց հրահալելեաց: Եւ այս չէ ինչ ընդդէմ. զի վասն գործոյ դարբնութեան պղնձոյ և երկաթոյ յօդեցան 'ի վերայ Հեփեստեայ այս ամենայն և այլ ևս ազգի ազգի առեղծաբանութիւնք: Եւ որպէս բազումք ստոյգ դատեն, հեթանոսք զցիւտ Թոբելայ որ ըստ սուրբ գրոց էր ճարտարապետ դարբին պղնձոյ և երկաթոյ, ընծայեցին յանուն Հեփեստեայ: Արդ յասել Թէոդորոսի թէ ադամանդեայ ցանց Հեփեստեայ համարեալ են օրէնք առ ատէլս օրինաց, իմանայ ցանց անխզելի կամ ուռկան անճողոպրելի:

## Ծանօթութիւնք յեօթներորդ գիրս։

250. Մնեմոսինէ ըստ բանաստեղծից էր մի 'ի յաւերժահարսանց համարեալ մայր ամենայն մուսայից, այսինքն ծնող ամենայն գիտութեանց և ազատական արուեստից: Գոյր, ասեն, և աղբիւր մի յանուն Մնեմոսինեայ. յորմէ եթէ ըմպէր ոք զջուր, յիշէր զամենայն զոր միանգամ տեսեալն էր 'ի կեանս իւր:

251. Լատինք զբասս Ֆուգէսէնգ···, որ է իմացութիւն կամ միտք՝ ստուգաբանեն Ֆուգա կամ Ֆուգէ ···, այսինքն 'ի ներքս ընթերցողութիւն, կամ ներվերծանութիւն. և սովին նմանութեամբ ընդլայնէ Թեսաւրոս զբացատրութիւն իւր։ Արդ մեք պահեցաք զայն բացատրութիւն որ հայէր յիրն, այլ զնիւթական ստուգաբանութիւնն ըստ հայումն յարմարեալ եդաք, մփ՝ որպէս թէ Նոտ. յոր թէ յաւելցես և ըղբաղ մասեան իբր նմանաձայն, հպաւորի 'ի դիտումն հեղինակին։ Գտանեմք և առ հոգեկիր հռետորին մերում սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, զբասս Նոտք ընդ մփք բառիս զուգորդեալ խորհրդաբար 'ի Գովեստ առաքելոց յասելն. « Երագունք 'ի Թախծս իմաստից բանի, 'ի Նոտս անմատոյց Նփօք ոլացեալք »։

252. Աւրդուեննա կամ Արդեննա էր անուն 'ի Գաղղիա Բելգացւոց յարմար որսորդութեան. յորմէ և Արդուենա էր անուն ընծայեալ 'ի նախնի Գաղղիացւոց և 'ի Սաբինացւոց՝ Արտեմեայ աստուածուհւոյն, իբր վերակացուի որսորդաց որ շրջէր յանտառս. վասն որոյ և դրօշէին զնա 'ի ձև առնացի զրահազգեստ, աղեղն 'ի ձեռին, և շուն առ ոտամբն. և մանաւոր անդի որսորդութեան նորին համարէին զայն անտառ Արդուեննեան. որոյ Թռչունք լեալ իցեն լուսափայլ ընդ Թեօք իբր զփոստուաւոյս, որք 'ի Թռչիլն ինքնին լուսով իւրեանց 'ի յայտ գան. գուցէ կամելով ասել թէ դիւրաւ որսացեալք լինին։

253. Տիտանեանք կամ Տիտանացիք բազում ուրեք առեալ լինին 'ի գիրս փոխանակ հսկայից, որք երևելի եղեն յաղթահասակ մարմնով։ Իսկ ըստ բանաստեղծից Տիտանեանք կամ հսկայք էին որդիք երկրի և Տիտանայ ուրումն աստուծոյ՝ կոչեցելոյ որդի երկնից. որ հանդերձ որդւովք իւրովք ասի մարտուցեալ ընդ այլ դիս վերինս և ընդ զօրութիւնս երկնից։ Կամ ըստ այլոց, Տիտանեանք կոչեալ իցեն ընդ արեգական, որ յոլովակի Տիտան կոչի առ Վիրգիլիոսի և առ այլ բանաստեղծս։ Այլ առաւել հանդիպացեալ է առ ամենայն հնախօսս պատմութիւն հսկայիցն շինողաց աշտարակին այսպիսի օրինակաւ այլաբանելով զստոյգ բանս սուրբ գրոց։ Վարանջեալ, ասեն, Տիտանեանց 'ի Դիոսէ, որ կոչի հայր աստուածոց, խորհեցան ընկենուլ զնա յերկնից. և եդեալ լերինս 'ի վերայ լերանց մերձ եղեն զնոսք յերկինս. յայնժամ միաբանեցան դիք ընդդէմ նոցա վանել զնոսա, և նա ինքն Դիոս շանթս արձակեալ քակտեաց և տապալեաց զառ 'ի նոցանէ դիզեալ լերինս, և զՏիտանեանս արկ 'ի սանդարամետս։

254. Վասն Պրոտէոսի յիշեցաք և այլուր, թէ ըստ առասպելաց ունէր զարուեստ գուշակութեան և հանճարաւոր խորհրդատուութեան, բայց չասէր ումեք զոր գիտէրն, եթէ նախ չլինէր կապեալ, զի կամ փախչէր, և կամ զդէմս յայլ կերպարան փոխէր։ Իսկ Արիստոս էր որդի Ապողոնի և Կիւրենեայ՝ արքայ Արկադիոյ. որ եղև, ասեն, առաջին դարմանիչ մեղուանոցաց, և ուսոյց մարդկան 'ի գործ ածել զմեղր. որպէս և մակարդել զկաթն, անկել զձիթենիս, և այլն։ Եւ զի 'ի պատճառս սորա մեռաւ Եւրիդիկէ կին Որփէոսի, վրէժ առնուլ կամեցեալ յաւերժահարսանց յԱրիստէոսէ՝ կորուսին յերկրէ զամենայն մեղուս։ Յայնժամ Արիստէոս դիմեաց յօգնականութիւն մօր իւրոյ Կիւրենեայ՝ որ մին էր 'ի յաւերժահարսանց. և նա յղեաց զնա առ Պրոտէոս խորհուրդ հարցանել 'ի նմանէ վասն նոր գիւտի մեղուաց. բայց խրատ ետ որդւոյն, զի հնարեսցի 'ի քուն գտանել զծերունին Պրոտէոս, և պնդագոյնս կապել զնա կարկամ շուանօք, զի մի, ասէ, խուսափեսցէ կամ ծածկեսցէ զանձն իւր յաչաց քոց 'ի ձեռն բիւրափոփոխ կերպարանաց իւրոց։ Եւ նա իբրև արար ըստ բանի մօրն, ուսոյց նմա Պրոտէոս հնարս կենդանածնելոյ նոր մեղուս թաղելով յերկրի զփորոտիս ցլու, և այլն։ Այլ վասն պատերազմին Հերակլի ընդ խեցգետնի յիշեցաք 'ի համարն 70։



255. Զունակութիւն գիտութեան՝ զգեստու նմանեցուցանէ հեղինակս. և այս որպէս ասացաք 'ի համարն 14, դիպողագոյն է յիտալական բարբառ վասն համաձայնութեան բառիս ապիտօ, որ միօրինակ նշանակէ զգեստ և սովորութիւն։

256. Սա ինքն է երևելին և առաջինն Պլինիոս Վերոնացի մականուանեալն Սեկունդոս, մին յիմաստուն գրագիտացն Հռովմայ, այլ նշանաւոր գրով և բանիւ յառաջին դարու որ յետ Քրիստոսի, արդ սա 'ի գնալ իւրում 'ի տես հրաբուղխ լերինն Վեսուվայ վտանգեցաւ 'ի ծխոյ նորա, և մեռաւ։ Սոյն այս Պլինիոս է, յորոյ 'ի գրոց՝ որ մակագրի Պատմութիւն բնութեան կամ Բնական պատմութիւն, 'ի մէջ բերաք ուրեք ուրեք բանս ինչ։

257. Վասն Պրոմիթեայ որ համարիւր 'ի հողոյ զմարդիկ կերպարանել, տես 'ի համարն 150։

258. Գալիլէոս Գալիլեան Փլորենտացի ծաղկեցաւ չափաբերական ուսմամբ 'ի սկիզբն ԺԷ դարու. եղև դասատու 'ի Պատաւիոն, 'ի Փիզա, և 'ի Փլորենտիա։ Հնարեաց ճարտարութեամբ ազգի ազգի գործիս և ընտիր դիտակունս. որովք նախ զառաջինն 'ի յայտ էած զչորեսին արբանեակս լուսնթագին, շարադրեաց և բազում գրուածս ուսումնականս։ — Իսկ

Սարդիացիք էին որք գերեզմանակրկիտք կամ դիակապուտք․ զի ընդ առնուլն զլուր թէ Թաղեալ իցէ ոք ուրեք մեծագին զգեստուք, գնային գաղտ 'ի գամբարանս, և կողոպտէին զամենայն զարդս մեռելոյն։ Սարդիացւովք իմացեալ լինին երբեմն Սարդենիացիք, այսինքն բնակիչք Սարդինիոյ կղզւոյն յարեմտեան․ և երբեմն բնակիչք Սարդիս քաղաքի Լիւդացւոց։

259. Վասն Ապելլեայ ճարտար նկարչի ասացաւ վերագոյն 'ի համարն 11։ Իսկ Լիւսիպպոս Սիկիոնացի էր անուանի անդրիագործ, որ գրոշեալ բազում արձանս մի քան զմի ճարտարարուեստ․ վասն որոյ և Աղէքսանդր Մակեդոնացի ընտրեաց զի Լիւսիպպոս եւեթ քանդակեսցէ զարձան իւր․ որպէս և զԱպելլէս միայն ընտրեալ էր 'ի նկարել զիւր պատկեր։

260. Տիանէ կամ Տիւյանէ էր քաղաք Կապադովկացւոց 'ի սահմանս Տորոսի, որ և կոչի Տիանա քաղաք Գամրայ մերձ 'ի սահմանս Անտիտորոսի։ Ի քաղաքէ աստի էր երևելի մոգն կամ բազմարուեստ իմաստակն Ապողոնիոս, վասն որոյ և կոչի Տիանէոս կամ Տիանացի․ կեցեալ 'ի վերջին աւուրս Օգոստեայ կայսեր մինչև ցժամանակս Դոմետիանոսի։ Սա յետ շրջելոյ ընդ բազում աշխարհս և ընդ անծանօթ վայրս հեռակ յետոյ յանծանօթս մեռաւ, և գրեցան գործք նորա մոգացածին բանիւք և լի առասպելեօք՝ յաշակերտէ նորա 'ի Դամիսայ, և ապա նաև 'ի Փիլոստրատոսէ․ ուր անհեթեթ նշանք և արուեստք հրէշաւորք ընծային նմա, և այլ և այլ գործք մեծամեծք արտաքոյ կարգի․ որոյ վասն իսկ առ բազումս 'ի հեթանոսաց մեծացաւ անուն նորա, և համարեցաւ 'ի նոցանէ իբր աստուած ոմն ըստ օրինակին Սիմոնի մոգի։

261. Գաղակտիտ, է անուն քարի միոյ պատուականի 'ի գոյն կաթին․ այլ երբեմն ունի և նիշս ինչ իբր 'ի գոյն արեան։ Լինի ասեն յայլեայլ տեղիս, այլ առաւել կաթնագոյնն ելանէ 'ի Նեղոս գետոյ․ որ 'ի լուծելն կամ 'ի ճմլելն ծորէ յիւրմէ աւիշն ինչ կաթնորակ և կաթնահամ։ Տայ ասեն կաթնատու դայեկաց առատութիւն կաթին․ և եթէ կախեսցի զպարանոցէ ստնդիաց մանկանց՝ գոյաւորէ 'ի բերանս նոցա հիւթ թքոյ կաթնահամ․ իսկ եթէ մաշեսցի 'ի բերանն, հալի։ Զայս ամենայն յիշատակէ բաց յայլոց և Պլինիոս թէ ասի ունել և զօրութիւն բառնալոյ զյիշողութիւն կամ առնելոյ ըզմարդ մոռացկոտ, և յայս հայի բան Թէոդորոսի։

262. Որփէոս, որ ըստ նախնեաց գրի Որփեւս կամ Որփիւս որդի համարեալ Ապողոնի դիցն երաժշտութեան, էր Թրակացի ոմն բանաստեղծ և քնարահար մեծանուն յոյժ առ Հելլենացիս․ մինչև ըստ առասպելաց 'ի ձայնէ քնարահարութեան նորա շարժիլ և ոստոստել տնկոց և բուսոց, կասիլ գետոց յընթացից իւրեանց․ վայրի երէոց թմրիլ և ընդարմանալ, և թռչնոց վայրաբերիլ և ամոքիլ յընտանութիւն․ փոխանակ ասելոյ թէ քաղցրահնչիւն թուէր 'ի լսելիս ամենայն մարդկան։ Սա ասի լինել մի յԱրգոնաւորդաց․ զոր յայն սակս ընդ իւրեանս առեալ իցեն ուղեկիցքն, զի 'ի պատահել յուշկապարկաց ծովու՝ մարթասցի Որփէոս քնարաւ իւրով յաղթել քաղցրաձայնութեան նորա, և մի՛ լիցի ինչ վտանգ նաւորդաց։ Ի մեռանիլ կնոջ իւրոյ Եւրիդիկեայ էջ, ասեն, Որփէոս քնարաւ իւրով 'ի Սանդարամետս, և քաղցր նուագօք հաճեալ զանդարապետն ազատեաց զկին իւր․ այլ անդրէն զրկեցաւ 'ի նմանէ ոչ պահելով զխոստումն իւր, զոր խոստացեալ էր չհայիլ յերեսս նորա զճանապարհայն։ Բազում և այլ առասպելք գրին յաղագս երգոց և նուագածութեանց Որփէոսի․ որոյ և քնարն գլխովին դասեցաւ 'ի կարգ համաստեղութեանց։ Յածին քանի մի բանաստեղծութիւնք 'ի գիրս յանուն Որփէոսի․ այլ 'ի բազմաց ընդ անստոյգս դասին։ Բազումք 'ի նախնեաց համարեցան թէ սա եղև առաջին 'ի մէջ Հելլենացւոց, որ կարգեաց զպաշտամունս կրօնից, և յօրինեաց դիւցաբանութիւնս, կամ գրեաց բանս պէսպէս զերկնայնոց և զԱստուծոյ, այլ ըստ հեթանոսական կարգաց կամ ըստ տանելոյ լսելեաց կռապաշտից։ Յայս ամենայն հայի ասելն Նոննոսի․ « Որփեւս երաժիշտ ոմն էր ազգաւ Թրակացի․ ասի թէ կանխաւ այնպէս երգէր, որպէս զի հետևել երգոյն զծառս կաղնիս․ և զանբան կենդանիս և զքարինս և զգետս հետևելով 'ի ձայն հնչմանցն․ այլ սորա քերթուածք բերին, զորս իբրև աստուածաբանութիւնս ունէին Ելլենացիքն․ այլ առ այսոքիւք քերթուածովք 'ի ձեռն առասպելական նշանաց ասէ զաստուածոցն դասս և զսերս, եթէ որո՛ց ոմանց ո՛յք էն գործք, և որք որո՛ց ոմանց կատարմունք, և ո՛յք ոմանք որո՛ց էն գոյացուցիչք »։ Եւ դարձեալ այլուր, ասէ, թէ « Որփիւս․․․․ աստուածաբանելով զԵլլենացւոց միստերիոնսն (զխորհուրդսն), ուսոյց թէ որպէս զաստուածսն պատուել պարտ իցէ »․ և այլն։



263. Հելլենացիք զծխածանն կոչէին [illegible], և ասէին լինել դուստր Թաւմասայ ծովային դից ծնեալ յԷլեկտրեայ դստերէն Ովկիանոսի․ փոխանակ ասելոյ թէ ծխածանն որ գոյանայ յանձրևաց, առեալ է զանունն առ Հելլենացիս 'ի զարմանալի տեսոյ իւրմէ․ և յիրաւի, զի վայելչանկար տեսութիւն ծխածանի պատճառէ զարմանս յամենեսին, որք հային յաղեղնաձև մեծ կամար նորա և 'ի գոյնս երփնագեղս։ Յաւելուին բանաստեղծք թէ Թաւմանդիաս կամ ծխածանն իցէ

պատգամաւոր դից յիրս չարագուշակս, իբրև բօթաբեր. որպէս և ընդ հակառակն զՀերմէս գեղապան դիցն ասէին լինել պատգամաւոր լրոյ բարւոյ կամ աւետաբեր։ Եւ այս ներհական իմն իմացուածով առեալ 'ի բանից սուրբ գրոց. զի որովհետև ասաց Աստուած Նոյի թէ զաղեղն իմ եդից յամպս 'ի նշանակ հաշտութեան չածել այլ ևս անձրև համաշխարհական, հեթանոսք որք ոչինչ ստոյգ գիտէին 'ի բանից աստուածեղէն ասացից, տեսանելով զաղեղն երկնից 'ի ժամանակս անձրևային՝ համարեցան գուշակ լինել ամպրոպաց և մրրկաւոր օդոց. զորոյ զհակառակն պարտ է իմանալ։

264. Որպէս վասն Ապելլեսի նկարչի և Լիւսիպպոսի անդրիագործի յիշեցաք վերագոյնդ, թէ այնչափ անուանի էին յարուեստի իւրեանց, մինչև նոցա միայն տայր հրաման Աղեքսանդր Մակեդոնացի նկարել զպատկեր իւր և դրօշել կամ ձուլել զարձան իւր. այնօրինակ ասի և վասն Պիւրգոտելեսի քաջ ակնագործի, որ գիտէր քանդակել դրօշուածս 'ի վերայ ականց պատուականաց. որպէս թէ պատուիրեալ իցէ Աղեքսանդր, զի մի ոք այլ քանդակեսցէ զպատկեր իւր 'ի վերայ ականց բաց 'ի Պիւրգոտելեայ։ Յայս հայի ասելն Պլինիոսի. «Սոյն այս ինքնակալ (Աղեքսանդր) պատուէր ետ զի մի ոք այլ նկարեսցէ զինքն՝ բաց յԱպելլեայ. մի ոք քանդակեսցէ բաց 'ի Պիւրգոտելեայ, և մի ոք ձուլեսցէ 'ի պղնձոյ բաց 'ի Լիւսիպպոսէ»։ Դարձեալ ասէ.« Առ ժամանակօք Իամենեայ... երևի սովորութիւնն քանդակելոյ և զգմրուխտս. հաստատէ զայն կարծիս պատուէրն Աղեքսանդրի մեծի, որով արգել չքանդակել ումեք զինքն 'ի վերայ ականց բաց 'ի Պիւրգոտելեայ, որ անշուշտ երևելին էր յայն արուեստ»։

265. Հեփեստեանս կամ Հեփեստոս ձայնէ Թէսաւրոս զմոլար քիմիականս հեղնելով. իբր զի որպէս Հեփեստոս համարիւր Աստուած գտակ հրոյ, և դարբնապետ դից, որ զտիւ և զգիշեր 'ի դէտս աստուածոց առ հրով վաստակէր, նոյնպէս և քիմիականք զամենայն աւուրս իւրեանց զեռցով հրոյ յածէին 'ի գիւտ անգիւտ ոսկւոյ։ Եւ դարձեալ, քանզի ըստ բանաստեղծից հուրն փոխաբերաբար Հեփեստոս ձայնի, որպէս և իմաստութիւնն Աթենաս, և քաջութիւնն Պաղլաս, նմին իրի և հրապաշտք կամ որք 'ի զուր ճգնին առ հրով, հեփեստեանք ձայնին։ Իսկ թէ զինչ Պանդորեանն անօթ իցէ, ծանիր, զի Պանդորա որ թարգմանի ամենապարգև, կոչի 'ի բանաստեղծից անուն առաջնոյ կնոջ, զոր ստեղծագործեալ իցէ Հեփեստոս հրամանաւ Դիոսի, և կացուցեալ առաջի այլոց դից արկեալ քօղ զերեսօք նորա. և եդեալ պսակ ոսկի 'ի գլուխ նորա. յայնժամ դիք իւրաքանչիւր պարգևս տուեալ



լցէն կնոջն այնմիկ. Աթենաս, ասեն, ետ նմա զիմաստութիւն, Ափրոդիտէ զգեղեցկութիւն, Ապողոն զնուագերգութիւն և Հերմէս զճարտարաբանութիւն։ Եւ եղև, ասեն, 'ի գողանալ Պրոմիթեայ հուր յերկնից 'ի պէտս մարդկան յիւրմէ ստեղծելոց, բարկացեալ Դիոսի 'ի վերայ նորա խորհեցաւ հնարիւք պատուհասել զնա և զբնակիչս երկրի. յղեաց յերկնից 'ի յերկիր զՊանդորա ունելով 'ի ձեռին բախտանոց մի, այսինքն անօթ ինչ հմայական ուժգին խփեալ ընդունարան ձախող բախտից և թշուառութեանց ախտից, տանել զայն Պրոմիթեայ իբրև 'ի պարգևս՝ Այլ նորա զգացեալ զդաւաճանութիւնն չէառ յանձն ընդունել զայն պարգև։ Իսկ Եպիմեթէոս եղբայրն Պրոմիթեայ տեսեալ զանօթն գեղեցիկ, և կարծեցեալ զայն լինել աման բարեաց լի բարեբախտութեամբք, մեծաւ յուսով եբաց զայն. և նոյնժամայն թափեցան յերկիր թշուառութիւնքն լցեալք յայն ամանն. և այն ինչ փութացաւ նա խփանել զանօթն, չէր ինչ այլ մնացեալ 'ի նմա, բայց միայն յոյսն որ իջեալ կայր 'ի յատակս անօթոյն։ Եւ ահա այսպիսի անօթ անուանէ իրաւամբք հեղինակս զամանն յորում դնէին քիմիականք զյոյս իւրեանց 'ի գիւտ ոսկւոյ։

266. Վասն Տիմանթեայ ասացաւ 'ի համարն 152. որպէս և վասն Լուզիոնի և Ապելլեսի 'ի 11։ Իսկ յաղագս Պրաքսիտելեայ և Զեւքսեայ և Պարրասիոսի 'ի 95։

267. Արքիմեդէս սիրակուսացի, ազգակից և ընտանի Հերոնի Սիրակուսացւոց արքայի, իբր 200 ամօք յառաջ քան զՔրիստոս, մեծապէս համբաւեալ 'ի չափաբերականին, եղև քաջ հնարագէտ 'ի ճարտարել զգործիս մեքենայականս, մաթեմաթիգականս և աստղաբաշխականս. մինչև ասել Լիւիոսի զնմանէ. «Մի միայն զննիչ երկնից և աստեղաց գտիչ զարմանալեաց և հնարիչ պատերազմական մեքենայից»։ Սա կազմակերպեաց պարունակ ինչ ապակեղէն, յորում ամենայն շարժմունք աստեղաց և երկնից նշմարէին. շինեաց և ժամացոյց անուաւոր և այլ գործիս 'ի ցոյց չափմանց ժամանակի։ Սա ինքն է որ սքանչելի ճարտարութեամբ 'ի ձեռն այլևայլ գործեաց և հրացայտ հայելեաց վառեաց զնաւս Հռովմայեցւոց 'ի պաշարել նոցա զՍիրակուսա. այլ յետոյ յորժամ առաւ քաղաքն, սպանաւ յանգէտս 'ի զօրականէ միոջէ երբ զբաղեալ կայր 'ի տան իւրում 'ի դժուարին չափմունս և 'ի գծագրութիւնս չափաբերականս։ Իսկ Արքիտաս կամ Արքիւտաս էր փիլիսոփայ տարենտացի 'ի դասէ Պիւթագորեանց, իբր 400 ամօք յառաջ քան զՔրիստոս, քաջ աստեղաբաշխ և երկրաչափ. զոր Որատիոս կոչէ «Չափող ծովու և ցամաքի և անթուելի աւազոյ»։ Սա, ասեն, հնարեաց աղ-

գի ազգի մեքենական գործիս, յորս համբաւեալ է աղաւնին փայտակերտ, որ երևէր թռչիլ իբրև զկենդանի: Մեռաւ նաւաբեկութեամբ 'ի ծովու, կամ անկաւ 'ի նաւէ անտի 'ի ծովն ադրիական: Այլ են որք թուեն չորս և հինգ անձինս Արքիտաս անուամբ ծաղկեալս փիլիսոփայութեամբ և պէսպէս ճարտարութեամբ: Այլ վասն Դեդալոսի՝ զորմէ առասպելէին չինել արձանս ինքնաշարժականս, լուր ասացաւ 'ի համարն 58:

268. Սա ինքն է Պողիկղետոս անդրիագործ երևելի, որ վարէր երկաթի քանոնաւ, որպէս յիշեցաք 'ի համարն 55. արդ թէպէտ և ամենայն գրօշուածք սորա ունէին զգեղեցիկ համեմատութիւն մասանց, զի զամենայնն ճիշդ կանոնաւ և չափմամբ գործէր, այլ առաւել նշանաւոր եղև այն գործ նորա զոր մանաւոր դիտմամբ արար 'ի ցոյց ճարտարութեան իւրոյ. քանզի 'ի միում նուագի խորհրդով գրօշեաց զերկուս արձանս նմանաձևս, այլ ոչ նոյնարուեստս, զմին յօրինեաց այնպէս որպէս ինքն գիտէր և կամէր, ըստ անվրէպ կանոնաց արուեստին իւրոյ. իսկ զմիւսն արար ըստ խրատուց ամբոխին, որք 'ի տեսանելն զնա 'ի գործել իւրում՝ ասէին, այսպէս և այնպէս պիտէր լինել այս և այն մասն արձանիս: Եւ եղև իբրև կատարեաց զերկոսին ևս, կոչեաց զբազմութիւնն, և հանեալ եցոյց առաջի նոցա նախ զիւրոյն արուեստի գործածն. ընդ որ ամենեքին հաւանեալ գովեցին միաբան. եցոյց ապա և զմիւսն զոր ըստ հաճոյս նոցա էր գործեալ. ընդ որ ոչ ոք գտաւ հաւան: Յայնժամ ասէ ցնոսա Պողիկղետոս. Զայդ զոր դորովէքդ, դուք արարիք. իսկ զոր գովեցիքդ՝ իմ էր արարք: Եւ ահա այս այն արձան է ճարտարարուեստ, որ կոչեցաւ 'ի ճարտարապետաց կանոն անդրիագործութեան. զի 'ի նմանէ առնուին օրինակ քաջ արուեստաւորք: Եւ այս է զոր յիշէ Պլինիոս յասելն վասն Պողիկղետայ. «Արար և զոր Կանոն կոչեն ճարտարապետք, 'ի նմանէ առնլով զգծագրութիւնս արուեստին իբրև յօրինակէ օրինաց. որ և միայնակ համարի 'ի գլուխ տարեալ զարուեստն 'ի մէջ մարդկան՝ 'ի ձեռն արուեստին»:

269. Շահասիրութն իւղավաճառաց բացատրի 'ի Թեսաւրոսէ բառիս σηπλασία, որ էր անուն հրապարակին Կապուայ քաղաքի որ 'ի Կամպանիա. ուր վաճառք լինէին ազգի ազգի օծանելեաց և իւղոց անուշից. որովք մեղկացաւ, ասեն, քաջն Աննիբաղ յետ արիական մրցմանց իւրոց. զի 'ի մտանել իւրում 'ի Կապուա՝ տուեալ զանձն 'ի վայելս այնպիսի օծանելեաց Սէբլասիոյ, զհետ եղև թուլամորթութեան: Յայսմանէ սովորութիւն եղև Սէբլասիա ձայնել զիւղավաճառութիւնն



կամ զգործս վաճառողացն զիւղս անուշունս, որք պէսպէս հնարս հնարեն առ առաւել հաճոյ ընծայելոյ զօծանելիս. որով և պատճառեն 'ի մարդիկ զփափկասիրութիւն և զթուլամորթութիւն:

270. Միով բառիւ ասի տարբերիլ խոհեմութիւնն յարուեստէ, հայելով 'ի բուն առարկայ կամ 'ի սեպհական վախճան երկոցունց. զի արուեստն է ուղիղ բան նիւթապէս կերտելեաց, իսկ խոհեմութիւնն ուղիղ բան մարդկօրէն առնելեաց, այն հայի յարտաքին և 'ի նիւթական գործս, սա 'ի ներքին և 'ի բարոյական ներգործութիւնս. այն զգործն առնէ բարի. իսկ սա նաև զգործօղն, որպէս և 'ի ստորև բացատրէ հեղինակս: Արիստոտէլ 'ի բարոյական գիրս (Զ) այսպէս զանազանէ. Արուեստն է ունակութիւն գործելոյ ճշգրիտ բանիւ. խոհեմութիւնն է ունակութիւն առնելոյ ինչ զմարդկային բարեօք ճշգրիտ բանիւ: Սա է, ասէ, առաքինութիւն, և այն ոչ:

271. Սիղենոս, անուն էր ըստ առասպելաց, արբշիռ ծերունւոյն, որ համարիւր դաստիարակ Բաքոսի աստուծոյն արբեցութեան, և ուղեկից նորա և գործակից յամենայնի: Նկարագրէին զսա իբր արբեալ ոք անհեթեթ կերպարանօք, արխնըռուշա և լրբենի ժպտեալ, հաստ ռնգամբք վերնակամօր և սրածայր, մեծափոր և պորտապարար, կարճ հասակաւ և գլխովլն անգեղեայ, հեծեալ յէշ կամ յեցեալ 'ի գաւազան, անկար 'ի քայլել: Համառօտիւ ասել, այնպէս ձևացուցանէին զպատկեր նորա, մինչև ամենայն տեսողաց իմանալ թէ է արբեցող և շուայտեալ ծերունի. և զնոյն անուն տային նաև այլոց հետևողաց Բաքոսի, գինեսէր և շուայտոտ անձանց: Եւ զի Սոկրատէս փիլիսոփայ ըստ արտաքին կերպարանաց երևէր իբր այսպիսի ոք լինել, և այնպէս իսկ դատեալ եղև 'ի Զոփիւրոսէ իմաստակէ ընդ տեսանել նորա զառաջինն զգծագրութիւն դիմաց Սոկրատայ, և ևս յԱղկիբիադեսէ բաղդատեցաւ կերպարան նորա կերպարանաց Սիղենոսի և այլոց ճիւաղաց, յոյն սակս ասէ Թեսաւրոս, թէ բնութիւնն տայ երբեմն արանց իմաստնոց և զգաստից՝ որպիսի ոք Սոկրատէսն էր, զայնպիսի գծագրութիւն արբշիռ և շուայտոտ արանց, որպիսի ոք Սիղենոսն էր:

272. Ռուպէնս անդուերպացի Պետրոս Պօղոս կոչեցեալ, եղև անուանի պատկերահան յարևմուտս 'ի սկիզբն ժէ դարու. սա նախ շրջեցաւ ընդ բազում տեղիս Եւրոպիոյ, և մանաւանդ յԻտալիա տեսանել զգործս երևելի նկարչաց. և առաւելապէս 'ի Վենետիկ քաղաքի փոյթ կալաւ նմանող լի-

նել մեծանուն պատկերահանաց Տիցիանոսի, Պօղոսի Վերոնացւոյ և Տինդորեդդեայ, ապա դարձ արարեալ 'ի քաղաք իւր Անդուերբիա, (Անվէրսա), 'ի լոյս ընծայեաց զազգի ազգի ձեռագործս իւր վայելչանկարս, և անդ մեռաւ յամի տեառն 1640: Սա էր միանգամայն և քաջ ճարտարապետ շինուածոց, և քաջ լեզուագէտ հմուտ եօթնեակ լեզուաց: Իսկ Հանսխոս էր այլ ոմն քաջարուեստ 'ի մանրանկարս:

273. Զանցս Փորմիոնի և Աննիբաղայ 'ի մէջ բերէ Կիկերոն յասելն 'ի դիմաց Կատուղոսի. «Զեն ինչ ինձ պէտք այնպիսւոյ Հելլէն վարժապետի, որ զաւորական վարդապետութիւնս 'ի լսելիս իմ յեղյեղեսցէ, երբ չիցէ նորա երբէք 'ի հրապարակ ելեալ և ոչ յատեան ուրեք հանդիսացեալ. որպիսի ոք Ճեմականն այն ասի լինել Փորմիոն. զի յորժամ Աննիբաղ տարագիր եղեալ 'ի Կարթագենոյ՝ եկն վտարանդի առ Անտիոքոս յԵփեսոս՝ դէպ եղև, ասեն, զի վասն անուանի լինելոյ նորա մեծաւ փառօք առ ամենեսին, հրաւիրեցին զնա հիւրընկալուք նորին, զի թէ կամք իցեն առաջիկայ գտցի 'ի լսել բանից Փորմիոնի: Եւ յոչն անհաւան գտանիլ նորա՝ խօսեցաւ այրն պերճախօս զօգուտ ժամս զիրաց իրաց, որք անկ են սպարապետի զօրուն, և զզինուորական կարգաց համօրէն: Յայնժամ որք մերձն կային յունկնդրութիւն, յակճիռս եղեալ հարցանել սկսան և զԱննիբաղ, թէ քեզ զի՞նչ թուի վասն իմաստասիրիս այսորիկ: Իսկ Պենացին այն (այսինքն Լիբէացին Աննիբաղ) թէ և ոչ իբրև քաջ հելլէնախօս, այլ ազատօրէն ետ, ասեն, պատասխանի. ասէ. Բազումս բազում անգամ տեսեալ է իմ 'ի շաղփաղփ ծերոց, բայց և ոչ զմի ոք տեսի այնպէս շաղփաղփել որպէս զՓորմիոն: Եւ կարի յիրաւունս (ասէ Կիկերոն). զի զինչ այլ յանդգնագոյն, կամ զինչ այլ անհնարին շաղակրատանս մարթ իցէ ասել քան զայդ, զի առաջի Աննիբաղայ՝ որոյ զայնչափ ամս մարտ պատերազմի էր մղեալ 'ի վերայ տէրութեան ընդ Հռովմէական ժողովրդեան՝ ընդ ամենայն ազգաց յաղթականի, իշխեսցէ այր ոք Հելլենացի՝ որոյ ոչ երբէք զթշնամւոյ զփորձ առեալ իցէ, կամ զբանակ անգամ տեսեալ, և պարզաբար ասել՝ և ոչ 'ի դոյզն գործ արքունի անձամբ երբէք մտեալ, օրինադիր լինել յաղագս զինուորական կարգաց»:

274. Յայտնի է գիւտ բանաստեղծից և վիպասանից Հելլենացւոց, որոց կամեցեալ տալ պատճառս թէ զիա՞րդ 'ի միում աւուր դիպաւ ծնունդ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ յՈղիմպեայ Թագուհւոյն, և հրկիզութիւն տաճարին Արտեմեայ աստուածուհւոյ յԵփեսոս 'ի ձեռն Երոստրատոսի ուրումն, յօդեցին զայն առասպել թէ Արտեմիս գնացեալ էր յայն-



ժամ մանկաբարձ լինել Աղեքսանդրի, և յայն զբաղեալ չեղև ձեռնհաս պահել զտաճար իւր զի մի այրեսցի: Այլ գեղեցիկ է հետևութիւնն, զոր հանէ Թեսաւրոս 'ի բանաստեղծական օրինակէ այտի:

275. Ոմանք համարեցան թէ Կայիա Կեկիլիա իցէ կին Կայիոսի Սերուիոսի Տուղղոսի որ վեցերորդն էր 'ի թագաւորս Հռովմայեցւոց յետ Հռոմուլոսի. և յայս միտս խօսի Թեսաւրոս. բայց ըստ այլոցն աւանդելոյ իբրև ստոյգ՝ էր նա կին Կայիոսի Տարկուինիոսի Պրիսկոսի հինգերորդ թագաւորին Հռովմայ: Որպէս զիա՛րդ և իցէ, անուանս Կայիոս եդեալ լինէր իբրև մականուն այնոցիկ՝ որք համարէին լինել պատճառ խնդութեան ծնողաց, կամ պանծալի զաւակ. և բազում անգամ ևս առեալ լինէր փոխանակ անուան պատուոյ, և նշանակէր տէր, որպէս և Կայիա տիկին: Արդ 'ի մէջ կանանց, որք յայս անուն կոչեցան առ Հռովմայեցիս, անուանի գտաւ նախասացեալդ Կայիա Կեկիլիա, կին այրասէր և ժրագլուխ, ճարտար և յաջողակ 'ի գործ և 'ի վաստակս ձեռաց իւրոց: Նմին իրի և պարծանս համարէին անձանց տիկնայք Հռովմայ յայն անուն կոչիլ. մինչև սովորութիւն իսկ եղև, զի յաւուր հարսանեաց յորժամ ածեալ լինէր հարսն 'ի տուն փեսային, 'ի հասանելն առ դուրս հարցեալ լինէր. Ո՞ իցես դու, և նա իբր բարեգուշակ անուն տալով անձին ասէր. Կայիա: Եւ կամ 'ի փեսայէն հարցեալ, թէ Լինի՞ս ինձ լծակից բարի, զայս տայր պատասխանի. Ու՛ր դու Կայիոս և ես Կայիա:

276. Կորիննէ էր կին հելլենացի՝ նշանաւոր գեղով, և ականաւոր յարուեստ բանաստեղծութեան՝ յաւուրս Քսերքսեայ առաջնոյ Պարսից արքայի. յորում ժամանակի ծաղկէին երևելի բանաստեղծք և նուագայարդարք առ Յոյնս. յորինեաց բազում տաղս և երգս ճարտարս, զորս և նուագէր 'ի հարկանել իւրում զքնար. մինչև ստանալ անուն քնարահար մուզայի համարեալ իբրև զմի 'ի մուզայից երաժշտութեան. վասն որոյ և Թեսաւրոս զկին նուագածու կամ կորովաբան նմանեալ Կորիննեայ մուզա կոչէ. որպէս և զայր նորա նմանեցուցանէ Սիլենոսի շաղփաղփ և բանդագուշեալ ծերունւոյ. որոյ բերանն ոչ բանաւոր ինչ բարբառէր, այլ միայն արբեցութեան գինւոյ ծառայէր, որպէս յիշեցաք վերագոյնդ:

277. Վասն հարիւրաչեայ Արգոսի որ կարգեալն էր 'ի պահպանութիւն Յովայ, և սպանաւ 'ի Հերմեսէ, տես 'ի համարն 139: Ուր ծանիր, զի որովհետև ըստ առասպելաց Յով փոխակերպեալ էր յարջառ կամ յերինջ, Թեսաւրոս աստա-

նոր փոխանակ անուան Յովայ դնէ Հիւպէլա, այն է երկինք, իսկ մեք բացատրութեամբ թարգմանեցաք։

278. Տուղղիա էր դուստր Սերվիոսի Տուղղոսի վեցերորդ թագաւորին Հռովմայ զկնի Հռոմուղոսի, տուեալ 'ի կնութիւն Տարկուինիոսի Սուպերբոսի։ Արդ սա առ վաղագոյն թագաւորեցուցանելոյ զայր իւր՝ միաբանեցաւ ընդ նմա 'ի սպանութիւն հօր իւրոյ, և ապա անագորոյն մտօք ընթացոյց ըզկառս իւր 'ի վերայ մարմնոյ հօրն, որ յարեան թաթաւէր. և թէպէտ երիվարքն խրտուցեալ զտեղի առնուին, այլ նա մտրակեաց ուժգին. և այնպէս կոխոտելով զդի ծնողին իւրոյ էանց առ տեղեաւն։

279. Լիւիա Դրուսիլլա դուստր Լիւիոսի Դրուսոսի տուեալ 'ի կնութիւն Տիբերիոսի Կղոդեայ Ներոնի. յորմէ ծնաւ նա զՏիբերիոս կայսր, և զԴրուսոս Գերմանիկոս Կեսար։ Արդ զսա ինքն զԼիւիա՝ մինչդեռ յղի էր, էառ Օգոստոս կայսր իւր 'ի կնութիւն իբր հաւանութեամբ առն նորա. և զի ինքն Օգոստոս ոչ ունէր զաւակ արու, զծնունդս Լիւիայ արար իւր յորդեգիրս՝ ըստ թախանձելոյ կեղծաւոր և նենգամիտ կնոջն, որ զգլխովին որսացեալ էր յինքն զկամս նորա, որպէս թէ իշխան լինել նմա 'ի վերայ կամաց Օգոստոսի, զի զամենայն զոր ասէր Լիւիա, առնէր ինքնակալն. և այնպէս յաջողեցաւ Տիբերեայ որդեգրեցելոյն Օգոստեայ յաջորդ լինել կայսերութեան նորին, այլ գլխովին անմասն 'ի բարեկաւութեանց անտի նորա։

---

## Ծանօթութիւնք յութևտասներորդ գիրս։

280. Խրիւսիպպոս էր փիլիսոփայ յաղանդոյն Ստոյիկեանց, աշակերտեալ Զենոնի և Կղէանթեայ. որոց և յաջորդ եղև 'ի դպրոցի նոցա, և համարեցաւ գլխաւոր առաջնորդ Ստոյիկեանց։ Էր այր խորագէտ և խորամանկ յաջողակ մտօք. վասն որոյ և 'ի տրամաբանութեան զօրաւոր գտաւ քան զյոգունս. գրեաց բազում ինչ 'ի վերայ իմաստասիրական իրաց, է որ ուղիղ, և է որ վրիպական. որպիսի է և յառաջ բերեալն 'ի հեղինակէս։ Մեռաւ 'ի հասակի իբր եօթանասուն և չորս ամաց, վտանգեալ ըստ ասելոյ ոմանց 'ի գինարբուութենէ. զի հրաւիրեալ յաշակերտաց իւրոց 'ի կոչունս զոհից, և արբեալ աւելի քան զչափն զգինի անոյշ չնչարգել եղև, և



յետ հինգ աւուրց փչեաց զոգին։ Կամ ըստ այլոց մեռաւ վտանգեալ յուժգին ծիծաղմանէ. զի տեսեալ, ասեն, զէշ մի որ ուտէր թուզ, ժպտելով ասէ ցաղախինն, հապա բեր և զգինի, զի տացուք իշոյդ ըմպել. և այս ծաղրական ասացուած իւր այնչափ ախորժալուր ցուցաւ առաջի իւր, և շարժեաց զնա 'ի ծաղր սաստիկ, մինչև չկարացեալ հանդուրժել հեղձամահ եղև։ Զայսպիսի անշնչութիւն յերեսաց ծաղու պատմեն և վասն Քսենոփոնի, զոր յիշատակէ այլուր Թեսաւրոս. միայն թէ չիցէ լեալ շփոթութիւն անուանց ընդ Խրիսիպպոս և ընդ Քսենոփոն։

281. Վասն երկձղի ճանապարհին Պռոդիկոսի յիշեցաք 'ի վերոյ 'ի համարն 98։ Արդ գեղեցիկ նմանեցուցանէ ասա զայն ճանապարհ երկշաւիղ վարանմանն Օգոստինոսի յաւուրս դարձի իւրոյ. զոր բազմօք նկարագրէ նա ինքն Օգոստինոս 'ի գիրս խոստովանութեան, որպէս յասէն ('ի գիրսն Ը). «Ես յորժամ խորհուրդ 'ի մտի դնէի թէ այսուհետև ծառայեցից տեառն Աստուծոյ իմոյ, որպէս վաղագոյն ընտրեալ էի, ես ինքն էի որ կամէի, և ես ինքն որ ոչն կամէի. Այո, ես էի, որ բոլորովին կամէի և ոչ բոլորովին չկամէի։ Նմին իրի և ընդ անձին ոգորէի, և անձամբ յանձնէ քակտեալ բաժանէի... Զայսօրինակ տագնապէի յանձն իմ և տառապէի. գանգատելով զանձնէս դառն քանքարտանօք արտաքոյ սովորութեան, և շրջշրջելով զիս 'ի մէջ կապանաց իմոց, մինչև խորտակեսցին շղթայքս բովանդակ... Եւ ասէի 'ի սրտի իմում. ահա արդ լիցի, այժմ լիցի։ Եւ այն ինչ բանիւ մերձենայի 'ի բարին, արդեամբք որպէս թէ առնէի և ոչ առնէի... և առաւել զօրանայր յիս չարն սովորեալ քան բարին անսովորական։ Եւ որչափ մերձեալ լինէր այն վայրկեան ժամանակի յորում հանդերձեալ էի փոխիլ յայր այլ, այնչափ առաւել ահ և արհաւիրք արկանէին զինև։ Եւ ոչ եթէ յետս ընկրկէր կամ 'ի բաց դարձուցանէր, այլ կախ 'ի կախ թողոյր։ Կաշկանդէին զիս մնոտիք մնոտեաց և ունայնութիւնք ունայնութեանց... և յապաղէին զխորհուրդս իմ, մինչև դանդաղէի բուռն առնել անձին և կորզել զիս 'ի ձեռաց նոցա, և յառաջ խաղալ 'ի տեղին յոր կոչեցեալն էի։ Վասն զի ասէր ցիս բռնաւոր սովորութիւնն. եթէ համարիցի՞ս թէ կարող ինչ իցես կեալ առանց այդոցիկ սովորեալ հեշտութեանց աշխարհի», և այլն։ Մինչև յետոյ ուրեմն յաղթեաց, ասէ, յորդոր առաքինութեանն, և ուսոյց զիս ապաւինել յԱստուած 'ի բոլոր սրտէ, և վառեցաւ 'ի խորհուրդս իմ բորբոք առ բարին. «Ապա, ասէ, տարածեցի զանձն իմ 'ի գետնին ընդ թզենաւ միով, ոչ գիտեմ որպէս. արձակեցի զկապանս արտասուաց, և յորդեալ զեղան գետք իբրև յաղբերականց յաչաց

խմոց 'ի պատարագ ընդունելի Աստուծոյ... և արձակեալ ձայն ողորմ ասէի ցանձն իմ, մինչև ցե՞րբ, մինչև ցե՞րբ. վաղիւ, առ վաղիւ: Ընդէ՞ր ոչ այժմ, հիմ ոչ յայսմ պահու վախճան եղիցի վատթարութեան իմոյ»: Յարէ ապա զկնի և զօրինակ կատարեալ դարձի իւրոյ մասնաւոր շնորհօք աստուածային ողորմութեան:

282. Թուի ակնարկել յայն բան առաքելոյն. «Հաճեալ եմ ընդ օրէնսն Աստուծոյ ըստ ներքին մարդոյն. բայց տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց, և գերեալ զիս օրինօք մեղաց որ են յանդամս իմ: Այր մի տառապեալ եմ ես. ո՞վ ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ ատի մահու. այլ շնորհքն Աստուծոյ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ». (Հռովմ. Է. 22): Եւ կամ յայն. «Եւ զի մի առաւելութեամբ յայտնութեանցն հպարտացայց, տըւաւ ինձ խայթ մարմնոյ հրեշտակ սատանայ կափել զիս, զի մի հպարտացայց. և վասն այնորիկ երիցս աղաչեցի զտէր, զի 'ի բաց արասցէ յինէն. և ասէ ցիս. շատ են քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ 'ի տկարութեան կատարի» (Բ. Կոր. ԺԲ. 7):

283. Ըստ առասպելապատում հնախօսութեանց որ յաղագս Արգոնաւորդաց, Մեդիա ասի լինել դուստր Այետայ արքային Կողքիսաց, ընդ որոյ ձեռամբ էր գեղմն ոսկի. իսկ Յասոն էր որդի արքային Թեսաղացւոց, և եղև առաջնորդ արգոնաւորդաց. որ իբրև եհաս 'ի Կողքիս՝ հարաւ 'ի սէր Մեդեայ. և 'ի ձեռն նորա կորզեալ զգեղմն ոսկի յափշտակեաց և զնա, և տարեալ 'ի Թեսաղիա արար իւր կին: Բայց յետ ծնանելոյ 'ի նմանէ զորդիս՝ անտես արարեալ զնա Յասոնի ամուսնացաւ ընդ Գղաւկիայ դստեր Կրէոնի արքային Կորընթացւոց: Ընդ որ յանհնարինս դառնացեալ Մեդեայ, և գրգռեալ 'ի վրէժխնդրութիւն դեղեաց մահաբեր թունիւք զԳղաւկիա և զԿրէոն. սպան և զզաւակս զծնեալս 'ի Յասոնէ. և ինքն խոյս ետ յԱթէնս: Ապա ամուսնացաւ ընդ Եգէոսի որդւոյ Պանդիոնի. յորմէ ծնաւ որդի մի Մեդոս անուն. և նովաւ հանդերձ դարձ արար 'ի հայրենիս իւր 'ի Կողքիս. և տեսեալ թէ հայր իւր ընկեցեալ է յաթոռոյ թագաւորութեան 'ի ձեռն որդւոյ իւրոյ Պերսէոսի, անդրէն հնարեցաւ դարձուցանել զնա յաթոռն: Բազում են և այլ գործք ընծայեալք Մեդեայ 'ի բանաստեղծից անտի, որք համարին զնա վհուկ լինել երևելի յարուեստ կախարդութեան: Զմի 'ի մնացածին գործոց նորա զնկարագրեալն յԵւրիպիդեայ ողբերգակէ եղծանէ մերս Մովսէս քերթող 'ի գիրս Պիտոյից, ընդ այսու մակագրութեամբ. Եղծ զՄեդեայ:



284. Սմին նման գրեն այլք զՓիլիպպոսէ զհօրէն Աղեքսանդրի, թէ յորժամ 'ի ժամ թմրութեան 'ի քնոյ կամ 'ի գինւոյ արար դատաստան անիրաւ, զրկեալն աղաղակեաց և ասէ. Բողոքեմ առ արքայ: Ասէ Փիլիպպոս. Առ ո՞ բողոքես ով դու. ո՞չ ապաքէն ես ինքն եմ արքայ Փիլիպպոս որ որոշեցի զդատ քո: Եւ նա ասէ. Բողոքեմ 'ի Փիլիպպոսէ թըմբրելոյ առ Փիլիպպոս սթափեալ: Այս իմաստուն պատասխանի ոչ զայրացոյց զՓիլիպպոս, այլ սթափեցոյց, և ետ դատել դատաստան արդար. բայց ոչ յետս դարձոյց զառաջին վճիռ իւր, այլ յարքունի գանձուց ելից զզրկանս նեղելոյն:

285. Ափրոդիտէ Թարգմանի փրփրածին. քանզի ասի յառասպելս թէ ծնաւ 'ի փրփրոյ ծովու, յոր կաթեալ իցէ արիւն Ուրանոսի այսինքն երկնից՝ հօրն Կռոնոսի: Արդ Ափրոդիտէ համարեալ էր առ հեթանոսս աստուածուհի սիրոյ. գեղեցկութեան և հեշտութեան: Բայց ոմանք երկու Ափրոդիտէս դնէին որպէս յիշէ և Թէոսեբիոս, և այլք երիս. իսկ Կիկերոն չորս թուէ, զորոց չէ մեզ անկ խօսել: Այլ ծանիր զի ոմանք համարեցան թէ նոյն իցէ ընդ Ափրոդիտեայ և Անահիտ, գուցէ շփոթելով զանուն Անահտայ ընդ յունական անուանս [illegible], որ Թարգմանի ἀναδυομένη, որ և էր գործ Ափրոդիտեայ. և սակայն բազմօք յայտ է 'ի գրոց նախնեաց զի Անահիտ ոչ է Ափրոդիտէ, այլ է նոյն որ առ Լատինս կոչի Diana, և առ յոյնս Ἄρτεμις. զոր և մեք ստէպ յունական ձայնիւ Արտեմիս կոչեմք. որոյ սեռականն լինի Արտեմեայ կամ Արտեմիդեայ համաձայն յունականին: Ի կարգս մոլորակաց Ափրոդիտէ է արուսեակն, որ և լուսաբեր. իսկ Տիանա կամ Անահիտ է լուսին, ըստ առման բանաստեղծից: Այլ զԿիրկէ վհուկ որ 'ի սորև յիշատակի, յիշեցաք վերագոյն 'ի համարն 51:

286. Թրասիւղլոս Աքսոնացի որդի Պիւթոդորայ անկեալ յախտ մասթափութեան՝ համարէր զանձն լի փարթամութեամբք և անկարօտ յամենայնի. 'ի կորնչել իրիք ջրուղէր. իբր զաւաւելն ունելով, խնդայր ընդ մեծութիւն այլոց իբր ընդ բախտ իւր. 'ի հասանել նաւուց 'ի նաւահանգիստն Պիւրեայ, իւր կարծելով զնոսա ընդառաջ ելանէր նոցա, և մեծաւ խնդութեամբ ընդունէր. և 'ի մեկնիլն 'ի տեղւոջէն յուղարկէր զնոսա պատուով առ փոքր մի ուղեկից լինելով առ ցամաքաւ. և պարզաբար ասել երջանկացեալ էր յանձին, զի համարէր զինքն տէր այնչափ իրաց: Եւ եղև իբրև կամեցաւ եղբայր նորա տանել զնա 'ի բժիշկս, չէառ նա յանձն, մինչև յետոյ ինքնին 'ի յուշն դարձաւ: Եւ ապա սովոր էր ասել. Ոչ երբեք այնպէս երջանիկ և քաղցր կեանս վարեալ է իմ,

որպէս յայնմ մտաւթափութեան կամ 'ի մոլար յայն կարծիս փարթամութեան. զի ոչ ինչ պակասէր ինձ ըստ խմուս կարծեաց։ Իսկ վասն Դիոնիսեայ երևակայութեանն՝ ունիս տեսանել 'ի համարն 6։

287. Գոյր տեսակ ինչ հանդիսական զոհից առ Հելլենացիս, զոր մատուցանէին յաւուրս մեծախումբ ուրախութեան, և անուանէին զայն հարիւրզուարակեան, զոր ոմանք մեկնեն՝ զոհ հարիւր զուարակաց կամ հարիւր ցլուց. բայց այլք մեկնաբանեն լինել հարիւր կճղակեան կամ հարիւրոտնեան, այսինքն զոհ քսան և հինգ զուարակաց։ Սոյն այս է որ ըստ հարիւրաւոր կոչի 'ի Թուղթն Գրիգորի Մագիստրոսի յաւել նորա առ Թոռնիկ Մամիկոնեան. «Վեհ կազմելով վկաց երախանին բազմազան խորտկաց՝ առաւել քան 'ի Պելլէ Թեսաղացւոց զզոհն հարիւրաւոր Արամազդայն տօնի»։ Իսկ թէ յիրաւի Պիւթագորաս զայնպիսի ինչ զոհ մատուցեալ իցէ, չհաւանի Կիկերոն, քանզի ասէ. «Թէպէտև ասի զՊիւթագորայ թէ 'ի գտանել իւրում նոր ինչ գիւտ յերկրաչափութեան՝ զուարակ զոհեալ իցէ մուսայից, այլ ինձ անհաւատ թուի այդ. քանզի նա չէառ յանձն զոհ մատուցանել և ոչ իսկ Դեղոսեանն Ապողոնի, զի մի՛ ասէ արեամբ շաղախեցից զսեղանն»։

288. Վասն Վերրեսի եղեն բանք վերագոյնդ 'ի համարն 190։ Այլ զառաջինկայ գործ նորա ստորագրէ Կիկերոն 'ի գիրս իւր։ Ոչ այլուստ խմանայր, ասէ, զգարնանայնն եղանակ, բայց միայն թարթափելով 'ի մէջ վարդից. նստէր 'ի գահաւորակ կամ 'ի պատգարակ բարձեալ 'ի յուլթից, յորում էին բարձկնեար վարդալից. պսակ ունէր 'ի գլուխն վարդաշէն, և մանեակ 'ի վարդից արկեալ զպարանոցաւ. և այլ փնդախագործ քսակ վարդալից առ հոտոտելեօք, և այլն։ Իսկ վասն յետագայ անուանց ըստ բաւականին տայ տեղեկութիւն նա ինքն Թեսաւրոս՝ նկարագրելով զգործս նոցա։

289. Սա ինքն է Դոմետիանոս տղայամիտ կայսր Հռովմայեցւոց, որ 'ի սկզբան անդ իւրոյ տէրութեան սահմանեալ էր անձին օր ըստ օրէ ժամ պարապոյ՝ մտանել 'ի սենեակ իւր առանձին, և որսալ ճանճս սրածայր գործեօք, 'ի խաղալ նոքօք, կամ 'ի զերծանել 'ի ձեռաց նոցա։ Եւ եղև երբեմն միում յիշխանաց նորա՝ որ կոչէր Ուրբիոս Կրիսպոս, մտանել առ կայսրն վասն կարևոր ինչ իրաց. և իբրև ել արտաքս 'ի սենեկէն, եհարց զնա այլ ոմն իշխան թէ իցէ՞ ոք առ ինքնակալին. զի և ինքն ունէր ինչ բանս ասել նմա. իսկ Ուրբիոս զայս ետ պատասխանի ընդ խաղ. Եւ ոչ իսկ ճանճ գտանի առ կայսեր։



290. Վասն Փաղարիսի և ցլուն նորա լիով ասացաւ կանխաւ 'ի համարն 3։ Սոյնպէս և վասն Բուսիրիսայ մարդախողող բռնաւորի յիշեցաք 'ի համարն 220, թէպէտև ոչ գտաք ինչ բանս վասն երիվարաց նորա, միայն վասն Դիոմիդեայ աւանդի թէ մարմնովք օտարաց կերակրէր զերիվարս իւր, որպէս ունիս տեսանել 'ի համարն 172. զնոյն ասէ հեղինակս և վասն Գլաւկոսի, գուցէ և Բուսիրիս այնպիսի ունէր սովորութիւն, կամ թերևս յագխս ձիոց կապէր զմարդիկ, և այնպէս թողոյր ձգձգիլ ընդ քարուտ տեղիս։ Ոչ գտաք ինչ և վասն առիւծուց Թէոդամասայ բռնաւորի, որ սպանաւ 'ի Հերակլէ որպէս զԲուսիրիս. գուցէ առաջի առիւծուց արկանէր զմարդիկ, որպէս և բազումք 'ի բռնաւորաց արարին։ Այլ է և Աթամաս արքայ Թեբայ, զորմէ ասի յառասպելս ոսկի գեղմանն և Արգոնաւորդաց, թէ վասն հալածելոյ նորա զզուգակս իւր զՓռիքսոս և զՀելլէս 'ի սադրելոյ Ինովայ՝ որ էր մօրու մանկանցն, հարաւ 'ի դիւէն. և 'ի տեսանել իւրում զԻնով և զորդիս նորա համարելով զնոսա առիւծուս լինել, 'ի վերայ յարձակէր սպանանել զնոսա, և այլ ևս բանք մնոյք։ Պրոկրուստէս կամ Պռոկրուստէս էր աւազակ նշանաւոր յԱտտիկէ գաւառի առ Կեփիս գետով. որոյ ընկալեալ զանցաւորս իբր հիւրասիրութեամբ՝ հանէր յանկողինս 'ի հանգչել. և եթէ տեսանէր զհասակ ուրուք երկայն քան զչափ անկողնոյն, ծայրատէր անդէն զոտս նորա զի հաւասարեսցի ընդ անկողինն. և եթէ գտանէր կարճ քան զանկողինն, ձգտեցուցանէր զմարմին նորա ճարճատելով չարաչար, թող զայլս զորս 'ի մամուլս ոլորէր և այլ ևս անբերելի տանջանօք կորուսանէր. զսա ևս սատակեաց յետոյ Հերակլէս, կամ ըստ այլոց Թեսևս։ Ատրէոս կամ Ատրևս էր որդի Պեղոպայ արքայի. սա յետ մահու հօրն կռուեալ վասն ժառանգութեան թագաւորութեան ընդ եղբօր իւրում Թիեստեայ վանեաց զնա. և ապա նենգանօք կոչեալ զնա առ ինքն՝ որպէս թէ գահակից առնել խոստանալով, արար նմա կոչունս ընթրեաց. և յընթրիս անդ եհան 'ի տեղի խորտկաց զմարմինս որդւոց Թիեստեայ խորովեալս, կամ զմին խորովեալ 'ի հուր և զմիւսն խարշեալ 'ի ջուր. որպէս և զարիւն նոցա խառնեալ ընդ գինւոյ մատոյց եղբօր իւրում բաժակաւ։ Եւ յետ ընթրեաց ետ բերել զգլուխս մանկանցն. և ցուցեալ զնոսա Թիեստեայ՝ ասէ. Ճանաչես զսոսա. ահա 'ի մոյ անտի դոցա էին խորտիկքն զորս կերար։ Զայս անգթութիւն անբերելի յայտնաբանել կամելով վիպասանիցն Հելլենացւոց ասացին, թէ չհանդուրժեալ արևու այսպիսի մեծեղեան գործոյ յետս կոյս դարձաւ. կամ թէ եղև խաւարումն արեգական։ Իսկ Սկեւնէս կամ Սկինիս էր աւազակ ոմն մերձ 'ի Կորնթոս այր գազանամիտ և զօրաւոր, որ ըստ գրելոյ Ովիդիոսի ինքնին ձեռօք

խուռնք բուռն հարեալ զերկուց ծառոց՝ զերկոցունց զծայրս մինչև 'ի գետին իջուցանէր և միացուցանէր. և կապեալ զմարդիկ զոտից և զձեռաց յերկոսին կողմանս, թողացուցանէր զոստս ծառոցն. և այնպէս 'ի վերանալ նոցին յօդս յեղակարծ յարձակմամբ՝ հերձեալ կտորէին մարմինք կապելոցն: Այլ անցին զանցին զորքոք բռնաւորքն յետագայք 'ի նահատակել զսուրբ վկայս այսպիսի և այլ ևս աղգի աղգի տանջանօք:

291. Պիգմալիոն էր որդի Բելոսի արքային Տիւրոսի, այր ընչաքաղց, որ ամենայն իրօք զհետ էր հաւաքելոյ զինչս. և որչափ փարթամանայր՝ և ևս ագահէր, որպէս օրէն է ամենայն արծաթասիրաց: Եւ զի քեռայրն իւր, այն է Սիւքէոս Աքերբաս քրմապետ այրն Դիդեայ՝ ունէր ճոխութիւն բազում ծածկեալ 'ի թաքստի, սպան զնա Պիգմալիոն դաւադրութեամբ յառանձին պահու առաջի զոհարանին. այլ ոչ եհաս ժառանգել զամենայն ինչս նորա. զի քոյր իւր Դիդէ իմացաւ զդաւն, և ժողովեալ զինչս առն իւրոյ խոյս ետ 'ի Տիւրոսէ 'ի Կիպրոս. և ապա անկեալ յԱփրիկէ՝ շինեաց անդ զԿարքեդոն, որպէս յիշեցաք 'ի համարն 99:

## Ծանօթութիւնք յիննետասներորդ գիրս:

292. Սա ինքն է Ատրէոս կամ Ատրևս եղբայր Թիեստեայ, զորոյ զանողորմ բարս փոքր ինչ վերագոյն յայտնեցաք: Արդ կամի ասել Թեատրոս ըստ բանից բանաստեղծից, թէ Ատրևս 'ի տալ եղբօր իւրում ուտել զմարմինս որդւոց նորին և ըմպել զարիւնս նոցա խառն ընդ գինի, ոչ եթէ 'ի պատշաճողութիւն կամ յանպատշաճութիւն գործոյն հայէր յորժամ պարտ էր սոսկալ, այլ միայն հեշտանայր ընդ անագորոյն եղանակ այնր ապիրատութեան:

293. Աւտողիկոս, որ և գրի Աւտողիոս կամ Անտիղոքոս, էր անուանի գող և աւազակ, համարեալ 'ի դիւցաբանից որդի Հերմէսի աստուծոյ, որ առ Լատինս Մերկուրիոս ասի, և զի Մերքուրիոս կոչի առ նոսա և փայլածուն, ասի յոյլոց թէ Աւտողիկոս ծնեալ իցէ ընդ ազդեցութեամբ այնր մոլորակի: Արդ ըստ առասպելարկուաց էառ սա զօրութիւն 'ի հօրէ իւրմէ 'ի Հերմեայ կերպարանափոխ լինել յայլ և այլ դէմս. և զայն 'ի կիր առեալ 'ի գործս յափշտակութեան ոչ միայն



զանձն այլակերպէր, զի մի ծանիցի, այլ և զգրաստս և զանդեայս զորս յափշտակէր, յայլ գոյն փոխարկէր ըստ երևութի մորթոյն. մինչև անմարթ էր տերանց նոցա գտանել և ճանաչել զնոսա: Եւ եղև 'ի յաճախել նորա յայս չարիս, որով համարձակ գողանայր և զգրաստս դրացեաց, զգացեալ զայս Սիսիփոսի ուրումն 'ի մերձաւորաց նորա նշան եդ 'ի վերայ գրաստուց իւրոց խորագոյնս քան զմորթն. և յորժամ գողացաւ զայնս Աւտողիկոս, սա նշանաւ իւրով կալաւ զգողօնն և զգողն: Այս ամենայն զմի ինչ միայն ցուցանէ, թէ ամենայնիւ ճարտար էր Աւտողիկոս յարուեստ գողութեան և յափշտակութեան. բայց ամենայն գող ճարտար ըմբռնի հուսկ յետոյ ճարտարութեամբ իւրով:

294. Վասն չարամիտ և երգիծաբան Զոյիլեայ ասացաւ 'ի վերոյ 'ի համարն 160: Իսկ Լեպիդոս՝ Մարկոս Եմիլիոս կոչեցեալ էր աղնուական ոմն յերևելի տանէ, այր փառասէր և իշխանասէր, որ միշտ փառաց 'ի փառս, և յաւագութենէ յաւագութիւն վերանալ ձգտէր. եղև մեծ քրմապետ. և երիցս էառ պատիւ հիւպատոսութեան. կարգեցաւ զօրագլուխ և սպարապետ և դարձեալ ընտրեցաւ մի յիշխանաց եռապետական տէրութեան ընդ Օգոստոսի և ընդ Անտոնիոսի: Եւ ոչ այնու շատացեալ ձեռն էարկ սեպհականել ինքեան և զտէրութիւն Սիկիլիոյ. և այն ինչ կարծէր նստիլ իշխանաբար 'ի Մեսսինա, ըմբռնեցաւ յօտարէ իւրմէ, և արտաքսեցաւ 'ի փոքրիկ քաղաք մի Իտալիոյ: Արդ զախտ այսպիսի իշխանասիրութեան, որով ոք անյագաբար ձգտի ևս քան զևս մեծանալ և տիրել, (զնոյն իմա և զբուռն բերմանէ ցանկութեան, բարկութեան, և այլն.) Կիկերոն կոչեաց Անկարութիւն. իբր թէ չկարէ այնպիսին զսուսպ ունել զանձն, և կամ չէ տէր անձին, բուռն ձգեալ 'ի բերմանէ կրից և ախտից:

295. Զայսպիսի մահ յառաջ եկեալ 'ի սաստիկ ծիծաղմանէ յիշեցաք և վերագոյնդ 'ի համարն 280: Այլ թէ որ Քսենոփոն իցէ յիշատակեալն աստանօր չէ մեզ յայտ. զի բաց 'ի պատմաբանն Քսենոփոնտեայ, վեց ևս այլ նոյնանուն թուին մատենագիրք:

296. Եպիկտետոս էր մեծանուն փիլիսոփայ Ստոյիկեան, հայրենեօք 'ի Տրապօլսոյ Փռիւգացւոց. սա 'ի ծառայական կարգէ յառաջ եկեալ եղև մի 'ի սենեկապետաց Ներոնի կայսեր, և երևելի գտաւ յոյժ 'ի Հռովմ. վարդապետութիւն սորա և ընթացք վարուց առաւել մերձաւոր եղեն քրիստոնէական կարգաց քան զամենայն նախնի փիլիսոփայից. գրեաց բազում ինչ ընտիր և պիտանի: Ասած էր գոռա թէ բովան-

դակ իմաստասիրութիւնն կախեալ կայ զերկուց բառից, համբեր և հրաժարեա։ Եւ եղև 'ի ժամանակին յորում արտաքսեաց Դոմետիանոս կայսր զամենայն փիլիսոփայս 'ի Հռովմայ. յամի տեառն իբր 94, գնաց և Եպիկտետոս 'ի Նիկոպօլիս քաղաք Եպիռոսայ. և անդ մեռաւ 'ի խոր ծերութեան։ Աշտանակն կաւեղէն զոր 'ի կիր առնոյր նա, վաճառեցաւ յետոյ երեք հազար դենարի։

297. Սա ինքն է Փիլոկտետ յիշատակեալն 'ի մէնջ 'ի համարն 112. զոր ոմանք 'ի խոցմանէ նետի ասեն մեռեալ, և այլք ըստ Հոմերոսի 'ի խայթուածոյ օձի, տես անդ։

298. Այս բան է Վիրգիլիոսի լատին բանաստեղծի յԵնէականին (Թ) ուր փռիւգուհիս անուանէ զկնամարդի արս փռիւգիոյ վասն կանացի թուլամորթութեան նոցին։ Իսկ թէ զինչ իցեն Դինդիմեան մայրիք, կամ բարձունք Դինդիմեայ, ծանիր. զի Դինդիմոս կամ Դինդիմա էր անուն սնկախիտ լերին 'ի Փռիւգիա. ուր 'ի ներքոյ վարսաւոր ծառոց գոյր տեղի պաշտաման Կիւբելեայ, այսինքն Ռէայ մօր աստուածոց, որ համարիւր դուստր Դինդիմէի կնոջն Մէոնեայ արքային Լիւդացւոց, ուստի և ինքն կոչիւր Դինդիմենա, և անտառ նորա Դինդիմեան. յորում տեղւոջ լինէին խրախութիւնք հեթանոսականք թմբկօք և պարուք։ Եւ յայս տեղի հայի առելն Խորենացւոյն յաշխարհագրութեան։ « Փռիւգիա... ունի լեառն զԴիդոնիա (կամ զԴինդիմոն)»։

299. Անունս դիւցազն թէպէտև 'ի մերս բարբառ սովորաբանի յաղագս դից կամ 'ի զարմէ աստուածոց, այլ սակայն սովորութեամբ առեալ լինի փոխանակ բառիս քաջազն կամ փառաղոյն, այսինքն որ երևելին է 'ի մէջ մարդկան 'ի ձեռն մեծամեծ արութեանց և առաքինութեանց։ Արդ որպէս յայտ է, հեթանոսք մոլար մօօք զորս միանգամ համարէին առաւելեալ քան զհասարակ մարդիկ իւիք իւիք կատարելութեամբք, ձայնէին զնոսա դիւցազն՝ իբր աստուածանման և աստուածամերձ. յոր միտս ասէ Յովհաննէս Իմաստասէր 'ի ճառն ընդդէմ Պաւղիկեանց. « Այլ և դիւցազունք անուանեալ՝ դեր 'ի վերոյ մարդկայնոյս համբառնայլին բնութեան»։ Այլ մեք զնոյն անուն յարդիս 'ի կիր առնումք ըստ սովորութեան 'ի վերայ երևելի անձանց ծաղկելոց մեծագործ առաքինութեամբք։ Նմին իրի և աստ դիւցազնական առաքինութիւն նշանակէ զայնպիսի կատարեալ առաքինութիւն, որ դեր 'ի վեր գտանի քան զհասարակ առաքինեաց իբր առաւել աստուածամերձ. կամ զքաղաքավարութիւն այնպիսի՝ որ 'ի վեր տեսանի քան զհասարակ ընթացս մարդկան, և իբր



հրեշտակային իմն երևի. որպէս և ընթացք բանից հեղինակիս լաւ ևս յայտնեն։

300. Ի մէջ սոցա զորս յիշէ Թեսաւրոս 'ի կարգի դիւցազն կոչեցելոց առ հեթանոսս, քաջայայտ է անուն քաջին Հերակլեայ հսկայի, որ բազում անգամ յիշեցաւ. և 'ի մեզ Վահագն ևս անուանի։ Իսկ Ոսիրիս էր անուանի ոք քաջազն, զորմէ ասեն շրջեալ յարևելս և յարևմուտս, և 'ի բազում տեղիս սահմանեալ և հաստատեալ քաղաքական կեանս, արուեստս ազգի ազգի, երկրագործութիւնս, և այլն. և այս յաւէտ յԵգիպտոս. մինչև նոյն կարծի լինել ընդ գլխաւոր աստուածն Եգիպտացւոց, որ կոչիւր Ապիս կամ Սերապիս, որդի Դիոսի ծնեալ ըստ առասպելաց 'ի Նիոբեայ դստերէն Փորոնէի արքային Արգիացւոց, եղբայր և այր Սիդեայ. զորմէ յիշեցաք 'ի համարն 135։ Իսկ Կաստոր և Պողիւքէս էին յընկերաց նաւի Արգոնաւորդաց, եղբարք Հեղինեայ, վերառեալք 'ի Հելլենացւոց 'ի պատիւ դիւցազանց, և դասեալք 'ի կարգս համաստեղութեանց երկաւոր կամ երկուորեակ անուամբ, որ և կոչին Դիոսկուրք կամ Դիոսկուրացիք։

301. Կամիլլոս՝ որ և Մարկոս Փուրիոս, էր մի յերևելի զօրավարացն Հռովմայեցւոց իբր 390 ամօք յառաջ քան զՔրիստոս, և ընտրեալ բազում անգամ 'ի պէսպէս աստիճանս աւագութեան։ Արար բազմապատիկ գործս քաջութեան 'ի սէր հայրենեաց. մինչև կոչիլ նմա երկրորդ Հռոմուլոս՝ հայրենեաց նորոգիչ։

302. Յաղագս Լիկայոնի 'ի գայլ փոխելոյ ըստ առասպելաց՝ տես 'ի համարն 161. սոյնպէս և վասն ընկերաց Ոդիսեայ որք ասեն փոխակերպեալ յայլևայլ անասունս 'ի Կիրկեայ վհկէ, տես 'ի 51։

303. Շատ լիցի զոր յիշեցաք վասն Որեստեայ մայրասպանի 'ի համարն 232. որպէս և վասն Այասայ կատաղելոյ 'ի 136. թող զի և հեղինակն բացատրէ ըստ բաւականին։

304. Միլտիադէս էր անուանի զօրավար Աթենացւոց, որ մետասան հազար արամբք վանեալ խորտակեաց զվեց հարիւր հազար զօրս Պարսից 'ի Մարաթոնեան դաշտին։ Եւ այսպիսի անուն քաջութեան նորա եղև օրինակ և յորդոր այլոց քաջաց։ Այլ սա ինքն Միլտիադէս հուսկ յետոյ ըմբռնեալ յԱթենացւոց իբրև պարտաւոր 'ի կապանս բանտի վճարեաց ըզկեանս։

## Ծանօթութիւնք 'ի քառեներորդ գիրս.

305. Բարեկամութիւնդ անուն 'ի մերս բարբառ որպէս և յայտ է, առեալ է 'ի կամելոյ զբարի այլում, որ է հարազատ գործ սիրելութեան, կամ նշան ճշմարիտ սիրոյ. այլ այնպէս զի յանուանէն զոք բարեկամ, ոչ այնչափ նշանակի բարի կամելն նորա այլում, որչափ 'ի մէջ բերի բուն իսկ սիրելութիւնն. այն է մտերիմ սէրն նորա որով կապեալ է ընդ սիրելոյն, յորմէ և հետևաբար կամի միշտ զբարին նորա: Իսկ առ Լատինս և առ Յոյնս ընդ հակառակն է. զի զբուն բարեկամութիւնդ անուն առնուն յանուանէ սիրոյ. նմին իրի և առ նոսա նոյն է ասել սիրելութիւն կամ բարեկամութիւն: Եւ ըստ այսմ տարածանեն զնոյն բառ ոչ միայն 'ի վերայ սիրելութեան որ գտանի 'ի մէջ բանաւորաց, այլև փոխաբերաբար 'ի վերայ բնաւոր յօժարութեան որ գտանի յանասունս, ևս և 'ի վերայ համակրութեան որ 'ի տունկս կամ յայլ էակս նիւթականս: Զայս քաջ 'ի միտ առ, զի դիւրաւ իմասցես զընթացս բանից հեղինակիս 'ի բովանդակ ճառս առաջիկայ. ուր միշտ զմի և զնոյն բառ վարէ նա (ամիկիցիա) այլ մեք է զի բարեկամութիւն եդաք, և է զի յաւելաք և սիրելութիւն:

306. Սէրն ըստ բանաստեղծիցն այլաբանելոյ համարէր լինել գեղեցկագոյնն 'ի համօրէն էակս և երիցագոյն ժամանակաւ. 'ի վեր երևեալ ըստ Հեսիոդոսի անդստին 'ի սկզբնաւորութեան տիեզերաց, յորում էր լոկ երկիր աներևոյթ և անպատրաստ կամ նիւթ անկերպարան. որ յայլոց կոչի անդունդ կամ վիհ խառնութեանց. արդ' ըստ Արիստոփանեայ, սէրն զարդարեալ ոսկի թևօք միացաւ ընդ վհի, և 'ի զուգաւորութենէ անտի 'ի վեր ելին մարդիկ և կենդանիք, և ամենայն զարդք երկնի և երկրի: Եւ ահա ըստ այսմ նմանաբանութեան. զոր բազմօք ընդլայնեն մեկնաբանք, խօսի աստ Թէսաւրոս: Յիշեցաք և վերագոյնդ զսէր անուանեալ աստուածն սիրոյ 'ի համարն 192. զոր ամանք նոյն համարին ընդ ամին, և կոչի ասեն նաև ցանկութիւն:

307. Թէսաւրոս 'ի բնագրի անդ զՄագնիս կոչէ հէրաքլէան քար կամ հէրաքլէան ՀէՏ, որպէս և զերկաթն' հրաք հանդաց, կամ Ճարօ ծփադաց. քանզի ոմանք համարին, թէ մագնիսն առեալ իցէ զայն անուն փոխաբերական 'ի քաջէն Հերակլեայ, որ և Հերքիւլէս ասի. և այս վասն բնաւոր իմն յօժարութեան նորա առ պատերազմական մրցմունս որ նշանակի հրատիւ, որպէս է բերումն մագնիսի առ երկաթ: Իսկ այլք պնդեն թէ ոչ յանուանէ Հերակլեայ կամ Հերքիւլեայ հսկայի, այլ 'ի Հերակլիայ քաղաքէն Լիւդացւոց կոչեցաւ մագնիսն վէմ Հերակլեան. որպէս և երբեմն քար Լիւդեան կոչի մագնիսն, և փորձաքար. և նոյն իսկ մագնիս կամ մագնէտիս անունդ առեալ է, ասեն, 'ի Մագնեսիոյ քաղաքէն Լիւդացւոց, զի յայն կողմանս յաճախ գտանի: Այլք յաւելուն թէ ընտիր ևս մագնիս ելանէ 'ի սահմանս միւս Հերակլիա քաղաքի որ 'ի Մակեդոնիա: Իսկ երկաթն կոչի հրատ 'ի մէջ հանքաց, կամ Մարս այսինքն Արէս 'ի մէջ մետաղաց, մի զի արտադրութիւն հանքաց երկաթոյ ընծայի հրատ մոլորակի. և միւս ևս զի հրատն առ Լատինս կոչի Մարս, որ նշանակէ մարտ. և յայտ է թէ գլխաւոր գործի մարտի պատերազմաց երկաթն է. զոր օրինակ սուր, կեղարդն, նետ, և ըստ նմին նաև Արէս աստուածն զոր Լատինք նոյնպէս Մարս կոչեն, համարիւր վերատեսուչ պատերազմաց:

308. Ըստ գրելոյ Վաղերիոսի Մաքսիմոսի Պոլեմոնարատոս և Հիպպոզլիդէս էին փիլիսոփայք 'ի մի և 'ի նոյն աւուր ծնեալք. որք և 'ի միում դպրոցի Եպիկուրոսի աշակերտեալք՝ կապեցան ընդ միմեանս սիրով, և ունէին զամենայն ինչ 'ի մէջ իւրեանց իբրև հասարակաց. և այնպէս կացեալ 'ի միաբանութեան որ առ միմեանս մինչև ցխոր ծերութիւն, 'ի միում աւուր մեռան երկոքեան:

309. Պերիթոս էր որդի Իքսիոնի արքային Լապիթեայց, մտերիմ սիրով բարեկամութեան կապեալ ընդ դիւցազինն Թէսեայ Աթենացւոյ: Էած 'ի կնութիւն զՀիպպոդամէ ըդդուստր Ատրակեայ. զոր իբրև յափշտակել կամեցան Կենտաւրոսք կամ Ձիացուլք, Թէսևս հանդերձ Հերակլիւ ձեռնտու լեալ Պերիթեայ վանեաց զի վերայ յարձակեալսն, որպէս յիշեցաւ 'ի համարն 124: Յաւելուն առասպելարկուք թէ 'ի մեռանել Հիպպոդամեայ՝ Պերիթոս և Թէսևս միաբան յարձակեցան 'ի տարտարոսն կորզել զՊերսեփոնէ զկին Պղուտոնի անդրաշխարհեան. այլ ընդ հասանելն մօտ առ դուրս Պերիթոս սատակեցաւ 'ի Կերբերոսէ, որ էր շուն եռագլխի պահապան դրացն դժոխոց. և Թէսևս վտանգեալ ըմբռնեցաւ 'ի ներքս անդ. մինչև եկեալ Հերակլի՝ ազատեաց զնա. որպէս ասացաւ 'ի համարն 134: Նոննոս այսպէս յիշատակէ զիրսն. «Պերինթոս իջեալ 'ի դժոխս, զի յափշտակեսցէ զՊերսեփոնեայ զդուստր Դեմետրիս զոր Պղատոն յափշտակեալ տարաւ 'ի դժոխս. կապեալ եղև Պերինթոս 'ի Պղատոնէ առ վիմս ոմանս: Արդ իջեալ Հերակլէս զի առցէ զՊերինթոս, զնա առ ինքն ձգեաց. այլ յատակք նորա առ քարինս մնացին, և կորնչեցաւ Պերինթոս անյատակ»:

310. Զայս յառաջ բերէ Կիկերոն 'ի գիրս իւր այսպիսի բանիւք. «Պատմէն վասն Դամոնեայ և Պիւթիայ պիւթագորեանց այնպիսի ունել մտերմութիւն առ միմեանս, զի յորժամ զմին 'ի սոցանէ 'ի մահ դատապարտեաց բռնաւորն Դիոնեսիոս 'ի սահմանեալ ինչ աւուր. և այն որ դատապարտեալն էր 'ի մահ, խնդրեաց աւուրս քանի մի երթալ հրաման տալ վասն տան իւրոյ, միւսն եկաց երաշխաւոր փոխան ընկերին վասն դարձի նորա, յանձն առեալ զմեռանել թէ ոչ դարձցի նա: Եւ եղև իբրև դարձ արարնա յաւուր ժամադրութեանն, զարմացեալ բռնաւորին ընդ հաւատարմութիւն նոցին, խնդրեաց զի և զինքն երրորդ գրեսցեն 'ի բարեկամութեան իւրեանց»:

311. Առ բացատրութիւն իմաստից եդաք, «Սա միայն մնաց միահեծան». ուր խաղական բառքս հնչէն. «Սա միայն մնաց արև». և զայս ձև ասացուածոց վարէ Թէատրոս վասն նմանաձայնութեան բառից [illegible], [illegible], և [illegible], [illegible]. որպէս և այլուր նշանակեալ եղև 'ի մէնջ: Այնպիսի նմանաձայնութեամբ 'ի յաջորդ գլուխն [illegible] և [illegible] բարեկամութեան կոչէ զբարերարութիւնս. ուր մեք ճշգիւ թարգմանեցաք [illegible]:

312. Պերիանդրոս մին յեօթն իմաստասիրաց, էր արքայ Կորնթացւոց որդի Կիպսեղայ: Սա թէպէտև զանուն էառ իմաստասիրի վասն ճարտարութեան մտաց իւրոց. և գիտնաւոր գրուածոցն զորս յօրինեաց յուղղութիւն վարուց մարդկան, այլ անձամբ էր մոլի առաւելապէս ըմբռնեալ յախտ ցանկութեան, և կատաղի բարկութեան: Իւր էր առածն գովելի. Սանձեա՛ զբարկութիւն. և ինքն էր անսանձ բռնաւոր, անագորոյն և խիստ առ հպատակս. այնչափ ատելի իւրոցն, մինչ զի յելանելն 'ի տանէ կասկածէր առանց բազմութեան զինուորաց երևել առաջի ամբոխին, և ահն ածէր նաև յերեսաց տկարաց և վատասրտաց: Յայս ամենայն հայեցեալ համարեցան ոմանք, թէ իմաստասէրն Պերիանդր այլ ոք իցէ որիշ 'ի բռնաւորէս Կորնթացւոց: Բայց այլք պնդեն նոյն լինել բերելով օրինակ զՍողոմոն, որ իմաստնագոյնն էր քան զամենայն իմաստունս, այլ խոտորեցաւ զկնի ցանկութեան: Եւ յայտ իսկ է թէ իմաստութիւն մտաց ոչ ինչ օգտէ այնմ որ ոչն դնէ 'ի գործ զիմաստութիւն իւր, և ոչ վարի բարոյական իմաստասիրութեամբ, այսինքն կարգելով զգիտութիւնն 'ի գործադրութիւն ուղիղ վարուց:

313. Ամիանդ է տեսակ ինչ քարի, որոյ մասունքն զատուցեալ դզին իբրև ասր կամ բամբակ, մինչև մարթ է նիւթել



կամ մանել, և գործել իբրև զկտաւ: Եւ զի բնիկ նիւթն է քարեղէն, ոչ այրի 'ի հրոյ իբրև զպատատաս փոյ. այլ մանաւանդ եթէ աղտեղեալ իցէ, հրով մաքրի. և թէպէտ 'ի մէջ հրոյ լինի հրաշէկ, և վառի 'ի բոցոյ, այլ ոչ ծախի. զի 'ի շիջանիլ բոցոյն՝ անդրէն 'ի նախկին իւր որակութիւն դառնայ պայծառ քան զառաջինն:

314. Պիւղադէս կամ Պիլադէս էր որդի Ստրոփեայ արքային Փոկեացւոց, ազգակից Որեստեայ որդւոյ Ագամեմնոնի արքային Միկենեայ: Եւ էին սոքա երկոքին Որեստէս և Պիւղադէս սերտ սիրով զօդեալք ընդ միմեանս, և գործակիցք իրերաց յամենայնի. և եղև 'ի գնալ Որեստեայ յափշտակել զարձանն Արտեմեայ որ 'ի Տաւրիս սկիւթացւոց, ընդ նմա էր և Պիւղադէս. և երկոքին 'ի միասին ըմբռնեցան և մատնեցան 'ի շղթայս լինել զոհ Արտեմեայ: Յայնժամ քրմուհին Իփիգինէ կամեցաւ ազատել զմին, զի շատ է, ասէ, 'ի լնուլ զօրէնս տեղւոյս զոհել զմին եւեթ յօտարաց աստի. և ընտրեաց պահել զՊիւղադէս 'ի սպանդ զոհից: Զայն իբրև գիտաց Որեստէս պնդէր, թէ ինձ յաւէտ պարտ է մեռանել. և ընդ հակառակն Պիւղադէս ջանայր զի ինքն սպանցի, և բարեկամն իւր սիրելի կացցէ մնացէ կենդանի: Եւ յետ բազում հակառակելոյ ընդ միմեանս վասն սիրոյ՝ ածան առաջի Թոասայ բռնաւորի, որ թագաւորն էր տեղւոյն. և նա հրամայեաց, զի Որեստէսն այն որոյ եկեալ իցէ 'ի յափշտակել զԱրտեմիս, զոհ լիցի, իսկ միւսն իբրև ուղեկից նորին գտեալ ազատ լիցի: Յայնժամ յառաջ մատեաւ Պիւղադէս, և հաստատեաց երդմամբ թէ ես ինքն եմ Որեստէս մահու պարտական: Իսկ Որեստէս երդնոյր թէ ես ինքն եմ ճշմարիտն Որեստէս. ապա թէ դա իցէ, ասէ, Որեստէս, ես Պիւղադէսն եմ մահապարտ: Զարմացեալ բռնաւորին և ոչ գտեալ զելս իրացն, եհան զնոսա յատենէ իւրմէ. և մինչդեռ խորհէր թէ զինչ արասցէ վասն արանցն, ծանեաւ քրմուհին Իփիգինէ 'ի նշանաց՝ թէ Որեստէս եղբայր իւր է, և զերծոյց զնա և ըզբարեկամ նորա. և 'ի ձեռն նոցա սպանեալ զԹոաս խոյս ետ նոքօք հանդերձ յերկրէ անտի 'ի հայրենիս իւր յԱրկադիա: Իսկ Նոննոս այսպէս համառօտէ զբանն ասելով. «Որեստէս այս որդի էր Ագամեմնոնի. այլ սիրելութիւն այնչափ ունէր առ Պիլադէս, և Պիլադէս առ Որեստէս, զի մեռանելով Պիւղադեսի ընդ նմին իջանել Որեստէսի 'ի դժոխս»:

315. Աստարաս և Նումենիոս էին երևելի գողք համախոհք իրերաց, ճարտարք յարուեստ չարութեան իւրեանց. մինչև 'ի յայս առնել զչարարուեստ հնարս անուանի գողոց 'ի մի միաբանելոց՝ յառակս եղև ասել, «Միաբանեալ են

Աստաբաս և Նումենիոս»։ Իսկ վասն Սիմոնի և Նիկոնի ըստ այսմ ինչ ոչ գտաք. միայն գրէ Լիւիոս թէ Նիկոն և Փիլոմենոս երիտասարդք Տարենտացիք 'ի թշնամութիւն դարձեալ ընդդէմ Հռովմայեցւոց, միաբանեցին ընդ իւրեանս արս քանի մի, և բանս եդին ընդ Աննիբաղայ Կարքեդոնացւոյ զօրավարի՝ մատնել զքաղաքն Տարենտոն 'ի ձեռս նորա. և 'ի խնդրել նորա 'ի նոցանէ ինչ ինչ պայմանս հաստատութեան յանձն առին երդմամբ։ Այլ թէ առ սոսա հայի բան Թեսաւրոսի կամ առ այլս ոմանս, չէ մեզ յայտ։

316. Գլաւկոս ըստ առասպելաց էր ձկնորս ոմն, որ ընկեց զանձն 'ի ծով, և համարեցաւ աստուած ծովային. զոր և նկարէին այլանդակ գլխօք իբր խառնածին ինչ կենդանի 'ի մէջ ծովու։ Իսկ Ներէա կամ գրի փոխանակ միոյ 'ի Ներեայց, որք համարեալ լինէին յաւերժահարսունք բնակեալք 'ի ծով դստերք Ներէոսի ուրումն, և կամ պարտի լինել Նէէրա, որ էր, ասեն, օրիորդ չքնաղ անուանեալ հարճն արեգական. յորմէ և սովորութիւն եղև բանաստեղծից զգեղեցիկս 'ի կանանց Նէէրա ձայնել։

317. Զոպիւրոս բաբելացի որդի Մեգաբիւզայ էր մի 'ի նոցանէ. որք միաբանեալ 'ի բաց հանին զսուտ Սմերդ 'ի թագաւորութենէ, և վանեալ զմոգս բռնացեալս թագաւորեցուցին զԴարեհ Վշտասպեան 'ի վերայ Պարսից։ Այլ եցոյց սա և այլ երախտիս մեծ Դարեհի արքայի. զի յոչ կարելն նորա առնուլ զԲաբելոն քաղաք Զոպիւրոս ծայրատեաց զունչս և զականջս իւր, և ետ հարուածել զանձն, և այնպէս արիւնաշաղախ մարմնով գնաց առ քաղաքակիցս իւր առ Բաբելացիս իբրև փախստական յերեսաց Դարեհի, որպէս թէ յարքայէ լեալ իցեն նմա այն հարուածք վասն յորդորելոյ իւրոյ զնա մեկնել 'ի պաշարմանէ Բաբելոնի։ Եւ զի մեծ էր անուն Զոպիւրոսի, հաւատացին բանից նորա քաղաքացիք և ընկալան յիւրեանս. մինչև յետ սակաւուց առաջնորդ պատերազմի ևս եղև Զոպիւրոս, և մատնեաց զԲաբելոն 'ի ձեռս Դարեհի։ Եւ ահա վասն այսպիսի մտերիմ սիրոյ նորա այնչափ սիրէր զնա Դարեհ արքայ, մինչև յառնուլ երբեմն 'ի ձեռս զնուռն մի ասաց. Ցանկայի արդեօք զի որչափ հատք են 'ի նռանս, նոյնչափ ոգի և մարմին լինէր Զոպիւրոսիդ իմում. ցաւ է ինձ, ասէր, վասն ծայրատութեան անդամոցն՝ զոր յանձն էառ նա կամակար 'ի սէր իմ. զի առաւել արժէ յաչս իմ Զոպիւրոս մի ողջանդամ քան զքսան Բաբելոն։ Այլ զնախատայեալ գործ Զոպիւրոսի, զոր գրեն Յուստինոս, և Հերոդոտոս 'ի մէջ բերէ և Նոննոս. ուր բզխեալ զխորդ 'ի հայերէն թարգմանութեան փոխանակ Դարեհի հասարակօրէն



Կիւրոս գրի. հաճոյ թուի օրինակել աստէն զգրեալն. «Քանզի բազում ժամանակս մարտնչելով Կիւրոսի ընդ Բաբելոնի, և դժուարամարտ գոլով նորա և անառիկ, յոյժ տրտմեալ լինէր. ապա այր ոմն Զոպիւրոս անուանեալ արիագոյն անձամբ, որպէս եցոյց իրն՝ որ առ 'ի նմանէ գործեցաւ, և առ Կիւրոսիւ ոչ վատափառ լեալ, հնարի այսպիսի ինչ. հատեալ զունչս իւր և զականջս, և խարազանօք յոյժ հարեալ զանձն իւր, գնայ առ Բաբելացիսն ինքնակամ կամօք որպէս չարիս բազումս կրեալ առ 'ի Կիւրոսէ, և 'ի գնալն՝ բարեկամութիւն ցուցանէ Բաբելացւոցն, և 'ի խորհուրդ մտանէ ընդ նոսա զընդդէմն Կիւրոսի. և պարզաբար հաւատարմանայ Բաբելացւոցն զմիտս նոցա յանդուգնեալ յինքն. և զօրավար եղեալ Բաբելացւոց սպանանէ զբազումս 'ի զօրացն Դարեհի. ([illegible]). այլև ժամադիր եղեալ նորա և սահմանեալ օր առ Կիւրոս, յորում պարտ իցէ գալ 'ի դուռն Բաբելոնի. և յայնմ աւուր հաւանեցուցանէ զԲաբելացիսն, և առնու զբանալիս դրացն, պատճառելով զայս ինչ մի դուցէ ձանձրացեալ 'ի կռուոյն կամ զարհուրեալ յերկիւղէն անձն տուր լինիցին. և այսպէս խաբելով, և ապա բացեալ մուծանէ զՊարսիկսն. և այսպէս առաւ Բաբելոն։ Զայսոսիկ Հերովդիոս ասէ յերկրորդում պատմութեան»։ Այլ որպէս տեսաք՝ այս բան գրի 'ի Հերովդոտեայ յերրորդում պատմութեան. և այն միշտ Դարեհ անուամբ, դէթ յայժմու օրինակս. նոյնպէս Դարեհ գրի միշտ և 'ի լատին թարգմանութեան բանից Նոննոսի։

318. Հեթանոսք սովոր զայս ձև երդման վարէին, «Երդուեալ 'ի Դիոս», կամ «Ոն և օն արասցէ ինձ Արամազդ»։ Այլ թէ ո՞ր կուռք կամ բագին Դիոսի իցէ Աւենտինեան ասացեալն, ոչ գիտեմք։ Աւենտինոս կամ Աւենտիոն էր անուն միոյ յեօթն բլրոց Հռովմայ առեալ զանուն Յաւենտինոսէ յորդւոյ Հերակլեայ, զոր ծնաւ նա, ասեն, 'ի Ռէայ քըրմուհւոյ 'ի գալ իւրում յԻտալիա։ Ի տեղւոջ անդ գոյր նախ մեհեան Արտեմեայ, ուր այժմ է եկեղեցի սրբոյն Սաբինայ. վասն որոյ և բլուրն այն կոչի լեառն սրբոյն Սաբինայ։ Այլ հանդիսական տեղի երդմանց և ուխտադրութեանց առ Հռովմայեցիս էր բագինն Դիոսի ամենաբարի և ամենամեծ կոչեցելոյ 'ի Կապիտոլին, ըստ Կիկերոնի։

319. Յովսեպոս պատմէ երկար թէ զի՞արդ 'ի սաստկանալ թշնամութեան և ատելութեան ընդ Հերովդէս և ընդ Աղեքսանդրոս որդի նորա, կասկած առեալ Հերովդի թէ ոմանք 'ի բարեկամաց իւրոց կուսակից են Աղեքսանդրի, 'ի բաց մեր-

ժեաց զնոսա 'ի պալատանէ իւրմէ: Ի մէջ սոցա էին և Անդրոմաքոս և Գեմեղոս որք անուանիք և պիտանիք 'ի գործ արքունեաց և իբր առաջին խորհրդականք. « ԶԱնդրոմաքոս, ասէ, մերժեաց, զի որդի նորա Գեմետրիոս սերտ ընտանութիւն ունէր ընդ Աղէքսանդրի, և զԳեմեղոս՝ զի տեսանէր զնա բարեսէր լինել առ Աղէքսանդրոս. քանզի և 'ի մանկութենէ հետէ 'ի մարզս գրուորութեան դաստիարակեալ էր զնա, և 'ի դեգերիլ նորա 'ի Հռովմ ընդ նմա էր կացեալ »:

320. Զբան Բիասայ ոմանք ընծայեն Քիղոնի, որ և նա մի էր յեօթն իմաստասիրաց. և այլք յանուն այլևայլ նախնի փիլիսոփայից և բանաստեղծից 'ի մէջ բերեն: Աւլ Թեսաւրոս զհետ երթայ բանից Կիկերոնի Տուղղիոսի, որ գրէ այսպէս. « Նախ զայն յուշ արարից, զոր մեծապէս կշտամբել սովոր էր Սկիպիոն: Զէ մարթ, ասէր, գտանել զայլ ասացուած այնչափ թշնամի բարեկամութեան, քան զնորայն որ ասացն թէ այնպէս պարտ է սիրել՝ որպէս թէ ատել ունիս երբեմն: Եւ անհնար է ինձ ասէր հաւատալ երբէք, թէ այս ասացուած, որպէս ասի, իցէ առած Բիասայ, որ մի համարի յեօթանց իմաստնոց, այլ է զրոյց խառնակեցիկ առն, կամ բարձրամտի, և կամ նորա որ զամենայն ինչ ըստ իւր կարի յարմարէ: Քանզի զիարդ մարթի ոք բարեկամ լինել այնմ, որում թշնամի լինել երբէք կասկածէ . . . ամին իրի այդ պատուէր, որոյ և իցէ, 'ի բարձումն բարեկամութեան գիտէ առաջնորդել: Ապաքէն զայն յաւէտ պարտ էր պատուիրել, թէ զայնպիսի զգուշութիւն պէտք են մեզ ունել 'ի սահմանել զբարեկամութիւնս, զի մի երբէք սկսցուք սիրել զոր երբեմն ունիմք ատել»:

321. Զայս գործ Հերակլի և Ագմետայ յիշեցաք կանխաւ 'ի համարն 166:

322. Կատիլինաս, որ և Լուկիոս Կատիլինա, էր պատրիկ Հռովմայ, այր սրտեայ և յաջողամիտ, այլ չար և անառակ. որ յետ սպառելոյ զամենայն ինչս իւր՝ խորհուրդ չար յանդգնութեան եդ 'ի մտի վրդովել զհայրենիս իւր, ցրել զծերակոյտն, և տիրել բովանդակ հարստութեան և տէրութեան Հռովմայ: Միաբանեաց ընդ իւր արս սրիկայս և արիւնահեղս. և արարեալ նոցա կոչունս խրախութեան՝ էառ 'ի նոցանէ երդումն միաբանութեան. և առ հաստատութիւն երդմանն ետ նոցա ըմպել զարիւն մարդոյ, կամ խառնեաց 'ի բաժակս գինւոյ զշիթս ինչ արեան իւրաքանչիւր բազմականաց, և այնպէս արբոյց միոյ միոյ 'ի նոցանէ: Եւ արդարև 'ի գլուխ



տանէր զխորհուրդ իւր այրն անօրէն 'ի կործանումն Հռովմայեցւոց, եթէ չէր 'ի յայտ եկեալ գաղտնահնար դաւ նորա 'ի ձեռն զգաստ և աչալուրջ կառավարութեան մեծին Կիկերոնի, որ 'ի ժամանակին յայնմիկ ունէր զպատիւ հիւպատոսութեան, զի սա իրազեկ լեալ չարութեան Կատիլինայ 'ի ձեռն միոյ ուրուք 'ի միաբանելոցն ընդ նմա, կշտամբեաց զնա յատենի ծերակուտին սքանչելի ատենախօսութեամբ իւրով, և ետ աքսորել 'ի հեռաւոր վայրս. այլ նա հնարիւք զերծեալ անտի ժողովեաց անդրէն զառաջին համախոհս իւր և զայլ ևս զօրս, և խաղաց 'ի վերայ Հռովմայ. և 'ի լինել սաստիկ պատերազմի թէպէտ և եցոյց զօրութիւն բազկի իւրոյ, այլ հուսկ յետոյ սպառեցեալ անկաւ և կորեաւ հանդերձ գործակցօք իւրովք:

323. Պլինիոս 'ի խօսելն զաղաւնեաց՝ ասէ, թէ պատգամաբեր գտան երբեմն յիրս մեծամեծս. որպէս յորժամ Բրուտոս կապեալ գիր յոտս աղաւնւոյ 'ի պաշարման Մուտինայ առաքեաց 'ի բանակն: Իսկ Փրոնտինոս վասն Հիրտիոսի գրէ թէ յղեալ իցէ գիր այնպիսի առ Բրուտոս: Երկաքանչիւրն է ճշմարիտ՝ որպէս ասեն ոմանք, զի նոյնօրինակ թղթակցութիւն արարին ընդ միմեանս: Եւ յայս միտ խօսի Թեսաւրոս:

324. Քանզի աղաւնի առ լատինս գօլոմպա կամ գօլոմպօ ասի, ստուգաբանութեամբ անուան աղաւնւոյ նմանեցուցանէ հեղինակս զԳոլումպոս լիկուրացի, այն է Քրիստափոր Կոլոմբոս գենուացի 'ի գաւառէն Լիգուրիոյ, գտիչն Ամերիկոյ յամի տեառն 1492. այլ անուն այնր նորագիւտ երկրի եդաւ ըստ անուան Ամերիկոսի Վեսպուչչեայ քաջ աշխարհագիր առն Փլորենտացւոյ, յամի տեառն 1497:

## Ծանօթութիւնք 'ի վերջին գիրս:

325 Կապիտոլիոն որ ստէպ յիշատակի յընթացս մատենիս, էր հոյակապ տաճար Գիոսի 'ի Հռովմ երևելի 'ի պաշտամունս Հռովմայեցւոց: Անդ էր տեղի խորհրդոց. և անդ լինէին հանդիսական ուխտադրութիւնք վասն մեծամեծ իրաց, և անդ լինէր երդումն հաւատարմութեան ինքնակալաց և զօրավարաց. և որք միանգամ յաղթող գտեալ 'ի մարտի դառնային 'ի Հռովմ, նստեալ 'ի կառս երթային մեծահանդէսք

գէս փառօք 'ի տաճար անդր առնուլ զպատիւ յաղթանակի. և յայս հայի առաջիկայ բան Թեսաւրոսի :

326. Ատլաս ասի լինել արքայ Մաւրիտանիոյ կոչեցեալ որդի Ուռանոսի, քաջ աստեղագէտ և իբր գտակ արուեստի աստղաբաշխութեան. յորմէ եւ առասպելն թէ նա բարձեալ ունէր 'ի վերայ ուսոց իւրոց զբոլանդակ գունտ երկնից : Եւ կամ ըստ այլոց, այս առասպել յառաջ եկն յայլ առասպելոյ, յորս ասի թէ Ատլաս փոխեցաւ 'ի լեառն մի մեծ, որոյ գագաթն հասանէր մինչև յերկինս. փոխանակ ասելոյ թէ 'ի յարուցանել Պերսէոսի պատերազմ ընդդէմ Ատլասայ, նա խոյս ետ 'ի բարձր լերինս որոց գլուխք ոչ երևէին վասն ծածկեալ լինելոյ յամպոց, և այնպէս աներևութացաւ յաչաց թշնամւոյն : Յանուն սորա կոչեցաւ, ասեն, Ատլաս լեառն 'ի Մաւրիտանիա, և յայնմանէ անուն էառ ծովն Ատլասեան կամ Ատլանտեան : Կայ և այլ Ատլաս լեառն 'ի Լիբիա նոյնպէս բարձր, և գագաթն նորա միշտ ձիւնապատ գտանի. զոր բանաստեղծք կոչեցին սիւն երկնից : Յիշատակէ զայսոսիկ ըստ մասին Եւսեբիոս 'ի կանոնն քրոնիկոն յաւուրս ծառայութեանն Իսրայէլի յԵգիպտոս, յասելն, « Ատլաս Պրոմեթեայ եղբայր աստեղագէտ ճարտար երևէր, և վասն իմաստութեանն զերկինս կրել համբաւէր : Իսկ Եւրիպիդէս լեառն 'ի վերոյ քան զամպս ասէր լինել զԱտլասայ » :

327. Վասն Ոգիսեանց, որք 'ի ճաշակելն զԼոտոսս քաղցրահամ ոչ ևս կամէին դառնալ 'ի հայրենիս, տես 'ի վերոյ 'ի համարն 39 :

328. Վասն Պրոկրուստեայ անողորմ աւազակի ասացաւ 'ի համարն 290 որպէս և յաղագս Փաղարիսի բռնաւորի 'ի 3. Իսկ Դիոնեսիոս որ անկեալ յիշխանութենէ, աքսորեցաւ 'ի Կորնթոս, և անդ մանկավարժութեամբ լնոյր զիւր պէտս, է Դիոնեսիոս կրտսեր որդի առաջնոյն, զորմէ տես 'ի համարն 6 :

329. Որպէս այլուր նոյնպէս և աստանօր ցուցանէ Թեսաւրոս ընդ դժբախտութիւն Արիստոտելի, զի ծնաւ 'ի դարս հեթանոսութեան իբր 350 ամօք յառաջ քան զՔրիստոս, և անմասն գտաւ 'ի լուսոյ Ճշմարիտ աստուածպաշտութեան և քրիստոնական հաւատոց : Եւ կամի ասել հեղինակս, թէ թէպէտև զարմանալիս և գեղեցիկս բարբառեցաւ նրբախոսն Արիստոտէլ բնական լուսով զբարոյական առաքինութեանց և զբնական երջանկութենէ, այլ գլխովին անգէտ գտաւ աստուածային առաքինութեանց և աւետարանական երանութեան, որպէս և ամենայն փիլիսոփայիցն դառք. քանզի տեսութիւն նոցա ցայնվայր եւեթ եհաս ցորչափ ձկտէր բիբ աչաց հոգւոյն միջնորդութեամբ բնատուր լուսոյ, որ զկայ առնու 'ի ներքոյ երկնից. իսկ լուսաւորեալք յաստուծոյ լուսով հաւատոյ ձկտեցուցանեն զաչս մտաց 'ի վերոյ քան զերկինս առ գերբնական երանութիւն. զի առ Աստուած բերին գլխովին, և երջանկութիւն անեզրական գիտեն զժառանգութիւնն Աստուծոյ : Եւ ահա այսպիսիք ոմանք եղեն առաւելապէս սուրբ հարք և վարդապետք եկեղեցւոյ, որք անհամեմատ առաւելութեամբ գերազանց գտան 'ի ճշմարիտ իմաստութեան քան զարտաքին իմաստասէրս համօրէն : Յայսպիսի մտածութիւնս յորդորէն զբարեսէր ընթերցողս ընթացք բանից հեղինակիս 'ի վերջին յայս գլուխ մատենիս :



330. Զկոպար սահմանափակ բացատրէ հեղինակս ըստ նմանութեան որոշման սահմանաց 'ի մէջ այլ և այլ տէրութեանց կամ կալուածոց, կոչելով սիւնս չանցանելոյ անդր քան զայն, կամ կոթողս յեզր սահմանակցութեան. որպիսի գեղեցիկ նմանագրէ Խորենացին՝ յասելն վասն մերոյն Արտաշիսի (բ. 53). « Եւ նշանս սահմանաց հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս, և սնակաձև փոսել զմէջն ծածկելով յերկրի, և չորեքկուսիս 'ի վերայ յարուցանել ամբարտակս սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ » : Արդ այսպիսօրէն նմանութեամբ ասէ Թեսաւրոս սահման եդեալ յԱրիստոտելէ, թէ ցոր վայր հասանէ երջանկութիւնն իմաստասիրական :

331. Ուր մեք եդաք աստուածայնութիւն, Թեսաւրոս վարի յունական ձայնիւս թէօֆանիա, որ է աստուածացուցումն. զորմէ յիշեցաք 'ի համարն 129 : Որով կամի ասել թէ անմիտ գտան կայսերք Հռովմայ, որք 'ի զուր հնարեցան ընդունիլ 'ի ժողովրդենէ զայն պատիւ աստուածական, զի ստութիւն և կեղծիք էր բաղձանք և փառք նոցա : Իսկ մեզ հաւատացելոցս կայ, ասէ, դիւրին և օրինաւոր ճանապարհ աստուածանալոյ փոխակերպելով սիրով յԱստուած, և հաղորդակից լինելով աստուածութեան աստ 'ի ձեռն շնորհաց և 'ի հանդերձեալն 'ի ձեռն լուսոյ փառաց :

332. Անդրի քառուղեան է արձան զոր կանգնէին 'ի գլուխս ճանապարհաց բաժանելոց 'ի չորս առաջս կամ 'ի քառեակ պողոտայս, որ մատամբ ցուցանէ անցաւորաց զուղղունական ճանապարհ արահետ : Զայսպիսի արձանս և զայլ ամենայն կոթողս ճանապարհաց և կամրջաց, որպէս և զկարկառս քարանց առ ճանապարհօք, Յոյնք կոչէին Հերմաս յանուն Հերմեսի աստուծոյն, որպէս և Լատինք Մերկուրիոս : Եւ ար-

դարև գեղեցիկ օրինակէ զարձան այդպիսի՝ հեթանոս փիլիսոփայից, որք մասամբ ինն նշանակեցին և իբր նշանացի ցուցին այլոց զՃանապարհ իմաստասիրութեան, այլ ինքեանք իբր կոթողս անշունչս՝ անշարժ մնացին, և ոչ գնացին ընդ Ճանապարհ իմաստութեան, ՚ի դէպ եկեալ առաքելական բանին. «Ծանեան զԱստուած, և ոչ իբրև զԱստուած փառաւորեցին կամ գոհացան, այլ նանրացան ՚ի խորհուրդս իւրեանց». (Հռովմ. Ա. 12):

333. Վերջաբանութիւն հեղինակիս զնոյն յայտ առնէ զոր մեք ՚ի յառաջաբանութեան անդ կանխաւ ասացաք, թէ զայս գիրս նուիրեաց նա ինքն Թէոսաւրոս արքայազն որդւոյ իշխանին Սաբաւդիոյ ՚ի դաստիարակութիւն առաքինական վարուց ըստ արժանի իւրումն աստիճանի: Այլ որդ որպէս նա զեւր երկս այլում վերընծայէ, նոյնպէս և մեք զդուզնաքեայ մերս երկասիրութիւն ՚ի թարգմանութեան և ՚ի ծանօթաբանութեան յօժարամիտ սրտիւ ընծայեմք մեծազնեայ ընթերցասիրաց առաքինասէր իմաստասիրաց ՚ի վայելս օգտակարս, ՚ի փառս Փրկչին բոլորեցունց և ՚ի պատիւ օրհնաբանեալ Տիրամօրն:

# ՑԱՆԿ


ՅԱՌԱՋԱԲԱՆ . . . . . . . . . . . . . . 3


## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ


ԳԼ. Ա. Յաղագս վախՃանի բարոյական իմաստասիրութեան . . . . . . . . . 11

ԳԼ. Բ. Յաղագս թէ զինչ պիտի առ երջանկութիւն, և յաղագս բոլորական սահմանի նորա . 15

ԳԼ. Գ. Ընդդիմագրութիւնք առ այս սահման, և նոցին պատասխանատուութիւնք . . . 18

ԳԼ. Դ. Յաղագս թէ զինչ իցէ առաքինութիւնն բարոյական . . . . . . . . . 21

ԳԼ. Ե. Յաղագս յատկութեան բարոյական առաքինութեան . . . . . . . . . 25


## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ


ԳԼ. Ա. Յաղագս բնական կարողութեանց, յորս ծնանին բարոյական ունակութիւնք . . 31

ԳԼ. Բ. Բնական կարողութիւնք իցե՞ն արդեօք կատարելագոյնք յայս ոք քան յայն. . . 33

ԳԼ. Գ. Յաղագս նախկին սերմանց, որք արտադրեն զբարոյական ունակութիւնս . . . . 36

ԳԼ. Դ. Յաղագս բարոյական ունակութեան. . . 39

ԳԼ. Ե. Յաղագս յատկութեանց բարոյական ունակութեան . . . . . . . . . 41

ԳԼ. Զ. Յաղագս կամաւոր և անկամաւոր ներգործութեանց. . . . . . . . . . 44

ԳԼ. Է. Թէ ո՞ր իցէն խոյք առաքինութեան . . . 47

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ


Գլ. Ա. Յաղագս չորից գլխաւոր առաքինութեանց, և թէ յո՞ր մասն հոգւոյ զետեղանան . . 50
Գլ. Բ. Թէ զիա՞րդ զանազանին այս չորեքին առաքինութիւնք յայլոց բարոյական առաքինութեանց . . . . . . . . . . . . 53
Գլ. Գ. Յաղագս բաժանման բովանդակ բարոյական առաքինութեանց ըստ սեպհական առարկայից . . . . . . . . . . . . 54
Գլ. Դ. Ճիւղագրութիւն բարոյական առաքինութեանց, և նոցին մոլութեանց՝ որ 'ի ծայրս 56
Գլ. Ե. Յաղագս թէ ո՞ր իցէ մէջ առաքինութեան . 58
Գլ. Զ. Թէ զիա՞րդ գտանիցի մէջ առաքինութեանց յերկուց ծայրից միջի . . . . . . . 60
Գլ. Է. Բաղդատութի երկուց ծայրից առ միմեանս . 62
Գլ. Ը. Արդեօք ամենայն մոլութիւնք իցե՞ն հաւասար . . . . . . . . . . . . 63
Գլ. Թ. Յաղագս թէ որպիսի՞ և քանի՞ իցեն պարագայք բարոյական գործոյ . . . . . 66


## ԳԻՐՔ ԶՈՐՐՈՐԴ


Գլ. Ա. Ներածութիւն յԱրիութեանճառս . . . 70
Գլ. Բ. Յաղագս թէ զի՞նչ իցէ առաքինութիւն արիութեան, և ո՞ր իցէ արին . . . . . 71
Գլ. Գ. Յաղագս առարկայից արիութեան. այսինքն թէ յորո՞ց չարեաց երկնչիցի արին և յորո՞ց ոչ . . . . . . . . . . . . . 74
Գլ. Դ. Թէ վասն որո՞ց պատճառաց գործիցէ արին . 75
Գլ. Ե. Յաղագս թէ որո՞վ օրինակաւ գործիցէ արին 78
Գլ. Զ. Յաղագս յանդգնութեան և վեհերոտութեան . . . . . . . . . . . . . 82


## ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ


Գլ. Ա. Թէ զի՞նչ իցէ բարեխառնութիւնն . . . 86
Գլ. Բ. Թէ որպիսի՞ իցէ բարեխառնն . . . . 88
Գլ. Գ. Թէ ո՞յք իցեն առարկայք բարեխառնութե . 90
Գլ. Դ. Թէ էր աղագաւ լինիցի մարդ բարեխառն . 92
Գլ. Ե. Թէ զո՞ր եղանակ վարիցէ բարեխառնն . . 94
Գլ. Զ. Յաղագս թմրութեան և անբարեխառնութեան . . . . . . . . . . . . . 98




## ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ


Գլ. Ա. Թէ զի՞նչ իցէ առատաձեռնութիւնն . . . 101
Գլ. Բ. Թէ ո՞ր իցէ առատաձեռնն . . . . . . 104
Գլ. Գ. Առարկայք առատաձեռնութեան . . . . 105
Գլ. Դ. Թէ վասն որո՞ց իրաց գործիցէ առատաձեռնն . . . . . . . . . . . 109
Գլ. Ե. Թէ որո՞վ օրինակաւ գործիցի առատաձեռնութիւնն . . . . . . . . . . 109
Գլ. Զ. Յաղագս շռայլութեան և ագահութեան . 114


## ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ


Գլ. Ա. Թէ զի՞նչ իցէ մեծագործութիւնն . . . 116
Գլ. Բ. Թէ ո՞ իցէ այր մեծագործ . . . . . . 118
Գլ. Գ, Թէ ո՞ր իցեն առարկայք մեծագործութե . 120
Գլ. Դ. Թէ առ ի՞նչ վախճան գործիցէ մեծագործն 125
Գլ. Ե. Թէ որո՞վ օրինակաւ գործիցէ մեծագործն . 128
Գլ. Զ. Յաղագս փոքրավայելչութեան և չափազանց վայելչութեան . . . . . . . 133


## ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ


Գլ. Ա. Թէ զի՞նչ իցէ մեծանձնութիւնն . . . . 137
Գլ. Բ. Թէ ո՞վ իցէ մեծանձն . . . . . . . 138
Գլ. Գ. Առարկայք մեծանձնութեան . . . . 140
Գլ. Դ. Թէ ո՞ր իցէ վախճան մեծանձին . . . . 143
Գլ. Ե. Թէ որո՞վ օրինակաւ գործիցէ մեծանձնն . 144
Գլ. Զ. Յաղագս փոքրոգութեան և փքացման . . 153


## ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ


Գլ. Ա. Թէ զի՞նչ իցէ պարկեշտութիւնն . . . . 157
Գլ. Բ. Որո՞վ օրինակաւ և առ ի՞նչ վախճան գործիցէ պարկեշտն . . . . . . . . 158
Գլ. Գ. Յաղագս քրիստոնէական խոնարհութեան . 160


## ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ


Գլ. Ա. Թէ զի՞նչ իցէ հեզութիւնն . . . . . . 162
Գլ. Բ. Յաղագս բարկութեան . . . . . . 163
Գլ. Գ. Թէ որո՞վ օրինակաւ գործիցէ բարկացողն . 166
Գլ. Դ. Յաղագս անզգայութեան . . . . . . 171

Գլ. Ե. Յաղագս միջասահմանութեան 'ի մէջ բարկութեան և անզգայութեան . . . . . 173
Գլ. Զ. Թէ զի՞նչ ընդ մէջ է հեզութեան և իւրոց համանմանից . . . . . . . . . . 176
Գլ. Է. Թէ զի՞նչ ընդ մէջ իցէ հեզութեան և գթութեան . . . . . . . . . . . —
Գլ. Ը. Թէ զի՞նչ ընդ մէջ իցէ հեզութեան և ողորմութեան . . . . . . . . . . 177
Գլ. Թ. Թէ զի՞նչ ընդ մէջ իցէ հեզութեան բարոյականի և աստուածականի. . . . . . 178

## ԳԻՐՔ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Գլ. Ա. Յաղագս քաղաքական կենցաղավարութեան ընդ հանրապէս. . . . . . . . 180
Գլ. Բ. Յաղագս քաղցրախօսութեան կամ հաճոյականութեան . . . . . . . . 181
Գլ. Գ. Յաղագս մարդահաճութեան. . . . . . 182
Գլ. Դ. Յաղագս փախճանի մարդահաճոյին . . . 184
Գլ. Ե. Թէ որո՞վ օրինակաւ փարիցի մարդահաճոյն 'ի մարդահաճել իւրում . . . . . . 186
Գլ. Զ. Յաղագս հակառակասիրի, կամ կռուասիրի. 189
Գլ. Է. Յաղագս առարկայից հակառակասիրի . . 190
Գլ. Ը. Թէ զի՞նչ իցէ վախճան հակառակասիրին . 191
Գլ. Թ. Թէ որո՞վ օրինակաւ գործիցէ հակառակասէրն . . . . . . . . . . . 192
Գլ. Ժ. Յաղագս միջասահմանութեան 'ի մէջ երկուց ծայրից . . . . . . . . . . 194
Գլ. ԺԱ. Թէ զի՞նչ իցէ քաջ մարդավարութիւն . . 198
Գլ. ԺԲ. Յաղագս ամարդութեան, որ մուծաւ 'ի ծխախոտէ . . . . . . . . . . 206

## ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Գլ. Ա. Յաղագս թէ զի՞նչ առաքինութիւն իցէ ճշմարտախօսութիւն. . . . . . . . 211
Գլ. Բ. Յաղագս առարկայից ճշմարտախօսութեան. 212
Գլ. Գ. Թէ ո՞ր իցէ յորդոր ճշմարտախօսին. . . 214
Գլ. Դ. Թէ որո՞վ օրինակաւ գործիցէ ճշմարտախօսն. 215
Գլ. Ե. Յաղագս ճառատանաց և կեղծեաց . . . 218



## ԳԻՐՔ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Գլ. Ա. Օգուտ զուարճախօսութեան. . . . . 223
Գլ. Բ. Թէ զի՞նչ իցէ քաղաքավարութիւն, կամ զուարճախօսութիւն . . . . . . 224
Գլ. Գ. Թէ ո՞ր իցէ տեսակ զուարճախօսութեան և քանի՞ իցեն տարբերութիւնք նորա . . 226
Գլ. Դ. Յաղագս նիւթոյ և ենթակայի զուարճախօսութեան . . . . . . . . . . 227
Գլ. Ե. Յաղագս զուարճախօսութեանց ծանուցից . 231
Գլ. Զ. Կիրառութիւն զուարճախօսութեանց 'ի քաղաքական կենցաղավարութիւնս . . . 233
Գլ. Է. Զուարճախօսութիւնք գործոց . . . . 236
Գլ. Ը. Զուարճախօսութիւնք որք խառն են յարարից և յասից . . . . . . . . . 237
Գլ. Թ. Յաղագս առաքինական ունակութեան զուարճախօսութեան . . . . . . . 239
Գլ. Ժ. Թէ ո՞ր իցէ վախճան զուարճախօսին . . 240
Գլ. ԺԱ. Թէ որո՞վ օրինակաւ գործիցէ զուարճախօսն. 241
Գլ. ԺԲ. Յաղագս գեղջկութեան և խեղկատակութեան . . . . . . . . . . . . 245

## ԳԻՐՔ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Գլ. Ա. Թէ զի՞նչ իցէ ամօթխածութիւն . . . . 248
Գլ. Բ. Յաղագս առարկայից ամօթխածութեան . 251
Գլ. Գ. Յաղագս պատճառի ամօթխածութեան . 252
Գլ. Դ. Թէ որո՞վ եղանակաւ գործիցէ ամօթխածն . 254
Գլ. Ե. Յաղագս անամօթի և երկչոտի . . . . 258

## ԳԻՐՔ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Գլ. Ա. Թէ զի՞նչ իցէ սրտմտութիւն . . . . . 261
Գլ. Բ. Թէ ո՞ր իցեն առարկայք սրտմտութեան . 262
Գլ. Գ. Թէ ո՞ր իցէ առիթ սրտմտութեան . . . 264
Գլ. Դ. Թէ որո՞վ օրինակաւ գործիցէ սրտմտեալն . 266
Գլ. Ե. Գործք սրտմտութեան . . . . . . 269
Գլ. Զ. Յաղագս չարակամութեան և նախանձու . 270

## ԳԻՐՔ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ


Գլ. Ա. Թէ զի՞նչ իցէ արդարութիւն . . . . . . 274
Գլ. Բ. Յաղագս օրինական կամ հանրական արդարութեան . . . . . . . . . 277
Գլ. Գ. Յաղագս ուղղութեան կամ մասնաւոր արդարութեան . . . . . . . . 278
Գլ. Դ. Յաղագս գերարդարութեան . . . . . 280
Գլ. Ե. Յաղագս արդարութեան տրամաբաշխականի և փոխարինականի՝ ընդ հանրապէս . . 283
Գլ. Զ. Յաղագս տրամաբաշխական արդարութեան . 285
Գլ. Է. Յաղագս փոխարինական արդարութեան . 289
Գլ. Ը. Յաղագս փոխադարձ տուժի . . . . . 292
Գլ. Թ. Յաղագս քաղաքական և բնական իրաւանց . 297
Գլ. Ժ. Յաղագս քաղաքական իրաւանց, որ անյատուկ և անտեսական: Եւ նախ յաղագս հայրական իրաւանց . . . . . . . 300
Գլ. ԺԱ. Յաղագս տիրական իրաւանց 'ի վերայ ծառայից . . . . . . . . . . . . 302
Գլ. ԺԲ. Յաղագս ամուսնական իրաւանց . . . . 304
Գլ. ԺԳ. Յաղագս իրաւանց զոր ունի մարդ 'ի վերայ անձին իւրոյ . . . . . . . . 308
Գլ. ԺԴ. Թէ ո՞ր իցէ ճշմարիտ և կատարեալ սահման արդարութեան . . . . . . . . 313
Գլ. ԺԵ. Յաղագս անարդարութեան և բաղդատութիւն արդարոյ ընդ անարդարոյ . . . 316


## ԳԻՐՔ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ


Գլ. Ա. Յաղագս խոհեմութեան ընդհանրապէս . 318
Գլ. Բ. Յաղագս իմացական առաքինութեանց . . 319
Գլ. Գ. Յաղագս ունակութեան մտաց կամ սկզբանց . . . . . . . . . . . . 322
Գլ. Դ. Յաղագս գիտութեան . . . . . . . 325
Գլ. Ե. Յաղագս իմաստութեան . . . . . . 331
Գլ. Զ. Յաղագս թէ զի՞նչ իցէ սրատեսութի մտաց . 333
Գլ. Է. Թէ ո՞րք իցեն առարկայք իմաստութեան . 334
Գլ. Ը. Յաղագս արուեստի . . . . . . . . 341
Գլ. Թ. Առաւելութիւնք և վերադասութիւնք ծառայական արուեստից . . . . . . 343
Գլ. Ժ. Թէ զի՞նչ իցէ խոհեմութիւն . . . . . 348
Գլ. ԺԱ. Յաղագս թէ խոհեմութիւնն իցէ՞ առաքինութիւն բարոյական . . . . . . 250





Գլ. ԺԲ. Յաղագս տեսակաց խոհեմութեան և յաղագս քաղաքական խոհեմութեան . . 352
Գլ. ԺԳ. Յաղագս տնտեսական խոհեմութեան . . 357
Գլ. ԺԴ. Յաղագս անձնական խոհեմութեան. . . 370
Գլ. ԺԵ. Յաղագս ունակութեան հանրական սկզբանց խոհեմութեան . . . . . . . 372
Գլ. ԺԶ. Յաղագս ներգործութեանց խոհեմութե . 383
Գլ. ԺԷ. Յաղագս անխոհեմութեան և խորամանկութեան . . . . . . . . . . 386


## ԳԻՐՔ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ


Գլ. Ա. Պատճառ ճառիս . . . . . . . . . 389
Գլ. Բ. Յաղագս մարդկային կրից . . . . . . 390
Գլ. Գ. Թէ ո՞ւր բնականան կիրք . . . . . . 392
Գլ. Դ. Հարցուածք 'ի վերայ կրից . . . . . 395


## ՅԱՂԱԳՍ ՀԵՇՏՈՒԹԵԱՆ


Գլ. Ա. Յաղագս երկեակ ազգի հեշտութեան . . 398
Գլ. Բ. Թէ զի՞նչ իցէ հեշտութիւնն . . . . . 399
Գլ. Գ. Յաղագս հեշտութեան մարմնոյ և հոգւոյ . 402
Գլ. Դ. Հարցուածք 'ի վերայ հեշտութեան. . . 408


## ԳԻՐՔ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ


Գլ. Ա. Թէ զի՞նչ իցէ ժուժկալութիւն . . . . 412
Գլ. Բ. Առարկայք ժուժկալութեան և անժուժկալութեան . . . . . . . . . . 414
Գլ. Գ. Տեսակք ժուժկալութեան . . . . . . 418


## ՅԱՂԱԳՍ ԴԻՒՑԱԶՆԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ


Գլ. Ա. Թէ զի՞նչ իցէ առաքինութիւնն դիւցազնական . . . . . . . . . . . 421
Գլ. Բ. Թէ որո՞վ օրինակաւ լինիցի հասանել յառաքինութիւն դիւցազնական, և 'ի գազանաբարոյութիւն . . . . . . . 424


## ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ


Գլ. Ա. Յաղագս սիրելութեան առ հասարակ . . 428
Գլ. Բ. Պատճառ բարեկամութեան կամ սիրելութեան . . . . . . . . . . . 429

Գլ. Գ. Յաղագս սիրոյ ցանկութեան և բարեկամութեան . . . . . . . . . . 432
Գլ. Դ. Տեսակք բարեկամութեան . . . . . . 434
Գլ. Ե. Գործք ճշմարիտ բարեկամութեան . . . 436
Գլ. Զ. Արդեօք բարեկամութիւնն իցէ՞ առաքինութիւն, և թէ որպիսի՞ առաքինութի իցէ . 439
Գլ. Է. Յաղագս հաւասարական բարեկամութեան . 441
Գլ. Ը. Յաղագս անհաւասարական բարեկամութե . 443
Գլ. Թ. Հարցուածք 'ի վերայ բարեկամութեան . 446
Գլ. Ժ. Օրէնք բարեկամութեան։ Բովանդակութի ճառիս . . . . . . . . . . . 452

## ԳԻՐՔ ՎԵՐՋԻՆ

Գլ. Ա. Թէ զի՞նչ իցէ երջանկութիւն . . . . . 460
Գլ. Բ. Նկարագրութիւն առն երջանկի . . . . . 463
Գլ. Գ. Օժանդակք երջանկութեան . . . . . 465
Գլ. Դ. Յատկութիւնք երջանկութեան . . . . . 467
Գլ. ՎԵՐՋԻՆ. Յաղագս աւետարանական երջանկութեան։ Աւարտ գործոյս . . . . . . 474
ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ . . . . . . . . . . . . . 483

ՀՀ Ազգային գրադարան
NL0246453